արդար են , և անքին յարդարութիւն առաջնորդեն . և մի
ևս 'հայի 'ի նշանակութիւն բառիս դասին ամայն . յոր միտ
կամի ասել , դատաստանք ան Նշանըիտ են , միանգա-
մայն և արդար : Հայս միտ զնի և 'ի սաղ . (ծդ . 12 .)
բառագ 'ի այն . ուր յերը . և 'ի յայն . զնի 'ի դասին :
Օ այսոսիկ եղեալ մարդարէին՝ մատցի և յայլ զո-
վութիւն օրինաց ան , և ասէ :

Յ. Յանիալը է նու քան զնուին և քան զնուանս պատրաստիան
բառաւանս . առաջը է նու քան զնուզու խորիսն :
Վ. յսէ ութերորդ և իններորդ գովութիւն օրինաց ան .
և է ևս միանգամայն իրը և զրակացութիւն նախընթաց
եօթն գովութեց . յօրոց կամի հետեւեցուցանել , թէ
որովհետեւ այսլափ բարի են օրէնքն այ , արժան է մեծ
համարիլ զնա քան զնմ մեծութիւն և քան զնմ փափ-
կութիւն . ըստ առաջնոյն ասէ :

Ունիալը է նու քան զնուին և քան զնուանս պատրաստիան
բառաւանս : Վ. յսինքն՝ առաւել ցանկալիի և փափաքելիի է օ-
րէնքն այ քան զնիի և քան զբաղմութիւնն և իցէ ա-
կանց . զի յաճախութիւն ուկւոյ և ականց քանի և բա-
զում իցեն՝ տան միայն զժամանակաւոր մեծութիւն հան-
գերձ տառապանօք սրտի , և վտանգօք յախտենական
դատապարտութեն . իսկ պահպանութիւն օրինացն այ , կմ՞
որ նոյն է՝ օրէնքն այ 'ի պահին տայ զյաւիտենական
մեծութիւն , և յաշխարհի աստ տայ զհանգիստ հոգւոյ , և
երբեմն նաև զմեծութիւն ժամանակաւոր . ոնդ եղեւ դաւ-
թի և այլոց բազմաց : Վ. ևս՝ սոկի և ակունք միայն

արտաքուստ ցուցանեն ինչ , և այն՝ յաշա մարդկան . իսկ օրէնքն այ՝ ի ներքս՝ ի հոգին գործեն զգարմանաւլիս , և այն՝ յաշա այ՝ ևս և յաշա մարդկան . զի նաև չարք՝ պատուական և մեծ համարին զայր օրինապահ : Այս է պատուական մարդարիտն այն՝ զոր յառակո առեալ տն՝ առաջի եղ ասելով . * նման է արքայութիւն երկնից առն վաճառականի՝ որ ինը իցէ մարդարիտո զեղեցիկո . և գտեալ մի պատուական մարդարիտ՝ երթեալ վաճառեաց զամբ զոր ինչ ուներ , և զնեաց զայն մարդարիտ : (մատ . ժդ . 45 :) Օ այսպիսի համարումն պարտ է և մեզ ունել զօրինացն այ և զպահանութէ նորին . և այս համարումն պարտ է կանիսել՝ ի մեզ . զի ըստ համարման յարիմք յի՞ն : Ի բերկրիւ մեր ընդ պատուական ակունս և ըստ ազնիւ մարդարիտո , նախ զյարդ նոր կամ զարժողութի նորին կամիմք իմանալ , և ապա ստանալ . և եթէ առանց իմանալոյ յօժարիցիմք գնել , խարիսք . սոյնպէս պարտ է մեզ ձանաչել զյարդ օրինացն այ , և ըստ այնմ ցանկալ նմին՝ ի պահել . թէպէտ և նա ըստ ինքեան է ցանկալի առաւելքան զոսկի և քան զպատուական ականս . ուստի և արձակ ասէ մարդարիէն . ցանկալի է նա : Օ այս եգեալ խօսի և վասն երկրորդին , և ասէ :

Բառաջը է նո հան զիշշու խորիսէ : Խորիսին մեղու է մեղրալի պանն կամ մեղրալից մնեղէն զանդուածն , զոր կազմեն մեղուքն . (որ և տաճկերէն կոչի կէօմէջ պալը :) Այս մարդարիէն խորիսի մեղու ասելով՝ ոչ իմանայ աստ սոսկ զայն անօթն մեղու՝ ցը զպարունակոցն մեղու , այլ զմեղըն զպարունակեալն յայն անօթ : Աւ թէպէտ կարեր պարզապէս մեղր ասել , բայց քանզի այն մեղր՝ որ կայ ի խորիսին , քաղցրազոյն է քան զհանեալ մեղըն . զի ամբողջ և անխառն ունի զքաղցրութիւն իւր , վայ այսորիկ զայն դնէ : Աւ ըստ նմին բաղդատելալ զօրէնս այ՝ ասէ , քաղցր է քան զայն . որով կամի ցուցանել , թէ որչափ և քաղցր համարեսցի մեղըն՝ ի բերանս մարդոյ , ոչ կարէ հաւասարիլ քաղցրութէ օրինացն . զի առաւելքաղցր է օրէնքն ի սրտի՝ քան մեղըն՝ ի բերանի :

Այս ցանկալի բարեմասնութի հայի և յարդիւնս պահանութէ օրինաց՝ յորմէ զեղու քաղցրութի առաւել

քան զբաղցրութիւն մեղու : Խւ սակայն ամենեւին հեռի է սոյն այս 'ի հոգւոյ մարմնասիրաց : « Քանիք կան , որ վասն փոքրու անցաւոր քաղցրութեւ մարմնոյ՝ զայս քաղցրութիւն գառնի համարին : » Ալ քանի երջանիկ համարեւ ցիս զայն հոգի , յորոյ 'ի քիմն զեղեւալ իշեն կաթիք արտ քաղցրութեւ . որչափ ուրախութիւն լցեալ իցէ սիրտ նորա . և զիարդ ցնծայ նա՝ ոչ միայն 'ի վայելել իւրում զբաղցրութի անուշութեւ օրինացն , այլև յակն ունին ժառանգելոյ զբաղցրութիւն յաւիտենական վասն պահելոյ զայնու :

Տիրապես այս բանը պատշաճին առեւտարանական օրինաց . հին օրէնք արդարեւ ուկի էին և ակունք , նաև խողիսին մեղու . իսկ նորս քան վնասին ցանկալի յոյժ . օրէնք մալսէսի զերկրաւորոք գայր . զոսկով , և զակամրդք , և զերկրիք խոստանայր , որ բզիսէ զիաթն և զմեղր . իսկ օրէնքն քնի տայ արհամարհէլ զնամ . * Ո՞ստանայք ասէ , ուկի և մի արծաթ . (մատ . ժ . 9 .) որով ոչ թէ զստանալն արգելու , այլ զստանալեացն անարդութիւն ցուցանէ . և զիւրոյ օրինադրութեն պատուականութիւն . զորոյ զբաղցրութիւնն նա միայն նաշակէ :

Այս բան հայի ևս և յառաջինն աղբիւրն անձային օրինաց . ըստ որում է բարեխնամ տեսուչ հոգւոց . այն ինքն է հոգին սր . զիւ ցանկալի է յինքեան և 'ի տեսուչութեւ և 'ի տուչութեւ իւրում քան զոսկի և քան զնեիցէ մեծութիւն , և քաղցր քան զնամ : Հինքեան՝ գողով որ էն անեղ՝ է անսահման զեղեցիութիւն . 'ի տեսուչութեւ՝ որով գարմանէ զնամ՝ է ամենառասար լիութիւն . 'ի տուչութեւ՝ որով բնակի 'ի հոգիս 'ի ձեռն չնորհաց , և տայ զործել անձայնաբար՝ է ամենազուարք քաղցրութիւն . զորմէ տես 'ի զիրս խմաստութեւ . (է . 22-30 . և ը . 4-18) ,

Հորս վայելեալ և զմայլեալ եկեղեցի 'ոք՝ երգէ առ 'ոք հոգին զայս սազմոս յալելուս և 'ի կցուրզս պէնտէկոստէիստէին : Հետ զայսոսիկ առաջի զնելոյ մարգարէին՝ կամելով ապա քաջալերէլ զանձն 'ի ստահպանութիւն օրինացն այ 'ի մէջ մասուցանէ զշատուցումն մեծ 'ասելով :

Ժամ. ♫ **Պ**ահնդի ծառայ ու պահեսցէ զայս . 'ի պահելնմա՝ հարուցան բաղնամ :

Որովհետեւ առ պահպանութի օրինաց պահանջի 'ի կող մանեւ մերմէ հաբատակութի ծառայուեն , յայն հայելով մարգարեին՝ ծառայ կոչէ զինքն այ . և իբր այնպիսի առաջի ընծայէ զանձն . նաև այսու ակնարկի յայն՝ որովհետեղ եղաք արեամբ որդւոյն այ 'ի ծառայութիւն կամաց նորա . և իբր ծառայ պարտաւորեցաք 'ի պահուանութի օրինաց նորին :

Ե յս ծառայութի որ լինի 'ի պահպանութեն օրինաց՝ ոնի կրկին յորդորիչս . մի՛ զի օրէնքն ինքնին իւրով ցանկալիութի և քաղցրութ ձգէ 'ի պահպանութի իւր ըզմարդ . և մի ևս՝ զի կայ հատուցումն վարձուց՝ որոց միանգամ պահեն զնոյն : Հայոսիկ ակնարկելով ասէ :

Պահնդի ծառայ ու պահեսցէ զայս և՛ : **Պ**ահնդի ասելով հաստատէ զնմարտութի ասացելոց իւրոց . ոնկ թէ ասէր . ճշմարիտ է՝ զոր ասացի , թէ ցանկալի են օրէնք քոյ և քաղցր . քանզի ոչ միայն յինքեանս և 'ի պահպանութի իւրեանց են այնպիսի , այլև 'ի վարձմն որ տըւեալ լինի վասն պահպանութեան նոցին . վասն որոյ և ես՝ որ ծառայ քոյ եմ , պահեցից զայս . այսինքն զայսոսիկ օրէնս քոյ . և պահելով ձաշակեցից զքաղցրութիւն նոցա , և առից ևս զվարձս : Իշւ առ այս յաւելու :

Ե պահելնմա՝ հարուցան բաղնամ : յն 'ի պահել ծառայի քոյ զպատուիրանս քոյ՝ տացինմա հատուցումն բազմա պատիկ . որ է ասել , եթէ պահեցից զպատուիրանս քոյ անարատ , տացես ինձ զվարձմ՝ ոչ այսչափ կամ այնչափ , այլ բազում , որով ցուցանի մեծութի և յանձնանութի վարձուցն . զի օրովհետեւ մեծ է՝ որ վարձատրէ , մեծ է և վարձն՝ զոր նորհէ : Իշւ քանզի ըս տըւեալութեն մարդկայինս բնուեն բազում անգամ՝ լինի ակամաց վրիպիլ 'ի պահպանութի օրինաց , և երբեմն զաղտնի յանցանօք ևս արատաւորիկ , մարգարեին յետ խոստանալոյ պահել զօրէնսն՝ յերկիւզի լեալ կասկածի , զուցէ տկարացի , և անկցի . ապա իբր այնպիսի համարելով զինքն , ապաինի 'ի բազմուղութ ողոր-

մութին այց , և խնդրե՛ ի նմաննէ զթողաւի վ՛ս այսպիսի
յանցանաց , և առէ :

Ժ յանցուած է-ը մ-կ-ա-ր-է ա-ն-ա-ս-լ-ի մ-ր . ի գ-ո-ղ-
ա-ն-ե-ա-ց ի-մ-ո-ց ս-բ- ո-ր-ա- ո-ւ-ս ա-ր- . և յօ-տ-ո-ր-է-ն պ-ա-հ-է-
ո-վ-ա-ս-ա-յ-ս ա-յ-:

Հանցուած ասելով՝ խնմանայ յաւետ զայնպիսի մեզս ,
որք զործին զանցառութիւն , ևս և անգիտութիւն , և զրե-
թէ ըս իմիք ակամայ . և զի մարդ քանի և զգուշութիւն
կացցէ , ի բազումն վտանգեալ՝ սահի բազում անգամ
յայսպիսի անկատարութիւն և յանցանա , վ՛ս այսորիկ
զրեթէ անհնարին լինի նմա ՚ի միտ առնուլ զամն .

Նմին իրի առէ :

Օ յանցուած է-ը մ-կ-ա-ր-է ա-ն-ա-ս-լ-ի մ-ր : Ա յս բան
սկզբնաբար մեկնի ըստ որբանուե , յդ ըստ բազմուե մե-
զաց . ըստ որոյ կամի ասել . ոչ ոք դտանի՝ որ կարասցէ
զամ յանցանա իւր առնուլ ՚ի միտ . յդ հանաւել . վասն զի
յորովք յայնցանէ գաղանի են , և բազումք ևս մոռա-
ցեալ լինին : Իսկ երկրորդաբար մեկնի ըստ որպիտուե ,
յդ ըս ծանրութէ կամ ըս չարութէ մեզայն . ըս որոյ կամի
ասել . ո կարէ ըմբռնել զծանրութիւն և զւարուի յանցա-
նաց . զի յանհնարինս չար են և ասելի : Իշ քանզի
յանմին ՚ի սոսա գաղանիբն են կատկածելի , խնդրէ .
մարդաբէն ՚ի նոցունց նախ սրբիլ . վայ յարէ :

Ի գ-ո-ղ-ա-ն-ե-ա-ց ի-մ-ո-ց ս-բ- ո-ր-ա- ո-ւ-ս ա-ր- . յդ ՚ի գաղանի մեզաց
իմոց , կամ յայնպիսի մեզաց՝ զօրս ունիմ յիս , և ոչ
հանաւեմ , * սուրբ արա զիս . յդ սրբեա և մաքրեան
զիս . կամ որ նոյն է , զզաղանի մեզս , յօրս շաղախեալ
կամ , ջնջեա լինին : Իշ քանզի առ այսպիսի մեզս բա-
զում անգամածի մարդ յընկերութէ և յօրինակէ չար
մարդկան , և կամ ինքն լինի պատճառ այնպիսէ այց ,
պաշէ ՚ի նոցունց ևս հեռի առնել զինքն . սմին իրի
առէ :

Լ յօտարէն պահեա ո-վ-ա-ս-ա-յ-ս ա-յ- : (Կտարաւ իմացեալ
լինի սատ նախ այնպիսի մարդ , որ օտար է ՚ի բարի վա-
րուց , կամ ՚ի պատուիրանացն այց . և կամ ըս լոմիրո-
նացւոյն՝ սատանայ . յայսպիսի օտարէ առէ , պահեա
զծառայս քո . որպիս թէ առէր , որովհետեւ ես ծառայ
քոյ եմ , ոչ է ինձ արժան կենցաղավարիլ ընդ այնուիկ՝

որք ապատամբ են՝ ի հրամանաց քոյ . այլ՝ զգուշանալ
 ՝ ի նցէ , զի մի վասնդեցայց՝ ի նոցունց . և քանզի ես
 ինքնին ոչ կարեմ յամի զգուշանալ՝ ի նցէ , դու սա-
 հեա զիս՝ ի նոցունց , յը՝ ի վարուց և՝ ի խորհրդոց նոցա .
 Երկրորդ՝ օտարաւ խմացեալ լինի աստ մեղք այլոյ
 այսպիսի՝ որում ոք լինի պատճառ զայթ ակրուք , կամ
 միամուռք , կամ խորհրդութ տալով , և զի որովհետեւ
 այսպիսի մեղք անմիջապէս ոչ գործին յայնմանէ՝ որ
 պատճառ լինի , այլ՝ յօտարէն , յը յայնմանէ՝ որ գործէ ,
 մեղքն այն կարէ կոչիլ օտար . և ըստ այսմառեալ կա-
 մի ասել . մեղք իմ բաւական են ինձ յամօթ առնել
 զիս առաջի քո տէր . վ՛ո որոյ աղացեմ զքեղ՝ մի թոյլ
 տար , զի և մեղք օտար մարդոց յաւելցին՝ ի նոսին .
 որպիս թէ ասացեալ էր . պահէամ զիս , զի մի պատճառ
 լինելով մեղաց այլում՝ այն մեղք նորա ևս համարեսցին
 ինձ , և բարդեսցին՝ ի վերայ մեղաց իմոց , յորոց արդէն
 տառապիմ . ՚ի սոցունց որբեւա , ՚ի նոցունց քաւեա :
 Երրորդ՝ հայելով յերբ՝ * օտարաւ խմացեալ լինի
 աստ ամփարշտութի , կամ անզգամնեի , կամ բռնութ . և այս
 ըստ պատշաճի ևս . զի որովհետեւ եղ , * ՚ի գաղտնեաց
 իմոց ոք արա զիս || , պատշաճագոյն ևս յարէ զինի ա-
 սելով , և ՚ի յայտնի ամնպարշտուէ պահէամ զիս :

Պատ լամբի . և ըստ այլոց ոմանց՝ օտարաւ խմացեալ լինի
 աստ մեղքն , որ կատարի գործով . իսկ գաղտնեօք՝
 մեղքն , որ կատարի խորհրդով , կամ ցանկութիւնն առ
 մեղս . և ըստ այսմ կամի ասել , որբեա զիս՝ ի մեղան-
 ցական խորհրդոց և՝ ՚ի ցանկութեց . և պահէամ , զի մի
 նաև գործով կատարեցից : Պայտէս համարի և վա-
 նական վարդապէտ՝ ի մեկն . յորայ (զլ . առ .) յասեն
 զյովքայ թէ * ՚ի չար խորհրդոց զորդին իւր որբել
 ՝ կամէր . զօր աղօթէ մարզարէն . ՚ի զաղտնեաց ի-
 մոց ՚ի չար խորհրդոց ոք արա զիս , և յօտար զոր-
 ծոց պահէամ || : Օ այս եղեալ յաւելու զպատ-
 ճառն , և ասէ :

ԺԴ . Պատ , թէ աշուշէացն ինչ , յայնքամ ամբիծ եշէց ,
 և սբ եղէց՝ ՚ի մեղաց մեծաց :

Ուեղք՝ երրակի կարէն տիրել մարդոց . մի՝ յորժամ
 յաղթէն նմա . և յորդեզրութէ այ զերելով առնեն

իբրև իւրեանց ծառայ . վասն զի * որ առնե՛ զմեղս՝ ծառայ է մեղաց . (յալշ . ը . 34 :) * զի որով իւրիք յաղթիցի ոք՝ նորին և ծառայ է . (ը . պետ . ը . 19 :) Երբիլորդ՝ ըստ բռնագատելոյ չար ունակութե՛ , որ ծնանի ՚ի յաջախ ներգործութե՛ մեղաց , և բռնութե՛ վարե՛ ՚ի չարն . Երբիլորդ՝ ըստ պաշարելոյ կամ ըստ խոնելոյ նոցաբազմութե՛ յանց կողմանց ՚ի վերայ մարդոյ . որպիսի են ներելի մեղք եթէ գաղտնիք և եթէ յայտնիք , կամ որք յանդէտս պաշարեն զմարդ , կամ նաև մեղք օտարի , զորոց խօսեցաւ ՚ի նախոնմեաց համարն : Հայութիւնի ներելի մեղաց և գաղտնեաց , ևս և օտարաց , թէպէտե անհնարին է մարդոց զերծ գտանիլ առնենին , բայց հնար է ոչ տիրապետիլ . յայտուիկ յետինսդ հայելով մարգարելին ասէ :

Ա յութ , նէ և տէ տէ յայն նէ յայն ժամ աճիծ եղէց : Ուր բառու դնի փոխանակ բառիս ուրեմն . որպէս թէ ասեր . ուրեմն եթէ այն մեղք՝ զորոց ասացի , յու մեղք ներելիք , մեղք գաղտնիք , և մեղք օտարի ոչ տիրեսցեն ինձ . կամ եթէ հեռի լիցին յինեն , և կամ ոչ կայցեն թագուցեալ ՚ի հոգիս՝ յայնժամ ամրիծ եղէց . յու զերծեալ եղէց ՚ի պարտաւորութե՛ նոցին : Եւ այսմ հետեւցուցնէ ասելով :

Հ յութէ եղէց ՚ի մեղաց եծայ : Որպէս թէ ասեր . եթէ ՚ի մեղաց փոքունց զերծայց , սրբեալ եղէց և ՚ի մեծաց , յու ՚ի մահացու մեղաց . զի յայտ է թէ որ ՚ի փոքր և ՚ի թեթև մեղաց ամրիծ գտանի , և կամ ՚ի գաղտնի մեղաց արդարանայ , առաւել ևս ՚ի մեղաց մեծաց սրբի . մանաւանդ թէ անկարելի է ՚ի փոքունց մարդիլ առանց ՚ի մեծաց սրբելոյ : Որպէս ընդ հակառակին՝ հնար է մաքրիլ ՚ի մեծաց՝ առանց մաքրելոյ ՚ի փոքունց , ևս և յաղթել մեծաց , և յաղթիլ ՚ի փոքունց . և սակայն այնպիսին ոչ է և ոչ ասի անրիծ կամ անարատ . ըստ որում զրէ սարդիս նորհալի (՚ի մեկն . ը . պետ . դ . 14 . հառ . զ .) * որք ՚ի մեծաց , մեծան ասէ քաջութե՛ ընդ զիմանան և յաղթեն , և ՚ի փոքունն զեղջին և ծառայանան , ոչ են տիրա-

պէս անարատք այնպիսիքն :

Մարգարէն հայելով ՚ի ներելի մեղս՝ զնէ . * ամրիծ եղէց : իսկ հայելով ՚ի մեծ մեղս , յու ՚ի մահացուս՝

ասէ . * սուրբ եղեց . վասն զի որ ազատի 'ի մահացու մեղաց՝ թէ , և ուսիցի յինքեան զներելիս՝ ստի և է սուրբ , որդէզիբ այց և ժառանգ արքայութէ . բայց ոչ ասի ամբիծ . զի առ 'ի լինել ամբիծ՝ պիտոյ է աղատիլ և 'ի ներելեաց . վասն որոյ հայելով 'ի մին՝ զամբիծն զնէ . իսկ հայելով 'ի միւսն՝ զոր լինեն ասէ :

Վըդ մահացու մեղք մեծ կոչին , վասն զի են ուղղակի ընդդէմ այց , և 'ի բաց խոտորեցուցանեն զմարդն յամենամեծ բարւոյն , զր 'ի վերջին վախճանէն՝ որ է ամծ . և պարտաւոր առնեն ամենամեծ պատժոց , զր յաւիտենական գատապարտութէ : || Վարթէ է այսու խմանալ մասնաւորապէս և զմեղս հպարտութէ և ամբարտաւանութէ , որք տիրապէս կոչին մեղք մեծ . զի որչափ տան մարդոյ մեծ հանարիլ զինքն , այնչափ մեծանան արուել նոյա . և յորս տիրեն՝ լայնացուցանեն , և ոչ թողուն մտանել ընդ նեղ դուռն արքայութէ : Օ այս եղեալ մարգարէին՝ յաւելու յայտ առնել նաև զայրաբիս՝ եթէ ոչ տիրեսցեն նման մեղք . նմին իրի ասէ :

Ժղ . **Ա**նշեցին տեղ համայ բանս բերանայ ինոյ . և խորհուրդն սրբէ ինոյ առաջնորդ ժամ . ուկը օդնահան իմ , և գոհին ինոյ :

Իանք և խորհուրդք մարդոյ յայնժամ համայ լինին այց՝ յորժամ շարժութք . հոգւոյն սրբոյ յառաջ դան 'ի նմանէ հանգերձ խոնարհութք . և զի այս առանել յաջողի 'ի մարդ սրբեալ 'ի մեղաց , մարգարէն նախ եղեալ զարբին 'ի մեղաց՝ հետևեցուցանէ այնմ զսոյն , ասելով :

Անշեցին տեղ համայ բանս բերանայ ինոյ և՛ : || Պապէս թէ ասեր . եթէ ոչ տիրեսցեն ինձ այն մեղք , (զորս յեշեաց 'ի վերոյ) , յայնժամ ոչ միայն եղեց ամբիծ , այլև բանք աղօթից և մաղթանաց և օրհնութեց , զորս բերանով իմով ընծայեցի և ընծայեմ առաջի քո , ընդունելի և համայ եղիցին քեզ : || յւ ոչ այսչափ միայն , այլև բարի խորհուրդք սրտի իմոյ՝ հանապազ իբրև համայական պատարազք ելցեն առաջի քո :

Իսկ իւրհութ սրբէ ինոյ ասելով խմանայ նախ զմբաւորական գերազանց տեսութիս և աղօթս , որով հոգի մարդոյ յափշտակի 'ի ծանօթութի ածային իրաց

մինչեւ ոչ ևս տեսանել զայլ ինչ , և ոչ իմանալ ոչ
զինքն , ոչ զիւրն , և ոչ զիսոթիւլ և զաղօթել իւր . և
այս յաջողի՝ ի մասնաւոր շարժութեց հոգւցն սրբոյ .
որով աղօթողն յաւետ կրէ քան առնետ . որպէս եղն
սրբոց ունաց : Փափաքելի իմն է այսպիսի մտաւորա-
կան աղօթք , բայց չ ՚ի ձեռին մերում . և ոչ իսկ
կարեւիք առնել ջանիւք մերովք . մանաւանդ թէ ջա-
նան մերձիլ առ այս սեղան՝ համարի յանդգնութիւն .
որպէս յանդգնութիւն լիներ առանց կոչելոյ թագաւո-

րի՝ ջանալ բազմիլ՝ ի փառաւոր սեղան նորա :

Երկրորդ իմանայ զհասարակական մտածութիւն՝ ի վր
հոգեւոր իրաց , դր՝ ՚ի վր արքայութեց , ՚ի վր ածային բա-
րերարութեց , ՚ի վր առաքինութեց , ՚ի վր օրինաց , և .
զորոց տրամաբաննելով խորհիւք՝ ՚ի միտս մեր . և յդա-
ցեալ՝ ՚ի մեզ զբարի և զուղիղ հանաւմունս , ըստ այնմ կա-
ռավարեմք զկեանս մեր : Եւ ոչ այսուի միայն , այլև
այսու մտածութե՛ր՝ ՚ի միտ առեսլ զանարգութիւն և զան-
ցաւորութիւն կենցաղականաց՝ յածայինան յարիւք , և
զնոյն մեզ իբրև զգանձս առզնեմք : Օ այսպիսիս ե-
րանելով սարգիս շնորհալի (՚ի մեկն . յակ . առ . 26 .
. ճառ . է .) առէ . * արգարեւ մեծի երանուն է արժա-
. նաւոր այնպիսին՝ որ յազատութեան օրէնս հայելով
. այր անաբիուսն զաստի կենցաղս վարկանիցի , ըլ-
. ֆառս , զինչ , զհայրենիս , զիիրելիս , նաև զմար-
. մինն իսկ . և իւր պատիւ , և փառս , և ինչ , և հայ-
. քենիս , և մեծութիւն և կենդանութիւ զազատուն օրէնս
. վերազրիցէ . և ՚ի սոյն վաստակիցի , և ՚ի սոյն խոր-
. հեցի՝ ՚ի տուէ . և ՚ի զիշերի . այնպիսին կարէ ասել ը-
. գաւթայ , խորհուրդք իմ յամ ժամ առ տէր . . .

Վ յապիսի խորհուրդք թէ և դոյզն ինչ երևեսցին՝ ՚ի
սկզբան , բայց ՚ի տեւելն աձեն և զօրանան : Ոռքքիկ
սերմի մեծի ծառոյ՝ եթէ սնկեսցի և արմատս ձգես-
ցէ՝ ծառանայ , և անտի երանէ գերան շինուածոյ տան ,
տախտակ նաւու , զործի պատերազմի , մանդղինն ,
մեքենայ , և . : սոյնպէս է և ՚ի խորհիւն զբարի ինչ
* նման է արքայութիւն երինից հատոյ մանանիոյ
. և լինի մեծ քան զամ բանջար . . . : (մատ . ժդ . 31 :
մարկ . դ . 30 :) | զօրանալ այսպիսի խորհրդոց ՚ի
մարգն՝ ոչ սասանի հողինորա իբր զիինն լեամն . (սալ .

Ճիղ. 1.) և ազգութին նորին իրքեւ վկամ հատեալ առանց ձեռին ՚ի լեռնէ անտի՝ խորտակի՝ զամբ ըսր խորհուրդս, ևս և զարձան շարութեն կամաց. (զան, թ. 34:)

Օսյսոսիկ կարես և զու շահել եթէ, ՚ի մոտածելդ ևս և յաղօթելդ ունիցիս զքեզ առաջի այ, ասելով. խորհուրդք սրտի իմայ առաջի քո յամ ժամ. զիտելով թէ, ՚ի քեզ է ած, և տեսաննէ զամ խորհուրդս և զամ շարժուածս սրտի քո. զիր ևս ՚ի մոի թէ, ՚ի մոտածելդ և յաղօթելդ՝ մոտանես յերկնս առ ած, և առաջի հրեշտակաց խօսիս ընդ այ. և յայն սակա պարտ է քեզ յայնժամ հեռացուցաննէ ՚ի քեն զամ պիտան խորհուրդս, ասելով. * ՚ի բաց եղերուք յինէն չարք ||. (սաղ. ՃՃ. 115.) զի ոչ զոյ աստ ձեզ տեղի. խօսեաց և ընդ կարողութիս հոգւոյդ ասելով. * եկայք երկիրսպազցուք || և. (սաղ. Ղղ. 6:)

Խակ զոր յաւելու մարգարէն ասել յամ ժամ. այս մոտածի ըստ ունակութէ և ըստ տրամազրութեն. ասացի՝ ըստ ունակութեն, զի այն խորհուրդ՝ կերպաւորեալ ՚ի սրտի ունակութը իմն տպաւորեալ մնայ անդ. և ըստ այսմ խնդրէ մարգարէն, զի յամ ժամ հաճոյ լիցի այն այ, կամ մի լիցի ժամ ինչ յորում խորհուրդ իւր անհաճոյ լիցի նմա: Վասցի՝ ըստ տրամազրութէ, զի ՚ի բարի մոտածութեց և յուղիղ աղօթից տրամազրի խորհուրդ մարգոյ բերիլ միշտ առ ած. որպէս ՚ի շարժիլ գնտակի միանգամ յաջ կոյս՝ այնու շարժութը տրամակայեալ նովին բերի ՚ի շարժումն աջոյ, թէ ոչ շարժեսցի ներգործութը. սոյնափէս և խորհուրդք սրտի եթէ բարւոք շարժեսցին և ուղիղ հպեսցին յաղօթս և ՚ի մոտածութիս, ՚ի դադարին ևս յաղօթելոյ և ՚ի մոտածելոյ՝ բերին յած. և զոր տեսաննէին՝ զրեթէ առաջի աշաց ըմբռնեն:

Պատկերահանք արհեստիւ ընդհայեցողութեն նկարեն ՚ի վը թղթոյ կարմրաների և կապուտաներկ պատկեր ինչ մարդոյ. յոր եթէ անշարժ հայեսցիս՝ ուղեւալ զտեսութիդ, ՚ի կեղրօն պատկերին, ՚ի բառնիլ պատկերին ՚ի տեսութէ աշացդ՝ աչքդ տակաւին տեսանն զայն վասն տրամակայելոյ այնու տեսութը. սոյնափէս եթէ զու բարւոք հայեսցիս յաղօթելդ ՚ի կեղրոն

սրտիդ յանձ՝ 'ի գաղաքիլ յաղօթեցդ տակաւին տե-
սութի հոգւոյ քո բերի առ նա . ուստի և կարեսյայն-
ժամ ասել . * խորհուրդը սրտի խոյ առաջի քո յանձ
ժամ || . և այս՝ որպէս ասացի՝ գէթ տրամազրողապէս .
մինչ զի ընդ գաղաքիլ մասցդ՝ 'ի գործոյ անտի՝ յոր
զբաղէր , կամ 'ի քնոյ ևս , ինքնին բերիլ առ անձ .
• Օ զր օրինակ , եթէ ոք ունելով առաջի աչաց իւրոց
զպատկեր ինչ՝ ննջիցէ , 'ի բանալ անդ զաշն՝ յան-
դիման իւր տեսանէ զպատկերն , սոյնալէս և ոք ունե-
լով առաջի իւր զանձ կամ զանձային իրս , եթէ պա-
րապեսցի իմիք , ևս և քնոյ , ընդ ազատ մնան անտի՝
տեսանէ հաւատով զանձ և զանձայինն . ուստի և կարէ,
ասել այնպիսին . * խորհուրդը սրտի խոյ առաջի քո
յանձ ժամ || :

Պստ լամբրոնացւոյն և ըստ այլոց ոմանց՝ այս բան դնի
իրրե մաղթողական . որպէս թէ ասեր . ազաշեմ
զքեզ տէր , զի այն բանք իմ , որովք այժմ ինպրեցի
'ի քէն որբել զիս 'ի գաղանեաց , և յօտարէն պահել ,
և 'ի մեծ մեղաց փրկել , հաճոյ լիցին առաջի քո . զի
եթէ հաճոյ լիցին , կատարեսցին ևս . և այս ոչ եթէ
ըստ իմոց ինչ արժանաւորութեց , այլ՝ ընորհաց քոց ,
որով կամիս և հաճիս որբել զիս , փրկել և օգնել .
և առ այս յարէ :

Տէ՛ օֆնուն իմ , և է՛ ինչէ՞ : Ամսի ասել , որովհետեւ
դու ևս տէր իմ և արարիչ իմ , արժան է՝ զի դու ինսա-
մեսցես զիս զծառաց քոյ՝ լինելով ինձ * օգնական և
փրկիչ || . օգնական 'ի փոյթ բարեաց , և փրկիչ առ 'ի
շարեաց . որով ունիս ժամանեցուցանել զիս յերա-
նութի քո յաւիտենական :



ՄԱՐԴԱՐԱՆ · ԺԱԺ ·

Կանք բարեմաղթական հաճութե՛ ՚ի զիմաց մարդկայն ընութես առ քս՝ հայելով ՚ի հաճուի հօրն երկնաւոր թի ընդ արդիւնս նորա յաւուրս չարշարանաց նորին, յորս յաղթեաց նա սատանայի և մահու :

Ի հարաբած · սաշմու ՚ի դասէլ :

I սեղեւ տեղ տէր յատար մեջիւնեւ . օդնահան եղիշեւ տեղ անուն այ յահիւնայ : 2 Աշաւեսցէ տեղ տէր օդնունենե՞ ՚ի սրբանե՞ իւրդէ ՚ի սիսէ . և շնիւշցի պատշաճ : 3 Եկշնցէ տէր զամ պատարագուն առ . և զանիսուն առ շնդանելու արացու : 4 Տաշէ տեղ տէր ըստ սրու առամ . և զամ խորհուրդն առ նա կառարեցու : 5 Ընծանցուս մէս ՚ի գրիսունե առամ . յանուն այ մէրոյ՝ մէս մէծ եղիշուս : 6 Աշաւեցէ տէր զամ խորհուրդն առ . այժմ ծանեաս, զի իւցուց տէր զածեալ իւր : 7 Ամա յերինից ՚ի սրբանե՞ իւրդէ ՚ի զարունե գրիսունե աղոյ իւրոյ . 8 Առա իսաօք և սահս երիշորս . այլ մէս զանիսուն ան այ մէրոյ իւրդանցուս : 9 Առա խորհուրդն անիան . մէս յարեատ՝ և սունեւ եւստ : 10 Տէր իւց պատշաճուն, և լուր մէշ, յանուն յարում իւրդանցուս առ տեղ :

Ա Ե Բ Ե Ա Գ Ե Բ :

Ի հարաբած · սաշմու ՚ի դասէլ :



A ԵՐԵՎԳԻ ԾՈՒԳ ՄԱՍԻՆ ԾՈՒԳ աստրի ՚ի զրելոց անտի ՚ի սաղ . Ժ . ԱՅ . իսկ թէ յինչ առթէ , և յինչ միտս իցէ ասացեալ զաւթի զայս սալմոն՝ բազումք բազում ինչ ասեն : Կարծեն ունանք, ընդ օրս և վարդան , թէ զայս ասացեալ իցէ ՚ի գէմա եղեկեայ՝ ՚ի պաշարել ու ափսակայ զերուսաղէմ . ևս և ՚ի գէմա իւրաքանչիւր թագաւորի , իբրև մաղթանք ինչ : Ոմանք համարին՝ թէ զայս ասաց զաւիթ ՚ի զիմաց զօրաց

իւրոց առ ինպէն՝ յաղօթել իւրում առ ած վ՛ս յաղօթել լոյ թշնամեաց : Իսկ ոմանք համարին , թէ զայս ասաց՝ ի զիմաց ժողովրդեանն հըէից ՚ի զերծանիլ իւրում՝ ի վտանգէ առն փղշտացոյ , յորժամ աղաւեցին զնա՝ մի ևս ելանել՝ ՚ի պատերազմ . (թ . թագ . իս . 16 :) Եւ կամ ըստ այլոց՝ յետ յաղօթութեն , զոր արար զաւիթ ընդդէմ ամենացւոց և ասորոց (թ . թագ . թ . 6-19 :) Բատ այսոցիկ կարծեաց վերնագիր սաղմոսիս կարէ ՚ի յարմարական միտս բացատրիլ այսպէս . սաղմոս ասացեալ՝ ՚ի դաւթայ ՚ի կատարումն յաղօթութեն :

Բայց քանզի ըս հասարակ աւանդուն երևելի վարդապետաց և սրբոց հարց՝ բանք սաղմոսիս հային առ քս . վերնագիր սորին կարէ յայլաբանական միտս բացատրիլ այսպէս . սաղմոս ասացեալ՝ ՚ի դաւթայ ՚ի զիմաց մարդկային բնութեն առ քս՝ հայելով՝ ՚ի կատարումն յաղօթութեն , զոր արար ընդդէմ զիւլաց . կամ հայելով՝ ՚ի չարչարանս նորա , զոր յանձն էառ . և նովին յաղօթեաց իշխանութեան մաշու՝ ՚ի կատարիլ ժամանակին սահմանելց : Այդ ՚ի մեկնել մեր զայս սաղմոս ՚ի դէմն քսի , նովին իսկ ընծայի և մեկնութիւնկարազրական ՚ի դէմն դաւթի . որպէս և տեսցես յառաջիկայր :

Ը Ա Դ Ո

Ա . Ա ն ի շ է ս ե լ ո ւ է յ ա ս ո ւ ր ա ն ի շ ն ո ւ լ է , օ գ ն ա հ ա ն ե լ ի շ է ս ե լ ա ն ո ւ ն ա ն ա յ , յ ա ն ի ս ո ւ յ :

Ո ւ կ ի ն , Ո ւ կ ի ն ի ն , Ո ւ կ ի ն ի ն

Ա նորոշակի խօսի մարդարէն . և անուամբ իւիք մէ բացատրէ՝ թէ ալ է այն , առ որ ասէ , * լուիցէ քեզ || . Եւ սովին յայտ առնէ , թէ առ նա խօսի , առ որ հայէին փափաքք ամ արդարոց , և գուշակութիւն ամ մարդարէից , այնինքն է քս : Եւ քանզի քս տէրն մեր՝ ըս որումէր մարդ , յաւուրս չարչարանաց իւրոց՝ ըստ վկայէլոյն պողոսի , * աղօթս և պաղատանս առ այն՝ որ կարօղն էր ասդրեցուցանել զնա ՚ի մաշուանել , ուժ-

գին գումարե և արտասուօք մատուցաներ , և լսելի լիներ առ լսուութեն . (երբ . է . 7.) յայն հայելովլիսօսի մարզարեն , և իրեն գուշակութի ինչ այնր գնե զայս բան՝ ասելով :

Լուիցէ տեղ ուեր յառար անյիւնէ : Այսինքն , յաղօթեն քոյ առ հայր յաւուր ջարչարանայ քոյ՝ անտարակոյս լուիցէ քեզ տեր , Աքդ՝ լուաւ նման հայրն երկնաւոր՝ ու ըստ այնմ , զի մի մեռցի նա , այլ՝ ըստ այնմ , զի նա մաս հուամր իւրով յաղթեսցէ այնմ , որ զիշխանութի մաս հուն ուներ , դրէ է զատանայ . և զմահն յաւիտենական յանմանհութիւն մշտնթենաւոր դարձնասցէ . և զձեռապիր պարտուց մերոց պատառեալ փոխանակ դատապարտութեն տացէ մեզ զփառս անվախճան կենաց : Եւ զի յայսմ ամի ած հայր եղե նման օգնական , վասն այսորիկ յաւելու ասել :

(ժնահան է շիցի տեղ անուն այ յահիբայ : Ուր զօրութիւնացեալ լինի և այն՝ զոր եղ յառաջին հատուածն , դրէ * յաւուր անձկութե : որպէս թէ ասեր , յաւուր անձկութե քոյ լուիցէ քեզ ած , և լսելով օգնական լիցի քեզ , դրէ պաշտպանեսցէ զքեզ և զչետեօղս քոյ ՚ի թշնամեաց :

Խակ բառս անուն երրակի կարէ նշանակել աստ : Ո՞ի փոխանակ անուանակուութե , դրէ փոխանակ կուելոյ զանունն այ , կամ զանձ . որպէս յասելն , յանուն իմ գեւս հանցեն : (մարկ . ժդ . 17 .) անունն զնի փոխանակ կուելոյ զբժ . և ըստ այսմ առեալ կամի ասել , ՚ի կուելն քո զանուն այ , կամ զանձ օգնական լիցի քեզ : Երկրորդ՝ փոխանակ զօրուե կամ հեղինակուե . ըստ այնմ , զոր ասաց քո , (յովհ . է . 43 .) * ես եկի յանուն հօր իմայ : դրէ զօրութիւն կամ հեղինակութիւն հօր իմայ . և ըստ այսմ կամի ասել . զօրութիւնն այ օգնական լիցի քեզ : Երրորդ՝ փոխանակ նշանակեցելոյն անուամբ , դրէ փոխանակ ինքեան այ . զի առ երբայեցիս առած է , * անուն նորա ինքն , և ինքն անուն իւր : Եւ ըստ այսմ կամի ասել , օգնական լիցի քեզ ած :

Լոյլ յասելն աստ մարզարէին անուն այ յակոբայ , ոչ կամի ցուցանել՝ թէ ած իցէ ած յակոբայ միայն . այլ թէ որովհետեւ ած մասնաւորապէս որոշեաց զյակոր դրէ զիսրայէլացիս իւր ժողովարդ , այնու անուա-

նեցաւ ած յակոբայ , կամ ած իսրայէլի , որպէս և
այլուր՝ ած արքահամու և ած իսահակայ : | Եւ ևս՝
տղին կամի յայտ առնել մարդարէն , [թէ ոչ զառտ
ածոց , այլ զնշմարտէն խօսի , որ օգնական լինելոց էր
յժի՛ առ ՚ի ազատէլ զազգս մարդկան յերկրսպագութէ
տուտ ածոց . որ և ունի հաստել զնոսա նոր իսրայէլ ,
| Աստանօր զգուշանալ արժան է , զի յասել մարդա-
րէին՝ * լուիցէ քեզ տելը , և օգնական լիցի քեզ ած || ,
ոչ ցուցանէ՝ [թէ ինքն քո (ըստ որում էր ած) ոչ լսէր
ինքեան , և ոչ լինելը օգնական , այլ սեպհականութէ-
իմն ՚ի դէմս հօրն խօսի . զի որովհետեւ խոստմունքն
մարդեղութէ բանին եղեն՝ ՚ի դիմաց հօր վասն որդւոյն ,
՚ի դէմս նորա սեպհականէլուլ կարգէ զբան իւր . ապա
թէ ոչ ըստ իրին կըուեալ՝ օրջափ ընկալեալ լիներ ՚ի հօ-
րէ աղօթք քոյի ըստ որում մարդ , այնչափ ևս ընկա-
լեալ լիներ յիւրմէ՝ ըստ որում էր ած : Հոր միտ երգէ
եկեղեցին զայն բան առ քոյ . * | Ացօթէիր առ հայր
մարմնով ընկալեալ ընդ հօր զբոյ վասն իմ զպաղա-
,, տանս || . (շար . իւթ) :

| Աքդ՝ որովհետեւ ասաց մարդարէն , [թէ ած օգնական
լինելոց է որդւոյ իւրում , այժմ յայտ առնէ՝ [թէ
ուստի առաքելոց էր նաև զօդնականութիւն իւր . նմին
իրի ասէ :

|| Ա սաւեսցէ տեղակը օդնութէն՝ ՚ի որդուել իւրմէ ՚ի սիսնէ ,
և ընկալոց է պետ :

| Ասելով * ՚ի սրբութէ իւրմէ || ինձնայ զեառն սիոն ,
որպէս և բացատրէ ասելով * ՚ի սիոննէ || : | Եւ սա սուրբ
ասիւր վասն լինելոց անդ տապահակի նոն և վոյ այլոց
պատճառաց , (զօրոց տէս ՚ի սաղ . թ . 6 .) | Կակ այսու սիոն
լերամբ իմացեալ լինի նախ ինա ինքն եղէմ . և երկ-
րորդ վերինն սիոն , որպէս յայտնի երեխ այս ՚ի 7 ,
համարոյն . յոր միտ ասէ պօղոս , * մասուցեալ էք ՚ի
սիոն լեառն , և ՚ի քաղաք այ կենզանոց յերուսաղէմ
յերկինս || . (էրբ . ժթ . 22 .) ; Հայս սիոն հայելով ասէ :
| Առաքեսցէ քեզ տէր օգնութի՛ ՚ի սրբութէ իւրմէ ՚ի սիո-
նէ : | Ա յսինքն ցուցցէ քեզ տէր զօդնութիւն իւր՝ ոչ
միայն յեղմէ , այլև ՚ի սիոննէ , յոյ յերկնից : | Կակ պատ-
ճառ սիոն դնելոյն է՝ զի ցուցցէ՝ [թէ ած ՚ի բարձրութէ

երկնից գոլով՝ իբր ՚ի բարձրութե լերին սինմի նկատէ զամ. ըստ որում և սինն նկատումն թարգմանի. և ըստ նկատելոյն զամ՝ ամեյուն օդնէ , և յայտ է թէ առա մել ևս որգուց իւրում՝ ըստ որում էր մարդու : | յւ զի ցուցցէ ևս, թէ այս օգնութիւն նորա պարտի լինել նաև ընդունելութեամբ, յարէ զինի, և ասէ :

| յւ ընկացէ պահու զի՞ ընդունիցի զքեզ յերկնից իւրեւ զիւր որդի, և յիւր փառան վերացուսցէ զքեզ յայն, զօրմէ ասաց քո, * փառաւորեալ զիս հայր առ ՚ի քէն փա ո, ոքն, զոր ունեի յառաջ քան զինելն աշխարհի առ ՚ի քէն . (յով. ժէ. ն.) | յւ այս ոչ միայն ըս իրաւանց անձնաւորական միաւորութե, ըս որոյ արդէն փառաւորեալ էր հոդին քոյի էական փառօք, այլէ ըս արդեանց շարշարանաց և մահու նոր, որով մասուց զանձն պատարագ վոյ փրկութե ազգի մարդկան . զորմէ խօսի ՚ի յաջորդ համարն՝ ասելով :

Յ է չշացէ որ զամ պատարագու, և զաւեսու ոչ չնդառ նէլ արտացէ :

Մենայն զործողութիք քոյի էին առաջի այ իւրեւ պատարագ սր . զի որովէետև պատարագք են ընծայք հաշտեցուցիչք, զործողութիքն քոյի գոլով ըստ ամ՝ պարագայից ընծայեալք այ և հաշտեցուցիչք, էին ամենահաջոյ պատարագք . և զի արդիւնք այնցիկ զործողութիք՝ մանաւանդ շարշարանացն զօրէին ՚ի սկզբանէ աշխարհի մինչև ՚ի կատարած նորին, էին և են միշտ յիշելի առաջի այ . սմին իրի ասէ :

Յ է չշացէ որ զամ պատարագու ոչ : յի միշտ ՚ի միտոս իւր ունիցի և առաջի իւր տեսցէ որ զամ զգործս քո, զորս իւրեւ զպատարագս մատուցեր նմա, մանաւանդ զգործս շարշարանաց քոյ . և ոչ երբէք մուսացի զնոսին : | յօս սի և զուխտիցն՝ ասելով :

| յւ զաւեսու ոչ չնդառ նէլ արտացէ : յի հաձեալ ըս ուխտս քոյ՝ արասցէ զնոն ինքեան ըւունելի . կամ ընկալցի զնոսին : | յսկ ուխտիւք երեք ինչ հնար է աստ խմանալ . մի՝ զխոստմնան քոյի, որովք խոստացաւ և ուխտեաց տալ մեզ զհոգին սր (յով. ժէ. 7.) և լինել ընդ մեզ մինչև ՚ի կատարած աշխարհի (մատ. իշ. 20.) և ըսունիւ զաղօթս մեր . (յով. ժէ. 13.) և տալ մեզ

զարքայուին երկնից : (լուկ . իր . 29 . և յով . ժը . 26 .) Երկրորդ՝ զայնոսիկ գործողութիւնն՝ զօրս իրբեւ միջնորդ փրկութեան սահմանեաց քու . որպիսի են և խորհուրդը եկեղեցւոյ : Երրորդ՝ զարքարանն , որովք մատոյց այ զանձն իւր ողջակեղ՝ ի հաստատութիւն այսոր ուխտի՝ զօր ուխտեաց հայր ընդ նախահարս :

Վերդ մարգարէն զայս ասելով ոչ մաղթէ , զի հայրն երկնաւոր այսպիս արասցէ , այլ յայտ առնեւ զայն՝ զօր առնեւ նոյն հայրն երկնաւոր . զի քու ոչ ուրուք մաղթանօք արդիւնաւորեցաւ ինչ յաց , այլ այլք նորա արդեասիրքն :

Վստանօք 'ի բնագիրս երայցեցւոց գնի բառս ուշ . որով նշանակի միշտ այնպիս լինել . և թէ ձևարտիւ այնպիս է , զօր ասէ : Խակ թէ զինչ հատուցանեցց իցէ հայրն փոխանակ պատարագաց՝ զօր ընկալաւ 'ի քու , յայտ առնեւ 'ի յաջօրդ համարն , և ասէ :

Հ . **S**այէ և եղ ուր ըստ որոի բռմ , և զնմ խորհուրդն ու նո էստորէնցէ :

Այն ինչ՝ որ եր ըստ սրտին քո՞ի՝ հայեր 'ի կատարումն կամաց հօրն . ըստ այնու . * Խի ես յերկնից՝ ոչ զի զիամն իմ՝ արարից՝ այլ զիամն այնորիկ , որ առաքեայն զիս . (յով . կ . 38 .) և թէ * ես զշաճոյս նր առնեմ . հանապազ . (յով . ը . 29 .) իսկ խորհուրդը մոտաց նորա կարգեալ են 'ի փրկութիւն մարդկան : Խ սոսին հայելով ասէ :

Sայէ և եղ ուր ըստ որոի բռմ . և զնմ խորհուրդն ու նո էստորէնցէ : Խամի ասել . հայրն երկնաւոր համեալ ընդ աղօթս և ընդ պատարագս քոյ՝ ուրուի եղ ըստ սրտի բռմ . կամ տացէ քեզ՝ զօր ինչ և կամիս 'ի կատարումն կամաց հօր քում երկնաւորի . և զնմ խորհուրդն ու նո էստորէնցէ . յի արասցէ , և հաստատութիւն կատարեսցէ զնմ , զօր խորհիս առնել . այս է՝ ըստանել զգործս սաստանայի , փրկել զմեղաւորս , զտանել զկորումեալս , ազատել զբատապարտեալս , տալ նոցա զնորհս և զօրդէ զբուի , և ժամանեցուցանել զնուսա 'ի կեանն յաւիտենից :

Եւ թէ յիբաւի զայօպիսի խորհուրդս ունելը քու . յայտէ 'ի բանից սէ զրոց . ը այնու . * վն այնորիկ յայտնե-

յաւ որդին այ , զի լուծցէ զգործօ սատանայի . (ամ . յովհ . դ . 8 :) և թէ * յս քն եկն յաշխարհ փրկելը մե զաւորս . (ամ . տիմ . ամ . 15 :) և ինքն քն առէ . * եկն որդի մարդց կեցուցանել զկորուսեան . (մաս . ժը . 11 :) և թէ * ես եկի , զի զիեանո ունիցին (յափ աստ չնորհօք .) և առաւել ես ունիցին ('ի հանդերձեալն փառօք) . (յովհ . դ . 10 :) | յւ աշխա զայս ամ զըր խոր հէր և կամիշը քն կատարեաց հայրն երկնաւոր : | յւ թէ 'ի կատարելոյ զայսոսիկ՝ զինչ եղեւ ազդի մարդկան , յայտ առնէ մարդարեն , և առէ :

Ե . **Յ**նծայութ նշ 'ի քրիստէն քառմ . յանուան այ նէրոյ նշ մէծ եղիշութ :

Հնծալ 'ի փրկութէ այլոյ կրիստակի կարէ լինել . մի 'ի գտանեն զփրկութէն անձին 'ի ձեռն այլոյ , և մի ես 'ի տեսանեն զփրկութէն զըր գտեալ է այլ ոք : | յւ որնպ երեկի աստ սկզբնաբար ըստ առաջնոյն խօսի մարդարեն .

և երկրորդաբար ըստ երկրորդին՝ յասեն :

Յնծայութ նշ 'ի քրիստէն քառմ . յանուան այ նէրոյ նշ մէծ եղիշութ : | կամի ասել . որովհէտեւ կատարեաց հայրն երկնաւոր զամ , զօր կամիշը վասն փրկելոյ զմեզ , մեք ևս փրկեալքս յնծայութ 'ի քրիստէն քառմ . յն ուրախ լիցուք 'ի փրկելոյ քո զմեզ , կամ վոյ փրկելոյ քո զմեզ . ևս և վասն փրկեալ լինելոյ քո 'ի ձեռաց թշնամեաց քօց : | յւ ոչ այսափ միայն , այլ յանուան այ նէրոյ նշ մէծ եղիշութ . յն որովհէտեւ մեծամեծ բարեաց արժանացաք , նոքօք մեծասցուք և փառաւորեսցուք 'ոչ վասն մեծութէն , որ իցէ 'ի մէնջ , այլ վասն մեծութէն , զօր ընկալաք յնայ . և առ այս առէ , յանուան այ նէրոյ . ոնք թէ ասեր , զօրուք մեծութէն այ մերոյ մեք մեծք ելիցուք .

և յաղթանակօդք երկեսցուք :

| յւ կամ թէ յանուան այ մերոյ քսի քրիստանեայ կուելով 'ի նոյն մեծասցուք . և տեսեալ զնա 'ի փառս ածութէն մեծապէս ցնծասցուք : | Որչափ ուրախացան եղբարք յովսեփայ , և մեծասցան , յետ տեսանելոյ զնա 'ի փառս , և յետ ապահովանալոյ 'թէ նա է պաշտանալ իւրեանց . ապա քանիշ ևս արժան իցէ մեզ ուրախանալ և մեծանալ 'ի տեսանել մեր հաւատով զքն 'ի փառս , և 'ի զիտել 'թէ նա է օգնական և փրկիւ

մեր : Օսյու եղեալ մարդարեն՝ ինս՝ կը կին հաստատե, զբան նախընթաց համարոյն, և ասէ :

Ն . յուսոյէ ար շամբ ինորուածս ույ . այժմ ծանեաս, ոչ ին յոյշ ար զօծեալ իւր :

Այս բան մասամբ ինն հայի 'ի համարն 4 . ուր ասաց .

* տայց քեզ տեր ըստ սրտի քում, և զամ խորհուրդս քո նա կատարեցէլ . 5 . և մասամբ ինն 'ի համարն 5 . ուր ասաց . * ցնծասցուք մեք 'ի փրկութեալ քում . և նու իշտ զայտաթիկ զրեթէ, այլով ինն կրկնութեալ բացատրել կամելով ասէ :

յուսոյէ ար շամբ ինորուածս ույ . այժմ ծանեաս, ոչ ին յոյշ ար զօծեալ իւր . Հայում բանի զօրութեալ զնի բառս յիբառէ . կամ այս . ոնդ թէ ասեր . յիբառի ոնդ ասացի՝ անտարակոյս արասցէ, և կատարեցէ, որ զամ, զօր խնդրեցեր 'ի նմանէ, թէ 'ի վանել զթշնամիս քոյ զիշխանս խաւարի, և թէ 'ի փրկել զմեզ 'ի գատապարտուէ : | յւ մեք այսու խակ ծանեաս, ոչ ին յոյշ ար զօծեալ իւր . յի որով հետեւ 'ի կատարիլ խնդրուածաց քոյ մեք կեցուցաք և փրկեցաք, այսու փրկութեալ ծանեաք, թէ ուրեմն կեցոյց որ և զօծեալ իւր, որ եղեւ մեզ փրկիլ . զի եթէ ած զնս չեր կեցուցեալ, և զխնդրուածս նորա չեր լցուցեալ, ոչ ևս փրկեաք մեք :

Խոկ այս կեցուցանելս այց եր յարուցանել նորա զբա 'ի մեռելոց, և նստուցանել զնա ընդ աջմէ իւրմէ յերկ կինս, և արկանել ըստիւք նորա զթշնամիս նորին : | յւ առ 'ի սորյդ ևս ցուցանել, թէ յիբառի կեցոյց տեր զօծեալ իւր զբա 'յարէ զինի, և ասէ :

Ե . ամա յերինիշ 'ի սրբանենէ իւրմէ, 'ի զօբանեն իւրմէ նունան - լոյ իւրոյ :

Բայց ըստ, յայտ առնէ աստ զշամիլ հօրն միշտ ընդ խնդրուածս որդւոյն, և ըստ համելոյն կատարել . ըստ որոյ ասէ :

ամա յերինիշ 'ի սրբանենէ իւրմէ, 'ի զօբանի իւրմէ նունան - լոյ իւրոյ : | Այսինքն, 'ի բարձրութե երկնից' որ է տեղի այց ոք, ըստաւ ած որդւոյ իւրամ օծելոյ . և լարով կեցոյց զնա . և այն * 'ի զօրուի փրկուէ աջոյ իւրոյ . ուր բառս 'ի զօբանեն ' զնի փոխանակ զործիականի ,

որպես թէ եղեալ էր . կեցոյց զնա զօրութք փրկուեն՝
զօր արար աջ նորա . որ է ասել, աջ նոն փրկեաց զնա
և զմեզ՝ ոչ զինուք, և ոչ կառօք կամ երիվարօք, այլ՝
զօրութք և ուժգնութք ամենակարողութէ իւրոց . | Հւ
յայս հայեցեալ՝ յարէ զինի, և ասէ :

Է. **Ս.** սուս իստոք և սուս երիշըք, այլ մէս զանուն դն այ Աւ-
րոյ իսրբանցոտ :

Ծ. **Ո.** սուս իստանեցոն և անիսոն . մէս յարեաս, և սուլէլ
եղաւ :

Վ. յս հանդիտութիւ յայսնի ցուցանէ, թէ քանի անարդ
և անսպիտան և անզօր է, ապաւինելով՝ ի մարդկային
հնարս և եթ՝ ձկտիլ առ մեծամեծ գործու եթէ՝ ի
քաղաքականու, և եթէ՝ ի պատերազմականու . և ընդ
հակառակն՝ ցուցանէ թէ քանի փառաւոր և զօրաւոր
իմն է, յանձ ապաւինելով և զանուն նորա յօննուի կոտե-
լով ձեռն արկանել յայնպիսիս : Վագ թէ ուղետ և բա-
զում իրք են, յորս ապաւինին մարդկեկ ՚ի պատերազ-
մին, բայց քանզի երևելի են, ՚ի նոսա կառք և երիվարք,
մանաւանդ առ նախնեօք, փոխանակ անմի զայսոսիկ
միայն ՚ի մէջ բերէ աստ մարդարէն՝ ասելով :

Ս. սուս իստոք և սուս երիշըք . այլ մէս զանուն դն այ Աւրոյ
իսրբանցոտ : Որքա ասելով ոչ կամի ցուցանել զայսո-
սիկ կամ զայնոսիկ որոշակի, այլ՝ անորոշակի . ոնզ թէ
եղեալ էր . սովորութիւ է մարդկան, զի յորժամ ելա-
նեն՝ ի պատերազմ, ոմանք ՚ի նցէ ապաւինին՝ ի կառա
զինուք վառեալս, և ոմանք յերիվարս զօրաւոր և ՚ի
սրբնթացս, ոնզ փարաւոն և զօրք իւր . այլ մէս զանուն դն
այ Աւրոյ իսրբանցոտ : յի մեք հանգերձ զիսով և թագա-
ւորաւ մերով քրիստոսիւ ոչ ՚ի կառս և ոչ յերիվարս
ապաւինիմք, այլ՝ զյոյս մեր եղեալ յանձ՝ զանուն նորա
կարդամք, և նովաւ փրկիմք և ուղղիմք : Վանաւանդ
զի նա ինքն յա քու իրքե զյուլսէփ ետ և տայ մէզ իր-
քե զիաս զթք խորհարզս . որպէս ոչ միայն փրկիմք ՚ի
թշնամեաց, այլեւ ժամանեմք առ նա . իսկ որք յուսան
՚ի զօրութիւ իւրեանց՝ յեանեսցին : Եւ առ ՚ի ցուցա-
նուկ՝ թէ հշմարիտ է այս, յարէ ՚ի սոյն, և ասէ :

Վ. յամինքն , սոքա՝ զօրոց խօսեցայ՝ առաւինելով՝ ՚ի կառու կամ յերիվարս՝ ոչ կարացին առնել բնչ՝ ՚ի պատերազմին խրեանց . այլ՝ նորիմքը խռիտանեցան և անհան . դրա արգելան և ընկրկեցան , տկարացան և կործանեցան : Խակ հետ յարեւառ և ուղիղ եղան . դրա մեք ապաւինմեկալ յամենազօր կարողութին այլ՝ յարեաք ՚ի մեռելու է մեղաց , և * ուղիղ եղաք || , դրա հաստատուն կացաք , կամ ՚ի թիւրութէ վարուց ուղղեցաք :

Վ ստանօր բառու առաջ որպէս և ՚ի վերոյ՝ կարի նշանակել և զգես , նաև զհալածիչն քոփի , որք օրինակելին ՚ի փարաւոն և ՚ի զօրս նորին : Որպա խրեանց հնարիւք իբր կառօք և երիվարօք զինեցան ընդդեմ քոփի և անդամոց նորա՝ կամելով բառնալ զնո՞ր յաշխարհէ . բայց խամբանեցան ՚ի խորհրդոց խրեանց , մանաւանդ թէ անկան և կորեան . խակ քն և հետևողք նորա յարեան և ցուցան ուղիղ լինել :

Վ արցասպէս , ամնարիշտք կառօք և երիվարօք ամին յերկրի . իբր զի փառասիրութեամբ իբր կառօք վարին յերկրի , և անսանական զորդողութիւն իբրեւ զանաւառնո վերկրաւ զան , և յերկիր կորացեալ ունին զինքեանո . որով և խամբանին ՚ի զիմելոյ յերկինս . խակ արդարք ուղիղ կարով և յերկրաւորաց հրաժարելով յերկինս բերին : Օ այս ցուցանէ , և կազմութիւն մարմնոց նոյն , զի անսասնիք ՚ի կոր ունելով զգլուխու և զկազմութիւն մարմնոց խրեանց՝ ՚ի կօր բերին վերկրաւ . խակ մարդու ուղիղ և կանգուն ունելով զկազմութիւն մարմնոյ իւրոյ յերկինս ՚ի վեր , ՚ի նոյն բերի , որով և ասի ուղիղ : Խակ եթէ յերկիր բերիցի՞ անսանոց հաւասարի , և ոչ կարէ ասել , ուղիղ եմ , կամ ուղիղ եղէ : Օ այս յառաջ բերեալ մեծին խոպուլու (՚ի մեկն . ժամադր . երես . 399 .) զրէ այսպէս . * կազմութիւն մարմնոյ մեր ըստ ոչ է իբրեւ զայլ կենդանեացդ որ զգլուխուն ՚ի խոնարհ ունելով միշտ ընդ երկիր աշնուն . զայն միայն շահ օգտի համարելով , զառօրեայ գտեալ կերակուրն . խակ մարդոյս կազմութիւն կանգուն զորով ՚ի վեր միշտ զհայելն գուշակէ առ անձ՝ ըստ առաքելոյ . զգերինն խորհրդութէ հանսպազ || . Վ րդ զըր եղ մարդարէն ՚ի սկզբան , ՚ի նոյն վերջացուցեալ զրան իւր խօսի առ հայր , և ասէ :

Ճ. **Տ**էր հեշտ զնաւուարն . և ըստ մեշ յաւառը յաբան է տոք-
դաստուած առ ժեն :

Օսք ՚ի վերոյ եղ իբրև եղեալ , աստ իբրև լինելի
դնէ . և մաղթողական ձևով խօսի , և պաղատելով
իմն առէ :

Տէր հեշտ զնաւուարն և ըստ մեշ յաբան է տոք-
դաստուած առ ժեն : Այսինքն՝ զերծն և ապրեցն ՚ի չարչարանաց
զթագաւորն մեր զբու . և ՚ի նորահս նորա լուր մեզ , և
փրկեաւ զմեզ յաւուր նեղութե մերում յորժամ կար-
դացուք և աղաղակեցուք ոչ առ այլ ոք , այլ առ
քեզ միայն , որ ես տէր մեր :

Օսք ինչ սասցաք ՚ի մեկնութե այսր սաղմանի կարող
են լնթեցողք հպեցուցանել զայնս իւիք իւիք և
յանձն զաւթի . և ըստ յարմարական մեկնութե յանձն
թագաւորի ես . և զի զիւրին է իւրաքանչիւրոց առ-
նել զայս , նոցա թաղումք . ոնզ զի մի կրկնութե բանից
տացուք առիթ ձանձրութե :

Հարոցապէս՝ բանք սաղմանի կարեն ասիլ ըստ լամք .
՚ի զիմաց իւրաքանչիւր հաւատացելոց՝ խօսելով լնդ
անձն իւր այսպէս . (ա) Ո՞ի երկնչիր անձն իմ տա-
ռապեալ . զի տեսեալ այ զանձկութիւն տառապանաց
քոյ՝ լուիցէ աղօթից քոյ . և օգնական ես լիցի քեզ՝
որպէս եղեւ յակորայ . (բ) և յերկնից առաքեցի.
քեզ զօգնութիւն իւր . (գ) և լնկալցի զխմարհութի
սրտի քոյ և զուխոս քոյ իբրև զամարագդ . (դ) և զամ՝
զօր ինսզրես ՚ի նմանէ վասն փրկութե հոգւոյ քոյ՝ կատա-
րեսցէ : (է) Այ արդ՝ ընէր է քեզ տրտմիլ . Ակ ցնծաս-
ցուը ՚ի առ ՚ի փրկել նորա զքեզ , և մեծասցուք նովա .
(ղ) նա լցուացէ զնամ զինզրուածս քոյ . և որ էօծ ըզ-
քեզ չնորհօք , նա կեցուացէ զքեզ . ոնզ և կեցոյց ինկ՝
աղատելով ՚ի զատապարտութենէ . (է) և այս զօրու-
թի աջոյ և խալին իւրոյ . (ը) խակ եթէ զեք յարի-
ցեն ՚ի վերայ քոյ ՚ի պատերազմ կառօք շփոթութեանց
և երիւլարօք հեշտութեանց , մի ինչ զանզիսեր . զի նո-
քա ովինչ կարեն առնել՝ եթէ մեք կարզացուք զա-
նուն զօրազիսին մերոյ քնի . զի որովհետեւ նը նովա-
խօրտակեցան ՚ի սկզբան , ՚ի լուշ զանուն նորա փախչին
և հալածին . (թ) Այ արդ՝ քաջալերեաց ով անձն

իմ. զի ահա խափանեցան նոքա 'ի չնարից իւրեանց , և անկան զօրութք անուանն յսի . և մեք յարեալ և զերծաք 'ի չար խորհրդոց նոցա , և յուղղութիւն վարուց առաջնորդեցաք . Օ այս ասացեալ դարձուցանէ , ըգ-
բան իւր առ ած 'ի դիմաց նոմ մարդոց , և ասէ . (Ժ)
Տէր կեցն զթագաւորն մեր զբն 'ի մեզ յանդամն նորա , և նովաւ ընըր մեզ . Օ այն զայս միաբան գուեմը և մեք ամենեքեանկաս . զի քսիւ միայն ընդունելի լինին
ազօթք մեր առաջի այ . յոյր սակս 'ի նոյն աւարտեմք և զազօթս մեր ասելով , 'ի քո յու 'ի մեր մեք . և նովաւ
ժամանեմք 'ի փրկութիւն յաւհուենական :

U.S. GOVERNMENT

Վանք չնորհակալութեան կամ ինպութեան 'ի դիմաց
մարդկային բնութեա առ առ վասն փրկութեն քսի . ևս
և գուշակութիւնք չարեաց , որը համին և հասանելոց
էն 'ի վերայ թշնամեաց նորա :

• 11-25-1978 •

Sէր ՚ շաբաթին առաջ առաջ եղած թագուարքն . և ՚ գը-
կուն առաջ յանձնացէ յուժ . 2 Օ յանիստի պրու նո-
ր ետքու նմա . և զիամու շըլանց նորու և արդիւլու ՚ և ամանէ .
3 Ա յամու ուրաբէ զնու յօրինութիւն առցըրութիւնն ու . երես ՚ գը-
կուն արք պատէ ՚ ու ուր պատուանինէ . 4 Ո յամու ինուրեաց . և
ետքու նմա շնորհ երիւայ առաջ յանձնացած յանձնենէ . 5 Ո յա-
մու փառ նորս ՚ գըկութեած առաջ . զիամու և զիւծ կըսէլը-
լիւն շեցու ՚ վլուց նորս . 6 Տ այց զնու յօրինութիւնն յա-
նձնաց յանձնենէ . ուրաբէ ուրաց զնու յանձնացած երեսու-
թիւնն ու . 7 Ո յամու յանձնաց ՚ ու ուր . յուրումնութիւն բարեց-
ւուն կ ասսուացէ . 8 Պ արց յիւն առ ՚ վլուց թըսմեաց առ .
և զիւծ գումանայն առելու ՚ 9 Պ այց պառ ուրա-
բէ հոր ՚ է ժամանակ երեսուց առ . 10 Տ եր բարեցաւթիւն ի-
ւուն կ ասսուացէ զնու . և հոր հեցու պառ . 11 Պ արց յիւն
հոր յերեկ իրեցէ . և զամակ նորս յուրուց ՚ և մարտինէ .
12 Ա յամու յանձնաց ՚ պիւն լուրութ . յօրինուն իրուհուրտ . զիւծ ՚ կ

Էպոսացն հաստատել : 13 Արքացն շնորհ հաղթեալ , ի հայ
ածու ու պարագառեած սոյն պէրեսս նորա : 14 Բամբիր լըր պէր ի
զըրութե քոմ . օրհնեսոյուտ , և սաղմաս սասացուտ զըրութե քոմ .

Ա Ե Բ Շ Ե Գ Գ Ե Բ

Ի հստաբած . սաղմաս ի դասիլ :



ՅՈՄԳԱՄՈՍ ՀՅՈՒՄԲ ԵՄՔԵԼ
մի ը նսախընթացին , և իբրև լրումն նորա .
զի անդ զոշակեաց մարդարէն զպաշտ-
պանին քսի ՚ի թշնամեաց իւրոց , և զփըր-
կել նորա զազդ մարդկան . իսկ սատ չնորհակալ լինի
վասն այնր ՚ի դիմաց մարդկացին բնութեան առ առ . և
զոշակե ևս զւարին , որք ժամանեցին և ժամանելոց
են թշնամեացն քսի : | Հւ ըստ այսմ վերնագիր սաղմա-
սիս կարէ բացատրիլ յայլաբանական միտս այսպէս .
Վաղմաս ասացէալ ՚ի դաւթայ ՚ի կատարած , ցր ՚ի քս .
կամ ՚ի չնորհակալութիւն վը կատարածի , ցր վը կատար-
ման փրկութեն քսի . ևս և ՚ի զոշակութիւն կատարա-
ծի թշնամեաց նորա :

Ա յլ ոմանք զայս սաղմաս մեկնեն ՚ի վերայ եզեկիայ
թագաւորի մինչև ՚ի համարն 7 իբրև զոշակութի
ինչ առողջութեան նորին , և յաւելուածոյ կենաց նորա
(դ . թագ . ի . 6 .) ըստ որում ՚ի 4 . համարն զնի .
* կեանս իննդրեաց ՚ի քէն , և ետուր նմա ընդ երկայն
աւուրս : | Խոկ ՚ի 7 , համարոյ մինչև ՚ի վերջն՝ մեկնեն
՚ի վերայ զօրուն սէնեքերիսաց , որք յարուցէալ էին
՚ի վերայ եզեկիայ . (դ . թագ . ժը . 17 :) Բայց այս
մեկնութի ոչ համարի նկարագրական , այլ յարմարա-
կան . որ և կարէ ընծայիլ այլոց ևս բարեսպաշտ թա-
գաւորաց . ըստ որոյ և մեք ՚ի տօնս սրբ թագաւորացն
ասեմք զայս սաղմաս :

Խոկ ոմանք մեկնեն ՚ի վերայ յաղթութեանն դաւթի
ընդլէմ ամմանացւոց և ասորւոց . ըստ որում յիշեցաք
՚ի սկզբան նախընթաց սաղմանին : Այս մեկնութիւն
(թէ սպէտե կարէ ըստ նկարագրին ձևնարտիլ , բայց իբրև
սորիթ առեալ և ոչ իբրև սկզբնաբար զիտեալ : Օյ

սկզբնաբար դիտեան հայի 'ի քո՞' ըստ մեկնութե սրց հարց , և երեւելի վարդապետաց , ևս և ունանց 'ի նախ նի բարունեացն հրէից . այլ ըստ մեկնաբանութեանն բաղդէացւոց , ուր յանուանէ , յիշատակի մեսիայն . զի 'ի սկզբան անդ 'ի յառաջին համարն զնի այսպէս . * թագաւորն մեսիաց թագաւորեսցէ զօրութք քոլ . և , քանի ուրախութի եղիցի նմա , յորժամ փրկեսցես զնա || ևն . Խակ լամբրոնացին թէպէտե վերածելով առ քո՞ մեկնէ , բայց հայելով յանդամն նորին , դր 'ի հաւատացեալս . այլ այս մեկնութիւն մտածի իրը հետեւողական . որպէս տեսայի 'ի ստորեւ :

Ա. Ա. Ճանիք . զի որովհետեւ 'ի մեկնել մեր զայս սաղման 'ի գէմս քսի , ընդ նովին աւանդի և այն ամ՝ որ վերածի 'ի գէմս զաւթի , յայն միայն այսինքն 'ի գէմս քսի կարգեմք զբանս մեր , թօղեալ ընթերցողին ինքն հապեցուցանել ինչ ինչ 'ի մեկնութեանցն 'ի նոյն ինքն 'ի զաւթի .

Բ Ե Վ Ե .

ա. **Տ**էր 'ի զօրութեան քոմ սորակ եղիցի թագաւորն , և 'ի քըսաթեան քոմ յնծացէ յոյժ :

Մ Ե Կ 'Ե . Ո Ւ Տ Ծ Ը Ե 'Ե .

Յառաջ քան զմեկնել մեր զայս բան և զշետեեալս սորս , դիցուք զերկուս դիտելիս . առա դիտելի է նախ , զի զօրութիւնն այ որ է ամենակարողութի նր . թէպէտե հասարակ է հօր և որդւոյ և հոգւոյն սրյ . զի այնչափ հօր է , որչափ որդւոյ և հոգւոյ . բայց քան զի 'ի խորհուրդ փրկագործութեն քսի հացին տեսանի իրքեւ կամեցող և խոստացող փրկութեան , հոգին սուրբ իրքեւ հաճեցող ընդ այն և յայտնող , և որդին իրքեւ կատարող , ըստ զանազան տեսութե՛մ մի և նոյն զօրութին այն երեւեմն ընծայի որդւոյ . ըստ օրում նա ինքն այնու զօրութք արար և կատարեաց զփրկութի մեր . և յաղթեաց իշխանութեն սատանայի և մահու . (կողոս . ը . 24 , և 45 , ևն) : Երբեմն հոգւոյն սրյ . յոր միտ ասի 'թէ հոգին վարելը զնա զօրութք . (զուկ . դ . 1 .

և 14 : և մարկ՝ ամ . 12 .) | յըթեմն ևս հօր . յոր միտ
ասի , թէ անծ ապրեցց զնա 'ի մաշուանեւ . (երբ . և .
7 .) յարոց զնա 'ի մեռելոց . (գործ . թ . 32 .) բարձ
բացոց զնա յերկինս . (փիլ . թ . 9 .) և ն . Աչ զի որ-
դին ոչ վարեաց կամ ոչ յարոց զինքն , այլ զի այն
անծային զօրութիւն , որով հայր և որդի և հոգին սուրբ
գործեին 'ի փրկագործութեան անդ , ըստ պիտակէս բանի
երբեմն հոգւոյն ասի , և երբեմն հօր :

Օ այս խնդիր 'ի մէջ առեալ սարգիս չորհալի ('ի
մեկն . առ պետ . առ . 20 . ձառ . դկ .) առէ . * զիարդ
իմասցուք զայս (թէ հայր յարոց զբան . ևն . պա-
տասխանէ .) զոր օրինակ մարգարէն ասաց . տէր
մատնեաց զնա առ մեզս մեր , ոչ ասէ , յակամայ
կամ մատնեաց կրել զայն՝ զոր ոչն կամէր , այլ զոր
նայն կամէր՝ զնոյն և հայր մատակարարեաց . զի և
ինքնիշխանութք եկն 'ի չարչարանու . . . ' կմանապէս
և ուր ասաց՝ հօր յարուցանէլ զնա (կամ զօրացուց-
նել , կամ փրկել) , ոչ զանկարութիւն նը զեկոց բա-
նիւն , այլ զմիակամութիւնն , և զնոյն իշխանութիւնն ,
և զմի ներգործութիւնն նկարագրեաց . | Ա. Ա. զի 'ի
փրկարգործութէ անգ ողկ յիշեցաք՝ հայրն տեսանի իբր
խոստացօղ , և իբր առաքօղ , և իբր ընդունօղ . Իսկ
որդին իբր յանձնառօղ , և իբր կատարօղ , և իբր միջ-
նորդ . հօր ընծայի և զօրութիւնն այն անձային , որով
լրացող որդին գիտոհաւոր փոխութէան :

Հայց պարտ է ևս զիտել . զի՞ ի գործել ածային զօրութեանն 'ի փրկազործութե անդ՝ ոչ էթէ ինչ ոչ գործէր մարդկային զօրութինքնի , այլ յամի ընթացակից էր նմին . իբր զի քու այսու ածային զօրութիւ վարելով զինադկային զօրութիւ իւր՝ գործէր և կատարէր զանց գործ փրկութեան մերոյ . ուստի ո և իցէ գործք՝ զօրս գործեաց քու վասն փրկութե մերոյ , ընծային նմա՞թէ ընծային և թէ ըստ մարդկային զօրութե նր : Ամին իրի և յասելն 'ի սաղմոսի աստ՝ կամ այլուր , թէ ած զօրացոյց զքնառ առ՝ ի յաղթել թնամեաց իւրոց ևն , յաղթուին ընծայի միանգամայն ածային և մարդկային զօրութին նորա . ածայնոյն՝ իբրև զօրացուցանովի , և մարդկայնոյն՝ իբրև կատարովի , ոչ բաժանմամբ՝ ի միմեանց , այլ՝ ի մի անձն բանին համանգամայն գործերով :

Վախելի է Երկրորդ , զի բանական հօգին քնի որով Հետեւ էր միանգաւնայն հսաննօղ և ուղեոր , յու Երանեալ և 'ի հանապարհի կենցաղոյ , ուներ զերկին ուրախութիւն . երանական՝ և պատահական : Խրանական ուրախութիւն 'որ ծագէր յերանական զիտուէ , յու 'ի տեսութէ առնային էութեն , ամենեին անփոփոխ էր . և ոչինչ իւկը կարէր նուազիլ կամ առաւելուլ , ոչ յինքեան՝ և ոչ յառարկայն : Խոկ պատահական ուրախութիւնն որ ծագէր 'ի հեղական և 'ի ստացական կամ 'ի փորձառական զիտութէ , կարէր առաւելուլ և նուազիլ ըստ եղանակի ընկալեալ լինելոյ փորձառական հանազնան , և ըստ յարմարելոյ այլեայլ առարկայից : Այդ՝ մարդարէն ոչ խօսի աստ զերանական ուրախութէնէն քնի , այլ զարտահականնէն , ըստ կառարելոյ նր յինքեան և ըստ լրանալոյ առարկայի նր : Օ այտափիկ եգեալ՝ մատիցուք 'ի մեկնութիւն բանիդ . զոր ասէ :

Տէ՛ք 'ի ջրառնել ուռն ուռախ է դժշի նագուարն : յու է , քրով զօրութք՝ ուլ հայր երկնաւոր , թագաւորն մեր քն յաղթեսցէ իշխանութէ մահու և գժոխոց . և փրկեցցէ զազգս մարդկան , և այնու ուրախ եղիցի . կամ որ նայն է 'ի զօրացուցանել քո զթագաւոր մեր զքն առ 'ի յաղթել թշնամեաց իւրոց և թշնամեաց ազգի մարդկան ուրախուցի : Խւ քանզի վասն այսպիսի յաղթութեան մասնեաց զնա հայրն 'ի չարշարանս և 'ի մահ , և յետոյ փրկելով զնա անտի՛ առաւել ևս ուրախ արար զնա , վասն այսորիկ յարի՛ զինի մարդարէն , և ասէ :

Լա՛ք 'ի իշխանութեան ուռն յնծառյէ յոյժ : յու 'ի տալ քո նման զերկութիւն 'ի մահուանէ , կի՞մ 'ի փրկել քո զնա՝ յնծառյէ յոյժ . կամ որ նոյն է , վասն փրկուն քո՝ նման չնորհեցելոյ յնծառյէ նա յոյժ : Խւ կամ այլազգ ևս ըստ լամբրոնացոյն . 'ի փրկել քո նովաւ զազգ մարդկան՝ նա ինքն ևս յնծառյէ յոյժ : Խոկ յոյժ ասելով կամի յայտ առնել ու միայն զառաւելութիւն ուրախութեն , այլեւ զբանալ նորին . իբր զի այնու փրկութք խօսառ լրանայր ուրախութիւն նորա յինքեան առեալ , որովհետեւ նորին ցեալ լիներ և ցանկութիւն որտի նորին . զորմէ խօսի մարդարէն 'ի յաջորդ համարն . և ասէ :

Օ յանէսութի սրբի նորա ետառը նմա . և շնում շընակաց
նորա մէ արգելէք ՚ի նմանէ :

Օ այս բան իրը կատարելի զուշակեաց մարդարէն ՚ի
նախընթաց սաղմանի ՚ի համարն 4 . յասելն . * Տա-
շ , ցէ քեզ տէր ըստ սրտի քում . և զնոմ խորհուրդս քոյ
,, նա կատարեսցէ ॥ . իսկ աստ իրը կատարեալ զու-
շակէ . ըստ որում օրէն է առնել մարդարէից ՚ի ցոյց
Հմարտութեն և հաստատութեն լինելի իրին , ող յատեն
եսայեայ . (Ծ . 6 .) * մանուկ ծնառ մեզ , որդի տուառ
,, մեզ ॥ ևն . * զայս ոչ զեղելոցն՝ այլ զլինելոցն զու-
շակէր (ասէ զերդ վարդապէտ ՚ի մեկն . եսայ .) ող
,, սովոր են (ասէ) մարդարէքն զհանդերձեան իրը և
զեղեալ ասել , առ ՚ի ցուցումն անվիրէալ կատարման
,, մարդարէութեն ॥ : Բատ այսմ իրուելով և աստ սաղ-

Օ յանէսութի սրբի նորա ետառը նմա : Հյանկութի սրտի աւ-
սելով իմանայ զառարկայն ցանկութեան , ցը զցանկա-
ցեան . որպէս թէ ասէր , զայն ինչ՝ որում նա ցանկայր՝
զի տացի ինքեան , ետուր նմա . ցը թէ՝ արարէր զնոմ ,
զոր կամէր . ևս և կատարեցէր զայն՝ զոր նա աղօթիւք
ինսդրէր ՚ի քէն վան հաւատացելոց իւրոց . (յովհ . ժէ .
20 .) և զայս ևս յայտ առնէ յաջորդ բանին՝ ասէ-

լով :
Եթ-շնում շընակաց նորա մէ արգելէք ՚ի նմանէ : Օ կամն շըր-
թանց ասելով իմանայ զբանա շրթանց , ցը զայնպիսի
բանս , որք շրթամբք ասացեալ՝ յայտ առնեն զկամն
ասողին , թէ զինչ կամի , և զինչ իննդրէ : Եւ թէ՝
պէտ սովին ոչ են կամք , այլ բանք . բայց քանզի են
նշան կամեցողութեն , այնու կոչին ևս կամք . յոր միտ ա-
սէ մարդարէն յայլում սաղմոսի , * ընդ կամն բերա-
նոյ իմց հաձեա տր . (ասղ . ՀժԸ . 108 .) Հյորում կա-
մօք իմացեալ լինին բանքն յայտնիցք կամեցեալ իրաց :
Բատ այսմ մոտաց իրուի և աստ մարդարէն , * զկամն
,, շրթանց նորա (ասէ) ոչ արգելէր ՚ի նմանէ . Ա ցը ոչ ոն-
տես արարէր , այլ յաջողեցէր զնոմ , զոր նա կամէր ,
և բանիւք շրթանց ցը աղօթիւք իննդրէր : Որքօք կամի
յայտ առնել մարդարէն , թէ անձ կատարեաց՝ զոր
ինչ իննդրէաց քոյ սրտիւ և բերանալ : Եւ ոչ այսափ

միայն, այլեւ զոր չեր խնդրեալ՝ յառաջագոյն իսկ կատարեաց. վասն այսորիկ յարեւ զինի, և ասէ:

Ղ. **Ճ.** աման որպէտք զնու յօրհնութիւն ժաշբառեն ու երիւ ՚է
չըսկենորու պատէ՞ն ՚է արէ պատուականէ:

Համան առնեն է, հասուցանել զօք յայն ինչ, զօք զիտէ հասուցանօղն, թէ և չգիտիցէ հասանօղն: Իսկ օրհնութիւնն կրկնակի առեալ լինի. մի՛ փոխանակ գերագոյն զովութեն որ ընծայի այլում, ևս և փոխանակ բարեմազթութեն, որով իննզրի այլում բարի. երկրորդ փոխանակ լիութեն բարույ, ևս և փոխանակ բարերարութեան, և յատկապէս՝ փոխանակ այնպիսի բարերարութեն, յորում երեւի անծային ինն բարութիւնն կամ բաղցրութիւնն ետեւէ. յոր միտ ասէ, ամբակում: * օրհնութեան նր լի եղեւ երկիր || (ամբակ. ղ. 3:) Եւ արդ՝ քանզի անձ հայր ժամանեցոյց զքն ըստ մարդկութիւն նր յայսպիսի ինն գերագոյն օրհնութիւնն, ցը ՚ի լիութի բարույ, վասն որոյ ասէ:

Համան որպէտք զնու յօրհնութիւն ժաշբառեն ու: ցը ՚ի ժամանեցուցեր կամ հասուցեր զբն յառաջ քան զգիտելեն զինզրելնորա յայնպիսի ինն օրհնութիւն, յորում յայտնի երեւեցաւ անսահման բաղցրութիւնն քոյ, կամ անհասարութիւնն քոյ:

Իսկ այս օրհնութիւն յոր հայրն անձ ժամանեցոյց զբն, եղեւ կրկնակի, մի՛ ՚ի յաւիտենից՝ ըստ նախասահմանութենն ըստ որում հայրն անձ ՚ի յաւիտենից սահմանեաց զնա բնական որդի այ. ոնդ զրէ պօղոս. (հառվմ. առ. 4:) յառաջագոյն ասէ խոստացաւ անձ զաւետիսն իւր * վոյ որդւոյ իւրոյ եղելոյ ՚ի զաւակէ զաւեթի ըստ մարմնոյ, սահմանելոյ որդւոյն այ զօրութիւնը ըստ հոգւոյն սրբութեն ||. ցը թէ խոստացաւ անձ զմեծամեծ աւետիս վան որդւոյն իւրոյ, որ ըստ որում մարդ՝ սահմանեցաւ ՚ի յաւիտենից բնական որդի այ. և այս ոչ զործակցութիւնը հոգւոյն սըյ:

Երկրորդ՝ ՚ի ժամանակի կատարեմանն. և այս չորեք կին. օրոց առաջինն է, անսապական և կուսական յզութիւնն զօրութիւնը հոգւոյն սըյ. երկրորդն է, միաւորութիւն մարդկային բնութենն ընդ անձին բանին. երրորդն է, տեսութիւնն անձային եւութեն. և չըրբարդն է, հեղումն

լիութեն ամշնորհաց և գիտութեան և առաքինութեն և
իշխանութեն, և նույն ուժութեան մինն յառաջ և միւսն յե-
տոյ, այլ միանգամայն :

Վացաք 'ի վերոյ յառաջ քան զդիտել և ինդրել
ար վե զի քն ըստ որում մարդ՝ ինչ ինչ էառ 'ի հօրէ
առանց իսղբելոյ և առանց արդիւնաւորելոյ, և ինչ
ինչ իրաւամբք և արդիւնաւորելով . իբր զի՞ զայն ինչ,
որք հարկաւ նախընթաց կամ զուգընթաց էին մարդե-
զութեն, էառ առանց արդիւնաւորելոյ . որպիսի է սահ-
մանիւնորա որդի այ, յղութիւ զօրութիւ հոգւոյն սըյ .
և նույն զօրս արդ թուեցաք . զի յայտ է թե այս ամ ոչ
եղեւ յետ արդիւնաւորելոյն, այլ կրծմ յառաջ, և կամ
համանգամայն 'ի վայրկենի՞ յորում զայցաւ բանա-
կան հոգի նորա : | Եւ ահա յայտիսիս հայի առաջի ե-
ղեալ բնաբանդ :

Խակ որք հետեւորդք էին մարդեղութենն, էառ զնոտին
քո՞ թէ իրաւամբք, և թէ արդիւնաւորելով . որպիսի
էին փառք մարմնոյ, փառաւորութիւն անուան, երկրագա-
զութիւն յամ արարածոց, փրկութիւ ազգի մարդկան,
դատել զամնն, և նույն զօրս թէալէտե իրաւամբք ընդու-
նելոց էր քն իբրև զիւր՝ զի էր որդի այ, բայց կամեցաւ
արդեամբք ևս ընդունիւ . որպէս և ինքն խոկ ասաց . * ոչ
.. զնոյնս պարա էր չարչարիւ քո՞ի, և մտանել 'ի փառ
.. իւր || . (զուկ . իշկ . 26 :) | Եւ զայցանէ խօսի մարդա-
րէն 'ի յաջորդ համարսն : | Խակ աստ յետ առաջի դնե-
լոյ զայն օրհնութիւ յոր հայրն երկնաւոր նախաժա-
մանեցոյց զքս, կամելով յայտ առնել զգերազանցու-
թիւնորին' յաւելու և ասէ :

Դաւ երեւ 'ի գըւեն նորա պատէ 'ի տարէ պատուահանէ : | Այս
բան է փոխարերական զրոյց . ըստ որոյ զլուխ ասելով
իմանայ զբանական հոգին՝ որ զերագոյն մասն լինե-
լով մարդոց կարէ համեմատիւ զլիսոյ : | Եւ կամ զլուխ
ասելով իմանայ զանձն . զի որովհետեւ այլարանութիւն
Պրէ վանական վարդապէտ ('ի մեկն . յոթ . գլ . ժկ .) զարսմանք է (ասէ) զի ած լու արդարոց, ևս և մեղա ւորաց 'ի զառնալ նոցա առ նա . ըստ եսայ . (խկ . 26.) ասա դու նախ զանօրէնութիւնս քո՝ զի արդարա ցիս . զիանրդ ասաս ոչ լուսւ և որդոյ իւրում : Պա տաստիանի տայ այսմ, թէ վ՞ո զի որդին զանօրէնութիւ մեր ոչ ասաց, այլ 'ի վր իւր կրեաց . եթէ արդարե ասէր և ինդրէր, լսէր նմա հայր և որդէր . և ոչ ևս հարկ լինէր նմա մեռանիլ . բայց քանզի կամէր նա

մահուամի իւրով ջնջել, զոք՝ ի վր իւր բարձեալ էր,
վասն այսորիկ ոչ ասաց, այլ կրեաց:

Կրել արժան է աստ և զայս՝ զի տէրն մեր՝ ի խա-
չին անդ, նա՝ և՝ ի խաչի երիցս յիշեաց զհայր. մի՝ յա-
ռաջնումն յասելն. * Հայր թաղ զոցա || . (զուկ. իդ.
34:) Երկրորդ՝ ի վերջնումն յասելն. * Հայր ի ձեռս
,, քո աւանդեմ զհոգի իմ || . (զուկ. իդ. 46:) Եր-
րորդ՝ ի միջնումն բայց ոչ բառիւս հայր, այլ՝ ա-
նուամբս ած, յասելն * ած իմ ած իմ ընդէր թողեր
,, զիս . . . ած իմ ի տուէ կարգացի առ քեզ, և ինձ
,, ոչ լուար || : Ա ոչ զի յատաջնումն վու այլոց աղամէր
թողուլ. ի վերջնումն իրու որդի զհոգի իւր աւան-
դէր հօրն. իսկ ի միջնումն իրու թողեալ՝ ի նմանէ,
պաղատէր. արդ անպատէ՛ ի ինն երևի հայր ասել, և
թողուլ զորդի իւր յայնպիսի դառն տանջանս. իսկ
ած կարէ վասն բազում պատճառաց թողուլ զոք՝ ի
տանջանս, կամ ոչ սաստարել նմա:

Երդ՝ յայտ արարեալ մարդարէին՝ ի դիմաց քնի՝ թէ
ոչ լուաւ նմա հայրն, զարմանայ յոց՝ ոչ այնչափ վասն
ոչ լսելոյ նմա հօրն՝ որչափ վու խոնարհէլոյ նորա յայն-
պիսի ծայրագոյն անարդութիւն, մինչ զրեթէ՝ ի մէջ
մարդկան համարիլ անարդագոյն քան զնամ, և իրու
թողեալ յայ. ապա թէ ոչ՝ ցուցեալ էր նմա ած զօդ-
նութիւն իւր:

Եւ ո՞ղ զի ցուցցէ՝ թէ յիբասի այնչափ խոնարհէալ է
և անարդ համարեալ յաջ թշնամեաց իւրոց, սկսանի
այնպիսի օրինակաւ խօսիլ՝ ի դիմաց քնի առ հայր, ո՞ղ
թէ հայրն երկնաւոր ևս ըստ համարման մարդկան այն-
պիսի համարելով լրեալ է զնա, և ոչ օգնէ նմա. իրը
զի ինքն գոլով՝ ի սրբութեան բնակիեալ՝ սրց լսէ. իսկ
միաձնի իւրում՝ որ սրբութիւն է սրց՝ ոչ լսէ, իրու
այնմ՝ որ չիցէ արժանի լսելոյ. և այս վու մեղաց մարդ-
կան, զորս յանձն առեալ էր՝ ի ջնջել: Եւ ըստ այսմ
մտածեալ խօսի առ հայր, և ասէ:

Պառ՝ ի սէս բնակեալ ես, Քովովով իսրայէլ:

Բառդ՝ ի սէս՝ կրկնակի առեալ լինի աստ.
մի՝ ի վերացեալն՝ փոխանակի սրբութեան. ըս որում սո-
վորութիւն է ոք զրոց զթանձրացեալ անունս զնել

փոխանակ վերացելոյ . երկրորդ՝ ըստ յատուկ նշանակութեանն՝ 'ի թանձրացեալն առեալ փոխանակ հոգոց , կամ սրբազն իրաց : Իստ այսոցիկ նշանակութեցս խօսելով՝ առեւ :

Պառ՝ նըս բնակեալ ես գովալու էս իրայէլի : Վակլովն դաս , ու եթէ զինքն ՚ի բաց առնու , իբր թէ ինքն չիցէ բնակեալ՝ 'ի սըս , այլ զի խօսի բատ մարդկային բնութեան . նա՝ զի և պարագայք բանիցն պահանջնէր այսպէս խօսիլ առ հայր . որպէս յասելն ('ի մաստ . ղ . 4 .) * գուցէ , և վարձն ու բնորունիցիք ՚ի հօրէն ձերմէ որ յերկինս ՚ի է . այսու ու 'ի բաց առնու զինքն , այլ զի կարգ բանին այսպէս պահանջնէր , և զի կամէր ևս այսու զմեծութիւն հօրն առաջի առնել . ուստի ասէ Ճործորեցին ('ի նոյն մաստ . ղ .) թէ , * ըստ ժամանակին դնէ զայս , և ըստ լուղացն տիկարութեան , որ զհայր մեծ կարծէն :

Պատ ամին և աստ հօրն տայ զբնակեալ դրոն 'ի սըս . զու 'ի սըս բնակեալ ես առեւ գովեալդ խրայէլի . իբր թէ ասացեալ էր . դու ովլ գովեալդ յխրայէլէ , դու ինքն ամեննեին որ ես , և 'ի սրբութե բնակիս , և յոգիս սըց և 'ի որ իրս հանգչիս , և 'ի ժողովրդենէ քումինէ խրայէլէ զոլիս . իսկ ես միածին որդի քո՞ 'ի վը խացին տարածեալ՝ 'ի մէջ երկուց աւազակաց՝ համարեալ եղէ 'ի մարդկանէ անօրէն . և փոխանակ գովեալ լինելոյ՝ երևեցայ իբրեւ անիծեալ . (գաղ . ղ . 13 .) և իբրեւ անարժան լսելի լինելոյ . վառ որոյ թէ պէտք որ քոց լուար և լսես , բայց ինձ ու լուար . և այս վասն այսորիկ՝ զի եթէ ինձ լսեիր , ու ևս լսեիր նոցա . իսկ ինձ ու լսելով նորա արժանի լինելն լսելի լինելոյ :

Պայլազգ ևս մեկնի այս բան . ոնդ թէ եղեալ էր . անձ իմ զու չես հեռի յինէն , այլ աստ մօտ ես 'ի սրբութե՝ այսինքն 'ի տապանակի բնակեալ՝ 'ի մէջ խրայէլի , յրոց և գոլիս . ապա զիարդ ու լսես ինձ :

Խակ ոմանք զայս բան մեկնէն 'ի դէմն քնի , այսինքն խօսելով առ քն . իբր թէ մարդկարէն զարմացեալ՝ թէ զիարդ ու լսե նմա հայր , ասացեալ իցէ առ նա , յու առ քն . դու 'ի սըս բնակեալ ես , այսինքն 'ի հօգի և 'ի մարմին որ , և կամ յերկինս . և դու ես՝ որ գոլիս յամ արարածոց , մանաւանդ յիարայէլ . դու լինքն

ես՝ յոր յաւսացմն հարքն մեր , որոց և լուար , և փրկեցեր . ասք զիարդ է՝ զի զու ինքն ոչ լինիս լսելի յայ հօրէ քումմէ ; Այս մեկնութիւն երեխ աւանդեալ ըստ յարմարական մասաց միայն , և ոչ ըստ նկարագրին . ոնդ յայտ է՝ ի յաջորդ բանիցն , մանաւանդ ՚ի Ծ համարոց . Օ այս եղեալ յայտ առնէ այժմ ըստ կարգի , թէ զիարդ ած լուաւ նոցա , որք յուսացան ՚ի նա . իսկ որդւոյ իւրում ՚ի խաչելութեան անդ ոչ լուաւ ՚ի միմիթարել զնա , և կամ ՚ի փրկել ՚ի ժամանակաւոր մահուանեւ անտի . վոյ այսորիկ առէ :

Ղ . **Ա** աւշ յուսացան հարցն մէր . յուսացան ՚ի աւշ . և դրէն շեր զնուա :

Է . **Ա** աւշ ողաշահէնցին , և ինցին . ՚ի աւշ յուսացան , և ոչ ամաւչին :

Հարքն մեր առելով ոչ իմանաց սոսկ զարբահամ , զիսահակ , զյակոր , զյուլսէփ , ևն , այլե ՚ի հասարակի զնամ խրայէլացիս՝ որք յառաջ են քան զժամանակն զաւթի . զի տղա յորժամ ՚ի նեղութիւն ինչ անկանէն , աղաղակին առ ած . և յուսացեալ ՚ի նա փրկեին . որպէս յայտ է՝ ի բազում տեղեաց ածաշունչ զրոց . * տառապէին (առէ) որդիքն խրայէլի ՚ի զործոյ անտի , և աղաղակին ՚ի վեր . և ել աղաղակ նոցա առաջի տն ՚ի զործոյ անտի . և լուաւ տեր հեծութեան նոցա . և յիշեաց ած զուխտ իւր , որ ընդ արբահամու , խառհակայ և յակորու . և հայեցաւ տեր յորդին խրայէլի , և ծանուցաւ նոցա . (ելից . թ . 24 :) Եւ ՚ի զիրս դասաւորոց բազում որեք սրտմի , թէ յաղաղակել որդւոյն խրայէլի առ տեր՝ լուաւ նոցա , և առաքեաց առ նոսա փրկիչ (դատ . դ . 9 : և դ . 3 : և դ . 7 : ևն .) Եւ քանզի աղաղակ նոցա հիմնեալ եր ՚ի յոյս նոցին , նախ զյուսալ նոցա ՚ի մէջ բերէ ասելով . Ի քեզ յուսացան հարքն մեր . յուսացան ՚ի քեզ , և փրկեցեր զնոսա : Խամի առել . դու հայր իմ լուար և անսացեր հարց մերոց այսինքն խրայէլացւոց ՚ի նեղութեան իւրեանց , յորժամ յուսացան ՚ի քեզ . և լսելով նոցա փրկեցեր զնոսա . իսկ ինձ ոչ լուար : Ի մէջ բերելով ապա և զաղաղակել հարցն հանդերձ յու-

սովլ, ասեւ :

Վայ ժեզ աշաղակին, և էցին . ՚ ժեզ յառաջան, և աչ ամացան : Վային ՚ ի սաստկանալ նեղութեան հարցն մերոց խարպյեցւոյ՝ սաստկացուցին զյօս իւրեանց, և յուսով աղաղակեցին առ քեզ . և զու ապրեցուցեր զնոսա և կեցուցեր ՚ ի ըարաւար նեղութենւ անտի նց . որով և ուրախ եղեն նորա ՚ ի քեզ . և ոչ ամանեցին ասելով թէ ՚ ի զուր եղեւ աղաղակել մեր առ ած : Խոկ յաղաղակել իմ առ քեզ ՚ ի նեղութեանս իմում, թէ ՚ ի պարտիզի և թէ ՚ ի խաչին, ոչ լուար ինձ . որպէս թէ եւ որ քո միածնն եմ որդի՝ և ոչ ՚ ի մարդոց համարի իցեմ, այլ անարդ քան զմարդ, և ծանակելի ՚ ի մէջ մարդկան՝ անարժան լսելի լինելոց : Ոմն իրի յարէ զինի, և ասէ :

Վայ ժեզ որդին էմ, և աչ էմ նորդ . նախառինս նորդինս
և որհամբարհանս ժողովուոց :

Տէրն մեր յորժամ ՚ ի մէջ մարդկան շրջէր, աղքատ և խոնարհ երեւէր նոցա . և ՚ ի թշնամեաց իւրոց բազում քանիւք նախատեալ լինէր, իբրև սահարացի և իբրև զիւահար . որպէս յայտ է . (յովհ . ը . 48 . եռ :) Վայ որպիսի ինչ կարէր երևիլ առ նոսա, յորժամ յարեամ քրուունս տագնասովէր, յորժամ ՚ ի ձեռս գաղանացեալ զինուորաց մատնեալ և կապեալ լինէր, յորժամ առաջի աննայի, կայիսիափայի, պիզասոսսի և հերովդէի իբրև արագործ ոք ամբաստանեալ լինէր, յորժամ ապասկի և ձաղկանս ընդունէր, յորժամ նախատական հանգերձ զգեցեալ փողլ պատկեալ լինէր, յորժամ քան զբարաբայ աւազակ՝ մահապարտ հապարտ համարեալ լինէր, յորժամ քան զբարաբայ աւազակ՝ մահապարտ համարեալ լինէր, յորժամ ՚ ի մէջ երկուց աւազակաց ՚ ի խաչին բեկուէր, յորժամ ՚ ի հօրէ իւրմէ ևս թռողեալ աղաղակէր, * ած իմ ած իմ ընդէր

” թռողէր զիս || :

Հիրաւի յայտափօթի և յայտափ աղէտու՝ ոչ միայն խոնարհ քան զիրեշտակս եր տեսանել զնա, այլ և նըւաստ քան զամենայն մարդ : Վո որ հայեցեալ եսայեայ, ասաց . * Ոչ զոյր նորա տեսիլ և ոչ փառք . տեսապ մեք զնա, և ոչ զոյր նորա տեսիլ և ոչ գե-

„ զեցկութիւն . այլ տեսիլ նորա անարդ՝ նուազեալ
„ քամ զամենայն որդւոց մարդկան . . . գարձուցեալ
„ զերեսս իւր անարդեցաւ . . . և զազգասոհմ նորա
„ ո պատմեսցէ || . (Եսայ . ԾՂ . 2 . և 8 .) Ուր յետին
քանիւս՝ զոր ասէ , * զազգասոհմ նորա ո պատմես
„ ցէ || , կամի ցուցանել , [թէ] և ոչ իսկ տեսիլ մարդոյ
նշանարիւր 'ի նմա , որով հնար լինելը հանաչել , [թէ]
յորմէ ազգէ իցէ նա . կամ որ նոյն է , ոչ ևս երեկո
իբրև մարդ՝ որ ծնեալ իցէ յազգէ որդւոց մարդ-
կան , այլ անարդ քան զամենայն մարդ . 'ի սոյն սակս
ասէ :

Այլ ես որդն էմ , և աչ էմ մարդ : Այսինքն է՝ 'ի ժամու-
սատ , յորում կամ 'ի վերայ խայբն , յայնպիսի վի-
ճակի եմ , մինչեւ երեկի ինձ անարդ քան զամենայն
մարդ . մանաւանդ [թէ] ոչ ևս մարդ , այլ իբրև որդն
անարդեալ 'ի մարդկանէ :

Խորհրդաբար՝ որդն անուանիլ քո՞ի յայլ և այլ տեսու-
թիւնս ևս կարէ ակնարկել . մի 'ի կուսական ծնունդն ,
ըստ որում հանգոյն որդան փայտի ոչ 'ի սերմանէ
առն , այլ 'ի կուսէ ծնաւ . Այրկրորդ՝ զի կազմեաց մեզ
ըստ որդանն վայելուչ կերպասա հոգւոյ 'ի ձեռն շնոր-
հաց : Այրորդ՝ զի զմարդկութիւն իւր էարկ զանու-
թեամբ իւրով իբրև զորդն զեարթիւ ըստ որորդաց , ո-
րով ըմբռնեաց զաստանայ , և որսաց ևս զօրդիս
մարդկան 'ի կեանս : Յոր միտ ասէ սարդիս շնորհալի
('ի մեկն , առ պետ . դ . 19 . ձառ . ը .) [թէ] * յիթանել
„ յերկնից (որդւոյն այ) , և 'ի մարդն լինել՝ [թագոյց
„ զանութիւն իւր ընդ վարագուրաւ մարմնոյն , զի մի
„ արագ իմասցի չարն . այլ զի տեսանելով զնա 'ի կեր-
„ պարանս աղամայ՝ դիմեսցէ 'ի վերայ նորա սպանա-
„ նել զնա որպէս զագամն . և մեռցի մահու դատա-
„ պարտեալ 'ի պանչելի զօրութենին նորա || : Հորդորդ՝
որպէս որդն հարկանէ և աղամանէ զիազմուածս և
զկերտուածս , սոյնպէս և որդին այ եհար զմեզս և
ապականեաց զախտս : Հինգերորդ՝ ըստ նմանութեան
որդան մածուցեալ 'ի փայտ խայի՛ անարդ իմն ցու-
ցաւ . և ապա նորոգութեամբ թռեաւ 'ի յարութեանն :
Այցերորդ՝ ըստ որդան փիւնիկ հաւու երեւցաւ . զի
աւանդի յառական՝ [թէ] այս հաւ ժողովեալ յանփուտ

փայտից կազմէ զբոյն խըր . և բարախմանիք թեղն
լուցանեւ զայն և այրի ՚ի նմին . և ՚ի մնիբոյն ելանեւ
որդն , և անսի յաննեւ . սոյնպէս և քնչ տարածմանիք
ձեռաց ողջակիզեալ՝ի վերայ փայտի խաչին , և իջեալ
՚ի զերեզման՝ յարեաւ յաւուրն երբորդի : Վ. Ա. թէ
յողջակիզին անդ քանի նախատելի ցուցաւ , յայտ
առնեւ առելով :

Այս առաջին նորդէն : Վատանով բառու նախառին՝ կըրեկ-
նակի իմաննի . մի՞ իբրև առիթ կամ նիւթ նախատա-
նաց . և մի ևս՝ իբր առարկայ . Վատ առաջնոյն կամ
առել . այնչափ անարդ երեւիմ ես մարդկան , մինչեւ
լինել ինձ առիթ և նիւթ նախատանաց նոցա , այս-
ինքն է՝ մինչեւ նախատինք վարկանիլ մարդկան առ-
առել զիս ՚ի բերան , կամ հայիլ . յիս , և կամ նախա-
տինք համարիլ իմոցս՝ թէ իմ իցին . որպէս արար
յուղա , ևս և պետքա՝ յասելն վասն նորա , * ոչ ճա-
շաւչեմ զայրն || : Վատ երկրորդին՝ այսինքն իբրև
առարկայ իմացեալ կամի առել . եղէ ես առարկայ
նախատանաց մարդկան , այսինքն է՝ նախատելի ՚ի
մարդկանէ . ես և խոտելի ՚ի ժարովրդոց . և առ այս
յարէ զինի :

Այս առաջարկան ժառնչերոց : Վ. յոինքն թէ իբրև ա-
նարդ ոք արհամարհեալ եղէ ՚ի ժողովրդոյն խրայե-
լի . զի սոքա փախանակ ընդունելոց զիս ՚ի վեր քան
զինք , քան զբարաբրայ անարդ համարեցան զիս . և
աղաղակեցին առ պիշտատու վասն իմ , * բարձ զդա .
,, և արձակեամեզ զբարաբրա || . (զուկ . իդ . 18 :)

Հայսպիսի անիրաւութիւն համարձակեցան սոքա զի ոչ
ծանեան զնա . քանզի և նա ծածկեաց զինքն ՚ի նոցա-
նէ , զի մի ծանիցին : Հայս միտ վերածէ զերգ վար-
դապետ զվերոյզրեալ բանն եւսայեայ զի զրէ ՚ի մեկ-
նութեանն այսպէս . * գարձուցեալ զերեսս իւր՝ անար-
., գեցաւ . որպէս որ ՚ի թիկանց տեսանելով ոք՝ ոչ
., ճանապէ զմարդն թէ և յընտանեաց իցէ , զի ծանո-
., թութիւն ՚ի դիմաց է . այսպէս և տէրն՝ զածութիւնն
., ՚ի մարդանան ծածկեաց յամենեցունց . զի թէ եր
., ծանուցեալ ոչ արդեօք զտերն փառաց ՚ի խաչ հա-
., նէին . այլ զի զարձեալ եին երեսք նորա , անար-
., գեցաւ , և ոչ ինչ համարեցաւ . այսինքն յաշաց ել

“ամենեցուն ॥ : | յւ ’ի ժամ խաչելութեան յամենեցունց որք մերձն կային նմա՝ դառն նախատանօք թշնամանեցաւ . սմբն իրի յարէ զկնի , և ասէ ,

Է . **Ա** մենեցեան որ ուստանելին զիս , արհամարհելին զինեւ . խոսելին շընամբն , և շարժելին դժւուիս էւրեանց :

Է . **Յ** ստուգա՝ ’ի պէ , և իրինոցէ զնա . հեցուոցէ զնա , զէ իսդի զնա .

Վ սելով մենեցեան , խմնայ զամենայն ցեղ մարդկան ըստ զանազան վիճակի . այսինքն են՝ բարիք և չպրք , մեծաստոնք և աղքատք , աղնուականք և ռամիք , իշխանք և զինուորք , տեարք և ծառայք , ծերք և մանկոնք , քահանայք և դպիքք , հրեայք և հեթանոսք , դահինք և առազակք՝ բաց ’ի սերէ կանանց :

Ա մենեցեան որք ուստանելին զիս , արհամարհելին զինեւ . խոսելին շընամբն , և շարժելին դժւուիս էւրեանց : Կամի ասել . տեսեալ զիս որդւոց մարդկան ’ի վերայ խացին ’ի դառն տանջանս , փոխանակ ’ի զութ շարժելոյ՝ բանիք և զործովք արհամարհին զինեւ , այսինքն քահահելով անարդէին զիս . բերանովք իւրեանց հայհոյանա խօսին , և զգլուխս իւրեանց ’ի վերայ խմ շարժեին իրեւ ’ի վերայ չարագործի : | յւ այսու ես ոչ շատացեալ՝ յուսահատեցուցիչ բանիք և կոկծեցուցիչ թշնամանօք և երգիծանողական այսկանօք խօսեին զինեն առմիւնանս , և ասեին :

Յ ստուգա՝ ’ի պէ , և իրինոցէ զնա . և՛ : այսինքն եթէ յուսացաւ ’ի ողք՝ փրկեցի՝ զնա . և եթէ կամի զնա տէր , այսինքն է՝ եթէ սիրէ զնա տէր , կեցուցի՝ զնա ’ի մահուանէ աստի :

Ա յս բանք ոչ այնչափ մարդարեռութիւնք համարին , որչափ թէ պատմութիւնք եղեալ իրաց . զի բառ առ բառ աւանդին սոքին յաւետարանի . քանզի մատթէսոս զրէ . * | յւ ողք անցանեինն (ասէ) , հայհոյէին ո՛ զնա . շարժեին զգլուխս իւրեանց , և ասեին . վահ որ քակեիր զտահարն , և զերիս աւուրս շինեիր զնա՝ ասպեցո՞ զքեզ . եթէ օրդի ես այ , և՛ | ի իսչէդ :

„գերձ զպրօքն և ծերօք , և ասէին . զայլը ապրե .
„ցոյց , զինքն ոչ կարէ ապրեցուցանել . եթէ թագա .
„ող է խրայելի , իջցէ այժմ՝ ի խաչէդ , և հաւա .
„տասցուք դմա : Եթէ յուսացաւ յանձ՝ փրկեցէ
„այժմ զգա՝ եթէ կամի զգա . քանզի ասաց , եթէ
„այ որդի եմ : (մատ . իշ . 39 : տէս և 'ի զուկ . իդ .
35 : և խմաստ . ք . 12 = 21 :)

Ոքա փոխանակ դութ ցուցանելոյ ըստ բնական
կարգի՝ այսպիսի գառն բանիւք կրկին և կրկին դառ .
նացուցանեին զտէրն փառաց : Եթէկիոս արքայ և .
զիապտացոց հալածեալ յիւրոյն՝ փախեաւ . և նաւա .
րեկեալ անկաս յաւազուտ տեղիս մերկ և ողորմելի :
Խուեալ զայս եգիպտացոց պնդեցան զշետ նորա՝
զի սպանցեն զնա . բայց իբրև տեսին զնա յայնափիսի
վիճակի՝ գթացան ՚ի նա , և դարձուցին յետո : Խակ
սոքա խստանային , և անօրէնութք անագորոյն բարս
ցուցանեին առ տէրն փառաց՝ ի տեսանելն զնա յայն .
պիսի աղետալի տանջանս : Խակ թէ զինչ խօսէր յայն .
ժամ տէրն մեր ՚ի սրտէ առ հայր՝ առաջի առնէ մար .
գարէն ՚ի յետագայ բանադ ասելով :

Ե. **Պ**առ ես որ հաներ զիս յարդանդէ . յոյս իմ 'ի սովեանց
ծօք ինչ :

Այս բանք ինքնին առեալ թէպէտե ամենայն մար .
դոյ կարէն յարմարիլ , բայց ըստ ամենայն պարա .
գայիցն մօածեալ՝ միայն քնի պատշաճին . վասն զի
թէպէտե զամենայն մարդ ինքն աստուած զոյացուցանէ
յարգանդի մարց իւրեանց , և 'ի ծնանին նոյա՝ իբրև
թէ ինքն առնու . զի ինքն է՝ որ պահէ կենդանի . բայց
վարելով միանգամայն և այլովք արարածովք իբրև
զործեօք : Խակ զոյաւորիլ մարմնոյն քնի յարգանդի
կուսին՝ և ելանելնորս անտօն՝ միայն յաստուծոյ եղեւ ա .
ռանց զործակցութեան այլոց (բաց 'ի մօրէ), ևս և ան .
արատ կուսութեամբ . ուստի որպէս ան միայն զոյա .
ցոյց զմարմին նորա , նոյնպէս ան միայն եհան զնոյն
յարգանդէ առանց խախտելոյ կուսութեան մօրն : Ամին
իրի ասէ :

Ե. **Պ**առ ես՝ որ հաներ զիս յարդանդէ : այսինքն դու միայն
առանց զործակցութեան իրիք ստեղծուածոյ զոյացու .

ցեր զիս յարդանդի կուսին ըստ մարմնոյս . և հրաշա-
լի օրինակաւ առանց խախտելոյ կուսութեան մօք իմայ
հաներ զիս յարդանդէ նորա ծննդեամբ . կամ ծնու-
ցեր զիս անտի : Խըս և յետ ծնննելոյ իմայ զու միայն
եղեր մնուցիւ իմ . և առ այս յարէ :

Հ Ե Յ Ի Տ Ե Ա Ն Զ Տ օ Ր Ի Մ Ա Յ ։ Հ Յ Ս Ա Մ Ե Լ Ո Վ Մ ի մ ա ն ա յ պ
աստ զատարկայն յուսոյ , այսինքն զայն՝ յոր յուսալի
է . և թէպէտ քոյ յատուկ յուսով ոչ կարէր յուսով
՚ի հասանել յերանութիւն և ՚ի վայելումն ածութեն ,
զի արդէն մարդկութիւն նորա անձնառուագէս միաւու-
րեալ էր ընդ ածութեան . և հոգի նորա երանեալ էր
տեսութիւն ածութեան , և լիութեամբ չնորհաց ,
բայց քանզի ըստ մննդեանն և ըստ խնամոց մարմնոյն
նախախնամիւր միայն յայ , վասն այսորիկ կարէր ըստ
այսմ ասել առ հայր իբրև առ խնամօղ և պաշտպա-
նօղ , * յոյս իմ ՚ի ստեանց մօք իմայ || . այսինքն՝ զու
միայն ես խնամօղ և պաշտպանօղ և մնուցանօղ իմ
՚ի ծննդենէ իմմէ մինչև ցայժմ . զի և կամէն այն ,
զոր ձգեցի ՚ի ստեանց մօք իմայ , ՚ի քէն էր . վասն զի
քոյով զօրութիւն գոյառողիւր այն :

Օ Ա Յ Ս Ա Տ Ե Լ Ո Վ Մ ա ր դ ա ր է ի ն ՚ ի զ ի մ ա յ ք ն ի ՚ կ ա մ ի յ ա յ ա տ
ա ն ն է լ , թէ յետ այս ասի խնամելոյ հօր զքոյ արժան
էր լսել նման ՚ի վշտագին տառապանս նորա . բայց ոչ
լուս , որպէս զի այնու ազատեացէ զազդ մարդկան
յամենապիշտ տառապանաց մեզաց նոցա . Ի Ա Յ Լ որպէս
զի առաւել ևս ցուցցէ զմեծութիւն այսր արժանաւո-
րութէ , յարէ զինի և ասէ :

Ժ . **Ա** Տ Ե Ն Ա Կ Ի Ա Յ Ե ս յ ա բ դ ա ն դ է , յ ա բ դ ա յ ն է Տ օ Ր Ի Մ Ա Յ Դ Ա Յ Ե ս
ած իմ :

Ի ստ աւանդելոյ բազմաց , և ըստ բանիցն հոմերոսի
՚ի զիրս՝ որ յաղագս պատերազմացն տրոյիադայ , առ
նախնիսն սովորութիւն էր , զի յետ ծնննելոյ մանկան՝
տարեալ ընծայէին զնա հօր նորին . և հայրն առեալ
զայն ՚ի զիրկս՝ առաքէր առ մայր մանկանն : թութիւն
թէ յայսպիսի սովորութիւնս հայելով մարդարէին՝
ձեացուցանէ զայս բան : Խա քանզի քոյ ոչ ուներ
զայլ ոք հայր՝ բաց ՚ի յերկնաւոր հօրէն , եթէ ըստ
այսմ սովորութեան քննեցուք , միայն քոյի յարմարի

տիրապէս ասել զայն :

Պաշը անկայ էս յարդանդէ : այսինքն յորժամ ելի ևս յարգանդէ մօր իմց . անկայ ՚ի զոգ ինամոց քոց . և զբեղ միայն ծանեաց ինձ հայր և ինամօղ . զի ու ունեի զայլ որ հայր ծնող , և կամ նախախնամօղ իբրև անձ՝ բաց ՚ի քեն . և առ այս յարե :

Յարակայն մօր էմոյ դու ևս անձ էմ : այսինքն ՚ի վայրկենէ անտի՝ յորում յացայ յորովայնի մօր իմց և ծնայ՝ մինւե ցայժմ՝ յասուկ ինն տեսչութեամք ինսամօղ իմ եղեր . և ես զբեղ միայն ունելով ինձ անձ՝ զանձն իմ բեկ մասուցի պատարագ հաշտութեան : | Եւ որով հետեւ զբեղ միայն ունեի և ունիմ ինձ հայր և ինամօղ , առ քեզ միայն կարգացի . և սակայն դու ու լուար ինձ միսիթարել զիս ՚ի նեղութեանս իմում , և փրկել զիս ՚ի մահուանէ սատի իսայի :

Վյարգանօրէն՝ այս համար ընդ նախընթացին կարէ մեկնիւ յայն խորհուրդ , որով եհան հայրն անձ զբժ՝ ՚ի սինակովկայէն հրեհց . զի որովհետեւ քո՝ ՚ի նոցանէ ծնաւ , ՚ի մերժել նոցա զնա՞ հայրն երկնաւոր ևս եհան զնա՝ ՚ի սինակովկայէ նոցա իրը յարգանդէ . և ընկալաւ ՚ի զոգ իւր . այսինքն յեկեղեցի հեթանոսաց :

Ուեծն խոսրով (՚ի մեկն . ժամագր . երես . 305 .) զայս բան ՚ի բարոյական միսս յառաջ բերեալ՝ մարթ է առէ վերածել զօտ ՚ի ծնունդ՝ եթէ ըստ մարմնոյ և եթէ ըստ հոգւոյ . և բանդ նորա են այս . * | Քեզ անհայ ևս յարգանդէ . յորովայնէ մօր իմց դու ևս անձ իմ . զօր թէ ըստ մարմնաւոր ծննդեան և թէ , ըստ աւազանի չնորհայն առնուցու որ՝ ոչ վնասեած , ցէ : | Ճրդ զայտոսիկ առաջի եղեալ բերանով մարգարեին՝ մաղթէ առ հայր՝ օգնել ինքեան , յայտ արարեալ զսաստկութիւն նեղութեցն զօրս կրեր անմիթ թար . վասն որոյ ասէ :

Ժամ . **Ա**ն ՚ի բայց առներ յինքն . զի նեղութեալ երբյալ չն . և աւ ու է , որ օգնէ ինչ :

Վյայս բան յայտնի ցուցանէ , թէ ակըն մեր ՚ի ծայրուցին և ՚ի մահացուցիչ տանջանս եր ՚ի պարտիզին և ՚ի վերայ իսային . և յայնպիսի տանջանս զորով չուներ

զբք , որ փոքր ինչ միսիթարութիւն ընծայելով օգնեց
նման . վասն որոյ 'ի հօրեւ իւրմէ խնդրեւ , և ասէ :

Ու է 'ի բացեայ տառենէր լինեն : Արով ոչ ցուցանեւ , թէ՛ ՚ի
բացէ էր 'ի նմաննեւ . հայր , այլ թէ մի երեւեցի իւրեւ
հեռի ՚ի նմաննեւ . կամ իթրեւ ոչ օգնօղ նման . ուստի
սովորն զայս միայն կամի առել . խնդրեմ 'ի քէն հայր
իմ , զի ցուցես առ իս զօգնութիւն և զգօրութիւն քոյ
ոչ զի ազատեցայ ՚ի մահուաննեւ , այլ զի մի արգելեալ
մնացից ՚ի մահու անող , որոյ վիշտն արգելն տագնապի:

զիս : Ո ան որոյ յարէ զինի և ասէ :

Ու է նեղութէր մեջեալ էն : այսինքն վերջին տագնապիք
մահու հասեալ էն առ իս , կամ նեղութիւնք հոգեվա-
րութեան եկեալ էն 'ի վերայ իմ : Ո ի մերձեալ էն ա-
ռելով՝ զայս յայտ առնեւ , այսինքն զտագնապս նե-
ղութեանց՝ որք լինին 'ի հոգեվարութե : Եւ թէսէր , տ
ոչ ամենայն՝ որ 'ի հոգեվարութեան է , կրէ զտագնապ
նեղութեան . բայց տղն մեր կրեաց զայն 'ի ծայրագոյն
սասահճանի եթէ 'ի պարտիզի , և եթէ 'ի խաչի . զի 'ի
պարտիզի յորժան կուտակութիւնք չարշարանայն
ձեացուցեալք լինէին յերեւակայութեան նորա , և ինքն
կամովին թողեալ էր զզգայութիւնն 'ի սոսկալ , և ոչ
ինչ իւիր միսիթարութիւն մատուցմնէր ինքեան , յայն-
պիսի տագնապ եհաս , մինչեւ զարեան քրտունս հե-
ղուլ . ուստի զիս՝ զուկաս՝ թէ էր 'ի տագնապի , այս-
ինքն յանհնարին տանջանս հոգեվարութեան : Ոյն-
պիս և 'ի խաչին սասաթիկ եղեւ վիշտ տանջանաց նորա .
մանաւանդ զի յառաջագոյն բազում հարուածս ըն-
կարեալ էր յամենափափուկ մարմին իւր : Ուստի յոր-
ժամ այնպիսի տանջեալ մարմնով կենդանւոյն բեկ-
ռեցաւ 'ի խաչի , անբերելի վշտօք և ցաւօք 'ի նմին
տառապեցաւ : Եւ զի յայսմ յամենայնի ոչ ոք զտաւ
օգնական նորա , սմին իրի ասէ :

Եւ է ոչ է՝ որ օգնէ ինչ : Ո յս բան բատ արտաքին
նշանակութեան իւրում ցուցանէ զայս , թէ յայնափի
բազմութեան մարդկան , որոց բազում բարիս ցուցեալ
էր , ոչ դտաւ ոք՝ որ փոքր ինչ դիւրութիւն կամ միսի-
թարութիւն ընծայէր նման . և ոչ իսկ ամենառը մայր
նորա . զի նա մօտ խաչին կացեալ առաւել ևս սասա-
կութեան ցաւոց նորա առիթ լինէր . որպիս ցուցանի 'ի

մեկն . մաստ . (զԼ . իշ . համար 44 . էրես 886 :) Խոկ
ըստ ներքին նշանակութեան ցուցանկ զայս , [թէ բաց ՚ի
հօրէ ոչ որ կարեր օգնել նմա՞ առ ՚ի մահուամբ իւ-
րով մեռուցանել զման՛ : Օ այսոսիկ եղեալ՝ սկսանի
այժմ պատմել զանդթութենէ թշնամեաց իւրոց , [թէ
զիսարդ սաստեցին զնա , և յոր վիճակ անձկութեան հա-
սուցին . վասն որոց առէ :

ԺԸՐ . Հուրջ եղին զինել զուարակ բաղաւած . և յուլու գիրք
Պաշտեցին զին :

Օ թշնամին իւր նմանեցուցանէ կաստաղի անասնոց ,
յու զուարակաց , և ցլուց , ևս և դաղանաց , այսինքն
առիւծոց՝ ՚ի յաջորդ համարն . և շանց ՚ի 46 , հա-
մարն : Վորա առ հասարակ պէսպէս օրինակաւ շուրջ
եղեն զբանիւ բանիւք և գործովք . զորոց խօսի կար-

զաւ : | յւ նախ առէ :

ԺԸՐ . Հուրջ եղին զինել զուարակ բաղաւած . Օ ուարակք ասին
արու որթք մեծացեալք փոքր քան զցուլ . Խոկ սոքօք
իւնացեալ լինին աստ սպասաւորք քահանայապետին ,
որք ՚ի գիշերի մասնութեն յարձակեցան ՚ի վերայ քոի
անմեղ զառինն , և շուրջ պատեալ զնովաւ՝ տանջե-
ցին զնա մօտ ցառաւուս . զի որպէս զրեն աւետարա-
նիցքն , յետ որոյ առաջին չար ատեան հրեից դատա-
պարտեաց զբու , արբանեակք քահանայապետին շուրջ
պատեալ զնովաւ՝ սկսան տանջել զնա * թքին ընդ
,, երեսս նորա , և կռփեցին զնա . և ոմանք պատակե-
,, ցին , և առեն , մարգարէաց մեզ ք քոդ՝ ովլ է՝ որ ե-
,, հարն զբեզ || . (մատ . իշ . 67 :) | յւ թէ սոքա էին
արբանեակք կամ սպասաւորք քահանայապետին , յայտ-
նի ցուցանէ զուկաս յասելն . * | յւ արքն՝ (այսինքն
,, են սպասաւորքն) որ պահէին զնա , այսն առնէին
,, զնովաւ , և հարկանէին . ծածկէին զերեսս նորա , և
,, տանջէին , և հարցանէին ցնա և առէին , մարգա-
,, բէաց՝ ովլ է որ եհարն զբեզ || . և յաւելու ևս [թէ
* և այլքազում ինչ հայհոյութեամբ խօսէին ՚ի նա] .
(զուկ . իշ . 63 :)

Արդ՝ սոքա յայն սակս նմանին աստ զուարակաց , զի
վերագոյնք էին քան զորթս , այսինքն քան զուամիկ
ժողովուրդս , և վայրագոյնք քան զցուլ՝ այսինքն

քան զգպիրս և զգբարխեցիս և քան զիշխանս հրեից :
Եւ ես՝ զի որպէս յորժամ զուարակը կատաղին, յան-
ինայ խեթիեն և հարկանեն, սոյնպէս և սպասաւորք
քահանայապետին յանինայ խեթիելին զբա՛թէ՛ հայ-
հոյելով և թէ՛ հարկանելով : Ի՞այց այս ինչ ասպիե-
րութիւն երեւցաւ 'ի մէջ զուարակաց և այնոցիկ սպա-
սաւորաց, զի զուարակը յորժամ կատաղին՝ ոչ խեթ-
իեն և ոչ հարկանեն զգառինս, այլ զայլ . իսկ սո-
քա զանմեղ գառն աստուծոյ զբա՛թ 'ի մէջ առեալ անողոր-
մութեամբ խեթիելին : Քետ խեթիելոյ սոցա՛յարձա-
կեցան 'ի վերայ նորա և ցուլք որոց վշա՛յարէ զինի, և
ասէ :

Եթ շուշ գէր Պաշտեյն շէ : Քուլք ասին եղինք ոչ
մալեալք, (զի ոչ կռտեալք .) որք յորժամ զիրանան,
զազանանան, մինչև ընդ առիւծու ևս կռուիլ : Ովոք
նշանակին աստ ըստ շարականին՝ դպիլքն և փարիսեցիք
և ծերը ժողովրդեանն, որք զիրացեալ էին փափիկու-
թք և հեշտութք . և անշնարին կատաղութք կա-
տաղեալ էին ընդդէմ անմեղ գառինն : Ովա իբրե-
ցուլք զազանացեալք պաշարեցին զբա՛թ բազում ան-
զամ 'ի բազում տեղիս, և հարին զնա եղթերօք իւ-
րեանց :

Կախ առաջին որպէս զրէ բարսեղ ձնն ('ի մէկն . մարկ-
ժէ .) պաշարեցին զնա 'ի պարտիզի . զի ըստ որում ասէ
մարկոս, (ժկ . 43 : և զուկաս . իկ . 52 :) և որպէս
առանդի յայսօր անձառն՝ ամբոխն այն՝ որ առաջնոր-
դութք յուգայի եկն 'ի վերայ քնի յաղօթելնորա 'ի
պարտիզի, ժողովեալ էր ոչ միայն 'ի զինուորաց և 'ի
սպասաւորաց, այլև 'ի գոլքաց և 'ի փարիսեցւոց և 'ի
ծերոց և 'ի քահանայապետաց և յիշխանաց՝ որք և
զազանութեամբ ձեռն արկին 'ի նա, և կռտեալ տարան
առ աննա, և յետոց առ կայիիափա :

Երկրորդ՝ յատենի քահանայապետին . զի 'ի նոցանէ
էին, որք ըստ զրելոյն մարկոսի . (ժկ . 53 . և 57 .)
* Քարուցեալ վկայէին սուտ զնաննէ, և ասէին, [թէ
,, մէք լուաք 'ի դմաննէ՝ զի ասէր, ես քակեցից զտա-
,, ձարդ զայդ ձեռագործ, և զերիս աւորս շինեցից
այլ առանց ձեռագործի] :

Երրորդ՝ յատենին սիրատոսի . որք յուլեալք 'ի քա-

Հանայապետիցն՝ աղաղակելին . ՚ի խան հան զգա , և
արձակեալ մեզ զբարարբար . (մարկ . Ժե . 1 . և 13 . և
դուկ . իշ . 10-23 :)

Սովորող՝ առաջին հերթիցէի . ուր * կային քահանայապետքն և պնդագոյն շարախօսելին զնմանէ . || .
(դուկ . իդ . 9 :)

Հմագերողոց ՚ի լերինն զաղղոթայ . ուր զառն նա-
խասանաօք հայչոյեին զբո՞ի վերս խային , և զիծեցու-
ցիւ բանիւք խեթեին զնա , որպէս յայտ է . (մատ .
իէ . 41 : և մարկ . ժէ . 31 : և դուկ . իդ . 35 :)

Վ. Ա. զիտելի է, զի այս որոշումն՝ ըստ որոյ Եղագ,
թէ զուարակօք նշանակին սպասաւորք քահանայապետին, իսկ ցըք դպիթքն և փարփակցիք, ըստ յարմառութեան դնի առաջի. ըստ որում և ՚ի շաբական առաջ ուրբաթուն ասի . * ցուլք դէքք սպաշտեցին, ողք ՚ի դպրաց և ՚ի փարփակցւոց ||. իսկ եթէ ոք զուարակօք խնսացի զնոտին իսկ զգալիոն և զփարփակցիս, կամ ևս վիստանուժ ամբոխն, և ցըք զքահանայապետն, ոչ ինչ վրիպի ՚ի հըմարառութէ. վո՞զ զի այս բան առ ամենունն ևս կարէ վերահսյիլ. զի սովին ոչ այնչափ ՚ի մէջ բերի որոշումն անձանց, որչափ ցցց շաբասիթան
Մնելոյ նոյնին բառ պէսպէս համեմատութեանց :

|| Աստի բազում մեկնիցք առանց որոշելոյ գնեն . ևս
և զուարակօք և ցօք ոչ խմանան զայլ և այլ , այլ
ուռհասարակ զամ թշնամին քսի , մանաւանդ զհրէ-
այսն . և ասեն ևս , թէ այն յետին բան , * և ցուլք
դէրք պաշտեցին զիս || , է իբրև բացարութիւն , կամ
կրկնումն ինչ նախընթաց բանին , այնք թէ * շուրջ
է զեն զինե զուարակք բազումք || . Վ.յս կարծիք ևս
է ուղիղ . բայց ուղղագոյն ևս երեխ այն՝ զօր եղաք .
այլ յամի դիտումն մարդարէին ըստ նշանակելոյ մեր՝
է ցուցանել զկատաղութիւն թշնամեացն քսի . զոր և
վու առաւել սաստիկ երեւեցուցանելոյ , ամեհի գազա-
նաց ևս նմանեցուցանէ զնոսա՝ մանաւանդ զքահանացա-
պետն , ասերոյ :

Առիւծն յորժամ քաղցնու , եթէ տեսցէ զորսն և

կամ զթնամիս իւր , սկսանի մանէլ . և բացեալ
զբերան իւր՝ յարձակի՛ ի վերայ նոցա , և յափշտակեալ
պատառէ , զնո՞ւ : Ոյնավէս արարին և քահանայապետքն
հրեց ընդդէմտեան մերոյ իրրե . առիւծք քաղցեալք .
նա զի որպէս զրեն ոմանք , ընդ որս և երջնկացին ('ի
մեկն . մատ . գլ . իդ .) առ չարութէ եան սրտից իւրեանց
ոչ կերին զզատիկն՝ մինչև պատառեցէն իրրե քաղց
ցեալք զանմեղ զառն յիսուս . ուստի և ոչ մնին յարա
րանս պիղատասի ըստ զրելոյն յովհաննու . (ժը . 28 :)

Վ. Ճ Եթէ զիարդ և ուր և երր մանչելով բացին սրա
զբերանս իւրեանց 'ի վերայ քնի՛ կարգաւ զրի յաւետա
րանի : Եւ նախ առաջին յանիրաւ ատենի իւրեանց ,
ուր միաբերան աղաղակեցին և ատեն . * մահապարտ
է . (մատ . իդ . 66 : և մարկ . ժդ . 65 :) Եւ ապա
առաջի պիղատասի . ուր 'ի հարցանել նորա զնոսա վասն
քո՞ր . * զինչ չարախօսութիւն մասուցանելք զանեն
զայնմանէ . ատեն , * եթէ չըր չարագործ այրն այն .
ապա ոչ մասնէաք զնա քեզ . (յովհ . ժը . 30 :) Եւ
,, Եթէ * զտաք զսա , զի Եթիւրէր զազգս մեր , և ար-
,, գերցը 'ի տարց հարկս կայսեր , և ատէր զանձնէ .
,, Եթէ քնն իցէ Եթքր . . . (և Եթէ՝) խռովէ զժողո-
,, վուրդս , ուսուցանէ ընդ ամենայն հրեաստան՝ սկսեալ
,, 'ի զալիլէ մինչև ցայսը . (զուկ . իդ . 2 :)

Եւ իրրե տարան առ չերովդէս , սկսան պիղագոյն
ևս չարախօսէլ զնմաննէ . որպէս զրէ զուկաս . (իդ .
10 :) Եւ յորժամ զարձեալ ածին զնա առ պիղատաս ,
'ի կամիլ նորա արձակել զնա՝ սկսան աղաղակել .
* բարձ զդա . (զուկ . իդ . 18 :) Եւ 'ի ինզըրել նորա
'ի նոցանէ զվասս նորին՝ անողըէն աղաղակեին , * 'ի
խաչ հան զդա . (զուկ . իդ . 21 :) Եւ * սոփակէին
, (ասէ .) մեծաձայն , և խնզըրէին զնա 'ի խաչ հանէլ .
և զօրանային բարբառք նոցա և քահանայապետիցն .
(զուկ . իդ . 23 :)

Ջետ այսորիկ գարձեալ միւսանգամ բացին 'ի վը նո-
րա զբերանս իւրեանց . զի յորժամ պիղատաս կամե-
լով զիջուցանէլ զկանտաղութիւնս նոցա՝ ետ ձաղկել զքո՞-
և կացոյց զնա առաջի նոցա ձաղկեալ և փշով պաս-
կեալ , փոխանակ 'ի զութ շարժելոյ՝ * զազաղակ
բարձին և ատեն . 'ի խաչ հան , 'ի խաչ հան զդա |

(յովհ . ժիշ . 6:) | աւ յասել պիղատոսի , * ես 'ի զմա վնաս ինչ ոչ գտանեմ || . պատասխանի ետուն նմա , և ասեն . * մեք օրենս ունիմք , և ըստ օրինաց մերոց պարտի մեռանիլ , զի զանձն իւր որդի այ արար || . (յովհ . ժիշ . 7:)

Հաւելին ապա չարաշար ևս բանալ զբերանս իւրեանց . քանզի յետ որոյ լուսւ պիղատոս զաղաղակ նոցա և տարառ զյիսուս 'ի ներքո , և լուեալ 'ի նմանէ բազում ինչ իրեւ կամեցաւ արձակել զնա , նոքա * աղազակելին և ասեին , եթէ զդա արձակես , չես բարեկայսէր || . (յովհ . ժիշ . 12:) | ասկ իրեւ վերստին եհան զնա պիղատոս արտաքս , սկսան բարձրածայն ևս աղաղակաւ ասել . * բարձ 'ի մէնջ , բարձ 'ի մէնջ , և հան զդա 'ի խաւ : Վաւ ցնոսա պիղատոս , ես զթագաւորդ ձեր 'ի խաւ հանիցեմ . պատասխանի ետուն քահանայապետքն . չիք մեր թագաւոր բաց 'ի կայսերէ || . (յովհ . ժիշ . 15:) | աւ յասել պիղատոսի * քառեալ եմ ես յարենէ արդարոցդ այդորիկ . զոք զիտասաջիք || . պատասխանի ետուն և ասեն . * արիւն դորա 'ի վերայ մեր , և 'ի վերայ որդեռոց մերոց || . (մատ . իէ . 25:) { Հայսմամենայնի թէպէտե ժողովուրդքն ևս աղաղակելին . բայց քահանայապետքն էին՝ ողք զայրագին ձայնիւ զուէին , և զամբոխն ևս յոզէին . վասն որոյ յայսոսիկ աղաղակսդ յաւետ նորաեղեն նման կատաղեալ առիւծու , քան ամբոխն : |

սովին հայելով ասէ :

| Ասցին 'ի չէրայ իմ ուբերանց իւրեանց որդիս առիւծ զի ճաշն չէ շատլուսէ : | Այսինքն թէ որպէս առիւծն բերանաբաց յարձակեալ 'ի վերայ թշնամոյն իւրոյ 'մոնչելով յափշտակէ զնա և պատառէ , սոյնպէս և քահանայապետքն յետ յարձակելոյ 'ի վերայ իմ , և յետ այն չափ չարախոսութեամբ բանալոյ զբերանս իւրեանց յափշտակէցին զիս 'ի ձեռաց պիղատոսի , և առեալ տարան 'ի լեւան զողգովա , ուր պատառեցին զիս 'ի վերայ խացին : | յւ անդ ևս բացին զբերանս իւրեանց 'ի վերայ իմ 'ի նախատել և 'ի հայշոյել զիս բազում կոկծեցոցիք բանիք , ըստ որում եղաք 'ի վերայ 'ի համարն 7: (առես և 'ի մատ . իէ . 41 . և 'ի մարկ . յէ . 31 . և 'ի զուկ . իդ . 35:)

Ի բանալ քահանայասպետից և փարթիսեցւոց և ժողովրդեան զբերանս իւրեանց՝ ի վերայ տեամն մերոյ, և բաց և սատամնայ զբերան իւր առանց չափոյ . զի որք չարաշար բացին զբերանս իւրեանց՝ թօթմափեսցին՝ ի բերան նորա չարաշար : * Երաց առանց չափոյ թագահ, զաթմաղասար զբերան իւր (ասէ գէորդ վարդա, այս ինքն տունն ռութենի և զագայ և կէս ազդին մանասէի) . սոյնափէս և սատամնայ արար հայելով՝ ի տիբասապանն . որովհետեւ առանց չափոյ բացին զբերանս իւրեանց ընդդիմ տն : Վ. Ա. Մ. տէլն մեր յանմի յայսոսիկ ոչ երաց զբերան իւր ըստ նոյ . այլ զամ զոր միանգամ ասացին և արարին՝ անտրտունջ ընկալաւ , և ամի առանց ընդդիմութեան տարաւ . և զայս կամելով ցուցանել՝ նաևնութեամբ իմն խօսի , և ասէ :

Ճի . **Ճ** որդիս ջար հեղոյ , և յըրաեցան ամ սովէրտ իմ . և ուշ սիր իմ որդիս նամ հալուալ՝ ի մշշ որոշուանի իմ :

Հայտնի տեսանի յաւետարանի՝ թէ ողբն մեր՝ ի մատնել անդ զանձն իւր կամաւ . ի ձեռս թընամեաց իւրոց՝ քանի քաղցրութեամբ , քանի խոնարհութեամբ և քանի հեղութեամբ կրեաց՝ ի նոցանէ զարցարանս . ոչ վարեցաւ ընդ նոսա խստութեամբ , և ոչ ընդդիմ եկաց հարկանողաց իւրոց . * Ես (ասէ բերանուլ եսայեայ) ոչ խստանամ , և ոչ ընդդիմ զառանամ . զիթիկունս իմ ետու՝ ի հարուածս , զծնուսու իմ յապտակս , և զերես իմ ոչ դարձուցի յամօ . թոյ ընդ երեսս թքանէրոյ . (եսայ . ծ . օ .) Որովք ցուցանի հեղութիւն նոր՝ ի չարչարանն , և անսիստկալութիւն նորին . ոնդ և պետքոս զըէ յառաջին թդիմին . (ը . 23 .) * Որ բամբասեալ (ասէ) , և ոչ փոխարէն բամբասէր . չարչարեալ , և ոչ պահէր սորառնալիս . բայց իրաւամբք մատնիւր դաստաւորին . Որով և քաջալերս տայր մեզ յանձն անսուլ զի և իցէ նեղութիւն . * ի պատուհասէ անտի ոչ հրաժարէր (ասէ յովհան իմաստամբք յերես . 66 .) զոր օրինակ բժիշկն յարբուցանել զդեզն հիւանդին հանդերձեալ՝ արացէ իւրով հաշակմամբն հաւասալի : Օ այս

պիտի հեղահարեցը վշտատարութիւն ուն մերս կամելով մարգարեին մեծ ցուցանուել և սրանցելի , այլաբանութեամբ իմ առաջի մասուցանէ ՚ի բերանոյ նորա և ասէ :

Եւ որուես զջուր հեղայ ։ այսինքն ես ոչինչ իւիք ընդդիմացայ թշնամեաց իւոց , այլ իրեւ ջուր հեղայ առաջի նոցա . այս է , եղի զիս առաջի նոց իրեւ զկակղանիւթ ինչ հանգոյն ջրոց , զի արասցեն ընդ իս՝ զիարդ և կամին : Հայն տակս նմանութեր ջրոց խօսի , զի որպէս ջուրն ոչ ունի ինչ բնաւ խառութիւն յինքեան , այլ ըստ ամ մասանց իւրոց զիւրացարժ է և հպատակ , և որ ինչ արկանի ՚ի նոս , յինքն ամփոթի , և ծածկէ , այն պէս և քո որպէս ասացաք՝ ոչ եցոյց բնաւ զխստութիւն ինչ առ թշնամիս իւր . այլ ըստ ամի հպատակ եղեւ նոցա ՚ի տանջել նոցա զնա : Օ ի թէպէտե ՚ի պարտիզի անդ միանգամբ բանիւք միայն եցոյց նոցա զզօրութիւն իւր ՚ի կործանելն զնասա յետս կոյս յերկիր , բայց՝ այն էր ՚ի ցոյց կարողութեան իւրոց . և ՚ի նշան՝ թէ կամաւ տայ զինքն ՚ի ձեռու նոցա . որպէս և յետս տալոյն՝ իրեւ անզօր և տկար գտան , կամ իրեւ զուրկ ՚ի զօրութենւ , եկաց ՚ի ձեռու նոցա : Ամբն իրի յարէ զինի , և ասէ :

Եւ շրուեցան ամ սովերք իմ : Ասկերօք իմացեալ լինին ասա զօրութիւնք հոգւօյն . զի որպէս ոսկերօք հաստատուն ունի զինքն մարմինն , նոյնափէս և հոգին զօրութերք իւրովք : Եւ ըստ այսմառեալ յասենն , * ցրուեցան ամ ոսկելը իմ , կամի ասել , մեկնեցան և բարձան յինէն ամ զօրութիւնք իմ վանիքը բռնութե թըշնամեաց իւոց . ոչ զի իրօք կորուսի զնասին , այլ զի նորօք ոչ կամեցայ վարիլ առ թշնամիս իմ . այլ մանաւանդ թոյլ ետու նոցա վարել ընդդէմ իմ զտկար զօրութիւն և զանզօր իշխանութիւն իւրեանց . յոր միտ ասաց առ նոսա . * այս է , ձեր ժամ , և իշխանութիւն առքի ։ (զուկ . իր . 53 .) որպէս թէ ասէր , ահա թոյլ ետու ձեզ . զի զուք ձերով խաւարային իշխանութեամբ արասաջիք ընդ իս՝ զիարդ և կամիք իրեւ ընդ այնպիսի մարմին , որ իցէ առանց ոսկերաց տկար և զիւրամէտ և զիւրացափ : Եւ այս ոչ միայն արտաքուստ , այլ ՚ի ներքուստ . և առ այս յարէ :

Եւ էղեւ սիրու իմ որոշէս նոմ հալքաւլի և էջ որովայիս իմու : Ալա-

մի ասել . Ես որպէս առ արտաքրա ոչ խառացայ առ
թշնամիս իմ , այլ՝ հեղ գտայ առ նոսա , սոյնավէս և
՚ի ներքս ՚ի օրտի խմում ոչ խառացայ ընդդէմ նոցա .
և ոչ պահեցի սիս առ նոսա , այլ՝ որպէս մամ հալեալ
կակող գտայ՝ այսինքն հեղ եղէ առ նոսա և խոնարհ .
Խռս և որպէս մոնին ՚ի ջերմութենէ հալի , սոյնավէս և
սիրտ իմ ՚ի ջերմութենէ սիրոց և զթոց , զօր ունեի ՚ի
վերայ նոցա , զրեթե , հալեցաւ . մինչեւ շարժեալ յու-
ղըմութիւն ՚ի վերայ կուրութեն օրտից նոցա՝ աղաւեցի
զհայր իմ վասն նոցա . * Հայր թաղ գոցա , զի ոչ զե-
տեն՝ զինչ զործեն . (զուկ . ինք . 34 .)

Խակ այն՝ զօր ասէ , * ՚ի մէջ որովայնի իմոց || . նշանա-
կէ , ՚ի մէջ աղեաց իմոց . այսինքն ՚ի ներքս ՚ի հոգիս
իմ , զի յայս միտս զնի բազում ուրեք ՚ի սուրբ գիրս
բառս որովայն (ըս այնու . երգ . Է . 4 .) * որովայն իմ խոռոչէ-
ցաւ ՚ի նա . այսինք աղիք իմ , կամ սիրտ իմ . և ՚ի
յովհ . (Է . 38 .) ասի . * զետք յորովայնէ նորա (այս-
ինքն ՚ի հոգւոց նորա , կամ ՚ի օրտէն նորա) բղխեսցեն
ջրոց կենդանութեան || :

Վայ բնարան , զօր հայելով ՚ի թշնամիսն քսի մեկնե-
ցաք , կարէ այլազգ և ո մեկնիլ առանց հայելոյ ՚ի նո-
տա . ըստ որոյ առաջին հատուած այսր բանի , այն՝
զօր ասէ . * Խռ որպէս զջուր հեղայ || , նշանակէ , զա-
րեամբ քրանիլ տեսան մերոց , կամ զնուազիլ մարմնոց
նորա ՚ի վերայ խացին ՚ի հումանէ այնչափ արեանցն .
և կամ և զերեիլ նորա իբրև նուազեալ և լքեալ ,
և յամ զօրութենէ պակասեալ . զի յայս միտ ուրեք
ուրեք ՚ի զործածի այս ոճ . ըստ որոյ ասի ՚ի գիրս
յեսուայ . (Է . 5 .) * պակասեցաւ սիրտ ժողովը-
գեանն , և եղեն իբրև զջուր || . և այս՝ վասն կատ-
րելոյ նոցա յարանցն զայեայ . և ՚ի գիրս թագաւո-
րոց ասի վասն մարդոց՝ որ մերժեալ իցէ . * իբրև
զջուր հեղեալ յերկիր ոչ ամենոփիցի || . (ը . թագ .
ԺՂ . 14 .) որպէս նշանակի տկարանալ և խոսա-
նանալ :

Խակ երկրորդ հատուածն , այն՝ զօր ասէ . * յրուե-
ցան ամենայն ոսկերք իմ || . ըստ այսմ առեալ նշանա-
կէ զիրախտիլ ոսկերաց նորա ՚ի վերայ խացին . վասն
զի յորժամ զահինքն ՚ի խաչեն զնա՝ զձեռս և զոսու-

նորա ուժգին ձգմամբ քարշեցին . և 'ի վերայ խաչին տարածեցին , զբէթէ խախտեցան ամենայն ոսկերք նորա : Իւ զի յառաջազոյն բևեռեցին զնա 'ի խաչին 'ի վերայ գետնի , և յետոյ զիսան՝ բարձրացուցին , 'ի բարձրացուցանել զիսան՝ կարի իմն ցնցէր այն . մանաւանդ 'ի միել զրուն նորին 'ի փոս փորեալ առ 'ի հատատուն կարյ 'ի նմին : Իսկ 'ի ցնցելոյ անտի՝ ցնցէր ուժգին և տարածեալն 'ի վերայ նորա . և այս ցնցումն յայտ է թէ պատճառէր զիսախտումն ոսկերաց , և զանհնարին ցաւս : Իւ դարձեալ՝ որովհետեւ տէլն մեր 'ի խաչին չունէր զայլ ինչ յենարան բաց 'ի բևեռայն , ծանրութիւն մարմնայն 'ի վայր խոնարհեալ՝ զրեթէ իբր ըև ցրուեալ երևեցուցանէր զսկերս նորա . և վասն այսր ասէ . * ցրուեցան ամենայն ոսկերք իմ || . (զայս մանէ ունիմք խօսիլ և 'ի համարն 17 :)

Ոյնպէս և երրորդ հատուածն , այն՝ զոր ասէ , * եղեւ սիրո իմ որպէս մամ հալեալ 'ի մէջ որովայնի իմց || , նշանակէ զյետին նուազումն քնի 'ի վերայ խաչին 'ի բոյց անհնարին ցաւոյն . և կամ ևս՝ զտագնապիլ նորա 'ի սրարտիզի յարեան քրտունս : Օ ի ըստ ոճոյ երբայց եցոյ , ևս և այլոց ազգաց՝ այս նմաննարանութիւն նշանակէ զնուազումն սրտի : Ոյն այս երկրորդ մեկնութիւն հայի 'ի չարչարեալն ըստ չարչարանաց . իսկ առաջինն հայի 'ի չարչարեալն ըստ չարչարողաց . և երկրորդին ևս կարգին 'ի ցուցանել զսաստիկութիւն տանջանայն , և զչեզութիւն տանջեցելոյն :

Հոգեորապէս՝ սակերգօք իմացեալ լինին աստ ըստ մեկնութէն սուրբ հարց՝ առաքեալքն , որք ցրուեցան 'ի քոէ 'ի ժամու ըմբռնման նորա : Իւ որպէս յայնժամ առանց հրամանի նորա ցրուեցան 'ի նմանէ , նոյնպէս և յետոյ հրամանաւ նորա ցրուեցան՝ այսինքն սփռեցան յաշխարհ ամենայն՝ ժողովել զցուեալն յարքայութէնէնէ նորա :

Հայտ արարեալ մարգարէին զչեզութիւն համբերութեանն քնի 'ի չարչարին՝ միանզամայն և զնուազիլն 'ի չարչարանաց անտի՝ կամելով ապա զառաւելութիւն չեզութեան նորա ցուցանել այլով իմն նմաննութեամբ խօսի 'ի բերանց նորա , և ասէ :

Ճ. **Ղ**որաշաւ որպէս իեցոյ զօրութէ էմ ։ Ըլու էմ 'ի տիմս էմ էց էցեցաւ ։ Ե 'ի հող մահու էջուցին զիս ։
Հորժամ ըրանայ խեցին 'ի հնոցի խսպառ կորուսանէ զխոնառութիւն իւր , և քանզի տէրն մեր 'ի հնոցի չարչարանաց իւրոց երեւցաւ խսպառ կորուսեալ ըզ կարողութիւն իւր , յայս նմանութիւն դիտելով խօսի , և ասէ :

Ղորաշաւ որպէս իեցոյ զօրութէ էմ ։ Կամի առել , այն զօրութիւն կամ կարողութիւն իմ , որով կարէի վանել յինէն զթնամիս իմ և զմահ , * ըրացաւ ։ , այս է՝ պակասեցաւ յընդդիմանալոց , կամ երեւցաւ որս կասեալ յուժգնութենէ իւրմէ . վասն զի այնպիսի իմն հեղութեամբ թոյլ ետու՝ զի ըմբանեսցեն և կապեսցեն , հարցեն և վիրաւորեսցեն զիս թշնամիք իմ , մինչեւ երեխի ինձ առ նոսա անզօր յընդդիմանալ , և տկար 'ի հակառակիլ . և առ այս յարէ և ասէ :

Խ եղու էմ 'ի տիմս էմ էցեցաւ : Այսինքն լեզու իմ ունչնէ խօսեցաւ ընդդէմ թշնամեաց իսնոյ՝ ու ջատագովելով և ու սպառնալով , ու տրտնջելով և ու անգոսնելով . որպէս թէ կցեալ էր այն 'ի քիմն իմ : Եւ թէպէտ տերն մեր 'ի ժամանակի չարչարանաց իւրոց խօսեցաւ ինչ ինչ , բայց այն խօսք նորա ու եին ընդդէմ թշնամեաց իւրոց , այլ 'ի նորաստ հոգւոց նոցա : Իսկ պատճառ ու խօսելոյ ինչ ընդդէմ նոցա՝ այս էր . զի եթէ խօսէր , միով ևեթ բանիւ յամօթ արարեալ զնոսա՝ զերծուցանէր զինքն 'ի ձեռաց նոցա . իսկ նա զայս ու կամէր . այլ հաձնէր , զի նորա ըստ ամենայն յօժարութե իւրեանց տանջեսցեն զինքն և սպանցեն . որպէս և արարին իսկ : Եւ առ այս յարէ զինի , և ասէ :

Եց՝ 'ի հող մահու էջուցին զիս : Այս բան եթէ մտածեացի ասացեալ յառաջ քան զմեռանիլ տնն մերոյ՝ 'ի մէջ բերէ զնմանութիւն մահու . որպէս թէ եղեալ էր . արարին զիս նման մեռելոց՝ որք թաղին 'ի հող : Իսկ եթէ մտածեսցի զինի մահուն ասացեալ 'ի մէջ բերէ ու զնմանութիւն մահու , այլ զմահ . ուստի և ասելով 'ի հող մահու՝ կամի առել 'ի մահ . զի որովհետու մահոն է պատճառ դառնալոյ 'ի հող , փոխանակ ասելոյ՝ 'ի

մահ իջուցին զիս , ասէ՝ * 'ի հող մահու իջուցին զիս || .
որ է , ասէլ . 'ի մահ հողացուցիչ իջուցին զիս , այսինքն
է՝ սպանին զիս :

Համը է ևս ասել ընդ բազմաց , թէ հող մահու ա-
սելով իմանայ զգերեզմանն . ոչ զի մարմինն քսի 'ի
հող զարձառ , վասն զի զրեալ է՝ թէ * և ոչ մարմինն
նորա ետես զապականութիւն || . (գործ . թ . 31 . և ԺԴ .
37 .) այլ զի որովհետեւ մահացեալքն կամ մեռեալքն
'ի հող զառնան 'ի զերեզմանի , 'ի նոսին հայելով
փոխանակ ասելոյ 'ի զերեզման , ասէ՝ 'ի հող մահու
իջուցին զիս . այսինքն թէ թաղեցին զիս 'ի զերեզ-
մանի :

Վ. Ա. զիտելի է , զի որպէս զնախիլնթաց համարոյն
ասացաք , սյնպէս և այս համար այլազգ ևս մեկնի
առանց հայելոյ 'ի թնամիսն քսի . ըստ որոյ առաջին
հատուած այսր բանի յասէն , * չըրացաւ որպէս խեց-
.. ոյ զօրութիւն իմ || , յայտ առնե՝ զնուաղիլ և զցամա-
քիլ մարմնոյն քսի 'ի վերայ խաչին 'ի հոտմանէ ար-
եանց . յորմէ պատճառեր չըրութիւն յամենայն ան-
գամն նորա , որք էին իբր 'ի հոգի չըրացարանաց՝ որ-
պէս խեցի . և այսու պատճառեր ևս ծարու սասաթիկ
'ի լեզուն :

Եւ առ այս յարէ զերկըորդ հատուած բանին ասէ-
լով . * լեզու իմ 'ի քիմն իմ կցեցաւ . || . այսինքն այնպիսի
ցամաքութիւն եին 'ի վերայ իմ , և այնպիսի ծարու 'ի
լեզուս , մինչև լեզու իմ յարեցաւ 'ի քիմն իմ : Եւ
այս նուազութիւն և ծարու ոչ եթէ ականց պատա-
հէր նմա , այլ կամօք և թոյլսուութեամբ իւրով . Եւ
սյնս կարէ ցուցանիլ անստի ևս , զի ասէ աւետարա-
նին , թէ * յետ այսորիկ իբրև զիտաց յո , եթէ
.. ահա ամ ինչ կատարեալ է . զի կատարեսցի զիրն ,
.. ասէ , ծարաւի եմ || . (յովհ . ժթ . 28 .) Աւ սնանք
հոգեորապէս առեալ լեզուօք իմանան զառաքեալն ,
որք եղեն իբրև լեզոք կցեալք 'ի քիմն 'ի զիշերի չըր-
չարանաց , յորժամ ամերտիեալ ծածկեցան :

Խակ երրորդ հատուած այսր համարոյ , այն՝ զոր ասէ ,
* և 'ի հող մահու իջուցին զիս || . կարէ հայել յիշա-
նեն քսի 'ի գժոխս , որ գոլալ 'ի մէջ հողոյ երկրիս՝
կարէ խիբ այլաբանութեամբ կոչիլ հող մահու : Օ այ-

սոսիկ եղեալ՝ սկսանի պատմել զայնց յետին տանը ջանաց, որոց զհետ եկն մահ և թաղումն. վասն որոյ առէ:

ԺՂ. **Ը** սորչ եղին շինել շունչ բաղանճ, և ժայռվա լորաց
պաշտուեցին վիճ:

Ի վերոյ (՚ի 7. Համարոց մինչև ՚ի 13. Համարն) խոռեցաւ զթամամեաց իւրոց զհրեցից. և զի սոքա 'ի ձեռն հեթանոս զինուորաց և դահճաց տանջեցին և խաչեցին զքն, այժմ զնոցանէ խօսի, և առէ:

Ը սորչ եղին շինել շունչ բաղանճ: Որքոք իմացեալ լինին զինուորլըն պիղատոսի. բատ որում աւանգի 'ի շարականն աւագ ուրբաթու: Որքա շունք կողին, սակայն ոչ այնչափ պիղատոսի որչափ քահճանայապետիցն. զի յորսալ նոցա զբն իբրև զեղթերու անմեղ, սոքա իբրև շունք նոցա կալան զնա. բայց ոչ իբրև հասարակ շունք որսորգաց յարձակեցան 'ի նա, այլ իբրև կատաղիք չարաչար խածատեցին զնա. վասն զի յետ ըմբռնելոյ զնա, յորժամ կամեցաւ պիղատոս ձաղկել զնա առ 'ի ցածուցանել զկատաղութիւն քահճանայապետիցն, նոքա իբրև վայրենի գաղանք 'ի դիւաց հարեւակք՝ շուրջ եղեն զնովաւ և կատաղութեամբ յղացեալ, ասքա ամենելին սաստիկ լիներ և ցաւ հարուածովք սկսան խածատել և պատառուտել զմազմին նորա:

Խոկ թէ որչափ սաստիկ եր ցաւն՝ զօր կը եր, մեզ չէ հնար ըմբռնել. ապաքէն որքան փափուկ է մարմինն, այնքան առաւել զգայ զցաւն. և քանզի ամենելին փափուկ էր մարմինն քափ, զի եր կուսութեամբ յղացեալ, ասքա ամենելին սաստիկ լիներ և ցաւ հարուածոյն. զօր կամելով սուրբ հարց գոյն ինչ խածուցանել, նմանեցուցանեն ցաւց հարուածոց յաշն. վասն զի փափ կութիւն մարմինոյն քափ էր նման փափկութե աշաց. ըստում ասէ զաքարիա. (գ. 9.) թէ * 'ի վերայ վիմին ու եօթն աչք են ||. մանաւանդ թէ նոյն խոկ վեմն քառլոր աչք եր. արդ մի և նոյն հարուած յայլ և այլ անդամն զայլ և այլ ցաւս պատճառէ. 'ի ստորինս ստորին, խոկ 'ի յաշն սաստկագին:

Վ. Յ. թէ 'ի տանջիլ տեառն մերոց յայսպիսի ցաւս՝ զինչ անելը, տես յաւետարանի. և ուշազրութիք ընթեր-

ցեալ զայն՝ հայեաց միանգամ յերեսս տանջեցելոյն .
տես թէ . քանի հեղութեամբ և քաղցրութեն կայ առաջի
հարկանողայն . տես թէ հեծութիւն ինչ հանէ 'ի որր
տէ . և կամ ոչ ձայնի հնչի 'ի բերանոյ . կայ անշարժ ,
և յամենայն հարուածմն անխուսափ . մինչեւ ասել
* արարի զդէմն իմ իբրև զվեմ հաստատուն || . (ե-
սայ . ծ . 7 :)

Առ որ հայեցեալ մարգարեին զարմանայ ընդ հե-
ղութիւն նորին . և ողբազինս եղանակելով ցաւալից
խօսի զնմանէ , և երկարելով զբանս իւր՝ ասէ . * Վայլ
մի 'ի հարուածս , և զիստ՝ համբերել ցաւոց . զի
զարձուցեալ զերեսս՝ անարգեցաւ , և յոցինչ հա-
մարեցաւ . նա զմեզս մեր բառնայ , և վասն մեր
շարշարի . և մեք համարեցաք զնա 'ի ցաւս և 'ի հա-
րուածս իբրև յայ . բայց նա վիրաւորեցաւ վասն մե-
զաց մերոյ , և պատժեցաւ վասն մերոց անօրենու-
թեանց . խրատ խաղաղութեն մերոյ 'ի նմա , և նո-
րա վիրօքն բժշկեցաք . ամենէքին իբրև ոյխարը մո-
լուրեալք , այր 'ի համասպարհի իւրում մոլորեցաւ .
և տէր մասնեաց զնա առ մեզս մեր . և նոս առ վշտին
ոչ բանայ զբերան իւր . իբրև զոցիսար 'ի սպանդ վա-
րեցաւ , և իբրև որոջ առաջի կտրչի ամսունչ կայ ,
այնպէս ոչ բանայ զբերան իւր || . (եսայ . ծդ . 3 :)

* Օ այսսիփի համբերութիւն տեառն մերոյ տեսեալ զին-
ուորացն՝ փոխանակ մեղմելոյ զսրտնութիւն իւրեանց՝
առաւել ևս կատաղեցան . և 'ի զովացուցանել զիս-
տազութիւն իւրեանց՝ ժողովեցին 'ի վերայ նորա զայլ
ևս զինուորա , առ 'ի զառնազօյն ևս տանջել զնա :

Եւ յայս միտ յարէ զինի , և ասէ .
Եւ ծուշէ լուսոց դաշտեցին վէս . Վայինքն բազմուկիք
զինուորաց պաշարեցին զիս՝ ոչ 'ի ըմբռնել , այլ նո-
րանոր տանջանօք նեղելզիս . Ճաղովք ասէ , զի էին
բազում դասք զինուորաց . վասն զի որպէս ասեն մար-
կոս և մատթէ լոս , * ժողովեցին 'ի վերայ նորա զամե-
նայն զգունդն միանգամայն || . (մարկ . մէ . 16 : և
մատ . իէ . 27 :) Հորս կային զանազան կարգք զինուո-
րաց՝ համուկերձ յիսնապէտօք , և հարիւրապէտօք , և՛ :
Եւ սոքա ամեննեքին կամեցեալ ծաղր առնել զտերն
փառաց՝ և համբերութեան նորա յաղթէլ , ձեւացուցին

զնա սուտ թագաւոր . զի լուեալ էին 'ի քահանայս
պետից՝ ասել նմա զանձնել , [թէ, ից , թագաւոր հրելից ,
Եւ արդ տես , զինչ զործ զործեցին ընդ նա . Օ զե-
ցուցին նմա իրբե սուտ թագաւորի հնացեալ զգեստ
մի կարսիր , և վերարկու ծիրանագոյն . ետուն 'ի ձեռս
նորա զեղեցն ինչ հաստ 'ի նշան թագաւորութեան .
և տաժանախայցի փշովք պատկ կազմեալ՝ եղին և
միեցին 'ի զլուխ նորա . և սկսան կարգաւ մի ըստ միո-
ջէ՝ սկսեալ 'ի մեծէ՝ զալ առաջի նորա , և ասել , ողջ
եր արբայդ հրելից . և զայս ասացեալ՝ ապտակս հա-
նեին նմա ուժգին . և ապա առեալ 'ի ձեռաց նորա
զեղեցն՝ հարկանէին նախալ զիշովլ պատկեալ զլուխ
նորա . և յետոյ 'ի ծունը իջեալ՝ երկիրպականէին
նմա . և փոխանակ ընդ խալով համբուրելոյ զբղանց
հանդերձից՝ թքանէին ընդ երես նորա : Օ այս ամե-
նայն մի ըստ միոջէ՝ պատմեն աւետարանիցքն . (մատթ .
իէ . 27 - 31 : մարկ . ժէ . 16 - 20 : յովէ . ժէ .
2 - 4 :)

Ապին այսու արարուածով նախատինք մեծ ետուն
ուն մերց ըստ երից . մի՝ զի առաջի արարին զնա իրբե-
սուտ թագաւոր և խաբերայ : Երկրորդ՝ զի իրբե զող
ձեւացուցին զնա . վասն զի օրսկէս 'ի պատուհանէլ
զգողն՝ զգողունին զնեն 'ի վերայ նորա , կամ 'ի ձեռս
նորուն , սոյնպէս և 'ի սաննէլ սոցա զբն՝ զգողունիս
թագաւորութեան եղին 'ի վերայ նորա , զծիրանի՝ զան-
ձամբ նորին , զթագ փշեայ 'ի զլուխն , և զաւազան
եղեցնեայ 'ի ձեռս , 'ի ցուցանել զնա գոլ գոլ թա-
գաւորութեան . ըստում սոքա էին նշանք թագաւորի :
Երրորդ՝ զի իրբե անարդ գերի ցուցին զնա . 'ի հնումն
ուր զիւրագին զնեին զգերիս՝ զնեին 'ի զլուխս նոցա
պատկ 'ի խոտոյ , առ 'ի ցուցանէլ զխոտան գոլ նոցա :
Եփւրագին զնեցին և զուէրն փառաց , և առ խոտան
երեւեցուցանէլոյ զնա՝ եղին 'ի զլուխ նորա պատկ 'ի
փշոց . որով և առակ նշաւակի կացուցին զնա . մինչեւ
ծածկել զնա ամօթոյ . որոյ վասն իսկ ասաց * ամօթ-
ոյ երեսաց իմոց ծածկեաց զիս || . (սաղ . ինդ . 16 :)
Եւ զայս նախատինս տանջանք մեծ համարելով առա-
քելոյն քան զամենայն տանջանս՝ 'ի խօսին դարձարա-
նաց նորա՝ ոչ ասէ * արհամարհեաց զտանջանս || . սյլ .

թէ * արհամարչեաց զամօթ || . (եթք . ժը . 2 .) 'ի
ցուցանել թէ անհնարին եղեն այս տանջանք :
Եւ զայսոսիկ յօժարութեամբ յանձն առեւալ կրէր որն
մեր , զի այնպէս համեր հայրն երկնաւոր առ ՚ի լրումն
այնպիսի պատարագի նորա : Աստուբնոս թագաւոր
փիւնիկեցւոց կամելով զոհել զրդի իւր չայն իւրում
զգեցոց նմա թագաւորական քղամիդ և ծիրանի , զի
էր զոհ անսովոր . կամեցաւ և հայրն երկնաւոր , զի
որդի իւր ևս զգեցցի քղամիթ և ծիրանի , և այնպէս
զոհեցի : Եւ որդին ևս կամեցաւ զգենով զայն ու
միայն ՚ի զոհել զինքն , այլւ ՚ի ցուցանել թէ յայն
զոհ աներկիւղ ունի վանել զթնամին սատանայ ,
Ակեղեմնացի զինուորք ծիրանի զգենուին ՚ի վերաց
զինուց , զի աներկիւղ մարտիցեն . ըստ սմին և տէրն
մեր զգեցաւ ծիրանի զի ցուցել թէ աներկիւղ մար-
տինի ընդ թնակացն , Եպարտիզի եցոց երկնշիլ .
զի յայտ արացէ՝ թէ ձշմարիտ մարդ է . խոկ ՚ի տան-
ջին եցոց զինքն աներկիւղ , զի յայտ արացէ՝ թէ սի-
րով կրէ . յառաջնումն պատրեցաւ սատանայ , յերկ-
րորդումն պարտեցաւ . և յու կարելն երկեցուցանել
զնա տանջանօք , ջանացաւ վհատեցուցանել զնա նա-
խատանօք . և յայտ խոկ զրգուեաց զզինուորսն՝ ձեռն
արկանել յայնպիսի նախատական արարս : Յորս ՚ի
տեսանել զնա սատանայի փշեայ թագիւ պատկեալ
ծաղր առներ և ծափծափիր , և զսուտ նշանն թագա-
ւորութեան այսինքն զեղէզն՝ տայր հարկանել ընդ
թագն փշեայ՝ կամելով խորտակել զթագաւորութիւն
նորա . բայց խաբեցաւ . զի տէրն մեր այնու փշեայ թա-
գիւ բարձրացոց զթագաւորութիւն իւր , և կործա-
նեաց զթագաւորութիւնն նորին խոկ սատանայի և մե-
ղաց . և ՚ի զըսի իւր ընդունելով զայն՝ բարձրացցց
զզլուխ մեր . և բարցյապէս խօսելով՝ ետ այնու իւ-
րոց հետեւողաց զօրութիւն վանելոց ՚ի զլսոց՝ այ-
նիքն ՚ի մոտաց զամենայն խորհուրդս չարութեան , մո-
նաւանդ վավաշոտութեան : Խոկ զեղէզն՝ զոր էառ ՚ի
ձեռս իւր , արար զըիւ՝ ՚ի շնջել զսորազրութիւնն
մեղաց , զոր ստորագրեաց սատանայ ՚ի մուրհակ պար-
տուցն աղամայ : Եւս և առնելով զեղէզն՝ եցոց՝ թէ
յորս բնակի սատանայ իւր ՚ի դատարկ եղեգունս որ-

պէս ասի ՚ի զիրս յոբայ , (Ե . 16 .) զնառա ևս ընդ-
ունի սիրով և խնամէ զթով :

Վրդ յետ այցափ նախատալից տանջանաց՝ զորս և
տուն նմա զինուղըն պիղատոսի , և յետ բազում շա-
րախօսութեանց և վրդովմանց՝ զօրս յարուցին ՚ի վերայ
նորա տիրասպանքն իրբե վճիռ եհատ պիղատոս զի
խաչեցի քո , առեալ տարան զնա նախատանօք ՚ի
լեան զողգոթա . և բեկուցին զնա անդ ՚ի վերայ
խացին : Եւ զայս յայտ առնէ ՚ի յաջորդ համարն , և
առէ :

Ճէ . (Օ առէցին շյեռո իմ և զորս իմ . և նուեցին զան-
նայն ունէրս իմ . և նորա հայեցան և ունէն զիս :
Վ. յնպէս խօսի մարզաքէն՝ որպէս թէ ՚ի ժամ խաչե-
լութեան տն մերոյ անդ կայը . և աչօք ակսեալ զայն
առսիլ աղետալի՝ զայսպիսիս խօսէր ՚ի բերանոյն քոի
ասելով :

(Օ առէցին շյեռո իմ և զորս իմ : Փոխանակ առելոյ ,
խաչեցին , զնէ * ծակեցին զձեռս իմ և զորս իմ || ,
առ ՚ի ցուցանել թէ խային այն ու եղեւ կապճամբ ,
և կամ միայն բեկումնիք բազիացն , այլ թեկումնիք
ձեռաց և ոտից . փոխանակ ընթացից ոտից և ձգման
ձեռաց նախատեղծիցն , որպէս ասի ՚ի շարականի ,
* տարածեալ ձեռք ընդ ձեռաց , ոտք ընդ ոտից ըն-
,, թանալեաց || . և . և այս ՚ի լերինն զողգոթա . զի
որպէս ասի անդ թաղեցաւ գլուխն աղամայ . ըստ ո-
րում և վասն եւայի ասի թէ թաղեցաւ ՚ի բեթղե-
չէմ . յորոյ վերայ առէ եզնկացին (՚ի մեկն . մատ .
զլ . իէ .) թէ որպէս զանէծն եւայի երարձ քո ծնին
գեամբ ՚ի բեթղեչէմ քաղաքի՝ ուր թաղեցաւ եւայ .
ոյնպէս խաչելութե երարձ զանէծս առաջին մարզոյ
՚ի զողգոթա , ուր էր շիրիմ նորա , այսինքն զերեզ-
ման առաջին մարզոյն . ըստ որում ասացաւ յառաջ-
նոց ոմանց : Եւ բան եզնկացւոյն է այս . տէրն մեր
խաչեցաւ ՚ի զողգոթա . * ուր էր շիրիմ առաջին մար-
,, զոյն , յառաջնոցն ստացեալ . . . որպէս ծննդեամբ
,, զանէծն եւայի երարձ ՚ի բեթղեչէմ քաղաքի .
ուր թաղեալ ասի եւայ : (Վ. յլ վասն բառիս ծակե-
ցին՝ տէս ՚ի համեմատութիւնն :)

Ի խաչիլ տն մերոյ՝ ձեռք և սորք նորա հախարակեցան
բւեռոք . և զի լցեալ էին երկնային բարեօք , 'ի հա-
խարակիլն անդ , այսինքն՝ 'ի ծակոտիլն թօթափեցան
'ի վերայ մեր այն բարեփ իրբե զականս պատուականս .
յոր միտ ասի . * ձեռք նորա հախարակեցը , լցեալք
ակամքք թարսսի . (երգ . Ե . 14 .) | ակ թմէ զիարդ
երեւցաւ յայնժամ ինքն 'ի մարմնի և յասկերս իւր՝
յայտ առնել ասելով :

| Յ ա ս ե ց ի զ ա մ ն ա յ ն ս ս ի ե ր ս ի մ : Ը ս ա ս ե ց ի ա ս ե լ ո վ ո ւ
կամի ցուցանել , թէ գահիճքն կամ այլ տեսանօղք
իսկապէս թուեցին զայնս , այլ թէ այնչափ որոշ որոշ
երեւեն ընդ մորթով , մինչեւ կարել և և իցէ մարդոց
թուել զայնս : | Եւ պատճառն է , զի 'ի սրբիլ մարմ
նոյ տն մերոյ 'ի խաչին և 'ի կախիլ ծանրութեան նորա
զիսաւէ 'ի ձկումնել մկանանցն սուկերք նորա ցցուեալ
երեւեն , և մի բատ միոնէ նշմարիլ կարեն ' և այնու
թուիլ ևս . մանաւանդ զի 'ի հոսմանե այնչափ արեան
նորա կարի իմն նուազեալ էր մարմնն նորին , և յու-
կելոն յեցեալ առ հասարակ . սմին իրի ու ասէ սոսկ .
թուեցին զսոկերս իմ , այլ * թուեցին զամ սուկերս
իմ : | Հայց զրո թուել մարթացան՝ խորտակել տը-
կարացան , առ 'ի նշանակ մեծի խորհրդոյ . զրոմէ խօ-
սելով բարսեղ վկապ ('ի մեկն . մարկ . զլ . ժե .) ասէ .
* Ասկըն պինդ ունի զը թուլութիւն մարմնոյն . վ՛ռ որոյ
,, քո ու թոյլ ետ բեկանիլ սուկերն , զի ցուցցի՝ թէ
,, հոգին պնդին մարմնոյ ընդ նմին և ածութիւնն ոչ
,, իւիք բեկաւ՝ ու մահուամբ և ու մեղօք , թէ և մար-
,, մինն բեկաս մահուամբ : | Ասկերօք կարէ ևս իմա-
ցեալ լինիլ աստ նմանութիք զօրութին քոյի . իրը զի զա-
մենայն զօրութիւն համբերութե նորա զրեթէ թուե-
ցին 'ի խաչելութեան նորին . զի յամ վիշտս և չարչա-
րանս և 'ի հայշոյանս տեսին զնա հզօք և համբերօզ.
բայց յայսմ ամէ ինչ շահեցան , այլ առաւել ևս
ժամանացան և դաժանացան ընդդէմ նորա . վ՛ռ որոյ
յաւելու ասել :

| Յ ա ս ե ց ի հ ա յ ե ց ա ն և դ է ս ի ն զ է ս : | Ա յ ս ի ն ք ն ն ո ր ա ՝ ո ր ք
թուեցին զսոկերս իմ , փոխանակ օգտելոյ ինչ ժան-
տութիք և անսպատկառութիք հայեցան յիս . և փոխա-
նակ զթալոյ յիս՝ նախատեցին և հայհոյեցին զիս . և

փոխանակ ծածկելոյ զմերկութիւնս իմ , տեսեալ զիս
առանց հանդերձի՝ ծաղը արարին զիս : Ոմանք 'ի որց
հարց բառիւս ունեն , իմանանս աստ զգուշանալ . բառ
որում [թշնամիք քսի յետ 'ի խաչ բեեռելոյն զնա՛ ե-
զին առ խաչին սպահապանս , զի մի աշակերտին զո-
ղացին զնա՛ 'ի խաչին , կամ յայլոց այլ ինչ գործեռ-
ցի : Խակ թէ զինչ արարին ընդ հանդերձ նորա՝ զոր
մերկացին 'ի նմանէ , յայտ առնէ 'ի յաջորդ համարն
և ասէ :

ԺԵ. **Բ**աժանեցան (այսինքն բաժանեցին) զհանդերյան էմ 'ի
մէջ իրեւանց . և 'ի վերայ պատմումանի իմայ վե-
ճախ արդիանէն :

Որպէս և տեսանես մինչև ցաստ զարագայից իրեւ
զանցելոց խօսեցաւ և խօսի մարդարին . զի ըս որում
զրէ սարգիս չորհալի ('ի մեկն . յուզ . համար 1/4 .
հառ . թ .) * սովորութիւն է այս՝ մարդարիցն զինեւ-
,, ըցն իրեւ զեղելոց ասել . որպէս դաւիթ զչարշա-
,, բանացն քսի զիկրսն սպատմելով՝ որ յապայն լինելոց
,, էր՝ իրեւ զեղելոց խօսէր . ծակեցին ասէ զձեռս
,, իմ և զոտս . և զարձեալ՝ ետուն 'ի կերակուր ինձ
,, լեղի . և որ սոյին նմանս զտցես բազումն և յայլոց
,, մարդարից բանս || : Բատ որոյ և աստ զնի . բաժա-
նեցին զհանդերձս իմ , և :

Հանդերձիւք իմանայ զարտարին զգեստսն , այսինքն
զվերարկուն և զպարեզօսն , (որ է կապայ .) խսկ պատ-
մունանաւ խմանայ զնելրին զգեստն : Վրդ՝ չորեցին
զինուորք , որք կատարելով զգործս դահճի՝ խաչեցին
զքս , զհանդերձս նորա բաժանեցին 'ի մէջ իւրեանց .
զի այս էր հասարակ սովորութիւն նոյա : Խակ իրեւ
կամեցան բաժանել և զպատմունանն , տեսեալ թէ,
այն էր փորանկեալ , այսինքն առանց կարի հիւսեալ
վերուստ 'ի վայր , և իրեւ ուռկանազործ յօրինեալ
(այսինքն թռոի պէս կամ ըորապի պէս մանեալ ,) ա-
սեն ցմիւնանս . եթէ բաժանեմք զսա՝ քակտի հիւ-
սուածն , և անպիտանանայ , եկամք արկցուք վիճակս ,
և էլցէ՝ նա առցէ . և որպէս խորհեցան , այնպէս
արարին . և ահա զսոյն զսյս յայտնի զտշակելով
մարդարին , խօսի 'ի բերանոյն քսի և ասէ :

Բաժանեցին զշանդերյա էմ' է քշ իւրեանց . և 'է վրայ ուստածանի իմոյ վլաճակա արիանէին : Վայնիքն յետ ըւեւուելոյ զիս 'ի խային , և յետ կանգնելոյ զիսանցն 'ի վեր ձեռնարկին խայահանուք իմ' 'ի հանդերձն , զոր մեր կային յինէն . և խրապանջիւր առին զբաժին իւրեանց . իսկ զպատմուհանն իմ վիճակաւ զբաւեցին յինքեանս :

Եւ զայս որոշ որոշ և բացայայտ զրել յովշաննէս . և յարել ևս զինի ասելով . * զի լցցի զիլն որ ասէ , բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս , և 'ի վերայ պատմուհանի իմոյ վիճակս արկին . զինուորքն զայս ինչ գործեցին || . (յովշ . ժիշ . 24 .) Արով կամի ասել , թէ զինուորքն այսու օրինակաւ բաժանելով զհանդերձս քոնի՝ կատարեցին զայն ինչ , զոր մարդարեն գուշակեալ էր :

Վաեն ոմանք , ընդ որս և վարդան , և ծործորեցին ('ի մեկն . մատ . զլ . իէ .) թէ այն անկար պատմուհան առաքեալ էր յարգարել յարբայէն հայոց իրը ընծայ . և քո համեալ ընդ այն՝ ոչ անարգեաց , այլ սիրով զգեցաւ զոյն : Վլք ասեն , թէ ոք ածածինն ինքնին ձեռօք հիւսեալ էր զայն . և թէ ոչ ինչ իւլք մաշեցաւ , և ոչ երբեք աղտեղացաւ :

Խորհրդաբար , այս անկար պատմուհան օրինակեր զանձութիւնն քոնի , որ էր անբաժաննելի . այլ ժառանց գութիւն նորին իրը վիճակաւ տուեալ լինի մեզ 'ի վեր քան զարժանն մեր : Իսկ հանդերձիւք օրինակի մարմիննորա 'ի խորհուրդ հազորգութեան , որ բաշխի խալակցելոցն քոնի . որպէս զրել և բարսեղ ('ի մեկն . մարկ . ժէ .) հոգեորապէս այնոքիւք զինուորօք որք բաժանեցին զհանդերձս քոնի՝ ինացեալ լինին չերեալիկուքն , որք թէպէտ զարտաքին հանդերձն , այս ինքն զայնոսիկ 'որք են իրը արտաքին անդամք եկեղեցոյ կարեն պատառել և բաժանել , բայց զներքին պատմուհանն , այսինքն զմիութիւն ընդհանուր եկեղեցոյ ոչ կարեն պատառել , այսինքն 'ի հաւատոյ խախտել : Պատմումանն քոնի ասէ բարսեղ վդու ('ի մեկն . մարկ . զլ . ժէ .) * նշանակէ զմիուորութիւն , բաժանելոց ազգաց , որք անբաժան կապեալ են կա-

, պանօք սիրոյն յաղագս հաւատոցն || :

Դարձեալ՝ որպէս զրէ սոյն այս բարսեղ . * Համդերձ
,, նմն մերոյ է պատուիրան և աւանդութիւն աւետարաւ
,, նական խորհրդոց || . որով իրը համդերձիւ ծածկի
մարտին նորա , այն է եկեղեցի . իսկ պատմուաննն է,
պատուիրանն սիրոյ : Օ հանդերձան հնար է պատա-
ռել , այլ զպատմուանն սիրոյն անչնարին է բաժա-
նել . զի ոչ կարէ բերիլ յերկուս : Վրդ՝ յետ յայտ
առնելոյ մարդարէին , թէ զի՞նչ զործ զործեցին ընդ
քա թշնամիք նորա , սկսանի վերստին մաղթանօք իո-
սիլ առ հոյր 'ի զիմաց նորա՝ ինդրելով զոդնութիւն
առ 'ի նմանէ . վասն որոյ առէ :

Ճ. **Ճ**- առ մի հետ սուներ զօդնութիւն որ յինէն . և
առ յօդնել ինչ նայեաց :

Ե համարն Ա . ասաց . * հեռի եղէ 'ի փրկութենէ , իս-
մէ || . և ասրա 'ի համարն Ա . պազատելով ասաց . * մի
,, 'ի բացեայ առնիր յինէն . զի նեղութիւնիք մերձեալ
,, են . և ոչ ոք է որ օգնէ ինձ || . աղաջէ սպա ասա-
կրկին , և ասէ :

Ճ- առ մի հետ սուներ զօդնութիւն որ յինէն . և առ յօդնել
ինչ նայեաց : Ասմի ասել . ահաւափկ տեսանես հոյր
իմ , թէ զի՞նչ անցք անցուցին ընդ իս թշնամիք իմ .
և զիարդ 'ի վերջին կատաղութիւն ժամանեալ չարա-
չար տանջանօք յայսպիսի վիճակ անարգանաց և մա-
հու հաստցին զիս , կամելով ցուցանել առ իս զամենայն
զօրութիւն իւրեանց : Եւ արդ՝ այսուհետեւ քո է՝ փո-
թացուցանել զայցելութիւնդ , նայիլ առ իս և օգնել
ինձ , ոչ զի ապրեցայց 'ի մահուանէ աստի , այլ զի
յետ մեռանելոյս այսու մահուամբ՝ յարեայց փո-
թով , և յարուցից ընդ իս զկորուսեալ ազդ մարդկան :
Օ սոյն զայս այլով իմն բանիւ ևս կամելով յայսնել՝
յարէ զինի , և ասէ :

Ւ. **Ո**րէնա՛ 'ի սրոյ զայցն իմ . և 'ի յեռաց շնոր սիւմօրու-
թիւնն իմ :

Օ սուրն՝ որ է պատմառ մահու , առնու փոխանակ
մահուան , կամ մանաւանդ փոխանակ մեռելութեան ,
ըստ այնմ ոճոյ ձարտասանից՝ որ ասի փոխանունու-

թիւն . ըստ որոյ անուն պատճառավին դնի փոխանակ անուան պատճառեցելըն . որպէս կամքն փոխանակ կամեցելըն . և . (զորմէ տես 'ի սաղ . ի . 2 :) { Յայս միտ խօսելով և աստ ասէ :

Փըհեա 'ի սրբ զանցն էմ : Խամի ասել . փրկեա զիս 'ի մահուանէ , այսինքն թէ յետ մեռանելոյ իմց փըրկեա զիս 'ի մեռելութենէ անտի 'ի ձեռն յարութեան : Հնար է ևս սրով իմաննալ աստ զգօրութիւնն կամ զիշիանութիւնն մահու . ըստ որոյ միտ բանին դարձեալ 'ի նոյն հայի . որպէս թէ ասէր . յարո զիս , և մի թողուր մնալ ընդ իշխանութեամբ մահու . կամ որ նոյն է , մի թողուր զիս մնալ մեռեալ , այլ՝ յարո 'ի մահուանէ : Եթէ սրով իմանացի աստ իրական ննչ զինք , սովորն մնալթէ անխօրսակելի մնալ 'ի զինուց նոցին . որպէս և եղեն իսկ , զի ոչ խօրսակեցան բարձք նորա : Օ այս մեկնութիւն 'ի մէջ բերէ և վարդան , ևս և բարձեղ վշպ 'ի նախացիշեալ տեղին : Եւ քանզի մարզարեն այնպէս կարգէ զայս բան , որպէս թէ տակաւին 'ի ձեռս սպանողաց իւրոց էր քո , 'ի նոսին ևս հայելով խօսի , և ասէ :

Եթ- 'ի չե-այ շնչ զմբածոր-թէ էմ : Ը անց ասելով իմանայ զայնասիկ , զօրս նաև 'ի վերոյ 'ի համարն 16 . կուշեաց շունու , այսինքն են դահիճքն , որք 'ի խաչ հանին զբու : Եւ զի սրբա կարծէին , թէ քո այնու մահուամբ մեռանելով լինելոց է վատահամբաւ ոք , և մնալոց է մեռեալ յաւիսեան , ընդդէմակնկալութեան սոցա խօսի զայս . * փրկեա (ասէ) 'ի ձեռաց շանց ըգու , միամօրութիւն իմ : այսինքն արա , զի ես՝ որ մեռանիմ 'ի ձեռաց դահնաց , յարեայց , և այնու իսկ զերծայց 'ի ձեռաց նոցա . զի 'ի յառնելն իմ՝ ոչ ևս մնան ձեռք նոցա 'ի վերայ իմ :

Խակ * զմիամօրութիւն իմ || ասելով , զբառդ համբութէ առնու 'ի թանձրացեան . ոնկ թէ ասէր . փրկեա զիս 'որ եմ միամօր : Օ ի յայս միտու 'ի զործ ածին բազում անգամ 'ի սուրբ զիս վերացեալ անուանք ըս ոչոյ ձարտասանից , ըստ այնմ , զօր և 'ի յաջորդ համարն դնէ . * փրկեա . . . զիսնարհութիւն իմ : այսինքն փրկեա զիս զիսնարհեալ : Յայս միտու իմացեալ լինի և այն բան , որ դնի 'ի զիրս իմաստութեան . (զԼ . թ . 23 .)

* 'ի սրատկեր իւրոց բարերարութեան արար զնա || . յդ 'ի սրատկեր բարերար բնութեն իւրոց , Այժմապէս և յառելն ասու , * փրկեաւ զմիամօրութիւն իմ || . կամի ասել՝
փրկեաւ զիս զմիամօրս :

Խակ բառու մասօք՝ նշանակէ զայն , որ իցէ միայնակ որ-
զի , կամ միածին որդի . (յդ է՝ հօը մօրը մէկ հատի-
կը) : Եւ զի այսպիսի եր տէրն մեր , միածին որդի այ .
և միածին որդի կուսմն մարիամն , վայ միամօր կոչէ՝
զմիպն . և առ յարդի ընծայելոյ՝ 'ի վերացեալն զնէ՝
չի ամուսնութէ իմ , ասէ . Հնար է ևս միամօրութեն ինա-
նալ ասու . զանօգնականութիւն կամ զմիայնակութիւնն
ը երը ” . և ըստ թարգմանութեն այլոց . ըստ որոց միտ
բանին լինի այս , գու միայնդ փրկեաւ զիս , զի միայնակ
եմ , և չունիմ զայլ ոք ինձ օգնական : (Տե՛ս և 'ի
սաղ . ի՞նք . 13 :)

Հարսմարական մեկնութե՞ սովորն մաղթէ քո՝ փրկել
և պաշէլ զմիայնակ մայր իւր անարատ և անվտանգ 'ի
ձեռաց անտի շանց . զի մի և 'ի նա միւսցեն զձեռն . և
այս մեկնութիւն հիմնի յայն , զի առ ոմանս գնի , զմիայ-
նակն իմ , և այն՝ յիդական սեռի :

Հոգեւորապէս՝ սովաւ նշանակի եկեղեցի քոի . ըստ
որոց քոյ յետ վասն իւր աղօթելոյ՝ * փրկեաւ 'ի որոց
,, զանձն իմ || . վասն եկեղեցւոյ ևս աղայէ ասելով ,
փրկեաւ 'ի ձեռաց հալածչաց զմիամօրն իմ , այսինքն
զփրկելի հարսն իմ՝ զեկեղեցի սուրբ , զիսմիայնակ ա-
ղանի . (երգ . շ. 8 :) Եւ յաւելու ևս ասել :

Ի՞ն . **Փ**բէեաւ զիս 'ի բերանոյ առէնծու , յեղվէրէ դեղվէր-
ռուոյ շխանարհաւթիւնն իմ :

Առիւծ ասելով՝ յայն ակնարկէ , զոր եղ 'ի համարն
13 . յասելն . * բացին 'ի վերայ իմ զբերանս իւրեանց
,, որպէս առիւծ՝ զի մանչէ և յափշտակէ || . և զի սորօք
նշանակին քաշանայստետքն՝ մանաւանդ զլուխ նոցա
կայիափա , ևս և իշխան նոցա սատանայ , որ մտեալ և
բնակեալ եր 'ի կայիափա , յայս հայելով ասէ :

Փբէեաւ զիս 'ի բերանոյ առէնծու : Կամի ասել . փրկեաւ և
զերծն զիս 'ի կատաղութենէ բանից առիւծու , այսինքն
'ի խստութենէ կատաղեալ քաշանայստին և արբա-
նեկաց նորա . ևս և 'ի կամաց սատանայի որոց բերան և

մահն . ոչ զի երկնաշեր տէրն մեր , թէ քահանայա-
պէտքն կարօղ են արգելու զնա 'ի յառնելոյ , և կամ
սատանայն կարեր ըմբռնել զնա , այլ որ լինելոցն եր
նմ՝ յառնելով 'ի մեռելոց , զայն 'ի հօրէ իւրմէ խնդրեր՝
թէ վասն իւր՝ և թէ վասն եկեղեցւոյ իւրոյ : Իւ զայն
այլով իմն նմանաբանութեամբ կամելով յայտ առնել
կրկնէ , և ասէ :

Եթ յեղջրէ մէղջրուոյ զիտարհուոն է : || ի կեղծերուն է
կենդանի վայրենի և անընտել . (զօրմէ տես 'ի սաղ .
Տէ . 71 : և զա . 10 :) իսկ թէ սովաւ ո՞նշանակիցի
աստ , բազում են կարծիք : || մանք ասեն նշանակել
զինակոկայն հրէից , որ վայրենացաւ 'ի քաշ , և ոչ
երթէք ընտանեցաւ նմա . և անողորմութիւն իրեւ եղ-
ջերաւ եհար զբն , և եհան զնա 'ի խաչ : || մանք սովաւ
իմանան զբահանայապէտն . ոմանք ևս զպիղատոս .
և ոմանք զշերովզէս . և ոմանք զիշխանութիւնն հռով
մայեցւոց , որով քն մատնեցաւ 'ի մահ խաչին : Իսկ ո-
մանք համարին նշանակել զիտան , յօրմէ փրկիլ մաղ-
թէր քս :

Բայց հաւանականագոյն է ասել , թէ սովաւ նշանա-
կի սատանայ , որ 'ի ձեռն ժողովրդեանն հրէից , և 'ի
ձեռն արտաքին իշխանութեան իրեւ եղջերաւ եհար
զբն , և եհան զնա 'ի խաչ . ոչ զիտելով՝ թէ նա իցէ
չըմարփտ որդի այց . ասս թէ ոչ ոչ մերձենայր առ նա .
և թէպէտ 'ի գործոց նորին կասկածէր , բայց ոչ կա-
րաց հասանել . վասն զի * խաւար նմա ոչ եղեւ հասու || .
Հայո միտս զրէ եզնակ կողբացի ('ի զլ . ժլժ .) * թէ-
,, սկէտե (ասէ) լուեալ էր 'ի մարգարէից՝ թէ գալոց
,, է որդին այց . այլ զժամանակ գալստեանն ոչ զի-
,, տէր . եթէ զիտացեալ էր՝ թէ արդարե որդին այց
,, էր այն՝ որ նմա իրեւ մարդ երեւէր , ոչ փորձէր զնա ,
,, և ոչ յամօթ լինէր . թէպէտե յանձեզէն զօրուեցն
,, իմացաւ ('ի կարծիս անկեալ) զգալուստ որդւոյն
,, այց , և տափնապեալ աղաղակէր՝ թէ զիտեմ զբեզ ,
,, ով ես սբդ այց || : Խարեաց տէր զատանայ , և յօրո-
գայթ էարկ , ծածկելով զինքն 'ի նմանէ . որով և
ըմբռնեաց զնա : || լուսի զրէ բարդես վշպա . ('ի մերկն .
մարկ . թ . 30 .) * խաչն ասէ որոգայթ էր (ընդդէմ
,, հնարից) սատանայի . զի նովաւ ըմբռնելոց էր . (վայ)

ջանաց քո ծածկել՝ ի նմանէ զի մի զիտացէ . (ո՞ղ
ո՞րսորդն ծածկէ զրոպայթն յորաց) :

Երդ եթէ միեղթերաւ իմացեալ լիցի աստ տատանայ ,
և կամ այլ և իցէ թշնամի այսու բանիւ մաղթէ քո
տարեցուցանել զինքն 'ի նմանէ . ո՞ղ թէ ասէք . յեղթե-
րէ թշնամոյ իմոյ այսինքն 'ի բռնութենէն թշնամոյն
փրկեալ զիտանարհութիւն իմ , այսինքն թէ փրկեալ զիտ-
նարհեալ խապա . կամ փրկեալ զիս զորդի քո՝ որ այս-

չափ խոնարհեցայ վո փրկելոյ զազգ մօրդկան :

Եւ սակայն ո՞ղ ասացաւ 'ի վերոյ , տերն մեր այսոքիւք
բանիւք ո՞չ խնզրեք 'ի հօրէ զի 'ի ժամանակ յայնմիկ ա-
զատեսցէ զնա 'ի ձեռաց թշնամեաց իւրոց , կամ 'ի
մահուանէ խայի . այլ զի յետ մահուանն փութով յա-
րուցցէ զնա , և ցուցցէ նմա 'թէ ո՞չ ևս ունի ինչ կրել
'ի զուարակաց և 'ի ցըւց անտի , կամ անկանիլ ևս 'ի
ձեռս առիւծու և միեղթերուի և շանց , զրոս յիշեաց
'ի վերոյ : Օ այս եգեալ սկսանի այժմ յայտ առնել և
զպտուզն , որ ծագէր 'ի յարուէ անտի , այն է դարձն
հեթանուաց և ո՞մ ազգաց վարդապետութիւն քոփ առ
ո՞ճ , և վերածիլ յեղայրութի քոփ , և լինել եկեղե-
ցի ոք . կոյ ասէ :

Պարեցէ շնուռն ու եղբարց ինոց , 'ի գշնէ իւղեցոյ
օրդնեցից ոչեղ :

Օ անուն ու ասելով առ հայր՝ իմանայ զայն ինչ , որ
յայտ առնէ զջմարիտն անծ . ո՞ղ յորժամ ասելով ու-
մեք , յայտնեցից զանուն քոյ , նշանակէ ասել . 'ի մէջ
բերից զայն ինչ , կամ զայնափափի նշան կամ բառ՝ որ
զբեզ յայտ առնիցէ , և զրոպիսի լինել անձինդ ցու-
ցանիցէ . զի որովհետեւ առանց նշանի կամ առանց բա-
ռի՝ իրն որ ո՞չ երեկի , ո՞չ յայտնի , փոխանակ իրին
զնան ինչ կամ զբառ . 'ի մէջ բերելով յայտ առնեմք
զիրն : Իստ այսմ մոտց խօսի և աստ մարզարէն 'ի զի-
մաց քսի , ասելով :

Պարեցէ շնուռն ու : Այսինքն յետ յառնելոյ 'ի մե-
ռելոց՝ յայտնի ծանուցից զբեզ . և տաց զժանօթու-
թի անծութե քո : Խակ թէ որո՞ց , յայտ առնէ ասե-
լով :

Եղբարց ինոց : Եղբարբեք իմացեալ լինին նախ առա-

քեալք և աշակերտք , զորս նաև ինքն քո եղբարս անուանեաց ասելով . * երթայլք ասացէք եղբարցն ի . . , մոց || . (մատ . իշ . 10 .) | յւ զի զլուխ էր անմշն սոցա պետրոս , հրեշտակք՝ որք սովին բանիւ աւետարանեցին առ կանայ՝ իբր առ անդրանիկ առաքեցին զնոսա առ նա . որպէս զրէ ծործորեցին ('ի մեկն . մատ . զլ . իշ .) * զի թէ ասէ այլքն ոչ հաւանեցին , գէթ նա . . , հաւանեցի և հաւանեցուցէ զնոց || : | յւ ինքն տէր երեւալ նոցա զաւուրս քառասուն սրամմեաց նոցա . սյսինքն յայտնեաց նոցա և խօսեցաւ զնոց՝ զորս արժան էր զիտել նոցա , (ո՞պ աւանդի 'ի զուկ . ինդ . ԱԴ . և 'ի զործս առաքելոց . առ . 3 .)

Ոմանք յանդէսո կարծեցին՝ թէ եղբարք ինացեալ լինին աստ որդիք յովսեփայ , յակոբ ալփեայ , յուղայ , սիմոն և յովսէ : Վսացի յանդէսո , զի սոքա թէսկէտե ասին եղբարք յափ , բայց ոչ ուրեք ասին որդիք յովսեփայ . ուստի ասէ ծործորեցին ('ի մեկն . մատ . զլ . ժ . 3 .) * ոմանք ասեն զոսա որդիս յովսեփայ՝ որ ածահայր անուանեցաւ . բայց յոյժ ստեն . զի ոչ զտանեմք 'ի զիրս՝ որդիս յովսեփայ կուել զնոսա . թէսկէտ եղբարս տն ասեն վ՛ս ընտանութէ . քանզի յովսէփի կուսան գոլովլ կուսին խօսնայր անուանեցաւ || : | յւ ('ի զլ . ժը . 46 .) ասէ . * մեք ստուգեցաք , զի ո՞պ մարիամ կոյս է , սոյնպէս և յովսէփ . և սոքա (ոզք եղբարք ասին տն) էին որդիք ալփեսուի ընտանուոյ տն մերոյ՝ զրս եղբարս ասէ ըստ զրոց սովորութէ եան . ըստ այնմ՝ աղք եղբարք էք , ընդէլ զրկէք զմիմեանս . և զդավա եղբայր իւր ասէր արքա . համ . և թէ պատմեցից զանուն քո եղբարց խնոց զաւիթ երգէ . վասն այսորիկ ոչ երբէք զտանեմք 'ի զիրս զոսա որդիս յովսեփայ լւալ . այլ միայն զիս որդիք յովսեփայ , և զոսա՝ եղբարս քոյի || : | յւ ('ի զլ . իէ .) ասէ՝ չորեքին սոքա , յակոբ , յովսէ , սիմոն և յուղայ էին մօրքուերորդիք յափ . իսկ թէ ասի ուրեք 'ի հին պատմութիւնն թէ սոքա էին որդիք յովսեփայ * այսմ ոչ օժանդակեն աւետարանիչքն . քանզի թէսկէտ եղբարք քոյի ասեն զոսա , բայց որդիք յովսեփայ ոչ ընաւ . . . քանզի 'ի բազում տեղիս զտանեմք 'ի զրոց սովորութէ անց զօրեղբօր որդիս

և զմօքքուերորդիս՝ եղբարս կոչելլի :
 Երկրորդ՝ 'ի ձեռն եղբարց իմացեալ լինին աստ 'ի
 հասարակի որդիք մարդկան . ըստ որում զնոյն տեսակ-
 արար բնութիւն ունին ընդ քոփ, որով և ասին լինել
 եղբարք նորա . յոր միտ ասէ ծործորեցին ('ի մեկն .
 մատ . գլ . է .) * եղբարս ու միայն զմիակրօնս պարտ
 է իմանալ, այլև որք հոգւոյ և մարմնոյ հաղորդք են
 բնութիւն :

Երրորդ՝ 'ի ձեռն եղբարց իմացեալ լինին աստ որդե-
 գրեալքն այ . (հոռվմ . ը . 15 : գաղ . դ . 3 - 7 , ե-
 փես . ա . օ . ա . յոթ . դ . 1 . 2 .) զի այսպիսիքս 'ի
 ձեռն շնորհաց լինելով որդեղբական որդիք այ՝ լինին
 եղբարք քոփ, որ է բնական որդի . յայս միտ իմանայ
 և որն յակոր մծքնայ հայրապետ ('ի Ճառն . ժկ .)
 յասելն . * և արար զմեզ իւր եղբարս ըստ մարգա-
 րելին . աւետարաննեցից զանուն քո եղբարց իմոց :
 Այնպիս և լուսաւորին մեր 'ի յաջախոսպատում
 զիրս (Ճառ . ժ .) որս կոչելով զօրդէզրեալսն՝ ասէ .
 * եղբարս իւր անուանեաց (քո) վարսն . պատմեցից
 , ասէ , զանուն քո եղբարց իմոց : Այցա արդարե
 պատմեաց քո զանուն հօր իւրոյ . և սոցա յայտնեաց
 զինքն . և զոսա ընկալաւ և լիացոյց բարեօք : Հով-
 սէփ նահապետ պատմեաց փարաւոնի զանուն եղբարց
 իւրոց և հօրն . իսկ որդին այ պատմեաց եղբարց իւրոց
 զանուն հօրն երկնաւորի : Իշւ եթէ յեղբայրակիրութե-
 մասին բազդատել կամիցիմք , ամեննելին անհամեմատ
 գտանի քան զյովսէփ : Հովսէփ արտասուելով ընկա-
 լաւ զեղբարս իւր . իսկ որդին այ հեղով զարիւն իւր
 զամ : Հովսէփ ցորենով կերակրեաց զեղբարսն . իսկ
 որդին այ մարմնով և արեամք իւրով : Հովսէփ ետ այ
 կառա 'ի մտանել յեղիստոս . իսկ որդին այ ետ եղ-
 բարց իւրոց զաք խորհուրդս 'ի մոտանել յարքայութիւն
 երկնից : Այսու եցոյց զնշանս իւրոյ եղբայրա-
 բութեան , և ետ մեզ օրինակ՝ զնոյն զործել . որով և
 լրացոյց զօրէնս առաքինութեանց 'ի սիրել զհայր և
 զեղբայր . քանզի * առաքինութիւն կրկին է (ասէ ծոր-
 ծորեցին 'ի մեկն . մատ . ժկ .) անծսիրութիւն և
 մարդասիրութիւն : զմին եցոյց առ հայր , և զմիւն
 առ եղբարս իւր . և զի բերանով սոցա ևս օրհնէ զնա-
 3 9

և փառաւորէ , վլոյ ասէ :

Ի մէջ է ինչ զեցոյ օրհնեցէց զբէղ : Այսինքն ոչ ևս յանկեան ուրեք՝ 'ի հրէաստանի և եթ , այլ՝ 'ի մէջ եկեղեցւոյ մեծի՝ 'ի հեթանոսաց և 'ի հրէից զումարելոյ * օրհնեցից զքեզ || . իբր թէ ասէր . հռապելով առ նոսա զանծութիւն քոյ արարից՝ զի և նոքա օրհնեսցէն զքեզ . և օրհնութիք նոյցա 'ի ձեռն արժանաւորութէ ո իմոյ ընդունելի լիցին քեզ :

Այսու բանիւ յայտնի լինի , թէ տէլն մեր 'ի չարչարանս իւր զերկու ինչ զիտէր . մի՝ զփառս հօրն , և մի ևս՝ զփրկութիւն ազգի մարդկան , զորս այնչափ սիրեաց , մինչեւ ոչ ամօթ համարեցաւ ըստ նախազրելոցդ կոչել զնոսա եղբարս : Հյոր միտ յառաջ բերեալ առաքելոյն զայս բան սաղմոսի 'ի թուղթն՝ որ առերբայեցիս ասէ . * Օ ի որ սրբէն՝ (այն է ք'ս) , և որ որ սրբին՝ (այն է ազգ մարդկան) , 'ի միոջէ էին առքին . վլոյ ոչ ամօթ համարի եղբարս անուանել զնոսա , և ասել . պատմեցից զանուն քո եղբարց իմոց . 'ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ || . (եբր . թ . 11 : տէս և յով . ի . 17 : և հռովմ . ը . 29 :) Օ որ մնվսէս վարդապետ ('ի մեկն . ժամազր . երես . 169 .) բարոյապէս առեալ փոխանակ օրհնելոյ , զոհանալ լնթենու յասեն . * 'ի մէջ եկեղեցւոյ գոհացայց զքէն || . թէս պէտև 'ի բան սաղմոսին ըստ բնաբանին զնէ . * 'ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ || : Աքդ՝ որովհետեւ յասեն ասա , 'ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ , լուելայն իմն յայտ առներ՝ թէ զայս գործ ունի կատարել 'ի ձեռն ծառայից իւրոց . այժմ առ նոսա դարձուցանէ զբան իւր , և յորդորէ զնոսա 'ի նոյն օրհնութի այ . և ասէ :

Ի նրիւ ունծութէն օրհնեցէն զբէր . ամ շատան յահնեան կոտորոր արապին զնս :

Հայելով 'ի վիճակ հին եկեղեցւոյ , յերկուս դասս որդւոց մարդկան տեսանիւր ածպաշտութիւն . յառաջնումն էին իսրայէլացիք , զորս կոչէ զաւակ յակուեան . իսկ յերկրորդումն էին այնոքիկ հեթանոսք որք ձանաւելով զած կենդանի՝ վարձատրօղ բարեաց և դաստապարտօղ չարաց՝ պաշտէին զնս երկիւզիւ և

Հշմարտութիւն , զորս անուանել երկիւղարձու . յոր միա
'ի գործս առաքելոց կունելիոս հարիւրապետ կոչի
* երկիւղած յայ | . (գործ . Ժ . 2 :) Եւրկոսին յայ-
ստիկ դասս հայի այն բան առաքելոյն պօղոսի՝ զոր ա-
սաց . * աղք եղապե (խրայէլացիք) որդիք արբահա-
,, մեան տոհմին , և որ 'ի ձեզ երկիւղածք իցեն յայ |
,, ('ի հեթանոսաց ընտրեալք) ձեզ բանս այս փրկու-
,, թե առաքեցաւ | . (գործ . Ժ կ . 26 :) Օ սոսա ահա
հրատիրէ մարդարէն յօրհնել և 'ի փառաւորել զնծ :
Եւ քանզի յերևիլ փրկին կանխեցին այսորիկ եր-
կիւղածք՝ զսոսա նախ յորդորէ ասելով :

Երէն-դածու ո՞ն օրհնեցէն պուէ : Եւ յինքն է՝ դուք որք
իմով արդեամբ 'ի հեթանոսաց դարձեալք՝ ծանեայք
զնծ հշմարիս և պաշտէք զնա , հռչակեցէք զողորմու-
թի և զարդարութի նորա , և այսու գովեցէք զնա , և
վան բարերարութեանց նորա՝ գոհացարուք զնմանէ :

Ի Դարձուցեալ ասպա զբանն առ խրայէլացիս :
Եւ մենայն պատճեն յահնեան վահանար արասցեն վաս : { յա-
ռաջնումն ոչ եղ զբառդ ամ . իսկ աստ յաւելու և զթմն .
զի հայելով 'ի հեթանոսս՝ չեին ամքն երկիւղածք . իսկ
հայելով յիսրայէլ յայտ է թէ ամքն զաւակ յակորայ
էին . ուստի և 'ի յորդոր լինել առ սոսա՝ զնել ամ .

Վայլ ծանիր ևս , զի հայելով 'ի նորս եկեղեցի՝ որպես
յասելն երկիւղածք տեառն՝ մարթ է սովաւ իմանալ և
զնորն խրայէլ . սոյնպէս և յասելն պատճեան՝ ոչ
է պարտ իմանալ սոսկ զայնսոփի , որք ըստ մարմնոյ էին
խրայէլանք , այլ յաւելամ . որք ըստ հոգւոյ . զի սոքա
միայն ըստ հշմարտութեան և ըստ աւետեայ՝ և ըստ
խոստմանն ոյ ասին զաւակք յակորեան , կամ որդիք
արբահամու . զի ըստ զրելոյն պօղոսի (առ հռովմ . թ .
6 - 9 .) ոչ եթէ՝ որք յիսրայէլէ են , նորա խրայէ-
լեանք իցեն կամ զաւակ խրայէլի , այլ որդիք աւե-
տեայն համարին 'ի զաւակ : Եւս և ըստ զրելոյ նորա
առ նոյն հռովմ . (դ . 11 - 18 .) զաւակք արբահամու
ասին ոչ այնչափ մերեալքն յարբահամէ , որչափ նո-
քա՝ որք զնետ զնան հաւատոյն արբահամու . ոչ զրէ
և առ գաղատային (դ . 22 - 31 .) Օ սոյն ցուցանեն
և որ հարք առ հասարակ 'ի հաստատել նորա թէ զա-
ւակ յակորեան կամ խրայէլեան ասին նորա , որք են

՚ի մէջ եկեղեցւոյ . ըստ որոյ և եկեղեցին կոչի նոր
խրայէլ :

Եւ ըստ այսմ յասելն աստ՝ ամ զաւակն յակորեան , և
՚ի յաջորդ համարն՝ ամ զաւակն խրայէլի , իմացեալ
լինին նոքա՝ որք են ՚ի մէջ եկեղեցւոյ , կամ թէ քրիս-
տոնէ այքն : Առքա ասէ * փառաւոր արասցեն զնա || :
այսինքն պատմելով զսքանցելինն այ , և զմեծ բարե-
րարութիւն նորա՝ փառաւորեացյեն զնա : Եւ զի երկիւ-
զածս կուժեաց զսոսա , առ ներգործութիւն երկիւղի
յորդորէ հանգերձ պատճառաւ , և ասէ :

Եղ . **Ե**րիշէ ՚ի պաէ ամ զսոսին խրայէլի . զէ ու արհամար
հետո , և ու անարդեւոց զաղօնս աղջառիս . և ու
տարբաց զերեսս իւր յինէն . այլ ՚ի արդաւլինոմ առ նա լու-
իչ :

Օ աւակաւ խրայէլի՝ որպէս ասացաք այժմ , իմացեալ
լինին աստ հաւատացեալքն ՚ի քն : Օ սոցանէ բազում
ինչ կարեր ասել , բայց հայելով ՚ի կարգ բանին՝ զայն
և եթ ՚ի մէջ մատուցանէ՝ որ կարի իմն պատկանաւո-
րագոյն եր նոցա , այն է երկիւղիւ ծառայէլ ոն . վկա
սուէ :

Երիշէ ՚ի պաէ ամ զսոսին խրայէլի . կամի ասել . որք
պաշտելով զիս եղեն զաւակ նորոյ խրայէլի նորքա ձա-
նաւելով զհայր իմ՝ որդիւական երկիւղիւ ծառայէլ
ցեն նմա : Եւ յարէ զպատճառն ասելով :

Օ չ ու արհամարդէւոց և ու անարդեւոց զաղօնս աղջառիս . և
ու տարբաց զերեսս իւր յինէն . այլ ՚ի արդաւլ ինոմ առ նա
լուսաւ ինչ : Կամի ասել , որովհէւուե ած ու գարձոյց զե-
րեսս իւր յինէն , այլ լուսաւ աղօթից ինոց , որովիք
կարդացի առ նա՝ յարուցանել զիս , և յամօթ առնել
զատանայ . յաղթել մահու և գժոխոց , ազատել
զազգ մարդկան , և կազմել զնոսա նոր եկեղեցի . այսու.
չետե արժան է ամցն նոցա ձանաւել զերախտինն այ
և ուրախանալ , և յան օրտէ պաշտել զնա . ևս և
երկնցիլ ՚ի մեղանցելոյ ընդդէմ նորա . զի եթէ վասն
ընջելոյ զմեզս նոցա ու ինայեաց յիս հայր , այլ մատ-
նեաց յայսցափ ցաւու և ՚ի չարչարանս և ՚ի նախատինս
և ՚ի յետին աղքատութիւն , զինչ արասցէ ընդ այնու-
սիկ՝ որք յետ այսպիսի բարերարութեան զարձեալ մե-

դանցիցեն . * զի եթէ ընդ փայտ դալար զայս աճնեն ,
,, ընդ չորն զինը լինիցի ։ (զակ . իդ . 31 :)

Աղքատ կուշ զինքն տէրն մեր . * զաղօթս աղքատիս ։
ասէ : | և այս վ՛ո երկուց . մի՝ զի ինքն , որ էր անձ կեն
զանի՝ փառակից հօր , զգեցաւ զաղքատ բնութիւնս
մեր . յոր միտ ասէ առաքեալն . * վասն ձեր աղքատա-
,, ցաւ՝ որ մեծատունն էր ։ (ը . կոր . ը . 9 :) | Ճքե-
րորդ՝ զի յամ կեանս իւր աղքատութեր եկաց . և յա-
ւուր խայելութեան իւրոյ բնաւին աղքատ երեւեցաւ ,
կախեալ ՚ի վր խաչին մերկ , և թողեալ յամի , կա-
րօտ զթոյ և ջրոյ , անարգեալ յամցնց , և ընդ ան-
օրէնս համարեալ , այսինքն իբրև անօրէն՝ ընդ առազակո
խաչեալ :

Ե յլ աստ գիտելի է , զի այս բան ոչ ներհակի այնմ .
զօր ասաց ՚ի վերոյ (՚ի համարն . 1 . և 2 .) * անձ իւր
,, ՚ի առուէ կարդացի առ քեզ , և ինձ ոչ լուար . ՚ի զի-
շերի , և ինձ ոչ անսացեր ։ վասն զի այն կարդալ
թէական էր վասն անցանելոյ բաժակին , և ազատելոյ
՚ի մահուանէ . որպէս և եղաք անդ : | ակ այս կարգալ
զրմէ խօսեցաւ (նաև ՚ի համարն . 19 . 20 . և 21 .)
բացարձակ էր վ՛ոյառնելոյ ՚ի մեռելոց , և վ՛ո ազատե-
լոյ զազդ մարդկան . ուստի սոյն այս եղեւ լսելի , ըստ
որոյ ասաց , * ՚ի կարդալ իմում առ նա՝ լուաւ ինձ ։ :
| և յայս իսկ յորդորեաց զշաւատացեալս իւր կար-
դալ առ անձ . և գովել ևս զնա : | և առ ՚ի ցուցանել՝
թէ ՚ի յանել իւր՝ այս դործ սրաշտաման և գովու-
թեան այ՝ ևս և իւր՝ հմարտիւ հանդերձեալ է կատա-
րիլ , դարձուցանէ զբան իւր առ հայր , և հաստատե-
լով իմն ասէ :

Ի մ ։ **Ա մ է ն է գ ո ւ շ ։ Ա մ է ն է յ ։ յ է ի է յ ։ մ է ն ։ օ ր հ ն է յ ։ յ ։ յ ։**

Ի ս ո ս ո գ ո ւ շ ։ Ա մ է ն է յ ։ յ է ի է յ ։ մ է ն ։ օ ր հ ն է յ ։ յ ։ յ ։

զ գ ո վ ե լ ։ Ի ս ս ա յ ս ո յ ի կ խ օ ս ե լ ո վ ։ ա ս է ։

Ի մ է ն է գ ո ւ շ ։ Ա մ է ն է յ ։ յ է ի է յ ։ մ է ն ։ օ ր հ ն է յ ։ յ ։ յ ։

թէ բառս գ ո ւ շ ։ ա ռ է ա լ լ ի ց ի ։ ա ս տ կ ր ա ր ա ր ։
վ ե ր ա ծ ի ա ռ ք ։ ե թ է յ ա ս ա ջ ք ա ն ։ յ ա ր ո ւ թ ի ւ ն ։ ո ր-
պ ի ս ի ե ղ ե ։ ՚ի ծ ն ն դ ե ա ն ն ո ր ա ։ ՚ի մ կ ր տ ո ւ թ ե ա ն ։ յ ա յ ր ։

կերպութեան և 'ի խամելութե , և եթէ յետ յարութեան . ըստ որոյ կամի ասել . յետ յառնելոյ իմց՝ * 'ի քէն լինելոց է գովութիւն իմ՝ . այսինքն 'ի հաճութենէ , և 'ի զօրութէ քումին լինելոց է այս՝ զի ես զովեցայց յամ աղջաց և յամ արարածոց իբրև Հյամ ըիտ ած և թագաւոր 'ի վերայ ամի :

Խակ եթէ բառս գովազնէ՝ առեալ լիցի ներգործաբար , վերածի առ հայր . ըստ որոյ կամի ասել . այն գովութիւն , զոր ես յետ յառնելոյ իմց՝ 'ի ձեռն պաշտօնելից իմոց ընծայելոց եմ քեզ , 'ի քէն է . այսինքն 'ի զօրութէ և 'ի տեսչութէ քումին է . կամ ըստ լամբրինացոյն , 'ի քեզ է . կամ ըստ այլոց թարգմանութեանց , առ քեզ է , կամ քեզ է . վասն զի յետ յառնելոյ իմց՝ զու առաքմանք հոգւոյն որյ ուսուցանելոց ես զհաւասացեալն իմ , և զօրացուցանելոց ես զնոտա պաշտել զքեզ , օրհնել և զովել 'ի մէջ եկեղեցւոյ . և առ այս յարէ :

Յեկեղեցն մէծո օրհնեցից չեւ . Յայլեայլ դէմա դարցուցանէ զբանն , 'ի համարն 22 , զայսպիսիս խօսելով ասաց . * 'ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ || . և 'ի համարն 23 . եդ . * երկիւղածք մեծս օրհնեցից զտել || . և աստ զարձեալ * յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ || . վասն զի ոչ ինքն միայն օրհնեաց զհայր , այլև երկիւղածք իւր որպիս և զաւետարանեն ոչ միայն ինքն արար , այլև աշակերտք իւր . ուստի զօր եսայի եզականապէս ասաց . (ծր . 7 .) * իբրև զի զեղեցիկ են ոսոք . (քնի) աւետարանցի համբաւոյն խաղաղութեն իբրև . աւետարանցի բարութեանց || . զնոյն յոզնակի զնէ պօզոս ասելով . (հռովմ . ժ . 15 .) * իբրև զի զեղեցիկ են ոսոք աւետարանցին խաղաղութեան և աւետարանց բարութեան || . սոյնակս և զօրհնելոյն իմն աստ , յասելն * յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ || : Մծ թէպէտ օրհնի և արտաքոյ եկեղեցւոյ նաև յանհաւատից . բայց առանց գերբնական շարժութեան հոգւոյն որյ , և առանց ընդունելութեանն քնի , և յայտէ թէ զայսմանէ չէ բանն . վոյ ոչ ասէ , յազգս մարդկան օրհնեցից . այլ * յեկեղեցիս մեծս օրհնեցից . զքեզ || . այսինքն է 'ի ձեռն հաւատացելոց իմոց մատուցից քեզ զհմարիտ օրհնութիւնս և զպաշտանունս :

Ուսէ հաւատացեալքն իմ օրհնեցեն զքեղ, այլ՝
ես օրհնեցից զքեղ. վասն զի օրհնութիւն հաւատացե-
լոցն ոչ մերձենան առ ած, և ոչ հաճոյանան նմա ա-
ռանց քոփի: Օ ի հաւատացեալքն գոյով անդամիք քոփի,
և քովուխ նոցա, ամ օրհնութիւնք և պաշտամունք
նոցա՝ քոփի միայն իբրև գլխով իւրեանց՝ ընծային այ,
կամ օր նոցն է, արժանաւորութիւն քոփի իբրև զօրու-
թիք զիլոց հաճոյանան նմա: Խակ առանց արժանաւո-
րութեան նորա՝ են իբրև ունայն զործք, կամ զատար-
կարանութիւն, և կամ անարդիւնք յաւիտենական կե-
նաց. յոյր սակա յանմ պաշտամունս մեր՝ յաղօթեն
առ հայր, կամ յընծայել մեր ինչ առ նա՝ առաջի մա-
տուցանեմք զանուն յօփ ասելով! * աերամք մերով
.., յանիւ քոփիւ || . կամ * 'ի քոյ յա 'ի տէր մեր || :
Խակ եծս սաելով ինմանայ զընդհանուր սուրբ եկեղե-
ցին, որ մեծ ասի վասն այլեւայլ պատճառաց. նախ՝ վո-
տարածութեան յաշխարհ ամ: Երկրորդ՝ վոյ յանմ ազ-
գաց ժողովելոյ: Երրորդ՝ վոյ տեւելոյ մինչև 'ի կատա-
րած աշխարհի: Չորրորդ՝ վոյ լինելոյ ամենամեծ բա-
նիւ, այսինքն մարդկեցութիք բանին այ: Հինդերորդ՝
վոյ մեծամեծ խորհրդոց և զործոց, որք 'ի նմին կատա-
րին: || Եցերորդ՝ վասն լինելոյ եկեղեցի մեծի այ. և
ոչ ժողով 'ի պաշտօն սուտ ածոց: Խօթներորդ՝ վասն
կարգելոյ առ մեծ ինչ, այսինքն առ յաւիտենական
կեանս :

Խակ յոգնակի զնելն՝ * յեկեղեցիս մեծս || , յոգնա-
կանութիւնն ոչ հայի 'ի զանազանութիւն ընդհանրու-
թեան, այլ՝ 'ի զանազանութիւն մասնաւորութե. ըստ ո-
րում 'ի մէջ ընդհանուր եկեղեցւոյ գտանին բա-
զում մասնաւոր եկեղեցիք, որք 'ի շարականի կոչին
* եկեղեցիք ընտարելոց || . ևս և * եկեղեցիք արդա-
րոց || , և՛: {Ետ առաջի զնելոյ մարդարեին զգովու-
թիւն իւր և զօրհնութիւն՝ յաւելու և զուխսն, և ասէ:

Իշ. **Օ** սուսաւ իմ իսուսը յեշ՝ առաջի ամենայն երիտա-
ծաց նորա :

Խւխտիւք իմայեալ լինին աստ պատարազք և զոհք
ուխտիւք մատուցեալք այ. յոյր միտ ասէ եսայի.
(ԺՂ. 21.) * մատուցեն զոհս և պատարազս, և զի-

, յեն ուխտս տն , և կատարեացեն : Ուր ուխտիւք իմանայ զզոհս և զպատարագս ուխտեալը՝ զրոս յիշեաց : Եւ սոքա վասն այսորիկ ուխտք կոչին , զի են գերագոյն գործք ուխտից , այսինքն իրք մատուցեալը այ 'ի ձեռն ուխտից , կամ վասն ուխտելոյ :

Եւ զի տէրն մեր ինքնին և 'ի ձեռն մարդարեից ուխտեաց հօր իւրում մատուցանել զինքն մշտնջենաւոր պատարագ , յետ մատուցանելոյ զայն միանգամ 'ի վերայ խաչին՝ առ 'ի մշտնջենաւորութիւն նորին՝ ուխտեաց և հաստատեաց՝ միշտ մատուցանել զնոյն 'ի ձեռն խորհրդոյ սմենասուրբ պատարագին . զի սա է նոյն պատարագն , որ մատուցաւ 'ի վերայ խաչին , թէ ըստ մատուցանողին , և թէ ըստ մատուցեալիրին , թէ ըստ ընդունողին , և թէ ըստ վախճանին : Ա ամսն զի մատուցանողն է նոյն ինքն քո : (իսկ քահանայն է իրբեւ պաշտօնեայ կատարող խորհրդոյն 'ի դիմաց քո՞ի :) Վմանապէս և մատուցեալն է նոյն ինքն քո : և ընդունողն է նոյնն՝ որ միանգամ ընկաըսւ զայն . ևս և վախճանն է նոյն , այսինքն է 'ի հաշտութիւն մարդկան ընդ այ :

Եւ թէ յիրաւի զայս պատարագս իրբեւ զուխտ , կամ որ նոյն է 'իրբեւ զգործ ուխտի մատոյց և մատուցանէ քո , յայտ անտի է , զոր ինքն ասաց 'ի հաստատելն զսոյն 'ի վերնատան անդ . * այս բաժակ է (ասէ) նոր ու ուխտ իմովլ արեամբ վասն ձեր հեղ զեղոյ : (զուկ . իր . 20 . և ամ . կոր . ժամ . 25 .) կամ ըստ զբելոյն մատթէի և մարկոսի , * այդ է արիւն իմ'նորոյ ուխտի , որ 'ի վերայ բազմաց հեղանի 'ի թողութիւն մեղաց : (մատ . իդ . 28 . և մարկ . ժդ . 24 .) Եւ թէ պէտ բառս նոր ռաւետ՝ 'ի վերայ արեան ասի . բայց այս վասն այսորիկ , զի պատարագն հեղմասմբ արեան նուիրի այ 'ի խոստովան լինել , թէ նա է բացարձակ տէր կենաց և մահու :

Դրդ՝ տէրն մեր թէպէտե յետ յառնելոյ 'ի մեռելոց բազում իւիք ուներ գովլել և օրհնել զհայր ըստ բանի խոստման նախընթաց համարոյն , բայց քանզի այս ուխտ՝ գերագոյն էր քան զամենեսին , և գերագոյն օրինակաւ փառաւորել զաստուած , վասն այսորիկ զսոյն նախ յառաջ բերել 'հայելով իր ՚ի նախատիպ՝

յուիսոն յայն, այսինքն՝ ի պատարագն յայն, զօր մատոյց ՚ի վերայ խաչին։ Ա ասն որոյ ասէ, ։

Օ կամի ասել. որովհետեւ այս ուխտ իմ, այսինքն պատարագ իմ, կամ զո՞չ իմ՝ որով մեռանիմ՝ ՚ի վերայ խաչին, հաճոյ է հօր իմոյ, սովին իսկ և ես հաճիմ հանապաղ զիս պատարագ կամ զո՞չ մատուցանել նմա. վասն որոյ և յետ յառնելոյ իմոյ՝ ՚ի ձեռն պաշտօնելից իմոց մատուցից նմա հանապաղ զսոյն պատարագս ընդ խորհրդով ամենասուրբ հաղորդութեան. և այնու կատարեցից զուխտու իմ, այսինքն զհաճոյական զո՞ս իմ։

Եւ այս, * առաջի ամենայն երկիւղածաց նորա ։ Ա մասս առաջ ցուցանել նախ՝ զյայսյանդիմանութիւն իրին. որպէս թէ ասէք. մատուցից յանդիման այսոցիկ՝ որք երկիւղիւ պաշտեն զած, ըստ որոյ յերբ. զնի աէիւտ. այսինքն յանդիման. Երկրորդ՝ զսրութիւն իւրոյ ժողավրդեանն ՚ի ժողովոյ անհաւատից. ըստ որոյ կամի ասել. մատուցից զայս զո՞ս ոչ ՚ի ժողովս անհաւատից կամ ՚ի ձեռն նոցա, այլ՝ ՚ի մէջ հաւատացելոց. Երրորդ՝ զարժանաւորութիւն նոցա՝ ՚ի մէջ որոց մատուցանի. ըստ որոյ կամի ասել. զայս ուխտու կատարեցից ՚ի մէջ այնոցիկ, որք վասն հաւատալոյ յիս և երկիւղիւ պաշտելոյ զած՝ արժանի են այսմ. որպիսի եղեն՝ ՚ի սկզբան անդ առաքեալին, յորոց միջի հաստատեաց զսոյն. **Չ**օրրորդ՝ զդիմաւորութիւն մատուցմանն. ըստ որոյ կամի ասել. կատարեցից զայս ուխտու իմ այսու դիմաւորութեամբ, զի երկիւղածքն այսինքն հաւատացեալին իմ սովին գտցեն յայ զողորմութիւն. և ինքեանք ևս յորդորեսցին ըստ իմում ուխտի ուխտել զինքեանս, այսինքն նուիրել զանձինս պատարագ այ. յոր միտ ասէ բարսել վէպա. (՚ի մեկն. մարկ. գլ. ժ.) * կատարեալ բարձրելոյն ուխտ ։ զքեզ (այսինքն նուիրեա զքեզ այ.) ըստ այնմ՝ ։ զուխտու իմ կատարեցից ։

Ե կատարել տեամս մերոյ զուխտ իւր՝ այնպէս կարդեաց զխորհուրդ ուխտին, զի ճաշակելով զայն հաւատացելոց իւրոց՝ յագեսցին, և լիսացին, և առ այս յարէ զինի, և ասէ. ։

ին . **Ա**ւրիշեն ունանէք և յագեսցին . օրհնեսցին զբք , որ
ինդրէն զնու :

Կարգ բանի այսը համարոյ թուի թէ ըստ նկարա-
զրին հայի յայն արարողութիւն զոր առնելին 'ի հնումն .
զի 'ի մասուցանելն զպատարազս գոհութեան՝ բարե-
կամք և աղքատք և զետացիք ևս ուտելին անտի , և
օրհնելին զտէր . որպէս յայտ է 'ի զիրս ք օրինաց .
(ժը . 11 , և 12 .) Այս քանզի տէրն մեր զայս զրհս հա-
զորդութեան սահմանեաց իրբե զպատարազ գոհութէ ,
ըստ որոյ 'ի յօյնս և 'ի լատինս՝ այս խորհուրդ՝ գո-
հութիւն կոչի , հաւանականազոյն երեխ ասել՝ թէ
յայսպիսի արարողութիւն գոհութէ պատարազի հայե-
լով խօսի զայս :

Խակ տնանելք ասելով՝ խմանսյ զայնոսիկ , որք տնան-
կացեալ էին յառաջն 'ի մեծութենէ սկզբնականն ար-
գարութեան և 'ի չնորհայն այ , և կային սովորեալ . ինու-
նայ զարձեալ և զայնոսիկ ' որք 'ի հեթանոսութենէ և
յանցաւոր մեծութենէ տնանկացան վասն քնի , և աղ-
քատացան հոգւով . Խորա իննղրելով զանձ , և յարե-
լով 'ի նա' արժանի եղեն և արժանի լինին լիանարյ
և յագենալոյ չնորհօքն աստուծոյ ' որք տուեալ լինին 'ի
ձեռն զանազան սուրբ խորհրդոց եկեղեցւոյ , մանա-
ւանդ 'ի ձեռն հաղորդութեան . առ որ 'ի մասնաւորի
հայի առաջիկայ բանդ յասելն :

Աւրիշեն ունանէք և յագեսցին : Կամի ասել , այնպիսի
տեսակաւ ունիմ կարգել զայս խորհուրդ , զի կա-
րասցեն ճաշակել անտի աղքատքն հոգւով . կամ ըստ
երբ . խօնարհքն . կամ այնորիկ , որք ճանաւելով
զանձինս իւրեանց կարօտ և տնանել 'ի չնորհաց ' ցան-
կան յազիլ սովաւ . և 'ի յուտել նոցա այսպիսի փա-
փաքանօք * յագեսցին || . այսինքն լիասցին չնորհօք
'ի հողիս իւրեանց , և զուարձասացին . զի որպէս քաղ-
ցեալն յորժամ ուտէ , լիանայ և զուարձանայ ըստ
մարմնոյ . սոյնպէս և որք քաղցեալ են այսմ զոհի
յուտելն զսոյն լիանան և զուարձանան ըստ հոգւոյ :
(տէս և 'ի յաջորդ համարն :) Տէրն ոչ կամեցաւ
'ի ձեռն օտարութի իրաց , կամ 'ի ձեռն այլոց կերակրել
և լիացուցանել զհաւատացեալս , այլ 'ի ձեռն խոր-

Հըրդոց իւրոց , մանսաւանդ՝ որպէս ասացի՝ 'ի ձեռն
խորհրդոց հաղորդութե՛ . ըստ որում առէ բարակը վար-
դապետ ('ի մեկն . մարկ . գլ . ժկ :) * Վարք բազուման-
,, զամ զորս ծնան՝ զայեկաց տան զորդիսն . իւկ նա
,, (այսինքն քու) ինքնին կերակրէ , զմեզ իւրով ա-
,, թեամբն , և ամենայնիւ խառնէ զմեզ ընդ իւր . ոչ
,, միայն հաւատովք , այլև արդեամբք և զործովք ,
,, և 'ի մահ տալով զանձն ॥ . զոր ոչ ոք մայր արար . զի
ով ոք 'ի մարդ մահու մասնեաց զինքն՝ առ 'ի կերակ-
րէ լ զորդիսն մարմնով իւրով . միայն որդին այ եղե .
ոք 'ի զենումն տուեալ զանձն՝ կամեցաւ իւրե կե-
րակրէ լ զմեզ : Հայս խորհուրդ բազմապատիկ զար-
մանալիք կան , զորս անկարանակը իմանալ այժմ . զի
մարմնն եղանակի ծանրացուցանէ զշողի , և 'չ թու-
զու հասու լինել զերազանցութեան այսր անեղծական
խորհրդոց . 'ի հասանել մեր յարքայութիւն՝ ուր է քու
փրկիչ մեր՝ ընդ նմա ծանիցուք և ընդ նմա բերկրես-
ցուք . յոր միտ նա ինքն ասաց ('ի մատ . իշ . 29 .)
* յորժամ արթից զբա ընդ ձեզ նոր յարքայութեան
,, հօր իմայ ॥ . իւր թէ ասէր . յարքայութեան հօր իմայ
ունիք ընդ իս ըմնիւ , այսինքն իմանալ զայս խոր-
հուրդ , որով այժմէն կամեցաց կերակրէ լ զձեզ : Եւ
արդ քանզի ոքք միանգամ կերակրին 'ի խորհրդոց առ-
տի , և 'ի ինդիր են ումա , յնծան առ ոծ , և գոհանաւ-

() լով օրհնեն զնա , սմին իրի յարէ զինի , և ասէ .
Ընդհանուր զնորդութեան զնա : այսինքն չնորհակալ
լինելով գոյացին զտեառնէ , և գովեսցեն զնա վասն
այսր մեծի բարերարութեան նորա : Ի՞այց զայս ասէ՝ ոչ
ամենեքին ունին առնել , այլ նորա միայն , * ոքք
ինդրեն զնա ॥ . այսինքն նորա , ոքք զորով ծարակի
և քաղցեալ արդարութեան չնորհացն այ՝ պատի մոտք
ցանկան պաշտել զնա . և այսու զիտաւորութե՛ մատ-
շն հաշակել յայսմ զոհէ : Ես սոյն վայելեցին 'ի սկըզ-
բան երանեկի սուաքեալքն . զզոց զրեալ է , (մատ .
իշ . 31 .) թէ իւրե կերին զմարմնն ոն և արքին զա-
րիւն ոք նորա , * օրհնեցին , և ելլին 'ի լեառն ձիթե-
,, նեաց ॥ . ոք խորհրդաբար նշանակէ ելանել և կեալ
'ի հոգեւոր կեանս . զօրմէ խօսի մարգարէն 'ի յաջորդ
համարն՝ ասելով :

ԵՌ. **Ա**լեցյան սիրոս նոցա յատիպեանս յատիպենիշ . յիշւշին
և դարձյին առ որ ամենայն ծագէ եւ իրէ :

Վ. յս բանք հային յայն զոր ասաց տեղն մեր . (յովէ .
շ. 32 = 60 .) * կըմէ ոք (ասէ) ուախցէ 'ի հայէ .
" յայսմաննէ , կեցցէ 'ի յաւիտեան . . . ես (ասէ) կեն
" զանի եմ վասն հօր . և որ ուտէն զիս՝ և նա կեցցէ
" վասն իմ . այս է հայն՝ որ յերկնից իջեալ . ոչ որպէս
" կերան հարլքն ձեր զմանանայն՝ և մեռան . որ ուտէ
" զշացս զայս , կեցցէ յաւիտեան || : Օ սոյն յայտ առ
նէ և առաջիկայ բանդ՝ զոր ասէ :

Ալեցյան սիրոս նոցա յատիպեանս յատիպենիշ : կամի ասել .
որք արժանաւորապէս ճաշակեն 'ի զոհէ անտի , այս
է՝ 'ի խորհրդոյ հաղորդութեան , կեցցեն սիրտք նոցա .
այսինքն հօգիք նոցա , այնպիսի կենօք՝ որ կարգեալ է
առ յաւիտենական կեանս . կամ այնպիսի կենօք՝ որ
ուեւ յաւիտեան : **Վ.** զամ ուտելով զպտով ծառոյն
զիտութեան մեռաւ . իսկ որդիք նորա ուտելով զպտով
ծառոյն կենաց՝ կեցցեն յաւիտեանս յաւիտենից :
Հոգիք մարդկան հաղորդելով մարմնոյն ադամայ՝
անիծանին . իսկ հաղորդելով մարմնոյն քնի՝ օրհնին
և կենդանանանան : **Վ.** ճաշակել մեր զկերակուր՝ զօրա .
նամք , իբրև թէ նորոգիմք 'ի կեանս՝ 'ի մեզ փոխար .
կելով զկերեալն . քանի ևս 'ի ճաշակեն զկենդանա .
բար մարմնոյն քնի՝ ոչ զի մարմնին նորա 'ի մեզ փոխար .
կի , այլ զի հոգիք մեր 'ի նա փոխակերպին . և ինքն
անապական մնալով 'ի մեզ՝ հաղորդէ մեզ զկենդա .
նութիւն իւր . զի որպէս սակի 'ի ճաշակին 'ի ձեռն գե .
զոյ՝ անապական մնալով հաղորդէ մարմնոյ զզօրութի
իւր , սոյնպէս և մարմնոյն քնի 'ի խորհորդ հաղոր .
դութեան 'ի ճաշակին տայ հոգւոյն զզօրութիւն մեծ .
երբեմն և մարմնոյն ևս . որպէս զիտաւ բազմաց : **Վ.** ա
սիկ սրբուհին կատարինէ ձենուացի յորդամ մերձ էր
'ի մեռանիլ՝ 'ի հաղորդիլն՝ 'ի խնդութենէ սրտին առող .
ջացաւ : **Ա**րբուհին Խատա 'ի հաղորդիլն զօրանայր , և
սիրով նորին այլափոխիւր , մինչև ջեռնուլ ևս և
մարմնոյ նորա : **Վ.** որչափ ծանր փորձութիք հասանէին
'ի նա յետ հաղորդելոյն՝ ոչ ինչ ազգէին նմա : **Վ.** ի
հրդատ ճաշակելով զազնիւ թիւրակէսս՝ այնչափ հաս .

սաստիւր՝ ՚ի զօրութեան, մինչեւ ոչ ազգել թիւնից ՚ի
մարմին նորա:

Օ այսպիսի զօրութիւն հաղորդութե յայտնի ճանա-
շերվ սրբոց՝ վառեին ՚ի սեր նորա. և նովին վառմամբ
փափաքէին մերձենալ առ նա ՚ի ճաշակել. Արբու-
հին թէրէզիա ՚ի սաստիկ փափաքանացն ասեր. առ ՚ի
հաղորդիլ այսմ խորհրդոց յանձն առնում գնալ ընդ
մէջ սուսերաց թշնամեացն. Արբուհին կատարինէ
սենացի փութայուցանէր զռայիմունդու խոստովանա-
հայր իւր՝ ՚ի պատարագել, և ասեր. Երբ իցէ, Երբ ի-
ցէ զի ճաշակեցից. և յառում միում՝ ՚ի յամել պատա-
րազչին ՚ի ճաշակման, մերձ եղեւ կատարինէ ՚ի նուա-
զիլ. և տեսաւ յամենէցունց՝ զի որ խորհուրդն թոռ-
ցեալ՝ ՚ի որ սեղանոյ եկն և եմուտ ՚ի բերան կուսին:

Այս փրանիխսկոս յորժամ մերձ լինէր ժամ՝ հաղոր-
դելոց, ՚ի ցնծութենէ սրտին ասեր. մի ժամ միայն
մնաց՝ զի զայցէ առ իս քս: Առբեն լէտիոլսոս ՚զուքս
աւոզդիոց կամէր յամ առուր հաղորդիլ եթէ թողոյը
խոստովանահայր իւր. եթէ հիւանդանայր՝ համբե-
րէր ծարաւոյ ՚ի զիշերի, զի մի զրկեսցի ՚ի հաղորդու-
թենէ: Առ տեսեալ թէ պալատականը իւր յապա-
ղեն մերձենալ յայս խորհուրդ, հրամայեաց յաճախ
հաղորդիլ, զէթ միանդամ յամենանն: Սաստիկ եր
սորա թէրմեռանդն յօժարութի և յարգութի առ այս
խորհուրդ, զոր երկար լինի զըել. Հյորժամ տեսա-
ներ՝ թէ սրբութիւն տանին առ հիւանդ ոք, ինքն ևս
լնիերանայր բացազլուխ. և յանձրելն ևս ոչ ծած-
կէր զգլուխ իւր: Ի տեսանեն զսուրբ պատարագն՝ ՚ի
ծունկս անկանէր ՚ի ցամաք զետնի ևս և ՚ի քարի: Ի-
թէ մեր ևս իմանայաք զյարդ և զգերազանցութիւն
այսը խորհրդոց. փութայաք յաճախ ճաշակել, յո-
րնում վիճակի և լինէաք: Կըթէ կատարեալ իցես և
սուրբ՝ ճաշակեամ զի զովասցիս. եթէ անկատար՝ զի կա-
տարեսցիս, եթէ զօրաւոր իցես՝ զի մի տկարացիս,
եթէ տկար՝ զի զօրասցիս. եթէ առողջ իցես՝ զի մի
հիւանդասցիս, եթէ հիւանդ՝ զի առողջասցիս: Կըթէ
յաճախես՝ ուրախ առնես զյիսում՝ զի ցուցանես զքեզ
հանաչել զաղնուութիւն խորհրդոցն. իսկ եթէ ան-
փոյթ իցես՝ տրտմեցուցանես: Տրտմի մայրն՝ յորժամ

մանուկն ոչ դեկ . տրտմի հայրն՝ յորժամ որդին ոչ
հաշակէ . տրտմի և բժիշկն՝ յորժամ հիւանդն ոչ առ-
նու զգեղ . Եթէ քաղցեալ ես , ընդէր ոչ հաշակէս .
Եթէ հիւանդ ես՝ ընդէր ոչ առնուս զանմահացուցիւ
դեղն . Եթէ մեղաւոր ես՝ ընդէր հրաժարիս յայնմա-
նէ՝ յորմէ գտանես վեռողութիւ :

Վ՞ո ոչ խորչի 'ի քէն , զու ընդէր խորշես՞ի նմանէ .
ընդունի զքեղ սիրով , զու ընդէր 'ի բաց դարձուցա-
նես զերեսադ . զայ առ քեզ , զու ընդէր փախուխ . և
պատճառ ես լինիս այլոց թուլանալոյ և խորշելոյ :
Վնիկիլա պոռնիկ զբազումն յետս նահանջեաց 'ի յա-
հախ հաղորդելոյ . եկն առ նա քս 'ի կերպարանն ե-
րիտասարդի , և ետ նմա ըմպել զինի քաղցը յոյժ .
և յայտնեաց նմա թէ առաւել ևս քաղցը է խոր-
հորդին հաղորդութեան . և եղեւ աներեւոյթ : Յայն-
ժամ յինքն եկեալ անիկիլա սկսաւ ողբալ , և այնչափ
վառեցաւ սիրտ նորա առ այս խորհուրդ , մինչև 'ի քուն
ընելն իսկ՝ զայնմանէ երազէր . ընդ զարթնուն զայն-
մանէ խորհուրդ և 'ի նոյն պատակէր . և 'ի հաշակէն
պայծառանացը 'ի հսկի իւր , երբեմն և 'ի մարմին :
Եթէ հշմարիս է զոր ասեն՝ թէ է ուրեք , ուր նա-
պատակէր սպիտականան 'ի լերինս վասն ուտելոյ զմիւն
սպիտակափայլ . քանի ևս սպիտականայցէ և փայլիցի
հոդին՝ եթէ կերիցէ զմիւնափայլ խորհուրդն հաղոր-
դութեան 'ի լերինն նր՝ ցն 'ի նր սեղանի : (Այսմամէ
տես 'ի զիրքն կուեցեալ հրահանդ եօթնեկի , 'ի վերջն :
Եւ արդ քանզի այս խորհուրդ է յիշատակ այնր՝ որ
կատարեցաւ 'ի զողզոթա . (ըստ որում գնի 'ի զուկ .
իր . 19 : և 'ի առ . կոր . ժառ . 24 :) յայն կամելով
վերացուցանել զմիսո հաշակողացն յարէ զինի և
ասէ :

Յիշաշցն (և դարձյն առ ուր :) Արակէս թէ ասէր .
այս խորհուրդ զոր կարգեցի ես փոխանակ մահաքեր
խորհորդոյն , և այնպիսի ինչ , յորում յիշատակի փըր-
կութին այն՝ զոր կատարեցի 'ի վերայ խացն . սմին իրի
սովաւ ունին յիշել մարդիկ՝ թէ վասն փրկութեան նո-
ցա մատուցի ես զիս պատարագ . որով և հաշտեցուցի
զնոսս ընդ հօր իմում :

Սպին ստիպիսէ յաձախ յիշել զարդարանան քրիստո-

սի յայտմ խորհրդեան : Բայց քանի սակառք են՝ որք յօժարիցին յիշել զայս . քանիք ևս գտանին որք տաղտկան յիշել . բայց արդ եթէ նա ոչ տաղտկացաւ կատարել այսպիսեօք զիրկութիւն մեր , մեք ևս մի տաղտկացուք յիշել զայն վասն մեր և վ՛ս նորա . վասն մեր՝ զի զօրասցուք և զգաստասցուք . վասն նորա՝ զի երկիցուք , և մի ապերախտ երևեցուք :

Վ սացի նախ՝ * զօրասցուք || . զի 'ի տեսանել մեր՝ թէ զօրագլուին հաւատոց չարչարեցաւ վասն մերոյ փրկութէ՝ մեք ևս զօրանակը . յօյր սակայ յորդոր լինի առաքեան ասելով . * քնի չարչարին մարմնով և դոք 'ի նոյն միտս վառեցարուք || . (ա . պետ . դ . 1 :) Փիղք 'ի տեսանելն զարիւն՝ զօրանան 'ի պատերազմի , սոյն պէս և մարդ 'ի տեսանելն անդ 'ի պատարազի զարիւնն յոի հեղեալ վասն իւր 'ի խաչի զօրանայ մարտինչիւրնդ ախտս իւր և ը դես : Որով որչափ մեռուցանեմք զմեզ յախտից՝ այնչափ չարչարակից լինիմք քնի , և հաղորդ կենաց նորա . ը որում յորդորէ առաքեան ասելով . * յամ ժամ զմահն յոի 'ի մարմինն մեր կրեայուք . զի և կեանքն յոի յայտնի լիցին 'ի մահկանացու մարմինն մեր || . (ը . կոր . դ . 10 :)

Վ սացի երկրորդ՝ * զգաստասցուք || . զի 'ի մսածելն անդ առաջի պատարազի՝ զանպարտ չարչարիւ նորա վասն մեր՝ զարթնումք 'ի թուլութենէ , և զգաստանակը 'ի խորհուրդս , և նահանջիմք յանվայել կրից և յանպատեհ զգածմանց և 'ի վավաշ խլբումանց : Վ սի թէ որ ննջէ 'ի վերայ այնը խոտոյ և ծաղկան՝ որ կոչի ողջախոհ գառն՝ ողջախոհանայ , սոյնպէս որ ննջէ՝ այսինքն որ հանգստեամբ մսածէ զկեանս և զարչարանս անարատ գառին այ՝ զգաստանայ , և ըստ ցանկական յօժարութեանն ողջախոհանայ :

Վ սացի երրորդ՝ * երկիցուք || . զի 'ի յիշել մեր յայս խորհուրդս թէ ան ու ինայեաց 'ի միածին իւր վասն մեղաց մերոց , այլ 'ի զենումն խաչի մասնեաց զնա , 'ի միտ առնումք թէ նաև մեզ ու ինայէ . որոյ վասն ասաց քու . * եթէ ընդ փայտ դաւար զայս առնեն , ընդ չորս զինչ լինիցի || . (զուկ . իդ . 31 :)

Վ սացի չորրորդ՝ * զի մի ապերախտ երևեցուք || . զի յետ տեսանելոյ՝ թէ արարին մեր այսչափ ինը կրեաց

վու մեր՝ մարմնով, և 'ի յիշատակ այսր կարգեաց զայս
խորհուրդ՝ մոռանալն զայսպիսի երախտիս՝ ապերախ-
տութիւն մեծ է : || Վ արդեօք հաճեցաւ վու մեր կաթիւ
մի արեան հեղուլ. ով վասն ազատեցյ զմեղ 'ի յաւի-
տենական գաստապարտութիւն երաշխաւոր եղեւ մեզ . ով
'ի գութ շարժեցաւ կեցուցանել զմեզ . զետացին
զանց արար, և քահանայն անփոյթ եղեւ . միայն երկը-
պազելի սամարացին գթացաւ 'ի վերայ մեր . մինչեւ
եհեղ զարդիւն իւր բոլոր վասն մեր, և զկեանս իւր ետ
'ի փրկանս : || Ելևկիոս արքայ յունաստանի զմի ակն
իւր միայն ետ վասն որդւոյ իւրոյ . և որդին ոչ դադա-
րէր 'ի գոհանանալոյ զնմանէ : Ի անզիւ թագաւորս այս
եդ օրէնս 'ի վերայ գործոյ իրէք, զի թէ յանցանիցէ
ոք յայնմ' բրեսցին երկու աչք նորա : Հանցեաւ որ-
դին, և հարկ եղեւ հանել զաւս նորա . իսկ հայրն ինայ
ելով 'ի նա՝ ետ հանել զմի ակն նորա, և զմի զիւրն : ||
Ա լմնել այսր հանապազ հայէր որդին 'ի բրեալ ակն հօր
իւրոյ, և գոհանայր զնմանէ : Իսկ տէրն մեր ետ մեզ
զինքն բոլոր վասն ազատեցյ զմեզ բոլոր . ապա չիցէ
արժան հանապազ հայէլ 'ի նա և 'ի վերա նորին, ևս
և յիշել զորս կրեաց վասն մեր, և գոհանաալ զնմանէ :
|| մին իրի ազդ առնէ երեւելի ոնն 'ի սուրբը՝ ասելով .
* հայեաց ով մարդ հայեաց 'ի փրկին քո, որ ըզ-
,, զլուխն խոնարհեալ ունի 'ի խաչին 'ի կողել զբեզ
,, և 'ի համբուրել . զսիրան բացեալ ունի 'ի սիրել,
,, զբազուկսն տարածեալ 'ի զրկել, զբուր մարմինն
,, վիրաւորեալ 'ի փրկել . սոքա որշափ իցեն՝ խորհեա .
,, զայս ամ 'ի սրտիդ կանզնեա, և պալիսի իցեն հա-
,, նապազյիշեա . զի բովանդակն լինիցի 'ի հոգի քո ,
,, որ բովանդակ եղեւ 'ի խաչին վասն քո || :

Ա յլ են բազումք՝ որք թէսպէտե փափաքին յիշել և
մտածել, բայց 'ի զբազմունս պաշարեալ գոյում՝ յոր-
ժամ մատըն 'ի խորհիլ 'ոչ ինչ նշմարեն . եթէ յա-
մէին 'ի խորհուրդս, նշմարէին այն : || մտանել մար-
դոյ 'ի մթին տեղի՝ առժամայն ոչ տեսանէ ինչ . եթէ
յամեսցէ փոքր մի՛ բանին բիբք այացն, և սկսանի տե-
սանել . զու ևս 'ի մտանելզ 'ի մտածութիւն խորհրդոց
շարչարանաց և խանելութեան ոն 'եթէ առ ժամայն
ինչ ոչ նշմարէս, մի յետո կար . այլ կաց սակաւ մի .

և տեսցես զբազումն : | Տ տեսանելդ ինչ մի բարի՝ ի մտածութեանդ , մի թողովը . զկայ առ անդ . գանձ գտեր՝ զայդ ժառանգեա նախ . յառաջ քան զժառանգելքո զդտեալզ , մի ևս ընդունայն պեղեր : | Ճեկ մտածելովդ կամ յիշելովդ կցորդ լինիցիս խորհրդոյ շարչարանացն քո՞ի՝ հալորդ լինիս և միսիթարութեան նորա . և ամբ զօրութիւնք հոգւոյ քո դարձցին և միասցին ընդ նմա : | Քրդ առաջի եղեալ մարդարէին զյորդոր յիշելոյ զխորհուրդ փրկութեան մարդկան , զոր կատարեաց քո պատարագելով զանձն ՚ի խաչի , առաջի առնէ այժմ և զպտուղ այսր խորհրդոյ՝ այսինքն

զդարձ ազգաց , ասելով :

| Եւ դարձեն առ ոք ամ ծագէ երէրէ : | Այսինքն ՚ի լսել և ՚ի միտ առնուլ ծագաց երկրի զայն ամենայն՝ որովք փրկեցի զազք մարդկան , դարձցին առ տէր . զի * առ նա ժողովելոց եին ամ ազգք || . ըստ որում զըէ իդնատիս վարդապետ (՚ի մեկն . ղուկ . իդ . 46 .) | Խսէ * ամ ծագք երկրի || ասելով ինմանայ զբնակեալս յամ ծագս երկրի . որով նշանակին ամ ազգք ոչ ըստ ամ անհամատից որպէս թէ իւրաքանչիւր անհամատ աշխարհիս դարձան առ ամ , այլ ըստ ամ տեսակաց . իբր զի յամ տեսակաց մարդկան բազումք դարձան առ ամ , ՚ի հրէից , ՚ի յունաց , ՚ի հայոց , ՚ի պարսից , ՚ի հնդկաց , յասորւոց , ևն : | Հւ ամբն սոքա ժողովեալ ՚ի մի սուրբ եկեղեցի՝ պաշտեցին և պաշտեն զած կենդանի , և նմա միայն երկիրագագանեն , և զնա մի այն ձանաչեն իւրեանց թագաւոր և տէր : | Հւ յաղազո այսորիկ յաւելու զինի , և ասէ :

ի՛ժ . | Երիշը ագայն նմա ամ բռնճէ աղանց , զի դն և ար քայութէ . ևնաս բիրէ ՚ի կէրայ ամ հեթանոսաց : | Մսելով ամ բռնճէ աղանց ինմանայ զայնոսիկ , զորս ՚ի վերոյ կոշեաց * ամ ծագք երկրի || . այսինքն ամենայն ազգք , մանաւանդ հեթանոսք . ըստ որում բացատրէ զինի՝ յասելն , ամ հեթանոսաց : | Ս սոսա ակնարկելով ասէ :

| Երիշը ագայն նմա ամ բռնճէ աղանց : Այսի ասել . ու իշե ազգք ձանաչելով և ՚ի միտ առնով զխորհուրդ մարդկեղութեն և զջօրութիւն մահուան իմց՝ զարձցին

առ ած . զնա միայն պաշտեսցեն , և նմա միայն երկիր-
պագցեն : Եւ յարէ զպատճառն ասելով :

Օք է քն է արտայուտի . ոնկ թէ ասէր . արժան է և հարկ
իսկ է ամցուն դառնալ առ ած և պաշտել զնա . զի
նորա միայն է արքայութիւն , այսինքն թագաւորութի .
որ է ասել , նա միայն է թագաւոր 'ի վերայ ամի' ոչ
միայն հրէից , այլև հեթանոսաց . (Հոռվմ . դ . 29 :)
զի թէպէտե հեթանոսք զկուռս պաշտեն , բայց ոչ ե-
թէ 'ի կոոց տիրին , այլ յաստուծոյ : Եւ առ այս
յարէ :

Եւ նա ուրէ 'ի վերայ ամ հեթանոսաց : Այսինքն թէ ած
արարիչ գոլով ամի' ևս և նոցա՝ որք ոչ պաշտեն զնա ,
տիրէ 'ի վերայ նոցա՝ պահելով զնո 'ի գոյութեան և 'ի
գործողութեան իւրեանց , կերակրելով , խնամելով ,
առ բարին առաջնորդելով , ևն . վասն որոյ և նոքա
իրաւամբք պարտական էին , և պարտական են դառ-
նալ առ նա . ոնկ և դարձան իսկ , և վայելեցին 'ի բա-
րիս նորա , մանաւանդ 'ի խորհուրդ հաղորդութեան .
զորմէ 'ի մասնաւորի ևս զրէ 'ի յաջորդ համարն , և
ասէ :

Ե. **Վ**երան և երիեղագին նմա ամ պարաբռտ երիրէ . առաջէ
նը անիցին անեւեւան՝ որ էջանցն 'ի հող :

Այս բան հայի յայն , զոր ասաց 'ի վերոյ ('ի համարն
27 .) կերիցեն տնանկք և աղքատք յանապական զո-
հէ անտի , և յագեսցին , և օրհնեսցեն զտէր . և զի
անդ զտնանկսն միայն եղ և զաղքատսն ըստ հոգւոյ ,
յորս զտանին և փարթամբ ըստ մարմնոյ , զսոսա ևս
որոշակի դնէ աստ . որպէս զի ցուցցէ , թէ ոչ միայն
աղքատք՝ այլև փարթամբ և մեծատունք իսկ և իշ-
խանք հաւատացեալք 'ի քո վայելեն 'ի սեղանոյ ան-
տի . վոյ ասէ :

Վերան և երիեղագին նմա ամ պարաբռտ երիրէ : Պարաբռք
երկրի ասելով իմանայ զպարարտացեալս կամ զիա-
ցեալս երկրաւոր ընչիւք , իշխանութիւն , իմաստութիւն ,
ևն . որպիսի են մեծատունք , դատաւորք , թագա-
ւորք , իմաստասէրք , ևն : Առքա ասէ դառնալով առ
ած , և արդեամբքն քոի արժանաւոր լինելով շնոր-
հացն այ՝ կերին ընդ տեսակօք հացի 'ի զոհէ անտի

մատուցելոյ 'ի վերայ խաչին . և 'ի նմին իսկ երկիր-
պադին այ : Եւ թէպէտ այս բան գոլով մարզարէու-
թիւն՝ հայի յապառնի ժամանակ , բայց դնի 'ի կա-
տարեալն՝ առ 'ի ցուցանել զստուգութիւն իրին . որպէս
եղաք այլուր :

Վարթ է աստ պարարտօք իմանալ և զայնոսիկ մե-
ծատունս , որք թէպէտև հաւատացեալ են 'ի քո ,
բայց չեն հոգւով աղքատք , այսինքն մերկացեալք
յախտից , կամ յանկարգ սիրոյ մեծութե և իշխանու-
թե . և ըստ այսմ 'ի ներհական մեկնի այս բան , համե-
մատութք 27 , համարոյն . զի որպէս ըստ դնելոյ անդ՝
աղքատքն հոգւով ուտելով 'ի զոհէ անտի յաղին ,
սոյնպէս և փարթամքն՝ (զորոց խօսի աստ) ուտելով
անտի՝ սովին և սովեալ մնան . զի ոչ մատչին արժա-
նապէս . ուստի անդ ասաց , կերիցեն՝ և յագեսցին .
իսկ աստ ոչ յաւել՝ թէ յագեսցին : Ի՞նչ այս մեկ-
նութի ոչ համարի նկարագրական , այլ՝ յարմարական
միայն . զի կիտումն մարզարէին ոչ է առաջի առնել
զանարժանութիւն հաղորդելոցն , այլ՝ ցուցանել 'ի
դիմաց քո , թէ ազգք մարդկան դառնալոց են առ
ած , և յեկեղեցւոջ նորա հաղորդելոց են այնմ զոհի՝
որ մատուցաւ 'ի վերայ խաչին վո փրկութե մարդկան .
և թէ՝ ճշմարիտ երկրպագութք պաշտելոց են զած
մինչեւ 'ի կատարած աշխարհի : Եւ յայս միտ յարէ
զկնի , և ասէ :

Կառաջի նը անհնին ամիսն , որ իջանեն 'ի հող : Այսինքն է՝
ծունը կրկնելով ճշմարիտ երկրպագութեամք երկիր-
պագցեն այ ամքին նոքա , * որք իջանեն 'ի հող .
ուր բառդ 'ի հող՝ ըստ երից կարէ իմացեալ լինել . մի
'ի ցուցանել՝ թէ այն առաջի անկումն լինելոց է մին-
չել 'ի հող , և այս է իբր բացատրութիւն երկրպագու-
թե . երկրորդ 'ի ցուցանել , թէ նոքա ունին ճշմար-
տութեամք երկիրպագանել նմա , որք իջանեն 'ի հող ,
այսինքն որք ճշմարտապէս խոնարհին . երրորդ 'ի
ցուցանել զամ հողեղէնս՝ յոր միտ կամի ասել . ամ
մարդիկ՝ որք մեռանելով իջանեն և դառնան 'ի հող ,
երկիրպագցեն նմա , և անկցին առաջի նորա . և այս
մինչեւ 'ի կատարած աշխարհի . ուր ոչ ևս դարձցին 'ի
հող . այլ 'ի հողոյ յարիցեն : Եւ որպէս արդեամքը

չարչարանացն քո՞ի՝ արժանացան դառնալ առ ած կենդանի, և պաշտել զնա . սոյնպէս և զօրութեան նր յարիցեն 'ի մեռելոց կենդանի, և փառաւորեսցեն զած յաւիտեան : Եւ զայս յայտ առնէ մարգարէն 'ի յաջորդ համարն ցուցանելով 'ի դիմաց քո՞ի, թէ որպէս նա ինքն զօրութեան այ յառնելով 'ի մեռելոց՝ մնալոց է կենդանի յաւիտեան, նոյնպէս և եկեղեցի նորա՝ որ արդեամբք նորին կանգնեցաւ՝ հանապազ մնասցէ կենդանի՝ պաշտելով զած : Ամին իրի ասէ :

Է . **Ա** նչն իմ նովաւ էւայ . և զաւաէ իմ ծառայեսցէ նմա :

Կնձն իմ ասելով իմանայ զինքն ըստ որում էր մարդ . որով նոյն լինի ասել, ես նովաւ կեամ, և ասել, անձն իմ նովաւ կեայ . զի ըստ ասելոյ մեր ('ի սաղ . ժե . 10 .) ըառս անչն բազում անգամ 'ի ոք գիրս՝ մանաւանդ 'ի սաղմոսի՝ 'ի գործածի փոխանակ էական դերանուանցս, ես, դու, նա, ինքն . և նշանակէ զենթաղբեալն . յայս միտ խօսելով ասէ :

Ա նչն իմ նովաւ էւայ, կամի ասել . ես՝ որ մեռանիմ 'ի վերայ խաչին վասն հաշտեցուցանելոյ զազդ մարդկան ընդ այ, յետ մեռանելոյս՝ նր զօրութեան յառնեմ և կենդանանամ ըստ մարմնոյ, և մնամ կենդանի յաւիտեանս յաւիտենից . կամ ըստ այլոց թարգմանութեց՝ մնամ կենդանի այ յաւիտեան : * **Ո**ր մեռաւն (ասէ պօղոս) „ մեղացն մեռաւ միանգամ . և որ կենդանին է՝ կենդանի է այ (յաւիտեան) || . (Հռոմ . կ . 10 :) և կամ՝ զի ամքին ևս իցեն կենդանի ինքեան և ոչ աշխարհի . ըստ որոյ ասէ բարսեղ վարդապետ ('ի մեկն . մարկ . գլ . ժե .) * մեռաւ յու աշխարհի . զի ոք աշխարհի մի կեցցէ, այլ ինքեան || . և կենդանի ծառայութիւն ծառայեսցէ այ : Եւ առ այս յարէ :

Ե . զաւաէ իմ ծառայեսցէ նմա : **Օ** աւակ իմ ասելով իմանայ զփրկեալն արեամբ իւրով, զորս և կոչեաց որդեակս . (յովհ . ժե . 33 .) ոչ սոսկապէս՝ ըստ որում էին մարդիկ, այլ տեսակապէս՝ ըստ որում եղեն զաւակք . այսինքն որդէզրեալք 'ի ձեռն մլրտութեան, և ըստ որում աշակերտեալք, և ժողովեալք 'ի մի եկե-

զեցի սուրբ : Այս զաւակ իմասէ՝ մինչև 'ի կատարած
աշխարհի ծառայեսցէ նմա , այսինքն պաշտեսցէ զնա
հոգւով և մարմնով ներքին և արտաքին պաշտա-
մամբ :

Այս ըստ ասելոյ ոմանց և ըստ վարդանայ՝ ասի
և 'ի դիմաց դաւթի . որպէս թէ եղեալ էր . 'ի կա-
տարել որդւոյն այ զայս ամ՝ կեցցէ անձն իմնովաւ .
և նա ինքն եկեալ հանցէ զիս 'ի դժոխոց , և զամսին
որք յուսացան 'ի նա : Օ այս բարերարութիւն փրկու-
թեան հրատարակել կամելով յարէ զկնի , և ասէ :

Ա. Պատմեցից առ յազդ՝ որ Գալոցն է . Պատմեցին պար-
տարութիւն ծողովութեան , որ ծնանելոց էցէ , ուր
արար պէ :

Այստանօր բառս առ դնի փոխանակ բառիս պահանջնէ .
որպէս դնի յայլ բազում սաղմոսս մեր , և 'ի ձեռագիր
ածաշունչս , և 'ի մեկնութեան լամբրոնացւոյն , և 'ի
մեկնութե ժամագրքի (երես . 169 .) ևս և 'ի թարգ-
մանութե ասորւոց և արաբացւոց . ըստ այսմ իմա-
ցեալ , ասէ :

Պատմեցից առ յազդ՝ որ Գալոցն է . ևն : Այս եթէ
առցի 'ի դիմաց դաւթի՝ մեկնի այսպէս . ցորչափ կեն-
դանի եմ , պատմեցից զտեառնէ , և ցուցից ազգաց
որք գալոց են՝ զարդարութիւն նորա . զնոյն արասցեն
և որդիք իմ . զի պատմեսցեն և նոքա զարդարութիւն
այ , ևս և աւանդեսցեն որդւոց յորդիս՝ զնոյն առնել .
Իսկ եթէ առցի 'ի դիմաց քո՞ի , մեկնի այսպէս . յետ
յարութեան իմոյ առաքեցից զաշակերտս իմ յաշխարհ
ամ . և նոքօք պատմեցից զտեառնէ առ ազգս մարդ-
կան՝ որք կանն և որք գալոց են , յայտնելով զՃմար-
տութիւնը , և զողորմութիւն , և զարդարութիւն . կմ
ըստ մեկնաբանութե քաղղէացւոց , պատմեսցէ քո՞ ազ-
գի մարդկան զզօրութիւնն այ : Եւ զի որպէս ասացաք
զայս արար քո՞ 'ի ձեռն աշակերտաց իւրոց , վասն այսո-
րիկ յաւելու և ասէ :

Պատմեցին պարտարութե ծողովութեան , որ ծնանելոց էցէ , ուր

արար թի : Այսինքն է՝ աշակերտք իմ, և նոցին յա-
ջորդը աւետարանեսցեն ժողովրդեան, թէ զիարդ
արդարացոյց ած զազգ մարդկան . կամ թէ զիարդ կա-
մեցաւ, զի որդի իւր վո՞ փրկուն ազգի մարդկան մար-
դացի, և մեռցի 'ի վերայ խաչին՝ 'ի հատուցանելար-
դարութեան իւրում, և այնու հաշտեցուսցէ զնոսա
ընդ իւր :

Վովսէս վարդապետ (Շի մեկն. ժամագր. երես 169.)
յառաջին դէմս ընթեռնու զպատմելն, և զբանն ա-
ռաջի դնէ այսպէս . * պատմեցից զոնէ ազգի որ գա-
լոց իցէ . պատմեցից զարդարութիւն նորա ժողովը-
դեան՝ որ ծնանելոցն իցէ՝ զոր արար տէր || : Բայց և
այս նոյն է՝ զի ինքն էր՝ որ պատմէր 'ի ձեռն առաքե-
լոց, և աշակերտաց իւրոց :

Խսկ այն՝ զոր ասէ, * որ ծնանելոց իցէ ||, երկու ինչ
ցուցանէ : Վի՝ զնորութիւն ժողովրդեան . ըստ որոյ
կամի ասել . պատմեսցեն աշակերտքն քո՞ի զարդարու-
թիւնն այ՝ այնմ ժողովրդեան, որ նորոգ ծնանելոց
է ծննդեամբ աւազանին . կամ որ նոյն է, այնմ ժողո-
վրդեան՝ որ սահմանեալ է լինել նոր եկեղեցի այ :
Երկրորդ՝ զհանապազորդութիւն յաջորդութե՛ հաւա-
տացելոց . ըստ որոյ կամի ասել . աշակերտքն իմ ոչ մի-
այն նոցա ունին քարոզել, որք 'ի ժամանակս իւրեանց
կայցեն, այլև այնոցիկ՝ որք ծնանելոցն իցեն մինչև 'ի
կատարած աշխարհի, ոչ անձամբ անձին, այլ՝ 'ի ձեռն
յաջորդաց իւրեանց :

Խսկ յասելն՝ * զոր արար տէր || . զո՞ւ ըստ ոմանց
յարաբերէ զժողովուրդն . որպէս թէ ասէր . պատ-
մեսցեն զարդարութիւնն այ՝ այնմ ժողովրդեան, զոր
ժողովելոց է տր : Խսկ ըստ ոմանց յարաբերէ զարդա-
րութիւն՝ զոր յիշեաց . ըստ որոյ կամի ասել . պատմես-
ցեն ժողովրդեանն զայն արդարութիւն՝ զոր արար ած
'ի ձեռն որդւոյ իւրոյ : Այլ ըստ մեկնաբանութեանն
քաղդէացւոց՝ յարաբերէ զսքանչելիսն այ . ըստ որոյ
կամի ասել . պատմեսցեն ժողովրդեան զարդարու-
թիւնն այ և զսքանչելիսն՝ զոր արար տէր : Խսկ ըստ
թարգմանութե՛ արաբացւոց յարաբերէ զբարերարու-
թիւնսն այ . ըստ որոյ կամի ասել . 'ի պատմել նոցա
ժողովրդեան զարդարութիւնն այ, ժողովուրդքն տես

ցեն զբարերարութիւնս նորա՝ զորս արար նոցա : Իստ
ոմանց ևս՝ բառս զբ՝ դնի աստ փոխանակ շաղկապիս
եւ . ըստ որոյ կամի ասել . պատմեսցեն ժողովրդեան
զարդարութի նորա , և ասասցեն՝ թէ նա արար զայս :
Այլ հաւանականագոյն ևս է ասել , թէ բառդ զբ՝
յարաբերէ աստ 'ի հասարակի զայն ինչ , զոր արար
ած ազգի մարդկան . ըստ որոյ կամի ասել . պատմեսցեն
ժողովրդեան՝ որ ծնանելոցն իցէ , զարդարութի նորա ,
և զայն ամ զոր արար ած 'ի ձեռն մարդեղութե որդ
ոյ իւրոյ , և արժանացոյց զնոսա արքայութե իւրում՝
թագաւորելը նմա յաւիտեանս յաւիտենից :

Այս սաղմօս ըստ աւանդելոյ լամբրոնացւոյն տուն
առ տուն կարէ բարոյական մեկնութեամբ ասիլ առ քո
յիւրաքանչիւր հաւատացելոց , որ մատնեալ իցէ 'ի
մահացուցիչ և յամենավտանգ փորձութիւնս . վասն զի
այսպիսիս իրաւամբք կարէ 'ի խորոց սրտէ աղաղակել
առ քո . (ա) Ած իմ ստեղծօղիմ , Ած իմ փրկիչ իմ ,
նայեաց առ իս , և տես , թէ յոր վիշտս փորձութեանց
տառապիմ վասն քո . և չունիմ զոք՝ որ կարկառեսցէ
առ իս ձեռն փրկութե բաց 'ի քէն տէր : Իայց աւասիկ
դու ևս թողեր զիս արտաքոյ առանձին ինամոց քոց .
որով և ես տեսանեմ զանձն իմ հեռի 'ի փրկութենէ
իմմէ . և այս վասն յանցանաց իմոց , և վասն անհոգու
թե կալոյ իմ 'ի վայելս հայրական ինամոց քոց :

(բ) Ամին իրի թէպէտւ կարդացի առ քեզ 'ի տուըն-
ջեան և 'ի զիշերի՝ այսինքն 'ի լուսաւորութեան և յան-
լուսաւորութե մտացս , 'ի յաջողուե և 'ի ձախորդուե ,
բայց ոչ անսացեր ինձ , զի յանձնապաստան կայի . և
յինէն ևս ոչ ջանայի առնել զոր կարէի , և 'ի բաց
վանել զառիթս մեղաց , և զչար փորձութիւնսն զաղտե-
ղացուցիչս հոգւոյ . և զի ես ոչ զգուշացայ ըստ իմում
կարի՝ յաղտեղի խորհրդոց խորշել , վոյ և դու ոչ 'ի յաղտե-
ղիս , այլ 'ի հոգիս սբս բնակիս , և յիսրայէլեանց՝
այսինքն յածատեսից գովիս . (գ) որպիսի էին հարքն
մեր՝ առաքեալք , հայրապետք և ճգնաւորք . (ե) որք
'ի յուսաւիւրեանց առ քեզ՝ կեցին :

(զ) Իսկ ես ոչ գտայ այնպիսի , և ոչ իսկ մարդ հա-
մարեցայ , այլ իբրև որդն անարդ ընդ հողով տկա-

ըութեան ծածկեալ՝ մանաւանդ ընդ մեղօք յաշս հրեշտակաց նախաստելի , և 'ի մէջ ժողովրդոց որբ և առաքինեաց արհամարհելի . (է) նաև դիւաց ևս ծանակելի . զի 'ի տեսանել դիւաց զիս յայսափափ վիճակ թշուառութե՛ խրոխտանային և խրոխտանան 'ի վր իմ :

(ը) և կամին յուսահատեցուցանել զիս 'ի քէն : (ժ) (ժ) իայց արդ՝ քանզի գու ես ած իմ յորմէշէտէ ծնար զիս յարգանդէ աւազանին , և մնուցեր զիս կաթամք բանի և նորհաց քոց , 'ի ստեանց , այսինքն 'ի խորհրդոց մօր իմց սուրբ եկեղեցւոյ . վասն որոյ և ես զամ' յոյս իմ եղեալ 'ի քեզ՝ աղաւեմ զքեզ . (ժա) մի 'ի բացեայ առներ զօդութիւն քոյլինէն . զիս հասեալ են 'ի վր իմնեղութիւնք փորձութեց . (ժը) որք իբրև զուարակք , և կամ իբրև ցուլք գերբ իւեթ կեն զիս . (ժդ) և իբրև առիւծ բացեալ են զբերանս իւրեանց 'ի վերայ իմ յափշտակել զիս . (ժդ) յորոց և զարհութեալ ոսկերացս , այսինքն ստորին զօրութեանց հոգւոյ իմց՝ ցրուեցան յինէն և ապստամբեցան . և ես որպէս ջուր հեղայ և նուալեցայ , և սիրտ իմ իբրև մոմ հալեցաւ :

(ժէ) | ակ զօրութի անձնիշանութես իբրև թէ ցամաքեցաւ . և լեզու իմ , այսինքն տրանջական կարողութիւնս իմ 'ի քիմս կցեցաւ , և լոեաց . վազ զի անողորմ հարին զիս փորձութիւնք , և զրեթէ 'ի դրունս մահու հաստցին զկեանս իմ . (ժդ) և գեք ևս՝ որք խրոխտայինն 'ի վր իմ , առաւել ևս զօրացեալք՝ իբրև շունք բազմահազք և իբրև ժողովք չարաց շուրջ պատեցին զիս :

(ժէ) | յւ որ դառն ևս է , ծակեցին զձեռս իմ , այսինքն եղծին զգործս իմ բարիս , ծակեցին և զոտս իմ , այսինքն զընթացս իմ ուղիղս , և մի առ մի իբրև թուելով զամ' առաքինութիւնս իմ նուազեցուցին յինէն : | յւ ապա հայեցեալ 'ի նեղքս 'ի հոգիս իմ 'ի տեսանելն թէ ևս որպէս հանդերձ զգեցեալէի զբանս աւետարանին և զիրատս նորա . և իբրև զպատմունան արկեալ ունէի զակը քոյ . (ժը) 'ի տեսութենէ աստիզարեալ բաժանեցին բանիւք զհանդերձս իմ , ասելով ցմիմեանս , ևս զբանս հաւատոյ յափշտակէմ 'ի դմանէ , դու զիսրախոյս յուսոյ , և նա զիսրատս բարի

վարուց : Խակ զպատմունանն սիրոյ չկարելով բաժան
նել՝ ի մէջ իւրեանց՝ խորհրդացան վիճակս արկանել .
այսինքն ծածուկ իմն հնարիւք յափշտակել զայն
յինէն :

(ժթ) Եշւ արդ՝ տէր ան իմ՝ դռ նայեա առ իս . զը-
թութքդ քով օգնեա ինձ . (ին) և փրկեա զանձն իմ
՚ի խորհրդոց սոցա իրբե՝ ՚ի մահացուցիւ սրոյ , և ապրե-
ցն զիս զանօգնականս ՚ի սոցանէ իրբե՝ ՚ի շանց . (ին) և
ազատեա ևս զանձն իմ՝ ՚ի նենգութէ իշխանի սոցա
սատանայի՝ իրբե՝ ՚ի բերանոյ առիւծու և իրբե յեղ-
ջերէ միեղջերուի . զի տկարացայ յոյժ , և ունայնա-
ցան կեանք իմ , և իջի ես՝ ՚ի խորս խոնարհութէ , և
եմ մերձ՝ ՚ի մահ հոգւոյ իմոյ . զի եթէ ոչ օգնեսցես
ինձ , ահա թշնամիք իմ սպանանեն զիս :

Խակ եթէ ցուցես առ իս զօգնութիւն քոյ , փրկեցայց
և կեցցից . (ին) և օրհնեցից զքեզ՝ ՚ի մէջ մարդկան
և ՚ի մէջ ժողովոց նոցա . ևս և պատմեցից նոցա՝ զոր
արարեր ընդ իս . (ին) և յորդորեցից զնոսա , զի և
նորա օրհնեսցեն զքեզ . (ին) և երկիւղիւ պաշտեսցեն
զքեզ : Եշւ եթէ հարցանիցեն , թէ ոյր աղազաւ այդ-
չափ սրտի մտօք ստիպես զմեզ փառաւորել զաստուած ,
պատմեցից նոցա , թէ յորդամ անհնարին փորձութիք
և զեք չարք պաշարեցին զինե , և աղբատացուցին
զիս , ես առ ան իմ կարդացի , և նա ոչ անարգեաց
զաղօթս իմ , և ոչ դարձոյց զերեսս իւր յինէն , այլ
լուաւ ինձ :

(ին) Եշւ այսու զնմ՝ գովկութիւն յաղթութէ քեզ ըն-
ծայեցից . նա զի եթէ՝ ՚ի յաղթութեան անդ զործեալ
ևս իցէ իմ գովկելի ինչ , այն՝ ՚ի քէն է . վայ ոչ զիս ,
այլ զքեզ միայն գովկեցից յամ եկեղեցիս և ՚ի ժո-
ղովս մարդկան : (ին) Եշւ զայս խոստումն իմ՝ զոր
արարի այ , կատարեցից առաջի այնոցիկ , որք երկիւ-
ղիւ պաշտեն զնա . (ին) զի եթէ՝ ՚ի նոսա ևս գտցին
իրբե զիս տնանկացեալք՝ և ՚ի յուսոյն այ տկարա-
ցեալք , յօրինակէ իմմէ քաջալերեսցին , և առ ան
զիմելով առցեն զնորհս՝ ՚ի նմանէ . և ձաշակմամբ այնր
չնորհաց յագեսցին . (ին) և հոգիք նոյ կեցցեն յաւի-
տեան . և ամենայն երկրաւոր յօժարութիք նոցա և
իմ ևս՝ զարձցին առ տը . (իթ) և ամենայն զօրութիք

Հոգւոց մերոց առ հասարակ երկիրսպազցեն նմա . և նա տիրեսցէ նոցա , ևս և չեթ անոսաց՝ այսինքն զգայութեանց . և մի սատանայ :

(շ) Օ ի թէպէտ յառաջ քան զնաշակել զպարգևսն այ պարարտանային նոքին երկրաւոր իրօք , բայց առեալ միանգամ զնաշակ պարգևացն այ , յերկրաւորաց զզուեսցին , և յերկնաւորս յարեսցին . և միայն ճշմարտին այ երկիրսպազանել փութասցին * իշխանելով 'ի հող . այսինքն ծայրագոյնս խոնարհելով : (ըս) Առ արդ՝ ահա որպէս ես կենդանացայ աստուծով իմով , նոյնակա և զաւակք իմ , այսինքն գործք իմ՝ նորա նորհօք կենդանասցին , և 'ի ծառայութիւն նորա կարգեսցին . (լբ) և զարդարութիւն նորա ցուցեն ամենեցուն . զի ամենեքին ևս փառաւորեսցեն զնա յաւիտեանս յաւիտենից :

Օ որս միանգամ ասացաք ցայս վայր 'ի մեկնութեան այսր սազմակ' կարէ իւրաքանչիւր ընթերցօղ ըստ յարմարութեան նիւթոյն մերձեցուցանել ոչ միայն յանձն իւր՝ ըստ որում եղաք 'ի վերջ , այլ և յանձն դաւթի , և յանձն ո և իցէ նեղեալ մարդոց , որոյ եղեալ իցէ 'ի մտի համբերութեամբ վշտաց յառաքինական կեանս մնանելով ժամանել 'ի կեանսն յաւիտենից :



Ս Ա Ր Ա Ր Ո Վ Ո Վ Ի Բ :

Յայտարարութիւնք բանից յաղագս քաղցր նախախինս մութեանն այ 'ի վերայ իւրաքանչիւր արդարոյ՝ մատակարարութեամբ բարեաց , և պաշտպանութենք առ 'ի շարեաց :

1 հառարած . 2 աղմոս 'ի դաւիլ :

1 **Տ** հայսաւեսցէ զիս . և ինչ ինչ ոչ պահասեսցէ : 2 1 կայրէ դաւարարչ՝ անդ բնահեցոց զիս . և առ ջարու հանդէսորեան մեռյ զիս : 3 Պարհաց զանցն իմ առ իս . առ աշնորհ բեաց ինչ 'ի ճանապարհու արդարութեան կառն անուան իւրայ :

4 ԽօՏԵՊԷՐ և ՔԱԿԱՐԵՐ եւ ի հջջ սորուերաց մական , և է բիեայց
ի շաբէ , զի դու ար ընդ իս ես : 5 ՅԱՆԴ ու և գառապան՝ նու
ժա միշթարք ուղեն զիս : 6 ՊԱՊՐԱՍՈՒ արարեր առաջի իմ սէղան
ու ին յանդի ման նէշլաց իմց : 7 (Օծեր իւղով զիւլուի իմ . բա-
ժակ ու որուես անառոկ արբերոց զիս : 8 ՈՂՋԲԱՌԻ ու ար ըն-
հետ իմ ենիւցէ զամենայն սուրբ իւնոց իմց : բնակելինչ ի
տան առ ընդ երիայն սուրբ :

Ա Ե Բ Ե Ռ Գ Վ Ե Բ :

Ե Խ Ա Պ Ա Ր Ա Ծ ։ Ա Պ Ա Մ Ա Ն ՚ ի Դ Ա Վ Ե Բ ։



Ա.

ՅՈՒՐԳԱ ՄՐԱՍ ԸՐՋՈՄԾԵԲ ԳԻԵ
բազանց զամնի քան զայլ բազում սաղ
մոսս , մի՝ ըստ գեղեցկութեն նմանաբանու-
թեանցն . որոյ վասն մեկնիչ ոնն կուէ զա
սքանչելսրուեատ կերտուած հոգեորդ : Խրիպորդ՝ ըստ
քաղցրութեն նշանակութեն բանիցն . թէպէտե սակա-
ւուց է ձաշակել զնոյն . յոյր սակս ասի զամանե՝ թէ
* յամենեցունց քաղցրութք լի , այլ ոչ յամենեցունց
,, քաղցրութք ձաշակի ։ Խրրորդ՝ ըստ եղանակին ,
որով յայտ առնե՝ զգթալից տեսչութիւնն այ . ըս որոյ
և խնամակ նր միփթարուի առձայնի (՚ի համարն օ :)
Խսկ թէ յինչ իցէ կարգեալ այս սաղմոս , և յինչ
առթէ ասացեալ , բազում կարծիք են : Ոմանք ասեն
թէ կարգ բանից սորա հայի ՚ի գարձ գերութեանն իս-
րայէլի ՚ի բարելոնէ . յայս կարծիս են բաղումք յար-
գեաց : Ոմանք ես , թէ այս սաղմոս հայի յայն ա-
ռաջնորդութիւնն այ , որով նա ինքն հովուէր զիսրայէ-
լացին յանապատի անդ քառասոն ամ : ՚ յամ կար-
ծեաց նպաստէ և մեկնաբանութիւնն քաղգէացւոց .
ուր զնի այսպէս . * Տէր հովուեաց զժողովուրդ իւր
,, յանապատի ։ · ըստ որում և անձ ասէ բերանով
ովսէայ . * Խւ հովուէի զքէզ յանապատի յանշէն
,, երկրի ։ (ովս . ժդ . օ :) Բազումք ես ասեն , թէ
հայի այս յայն իննամնն այ , զոր եցցց դաւթի ՚ի հա-
լածիլնորա յերեսաց սաւուզայ , և կամ ՚ի ձեռաց արե-
սաղումայ . յորոց ՚ի զերծանին ասացեալ իցէ զայս :

Հայց հաւանականագոյն ևս թուի ասել ընդ բաղմաց, թէ այս սաղմոս թէպէտ և յայդպիսի առթից իցէ ասացեալ, սակայն դիտումն սորին կարգի և հայի ՚ի մասնաւոր խնամնն, զորս ցուցանէ ած իւրաքանչ վեր ընտրելոց՝ հովուելով զնոսա պէսպէս իրօք, այս ինքն մատակարարելով նոցա զբարիս, և հեռի առնելով՝ ՚ի նոցանէ զշարիս. հայրաբար տածելով, և քաղցրութե՛ միսիթմարելով. ուստի և բանք սաղմոսիս ասին ՚ի զիմաց իւրաքանչիւր արդարոց և ընտրելոյ ըստ հովուելոյ իւրեանց յայ: Իւ մեք ըստ այսմ մտաց ունիմք մեկնել զայս:

Խակ հոգեղորապէս բանք սորա ըստ սրբոց հարց մեկնին ՚ի վերայ սուրբ եկեղեցւոյ, զոր հովուէ քո՛ զանազան խորհրդովվը ըստ որում ինքն է հովիւ եկեղեցւոյ. (յովէ . ժ . 11 .) ՚ի ամի՞ խորհրդովվ մկրտութե՛. ըստ այնմ որ ասի (՚ի համարն 2 .) * առ ջուրս հանոյ, զըստեան մնոյց զիս : ՚ի րկրորդ՝ խորհրդովվ դրոշմի . ըստ այնմ որ ասի (՚ի համարն 4 .) * թէպէտ և զնացից ես ՚ի մէջ ստուերաց մահու : և՛ : ՚ի րորդ՝ խորհրդովվ ապաշխարութե՛. ըստ այնմ որ ասի (՚ի համարն 3 .) * զարձոյց զանձն իմառ իս : և՛ : Ծորբորդ՝ խորհրդովվ հազորդութեան . ըստ այնմ որ ասի (՚ի համարն 6 .) * պատրաստ արարեր առաջի իմ սեղան : Հինգերորդ՝ վեցերորդ և վեցերորդ՝ խորհրդովվ կարգի և վերջին օծման . ըստ այնմ որ ասի (՚ի համարն 7 .) * օծեր իւղովվ զգմաւիս իմ : ՚ի օծներորդ՝ խորհրդովվ պահի . ըստ այնմ որ ասի (՚ի համարն 8 .) * ողորմութի քոյ ողը զհետ իմեկեսցէ : և՛ :

Բ Ե Կ :

ա . **S**եր հոգուեացէ զէս . և ինչ ինչ ու պահեացէ :

ՄԵԿՆԱՏ ԹԻՒՆ

՚ի թանիկ է վիճակ արդարոց, զի համարի լինել այնպիսի ովար, որոյ հովիւ է ած . որ և ինքնին հովուէ զնա բազմապատիկ խնամովվը, մինչեւ ոչինչ պահանիլ նմա . վասն որոյ ասէ :

Տեր հովուեսցէ շիս (Ե Ինչ ինչ և պահասեսցէ :) Վչասէ , ած հովուեսցէ՝ կամտէրն իմ հովուեսցէ . այլ բացարձակապէս զնէ , * տէր հովուեսցէ զիս || . որով կամի յայտ առնել , [թէ այն հովիւ՝ որ հովուէ զնա , ինքնազոյ և բացարձակ տէր է՝ ոչ այսմ կամ այնմ միայն , այլւ առի , մինչև ամենայն էից կարիւ զնմանէ , և ըստասէլ հրամանի նորա : Այդ՝ եթէ այսպիսի տէր է՝ որ հովուէ զնա , զինչ կարէ պակասիլ նմա :

Խակ հովուելն այ է խնամել և կառավարել գթութք և խնայելով . ըստ որոյ թէպէտ և կարէր զնել , խնամեսցէ զիս , կամ կառավարեսցէ զիս . բայց առ ՚ի ցուցանել զգթալից խնամն այ ՚ի վերայ արդարոյն՝ ոչ զնէ այսպէս , այլ հովուեսցէ . ըստ որում հովուելն առաւել իմն ևս նշանակէ , այսինքն ոչ սոսկ ըզ խնամելն , այլ զգթութեամբ խնամելն . զի զոր հովուէ , զորով նա ոչխար անմեղ և խնարհ յաւէտ գթութեան է արժանի՝ քանի խստութե և սաստից : Այւ զի ած իբրև զիւր ոչխար տեսանէ զարդարն , ՚ի գթութք խնամելն զնա՝ ասի հովուել . այսինքն զամենայն պիտոյս նորա հոգալ թէ ըստ հոգւոյ , և թէ ևս ըստ մարմնոյ :

Այթէ բարլոք ևս կամիս խնանալ զայս՝ կշռեան ՚ի ներհականէն , և տես թէ ո՛ է՝ որ հովուէ զմեղաւորս . սատանայ . և որ չար ևս է , * մահ հովուէ զնոսա || : (սաղ . խը . 13 .) անման յամբարութէ . իսկ զարդարն , որ ամենայնի տէրն է . վասն որոյ և ոչ պակասեսցի ինչ նմա . սմին իրի իրաւամբք յարէ զինի , և ասէ :

Այս ինչ և պահասեսցէ : Այսինքն ոչինչ ՚ի հարկաւորաց պակասեսցի վասն իմ : Այւ յիրաւի իսկ . զի թէպէտ արդարն ցորչափ կայ յաշխարհի , բազում իրաց կրէ պակասութիւն , բայց ձևմարտութք ևս կարէ ասել ոչինչ պակասեսցի ինձ . վասն զի այն պակասութիւն՝ զոր կրէ , եթէ ըստ մարմնոյ է՝ ոչ համարի պակասութիւն , որովհետեւ զիտէ թէ այն է պատկանաւորն . զի եթէ հարկաւոր էր նմա , ամենարարի հովիւ իւր ոչ պակասեցուցանէր զայն ՚ի նմանէ , այլ տայր նմա , ուստի ըստ այսմ ոչ համարի կրել պակասութիւն ինչ : Խակ եթէ ըստ հոգւոյ է , որպիսի է

պակասութիւն գերազոյն պարզեաց , կամ հոգեռոր միսիթարութեանց , և . անարժան համարելով զանձն իւր այնմ՝ ծայրագոյն խոնարհութեամբ յանձն առնել զինքն հովուին իւրում , և ընդ խնամով նորա ցնծայ , և առէ . Ովկ եմ ես տէր , զի արժանի գտայց այնպիսի պարզեաց քոյ . բաւական է ինձ զկոխանս ոտից ծառայից քոյ ձաշակել , և կամ ասել ես ընդ մեմփիբառ թեայ . (բ . թագ . ը 8 : և ժմ . 28 :) * Ովկ է ծառ , ուայ քոյ , զի հայեցար ՚ի շուն մի մեռեալ նմանող , ինձ . . . զի ոչ էր ամենայն տուն հօր իմոյ (այսինքն ամենայն աղջ մարդկան ,) եթէ ո՛ արք մահու տեառն , իմոյ արքայի . և կարգեցէր զծառայց քո ընդ այնու սիկ , ողք ուտեն զսեզան արքայի ! . այն բաւական է ինձ այս , և աւելի ես :

Լքդ՝ թէպէտե ջշմարտիւ բաւականացեալ է արդարն ՚ի ինամն այ , բայց քանզի չե է հասեալ ՚ի լրումն , և իրօք ես ոչ է ազատ յամ պակասութեանց , զի բազում ինչ կըէ , և բազում իրաց կարօտի՞ մանաւանդ ածայ ին հանապազորդեան հովուութեան , վասն այսորիկ ոչ ասաց , և ինձ ինչ ոչ պակասի , այլ * ինձ ինչ ոչ պա , կասեսցի ! . իբր զի թէպէտ և ըստ մարդկային տկարութեան հանապազ ինչ ինչ պակասի նմա , բայց նա ինչ ոչ տագնապի . զի գիտէ թէ ունի իւր տէր՝ ամենայնի բաւական , մանաւանդ զի լսէ ես ՚ի նմանէ , ասել . * մի հոգայք վասն ողւոց ձերոց , զինչ ուտի , ցէք , կամ զինչ ըմպիցէք , և մի վասն մարմնոց ձերոց , թէ զինչ ազանիցէք ! . (մատ . ը . 25 :) և զրո լսէ աչօք ես տեսանէ . նա և զի նա ինքն հովիւն ըստ իւրումն իսոստանալոց հոգայ լիով զնմանէ , և զպակասութիւնն նորա ըստ հանցից իւրոց լցուցանէ . ՚ի քաղց նուն կերակրէ , ՚ի հիւանդանան միսիթարէ , ՚ի փորձին փրկէ , ՚ի սահին կանզնէ , և . մինչև ժամանեցուցէ զնա յանդորրութիւն անփոփոխ , և ՚ի լիութի ամենաբաւական յարքայութեան երկնից . ուր ոչ ես սասացէ , ինձ ինչ ոչ պակասեսցի , այլ ահա ինձ ինչ ոչ պակասի :

Խակ որ պակասեալ գտանի ՚ի հովուութենէն այ , կամ որպէս առէ բարսեղ վարդապէտ (՚ի մեկն . մարկ . զլ . ժէ .) որ յայ խնամոցն զրկի , թէպէտ և զամ

աշխարհաց մեծութիւն ունիցի , քան զամենեսին ու զօրմելի է , որպիս (ընդ հակառակն) որ քան զամենեսին աղքատ է և զինամնն այ ունիցի , քան զամենեսին երանելի է . (զի զրեալ է .) ալք հավուես ցէ զիս , և ինձ ինչ ոչ պակասեսցէ :

Ուլաբանորեն՝ քաջ հովիւն քո այնպէս հովուել զեկեղեցի իւր, մինչև ոյինչ պակասութիւն կրել նմաընդհանրապէս, ոչ ՚ի բանս հաւատոց, և ոչ ՚ի վարդապէտութիւնս բարի վարուց. ոչ ՚ի մատակարարութիւնս խորհրդոց, և ոչ ՚ի յընդունելութիւն շնորհաց. ոչ ՚ի հոգևոր իշխանութե՛, և ոչ յերկնային խմասութեան. զի ոչ միայն է հօտ նորա, այլև հարսն սիրելիի: Օ այս հովուութիւն քնի՝ լուսաւորութե արեւու նմաննեցուցանէ մեծն խորով (՚ի մեկն . ժամագր .) * յոր ժամ (ասէ) այց արար մեզ արեզակն ՚ի բարձանց, և լուսաւորեաց զիսաւար հոգւոց մերոց . . . յայնժամ կատարեցաւ բան հոգերգողին. տէր հովուեսց զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի: Խակ թէ ուր հովուից՝ յայտ առնէ զինի՝ ասելով:

Օոր համառօտիւ ասաց՝ի սկզբան սաղմոսիս . * տեր
հովուեսցէ զիս , և ինձ ինչ ոչ պակասեսցէ ॥ , սկիբ-
ըն առնէ՝ի մասնաւորի ևս զնոյն բայցատրել , և զիսը-
նամն այ՝ որով հօվուէ զոյխարս իւր , կարդաւ առա-
ջի գնել հանգերձ ուրաւորութեամբն :

Վրդ՝ առ բարւոք հովուութիւն ովխարի, նախ՝ պիտի է արօստ, այսինքն տեղի խոտաւէտ՝ արածելոյ, և ջուր յստակ ըմպէլոյ : Երկրորդ՝ մասնաւոր իննամբ . իբր զի յարածիլ նորա՝ ածցի ընդ ապահով ձանապարհ, 'ի վնասին 'ի փշոց կամ 'ի քարանց և կամ յայլ ինչ երաց՝ դարմանեսցի . 'ի վտանգին 'ի գայլոց կամ 'ի գողոց՝ պաշտպանեսցի . 'ի մողրին՝ դարձուսցի 'ի հօտ իւր . յաշխատին հանգից . և յաւարտին ձանապարհի և աւուր՝ մոցէ 'ի փարախ 'ի գաղարել : Այսպիսեօք հովուէ և ո՞ծ զովխարս իւր, այսինքն զբնարեալս իւր . ըստ որում մի ըստ միովէ նմանաբանութիւնն առաջի դնէ մարգարէն 'ի սպամոսի աստ

և նախ՝ վասն առաջնոյն ասէ :

Ի շայրէ բալարաջ անդ հնակէցոյ զէ : Կամի ասել, իր նամք հովութն իմոյ այնչափ զգուշաւոր եղեւ 'ի վերայ իմ, մինչև ոչ յանկոփ անապատն՝ ոչ յանխոտ տեղիս հովուել զիս, այլ * 'ի վայրի գալարոջը || . այս նախն՝ 'ի գալար և 'ի խստաւէտ տեղոջ . և այն ևս ոչ թռնութեամբ վարելով, այլ՝ հանգստեամբ . սմին իրի ոչ ասէ՝ հովուեաց, այլ բնակեցոյց . կամ ըստ այսց թարգմանելոյ՝ * հանգոյց զիս || : Խսկ բառս անդ՝ ոչ գնի յերայեցիսն, և ոչ՝ 'ի ձեռագիր անձունաւ մեր, և ոչ՝ 'ի գրուածս հարց . խսկ աստ գնի իբրև զարդ, և կամեւս՝ 'ի ցոյց հաստատութեան՝ թէ անձ յիրաւի յայն պիսի վայրի բնակեցուցանէ և հանգուցանէ :

Որովհետեւ զիրոձ հովուութեան առեալ էր մարդարէն՝ 'ի գործս հովուաց հայելով խօսի . իբր զի հովինք յարածելն զոշխարս 'ի գաշտի՝ 'ի սաստկանալ տապոյ արեգականն՝ ընդ հովանեաւ ծառոց մօտ առ ջուրս ժողովեալ զնոսա, և առ պարարտ խոտով բնակեցուցեալ՝ անդ հովուեն զնոսա : **Ղ**յապէս առնէ և անձ ընդ ծառայս իւր . իբր զի յարածելն զնոսա 'ի հովելոր կրթութիս՝ հանգուցանէ զնոսա ընդ հովանեաւ թեւոց իւրոց 'ի գալար տեղիս, այսինքն է՝ յայնարիսի իրս, յորս տայ նոցա զժանօթութիւնն անձային իրաց . պարզեւէ նոցա զհոգեղրական միմիթարութիւնս . արժանացուցանէ զնոսա առաւելութեան նսպաստից իւրոց . մնուցանէ զնոսա ըստ հոգւոյ, և զովացուցանէ զհոգիս նց

չնորհօք . և առ այս յարէ :

Ղյառ ջուրս հանդուտեան մնոյց զէ : Գ յորի հանգստեան նշանակի խաղաղընթաց և հանդարտագնաց ջուրն, և ոչ յուղեան և պղտորեան . և կամ այնպիսի ջուր՝ որ տայ մնունդ բարի . խսկ սովաւ իմացեալ լինի շրնորհքն այ, որով մնանի հողին և աճէ . ևս և հանդէի 'ի թշուառութենէ մեղաց՝ յոր միտու կամի ասել. չնորհօք մնոյց զիս, և նովաւ հանգոյց զտառապանս հոգւոյ իմոյ : Խսկ առ գնելով զմեծութիւն և զառաւելութիւն չնորհայն յայտ առնէ . իբր զի այնչափ առատ է և մեծ, մինչև մօտ առ նմին ևս կաղով այսինքն դցյլն ինչ հաղորդ գտանելով այնմ՝ մնանի հողին, և աճէ, և հանդի . և կամ ըստ եբրայեցոց, յաճիլ հոգւոցն

'ի նոյն՝ առնուո զննունդ բարի :

Ասմբրոնացին փոխանակ բառիս առ ջուրս՝ գնել, * 'ի ջուրց հանգստեան մնոյց զիս || . իսկ բարսեղ վարդապետ գնել, 'ի ջուրս հանգստեան : | յւ այս ևս զնոյն նշանակէ . իբր թէ ասէր՝ 'ի չնորհաց՝ և կամ չնորհօք և 'ի մէջ չնորհաց մնոյց զիս : | արեկացին հանգըստեամբ ջուրց իմանայ զլիութիւն ջուրց չնորհաց, հայելով 'ի բան երգոց երգոյն (Ե. 12.) ուր ասի * նըս, տեալ 'ի վերայ լիութեան ջուրց || . որպէս ասէ լոյս արեւուն թափանցէ 'ի ջուրս, սոյնպէս և լոյսն ածային թափանցէ 'ի նոսա, որք մնանին 'ի լիութեան չնորհաց :

Իսկ համեմատութիւն չնորհաց ընդ ջրոյ ըստ բազում նմանութեանց մմածի . զըրս և արժան համարիմ թուել աստ փոքր մի երկար, 'ի բաց առեալ միանգամյն և զանննմանութիւնն :

Արաջին նմանութիւնն է այս, զի որպէս ջուրն լուանայ՝ մաքրէ և սրբէ զմարմինն և զմարմնաւոր իրս 'ի յաղտոյ, սոյնպէս և չնորհքն ոյ լուանայ՝ մաքրէ և սրբէ զհողին յաղտոյ մեղաց . յոր միտս ասէ եսայի . * լուասցէ տէր զաղսն ուստերաց սինի (ջրով չնորհաց), և զարիւնն 'ի բաց սրբեսցէ 'ի միջոյ || . (եսայ . դ. 4 :)

Վայլ յայսմ նմանութեան՝ 'ի չորս իրս տարբերի լուացումն չնորհաց 'ի լուացմանէ ջուրց : Տարբերի նախ յայսմ, զի ջուրն 'ի լուանան զմարմին՝ միայն զաղտու և զարատս սրբէ . այլ ոչ յաւելու չնոր մաքրութիւն՝ քան զոր ունի մարմինն . զոր օրինակ յորժամ լուացեալ լինի անօթ ինչ հողեղէն . ջուրն զաղտն միայն բառնայ, և անօթն մնայ յիւրում հողային մաքրութեան միայն : Իայց չնորհքն ոչ այսպէս, այլ յետ լուանալոց զհողին յաղտեղութենէ մեղաց՝ ոչ միայն տայնմա ունիլ զբնական մաքրութիւնն, որ է սոսկապէս զերծ լինելն յաղտից մեղաց, այլև յաւելու զմաքրութիւն ինչ գերագոյն՝ քան զոր հողին կարէր ունիլ յինքեան . վասն զի չնորհքն զոլով հաղորդութիւն ածային բնութեան՝ առնէ զհողին հաղորդ նաև ածային մաքրութեն : Օ ի որպէս եթէ հողեղին անօթ ինչ լուասցի այնպիսի ջրով՝ որ իցէ հաղորդեալ սպիտակ

գունց , այն ջուր ոչ միայն սրբէ զնա , այլև հաղորդ տոնէ սպիտակութեան , սոյնաէս և շնորհքն այ . և յայս միտս ասի 'ի սաղմոսի , * լուա զիս , և քան զձիւն „ սպիտակ եղէց || . (սաղ . ծ . 8 .)

Տարբերի երկրորդ յայսմ . զի թէպէտ ջուրն լուանայ և մաքրէ զմարդ , այլ ոչ առնէ գեղեցիկ և ըրնաղ . զի տգեղ մարդն քանի և լուասցի , թէպէտ և մաքրի , այլ ոչ գեղեցկանայ . բայց շնորհքն 'ի լուանան զհողին միանգամանյն և գեղեցկացուցաննէ : { յիրաւի հոգին ըստ ինքեան մոտածեալ՝ առանց մեղաց՝ է գեղեցիկ քան զամ երևելիս . բայց գեղեցկութիւնն՝ զոր տայ շնորհքն , գերազոյն է քան զբնական գեղեցկութիւն անց հոգւոց . մինչև այ ևս ցանկալ այնմ . որպէս ասի 'ի սաղ . (խղ . 12 .) * ցանկացաւ թագաւոր , գեղոյ քոյ || . այսինքն գեղեցկութեան հոգւոյ քոյ , որ 'ի ձեռն շնորհաց :

Եւ . յայս միտս ասէ փեսայն ցհարսն . (երգ . ա . 14 .) * աշաւասիկ (դու) ես գեղեցիկ մերձաւո՞ր իմ . աշաւասիկ (դու) ես գեղեցիկ || . երկիցս կոչէ գեղեցիկ , զի 'ի սրբիլ հոգւոյն ոչ միայն մնայ յիւրում պարզ գեղեցկութե , այլև ստանայ զգերազոյն իմն գերբնական գեղեցկութիւն :

Տարբերի երրորդ յայսմ . զի թէպէտ և ջուրն լուանայ , այլ սակայն միանգամանյն և եղծաննէ , ծախիէ և տկարացուցաննէ զլուացեալն . քանզի տեսանեմք , զի յորժամ զգեստք լուանին 'ի մաքրին միանգամանյն և ծախին և տկարանան . | ակ շնորհքն այ 'ի լուանան զհողին՝ ոչ միայն մաքրէ , այլև կազդուրեցուցաննէ և զօրացուցաննէ , և որչափ լուանայ , այնչափ հզօր առնէ . և հաղորդեալ նմա զածային իմն կարողութիւն՝ զըեթէ անմի կարօղ զործէ . զօրոյ զփորձ առեալ պօզոսի՝ ասէ . * յամի կարօղ եմ այնու՝ որ զօրացոյցն „ զիս || . (փիլ . դ . 13 .)

Տարբերի չորրորդ յայսմ . զի ջուրն ոչ մնայ 'ի մարմնի՝ զոր լուանայ , այլ առեալ զաղտն՝ ընդ նմա զնայ 'ի բաց . իսկ շնորհքն մնայ 'ի հոգին զոր լուանայ . և 'ի մնան անդ՝ հոգին նը ևս ընդ նմա մնայ . զի ուր է շընորհք հոգւոյն նըյ , անդ և հոգին նը . զորմէ ասէ քո . * առ ձեզ բնակեսցէ , և ընդ ձեզ եղիցի || . (յովհ .

Ժ՞ղ. 17:) Ուր արժան է տեսանել. զի հոգին սուրբ թէպէտ և յամի է . բայց զօրս չնորհք նորա լուանայ՝ զարմանալի օրինակաւ լինի 'ի նոսա . զի ու սոսկ ներկայութեամբ լինի առ նոսա , ըստ որոյ ասեմք թէ ած է յամի . այլ հոգեոր միաւորութք և ածային իմն զըրկախանութք՝ որով մարդն ու միայն լինի ընակարան նորա և տաճար , (առ կոր գործիք նորին . մինչեւ գործողութեանց մարդոյն՝ նման ընծայիլ ըստ այնմ . * զի ու եթէ դուք իցէք՝ որք խօսիցիքն , այլ ու հոգին հօր ձերոյ , որ խօսիցի 'ի ձեզ .) (մատ . ժ . 20:) զայտանէ յետ բազում ինչ խօսելոյ սբյն պօղոսի 'ի թռողթն առ հոռվիմ . (ը . 26:) զաղօթելն մեր ևս նման տայ . * զի զօր կամքն ասէ յաղօթս , որպէս արժան իցէ՝ ու զիտեմք . այլ ինքնին հոգին բարեխօս լինի 'ի հեծութիս անմռունչս . իբր զի ինքնին լուսաւորէ զհոգիս , և ուսուցանէ՝ թէ զինչ և զիամրդ պարտէ մեզ խօսիլ առաջի մեծվայելութեանն այ :

Երկրորդ նմանութիւնն է այս . զի որպէս ջուրն արզասաւոր առնէ զերկիր , և պտղատու զծառս , սոյնպէս և չնորհք հոգւոյն սբյ առնէ զհոգին արդասաւոր 'ի գերբնական կարդի . և զկարողութիւնս նորա՝ այսինքն զմիտս , զկամս և զյիշողութիւնս՝ ընդ որս և զրստորին մասունս առնէ պտղատու 'ի հոգեորս , 'ի սէր և 'ի ինդութիւն , ևն . * Պառուղ հոգւոյն (ասէ առաքեալն) այս է . սէր , խնդութիւն , խաղաղութիւն , երկայնմտութի , քաղցրութի , բարութի , հաւատք , հեղութի , ժուժկալութի . (զաղ . ն . 22:)

Ինարձեալ որպէս ջուրն պատճառէ ու զմի՝ այլ զբազմապատիկ պտուղս , սոյնպէս և չնորհք հոգւոյն սրբոյ ընդ իւր բերելով զբազմապատիկ պարզես հոգւոյն , զօրս թռուէ առաքեալն . (առ կոր . ժք . 4 , 5 , ևն :) **Եւ** զարձեալ որպէս ջուրն զանազան ծառոց և խոտոց ծառացելով գոյացուցանէ զզանազան պտուղս , և զպէսպէս ծաղիկս՝ գունովք , հոտովք , և ձեռվք տարբերս՝ ըստ իւրաքանչիւր բնութեան նոցա , սոյնպէս և չնորհք հոգւոյն սրբոյ 'ի զանազան մարդիկ , որք ըստ խառնուածոյ և ըստ բնական հանգամանաց ամեննեն տարբեր երեխն 'ի միմեանց , արտադրէ զզարմանալի պտուղս առաքինութեանց , և զբազմերանգ և զմնուշա-

Հոս ծաղկունս զործոց բարեաց : | յւ զայս յայտնի տեսանելք՝ ՚ի բազումն , զի թէպէտե ունանք՝ ՚ի մարդկանէ կարի խիստ են և գմնեայ , ունանք քաղցը և հեղ , ունանք անզուսպ , և ունանք բարեխառն , ունանք ընչասէլք , և ունանք զբօսասէլք , ունանք ուրախ , և ունանք տիտոր , և այլք այլազգ . սակայն ամենեքին ևս յորժամ մնունդ առնուն 'ի նորհաց՝ լինին յիւրեանց կարգի բարելք և զարմանալիք :

Ա. ՅԼ. յայսմնմանութեն ևս ըորեքին տարբերի զործը նորհաց՝ ՚ի գործոց ջուրց : Տարբերի նախ յայսմ . զի ջուրն զըրացեալ ծառս ոչ կարէ դալարացուցանել . և զամուշ երկիր ոչ կարէ արգասաւոր առնել . իսկ նորհքն զմեղօք չըրացեալ և մեռեալ հոգիս յարուցանէ , և հաղորդէ նմա զանձային իմն կենդանութիւն կատարելազոյն քան զայն՝ որով կեայ բնականաբար . զի կեանքն այն՝ զոր հաղորդէ նմա՝ է 'ի գերազոյն կարգի , զորմէ ասէ պօզոս . * | Եանքն ձեր ծածկեալ են ընդ քսի յանձ || . (կող . դ . 3 .) | յւ թէ . * կենդանի եմ այսուհետեւ՝ ոչ ես , այլ՝ կենդանի է յիս քո . . . և ես ոչ անարգեմ զնորհսն անց || . (գաղ . դ . 20 .) | յւ ևս չնորհքն անց պատուաստեալ զմարդոն 'ի քո իբրև յորթ հմարիս՝ բարգաւաճ և բեղմնաւոր առնէ յոյժ . ըստ այնմ զոր ասաց քո . * | յս եմ որթ , և զորք ուռ . որ հաստուտեալ է յիս՝ և ես 'ի նա , նա բերէ պտուղ յոյժ || . (յակ . ժէ . 5 .)

Տարբերի երկրորդ յայսմ . զի ջուրն թէպէտե բարգաւաճ առնէ զերկիր և զծառս և զայլ ինչ առ 'ի տալ զպտուզս , բայց զայնպիսի պտուզս , առ որս բնական զօրութիւնք նոցա կարգին . որպէս զորթն բեղմնաւորէ 'ի տալ զիսազող , զտանձենին 'ի տալ զտանձ . ըստ այսմ և զայլսն : | յսկ նորհք հոգւոյն սրբոյ բեղմնաւորէ զհողին 'ի տալ զպտուզս 'ի վեր քան զամենայն բնական զօրութիւնս . որպէս մտաց տայ հաւատալյանձ , որպէս է յինքեան . կամաց տայ ըստ արժանուոյն սիրել զանձ , և անարատ կատարել զգերբնական զործս առաքինութենց . որք յայտ է թէ բնական զօրութիւք ոչ կատարին . ըստ որում ասէ պօզոս . * իբրև ոչ եթէ անձամբ բաւական եմք խորհել ինչ իբրև 'ի մէնջ , այլ՝ բաւականութիւն մեր յանց է . . . ոչ զրով .

,, այլ հոգւով ॥ . (բ . կոր . դ . 5 :)

Հարթերի երրորդ յայսմ . զի ջուրն տայ ծառոց բերել զմիատեսակ մասնաւոր պտուղս որոշեալս . իսկ չնորհքն տայ հոգւոյն բերել զամ ազգ պտղոց . զի լցուցանէ զնա պէսպէս պարզեօք հոգւոյն սըյ , և ազդի ազգի առաքինութեամբք . յորոց յառաջ գան զանա զան գործք և ներգործութիւնք իբրև տեսակաւ տարբերեալ պտուղք :

Հարթերի չորրորդ յայսմ . զի ջուրն ոչ կարէ փոխիսիել՝ ի ծառս զրակութիւնս պտղոց . զի ոչ կարէ առնել զմասապտուղ ծառս՝ բարեպտուղ . և ոչ ևս կարէ զդառնապտուղս առնել անուշապտուղ : Իսկ չընորհք հոգւոյն սրբոց առնէ զայս զարմանալի փոխիսութիւնս . զի որք յառաջն պտղաբերէին մահու , որպէս զրի . (հռովմ . է . 5 .) ՚ի ձեռն չնորհաց պտղաբերէն սըյ . ոնզ զրի ՚ի նոյն . և որք յառաջն բերէին պտուղս արժանի յաւիտենական պատժոց , յետոյ բերէն պըտուղս արժանի յաւիտենական վարձուց . և որք յառաջն կային հպարտութք , ազահութք , բղջախոհութք , իբրև առիւծք , իբրև արջք , իբրև գայլք , ևն . լինին խոնարհք , հեղք , առատաձեռն . և այլ ևս բազմապատիկ առաքինութք , առաքինալիք , և փոխարկեալք յայր այլ . որպէս թէ փոխարկեալ էր գայլց 'ի գառն , ընձու յոշխար , արջոյ 'ի յեղն . մինչեւ անմի սոցա 'ի միասին արածիլ յեկեղեցւոցն քթի՝ ըստ մարգարետութեանն եսայեայ , թէ * ձարակեսցի գայլընդ զառին , և ինձ առ ուլու մակաղեսցի . և որի՛ և ցուլ և առիւծ 'ի միասին ձարակեսցին . և մանուկ մատաղ , ածցէ զնոսա . եղն և արջ 'ի միասին ձարակեսցին . և որդեակք նոցա խառն շրջեսցին . և առիւծ իբրև , զեղն յարդ կերիցէ ॥ . (Եսայ . ժան . 6 :) Օ այս զարմանալի փոխիսութիւնս 'ի մէջ բերէն ումանք 'ի սուրբ հարց իբրև զմի 'ի զօրաւոր ձեռնարկութեանց , որովք ցուցանի զօրութիւն չնորհաց հոգւոյն սըյ :

Երրորդ նմաննութիւնն է այս . զի որպէս ջուրն զի ջուցանէ զծարաւ , և զովացուցանէ զպաքումն մարմնոյ , սոյնավէս և չնորհքն սըյ զծարաւ և զպաքումն հոգւոյ : Իսայց յայսմ ևս ունի զտարբերութիւն . զի ըստ աեառն բանի՝ որ ըմպէ 'ի տարրական ջրոյ , զարձեալ ծարա-

ի և տապի . իսկ որ ըմպէ ՚ի ջրոյ չնորհաց , ոչ ևս ծառաւի . (յովէ . դ . 13 :) Խակ թէ զիարդգ՝ զիտելի է , զի հոգի մարդց յորժամ չունի զջուր հոգեոր՝ այս ինքն զնորհս , կայ ՚ի տաղնապի . վասն զի զուրկ գորվ՝ ՚ի հոգեւորական խոնաւութենէ անտի , որ միայն է սնուցիչ և կենդանացուցիչ հոգւոյն , կարողութիւնք նորա՝ պայմանքն միտքն և կամքն , և նոյն իսկ հոգին գլխովին պասքեալ տառապին , և ծարաւեալ պասպին : Աւ ՚ի յօժարիլ մարդոյ ՚ի պէսպէս իրս բերիլ , և նոյնին ժառանգութք զհոգին զովացուցանել , վերլատին ծարաւի հոգին . որովհետև այն իրք՝ յորս բերի , ու հպին ՚ի հոգին :

Խակ եթէ ՚ի ձեռն չնորհաց դարձի առ աղբիւրն չնորհաց , և արդարացեալ՝ ՚ի մեղաց՝ միասցի ընդ նման , նովին չնորհօք իրք ջրովք զիջանի տագնապ ծարաւոյ նորա : Աւ թէպէտ ՚ի զգայական մասին մնայ բնական ծարաւ կրից , բայց այն ևս հանդարտի ՚ի զօրութենէ չնորհաց , զի հոգին լիսցեալ նովլաւ , ՚ի ծարաւիլ ցանկութեանն զօրութք այնր կենդանի ջրոյ հանդարտի : Աւ քանզի այն կենդանի ջուր ոչ ծախի՞ (որպէս ծախի ջուրն բնականն) , այլ մանաւանդ միշտ նպաստէ հոգւոյն կազդուրիլ նովին , հոգին միշտ ունելով զայն՝ ոչ ևս տառապի ՚ի ծարաւոյ . այլ մնայ անդորրացեալ և խաղաղացեալ յերջանիկ իմն կեանս . միայն թէ մարդն մի սպառեսցէ զայն , կամ մի կորուս-

ցէ մեղօք :

Լիսցի , * չնորհքն միշտ նպաստէ հոգւոյն կազդուրիլ նովլաւ . քանզի այն ունակական չնորհք ըստ կարգաւորեալ օրինացն այ բերէ ընդ իւր զնապաստ՝ ողք եթէ ոչ գտցէն արգելս , ըստ պատշաճի և ըստ բաւականին օգնեն մարդց , որչափ հարկաւոր է նման պահել զհոգեորական խոնաւութիւնն զայն կազդուրիչ հոգւոյն . մինչև ՚ի ժամանակ հասանելոյ ՚ի փրկութիւն յաւիտենական . յորում խսպառ յագեալ յաղբերն չնորհաց՝ ոչ ևս ծարաւեսցի յաւիտեան . առ որ կարէ յարմարիլ այն բան զոր ասէ անձ բերանով եսայեայ . * ահաւապիկ ողք ծառայենն ինձ արբցէն (և յագես , յին) . և դուք ծարաւեսջիք . (եսայ . կէ . 13 :) Այլ զիտելի է ևս . զի որ ըմպէ յաստի կեանս ՚ի ջրոյ

Հնորհաց , թէպէտեւ զովանայ պատպակումն հոգւոյ նորա , և հանդարտի տատանումն սրտին , բայց ծագի ևս 'ի նմա այլ իմն բերկրական ծարաւ՝ 'ի յառաջանալ 'ի սէրն այ , և 'ի վայելել զնա յինքեան 'ի հանդերձեան : Եւ ըստ այսմ՝ ծարաւ հոգւոյն , այսինքն փափաք նորա՝ յըմսկեն զջուրն Հնորհաց թէպէտեւ զովանայ և հանդարտի , բայց առ առաւելն ևս բերի : Եւ այս բերումն ոչ ներհակի այնմ զովացման . իսկ թէ զիամբդ՝ ծանիբ . զի ծարաւ հոգւոյն կրկնակի բերի առ Հնորհս , և նովին առ ամծ . մի՛ իբր առ այն , զոր ոչ ունի , և բերի զի ունիցի . և այս բերումնս է իբր պապակումն ինչ . և մի ևս՝ իբր առ այն՝ զոր ունի , և բերի ոչ զի ունիցի , այլ զի ստուգագոյնս ունիցի , կամ զի առաւելապէս ունիցի , և կամ զի նաև այսով իմն օրինակաւ ունիցի : Վայ յընդունիլն զառաջին Հնորհս , ըստ առաջին բերմանն զովանայ և հանդարտի , անդորրանայ և բերկրի . զի նովին գտանէ՛ զոր ոչ ունէր , և ըսնելովն պապակէր : Իսկ ըստ երկրորդ բերմանն՝ կենդանական իմն ծարաւմամբ բերի առ այն , ոչ զի ունիցի , այլ զի որպէս ասայաք՝ առաւել ևս ունիցի , այսինքն թէ հաստատագոյնս միաւորեսցի ընդ աղբիւրն , և վայելեսցէ՝ 'ի սէր նորա աստ և 'ի հանդերձեալն :

Վայ քեզ օրինակ այսմ ըստ զբելց մեր՝ այլուր զբերումն կամ զիփափաք երկաթոյն՝ որ 'ի կողմացուցի . զի ծայր սորա մազնիսիւ օծեալ՝ յորժամ ուղղի յանշարժ բեկեռն երկնից , դադարի 'ի փափաքմանէ անտի՝ որով ցանկայր ուղղիլ առ բեկեռն . մինչեւ ոչ ևս ցանկալ ուղղիլ առ այն , զի եզիտ զայն : Վայց սակայն յետ ուղղելց ևս առ այն , և յետ դադարելց 'ի տատանմանէ , ունի և ևս փափաք մեծ յոյժ , ոչ զի ուղղեսցի առ բեկեռն , այլ զի առաւել ևս մերձեսցի առ նա , և միաւորեսցի ընդ նմա : Ոյնպէս ևս հոգին յորժամ օծանի Հնորհաք՝ յուղղիլն 'ի վերջին վախճան իւր յանձ՝ դադարի 'ի ծարաւմանէ անտի , որով փափաքէր մերձենալ առ նա . ուստի և ըստ այսմ զբեթէ ծարաւի 'ի գտանել զնա , զի եզիտ : Վայց քանզի չէ ըստ ամենայնի միաւորեալ ընդ նմա , նաև զի յայսնապէս ոչ զիտէ՝ թէ գտեալ է զնա , այլ

միայն համարմամբ ըստ թուելոյ բնքեան , նմին իրի
առաւելագոյն իմն ծարաւմամբ ծարաւի՛ առաւել
մերձենալ առ նա . զի եթէ չունիցի՛ զօր կարծէ ու-
նիլ , ստուգագոյնս և հաստատագոյնս ունիցի . զի ա-
ռեալ միանգամ զջաշակ քաղցրութեան նորա՝ ոչ ևս
կարէ կալ առանց նորա . այլ քաղցնու և ծարաւի առ
նա , և ցանկայ միանալ ընդ նմա :

Հյայս հյայի այն բան , զօր խօսի իմաստութիւնն յաւի-
տենական՝ի զիրս սիրաքայ . * Հոգի իմ (ասէ) քաղցր
,, (է) քան զմեղը . և ժառանգութի իմ առաւել քան
,, զմեղու խորիսի . . . որ ուտենն զիս՝ և ևս քաղցի-
,, ցեն . և որ ըմպէնն զիս՝ և ևս ծարաւեսցեն . (սիր .
իդ . 27 :) վասն զի մեղքն՝ այսինքն անցաւոր փափ-
կութիւնն եթէ բազում ուտիցի , ծնանի զզուանս .
իսկ շնորհքն այլ յորում է հոգեոր փափկութի , որ-
շափ և առաւել ճաշակեսցի՝ այնչափ առաւել փափա-
քելի լինի :

Հաւելից՝ի սոսին ասել ըստ զրելոյ ուրումն , թէ
* Վայս ինչ տարբերութիւն է՝ի մէջ հոգեոր և մարմ-
,, նաւոր փափկութեանց . զի մարմնաւոր փափկութիւնք
,, յորժամ ոչ ճաշակին , մեծապէս շարժեն զփափաք
,, մարդոյ առ ինքեանս . և յորժամ անձկանօք ճաշա-
,, կին , զջաշակօղն յափրացուցանեն : Իսկ հոգեոր
,, փափկութիւնք յորժամ ոչ ժառանգին՝ անհամ հա-
,, մարին , այլ յորժամ ժառանգին՝ ցանկալի լինին .
,, ևս և այնչափ առաւել յափրժողէն ճաշակին : Ի նո-
,, սին ախորժակն է սաստիկ և փորձն անհամց . ՚ի
,, սոսին ախորժակն նուազ , և փորձն համց : Ո՞ի
,, հոգեոր փափկութիւնք՝ի յագեցուցանեն՝ աձեցու-
,, ցանեն՝ի հոգին զախորժ , վասն զի համեզութի ճա-
,, շակաց նոցա որչափ առաւել ընկալեալ լինի , այն-
,, չափ առաւել ճանաչի , և ախորժելի լինի : Իւ-
,, վասն այնորիկ յու ընդունին ոչ լինին ախորժելի ,
,, վասն զի համեզութիւն ճաշակաց նոցա մնայ անծա-
,, նօթ . յոյր սակս յորդորէ զմեզ սաղմնաերգուն ա-
,, սելով . (՚ի սազ . լիք . 8) ճաշակեցէք և տեսէք , զի
,, քաղցր է տէր . որպէս թէ ասէր . զքաղցրութի նո-
,, րա ոչ ծանիջիք , եթէ երբէք զայն ոչ ճաշակես-

ու ջիք . ապա արժան է ձեզ մատուցանել՝ ի քիմն
ու սրտից ձերոց զիերակուրն կենաց . զի առեալ զհաւ
ու շակ քաղցրութեան նորա՝ մարթաս ջիք զնոյն ախոր
ու ժել || : Որդիմբ ցուցանի թէ չնորհքն կամ սէրն
ոյ ՚ի զիջուցանել զծարաւ հոգւոյն՝ տայ նմա ևս ծա-
րաւիլ առ այն , զի առաւել ևս ունիցի . (զայսմանէ
տես և ՚ի սաղ . խան . 2 :)

Պորըորդ նմանութիւնն է . զի որպէս ջուրն հարկա-
ւոր է քան զամենայն առ պահպանութիւն կենաց . և
առաւել քան զամենայն ընդմտանէ ընդ երակունս ,
և այնու տայ մնունդ մարմնոյ , սոյնպէս և չնորհք
հոգւոյն սրբոյ քան զամենայն ինչ հարկաւոր է հարկա-
ւորութիւն միջնորդի առ պահպանութիւն հոգւոր կե-
նաց . և ընդմտանէ ընդ ամենայն կարողութիւնս հոգ-
ւոյն , և տայ մնունդ հոգւոր : | յւ ըստ այսմ համե-
մատութեան՝ որպէս չնորհքն նմանի ջրոյ , սոյնպէս և
աւետարանական վարդապէտութիւնն նմանի յաւետ
կերակրոյ՝ քան թէ ջրոյ . զի որպէս առանց ջրոյ կե-
րակուրն ոչ տայ մնունդ՝ մնանաւանդ թէ վնասէ ևս ,
սոյնպէս և առանց չնորհաց՝ աւետարանական վարդա-
պէտութիւնն ոչ տայ մնունդ հոգւոյ . այլ երթեմն վնա-
սէ ևս . որպէս եզեւ ՚ի հերետիկոսս և ՚ի յամառեալ
մեղաւորս :

Իսացի՝ * յաւետ կերակրոյ քան ջրոյ || . զի աւետարա-
նական վարդապէտութիւնք թէպէտ ջրոյ ևս նմանին ,
որպէս և նմանեցուցանէ աստ լամբրոնային . ըստ ո-
րում նորին ևս յորժամ ըմպին՝ այսինքն մոտածին ,
իբրև զջուր մնունդ տան , և զովացուցանէն զհոգին ,
ասկայն բաղդատութեամբ չնորհաց՝ յաւետ կերակրոյ
նմանին քան ջրոյ :

Հինգերորդ նմանութիւնն է . զի որպէս ջուրն գիմէ
և դադարէ ՚ի խոնարհ տեղիս , սոյնպէս և չնորհք
հոգւոյն սրբոյ ՚ի խոնարհ հոգիս . (զորմէ ունիմբ խո-
սիլ ՚ի սաղ . կե . 16 :) | յւ ևս՝ որպէս ջուրն ՚ի բարձ-
րութենէ իջեալ՝ կարէ ըստ կարի ՚ի նոյն վերանաւ՝ եթէ
շիցէ ընդհատեալ ՚ի սկզբնէ իւրմէ , այլ խողովակաւ
շարունակեալ , սոյնպէս ևս չնորհքն՝ որ հոսէ իբր ՚ի
բարձրութենէ երկնից ՚ի կենդանի աղբերէ , այսինքն
՚ի հոգւոյն սրբոյ , եթէ շիցէ մեղքը ընդհատեալ ՚ի նոյն

բարձրանայ . իբր զի տայ մեղ 'ի ձեռն արժանաւոր գործոց բարեաց՝ ելանել յերկինս առ ան յաւիտենական կեանս՝ յոր միտ ասաց քու . * ջուրն զոր , ես տաց նմա , եղիցի նմա աղբիւր ջրոց բղխելոց 'ի
,, կեանսն յաւիտենից || . (յովլ . դ . 14 .)

Այսդ 'ահա առ այսպիսի ջուրս ասէ մարդարէն մնոյց զիս ան . Օոր և կոչէ ջուր հանգատեան . զի ըստ ասելոց մեր այժմ՝ է հանգուցիւ հոգւոյ 'ի տառապանաց , հանգուցիւ մոտաց 'ի տատանսմանէ , հանգուցիւ կամաց յանկարդ բերմանէ . ևս և հանգուցիւ շարժմանց սրտի 'ի չար յուզմանէ . Այսմ փափաքէին սիր ամենայն , և զայս ցանկային ունիլ իւրեանց նաւահանգիստ . առ որ հառաւէլով նարեկացւոյն ասէ ('ի բանն ձեք .) * կառն ինձ սահման ջրոց հանգըս .
,, տեան || :

Այսէս չնորհալին ջրով իմանայ զկենդանարար իմաստութիւն հոգւոյն սըյ , և դալարի վայրիւ զանձային օրէնս . առ որս ցուցանելով զփափաք իւր՝ զրէ յընդհանրականի իւրում . * զիարդ ասէ հնար է մեղ , և զհովլուութեան օրէն նուր , 'ի վայրի դալարով անձ , ային օրինացն հանգուցանել , և կենդանարար ջրով , հոգւոյն իմաստութեամբ մնուցանել || . Օ այսպիսի ինչ իսոսի և յատենաթանութեան . * Եւ ոչ 'ի տես , չութեանն սակաւուն հօտի արբուցի զջուրն հանգըս , տեան , կամ արածեցի 'ի վայրի դալարով իմաս , տութքը || . Բստ սմին և յովհան եզնկացին ('ի զովլուս .) դալար վայրիւ իմանայ զվարդապետութիւն որ զրոյ , զոր լսմբրոնացին ըստ նախագրելոցդ 'ի ջուր հանգստեան վերածէ :

Այրգիս չնորհալի ('ի մեկն . ան . պետ . եւ . շառ ժամ .) դալարութք վայրի իմանայ զզօրութիւն անձային պատուիրանաց , և ջուրը հանգստեան ըստ լամբ . զվարդապետութիւնն քնի . * բանաւոր ոչխարացն հոյ , վիւք (ասէ) պարտական են խնամն առ հօտն ցուցանել . 'ի պատուիրանս այ իբր 'ի դալար վայր արածել , և 'ի վարդապետութիւնն քնի իբրեւ 'ի ջուրս , հանգստեան մնուցանել , և յեկեղեցին իբր 'ի փարախ ժողովել , || ևն :

Վիրակոս վարդապետ արևելցի ('ի մնացորդս հարիւ-

րաւորացն եւազրի . լր .) այսու ջրով իմանսայ զերկէ նային միմիթարութիւննն , և դալար վայրիւք զածային կամ . և զմասունս հոգւոյն հօտի նմանեցուցանելով զրէ այսպէս . * հօտ քոփի են հոգւոյն մասոնք , որ առ բածին ի դալար վայրի յանդաստան կամացն այ առ ջուրս երկնային քաղցրութեան , և միտքն (այսինքն խիղչ մոտացն) որպէս շուն հաջէ և հալածէ զիսոր . Հուրդս վատութեան :

Վայաբանօրէն՝ եկեղեցին քոփի է վայր դալարի կամ վայր դալարացեալ հոգւոր վարդապէտութք , և անձային չնորհօք : Ի սմա իրըև զհօտ բնակեցոյց անձ զհաւատացեալս իւր՝ ծնանելով զնոսա մկրտութք . որ աւազանին . ըստ որոյ յասեն աստ , * և առ ջուրս հանգստեան մնոյց զիս || . Ջրով ըստ խորհրդոյն իմացեալ լինի մկրտութիւնն , որոյ ընդունօղն հանգչի ի ծառայութենէ մեղաց , ի գերութէ սատանայի , ի տատանինէ պէսոպէս աղանդից , ևն . և սկսանի մնանիւ յեկեղեցով անդ անձային իմաստութք և չնորհօք : Վրդ՝ յայտ արարէալ մարգարէին զառաջին զործ հովուութեանն այ՝ սկսանի խօսիլ և զերկրորդէն՝ ըստ զրելոյ մեր ի վերոյ : Ոմն իրի յարէ զինի , և ասէ :

¶ Ճարյոց զանին ի մաս էս . և առաջնորդեաց ինչ՝ մասնադրութեան արդարութեան վասն անուան իւրոյ : Որովհետեւ յոշնէլ է մարդ , և զանդեալ տկարութք , հանապազ առ այն զիմէ՝ յորմէ է . և ըստ այնմ զործէ՝ որով զգածեան է . այսինքն թէ զիմէ առ ոչնչութիւն , և զործէ ըստ տկարութէ . և առ այս չունի պէտս օգնականի . կամ որ նոյն է՝ ոչ կարօտի օգնականութեան ուրուք՝ ի զիմել յապականութի . որովհետեւ ինքնին բերի նոյն . յոր միտ ասէ մարգարէն . * յապականութեան քում իսրայէլ ովլիցէ՝ որ օգնիցէ քեզ || . (ովս . ժկ . 9 :) որով կամի ցուցանել , թէ ոչ օգնէ մարդոյ ի զիմել յապականութիւն հոգւոյ , կամ խոտորիլ յուղիլ ճանապարհէ փրկութեան , և ի թիւրն զնալ . զի ինքնին մողովեալ զնայ ի նոյն : Խսէ ի յազատիլ յապականութենէ , կամ ի դառնալ՚ի թիւր ճանապարհէ , և ի զնալ յուղիլն հարկ է , զի

ած մանաւորապէս օգնեսցէ նմա՝ թէ 'ի դառնալն ,
և թէ 'ի գնալն :

Եշ արդ քանզի մարդարէն նմանաբանութեամբ խօսե-
լով ոչխարի նմանեցոյց զմարդն , և զինսամսն այ՝
խնամոց հովուի , 'ի նոյն նմանութիւն հայելով զդիմել
մարդոյ յապականութիւն և զգնալ նորա 'ի թիւբն՝
նմանեցուցանէ մոլորման ոչխարի . իսկ զինսամսն այ՝
նմանեցուցանէ գարձուցանէլոյ հովուին զմոլորեալ
ոչխարն , և առաջնորդելոյ նմա 'ի բարին . և նախ
վասն դարձուցանելոյն ասէ :

Դարձոյ շանցն էմ առ իս : **Լ**յսինքն հովիւն իմ դարձոյց
զիս զմոլորեալս առ իս . կամ դարձոյց զիս՝ յորժամ
մոլորեալ էի , և էած առ ջուրս հանգստեամն 'ի սնու-
ցանել զիս :

Վ. յլ գիտելի է , զի այս մոլորիլս երբակի կարէ մտա-
ծիլ , մի՝ ըստ վիճակի յանցաւորութեանն ադգամայ , յո-
րում բնութիւն մարդկային առ հասարակ ապականեալ
էր , և յետո դարձեալ յայ՝ և յոգիս աստատանեալ
և իբր թէ հոգէվար լեալ . յայսպիսի վիճակի գործվ
եկն հովիւն բարի , և դարձոյց զնա առ ինքն . և ա-
ռաջնորդեաց նմա 'ի ճանապարհս արդարութեան , և
ետ յոյս դառնալոյ հոգւոյն առ մարմինն և առնլոյ
զնոյն , այսինքն է յառնել , զորմէ երկար զրեն աւե-
տարանիչք և այլ առաքեալք , մանաւանդ պօղոս այլ-
և այլ բանիք և առակօք :

Երկրորդ՝ մտածի ըստ վիճակի հեթանոսութեան , յո-
րում չե էին ճշմարտիւ ծանուցեալ մարդիկ զան , և
չէին ընկալեալ առ յայ՝ և էին առանց քնի . և 'ի տա-
տանիլ նոցա 'ի պաշտամունս սուտ ածոյ՝ եկն ճշմա-
րիսն ած , և ազատեաց զնոսա՝ զորմէ երկար և գե-
ղեցիկ զրէ պօղոս առ եփեսացիսն . * յիշեցէք (ասէ)
,, զի երբեմն հեթանոսք էիք զի էիք 'ի ժամա-
,, նակին յայնմիկ առանց քնի և յոյս ինչ ու-
,, ունէիք . և անածք էիք յաշխարհի . իսկ այժմիկ 'ի
,, ձեռն յահ քնի դուք , որ երբեմն հեռաւորքն էիք ,
,, մերձաւորք եղէք արեամբն քնի . զի նա է խաղա-
,, զութիւն մեր , որ արար զերկոսեանն մի և եկն
,, աւետարանեաց խաղաղութիւն ձեզ հեռաւորաց՝ և
,, խաղաղութիւն մերձաւորաց || : (եփես . թ . 44 .)

Երրորդ՝ մոտածի ըստ վիճակի նորոգ յանցաւորութե՛ն .
ըստ որոյ այս բան հայի առ իւրաքանչիւր ընտրեալ .
որոց 'ի մողրին մեղօք , և 'ի տառապին 'ի թշուա-
ռութիւնս մեղաց , և 'ի ցաւս իոդժի մոտաց , անծ ըստ բա-
զում գթութեան իւրում գարձուցանեւ զնոտա : Վա-
ցի՛ ըստ բազում գթութեան . զի մարդն թէ, պէտ և ա-
ռանց դթութեանն այ մողրի , բայց առանց բազում
գթութեան նորա ոչ դառնայ . զի 'ի մողրիլ նորա՝ անծ
գթայեալ 'ի վերայ նորա՝ ոչ վաղվաղակի դատապար-
տէ զնա . և 'ի կամին գարձուցանեւ զնա՝ յաւելու
զկրկին գթութիւն իւր 'ի վերայ առաջնոյն . և այնու
բազմապատկեալ դթութեն գարձուցանէ զնա :

Վ . Խ քննել արժանն է , զի ոչ ասէ՝ * գարձոյց զանձն
,, իմ առ ինքնն || . այլ՝ * առ իս || . և այս բառ թէ-
պէտ յոշինչ թարգմանութեան դտանի , և ոչ 'ի բնա-
զիւս երբայեցւոց , բայց ըստ կրկին իմացուածոյ ևս
կարէ մեկնիլ . Ո՞ի ըստ ստանալոյ վերստին զկորու-
սեալ անձն . վասն զի որ մողրի յայ՝ կորուսանէ զանձն .
իսկ յորժամ գարձուցանէ զնա անծ 'ի մողրութենէ ,
այնու գարձուցանէ զնա առ նա , այսինքն է՝ տայ նմա
դտանել զանձն իւր , զոր կորոյս , Երկրորդ՝ ըստ ըշ-
գաստանալոյ . զի այս ոճ բանի այսինքն գարձուցա-
նել զաք առ ինքն՝ բազում անդամ՝ յայս միտս վարի ,
այսինքն փոխանակ զգաստացուցանելոյ . և ըստ այսմ
կամի ասել . ևս թէպէտեւ մողրեցայ , որով և ան-
զայցացայ և յիմարեցայ , բայց հոլիւն իմ 'ի ձեռն
չնորհաց իւրոց գարձոյց զիս առ իս , այսինքն զգաս-
տացոյց զիս . և յետ զգաստացուցանելոյ առաջնոր-
դեաց ևս ինձ զնալ յարդարութիւն իւր . և առ այս
յարէ զինի , և ասէ :

Վ . Զանաբարեաց ինչ 'ի ճանապարհս արդարուե կան անուան
էրոյ : Ճանապարհաւ արդարութեան իմացեալ լինի
աստ այն ուղղութիւն անծային օրինաց , յորմէ մողրե-
լով արդարն՝ կարօտանայ 'ի նոյն դառնալ , և այնու
առ անծ ժամանել : Եշ արդ՝ քանզի եդ , թէ անծ գար-
ձոյց զիս 'ի մողրեալ զորոյ անտի , 'ի յարեն զկնի՝
* առաջնորդեաց ինձ 'ի ճանապարհս արդարութեան || ,
իստի ասել . 'ի գարձուցանեն զիս 'ի մողրեալ ճանա-
պարհէ՝ ընդ որ ոչ համեր , էած զիս յուղղութիւնս

պատուիրանաց իւրոց , կամ յայնպիսի գործս , որք են
արդար և հաճոյ նմա , և առնեն զիս արդար և հաճոյ
առաջի նորա :

Իսկ առաջնորդել զնելով՝ կամի ցուցանել , թէ մասնա-
ւոր իմն խնամով ածէ ած զարդարն յուղութիւնս օրի-
նաց՝ և քաղցրութք վարէ 'ի նոյն . ֆէ է՝ զառիթս մե-
զաց հեռացուցանելով , զաստկութիւն փորձութեանցն
նուազեցուցանելով , զանցաւոր և զունայն միսիթարու-
թիւնս անհաճոյ ցուցանելով , զերկնային և զհոգեոր
բարիս քաղցրացուցանելով , զմիտս ածային ծանօթու-
թեամբք լուսաւորելով , զկամն 'ի սէր իւր ձգելով ,
զապստամբութիւն զգայութեցն նուաձելով , և այլ ևս
ազգի ազգի օրինակաւ առ ինքն ուղղելով : Օ որս ե-
թէ ուշադրութք նկատէաք , յայտնի տեսանէաք , և
ընդ իննամն բարի հովուին մերոյ սքանչացեալ՝ բազում
նորհակալութք զննանէ գոհանայաք . մանաւանդ զի
զայսպիսիս ոչ առնէ վժ մերոյ ինչ արժանաւորութե ,
կամ ըստ լամբրոնացոյն վասն կաշառաց և կարօտու-
թեան , այլ վ՛ս իւրոյ գթութե : Ամին իրի յարէ զկնի ,
և ասէ :

Ասն անուան իւրոյ : Այսինքն վասն փառաց անուան
իւրոյ . կամ վասն յայտնի առնելոյ մեզ զանուն իւր .
ուր բառս անուան՝ նշանակէ զայն , որով կոչի ած՝ ողոր-
մած և գթած . վասն զի ած 'ի իննամելն զմեզ՝ այնպիսի
անուամբ յորջորջի . որպէս և 'ի իննամելն զորդինն
իսրայէլի յանապատի անգ՝ այսպէս կոչեցաւ . զի ասէ
'ոք զիւն , թէ յանդիմանն լեալ մովսէս առաջի այ՝ * կո-
չեաց զանուն ոն . . . և կարդաց տէր ած գթած և
ողորմած , երկայնամիտ , բազումողորմ և ձշմա-
րիս , որ պահէ զարդարութիւն , և առնէ զողորմու-
թիւն 'ի հազար ազգս . բառնայ զանօրէնութիւն և զա-
,, նիրաւութիւնս և զմեզս || . (ելից . լդ . 6 .)

Բ ատ յարմարականն մէկնութե այս բան վերածի և առ
այնպիսի մարդ՝ որոյ 'ի պաշարին յանբերելի տառա-
պանս՝ և յապաւինին յած՝ զարձուցանէ զնա ած 'ի
վշտաց անտի , և առաջնորդէ նմա 'ի յանդորրական
կեանս վասն փառաց անուան իւրոյ . մինչև ցնծալից
սրտիւ գոհանալ նմա , և ասել . * դարձոյց զանձն իմ
առ իս , առաջնորդեաց ինձ 'ի ձանապարհս արդա-

„ըութեան վասն անուան իւրոց || :

Վայլաբանօրէն՝ այսու բանիւ նկարագրի երրորդ խոր-
հուրդն եկեղեցւոյ . այն է խորհուրդն ապաշխարու-
թեան . զոր սահմանեաց քո վո՞ւ անուան իւրոյ , այսինքն
վասն արդեանց իւրոց , ևս և վո՞ւ փառաց սքանչելի վեր-
տառութեացն , որովք կոչի լոյս , Խանապարհ , Ճշմար-
տութիւն , կեանք , արդարութիւն , սրբութիւն , զօրութիւն ,
և այն :

Վրդ՝ յառաջնորդիկ մարդոց այսպիսի ածային խնամովք՝ զորս յիշեցաք, եթէ ոչ գտցի անհոգ՝ այնցափ զօրանայ՝ ի հոգի իւր, մինչև յու և իցէ փորձութիւնս, որք պատահին նմա՝ ի ձանապարհի, աներկիւղ մնալ, և ոչ իւիք յետս կալյաց. Եւ զայս յայտ առնետ մարդարէն՝ ի յաջորդ համարն, և ասէ:

Դա եղիս և գնացէց Ես՝ ի գլուխութքաց Տահու, և Հեր-
իւացը ի շաբէ. զի դու ու էլ ընդ իս եմ:

Աստուերաւ մահու ըստ բառիցն մտածեալ՝ նշանակի խաւարն այն որ յաջորդէ մահու . իբր զի՞ որ մեռա նի , զրկելով յամ զգալի լուսոյ՝ հասանէ նմա ըստ մարմնոյ խաւար , որով և ասի լինել՝ 'ի խաւարի . զի որպէս որ կոյրն է՝ ասի լինել՝ 'ի խաւարի , ոչ զի լցո ոչ գոյ զնովաւ , այլ զի զուրկ է՝ 'ի լուսոյ , սոյնպէս և որ մեռեալն է՝ ասի լինել՝ 'ի խաւարի ըստ մարմնոյ . ըստ որում ամեննեին զուրկ է՝ 'ի զգալի լուսոյ . և զի այն խաւար 'ի մահուանէ պատճառի իբրև ստուեր նորա , վասն այսորիկ կոսի և ստուեր մահու :

Վասցի * ըստ բառիցն մտածեալլ , զի ըստ ենթադրութե և ըստ փոխարերութեան առեալ ստուերաւ մահունշանակի նախ խաւարային վիճակ մարդկային բնութե , զի այս վիճակ իրեւ ստուեր եկն զշետ մահու մեղաց նախահօրն ադամայ . քանզի զայս կոչեն որ գիրք խաւար և ստուեր մահու . ըստ այնմ , (զուկ . ա . 79 .) * երևելորոց 'ի խաւարի և 'ի ստուերս մահունատէին : Վանաւանդ զի սոյն այս հչ միայն զշետ եկն մահու , այլև իրեւ ստուեր ձեւացոցիչ եղեւ մահու ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ :

“Կարձեալ և կենցալ այս և կեանք մեր նմանութե՛ք իմն ասի ստուեր մահու, ըստ որում զիմէ առ մահն,

իբրև ստուեր զկնի նորա զնալով . վայ ասէ Տղթծորեցն ('ի մեկն . մատ . զլ . դկ .) * որպէս ստուեր զկնի մարմնոց 'ի հարկէ ընթանայ , այսպէս և կեանք մեր , կամ կենցաղս կամ ընթացք կենացս յետ անփծիցն զկնի մահու ընթանայ . վայ ասի ստուեր մահու || : Երրորդ՝ նշանակի հանգամանք գերեզմանի , որ իբրև ստուեր ձեւացուցանէ և ցուցանէ զմահ . զի ուր գերեզմանէ , անդ է տեղի մահու . յոր միտ ասէ յոր . (դկ . օկ .) * ընկալցի զնա խաւար , և ստուեր մահու || : Եւ քանզի մարդիկ իբրև թէ մեռեալ էին առաջի այ , և կային յաշխարհի իբրև 'ի գերեզմանի , վասն այսը պատճառի ևս ասի զնոցանէ նստիլ 'ի ստուեր մահու , այսինքն 'ի գերեզմանի :

Երրորդ՝ նշանակի մեղքն . որպէս զրէ վանական վարդապէտ ('ի մեկն . յորայ զլ . ժք .) * ստուեր ցուցանէ ասէ զմարմինն՝ յորմէ անկանի (և պատճառի ու ուի) . այսպէս և ստուեր մահու մեղք : Եւ գարձեալ ասէ անդ * մեղք պատճառ և ստուեր են մահու || : և ('ի զլ . իդ .) ասէ . * ստուեր մահու զմեղքն ան , սէ . . . զի ստուեր է մահու (այսինքն) նմանութիւն , մահու . զի թէպէտ (ողք 'ի մեղք են) կենդանի են , մահուն երկիւղիւ 'ի տարակուսի կան || : Իսկ ('ի զլ . ժք . օկ .) զնէ թէս սատանայ է * ստուեր մահու || : Պայլորպէս և տեսանի ոչ հայի 'ի սոսա առաջիկայ բնաբանդ : Չորրորդ՝ նշանակի ծանր վիշտ , ևս և ըստ վանականին ('ի մեկն . յոր . զլ . իդ .) * տանջանք , զոր կրեն , մարդիկ ըստ մարմնոց || . զի այսպիսիքս են պատկերք ինչ մահու իբրև ստուերք նորա . նաև պատճառ մահու և շիջուցիւ լուսոյ կենաց . ուստի և իրաւամբք կոչին ստուերք մահու . յոր միտ ասի 'ի սաղ . (Ճկ . 14 .) * փրկեաց զնոսա . . . 'ի ստուերաց մահու || :

Հինգերորդ իբր առանձինն առեալ նշանակի փորձութիւն հոգեղրական՝ եթէ ցանկութք մարմնոց իցէ , և եթէ կարեօք մեղք : Եւ զի սոքիմբք ոչ նուածի արդարն , այլ նոյն իսկ փորձութիւն , վասն այսորիկ ասէ : էրէւայց են : Ուստի զրէ մեծն խոսրով ('ի մեկն . ժամազք . երես . 66 .) * զկարէ (ասէ) ցանկութիւն մարմնոց զշաստակեալն 'ի կամ այ , չազդէ և կարեք մեղքն յայնպիսին . այլ խափանեալ լինին նոմ

“ շարժմանք նորա . և իրեւ վիմի գիտեալ խորտակեալ
” ընդ կրունկն զառնայ || : Օ այսպիսի փորձութիւնն
և զգանիութիւն վշտաց տիրապէս կոչէ աստ մարդարէն
ստուերս մահու . ընդ որով խնացեալ լինի և խաւարն ,

և յայտպիսիս հայելով խօսի զայս բան :

Վրդ յայտ է՝ թէ որ զնայ ՚ի խոր ստուերի , և ՚ի մէջ
խաւարի բազում երկիւղ կրէ . նախ՝ ՚ի զարհութանաց
զգայութեան . զի զգայութիք մարդոյ զգածին երկիւ-
ղիւ ՚ի լինելն ՚ի խաւարի : Խրկրորդ՝ ՚ի բազում վտան-
զից , որպիսի են փորձ կամ վիհը ՚ի հանասրարհի , կամ
խոցնդոտք , և կամ այլ ինչ արգելք վտանգիք , որք
ոչ տեսանին : Խրբորդ՝ ՚ի գողց , որք դարանին ՚ի խա-
ւարին տեղւոջ : Չորրորդ՝ ՚ի զազանաց ՚ի խաւարի
շրջողաց : Վյապէս է տեսանել և ՚ի ծանր փորձու-
թիւնս և ՚ի վիշտու . զարհութանք կարողութեց հոգւոյն .
վիհը՝ այսինքն վտանգք անկանելոյ ՚ի մեզս . գողք՝
այսինքն զգայարանք , կամ շար օրինակք . զազանք ,
այսինքն գեւք , և ։ :

Այօքա թէպէտե ՚ի կողմաննէ իւրեանց պատճառեն
զերկիւղ մեծ յարդարն՝ հայելով՝ ՚ի տկարութիւն մարդ-
կային բնութեան , բայց հայելով՝ ՚ի զօրութին և յողոր-
մութիւնն այ ՚իրեւ ընչն ինչ արհամարհին . վո՞զի ար-
դարն գիտելով , թէ որչափ ինքն տկար է և ողօրմելի՝
այնչափ հզօր և ողօրմած է ամենաբարի հովիւ իւր , և
ոչ թողու զնա ՚ի ձեռաց , այլ օգնէ նմա և առաջնոր-
դէ , ՚ի նոյն վտահացեալ մնայ աներկիւղ և հան-
զիստ . սմին իրի ասէ :

Ու է ու դու գնացից ես ՚ի մէջ սորութաց մահու , ու երիւայց ՚ի
շարէ . (զէ դու ուեր ընդ իս ես) : Կամի ասել . թէ և լիցի
ինձ զնալ ՚ի մէջ զարհութագին փորձութեանց և կամ
սրաշարիլ ՚ի մէջ սաղնասկեցուցիւ վշտաց՝ իրը ՚ի մէջ
ստուերաց մահու՝ ոչ երկեայց յայնցաննէ , և ոչ յո՞ւ և
իցէ շարէ , և ոչ իսկ ՚ի մահուաննէ , յոր կարեն ածել
զիս այն փորձութիւնք . կամ թէ ոչ երկեայց թէ զու-
ցէ պատահեսցի ինձ շար , կամ այլ ինչ վնաս ՚ի փոր-
ձութեանց անտի : Հայս վտահութի բերի մարդարէն

այնու՝ զոր յարէ զինի ասելով :

Օւ է դու ուեր ընդ իս ես : Վյախինքն թէ որովհետեւ դու-
ընդ իս ես տէր ՚ի զօրացուցանել զիս և ՚ի վանել

զթշնամիս իմ, զի՞նչ ևս ունիմ ես երկնցիլ, և կամ
յումնէս ունիմ զարհուրիլ, և կամ որ չար կարէ ինձ
սունանել, Վայ այն է՝ զոր այլուր ասէ . * թէք լոյս
.. իմ և կեանք իմ, ես յումնէս երկեայց ևն . (սաղ.
իշ. 1 :) Հօր միտ և առաքեալն ասէ . * իսկ արդ՝ զի՞նչ
.. ասեմք առ այս . եթէ ան ՚ի մեր կոյս է, ով իցէ մեր
հակառակ . (Հոգմ. ը. 31 :)

Մստանօր քննել արժան է զիւրաքանչիւր բառող՝
հայելով 'ի հոգեւորական փորձութիւնս : Վանախ այն՝
զի ոչ ասէ, թէպէտ և անկայց կամ եղեց 'ի մէջ փոր-
ձութեանց, այլ զնացից . որով յայտ առնէ, թէ 'ի լի-
նեն 'ի մէջ փորձութեանց՝ ոչ է պարտ թուլանալ 'ի
նմին, այլ արփանալ և 'ի բարին ընթանալ . և կամ
գարձեալ ոչ է պարտ մնալ անդ՝ կամ յամել այլ զնալ
և անցանել, և այնու զերծանիլ 'ի չարէ, Վաթէպէտ
զայս ինքնին առնել գժուարին է մարգոյ, որով լետե
ապականեալ բնութիւնն որ միտ 'ի չարն յօժարի, բայց
զիւրին ևս լինի օժանդակութիւն այ . որ միշտ ըստ ա-
ռաքելոյն վկայելոց (ան . կոր. թ. 13 .) տայ մարգոյ
ընդ փորձութեան և զելք՝ այսինքն զհնարս . և լինելով
առ առ նա՝ քաջալերէ զնա . և զայս կամելով ինմացու-
ցանել յարէ զայն թէ * զու ընդ իս ես :

Կըրկրորդ՝ ոչ ասէ յայտնապէս, թէպէտե զնացից 'ի
մէջ փորձութեանց, այլ * 'ի մէջ ստուերաց մահու .
որով ցուցանէ, թէ փորձութիւնքն են մնոտի ինչ իբրև
ստուերք . ուստի և իբրև ստուեր արհամարհէլի են,
և ոչ թէ երկնչելի . Կթէ տեսցես 'ի վերայ որմոյ առիւծ
նկարեալ, յայտ է թէ ոչ զարհուրիս . զի ոչ ինչ կա-
րէ վնասել. սոյնպիսի են և փորձութիւնք . կամ առ ա-
ռաւելն իբրև զակոսու որք հաւեն, զորս եթէ արհա-
մարհէնցեցես, և ոչ տացես պատափանի, լռեն . Վաղ-
ինեն փորձութիւնք զդրունադ՝ յոչ բանալդ ոչ կարեն
մնանել 'ի ներքս, այլ զանան յետու : Ի հարցանել
չէթանսու ուրուք ցքահանայ ոմն կուսակրօն, թէ
զիարդ կարէք տանիլ փորձութեանց, ետ պատափանի .
առաքեալ վաղիւ զծառայ քո 'ի սենեակ իմ . և ցուցից
նմա : Ի գալ ծառային առ նա և 'ի ինսգրել զակատա-
խամի, ամենելին ինչ ոչ խոսեցաւ ընդ նմա քահանայն,
թէպէտե ծառայն բազում իրօք ստիպեաց զնա . և

տափա բարկութ մեկնեալ՝ ի նմանէ գնաց առ տեր իւր .
և 'ի հարցանել նորա՝ թէ զինչ խօսեցաւ քահանայն ,
դայրացաւ , և սկսաւ նախատանօք խօսիլ զնաննէ ,
և ոչ իսկ առէ զղղջոյն իմ ընկալաւ . առէ ցնա տերն .
այդ է ահա՝ զոր նա պատասխաննեաց . զի ոչ ինչ խօ-
սելով ընդ քեզ՝ եցոյց՝ թէ ոչ լսելովն և ոչ խօսելովն
վանն նա զիրոքնութիւննն , իստ սմին պանրտ է և մեզ
վարիլ . իշրեմն ևս 'ի զօրանալ փորձութեան կարեմք
յայլ իրս զրադիլ մինչեւ ոչ զգալ զզօրութիւն փորձու-
թեանն . ոնկ որ 'ի ծանր զբագլունս իցէ ոչ հասկանայ
զորս խօսին այլք :

Խըրորդ՝ ոչ առէ , ոչ կասկածեցաց 'ի չարէ , կամ թէ
վանեցից զարն . այլ թէ ոչ երկեայց . զի երկնչին
լքուցանն զսիրտն , և զօրացուցանն զփորձութիւնն .
որովէս որ 'ի մարտնչին երկնչիցի սկարանայ , և թշնա-
մին զօրանայ : Վեն ցնծայ եթէ տեսցէ զքեզ երկնատ ,
և ուրախանայ ընդ տագնասիլդ . զի թէ և զիսասցէ
թէ ոչ կարէ յաղթել , բայց 'ի տեսանեն՝ թէ դու
տակաս և վշտանաս՝ բերկիրի ընդ այդ . իսկ թէ դու
աներկիւղ կացեալ ոչ ինչ համարիցիս զփորձութիւնս
նորա , և ոչ իսկ ուշ զիցես բանից նորին , ոչ ինչ կա-
րէ ներզործել՝ ի քեզ , այլ ինքն ներզործի և տանջի :
Այս ճշնաւոր ոմն ետես՝ զի դեմ արձակեաց զնետ
մի 'ի սենեակ ուրումն ճինսաւորի , և նետն անցեալ
ընդ որմն եմուտ 'ի ներքս . արձակեաց և զայլ նետ մի
'ի սենեակ այլոյ , և նետն հարեալ ընդ որմն՝ անկառ
արտաքրոյ . արձակեաց և միւս այլ նետ 'ի սենեակ
այլոյ , և նետն հարեալ ընդ որմն՝ դարձաւ և խոցեաց
զգենն : Եւ սուրբն հարցեալ տեղեկացաւ՝ զի առաջին
նետն էր փորձութիւնն այն՝ որ մտեալ՝ ի ներքս վիրա-
ւորէ . երկրորդ նետն էր փորձութիւնն այն , ընդ որում
պատերազմի մարդ . երրորդ նետն էր փորձութիւնն
այն , զոր արհամարհէ մարդ : Եթէ 'ի գալ փորձու-
թեանց տեղի տացես՝ յաղթիս . եթէ ընդդիմացիս և
կռուեսցիս՝ արդարեւ յաղթես , բայց խննջիս , և փոր-
ձութիւնքն ոչ փախչին՝ այլ շուրջ գան զքեւ . իսկ եթէ
ամենենին ոչ տացես տեղի , փորձութիւնքն վշտագնեն
և տանջեն զգես . զոր օրինակ եթէ 'ի գալ փորձութէ
վրէժինդրութէ կամ բարկութէ , եթէ դու զայլ ինչ

խորհելով՝ ամեննեւին ոչ տացես տեղի, իբրև թէ ոչ
իմանայիր, և կամ որպէս թէ շխայցէ ինչ, սովոր
այսու ոչ միայն անդորրանաս յերկիւղէ փորձութեանն,
այլև տագնապն փորձութեան դառնայ 'ի դլուխ սատա-
նայի: Վաս եթէ դու շփոթիցիս և տագնապիցիս՝ ա-
ռաւել դու քեզ անհանգիստ առնես, քան թէ փոր-
ձութիւնքն: Վթեններ զօրավար սաւուզայ առաւել
անհանգիստ առներ զսաւուզ՝ որ ննջէր՝ 'ի ձայնելն
առ զաւիթ՝ թէ ոլ իցէ, քան զնա ինքն զդաւիթ՝ որ 'ի
հեռաստանէ դոչէր առ նա (առ. թագ. իդ. 14.) սոյն
պէս առաւել վնասես դու քեզ տագնապելով՝ 'ի փոր-
ձութիւնս քան թէ փորձութիւնքն:

Չորրորդ՝ ոչ ասէ ոչ երկեայց 'ի ստուերաց մահու
զոր յիշեաց, այլ 'ի չարէ. որով ցուցաննէ՝ թէ ազգուու-
թի փորձութեց է չարութինն, իբր զի որ ընկճի 'ի փոր-
ձութեանց կամ որ հաւանի նոցուն ազդի 'ի նոցունց, և
անկանի 'ի չարն. իսկ որ արհամարհէ՝ ոչ երկնչի 'ի չա-
րէ անտի, այլ անվտանգ անցաննէ: Տաց քեզ օրինակ
այսր երկիւղի և անկման. եթէ գերան ինչ եղեալ ի-
ցէ 'ի բարձունս, 'ի քայլելը 'ի վերայ նորա՝ սկսանիս
երկնչիլ և դողալ, և յերկիւղէ անտի անկանիս 'ի վայր.
եթէ այն գերան եղեալ կայր 'ի գետնի աներկիւղ
գնայիր 'ի վերայ նորա, և ոչ անկանիիր: Վթէ զփոր-
ձութիւնս բարձր ինչ համարիցիս՝ սկսանիս երկնչիլ և
նուածիլ, յորմէ պատահի քեզ անկանիլ. ապա եթէ
արհամարհէւացես իբրև անարգելի, և իբրև 'ի գետին
ընկեննի, 'ի կոխելը և 'ի գնալը 'ի վերայ նորա՝ ոչ
երկնչիս 'ի չարէ, և ոչ անկանիս 'ի նոյն: Փորձութիք
իբրև փոշի փշն: Եթէ սկսանիցիս տագնապիլ և
երկնչիլ չարչարիս. խփեամ միայն զաշսդ. այսինքն
այնպէս համարեամ, որպէս թէ ցիցեն և ոչ երեխն, և
մնաս անվնաս: Վ վերջոյ ասեմ, եթէ 'ի մէջ փորձու-
թեանց կամիցիս ելս գտանել, համարեամ թէ այն փոր-
ձութիք ոչ են քո, այլ այլոյ. արդ զինչ իրաստ տայիր
այլոց 'ի փորձութեան նոցա, զայն քեզ տուր:

Հինգերորդ՝ ոչ ասէ զի դու տէր յիս ես, այլ ընդ իս
ես. ուր ընդն ցուցաննէ զընկերելն այ և զձեռնտու լի-
նելն 'ի փորձութեան. ըստ որոյ կամի ասել, ոչ միայն
յիս է ած 'ի դոյացուցաննել և 'ի պահպանել, այլև

ընդ իս է՝ 'ի լինել ինձ օգնական և պաշտպան : Ուրուցանի ևս թէ քանի զուարձութք և միսիթարութք լցեալ լինի սիրտ այսպիսի մարդոյ՝ յորժամ խորհի՝ թէ ընդ իւր է՝ նա՝ որ ամի է կարօղ, ամի խնամօղ, ամի կառավար, որում և ոչ ինչ ընդդիմանալ կարէ :

և որ ուղղէ զամ՝ պահապան իւր է :

Օ այս է տեսանել և յարժամապէս հաղորդեալս որ խորհրդոյն . որք գիտելով՝ թէ ընդ իւրեանս է տէր 'ի ձեռն հաղորդութեան՝ մնան աներկիւղ՝ 'ի ստուերաց մահու, և քաջալերեալ յանձինս՝ գուեն առ փրկիւ իւրեանց ասելով . ոչ ևս երկեայց յու փրկիւ իմ և տէր, զի դու ընդ իս ես : | ամբրոնացին 'ի կատարեալն ընթեռնու զայս բան . * թէպէտե զնացի (ասէ) ես 'ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայ 'ի չարէն . զի դու տէր ընդ իս էիր || : | շւ մեկնէ այսպէս . * որպէս յորժամ նաւալավարն 'ի նաւահանգիստն հասանէ 'ի ծփանացն զերծեալ, ապա սքանչանայ ընդ նեղութիւնն, և զփրկողէն գոհանայ, այսպէս առնէ և սա . ես ասէ զստուեր մահուն նկարազրեցի յանձն, և առաջի կայր ինձ մեռանել ամբ իրօք . բայց ոչ երկեայ 'ի չարէն, այլ զերծայ 'ի մահուանէն . և այս ոչ յինէն՝ կամ իմանվ զօրութեամբ, այլ զի դու տէր ընդ իս էիր || : Օ մոռան ած ընթերցօղդ, թէ զինչ զործեիր՝ յորժամ ոչ էր ընդ քեզ քու . և զինչ յորժամ ընդ քեզ էր . 'ի հանաւելդ ծանիր ես, թէ այն է քո, և այս նորա : | մեկնիլ հրեշտակաց յաբրահամէ՝ ած մնաց ընդ նմա . * ուր մնացն օրհնեցաւ . ուր ոչ զնաց՝ կործանեցաւ || . այսինքն տեղին այն ուր մնաց ած՝ օրհնեցաւ . իսկ սողում՝ ուր ոչ զնաց՝ կործանեցաւ :

| յլաբանօրէն՝ այսու բանիւ նկարազրի երկրորդ խորհուրդն եկեղեցւոյ, այն է խորհուրդն զբոշմի . որով զօրացեալ հոգւոյն՝ ոչ ինչ երկնչի 'ի զնալ իւր 'ի մէջ ստուերաց մահու, այսինքն 'ի մէջ այնպիսի բանից կամ զործոց, որք յառնեն ընդդիմ հաւատոյ : | շւ սոքա կոչին ստուերք մահու վասն երկուց . մի՝ զի թէպէտե են խաւար և մահ, բայց երեխն ունիլ ինչ 'ի լուսոյ և 'ի կենաց, այսինքն 'ի ձևաբառութենէ . ոնց ստուերն ունի ինչ 'ի զգալի լուսոյ : | չրկորդ՝ զի զո-

լով մերձեցուցիցք 'ի գժոյա և 'ի մահն յաւիտենական , են իբրեւ ընդ հովանեսու կամ ընդ ստուերաւ յաւիտենական մահու . վասն այսորդիկ և ինքեանք կոչին ստուերք մահու՝ յորոց տկարամիտք միայն երկնչին , իսկ ողք զօրացեալն են աստուծով աներկիւղ միան և անսասան . զի յամի զած ունելով իւրեանց հովիւ և առաջնորդ՝ նորա ակնարիտութեանն անսան , և նովաւ անվտանգ ընթմնան . և յօ և իցէ ստուերա մահու զնա ձանաշելով պաշտպան և պահապան անձանց՝ նովին քաջալերեալ միմիթարին , և ընդ խնամով նորա սփոփին . զոր մանաւորի իմն նմանութք առաջի առնէ մարգարէն 'ի յաջորդ համարն և ասէ :

Է .  սուպ չոյ և գառաղան՝ նորա միմիթարիւցին զիւ :

Յուպն և գառաղանն թէպէտե զնոյն նշանակեն , բայց ըստ գործածութեան իւրեանց , և երբեմն ևս ըստ ձևոյն՝ զանազանին . իբր զի ցուպն զըր ձև և ունիցի՝ 'ի գործ ածի 'ի դիւրութիւն այնը , որ ունի 'ի ձեռին . որպէս՝ ձանապարհորդի՝ 'ի հեշտ ընթանալ . ծերոյ՝ յանվաստակ զնալ . կուրի՝ յանմղար շրջիւ . տկարի՝ 'ի հաստատուն կալ . հովուի զոյխարսն ուղիղ վարել , երբեմն ևս հարկանել . Խակ գառաղանն ի գործ ածի ոչ միայն 'ի դիւրութիւն անձին՝ ոնկ ցուպ , այլև 'ի պատժել զտահակս , 'ի վանել զթշնամիս , են . և դարձեալ կարգի՝ 'ի նշան իշխանութեան , նաև 'ի ցոյց փառաւորութեան :

Եշ ըստ այսմ նշանսկութեան՝ բառիւս շառապ՝ նշանակի աստ խնամատարութիւնն այ . և բառիւս գառաղան՝ նշանակի պաշտպանութիւն նորա : Խակ այս խնամատարութիւն՝ որ նմանութք ցայց առաջի զնի , և այս պաշտպանութիւն՝ որ նմանութեամբ գառաղանի 'ի մէջ թերի , կրկնակի մոտածի , կամ ասացից յերկուց կողմանց . մի՝ 'ի կողմանէ ընտրելոցն աստուծոյ . և մի ևս՝ 'ի կողմանէ զթոյն այ :

Դ կողմանէ ընտրելոցն այ , յայսմ մտածի այս նմանութի , զի որպէս ցպով ձանապարհորդք հեշտ ընթանան , ծերք՝ անվաստակ զնան , կոյքը՝ անմղար շրջին , տկարք՝ հաստատուն մնան են , սոյնպէս և ընտրեալքն

այ ինսամատարութեամբ նորայուղեարին զնանապարհ աստի կենաց՝ հեշտ ընթանան . ՚ի ծերամնալն յառաքինութիւնս անվաստակ զնան . ՚ի շփոթիլ կամ ՚ի մթագնիլ մտաց իւրեանց՝ անմնղար զըջն . և ՚ի տիկարանալն՝ հաստատուն մնան . Իսկ պաշտպանութե՛ր նորա՝ իբր գաւաղանաւ վարեն և վանեն զթշնամիլ իւրեանց , այսինքն զթ և իցէ փորձութիւնս , ևս և զգես . և նշան յաղթութեան ցուցանեն զնոյն ընդգեմ նոցա :

Ե կողմանէ զթոյն աստուծոյ մտածեալ՝ այս նմանութի հայի ՚ի գործո հովուի . իբր զի՞ ո՞նկ հովիւն յարածեն անդ զոշխարա՝ եթէ տեսցէ , թէ խոսորին ոմանք ՚ի հօտէ անտի , ցպով իւրով նշան տայ՝ որով և ազգ առնէ նոցա ուզգիլ . և կամ ՚ի գնալն յամբ՝ կամ ՚ի մնալն յետս՝ վարէ յառաջ զնալ . և երբեմն ևս հարկանէ նովաւ՝ վարվադ ընթանալ . Այնպէս և ած ՚ի ինաւմեն զընտրեալս իւր՝ եթէ տեսցէ զոք խոսորիլ՝ ՚ի հօտէ ընտրելոց , կամ՝ յամբ գնալ քան զոր արժանն է , և կամ յետս մնալ . ազգ առնէ նմա և զգաստացուցանէ խնամատարութե՛ր և այցելութե՛ր իւրով իբր ցպով . և այս՝ երբեմն լուսաւորութեամբ հոգւոյն . երբեմն ստգտանօք խղճի մտաց . երբեմն բանիւք քարոզչաց . երբեմն օրինակօք առաքինեաց . և երբեմն ևս հարկանելով զնա նեզութե՛ր կամ պատժով : Այս ևս՝ որպէս հովիւն զաւաղանաւ իւրով ՚ի բաց վանէ ՚ի հօտէն ըզմնասակարս , սոյնպէս և ած պաշտպանութե՛ր իւրով իբր գաւաղանաւ ՚ի բաց վանէ ՚ի ծառայից իւրոց ու զփորձութիւնս , այլ՝ զընասակարութիւնս փորձութե՛ց . ևս և զգայլս և զօձս , այսինքն զգես և զգիւական խորհուրդս . և զայս ամ առնելով միսիթարէ և քա-

ջալերէ զնոսա . սմին իրի ասէ :

Օսոսպ ոյ և գուաղան նոտա միհեաբեսցէն զէս : Այսինքն ցուպ իննամատարութեան և գաւաղան պաշտպանութե՛ր քոյ օգնելով ինձ՝ միսիթարեացէն զիս . այս է՝ լիցին ինձ պատճառ զգաստանալոյ և քաջալերելոյ . ցուպդ ՚ի զգաստութիւն , և գաւաղանդ ՚ի քաջալերութի , և երկրոբին ևս ՚ի միսիթարութիւն : Այս յիլաւի միսիթարութիւն մեծ . զի ովլէ , որ հաւաստեաւ գիտելով զնամիլ և զգաշտպանիլ իւր յայ իւրէ ՚ի բարի հոգւէ և իբրեւ ՚ի գթած հօրէ , ու միսիթարեացի :

Այս բան հայելով՝ ի ներքին նկարագրական միտո՛ փոքր մի այլազգ ևս մեկնի . ըստ որոյ ցուռն և դաւա զանն դնին իբրև նշանք ինչ օպահապանութեան նորա զնոսա՝ ի թշնա թեալս իւր , և պաշտպանութեան նորա զնոսա՝ ի թշնա մեաց և ՚ի փորձութեց . և երկոքին ևս իբրև նշան իշ խանութեն այ ՚ի վերայ ընտրելոց իւրոյ . զի որով հետև ասաց ՚ի վերոյ , թէպէտև գնացից ես ՚ի մէջ ծանր փորձութեանց և վշտաց՝ ոչ երկեայց ՚ի չարէ իմեր քէ , զի դու տէր ընդ իս գործ պաշտպանես զիս , ՚ի յարեն զինի՝ * ցուռ քոյ և գաւազան նորա միսիթարեւ . յեն զիս || . յայտ առնէ՝ թէ զայս զնէ իբրև պատճառ աներկիւղութեան իւրոյ , և իբրև նշան պաշտպանութեանն այ , որով զրեթէ ասէ . այն ոչ երկեայց , այլ մանաւանդ միսիթարեցայց . զի դու տէր քոյով խընահօքդ պահպանես զիս ՚ի թշնամեաց իսոց և ՚ի փորձութեանց :

Օ ի զորօրինակ ովնարք ՚ի տեսանեն զշովիւս իւր եանց յեցեալ՝ ՚ի վերայ ցազոյ մօտ առ իւրեանս , յապէհովի արածին , զի տեսանեն զպահապան իւրեանց արթոն ՚ի վերայ իւրեանց , սոյնակէս և ընտրեալքն այ տեսեալ զած առ իւրեանս իբրև հովիւ բարի՝ պահպանիւ անձանց , և պաշտպանիչ ՚ի թշնամեաց , և պատրաստիչ ևս պիտոյից (զորմէ խօսի ՚ի յաջորդ համարն .) միսիթարին , և ՚ի յանդորրու մնան :

Բ ստ երկորդական մեկնութեան ցազով նշանակի աստ թեթև պատիժն , զոր առաքէ ած իբրև հայր ՚ի վերայ ընտրելոց իւրոյ . իսկ գաւազանաւ՝ ծանր պատիժն , զոր տայ ած ոչ ՚ի բարկութենէ , այլ՝ ՚ի գթութենէ , որովք ընտրեալք նորա զգաստացեալ՝ յաւէտ միսիթարին , քան տրտմին . և յայս միտ առեալ կամի ասել . զինչ այն իցէ որ տրտմեցուսցէ կամ երկեցուսցէ զիս . ցուազդ արդեօք՝ թէ գաւազանդ . նորա ոչ եթէ տրտմեցուցանեն կամ երկեցուցանեն զիս , այլ միսիթարին և քաջալերին :

Խսկ ըստ լամբրոնացոյն՝ ցազով և գաւազանաւ նշանակին աստ փորձութիքն . զի * որպէս (ասէ) յորժամ աստահակ տեսանէ հայրն զորդին , հարկանէ գաւա զանաւն՝ զի յուղութիւն եկեսցէ , սոյնակէս և ած յորժամ տեսանէ զառաքինին յինքնահաճութիւն

,, ստահակեալ , 'ի փորձութիւն վտանգիցն մասնէ .
 ,, որպէս զի զգացեալ զտկարութիւն իւր՝ խոնարհու-
 ,, թք ուղղեսցի . եթէ որդին խմաստուն լինի՝ միի-
 ,, թարի հօրն խրատովն . . . այսպէս և առաքինին || :
 |շվնկացին ('ի գով . լուս . երես . 304 .) ցպով իմա-
 նայ աստ զզօրութիւն մարտնչելոց ընդ հակառակոր-
 դըս , և գաւազանաւ զիշտանութիւն ուղղելոց զհօտն .
 և 'ի վերուստ անտի առեալ զբանն՝ ասէ . * պակա-
 ,, սեալք (գտաք) և անբնակք 'ի գալար վայրէ 'ի որ
 ,, զրոց վարդապետութենէ . 'ի հանգստարար ջրոց
 ,, աննառնդք . 'ի փարախէ . 'ի ժողովարանն՝ արտաքոյ ,
 ,, և ոչ զյ հովիւ՝ որ կրկին գործեօքն հովուէ , ու-
 ,, նելով 'ի ձեռն ցուպ և գաւազան . ցպով ընդ գա-
 զանսն մարտնչիլ , և գաւազանաւ զիսաշինսն ուղ-
 ,, ղել || :

Դարյապէս՝ ցպով իմացեալ լինին աստ ստորասա-
 կան պատուիրանքն այ . իսկ գաւազանաւ՝ բացասա-
 կանքն . զի ըստ ասելոց մեր այժմ , որպէս ցուպն տայ
 զիւրութիւն յաջող ընթանալոյ , անվաստակ գնալոյ ,
 անմնլար շրջելոյ , ուղիղ վարելոյ , ևն . սոյնպէս առ-
 նեն մարդոյ 'ի հանապարհի առաքինութեան ստորասա-
 կան պատուիրանքն այ , ընդ որս և աւետարանսական
 խրատքն : |շւ որպէս գաւազանն՝ 'ի գործ ածի 'ի գա-
 նել և զթշնամին վանել , սոյնպէս և բացասական
 պատուիրանքն լինին արդարոց իրեւ գաւազան 'ի գա-
 նել զախսո՞ և 'ի վանել զթելաղրութիւնս սատանայի :
 'Դարձեալ ցպով նշանակի հաւատն՝ զոր 'ի ձեռին
 ունելով այսինքն 'ի գործ դնելով ուղիղ գնատք . իսկ
 գաւազանաւ յոյն , յոր յեցեալ՝ փութամք ժամա-
 նել 'ի փրկութիւն :

Դ յլաբանօրէն՝ գաւազանաւ և ցպով նշանակի խաշն
 քնի . որ 'ի սուրբ գիրս ըստ աւանդելոց 'ի շարականի 'ի
 գաւազան օրինակի . ըստ որում նովաւ իրը գաւազա-
 նաւ եհար քո՞ , և վանեաց զթշնամիս ազդի մարդկան
 զդես . և նովին ազատելով զմեզ 'ի դառն ծառայութէ
 մեղաց՝ միիթարեաց զտրտմութիւնս մեր :

Ոսվին ցպով միայնակ էանց յակոր նահապետ ընդ յոր-
 դանան , և եղիտ զյաջողութիւն և զազատութիւն . և
 գարձաւ երկոքումքք բանակօք 'ի հայրենիս իւր (ծնն .

Մ. 40:) Ոստ որում և տէրն մեր ցպով խաչի էանց
ընդյորդանան չարչարանաց , և ազատութիւն տուեալ
ազգի մարդկան , դարձաւ յերկինս երկու բանակօք
այօմնքն հրեշտակօք և մարդկամբք : Ո՞եզ ևս պարտ
է այսու ցպով խաչի անցանել ընդ զանազան փորձու-
թիս՝ առ ՚ի ժամանել ՚ի հայրենին մեր , և զայն պարտ
է մեզ ունել յամի միսիթար . ըստ որում ասէ , միսի-
թարեսցեն զիս : Կովառ վանեսցուք զթշնամիս հոգ-
ոց մերոց զգես . զի որպէս շունք ՚ի ցպոյ , սոյնապէս և
զեք ՚ի խաչէն փախչին : Պարտ է մեզ՝ ասէ մեծն խոս-
րով (՚ի մեկն . ժամագը .) * ապաւինելով ՚ի սուրբ նը-
շ շանն՝ աներկիւղ լինել ՚ի չարէն՝ ըստ մարդարէին .
ոչ երկեաց ՚ի չարէն՝ զի զու տէր ընդ իս ես . և ցուպ
քո և զաւազան (խաչի քո) նոքա միսիթարեսցեն
զիս ॥ : Վ. Յ. թէ յերեկի այսոր ցպոյ , կամ զաւա-
զանի յերկինս փառօք , քանի միսիթարութիւն և ՚ը-
պիսի ուրախութիւն լինելոց իցէ մեզ՝ որք ապաւինե-
ցաքս ՚ի նա , ո կարէ պատմել :

Եթէ յետ յայտ առնելոյ մարդարէին զինամենն այ
և զմիսիթարել նորա զլնտրեալս իւր ՚ի նեղութիւնն
նոցա , յայտ առնէ այժմ , թէ զինչ պատրաստեալ
է նոցա ան ՚ի մատակարարել ՚ի միսիթարութիւն նե-
ղութեանց նոցին . վասն որոյ ասէ :

¶ առբաստ արքէր առաջի էմ սեղան . ան յանդիման
նէղաց էնոց :

Ուրդարէն զլնթաց նմանաբանութեան իւրոյ փոխէ
յայլ՝ վասն առաւել ևս յայտնի ցուցանելոյ զինամեն
զթութեանն այ ՚ի վերայ ընտրելոց իւրոց . զի ոչ միայն
իրբե հովիւ բարի արածէ զնոսա , այլե իրբե բարէ-
կամ սիրելի պատրաստէ նոցա սեղան բարելից , որով
և սնուցանէ և միսիթարէ զնոսա :

Խակ պատրաստութիւն այսր սեղանոյ ըստ նկարա-
զրին ոչ այլ ինչ նշանակէ աստ , բայց եթէ զայն՝ զօր
նշանակէ խնամք հովութեան ընդհանրապէս ըստ
այլ և այլ նմանութեան . իբր զի՝ ըստ որում նմանի հռ
վուի , խնամք նորա այլաբանի ՚ի գարման դալար տեղ-
ոյ և յստակ ջրոյ ևն . իսկ ըստ որում նմանի բարէ-
կամի , խնամք նորա այլաբանի ՚ի գարման պատրաս-

տեալ սեղանոյ և անապակ գինուոյ , և :

Վ ա յ ի ը ն դ հ ա ն ր ա պ է ս . զ ի յ ա յ ս ի ն ա մ ն ը ա ր ե կ ա մ ո ւ թ ե ա ն մ ա ն ա ւ ո ր ա պ է ս մ տ ա ծ է ա վ ա լ ե ր ր ե ա կ ա ռ ա ւ ե լ ու թ է մ տ ա ծ ի ք ա ն ' ի ի ն ա մ ն հ ո վ ու ո ւ թ ե ա ն ' ի հ ա ս ա ր ա կ ա կ ա ն գ ա ր մ ա ն ս հ ա յ ի . ի ս կ ի ն ա մ ք բ ա ր ե կ ա մ ո ւ թ ե ա ն ' ի մ ա ն ա ւ ո ր գ ա ր մ ա ն ս : Ե ր կ ր ո ր դ՝ զ ի ի ն ա մ ք հ ո վ ու ի ն ս կ պ ա տ ր ա ս տ է զ ա ր օ ս ն , ա յ լ՝ ' ի պ ա տ ր ա ս տ ե ա ն ս տ ա ծ է զ ո չ խ ա ր ս ն ' ի վ ա ր դ գ ա ր ի և ' ի ջ ո ւ ը յ ս տ ա կ . ի ս կ ի ն ա մ ք բ ա ր ե կ ա մ ի ն ն ո ր ո ց պ ա տ ր ա ս տ է . ո ւ ս տ ի հ ո վ ու ա կ ա ն ի ն ա մ ք ն ա յ հ ա յ ի մ ի ա յ ն ' ի գ ա ր մ ա ն ե լ բ ա ր ւ ո ք . ի ս կ բ ա ր ե կ ա մ ա կ ա ն ի ն ր ն ա մ ք ն ո ր ա հ ա յ ի ո չ մ ի ա յ ն ' ի գ ա ր մ ա ն ե լ բ ա ր ւ ո ք , ա յ լ ե ա ս ա տ ո ւ թ է և ը ն տ ա ն ի ս ի ր ո վ : Ե ր կ ր ո ր դ՝ զ ի հ ո վ ու ա կ ա ն ի ն ա մ ք ն ո չ կ ա ր զ ի ը ս տ ի ն ք ե ա ն ' ի մ ի ի թ ա ր ո ւ թ ի ն , ա յ լ մ ի ա յ ն ' ի գ ա ր մ ա ն . և ե թ է ' ի մ ի ի թ ա ր ո ւ թ ի ւ ն և ս կ ա ր զ ե ս ց ի , ա յ ն մ տ ա ծ ի ը ս տ պ ա տ ա հ մ ա ն . ս մ ի ն ի ր ի յ ա ս ե ն ' ի վ ե ր ո յ ' տ է ր հ ո վ ու ե ս ց է զ ի ս , և ո ւ . զ մ ի ի թ ա ր ո ւ թ ի ւ ն ն զ կ ս ի ե դ ի ր ե կ ե ր կ ր ո ր զ ա կ ա ն ի ն չ : Ե ս կ բ ա ր ե կ ա մ ա կ ա ն ի ն ա մ ք ն կ ա ր զ ի և ս կ ե ' ի մ ի ի թ ա ր ո ւ թ ի և ' ի ս փ ո փ ա ն ս հ ո գ ե ո յ . վ ա ն ս ո ր ո յ և ա յ լ ա բ ա ն ի ' ի պ ա տ ր ա ս տ ո ւ թ ի ւ ն բ ա ր ե լ ի ց ս ե ղ ա ն ո յ , և յ ա յ ս մ ի տ ս ի ո ս ի ա ս տ մ ա ր զ ա ր է ն յ ա ս ե ն :

Պա ր ա ս տ ա ր ա բ է ր ա ռ ա շ է լ ի մ ս ե ղ ա ն : Ա յ ս ի ն ք ն ս պ ա տ ր ա ս տ է ց ե ր ա ռ ա ջ ի ի մ զ ի ն ա մ ն ք ո յ ի ր ե կ զ ա ն լ ի ա մ ե ն ա պ ա տ ի կ ա ռ ա տ ո ւ թ ա մ ք . կ ա մ թ է ց ո ւ ց ե ր և ց ո ւ ց ա ն ե ս ի ն ձ զ ա յ ն պ ի ս ի ի ն ա մ ն , յ ո ր ո ւ մ ի ր ե կ ե լ ի ց ս ե ղ ա ն ի գ տ ա ն ե մ զ ա մ հ ո գ ե ո ր կ ե ր ա կ ո ւ ր ս , զ ի ս ո ր տ ի կ ս ն ո ր հ ա ց և պ ա ր զ ե ա յ , զ պ ա ր ա ր տ ո ւ թ ի ւ ն ս ի մ ա ս տ ո ւ թ ե ա ն և ա ռ ա ք ի ն ո ւ թ է , և զ ր ն գ ե լ ի ս ք ա ջ ա լ ե ր ո ւ ե ս մ ի ի թ ա ր ո ւ թ ե ա ն . և ը ս տ լ ա մ բ ր ո ն ա ց ւ ո յ ն ' զ փ ո փ ի ա ն ս ո ն ձ ա յ ի ն ի ր ա տ ո ւ և վ ա ր զ ա պ ե տ ո ւ թ ե ա ն , ո ր ո վ ք ս ն ա ն ի և զ օ ր ա ն ա յ և զ մ ա յ լ ի հ ո գ ի ի մ : Ա յ լ ե թ է կ ա մ ի ս զ ի տ է լ հ ա ւ ա տ ա ց ե ա լ լ դ , թ է ք ա ն ի փ ա ռ ա ւ ո ր է ա յ ս ս ե ղ ա ն , հ ա յ ե ա ց ' ի պ ա տ ր ա ս տ օ լ ն . զ ի փ ա ռ ա ւ ո ր ո ւ թ ի ւ ն ս ե ղ ա ն ո յ ն չ ա փ ի ' ի փ ա ռ ա ւ ո ր ո ւ թ է ն է , և յ ա ռ ա տ ա մ ե ռ ո ն ո ւ թ է ն է պ ա տ ր ա ս տ ո լ ի ն . ա ր դ՝ ե թ է ա ծ է պ ա տ ր ա ս տ օ լ ա յ ս ր ս ե ղ ա ն ո յ , ա պ ա ա մ ե ն ա փ ա ռ ա ւ ո ր ի ն ն է և պ ա ն չ ե լ ի , և յ ի ր ա ւ ի ի ս կ . զ ի ա ծ ' ի ի ն ա մ ե ն զ ս ի ր ե լ ի ս ի ւ ր՝ ի ր ե կ զ ի ւ ր ո ր դ ի ս ի ւ ր ո ց փ ա ռ ա ս ց ժ ա ռ ա ն զ ս

տեսանէ զնոսա . վասն որոյ և 'ի ինսամն իւր իբրեւյա-
մենառատ պատրաստութեան սեղանոյ կերակրէ զնոսա .
և զամբ բարիս իւր՝ զորս մարթ է հաղորդել ումեք
յաստի կեանս , գնէ առաջի նոյա . բայց ոչ ստիպէ
'ի վայելել , ապա թէ ոչ ամենեքին լինեին հաւասար
'ի կատարելութեան . այլ թողու ազատութե նոյա ,
զի մի երևեսցի բանի տալ : Այս վասն այսորիկ ոչ ասաց
մարդարէն , պատրաստ արարեր ինձ սեղան , այլ՝

պատրաստ արարեր առաջի իմ սեղան :

Gamma պատրաստութիւն սեղանոյ , կամ որ նոյն է , այս
ինսամատարութիւն այ միսիթարութի մեծ ընծայէ մեզ
'ի տառապանս և 'ի փորձութիս , զորս կրեմք յախար-
հի աստ 'ի թշնամեաց փրկութեան մերոյ . զի թէպէտ
սոքին՝ այսինքն փորձութիք և տառապանք նոցին յա-
ձախութք և հանսապազրութութք իւրեանց ոչ թողուն
մեզ հանդցիլ , բայց պատրաստութք բերկրալից սե-
ղանոյ ինսամոցն այ մեծապէս միսիթարիմք , և դոյզն
ինչ համարիմք զսպառնալիս նեղացն մերոց . զի որպէս
նորա իւրեանց դժնեութք նեղեն զմեզ , սոյնպէս և
ան 'ի ձեռն ինսամոց իւրոց միսիթարէ զմեզ իբրև 'ի
սեղանի ընդդէմ նեղացն մերոց : Ամին իրի յաւելու
մարգարէն , և ասէ :

Gamma յանդիման նեղաց ինոց : **Gamma** սինքն է՝ պատրաստե-
ցեր ինձ զսեղան քոյ հանդէպ այնոցիկ , կամ ըստ եօ-
թանամանից՝ ընդդէմ այնոցիկ , որք պէսպէս փորձու-
թքք նեղեն և տառապեցուցանեն զիս : Այս այսու ոչ
կամի ցուցանել , թէ ան պատրաստեալ իցէ զայն սե-
ղան իբրև գործի զինելոյ , կամ պատերազմելոյ ընդ-
դէմ թշնամեաց մերոց . զի այս մեկնութիւն երկրոր-
դաբար և իբր ըստ յարմարութեան մտածի , այլ թէ՝
ան ընդդէմ մեծամեծ փորձութեանց , որովք նեղեն
զմեզ թշնամիք մեր , ցուցանէ մեզ զմեծամեծ ինսամն .
զի որպէս և գրեալ է 'ի գիրս առակաց . * պաշտպան
Հինի ինքն երկիւղաձաց իւրոց || . (առակ . շ. 5 .) և
տայ զմեծամեծ միսիթարութիւնս . իբր զի ըստ ասելոյ
մեր այժմ , որպէս թշնամիք մեր նեղեն զմեզ փորձու-
թքք , սոյնպէս և ան միսիթարէ և ուրախ առնէ զմեզ
ինսամովք իւրովք . ըստ այնմ զոր այլուր ասէ մարգա-
րէն . * ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ (զորս կրեմ

,, 'ի թշնամեաց իմոց) միսիթարութիւն քո ուրախ առ
,, ներ զանձն իմ ։ (սաղ . դգ . 17 .) յոր միտ և առա
քեալն ասէ . * լի եմ ուրախութիւն յամ նեղութիւն
,, մեր ։ (բ . կոր . է . 4 .)

Ա երածարար 'ի ձեռն սեղանոյ իմացեալ լինի երա-
նութիւնն այն յաւիտենական , զոր պատրաստեալ է
ած ընտրելոց իւրոց ակն յանդիման նեղաց նոցա .
յորում տայէ նոցա ուտել 'ի մանանայէն թագուցե-
լոյ , և ըմպել զուղիս փափկութեան , ըստ որում և
խոստացեալ իսկ է՝ յասելն . * և ես ուխտեմ ձեզ ,
,, որպէս և հայր իմ ուխտեաց ինձ զարբայութի . զի
,, ուտիցէք և ըմպեցէք 'ի սեղան իմ յարբայութեան
,, իմում ։ զուկ . իբ . 29 .

Ռարցապէս 'ի ձեռն սեղանոյ նշանակի նախ ոք զիրն ,
զոր իբրև սեղան պատրաստեալ է ած առաջի մեր ընդ-
դէմ նեղաց մերոց . յորում և գտանին ամ ազգը
հոգեռոր կերակրոց և ընկելեաց : Կանակի երկրորդ
առաքինական կեանք . ևս և կրօնաւորական վիճակ ,
յորում իբր 'ի սեղանի ճաշակեալ լինին ազգի ազգի
համեղութիւնք հոգւոյ :

Ա յլաբանօրէն , 'ի ձեռն այսր պատրաստութե սեղա-
նոյ նկարազրի ըորըորդ խորհուրդն եկեղեցւոյ . այս-
ինքն է հաղորդութիւնն , ևս և ամենասք պատրազն ,
որ մասցի ի վերայ սուրբ սեղանոյ . յորում և կատարի
խորհուրդ մարմոյ և արեանն քնի , որ և կոչի խոր-
հուրդ հաղորդութեան : (Օ այս սքանչելի և երկնային
սեղան պատրաստեաց տէրն մեր իբրև 'ի զրաւ սիրոց
իւրոյ , և յառհաւատշեայ յաւիտենական կենաց . 'ի
սնունդ հոգւոյ հաւատացելոց իւրոց և 'ի կազզու-
րումն օրսից նոցա . 'ի միսիթարութիւն վշտաց և տառա-
պանաց , և 'ի բժշկութիւն հոգեռոր հիւանդութեց . 'ի
հաշտութիւն գերելոց ընդ հօրն երկնաւորի , և 'ի զին-
ուրութիւն զօրաւոր ընդդէմ նեղաց մերոց :

Ա քանզի մարդիկ առ հասարակ իբր յերեկոյս և 'ի
խաւարի դեգերէն՝ վասն այսորիկ յերեկոյի ընթ-
րեաց սահմանեաց տէրն մեր զայս սեղան . և հրամայ-
եաց յիշատակել սովաւ զսէր իւր՝ և ճանաչել զըր
արար : Ըէ արժան մատչիլ և նստիլ յայս սեղան ա-
ռանց լուսոյ ճրագի , այսինքն առանց ճանաչելոյ լու-

սովլ հաւատոյ զգերազանցութիւն սորա : Ակ արժան
անմաքուր հոգւովլ ձաշակել՝ի սեղանոյ աստի , ի
կամիլը հաղորդիլ փորձեա նախ զանձն քո : Որ կամի
արկանել յանօթ զպատուական հիւթ՝ փորձէ զանօթն
իցէ արդեօք սուրբ և ամբողջ . եթէ աղտեղի իցէ կամ
ծակ և կամ ձեղքեալ, ոչ արկանէ ինչ՝ի նոյն : Ակ
արժան առանց պատրաստութեան անխտիր հաղորդիլ:
Ան մարմնաւոր կերակրոյ բազում ժամն պատրաստին
մարդիկ . քանի ևս վասն այսր գերազանց հոգւոր
կերակրոյ : Իւան պասերական հինգ աւուրբք յա-
ռաջ առեալ լիներ՝ի տաներորդ աւուր ամսոյն . ե-
թէ առ այն պահանջիւր հինգօրեայ պատրաստութիւն
(ելից . ժը . 3.) առ այս չիցէ արժան գոնէ ժամն
ինչ պատրաստիլ, և այն՝ քննութը տանըբանեան օ-
րինաց . ըստ որումց ցուցանէ տաններորդն ամսոյն :
Ակ արժան առանց խորովման՝ այսինքն առանց սիրոյ
ուտել՝ի կենդանարար մարմնոյ այսր անարատ գա-
ռին . որպէս հրամայեցաւ՝ի տեառնէ . (ելից ժը . 9.)
Հում ուտէ՝ որ ըսնի զյօժարութիւն, կամ որ իբր՝ի
սովորութէ ուտէ . պախ ուտէ՝ որ՝ի սննուիս զբաղեալ
գոլով ուտէ . խորովեալ ուտէ՝ որ վառեալ՝ի սէր
խորովեցելոյ՝ի խացին՝ ուտէ . քանզի և ինքն յա-
րե հուր սիրով ընծայի՝ի պատարագին, և սիրու նո-
րա իբրեւ զբոց վառի առ մեզ, և զայ վառել զմեզ .
որպէս ցուցաւ սրբուհւոյ ումեմն, այն է կատարինէ
սենացին՝ որ տեսանէր զբութիրեւ զբոց՝ի ձեռս քահա-
նային՝ի ժամ պատարագի :

Ակ արժան առանց պահպանութէ սրտի, այսինքն ա-
ռանց հոգւորական պահոց համարձակիլ յայս խոր-
հուրդ . առ որոյ նշանակ ծուր բերանով մատչիմք
յընդունիլ . որպէս և հրամայի յեկեղեցւոյ ըստ առա-
քելական աւանդութէ : Խոկ թէ առաքեալքն յերեկոյի
ընթեաց յետ ուտելոյ զգաւն զատկական ձաշակե-
ցին զմարմին տեառն՝ այդցայլ խորհուրդ հայի, ըստ ո-
րում զառն օրինակ էր . արդ օրինակն կանխիւ քան զօ-
րինակեալն, զոր և առաջի առնէ բարսեղ վարդապետ
(իմ մեկն . մարկ . զլ . ժկ .) ուր նախ հարցանէ, ա-
սելով . * Էր վասն քոյ յետ զգաւն ուտելոյ ապա հա-
զորդեաց զաշակերտսն մարմնոյ և արեան իւրոյ .

., իսկ մեք նախ քան զկերակուրն հաղորդիմք . և թէ .
., ոք յայսոսիկ սիսալց՝ պատուհաս կը եսցէ . պատաս-
խանէ այսմ հարցման և ասէ . * վասն զի այն առա-
., ջինն օրինակ էր՝ զոր կերան (զգառն ,) և երկրորդն
., ջնարտութիւն . և պարտ էր նախ օրինակին կատա-
րիւ (և աւարտիլ) և սպա զալ հասանել ջնար-
տութեանն || :

Չէ արժան կարի յապաղել յընդունելութիւն այսր
խորհրդոյ . զի մի 'ի կամիլ նորա գալ առ մեզ , և 'ի
հրաժարիլ մեր՝ ասասցէ ցմեզ . հիւր եկի առ ձեզ .
և ոչ ընկալայք զիս : Կամեցաւ տէն մեր այսու խոր-
հըրդով միանալ ընդ մեզ իբրև բարեկամ և սիրելի .
արդ չէ արժան յապաղել , և կամ յամին միանգամ
միայն ընդունիլ 'ի տուն զիրելի բարեկամ : Տէրն
մեր կամեցաւ այսու խորհրդով հաղորդս առնել զմեզ
իւրումն սրբութեան և կատարելութե . սպա պարտ է
մեզ յանախ մերձենալով առ նա՝ առաւելութը . հա-
ղորդիլ սրբութեան նորա . զի թէ ունելով զմարմին 'ի
հնոյն աղամայ՝ հաղորդ դտանիմք անիծից նորա , ա-
պա և ճաշակելով զմարմին նորոյս աղամայ՝ հաղոր-
դիցիմք սրբութեան և անմեղութե նորա . որպէս զրէ
և բարսեղ վարդապետ ('ի մեկն . մարկ . զլ . ժդ .)
ասելով . * ամքն հաղորդիմք նորայն սրբութե մարմ
նովն և արեանքն . որպէս աղամայ պարտեացն կցորդիմք
վասն զնորին մարմին ունելոյն || :

Եթէ իբրև կարօտ խոնարհութը մերձեսցիս 'ի նոյն՝
անտարակիցս հաղորդիս սրբութեան նր , և յագիս . զի
որպէս որ ախորդմամբ ըմկէ զգեղն հաղորդի զօրութէ
նորա , նոյնապէս և որ իբրև ծարաւի ընդունի զայս խոր-
հուրդ առաւելութը իմն հաղորդի զօրութեան նորա :
Օքոյշ լըր ևս՝ զի մի յետ ընդունելոյ անիրաւիցիս
'ի նա : Վէաղակը պահեն զհաւատարմութիւն ընդ
այնմայ յորոյ սեղանի ուտեն . պահեաւ և դու զհաւա-
տարմութիւն ընդ յոթ յետ վայելելոյ 'ի սեղանի նր :
Եւ յայնժամ կարես ասել . * պատրաստ արարեր ա-
ռաջի իմ սեղան , ակն յանդիսան նեղաց իմոց || :

Gamma խորհուրդ սուրբ սեղանոյ 'ի կատարին մասձեալ
ասի պատարագ , զոր իբրև հաշտարար ընծայ մատու-
ցանեմք այ . ապաքէն մարդիկ ընծայիւք հաշտեցու-

յանեն զերեսս միմեանց , որպէս յակոր արար ընդ
եղբայր իւր . (ծնն . լք . 20 :) և արփուեայ ընդ զա-
ւիթ . (ա . թագ . ին . 23 :) ըստ սմին և մեք մատու-
ցանելով զատարագս զայս՝ հաշտեցուցանեմք զե-
րեսս աստուծոյ հօր , ասելով առ նա . * հայեաց յե-
րեսս օձելոյ քո || . (սաղ . ձկ . 10 :) ՚ աւախիթ առ
՚ի հաշտութիւն ածել զերեսս այ , և առ ՚ի զիջուցա-
նել զկոտորումն ժանտամահու շինեաց սեղան , և
մատոյց ողջակէզս յեզանց , որով և զիջաւ ած (բ .
թագ . ին . 23 :) որչափ ևս զիջանիցի ՚ի մատուցա-
նել մեր առ նա զամենապարարտ ողջակէզս զայս . ոչ
զի մեք մատուցանեմք , այլ զի որ մատուցանի մեծ է ,
նոյնպէս և որ մատուցանէ , զի թէպէտե քահանայն
մատուցանէ , բայց հայրն երկնաւոր ուղղակի ոչ հայի
յանձն քահանային , այլ յանձն որդւոյ իւրոյ զոր
յանդիման առնէ քահանայն , և նովաւ ընդունի զայն
ամենասուրբ ընծայումն :

|| Մէնջ զայս մի ինչ իննզրէ՝ զի մատուցուք բոլո-
րով սրտիւ և մաքրեալ հոգւով : || իմէնն ծերունին
ընկալեալ ոչ թէ լոկ ՚ի ձեռս , այլ ՚ի գիրկս իւր զբա՝
մատոյց հօր . սոյնպէս և մեք պարտիմք զրկով այս-
ինքն լի սրտիւ մատուցանել նմա զքրիստոս . և այն
որպէս ասացի՝ մաքուր հոգւով , այսինքն հեռի առ-
նելով ՚ի մէնջ զարիս և մաքրելով զաղտեղութիւնս
մեղաց :

|| Ելքիսեղեկ քահանայ յետ վանելոյ թշնամեացն
մատոյց պատարագ՝ հաց և գինի . (ծնն . մկ . 18 :)
դու ևս ՚ի մատուցանելոյ այ զայս պատարագ ընդ տե-
սակաւ հայի և զինւոյ՝ միտ զիր վանելոյ թշնամեացդ
այսինքն մերժելոյ մեղացդ և ախտից : || Հնումն ՚ի
մատուցանել քահանայից զատարագս՝ մաքրէին զին-
քեանս : || թէ ՚ի հնումն այսպէս , քանի ևս ՚ի նո-
րումն . զի այն էր սոսուեր նորոյս :

|| Քժան է աստ զմուաւ ածել զայս ևս , զի ՚ի հին օրէնս
զանազան տեսակք պատարագաց մատչէին վասն անբա-
ւականութէն ՚ի միում սեղանի . խոկ ՚ի նորումն յան-
համար սեղանս մի միայն , որ անսահմանաբար գերա-
զանցէ զնոքօք , և պարագրէ զնոսա իբրև զատուերս .
նա զի այն պատարագք յայս հայելով և սմին օրինակ

լինելով հաճայանային այ . մանաւանդ համապազօք ըեայ պատարագն այն՝ որ մատուցանիւր յառաւօտու և յերեկոյի յանարաստ գառանց հանդերձ նաշչով և զինեաւ (Ելից . իթ . 38 .) ։ Այս գառն նախ լուացեալ լիներ յաւազան զոհից , և ածիւր 'ի նեղքս . ուր 'ի վերայ սեղանոյ ողջակիզաց զենեալ լիներ իբրև զոհ խաղաղական , և հարեալ 'ի փայտեղին շամփուր խորովիւր հրով , և արիւն նորին կէս մի 'ի վերայ սեղանոյն և կէս մի 'ի վերայ ժողովրդեան սրոկիւր : Ոյն պէս և անմեղ գառն յ՛ս նախ լուացաւ արեամբ քըստանց 'ի պարտիզի , և հարեալ 'ի փայտ խաչի խորովցաւ չարչարանօք , և արիւն նորա սրակեցաւ ոչ միայն 'ի սեղան խաչին , այլև 'ի վերայ ժողովրդեան՝ այսինքն 'ի վերայ ազդի մարդկան : Եւ զի գառն այն հանապազօք մատուցանիւր հանդերձ նաշչով և զինեաւ , նշանակէր զանարիւն պատարագն քո՞ի , որ միշտ և հանապազ կայ 'ի հաղորդութել ընդ տեսակաւ հայի և զինուոյ : Իսկ երկու լինել այնը զառին նշանակէ երկու եղանակաւ պատարագին քո՞ի . մի 'ի վերայ խաչին հեղմամբ արեան , և մի ևս 'ի վերայ սեղանոյ նուիրմամբ առանց հեղման արեան . յորոյ օրինակ արբահամ մատոյց զինոյն արեամբ , և զիսահակ առանց արեան . (Ճնն . իթ . 10-13 :)

Օ այս պատրաստութիւն արար տէրն մեր 'ի սիրոյ և 'ի բարերար կամաց . և մեք ևս զոյն մատուցանեմբ նմա 'ի չնորհակալութիւն և 'ի գոհութիւն սիրոյ և բարերարութեանց նորին , քան զոր մեծագոյն ընծայ չնորհակալութեան ոչ կարէաք նուիրել նմա : Վայ ընծայ միշտ հաճոյ է այ . բայց 'ի մեր կողմանէ ևս յայնժամ հաճոյ նուիրի նմա , յորժամ նաև մեք սրբութեամբ սրտի նուիրեմբ նմա զմեզ . ևս և յորժամ 'ի նուիրելն կամ 'ի տեսանեն զապատարագ ուշ դնեմբ խորհրդոյն , և զգաստ մոտօք կամք առաջի : « Քանիք կան որը ունելով զսիրտ պիղջ՝ և զաղտեղի մտածութիւն » յանդիման լինին սրբոյ պատարագին , և իբր ակամայ տեսանեն զայն . մարմնով միայն կան անդ , և հոգւով այլուր ցնդին , և 'ի մնոտի խորհուրդս յածին . վասն որոյ և ոչ կարեն ասել սոքա * պատրաստ արարեր առաջի իմ սեղան : (Ուշոփիլոս պատրիարք կոս-

տանդնուպլօսոյ ձիամեր զողով՝ ի պատարագելն անդ
իրքեւ լրւաւ թէ ձի իւր ծնեալէ՝ իթող զպատարագն
և զնաց տեսանել զծնեալն . ըստ սմին կամ ոմանք,
որք՝ ի տեսանելն զպատարագ՝ թողուն հոգւով և
մոտք զպատարագն , և խորհին զծիս և զջորիս , այս-
ինքն զնոտիս և զանարգս . երբեմն մարմնով ևս թո-
ղուն , և զնան տեսանել կամ զործել զայլ ինչ :
Այսպիսիքս ոչ ինչ օգտին , այլ մանաւանդ լրանին
յայլ , և մերժին յօրհնութենէ սեղանոյն և խորհըր-
դոյն . իսկ որք արժանապէս մատչին՝ ի տեսութիւն պա-
տարագի՝ արժանանան չնորհաց նորա , և լի սրտիւ ա-
ռեն . * պատրաստ առարեր առաջի իմ սեղանի : Այ-
րանելի են այսպիսիքս , զի լիանան չնորհօք , և ար-
բենան սկզով , զորմէ խօսի մարգարէն՝ ի յաջորդ հա-
մարն , և ասէ :

Է . () ծէր է-շանդէւն իմ . բաժակ չոյ որոշէս անապաէ
աբբեյց զէս :

Ի կոչունս մեծամեծաց՝ և կամ՝ ի փառաւոր սեղանս
և ի խնջոյս , զոր առնելին՝ ի պաղեստին և յեղիպտոս
և յայլ կողմանս ներքինս , սովորութիւն էր յառաջին
ժամանակս , զի կոչնատէլն և կամ այլոք՝ անուշահոտ
իւղով օծանելը զգլուխս կոչնականաց , մանաւանդ այ-
նոցիկ՝ որք երևելիք էին՝ ի մէջ նոցա : Օ այս տեսա-
նեմք արարեալ և առ տէրն մեր՝ ի մարիամնայ մազգա-
ղենացոյն . որպէս պատմի (զուկ . Է . 46 : մատ . իդ .
7 : և յովէ . ժամ . 2 :) Այսն այս սովորութիւն պահի
մինչև ցայժմ ուրեք ուրեք՝ ի ջերմ գաւառս . յորս
իւղով վարդից կամ նարզոսից , և կամ նաև իւղով կի-
նամնաց և այլոց իրաց օծանեն՝ ի սեղանի զգլուխս ,
և կամ զայլ մասունս մարմնոյ . բազում անգամ և
արտաքոյ սեղանոյ ևս : Աւ քանզի մարգարէն՝ ի
նամանաբանութիւնս իւր՝ հասարակօրէն հայի՝ ի սովո-
րութիւնս պաղեստինու , ըստ այնմ սովորութեան կար-
գէ զայս բան . վասն որոյ յետ ասելոյ՝ * պատրաստ
արարեր առաջի իմ սեղանն : կամելով զկատարելու-
թիւն այսր սեղանոյ յայտ առնել՝ յիշէ և զօծումն իւ-
ղոյն ասելով :

() ծէր է-շանդէւն իմ : Կւղով իմացեալ լինի աստ

Հնորհք հոգւոյն սեյ . զի զոր 'ի վերոյ ջաւը անուանեաց , աստ կամելով զազնուութիւն նորին ցուցանել՝ իւղ կոյէ : Որով կամի յայտ առնել , թէ 'ի խնամնն այ՝ զոր 'ի նախընթաց համարն սեղանոյ նմանեցց , գերագոյնն է Հնորհքն : Առվառ ասէ իրբե իւղով օծեր զզլուխ իմ , այսինքն զհոգի իմ . զի հոգին գոլով գերագոյն մասն մարդոյ՝ խելամտութեան ձեռվ զլուխ կոշի , որպէս ասացաք այլուր :

Խակ այս նմանութիւն , որով Հնորհքն համեմատի իւղյ , 'ի բազում իրս նշմորի : 'Կախ՝ զի որպէս իւղն կակացուցաննէ զմարմինն . յոյր սակա իսկ ըստ վերագոյնդ զրելոյ 'ի Ձերմ գաւառս օծանեն մարդիկ ըզմարմինս իւրեանց իւղով , սոյնափէս և Հնորհքն կակացուցանէ զիստութիւն սրտից մարդկան :

Եցրկորդ՝ որպէս յօծանիլ իրկը իւղով փայլի , սոյնափէս և յօծանիլ հոգւոյն Հնորհք՝ մաքրի , և 'ի ներքս փայլի :

Երրորդ՝ որպէս իւղն խառնի ընդ մոխրոյ օձառային խոտոց որով և կազմի օձառն՝ (այսինքն սասրնն ,) և զաղոս հանգերձից և ձեռաց Ծնծէ , սոյնափէս և Հնորհքն իրը իւղ՝ խառնեալ ընդ խոնարհութեան՝ որ 'ի մոխրի այլաբանի՝ Ծնծէ զաղոս հոգւոյ՝ և զձեռաց , այսինքն զզործոց :

Չորրորդ՝ որպէս իւղն վառեալ 'ի լաստերի՝ լոյս տայ աշաց , սոյնափէս և Հնորհքն վառեալ 'ի հոգին՝ լոյս տայ մոտաց և այլոց կարողութեանց հոգւոյն , և ուսուցանէ զոր արժանն է . ըստ այնմ . * Ըէ ինչ պիտոյ՝ „ թէ ոք զձեղ ուսուցէ . այլ որպէս զի նորա օծութին „ ուսուցանիցէ զձեղ վասն ամի , և ճշմարիտ է , և չլսուտ || . (ա . յովհ . ք . 27 :)

Հմնգերորդ՝ որպէս իւղն արկեալ 'ի ջուր՝ ոչ զանգի ընդ նմա , այլ՝ 'ի վեր ելանէ , սոյնափէս և Հնորհքն արկեալ 'ի հոգին՝ եթէ գտցէ անդ ջուր , այսինքն խոռվութիւն ինչ որ ուրկը 'ի սուրբ գիրս 'ի ջուր այլաբանի , ոչ միաբանի ընդ նմա , այլ՝ 'ի վեր ելանէ . զի թէպէտև մնայ՝ և ոչ լքանէ , բայց լքանէլ փութայ՝ եթէ ոչ բարձցի այն շփութութի , և կամ թէ ինքնին

բարձցէ զայն :

|| Եցերորդ՝ որպէս յօծանիլ իւղով անուաց կառայն ,

կամ այլաց իրաց , անկումնչ հոլովին , սոյնպէս և յօ-
ծանիլ հոգւոյն շնորհօք՝ անտրտունջ շրջի ՚ի նեղու-
թիւնս . իսկ եթէ շունիցի զօծումն շնորհաց , սկսա-
նի տրտնջել , և իբրև անիւ սայլից առանց օժման
Ճռնչել :

| Հօթներորդ՝ որպէս իւղով օծանին տաճարք և սրբա-
զան կահը , որով և նուիրին այ , սոյնպէս և շնորհօք
օծանի հոգին տաճար այ , և նուիրի նմա : Դարձեալ
որպէս ՚ի պղծիլ սեղանոյ կամ տաճարի՝ սրբի վերստին
մաքրական օծմամբ իւղոյ , սոյնպէս ՚ի պղծիլ հոգ-
ւոյն սրբի շնորհօք : Յայս սակս առաջին ժողովն կա-
տանդնուալուսոյ յիշէ ՚ի կանոնսն թէ զդարձեալսն ՚ի
հերձուածոց պարտ է մաքրական օծմամբ մեռնել :
Ութերորդ՝ որպէս իւղով օծանին մարդիկ թագաւոր
և քահանայ , սոյնպէս և շնորհօք օծանի հոգին ժա-
ռանդ թագաւորութեան երկնից , ևս և թագաւոր ՚ի
վերայ ախտից , և քահանայ խորհրդաւոր՝ մատուցա-
նել զանձն պատարագ այ :

| Խններորդ՝ որպէս իւղք օծութեան անոյշ բուրեն ,
սոյնպէս և շնորհք ՚ի հոգիս սբք . յորոյ օրինակ զրի .
(յուլ . ժք . 3 .) թէ * տունն լի եղել ՚ի հոտոյ իւ-
ղոյն || :

| Կան և այլ ինչ ինչ համեմատութիւնք ՚ի մէջ իւղոյ և
շնորհաց , որոց վասն իւղոյ նմանեցուցանէ զնա մար-
դարէն . բայց յաւետ ըստ այնմ համեմատութեան՝ որ
(որպէս ասացաք այժմ) վարէին նախնիք ՚ի պատրաս-
տութեան սեղանոյ . յոր համեմատութի հայեցեալեդ
մարդարէս զայս բան :

| Ամբրոնացին իւղով իմանայ աստ ոչ միայն զնորհս ,
այլև զդիսութիւնն այ՝ որով ասէ օծանի զլուխ հոգ-
ւոյն այսինքն միտք , և զմայլեալ նովաւ՝ արհամար-
հէ զփափկութիւն կենցաղոյս :

| Այլաբանօրէն՝ տուլաւ նկարազրին հինգերորդ և վեց-
երորդ խորհուրդնե եկեղեցոյ . այսինքն է խոր-
հուրդն կարգի քահանայութեան , և խորհուրդն վեր-
ջին օծման : Օ ի խորհուրդն քահանայութեան յայտ է
թէ կատարի նախ օծմամբ գլխոյ ՚ի ձական իւղով
մեռնի . և յետոյ օծմամբ ձեռաց : Այսպէս և խոր-
հուրդն վերջին օծման կատարի նախ օծմամբ գլխոյ ՚ի

տեսանելիս , 'ի լսելիս , 'ի հոտոտելիս , և 'ի ձաշակելիս՝ իւղով օրհնութեան . և յետոյ օծմամբ ձեռաց և ոտից : Ուստի և եկեղեցին՝ 'ի մատուկարարութիւնս այսոցիկ խորհրդացա երգէ զայս սաղման :

Կարեկացին՝ երեխ թէ՝ 'ի խորհուրդ զրոշմին վերածէ զայս օծումն , որպէս և զմէթն պարարտութեան յիշատակեալ՝ 'ի մարգարէին ('ի սաղ . զայ . 11 .) զի 'ի ձառ մեռոնին ('ի բանն զդէ .) զրգէ այսպէս . * Եւ զինչ արդեօք մարգարէին հոգեւոր ըղձականութիւնն ամենատենչ բաղդանացն իցէ իմանալ . որոյ ծերութիւնն առակի 'ի ձեթ պարարտութե . և կմբ օծանեն իւղով զզվասոյն վերամբարձութիւն , եթէ ոչ զշին խարդախութիւն սոյն սաստկութեան 'ի մահ կրծանմանն կենագործեալ դեղովս այս կենաց պատսպարեալ օժանդակեսցես || : Վարդ յետ յիշելոյ մարգարէին զօծումն իւղոյն , դառնայ հայիլ՝ 'ի պատրաստութիւն սեղանոյն՝ զոր եղ . և զի առ կատարելութիւն այնր պահանջի և զինի անապակ , զնոյն ևս յիշատակէ , և ասէ :

Ասծակ ոյ որպէս անապակ աբբեցոյց զիս : Ի՞ասծակաւ իմացեալ լինի աստ ոչ ամսօթն՝ որով բաժանի զինին , այլ նոյն ինքնին որ պարունակի 'ի բաժան . զի յայտ է թէ անսօթն ոչ արբեցուցանէ զոր , այլ որ յանսօթն է . և զի բաժակն է պարունակօղ՝ և զինին պարունակեալ , ըստ ոճոյ ձարտասանութեան՝ զարունակօղն , այսինքն զբաժակն՝ զնէ փոխանակ պարունակելոյն , այսինքն փոխանակ զինոյն : Խակ զինեաւ իմացեալ լինի աստ սէրն այ , որ անբաժան է 'ի շնորհաց . և քանզի զշնորհմն յիշեաց բառիւս է-Ն , յիշէ և աստ զակըն բառիւս բաժակ փոխանակ յիշելոյ բառիւս գինէ :

Եւ սորա պատճառն երեխ լինել այս . զի որովշետեսէրն այ անձառելի իմն է մանաւանդ յորժամ առաւելեալ՝ 'ի հոգին՝ արբեցուցանէ և զմայլեցուցանէ զնա , գեղեցիկ ևս լիներ յիշել զայն բառիւս բաժակ : Քան բառիւս գինէ , առ 'ի ցուցանել զանձառելի լինել սիրոյն այ , որպէս թէ ծածկեալ իցէ 'ի բաժակ : Վարդ այս սէր ասէ որպէս անապակ զինի արբեցոյց զիս :

Վնապակ ասի այն զինի , որ անխառն է և ազնիւ , ազդու և իբր անեղծանելի . կամ ասացից՝ և անաւերելի , սոյնպիսի է և սէրն այ . անխառն ամենայնի , զի ոչ խառնի ընդ նա ուր մարմնոյ և արեան , կամ սէր այլոյ իրիք . զի * ոչ խնդրէ զիւր || , և ոչ զայլոյ . (ա . կոր . ժկ . 5 :) Վզնիւ 'ի մէջ ամենայն գերբնական առաքինութեանց . զի ասէ պօղոս , [թէ յամենայն առաքինութիւնս սա է մեծ . * բայց արդ (ասէ) մնան Հաւատք , յոյս , սէր , սոքա երեքեան . և մեծ քան զամենայն . մինչ զի ընդդէմ մահու ևս զինի , և յաղթէ ամենայնի , * վասն զի հզօր է (ասէ) իրու վմահ սէր . . . ջուրք բազում ոչ կարեն շիջուցանել ըդ , սէր || . (երդ . ը . 7 :) Վնեղծանելի կամ անաւերելի , զի յաւիտեան մնայ . ըստ այնմ զոր ասէ պօղոս , եթէ մարդարեւութիւնք են՝ խափանեսցին . եթէ լեզուք՝ լուսցեն . եթէ զիտութիւն՝ խափանեսցի , իսկ *

* սէր ոչ երբէք անկանի || . (ա . կոր . ժկ . 8 :)

Վրդ՝ զորօինակ որ ըմնէ յանապակ զինւոյ , զուարձանայ . սոյնպէս և որ հաղորդեալ իւղոյ աստուածային չնորհաց՝ ըմնէ 'ի զինւոյ նորա , այսինքն 'ի սիրոյ , զրւարձանայ 'ի հօգի իւր , և ցանկայ յառաւելն բերիլ . մանաւանդ թէ 'ի բովանդակն վայելէլ , և որպէս թէ 'ի տուն սիրոյ մտանել . ըստ որում և ցանկայր հարմն հոգեոր՝ յասելն . * Ուժեծէք զիս 'ի տուն զինւոյ . կարգեցէք 'ի վերայ իմ զսէր || . (երդ . ը . 4 :) Եւ զի այս սէր տուեալ լինի 'ի ձեռն իւղոյ չնորհաց , ըդսոյն ևս իննդրէ հարմն հոգեոր . վասն որոյ և անսիրջապէս յարէ 'ի նոյն , և ասէ . * հաստատեցէք զիս իւղովք || : Որում և պատասխանէ փեսայն . * ար , բուցից քեզ 'ի զինւոյ իւղագործաց || . (երդ . ը . 2 :) Ուր իւղագործօք իմացեալ լինին խորհուրդք եկեղեցւոյ արտադրիցք իւղոյ՝ այսինքն չնորհաց , յորմէ և յորում է զինի անապակ , այսինքն սէրն այ :

Խորհրդաբար՝ բանք այսր համարոյ կարեն ասիլ և 'ի զիսմաց քնի . ըստ որում զլուխ նորա , այսինքն հոգի նորա օծաւ իւղով հոգւոյն սրբոյ . [թող զօծումն զայն , որով մարդկութիւն նորա օծաւ յանձութենէ : Ոյնպէս և բաժակ անապակ սիրոյ հօրն երկնաւորի

արբեցոյց զնա , մերկ թողեալ՚ի վերայ խաչին . յրըց
օրինակ արբեալ նոյի գինեաւ՝ մերկ երևեցաւ (ծնն .
թ . 21 .)

Այլաբանօրէն , այսու բաժակաւ կամ գինեաւ նկա-
րազրի ամենասրբ խորհուրդ արեանն քսի ընդ տեսա-
կաւ զինւոյ , որ յիրաւի առաւել քան զանապակ զի-
նի արբեցուցանէ և զմայլեցուցանէ զհոգի մարդոյ ,
և անհասաւելի իմն ուրախութեալ լցուցանէ զնա :

Ասն անապակ կոչելոյ մարգարէին զբաժակն՝ թը-
ւեցաւ ունաց ասել , թէ չէ պարտ ջուր խառնել՚ի
բաժակ խորհրդոյն . բայց հրաման ընդհանուր եկե-
զեցւոյ ոչ համարի այգովէս , այլ թէ արժան է սակաւ
մի ջուր խառնել՚ի նոյն . ըստ որում առնեն ամենայն
եկեղեցիք քրիստոնէից ընդ ամենայն տեղիս . միայն
՚ի հայս ոչ հաստատեցաւ այս սովորութիւն , մինչեւ՝ ի
ժամանակ իշխանութեան կիւլիկեցւոց : Եւ յայնու-
հետէ՝ ՚ի տեղիս տեղիս ընկալան զոյն . որպէս տե-
սանի ՚ի բանից բարսղի վարդապետի , որ (՚ի մեկն .
մարկ . գլ . ժկ .) զրէ այսպէս . * պարտ է մեզ
ոյ , կալ ՚ի քն , և քսի առ մեզ . յաղազս այսորիկ զինի
ոչ ելուր խառնի ՚ի սկզն , ըստ ասելոյն յովհաննու ,
թէ ել արիւն և ջուր ՚ի կողիցն . ջուր ժողովուրդն
է . ջուր միայն ըստ ինքեան , և զինի միայն ըստ
ինքեան ոչ է պարտ մատուցանել . որպէս ոչ է ար-
ոյ , ժան քահանայի զհայ ցորենայ առանց շաղելոյ
յ ջրով մատուցանել այլ : Յ ուր միայն ասէ . զի կային
ումանք ողը ոչ հաւասարով թէ քն իցէ ած , սոսկ
ջուր ՚ի կիր առնուին ՚ի պատարազի . ըստ որում
զրէ ծործորեցին (՚ի մեկն . մատ . գլ . իկ .) թէ * որիւ
ոնիանուք փոխանակ զինւոյ ջրով պատարազեն .
ոյ քանզի ասէին զյիստու մարդ սոսկի : Օ որոց չէ տեղ-
ւոյս խօսիլ . Օ այս ամենայն եղեալ մարգարէին ՚ի
վախճան բանից իւրոց ապաւինի յօդնականութիւն ո-
զրումութեանն այ , և ՚ի յանդորրու ընակութէ ՚ի տան
նորա , և ասէ :

Ե . **Ո**ւրմութէ ու թէ զհետ իմ եկեսոյէ շամենայն աւուրս իւ-
նաց ինոյ , բնահել ինչ ՚ի առա ո՞ն ընդ երիայի աւուրս :
Հորչափ զնամք ընդ ձանապարհ աստի կենաց առ

Հանդերձեալ երանութիւնն , 'ի կրկին կրկին փորձութեանց վտանգիմք՝ որ յայտնի՝ և որ 'ի ծածուկ , որ երելի՝ և որ աներեւոյթ , որ արտաքուսո՝ և որ 'ի ներքուստ , որ ներկայ՝ և որ ապագայ : Աբք յայտնի փորձութիւնը են , նկարին իրը յառաջոյ . իսկ ոքք 'ի ծածուկ , նկարին իրը զինի մեր : Աւ յայն սակա ասին սոքա ծածուկ , զի կամ յանակնկալ ժաման յարձակին 'ի վերայ մեր . կամ զի ոչ երեխն մեզ լինել փորձութիւնք՝ թէպէտե իցեն մեծապէս վտանգիչք . և կամ զի հետ զհետէ գան : Վազ՝ թէպէտե յամենայն փորձութիւնն կարօտիմք օգնականութեն ոյ , բայց առաւել ես՝ յորժամ փորձութիւնքն ծածկապէս դարանին զհետ մեր . զի սոքա առաւել քան զայլ փորձութիւնն վտանգեն զմեզ հանասպազ . սմին իրի աղաշամոք ինպրէ , և ասէ :

Ողբմութէ ու պը զնեալ էմ եկեսցէ (սամենայն սահմարէս ինոց :) Ողբմութեամբք իմանայ զգործս ողբմութեն ոյ , իսկ այս զործ է մասնաւոր իմն նպաստ , զոր ած ողբմելով մեզ՝ ժամանեցուցանէ առ մեզ 'ի վանել զփորձութիւնն , և 'ի տկարացուցանել զյարձակումն նոցա . ևս և 'ի զօրացուցանել զմեզ ընդգէմնոցին : Վասմ նպաստից կարօտելով մարդարէն , ինողբեմ ասէ՝ զի նպաստ ողբմութեան քո ժամանեցէ , առ իս 'ի վանել յինէն զփորձութիւնն . որպէս զի աներկեան մնացից 'ի չնորհս քո , և 'ի բազմաստիկ ինսամոդ՝ զզոս ցուցեր ինձ . կամ որ նոյն է . զործ մեծի ողօրմութեան լիցի ինձ տէր , եթէ զու նպաստիք քո և ըգուշաւոր ինսամովք քո պաշեսցես զիս՝ զի մի փորձութիւնք վտանգեսցեն զիս , և հանցեն 'ի ինսամոց քոց , և զրկեսցեն յօծութենէ զլիսոյս :

Օ այս գործողութիւն ածային նպաստից բացատրէ մարդարէն բառիւքս * զինի իմ եկեսցէ . զի հայի 'ի նպաստ հովուական տեսչութեն ոյ՝ զօր եդ 'ի սկզբան սաղմոսիս . իրը զի որպէս հովին 'ի վարելն և յարածեն զոյխարս՝ զինի նոցա զնալով զգուշանայ զնոքօք , զի մի վնասակար ինչ իրք զհետ եկեալ վտանգեսցեն լնոսա , սոյնապէս ևս ած 'ի հովուելն զմեզ՝ զգուշանայ զմեօք , ոչ զի զինի մեր զայ , այլ զի հովուական ինսամով վարի ընդ մեզ , և պահէ զմեզ՝ զի

մի այն փորձութիւնք , որբ գարանին մեղ , վտանգեսացն զմեղ : Եւ զի ցորչափ ՚ի մարմնի եւկը , անսպակաս են այսպիսի փորձութիւնք , վասն այսորիկ ոչ վասն մոյ աւուր կամ վասն միոյ ամսոյ խնդրէ զայս նախաստ յայ , այլ վասն ամսնայն աւուրց կենաց . սմին իրի յաւ եւու :

Օ անեացն առարք ինաց է նոյ : Որպէս թէ ասէր . իրմադրեմ , զի ցորչափ կեամ յաշխարհի աստ , ողորմութիւն քոյ օգնեսցէ ինձ . զի որպէս միշտ փորձութիւնք դարանին զինեւ , սոյնպէս և ողորմութիւն քոյ միշտ պահեսցէ զիս , և մի երբէք թողցէ զիս : Վայս հանապարզեան սրահպանութիւն այ յատուկ իմն սրագեւ է , զոր շնորհէ աստուած ընտրելոց իւրոց . զոր և կոչեմք շնորհք յարաւաւութեան . որ թէ պէտե ոչ անկանի ըլարդեամբք , բայց անկանի ընդ խնդրուածովք . սմին իրի ազաւանօք խնդրէ՝ զի թէ երես դտանիցէ : Օ որ և ոյլ ոմն խնդրեաց յաղացելն զած . խնդրեմ ՚ի քեն տէր՝ ասէ . * մի հաներ յինեն զնորհս՝ մինչեւ մեռեալ մի իցեմ . (առակ . շ . 7 :)

Փոքր մի այլազգ ևս մեկնի այս բան՝ հայելով ՚ի բառագ , * զշետ իմ եկեսցէ : Ի բըր զի ողորմութիւնն այ ասի առաջի զնալ այնոցիկ , որք յօժարութք զնան զշետ կամացն այ . իսկ որք ոչ յօժարին զնալ զինի կամացն այ , ողորմութիւնն այ զրեթէ զնայ զշետ նոցա ՚ի մղել զնոսա : Վայս հնար է օրինակ առնուլ զայնպիսի հովիւ ոք , որ առաջի զնասցէ այնոցիկ ոչխարաց , որք յօժարութք զնան զշետ նորա՝ զի մի մոլորեսցին . ըստ որում ասաց տէրն . (յուլ . ժ . 4 :) և զինի զնայցէ այնոցիկ ոչխարաց , որք ոչ կամիցին զնալ զշետ նորա , որպէս զի զնասցէն : Ոյնապէս ևս ողորմութիւնն այ կամեցողաց՝ առաջի զնայ , զի մի մոլորեսցին . և ոչ կամեցողաց՝ զինի զնայ , զի կամեսցին . կամեցողաց առաջնորդէ՝ զի մի վաստակեսցին . զոչ կամեցողն մղէ՝ զի զնասցէն . զկամեցողն ՚ի զնալ ոչ լքանէ , զի մի լիցին ոչ կամեցող՝ զոր ինքն կամի . զոչ կամեցողն ՚ի զնալ վարէ , զի լինիցին կա-

մեցօղ՝ ընդ որ ինքն հաճի :

Եւ կամ ևս ընդ հակառակն՝ ողորմութիւնն այ յառաջոյ ժամանէ այնոցիկ , որք ոչն կամին զբարին , որ-

պէս զի կամեսցին . և զինի ժամանէ այնոցիկ , որք կամն զբարին , որպէս զի մի ընդունայն կամեսցին , և ունայնասցին . կամ որպէս ասի , կամին ողորմութիւնն այ յու կամեցօղն՝ զի կամեսցի . զշետ զայ կամեցոցին , զի մի վայրապար կամեսցի : Առ ՚ի կամիլ մեղ զբարին՝ առանց մեր յաջողէ անծ . բայց յորժամ կամիք գործել զբարին՝ գործակից լինի մեզ : Ուստի ասի թէ անծ գործակից լինելով կատարէ ՚ի մեղ՝ զոր յաջողէլով սկսու : Աս զի բազում բարիս առնէ անծ ՚ի մեղ զօրս մեք ոչ առնեմք , բայց և ոչ մի ինչ բարիս առնեմք մեք՝ զոր ոչ տայ անծ առնել մեզ : Օ ի անծ միայն է բարի և աղբիւր բարութեն . իսկ մեք ստուեր . եթէ կամիցիւմք զբարին՝ օգնութէր նորա կարեմք կամիլ , և յաջողութէր նորա կարել . զի որպէս առանց օգնելոյ նորա կարեմք կամիլ զարն , և կամիմք իսկ , սոյնպէս առանց օգնութեան նորա չկարեմք կամիլ զբարին (յովէ . չ . 44 : և երգ . ան . 3 .) որոյ վոյ ասի , թէ ոչ կարէ մարդ կամիլ ինչ բարի , բայց եթէ ընկալցի զօգնութիւն յայնմանէ՝ որ ոչ կարէ կամիլ զար : Իսկ եթէ ոք ոչ ընդունի յայ զօգնութիւն՝ ոչ է յայսմանէ՝ զի անծ ոչ կամի տալ զայն , այլ վասն զի ինքն ոչ կամի առնուլ :

Կարոյապէս , ողորմութիւնն այ յառաջոյ զնայ մարդոյ , յորժամ տայ նմա հաւատալ , և բարիս խորհիլ . և զինի զնայ , յորժամ տայ նմա կատարել՝ զոր հաւատայ , և գործել զոր ձանաչէ :

Եւ արդ՝ քանզի վախճան այսր անծային ողորմութեան՝ զոր խնդրէ մարգարէն , է ժամաննել յարքայութիւն երկնից , և բնակիլ անդ յաւիտեան , զնոյն ևս խնդրէ և յայտ առնէ յասելն :


Ընահելինէ ՚ի առն ՛ոն ընդ երկոյն առուրս : Տուն նմն առելով իմանայ զարքայութիւնն այ . զորմէ ասէ բարուք խօսելով առ խրայէլ . * ովլ խրայէլ որպէս զի մեծ է տունն այ , և ընդարձակ է տեղի ստացուածոց նորա . մեծ է , և ոչ գոյ բաւ . բարձր և անշափի || . (բար . չ . 24 :) { յայսմ մեծի տան բնակիլ ֆափաքի մարգարէն . ողորմութիւն քո ասէ օգնեսցէ ինձ զամ աւուրս կենաց խնց , մինչեւ լիցի ինձ ժամաննել և բնակիլ՝ ի տան քում յարքայութեան երկնից . կամ որ նոյն է , ա-

դաշեմ զքեզ տէր , զի ողօրմութեամբ քով օգնեսցես
ինձ զամ աւուրս՝ առ ՚ի բնակիլ ինձ ՚ի տան քում
* ընդ երկայն աւուրս || . այսինքն յաւիտեանս , որ է
օր երկայն , անվախման և անդիշը :

Մարդարէն՝ փոխանակ դնելոյ՝ ՚ի տան քում , դնէ՝
՚ի տան տն . և այս ևս թէպէտ վնոյն նշանակիէ , բայց
որովհետեւ ասաց՝ ողօրմութի՞ քո տէր զբնի իմ եկեսցէ ,
կամելով ցուցանել՝ թէ այն զչետ գալ՝ ոչ է զործ
ստորնագունի , այլ՝ գործ տն , վասն այսորիկ ՚ի յարեն
զբնի զբնակին՝ ՚ի տան , ոչ դնէ՝ ՚ի տան քում , այլ՝ ՚ի
տան տն . որով և խոստովան լինի , թէ նա է տէր տա-
լոյ զնորհս և չնորհելոյ զբնակութիւն ՚ի տան իւ-
րում :

Խորհրդաբար առեալ՝ այս բանք ասին՝ ՚ի դիմաց մարդ-
կային բնութեան , որ անկեալ՝ ՚ի սկզբնական արդարու-
թենէ՝ սկսաւ հեռանալ յայ , և ՚ի անդիլ զիւայ զինի
նորա , նա իրը փախստական լինելով առաւել ևս
հեռացաւ . և տեսեալ թէ ածի ՚ի դժոխս՝ սկսաւ ա-
ղաղակել ներբին բաղձանօք , և բերանովը նախա-
հարց . աղաշեմ զքեզ տէր՝ ողօրմութիւն քո սկնդեսցի
զչետ իմ , հասցէ առ իս , կալցի զիս և պահեսցէ ոչ
սակաւ աւուրս , որպէս պատահեաց ՚ի զրախտին ,
այլ՝ զամ աւուրս . և արասցէ ինձ բնակիլ ՚ի տան
քում յեկեղեցի սուրբ ընդ երկայն աւուրս մինչեւ ՚ի
կատարած աշխարհի . որ է օր ընդ երկայն :

Ոմանք որք զայս սաղմօս մեկնեն՝ ՚ի վերայ եօթն խոր-
հըրդոց եկեղեցւոյ , ըստ որում եդաք՝ ՚ի սկզբան սաղ-
մօսիս , զայս վերջին բան մեկնեն՝ ՚ի յարմարական
միտս՝ ՚ի վերայ պատկին . որպէս թէ սովորն օգնութիւն
ինզրել պատկելոցն յայ , զի զգուշութիւն վարեսցին
զամ աւուրս կենաց իւրեանց . և զորդիս ընծայելով
այլ՝ արժանասացին ողօրմութիւն նորա յզբնիս իւրեանց ,
այսինքն յորդիս իւրեանց . և նորօք հանդերձ անմե-
ղութեամբ բնակելով յեկեղեցւով՝ արժանի լինիցին
բնակելոյ ՚ի վերին տան տն յաւիտեանս յաւիտեենից :



ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Յայտարարութիւն գերազոյն տէրութեանն աստուծոյ
՚ի վերայ աշխարհի և բնակելոյ նորա ՚ի սիօն լեառն .
առ որով ՚ի մէջ բերին հանդամանք որպիսութեան
այնոցիկ՝ որք կամին յանդիման լինել առաջի աստուծոյ :
Դարձեալ և նկարագրութիւն տէրութեանն քնի ըստ
որում մարդ ՚ի վերայ ամենայնի , և հանդէս ելից
նորա փառօք յերկինս , այսինքն է՝ համբարձումն
նորին :

Աշխարհ ՚ի դաստիարակ Բաշխաբան :

Sեան է երիբ լրի ի-բով . աշխարհ և ամ բնահինք նո-
րում : 2 Ա, մ ինը ՚ի վրայ ծովու հիման էարի նմա .
և ՚ի վր գերայ պատրաստեաց դա : 3 Ա վեցէ ՚ի վա-
խմ ուշացեկ ՚ի տեղազ սրբա-թե նորա : 4 Ա ը է չե-
մանի սրբէ , որ ՚ը առ զանորուեցանի ի-ը և ՚ը երբա-
նչնուա-թե ընէրտ ի-բում : 5 Ա ա-ցէ զօրհնութիւն ՚ի պահ ,
պաշտամ-թիւն յայ գրիւէ ի-ը : 6 Ա յու ա-ցէ ՚ը նուրբ պա-
հնութիւն ունաւուէ լշերեսս այ յահութայ : 7 Համբարձէք է շնան-
պարունակ իւր ՚ի վր համբարձէցին դրսնաւ յա-իսպնից , և յուշէ
թագա-որ ժա-աց : 8 Ա վե սս թագա-որ ժա-աց . որ հազօք զօ-
րութեալ ի-բով . որ հազօք ՚ի պատերազմ : 9 Համբարձէք է շնան-
պարունակ իւր ՚ի վր համբարձէցին դրսնաւ յա-իսպնից , և յուշէ
թագա-որ ժա-աց : 10 Ա վե սս թագա-որ ժա-աց . որ զօրու-
թեանց՝ սս ինըն է թագա-որ ժա-աց :

Ա Ե Ր Ե Ա Գ Ի Ր .

Ա շ ն ա ս ՚ է դ ա ւ ե լ ւ Հ ե մ կ ա բ ա ն ա ս տ ո ւ ն ։

Ի Շ Ե Ր Ե Ա Գ Ի Ր Ս Ե Բ Ո Ր Յ Ե Ց Ո Յ Ո Զ Ո Զ
 զնի բառա կան գալաքալուն . նոյնպէս
 և ոչ 'ի վեցիջեան օրինակս որոգինեայ :
 Այ գտի զայդ և 'ի հին հինդ ձեռագիր
 սաղմնաս մեր , և ոչ 'ի ձեռագիր ածաշունչս և ոչ 'ի
 սաղմնասմեկնիշն լամք" . այլ միայն 'ի տպաղըեալ
 սաղմնաս և 'ի տպաղըրեալ ածաշունչս մեր , և յայլ քա-
 նի մի ձեռագիրս . որոց յունանս զնի . * սաղմնա միա-
 շաբաթուց : և 'ի վերդանայն . * սաղմնա 'ի դաւիթ
 միաշաբաթուն : Յայլ զնի ըստ վերցողըրելցոյդ . * սաղ-
 մնա 'ի դաւիթ վասն միաշաբաթուն : Ղ յապէս զնի և
 'ի հասարակ թարգմանութեան եօթանասնից . ևս և 'ի
 մեկնութիւնս ոմանց" 'ի նախնի հարց յունաց :
 Կայ և այլ վերնագիր մասամբ իմն սմին նման ('ի
 սաղ . զիք .) ուր զնի այսպէս . * յաւուրն առաջին
 շաբաթույոր հաստատեցաւ երկիր՝ օրհնութեն գովուե-
 'ի դաւիթ : Ղնի և 'ի վերնագիրս այլոց քանի մի
 սաղմնասաց բառդ շաբաթ . բայց այլ և այլ օրինակաւ :
 Ղ սաղ . խէ . զնի . * սաղմնա օրհնութեան որդւոյն
 կորիսայ՝ երկուրդն շաբաթու : Ղ սաղ . զիք . զնի .
 * սաղմնա 'ի դաւիթ լորեւշաբալու : Ղ սաղ . չ . յօրի-
 նակս ինչ հարց սրբոց զնի . * 'ի կաստարած , վո՞ հնձա-
 նաց , սաղմնա ասափայ , հինգերդն շաբաթու : Ղ
 սաղ . զա՞ . զնի միայն . * սաղմնա օրհնութեն յաւուրն
 շաբաթուց ևն :

Ղ ըդ որպէս ասեն ոմանք , հաւանականագոյն է կար-
 ծել , թէ զբառդ գալաքալուն , նոյնպէս և զայլ
 շաբաթական բառուդ յաւելին եօթանասունքն , և
 կամ այլք ոմանք : Ղ կամ թերեւս նաև առ երրայ-
 եցիս գէթ յօրինակս ինչ գտանիւր այն , և թողեալ
 եղե 'ի բաց . և կամ զանց արարեալ 'ի գրչաց :
 Խսկ վասն նշանակութեան բառիս գալաքալու՝ պէսպէս
 բանք են . ոմանք ասացին՝ թէ այդ եղեալ է 'ի սաղ-

մասի աստ առ ՚ի ցուցանել՝ թէ սոյն այս սաղմոս հայի յառաջին օր արարչագործուեն, որ համեմատի աւուր միաշաբաթու, զի յայնմ աւուր ստեղծաւ աշխարհ։ Վ. յլ ունանք յաւելուն ասել՝ թէ որովհետեւ այս սաղմոս հայի ՚ի յարութիւնն քոփի, որ եղել յաւուր միաշաբաթու, յայն սակա եղեալ է բառն դաշտանու։ Հայց ըստ այզմ մարթ էր յաւելու և զբառդ հինգ շաբաթու, ՚ի ցոյց հանդիսի համբարձմանն քոփի։ զի այս սաղմոս առաւել յարմարութեամբ պատշաճի համ բարձմանն քոփի, քան թէ յարութենորա։ Խակ ստոցգն երեկի լինիլ այս զի յաւուրս միաշաբաթուց երգեալ լինիր այս սաղմոս որպէս ցուցանեւ և այժմու սովորութիւնն ըստ որում հրէայք յանց միաշաբաթու երգեն զայ ՚ի ժողովարդս իւրեանց, ուստի և ՚ի վերնազրիդ յաւելաւ բառդ դաշտանու։ Վ. յլ թէ յինչ առօթէ ասացեալ իցէ այս սաղմոս, և ըստ ձառին յինչ իմաստ վերածիցի դիտումն սաղմոսիս, պէսպէս կարծիք են, Վ. այս ասաց յայնմ ժամանակի, յորում փոխազրեաց զտապանակն ոնն ՚ի տաճար իւր ուր յաւելու զրել ռաքբի ոնն, թէ ՚ի փոխազրիլ տապանակին անդր՝ զբունք կամ վարագոյըք սրբութեանց ինքնին բացեալ իցեն, և ապա ինքնին փակեալ։ Հայց թուի թէ ոչ այս սաղմոս, այլ հարիւր երեսներորդն իցէ այն . որ և սկսանի * Հիշեալ տէր զդաւիթ ևն։ (տե՛ս անդ։)

Երկրորդն է թէ զայս ասաց դաւիթ հայելով յայն ժամանակ յորում յազդ առնել նմա նախանայ մարգարէի վասն տաճարին՝ յանձնեաց նա սովորմնի որդուց իւրոյ՝ շինել զայն։ (ա. մնաց. ժէ. և իր. և ք. թագ. է.։) Վ. յլ այս՝ կարծեօք միայն ասի, չունելով ինչ հիմն ստուգութեան։

Երրորդն է թէ զայս ասաց դաւիթ ՚ի վերածեն հանդիսիւ զտապանակ տեառն ՚ի տանէ ամինազաբայ ՚ի տուն արեգգարայ։ (ք. թագ. դ. ա. մնաց. ժէ.։) Վ. յս ևս շերեկի հաւանական մանաւանդ թէ ներհակ ելանեն, այսմ բանք եօթներորդ համարցն և որոց զինի։ Խակ զօր ասաց դաւիթ յայնմ հանդիսի, է սաղմոսն (կէ.։) այն է. * Հարիցէ անձ ։ զոր գուցեւ

կրկնեալ իցէ և յայս ըռ:

Սորբորդն է՝ թէ զայս սասաց գաւիճ՝ 'ի փոխաղբել զտապամնակն ՚ի տանէ արեղգարսյ ՚ի սիօն լեառն (ը. թագ. կ. 12: ա. մնաց. ժէ. 25:) ։ Այս կարծիք երևի ճշմարիտ, ըստ որոյ պատմաբանօրէն նկարազըի գեղեցիկ իմն խորհուրդ՝ 'ի սաղմոսի աստ . առաջի զնի միանգամայն և փառաւորեալ համբարձումն տն մերց յերկինս, ըստ մեկնելոյ առ հասարակ ոք հարց հայոց, յունաց և լատինացոց . որպէս ունիս տեսանել և 'ի մեկնութե աստ, յորոյ ՚ի վերջն գտցես և զբարցական տեսութիւննս :

Այս սաղմոս մինչև ՚ի համարն 6 . պարաղըէ յինքեան զիմաստ բանից ժեղ սաղմոսին այլով իմն կարգաւ (զըրմէ տես ամսդ) : Խակ մնացեալ ըրս տունքն յայլինչ հային . որպէս և յայտնի տեսանի ընթերցողաց :

Բ Ե Կ Ե :

ա. **Տ** է երիբ լրի իրուն, այսորհ և ավետյան բնակիչն նոր:

Ո Ե Կ Ե Ո Ւ Թ Ը Ե Կ Ե :

Հայեցեալ յընթացս սաղմոսիս՝ այս սկզբնաւորութիւն յայտ առնէ՝ թէ մեծամեծ իրս ուներ մարզարէն ՚ի սրտի . և փափաքէր ծանուցանել զայնոսիկ որդւոց մարդկան, որպէս զի ստիպեացին և նոքա ընդ իւր զարմանալ . Իսայ կամելով կանխիւն քան զզարմացումն նոյս՝ նախ առաջի զնէ և յայտնէ զտէրութին այ . և զայս եղեալ միով մասամբ առաւել ևս կամի զարմացուցանել զնոսա . և այլով մասամբ զզարմացումն նոցա լուծանել :

Օ արմացուցանէ նախ այսու, զի եթէ ան տը է աշխարհիս համօրէն, և ինքն է յամի, և ինքն զարմանէ զնոմ, զիարդ ասի (՚ի համարն 3 . և յայլ տեղիս,) թէ ՚ի սիօն լեառն և եթէ կամի բնակիւ, և այն իցէ տեղի հանգըստեան նորա . միթէ սիօն միայն իցէ նորա : Օ արմացուցանէ երկրորդ այսու՝ զի եթէ ամ բնակիցք աշ-

խարհի, այսինքն ամ մարդիկ՝ նորա են, և կարգեալ են առ նա իբրև առ վերջին վախճան իւրեանց, ընդէր ասպա զննման ոչ վերածէ առ ինքն յիմանալի լւառն սիսն . միթէ ոչ ինքն արար զնոսա , միթէ մերժելոց իցէ զնոսա , միթէ վասն մերժելոյ արար զնոսա . միթէ միայն իսրայէլացիք իցեն նորա , ևն .

Այսմ կրկին զարմացման՝ զրեթէ կրկին լուծումն տայ մարգարէն : Հառաջինն հայելով՝ 'ի մէջ բերէ զբացարձակ տէրութիւնն այ . իբր զի ինքնիշիան տէր գողով ամ աշխարհի , ուր և համի , անդ ցուցանէ զինքն բնակիլ . զի այնու զայլս առ ինքն ձգեսցէ . և կեցուսցէ : Հերկրորդն հայելով՝ 'ի մէջ բերէ զանզպամութիւն մարդկան . իբր զի նորա իւրեանց չարութքը անարժան առնեն զինքեանս բնակակից լինելոյ այ , և ընտանութեան նորա . ուստի և ած ոչ նոցա , այլ ժողովրդեան իւրում տայ լինել իւր . ուստի այլուր ասէ . * ոչ այսպէս արար ամ ազգաց տէր || . (սաղ. Ճիխ . 10) .

Օ այսոփիկ ունելով մարգարէին 'ի սրտի , և լուութք իմն կանխազեկոյց լինելով զսոցանէ , զարմացմամբ մտաց յափշտակեալ , և խորին իմն խոնարհութք 'ի ներգործութիւն երկիւզի և սիրոյ ըմբռնեալ սկսանի կարգել զբան իւր . և զրեթէ մեծաձայն գոշելով աղաղակի :

Տեսան է երիւր լրիւ էրու : Երկիր ասելով իմանայ զհողագունտս , յորում լինի բնակութիւն մարդկան . սոյն այս հողագունտս ասէ տնի է . այսինքն այ է և ոչ օտարի , և ոչ ըստ մանկեցցոց՝ սատանայի : Իսկ թէ ընդէր ոչ ասէ այ , այլ թէ , յայտ է նկարազրական պատճառն . զի յայսպիսի զրոյս՝ յորժամպարզապէս դնի ուր , այնու իսկ իսացեալլինի ած . ըստ որոյ յեր՝ . դնի է ծառ որ միայն այ ընծայի : Շայց սովորն այսու գիտէ մարգարէն ցուցանելլ թէ բացարձակ տէր է նա , զորմէ խօսի . և թէ ըստ ամի նորա է երկիրս , և ոչ իւիք այլոց : Եւ ոչ սոսկ երկիրս միայն ըստ որումեր կիր , այլև ամ որ է 'ի նմա . և առ այս յարէ :

Լրիւ էրու : Այսինքն հանդերձ ամենեքումբք՝ զորս ունի երկիր յինքեան . կամ որ նոյն է , ոչ միայն երկիրս է նորա , այլ և որ ինչ կայ 'ի նմա , ևս և այն

ամ, որով լրացեալ և զարդարեալ է . ուստի և յայլ
թարգմանութիւնն զնի . * և լրութիւն նորա || . կամ
* լիութիւն նորին || . այսինքն այն ամ, որով լրացեալ է
երկիր :

Վրդ թէպէտ և երկիրս բազում ինչ ունի յինքեան ,
այսինքն են , հանք , տունկը , սողունք , անասունք ,
են , բայց ոչ այնչափ սորգ համարի լրացեալ որչափ
մարդկամբք իրը յատուկ բնակչօք . նա զի առանց
մարդկան մոռածեալ՝ յաւետ երկիր կոչի՝ քան թէ աշ-
խարհ . սմին իրի որպէս զի մի կարծեսցի՝ թէ ինքն սոսկ
զերկրէ խօսի , ըստ որում է պարունակօղ հանքաց ,
տնկոց , և անամոց , յաւելու և ևս :

Ա շնաբէն և ամ բնակից նորա : Վշխարհաւ ըստ ինքեան
ինացեալ ինի բովանդակ տիեզերս՝ սկսեալ յերկրէ
մինչև յերկնից երկինս . բայց աստ բանք մարդարէին
հային յերկիր՝ ոչ ըստ որում է երկիր , այլ ըստ ո-
րում է բնակութիւն մարդկան . ուստի և առ երբայե-
ցիս դնի ԱԷԿԵԼ , որ զնոյն նշանակէ , այսինքն աշխարհ
կամ երկիր բնակութեան :

Վրդ այս երկիրս ասէ , որ կոչի աշխարհ , և ամ մար-
դիկ՝ որք բնակին 'ի ամա՝ ան են . նա իշխէ 'ի վերայ
նոցա , նա ինամէ զնոսա , նա հոգայ վասն ամի նոցա .
քանզի և զերկիրս խոկ նա արար վասն նոցա : Եւ ըստ
այսմ գերանունս նորա՝ ցուցանէ թէ երկիրս արարաւ
վասն բնակչաց իւրոց . և ոչ թէ բնակիչք վասն նորա :
Խոկ թէ զիարդ արար ան զնա , և որպէս հաստատեաց
զնա . և զիարդ այնչափ մեծութի ջուրց ծովու և բազ-
մութիւն ջուրց գետոց ոչ ողողանէն զբնակիչս նորա ,
խօսի զայնմանէ 'ի մասնաւորի . սմին իրի յարէ զինի ,
և ասէ :

Ա մ ինքն 'ի վերայ ծովու հիմունս էաբէ նմա , և 'ի վե-
րայ գետոց պատրաստեաց զնա :

Վեղեցիկ իմն այլբանութիւն է այս ասացուած , մա-
նաւանդ թէ զարմանալի ստեղծաբանութի : Վպաքէն
հիմունք շինուածոց 'ի վերայ այնպիսեաց արկանին ,
որք առաւել հաստատուն են , և ոչ 'ի վերայ շարժուն
և լուծական իրաց . խոկ մարդարէն 'ի վերայ լոյծ և
շարժուն ջուրց ծովու զնէ զմինուած երկրի , որոյ և

աեսութիւնն իսկ՝ ի սքանչացումն ածէ զմիտոս մարդոյ .
ուստի ասէ սարգիս շնորհալի ('ի մեկն . ը . պետ . դ .
5 . ձառ . ե .) * և այս են առաւել սքանչելիք , զի
,, ծանր մարմինս այս լայնատարած գետնոյս 'ի վերայ
,, լոյժ բնութեանց ջուրց հիմնացեալ կայ . և ոչ հակէ ,
,, և ոչ 'ի խորն իջանտէ : Ի սոյն սքանչացեալ և մար-
գարէին ասէ :

Այս ինչն 'ի վերայ ծռչու հիմունս է արէ նմա , և 'ի վերայ գե-
տոց պարուսութեաց զնա : Վայս այլաբանութին՝ որ ըստ մե-
քենական արշեստի այլատարազ իմն երեկի , կարի
յոյժ վայելապէս յայտնէ զհանգամանս լինելութեան
երկրի , եթէ քննեսցուք զիրսդ ըստ կարգի ըորից
պատճառաց , որք ասին նիւթական , արարչական ,
տեսական , և վախճանական :

Բայտ կարգի նիւթական պատճառոի մոտածեալ՝ այսու-
բանիւ յայտ առնէ մարդարիէն՝ թէ ուստի եղեւ հիմնար-
կութիւն երկրի : Վանդէ անձանց ծնն (ծնն . ա . 9 .)
թէ երկիրս ծածկեալ եր՝ ի սկզբան անդ 'ի ջուրց , և
ջուրը խորք պատեալ էին զնա իբրև վերարկու , (ըստ
ձկ . սաղմոնին համար . 6 .) և անձ զատոյց զջուրն
յերկրէ՝ իբր՝ ի կողմն մի , որով և երեւցաւ ցամաքն :
Եւ ըստ այսմ զբեթէ՝ ի ջուրց եղեւ երկիրս , ոչ իբր
'ի նիւթոյ գոյանալով , այլ՝ ի ջուրց անստի ելանելով ,
յոր միտս ասէ պետքոս առաքեալ . * երկիր 'ի ջուրց
(եղեւ) . (ը . պետ . դ . 5 .) Եւ այս՝ այնպիսի իմն
օրինակաւ , մինչև համարիլ թէ հիմնւնք նորա 'ի ջուրս
ծովու իցեն հաստատեալ : Ուստի և ըստ այսմ նիւ-
թական պատճառի մոտածեալ՝ կարէ ասիլ թէ անձ 'ի
վերայ ջուրց էարկ զիմնանս երկրի : Վայլ թէ յինչ
զիրս և զիարդ՝ ըսւնիս ինչ ասել աստ . զի ըստ կար-
ծեաց հնոց բացատրել ոչ պնդեմ , իսկ նորոց կար-
ծիք անբաւական երեկի . գուցէ և անպիտան ևս քան
զառաջնոյն :

Բայտ կարգի արարչական պատճառոի սոյն այս յայտ
առնէ՝ թէ քանի սքանչելի է զօրութիւնն ոչ , որ զտա-
րածութիւն մեծութէ երկրի ոչ է հաստատեալ 'ի վե-
րայ այլոց իրկը հաստատնոյ , այլ՝ ի վերայ ջուրց . իբր
զի այնպէս կարգեալ է զերկիրս բնդ ջուրց , որպէս
թէ հիմն երկրի 'ի վերայ ջրոց իցէ , և 'ի վերայ նորա

կանգնեալ . և այս նոյն է՝ թէ ասէր . ո՞ծ զերկիրս
ջուրբք հանդերձ կալեալ է հաստատուն : Իստ այսից
է և այն , զոր ասէ այլուր . * հաստատեաց զերկիր 'ի
,, վր ջուրց || . (սաղ . ձիե . օ :) և ոչ այնշափ միայն ,
այլև արգելս ևս է եղեալ զի մի իւիք զեղուցուն ջուրք
'ի վերայ երկրի . ըստ որում է տեսանել և 'ի զիրս
յորայ (լլ . 2 : և առակաց . ը . 29 : և ամուլսայ ե .
8 . և այն :)

Իստ կարգի տեսական պատճառի յայտ առնէ՝ թէ
այնպիսի իմն ձեռվ հաստատեալ է երկիրս ամրագը-
մամբ լերանց և բարձրութք եղերաց իւրոց , մինչեւ 'ի
վերոյ լինել քան զջուրս ծովու և գետոց . և ըստ այսից
բառու 'ի վերայ ունի աստանօր և զնանակութիւն բառիս
'ի վերայ , որպէս թէ ասէր . 'ի վերոյ քան զջուրս . կամ
բարձր քան զջուրս ծովու և գետոց հաստատեաց զեր-
կիրս . զի եթէ ստորին լիներ քան զնոսա , ողողեալ
լիներ 'ի ջուրց անտի . և ոչ լիներ յարմար առ 'ի բնա-
կութիւն մարդկան , և ոչ իսկ տեղի բնակութէ : Եւ
վասն այսր 'ի խօսին ըստ կարգի զգետոց՝ ոչ ասաց ,
էարկ , կամ հաստեաց , կամ արար , այլ ուստի ստեղաց ,
այսինքն թէ այնպէս կարգեաց զգիրս երկրի , որպէս
զի լինելով 'ի վերոյ քան զջուրս գետոյց և ծովու՝ լիցի
յարմար բնակութիւն մարդկան : Եւ ևս՝ մարդիկ առ
ջուրբք բնակելով կարիցեն լնուլ անտի զպէտո
իւրեանց :

Վ այս յայտնագոյն ևս երեւի յերբայականեն . ուր փո-
խանակ բառիս 'ի վերայ , դնի աւ . որ նշանակէ ասել առ
գետով կամ առ ծովու . նոյն է և ասելն 'ի վերայ զե-
տոյ կամ 'ի վերայ ծովու . սակայն զայս ոչ է պարտ ի-
մանալ այնպէս , որպէս յորժամ ասի , թէ այս ոք շի-
նեաց քաղաք 'ի վերայ ծովու , կամ պատրաստեաց
զտուն առ գետով . վասն զի սոքա , այսինքն քաղաքը
կամ տունք՝ որք կանգնին 'ի վերայ ծովու կամ առ
գետով , հաստատին 'ի վերայ երկրի . իսկ երկիրս ոչ
կանգնի 'ի վերայ այնպիսի իրի որ հաստատեալ իցէ
յայլ լին , այլ 'ի ջուրս ունի զիւը հաստատութիւն .
վայ թէպէտ և նոյն ոճ բանի երեւի 'ի յառաջ բերեալ
նմանութիւնդ , բայց ոչ նոյն հանգամանք . անդ երեւի
արհեստ մարդկային տկար , իսկ աստ ամենակալ զօ-

րութիւն արարցին , որ գհաստատութե՛ երկրի կալեալ
ունի յայնչափ տարածութեան ջուրց ծովու :
Ոստ կարդի վախճանական պատճառի յայտ առնե ,
թէ զայս յայն սակս այսպէս արար անձ , որպէս զի
մարդկե բնակելով՝ ի վերայ երկրի՝ որպէս վայելեն
զբարիս երկրի , նոյնպէս ևս ջանապահն բարւոք վարե-
լով զայնոսիկ բարիս , և բարւոք ճանաշելով զբարե-
րար իւրեանց , ըստ նորա հաճոյից կեցցեն , և այնու
ի վերայ լիցին , այսինքն թէ արժանասցին ժամանել
ի սքանչելի երկիրն յայն , որ ոչ ՚ի վերայ ջուրց է
հիմնեալ , այլ յերկինս :

Դրդ զայս երկիր՝ զոր այսպիսի օրինակաւ հիմնեաց
անձ՝ կարգեաց իրը սրա՛ տան իւրոյ , զոր կանգնեաց
յերուսաղէմ , համելով բնակիլ՝ ՚ի նմին՝ որով և վե-
րացաւ երուսաղէմ՝ ի գերագոյն պատիւ և յանձավայել
սրբութիւն . մինչև ոչ ումեք արժանանալ՝ ՚ի նոյն եւա-
նել , բայց եթէ այնմ՝ որ իցէ ոք սրտիւ և ամբիծ վա-
րուք . զորմէ ունի խօսիլ մարդարէն՝ ի սաղմոնի աստ ,
և նախ հարցանե :

Դ. Ա. Հ. Ե. Շ. ՚ի լեռնա ՚ի համալ հայոց ՚ի տեղուջ սրբու-
թեան նորա :

Սուրբ զիրս սիռն լեառնն հասարակօրէն կոչի լեառն
տն . վասն զի այն լեառն որպէս տասցաք՝ որոշեցաւ լի-
նել տեղի այ , կամ այնպիսի տեղի , յորոյ վերայ կո-
չեցաւ անուն տն , և անդ հանգեաւ տապանակն տն .
յորմէ և անուանեցաւ տեղի սրբութեան , կամ տեղի
ոք . Դրդ յայտ արարեալ մարդարէին՝ ՚ի վերագոյնոդ
զբացարձակ տէրութիւնն այ՝ ՚ի վերայ ամի , և զամենա-
կալ զօրութիւն նորա , որով կալեալ ունի զայնարհս ,
և զնո՞մ՝ որ է ՚ի նմա . միանգամայն և սքանչացեալ ընդ
մեծութիւն իշխանութե նորա , և զարհութեալ՝ ՚ի մեծ
վայելութէնէ փառաց նորին , հայի և ՚ի լեռնն յայն ,
ուր նա ինքն տէրն փառաց բնակիլ կամի . չափէ և զան
ձին իւրոյ նուաստութիւն , կըու և զմարդկայինս
ընութեան անարդութիւն . և յայսմ ամէ՝ ՚ի յափշտա-
կութիւն մտաց ըմբռնեալ՝ երկիւղախառն ուրախու-
թեամբ այլափոխի և տագնապի , և հուսկ յետոյ
տարակուսեալ վարանի՝ թէ զիարդ կարասցէ կալ ա-

ոաջի այնպիսի ահաւոր տեառն :

Վ կնարկի ապա յորդիս մարդկան , ո արդեօք զտցի 'ի նոյանէ 'ի սոյն արժանաւոր , այսինքն ո արդեօք մարթացի սրբութք մատչիլ յայն լեառն սուրբ . կամ ովլ համարձակեսցի ելանել 'ի նոյն՝ առ 'ի կալ առաջի այ 'ի տեղւոշն սրբութեան , այսինքն 'ի ոք տեղւոջ անդ յանդիման տապանակին : Վ յապիսի երկիւղ 'ի փորձոյ ևս առաւելաւ 'ի մարդարէն , զի և յառաջն իսկ տեսեալ էր և փորձեալ , թէ չէ հնար առանց պատժոյ մերձենալ առաջի տն , եթէ որ մերձենայն՝ չիցէ սուրբ : Առեալ իսկ էր , թէ զինչ արար տէր ընդ բեթ տամիւտացիս յանգգուշաբարն հայիլ նոյա 'ի տապանակին տն :

Պ ատմէ անձառունչն (ա . թագ . կ .) թէ 'ի դարձուցանել այլազգեաց զտապանակին տեառն յանդաստանէ ասկաղնի 'ի բեթսամիւս յանդաստան ովսեայ բեթսամիւտացոյ , բեթսամիւսացիքն որոց պահտ էր աշիւ և պատկառանօք ընդ առաջ ելանել , և ծածկել , անհոգացան , և սկսան համարձակ հայիլ 'ի նոյն . վայ և * եհար տէր 'ի նոյանէ յիսուն հազար և եօթանաւ , սուն արս || . յորմէ զահի հարեալ մնացելոց՝ սարսափմամբ ասէին . * ո կարասցէ շրջիլ առաջի տն այ ' , 'որյս այսորիկ || . (ա . թագ . կ . 19 .) Վ զդ արարին արանցն կարիխաթարիմայ . և նորա եկեալ երկիւղիւ մեծաւ տարան 'ի տուն ամինադաբայ զետացոյ՝ որ 'ի բլրին 'ի գաբաա , և եկաց անդ յաւուրս սամուէլի մարդարէի . (ա . թագ . է . 1 .)

Հ ետ ժամանակաց կամեցաւ զաւիթ հանել անսի ըզտապանակին և տանիլ 'ի սին լեառն . էառ ընդ իւր եօթանասուն հազար երիտասարդս յիսրայէլէ , և ժողովուրդ բազում . և եհան զտապանակին 'ի տանէ ամինադաբայ , և եդ 'ի սայլի . և ոզա և եղբարդ նորա զետացիք , որք պարտական էին բառնալ զտապանակին 'ի վերայ ուսոց իւրեանց , և այնպէս տանիլ զայն , փոխանակ բառնալոյ՝ զսայլն վարէին : Եւ 'ի ըուել տապանակին՝ իսաղյը և սաղմոսէր զաւիթ առաջի նորա , և երդէր . { արէց ած . ևն . (սաղ . կէ .) և ամժողովուրդը միաձայնէին ընդ նմա տաւզօք և նուազարանօք : Եւ իբրև մերձ եղեն 'ի կան քեղմնայ , թիւրե-

յաւ սայն մերձ ՚ի կործանիլ . և ոզա կամելով ունել
զայն , ձգեաց ՚ի նա ձեռն . և տէր եհար զնա անդէն
և մեռաւ , զի էր յանցաւոր . վ՞ա զի որպէս ասացի փո-
խանակ բառնալը զտապանակն ՚ի վերայ ուսոյ՝ թոյլ
ետ բառնալ ՚ի վերայ սայլի , և զնել ՚ի վտանգի կոր-
ծանելոյ : Օ այն տեսեալ դաւթի զահի մեծի հա-
րաւ , և ասէ : * զիարդ տարայց առ իս զտապանակն
ոյ ։ (ա . մնաց . ժք . 12 :) կամ * զիարդ մոա-
նիցէ առ իս տապանակդ ոյ ։ (ը . ժագ . կ .
9 :) և խոտորեցոյց զայն ՚ի տոնն աբեղգարայ գե-
թացոյ :

Եշկաց անդ տապանակն տն ամիսս երիս . և օրհնեաց
տէր զտունն աբեղգարայ : Հայսմ օրհնութէ զիտաց
դաւիթ , թէ հաճեալ է տէր ընդ իսրայէլ . և վասն
այնորիկ ժողովեաց դարձեալ զարս իսրայէլի , և
զնացեալ ՚ի տոնն աբեղգարայ՝ էառ անտի զտապա-
նակն : Դարձին զայն քահանայքն ՚ի վերայ ուսոց իւ-
րեանց , և համելին ՚ի սինն լեառն :

Եւ դաւիթ ՚ի միոյ կողմանէ բոլորովին վառեալ ՚ի սէր
բարերարութեան տն , և իսպառ մոռացեալ զանձն և
զիտառ իւր , և գրեթէ ՚ի հողեղէն գոլոյ ՚ի հոգեղէն
իմն փոխակերպեալ ցնծութք իսպայը առաջի տեառն .
երդէր և սաղմոսէր , և աղաղակելով գոչէր . տն է
երկիր լրիւ իւրով աշխարհ և անց ընակիչք նորա . և ն :
Եւ ՚ի միւս կողմանէ պակրոցեալ և ահաբեկ լեալ յե-
րեսաց մեծվայելութեան փառաց տն , տագնապէր
յոյժ՝ թէ զիարդ տարեալ զետեղեսցէ ՚ի թեառն սինն
զտապանակն տն , և զիարդ համարձակեսցի կալ առա-
ջի նորա . մի արդեօք պատահեսցին ինքեան և կամ
այլում ումեք այն անցք , որք անցին ընդ բեթսամիւ-
սացիս և ընդ ոզա : Եւ ահա ըստ այսմ վարանման
սրտի իւրոյ աղաղակէ , և ասէ :

Ուշեցէ ՚ի լուսն պէն , իամ ուշեցէ ՚ի ուշուզ սբութեան
նորա : Ծստանօր բառս ուշ թէպէտ իւրեւ հարցական
զնի , բայց յայտ առնէ միանդամայն և զզարմացումն
և զերկիւղ մարգարէին , որպէս թէ ասացեալ էր .
ով թէ որպիսի ոք կարիցէ համարձակիլ արժանապէս
և անպատուհաս ելանել ընդ տապանակի տն ՚ի լեառն
սինն , և որպիսի պարտ է նմա ունիլ զվարս սրբութեան՝

առ ՚ի կալ ըստ արժանությն ՚ի տեղով անդ առաջի
նոյն տապանակի :

Վ սիցէ ոք . ՚ի տապանակին վկայը ինչ , բայց եթէ քանի
մի նիւթական իրք , զիանրդ ապա գաւիթ այսափ մե-
ծացուցանելով խօսի . մինչ զրեթէ կալն առաջի տա-
պանակին՝ իցէ կալ առաջի այ . ևս ելանելն ՚ի սին՝ ի-
ցէ ելանել ՚ի տեղի այ և յանդիման այ :

Պատոսխաննեմ . տապանակին՝ ոչ ըստ որում տապա-
նակ՝ այլ ըստ որում այ տապանակ՝ յանդիման առներ
զներկայութիւն մեծվայելութեն այ . ուստի նոյն եր
կալ առաջի տապանակին այ , և կալ առաջի ներկայու-
թեանն այ : Եւ թէպէտ ընդ ամ տեղիս է ած , և ամ
տեղիք՝ նոր են , զի ասայ . * տն է երկիր լրիւ իւրով ,
բայց ՚ի ձեռն տապանակին յանդիման լինէր իսրայե-
լացւոց և այլոց ամցն , որք մատչելն առաջի նորա .
և այս երեքին :

Կախ՝ զի տապանակին այն էր իրը նշան յիշատակի
ածային գործոց և խնամոց՝ որ ցուցաւ իսրայելեան
ազգին յանապատի ՚ի ժամանակա մովսէսի : Երկրորդ՝
զի էր իրը պատուանդան երեեցուցիչ իջմանն այ .
քանզի իջեալ երեեր բազում անգամ , և անտի խօ-
սէր ը մովսէսի : Երրորդ՝ զի անդ էին երեք խորհրդա-
ւոր իրք . այսինքն տախտակք կտակարանաց , գաւա-
զան ահարոնի , և մանանայ ոսկի սափորով :

Հախտակք կտակարանաց ներկայացուցաննեին զած
իրը տէր օրինաց բազմեալ՝ ՚ի սին , յորմէ սփուեն
օրէնք արդարութեան . յոր միտ ասի . * ՚ի սիննէ ելցեն
,, օրէնք || (ես . ը . 3 .) Պաւագանն ահարոնի ներ-
կայացուցաններ զամենակալ զօրութիւնն այ , որով և
նոյն տապանակաւ յինքեան ունելով զայն գաւազան՝
իրը սաստելով սքանչելագործէր ՚ի բազում . զի յայտ
է թէ միայն ներկայութեն նորա յորդանան զարհու-
րեալ . յետս դառնայր , և հորդէր ճանապարհ առաջի
ժողովրդեան . երկովի սպարիսալ ինքնին կործանէր
անկանգնելի . մեհեանք չածոց քանդեալ՝ ՚ի վայր հո-
սէին . դազոն չած յերկիր տապալեալ թաւալէր .
փղտացիք յանբժշկելի ախտու ըմբռնէին , և այլ նո-
րանոր սքանչելիք յիշատակաց արժանի գործէին :
Ուանանայն ոսկի սափորով ներկայացուցաններ ըզ-

քաղցրութիւն ինսամոցն այ . որ իբր ոսկիափայլ ձառաւ գայթեր առ խօրայէլ լեանս , և ձգեր զսիրտս բարեպաշտից առ ինքն . որով և սա ինքն դաւիթ փափաքէր կալ առաջի նորա հանապազ : (Օ այսմանէ տես և ՚ի սաղ . ՃՌ . 7 :)

Արդ որով լետե այսպիսի ինչ էր տապանակն տն , և զնոյն ինքն զտէր զօրութեանց ներկայացուցանելով աչեղ իմն երևէր և փառաւորեալ , սմին իրի և տեղին՝ ուր հանգուցան ՚ի լերինն սիննի , համարիւր այսպիսի իմն աչեղ . ուստի և հարցումն մարգարեին ՚ի հայի ՚ի լեառն սինն նիւթապէս , այլ իբր յայնպիսի լեառն՝ որ եղեւ այսպիսի տեղի այ . վասն զի սինն լեառն նիւթապէս առեալ բնակարան էր մարգկան , և ըստ այսմ անտեղի լինէր հարցանել . ով ելցէ ՚ի լեառն յայն . զի արդէն բազումք ելեալ և բնակեալ էին անդէն : Խակ ըստ լինելոյ տեղի տապանակին մասձեալ տեղի էր տն և տեղի որ և աչեղ . և ըստ այսմ հարցանէ . * ով ելցէ ՚ի լեառն տն , կամ ով կացցէ , ՚ի տեղեոջ սրբութեան նորա || , * ըստ նկարազրի բառ , նիս բաւական է այսափ || . ըստ զրելոյ բարսեղ վարդապետի դասկետի (՚ի մեկն . մարկ . դա :)

Ա երածական մեկնութեամք այսու լերամք նկարազրի լեառն երկնային , ուր է նա ինքն տն , և հարցումն մարգարեին առաւելապէս յայն հայեցուցանէ զմեղ , այսինքն թէ ով կարիցէ արժանի լինել ելանելոյ յայն իմանապի լեառն , և կալոյ անդ առաջի տն , յոր միտ զրեթէ ասէ . գտանիցի արդեօք որ յայսափ բազմութենէ բնակաց երկրի , և ով արդեօք գտանիցի , որ կարիցէ ելանել յերկինս , և որպիսի արդեօք պարտ իցէ նմա լինել :

Ա յլաբանօրէն այսու լերամք իմացեալ լինի եկեղեցի . որում իբրեւ յերկրի իւրում հիմունս էարկ քո՞ ՚ի վերայ ծովու , այսինքն ՚ի ջուր մկրտութեան , և պատրաստեաց զնա ՚ի վերայ գետոց , այսինքն ՚ի վր այլոց որ խորհրդոց , որովք ոռոգանի եկեղեցի . և որք ընդունին՝ գետք յորովայնէ նոցա բղիւեն ջրոց կենդանութեան : Դարձեալ զհիմունս սորա՝ որք են առաքեալք և մարգարեք էարկ ՚ի վերայ խորին խորհրդոց : Ա արդան գետովք իմանայ զնք առաքեալսն . ՚ի վերայ

սոցա ասէ՛ պատրաստեայ քո՛ զեկեւէցի իւր , ըստ ասեւ
լոյն թէ * 'ի քեզ շինեցից զեկեղեցի իմ' | Երանիք
իմացեալ լինի աստ և սեղանն որ , ևս և տաճարն ուր
պատարազի անարատ գառն այ . ուր և է տապանակն
որ . Արդ ովլ ելցէ ասէ արժանապէս յայս լեառն և
ովլ կացցէ արժանապէս յայսմ տեղով սրբութեան :
Աստ յարմարական մեկնութեան՝ այսու լերամք կարէ
նշանակիլ և այլ ու և իցէ լեառն , յորում կայցէ իր
ինչ սուրբ , կամ յորում լինիցի պաշտել զած սրբութք
ևն . որպէս լեառն գողգոթա , լեառն ձիթենեաց ,
լեառն սեպուհոյ , ևն . Աւ յայս միտս շարական մեր
զսոյն զայս յարմարեցուցանէ 'ի սուկաւէտ լեառն ,
ուր ելին և կատարեցան սուքիասանք : Իսկ եզնիա-
ցին յարմարեցուցանէ 'ի սեպուհոյ լեառն . առ որ խօ-
սելով ասէ . * ուրախ լեր (սեպուհոյ) լեառն հրաշալի՝
,, մարզարէական հոգւոյն ցանկալի . որ և հայցէր
,, զվայր քո ըղձալի , տէր ովլ կայցէ 'ի խորանիք քում
,, կամ ովլ ընակեսցէ 'ի լեառն սուրբ քո . և առեալ հոգ-
,, ւովն պատասխանի . որ և 'ի վերջին ժամանակս տե-
,, սեալ եղեւ աչօք զգալի . յորում ելեալ սուրբն զրի-
,, զրիսու անբիծն վարուք . . . զբեզ մեզ տեղի ուխ-
,, տից և խնդրուածաց պարզեեալ : Այւ ապա յաւե-
լու ասել . * Ի քեզ հաւաքին հաւատացելոց անձինք .
,, լաւ համարեալ զմիօրեայ բնակին 'ի քեզ՝ քան ըզ-
,, հազարս 'ի յարկս թագաւորաց | : (երես . 296 . և
298 :)

Հարցոյապէս՝ այսու լերամք նշանակի նախ կատարե-
լութիւն առաքինութեց . որպէս զրէ բարսեղ վարդա-
պէտ ('ի մեկն . մարկ . գլ . ժկ .) * յառաջ քան զբո-
,, ասէ անդնալի և անձանապարհ իմն եր առաքինու-
,, թեանն կատար , իսկ յետ քնի հեշտ և զիւրին ամե-
,, նեցուն , որ և կամեսցի . քանզի ըստ մարզարէու-
,, թեան ամենայն ձորք լցան և ամենայն բլուրք խո-
,, նարհեցան . և դժուարինքն դիւրին եղեն , և առա-
,, պարզն 'ի հարթ ձանապարհս . և յաղագս այսորիկ
,, զաւիթ տարակուսէր , թէ ովլ ելցէ 'ի լեառն տն | .
ովլ ասէ 'ի ստորոտն , այսինքն 'ի սկզբնաւորութիւն ա-
ռաքինութեանց , այլ 'ի լեառն , այսինքն 'ի կատարե-
լութիւն նոցին :

Աշանակի երկրորդ ըստ նմին բարսղի՝ ի մեկնութեան անգ . գերագոյն իմաստութիւն և բարձրագոյն տեսութիւն . * լեառն իմանակը (ասէ) զվերագոյն իմացուածս , և զբարձրագոյն տեսութիւնս || . Օ այս եգեալ հետեւեցուցանէ և ասէ . * որպէս յորժամ՝ ի գլուխս լերանց ելանեմք՝ փոքր երեւեսցին քաղաքը և պարիակը՝ ի գաշտավայրս , իսկ մարդիկ միջման չափ . սոյնպէս յորժամ՝ ի բարձր իմացուածս և յիմաստութիւնս ելանես , ոչ ինչ երկրայինքս քեզ թուին , այլ ամենայն փոքր և արհամարհ երեւեսցին || . { Այս միտս վերածէ և կիրակոս արեւելցի (ի մեկն . հարիւրաւորացն եւազրի . դ . 1 :) }

Յանաւ և դու ընթերցօղդ ելանել՝ ի լեառնս յայս , և լուսաւորեսցիս յայս . զի նա լուսատու է լերանց . (սաղ . հետ . 4) : Խւ որպէս ասէ իմաստունն . իմաստութիւն * ի վերայ լերանց զվարացաց է || . (առակ . ը . 2 :) { Եւանելդ՝ իջանէ առ քեզ անծ , և լուսաւորէ զմիտս քո : || ովլսէս ել՛ի լեառն , և անծ էջ անդը , և լուսաւորեաց զնա (ելից . լդ . 30 :) || իայն թէ յելանելդ՝ ի բաց թող զմորհուրդս մնոտի իրաց : { Եւանել արբահամու՝ ի լեառն եթող՝ ի ստորոտ լերին զէն և զծառայս իւր , և ասէ * նատարնեք դուք այդր հանդերձ իշովդ || . (ծնն . իր . 5 :) Պառ ևս թող զանանական խորհուրդսդ և զզբաղական միտսրդ , և ել՛ի լեառն իմաստութեան կամ հոգեւորական խոկման ընդ իսահակայ , այսինքն ընդ խոնարհութէ . և անդ լուիցես զձայն տեսառն , և մատուցես զպատարագ քո . (ծնն . իր . 11 :) }

Այլ եթէ դու չկարիցես հասանել՝ ի գագաթն , մի տրսմիր , զի այդու ևս գտանես զոր խնդրես . սուրբն յակոր ջանայր ելանել՝ ի զլուխ արարատեան լերին . ոչ կարաց արդարե՝ բայց եհաս փափաքանաց իւրոց ընկալեալ ձեռամք հրեշտակի զիայտ տապանին՝ որում ցանկայր . դու ևս հասանես՝ որում փափաքիս , այն է փայտ փրկութեան՝ որով նշանակի զիւտ փրկութեան : Իստ սմին և յայլամենայն իրս եթէ ջանացես ելանել՝ ի վեր՝ թէ և ոչ հասանիցես՝ ի գագաթն , բայց կտանես զայնպիսի ինչ՝ որով շատանաս , թէ ուսումն իցէ , և թէ արհեստ . միայն թէ մի լքանի-

յիս : « Ք իմիականք ջանան գտանել զոսկի , և ոչ գա-
դարին ՚ի ջանիցն . խորտակին երբեմն անօթք նոյս ,
աւերին բռվք , խանգարին գործիք . այլ նոքա ոչ
յուսահատին , և թէպէտ ոչ գտանեն զոսկի , բայց
գտանեն զազգի աղջի գիւտս օգտակարս . ըստ սմին
է աեսանել և ՚ի հոգեւոր խմասութիւնս , ևս և ՚ի
մարմնաւորս :

Աշանակի երբորդ՝ առանձնական կեանք և կրօնաւո-
րական վիճակ : Եւ զի այս ամենայն բարձր է և զե-
րազանց , մարթ է վասն ամենայնի այսորիկ հարցա-
նել . ուղիւցէ : Այս հարցման կարգաւ պատաս-
խանի տայ մարգարեն , և ասէ :

Պ . Շ բ է յետօս , և անբէծ սրբէւ . որ մէ առ զնանքու-
թի յանին է-ը , և մէ երդուառ նենդութէ (ընդ) ըն-
էլլէ է-ըրուամ :

Օ երբեակ չարիս հեռացուցանէ մարգարեն յայնպի-
սի անձնէ , որ կամիցի կալ առաջի տն . նախ ըստ խոր-
հըրդոց , այսինքն ըստ ներքին գործողութեան մտայ և
կամաց . յասելն , անբէծ սրբէւ : Երկրորդ՝ ըստ ըանից՝
յասելն , մէ երդուառ նենդութէ , ևն : Երբորդ՝ ըստ գոր-
ծոց , յասելն , ուր յետօս , որոց զնանան եղ և ՚ի սադ-
ժէ . (տես անդ :) Այս զայսոտիկ ըստ այսմ կարգի
ոչ թուէ մարգարեն , այլ նախ զգործոց խօսի . վասն
զի նովաւ առաւել յայտնի երեկ որպիսութիւն կենաց
մարդոց . սմին իրի ասէ :

Պ . Շ բ է յետօս : Ո՞ւ ասի իմն երեքին : Ո՞ի բացասա-
բար , որով նշանակի այն՝ որ չունի աղտ ինչ կամ
զմեղս , և կամ զայնպիսի ինչ , որ ներհակիցի մաք-
րութեան : Երկրորդ՝ զրականապէս , որով նշանակի
այն , որ ունի յինքեան զկատարելութիւն ներհակ մե-
զաց և ախտից . և այսպիսի սրբ բարժապէս խօսելով
կոչի ուղիղ և արդար , կամ առաքինի : Երբորդ՝ յար-
սնուանաբար , կամ փաղանշանութէ . որով նշանակի
այն ինչ , որ թէպէտ և յինքեան չիցէ ոք , բայց նուի-
րելով այ՝ ՚ի սրբութէ նորա ասի ոք , կմէ սրբազան . և
ը այսմ ոք կոչին կահք և սպասք եկեղեցւոյ և պաշ-
տամունք նուիրեալք այ . յոր միտս ոք կոչին և քահա-
նայք և եսլիսկոպոսունք , ևն , թէև մեղաւորք իցեն :

Վրդ հայելով՝ի կարդ բանի սաղմոսիս՝ աստանօր յաւելն որ ո՛ք է չե-սօ , նկարազրաբար և սկզբնաբար առեալ, զբաղ ո՛ք՝ պարտ է իմանալ ըստ առաջնոյն . ըստ որոյ ցուցանէ զայն , որ չունի 'ի ձեռու իւր ըզմեղս կամ զայնպիսի ինչ՝ որ ներհակիցի մաքրութեան կամ կատարելութեան : Իսայ մաքրէ է երկրորդաբար իմանալ նաև ըստ դրական սրբութեան :

Խսկ չե-սօ թէպէտե լսութքոնացին իմանայ զմարմինն , բայց պարտ է ասել , թէ նշանակի աստ գործքն . և այս ըստ հասարակ սովորութեան նր գրոց , որ բազում ուրեք զմարդկային գործս բառիւդ չե-ս՝ բացատրէ . զի որութետե մարդիկ հասարակորէն ձեռօք իւր գործեօք կատարեն զգործ իւրեանց , անուն գործեաց՝ այսինքն ձեռաց զնի փոխանակ այնր անուան , որ զգործն նշանակէ : Այս ըստ այսմ նշանակութե յաւելն՝ որ ո՛ք է չե-սօ . իմացեալ լինի այն , որ ոչ զործէ զշար . կամ որպէս ասացի՝ ոչ զործէ զայնպիսի ինչ , որ իցէ ներհակ բարի գործոց և հեռացուցիչ կատարելութեան վարուց : Խօսելով և զարբութէ խորհրդոց սրտից՝ ասէ :

Ե- անբէծ սրբիւ : Վստանօր բառս անբէծ՝ առաւելինչ ցուցանէ քան զբառդ սոսկ ո՛ք ըստ բացասականն նշանակութեանն , զորմէ զբեցաք այժմ՝ի վերայ . զի ոչ միայն ցուցանէ չունիլ զմեղս , այլև ոչ զբիծ կամ զնանն մեղսոց , այսինքն է յօժարութիւն առ մեղս կամ տրամադրութիւն մեղաց , որ նշանակի բժիւ : Վանզի մեղաւոր մարդ թէպէտե 'ի ձեռն ապաշխարութեան սրբի՝ի մեղաց , սակայն կարէ ունիլ լինքեան 'ի ներքս զրիծ ինչ , այսինքն զարատ ունակական յօժարաւթեան առ մեղս 'ի նախընթաց ներգործութէ մնացեալ , որով և կայ 'ի վտանգի վերստին անկաներոյ , եթէ ոչ ունիցի զգուշութիւն մեծ . և այսպիսիս տիրապէս խօսելով ոչ կոչի անբէծ . զի բիծն տրամադրութեան դեռ 'ի նմանէ : Այս ահայամանէ ևս հեռացուցանէ մարդարէն զմատուցեալն 'ի սին :

Խսկ սրբիւ իմացեալ լինի աստ ազատ կամքն . զի 'ի ոք գիրս ուր ուրեք 'ի գործ ածի առանձինն բառս սէր՝ փոխարքերմամբ իմն դնի փոխանակ կամաց , և յաւէտ ևս փոխանակ ազատ կամեցողութեան . իսկ ուր 'ի գործ

ածի հանդերձ բառիւս էրի համառնք՝ զնի փոխանակ մտաց, և երիկամունքն փոխանակ կամաց . ըստ այնու (սաղ. է. 11.) * որ քնննե զսիրտս և զերիկամունս ու ած արդար || : | շ զի աստ առանձին վարի բառս սիրո՛ զնի փոխանակ ազատ կամաց, կամ որպէս աստ ցի՛ փոխանակ ազատ կամեցողութեան մարդոյ՝ ոչ սոս կապէս ըստ որում է կամք, այլ ըստ որում առաջնորդի խորհրդածութե՛ գործնական մտաց՝ յօժարիլ 'ի բարին և խոտորիլ 'ի չարէն :

Ե յսպիսի կամք յայն սակս օրտի նմանի, զի որպէս սիրտն է սկիզբն կենաց, սցնակէս և այս կամք սկիզբն է բարի կամ չար կենաց . վասն զի եթէ իցէ աղտեղեալ մեղօք, և կամբծիւ անկարգ տրամադրութեան, մինի սկիզբն չար կենաց . իսկ եթէ իցէ աղտատ 'ի մեղաց ևս և 'ի բծէ անկարգ տրամադրութեան կամ սովորութեան՝ լինի սկիզբն բարի կենաց՝ ունելով առ իւր զօժանդակութիւն անային նպաստից : | շ ահա զայս պիսի սիրտ պահանջէ մարգարէն յասելն, և անբէջ սրբէ : | շ զի այսպիսի սիրտ ոչ կարէ մնալ յիւրում անթծութեն, եթէ փոխանակ զհետ լինելոյ կատարելութեց և առաքինութեց՝ տեղի տացէ սնոտի խորհրդոց, զհետ լիցի անկարգ գործոց . սմին իրի յարէ զկնի, և ասէ :

Ո ւ ն չ առ շնանքութեն յանցն էու : | անդութիւն, ունայնութեն, դատարկութիւն, պակասութեն, և այլ այսպիսի սի բառք թէպէտ և ըստ իմիք զնոյն նշանակեն, և երբեմն 'ի տեղի միմեանց 'ի գործ ածին, բայց մարթէ ևս իւիք իւիք զանազանել զնշանակութիւն սոցա ըստ այլ և այլ հայեցուածոյ : | ւնայնութիւնն հայի 'ի չունելութեն կամ 'ի չկայութեն և իցէ իրի : | Դատարկութիւնն հայի 'ի չունելութեն յարմարաւոր իրի : Պակասութիւնն հայի 'ի չունելութեն պահանջելի իրի, ևս և 'ի չունելութիւն այսափ և այնչափ իրի : | յցնապէս և թափուրն գոլ հայի 'ի չունելութիւն պարանակելի իրի : | ասկ նանրութիւնն հայի 'ի չունելութեն այնպիսի իրի : որ է բարոյակէս բարի . ուստի և 'ի մէջ բերէ ոչ միայն զունելութիւն բարոյ, այլ և զունելութիւն չարութեն կամ անկարգութեն . և այս մանաւանդ վասն այսորիկ՝ զի պատճառ լինի այնմ, այսինքն չարու-

թեան կամ անկարգութեան :

Իստ այսմ առեալ լինի աստ բառդ նահրառեիւն . որ պէս և ՚ի սաղ . (դ . 2 .) ուր ասէ մարգարէն . * ընդէր սիրէք նահրառեիւն || : || լր ՚ի վերացեալն խօսելով ՚ի թանձրացեալն տայ իմանալ փոխանակ բառիս նահն , որով նշանակին այնպիսի խորհուրդը կամ գործողութիւնք , որը ոչ միայն են ունայն ՚ի բարեաց , այլ և են վասակար և չար . և նանրացուցանեն զմարդն ՚ի բարւոյ , և լցուցանեն զնա չարեօք . կամ գոնիէ արատաւորեն զանձն , այսինքն զշողին :

Վրդ յետ առաջի զնելոյ մարգարէին վոր լինելն ձեռօք և զանրիծն լինել սրտիւ , ՚ի յարելն զինի զայս բան . որ ու առ վահրառեիւն յանին իւր , յայտ առնետովին զառաւելութիւն կատարելութեան այնպիսւոյն . իբր թէ այնչափ զզուշանալ պարտ իցէ նման մինչև չտալ տեղի նանրութեան , այսինքն վասակար կամ անկարգացուցի խորհրդոց և գործողութեանց : || լր զօրութեամբ իմն իմացուցանէ և զայս , թէ փոխանակ նանրութեան տեղի տալոյ ՚ի հոգի իւր , արժան է ընդունիլ զբարի խորհուրդս , և նորօք առաքի նանալ . և բովանդակ միտ բանին է այս , թէ որ համարձակի եւլանել ՚ի լեառն սուրբ , և յանդիման լինել այ , այնպիսի պարտի լինել , որ չիցէ լեալ զշետ սնոտի և անկարգ իրաց , այլ զշետ բարի խորհրդոց և ուղիղ գործոց :

Վարթ է ևս յաւելուլ թէ զայս բան գնէ մարգարէն իբր բացատրութիւն կամ իբր պատճառ նախրնթաց բանիցն . իբր թէ որ լինելն ՚ի գործս , և անբիծ լինելն ՚ի սիրտս ոչ այլ ինչ իցէ , բայց եթէ շառնուլ ՚ի հոգին զնանրութիւն . և կամ թէ չտալն տեղի նանրութեան իցէ պատճառ որ լինելոյ գործովք , և անը իծծ լինելոյ սրտիւք :

Վ մասնաւորի առեալ սովին այսու նանրութիւն նշանակի մնափառութիւնն , որ զիիութիւն բարի գործոց նանրացուցանէ . զի ՚ի գործել մարգոյ զբարին՝ տայ նման ցնդել ՚ի մնոտիս՝ այսինքն առնել ՚ի փառու մարդկան կամ ՚ի ցցյ նոցա առ ՚ի փառաւորիլ ՚ի նոցանէ , որպէս առնեին գտիրքն և փարիսեցիք , որով զոր ինչ բարի և գործէին առաջի մարդկան՝ կորուսա-

նեին առաջի այ . և փոխանակ աշխատանաց՝ մնութի
փառա ժողովին իրեւ զվարձս . զի * այն իսկ են
վարձք նացա || . (մատ . դը . 2 :) զորոց և անգէ մար-
զարէ ասէ . (ամ . 6 .) * վարէիք բազում (զորձս) և
ժողովիլիք սակառ . ուտէիք և ոչ լինէր 'ի յագուրդ .
զզէնուիք և ոչ ջեռնուիք նորօք . և որ վարձս ժողո-
վէր 'ի ծրարս ծակոտեալս ժողովիր || . այսինքն զոր-
ծէիք առ արտաքս զզործս բարիս , և ոչ ինչ օգտէիք .
յոր միտս յաւելու զայն թէ . * ուտէիք և ոչ լինէր 'ի
յագուրդ || . | յւ եսայի յանդիմաննելովլ ասէ . * ընդ-
էր ոչ կըուէք զարձաթ ընդ հացի , և զաշխատանս ձեր
'ի յագուրդ || (եսայ . ծը . 2 .) կամի ասել . ընդէր
զբարի զործս ձեր ոչ կըուէք ընդ երկնային վարձու .
և էր վասն զաշխատանս ձեր կարգէք 'ի նանիք զովու-
թիւն , և ոչ 'ի յագուրդ ածային վարձուց :

Վնափառն զործէ զմեծամեծս վասն զովութեան , ո-
րով վաճառէ զմեծն ընդ փոքու և ընդ նանրոյ , այս-
ինքն ըլ մնոտի փառաց , զոր աղբեղէն կոչէ որ զինն .
(ամ . մակ . ը . 62 :) | Կարէր այնու զործովլ շահիլ զար-
քայութիւն , շահի ընդ այնր զնանրութիւն : | Երմաննէ-
զբարին առ 'ի հնձել զարն , այսինքն զմեղս մնափա-
ռութեան : | Հշխատի , և փոխաննակ աշխատանաց ցան-
կայ լսել զձայնդ ո՛ : (Ճինաւոր այն կամի զրդիս
ծնանիլ , իսկ հնացօղն զհեշտութիւն . սոյնաղէս այր խո-
նարչ կամի ծնանիլ զհանցյն աստուծոյ , իսկ մնափառն
զհեշտութիւն զովասանութեան , որով շարժէ զանձ 'ի
վրէ ժինդրութիւն : | Վին բարի խնդրէ զհանցս առն
իւրոյ . իսկ եթէ վասն հանցանալց այլոց զարդարեո-
ցի 'ի նախանձ շարժէ զայրն . սոյնաղէս եթէ ոք կա-
միցի զարդարիլ բարեզործութեամբք առ 'ի զովիլ 'ի
մարդկանէ 'ի նախանձ զրդուէ զանձ :

Զիրաւի ցանկալի իմն է զովիլ , բայց ոչ 'ի փոքունց .
այլ 'ի մեծամեծաց . ասպա յաւետ պարտ է մարդոց
ցանկալ զի զովիւսցի յայ՝ որ ամենամեծն է , քան 'ի
մնոտիսասէր մարդկանէ , որով փոխանակ զովիլի լի-
նելոյ առ յայ՝ լինի ատելի :

| Անդրութիւն մնափառութէ ոչ բուսանի 'ի չար զործս ,
այլ միշտ 'ի բարիս . | յւ որակէս ասի , իրեւ ընկուզե-
նի բարդաւաձէ , յայզիս զործոց բարեաց . և սակայն

երիւք վնասէ . մի՞ զի յինքն ձգէ զհիւթս առաքինութեանց . երկրորդ զի թանձր տերեօք ստուեր արկանէ յառաքինութիւնն . երրորդ՝ զի ժանտացուցանէ զօղն, այսինքն զիսկումն մոտաց . թողլ զայն՝ զի որպէս տեսողք ընկուզենացն կոխելով զայգին մերձին առ նա 'ի ժողովել զբնկոյզս , սոյնպէս և մոլութիւնք 'ի տեսանել յումեք զախտ մնափառութեան՝ կոխելով զայզի հոգւացն ժողովին առ նա 'ոչ 'ի քաղել զպտող ինչ 'ի նմանէ , այլ յեղծանել զպտուզս այգւացն :

|| անս այսորիկ սբք առ հասարակ կարի իմն զդուշանային յախտէ աստիք քան յայլ 'և իցէ մոլութեց . զի այլ մոլութիւնք 'ի շարիս ունելով զնունդ , ըստ ինքեան երեխն խորշելի . իսկ սա ոչ 'ի շարն , այլ 'ի բարին մնանելով լինի փարելի , ոչ 'ի մոլի անձանց , այլ յառաքինսեաց . զի որպէս ասացի 'ոչ երեխ սա 'ի շար դործս , այլ յառաքինսական արարս : || սկսանիլ մարդոյ գործել զբարի ինչ , զորօրինսակ՝ առնել աղօթս , պահել զպահս , տալ զողորմութիւն , առնել զիստովանութիւն , մատչիլ 'ի խորհուրդ հաղորդութեան , յօրինել զհառս , տալ զբարոզս , ևն . հասանէ մնափառութիւն , և աղաւաղէ զբարին : || մանրութի մնափառութեան է ստուեր բարի գործոց . իբր զի որպէս ստուերն զհետ երթայ մարմնոյ , սոյնպէս և մնափառութիւն զհետ անդի գործոց բարեաց . միայն հոգիացեալքն ազատ տեսանին : || ինի և ձանապարհորդակից բարւոյ գործոյ . յո՛ւ տեսանել զնա մարդոյ , և յո՛ւ զդուշանալ 'ի նմանէ սպանանէ զբարին , և շարացար վտանգէ զզործօջն բարւոյ . զի օտարացուցանէ 'ի գործոյ : || 'ի կանխեսցէ մնափառութիւն 'ի տեսանել զբարի գործս քո , ասքա թէ ոչ եղծանէ . այլ զու կանխեալ 'ի տեսանել զնա , և 'ի խորստակել : || սի թէ կայ կենդանի մի քարբատեսիլ , որ եթէ նախ տեսցէ զօք՝ տեսութեամբ իւրով սպանանէ զնա . իսկ եթէ նայօլն նախ տեսցէ նա մեռանի . մի թողով և զու մնափառութեան տեսանել զզործս քո , դու տես զմնաս նորա , և նա մեռցի :

Հենք ծովու են խորհուրդք մնափառութեան . արդ հենք ոչ յարձակին 'ի վերայ դատարկ նաւու , այլ 'ի վր լիացելոյ բարեօք . || արաժայոք են խորհուրդք

անափառութեան ծածկեալք ընդ ջրով՝ ի ծովու կենցազոյս . Եթէ կամիս լի բարեօք մոտանել՝ ի նաւահանգիստ առաքնութեան , զգուշացիր՝ ի ժայռից . մանաւանդ զի յանսպիսի պահու յառնէ այս միրիկ՝ այսինքն

Է սատանայ , և խորտակէ զնաւդ և ընկղմէ :

(Կանիր աստ , զի այլ ինչ է գովիլ և փառաւորիլ՝ ի մարդկանէ , և այլ ինչ է ցանկալն գովիլ և փառաւորիլ . բազուլք գովեցան և փառաւորեցան , բայց ոչ նանբացան . զի ոչ ինողեին զնոյն , և ոչ ինքեանց տային զայն , այլ այլ . վասն զի դիտէին թէ միայն այլայէլ է փառք և պատիւ . ուստի ասէ սաղմանէր զուն . * մի մեղ տէր մի մեղ , այլ անուան քում տուք զիառս || . (սաղ . Ճ՛գ . 11 :) Առ սորա պատճառն է , զի յարարածն ամբ երկու ինչ մեծ տեսանի առանձին խորհրդով . օգուտ և փառք . զօգուտն մեղ ետ արարին , զի ինքն ոչ կարօտի այնմ . իսկ զիառսն ինքեան սեպչականեաց , զի ՚ի փառս իւր արար զնմ . յոր միտ ասէ իմաստունն . * զնմ ինչ զործեաց տէր վո՞ իւր || . (առակ . Ժղ . 4 :) յոյր սակս երգեցին հրեշտակը . * փառք ՚ի բարձունս այլ . (զկ . ք . 14 :) իրը թէ միայն այլայէլ է փառք , և ոչ այլում ամենեին . ուստի ինքն ասաց , * զիառս իմ այլում ոչ տայ . (Եսայ . ինք . 8 :) Որով ոչ ցուցանի՝ թէ ամ ոչ կամի ըզ փառաւորիլ այլոց , որովէն ինքն իսկ փառաւորի զայլս . այլ [թէ այլք ոչ են վախճան փառաւորութեան . ինքն միայն է սկիզբն , աղբիւր և կեզրն՝ յորում է էութիւն փառաց , յորմէ է և լոյս փառաց , և առ որ է բերումն ամենայն փառաց :

Ա ան այնորիկ ոչ ոք կարէ իրաւամբք սեպչականել ինքեան զիառս , կամ զնոյն որոնել՝ ի մարդիկ , այլ միայն այ տալ . և այսմ օրինակ ետ քո՞ զանձն իւր ասելով . * ես ոչ ինողեմ զիառս իմ . (յով . Ը . 50 :) Քովար յառնուն զռաբաթք բաղաք , ազդ արար գաւթի , զի եկեալ ինքնին առցէ զայն . որսիս զի փառք յաղթութեան ընծայեսցի զաւթի . (ք . Թագ . Ժք . 28 :) Ոյնսպիս ամ ոք յո և իցէ իրս և յի՞նչ և իցէ մեծագործութիւնս պարտի կամիլ , զի այլ ընծայեսցի փառքն :

Առ արդարե յիրաւի , զի ՚ի նոմանէ է ամ , և նովաւ 3

յաջողի ամ։ ապա եթէ ոք ընկալեալ յայ զբարիս , վասնեսցէ զնոյն ոչ ՚ի փառս այ , այլ ՚ի փառս իւր , այսինքն առ ՚ի փառաւորիլ ՚ի մարդկանէ , զի՞նչ ասէ առ նա ան . * բազմացուցի նմա զարծալթ (իմաստութեան) և զոսկի (շնորհաց ևն) , և նա յաճախեաց (տալ զայս ամ) բահաղու ։ (ովս . ք . 8 .) Այսպիսիս է ահա՝ որ առնու յանձն իւր զնանրութիւն . իսկ որ հեռի իցէ յայսպիսի նանրութենէ՝ նա ասէ արժանի գտանի յանդիման լինելոյ առաջի այ . յոր յաւելու մարդարէն և զհանգամանս կատարելութեան լեզուի իրը երրորդ պայման և ասէ :

Եւ ոչ էրդուան նկատունք ընկերէ իւրում : Խրդնուն է վկայ կոչել զանունն այ և կամ զայնպիսի իրի , որ է այ , կամ որ գմնէ իւիք վերաբերի յան , և վերաբերելովն ածի ՚ի վկայութիւն . զոր օրինակ որ երդնու ՚ի կեանս իւր , կամ յարեգակն , կամ ՚ի հող , ևն , վերաբերութեամբ իմն երդնու յան . զի մարդ յերդնուն ՚ի հող , կամ յարեգակն , ոչ երդնու իրը ՚ի հող կամ իրը յարեգակն , այլ իրը յայն ինչ՝ որ է այ և ընդ տերութքն այ . ապա թէ ոչ՝ ծաղրական լիներ վկայ կոչել զայն ինչ , որ ոչ ինչ զգայ , և անարդ ևս է քան վերդուողն , որպիսի են անզգայ արարածք : Այսդ երդնուն՝ ըստ ինքեան մտածեալ յայնժամ լինի բարի , և ասի ըստ արժանուոյն , յորժամ է ձշմարտութք , արդարութք , և իրաւամբ ըստ պահանջելոյ դատման խոհեմութեան . և այն՝ կամ ՚ի փառս այ , կամ յօգուտ ընկերին , և կամ ՚ի նպաստ անձին՝ առանց մեղաց : Եւ յայտ է թէ զայսպիսի երդումն ոչ արգելու սր գիրն , որպէս երեկի ՚ի գիրս երեմիայ . (դ . 2 .) ուր ասի . * Եւ երդնուցու եթէ կենդանի է առ , ձշմարտութք , իրաւամբ , և արդարութք ։ Խոկ եթէ լիցի երդումն ստութք , կամ անիրաւութեամբ և կամ առանց իրաւանց խոհեմութեան , և անարժան . և զայսպիսի յանի արգելու սուրբ զիրն , զորմէ երկար զըէ բարսեղ վարդապետ (՚ի մեկն . մարկ . գլ . թ . ՚ի յորդորակն :)

Ուստի և յասել աստ մարդարէն՝ որ ոչ երդուան նենդութք ևն , յայս միտս իմանայ , այսինքն է անարժան երդմամբ չերդնուլ . զի այսպիսի երդումն միշտ

դակել յինքեան զնենգութիւն ինչ . այսինքն զխարեւութիւն չար , և այս կամ պարզ և կամ վնասակար : Պարզ նենգութիւն լինի յերգման , յորժամ է սուլ սուտ . և սկզբնաբար հայի յանձն երգուողին , և երկը բորդաբար՝ յանձն ընկերին . որպէս եթէ ոք առ ’ի ոչ մասնիլ ’ի վտանգ ինչ՝ սուտ երգնուցու : || նաև կար նենգութիւն լինի յերգման , յորժամ ոչ միայն է սուտ , այլ և հայի ’ի վնաս ընկերին , կամ սկզբնաբար հայի ’ի խարեւ զընկերն , և հետեւաբար՝ յօգուտ անձին . որպէս որ ’ի վաճառելն ինչ՝ երգնուցու սուտ , յորմէ զնողն վնաս կրեսցէ . և կամ որ չարագոյն ևս է , եթէ ոք կամելով յորոգայթ արկանեւ զընկերն՝ ստութեամբ երգնուցու նմա : || շահա այս առմնշանակի ’ի սմին բանի , զոր ասէ : || յւ ոչ երդուած նենգութիւններ :

Ճնէեցէ էւրում :

Խոդ սովին տայ իմանալ մարդարեն և զայլ առմ մեղս՝ որք գործին բերանով լընդդէմ այ և ընկերին , որով և ազդ առնէ՝ թէ չէ հնար այսպիսի մարդոյ արժանապէս մոտանեւ առաջի այ , և կալ յանդիման նորա . այլ պահու է նմա լինել այնպիսի՝ որ ազատ իցէ յայսպիսեաց աստի . ևս և անմեղ , անարատ և կատարեալ յամի՝ ’ի խորհուրդս՝ ’ի բանս և ’ի գործս :

Եւ յապիսի վիճակ սրբութեան և կատարելութէ տիրապէս և յատիկապէս առեալ քոփի եր սեփական . քանզի ով յորդիս մարդկան գտանիցի ամենեւին ազատ յամ մեղաց , թէ և միոյ աւուր իցեն կեանք նորա . բայց միայն յա քո մեր , զի նա միայն է որ կարէ վկայել զանձնէ . * ով ’ի ձէնց յանդիմանեսցէ զիս վասն մեղաց . (յովէ . ը . 46 :) զորմէ և առաքեալն զըէ * որ ոն արար մեղս , և ոչ դտաւ նենգութիւն ’ի բերան նորա || . (ա . պետ . ը . 22 :) ուստի և պօղս զըէ թէ նա միայն է * որ անմեղ անարատ , զատեալ ’ի մեղաւորաց , և բարձրացեալ քան զերկինս || . (երբ . է . 26 :) Որոյ վասն նմա միայնոյ եր ինքնիշխան արժանապատութեամբ ելանեւ ’ի վերոյ քան զլեառն սուրբ յերկինս . ըստ այնմ՝ զոր ինքն ասաց . * ոչ ոք եւ յերկինս՝ եթէ ոչ որ էշն յերկինից՝ որդին մարդոյ , որ էն յերկինս || . (յովէ . դ . 13 :) Օ որմէ բազում ինչ կարես տեսանեւ ’ի թուղթման պօղսի (մանաւանդ

՚ի թուղթն առ եբայեցիս առ . 3 : ք . 9 : կ . 14 :
շ . 20 : է . 25 : ը . 1 : թ . 12 : ժ . 12 : ժք . 2 : ևն ,)
Հորս աւանդի թէ զիարդ տէրն մեր ըստ օրում մարդ
իւրով սրբութք ել՝ ի լեառն յայն սուրբ յերկինս , և
կայ յանդիման հօր ող ՚ի փառս . և ունի վերածել՝ ի
նոյն ևս և զեկեղեցի իւր՝ և յանդիման կացուցանել
զայն ինքեան . ըստ այնմ՝ զոր ասէ նա ինքն առա-
քեալն . քո * սիրեաց զեկեղեցի , և զանձն իւր մատ-
նեաց վասն նորա , զի զնա սրբեսցէ սրբութք աւազա-
նին բանիւ . զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառա-
ւոր զեկեղեցի . զի մի ունիցի ինչ արատ կամ աղտե-
զութիւն կամ այլ ինչ յայսպիսեաց աստի , այլ զի
իցէ սուրբ և անարատ || . (Եփես . ե . 26 :) Ա. Յ. Ք. բանի
բան մարգարեին ըստ ճառին հայի յանձն անարատ ,
և ընդ նույն յեկեղեցի սուրբ , ՚ի նոյն դարձուցանէ ըզ-
գէմ ճառին իւրոյ և ասէ :

Ե . **Ա** ա-ցէ զօրհնոսելի է դնէ . զողոքութիւն յաստուծոյ
Քէլչէ է-ըէ :

Եհարց նախ թէ ավ ելցէ ՚ի լեառն ՚որ յանդիման լի-
նել տն , և ետ պատասխանի , թէ նա միայն կարէ ,
որ ՚որ է ձեռօք և անբիծ սրտիւ , ևն : Օ այս եղեալ
յայտ առնէ այժմ՝ թէ զինչ շա՞չ և որ օգուտ լինիցի
այնմ , որ այսպէս ՚որ զողով արժանանայ կալ յանդի-
ման տն . և զայս կամերով յայտնել զերկուս մեծա-
մեծս առաջի դնէ , այսինքն զօրհնութիւն և զողորմու-
թիւն . յասեն :

Առաջիկ պարհութեան է ի առևէ . զաղը մասնէ յայ է ի էլէ է եւրէ .
Օքչնութիւն յինքեան առեալ և ըստ նիւթօյն՝ նշանակէ զիտութիւն իրիք բարւոյ կամ կատարելութեան և այն տեղապէս . յոր միտ ասաց իսահակ ցեսաւ . * 'ի ցօղց երկնից 'ի վերուստ եղիցի օքչնութիւն քո || .
(Ճնն . իէ . 39 :) իսկ առ արտաքս առեալ յառար կայն հայելով , երբեմն նշանակէ զտութութիւն այնր բարւոյ . յոր միտ ասաց անձ . * առաքեցից զօրչնութիւն իմ 'ի ձեզ || . (ղետ . իէ . 21 :) Երբեմն զմեր ձեցուցումն այնր բարւոյ բանիք կամ մաղլթանագ , որ և ասի բարեմաղթութիւն . յոր միտ ասաց մովսէս . * ահաւասիկ տամ այսօր առաջի ձեր զօրչնութիւն և

զանեծս || . (բ . օթ . ժմ . 26 :) Եշրեմի զայտարա-
բութիւն այնը բարեց . և այս առաջի դնի ՚ի ձեւն
բայից . յոր միտ ասաց եղիսաբէթ առ սուրբ կոյսն .

բարեաց, կամ զմեծամեծ բարիս տևողապես :

Ղակ ողբերաբեկան նշանակիչ զայտապիտի ինչ տուղթ կամ
պարզեց, որով բարձեալ լինի թշուառութիւն կարօ-
տութեան կամ աղքատութեն ևն. նշանակիչ ևս զայ-
տութիւն այնոր պարզեի առ ՚ի բարձումն թշուառութե:
՞ Օ այսպիտի պարզես ևս արցէ ասէ յայ գրէչ եռէ.
որով էթէ ունիցի թշուառութիւն ինչ վ՛ա կարօտութե:
իսիծ, բարձողի այն ՚ի նմաննէ:

Օ այսոսիկ ասելով մարգարեին լռելեայն իմն օրի-
նակ կամի տալ այս զգիուուածն արեգգարսյ , առ
ի հաստատութիւն բանից իւրոց , զոր և աչօք իսկ ե-
տես . քանզի որպէս պատմէ ածաշունչն (ը . թագ . կ .
11 .) ի մնալ տապանակի տեառն 'ի տան արեգգարսյ
օրհնեաց տէր զարեղդար և զամենայն տուն նորա ||
Եւ որպէս ասացաք 'ի վերոց , զայն օրհնութի տեսեալ
գաւթի՝ վատահացաւ հանել զտապանակն 'ի սիռն
լեառն : Արդ որպէս արեգգարս սրբութեամբ կալու ա-
ռաջի տեառն օրհնեցաւ 'ի նմանէ , և եգիտ պարզես ,
ոյնպէս և որ կայ ասէ առաջի տեառն սրբութի , առցէ
զօրհնութիւն և զողորմութիւն : Ուր ասէ լամ' . թէ
առ առնելոյ զայտոսիկ պիտոյ է լընդունողն ախորժ .
վասն զի ած թէպէտ միշտ կամի տալ զօղորմութիւն
իւր և փրկել , բայց ասէ * ոչ կամի առանց մեր զնոյն
ախորժելոյ ||

Ա. Հ. Քննել արժան է, թէ ընդէր մարզաքէն յայ-
ղսսիկ երկուսին հատուածսդ ոչ զնոյն բառ՝ ի կիր առ-

նու , այլ զայլեայլ . զի յասելն օրհնութիւն՝ դնէ ըզ-
բառդ՝ ի պնէ , կամ ըստ եբրայականին է է հօջա . իսկյա-
սելն՝ զողորմութիւն , դնէ յայ քրիչ իւրէ , կամ ըստ եբ-
րայականին յայ քրիստէ իւրոյ : Խրկոքին ևս թէպէտ ՚ի
նոյն հային , և վասն ստանաւոր լինելոյ բանիցն այս-
պէս կարգին , ստիայն պատճառ զայդոսիկ բառսդ վա-
րելոյ՝ այն է , զի օրհնութեանն բարւոք յարմարի տէր
դնել կամ եէհօլա , այսինքն որ էն , կամ յաւիտե-
նական . և ողորմութեան՝ ած փրկիչ , կամ ած փրկու-
թեան . զի ած ըստ որում որ ամ բարեաց՝ և ըս որում
որ էն յաւիտենական՝ տայ զայնպիսի օրհնութիւն , որ
մնայ յաւիտեան : Խակ ըստ որում փրկիչ՝ տայ զողոր-
մութիւն իւր՝ առ ՚ի զերծուցանել՝ ՚ի թշուառութէց :
Վմին իրի ըստ մասին օրհնութէ՝ դնէ . * առցէ զօրհ-
նութիւն՝ ՚ի տնէ . իսկ ըստ մասին ողորմութեան՝ դնէ ,
առցէ * զողորմութիւն յայ փրկիչ իւրմէ . Հառաջ-
նումն ու դնէ զբառդ իւրէ , այլ յերկրորդումն . զի
մարդ առաւել յայսմ քան յայնմ՝ իւր ձանացէ զբա-
րերարն . վասն զի ընկզմեալ զոլով՝ ՚ի թշուառութէ՝
եթէ գտցէ յումեքէ զօրհնութիւն և զողորմութիւն՝
առաւել ուրախանայ ընդ ողորմութիւնն քան ընդ օրհ-
նութիւնն . որովհետեւ առաւել է տհաճութի մարդոց
ընդ թշուառութիւնն , քան հաճութի նորա ըլ լիութի .
ուստի եթէ ընդունելութիւն օրհնութէն տայ ձանա-
ցէ լինել տուողին . ազատութին՝ ՚ի թշուառութենէ
տայ ձանացէ ՚իւր լինել փրկողին : Վայլ ըստ կարգի
իրացդ հայելով՝ պատշաճ թուի ասել , թէ դերա-
նունդ իւրէ առ երկոսին ևս վերաբերի , այսինքն առ
տէրն և առ փրկիչն . զի որպէս՝ ՚ի փրկչ իւրմէ առնու
զողորմութիւնն , նոյնպս և ՚ի տնէ իւրմէ առնու զօրհ-
նութիւն :

Վայսպիսի իմն փոխադարձութիւն գտանի և ՚ի գիրս
ծննդոց . զի յառաջ քան զսպատմել նորա լրապէս
զստեղծանիլ մարդոց . ու դնէ զանունս տէր , այլ ած
միայն . իսկ ՚ի պատմելն զայնամանէ լրապէս՝ դնէ միան-
գամայն տէր և ած , յասելն . * և ստեղծ որ ած ըզ-
մարդն հողյերկիչ . (ծնն . թ . 5 :) վասն զի այլ
արարածք որը կան ՚ի վր երկրի թէպէտ և կատարեն
զհրամանա այ . զի զօր ինչ սահմանեալ է՝ առնեն ,

բայց ոչ առնուն զվարձա 'ի նմանէ իբր ՚ի տնէ , և ոչ
ժառանգեն զնա . իսկ մարդու ոչ միայն կատարէ ըզ-
հրամանս նորա , այլև առնու վարձա 'ի նմանէ իբր ՚ի
տնէ , և ժառանգե զնա իբրև զանց ըստ ցուցանելոց
սաղմուխա :

Վ յսոքիկ բանք ուղղագոյն ևս հային առ քո , և յայտ
առնեն , թէ յելանել նորա յիմանալի լեառն՝ այս-
ինքն 'ի համբառնալնորա յերկինս՝ 'ի կերպարանս ծա-
ռայի էառ ըստումմարդ * (Օօրհնուի 'ի տնէ || . այս-
ինքն զամ լիութի բարեաց և փառաց 'ի հօրէ վու իւր .
և * զողորմութի || , վու մարմնոյ իւրոյ , այսինքն վասն
եկեղեցւոյ * յայ փրկչէ իւրմէ || , ըստ որում բաղում
ուրեք սաղմոնսերդուն 'ի դիմաց քմի՝ փրկիւ իւր կոչէ
զհայր և ասպեցուցիւ . քանզի և ինքն քու ասէր առ
հայր . (յովլ . ժը . 27 .) * Հայր ասպեցու զիս 'ի ժա-
մէ աստի յայսմանէ || : (ջե՞ս և 'ի սաղ . իս . 1 . և
2 . և 20 . և 21 .)

Վ յս ամ՝ զոր ասացաք , հայի և առ իւրաքանչիւր հա-
ւատացեալ անձն , որ սուրբ է ձեռօք ևն . զի սա ունի
ելանել 'ի լեառն սուրբ յերկինս , և առնուլ զօրհնուի
յաւիտենական երանութիւն , որ տուեալ լինի արդարու-
թիւ և ողորմութիւն . արդարութիւն ըստ դաշնն՝ զոր ե-
ղեալ է անծ . ողորմութիւն՝ ըստ չնորհացն , զոր տու-
եալ է . վասն զի անծ 'ի տան սրբ զփառս տայ վասն
նախրնթաց ողորմուեն , զոր եցոյց առ նոսա , և 'ի սլը-
սակել զարդիւնս նոցա՝ զիւր պարզեասն սրակիւ . և 'ի
փառաւորել զգործս նոցա , զիւր չնորհն փառաւորէ .
ոչ զի նորա ոչ ինչ զործեցին , այլ զի զոր ինչ զոր-
ծեցին 'ի չնորհաց նորա զործեցին , և չնորհօք նորա
կատարեցին , սրով և արժանի եղեն վարձուցն արդա-
րութիւն : Վ յլ այս բան սաղմոնախ պատշաճագոյն ևս
հայի առ եկեղեցին այ , զոր և 'ի մէջ բերէ մարդարէն
'ի յաջորդ համարն , 'ի գէմս այնորիկ՝ զոր կոչեաց որ
և անբիծ . ասելով :

Հ . Ա պ է , ո՞ւ ինդէ ո՞ւր , ինդէ ուստանել ո՞ւրէս
այ յակոբայ :

Վ ովին այսու առաջի զնի նախ հանգամանք փութոյ
այնորիկ՝ զորմէ ասաց մարդարէն՝ սա առցէ զօրհնուի

ԱՅՆ . և ապա 'ի մէջ մաստուցանի վախճան կամ նպատակ փուլթոյն : Օ առաջնոյն խօսելով՝ ասէ :

Այս աղջ է՝ որ ինդրէ զդր : Դասուս այս աղջ՝ դնի աստ փոխանակ բառիս այսպիսէ . որպէս ասէ և ծործորեցին ('ի մեկն . մատ . գլ . իդ .) զի յարաքերէ զնախայիշեալ անձն , և բանն իսկ զնմանէ է . ուստի և 'ի դնելն՝ այս աղջ է՝ որ ինդրէ զդր՝ կամի ասել . ահա այսպիսիս է՝ կամ այսպիսի արժանաւոր անձն է որ ինդրէ զտէր , և որ ցանկայ գտանել զնա : Եւ զի նապատակ իննդրելոյ այնպիսւոյն զտէր ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ տեսանել զնա , վոյ յաւելու և ասէ :

ԱՅՆԴՐԷ ուսանել զէրեսս այս ասէնքայ : Այսինքն 'ի ցանկալ այսպիսւոյն գտանել զտէր՝ ցանկայ յանդիման լինել առաջի նորա և տեսանել զերեսս նորին :

ԱՅԼ յարմարագոյն ևս է՝ զբարդ այս աղջ՝ մեկնել 'ի վր եկեղեցւոյ՝ թէ ըստ հին վիճակի մնածեսցի , և թէ ըստ նորոյն . զի որովհետեւ միայն եկեղեցի այ է որ ում մասամբք , արժանապէս ասի , թէ այս ազգ , այսինքն այս սբ եկեղեցի է՝ որ ինդրէ զտէր . այսինքն փափաքի՝ առ իւր ունիլ զբրիստոս . և կամի տեսանել զերեսս նորա , և ցանկայ ժառանգել զնա յաւիտեան , ևն . կամ թէ այս եկեղեցի՝ որ ըստ նախազգելցոյ ելանէ 'ի լեառն սուրբ յերկինս , այնայիսի ազգ է , որոյ գործ է իննդրել զք՞ո , ծառայել նմա , և կատարել զհաճոյն նորա :

Ո՞արթ է ըստ սպատշաճի ևս՝ այսու իմանալ զազգն իարայէլի , հայելով 'ի հանդէս յուղարկաւորութեան տապանակին . որպէս թէ ասայեալ էր . այս ազգ է ազգս իարայէլի՝ որ բարձեալ բերէ զտապանակին ո՞ն 'ի լեառն սիսն . և իննդրէ տեսանել անդ զերեսս այ . վոյ ու իշխանք զբանց տաճարին , համբարձէք ըզդրունադ 'ի վեր . ևն :

Այստանօր 'ի սաղմաս երբայեցւոց դնի բառս ուլ . և 'ի մերում թարգմանութեան 'ի ձեռագիր սաղմասս ինչ դնի բառս հանդիսա . զոր երբայեցիք իմանան ասել դլա , և այլք ձշմբիս . և բաղումք ևս ընդհարուն կամ այլադիսան՝ որով ըստ յարմարական մեկնութեան ցուցանի՝ թէ աստ սպարտ է զիայ առնուլ և հանդիսատ տալ , ևս և փոխել զեղանակ ձայնին : Վանզի և զէմք

բանին վորսին յայլ . զի մարգարեն որ նախ խօսեցաւ
զորութէն այ , և ապա զհանդամնաց այնորիկ՝ որ
կարիցէ եւանել՝ ի լեռուն որ՝ 'ի տեղի այ . այժմ գար-
ձուցանեւ զգէմն բանիցն , և խօսի առ այնոսիկ և 'ի
դիմաց այնոցիկ՝ որք կան ի լերին անդ ՚ի պահպանու-
թի տեղւոյն սըյ . վայ ասէ :

Ե .  ամբարչէն էշանին զորուն չեր ՚ի վէր . համբարչյուն
դրունին յաւելունից , և մոյէ նադար դառաց :

Ը .  է սս նադար դառաց . այ հզօր զօրութեք էրուն
պը հզօր ՚ի պատերազմի :

Ժ .  ամբարչէն էշանին զորուն չեր ՚ի վէր . համբարչյուն
դրունին յաւելունից , և մոյէ նադար դառաց :

Ճ .  է սս նադար դառաց . այ զօրութեք՝ սս ինչն է
նադար դառաց :

Որպէս սասայաք ՚ի սկզբան սաղմոսիս , զայս սաղմոս
սասաց դաւիթ ՚ի տանին և ՚ի վերածելն զտասրանակ
տն ՚ի սին լեռուն . ուր նորոգ պատրաստեալ էր խո-
րան և գաւիթ նմին , ըստ ձեռյ մովսիսեան խորանին .
կային անդ և քահանայք և իշխանք քահանայից , ևս և
դռնապանք և պահապանք . որոց ամենեցուն պատուեր
տուեալ էր զգոյշ կալ , զի ՚ի հասանել անզը տապա-
նակին , և յազդ առնել առ նոսա՝ վաղվաղակի բացցեն
զգրունս , առ ՚ի փառօք ընդունիլ ՚ի ներքս զտապա-
նակին տն : Վու սոսա ահա հայելով կարգէ զբան իւր
և ասէ :

 ամբարչէն էշանին զորուն չեր ՚ի վէր : Այնպիսի ինչ
է սասայեալս որպէս թէ նա ինքն դաւիթ և բազմու-
թիք ժողովրդեան՝ որք երթային առաջի և զինի տա-
պանակին , ՚ի մերձենալ նոցա ՚ի սին՝ աղաղակաւ իմն
ձայն արձակեալ իցեն առ իշխանս տեղւոյն . համբա-
րչէն էշանին զորուն չեր ՚ի վէր . այսինքն ովլ իշխանք սիո-
նի և իշխանք քահանայից և բարապանք՝ որք կայք ՚ի
տեղւով սրբութէն տն բացելք զգրունս տաճարիդ , զի
ահա և հաս թագաւորն փառաց :

Այս եղանակ խօսից ոչ այլ ինչ ցուցանէ , բայց

Եթէ զմեծութիւն եղելցին , ցուցանէ և զմեծութիւն փառացն այ . ցուցանէ նաև զմեծութիւն փափառանաց սրտի մարդարեին , որով ցանկայը մեծացուցանել զփառ այ , և մղիւր այսպիսի իմն գերապանձ օրինակաւ բարբառիլ :

Վայլ քննել արժան է . զի ոչ ասէ բացէք , այլ համբար չէ՞ ուրանո յեր 'է վէր . վասն զի այն դրունք խորանին որովշետե կտաւեայք էին՝ ըստ վարագուրծի՝ 'ի վեր բարձրացուցանելով կամ առ 'ի կողմն ձգելով բացեալ լինեին . Խակ եթէ չեին այսպիսի , այլ գրունք փայտաշնք և փեղկաւորք , պարտ է ասել՝ թէ այս ոճ բանի յայտ առնէ զայլ և այլ հանգամանս բանալոյ իշխանաց զգրունս . մի՝ զի ըստ ամի և բոլորովին բացցեն , որպէս թէ համբարձեալ լինեին . երկրորդ՝ զի վաղվաղակի բացցեն . և երրորդ՝ զի յօժարութք և իրը թէ անաշխատ բացցեն : Վարթ է ևս ասել , թէ որովշետե բարձր էր տեղին , ուր կային բացողք զրանցն , բացումն այնց զրանց հայելով 'ի ստորինս՝ ամբարձումն ասի , զորմէ կրկին ևս խօսելով մարդարէին՝ յաւելու ասել :

Համբարչյին դրունք յաւելունից : Վայս բան է յայտարարութիւն ինչ փութով բացեալ լինելոյ զրանց , և այն պիսի փութով մինչև հրամայիլ նոցա զի 'ի շարժել վնսա դռնապանաց , կամ 'ի վերացուցանելն՝ մի զանդաղեցին , այլ իսկոյն բացցեն . որպէս թէ ինքնին բացեալ լինեին՝ առ 'ի ընդունիլ 'ի ներքս զտապանակն :

Վայս զբունք ասին յաւելունից , ոչ զի յաւիտեան ունեին տեսել . այլ զի համարեալ լինեին՝ հաստատունք , որպէս թէ տեսելոց իցեն յաւիտեան այսինքն երկար ժամանակ . և կամ զի 'ի յաւիտենից , այսինքն 'ի սկզբանէ հետէ , և 'ի վաղ ժամանակաց չեին այսպիսի իմն օրինակաւ բացեալ , այլ որպէս թէ կային փակեալ 'ի յաւիտենից առ 'ի ընդունելոյ 'ի ներքս զայսպիսի հանգէս . կամ զի էին մեծք յոյժ , որպէս թէ մեծացեալք էին 'ի սկզբանէ . զոր օրինակ յասեն . ծառք յաւիտենից , աղբիւրք յաւիտենից , ևն . մեծ լինել նոցին ցուցանի : Խակ կամ զի յաւիտենական զրանց , այսինքն երկնային կայանաց էին օրինակք .

և վասն այնորիկ կոչեցեալ եղեն՝ յաւիտենից : Վայոցիկ դրանց ահա հրամայեալ լինի աստ , զի բացցին . որպէս զի մոցէ 'ի ներքս տապանակն ոտն , ուստի և յարէ զինի՝ ասելով :

Ե - նոյն նուգաւոր ժառաց : Վապարէն տապանակն էր մոտանելոց 'ի տաճարն , բայց ոչ ասէ մոցէ տապանակն , այլ թագաւորն փառաց . զի որպէս բազում անգամ ասացաք , տապանակն այն յանդիմանն առներ զներկայութիւն թագաւորին փառաց . և այն պատրաստութիւն մոտանելոց 'ի տաճարն՝ էր վասն նոյն թագաւորի :

Մարդարէն նուգաւոր ժառաց կոչելով զնծ , յայտ առնէ , թէ միայն նա է թագաւոր փառաւորեալ յիշեան և արտաքոյ ինքեան , և ամ փառք 'ի նմանէ էն , և նման միայնոյ վայելեն : Վէ ասէ ո՛ք ժառաց , այլ նուգաւոր ժառաց , առ 'ի մեծ և հռչակաւոր երևեցուցանել զներկայութիւն նորա . զի ոչ ամ որ է տէր ահեղ ներկայացուցանէ զննքն , բայց որ թագաւորն է՝ ահեղ հանդիսացուցանէ զներկայութիւն իւր . և զի բանք մարդարէին հային 'ի հանդէս ներկայութեանն այ՝ վասն այնորիկ դնէ նուգաւոր ժառաց . այսինքն ամենեին ժառաւոր , և ամ փառաց ունօղ ,

Վայիսի թագաւոր փառաց ձանաշելով դաւթի զնծ՝ զի անձն իւրոյ , և զի անձն թագաւորութեն՝ զոր ունէր , առաջի տապանակի նը տարածէր իրեւ 'ի ներքոյ ոտից նորա . որպէս որ տարածիցէ զհանդերձ իւր ընդ ոտիք թագաւորի յանցանել նորա : Առ սովոր այսու առաւել ևս շքեղապանծ ցուցանէր զմեծութիւն այնք հանդիսի , որով ածէր զտապանակն 'ի սիռն լեառն . մինչև զարմացուցանել զնմուին , մանաւանդ զիշտանս սիռնի և զմեծամեծն և զպահապան զրանց տաճարին : Օ որոց զկիրսն գեղեցիկ իմն առաջի նկարէ 'ի յաջորդ համարն , իրը թէ կարի իմն զարմանալ նոցա ընդ տեսիլ այնպիսի հանդիսի և ընդ լուր այնպիսի բարբառոյ . և հիանալով հարցանել :

Ը . Ո՞ւ է սա նուգաւոր ժառաց : Վայ բան ըստ ասելոյ մեր այժմ , է 'ի բերանոյ իշխանաց և բարապանաց տաճարին , որպէս թէ ասէին . ով է այն՝ զորմէ ասէք՝ թէ ահաւասիկ զայ թագաւոր փառաց մտանել 'ի

ներքս . սա՝ զօր բարձեալ բերեք , փառաւորութիւննէ
ոչ ունի , և ոչ իսկ է թագաւոր . զի է սոսկ տապա-
նակ ո՛ն , և զիարդ ասեք , թէ է թագաւոր փառաց :
Այսմ զարմացման և հարցման նոցա պատասխանի առ-
նէ , և ասէ :

Sէ հջօր ջըրութեամբ իւրուշ , որ հջօր 'ի պատերազմի : Այս
բան ոչ միայն 'ի բերանց զաւթի ասի , այլ և 'ի բե-
րանց ամեն նոցա , որք տանեին զտապանակն . և
այսու պատասխանեաւ կամէին ասել , թէ այն փա-
ռաց թագաւորն , զորմէ ասացաք թէ ահա գայ , սո-
վին տապանակաւս յանդիման լինի . և է նա ինքն ողբն
ամի՞ ող հզօր , այսինքն ամիւ զօրաւոր . վասն զի ոչ օ-
տարի զօրութիւն և ոչ ստացական արութիւն , այլ իւրուլ
ինքնաբաւ զօրութեամբ է հզօր և կարօղ . հզօր 'ի հրա-
շագործել , հզօր 'ի պաշտպանել , հզօր 'ի զատել , և
առաւել ևս հզօր և կարօղ 'ի վանել զթշնամիս մեր .
քանզի յամ պատերազմուն , զօրս յարուցին թշնա-
միք 'ի վերայ մեր , նա ինքն պաշտպան եղեալ մեզ՝
խորտակեաց զնոսա , և պահեաց զմեզ , և պահէ մինչեւ
ցայսօր . և արդ փութացարուք բանալ զդրունադ , և
ընդունիւ զհզօր թագաւոր մեր 'ի ներքս : Ամին իրի
յարէ զինի և ասէ :

թ . **Հ**ամբարչէն իշխանս ուրբանս յէր 'ի վէր . համբարչէն
ուրբանս յատիտենից , և նոյն թագաւոր փառաց : Այս կրկ-
նումն բանի ոչ այլ ինչ ցուցանէ բայց եթէ զստի-
պումն փութով բանալց զդրունան . որպէս թէ ասէր .
զի յապաղէք , զի խորհիք , զի հարցանէք . փութա-
ցէք բացէք զդրունադ , զի ահա եհաս թագաւորն փա-
ռաց : Իսկ նոքա կրկին ևս հարցանէն :

Ժ . **Ա**շէ սա թագաւոր փառաց : Այսինքն թէ ով է
սա զօր զուք թագաւոր փառաց հըշակեք , և ասէք
լինել տէր հզօր ևն . զի մեք այսպիսի ինչ ոչ տեսա-
նեմք առաջի : Այսմ տան պատասխանի :

Sէր ջըրութեն , սա ինքն է թագաւոր փառաց : Արպէս թէ
ասէին . սա ինքն՝ զօր մեք ասացաք լինել տէր հզօր և
տէր զօրութեն , ահա սա ինքն է թագաւոր փառաց , կամ
թէ սա նա ինքն է՝ զօր մեք խօսիւլացիքս կոչեմք ուէր
ջըրութեն և թագաւոր փառաց . և սա ինքն է նա , որ յան-
զիման լինի ներկայութիւն տապանակիս :

զնի և 'ի սաղ . (ձե . 4 .) Ուր ուղղին հայի 'ի համարի կամացն այ առ 'ի յիշել զինքն . և ուղղին հայի յամ . յիշաւարութին նորին , յու յիշելնը զմեղսն :

Իստ բանի քաղցր գողցն խօսեցաք այժմ . իսկ ըստ նի ուղիղ գողցն գիտելի է՝ զի ուղիղն ըստ դրում առեալ լինի աստ , նշանակի զայն՝ որում ոչ համաձայնի թիւրն , այլ հակագրի . և քանզի մեղքն է թիւրութին անհուն՝ անհնապէս հակագրեալ ուղղութեանն այ , յիշել այ զմեղս՝ է անհուն ատելութք հայիլ յայն , այսինքն է անհնապէս ատել զայն , և յանհուն յափառեանս դատապարտել . իսկ ոչ յիշելն զայն՝ է թողութ . (տես և 'ի սաղ . ժե .) Արդ ասէ՝ որովհետեւ ամեննեին քաղցր և ուղիղ ես տէր , աղաւեմ զքեզ՝ զի որպէս քաղցր գոլով արժան է քեզ յիշել զիս , սոյն պէս և ուղիղ զոլով վայել է քեզ թողուլ զմեղս իմ և ջնջել . զի մի յու ջնջիլ նորին , ջնջես զիս յերեսաց քոց :

Այս բան՝ որ ասի . * զի քաղցր և ուղիղ ես || . կարե իբր պատճառ դնիլ նաև յաջորդ համարոյն ըստ իմաց ուածոյ նորին , որպէս է յերայականն և յայլ թարգմանութիւնս . վասն որոյ և իբրև զհետեւութիւն պատճառի կարէ յարիլ 'ի նոյն , զոր ասէ :

Է . Ա ան այսորի օբենուգէտ առնես զմշատորս 'ի մահապարհ . առաջնորդես հեղոց 'ի դադասարներ . սուսուցանես հեղոց զմանապարհս ուր ,

(Օբենուգէտ առնել այ է լուսաւորելով զմիտս մարդոյ , և կամ ազգելով 'ի նա զլոյս իմանալի՝ տեղեակ առնել զնա օրինաց , ոչ զի զիտաացէ , այլ զի արասցէ . կամ զի այնպէս սաստիկ ըմբռնեսցէ զմիտս օրինաց՝ մինչեւ յօժարիլ 'ի կատարել զայն . նաև զի տեսեալ թէ թիւր է նանապարհ իւր՝ խոստրեսցի անտի , և զնասցէ 'ի նանապարհ՝ զոր ցուցանեն օրէնքն այ : Արդ որովհետեւ ասաց 'ի վերոյ թէ քաղցր և ուղիղ է ած , և վասն այսպիսի լինելոյ՝ ոչ կամի զմոլորիլ և զիրոնչիլ մեղաւորին , այլ զառնալ 'ի չար նանապարհէ իւրմէ , որպէս և ինքն ած վկայէ ըստ յիշելոյ մեր այժմ , (եզէկ . լք . 41 .) չետևեցուցանէ այսմ , և ասէ :

Ուն այսորի օբէնեսէ շէտ առնես զմէլասորս 'ի ճանապարհի ,
Այսինքն վասն այսր սրատձառոի զոր առացի , այսինքն
վասն զի քաղցր և ուղիղ ես՝ լուսաւորես զմեզաւորս 'ի
միտս , զի տեսցեն և ծանիցեն զուզզութի օրինաց քոյ .
և այնու տեսցեն նաև զխոստքնակութիւն ճանապարհի
իւրեանց , և զգաստացեալք դարձցին 'ի չար ճանա-
պարհէ անստի , և գնասացեն յօրէնս քոյ :

Ճիրաւի է թէ անձ միշտ ցուցանեւ մեզաւորաց զձա-
նապարհ իւր . բայց յիրաւի է և այս թէ ինքեանք լի-
նին պատճառ ոչ տեսանելց զայն , զի զնեն արդեւ .
Եթէ զայդ շառնէին , և շնորհացն այ ընդդեմ ցատ-
նային , այլ տեղի տալով այնմ՝ գործակից լինէին ,
անստարակոյս ուղղէին , և յուղղին անդ՝ գտանէին
զայն՝ զոր արժան էր իննդրել , ըստ որում յառաջն իննդ-
րեաց մարդարէն . այսինքն ոչ միայն իսմանալ զօրէնս ,
այլև 'ի նոյն առաջնորդիլ . որպէս լինի նոցա որք ոչ
ներհակին անձային ազգարարութեանց , որպիսի են և
հեզք . Եւ զոյն զայս յայտ առնել կամելով յարէ
զինի , և ասէ :

Ե՞ս անորդէն հեղո 'ի դադասպանի : Հայելով 'ի նախա-
սացեալ բան մարդարէին՝ ուր խօսեցաւ վասն մեզա-
ւորաց՝ պատշաճագոյն թուէր յիշել աստ զհակա-
դիեալմն մեզաւորաց՝ այսինքն զարդարս , և փոխա-
նակ հեղ զնելց արդար զնել . բայց հայելով ոչ յայն՝
որոյ վասն խօսեցաւ , այլ յայն՝ զոր խօսեցաւ՝ առա-
ւել պատշաճ էր հեղ զնել քան արդար : || բայ հան
խօսեցաւն էր ենթակայն , այսինքն այն՝ զոր օրէնս-
գէտ առնէ անձ . իսկ զնել խօսեցաւն՝ էր տեսակաւորու-
թիւնն . այսինքն օրէնսգէտ առնելն :

Դրդ առ այս իրը նիւթ ական տրամադրութի պահանջի
հանդարտութիւն հոգւոյ յենթակայն . և եթէ փոխա-
նակ հանդարտութեն խոռովուի կայցէ՝ նոյն խոռովութիւն
'ի կողմանէ իւրմէ անընդունակ առնէ զհոգին օրէնս-
գէտ լինելց յայ , և անյարմնօր անձային ներքին յայտ-
նութեան . զի զոր օրինակ 'ի ջուր շարժեալ ոչ նշմարի
տեսակ ինչ , այլ յայն որ հանդարտն է , սոյնպէս և 'ի
հոգի խոռովեալ ոչ նշմարի տեսակ օրինացն այ , ոչ
յայտնութիւն և ոչ գիտուի , այլ պիտոյ է հանդարտութի .
ուստի և եղիսէ մարդարէ յորժամ փոքր մի խոռովե .

յառ , 'ի կամին յետոյ յայտնութիւն առնուլ յայ՝ ետ
րերել սաղմօսասաց , զի նուազօք սաղմօսաց հանդար-
տեսցի հոգի իւր . և իրբե հանդարտեցաւ՝ եղե նմա
յայտնութիւն , և զիտաց՝ զզր կամէր ած . որպէս է տե-
սանել 'ի դ . զիրս թագաւորաց . (դ . 15 :) Եշ արդ
քանզի հեզութիւն է հանդարտութիւն զոգւյ՝ վանիչ ներ-
քին խոռոշութեն , սմին իրի և մարդարէն առ ՚ի յարմա-
րութիւն ասացելց իւրոց՝ յաւելտ պատշաճ համարեցաւ
՚ի մէջ բերել զայն որ հեզն է՝ քան որ արդարն ասի :
Վրդ բառու հեղ ըստ անձուկ նշանակութեն առեալ ցու-
ցանէ զայն՝ որ հանդարտ մնայ յառիթս բարկութեն .
իսկ ըստ ընդարձակ նշանակութեան առեալ ցուցանէ
զայնպիսի անձն՝ որ երեքումքը կատարեալ է . կամ
այսպէս ասացից , երեք ինչ ունի յինքեան պանծալի .
այսինքն զՃշմարիտ խոնարհութիւն՝ իրբե զՃիմն . ըստ
որում ասէ շնորհալին ('ի մեկն . մատ . է :) զՃաստա-
տուն համբերութիւն՝ իրբե զնիւթ , և զանցարժ անդոր-
րութիւն կամ հանդարտութիւն՝ իրբե զիւր յատուկ տեսակ .
և որ այսպիսի հեզն է , ունի յինքեան զնմանութիւնն
քո՞ի , որ զինքն նախազիծ օրինակ եղեալ ասաց . * ու-
սարնաք յինէն , զի հեզ եմ և խոնարհ սրտիւ , և
.. (յուսանիլ ձեր) գտղիք հանդիսատ անձանց ձերոց .
(մատ . ժամ . 29 :) Վ. յսպիսի իմն առաւելութք զար-
դարեալ և դաւթի՝ հաճոյացաւ արարչին իւրում .
ուստի ասէ զնմանէ սարզիս շնորհալի ('ի մեկն . յակ .
դ . 17 . ձառ . թ :) * Հեզ էր և դաւիթ . վայ և ասէր ,
.. յիշեամ տէր զդաւիթ և զնամ հեզութիւնորա . նորին
.. աղագաւ այնպիսի վկայութիւն յայ յինքն ձգեր , ընդ
.. որ ամեն մեք զարմանամք . դաի ասէ զդաւիթ որդի
.. յեսսեայ այր ըստ սրտի իմոյ , որ արասցէ զամենայն
.. զկամն իմ :

Վրդ թէպէտ և ամեն ուսուցանէ ած զՃանապարհս
պատուիրանաց իւրոց , և կամի զնմանին օրէնսգէտ
առնել , ևս և զմեղաւորս՝ զի գարձցին 'ի ճանապար-
հաց իւրեանց չարաց , բայց ոչ յանանին յաջողի այս .
զի որպէս ասացաք , բազումք բազում արգելս դնէն .
և անընդունակ առնեն զանձինս . իսկ հեզք որովհէտեւ
ածային նպաստիւք արամազրեալ զտանին առ այն
յաջողութք պատահին այսմ , և ած ինքնին առաջնորդէ .

նոցա յօրենս իւր . և ահա այս է՝ զոր ասե . Վաղաշոր-
տես հեղոյ ՚ի բարագանի . այսինքն լինիս հեղոյ առաջ-
նորդ ՚ի գիտութի օրինաց քոց և ՚ի զգուշաւոր կատա-
րումն նոցին : Վասցի՝ օրինաց . զի աստ բառս բարա-
գան ըստ պահանջման կարգի բանին՝ մանաւանդ հայե-
լով ՚ի յաջորդ համարն , նշանակի զօրենս , կամ
զուղղութիւն օրինացն այ . որպէս է ՚ի գիրս թ . օրինաց .
(դ . 1 . և սաղ . ՃԵՐ . 39 . և 137 .) և յայլ բազում
տեղիս յօրս բառդ բարագան դնի փոխանակ օրինաց :
Խւ պատճառն է . զի օրէնքն այ ևս և բնական օրէնքն ,
ընդ որս և խիղճն մտաց իրեւ թէ դատաստանաւ
կամ դատաստան առնելով ցուցանեն մեզ՝ զինչ է
բարի և զինչ չար . զինչ պարտ է առնել , և զինչ ոչ :
Խւ զարձեալ՝ զի սպառնալեօք պատժոց զգուշացու-
ցանեն զմեզ յանիրաւութենէ , և հրամայեն առնել
զարդարութի և զուղղութի . և վա այնորիկ նոյն օրէնք
դատաստան ևս կոչին : Հայսպիսի դատաստանս ասէ,
այսինքն յայսպիսի օրէնս առաջնորդես , այս է՝ ձեռն
տու լինելով օժանդակես նոցա և ուղղես , որք հեղին
էն , և անսան քեզ , և ցանկան՝ զի ուսցին ՚ի քէն :
Ուարթ է աստանօր ՚ի ձեռն դատաստանի իմանսալ և
զատեան դատողութեն , կամ զդատողական քննութին ,
այսինքն զյատուկ դատաստանն , յորում իրաւաբա-
նութիւ արդար քննութի լինի ՚ի վր գործոց . յայս միտ
առեալ աստ զդատաստանն , կամի ասել . ած պաշտ-
ան լինի հեղոյ ՚ի դատելն . կամ ոչ ցուցանէ բար-
կութիւն առ հեղոյ ՚ի դատաստանի , այլ փոխանակ բար-
կութե ցուցանէ զբաղցրութի իւր . զի որպէս նոքա ոչ
ցուցին զբարկութի , սոյնպէս և ոչ առաջեն դատաստան
բարկութե . և որպէս լինքեանք քաղցր դան առ այս ,
սոյնպէս և ած քաղցր դացի առ նոսա ՚ի դատելն :
Խրկորդդաբար՝ դատաստանաւ իմացեալ լինի դա-
տումն կամ խոկումն զօրինաց , յոր միտ կամի ասել .
՚ի խոկալ հեղոյ զօրինաց քոց կամ զն և իցէ իրաց
առաջնորդես նոցա՝ զի մի մոլորեսցին , այլ ուղիղ դա-
տեսցեն :

Դիտումն ասացելոց յերկու լինչ ակնարկէ . մի՝ ՚ի
դավութի այնոցիկ՝ որք հեղութ զնալով արժանաւորին
օրէնսգէտ լինել յայ , և խնամիլ ՚ի նմանէ , և պարզ-

երես գտանիլ՚ի դատաստանի . ևս և ուղիղ դատաստան առնել : Իւ միւս ևս՝ որ իբր նպատակն է , հայի յազգարարութիւնը դաւողաւոցաց , զի ինքեանք ևս կամիցին օրէնսպէտ լինել յայ . և յորդորեսցին խնդրել զօրէնս նորա , և յօժարեսցին գնալ՚ի նոյն : Ուր զօրութք ինն ևս իմայուցանէ մարդարէն թէ ՚ի խնդիր լինել նոցա այսմ , անձ ինքնին ուսուցանէ նոցա զՃանապարհս իւր , ուստի յարէ զինի և ասէ :

Ուսուցանէն հեղոց զՃանապարհս այ : Այս ուսուցումն որպէս ՚ի վերոյ ասացաք , ոչ է սոսկ հայեցազական , այլ գործնական և արարշական՝ որ է այնպէս ուսուցանել , զի արասցէ ուսանօջն . յոր միտ ասաց ք՛տ ցառաքեալսն թէ հոգին նր * ուսուցչէ ձեզ զամ” (յովՀ . ԺՂ . 16 .) որով կամի ասել . այնպէս ուսուցչէ որպէս թէ ինքնին առաջնորդէր ձեզ ՚ի կատարել զայն ամ՝ զոր ուսայք յինէն . ըստ որումե յայտ առնէ (՚ի զլ . ԺՂ . 23 .) յասելն . * յորժամ եկեսցէ նա հոգին Ճշմարտութէ , առաջնորդէսցէ ձեզ ամ Ճշմարտուք . ուր ՚ի բնագիրս յունաց գնի ուսուցչէ . ըստ այսմ ուսման՝ որ առաջնորդին է՝ ասաց տէրն մեր , (յովՀ . Ղ . 45 .) * ամ որ լսէ ՚ի հօրէ , և ուսանի , զայ առ իս : Այսպիսի օրինակաւ ահա ուսուցանէ անձ հեղոց զՃանապարհս իւր . մինչև յայտնի տեսեալ նոցա թէ , քանի ուղիղ են և բարի այն Ճանապարհք ՚ի կատարումն նոյնին փութալ ստիպեսցին : Օսոյն ևս կամել լով յայտ առնել մարդարէն՝ յարէ զինի և ասէ :

Ե . **Ո**ւսուցին ճանապարհս առ ողոքմուք և ճշմարտուք էն այնոցին , ոյս ինդրէն զուիս և զվեայուն նորս : Աստանօր բառիւս ճանապարհս առ իմացեալ լինի օրէնքն այ ոչ ըստ այնմ՝ զոր ասացաք ՚ի համարն 3 . այլ ըս այլ երկուց հանգամանաց . մի ըս այնմ՝ զոր գործէ , և մի ըստ այնմ՝ զոր տայ . կամ այսպէս ասացից . մի զոր ինքն պահէ , և մի՝ զոր հրամայէ պահէլ . կամ պարզագոյնս ես . մի՝ զոր նա ինքն անձ վարէ ՚ի կառավարելն զտիեզերս համօրէն՝ մանաւանդ զմարդ . և միւս ևս՝ զոր տուեալ է մարդկան առ ՚ի կառավարել զինքեան՝ իբր կանոնօք վարուց . ըստ որում այն օրէնք ցուցանեն մարդկան զուղիլն ՚ի գնալ , և

զթիւրն 'ի խոտարիլ։ Իստ այս երկուց բանից իմացեալ լինի և այն՝ որ զրի յեզէկիելի (ԺՌ. 28.) ուր յասել խրայէլացւոց . * ոչ ուղիղ է հանապարհ տնն ։ պատասխանէ ած . * միթէ իմ հանապարհ չիցէ ուղիղ տունդ խրայէլի . ոչ ապաքէն ձեր հանապարհ չեն ուղիղ ։

Վրդ զօր խրայէլացիք ասացին, վնյոն ասեն և երկու ազգը մարդկան, մոլիք և անածք . զի որք մոլեալ են զշետ ախտից՝ մանաւամսնդ մարմնական մեղաց, խիստ համարին զձանապարհն այ . Ոյնպէս և որք անածքն են, կամ որք ոչ կամին հանաւել զտէր, կամ որք միայն մարդկային իմաստիւք կամին վարիլ, և ած ային յայտնութեանց ոչ հաւատան, սուտ համարին զբանս այ, և ոչ համին ընդ կառավարութիւն նորա : Եւ ընդ հակառակն, նորա որք ոչ են զշետ ախտից, այլ զշետ են խնդրել զօրինս աստուծոյ, և պահել զայն և զնալ 'ի նոյն, համարին զայն ողորմուք լի . նոյնպէս որք անսան օրինայն այ, և հաւատան թէ վկայութքն այ տուեալ են նորին, յայտնի տեսանեն՝ թէ հշմարտութք է այն ամ, զօր առնէ և հրամացէ ած : Հայոսաիկ ակնարկե.

լով մարդարեն՝ ասէ :

Վ մէնայն մանապարհ, ո՞ն ողորմուք և ձմարդութ էն : Վայսինքն ու և իցէ հանապարհը զօրս ցուցանեն օրէնքն այ, կամ զօրս վարէ ած, անմ ողորմուք էն և ձմարդութ : Ոլորմութեամբ են . նախ զի ոչ են իսխտ կանոնք, և ոչ անգութ կամաց ցցցը, այլ ողորմած սրտի յայտարարութիւնք : Երկրորդ՝ զի կարգեալ են առ 'ի բառնալ զողորմելի վիճակ ախտաւոր կենաց մարդկան, և առ 'ի բարւոք կառավարել նոցա զարարածու : Երրորդ՝ զի որք միանգամ խնդրեն և կատարեն զայնս՝ գտանեն յայ զողորմութիւն : Չորրորդ՝ զի առաւել փայլի 'ի նոսա ողորմութիւնն այ, քան արգարուեն նորա . այլով քըն հանդերձ : Հինգերորդ՝ զի յայտնի տեսանի 'ի նոսա՝ թէ ած զիարդ զողորմութք և զթութք վարի ընդ մարդկան . և զիարդ պատրաստ է բարի առնել նոցա և թողուլ նոցա՝ են :

Ճ շմարդութ ևս էն : Կախ զի ամենեին համաձայն են անսահման իմաստութեն այ . համաձայն են և սահմանաւոր իմաստութեան մարդկան, արդ հշմարիտ ասի

իմ , յորժամ համաձայն է ձանացման կամ մանաւանդ իմաստառութե : Երկրորդ՝ զի շիք 'ի նոսա խարէուի կամ մոլորութի , և կամ այնպիսի ինչ՝ որ իցէ խարէուը յօդեալ , և կամ առիթ խարէութե : Երրորդ՝ զի զոր խոստանան՝ ոչ ժխտեն , այլ ըստ խոստանցն կատարեն ոչ յինքեանց , այլ որ աւանդեաց զնոսին : Չորրորդ՝ զի որչափ քննին և մեկնին՝ այնչափ ստոյգ երեխն , և զբննօղն 'ի ստուգութեան հաւատոյ պնդեն , և յապահովութեան յուսոյ հաստատեն : Հինգերրորդ՝ զի ամենայն որ ինչ է 'ի նոսա , այնպիսի են , մինչև միոյն զմիւսն առաւել հաստատել և ամի զամ ձշմարիտ ցոցանել : Շայց ոչ ամին այսպէս համարեալ լինին .

այլ թէ որոց , յայտ առնէ՝ ասելով :

Պահանջին , ոյս ինդրէն շատեր և վայութին նորա : Այս երկու բառք՝ ռախու և վայութին վնյոյն նշանակեն աստ . և յայտ առնեն զօրէնս այ՝ ըստ այլւայլ առման սուրբ կրոց , որք պէսպէս անուամքն յիշեն զօրէնս այ . որպէս առաւել յայտնի տեսանի այս 'ի սաղ . Ճծը , Ուիստ ասին ըստ այնմ , ըստ որում ամ 'ի տալ անդ մարդկան զօրէնս իւր՝ ուխտ եղ ընդ նոսա . և իրը դաշտի և կտակաւ վճիռ հաստատեաց , զի եթէ պահեսցեն զայն , հասցեն 'ի կեանս : Ու հայութին ևս կոցին , ըստ որում նոքօք վկայեալ լինի , թէ այն է կամքն այ , և թէ որք պահէն զնոսին , ընդունին յայ զօրհնութիւն չնորհաց աստ , և զիիութիւն փառաց 'ի հանդերձեալն : Լայ և այս զանազանութիւն՝ զի օրինքն այ ըստ որում հաստատեալ են ողորմութք՝ ասին ռախու . վասն զի ամ կամելով ողորմիլ մարդկան՝ կամ այսպէս ասացից , կամելով ցուցանել նոցա զողորմութիւն իւր՝ իրը թէ ուխտ եղ ընդ նոսա 'ի ձեռն օրինաց իւրոց : Իսկ ըստ որում հաստատեալ են ձշմարտութեամբ ասին վայութի . զի ամ՝ զոր վկայեաց յօրէնս իւր՝ ձշմարտութեամբ ունի հատուցանել :

Վրդ որք միանդամ իննդրէն զայս ուխտ և զվկայութիւն այ , և փափաքին կատարել զօրս հրանային 'ի նոսա , յայտնի տեսանեն՝ թէ զոր ինչ ձանապարհ կաւալ է ամ վասն մարդկան՝ առ 'ի ածել զնոսա առ յաւիտենական կեանս , ամենայնն ողորմութեամբ և ձշմարտութեամբ մարտութք են . և թէ սքանչելի իմաստութք յար-

մորեալ են՝ ի նոսա ողորմութիւն և ձմարտութիւն : | ամբ՝ վկայութք իմանայ զգործս անօրէնութեանն քսի ևս և զսաշելութիւն նորա, զօրս ունիմք՝ ի վկայութիւն մերոյ փրկութե : | ակ ուխտիւ իմանայ զգաշնչն զրո եգաք՝ ի մլրտութեան ընդ քնի : Յայսմամենայնէ յոյս մեծ առեալ մարդարկէն՝ մատչի պաղատիլ առ ած և վասն քառութեան մեղաց, և ասէ :

Ղ. Ասն անուան այ դը սաւեալ զմեղս էմ, զի բաղրամ է շնչ . ան է մարդ՝ որ երինչն ի դ'ան . օբենսդէռ առնէ շնա՝ ի մանապարհէ, յոր և հաճեցաւ :

Վ. յս ոճ բանի, այսինքն է, վասն անուան քոյ քաւեամ, վասն անուան քոյ կեցո, են . կամ յանուն քոյ օգնեամ, յանուն քոյ արամ . են . որ յաձախ ՚ի գործ ածի ՚ի որ դիրս, նշանակէ ասել . վասն փառաց անուան քոյ, կամ զօրութք անուան քոյ, կամ թէ՝ որպէս զի մեծասցի անուն քոյ, կամ թէ որովհետեւ հզօր է անուն քոյ և մեծ, ՚ի չնորհս այդը քոյոյ անուան քաւեամ զմեղս իմ, կամ արամ զայս, կամ տուր զայն . են . | Հւ գարձեալ այս ոճ հասարակօրէն յայնպիսի բանս ՚ի գործ ածի, յորում ինպրի մեծ ինչ . որպիսի է և աստ, ուր ինպրէ մարդարկէն զքառութիւն մեղաց բաղմաց :

Խակ սաւեն զմեղս՝ նշանակէ ոչ միայն զթողուն, այլե զիսպառ ջնջեն . և իրը թէ ոննչացուցանել ըզմեղս . զի այս բառ ծագի ՚ի մասնկանէս սաւ . որ զնի ՚ի տեղի բացասութեան ՚ի ցուցանել զուն և զմին . (բառ այնմ. զուկ . ի . 16.) * քաւ, մի լիցի || . ուստի և բայս սաւեն՝ ՚ի մէջ բերէ զոնչացուցանեն զմեղս, կամ զջնջեն բնաւին . մինչև զպատիժ մեղացն անգամ բառնալ : | Վ. յս զանազանութիւն յայտնի տեսանի ՚ի ներողութեան մեղացն դաւթի, զի թէ պէտեւ թողեալ եղեւ այն, բայց ոչ խսպառ քաւեցաւ . որոյ ասկս կըեաց զպատիժ նորուն, որպէս յայտ է . (ը . թագ . ժք . 13 :) | մին իրի առտանօր և զքաւելն ինպրէ, և ասէ :

Ղ. ասն անուան այ դը սաւեալ զմեղս էմ : | Վ. յոինքն է վասն փառաց անուան քոյ, կամ հայելով ՚ի փառաւորութիւն անուան քոյ՝ ջնջեալ յինէն զմեղս իմ, և մի հայելով ՚ի ծանրութիւն մեղաց ինոց՝ անարդեր զիս . զի եթէ,

յիմէ հայիցիս մեղս , ամենեւին մերժելի գտանիմ , և
անարժան քաւութեան տեսանիմ . և տայ զստառձառն
ասելով :

Օ չ բաղսոմ էղն : || Արպէս թէ ասացեալ էր . որովհե-
տե բազում եղեն մեղք իմ , բազում զթութեանդ
կարօտիմ առ ՚ի քաւիլ ՚ի նոցունց . * զի ուր առաւել
,, եղեն մեղքն , առաւել ևս յաւելան շնորհքն .
(Հռովմ . Է . 20 :) ոչ զի մեղքն արժանի է շնորհաց ,
այլ զի կարօտ է . յոր միտ ասէ ՚ի սալ . (Խ . 3 .) * բժը-
,, կեա զանձն իմ , զի ես մեղայ քեզ . և եթէ բա-
զում է՝ առաւել շնորհաց կարօտի , որով առաւել ևս
փառաւորեալ ցուցանի զործ շնորհացն այ , և նա
ինքն ևս փառաւորի . որոց վասն ասէ նարեկացին առ
ան (՚ի բանն ժէ .) * որ յաճախն ընձեռել բազում
,, փառաւորիս , և ՚ի շատն մատուցանել նովին շափ
,, սիրիս . և յառաւելն ողորմել կըկին բարգաւա-
ճիս .

Խակ այսու բազմութեամբ՝ զոր դնէ մարգարէն՝ իմանայ
նախ զայն ամենայն մեղս զորս զործեաց ՚ի պատճառո
րեսարեայ ՚ի միտու տարւոջ . և եղև պատճառ այն
շափ արիւնչեղութեան բազմաց , և ետ առիթ մեծա-
մեծ զայթակազմութեց : Խանայ երկրորդ զմարդկայ-
ին տկարութեան սահեցմունս , որոց ոչ զոյ թիւ . այլ
զայս սակաւը տեսանեն , այսինքն նորա և եթ , որոց
լուսաւորեալ են միտք լուսով օրինայն այ , և ոչ նո-
քա՝ որք զուրկ են յայսմ լուսոյ . զի զոր օրինակ ա-
ռանց լուսաւորութեան ոչ տեսանի , որ ինչ է ՚ի սենե-
կի . իսկ ՚ի գալ լուսոյ ամենայն ինչ ՚ի յայտ զայ ,
սոյնպէս ևս առանց լուսաւորութեան օրինացն այ՝ որ
ինչ մեղք և անկարգութիւնք են ՚ի սենեկի հոգւցն ,
զրեթէ խաւարաւ ծածկեալ կան . իսկ ՚ի ծագել
լուսոյ անձային օրինաց , ամենայնն ՚ի յայտ զայ , և
կենզանի երկի . * **Օ** մեղս . ոչ զիտէի (ասէ պօղոս)
,, եթէ ոչ օրինօք . և զցանկութի (այսինքն զանկարգ
,, յօժարութիւն բազմանաց) ոչ ձանացէի , եթէ ոչ
,, օրինացն էր ասացեալ , մի ցանկանայցէս . (Հռովմ .
Է . 7 :) և յաւելու ևս ասել ամբանօք . * իբրև եհաս
,, յիս պատուիրանն , մեղքն կենդանայցն , և ես մե-
,, ռայ . և զայս ասէ ՚ի դիմաց իւրաքանչիւր մարդոյ .

որ եթէ իցէ 'ի մեղս , և շունիցի զյօյս օրինաց , կարծէ թէ իցէ կենդանի 'ի հոգի իւր , և շունի ինչ մեղս . խակ յորժամ լուսաւորի լուսով օրինաց , գտանէ կենդանի' ոչ զինքն զոր այնպիսի կարծէր , այլ զմեղս՝ զոր իրը մեռեալ համարէր :

(Այսպիսի ձանալումն ըմբռնեալ էին հոգիք սրբոց , որք հանապազ զօրէնս այ խորհելով , և զիւրեանց սրտի բերմունս կրակելով այնչափ ինչ տեսանելին յանձննս յանկարգութենէ մեղաց , մինչև մկարել 'ի հաշիւ առնուլ զչափ նոցին . որպիսի ոք նարեկացին էր , (տե՛ս 'ի զիրս նորա , մանաւանդ 'ի բանն . դ :)

Ոյնպէս ձանալէին և այլ ամենայն սուրբք . և 'ի ձանալունէ աստի իւրաքանչիւր 'ի նորանէ յուսահատ լեալ յանձանց միայն յանձ զնէին զյօյս իւրեանց . և յողորմութիւն նորա ապաւինեալ քաջալերէին , որով և փոխանակ տրտմութք հեղձամղձուկն լինելոյ՝ ծայրագոյն խոնարհութեամբ՝ ընդ հովանեաւն այ բերկրէին :

Օ այսպիսի անձին՝ երիշշածս կոչէ սուրբ զիրն , զի այսպիսիքս ըստ այժմու զրելոց՝ յայ երկնչելով և 'ի սրբութենէ նորա պատկառելով և զմեղս իւրեանց յայտ յանդիման տեսանելով ոչ միայն զգուշանան՝ զի մի գործեցեն զմեղս , այլև ջանան և հոգան՝ զի և զգործեցեալն ջնջեացեն . որով և հաճոյ դտեալ այ , ոչ միայն զմեղաց գտանէն ջնջումն , այլև մեծամեծ և բարձրագոյն բարեաց յասանէն . և 'ի սքանչելիս ածային զաղանեաց յափշտակեալ 'ի նոյն վայելեն : Եւ զայս կամելով յայտնել մարգարելին յարէ զինի , և ասէ :

|| Հ է Տարդ , որ երինչէ 'ի թնէ : Վեղեցիկ իմն հանդէս կարծէ աստ մարգարեն , և զրեթէ 'ի դասի կացեալ կամ յամբիմն ելեալ՝ ձառս յօրինէ , և քարոզ կարգայ : Հրաւիրէ առ ինքն զերկիւզած անձն . և առաջի ամենեցուն յայտ առնէ նմա՝ թէ յոր վիճակ երջանիկ մասին վերառեալ իցէ : || Հ է Տարդ ասէ՝ որ երինչէ 'ի թնէ . այսինքն ովէ է այն մարդ՝ որ ունի յինքեան զերկիւզն այ , յառաջ մատիցէ և լուիցէ յինէն՝ թէ յորում երանութեան իցէ . և զինչ առնէ ած այնպիտումն , և քանի բարեօք ըսու զնա : Օ այս ասացեալ սկսանի

՚ի մէջ բերել և թուել զբազում բարիս . և նախ ասէ :

(Ըէնսգէտ առնէ չն ՚ի ճանապարհի , յոր և համեցաւ : Պերագոյն բարին՝ զոր առնէ առ իւրումն երկիւղածի՝ և լուսաւորել զնա յօրէնս իւր . զի այնու անմն լսր և անսայթաք զնասցէ ՚ի ճանապարհն յայն՝ զոր նա ինքն երկիւղածն ընտրեալ է : Խւ ասացեալը բացատրի այսպէս . յորժամ ոք ըմբռնեալ յերկիւղն ոյց առաջազրի՝ նմա միայնոց ծառայել պահպանութեամբ օրինաց նորա , և ընտրէ իւր ճանապարհ այսպիսի կամ այնպիսի՝ գնալընդ նոյն ՚ի յաւիտենական կեանս , զոր օրինակ գնալ ը ճանապարհ խոնարհութեան կամ չեզութե , արդարութե կամ ողորմածութե , կրօնաւորութեան կամ միակեցութե են . նա ինքն առ օրէնս զէտ առնէ զնա յայնոց ճանապարհի այնպիսի ինն օրինակաւ , զի պահելով զնասցէ , և զնալով պահեսցէ . մինչեւ Ճմարտիւ ասիլ , թէ օրէնքն զնա պահէ , և նա զօրէնսն՝ յայնոց ճանապարհի ընդ ոք համեալ է զնալ առ առ :

Վստանոր եթէ բառիւս օրէնսգէտ առնէ՝ ինասցի սոսկապէս խելամուտ առնել կամ հմուտ՝ միտ բանին հայի յաւանձնն վիճակ իւրաքանչիւր մարդկան , որպէս թէ եղեալ էր . իւրաքանչիւր մարդ յորում վիճակի և իցէ՝ եթէ՝ ՚ի թագաւորական , և եթէ՝ ՚ի զինուորական , եթէ՝ ՚ի վաճառական , և եթէ՝ ՚ի վաճական , և եթէ յայրում վիճակի՝ այսպիսիս եթէ երկնչի յոյց՝ խելամուտ լինի ՚ի նմանէ՝ ուղիղ և առանց մեզաց զնալ՝ ՚ի վիճակի իւրում ընդ ոք համեցաւ :

Հայս միտ առնու և բարսեզ վարդապէտ (՚ի մեկն . մարկ . զլ . ժգ .) յասելն . առ իւրաքանչիւր ումեք տայ զլոյս և զզօրութիւն ըստ վիճակի իւրում . ըստ որում և ասէ * իւրաքանչիւր զզործ իւր || . (մարկ . ժգ . 34 .) վաօն զի * ՚ի զործ և ՚ի վաստակ (ասէ) . յոր ախորժեայ՝ ետ նմա զօրութիւն բարեզործել . լստ այնմ թէ օրէնսգէտ առնես զնա ՚ի ճանապարհի . յօր և համեցաւ . որպէս և յովչաննէս մկրտիչ . զինուորն և զմաքսաւորն և զայլն (ըստ վիճակի՝ նոցա) խրատէլ՝ թէ զինչ պարտ էր առնելլ : Վստ սմին մեկնէ և յովչան ծործորեցի . (՚ի մատ .

ԳԼ. թ .) յասելն . * կոչելովն զմատթէսո նշանակէ
,, զհաճոյս զոլ իւրաքանչիւր արուեստէ , յորժամ
,, առ տէր դարձցեն միամիտ սրտիւ . ըստ այնմ , օրէնս
,, գէտ առնէ զնա 'ի ձանապարհ' յոր և հաճեցաւ . և
,, այլուր թէ 'ի ձանապարհի առն գտցէ զնա || : Իշ
ըստ այսմ ած իւրաքանչիւր ըստ իւրում վիճակի ա-
ռաջնորդէ 'ի բարին . որում եթէ հետեւեցի մարդ՝
անդորրանայ 'ի հոգի իւր , զոր և յայտ առնէ մար-
դարէն 'ի յաջորդ համարն՝ ասելով :

Դ . **Ա** նցնորտ 'ի բարութենե հանգիւցէ , և զատահ նորտ ժա-
ռանգեցէ զերիւր :

Հանգիւն 'ի բարութեան է ժառանգել զբարին՝ ոչ
փոքր մի ժամանակ , այլ հանապազորդութք . ոչ զիւ-
րաշարժ փոփոխութք , այլ հաստատութեամբ . ոչ կաս-
կածանօք՝ այլ անդորրութք . ոչ երկիւղիւ , այլ խա-
զազութք , և աներկեանս ոգւով . ոչ տրտմութք , այլ
ուրախութք և բերկրեալ սրտիւ : Ի յս հանգիստ 'ի
բարութեն է երջանկութի իմն աստի կենաց , մանաւանդ
թէ իրը առհաւատուայ հանգերձեալ երանութեան :
Ի յս հանգիստ է՝ զոր ամեններին ցանկան ունիլ , և
սակայն ոչ ամեններին ունին . այլ նա միայն , որ եր-
կիւղածն է այ . զի զայսամնէ խօսի աստ մարդարէն՝
և յայսպիսիս հայելով ասէ :

Ա նցնորտ 'ի բարութենե հանգիւցէ : Ա նցն ասելով խմանայ
զհոգին՝ մանաւանդ ըստ վերին մասին . զի այս հանգ-
իլս երկիւղած մարդոյ 'ի բարին՝ զոր ունի յայ՝ և յա-
ւէտ ըստ հոգւոյ քան ըստ մարմնոյ . քանզի ըստ
մարմնոյ բազումք յերկիւղածաց բազում տառապին
'ի բարիս , երբեմն 'ի հիւանգութեան , և երբեմն յայ-
քատութեան , երբեմն 'ի հալածանս , և երբեմն յայլ
նեզութիւնս . բայց ըստ հոգւոյ հանգին 'ի բարութեն
զոր ունին յայ : Տառապին բազում անդամ՝ և 'ի սոռ-
ըին մասն հոգւոյ ծանր ծանր փորձութք , զորոց խօ-
սի 'ի ստորե ('ի համարն . 14. և 15.) Ի այց վերին մա-
սամբ հոգւոյն վայելեն 'ի հոգեւորական բարիս , այս-
ինքն յաճմունս չնորհաց և 'ի միսիթ արութիւնս հոգւոյն
ո՞յյ . երբեմն և 'ի լուսաւորութիւնս մտաց , և յախօրժ-
մունս կամաց . յորս փափկանան հոգիք նոցա , որով

և երբեմն այնշափ բերկիրին, մինչև չյիշել քնառ ըզ փափկութիւնս մարմնոյ և զվայելցութիւնս տշխարհի : Եւս 'ի նոյն վիշտո հոգւոյ ուրախութե համարեալ զայնս, առաւել միմիթարին 'ի նոսին, քան 'ի բերկը բութիւնս հոգւոյ . և յամենայնի զած ունելով լինքեանս և ընդ ինքեանս՝ նովաւ անդորրանան, և որինչ պատահի ինքեանց՝ եթէ յաջող և եթէ ձախող, եթէ ըստ մարմնոյ և եթէ ըստ հոգւոյ, զամենայն համարին բարի, և 'ի բարութեան անդ ունին հոգւով հանգիստ մեծ, քանզի գիտեն թէ յայ է այն ամենայն, և ան յամենայնի օգնէ նոցաւ և գործակից լինի. զի * որոց սիրենն զած՝ յամենայնի գործակից լինի 'ի ու, բարիս . . առէ առաքեալն (Հռովմ . ը . 28 .)

Եւ այսպէս որ միանգամ երկնչի յայ, և սիրէ զնա, ունելով զնա յամենայնի իւր գործակից 'ի բարութեան բերկը եալ և խաղաղացեալ մնայ 'ի բարութեան անդ . 'ի յաջողութե վայելմասիք, և 'ի ձախորդութե համ բերութեամբ, 'ի հոգեղորականս՝ զմայլմասիք, և 'ի մարմնաւորս՝ զգուշութե և զգաստութե . և որպէս ինքն 'ի կենդանութեան իւրում վայելէ, նոյնպէս և որդիք նորա յետ մահուն իւրոյ . սմին իրի յարէ մարդարէն զկնի, և ասէ :

Եւ շառանգեցու գերիր : Եւ յս ժառանգութիւն երկրի ոչ է վեղիսիլ 'ի բարութիւնս երկրի, այլ հանգստեամբ վայելել 'ի նոսին իւր յայնս՝ որք տուեալ են յայ 'ի պէտս մարդկան : Երդ զաւակ երկիւզած մարդոց ոչ վասն այնորիկ ժառանգէ վերկիր, վասն զի է որդի երկիւզածի, այլ վասն զի է որդի երկիւզածութեան նորա, սնեալ յերկիւզն այ . զի որ երկիւզածն է, 'ի նոյն և զորդի իւր կրթէ բանիւ և օրինակաւ, ևս և աղօթիւք : Եւ թէպէտ կարէ այր երկիւզած ունիլ զորդի անխրատ, որպէս և տեսանեմք առ ոմանս, բայց հասարակօրէն 'ի մասն բարի վիճակեալ լինին : Եսկ թէ քանի ուրախութիւն է այս ծնողաց, նոքա ևեթ գիտեն, որք ունին զայնպիսի որդի :

Եայց զարմանայ արժան է ընդ այն, զի բազում ծնողք, որք փափաքին այսպիսի տեսանել զգաւակու

իւրեանց , ոչ այսպիսի ջաման առնել զնոսա . այլ
այնպիսի՝ ընդ որ տիրեն և հոգան . և 'ի մեռանից
իւրեանց՝ տէսեալ՝ թէ, ըսնին ժառանգ բարի , մեռա-
նին և վասն որդւոյ իւրեանց , զի որդիք նոցա այնպէս
են վասն նոցա , որպէս թէ մեռեալ էին . որովհեակ
թողին զնոսա յերկրի , ոչ 'ի ժառանգել զերկիր , այլ
'ի ժառանգել յերկրէ . այսինքն անմանն լինելով
երկնից՝ իջանել 'ի ասնդարամետս երկրի : | Հւ եթէ
կամիցիմք առանց չափազանցութեան խօսիլ , 'ի մեռա-
նիւ այսպիսի ծնողաց՝ երկիր ինքնին գրեթէ ; ծածկէ
զնոսա 'ի խորս՝ իբրև զիւր տաղտկալի թշնամիս՝ զի
յաւելին բեռն ծանր 'ի վերայ իւր զորդիս իւրեանց .
որոց զինչ ունիցի մաստակարարել , բայց եթէ զայն՝
զոր անիծիք ստացաւ՝ բուտոցանել փուշ և տա-
տասկ . և ոչ զայն՝ զոր օրհնութք ընկալաւ յայ : | Հւ
զինչ շահ այսպիսի ծնողաց զայսպիսի զաւակս ու-
նել , և զայսպիսիս թողութեամք՝ ոչ օրհնութեան ,
այլ անիծից :

|| Ե այսպէս են ասէ երկիւզածաց զաւակք . զի նոքա
ոչ կամեցան թողութ սոսկ զաւակ , այլ բարի զաւակ .
որպէս զի և նոքին ինքեանց նմանակից յաջորդ լինե-
լով , զոր օրինակ ինքեանք վայելեցին բարութեամք , և
լցան յայ օրհնութեամք , նոյնպէս և նոքա 'ի նոյն ցըն-
ծացեն : || արդան ըստ լամբ" . զաւակաւ իմանայ
զբարի գործս և զառաքինութիւնս զորս ծնանի երկիւ-
զածն իբրև զորդիս , և այն երկամիքք : | Հրդ երկիւ-
զածք այ թէպէտ և երանելի են յաշխարհի աստ յին-
քեանս և յորդիս իւրեանց , բայց քանզի որպէս ա-
սացաք կրեն և զմեծամեծ փորձութիւնս , կարօտին զօ-
րանալ յայ , և զօրանան իսկ . ըստ որում յայտ առնէ
մարգարեն 'ի յաջորդ համարն ասելով :

Ճա . **(** օրութէ և ար երիւղածաց իւրոց , և շնորհաբան
■ իւր ուսուցանէ նոցա :

Հասոս զօրութք բազմապատիկ օրինակաւ առեալ լի-
նի . մի՝ ըստ ինքեան և ըստ սահմանի իւրում , որով
ոչ այլ ինչ նշանակի , բայց եթէ * կարտղութիւն վա-
նիչ տիկարութեան || . և այս թէ յինքեան յունողն
մտածեսցի , և թէ արտաքոյ ունողին . յինքեան յու-

նողն մնածեալ՝ յունողին վանէ զտկարութիւն . արտա-
քոյ մնածեալ՝ արտաքոյ ունողին վանէ զտկարութիւն :
Վսացի * զտկարութիւն . զի թէպէտ զօրութիւնն
զգօրութիւն վանէ , բայց ոչ ըստ այնմ որ բաղդատի
իբր զօրութիւն . այլ ըստ այնմ որ բաղդատի իբր տկա-
րութիւն , կամ իբր տկար զօրութիւն առ վանիչ զօրութիւն :
Եւ այս առումն յաճախէ 'ի սուրբ գիրս . (ըստ այնմ
եսայ . ծը . 1 .) * զգեցիր զգօրութիւն քո սին . (և
սաղ . հ . 9 .) * 'ի պակասի զօրութեան իմայ մի թաղուր
.. զիս . : { Յայս հայելով տիրապէտ զօրութիւն կայի նորն-
իշխան կարողութիւնն այ . (ըստ այնմ ը . կոր . ժդ .
4 .) * Աւնդանի է զօրութիւն այ . (և սաղ . ի . 1 .)
* աէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւոր .
Երբեմն և հասարակ կարողութիւնն զօրութիւն ասի .
(ըստ այնմ սաղ . լդ . 10 .) * եթող զիս զօրութիւն
.. իմ . սոյնպէս և ուժեղութիւնն . (ըստ այնմ սաղ .
լը . 14 .) * և ոչ հսկայ 'ի բազում զօրութեան իւ-
րում . : Երբեմն և հանգամանք իրին զօրութիւն կո-
չի . (ըստ այնմ ա . կոր . դ . 19 .) * 'ի միտ առից ոչ
.. զբանս հպարտացելոցն , այլ զգօրութիւն . : Դար-
ձեալ և արդասաւորութիւն և պտղատուտի կամ լիւ-
թիւն իրին երբեմն զօրութիւն անուանի . (ըստ այնմ յո-
վել ը . 22 .) * որթ և թզնի (ետուն) զգօրութիւն
.. իւրեանց . : { Յոր միտ և յերգս երգոց զրի . (դ . 5 .)
* Երդմնեցուցանեմ զձեզ . . . 'ի զօրութիւնն և յուժգ-
.. նութիւնս անդաստանի . :
Երկրորդ՝ առեալ լինի փոխանակ մեծամեծ զործոց
զօրութէ կամ քաջութէ և յաղթուե . և այս երբեմն
'ի գերենական կարգի , որպիսի են նշանք և պանչե-
լիք , ևն . (ըստ այնմ սաղ . հէ . 4 .) * պատմել զօրհ-
.. նութիւն ան , զօրութ և զբանչելիս իւր . : (և մարկ .
դ . 2 .) * զօրութիւն այնպիսիք 'ի ձեռաց սորա լինին . :
Ըստ այսմ և ներգործութիւն մեծի կարողուե՝ զօրութ
կոչի . (ըստ այնմ յուկ . դ . 19 .) * զօրութիւն ելաներ
.. 'ի նմանէ և բժիշկ զամենեսին . : Երբեմն ևս 'ի
ընական կարգի . որպիսի են մեծամեծ զործք . (ըստ
այնմ սաղ . ծթ . 13 .) * աստուածալ արասցուք զզօ-
.. րութիւն . և (սաղ . ի . 14 .) * բարձր լէք տէր 'ի զօ-
.. րութէ քում . : այսինքն 'ի զօրծս զօրաւորս : { Յոր

միտ ողք զմեծամեծս դօրծեն , կոչին որդիք զօրութեն .
(ըստ այնու թ . թագ . իդ . 29 .) * քաջալերեցարմաք
և լերուք յորդին զօրութեան || :

Եղբարդ՝ առեալ լինի փոխանակ գործողաց զօրութեն ,
որպիսի են զօրապետք և զօրք . (ըստ այնու անաց .
իէ . 5 .) * իշխան զօրութեն (այսինքն զօրաց) երբոր-
դ , զի ամսեան || : { Յայս իսկ և զօրք երկնային դասուց
ի բազում տեղիս սուրբ զրոց զօրութիւնք ասին . ըստ
այնու * զօրութիւնք երկնից շարժեսցին || . (մատ . իդ .
29 :)

Դարձեալ՝ առեալ լինի փոխանակ պատճառի զօրու-
թեան , այսինքն փոխանակ այնոր որ լինի պատճառ զօրա-
նալոց . որպիսի է մեծութիւն , փարթամութի , ձնիու-
թիւն են . (ըստ այնու եայ . կա . 6 .) * զօրութիւնու-
հ ազգաց կերիջիք , և մեծութիք նոցա պանչելի լինի-
ջիք || : Բայտ այսմ նաև բերդք և պարիսպք երթեմն
զօրութիւնք կոչին . (ըստ այնու սաղ . իսէ . 14 .) * զիք
,, զիիրսոս ձեր ՚ի վերայ զօրութեն նորա || :

Բայտ նշանակութեանց ըստ այսոցիկ ամփ որ զիքք կո-
չեն զան * տէր զօրութեանց || : Վրդ յասաջիկայ բնա-
բանիդ ալիրապէս ըստ առաջին նշանակութեան առեալ
լինի բառդ զբութէ , հայելալ միանդամայն և յայլ
նշանակութիս . զի յայս ամակնարկելով առէ :

Օ զբութէ և տէր երէիւղածաց իւրոց . ՚ի իտելի է՝ զի անձ
ըստ այնու ասի լինել զօրութիւն երկիւղածաց , ըստ ս-
րում տայ նոցա կարուղութիւն՝ այսինքն զայնապիսի
նորդչս՝ որ կրկնակի զօրացուցանէ զնոսա , մի՛ առ ՚ի
վանել՚ի նոցանէ զտկարութիւն , այսինքն զթուլութի
պահպանութեան օրինաց . երկրորդ՝ առ ՚ի վանել զիօր-
ձութիւնու մեղաց և զնոտածութի ձախորդութեց , ևն .
և այսու ասի լինել զօրացուցիչ նոցա : ՚իւ զայս յայն
սակս առնէ անձ երկիւղածաց իւրոց , զի որովհետեւ
նորա ոչ են յուսացեալ ՚ի զօրութիւն իւրեանց . այլ ՚ի
զօրութիւնն այ . և երկնակալ ՚ի նմանէ՝ կամին պահել
զօրէնս նորա , և զգուշանան չառնել ինչ ընդդէմ նման ,
անձ ևս տեսանելով զայսպիսի կամն նոցա և զայսպի-
սի զգուշացողութիւն՝ ինքնին զօրացուցանէ զնոսա առ
պահպանութիւն օրինաց իւրոց , և առ յաղթութի փար-
ձութեանց . ՚ի զի այսր ամփ զօրացուցանէ զնոսա ևս և

առ՝ ՚ի հաստատուն մնալ՝ ՚ի զործո բարիս, և զուար-
թագին կալ՝ ՚ի ծառայութեան իւրում։ ՚ը զի առ այս
հարկաւոր է տեղեկութիւն օրինաց, զայն ևս տայ և
ուսուցանէ նոցա անձ . վայ յարէ զինի մարդարէն, և
ասէ :

Եթ պէտակարանս իւր ուսուցանէ նոցա : Ալտակարանն է
զուածք, յորում պարունակին կտակք այց, այսինքն
օրէնք և խոստմունք այց . և զի ըստ ոճոյ ձարտասանից
անուն պարունակողին դնի փոխանակ անուան պարու-
նակէցելոյն, այսու առմամբ դնի աստ բառս իրակարան .
և փոխանակ ասելոյ՝ անձ ուսուցանէ երկիւղածաց իւ-
րոց զիտակի իւր, այսինքն զօրէնս իւր, ասէ . ուսու-
ցանէ նոցա զիտակարանս իւր . և այս այն է՝ զոր ասաց
(՚ի համարն . 7. և 9.) թէ օրէնսգէտ առնէ զնոսա
անձ . (տես անդ,) և կամ այս բան դնի իւրը բացա-
տրութի օրէնսգէտ առնելոյն, յոր միտ ասէ մեծն խոս-
րով (՚ի մեկն . ժամագր . երես . 76.) * օրէնսգէտ
առնէ զնա ՚ի հանապարհի . յոր և հաճեցաւ . զի զօ-
րութիւն է տէր երկիւղածաց իւրոց, և զիտակարանս
իւր ուսուցանէ նոցա . ցուցանելով ընդ որ պարտ է,
,, զնալ, և զօրացուցանելով ՚ի զնալն || :

Խակ թէ օրէնքն կտակ ասին՝ այս վասն այսորիկ է՝ զի
անձ ՚ի ձեռն օրինաց իւրոց յայտ արար զիամն իւր իրեւ-
կտակաւ, զի որք պահիցեն զայն՝ ժառանդ լիցին
ստացուածոց իւրոց, այսինքն փառաց արբայութեան
իւրոց, և որք ոչն պահիցեն՝ զրկեսցին ՚ի ժառանդու-
թենէ անտի . զայսմանէ այլրոք ևս ունիմք խօսիլ։ Ռդդ
յայտ արարեալ մարդարէն՝ թէ զօրպիսի խնամն
ցուցանէ անձ առ երկիւղածս իւր՝ յուսուցանել նոցա
զիտակարանս իւր, և ՚ի զօրացուցանել զնոսա, առա-
ջի դնէ այժմ, թէ ինքն յայսպիսի բարերար ուղղեալ
ունի զաշս իւր . վայ ասէ :

Ժբ . **Ա**յս իմ յամ ժամ առ տէր, և նա հանէ յորոգայնէ
ուղղու իմ :

Ո՞եծի իմն վստահութեան սրտի ներգործութի է խոս-
տովանիլ մարդոյ՝ յամենայն ժամ ուղղեալ ունել զաշս
մասց առ անձ, և յամի ՚ի վստանգիլն՝ ՚ի նա յուսալով,
և զնա ձեռնոտու ունելով նովաւ անվնասելի զերծա-

նիլ, զօրոյ ահա առեւալ մարգարելին զվորձ համար ձակո բարբառի և առեւ :

Առ էմ յամ Ճամ առ դէր, և առ հանէ յորոգայնէ պատս էմ : Եւյս բան ըստ երից կարէ առաջի զնիլ . մի՝ ըստ ուշագրութեան 'ի հայիլն յած և 'ի գործելն ըստ այ . երկ բորդ՝ ըստ ուշագրութեն 'ի դիտեն . երրորդ՝ ըստ ուշագրութեան 'ի զգուշանայն : Բայտ առաջնոյն՝ յայտ է թէ ամբ որ կամի ուղղութք գործել յինչեւիցէ իրս , պարտ է միշտ հայիլ 'ի գաղափար կամ 'ի կանոն այնք՝ զօր գործէ . զօր օրինակ՝ որ նկարէ զիենդամնի պատկեր ուրուք՝ պարտ է հայիլ 'ի նա . և որ կանոնէ զտուն , պարտ է հայիլ 'ի գաղափար տանն՝ զօր նկարեալ ունի 'ի միտս . որ կամի ուղիղ վարել զնաւ 'ի մէջ ովկիանոսի , պարտ է հայիլ յանշարժ ինչ՝ որպիսի է աստղն ըեւուական , և կամ կողմինացոյց նաւուն . որ կամի ուղղութք կառավարել գժողովուրդն , պարտ է հայիլ 'ի կանոն կառավարութեն այնք ժաղովրդեան , այսինքն 'ի սահմանադրութիւնս և յընկալեալ սովորութիւնս . զօրս ունի այն ժողովուրդ՝ Խոյնակէս և որ կամի զուղիղ կեանս վարել 'ի բարոյական կարգի՝ պարտ է միշտ հայիլ 'ի բնական օրէնս՝ որ տպաւորեալն է յայ 'ի միտս :

Ուրեմն և որ կամի վարել զիեանս 'ի վեր քան զբնականս , որպիսի է կեանք երկիւ զածաց նոն , զօր նկարագրեաց մարգարելն 'ի վերոյ , պարտ է նման հանապազ հայիլ 'ի կանոն այնք կենաց . և զի այս կանոն է օրէնքն այ , յորս յայսմնի կամք նորս , և սրբութին և մեծ վայելչութիւն նորին , յայն պարտ է հայիլ միշտ . այսինքն խորհիլ նախ 'թէ զինչ կամի ած , զի մի ինչ արասցէ ընդդիմ կամաց նորա . խորհիլ երկրորդ՝ թէ զիարդ սուրբ է ած , զի մի չար ինչ գործելով անմաքուր երեւեսցի առաջի սրբութեան նր . խորհիլ երրորդ՝ թէ քանի սքանչելի է մեծ վայելչութիւն փառաց նորս , զի մի համարձակեսցի անսպատկառ շրջիլ 'ի ներկայութեան նորս :

Իշ արդարեւ որ հանսապազ յայսպիսի խորհուրդս իցէ , ոչ միայն վարէ զիեանս 'ի վեր քան զբնական ընթաց , այլ և 'ի նոյն կեանսն տառնայ անդորրութիւն բեկրկութիւն մեծ . և ոչ է նման ուստեք կասկած եր-

կիւղի . վասն զի եթէ , 'ի յայտնի վտանգից իցէ այն կառ կած , նա աստուծով զօրացեալ կամ խուսափէ , անտի , և կամ վանէ զնոյն . իսկ եթէ , 'ի գաղանի վտանգից իցէ իբր յորոգայթից՝ ան ինքնին փրկէ , զնա անտի :

Հայսպիտի իմն վիճակ վերառեալ մարդարեին՝ համարձակի ասել , փափաքելով իմ յամ սրտէ ուղղութք կեալ ըստ այդ , հանսապաղ՝ ի նա հայիմ աչօք հոգւոյ իմոյ այսինքն մոտօքս , ոչ ժամ մի միայն , այլ յամ ժամ . հայիմ՝ ի հաճութիւն կամաց նորա , հայիմ՝ ի սրբութիւն նորա , հայիմ և՝ 'ի մեծվայելութիւն նորա . հայիմ և հայիմ . պատկառիմ , և խոնարհիմ . տեսեալ և զունայնութիւն անցաւորացու և զգարշութիւն մեղաց , 'ի նոցունց զգուշանամ , և՝ 'ի սոցունց փախչիմ : | յա եթէ առ իմ այսինքն զգայութիւնը իմ (որք են իբր սոք հոգւոյ) յորոգայթ ինչ անցաւոր իրաց ըմբռնեսցին՝ առ՝ ի որաալ զհոգի իմ , նա ինքն տէր , առ որ ապաւի նեալն եմ՝ հանէ անտի , այսինքն առնէ՝ զի զգայութիւնը իմ մի մասցեն ըմբռնեալ յայն որոգայթ :

Ո արգարեն ըստ կարգի բանից իւրոց՝ յեւս զնելոյ * աչք իմ յամ ժամ առ տէր , թուի թէ պարտ էր զնել . և նա պահէ յորոգայթէ զալս իմ . բայց ըստ լամք . ոչ ասէ զալս իմ , այլ զալս իմ . զի աչքն արգեն հայէին առ տէր . իսկ սոք , այսինքն զգայութիւն՝ կարօտէին ազատութեան . այլ թէ զիարդ սոք կոչին ըզգայութիւնը . տէս՝ 'ի սազ . (ՃՇԸ . 49 :)

Պստ երկրորդ մեկնութե մարդէ և աստանը սոխւք իմանալ զգործս , և աչք իմանալ զգիտաւորութիւնն . վասն զի որպէս սոխւք լինի զնալ աստ կամ մանդ , սոյն պէս և զործովք լինի զնալ յարթայութիւն կամ՝ 'ի զժոխս . և որպէս աչք՝ 'ի ձեռն տեսութեան բերի յայս ինչ կամ յայն , սոյնպէս և զիտաւորութիւն հոգւոյն յայս վախճան կամ յայն , և՝ 'ի նայն կարգէ զգործսն . և թէպէտ ըստ փիլիսոփայութեան՝ զիտաւորութիւնն է ներգործութիւն կամաց , որ է կոյր կարողութիւն , և ոչ համեմատի հայեցուածոյ աչաց , բայց բանզի է յառաջնորդութեան անդ մատաց՝ 'ի զիմել յայս ինչ որոշեալ վախճան , վշ այսորիկ աչք ևս անուանի :

Վ ըդ՝ 'ի զործել մարգոյ իրս ինչ՝ զործք նորա յայնժամ լինի բարի և հաճոյ այդ , յորժամ բարի և ուղիղ զի-

տառորութե՛ կոստադի , այսինքն յորժամ իրը վարժան զիտեալ լինի այն ինչ զոր ոծ կամի , կամ թէ զիտեալ լինի ուս ննքն ոծ կամ փառքն այ , զոր օրինակ՝ խօսիլ 'ի փառս այ , լսել 'ի փառս այ , ուտել 'ի փառս այ , ննջել 'ի փառս այ , են . որպէս և յորդորէ առաքեալն , ասէլով . * եթէ ուախցէք , եթէ ըմալիցէք , եթէ զինչ .. և առնիցէք , զամ ինչ 'ի փառս այ արասջիք || : (առ կոր . ժ . 31 : տես և 'ի կողաս . դ . 17 :)

Եթէ այս զիտաւորութիւն բարձյի , զոր ինչ զործէ մարդ՝ ունայն վաստակի . աշխատի և ու ինչ շահի : Յորժամ բրեցան և բարձան աչք սամիւնի՝ յազօրիս աշխատէր սամիւն . (դատ . ժդ . 21 :) ոյնապէս եթէ բրեսցի զիտաւորութի մարդոյ՝ 'ի սնուտիս պատոյտքի , և զնանրութիւն աղայ :

Այս զիտաւորութի իրեւ առաջնորդ և իրեւ ըւսատու պարտի կանխել 'ի սկզբան զործոյն . ըստ այնմ . (ժող . ը . 14 :) * իմաստանոյ աչք 'ի զլուխ իւլում || . որ է ասել , զիտաւորութիւն մարդոյ՝ որ զործէ իմաստութե՛ այսինքն խոհեմութե՛ պարտի լինել 'ի զլուխ զործոց իւրց այս է 'ի սկզբան զործոյն , և ուզգութիւն առաջնորդէլ . որով և զործն լինի բարի . * եթէ ակն քո առատ է , (ասէ տէրն . մատ . դ . 21 :) ամ մարմինդ լուսաւոր եղիցի || . այսինքն եթէ զիտաւորութիւն քո բարի է յամ կողմաննէ զործդ ևս լինիցի բարի և ուորբ . * եթէ արմատն որ է , ապա և ուորքն || . (հողմ . ժամ . 16 :) իսկ եթէ փառալ է և որդնահար . որ սատ նոր երեւսցի :

Պահանջի ևս՝ զի այս զիտաւորութիւն ցիցէ բաժանեալ , այլ մի միայն . այսինքն թէ միայն առ ոծ , կամ առ այնպիսի ինչ որ կարգի առ ոծ . զի այսպիսի զիտաւորութիւն է՝ որ առնէ զգործն համոյ այ , և զգործոցն սիրելի յաշ նորա . յայս միտ ասէ փեսայն երկնաւոր ցհարմն հոգեւոր . * սրտացուցեր զմեզ քոյր իմ հարսն , սրտացուցեր զմեզ միով ակամք քով || . (երգ . դ . 9 :) Ոլիով ասէ , և ու երկորումբը :

Եթէ զիտաւորութիւն քո յայլեայլս բերիցի անհամոց առնէ այ զգործս քոյ . ապա ջանա զի հաստատեսցի 'ի վերայ միոյ միայնոյ . այսինքն միայն 'ի վերայ սիրոյն այ , իրեւ իսարիսի 'ի վերայ վիսի . ըստ որոյ հարցանէ :

ամ . * յեր վերայ հաստատեցան աղիք դորա || . (յոր .
լը . 6 .) Հոգեորական շինուածն յենու ՚ի վերայ ա-
ռաքինութեանց իբրև ՚ի վերայ սեանց , և սիւնք ՚ի վր-
դիտաւորութե իբրև ՚ի վերայ աղիսից , և այս աղիք ՚ի
վերայ սիրոյն այ . ՚ի գիտելն առնել զայս ինչ կամ
զայն վասն սիրոյն այ , կամ ՚ի փառս այ :

Ա . յլ գիտել արժան է , զի գիտաւորութիւնն կրկին է՝
ներգործական և զօրութենական , կամ բացայայտ և
լուելեայն . ներգործականն է՝ յորժամ ոք ներգործու-
թի բացայայտ գիտէ առնել զայս ինչ կամ զայն ՚ի
փառս այ . զոր օրինակ զնալ առ հիւանդ ոք , զրել
զգիր , շինել զտուն , ևն : Խոկ զօրութենականն է՝
լուելեայն շարունակութիւն այնր ներգործական գիտա-
ւորութեան , և այս շարունակութի յայնժամ պահի ,
յորժամ ՚ի գործն անդ կամ ՚ի պարապիլ գործոյն՝
սկզբնական գիտաւորութիւնն ոչ փոխի , կամ յետո ոչ
նահանջի , կամ անկարգ գիտաւորութի իւիր ոչ իսան-
գարի , կամ երկար ժամանակաւ ոչ ընդհատի :

Բ . յսմ զհետ զայ թէ առ պահպանութի գիտաւորու-
թեան ոչ սպահանջի յամ բովէի ելուզանել զներգոր-
ծութիւն գիտաւորութեն եզելց , այլ բաւական է ՚ի
սկզբան գործոյն զնել զայն , արսինքն է թէ ՚ի սկսա-
նին գիտել , և յետ գիտելոյն՝ ուշ զնել ոչ գիտաւո-
րութեանն այլ գիտեալ գործոյն , և այնմ պարապիլ-
ապա թէ ոչ չեր հնար մարդոյ գործել ինչ գործ
մարմնաւոր : Խւ ահա ըստ այսմ է իսանապի ասելն
աստ . ացք իմ յամ ժամ , ևն :

Վասիր * սկզբնական գիտաւորութիւն || . զի եթէ այն
ոչ եղծցի , ոչ եղծանի և ընդանելութիւն գործոյն ,
կամ հաճոյ ընծայիլ նորմն . զոր օրինակ՝ յուտել եր-
կիւզածին զհամազամ կերակուրս ՚ի փառս այ կամ
իբրև զպարգև այ , եթէ առանց եղծանելոյ զայս
սկզբնական գիտումն գիտեսցէ և զախորժ զգայութէն
հաշակելեաց , ոչ եղծանէ զընդունելութիւն այնր գոր-
ծողութե : Վայց քանզի մարմին տկար միտեալ ՚ի շարն
և միտք հաստատեալ ՚ի ինաման շարին , յօժարին ինք-
եանց սեփականել զամ . այնպիսի իմն օրինակաւ յիւ-
րեանս ձգեն զգործս երկիւզածացն այ , մինչև զրե-
թէ յորոգայլթ ըմբռնել զնոսա և զսկզբնական գիտա-

ւորութիւն նոցա ևս արատաւորել՝ մանաւանդ թէ եղծանել. զոր օրինակ ՚ի տալ ուրբաք զողորմութիւն աղքատի ՚ի փառս այց կամ վարձատրելոյ յայց՝ շնչառոր հոգի ծածկապէս յօժարի փառաւորեալ լինել ՚ի տեսողաց կամ երախտաւոր ճանացիլ յաղքատէ անտի և այլն :

Այսպիսի ծածուկ յօժարունք որոգայթք են զործոց երկիւղած անձանց, յորոց եթէ ոչ զգուշացին, չարաշար ըմբռնին ինքեանք և զործք իւրեանց : Եւսակայն ած որ գիտէ զտկարութիւն նոցա, և հայի ՚ի սկզբնական յօժարութիւն նոցին, յայնպիսի որոգայթից հանել զգործա նոցա . իբր զի այնպիսի իմն օրինակաւ օգնել նոցա . զի գիտացեալ նոցա զարոգայթն՝ զգոց լիցին, և զոր ՚ի հաճայս իւրեանց ձգել կամէին, ՚ի փառս այց արացեն . և զի յայսմ զգուշաւոր դտաւ երանելին դաւիթ, վայ ասէ դիտաւորութիւն իմ միշտ առ տէր է, և եթէ պատահեսցի ինձ արտաքոյ այսք դիտաւորութեան ընթանալ, որով և լիցի դործոց իմոց ըմբռնիլ յորոգայթ չարի, տէր ինքնին օգնեսցէ ինձ և հանցէ զայնտափէկ գիւմ զործա յորոգայթէ անտի :

Աստ երրորդ մեկնութեան՝ այս բան ոչ յայլ ինչ հայի բայց եթէ յայն՝ որով ինդըէ մարգարեն ազատիլ յորոգայթից, այսինքն ՚ի վտանգաւոր նեղութեանց, ՚ի մահացուցիլ մեղաց, և ՚ի դառնահամբեցը հնարից թշնամեացն՝ զորս յիշէ ՚ի հետեւեալ համարսդ մինչեւ ՚ի վերջն : Եւդ յայտ է՝ թէ որ ՚ի նեղութեան է, և ՚ի մեծի կարօտութեան, մանաւանդ որ ըմբռնեան է յորոգայթ, և տեսանէ թէ չէ կարօղ ինքնին ազատիլ, կողկողազին աչօք հայի յայն, յորմէ ակն ունի օգնականութիւն գտանելոյ . և որչափ յաճախ հայի, այնչափ օգնութեան և ողորմութեան կարօտ ցուցանէ զինքն . և եթէ ոչ համարձակեսցի բերանով բարբառ արձակել, միայն անթարթթափ աչօք նայելով անձայն պազատի, և այնու իսկ զառաւերսթի կարօտութե իւրոյ յայտնէ :

Եւ զի զայն զայս առնէր մարգարեն, վասն որոյ ասէ . աչք հոգւոց իմոյ հչ դադարին ՚ի հայելոյ առ տէր . այնպիսի օրինակաւ որով աչք տառապելոց հային առ ազատեցուցիս կամ առ նպաստիչս իւրեանց, կամ

որպէս աչք աղքատաց առ ողբրմածս , կամ որպէս աչք հիւանդին , առ թիվին , կամ որպէս աչք աղախնոյ առ տիկին իւր , կամ որպէս աչք պարտաւորեցէլոյ առ դատաւորն , և նույնութիւնը :

Այսացի * աչք հագւոյ || . զի յայտ է թէ աչք մարմնոյ անկարանայ բերիլ առ անձ , և այն՝ յանմ ժամ . ուստի զայս բան՝ ի մէջ բերեալ նորհալոյն՝ ի թուղթն առ միջազետս՝ զրէ այսպէս . առէ մարդարէն * աչք իմ յամ ժամ առ տէր են . և մարմնոյ աշաց զիարդ Հնար է ի տեսութիւն այ լինել յանմ ժամ , և ոչ զմի վայրկեան ժամն , զի սորայս տեսութիւն մինչեւ յաստեզս միայն հասանել . բայց հոգւոյն աշաց կարելի է , ըստ մաքրութեանն չափոյ . որպէս որք երանին՝ ի ոտեւ սրբն օրախոք || :

Իսկ յաճ ժամ ասելով որպէս ասացաք՝ ի վերոյ յերկը բորդ մեկնութեան՝ ոչ կամի ցուցանել մարդարէն , թէ նաև ի քուն լինելն կամ յու և իցէ զործողութիւն յանմ ըրպէի ներզործութք հայէր կամ կողկողէր առ անձ , այլ թէ ցործափ՝ ի զգասառութեան էր , և քանից ի նեղութեան տեսանելք զանձն ևս և արտաքոյ այնք կողկողազին հայէր առ անձ . իսկ յայլ ժամանակս զօրութենաբար կամ մանաւանդ ունակապէս , այսինքն՝ ի տրամադրութեան զողով և՝ ի պատրաստութե հայելոյ . որպէս որ ուղղեալն իցէ զայս իւր առ պատկեր ինչ՝ ի մնան այնպէս աշաց նորա եթէ ինքն՝ ի քուն ըմբըռնեցի , աչք նորա թէպէտ և փակեալ մնան , բայց տրամադրութք առ պատկերն են , և ընդ բանիլ աշացն՝ ի նոյն հային . այսպէս է և ասացեալն մարդարէին : Աւ կամ մարթ է ասել , թէ զօրութք կայ յայս բան բառոդ նիւշ . որպէս թէ եղեալ էր . հայիմ առ տէր յանմ ժամ՝ մինչեւ հայեսցի և նա առ իս , և ազատեսցի զիս՝ ի պէսպէս վասնզից և ի վշտաց . որոց զգաղանին՝ ի մէջ բերէ այնու՝ զոր ասէ :

Եւ հանձ յարդայնէ զայս էմ : Որոգայթն է այնպիսի իմն գործի , յոր յանգէտս ըմբռնի ոք . և զի բազում ինչ կան յաշխարհի , յորս յանգէտս և անակն կալ զիսպատճով ըմբռնին զգայութիւնոք մարդոյ , և՝ ի վտանգ մեծ արկանեն զհողին որպէս պատահէցաւ եւայի՝ ի սկզբան , զայնոսիկ կուեւ որոգայթ . բազում

որոզայթք կան առև, յաշխարհի, եթէ բմբոնեսցին 'ի
մին 'ի նոցանէ, ոտք իմ, այսինքն զգացութիւնք իմ, չու-
նիմ զայլով ազատեցոցիւ, բայց եթէ զած . վասն որոյ
պազատի առ նա, ե առև :

ԺՂ. **Ա**յեւա առ էս, և ողբեա ինչ . զի դամօը և ողբառ
էմ էս :

Արովշետե ասաց 'ի վերոյ . աչք իմ յանց ժամառ տէր
էն . զփոխադարձ այնք իննդրէ . իրը զի որպէս ինքն
հայի առ նա, նոյնարէս և նա նայեսցի առ ինքն . ոչ զի
անձ ոչ նայի, այլ զի քաղցրութեամբ նայեսցի . իսկ այս
նայիլս է օգնել, կամ զօգնութիւն իւր ցուցանել կա-
րօտելոյն, կամ ընդունիլ զնա, կամ հաճիլ ընդ նա,
և ողբամիլ նմա, կամ այնպիսի ինչ առնել, որով բա-
րի լիցի նմա, և ինքն ևս բղխեսցի զբարին . որպիսի
եղեւ նայիլն քնի առ պէտրոս, զի եհան զնա յուրա-
ցութէ, և ետ նմա լուանալ զմերզ իւր . ուր առև բար-
սեղ վարդապետ ('ի մեկն . մարկ . զլ. ժՂ.) * ո-
չ քաղցր հայեցումն յափ . 'ի վիմէ (այսինքն 'ի պէտ-
ք ըստէ) քաղցր ջուր արտասուաց բղխեցուցանես 'ի
ըսւացումն մեղաց || . Օ այսպիսի նայիլս իննդրէ մար-
քարէն, և առև :

Այայեա առ էս և ողբեա ինչ : Ալամի ասել . որպէս ես
ինքն ողբամագին աչքը հայիմ առ քեզ, զու ևս ամեն-
ողորմ աչք նայեա առ իս, և ցոյց ինձ զօգնութիւնդ
և զողորմանութիւնդ . իսկ եթէ զու ոչ նայեսցիս առ իս,
ով նայեսցի, ով օգնեսցէ, և ով ողբամեսցի . և ըզ-
պատճառ այսր յայտ առնել ասելով :

Օչ դամօը և ողբառ էմ էս : Իսառս դամօը նշանակէ
զնա, որ է միակ որդի ծնողաց իւրոց, որ և (եթէ ինքն
միայն իցէ ծնեալ) ասի միածին, որպէս զնի աստ 'ի
թարդմանութէ եօթանամնից : Իսկ ըստ յարսարու-
թեան ձայնի նշանակէ զնա, որ է որդի միոյ մօր, ըստ
որոյ իւրաքանչիւր մարդ կարէ ասիլ միամօր . զի առեւ-
նեցուն մի մայր է հողն, յորմէ ծնանին, և յոր ունին
զնել զզլուխ իւրեանց : Ի յլ ըստ ենթադրութէ նշա-
նակէ զնա, որ միայնակն է, և չունի իննամոզ անձին :
Ո սոյն նշանակութի հայելով եղեալ են աստ թարդ-
մանից մեր զբառդ դամօը . և այս յայտ է յերից . մի-

զի գաւիթ ոչ էր միակ որդի ծնողաց իւրոց . որովհետեւ
ուներ բազում եղբարս . և չէ մարթ ասել թէ զայս
առև վասն այնորիկ՝ զի ինքն էր կրտսեր որդի , և 'ի
սկզբան անդ չէր 'ի համարի յաշ եղբարց իւրոց . և
ոչ ես՝ թէ գուցէ միակ որդի էր ոչ հօրն , այլ մօրն ,
զի թէ և այսպէս լիներ , բանք նորա աստ ոչ հայն
յայդ . և այս առաւել ևս յայնի լիցի 'ի ստորեւ .
Խըկորդ՝ զի յերբ՝ զրի ետիւր , այս է միակ , կամ
միայնակ (որ այլազգօրէն պիրիձիկ ասի .) ըստ որոց
յայլամթարգ . բաց յեօթ՝ գնի կայնակ կամ դ , և
կամ դայն . Խըրորդ՝ զի մարգարէն ցուցանեւ աստ զին-
քըն լինել անօգնական , և անձեռնառու , աղքատ և
կարօտ . իսկ առ այս չիք յարմարութիւն առաջի գնելց
զմիանօրութիւնն ըստ առաջին նշանակութէ , այլ զմի-
այնակն լինել . որով զիտէ 'ի գութ շարժել զած .
իբր զի ողովմած զողով նայեցեալ 'ի միայնութիւն նորա
ողորմեսցի նմա . որպէս թէ առեր . աղաւեմ ցոյց առ
իս զողովմութիւն , և գու միայն օգնեա ինձ միայնումն .

զի բաց 'ի քէն չունիմ զոք որ օգնեսցէ ինձ .

Վզքատ ևս կոչէ զինքն . իսկ աղքատ ասի նա՝ որ զուրկ
է 'ի կարեռ պիտոյից , կամ յընդարձակ միտս առեալ՝
չունի ինչ . և ըստ այսմ տոմ մարզիկ կարեն կոչիլ աղ-
քատ , զի չունին ինչ յինքեանց . մերկ գան յաշխարհ ,
և մերկ ելանեն յաշխարհէ . Իսկ բարոյապէս աղքատ
ասի նա՝ որ մերկ է 'ի գործոց բարեաց և 'ի չորհաց ,
և կամ յառաքինութեանց . Վայլ փախարերաբար աղ-
քատ կոչի նա , որ զուրկ է 'ի զորութէ կամ յօգնակա-
նութենէ այլոց : Հայսպիսի վիճակի զողով հասին ասէ,
'ի վերայ իմ բազում նեղութիւնք . յորոց ազատիլ կա-
մելով պազատի և ասէ :

Ժ Եղանակն որպէս ինչ բազում եղին յոյժ . 'ի հայոց
ինչ հան չիս :

Վայս նեղութիւր սրտի են պէսպէս խորհուրդք տառա-
պեցուցիչք հոգւոց , հոգք տարտառնութեան յառաջանա-
լոց 'ի բարին . տատառնութիւր խղձի 'ի վերայ լաւութէ
կամ ոչ լաւութէ զործոց . վարանմունք շփոթութէց
'ի բարոյական սկզբունս , խուարացին մը ութիւր մոտաց ,
ցամաքութիւն և անշարժութիւն կամաց , խստութիւն և պըն-

դուքիւն՝ ի ստորին մասն հոգւոյն , անկերպարսն նը-
կարուածք հոգևորական մօռածութեց , անյարիր պատ-
կերակերպութելիք երևակայութե , քստմնելի սյլանդա-
կութեց յիշատակութելիք , հալիչ և մաշիչ և տարակու-
սութիւնք յառաջիկայ առնելիս , անկարգ բերմնենք
յօժարութեց հոգւոյ առ խորշելիսն , զայրացութելիք
անձնիշխանութեան յընդդիմուէ այլ և այլ իրաց . ցո-
լացութիւնք վրէժինդրութեանց արդարացի երևելոց .
պղտորութելիք տիրեալ համայն՝ ի ներքին մարդն յան-
համաձայն ըմբռնմանէ բազմազիմի դիպուածոց , յուզ-
մանք փոթորկեալ մըրկաց յարուցեալք՝ ի զգայութիւն
՝ ի նուելոյ թելազգութեան զիւաց , և այլ ազգի ազգի
նեղութելիք փոքրձութեց . և այն ոչ միայն բազում , այլ և
յոյժ բազում , որք երեւմն պատեալ սրաշարեն զեր-
կիւզածն՝ որոց եթէ տեղի տացեն , ընկղմին . և եթէ
պատերազմեսցին՝ տկարանան . եթէ լքցին , մեռանին
(այտինքն՝ ի մահուչափ մեղս գլորին .) և եթէ յամեռ-
ցեն , ՚ի նոյն թակարգին . գուցէ և յուսահատին :
Հայսպիսի նեղութիւնս պարտ է երկիւզածաց զիմել
առ իմաստուն հոգեոր բժիշկս , և յայտնել նոցա ըզ-
խորհուրդս սրտից իւրեանց , և առնուլ զեղ՝ ՚ի նոցա-
նէ . իսկ եթէ չկացցէ այնպիսի հոգեոր բժիշկ , ոչ է
հարկ մարտնչիլ ընդ այնչափ նեղութիւնսն . այլ յինքն
դառնալ , և դատաստան առնել՝ ՚ի վերայ իւր , եթէ
այլ ոք լինէր յայնպիսի նեղութիւն՝ զինչ խրատ տայր
նման , զնոյն առնել և ինքեան . և որ կարի կարևորն
է՝ ՚ի նանաչեն անդ զտառապանս իւր՝ տարածել
զանձն առաջի ոյ , և յայտնել նման զնեղութիւնն զայ-
նարիկ . ոչ վասն այնք զի նա ոչ զիտէ . այլ զի զօր զի-
տէ և տէսանն՝ համեսցի փարատել , և զօր խոնարհ
արար , բարձրացուսցէ . այսպէս առնէ ահա և մարգա-
րէս . տարածէ զինքն առաջի ոյ , և ցուցանէ նմա՝ զորս
՚ի սրտի իւրումկըէ :

Եւը-ն-թէս որդէ ինչ առէ բազում նոյն յոյժ : Եթէ առէ
սակաւ ինչ լինէին իմ նեղութիւնք , կամ փոքրոնք ,
համբերէի արգեօք , և չէր ինչ ինձ այնչափ ծոնք ,
նա զի կարէի ես ինքն նպաստիւք քո ձեռն արկանել
յայս ինչ կամ յայն , առ ՚ի ազատութիւն գտանելոյ .
բայց որովհետեւ բազում եղեն և տարածեցան յոյժ ,

միայն առ քեզ եմ ապաւինեալ, և ակն ունիմ գտա-
նելքե զփրկութիւն . և առ այս յարէ :

|| Հշտաց իմոց հան զիս : || Վասէ զերծո՛, կամ ազատեա՛,
այլ հան . առ 'ի ցուցանել զյաճախութիւն կամ զլո-
րութիւն նեղութեանցն՝ յորոց վշտանայր . որպէս թէ
ընկղմեալ իցէ 'ի նոսին, սմին իրի հան ասէ յայնցանէ :
Եւ աստէն վշտօք ոչ իմանայ մարդարէն զնոյն նեղու-
թիւն զորոց ասաց * նեղութիւնք սրտի իմոյ բազումե-
շէն յոյժ || . այլ զվշտանալն 'ի նեղութեանց անտի,
կամ զսրտահալ և զսրտամաշ տագնապս հոգւոյն՝ որք
'ի նեղութեանց անտի յառաջ գան : || ասն զի այր եր-
կիւղած տեսեալ յինքեան զայնպիսի նեղութիւնս՝ այս-
ինքն զբազմապատիկ վարանմունս, և զանկարգ շարժ-
մունս՝ զորս յիշեցաք այժմ, մաշի 'ի նոսին . զի ինքն
կամի միայն յած բերիլ, և յօրէնս նորա բերկրիլ . իսկ
այսպիսի անկարգ շարժմունք ամենեին ներհակ լինե-
լով այնպիսի կամեցողութեան բարւոյ և հաճութե օրի-
նաց՝ 'ի վիշտս արկանեն զնա . այսինքն է՝ առնեն, զի
վշտասցի ընդ այն . և ահա յայսցանէ խնդրէ մարդա-
րէն զերծանիլ :

Օսոյն և պօղոս առաքեալ յանձին բերեալ ցուցանէ ,
և 'ի դիմաց իւրոց՝ իբր 'ի դիմաց այլոյ ուրուք խօսե-
լով ասէր . * Հաճեալ եմ ընդ օրէնսն այ ըստ ներ-
քին մարդոյն . բայց տեսանեմ այլ օրէնս յանդամն
իմ (այսինքն 'ի մասունս կամ 'ի կարողութիւնս հոգ-
ւոյ և մարմնոյ) զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց ,
և գերեալ զիս օրինօքն մեղաց՝ որք են յանդամն իմ .
այր մի տառապեալ եմ ես, ով ապրեցուսցէ զիս 'ի
մարմնոյ աստի մահու . այլ շնորհքն այ 'ի ձեռն յոի
քոի տեառն մերոյ || . (Հուօվմ. Է. 22-23) : || յսպի-
սեօք վշտացեալ հողի՝ յայտ է թէ ընկճի և նուաճի .
և յանհնարինս վաստակեալ խոնարհի : || Եւ զայս վաս-
տակ և զխոնարհութիւն յայտ առնէ մարդարէն 'ի յա-
ջորդ համարն և ասէ :

ՃԵ . **S** Ես շիռնարհութիւն իմ և շվատակ իմ . և ուղինչ
զամ զմեղս իմ :

Խոնարհութեամք իմացեալ լինի աստ ոչ նոյն ինքն առա-
քինութի խոնարհութեան, այլ պատճառն խոնարհու-

թեան, (զորմէ տես 'ի սաղ. թ. 43:) զորև սակաւոք կը կնել աստ չէ անդէպ. վասն որոյ գիտել արժան է զի խոնարհութիւնն չորեքկին առեալ լինի. մի՛ փոխանակ առաքինութեան խոնարհութէ, որով ոք համարի զանձն անարդ քան զամ, և զայլս լաւ քան զինքն. ըստ այնմ. * խոնարհութէ զմիմեանս լաւ համարել առաջել քան զանձինս ||. (փիլ. բ. 3:) Երկրորդ՝ փոխանակ արտաքին ներգործութէ խոնարհութեան, որով ոք զիջանի յայնպիսի նուաստ գործս, մինչև անարդ երեխլյաց այլոց. ըստ այնմ. * առ խոնարհութեան նորա դատաստան նոր բարձաւ ||. (եսայ. ծկ. 8:) Երկրորդ՝ փոխանակ աղքատութէ, կամ փոխանակ նուաստ համարեալ լինելոյ համեմատութէ գերազանցութէ այլոց, թէ և յինքեան գերազանց իցէ յոյժ քան զայլս. ըստ այնմ. * հայեցաւ 'ի խոնարհութի աղախնոյ իւրոյ ||. (զուկ. ա. 48:) Չորրորդ՝ փոխանակ պատճառի խոնարհութ. որ պիսի են տառապանք, փորձութիւնք, ձախորդութիք, արհամարհութիք ևն. որք պատճառ լինին խոնարհելոյ մարդոյն, և այս առումն յաճախ է 'ի ոք զիրս. և ահա սովին յետին առմամբ դնի աստ բառս խռնարհութի. Այնպիս և բառս Հաստակ՝ չորեքկին առեալ լինի. մի փոխանակ ծանր աշխատանաց. Երկրորդ փոխանակ այնր՝ որ պատճառ լինի աշխատանաց. Երրորդ փոխանակ այնր՝ որ պատճառեալ լինի յաշխատանաց, կամ որ շահեցեալ լինի յաշխատութենէ. և չորրորդ փոխանակ հոգնելոյ 'ի ծանր աշխատանաց և կամ փոխանակ ուժաթափ լինելոյ յերկարութէ աշխատալի գործոյ, կամ ճանապարհի, ևն. և այս յետինս է յատուկ նշանակութի բառիս Հաստակ. և ըստ այսմ առման դնի աստ յասեն:

Տչոս զինարհութի իմ և զՀաստակ իմ: Ուր բառս պէս՝ փակէ յինքեան նաև զզօրութիւն բառիս իշտեա. որպիս թէ ասէր. տես և կըռեա զտկարութիւն իմ, և զվիշտս իմ. տես թէ քանի քանի փորձութիւնք հասեալ են 'ի վերայ իմ, և զիարդ ընկճեալ՝ և խոնարհեցուցեալ են զիս: Հայեաց ևս թէ զիարդ վաստակեալ եմ, այսինքն զիարդ յոգնեալ եմ յաշխատելոյ վշտօք այսպիսի փորձութեանց: Այլ 'ի տեսանելդ զտառապանս

իմ՝ եթէ տեսցես զիս վրիպեալ՝ ի նոսին ընդդէմ պատուիրանաց քոց որպիսի և իցէ օրինակաւ, մի հայեսցիս՝ ի նոսա, այլ ներեսցես զնոսա՝ որչափ և իցեն. և առ այս յարէ ասելով:

Եթ նոր ինչ զայ զմեշո էմ: Կախ ապաւինեցաւ յողոր մութիւնն այ, և աղաչեաց զնա նայիլ առ ինքն, և հանել զանձն՝ ի վշաաց պէսպէս փորձութեանց. բայց կաս կածանօք խղճի տեսեալ յինքեան և զարատ մեղաց՝ երկնչի, գուցէ ած փոխանակ հայելոյ և գթալոյ ինքեան վասն վշտաց՝ պատուհասեսցէ վասն մեղաց: Ամին իրի աղաչէ և ասէ. նայեա յիս, և մի՝ ի մեղս իմ. տես զվաստակիլս իմ՝ ի վշտաց, և մի և զաղտեղանալս իմ՝ ի մեղաց. զնոսա փարատեցո. զսոսա թող և ջնջեա, Օ այս այսպէս ասելով առաւել հաճեալ ցուցանէ զինքն ընդ այն՝ զի թողցէ ած զմեղսն՝ քան ընդ այն՝ զի փարատեսցէ զվիշտսն, զի այս առաւել հաճոյ է երկիւղածացն այ, այսինքն է առաւել կամիլ՝ ի վիշտը կեալ անմեղ, քան՝ ի մեղս մնալ անվիշտ:

Եյս բնաբան կարէ այլազգ ևս մեկնիլ՝ որով ոչ ինդըի փարատումն տառապանաց, այլ թողութիւ ամենայն մեղաց վասն յանձնառութե՛ տառապանաց. որպէս թէ ասացեալ էր. տես տէր որչափ տառապիմ և վաստակիմ վասն գտանելոյ առ՝ ի քէն զթողութիւ մեղաց իմոց, և որչափ խոնարհեալ եմ առաջի քոյ. նայեաց ապա աղաչեմ՝ ի խոնարհութիս իմ և՝ ի վաստակս իմ. ընկած զսոսին իբրև զպտուղս արժանի ասլաշխարութե՛, և թող զամ զմեղս իմ. զամն քաւեա և զամն ջնջեա, Օ ամ ասելով ցուցանէ զյաճախութին մեղաց, յորս պաշարեալ է կեանք մարդոյ, և վտանգի՝ ի նոսին, և չիք ապահովութիւ յանմեղութե՛ մնալոյ. զի ըստ ասելոյ լամբ. * որպէս չիք հնար ընդ գետ անցանել անթաց ոտիւք, այսպէս և ոչ ընդ կեանս մարմնոյ անմեղութիւ. մանաւանդ զի թշնամիք ևս անպակաս են որք ատելութիւ վարելով առիթ լինին սասանելոյ՝ և՝ ի մեղս անկանելոյ. ՚ի սոսին ակնարկելով մարդարէին՝ աղաչէ զած, և ասէ,

ԺՂ. **S**ես զբանադու իմ, զի բազում էղեն. առելունի՝ զր
'ի նաևիր առեցին զիս :

Ուշնադու կոչէ զայնոսիկ, որք չարիս կամէին նմա. սո-
քա բազում եղեն ասէ, և ատելութք մեծաւ ատեցին
զիս : Ի՞այց հայելով յընթացս ըանից այսր սաղմոսի
պարտ է ասել՛թէ Աշնադու ասելով իմանայ աստ զնե-
զիս և զփորձիս, մանաւանդ զչար դես, որոց բա-
զում է թիւ, որք և ատելութք ատեն զմարդիկ 'ի նա-
նիր . իբր զի առանց կըելոյ 'ի նոցանէ ինչ չար, 'ի չա-
րութենէ իւրեանց և 'ի նախանձուէ տարապարտուց ա-
տեն զնոսա : | Սկզբան անդ իշխան նոցա բանսար-
կուն սատանայ՝ նախանձու վառեալ 'ի նախաստեղծ
մարդն մերձեցաւ, և գլորեցոյց զնա յորոգայթ մա-
հու . 'ի նոյն ըմբռնեցան և որդիք նորա յետ նորա :
* 'Ի ախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ
,, (ասէ իմաստունն .) և փորձեն զնա, որք նորա վի-
,, ճակին սակի են || . (իմաստ . թ . 24 :) Ճապրհեցաւ
ապա չարն մերձենալ և յերկրորդն ադամ, այսինքն
'ի քո, և 'ի պարտութիւն մատնեալ 'ի նմանէ, և յամօթ
նշաւակի լեալ՝ նուաճեցաւ, որով և կատաղեցաւ . և
այժմ հանապազ նովին կատաղութք * իբրև զառիւծ
,, գոչէ՝ շրջի և ինդրէ, թէ զո՞ կլանիցէ || . (առ . պետ .
Ե . 8 :)

* Եղինպէս և հըեշտակք նորա, այսինքն դեք չարք
զհետ են կորուսանել զմարդիկ յարուցանելով 'ի վե-
րայ նոցա զպէսպէս փորձութիւնս . ընդ որոց հարկ լինի
մեզ մարտնչել, որպէս յայտ է 'ի բանից առաքելոյն .
* Օ գեցարուք (ասէ) զսպառազինութիւն այ, զի կարօղ
,, լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի . զի ոչ է
,, մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ
,, ընդ իշխանութիւն և ընդ պետութիւն՝ ընդ աշխարհա-
,, կալս խաւարիս այսորիկ՝ ընդ այսս չարութե, որք են
,, 'ի ներքոյ երկնից . վասն այսորիկ առեք զսպառա-
,, զինութիւնն այ, զի կարօղ լինիջիք 'ի դիմի հարկա-
,, նել չարին յաւուրն չարութե || . (Եփես . կ . 11 . և
12 :) Իրդ որպէս ասացաք, հաւանականագոյն երեխ
ասել . թէ զսոսա կոչէ աստ մարդարէն իւր թշնամիս
յասելն :

Տէս զըշնամիս իմ, զի բաղրամ եղին : Արակես թէ ասէք . տէս տէք, զի ոչ միայն 'ի ներքս 'ի հոգիս կրեմտառաւ պահս և հոգս , այլ և արտաքրտատ և 'ի զգայութիւնս 'ի չար դիւաց յոխերիմ [թշնամեաց խմոց որք բաղրամ եղին, և բազում փորձութիւնս յարուցին 'ի վերայ իմ, և այս՝ 'ի չար ատելութենէ իւրեանց՝ զոր ունին առ իս .

ոմին իրի յարէ և ասէ :

Արելութէ զըր 'ի նանիր առեցին զիս : Այսինքն թէ ատելութք ատեցին զիս 'ի նանիր : Քայս բան խրթնութիւն շարադրութեան գոյ 'ի մեզ, և այս ծագի 'ի բառէս զըր . զի առանց հարկի և յաւելորդս դնի . և սակայն զայն պիսի եղանակ տայ խօսից , որով սաստկանայ նշանակութիւն ասացելոցն , որպէս թէ եղեալէր . թշնամիք իմ այնշափ սաստիկ ատելութիւն ունին առ իս , մինչեւ 'ի նանիր ատել զիս . այսինքն ատել 'ի զոր և անպատճառ՝ առանց կրելոյ յինէն վնաս ինչ , ևս և առանց ունելոյ ինչ առիթ՝ առ 'ի զիս ատելոյ :

Այս ատելութիւն դիւաց , որով 'ի նանիր ատեն զմարդիկ 'ի չար նախանձուէ՝ ապաքէն ոչինչ ազգէր 'ի մեզ , եթէ և մարմին մեր ոչ դիւանայր առ մեզ . սա ձեռնուտու նոցա , և նոքա հրապորիչ սորա . սա բարեկամ նենգաւոր՝ խորհրդակից նոցա , և նոքա որպայիթ ադիր պատրիչք՝ մերէնայակիցը սորա : Այսայն թշնամութիւննանեկան և բարեկամական , և նոցայն զազտնածածուկ և անյայտ . յորոց անփորձ պահէլ զանձն արդարն մեծ է :

Այսու ատելութեամբ՝ զոր ատիմք վասն այ , լուելեայն իմն ստիպէմք զած ձեռնուտու լինել մեզ , որով և առաւել իմն շահաւոր լինի մեզ այս՝ քան զսիրիլ մեր վասն այ , ուստի ասէ բարսեղ վարդապետ ('ի մեկն . մարկ . գլ . ժ .) * քան զակըն՝ որ վասն այ լիցի , առ , տելութիւնն որ վասն նորին լինի , կարի շահաւոր է . զի յորժամ վասն այ սիրիցիմք՝ պարտապան գտանիմք մեք նորա սիրոյն . և յորժամ ատիցիմք , նան պարտապան լինի մեզ || : Քայս վստահացեալ մարդարէին , և այսմ կարօտ տեսեալ զինքն՝ պաղատի առ անծ , և ասէ :

Տէ . **Պ**ահեաւ զնայն իմ , և քրիեաւ շիս . և մի յամօթ եղէց ,
ով յառաջայ է տէղ :

Օ երկու ինչ 'ի միասին ինպրե՛ պահանութիւն և փըր-
կութիւն . պահանութիւն ինպրե՛ զի մի մերձեսցին թշշ-
նամիք առ ինքն՝ առ 'ի յափշտակել զինքն կամ վնա-
սել , իսկ փրկութիւն ինպրե՛ , զի 'ի մերձենալ նոցա՝ մի
յափշտակեսցի , կամ մի վնասեսցի 'ի նոցանել , այլ
մինացէ ազատ . յայսոսիկ ակնարկելով , առէ :

Պահեաւ զնայն իմ , և քրիեաւ շիս : Ազամագինս պազատե-
լով խօսի , որպիս թէ ասէր . յայսափ թշնամեաց մի-
ջի պաշտպեալ գոլովլ , և իմ ընտանի թշնամիս նոցա-
ձեռնատու լինելով՝ ես ինքն միայնակ զիարդ կարացից
պաշտպանել զիս , եթէ դու ինքն ոչ ժամանեցուո-
ցես առ իս զօգնութիւն քոյ . ժամանեցն ուրեմն զոր
ինպրեմն զբոյ օգնութիւդ , և նովին օգնութիւ պատրա-
պարեալ պաշտպանեան և պահեամ զիս , և փրկեաւ 'ի
ձեռաց նոցա : Եւս և պահեամ զիս 'ի յուսահատելոյ ,
և փրկեամ յանկանելոյ :

Ուր արժան է կըսել և զայ՝ զի հայեցեալ 'ի յաջորդ
բան այսք տան՝ աստանօր բառիւս քրիեաւ ոչ կամի ցու-
ցանել , թէ արգէն մասնեալ է 'ի ձեռս թշնամեաց .
և կամ անկեալ գոլովլ ինպրե՛ փրկիլ . այլ թէ այն-
պէս պահեսցի՝ զի մի մասնեալ լիցի 'ի ձեռս նոցա , և
այս ոչ ընդգիտանայ նշանակութէն քրիել բառիս . վասն
զի փրկելու ոչ միայն հայի յայն՝ զի 'ի մասնեալ գոլոյ
ազատեսցի ոք , այլ և յայն՝ զի մի իրօք մասնեսցի ,
կամ զի մի յափշտակեսցի : Եւ զայս յայն սակս կամ-
խէ ինպրել , զի մի 'ի մասնիկն կրեսցէ ոչ միայն զա-
ռաւելութիւն թշուառութեան , այլ և զամօթ մեծ . որոյ
վասն յարէ զինի ասելով :

Եթ՝ մի յամօթ եղէց : Կամի ասէլ . եթէ ոչ փրկեսցես
զիս , յամօթ լինիմ , զի յայնժամ թշնամիք իմ 'ի մէջ
առեալ զիս՝ կաստակեն զինե , և ծազր առնեն զիս , և
յերեսս իմ հարկանեն ասելով . ոչ ապաքէն յուսա-
ցեալ էիր դու յանձ , և զիարդ ոչ փրկեաց նա զքեզ
'ի ձեռաց մերոց . ուրեմն առէ դու այնպէս արան , զի
մի նոքա այսովէս արասցեն :

Այս ոչ կրելս զամօթ՝ կարէ վերածիլ և յու ամա-

ելն առաջի այ և առաջի սրց նորա . իբր զի 'ի պահիւ
մարդոյ 'ի մեղաց , և 'ի փրկեալն մնալ 'ի մնտեաց ,
ոչ ևս ունի յամօթ լինել առաջի այ . առ որ օրինակ
տայ կիրակոս արեւելցի 'ի մեկնութեան հարիւրաւորացն
եւազրի . (ի՞ն . 17 .) ասելով . աղամ և եւայ մերկ
գորով ոչ ամաչեին . այնպէս յորժամ մարդս մերկ
իցէ յամ մնտեաց՝ ոչ կրէ զամօթ : Եւ զի այս ամ
յաջողի 'ի յուսալոյ յած , վասն այնորիկ յարէ զինի
մարդարէն , և ասէ :

Օ չ յուսացայ 'ի աւշ . Աստանօր շաղկադս ոչ՝ կրկնն
մնօք յարէ զայս բան ընդ նախրնթացին . մի՝ իբր պատ-
ճառ փրկելոյ , այնպէս զի յուսան յած իցէ պատճառ՝
զի փրկեսցի . որպէս թէ եղեալ էր . որովհետեւ ես
'ի քեզ յուսացայ , և ոչ 'ի զօրութիւն իմ , վասն որոյ
փրկեալ զիս աղաչեմ : Եւ միւս ևս իբր պատճառ ոչ
յամօթ լինելոյ . այնպէս զի յուսան յած իցէ պատ-
ճառ՝ զի մի ամօթ կրեսցէ , որպէս թէ եղեալ էր . ո-
րովհետեւ 'ի քեզ յուսացայ , եթէ փրկես զիս , ոչ ե-
ղէց յամօթ 'ի յուսոյ աստի իմմէ . այսինքն թէ այս
յուսալս իմ ոչ արացէ զիս ամօթ առաջի թշնամեաց
իմոց , այլ մանաւանդ պատկառելի արացէ զիս յաչս
նոցա . և ընդ հակառակն՝ յարգոյ ցուցցէ զիս յաչս
երկիւղաձաց քոց . ևս և տացէ նոցա խրախոյս յուսա-
լոյ ընդ իս 'ի քեզ , զորոց 'ի մասնաւորի ևս խօսի 'ի
յաջորդ համարն՝ ասելով :

Ժ Ե . Աբեծաւ և ուղիւն իշրտ եղն ինչ , և և աւշ համբե-
րէ . քրեւա ած զիւրոյէ լութեայն նեղուեց նոցա :
Ի վերոյ՝ որպէս և տեսաք՝ յիշեաց մարդարէն զթշնա-
միս իւր , և յայսնի արար զգործս նոցա . սոցա ընդ-
դէմ զնէ այժմ զերկիւղաձս տեան , զորս ճանաչէ իւր
հոգեռական բարեկամն , և զգործս սոցա ընդդէմ
զնէ զործոց նոցա . զործ նոցա էր չարաչար բաժա-
նումն , ցը է չար ատելութք ատել . իսկ զործ սոցա՝ հո-
գեռական բարեօք միանալ կամ բարւոյ լինել կցոր-
դակից : Եւ այսու ցուցանէ՝ թէ քանի չարիք հասա-
նեն 'ի թշնամեաց , և քանի բարիք 'ի բարեկամաց հոգ-
ւոյ , այսինքն՝ յերկիւղաձաց տն . ընդ այն կասկածի՝
զի մի վտանգեսցի . ընդ այս ցնծայ և բերկրի , որով

և յուսադրի՝ համբերել տեսան յամ վիշտս խըր՝ զորս
կրեր՝ ի թշնամեաց . վասն որոյ ասէ :

Վաբէծ և ռուդիչ իշրտ եղեն բնջ . և ես տեղ համբէրէ :
Վնրիծ և ուղիղ կոչէ զերկիւղածո այ , կամ որոշա-
կի առեալ՝ ամբիծ կոչէ զնոսա , որոց՝ ի հոգիսն չիք
բիծ մոլութեանց . և ուղիղ կոչէ զնոսա , որոց՝ ի գործո
չիք խոտորումն թիւրութեան , այլ ուղղութի , այսինքն
համաձայնութի օրինայն այ . սոքա ասէ իշրտ եղեն բնջ .
ուր ասէ վարդան . * մեծ պարծանք է մարդոյ՝ որ ո՛չ մի
.. այն անձամբ բարի իցէ , և կամօք միացեալ ընդ այ ,
.. այլ և զամբիծն և զուղիղն կցորդ ունիցի :

Վայս կցորդութիւն կրկնակի առեալ լինի ասա , մի՝ ի
մասնաւորի , և մի՝ ի հասարակի : Կցորդութիւն՝ ի մաս-
նաւորի առեալ՝ նշանակէ մասնակից լինել յիմկը , կամ
միաբանիլ յայս լինչ և յայն . և ըստ արսմ կցորդ լի-
նելն հայի աստ ՚ի մասնակցութի յուսալոյ կամ միաբան
լինելոյ ՚ի յուսան . որով և միտ բանին լինի այս . ՚ի յու-
սալ իմում առ ած , անբէծ և ռուդիչ կցորդակից եղեն
ինձ յայս յոյս . զի և նոքա ընդ իս միաբանեցան , և
ըստ յուսալոյ իմոյ յուսացան յամ . և որպէս ես յու-
սալով յամ՝ ոչ ունիմ զամօնթ կրել , նոյնպէս և նո-
քա չչայս միտ թերեւս ՚ի թերզմանուն եօնթանանից
զինի , Գաբէռնեցան ընդ իս . կամ յարեցան յիս : Եւ՝ ի յարեն
զնի , և ես տեղ համբէրէ , կամի ասել . ես ստիպեալ՝ ի փոր-
ձութեանց , կամ ձանձրացեալ յերկարուն ակնկալունու
եթէ յետս կասէի ՚ի յուսալոյ ՚ի քեզ՝ յայնժամ յա-
մօնթ լինէի առաջի ամբիծ առ ուղղոց . զայս գիտելով
ոչ կասեցայ , և ոչ կասեցայ ՚ի յուսոյ իմմէ . այլ ա-
ռաւել ևս հաստատեցայ ՚ի նոյն : (Տես և ՚ի վերոյ
՚ի համարն . 2 . և 4 :)

Կցորդութիւնն ՚ի հասարակի առեալ չորեքին կարէ
նշանակել աստ . մի ըստ այնպիսի կցորդութե՝ որ լինի
օգնականութք կամ գործակցութք միմեանց . ըստ ո-
րում՝ ՚ի բազում գործու բարիս երկիւղածք երկիւղա-
ծոց լինին օգնական , առաջնորդելով՝ կամ ՚ի միասին
զգործն կատարելով՝ կամ զմիմեանց բեռն բառնա-
լով , ևն : Երկրորդ՝ ըստ այնպիսի կցորդութեան՝ որ լի-
նի յորդորմամբ՝ որով երկիւղածք զերկիւղածու իրա-
խուսեն՝ ՚ի բարին՝ բանիւ և օրինակաւ . բանիւ՝ ՚ի իրա-


առն , 'ի քարոզելն , 'ի յազդ առնելն , 'ի քաջալերելն , ևն : (Օքինակաւ՝ 'ի կենցաղավարին , 'ի յառաջելն առաքինութեամբ , 'ի պարկէշտանալն 'ի կերակուրս և յըմագելիս , 'ի ձնչելն զանձինս պէտպէս ձկնութերք . 'ի պաշտելն զանձ եռանդազին , 'ի բերկրին 'ի մէջ նեղութեանց . ևն : Խըրորդ՝ ըստ այնպիսի կցորդութեան՝ որ լինի ազօթիւք և միջնորդութերք , որով երկիւղածք ինդղուածս առնեն առ ած վասն իրերաց առ 'ի փրրկիլ 'ի փորձութեց , առ 'ի անսարատ մնալ 'ի մեղաց , առ 'ի անմշաս զերծանիլ 'ի թելազրութենէ դիւաց . և ևս առ 'ի համբերել նեղութեան , առ 'ի արիանալ 'ի ձանապարհի առաքինութեան , առ 'ի զուարթանալ 'ի գործառայութեանն այց . նաև առ 'ի աներկրաց հաւատալ , հաստատութեամբ յուսալ 'ի նա , և ըստ ամենայնի սիրել զնս : Չորրորդ ըստ այնպիսի կըցորդութեան՝ որ լինի հաղորդութերք բարեաց , որով երկիւղածք մասնակից լինին յարդիւնս միմեանց . վասն զի որք միանգամ երկիւղածք են այց՝ անբիծք և ուղիղք , արժանի լինին մասնակցելց և հաղորդակից լինելոյ արժանաւորութե այլոց երկիւղածաց . և այս է այն՝ զոր ասեմք 'ի հանգանակի . * հաղորդութի որք || : զի զոր օրինակ իւրաքանչիւր անդամք մարմնոյ , եթէ իցեն ողջ հաղորդ և կցորդ լինին բարութեան կամ կենդանութե այլոց անդամնոց , սոյնպէս և որք են 'ի մարմնի եկեղեցւո՞յ եթէ իցեն անդամք ողջք 'ի չնորհու , հաղորդ լինին բարութեանց կամ արդեանց այլոց անդամնոց :

Իստ այսոցիկ ըօրից եղանակացս ևս կարէ իմացեալ լինել ասա կցորդ լինելն ամքծաց . ուստի և յասել մարդարէին Վիճիծք և շնչար էշն իշխանի , և էս էն համբէրէ կամի յայտ առնել , թէ նոքա որք անբիծքն են հոգւով և ուղիղք են գործով , հաղորդակից եղեն նմա ընկերակցութերք յուսալոյ . յորդորմամբ համբերելոյ , ազօթիւք զօրանալոյ , և մասնակցութերք հաղորդ բարեաց լինելոյ : Խւ զայս դնէ ըստ փոխադարձութե երկուց կողմանց ևս . իբր զի որպէս նոքա կցորդ եղեն ինքեան այսպիսէօք , նոյնպէս և ինքն կցորդ եղեւ նոցա : Օ այս ամենայն խօսեցեալ մարդարէին՝ հայելով յանձն իւր , կնքէ 'ի վերջոյ զբանն հայելով 'ի ժո-

զովուրդ իւր իսրայէլ, և ասէ :

Փրէւ ած զիսրայէլ յամ նեղունեց նորու : Ի արի իշխաննի
բարի արդասիթ աղօթից է այս . վասն զի բարի իշխաննը
զոր օրինակ թագաւորութ , առաջնորդք , և նա ու միայն
վասն իւրեանց հոգան իւր վասն գլխոյ , այլ և վասն
ժողովրդեան իւր վասն իւրեանց անդամոց , մամնաւանդ
յայնս՝ որք հային յազատութիւն նորա 'ի կառկածեալ
չարէ . սմին իրի և յաղօթել իւրեանց առ ած՝ վասն նոյ
ևս աղօթեն՝ զի փրկեսցէ զնոսա նոր :

Եւ արդ քանզի թագաւոր կարգեալ էր մարզարեն
զաւիթ 'ի վերայ իսրայէլի , յետ աղօթիւք պաղատե-
լոյ առ ած վասն անձին իւրոյ , պաղատի և վասն իս-
րայէլի , և փրկութիւն իննդրէ . զի կառկածէր՝ թէ նե-
զութիւք պատահէլոց են իսրայէլի վասն իւրոյ յանցա-
նաց . որովհետեւ սպառնայեալ էր նմա ած հալածանս
յարուցանել 'ի պատիժ մեղաց ուրիխ և բերսարեայ ,
որոց առթիւ ասաց զայս սաղմնու . վասն որոյ և յա-
ւարտ սաղմնուն աղաւէ զած՝ զի 'ի կրել իւր զնեզութիւ-
հալածանաց՝ մի տայէ և ժողովրդեան իւրում կրել
զայն նեղութիւնսն , այլ աղատել զնոսա յայնցանէ , և
կամ թէթեացուցանել զայնս , որպէս թէ սաացեալ
էր . չէ ինձ բաւական փրկելոյ զիս միայն 'ի նեղութէց
և 'ի փորձութեանց , այլ իննդրէմ զի և զժողովուրդ քո-
զիսրայէլ փրկեսցէս յայնց նեղութեանց , զի զու ես
ած իսրայէլի օրհնեալ յաւիտեանս :



ԱՐԴՅՈՒՆ ԵՎԸ

Կինդրուածք արգարոյ առ ան իրը առ դաստաւոր և
քննիչ . յայտարարութեամբ զգաստութեան վարուց .
միանգամայն և բանք զգուշութեան և պահպանութե
յերեսաց ամագարշտաց . և փափաք տեհանաց առ
ներկայութիւնն այ ՚ի տաձարի նորա :

Ի ՞ սուր-ծ ։ սովոր ՚ի դու-իլ ։

Պատր որու նոյն ար , զի եւ յամբեա-նե իմա-մ գնացի . ՚ի
ար յաստացու շի ՚ի եղից հետադ : 2 (Ո) որչե պիտո ար ,
և անեա շին . քորչեա զիքի մասնու իմ և շիրտ իմ : 3 (Ո) շր-
մա-մի առ ար ա-ջի ա-լու ի մոց . և համար եղից մշաքու-նե
պա-մ : 4 (Ո) ն աստաց եւ յամբեա-նարոց , և շնդ անօրին ե-
և մուց : 5 (Ո) տեցի եւ պա-լու շուրց , և շնդ ամբ ա-լու եւ մ-
աստաց : 6 (Ո) ս-ցու ս-բե շի ա-իմ , և շ-ը եղից շ-
շա-նու ա-իմ : 7 (Ո) ն այ զիտի օրհնա-նեան ա- , և դու-մել
շ-մ ս-տանց լու ա- : 8 Տեր ս-րեցի զիտրելու-նեան ա-մա ա- , և
տ-եցի յարի ժ-ա-ց ա-ց : 9 (Ո) ՚ի ո-րու-ս-ներ շնդ ամ-բելու-
շա-նու իմ , և ՚ի շնդ ո-րու-ս-նելու շի-ան իմ : 10 (Ո) որց զե-
ի-րեա-ց յանօրին ա-նե էն , և ա-լ նոց լու ե ի-լու-ս-օ : 11 (Ո) յա-
յամբեա-նեան իմա-մ գնաց . քորչե զի ա-ր , և ա-լու մ-ել ն ա-
12 (Ո) ու ի ի-ցու յա-լու-նե . յե ի եղից մ-ծ օրհնեցի շեն :

Ա Ե Բ Ե Ա Գ Ե Բ :

Ի ՞ սուր-ծ ։ սովոր ՚ի դու-իլ ։



Ա Ռ Ե Բ Ր Ե Յ Ե Յ Ե Ս Ե Մ Ի Ե Ը Ե Օ .
թանասունս ՚ի վերնազրի աստ միայն բառս
՚ի դու-իլ զնի . նոյնակէս և ՚ի մեկնութիւնս
ումանց ՚ի սբց հարց : Ի քանի մի տպազրեալ ուսպմաս
մեր զնի սովոր դու-իլ , և ՚ի ձեռազիրս ինչ սովոր ՚ի

„ յա սազմնու որպի՛ս և յայտնի տեսանի՞ց ասացեալ
եղե ՚ի գառթայ՝ ՚ի հարածիլ իւրում՝ ՚ի սաւուզայ ,
հայելով ՚ի ժամանակն յայն՝ յորժամ՝ պաշարեցաւ ՚ի
նմանեւ յանապատին զարդայ . ուր եհատ նա ինքն
գառիթ զտառւն լոթկի նորա , և անաբարս ցուցեալ
զանձն՝ ասաց առ նա . * ընդէր լեւ բանից ժողովը-
գեանն որք ասեն , թէ գառիթ ինսզըէ զանձն քոյ .
ահա յաւուր յայսմիկ տեսնին աչք քոյ՝ որպի՛ս մատ-
նեաց զբեզ տէր այսօր ՚ի ձեռս իմ յարիի անդ , և ոչ
կամեցաց սպանանել զբեզ , և ինսայեցի ՚ի քեզ . և ա-
սացի թէ ոչ ձգեցից զձեռն իմ ՚ի ոռը իմ , զի օծեալ
նոն է նա . . . ծանիր և տես այսօր , զի ոչ զոյ ՚ի ձե-
ռն իմում արութի՛ և ոչ արհամարհութի՛ և ոչ առ-
սպարշտութի՛ , և ոչ մեղայ ինչ քեզ . և զու պաշարես
զանձն իմ՝ առնուլ զնա : ՚Իմաս արասցէ տէր ընդ իս
և ընդ քեզ . . . ՚Ազիցի տէր գատառոր և իրաւարար
ընդ իս և ը քեզ . տէսցէ տէր և զատեսցէ զդատաս-
տանս իմ . և արասցէ ինձ իրաւունս ՚ի ձեռաց քոյ .

Խակ ոմանիք պնդեն՝ թէ զայս ասաց գաւիթ, յորժան
վախուցեալ ՚ի վերջոյ յերեսաց սաւողայ՝ զնաց առ
անդունս մովաքայ, և ՚ի չարախօսիլ իւր յիշանաց նո-
րա մեկնեցաւ անտի (ան. թագ. իէ. 2 : և իթ, 3.
ևն.) Այս կարծիք ևս կարէ չշմարտիլ, և մարթէ է
ասել, թէ գուցէ յերկոսին յայսոսիկ ևս հայի բան
սադմոսիս :

Ամանը կարծեն՝ թէ զայս սասացեալ իցէ՝ հայելով՝ ի
ժամանակ գերութեանն բարելոնի ։ յոր յաւելուն ևս
այլք, թէ մի ոմն՝ ի զետացոց գերելոց ի բարելոն
սասացեալ իցէ զայս սաղմոս։ Պայց այս կարծիք չերեկ
ինչ հաւանական ։ որպէս յայտ է ուշագիր ընթեր-
գողաց։

Ղան ևս ղըք ասեն , թէ զայս սաղմոն յօրինեալ իցէ դաւիթ վասն քահանայից և զետացո՞վ զի՞ մտանել նոցա 'ի տուն նոն , և 'ի մատչիլ 'ի պաշտամունս , և 'ի լուանալ զձեռս , երգեսցեն զայն .

Ճշմարիտ է հայելով ոչ յառիթն՝ որոյ վասն ասացեալ իցէ, այլ՝ ի վախճան գործածութեանն . ըստ որոյ նաև այժմ զսոյն զայս սաղմոս ասեն քահանայք մեր՝ ի լուացման ձեռաց յառաջ քան զսկսանիլ պատարա զի, ևն :

Ա. յլ աստ զիտելի է, զի այս սաղմոս և երկու յաջորդք սորա ունին յիմիք իմիք նմանութիւն ընդ մի մեանս, և են զրեթէ շարունակութիւն ինչ մի և նոյն ասացուածոյ ըստ այլ և այլ հանգամանաց . և որ զրի աստ՝ ի համարն 6 . և 8 . համեմատի այնմ, որ զրի՝ ի յաջորդ սաղ . (իդ. 4 . և 8 :) Եւ որ զրի աստ՝ ի համարն 9 . համեմատի այնմ, որ զրի՝ ի սաղ (իդ. 3 :) Եւ որ դնի՝ ի վերջ նախընթաց սաղմոսին (իդ. 18 :) համեմատի վերջին բանից ինչ սաղմոսին :

Որով երեխ թէ այսոքիկ երեք սաղմոսք, նոյնպէս և նախընթաց սոցա՝ ի նոյն ժամանակի, կամ ըստ նոյն առթի և ըստ նոյն վախճանի իցեն ասացեալ . և իւրաքանչիւր կարգեալ՝ ի դիմաց իւրաքանչիւր մարդոյ՝ որ իցէ կամեցօղ բարի վիճակի, այսինքն՝ ի դիմաց այնպիսի մարդոյ, որ խնդրիցէ զտր, և կամիցի ծառայելնմա, և պաշտելզնա՝ ի տան նորա :

Բ Ա Յ Ե :

ա. **Պ**ատ արտ ինչ ար . զէ ես յանբծութէ իմում գնացէ . 'է ար յուսացայ, զէ մէ եղէց հիւսնու :

Մ Ե Կ Ն Ա Ռ Ե Ց Ի Ե Ե :

Պատ առնել և դատիլ թէպէտ և՝ ի նոյն նշանակութիւն հային, բայց ըստ մերումս առեալ տարբերին յայսմ՝ զի դատ առնելն առաւել կարգի՝ ի նպաստ քան՝ ի վնաս այնմ՝ յորոյ վերայ ասի լինել դատն : Իսկ դատելն առաւել ընդհանուր է, և յերկաքանչիւրն ես կարգի, այսինքն թէ՝ ի նպաստ և թէ՝ ի վնաս դատեցելոյն, այլ յաւէտ ևս՝ ի վնաս քան՝ ի նպաստ : Եւ ըստ այսմ դատ առնելն նշանակէ իրաւունս առնել զրկելոյն, և այնու յայտնել զանմեղութիւն նորա, կամ զանպարտ լինել նորուն : Իսկ դատելն նշանա-

ԿԵ ըստ իրաւանց պարտաւոր կամ անպարտ վճռել,
և զդատելին այնպիսի լինել ցուցանել:

Վացի * ըստ մերումն || . վո՞զ զի առ յոյնս այս բառք ը
խնդրոյ բային միայն տարբերին 'ի սաղմոսի . զի միոյն
դնի տրական խնդիր , և միւսոյն հայցական . արդ
յորս տրական խնդիր դնի առ նոսա՝ 'ի մեղ գրի . դատ
արտ : Իսկ յորս հայցական խնդիր դնի առ նոսա , 'ի
մեղ գրի բառս դատել :

Ըստ այսմ զանազանութեան յասել աստ դաւթի դատ
արտ էնչ , սովին խնդրէ յայ պաշտպան լինել խքեան 'ի
հալածման անդ՝ զոր կրէր 'ի սաւուղայ . և այս՝ պատ-
ճառաւ թագաւորութեանն , առ որ ստացեալ էր դա-
ւիթ զիրաւունս . որովհետեւ յանարժան գտանիլ
սաւուղայ՝ ինքն դաւիթ օծաւ 'ի տեղի նորա թագա-
ւոր իսրայէլի . որով զրեթէ ծագեցաւ վէճ և հակա-
ռակութիւն 'ի մէջ երկուց թագաւորաց : Եւ թէպէտ
դաւիթ ոչ էր զիետ մտեալ ժառանգութեան թագա-
ւորութեանն , որոյ վո՞զ անկցի գրգռութի 'ի միջի , բայց
քանզի սաւուղ յայտնի տեսանէր՝ թէ նա ունի թա-
գաւորել 'ի տեղի իւր , վասն այնորիկ նախանձէր ընդ
նա , և 'ի նախանձուէ հալածէր զնա :

Վարդ յորժամ վէճ ծագի 'ի մէջ երկուց թագաւո-
րաց որոց մին իցէ զրկօղ , և միւսն զրկեալ , հարկ լի-
նի՝ կամ պատերազմաւ վանել , և կամ առ այլ ոք
գերագոյն թագաւոր բողոքել : Վպա և դաւիթ՝ որ
ոչ կամէր պատերազմաւ և հեղմամբ արեան վրէժ-
խնդիր լինել սաւուղայ , բողոքէ առ ած՝ իբր առ
թագաւոր թագաւորաց , դատաստան առնել 'ի մէջ
երկուց , և արդարացուցանել զինքն . վասն որոյ
ասէ :

Վարդ արտ էնչ դր : Վ. յսինքն է , հայեացյիս և 'ի թըշ-
նամին իմ . և տես թէ զիարդ 'ի զուր հալածիմ 'ի
նմանէ . դու ինքն լեռ վրէժխնդիր աղաչեմ , և արդա-
րացն զիրաւունս իմ . զի երկաքանչիւրոյս տէր և թա-
գաւոր դու ես . եթէ յանցանք ինչ կայցեն յիս . և
կամ եթէ մեղուցեալ ինչ իցեմ ընդդէմ նորա , դու
ինքն խրատեա զիս . իսկ եթէ չունիցիմ յանցանս ,
պաշտպանեա զիս 'ի նմանէ : Յայս իսկ վստահացեալ
մարգարէին այսինքն հայեցեալ յանմեղութիւն իւր՝

յարէ զկնի , և ասէ :

Լու յանբժութե իմում գնացի : Որպէս թէ ասէք . դու ինքն՝ որ քննօղդ ես սրտից , զիտես՝ զի ես չարարի ինչ յանցանս ընդդէմ հալածչին իմոյ . այլ որպէս անքիծ էր սիրտ իմ առ նա , այնու անքծութե սրտի վարեցայ ընդ նմա . ես և յառիթս վրէժինդրութե անմեղ գտայ առ նա . բայց նա ոչ ծանեաւ զայս . այլ զհետ պնդեալ հալածէ զիս . և ես քանզի շունիմ զայլ ոք ապաւէն , առ քեզ ապաւինիմ . զի քեւ եղեց պաշտպանեալ . 'ի սոյն սակս յաւելու ասել :

Պար յուսացայ , զի ֆէ եղէց հետանդ : **Ա**յսինքն է՝ 'ի հալածիլ իմում՝ ոչ 'ի զօրաւոր ոք , և ոչ յիշխան ոք , այլ յայն յուսացայ՝ որ տէր է ամի . 'ի նա միայն եղի զյոյս իմ . որպէս զի նա ինքն լիցի վրէժինդիր . զի ֆէ անկայց 'ի ձեռս թշնամւոյ իմոյ , և տկարացեալ կորեայց :

Օայս չանկանիլս 'ի ձեռս թշնամեաց , և զայս չոկարանալս բացատրէ բառիւքս զի ֆէ եղէց հետանդ . և այս ըստ երից մտաց . **Ա**' ըստ փոխաբերական նշանակութ . վասն զի որպէս որ հիւանդանայ՝ տրամադրի 'ի մահ , կամ լինի 'ի վտանգ մահու . որովհետև հիւանդութին է տրամադրութիւն կամ ճանապարհ առ 'ի մահ , սոյնպէս և որ մատնի 'ի ձեռս ոխերիմ թշնամւոյ , տրամադրի 'ի մահ , այսինքն մատնի 'ի վտանգ մահու . և յայս միտ յասելն՝ զի ֆէ եղէց հետանդ՝ այլաբանութեալը իմն յայտ առնէ չմատնիլ 'ի ձեռս թշնամւոյ իւրոյ :

Երկրորդ՝ ըստ փոխանունութեան ձեռյ ճարտասանից . յորում պատճառն զնի փոխանակ մօտաւոր պատճառի . և մօտաւորն փոխանակ գործոյ , և զի հիւանդութիւնն է պատճառ տկարանալոյ , և տկարանալն պատճառ յաղթեալ լինելոյ և կորնչելոյ , փոխանակ ասելոյ մարգարէին , զի մի տկարացայց և կորեայց , ասէ .

զի ֆէ եղէց հետանդ :

Երրորդ՝ ըստ ձեռյ նմանութե հայելով 'ի հանդիտութիւն հիւանդութե հոգւոյ . յոր միտ կամի ասել . 'ի տէր յուսացայ , և նա փրկեսցէ զիս 'ի վշտաց աստի հալածանաց . զի մի լիցի ինձ անկանիլ 'ի մեղս , և հիւանդանալ 'ի հոգիս : **Ա**քդ յետ դիմելոյ մարգարէին առ

ած՝ դատաստան առնել, խնդրէ ևս 'ի նմանէ փոր-
ձել զինքն և քննել. վասն որոյ ասէ :

Է. ♫ Դուքեա շիս թը, և ժննեա զիս. դուքեա զէբեհամուն իմ
և զսերու էմ :

Փորձել և քննել այնպիսի հանգամանօք լինի, որ
չէ յայտ, և զանազանութի սոցա յայսմ է զի քննելն
տիրապէս առեալ բանիւք լինի կամ մտօք. իսկ փոր-
ձելն հասարակօրէն իրօք : Վճնելն է ուշ դնելով
յիմն՝ համեմատել զայն ընդ եղեալսն՝ կամ ընդ այլ
ինչ՝ եղանակաւ հարցման՝ առ 'ի գիտել թէ իցէ, կամ
թէ որպիսի իցէ, կամ որքան : Իսկ փորձելն ('ի բարի
կողմն առեալ) է ուշ դնելով յիմն՝ առնելինչ զնո-
վաւ՝ առ 'ի գիտել (կամ առ 'ի գիտացուցանել) թէ
իցէ այնպիսի, որպիսի պարտի լինել. կամ լինիցի ար-
դեօք այն զոր փորձօղն դիտէ . զորօրինակ 'ի հարկա-
նել բրտի մատամբ զանօթն՝ առ 'ի գիտել կամ առ
'ի գիտացուցանել զնողին՝ թէ իցէ ողջ՝ ասի փորձել
զայն . (տես և 'ի սաղ. ժղ. 3) : Արդ քանզի ասաց մար-
զարէն * ես յանբծութե իմում զնացի || , առ 'ի Ճշմար-
տել զասացեալսն՝ առաջի դնէ զայս բան, և ասէ :

Փուքեա շիս թը, և ժննեա զիս : Որով ոչ կամի ցուցա-
նել թէ ած վասն ոչ գիտելոյ զորպիսի լինել նորա՝
կարօտի փորձել և քննել՝ առ 'ի գիտել, այլ միայն
ըստ զրելոյ մեր՝ զՃշմարտութի ասացելոցն կամի յայտ
առնել. որպէս թէ ասէր . զոր ասացի՝ Ճշմարիտ է .
քանզի և դու տէր՝ որ քննես զսիրտ մարդոյ, և գիտես
զամ՝ այսպէս Ճանաչես զիս . և արդ ըստ Ճանաչելոյդ
դուքեա զիս . այս է՝ 'ի թոյլ տալդ թշնամոյ իմոյ՝ հա-
լածել զիս՝ նայեաց թէ զիարդ վարիմ ես ընդ նմա :
Եւ ժննեա զիս . յթ համեմատեա ընդ գործս իմ՝ զայն,
զոր ասացի . և տես թէ ըստ ասելոյ իմ իցեմ անբիծ
'ի նոսին . ապաքէն դու գիտես՝ զի ես յանբծութեան
զնացի . որովհետեւ դու ինքն օգնեցեր ինձ համբերել
հալածանաց թշնամոյ իմոյ, 'ի քեզ յուսալ և առ
քեզ դիմել . և դու ինքն գիտես՝ զի և ոչ 'ի գաղտ-
նիս սրտի իմոյ կայ նենգութիւն ինչ . և առ այս

յարէ :

Փուքեա զէբեհամուն իմ և զսերու էմ : Երիկամունք են

այնոքիկ ներքին մասունք կենդանւոյն , յորս տիրեցանկութիւն . իսկ սիրան է կայարան և աղբիւը ամենայն շարժութեան կենդանւոյ . արդ կամելով մարգարեն յայտ առնել թէ չէ իւիք ցանկացեալ երիկամանքը չար առնել թշնամեոյ իւրոյ , և ոչ շարժեալ սրտիւ կամ խորհրդով յատելութիւնդղեմնորա , այսպիսի բանիւք վարի . որով զրեթէ վկայ կուէ ինքեան զնոյն ինքն զանձ՝ ընդ որում խօսի . որպէս թէ ասացեալ էր . զու զամ զիտես տէր , և զու ձանաւէս զամենայն շարժմունս երիկամանց և սրտի իմոյ , որպէս թէ 'ի բովս փորձեալ էիր . որ և յայտնի իսկ տեսեր , զի ես անմեղ գտոյ առ թշնամին իմ . մանաւանդ թէ զոր կարեի առանց մեղաց ևս առնել ինչ ընդդեմնորա , ոչ արարի . այլ ողորմելով իննայեցի 'ի նա . և նա այսու ամիւ ոչ դադարի 'ի հալածելոյ զիս :

Այս բան այլազգ ևս մեկնի իրը մաղթանք ինդրելոյ յայ՝ սրբիլ յամ բծէ մեղաց . և բատ այսմ աղաւէ մարդարեն զանձ . զի զբորինակ ոսկերին 'ի բովս արկեալ զուկի 'փորձէ և քննէ հրով . այսինքն զտէ զնա և մարդէ , այսպէս ևս զտեսցէ և մաքրեսցէ աստուած զինքն յամ աղտեղութենէ հոգւոյ 'ի բովս փորձութեց և նեղութեանց՝ հրով սիրոյ իւրոյ :

Այս յայս միտս 'ի գէպ է ամ մարդոյ առել զայս բան առ անձ , մանաւանդ քահանայից . որք նուազեն զայն սազմոս 'ի մատուիլ իւրեանց յահաւոր խորհուրդ սուրբ պատուագի . **Ա**յս մեկնութիւն թէպէտ և պատշաճական է , բայց առաջնն առաւել համաձայն նկարագրին . զի մարդարեն այսու բանիւ կամի ցուցանել զանմեղութիւն իւր առ թշնամին . և թէ զիարդ փոխանակ չարիս հասուցանելոյ նմա՝ գութ եցոյց առ նա : Խորհրդաբար՝ բանք երկուց այսոցիկ տանց հային 'ի մարդկայինս բնութիւն , որ 'ի սկզբան 'ի դրախտի անդ զնաց յանբժութեան . այլ թշնամի և ոսկի անձին զըտեալ զօձն առաջին՝ էտո խոյթոցս 'ի նմանէ . և հեւանդացաւ առ 'ի մահ : 'Վիմեաց ապա առ տէր իւր . առնել ինքեան իրաւունս ընդդեմ օձին այնորիկ . և զյոյս իւր 'ի նա եղեալ աղաւեաց զնա յիշել զողորմութիւն իւր . զալ զգենուլ զմարմին . և փորձել զինքն . այսինքն զտել և մաքրել , 'ի հիւանդութենէ ախտիցն

բժշկել . ես և զգեցմանք մարմնոյ փորձ դտանիլ
մարդկայինու բնութեան բաց 'ի մեղաց , և շարչարակից
լինելով քահանայապէտապէս սրբել 'ի յանցանաց .
զբոց զիաստարումն աշօք իսկ տեսեալ առավելոյն՝ ա-
սէ . * Վանդի ոչ եթէ ունիմք քահանայապէտ՝ որ
,, չիցէ կարօղ ըարչարակից լինել տիկարութեան մերց .
,, այլ փորձ է ամիւ ըստ նմանութե առանց մեղաց || .

(Երբ . դ . 15 :)

Երդ մարգարէն առաջի այ 'ի փորձ մասուցեալ՝ թէ,
զիամրդ անմեղութիւն և դժուք վարեցաւ ինքն առ թը-
նամին իւր . 'ի մէջ բերէ այժմ և զայն , թէ յորմէ
յօժարեալ եղեւ յայտիաի դժածութի . և յինչ վստա-
հացեալ զայն զայտ խոստովան լինի առաջի այ . վասն
որոյ ասէ :

դ . **Ո**ւրբանուին ոչ պը սուսածի աշաց ինոց . և համայ էղեց
ճշմարտութիւն քամ :

Խրկոբին այսորիկ կատարելութիւնք այսինքն ողորմոնի
տն և ճշմարտութիւն զրեթէ յամի կապակցեալ տեսա-
նին ընդ միմեանս . վասն որոյ և մարգարէն 'ի բազում
տեղիս 'ի միասին յառաջ բերէ զայտափիկ 'ի սաղմա-
սի , որպէս և աստ՝ յասելն :

Ուրբանութիւն ոչ պը սուսածի աշաց ինոց . և համայ էղեց ճշմար-
տութիւն քամ : Այս ըստ երրակի մեկնի . մի՛ հայելով
յառաջին համարն . և ըստ այսու զողորմութիւն այ դնէ
աստ իւր յարացոյց . զի անդ ասաց . * ես յանբծուե
իմում զնացի || . այսինքն թէ ես ոչ ինչ մեղաց առ
թնամին իւմ . և 'ի հալածիլ իմում 'ի նմանէ ողոր-
մութիւն արարի նմա . վասն զի Ուրբանութիւն ոչ սուսածի
աշաց է . իւր թէ ասէր . հայեցեալ յամ գործու
քոյ , յամի ակներև տեսանեմ զողորմութիւն քոյ՝ ոչ
միայն առ բարիս , և առ երկիւզածս , այլև առ չարս .
և առ այնոսիկ՝ որբ հեռացեալ են 'ի քէն , նաև որբ
փոխանակ ծառայելոյ քեզ՝ անիրաւին 'ի քեզ . զայտով
սի գործու ողորմութեան քոյ տեսեալ աշօք իմուք՝ զար-
մանամ և պատկառիմ . և օրինակ առեալ սատի՝ մա-
նաւանդ թէ ստիպեալ՝ ոչ միայն յետու կամ 'ի հատո-
ցանելոյ զար թշնամեաց ինոց , այլ և փութամ յա-
ւէտ ողորմութիւն ցուցանել առ նոսա . զայտ առնե-

լրակ համոյ եղեց ճշմարդութե քառակ,

Ուր բառիւս ճշմարդութե՝ ըստ այսմառաւային մեկնութե իմացեալ լինի անսուտ խոստումն այ . ըստ որում խոստացեալ է անձ՝ ողջորմութիւն առնել այնոցիկ , որք ողջորմութե վարին առ այս , կամ թէ բարի առնել այնոցիկ՝ ոյք բարեբար լինին առ թշնամիս իւրեանց : Այսմ Ճշմարդիտ խոստման քո ասէ համոյ եղեց . այսինքն թէ որպէս համոյ է ճշմարտութե խոստմանց քոց , այնպէս վարեցայ :

Եւ զիտել արժան է , զի բառդ համոյ եղեց թէպէտ և ըստ ձայնին նշանակէ ըստ վերցզգելոցդ համելի լինել , բայց աստանօր ըստ իրին առեւալ կարէ նշանակել համ լինել կամ համեցօղ լինել , որպէս զնի յայլ թարգմանութիւնս . յոր միտ իմացեալ լինի և այն՝ զոր ասէ առաքեալն (հռովմ . ժե . 3 .) * քո ոչ եթէ անձին համոյ եղել . այսինքն ոչ եղել համեցօղ շահու անձին իւրոյ : Եւ ըստ այսմ՝ ի զնել մարգարելն * համոյ եղեց Ճշմարտութեան քում : կամի ասել . համեցայց ընդ Ճշմարտութիւն խոստմանց քոց , և ըստ այնմ վարեցայց առ թշնամին իմ , և կամ ըստ նմին վարեցից զկեանս իմ :

Ոստ այսոցիկ նախակարգեալ բանիցդ իմաստ բովանդակ այսր համարոյ լինի այս . զողորմութիւն քոյ տեսանելով ես ևս ողջորմութե վարեցայ և վարեցայ . և՝ ի Ճշմարտութիւն խոստմանց քոց հայելով ըստ այնմ կեցի և կեցից , որով և համոցացայց առաջի քոյ . և կամ՝ ի Ճշմարդիտ խոստումն քոյ ուշ եղեւալ համեցայց ընդ այն , և ըստ այնմ զնացից :

Երկրորդ մեկնի՝ հայելով յերկրորդ համարն . և ըստ այսմ զողորմութիւնն այ առնու աստ իբրև ապաւէն , և զՃշմարտութիւն նորա իբր վկայ . զի անդ ասաց . * փորձեա զիս աեր և քննեա զիս : որով կամէր ասել . գու զիտես՝ զի ես յանքծութեան իմում զնացի , և անմեղութե վարեցայ ընդ այլս , ես և ընդ թշնամին իմ : Եւ զի այս բանք յինքեանս մտածեալ երեխն ծանր , առ՝ ի ցուցանել՝ թէ յինչ հաստատեալ ասէ զայս՝ յայտ առնէ զապատինիլ իւր յողորմութիւնն այ , և՝ ի Ճշմարտութիւն նորա յասելն : Ուստի մասն ու առաջ ալաց իմայ . որպէս թէ ասեր . ողջորմութիւն քոյ ուր ընդ

իս է , և 'ի վերայ իս է . մանաւանդ թէ զեղեալ է զինեւ . մինչ զրեթէ աջօք իսկ տեսանել ինձ զնոյն . վասն որոյ և յողօրմութիւնդ յուսալով համարձակեցաց առել . * փորձեաւ զիս տէր և քննեա զիս || . զի որովհէն տե անչափ է քոյ այդ առ իս ողօրմութիւն՝ 'ի քննելով զիս այդու քոյին ողօրմութիւնը ես ոչ երկեայց . զի քոյ այդ ողօրմութիւնդ ոչ տայ քննել առ ՚ի գատապարտել . այլ տայ քննել՝ առ ՚ի կեցուցանել և արդարացուցանել . Օ այդ ողօրմութիւն քոյ առաջի աշաց ունելով հայիմ և ՚ի հշմարտութիւն քոյ . որպէս զի համար եղէ այնմ :

Իսկ հշմարտութիւն (ըստ այսմ երկրորդ մեկնութեան) իմանայ մարգարէն զանլրէս ձանաշումն այ , կամ զանսխալ դատաստան նորա . ըստ որոյ կամի առել . հաձելի և ընդունելի եղէց առաջի քումդ ձանաշման , և մի արջամարչէլի . կամ թէ հաճոյական երկեցաց դատաստանի քում , և ոչ թէ առելի կամ մերժելի : Իւ կամ հաճեցող եղէց , այսինքն հաճեցաց ընդ հշմարտութիւն դատաստանաց քոյ . կամ որ նոյն է . հաճեալ հաւանեցաց ընդ այն ամենայն՝ զոր առնես ՚ի դատելով . զի զոր առնես հշմարտութիւն առնես :

Երրորդ մեկնի ըստ ինքեան՝ հայելով ՚ի բոլոր ընթացս սաղմուխս . և ըստ այսմ ողօրմութիւն առելով իմանայ զայ զայն գթալից տնտեսութիւն և նախախնաւմութիւն , որով՝ 'ի թոյլ տալ ծառայից իւրոց կրել զմեծամեծ նեղութիւնս՝ 'ի նոյն ՚ի նեղութիւնս միսիթ արդէ զնոսա , և տայ ևս զելս , այսինքն հնարս և օգնութիւն զիւրաւ տանելոյ այնց նեղութեանց . յոր միտս կամի ասել . 'ի հալածիլ և ՚ի տառասպիլ իմում հայիմ յողօրմութիւն քոյ , և այնու միսիթ արդիմ . զի զիտեմ թէ ոչ թողցես զիս իսպառ . այլ ցուցցես առ իս զայցելութիւն քոյ , և զօրացուցցես զիս :

Իւ կամելով առաւել ևս քաջալերել զինքն՝ յաւելու ասել : Եւ հաճոյ եղէ հշմարտութեան . ուր հըմարտութիւն (ըստ այսմ երրորդ մեկնութեան) իմանայ զուղղութիւն օրինացն այ : Եւ յդմ հշմարտութիւն օրինաց քոյ առէ հաճոյ եղէց , այսինքն հաճելի և արժանի եղէց : Իւ կամ ըստ վերօգրեալ երկրորդ իմացուածոյ՝ հաճ եղէց՝ այսինքն հաճեցաց ընդ հշմար-

տութիւն օրինաց քոց , և 'ի նոյն գնացից և նովին բեր կը եցաց :

Վարդէ է ևս ասել , թէ աստանօր Ճշմարտութէր և ողորմութիւնը իմանայ զնյն զայն զնյ տէսութիւնն՝ որով նախախնամէ զայխարհս քաղցրութէր և ողղութէր . զոր ('ի սաղ . ինք . 8 .) կոչեաց հանապարհ , յասելն . *

Մենայն հանապարհը առ ողորմութիւնը և Ճշմարտութէր են || : (տես անդ :

Խորհրդաբար , ողորմութիւնն այ հանապազ առաջի աշաց էր մարդկայինս ընութեան . իրբ զի հանապազ յայն հայեր , և 'ի նոյն կողկողէր . և ամիւ փափաքէր հանց լինել Ճշմարտութեանն այ , այսինքն բանին այ՝ որ ասի Ճշմարտութիւն . որպէս զի եկեսցէ և ցուցցէ զողորմութիւն իւր , և ազատեսցէ 'ի ծառայութէ մեղաց . և կացուացէ զեկեղեցի սբ որոշեալ 'ի նամրաց : | շ զի որչափ համի մարդ ընդ Ճշմարտութիւնն այ , այնչափ տհամի ընդ ստութիւն և ընդ նամրութի ամսպարշտաց և կռապաշտից , զայս ևս կամելովլյայտ առնել մարդարէին՝ յարէ զինի և ասէ :

Դ . $\prod_{\text{Հայուաց}} \text{Էս յալուսաս նանրաց , և ընդ անօրէնս էս ոչ մատից :}$

Ե . $\prod_{\text{Շահաւաց}} \text{Պետէ էս սժողովս չարաց . և ընդ ամբարէլուս էս ոչ նաստաց :}$

Յայս բան ոչ նաստին յալուսաս նանրաց՝ երրակի կարէ իմացեալ լինել . մի՝ ըստ այնմ (որ գնի 'ի սաղ . ա . 1 . տես անդ :) | շրկորդ՝ ըստ կենցազավարելոյ ընդ նանիրս և ընդ ամբարիշտոս , որով ցուցանի ոչ մասնակցիլ ընդ այսոսիկ՝ որը նամնիրքն են , այսինքն պակասեալը յուղղութենէ և 'ի բարեաց , և մասնեալը յանբարի արարս , այսինքն 'ի չար դործս : | շրբորդ ըստ ոչ միաբանելոյ ընդ նանրապաշտոս , այսինքն ընդ այնոսիկ որ պաշտեն զիտուռա՝ որը են նանիր և ունայն , մանաւանդ թէ ոչ ինչ . ըստ այնմ (ա . թագ . ժք . 21 .) *

* | շ մի երթայցէք զհետ ողբնչիցն (յո զհետ կուոց ,) .. որք ոչինչ վճարեն , և ոչ փրկեն . քանզի չեն ածք || . միայն զանուն այ ունին , և ոչ են . վասն որոյ և են նանրացեալը յայնմանէ , զոր ցուցանեն ունել : | շ որովհետեւ

ինքեանք նանիր են , նանիր ասին և նորա , որք պաշտենն զնու : Վու սոսա հայելով մարդարեն՝ զնէ զայս : Վանզի սա ինքն դաւիթ հալածեալ՝ ի տաւուզայ , և աստամնդական լեալ յայլեայլ տեղիս 'ի մէջ հեթանոսայ , և տեսեալ զտաճար կռոց նոցա , և զսուտ պաշտամունս նոցին , մորմնքել ՚ի սրտի . զի աչօք տեսանէր թէ զիարդ պաշտեն հեթանոսը զսուտ ածս 'ի տաճարի իւրեանց . իսկ ինքն զրկեալ է 'ի պաշտելոյ հանգիսապէս զջնմարիտն ած 'ի տաճարի նորա , և ոչ կարէ զնալ և զոհել անդ տն ամենակալի :

Վանաւանդ զի լսէր և 'ի թշնամեաց իւրոց՝ ասել . միք քոյ մասն 'ի ժառանգութեան տն . Երթ պաշտեալ զնծս օտարս . (ա . թագ . իշ . 19 :) Օ այսպիսիս լելով և տեսանելով երբեակ կրիւք տողորել ՚ի սրտի . մի՛ կարտիւ տաճարին այ կենդանւոյ . զոր և յայտ առնէ ('ի համարն 6 . 7 և 8 :) Երկրորդ՝ զզուանօք ատելութեան՝ որով տաղակայր 'ի տաճարացն կռոց և 'ի պաշտոզաց նոցին : Եւ երբորդ՝ երգիծանութե՛ թշնամեաց իւրոց . որք վասն դառնացուցանելոյ զսիրտ նորա՝ ասէին ցնա զայն վերոյգրեալ բան , այսինքն զնալ առ ածս օտարս և ընդ պաշտօնէից նոցա պաշտել զնոսա : Եւ ահա ընդդէմսոցա կարգելով զբան իւր՝ ասէ :

Ենասուց ես յանուան նանրաց : Ովկաւ ոչ ցուցանէ՝ թէ ոչ կամի նստիլ , այլ թէ զզուի յաթոռոց նանրաց , մինչեւ չիշել իսկ և ոչ զմուռ ածել , թէ հնարի իցէ արդեօք ինքեան նստիլ 'ի նոսին : Եւ յասելն աստ յոդնակի յանուան՝ յայտ առնէ զարս աթոռոց նանրա պաշտից , որպէս թէ ասէլ , 'ի կարգս աթոռոցն՝ յորս նստին մնոտիապաշտք՝ ես ոչ նստայց . կամ որ նոյն է՝ ոչ նստայց 'ի մէջ նոցա 'ի ժողովիլ նոցա 'ի պաշտօն կռոց իւրեանց , և ոչ երևեցայց 'ի ժողովս նոցա . որ է ասել՝ ոչ եղէց մասնակից ընդ նոսա 'ի զործս նոցին : Վարեկացին ('ի բանն ծ .) նանրովք իմանայ զամշ պարիշտոս նանիր խորհրդով ժողովեալ , զորս յիշե մարդարէն 'ի յաջորդ համարն . և զսոյն զայս բան բաղդատեալ ընդ վճռոց տն ասէ . * զոր տէրն իսկ երկու ըրորդեաց երթալ նստիլ ոչ յառաջին բարձին համար . ամից ընդ ամսարշտացն նանրախորհուրդ ժողովիլոց . ուստի դաւիթ և երեմիա ուխտիւ կանոնի սահ-

ման հաստատեալ հրաժարեցուցին , այլ ընդ զղթա-
ու , ցեալսն սրտիւ || (երեմ . ԺԷ . 17 :)

Անմրովք մարթ է խմանալ աստ և զշարցուկս և զվր-
հուկս և զիախարդու . զի զոր առնեն և զօր խօսին՝ նա-
նիր են 'ի ձշմարտութենէ մանաւանդ 'ի գուշակեն զա-
սպագայս . եթէ զեղեալսն հարցանես՝ ոչ կարեն պա-
տասխանել . զիարդ աստ կարասցեն զիտել զապա-
զայս : | Դ գնալ ուրումն առ հարցուկս՝ ջանացայ ար-
գելու զնա . զի չար է ասեմ . և յու անսալ նորա՝ ա-
սացի ցնա , նախ հարց ցնա զանցելոց . զօրօրինակ թէ
կենդանի իցէ հայր իմ . ուր էի ես յայսմ զիշերի .
ևն : | Եւ 'ի հարցանել նորա , յերկոսին ևս սխալեցաւ
հարցուկն , որով և զգաստացաւ հարցանօդն , և ասէ ,
ուրեմն ստեն գորա և զապագայց . ոչ միայն ստեն
ասեմ , այլև ոչ ինչ զիտեն . զի եթէ զիտեին , ինք-
եանց ճար առնեին որպէս զրէ բարսեղ վարդապէտ
('ի մեկն . մարկ . զԼ . ԺՂ .) | Կոդ այսպիսիս ևս ամե-
նեին ոչ է պարտ կենցաղիլ , որպէս և ոչ ընդ նախայի-
շեալ կռապաշտս և կամ ընդ այլ անօրէնս . առ որս
հայելով մարդարէին՝ յարէ զինի , և ասէ :

Եւ ընդ անքէնս ես ո՛չ յուի : | Այսինքն ոչ մտից 'ի տա-
ճար կոոց ընդ կռապաշտս , կամ որ նոյն է , ոչ մտից
'ի տեղին՝ ընդ որ մտանեն կռապաշտք առ 'ի զանոտի
պաշտամունս իւրեանց կատարելոց : | Օ կռապաշտսն
կուէ անօրէնս . զի ոչ վարին ուղիղ օրինօք . այլ այնպի-
սէօք , որով անարգեն զանցային օրէնս , ևս զրնա-
կանս . զի ընդդէմ բնական օրինաց ևս է պաշտօն մա-
տուցանել սուտ ածց , և ատելի ամցն , ամին իրի և
մարդարէն ատելութք խօսի զնոցանէ , և ասէ :

Եւ ընդ ես ո՛չ ուղղէ շրաց . | Ենդ ամբարէլուս ես ո՛չ նստաց :
Օ զորս 'ի վերոյ նահերս կուէաց զկռապաշտս , աստ շրա-
կուէ՝ զի այնպիսի նահերս՝ թափուր գորով 'ի բարեաց՝
լցեալ լինին չարեօք , այսինքն անօրէն պաշտամունք
իւրեանց : | Եւ զորս 'ի վերոյ անօրէնս կուէաց՝ աստ ամ-
բարէլուս կուէ՝ այսինքն անբարի օրինօք վարօղս : | Օ այս-
պիսիս ասէ առեշի . և այս այնչափ , մինչև ոչ կամիլ և
ոչ խսկ արտաքոյ տաճարի նոցա նստիլ ընդ նոսա յայն-
պիսի առիթս կամ գործառնութիւնս՝ յորս կռապաշ-
տութեան նշան երկեր 'ի նոսա : | Այս ատելութի՝ զոր

ուներ մարգարեն՝ յայտ է թէ ոչ էր առ անձինս կռապաշտից, այլ առ կռապաշտութիւնոցա: Կամ այսպէս ասացից, այն ատելութիւն որով ատեր զժողովս նոցա և զնատին ընդ նոսա՝ ոչ էր վասն այսորիկ՝ զի էին ժողովք, այլ զի էին ժողովք չարաց և ամպարշտաց:

Վ. Ա. Որպէս ասացաք՝ ի սկզբան բնաբանիս, այս բանք կարեն հայիլ պարզապէս և առ ո և իցէ չարս, որք թէ և չիցեն կռապաշտք, բայց՝ ի չարութեան զողով և յամ պարշտութեան, ևս և՝ ի նանրութե և յանօրենութե զրծելով, ՚ի մասնակիցն լինելոյ ընդ նոսա զգուշանացր մարդարեն: Կը արդարե որք միանգամ երկիւզածքն են յոց, և զշետ են առաքինութեանց, սրան է նոցա ոմ իրօք զգուշանալ յընկերակից լինելոյ չարաց: Ո՞ե զուք հեռանան յաղտեղութեանց. և ոչ մերձենան ՚ի տեղիս՝ յորս են բազմութիւն բզեզաց և մժեղաց: Ոյն պէս և երկիւզածք ՚ի չարաց. զի ընկերութիւն նոցա թէսպէտ և ՚ի սկզբան ոչ որսայ զառաքինիսն, մանաւանդ թէ զզուեցուցանէ ևս, բայց յաճախ վարելով առ սակաւ սակաւ զարդրի ՚ի զզուեցուցանելոյ. և յառաւելն յամել՝ ոչ այնչափ անմեզազելի՝ որչափ թէ ներելի ցուցանէ զզործս ամբարշտութե նոցա. և ասպա յերկարի ընկերութեանն՝ հակեցուցանէ յայն ինչ՝ յորմէ ՚ի սկզբան զզուէր և սարսէր. և հուսկ յետոյ որսայ զնա՝ ՚ի կորուստ. և լինի վիճակ այնպիսոցն չար քան զայլոց ամբարշտաց. զի մոլութիւնն ՚ի բարի անձինս սկսեալ, և տակաւ տակաւ աճեցեալ աննորոշելի բողելի լինի, և անբժշկելի:

Կակ եթէ որ զիցէ ՚ի մտի՝ թէ ընդ չարս թարթափելով ոչ հակի՝ ՚ի չարութիւն նոցա, նման է այնմ՝ որ ընդ ձիւթ շաղախեսցի, և կարծեսցէ զանձն չաղտեղեալ. այնպիսին առաւել անկարգանայ և չարմնայ՝ քան զայն՝ որ կասկածի յանկարգութիւն չարաց հակիլ. վոզի որ կասկածանօք վարի, զգուշանայ. իսկ որ անկատ կած վարի՝ զիւբագոյն ևս յարի և անզգոյշ զլորի. զի թէ զգուշաւորք վտանգին, քանի ևս անզգոյշ:

Ո՞իով բանիւ ասացից՝ անհնար է ումեք լինել զովելի յառաքինութեան՝ եթէ ընկերակիցք նորա իցեն պարսաւելի՝ ՚ի մոլութեան: Տ տեսանելդ զայր առաքինի՝ տես և զընկերս նորա. և նոքօք ծանիր զնա. լուեալ

իմ զառաքինութենէ ուրուք, ու զնա՞ այլ զկենցաղաւ կիցս նորա սկսաց քննել. և ասէմ, հաւատայի, եթէ և զընկերու նորա այնպիսի տեսանէի. յայտ արարեալ, թէ չէ հնար ումեք առաքինի մնալ, եթէ շաղք իցեն կամ մոլիք՝ ընդ որս կենցաղավարի:

Այս բան խորհրդաբար իմն կարէ ասիլ և 'ի դիմաց այ վասն հրէից. յոր միսս թուի իմանալ սարգսի չոր հալոյ ('ի մեկնու. յուդայի. համար 1. ձառ ան.) քանզի ասէ՝ թէ որովհետեւ հրէայք արհամարհեաց զնն. և ժողովեաց զէթեանոսս և արար իւր եկեղեցի * և զայս մարգարէն յառաջագոյն տեսեալ ասաց, ա տեցի զժողավա չարաց ||. իսկ վա՛ միւսոյն ասաց, * տէր սիրեցի զվայելութի տան քո ||:

Կարսոյապէս ըստ լսմք¹. աթոռ նանդութեանց է ցան կութիւն մարմնոյ, յոր չէ արժան նստիլ մարդոյ, կամ զնալ ընդ անօրէն խորհուրդս նորա, այլ ատել զնոսին իրեւ զժողովս չարաց: Կարձեալ աթոռք նան բաց են առիթքն մեղաց. յորս չէ արժան մերձենալ. եթէ հեռացուացես զաւիթս մեղաց՝ այն բաւական է, քեզ 'ի մերձիլ յառաքինութիւնս և 'ի նոսին յարիլ: Երկաթ կացեալ ընդ մէջ մազնիսի և էդ անդամանդի, 'ի հեռացուացնելն անդ զանդամանդն՝ բերի (երկաթն) 'ի մազնիսն, և յարի 'ի նա. սոյնակէս 'ի հեռանալ չար առթից՝ բերի հոգին յազնուութիւն առաքինութե, և փարի զնովաւ, և յարի ևս 'ի սէրն այ և անձային իրաց. յայտ իսկ և մարգարէն հեռի կամէր պահել զանձն յամփարշտաց. և տաղտկացեալ 'ի նոցունց ցանկայր սրբութք մերձենալ առ անձայինն. ըստ որում և յայտ առնէ 'ի յաջորդ համարն ասելով:

Պ. Համարաց (կամ ըստ տպագրեալ սաղմնոաց՝ ըստ շիշի) սբբանեք պիտի իմ. և շուշն է շիշ պիտի պահանձն:

Կարգարէն դաւիթ որպէս զըի յառաջին զիրս թագաւորաց, և որպէս տեսանի 'ի նախազրելոցդ՝ բազում ժամանակօք՝ հեռի լինելով 'ի տանի ոնն և 'ի նէրկայութէ տապահակի նորա, և 'ի յօտարութե տառապագին զընելով, և 'ի մէջ հեթանոս ազգաց զզուա-

Նոր և տաղակամբեամբ կալով զօրհանապազ հալելը և
մաշեր ՚ի սրտի . հառաչեր և յոցւոց հաներ . իցէ ար-
դեօք , և երբ իցէ՝ զի տեսից զտաձար այ իմոյ , և
մտից անդը . իցէ արգեօք զի արժանացայց յանդիման
լինել առաջի տապանակի նորա . իցէ արգեօք՝ զի ոչ
ևս փափաքեցից վայելել , այլ վայելեցից զներկայու-
թի նորա ՚ի տան նորուն :

Եւ զայս զիւր փափաք յայտ առնել աստ յերիս համարս . և նախ դնել զփափաք պատրաստութեն առ այն , այսինքն զփափաք լուացմանն ձեռաց՝ որ էր պատրաստութին մտանելոյ ՚ի տաճարն . զի սովորութին էր հըելից նախ քան զմուանել՚ի տաճար ոտն , և նախ քան զմատչիլ՚ի պաշտօն այ և կամ յաղօթս , որպէս և նախ քան զնստիլ իւրեանց ՚ի սեղան կերակրոյ՝ լուաննալ զձեռս իւրեանց . որպէս և այժմիսկ առնեն յառաջ քան զմուանել՚ի ժողովրդանոց իւրեանց և ՚ի սեղան : Եւ այս սահմաննեալ եղեւ առ նոսա , առ ՚ի նշանակ սրբութեն կամ մաքրութեան սրտի . իբր զի այն մարմնաւոր լուացումն իցէ յայտնի լուացման կամ սրբութեան հոգւոյ : Ուստի պատմի ՚ի գիրս արիտեայ , թէ եօթ անսառոն թարգմանիցքն յնամ աւուր յառաջ քան զմատչիլ իւրեանց ՚ի թարգմանութիւն՝ լուանսային զձեռս : Եւ իբրեւ հարցան՝ թէ ընդէր առնէք այդպէս , և տուն պատասխանի՝ թէ այս լուացումն մեր խորհուրդ ունի . իբր զի որպէս ջուրն մաքրէ զարտաքին աղտեղութիւնն , սոյնպէս և արտաքին այս լուացումն յայտ առնէ զարբիլ հոգւոյն յաղտեղութենէ ու իցէ մեղաց : Օ այս սովորութիւն լուացման նաև հեթանոսք ունեին և ունին , որպէս և յայտ է ՚ի հին պատմութեանց և յայժմու գործածութենէ նոցա . զի ՚ի մատչիլ՚ի մեհեանս իւրեանց՝ լուացեալ լինին : Եւ արդ քանզի այսպիսի լուացմունք պահանջեալ լինէին յառաջ քան զմուանել՚ի տաճարն , մարդարիէն՝ որ ցանկայց արժանանալ մտից տաճարի ոտն , ցանկայց և այնմ՝ որ յառաջէ քան զմուանելն , այսինքն է՝ լուացումն ձեռաց . սմին իրի ասէ :

1 առաջուց . (այսինքն լուացից) ոբառելե դյուռ է : Ու
ասէ լուացից ջրով , այլ սրբութե՛ր . և այս է ոչ իմն
հարստաանութեան , որ ասի փոխանունութիւնն . որով

գործն դնի փոխանակ պատճառին , վասն յարտ առնելոց զառաւելութիւն իրին . զորօրինակ յորդամ կամիսք յայտ առնել զերկնչիլ ուրոք մեծապէս , զգործ երկիւղին 'ի մէջ բերեմք . և նովին յայտնեմք զմեծութիւն երկիւղի նորա . և զի գործ մեծի երկիւղի է դողալ , վոյ փոխանակ ասելոյ երկնչի , ասեմք գողայ . յոր միտ ասի . եսայ . (կշ . 2 .) * և որ գողայ 'ի բանից իմոց || : Աստ այսմ ևս կամելով մարզարէին զառաւելութիւնը այսինքն մաքրութեւ լուացման ջրոյն յայտ առնելու ոչ ասէ՝ լուացից ջրով զձեռս իմ . այլ լուացից սրբառեք չէ . որ է ասել այնպէս լուացից զձեռս իմ , զի յամ աղտոյ մաքրեցի և սրբեցի : Այս եղանակ խօսից հասարակ էր առ հրեայս . և նոյն էր՝ թէ ասացեալ էր , մաքրեցից ջրով զձեռս իմ : Իսցց պատճառ այդպէս խօսելոյ նոցա այս էր , զի այսպիսի լուացումն նոցա որպէս ասացաք՝ կարգեալ էր 'ի նշանակել զարբել հոգւոյ յամ արատոյ . որպէս զի այնու սրբութեր արժանացի լուացեալն՝ կալ ըստ օրինի 'ի պաշտաման տն՝ յանդիման նորա 'ի տաճարի նորին :

Վստանօր բառու չե՞՞՝ կարէ նշանակել նմանութեամբ և զգործս կամ զգործակցութիւն . զի 'ի ոք գիրս բազում ուրեք ձեռոք նշանակի գործք մարդոյ . (ըստ այնմ . ծնն . ի . 5 .) * սրբութեր սրտի , և արդարութեր ձեռուաց (այսինքն գործոց) արարի զայս || : Հայս միտ լուանալ զձեռս սրբութեր նշանակէ լուանալ զգործս սրբութեամբ՝ այսինքն է սրբել զգործս , և կամ ցուցաւ նէ լինել նշանակիչ սրբութե զգործոց :

Վսացի * կամ զգործակցութիւն || . և այս ըստ այնմ նմանութեան , ըստ որոյ ձեռք ձեռաց լինին զործակից . ուստի և աստ կարէ ձեռոք նշանակիլ նաև զործակցութիւն կամ մասնակցութիւն յիմիք . յոր միտս լուանալն զձեռս՝ լինի նշան սրբելոյ կամ օրոշելոյ զինքն 'ի գործակցութենէ չարաց . կամ ոչ լինելոյ մասնակից չարաց : Աստ այսմ նշանակութեւ լուաց պիղասոս զձեռս իւր , և ասայ . * քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդուրիկ , զորք (չարգդ) զիտաաջիք || . (մատ . իէ . 24 .) որպէս թէ ասեր . ոչ լինիմ ձեզ զործակից յայդ չարագործութիւն այսինքն 'ի սպանութիւն արդարոյդ : Վա-

ըոյասպիս՝ լուացեալ լինին ձեռք սրբութք՝ 'ի ձեռն ու զպսնութեան . որով և համարձակ ամբարձեալ լինին *առ առծ . յոր միտս ասէ սարգիս չորհալի ('ի մեկն . յակ- դի . 8 . ձառ . թ .) ողբրմութք սրբի ձեռն , և ամբար- ձեալ լինի յերկինս . և զայս ցուցեալ , հետեւցուցա- նէ և ասէ . * տեսե՞ր զարբութիւն ձեռացն՝ թէ որով օ- րինակաւ կատարի , և համարձակութիւն առնու առ առ առծ՝ 'ի վեր ամբառնալ և ասել ընդ մնարգարեին . համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ երեկորի || .

Այսու լուացմամբ կարէ նշանակիլ և մաքրութիւնն ձեռաց համամբ սրբազն իրաց , որպիսի համբարեալ լինի ձեռք քահանային , որ մերձենալով 'ի խորհուրդ հաղորդութեան ասի որ լինել . յորոյ ապացոյց զրի 'ի վարս կառալոսս քահանայի' թէ մատունք նորա շօ- շափմամբ խորհրդոյց հաղորդութեան փայլեին . մինչեւ 'ի մթան ևս լուսով նորին ընթեռնուլ զգիրս : Որպէս և իցէ , այսու ցուցանի' թէ կարի սուրբ պարտի լինել ձեռք քահանայի 'ի հպիլ անդ 'ի սրբութիւնն սրբոց :

Ոյն այս հայի և 'ի լուացումն կենաց 'ի ձեռն խոստո- վանութեան : Հայս լուացումն յորգորիմբ և յօրինակէ անբան կենդանեաց . զի (բաց 'ի խոզից) զրեթէ ամ կենդանիք յօժարին մաքրիլ յաղտեղութեանց . որոց բազումբ և 'ի ջուրս լուանին : Վսի թէ և մատակ ա- ռիւծ խառնակեալ ընդ ընձու՝ գնայ լուանայ , 'ի մաք- րել զինքն և 'ի ջնջել զգարջահոտութիւնն թողեալ 'ի խառնակութենէ անտի : Վսի քանի առաւելոր խառ- նակեալ իցէ ընդ մեղս պանրի փութեալ լուանալ զինքն ապաշխարութեամբ . և ջնջել 'ի հոգւոյ իւրմէ զգար- շահոտութիւնն մեղաց , և զտագնապ խղձի մոաց . և այնպէս մատչիլ յաղօթս և 'ի պաշտամունս ոմն . բառ

որում յայստ առնէ և առաջիկայ բնաբանդ յասելն :

Եթ- լուն եղէ լուն ուն ուն : Երկու սեղանք էին 'ի սրբութեան տաճարին կամ 'ի խորանին . սեղան խնկոյ՝ պատեալ ոսկուով (ելից . ին . 23 . 24 . ևն :) Վեղան առաջաւորութեան հայի պատեալ նոյնակէս ոսկուով (ելից . լէ :) Եթ և այլ սեղան ողջակիզաց արտա- քոյ խորանին պատեալ պղնձով (ելից . ին . 1 . 2 . և լէ . 1 . ևն :) թուի թէ յերեսին 'ի սոսա ևս հայի աստ բառդ սեղան :

Ա յլ զիտելի է՝ զի աւանդեն հրէայք՝ թէ 'ի հին ժամանակս սովորութիւն էր շուրջանակի կալ, ևս և շուրջ զալ զխորանաւ, նաև զեղանով զոհից 'ի տաճարին ոստու 'ի ձեռին՝ առ 'ի նշան գոհանալոյ զայ ուրախութիւն սրտի. (զրոմէ տես 'ի սաղ. ՃՇէ. 25.) Եւ դուցէ յայս միտոս զնէ աստ մարզարէն զայս բան. որպէս թէ ասացեալ էր, իցէ թէ յետ արժանանալոյ իմ լուացման ձեռին՝ մտեալ 'ի տաճար քոյ՝ շուրջ եկից ոստովը ուրախութեան զեղանով քով տէր :

Ի այս հաւանական ևս է ասել բատ հշմարտութէն իրին՝ թէ զայս ասէ հայելով 'ի հանդէս պաշտամն՝ զը կատարէին զետացիք 'ի տաճարի անդ առաջի սեղանյն՝ նուագելով զերզս : Քայս հանդէս ցանկայր առաջիկայ լինել. և սովին շուրջ լինել զեղանով տն, այսինքն կալ մօտ 'ի սեղանն և լսել զերզս օրհնութեան տն . և զայս ևս յայտ առնէ 'ի յաջորդ համարն՝ ասելով :

Է. Ա յլ ինչ զայն օրհնութէ ու, և պատթել դանայն սովորութէն ու : Ի տաճարն դաւթեան, նոյնպէս և 'ի տաճարն սովորմանի, զետացւոց էր նուագել զերզս օրհնութէ առաջի սեղանոյ . զորս առաւելապէս 'ի կարգի եղեալ էր դաւիթ՝ յօրինեալ զբազում սաղմաս և զօրհնութիւնս, 'ի պատմել զբանչելիսն այ . (տե՛ս առ. միաց. ԺՂ. 4. 37. և 42.) Քայս և 'ի սոյն հանդէս կարօտագին փափելով ասէ :

Ա յլ ինչ զայն օրհնութէ ու : Որպէս թէ ասացեալ էր, էրը իցէ՝ զի սրբութիւն մտից 'ի տաճար քոյ, և կացեալ առաջի սեղանոյ քո՝ արժանացայց լսել զերզս օրհնութեանց, զորս նուագեն անդ պաշտօնեայք քո. իցէ զի լուայց զայնս և ցնծացայց . և ուրախութիւն յայտնեցից զգործս քո . և առ այս յարէ :

Ծ. Պատթել դանայն սովորութէն ու : Ի յօրինքն արժանացայց 'ի տաճարի քում հռաւել զամ սքանչելիս քո 'ի ձեռն սաղմասաց, զորս յօրինեալ եմ . և ունիմ ևս յօրինել : Աչ ասէ յայտնել . այլ Պատթել . և այս բատ կրկին մտաց . մի՛ ըստ նիւթոյ սքանչելայն . զի 'ի բազում սաղմաս՝ պատմարանաբար առաջի զնէ զըս-

քանչելիսն այ : Եւ երկրորդ՝ ըստ ահսակի սքանչելիցն . այսինքն ըստ գերազանցութեան նոցա . իբր զի այնափ և այնպէս գերազանց են սքանչելիքն այ , մինչ զի թէպէտ և մարթ է սքատմել զնոցաննէ , բայց անհնար է բացայաց ցուցանել :

Խոկ բառիւս ստանչլիք՝ մարթ է խմանալ աստ նախ՝ զգործս հրաշիցն՝ զորս եցոյց ած՝ յորժամ եհան յեղիպտոսէ զորդիսն խրայելի , և եմոյծ յերկիրն աւետեաց : Երկրորդ՝ մարթ է խմանալ զյայտնութիւնն , որովք բազում անգամ յայտնեաց ած զինքն խրայել լացոց սքանչելի օրինակու , 'ի լեառն սինայ , 'ի յամ սրբն , 'ի խորանն վկայութեան , ևն : Երրորդ՝ մարթ է խմանալ զտեւչութիւն խնամոցն այ , 'ի կառավարել նորա զտիեզերս , ևն : Չորրորդ՝ մարթ է խմանալ զրաքանչելի կատարելութիւնն այ : Հինգերորդ՝ մարթ է խմանալ զգաղանի խորհուրդս այ , մանաւանդ զմեծ խորհուրդն զայն՝ զոր նա ինքն ած կատարելոց էր 'ի ձեռն մարդեղութեան : Օ այս ամ սքանչելիս ասէ պատմեցից և զրեցից յերգս սաղմնոսաց :

Եւ թէպէտ անհնար էր մարգարեին զամն զրել բայց այսու ամիւ ասէ զամ՝ ըստ երկուց . մի՝ ըստ զրելոյ 'ի հասարակի , զի ըստ այսմ զրելով զայն ամ զոր նշանակեցաք՝ ասի զրել զամն . և մի ևս՝ ըստ փափառանայն . զի ցանկալով զամն սպատմել , ըստ այնմ ցանկութեան ասի զամ զրել . որպէս թէ ասէր . ցանկամ զպանչելիս քոյ զրել յերգս սաղմնոսաց՝ զամ զոր կարեմ , և որչափ կարեմ : (Վայլ վամն օրհնուեն այ տես 'ի սաղ . լու . 1 :

Օ այսոսիկ այսպէս առաջի եղեալ մարգարեին յայս և 'ի նախընթաց համարն՝ զայն ինչ և եթ յայտ արար , որում տենչայր և կարօտէր . այսինքն է մտանել 'ի տուն տն , և լսել զօրհնութիւնս նորա , և սպատմել զրսքանչելիսն . այժմ ապա բացայաց բառիւք յայտ առնէ և զնոյն զայն զտենչ և զկարօտ սրտի իւրոյ՝ զոր ունէր առ վայելութիւնան . և այս՝ նախընթացարար և հետեարար . նախընթացարար , ըստ այնմ՝ զի վասն սիրելոյ զվայելութիւն տան տն՝ ցանկայր 'ի նոյն մտանել . և զերգս օրհնութեան նորա լսել . հետեարար՝ ըստ այնմ , վասն մտանելոյ 'ի տան տեսան և լսելոյ

զերդս օրհնութենորա սիրեր զվայելութիւն տան նորին . յայսոսիկ հայելով ասէ :

Է . **S**էր սէրեցի զշյելը-թէ տան ոս , և զուղին յարին իւ-
այց ոս :

Ո՞եծ է և կարի մեծ կարօտ մարդոց առ այն՝ զոր սի-
րէ , և ոչ վայելէ , մանաւանդ եթէ այս խոափանումն
վայելման իցէ յանիրաւի և զրկմամբ , զայս նորա մի-
այն գիտեն , որք փորձն են : Արդ թէ որպիսի և որ-
շափ էր սէր մարդարէին առ վայելութիւն տանն այ՝
յայտ է 'ի բազում սազմնաց նորին , Տեսանելով ա-
պա՝ զի յանիրաւի զրկեալ և հեռացեալ է 'ի ներկայ-
ութենէ անտի նորա , կարօտիւ նորին հալէր և մաշէր ,
և հանապազ յոգւոց եւանէր . որպիս ասացաք 'ի վերց .
('ի համարն . 1 .) Օ այսոսիկ յայտ առնել կամելով
մարդարէին ասէ :

Sէր սէրեցի զշյելը-թէ տան ոս : Աստանօր բառդ սէրե-
ցի 'ի մէջ բերէ ոչ միայն զներգործութիւն սիրոց սոսկա-
պէս , այլ և զսաստկութիւն ներգործութեն սիրոց առ այն-
պիսի առարկայ , որ հեռին է . զի թէպէտ և յերկոսին
ևս բերի սէրն սաստկության առաջիկայն , և 'ի հեռակայն ,
բայց յառաջիկայն՝ բերկրութք , իսկ 'ի հեռակայն՝
անձկութք , այսինքն անձուկ կարօտիւ : Օ այսպիսի սի-
րոց խօսի աստ մարդարէն . սէրեցի (ասէ) զշյելը-թէ տան
ոս : Դնէ ևս զբառդ ոքէր , որով կամի յայտ առնել ,
թէ այն ինչ առ որ փափաքի՝ է նորա որ է տէր իւր , և
ոչ օստար ոք . ուստի և կարօղ է իբրև տէր արժանացու-
ցանել զնա այնմ որում ցանկայ՝ այսինքն վայելու-
թեան տան իւրոյ . որպէս թէ ասացեալ էր . ասպաքէն
գու ինքն ես տէր իսմ , և դու դիտես , զի հալիմ սիրով
վայելութեան տան՝ ոչ օստարի , այլ քոյ . և զի հեռա-
ցեալ եմ անտի , և ոչ կարեմ մերձենալ 'ի նոյն յե-
րեսաց հալածաց իսեց , առ քեզ աղաղակեմ , զքեզ
աղաւեմ , և 'ի քէն ինզբեմ , զի դու ինքն իբրև տէր
արասցես զիս արժանի այնմ վայելութեան :

Աստանօր բառս կայելը-թէ երրակի կարէ նշանակել .
մի՝ փոխանակ գեղեցկութեան կամ ցընաղութեն՝ զոր ու-
նէր յինքեան տունն այ . և կամ ըստ երբ . փոխանակ
նոյն իսկ տանն այ ըստ գեղեցկութեան նորին . և այս՝

թէ ըստ մարմնաւոր տեսութեն , և թէ ըստ հոգեորին . զի ըստ մարմնաւոր տեսութեանն , այսինքն՝ ըստ արտաքին գեղեցկութեան՝ ցանկալի էր յօժ . իսկ ըստ հոգեւոր տեսութենն , այսինքն ըստ ներկայութեն այդ՝ և ըստ ածային պաշտամանցն որք կատարեին 'ի նմա՝ ամենեին փափաքելի . և ըստ այսմ մնաց՝ կամի ասել . ցանկացայ պանձալի գեղեցկութեանն՝ զոր ունի տունքոյ իւրով ցքնաղութք և քոյով ներկայութք և երկնահանգետ պաշտամանքը :

Երկրորդ՝ փոխանակ փառաւորութե տանն այ՝ զի փառաւորեալ էր յանցնց իբր տաձար այ կենդանւոյ . ըստ այսմ իմացուածոյ կամի ասել՝ սիրեցի զփառաւորեալ տունքոյ . կամ որ նոյն է՝ ցանկացայ տանքում , որ փառաւորեալն է յանցնց : Հայս միտս մարթ է ասել թէ այսու բառիւ իմանայ մարզարեն աստ նաև զուապանակն այ , որ էր վայելչութիւն տանն այ և փառք իսրայելի . այսինքն վայելչացուցիչ տանն այ և փառաւորիւ իսրայելի : Այս վասն այսր պատճառի յորժամ գերեցաւ տապանակն 'ի փղատացւոց՝ ողբարսվ ասեին իսրայելացիք . * բարձեալ են փառք իսրայելի յառնուլ տապանակին տն' . (ան . թագ . դ . 22 .) որով յայտ առնեին թէ այն տապանակ էր փառք իսրայելի զոր սազմոներգուն այլուր ('ի սաղ . հէ . 63 .) զեղ իսրայելի կոչէ , յասեն . * մատնեաց . . . զգեղ նոցա . . . 'ի ձեռս թշնամեաց նոցա . . . այսինքն զտապանակն 'ի ձեռս փղատացւոց : Այս ըստ այսմ առեալ՝ կամի ասել . սիրեցի և ցանկացայ ներկայ լինել տապանակի քում . որ է փառք իսրայելի և վայելչացուցիչ տանքոյ :

Երրորդ՝ փոխանակ վայելման , այսինքն փոխանակ հանգստեամք ժառանգելոյ զներկայութիւն տանն այ . այս իմացուած չերեի ինչ օտար 'ի նկարազբէն . և ըստ այսմ կամի ասել . սիրեցի զժառանգութիւն տանքոյ , կամ որ նոյն է՝ ցանկացայ ժառանգել զտունքունքոյ , կամ վայելել 'ի նմա . Օ այն զայս փափաք իւր առաւել ևս կամելով յայտնել , այլով իմն բառիւ առաջի առնէ և ասէ :

Ե՞ս պեղի յարէի քառաց ուց : Օ զոր յառաջն տուն ասաց , զնոյն աստ ուղիւ յարէի քառաց կոչէ , ուր յայտ է թէ բարեղ ուղիւ 'նշանակի տունն այն , որ կոչիւր ևս տաձար .

իսկ բառիւդ յարէ էտուց՝ նշանակի խորանն վկայութեն, այսինքն վրանն այն՝ յորում էր տապանակին տու. և զի այս խորան, կամ ասացից այս յարկ փառացն այց էր 'ի տան անդ, կամ 'ի տաճարի անդ, վասն այնորիկ կոչէ զայն՝ տեղի այսր խորանի :

Իսկ պատճառ կոչելոց յարէ էտուց՝ այն է՝ զի առծ անդ երեւցուցանէր զբառս իւր. անդ իջաննէր ամէ պովք յանապատին. և անտի խօսէր ընդ մովսէսի : Այսպէս ևս յորժամ էր այն 'ի սինս լեառն՝ փառաւորեալ լինէր ներկայութեն այց, Վրդ մարգարէն 'ի սիրել զվայելչութիւն տանն այց՝ առաւելապէս 'ի սէր այսր խորանի բորբոքեալ լինէր, զի 'ի նմա ժառանգէր զներկայութիւնն այց :

Ո երածական մեկնութե՞՝ այս բանք, նոյնպէս և բանք նախընթաց տանցն հային 'ի վայելչութի այնր երկնային տան, որ է արքայութիւնն այց, կամ տեղի՝ յորում է իմանալի յարկ փառացն այց յերկինս : Ո սոյն յայս հառացէն և բերմունք սրտի արդարոց . և տեսանելով զինքեանս հեռացեալս անտի, և տատանեալս 'ի պանդիտութեան աստ, յոգւոց հանեն . իցէ արդեօք՝ զի լուացեալ և սրբեալ զգործս մեր՝ արժանասցուք մտանել անդ :

Խորհրդաբար՝ յարկաւ փառաց իմացեալ մինի մարմինն քոի . և վայելչութե տանն նշանակի փառք մարթնոյ նորա . որոց տեսութեն ու խոտիք փափաքէր մարգարէն՝ որպէս և այլ մարգարէք և նահապէտք : Վ յլաքանական մեկնութե՞՝ այս բանք հային յեկեղեցի քոի . որոց մուտն է լուացումն սրբութե աւազանին . և զեղեցկութիւն նորին սիրելի սբց : Դարձեալ հային 'ի նիւթական եկեղեցիս . այսինքն 'ի տաճարս, և 'ի սեղանն ուր, յոր միտս ասեն զայս սաղմոս քաշհանայք . փափաքելով մաքրութե հոգւոց և անարատութե դործոց արժանապէս կալ առաջի այնր սեղանոյ : Վրդ յայտ արարեալ մարգարէին զբափաք իւր՝ զոր ունէր առ տաճարն այց, սկսանի հայիլ առ այնուիկ՝ որք անարժան են մտանելոց 'ի նոյն . և պարտաւոր կորը տեան . և խնդրէ 'ի տնակ՝ զի մի և ինքն լիցի ըստ վիճակի նոցա . վասն որոյ առէ :

թ . Ա յ է հ ո ր բ ա ր ե ն ե ր ը ն դ ա մ դ ա ր ի լ ո ւ ս լ ա ն ի ն ի մ , և մ ի ը ն դ
ա ր ս ա ր ի տ ե ն ե ր զ ո ւ ս լ ա ն ս ի մ :

Ա յ ս բ ա ն ը ս տ ա մ բ ա ջ ի ն մ ա ս ի ն վ ե ր ա ծ ի ա ռ ա յ ն ո ս ի կ ,
յ ո ր ո ց մ ի ջ ի գ ե գ ե ր է ր գ ա ւ ի թ , ա յ ս ի ն ք ն ա ռ ա մ ն չ ա ւ ս տ ա ,
զ օ ր ս և կ ո չ ե ա ց 'ի վ ե ր ո յ 'ն ա ն ի ր ս և ա ն ո ր է ն ս ,
շ ա ր ս և ա մ ն պ ա ր ի շ ա ս ո ւ . և ա ս ա ց թ է ո չ ն ս տ ա յ ց ը ն դ ն ո ւ
ս ա . և ն : Ի ս կ ը ս տ ե ր կ ր ո ր դ մ ա ս ի ն 'վ ե ր ա թ ե ր ի ա ռ
ս ա ւ ո ւ դ և ա ռ ա ր ս ն ո ր ս . ո ր ք է ի ն ա ր ք ա ր ի ւ ն ա չ ե ղ ք
ծ ա ր ա ւ ի ք ա ր ե ա ն ն գ ա ւ ե մ ի : Ա յ ս ա յ ա ր ա ջ ի ն ն հ ա յ ե
լ ո վ ա ս է :

Ա յ է հ ո ր բ ա ր ե ն ե ր ը ն դ ա մ դ ա ր ի լ ո ւ ս լ ա ն ի ն ի մ : Կ ո ր ո ւ ս ա ն ե լ
ա յ զ օ ք 'կ ո ր ն ա կ ի կ ա ր է լ ի ն ե լ . ը ս տ ա մ բ մ ն ա ւ ո ր ի ն և ը ս տ
հ ո վ ե ո ր ի ն . ը ս տ ա մ բ մ ն ա ւ ո ր ի ն յ ա յ ն ժ ա մ մ ի ն ի , յ ո ր
ժ ա մ մ թ ո ղ ու ա ն դ զ ո ր ա ն ի ն ա մ ը ս տ ա ր ա ք ի ն կ ա ր ե ո ր
ի ր ա ց , յ ո ր մ է կ ա ս կ ա ծ ե լ ո վ մ ա ր գ ա ր է ի ն ա զ ա յ է զ ա ծ .
մ ի թ ո յ լ տ ա շ ե ս ի ն ձ ա ս է 'զ ր կ ե լ ո վ 'ի հ ա յ ր ա կ ա ն ի ն ա ս
մ ո ց ք ո ց կ ո ր ն չ ի լ ը կ ո ր ս տ ե ա ն ա մ բ ա ր շ տ ա ց , կ ա մ մ ի ո ր
պ է ս կ ո ր ն չ ի ն ա մ բ ա ր ի շ տ ք 'ը ս տ ն ո յ ի ն կ ո ր ո ւ ս ց ե ս և զ ի ս .
կ ա մ մ թ է մ ի ա ն տ ե ս ա ր ա ց ե ս զ ի ս . ա զ ա թ է ո չ ո ր
պ է ս կ ո ր ն չ ի ն ա մ բ ա ր ի շ տ ք 'ն ո յ ն պ է ս կ ո ր ն չ ի մ և ե ս :
կ ա մ մ ո ր ա ռ ա ւ ե լ և ս հ ա մ ա ձ ա յ ն է մ տ ա ց բ ա ն ի ն , մ ի
թ ո ղ ո ւ ց ո ւ ս զ ի ս մ ն ա լ 'ի մ է ջ ա մ բ ա ր շ տ ա ց , զ ի ը ն դ ն ո
ս ա մ ն ա լ ո վ ը ն դ ն ո ս ա կ ո ր ե ա յ ց . կ ա մ մ ի մ է ջ ն ո ց ա զ ե
զ ե ր ե լ ո վ 'ի մ ի ջ ի ն ո ց ա կ ո ր ե ա յ ց , ո ր պ է ս թ է և ե ս մ ի
'ի ն ո ց ա ն է ի ց ե մ :

Ա ս տ հ ո վ ե ո ր ի ն յ ա յ ն ժ ա մ մ ի 'յ ո ր ժ ա մ ա ն դ ա մ ի ո ր ի ն է
յ ո ւ մ ե բ է զ ն ո ր հ ս ի ւ ր վ ա ս ն ա ն ա ր ժ ա մ ն գ տ ա ն ե լ ո յ ն ո ր ս
ա յ ն մ 'շ ա ր ու թ է ի ր ո ւ լ . և ա յ ն ու թ ո յ լ տ ա յ կ ո ր ն չ ի լ
ն մ ա յ ա ւ ի տ ե ա ն ը ս տ կ ո ր ս տ ե ա ն ա մ բ ա ր շ տ ա ց : Ճ է յ ա յ ս
մ ի տ ս կ ա մ ի ա ս ե լ . մ ի բ ա ր ձ ց ե ս յ ի ն է ն զ ն ո ր հ ս ք ո յ . և
մ ի թ ո յ լ տ ա շ ե ս ի ն ձ ա մ բ ա ր շ տ ի լ 'ի մ է ջ ն ո ց ա զ ե
զ ե ր ե լ ո վ 'ի մ ի ջ ի ն ո ց ա կ ո ր ե ա յ ց , և վ ա ս ն ա մ բ ա ր շ տ ե լ ո յ ս ը ն դ ն
ս ի ն կ ո ր ն չ ի լ :

Ա յ լ ա յ ս բ ա ն յ ի ն ք ե ա ն մ տ ա ծ ե ա լ 'զ ն ի ի ր ք հ ե տ ե ո ւ .
թ ի ւ ն չ ո ր ր ո ր դ և հ ի ն գ ե ր ո ր դ հ ա մ ա ր ո յ ն . զ ի ո ր ո վ շ ե տ ե
ա ս ա ց յ ա յ ն ս * ո չ ն ս տ ա յ ց ե ս յ ա թ ո ս ս ն ա ն ր ա ց || . և ն :
Ա յ ս ո յ ի կ հ ե տ ե ե ց ո ւ ց ա ն է . ո ր ե մ ն ա ս է , մ ի ա ն տ ե ս
ա ռ ն ե ր զ ի ս 'մ ն ա լ ը ն դ ն ո ս ա , և ի ր ե լ զ ն ո ս ա լ ի ն ե լ ա ն .

արժան մասնելց 'ի տուն քոյ , և իբրև զնոսա կորըն-
շիլ ընդ նոսա : Օ այս այսպէս եղեալ՝ առաջի առնե-
և զերկորդն , այսինքն զու կորնիդին ընդ սաւուղեանս
ասելով :

|| Ե - Ք չնդ արս արի մահելց պէտաս իմ : Ե յախնքն մի կո-
րուսաներ զիս ընդ սաւուղայ , և ընդ արս նորա՝ որք
են արժանի կորստեան . զի են արք արիւնահեղք ,
սպարտաւոր անմեղ արեանց , զի կոտորեցին զքահա-
նայս տն վասն իմ . (ա . թագ . իր . 18 .) և այժմ
պնդեալ են զհետ իմ սպանանել և զիս . (ա . թագ .
իր . 15 .) Ե յս բան ևս է իբր զլիսաւորումն առաջին
համարոյն , զի որովհետեւ անդ զիմեայ առ ած իբրեւ
առ դատաւոր՝ իրաւունս առնել 'ի մէջ իւր և 'ի մէջ
սաւուղայ և արանց նորս , աստ յաղտամնս զլիսաւորէ
զբանն . որպէս թէ ասէր . մի դատապարտեր զիս տէր ,
որպէս ունիս դատապարտել զարս արիւնահեղս :

Եստանօր պարտ է քննել և զայս . զի յառաջին համ-
ուած այսր համարոյ եդ՝ շանչն իմ . իսկ յերկորդումն
պէտաս իմ . երկորին ևս թէպէտ իմ նոյն կարգին , և
գնին փոխանակ բառիդ չի . բայց որովհետեւ ամբարձ-
տութիւնն հայի 'ի կորուստ անձին՝ այսինքն հոգւոյ .
իսկ արիւնահեղութիւնն 'ի բարձումն կենաց , նմին իրի՝
յառաջնումն ասաց * մի կորուսաներ ընդ սմբարիչոս
, զանձն իմ . այսինքն զհոգի իմ . (զօրմէ տես ասղ .
իր . 1 .) և յերկորդումն եդ . մի կորուսաներ * ընդ
արս արիւնահեղս զկեանս իմ . Օ այսուիկ եղեալ՝
յաւելու ասել :

Դ . Ե րայ յետք ի-բէանց յանօրէնութենէն . և ոչ նոյն լու է
կաշուուք :

Եստանօր բառս որո՞ ոչ յարաբերէ ուղղակի զվերոյ
զըեալսդ՝ այսինքն զամբարիչոս և զարիւնահեղս , այլ
զայնոսիկ՝ զօրս յարէ զինի . որպէս թէ ասէր . մի կո-
րուսաներ զիս նաև ընդ այնոսիկ , որոց ձեռք յանօ-
րէնութեան են . և մի ևս ընդ այնոսիկ՝ որոց աջ լի է
կաշառօք . Ե րդ այս բան թէպէտեւ որոշակի և ուղ-
ղակի առ այսպիսիս հայի , բայց սոքիսմբ սնուղղակի
'ի մէջ բերին նաև այնոքիկ՝ զորս յիշեաց մարգարէն .
'ի վերոյ :

մարդյ հայի 'ի հեթանոսա ըստ չար պաշտաման նոցա .
զորս և յառաջագոյն կոչեաց անօրէնս , և ասաց թէ
ոչ մտից ընդ նոսա : Խակ երկրորդն հայի 'ի թշնամիս
իւր որբ կաշառօք բանից զրգուեին զաւուղ ընդդէմ
իւր . խօսելով նախ զաւաշնոյն ասէ :

|| բայ յետ՝ իւրեանց յանօրէնութէն . Առքօք սկզբնաբար
(որպէս ասացաք) նշանակին հեթանոսք , զի ձեռք նո-
ցա , կամ գործք նոցա շաղախեալ են յանօրէնութէն 'ի
մատուցանել նոցա զպաշտօն ածային առ ածս սուսա .
նոյնպէս անօրէնութիւն է և համբարձումն ձեռաց նո-
ցա առ ածս այնպիսիս . նմանապէս անօրէնութիւն է
և տալ նոցա ձեռօք իւրեանց նուեր ինչ չածցն . բայց
առաւել ևս մեծ էր նոցա այն անօրէնութիւն , որով
զոհէին չածցոց զկենդանի մարդիկ , զուստերս և զդրո-
ւերս , ևս և զանձինս իւրեանց . որպէս և ցարդ իսկ
զործեն զայս 'ի հնգկաստան , յափրիկէ , և յամե-
րիկա :

Այս բան կարէ հայիլ և առ ու և իցէ մարդ՝ որոյ ձեռք
յանօրէնութէն . այսինքն գործօղ են անօրէնութէն .
|| ըստ այսմ բարիւդ յետ՝ ցուցանի այն ինչ որ իցէ
նշանակիւ գործոյ . զի որովհետեւ ձեռքն է գործի գոր-
ծելոյ , կամ գործի գործողին , առ ՚ի ցուցանել զգոր-
ծօղս անօրէնութէն զբառուդ յետ՝ 'ի մեջ բերէ . այնովէս
զի թէ և չէր եղեալ զբառուդ յետ , տակաւին նոյն մնայր
նշանակութիւն բանին . որպէս թէ եղեալ էր՝ մի կո-
րուսաներ զիս ընդ այնոսիկ՝ ոյք գործեն զանօրէնու-
թիւն : Օ այսոսիկ եղեալ խօսի և զայնցանիկ՝ որք թըշ-
նահութք էին ընդ ինքն , յասեն :

|| Ե՞ւ ոչ նոյն լի է իւշտու : Երրակի լինի կաշառել .
նախ՝ բանիւք . որպէս յորժամ ոք աղաւանօք կամ
քաղցրաբանութք , համոզմամբ կամ քսութք յինքն
ձգէ զայլ ոք , առ ՚ի կատարել զայս ինչ կամ զայն .
և կամ առ ՚ի համոյ դտանիլյաց նորա , և կամ առ
՚ի ընդունիլ չնորհս ինչ ՚ի նմաննէ : Երկրորդ՝ ծառաց-
ութք իւրիք . որպէս յորժամ ոք պաշտօն մատուցանե-
ումեք , կամ սէր ցուցանի առ նա . և կամ զայս ինչ
և զայն ինչ առննէ ՚ի պատիւ նորա , որպէս զի և նա ա-
րասցէ զիստմ իւր , կամ յօժարեսցի յայս ինչ և յայն .
կամ պաշտպանեսցէ նմա յամբարջութէան իւրում . և

կամզի և նա փոխարէն ցուցցէ սէր առ ինքն : Երբորդ՝
ընծայիւք կամ զրամովք , զորս մատուցանէ ոք այ-
լում առ 'ի հաճել զմիտս նորա , և հակեցուցանել
զկամս նորա առ ինքն՝ կամ առ այն՝ զոր կամի : Եւ
թէպէտ այս յետինս միայն ասի տիրապէս կաշառք ,
բայց առաջինքն ևս իբր կաշառք համարին . և որպէս
տեսանեմք՝ հազիւ գտանի ոք այժմ յաշխարհի , որ
այդպիսեօք ոչ վարիցի :

Երդ յայտ է թէ ծառայք և բարեկամք սաւուղայ՝
կամելով հաճոյանալնմա , և չնորհս գտանել 'ի նմա-
նէ՝ առ արտաքս գութ և սէր ցուցանէին նմա , և բա-
զում անզամ քսութիւն առնելով մատնէին նմա զդա-
ւիթ . որպէս յայտ է (ա . թագ . իթ . 9 : իդ . 1 . և
19 : իդ . 2 : իդ . 1 :) մինչեւ ասելնմա առ նոսա . * օրհ-
նեալ էք դուք 'ի ոռնէ , զի ցաւեաց ձեզ վասն իմ || .
(ա . թագ . իդ . 21 :) Եւ զի այս գործք նոցա էր հան-
գոյն կաշառաց 'ի ձեռս նոցա , յայն սակս ասէ : Եւ
աջ նոցա լի է հաշառոտ . այսինքն աջ բարեկամացն սա-
ւուղայ և ծառայից նորա՝ ոչ յայլ ինչ բերին՝ բայց
եթէ 'ի կաշառել զսաւուղ՝ զի կորուսցէ զիս :

Եյս բան որպէս և առաջինն՝ հայի նաև առ այնոսիկ ,
որք ո՛ և իցէ կաշառօք կուրացուցանեն զայլս առ 'ի
ձգել զնոսա 'ի կողմն իւրեանց , կամ առ 'ի դատաս-
տան անիրաւ դատել , կամ առ 'ի լռեցուցանել զնոսա
'ի խօսելոյ զանօրէնութեանց իւրեանց , ևն :

Օ աջն բերէ՝ զի հասարակօրէն կաշառատուք աջու-
ձեռամք մատուցանեն զկաշառմն : Եւ յաւելու ըզ-
բառդ լի . առ 'ի ցուցանել՝ թէ անդադար և յամե-
նայնի կաշառատութք վարելով՝ և կամ լիովի կա-
շառս տալով՝ յամենայնի ջանան 'ի չար կամս իւրեանց
հակեցուցանել զայլս :

Վարթ է զայս բան մեկնել նաև 'ի վերայ կաշառա-
ռուաց . ըստ որում և աջ նոցա կաշառօք լցեալ լինի :
Եւ սոքա առաւել գտանին յանօրէնութեան քան զկա-
շառատուս . զի գործադիր լինին չարեաց . և սակաւք
գտանին 'ի մեծամեծաց՝ որք հրաժարիցին յառնլոյ
զկաշառս . ուստի և հազիւ ուրեք գտանեմք 'ի զիրս
արհամարհօղ կաշառաց : Որպիսի եղեւ դեմետրիս
փիլիսոփայ . քանզի յորժամ խոստացաւ նմս կալի-

կոս կայսր Երկերիւր տաղանդ առ 'ի առնել ինչ ընդ-
դէմ արդարութեան՝ զոր կամէր, ասաց, Եթէ կամի
փորձել զիս, տացէ ինձ զթագաւորութիւն իւր. իբր
թէ ասէր, Եթէ զթագաւորութիւն իւր ևս տացէ ինձ
ոչ կարեմ կաշառօք անիրաւիլ:

Լամբ" . աջով իմանայ աստ զներքին անիրաւ խո-
կումն, իսկ ձեռօք զարտաքին մարդոյ անօրէն գործս.
ներքինն ասէ * կաշառ առնու զհեշտութիւնն, և տայ
,, փոխանակ զծառայելն կամաց մարմնոյս || :

Յիշատակեալ մարդարէին զայսոսիկ զամենեսին՝ այս-
ինքն զկաշառառուս, զամպարիշտս, զարիւնահեղս
ևն . և ցուցեալ թէ չար է գործ նոցա և կատարած
նոցին, անմասն և անկցորդ ցուցանէ զինքն գործոց
նոցա, և անձանց նոցին . վասն որոյ և հետեւցուցա-
նէ ասելով:

Ժամանակ . **Յամբառելէ իմում գնացի.** Քրիեա զիս պը . և
ողբեա ինչ :

Այս այն է՝ զոր ասաց 'ի սկզբան սաղմոսիս . և աստ
կրկնէ զայն առ 'ի կատարումն միւս այնը ինդրոյ՝ զոր
եղ 'ի համարն 9 . և 10 . մի կորուսանել զինքն ընդ
ամբարիշտս, ևն . 'ի դոսին հայելով յաւելու ասել
զայս :

Յամբառելէ իմում գնացի. Քրիեա զիս պը, և ողբեա
ինչ : Որպէս թէ ասէր . աղաչեմ զքեզ՝ մի կորուսա-
ներ զիս ընդ ամբարիշտս . քանզի ոչ զնացի ես ըստ
գնացից նոցա չարաց, այլ ամբծութք, այսինքն ան-
մեղութք, ես և ումեք չար ոչ հատուցի : Ուրեմն
Քրիեա զիս պը . այսինքն արա զի մի կորեայց ընդ նոսա .
այլ փրկեցայց : Իսկ Եթէ ունիցիմ ինչ յանցանս, և
կամ Եթէ կայցէ յիս մեղք, զոր ոչ ճանաչեմ, թո-
ղութիւն ինդրելով աղաչեմ, ողբեա ինչ . և ողորմութք
քով քաւեա զմեղս իմ:

Այլ թուի թէ զայս ասէ դաւիթ՝ առ 'ի ինդրել
զաղատութիւն 'ի ձեռաց սաւուզայ (ըստ ասելոյ մեր
'ի համարն . 1 .) որպէս թէ ասէր . ես անմեղութք
գնացի ընդ նմա . և յոչ դաղարել նորա 'ի հալածե-
լոյ զիս՝ առ քեզ դիմեցի . և արդ դու տէր Քրիեա զիս .
այսինքն ասլրեցօ զիս 'ի ձեռաց նորա . և Եթէ չիցեմ

Ես արժանի այսմ փրկութեան՝ ողբեաց ինչ . այսինքն ըստ քումեր ողբանութեան արա առ իս զնորհս զայս՝ զի զերծայց 'ի ձեռաց նորա . և անկասկած մնացեալ՝ աներկեան ժամանեցից և մոից 'ի տաճար քոյ . | ասեմ . յապառնին ընթեռնու զգնալն . և գրէ այսպէս . * ու ասէ թէ գնացի , իբր զեղեալ . այլ թէ գնացից . քոյովդ զօրութք . | ասկ թէ առ ինչ իցէ արս ամենայն խնդիր մարգարէին՝ բովանդակէ 'ի վերջ ըանիցս ասելով :

ԺՇ . || Պոն էմ հայցէ յա-շշու-նէ . յէ էտեցիս մեծո օրհնեցից վել :

Այս եղանակ խօսից , ո՛չ իմն է այնպիսի՝ որով նշանակի կալ ուրեք հանգատեամբ՝ առանց տատանելոց աստ և անդ . զի որովհետեւ ոտամբ լինի տատանիլ անձին՝ փոխանակ զանձն զնելոյ՝ զնէ զոտն . և այս ըստ այնմ ձեռ Ճարտասանից՝ որ ասի խելամտութիւն . որով մասն փոխանակ բոլորին դնի , զօրօրինակ ոտքն փոխանակ բոլոր մարդոյ . յոր միտս ասի 'ի գործս առաքելոց . (է . 9 .) * աչա ոտքն՝ որք թաղեցին զայրն զ քոյ . | այսինքն աչա թաղօղքն : | Աստ այսմ առեալ խօսի աստ մարգարէն , յասելն :

|| Պոն էմ հայցէ յա-շշու-նէ : | Այսինքն է , արա զի մի մուրեալ շրջեցայց աստ և անդ , երերեալ և տատանեալ . այլ մնալ անդ՝ ուր լիցի ինձ ուղղութեամբ կալ այսինքն է առանց տատանման կալ , կամ հանգիստ կալ , կամ թէ անդ կալ՝ որ է ձանապարհ ուղիղ , և ձանապարհ յայտնի , կամ այնպիսի ձանապարհ՝ որ ուղղութեամբ տանի 'ի տաճար քոյ , կամ 'ի փառս արքայութեան քոյ . | Եւ զի որպէս ասացաք՝ ոտիւք լինի զնալ զայն բերէ 'ի մէջ : | Եւ թէպէտ եզակի դնէ՝ ո՞ն իմ , բայց այն է փոխանակ յոգնականի . որպէս է տեսանել և յայլ տեղիս . զօրօրինակ * | Եւ զիրգն՝ որ 'ի քեզ և փափուկն յոյժ . որոյ ու իցէ ո՞րին ի-բոյ (այսինքն ոտից իւրոց) առեալ զփորձ զնալոյ 'ի վերայ երկրի . (բ . օր . իշ . 56 .) | Եւս և * 'ի ժամանակի՝ յորում սիսալեսցին ոտք նոցա . (բ . օր . լիք . 35 :) սոյնպէս է և յայլ բազում տեղիս : | Ասկ պատ-

Հասու եզակի գնելոյ՝ և ցուցանել զառաւելութիւն հաստատութե՛ն՝ ի կալն անդ յուղղութե՛ն մինչ ոչ ևս գնալաստ և անդ՝ ի թիւր ընթացս . որովհետեւ միով ոտամբ ոչ լինի ընթանալ :

Վայս ամենայն հայի՝ ի բառական մեկնութիւն ըստ ձառին . Խակ ըստ իմաստից բանին՝ բառիւս ոգն նշանակի աստ ոտք հոգւոյն , այսինքն ստորին մասն հոգւոյ՝ ըստ յօժարելոյ առ զգայական իրս . զի հոգին ըստ այնմ գոլոյ՝ որ է՝ այսինքն ըստ լինելոյ պարզ բանական անկախ ՚ի մարմնոյ , ասի ունիլ զյօժարութիւն ըստ վերին մասին : Խակ ըստ տեսակաւորելոյ զգգայութիւնս՝ ասի ունիլ զյօժարութիւն ըստ ստորին մասին : Վայս մասն է՝ որ թելազրութե՛ զգգայութեց հանապաղ բերի յայնպիսիս՝ որք զգգայութեանց են ախորժական . մանաւանդ որք թիւրքն են և խոտորեալ յուղղութե՛ն բարուց : Վայս ուսն կոչի . մի՛ վասն ստորին լինելոյ . և երկրորդ վասն սովոր ընթանալոյ վերին մասին ՚ի հաջոյս զգգայարանաց :

Վարդ փափաքելով մարգարեին յուղղութե՛ն ունել զսոյն զայս՝ ինողը ՚ի տնեւ և ազաւէ . արած ասէ՝ զի ոսն իմ այսինքն ստորին մասն հոգւոյ՝ մի խոտորեսցի ըստ զգգայութեանցս ՚ի թիւրն . այլ որ ուղիղն է՝ ՚ի նոյն բերիցի , և ՚ի նոյն հաստատեսցի :

Հայս միտոս իմանայ և չնորհալին ՚ի թուղթն զբեալ առ միջադետս . ուր ՚ի մէջ բերեալ զայս բան , ասէ . * Վարմնոյս ոտիւք յուղղութե՛ն կալ , այսինքն անշարժ . յօդուածովք և առանց կրկնելոյ՝ անհնար է . այլ . թէ էր ևս հնար՝ ոչ պահանջեն օրէնք այ զայս . առնել . որովհք իմանասիք ոչ զմնարմնոյս ասել ոտից . այլ զհոգւոյն ուղղել և անսայթաք կալ ՚ի պատ . ուիրանս այ :

Վանական վարդապետ (՚ի մեկն . յոթ . գլ . լա . 7 .) ոտամբ իմանայ զմարմինն . և ըստ այսմ կամի ասել . մարմինն իմ մի խոտորեսցի և մի խոտորեցուսցէ զհոգիս յուղղութենէ . այլ հնազանդելով հրամանաց հոգւոյն ուղիղ մնասցէ և ուղղութե՛ գնասցէ : Վայս վարդապետ ոտիւք իմանայ աստ զվարս . Խակ լամբ՝ . զարտաքին ընթացս առաքինութեան . ՚ի սոսին ասէ ուղղեցայց . որով և արժանի զտայց՝ ոչ

միայն ուղղութք կալ, այլև ուղղութք սրտի. և ուղղութք բանից օրհնել զքեզ՝ ՚ի մէջ ուղղոց: ՚Աւ առայս յարեւ:

Հենէդէշիւ հէծս օրհնեցիւ ոչեղ: ՚Ճիւնշիւ ասելով իմանայ ասատ զժողովուրդ տն համահաւաքեալ՝ ՚ի մի, առ ՚ի պաշտօն մասուցանել տն: և զի խրայէլացիք ՚ի սոյն սակա ժողովին ՚ի տաւն տն: և ժողովումն նոցալինէր մէծ մանաւանդ ՚ի զատկի, ՚ի պէնտէկոստէի, և ՚ի տօնի տաղաւարահարաց, վասն այնորիկ և հէծկուշ ըստ մերումն, յատելն: *

”օրհնեցից զքեզ”:

Ըոգնակի զնէ յէնէդէշիւ: և այս ըստ երկուց, ըստ ցուցանելց զբազմութիւն ժողովրդեանն. որպէս թէ ասէր. արա՞ զի կացեալ՝ ՚ի տաճարի քում՝ օրհնեցից զքեզ՝ ՚ի մէջ այնչափ բազմութեան ժողովրդոց քոց՝ զիք ժողովին անզը: ՚Ճըկրորդ՝ ըստ հայելց՝ ՚ի բազմութիւն եկեղեցեաց, մանաւանդ ՚ի նորս եկեղեցի՝ յորում են բազում մանաւոր եկեղեցիք մեծամեծք. և ՚ի սոսին զօրհանապազ օրհնի ած օրհնութքըն դաւթի: որով և լրանայ փափաք նորա, ՚ի ցանկալ նորա օրհնել զած յաւիտեան:

Բարոյապէս՝ այս բան կարէ հայել յայնոսիկ արդարս, որոց կեանք բարձրացեալ է յեկեղեցիս մեծս՝ այսինքն յերանեալս և ՚ի հրեշտակս՝ զրք են յերկինս. և ինքեանք՝ որ կենցաղավարին յաշխարհի՝ զրեթէ ոտամբ. միով կան յուղիղ գործս, առ ՚ի ծառայելաց և շահել զվարձս: Ուստի ասէ սարդիս չնորհալի (՚ի մեկն. ա. յովէ. ա. 3. ձառ. ա. յորդ.) * գարշաւ, պարօքն միայն էին (սրբ) յերկրի. և այլովն ամիս, յերկինս շրթէին ըստ պօղոսի ձայնին. մեր քաղաք, քավարութիւնն ասէ յերկինս է: ՚Ճւ տէրն ասաց, դուք * չէք յաշխարհէ: (յովէ. ժէ. 49:) ՚Վրդարե յաշխարհի էին, այլ չէին յաշխարհէ: ՚Ի վեր յերկինս ձկտէին և ՚ի նոյն ժամանել փութային, և ՚ի նմին ժառանդել ցանկային զերանութիւնն յաւիտենական:

УЧЕБНОЕ ПОСОБИЕ

Վանդը աղօթից քաջալերութեան անձին՝ ի վտանգ փորձութեան էզելոյ . և փափաք տեսանելոյ զտունն ո՞ն , և վայելելոյ ի նման : Այս և մաղթանք օգնութիւն գտանելոյ առ յայց , և պաղաստանք պաշտպանեալ լինելոյ ՚ի նմանեւ :

ՊԵՐԵԿ ԳԻՒՐ

Առաջնու է բարեկամ գիւղը և օծեալ:



ԱՅՍ Ա ԵՐԵՎԻՔԻ ՅԵՄԵԼԵՐԸ,
սաղմոսս մեր միակերպ զնի . և թէպէտ
յոմանս փոխադրութեամք զրի՝ այսինքն է՝
մնչ չ օծեալ էր . բայց այդ ոչ ինչ է . իստ այզմ զնի
և 'ի լստինս և յայլ քանի մի թարգմանութիւնս . իսկ
յոմանս՝ սաղմու է բարեկամ առանց զնելց զբառուդ գիւղ
չ օծեալ էր . որպէս և 'ի վեցիջեանսն : Հերբայականն
զնի միայն բառոդ է բարեկամ . որոյ վասն ասեն ոմանք՝
թէ զայն յաւելուած՝ եօթանասունքն եղին . հայե-
լով յընթացս բանից սաղմոսիս , որը պատշաճին
դաւթի յառաջ քան զօժանիլ նորին :

Այս յայտ է թէ դաւթիթ երրակի օծաւ թագաւոր .
մի 'ի սամուելէ 'ի տան հօր իւրոյ յեսսեայ 'ի բեթզէ-
հէմ (ա . թագ . ժկ . 43 .) որով ստացաւ զիրաւունս
առ իրն և ոչ յիրն . իբր զի ստացաւ զիրաւունս թա-
գաւորութեանն իսրայէլի , այլ ոչ ժառանգեաց զայն
նոյնժամանն : Երկրորդ՝ յետ մահուն սաւուղայ 'ի
քերրոն 'ի վերայ տանն յուղայ ևեթ (բ . թագ . բ .
4 .) Երկրորդ՝ յետ մահուն յերտութեայ որդւոյ սա-
ւուղայ 'ի նոյն քաղաքի 'ի քերրոն 'ի վերայ ամենայն
իսրայէլի (թագ . ե . 3 .)

Օ այսուիկ նշանակեալ ասելի է թէ այն օծութիւն որ
յիշատակի 'ի վերնազրիդ , ոչ է առաջինն , այլ երկ-
րորդն . վասն զի նախ քան զառաջին օծութիւնն չև էր
առեալ զաւթի զշոգի սաղմոսանուագ մարդարէու-
թեան . այլ յետ այնր օծութե . որպէս յայտ է ('ի ա .
թագ . ժկ .) ուր զրի թէ * խաղաց հոգի առն 'ի
,, վերայ զաւթի յօրէ յայնմանէ (առաջին օծութեն)
,, և առ յապա || : Ուստի և յատելն աստ . մնչ չ էր
օծեալ , պարտ է իմանալ այսպէս . յորժամ տակառին
չէր օծեալ երկրորդ օծութե 'ի վերայ տանն յուղայ ,

այլ առաջին օճութեր միայն :

Այսպիսի կարդ բանի և յայլ տեղին սուրբ զրոց տեսանի, որպէս յատել տեսան ցվետրու * մինչև հաւու խօսեալ իցէ՝ երիցս ուրացիս զիս || . (մատ . իշ . 34.)

յայս բան, զօրութեր իմացեալ լինի բառդ երէնց, որպէս թէ եղեալ էր . * չե իցէ հաւու երկիցս խօսեալ զի զու երիցս ուրացիս զիս || . որպէս զնեւ մարկոս . (ժդ . 72.) Ոյնպէս է իմանալ և աստ :

Խակ թէ երբ արդեօք և յինչ առթէ իցէ ասացեալ դաւթի զայս սաղմոս, բազումք բազում ինչ զըեն . ոմանք թէ զայս ասաց յետ մեկնելոյ նորա յերեսաց սաւուզայ, և զնալոյ 'ի նոմբա քաղաք քահանայից առ աքիմելք քահանայ, որոյ աղագաւ սպան սաւուզ զարիմելք, և զայլ բազումք քահանայս՝ ոգիս երեք հարիւր և հինգ . * և զնամբա քաղաք քահանայնայից եհար ('ի ձեռն գովեկոյ) սրով սուսերի յառնէ մինչև ցկին || և՛ . (ա . թագ . իս . և իշ . 18.)

Ոմանք ևս ասեն . թէ զայս ասաց դաւիթ յետ այնք դիպուածոյ՝ յորժամ եմուտ 'ի զօրս սաւուզայ զիշերան 'ի ննջել նոցա . և էառ զգեղարդն սաւուզայ 'ի մարից նորա, և զլուժ ջրոյն (ա . թագ . իշ . 7 = 13 .) Եշ գուցէ յայս զիշերային վտանգ հայելով ասէ 'ի համարն . 1 . * Տէր լցոս իմ և կեանք իմ .

ևս յումմէ երկեայց || և՛ :

Այս ևս ոմանք 'ի բարունեացն հրեից՝ որք ասեն թէ զայս սաղմոս ասաց դաւիթ մօտ 'ի ժամանակս ծերութեան իւրոյ՝ յերգնուն առ նա զօրավարաց նորա՝ մի ևս ելանել նմա 'ի պատերազմ. վան զի զրի ('ի ք . թագ . իս . 17 .) թէ 'ի վտանգի նորա 'ի մարտի և 'ի լքանին, օգնեաց նմա * արեսսա որդի շարուհեայ, և էհար զայլազգին (որոյ անուն է արեսսա 'ի յեսթե) և սպան զնա : Հայնժամերդուան արք դաւթի և ասեն . ոչ ևս ելցես ընդ մեղ 'ի պատերազմ. և ոչ շիշուացես զձրագդ իսրայէլի : Եշ նորա զայս լուեալ, ասացեալ իցէ . * Տէր լցոս իմ և կեանք իմ, ևս յումմէ երկեայց . . . թէ յարիցէ 'ի վրի իմ ձակաստամարտ || :

և՛ : Այս կարծիք կարէ ձշմարտիլ հայելով յառաջին համարսն սաղմոսիս, բայց ընդդիմ ելանէ, յաջորդ բանիցն :

Ոմանք ևս պնդեն թէ զայս ասացեալ իցէ՝ հայելով
՚ի ժամանակս ապագայ զերութեանն բարելացւոց . և
որք զայս դնեն , ոմանք ՚ի նոցանէ համարին թէ զայս
սաղմոս յօրինեալ իցէ հոգեկիր ղետացւոյ ուրումն ՚ի
փափաքիլ իւրում տեսանել վերստին զվայելութիւն
տան տեառն : Այս կարծիք երեխ բռնադատել զմիտս
սաղմոսիս , և զարտուղիլ յընթացից սորա :

Վպա հաւանականագոյն է ասել՝ թէ զայս սաղմոս
յօրինեալ իցէ դաւիթ՝ ՚ի վտանգի հալածման իւրոյ՝
որով հալածիւր ՚ի սաւուղայ , հայելով ՚ի ժամանակն
յայն , յորում էր յանապատին մառնայ (ա . թագ .
իդ .) և թէ զայս ասացեալ իցէ ոչ միայն ՚ի դիմաց
իւրոց , այլ և ՚ի դիմաց իւրաքանչիւր արդարոյ ՚ի փոր-
ձութիւնս պաշարելոյ , և փափաքանօք տեսութե՛ տան
նն բորբոքելոյ . և յաւետ ևս տենչանօք երկնոյնոյն
և յաւիտենականին . վասն որոյ և մեք ըստ այսմ ու-
նիմք մեկնել զայս՝ հայելով ՚ի վիշտս յայն՝ զոր կրէր
դաւիթ՝ ՚ի հալածման անդ , և ՚ի փափաք նորա զոր ու-
նէր առ տեսութիւն տան նն :

Բ Ե ՞ Ե

ա . **S**էր լյա իմ է իւանչ իմ , ես յումի երիւայց . առ ապա-
-էն իւնաց իմոց , ես յումի դուշայաց :

Մ Ե Կ' Ա Ւ Թ Յ Տ Ի Ե

Վրդարե ոչ փոքր վիշտ է մարդոյ մնալ՝ ի խաւարի ,
առաւել ևս այնմ՝ որ երկոտն է . զի ոչ տեսանելով
նորա զորս ենն անդ՝ պէսպէս իրս նկարէ յերեակայուե
իւրում , և երկոտութիւննորա առաջի առնէ նմա զայն-
պիսիս՝ որք ՚ի վեր են քան զկար իւր և վտանգիչ կե-
նաց . յորոց ըմբռնմանէ սարսափի և սօսափիւն կրէ .
և վասն այնորիկ նկրտի լոյս գտանել : Դարձեալ՝ և
որ ՚ի պատերազմի է՝ կամ՝ ՚ի մահաբեր հիւանդութեան՝
տեսանելով զվտանգ կենաց՝ տագնապի ՚ի սրտի , զու-
ցէ կորուսցէ զայն՝ որով կեայ , այսինքն զկեանս :

Վրդ յորժամնեղութիւնք և փորձութիւնք , վիշտք և
հալածանք թնամեաց առաւել քան զչափն սաստկա-

նան , պատճառեն խաւար 'ի հոգին , ևս և վտանգ հոգեոր մահու . մինչև շուարիլ մարդոյ երկիւղիւ մեծաւ , և 'ի խաւարի անդ տեսանել՝ թէ զի՞նչ պարտ է առնել առ 'ի զերծուցանելոյ զանձն : Այլ եթէ յայս պիսի խաւարի և 'ի վտանգի՝ ծագեսցէ տէր զլոյս շնորհաց իւրոց 'ի հոգին , և ցուցցէ զօգնութիւն իւր . թէ և մնայցեն այն նեղութիւնք և փորձութիք , փարատի խաւարն այն . և հոգին պայծառ տեսանէ զոր արժան է ինքեան առնել՝ առ 'ի անվտանգ մնալոյ 'ի փորձութեանց անտի և 'ի նեղուեց՝ օգնականութիք տն . տեսանէ ևս՝ թէ այն փորձութիք ոչ եթէ վսասիչ են հոգւոյ կամ վտանգիչ , այլ օգտակար ևս : Օ այսը զփորձ առեալ մարգարեին յանձն իւր՝ և յանձն արդարոց ,

ըստ այսմ փորձոյ վստահի ասել :

Տեր լոյս իմ և իւանս իմ ես յո-մի երիւայու : Կամի ասել . 'ի խաւարիլ մտաց իմոց նեղութիք՝ տէր է լոյս իմ . և 'ի վտանգիլ հոգւոյս մահացուցիչ փորձութիք՝ տէր է կեանք իմ . զի՞ ևս երկեայց ես . և ով է որ զարհութեցուսցէ զիս :

Երդ ած լոյս ասի կրկնակի . մի՝ յինքեան , և մի՝ առայլս : Յինքեան լոյս ասի նմանութիք՝ վասն անսահման իւրոյ ամենապայծառ տեսութեան , իմաստութեան և գիտութեան , և վասն գոլոյ գերամաքուր ներգործութիւն ինքնագոյ իմացականութեան . վասն զի բանն իմացական գոլոյ նմանութիք լուսոյ բացատրի :

Եր այլս լոյս ասի պատճառաբար . և այս՝ կրկին օրինակաւ . մի՝ ներքին լուսաւորութիք մտաց , յորժամբանայ զմիտս , կամ իմաստնացուցանէ՝ ձանացել զիրն որպէս և է՝ թէ 'ի տեսականս և թէ 'ի գործնականս , թէ 'ի յաջողութեան և թէ 'ի ձախորդութեն . ոչ ամենեցուն միօրինակ , այլ ոմանց յաւէտ , և ոմանց նըւազ : Եւ երկրորդ՝ արտաքին լուսաւորութեամբ , յորժամբ յայտնի ցուցանէ զՃմարտութիւն ինչ բանիւք , կամ օրինակօք , և կամ այլով իւիք : Եւ ըստ այսմ կամ օրինակօք , և կամ այլով իւիք :

Եւ ըստ այսմ բառս լոյս՝ դնի փոխանակ բառիս լուսաւորութիւն՝ փոխանութեան ձեռվ . և այս ոՃ յաճախ է 'ի ոք զիրս , և 'ի բանս իմաստնոց . յորս փոխանակ ասելոյ լուսաւորիչ , երանացուցիչ , զօրացուցիչ . ևն . ասի լոյս , երանութիւն , զօրութիւն . ևն :

Արակես զլուսոյ ասացաք , սոյնպէս իմա և վասն կենաց . իբր զի կը կնակի ասի ած կեանք , յինքեան , և առ այլս : Յինքեան կեանք ասի՝ ըստ որում ինքն է ինքնագոյ անշարժ էն՝ շարժիչ ամի որք են : Վր որոյ ծանօթութիւն գիտելի է , զի կեանքն է ներդործականութիւն կամգոյաւորութիւն՝ հոգի ունօղ էակի ինքնին շարժողի անկախ ներքսապէս յու և իցէ մասնաւոր շարժողէ : Աւստի և տունկք ունելով հոգի տընկական որով ինքնին շարժին՝ ի տնկական գործս , ասին ունել զկեանս տնկականս . և գոյաւորութիւն նոցա ըստ որում են այսպիսի , տնկական կեանք կոչի : Այնպէս իմա և՝ ի զգայուն կենդանիս , և՝ ի մարդն .

ևս և՝ ի հրեշտակս , որք են հոգիք ինքնաշարժք : Վսացի * անկախ ներքսապէս յու և իցէ մասնաւոր շարժողէ || . զի թէպէտ մասնաւոր շարժողք կարեն նպաստել կամ տրամադրել , և կամ մատակարարել ինչ առ շարժումն կենդանական , որպէս արեգակն ՚ի տունկս և այլք յայլս . բայց առ ելուզումն կենդանական շարժման ներքսապէս ըստ որում է կենդանական՝ ոչ գործակցին նոքին , և ոչ ներգործեն . զի յայդ միայն նա հոսէ՝ որ է գոյացուցիչ կենդանութեան՝ կամ որ նոյն է , նա միայն՝ որ է առաջին շարժիչ : Վրդ ած ասի յինքեան կեանք կամ կենդանի՝ ոչ զի շարժի , այլ զի է առաջին շարժող անշարժ , կամ զի է ինքնազոյ հոգի ամենեին անփոփոխ , և ամի շարժիչ առանց շարժելոյ յինքեան :

Իսկ առ այլս ասի կեանք պատճառաբար . և այս՝ կը կին օրինակաւ , մի՝ տալով նոցա զկեանս , և մի ևս՝ պահելով զնոսա՝ ի կեանս կամ փրկելով՝ ի մահուանէ . և յայս միտս բառս հետու՝ դնի փոխանակ բառիս հենդանայուցիւն կամ պահպանիւն էնաց :

Վրդ յայս բան մարգարեին յասելն պը ըստ իմ և հետու իմ՝ բառքդ ըստ և հետու , առ այլս հայելով դնին , և կամ պատճառաբար , որպէս թէ ասացեալ էր . տէր է որ ըստաւորէ զիս . և նա ունի ՚ի ձեռին զկեանս իմ , և պահէ . ապա զի ևս երկեայց ես :

Այս ասէ ած լոյս իմ , այլ պը ըստ իմ . և այս վասն երկուց . նախ առ ՚ի խոստովանիլ թէ ինքն՝ միայն զածանաչէ իւր տէր՝ և զինքն ծառայ նորա , և ոչ ծառայ

օտարի : Եթերորդ՝ առ ’ի քաջալերել զանձն իւր և վստահացուցանել՝ թէ գտանէ զօդնութիւն յայ . զի եթէ ճշմարտիւ տէր է , ապա ըս որում նոր պաշտեալ ’ի ծառայէ իւրմէ՝ խնամէ զնա , և օգնական լինի նմա . ոչ թողու զնա խարխափիլ’ի խաւարի , և կամվտան գիլ’ի մահ հոգւոյ . զորոց խօսի ’ի ստորեւ :

Եւ թէալէտ առ ’ի զայն զայս յայտնել՝ յարմարա դոյն ևս լինէր յաւելունաե զբառդ իմ’ի վերայ բառիդ դր . և ասել՝ դր իմ . և ոչ սոսկ ’ի վերայ բառիդ ըս . բայց առանց այդը արձակաբար ասէ . դր ըս իմ . առ ’ի ցուցանել թէ ամի տէր է նա , և ամենիշխան նոր ամենեին անկախ . ուստի և ամ իրօք յամի վստահա նալի է առ նա : Հեթանոսք ’ի դիմել իւրեանց առ կուռս , ինքեանց սեփականելով յուսային ’ի նոսա : Անձք մեր (ասէին) օգնեն մեզ և փրկեն զմեզ . և ե թէ չգտանէին օգնութիւն ’ի նոցանէ , առ այլ ամս դիմէին , և կամ աղաչէին զօտարս՝ զի աղաչեսցեն զամս իւրեանց . մերքն բարկացեալ են ’ի վերայ մեր ասէին , և ոչ լսեն մեզ . թերեւս ձերքդ լուիցեն . որպէս արա բին՝ որք ընդ յովսանու էին ’ի նաւին . զի յետ աղա չելոյ զամս իւրեանց ասեն ցնա . * արի կարդա զտէր ամ քո || . (յովսան ամ . 6 .) քանզի կարծէին՝ թէ ո մանք յածոց յայս ինչ կարեն , և ոմանք յայն ինչ : Այլ որ ճշմարիտ ամսն է՝ ամի կարօղ է ինքնիշխան նորութեամք : Եւ առ ’ի զայս յայտնել մարգարէին՝ ոչ ամփոփէ զբէրդ անուն ասելով՝ դր իմ . այլ արձակա բար ասէ , դր . որով առաւելես վստահութիւն տայ անձին՝ յուսալ ’ի զօրութիւն նորա . առ ’ի չերկնչելոյ ուստեք . ուստի և յարէ :

Ե՞ս յո-հնէ երիւայց : Աստանօր բառս յո-հնէ՝ սկզբնաբար ’ի մէջ բերէ զանձն զայն յորմէ կարէր երկնչիլ . այսինքն զանձն նեղչին կամ թշնամոյն . և երկրոր դաբար զգործ երկեցուցին կամ նեղչին . այսինքն զու և իցէ նեղութիւն կամ փորձութիւն : Ասացի * սկզբնա բար || . զի մարգարէն ’ի նեղից իւր և ’ի թշնամիսն հայելով , ասէ զայս . ուստի և սկզբնաբար զայն դիտէ . բայց քանզի զօրութիւն բանից նորա հայի ’ի վտանգս նեղութեանց և փորձութեց , վասն որոյ ելկրորդաբար զայն ևս դիտէ . որպէս թէ ասացեալ էր . որովհետեւ

ուեր է լուսաւորիչ իմ և կեցուցիչ իմ, ով այլ այն իցէ, յորմէ ես երկեայց . կամ զի՞նչ կարասցէ առնել առ 'ի երկեցուցանելոյ զիս . ո՞ր փորձութիւն և կամ ո՞ր նեղութիւն զօրասցի նուածել զիս, ևն . Այս այն է զօր առէ առաքեալն . * Եթէ անձ 'ի մեր կոյս է, ով իցէ մեր հակառակ . (Հռովմ. ը. 31.) որպէս թէ առեր . Եթէ անձ է մեր պաշտպան, ով կարասցէ լինել խափան՝ յետս նահանջել զմեզ 'ի բարեաց, և ստիպել առ չարն :

Այլ զիտելի է՝ զի բազում անգամ որք ընտիքն են, 'ի նեղութիւնն և 'ի փորձութիւն թէպէտ և զանձ ունին իւրեանց պաշտպան և ձեռնտու՝ առ 'ի չանկանելոյ 'ի մեղս, բայց ոչ ունին զնա յայնժամ ինքեանց լոյս . կամիմասել, թէ 'ի փորձութիւնն անդ իբր 'ի խաւարի գորով երբեմն ոչ ընդունին յայ զլուսաւորութիւն մտաց, և զինգարձակութեանց անտի իբր բռնի յետս քարշիցին, զորոյ զօրինակն ունիմք յաւետարանի 'ի կոյրն բարտիմէոս . որ գորով 'ի խաւարի կուրութեան աղաղակէր առ քո . * յա որդի գաւթի ողօրմեան ինձ . Աստուին նմա այլք լրել . նա առաւել ևս աղաղակէր և ասեր . * որդի գաւթի ողօրմեան ինձ . (մարկ. Ժ. 46 : զուկ. ժը. 33 :) ըստ այսմ առնեն և որք ծառայք են այ հաւատարիմք յաղաղակէլ նոցա առ անձ . յորժամ 'ի խաւարի փորձութե և նեղուեց ծագել առ նոսա երկնային լրւոյ՝ սյլափախին խորհուրդը նոցա, և երկիրկն սասականայ և զօրանայ . Տեսանեմք՝ զի երկուտ տղայք յորժամ 'ի խաւարի լինին ընդ ծնողաց իւրեանց՝ ձիչ բառնան . և 'ի զալ լրւոյ առ նոսա՝ հանգարտին, և աներկիրկն մնան . իսկ 'ի յամել լրւոյ՝ զիրկս արկանեն 'ի ծնօղս իւրեանց իբրեւ յապաւեն պահպանութեան կենաց . ըստ այսմ առնեն և արդարք՝ որդիք այ՝ 'ի մնալ իւրեանց 'ի խաւարի . և այս է այն՝ զոր յարէ մարդարէն զինի . և ասէ :

Տէր առաջն ինաց ինոց, և յամել դաշտայոց : Ապաւէն ասի այն՝ յոր զիմէ մարդ վասն աղատութիւն դասնելոյ

'ի վտանգէ, կամ՝ 'ի վնասուե, կամ վասն ապահովանալց
'ի շարե: Եւ քանզի հալածանք և նեղութիւն են վր-
տանգիւ կենաց, և փորձութիւնք են վտանգ մեծի վնա-
սու՝ այսինքն մեզաց, որ է մաչ հոգւոյ, յատուկ է
արդարոց յայնպիսի առիթս դիմել առ ած վասն աղա-
տութիւն գտանելոց 'ի վտանգէ անտի. և 'ի գտանելն
զնոյն անշուշո՛ ոչ ես կրեն զերկիւղ կամ զգողումն
ինչ կորստեան կենաց: Դպաքէն՝ ոքք դիմեն առ իշ-
խան ոք զօրաւոր, պաշտպանեալ՝ 'ի նախնէ՝ մնան ան-
երկիւղ. և զինուոր փախտական ապաւինեալ յան-
առիկ ամբոց՝ կայ անկասկած. և թագաւոր շուրջ
պատեալ՝ 'ի զօրաց խրոց՝ նստի աներկեանն. ապա
քանի ևս որ դիմեալ առ ած պաշտպանեսցի ամենա-
կարօղ զօրութեակը նորա. և ուստի ունիցի այնպիսին
երկնչել և դողալ:

Պատ սմին պաշտպանութեան աշա ասէ, մարդարէն.
Տէր սպառէն էնաց՝ ինչ՝ էս յումէ՞ դուշացց. որպէս թէ,
ասէք. 'ի փորձութիւնս իմ թէպէտ և 'ի յետին վր-
տանգի կենաց իցեմ՝ և 'ի խոր խաւարի, այսու անմիւ
ոչ դողացաց. զի որ տէր է անմի՝ ապաւէն է կենաց ի-
մոց. այսինքն պաշտպանող և պահպանող կենաց ի-
մոց, կամ ըստ երբայսկանին՝ ամուր ապաստանի, կամ
զօրութիւն իմ:

Դպտանօր բառս դուշացց՝ զնի փոխանակ բառիս էր՝
Էազ: Օ 'ի օրովհէտեւե զողան է զործ սաստիկ երկիւ-
զի՞ անուն գործոյն զնի փոխանակ անուան պատճա-
ռին փոխանունութե ըստ ճարտասանական ձեռյ. (զոր-
մէ տես 'ի սաղ. ին. 6:) Եւ այս առ 'ի ցուցանել
զաւաւելութիւն իրացն. որպէս թէ ասացեալ էր.
քանի և մեծ իցէ վտանգ նեղութեց զորս հասուցանեն
ինձ թշնամիք իմ, կամ փորձութիւնք, ոչ երկեաց
ընաւ, որովհէտեւե յամի ապաւէն ունիմ զտէր, և լոյս
և կեանք:

Եւ զայս այլով իմն օրինակաւ բացատրէ, մեծն խոս-
ըով ('ի մեկն. ժամագր. երես. 388.) յասէն.
* տէր լոյս իմ և կեանք իմ, ևս յումէ՞ երկեաց. Եւ-
սափ իմանալի ամն մտացս ածային լուսովն պայծա-
ռանայ, ասէ, և կենդանարար զօրութիւն հզօրին այ-
լնագ իս իցէ, ոչ է ինձ երկիւղ 'ի մերձենալ շաբաց

՚ի դիւաց խաւարի . զի լոյս իմշտէր է : Վայ բան ուղղակի հայի ՚ի մարդկայինս բնութիւն՝ ոչ յինքեան առեալ՝ այլ ըստ որում կարգեալ յեկեղեցի ոյ՝ սկսեալ յադամայ և այսր . ՚ի սկզբան անդ եհաս ՚ի բնութիւնս խաւար մեղաց , և արար պարտական ժամանակաւոր և յաւիտենական մահու . որոյ վասն տիրեաց երկիւղ ահազին : Խոստացաւ նմա անձ լինել ազատեցուցիչ՝ ինքնին գալով առ նա իբրև լոյս՝ առ ՚ի փարատելոյ զիսաւար նորա , և իբրև կեանք՝ առ ՚ի փրկելոյ զնա ՚ի յաւիտենական մահուանէ . եկն և կատարեաց . վասն որոյ և վստահացաւ մարդս ասել . * տէր լոյս իմ , և կեանք իմ , ես յումմէ երկեայց . ողը ասպաւէն կենաց իմոց , ես յումմէ դողացայց || . որպէս թէ ասէր . ՚ի խաւարիլ և ՚ի մահանալ իմում՝ ոչ մեր ժեաց զիս՝ որ արարն զիս . եկն առ իս իբրև լոյս և լուսաւորեաց զիս , ըստ այնմ զոր ասաց . * ես լոյս յաշխարհ եկի || . (յովէ . ժը . 46 :) Եւ մերձեցաւ առ իս իբրև կեանք , և կենդանացոյց զիս . ըստ այնմ . * ես եկի՝ զի զկեցնս ունիցին , և առաւել ես ունիցին || . (յովէ . ժ . 10 :) Եւ արդ յումմէ երկեայց ես . ՚ի մահուանք արդեօք , մեռոցց նա զմահն յաւիտենական . ՚ի սաստանայէ , կապեաց նա զստանայ . ՚ի փորձութեանց , ջաղիսեաց նա զփորձութիւնն : Հարձակիլ սոցա ՚ի վերայ իմ՝ տէր է ապաւէն իմ . նա է պաշտպան կենաց իմոց . ոչ ես դողացայց ՚ի նոցանէ և ոչ վտանգեցայց :

Վայ բան կարէ հայիլ և ՚ի քա՛ ըստ որում մարդ . յորում անձութիւնն էր իբր լոյս և կեանք միաւորեալ ընդ մարդկութեան , և ըսւնէր ինչ երկնչիլ . եթէ կամէր , թոյլ տայր երկնչելոյ , և եթէ ոչ կամէր՝ ոչ երկնչէր յեմիք . ՚ի պարտիզի անդ՝ կամաւ կրեաց զերկիւղ , այլ ՚ի բաց վանեալ զնոյն՝ ել ընդդէմ թշնամեւաց իւրոց . և ետ օրինակ իւրոց հետեւողաց , ապաւինելով յած թօթափել յանձանց զերկիւղ ու ե իցէ նեղութէց և փորձութէց , և արիանալ ընդդէմ նոցա . զի ՚ի պաշտպանիլ յայ , ոչ ինչ զօրեն՝ ՚ի նոսա նեղութիւնք կամ փորձութիւնք . և ոչ իսկ արտապին թշնամիք : Ոսոյն զայս ևս յայտ առնէ մարդարէն՝ ՚ի յաջորդ համարն . առաջի եղեալ միանդամայն և զներ-

գործութիւն պաշտպանեալ լինելցին յոյ , և ասէ :

Ե . **Ա** Երբենաւ առ իս շրաց ռարել զմորին իմ , նեղեւս իմ
և լինափի իմ ... ուստի ուստի անդադան , և անկան :

Այս բան տիրապէս հայի յարտաքին թշնամիս . ուս-
տի և բառիւս շրաց՝ նշանակին այնոքիկ՝ որք նեղեւն
զնա . Օ սոսա կոչէ շր՝ ոչ միայն զի յինքեանս էին
չար , այլ և զի այլոց ևս էին չար . յինքեանս չար էին
զի ունեին զարութիւն , որով լինեին առարկայ ատե-
լութեան . զի որպէս բարութին է կատարելուի այնպի-
սի որ լինի առարկայ սիրոյ , սոյնպէս և չարութիւնն է
այնպիսի անկատարութիւնն կամ այնպիսի պակասութի ,
որ լինի առարկայ ատելութեան . և որք չարքն են՝ բա-
նիւ չարութեան լինին ատելի :

Խակ առ այլս էին չար , ըստ որում չար առնեին նոցա .
այսինքն թէ այնպիսի ինչ առնեին որով վնասեին
նոքա , կամ որ նոյն է հասուցանեին 'ի նոսա վնաս՝ որ է
չար ինչ և ատելի : **Ա**յձք (որպէս ասի) 'ի խածանելն
զբաղցը նշենիս՝ դառնացուցանեն զնա . սոյնպէս և
չարք դառն գործեն զբարիս , և կամ դառնացուցիչը
և չարարարք աօին՝ քան թէ չարք : **Ի**սյց քանզի այս-
պիսիքս վասն այնորիկ լինին չարարարք՝ զի են յինքեանս
չարք , սմին իրի փոխանակ չարարար կոչելոց զնոսա՝ չար
կոչէ . և կամելով յայտնել՝ թէ զինչ այն չարիք են
զօրս նոցա կամին դօրձել՝ ասէ :

Ա Երբենաւ առ իս շրաց ռարել զմորին իմ ... ուստի այս ան-
կան : **Ի** յանքն թէ յորժամշկամեցան չարք առ իս մեր-
ձենալ՝ որպէս զի կերիցեն զմարմինս իմ՝ տկարացան
և անկան յուժոյ : **Օ** վնասել թշնամեացն առաջի զնէ
նմանութք ուտելոց զմարմին . և այս վճ երկուց : **Ա**յին՝
առ 'ի յայտ առնել զմոլեզնութիւն նոյ , կամ զանատ-
կութիւն չարութեանն , զի զորօրինակ շունք քաղցեալք
մոլեզինս զիմեն 'ի միտ առ 'ի ուտել , սոյնպէս և թըշ-
նամիք յորժամշկամեացն 'ի թշնամութեան և զայրա-
նան ընդդեմ ատելեաց իւրեանց՝ մոլեզինս յարձա-
կին 'ի վերայ նոցա իբրև զուն քաղցեալ առ 'ի ուտել
զմարմին նոցա . այսինքն վնասել նոցա , կամ նեղեւ-
զնոսա , և կամ չարաչար սպանանել զնոսա կամ յին-

քեանու և կամ 'ի համբաւս նոցա . յինքեանս՝ յոր-
ժամ զործով կամին վնասել . 'ի համբաւն՝ յորժամ
բամբասանօք ծամեն և ուտեն վնոսա : * ()ձ զօձ ըռ-
տէ . , ասէ բարսեղ վարդապէտ . ('ի մեկն . մարկ . զւ-
մէ .) իսկ մարդ 'ի չարանալն յարձակի ուտել ըզ-
մարդ : Արկզորդ՝ առ 'ի յայտ առնել զմեծութիւն
վնասուն՝ զօր կամին հասուցանել ատելեաց իւրեանց .
զի ոչ յարտաքին ինչ ևեթ , այլէ 'ի կեանս վնասել
կամին . վասն զի յայտ է թէ 'ի կամին նոցա ուտել
զմարմին ատելեաց իւրեանց՝ այնու իսկ կամին վնասել
'ի կեանս նոցա , մանաւանդ թէ և բառնալ իսկ :

Եւ ըստ այսմ թէպէտ կարեր ասել մարգարէն՝ բառ-
նալ զկեանս իմ , կամ վնաս մեծ հասուցանել ինձ .
բայց չասէ այդպէս . այլ ուտել զմարդն էմ . և զայս խոր-
հըրդով և զիստիմաք այսպէս զնէ . զի արտաքին թըշ-
նամիք՝ մարմնոյ միայն վնասեն , և ոչ հոգւոյ , յորում
է կասարելութիւն մարդոյ . որպէս յայտնի երեկի այս
'ի մարտիրոսա , զի 'ի պատառուտել դաշնաց և գազա-
նաց զմարմինս նոցա , հոգիք նոցա յնծային առ ած :

Ի փիլիսոփիսյս ևս տեսաւ այս . 'ի ջաղիսել զմարմին
միոյ 'ի փիլիսոփիայից՝ ըւեալ եղե 'ի բերանոյ նորա
այս բան . հարէք զպարկ անազսարքեայ , այլ ոչ զա-
նազսարքոս . և եղիկուրոս 'ի ցուլ փաղարեան երջա-
նիկ վարկաներ զինքն՝ եթէ 'ի նոյն դիպէր նմա ձեն-
ձերիլ :

Եւ թէպէտ չարք ուտեն այսինքն ապականեն և ըզ-
համբաւ կամ զանուն մարդոյ , որ մեծ իմն է , և հայի
առ բանական մասն , բայց այն ևս համարի արտաքին .
զի եղծումն անուան՝ յիլրում նկատեալ՝ է իբր եղծումն
պատկերի մարդոյ , և ոչ անձին : Օ պատկեր փիլիսո-
փայի ուրումն արկին 'ի հուր առ 'ի նախատինս նորա .
և նա ծիծաղէլով ասաց . բարւոք արարիք՝ զի զուտ
փիլիսոփիայդ եղծիք , պրակս զի կացցէ ձմարիս փիլի-
սոփայն յինքեան և ոչ 'ի նկարս :

Ուրեմն 'ի կամիլ չարաւ վնասել ումեք՝ եթէ իցէ նա
այր առաքինի , մանաւանդ ըստ առաջիկայ բնաբանիս
մերոյ՝ 'ի յուսալ այնպիսւոյն յած՝ ոչ ինչ կարեն սո-
նելնմա . բայց եթէ թըշլառութեամբն այլիցի նոցա
վնասել ոչ 'ի նա , կամ 'ի հոգի նորա , այլ յայն՝ որ առ

նմա . սմին իրի և մարդարեն խորհրդով զնէ , զբառդ
մէքչեալ . զի վնասել նոցա ու թափանցի , յանձն կամ
ի հոգին , այլ մերձենայ յարտաքին ինչ , և կամ ի
մարմինն . որպէս արար սատանայ ընդ երանելին յոր :
Իսայց երբեմն և ու իսկ յայն կարեն վնասել . այլ ընդ
հակառակն ինքեանք կրեն զվնասն . և յայս հայելով
յարե զինի մարդարեն , և ասէ :

իւշաւ իւմ և ընամիք իմ՝ նոյս ուկարացան և անհան : Այսու-
քիկ նեղիքը և թշնամիք՝ նոքա են, զորս չարս կոչեաց
յառաջն : Աւ թէպէտ շարազրութիւ բառիցն՝ ի հօրով-
սըն անդ յայլւայլս տայ հայիլ, բայց նշանակեանն յի-
րումնոյն է : Խակ այզպիսի կարգ շարազրութ եան դնի
վու վայելու ձեւանալոյ բանին առ երբայեցիս, առ որս
նախընթաց բանն է երբորդ համար . խակ այս բան է,
չորրորդ համար . որ և պարզի այսպիս . յորդամ մեր-
ձեցան առ իս չարք՝ այսինքն նեղիքը և թշնամիք իմ
առ՝ ի վնասել ինձ, նոյս, այսինքն նոյն նեղիքը և
թշնամիք իմ ուկարացան և անհան . որպիս թէ ասէր . փո-
խանակ ինձ վնասելոյ՝ ինքեանց վնասեցին . զի ած զո-
լով պաշտպան իմ՝ ընդդիմ եկաց նոյս . և այնպիս
արար՝ զի ոչ ես, այլ նոքա ուկարացան, այսինքն՝ ի զօ-
րութ ենի խրեանց նուազեցան և պակասեցան՝ և անհան .
այսինքն առ նուազելոյ զօրութ եանն ՚ի վայր կործա-
նեցան :

Վասն յայտնի կանխասացութիւնն է ընդդեմթշնամեաց նոն մերոյ . զի 'ի մերձենալ նոցա առ նա առաջնորդութեամբ յուղայի՛ առ ՚ի ուտել զմարմին նորա՝ այսինքն 'ի մահ մատնել , ընդ ասել նորա առ նոսա * ես եմ ॥ , տկարացան և անկան . * յետս յետս ու . . քան և զարկան զգեանի ॥ . (յովէ . ժը . 6 .) Օ այս տեսաք և տեսանեմք նաև 'ի մարմինն քնի . այսինքն 'ի ոք եկեղեցի , որ է մարմին նր ըստ առաքելոյն (ա . կոր . ժը . 27 : եփես . առ . 12 . ևն .) Օ ի մէպէտ և բաղմադիմի թշնամիք 'ի կռապաշտից , և 'ի հերետիկոսաց մերձեցան ուտել զայն , բայց տկարացան և անկան . և միարացին առնել ինչ :

Օ այս տեսանեմք և՝ ի ծառայու այ, առ որս թէպէտե մերձէնան պէսպէս փորձութիւնք, բայց ոչ կարեն տկա բացուզանել զնոսա ՚ի գործն անձախտութէան. այլ ա-

ասուել ևս զօրացուցանեն . և ինքեանք տկարացեալք վանին՝ ի բաց : Խւ պատճառն է՝ զի այսպիսիքս զգաստ կալով և զուսպ ունելով զգգայութիւնս՝ ի մերձենալ փորձութեանց՝ դիւրաւ վանեն զնոսա , իբրև քաջ պատերազմօղք . * ամ որ պատերազմի՝ ամի ժուժկալ լինի . (ամ . կոր . թ . 25 .) Խւ որ մեծն է՝ այսպիսիքս ոչ ի զօրութիւն իւրեանց՝ այլ յանձ ապաւինելով այնշափ արիացեալ լինին և ի փորձութիւն և ի վիշտ՝ մինչեւ ոչ միայն՝ ի սակաւուց անտի նեղաց՝ առանձինն և գաղտնի մերձեցելոց չերկնիլ բնաւ , այլ և ոչ ի բաղմութենէ նոցա միանգամայն՝ ի մի ժողովելոց : Խւ զայս բացայացտագոյնս ևս առաջի զնէ մարդարէն՝ ի յաջորդ համարն . և ասէ :

7. **Ճ**աէ ուստըստեսցի՝ ի վէրայ իմ ուստերալմ , և երիշէ սէրտ իմ . և է յարիշէ՝ ի վէրայ իմ ճակատահարք , սակայն և այսուի ի աւշ ուշը յուսացաց :

Վւասիկ քեզ արիական յաղթանակ ապաւինելոց յանձ , և անսպարտելի հանդիս պաշտպանութեան նորա . ոչ կարաց աղեքսանդր մակեդոնացի այնշափ աներկիւզ զինիլ ընդդէմ բարբարոս ազգաց , որչափ յուսացեան յանձ ընդդէմն և իցէ խստութեան փորձուեց և բռնութեան թշնամեաց : Ի ազում թագաւորք հզօրք ի լսել իւրեանց՝ թէ թշնամիք պատրաստին՝ ի պատերազմ՝ յերկիւզ մեծ ըմբռնեցան , և ի յանդիման լինել ճակատու՝ զէնընկեց փախեան . իսկ արդարն՝ որ յուսացեալ իցէ յանձ , վստահացեալ՝ ի զօրութիւն նորա աներկիւզ կայ . ոչ ի պատրաստութենէ պատերազմի ստակայ . և ոչ ի յաւնել անդ մարտին տկարանաց . այլ յամի յանձ ապաւինեալ՝ աղաղակէ . * աստու .

,, ծով արացուք զզօրութիւն . (սաղ . ծթ . 43 .)

Վայլ զիտելի է՝ զի հասարակօրէն՝ ի պատրաստիլ պատերազմի՝ արձանանայ՝ ի սրտի երկիւզ՝ ոչ յայնմ՝ որ պատրաստի , այլ յայնմ՝ ընդդէմ որոյ պատրաստի . իսկ՝ ի ճակատամարտութեան ոչ այնշափ երկիւզ՝ որչափ յոյս կամ յուսահատութիւն տիրէ , կամ մանաւանդ մաքնապ : Իսկ տագնասպն ըստ ինքեան առեալ նշանակէ սաստկացեալ կիրք խառն յերկիւզէ և ի յոյս կամ՝ ի յուսահատութենէ . և է միանդամայն մղիչ

և նահանջիք . յոր երբեմն յաւելեալ լինի և բարկութիւնը յաւէտ՝ ի ժամանակամիջի : Իս տաղնապ երբեմն ևս ձեւանայ յարագութէ բարկուե և ՚ի յարձակմանէ պղղորիչ շարժման : Իստ առաջնոյն՝ այսինքն ըստ երկիւղի պատրաստութէն պատերազմի , ասէ մարդարկուեն :

Ու է պատրաստեսցի ՚ի վէրայ իմ պատերազմ , և երիւցի սերութ : Իս պատրաստութի պատերազմի կարէ խնացեալ լինել թէլ ըստ հոգեորին , և թէլ ըստ մարմնաւորին . և յայտ է թէլ ըստ երկուց ևս աներկիւղ մնայ այր արդար՝ այն որ հրաժարեալ յապաւինութենէ անձին իւրոյ զյոյշ իւր եղեալ է բոլոր յանձ : Որպիսի էին ըստ հոգեորին երանելի որ առաքեալք և աշակերտք քո՞ի . առաքելաշնորհ հայրապետք և խոստովանողք . քաջաղղթ նահատակք և վկայք . խստամբեր անապատաւորք և վանականք . սրբակրօն կուսանք և միանձնուեիք : Որպիսի էին և ըստ մարմնաւորին բազումթագաւորք և իշխանք , ընդ որս և երանելիս այս դաւիթ . որ բոլորովին յուսացեալ յանձ՝ ոչ միայն ՚ի լրաց պատրաստութէն պատերազմի չերկնչէր ասելով , նէլ դոդրաստեսցի ՚ի վէր իմ պատերազմ , և երիւցի սերութ իմ , այլ և ոչ ՚ի պատերազմիլ անդ ընդ ճակատութշնամեաց իւրոց տափնապէր . և յայս իսկ յաւելու սաել ըստ երկրորդին :

Ու է յարիւցի ՚ի վէրայ իմ ճահատաճարք , սոհայն և այսուեի ՚ի յեղ ուշը յառաջայ : Իստանոր բառս նէ՝ որպէս և ՚ի նախընթաց հատուածն , զնի փոխանակ բառիս նէլ . որում և համեմատի բառդ սահայ . որպէս թէ եղեալ էր նէլ յարիցէ ՚ի վերայ իմ ճակատամարտ , սակայն և այնու ևս ոչ տափնապեցաց , այլ ՚ի քեզ տէր յուսացայց . որպէս և յուսացան իսկ :

Բառիւս ճահատաճարք թէպէտե կարէ նշանակիլ նաև մենամարտ , յոր միտս առնու վարդան . բայց տիրապէս նշանակի մղումն պատերազմի երկուց ճակատուց՝ այսինքն երկուց բանակաց միմեանց յանդիման կացելոց . յորում զրեթէ անշնար է լինել վիրաւորութեան կամ մահու՝ զէթ ումանց . և որոյ կողմն քաջագոյն է և հզօրագոյն՝ հասարակօրէն նորա լինի յաղթութին : Մրդ յայտ է թէ որ զօրութըն այ զօրացեալ՝ նովին

զօրութիւն պատերազմի՞ յաղթօղ գտանի այնմայ յորմէ
յաղթեալլինէլը եթէ իւրով ակար զօրութիւն պատե-
րազմէր . և զի միայն զօրութիւն այ զօրանան նոքա՝ որք
'ի նա յուսան , յայս ապաւինեալ ասէ , թէ բա-
նակը թշնամեաց յարիցին և յարձակիցին 'ի վերայ իմ՝
ճակատամարտիլ ընդ իս , ստիշյա և այսուիէ 'ի ժէ ու ուէ
յուսացայ . որպէս թէ ասէր . այսու ամիւ ոչ տազ-
նապեցայց , և ոչ յաղթեցայց . որովհետեւ յայս ճակա-
տամարտ ոչ յիս , այլ 'ի քեզ յուսացայ , որ տէրդ ես
զօրութեանց , և ընդ իս ես բանակօք հրեշտակացդ :
Այլ զիտել արժան է՝ զի առ յաղթութիւն պատե-
րազմի ցրա ինչ պահանջին . մի՝ արութիւն 'ի հոդին ,
այսինքն է զօրութիւն մղիչ առ ահագինս . երկրորդ՝ քա-
ջութիւն 'ի գործո , այսինքն է զօրութիւն վանիչ բանու-
թեան , կամ վանումն բռնութեն . երրորդ՝ արհեստ զործ-
ածութեան զինուց . ըրբորդ՝ կարգ պատերազմելց
ըստ ամի հանգամանաց ըստ ներքնոյն և ըստ արտաք-
նոյն : Ավք միանդամ զայսոսիկ ունեին 'ի պատերազ-
միլ իւրեանց՝ 'ի սոսին խակ տագնապ կրէին . և թէ-
պէտ իբր 'ի բազումն յաղթօղ գտանէին , բայց երբեմն
յաղթեալ ևս լինէին : Խոկ որ ընդ սոսին ունի զան-
նահանջելի ապաւինութիւն առ անծ , այնպիսին ոչ տկա-
բանայ , և ոչ տագնապի . այլ զօրաւոր գտեալ յաղ-
թողական ձայնիւ երգէ ընդ մարդարեիս . * թէպէտ
և յարիցէ 'ի վերայ իմ ճակատամարտ , սակայն և
այսուիկ 'ի քեզ տէր յուսացայ :

Ասիցէ ոք թերեւս . այդ բան ընդդէմ ելանէ փորձոյ .
զի աւասիկ վարդանանք յուսացեալ յած ելին 'ի պա-
տերազմը ընդդէմ պարսից , և յաղթեցան : Պատաս-
խոննեմ . այն ոչ եր յաղթիլ , այլ յաղթել ոչ մար-
դոյ , այլ կրակասպաշտութեան . որպէս եղել յաղթութիւն
մարտիրոտաց : Այ եթէ ըստ ճշմարտութեն իրին մոտա-
ծեսցուք , յայնմ հանդիսի եկեղեցին քսի եր՝ որ պա-
տերազմէր ձեռամբ վարդանանց զորս 'ի մահ մատնե-
լով կանգնեաց զրօշակ յաղթութեան ընդդէմ կրակա-
սպաշտութեան . ուստի և գտաւ յաղթօղ հոդեռապէս :

Այս պատերազմմեծ եր . և ընդդէմ մեծաց . վամն զի
* մեծամեծ պատերազմունք մեծամեծաց վայելեն || ,
ասէ վանական վարդապէտ . ('ի մեկն . յոր . գլ . ը :)

որսկիսի եղև և երանելոյն յորայ բարոյապէս :

Վաղ այսոքիւք իմանալի են և հոգեւորական պատե-
բազմունք , այսինքն յարուցմունք փորձութեանց՝ որք
ճակատին ընդգէմ առաքինութեանց , կամ ասացից
ընդգէմ բարի վարուց , յորս յառաջել կամին ար-
գարք : Վ. յսպիսի փորձութիւնք հզօրագոյնս մարտնչին
ընդ այնոսիկ՝ որք ջերմ գիմեն 'ի ծառայութիւնն այ .
ըստ որում վկայէ և իմաստունն ասելով . (սիրաք . ը .
1.) * որդեակ՝ եթէ մերձենաս ծառայել այ՝ կաց 'ի
,, հաստատութե և յերկիւղի . և պատրաստեամ զանձն
,, քո 'ի փորձութիւն . ոչ զի նորոգ հասանեն նորին ,
այլ զի սկանին մարտնչիլ . քանզի մինչչև է մերձեալ
մարդոյ առ անձ՝ զրեթէ ըմբռնեալ գորով 'ի նոսին
այնչափ ինչ ոչ զգայ . իսկ յորժամ կամի մեկնիլ 'ի նո-
տունց , և մերձենալ առ անձ , յայնժամ շարաւար ըլ-
դայ՝ մինչ զրեթէ յուսահատիլ :

(Պ)աշուն նստեալ յոստղ մանծուցիկ՝ ոչ զգայ զր-
սացեալ լինել իւր . իսկ յորժամ մեկնի , յայնժամ
շարաւար զգայ , և տաղնապ պաշարէ զնա . 'ի հրաժա-
րիլդ յախտից՝ իմանաս , և նորին իսկ փորձութիւնք ի-
մացուցանեն քեզ , տապնապելով զքեզ : Վ պացոյց
այսմ , մարդ զբաղեալ 'ի զործա՛ ոչ այնչափ զգայ
զցրուիլ մտացն . իսկ յորժամ մաստից յաղօթս՝ տեսա-
նէ զիարհուրդս սրտի իւրօյ ցրուեալ յազգի ազգի չա-
րիս . սոյնապէս լինի և յորժամ կամի մեկնիլ 'ի մոլո-
թեանց և պարապիլ անձայն ծառայութեան :

Յօրինակ այսօք՝ 'ի մեկնիլ յակորայ 'ի միջադետաց՝ և
'ի գնալ յերկիրն աւետեաց՝ պնդեցաւ լաբան զշետ
նորա . և 'ի մեկնիլ իսրայէլացւոց յեզիւսուսէ , և 'ի
զնալ ժառանգել զերկիրն խոստացեալ զշետ պնդե-
ցաւ փարաւոն . սոյնապէս պատօնի և մարդոյ . զի 'ի
մեկնիլ նորա 'ի չարէ , և 'ի զիմել 'ի բարին՝ պնդին
զշետ նորա փորձութիք : 'Ա, զի և դեն իսկ՝ որ բռնա-
գատի ելանել յայնպիսի անձնէ՝ սկսանի յայնժամ շա-
րաւար փորձել և տանջել . որպէս արար ընդ պատա-
նին յելանելն 'ի նմանէ . ըստ որում ասէ մարկոս ,
(ը . 25 .) [թէ * աղաղակեաց և յոյժ լլկեաց զնա , և
ելլ] :

Վայց են ոմանք՝ որք 'ի սկզբան դարձի իւրեանց ոչ

կըեն զպատերազմ , այլ զինի . յորոյ օրինակ ած ու առաջնորդեաց խորայէլացւոց ընդ կարձոյ ճանապարհ յերկիրն փղտացւոց . * քանզի ասաց ած գուցէ զան զիտիցէ ժողովուրդն՝ յորժամ տեսանիցէ զպատերազմ և դապմ և դառնայցէ յերկիպտոս || . (Ելից . Ժդ . 17 :) Դրուեաց զնոսա 'ի սկզբան . և յորժամ ոչ ևս կարեն դառնալ յետս՝ բազմօք փորձեաց զնոսա : Կախ կաթն տայ ած , և յետոյ ծամելի խիստ , և փորձութիւն ասատիկ . նախ ինայէ իբրև տղայց և հիւանդի . յետոյ թոյլ տայ յառնել պատերազմաց իբրև ընդդէմ հզօրի և առողջի : Ա արի երբեմն իբրև զպարտիզպան , որ տկար և նոր մնկոց ինսամ մեծ տանի . խկ 'ի զօրանախն՝ թոյլ տայ տանիլ տապոյ արեւու և հարուածոց կարկտի : Օ ինչ արար ընդ անտառակ որդին հայր նորա , և զինչ ըստ եղայր նորին . (Պուկ . Ժէ . 22 - 32 :) Օ ինչ արար տէր ընդ պէտրոս . նախ զմայլեցոյց զնա 'ի թափոր լերին . (մարկ . Ժ . 4 .) և յետոյ թոյլ ետ յառնել փորձութեց 'ի վը նորա . (յուլ . Ժը . 26 :) Օ պօղոս նախ վերացոյց յերբորդ երկինս . և ապա իշոյց 'ի տառապանս . (բ . կոր . Ժը . 4 . 7 :) Այնակէս վարի բազում անգամ և ընդ այլս :

Եւ 'ի հասարակի խօսելով , առաւել հաճի ած՝ զի ծառայք իւր փորձեսցին և պատերազմեսցին , քան թէ առանց պատերազմի մնացեն . որպէս զի մի անվարժ լիցին և անփորձ գտցին . * որ ոչ է փորձ զինչ գիտէ . || . (սիրաք խղ . 26 . և լդ . 9 :) Հայո խկ ոչ երարձ տէր 'ի պօղոսէ զպատերազմն . զի առաւել ևս զօրասցի և շահեսցի . (բ . կոր . Ժը . 9 .) և այլոց փորձանաւորաց ևս հասցէ յօգնութիւն իբրև վարժ : Որ փորձ է հիւանդութեց գիտէ օգնել հիւանդին . և որպէս ասի , քաջ վիրաբոյժ է՝ որ ստացեալ է զբազում վերս : Պատոմի 'ի վարս հարանց՝ թէ ծեր ոմն անփորձ գորով պատերազմաց սրոնկութեան՝ յուսահատեցոյց զմիայնակեաց երիտասարդ ոմն՝ որ պատերազմէր ընդ այնմ ախտի . բայց հայրն ապողոն փորձ գորով ասլրեցոյց զնա : Առքիմէք ցուցանի՝ թէ առաւել պարտ է յօժարիլ 'ի պատերազմ ընդդէմ ախտից՝ և վարժիլ , քան երկնչելով յետս նահանջիլ . * ամբուրախութեան արժամնի համարիջիք եղաբարք , (ասէ յակորսս առաքեալ) յորժամ

՚ի պետակես միորմութեանց ՚ի մէջ անկանկցիք ॥ . (յակ . ամ . 2 :)

Հռովմայեցիք ուրախանային ՚ի պատերազմունս . և ոչ կամշին թէ ջնջեսցին թշնամիք իւրեանց . ուստի ասաց կասոն ՚ի մէջ ծերակուտին հռովմայ . * կար . մագին ոչ է ջնջելի . զի մի պղերգասցին հռովլ . մայեցիք . վայ է (ասաց) հռովմայեցւոց՝ եթէ կար . թագինէ ոչ կացյէ : Օսոյն ասացին և լակեդեմնացիք առ թագաւորն իւրեանց՝ որ կամշը ջնջել զբաղաք մի վշտագնիք ինքեանց . յեսան է ասեին այն քաղաք , որով որին զօրութիւնք մեր : Վճ ես ոչ եւրարձ զնո՞մ քանանացիս ՚ի պաղեստինոյ . այլ էթող զազգս հինգ (յօրինակ հինգ զգացարանաց ,) զի հանասազ պատերազմեսցին ընդ նոսա որդիքն իսրայէլի , և զօրացին . (գատ . դ . 1 . 2 :)

Ապա և դու ՚ի յանէլ փորձութեանց մի երկնչիք պատերազմիլ . մի լքանիք , և մի զէնընկեց լինիք . զինուորն ՚ի ձայնէ թնդանութի ոչ թողու զպատերազմ . վաճառականն ոչ խորչի ՚ի մտանելոյ ՚ի նաւ վասն փոքու ալէկոծութեան . ճանապարհորդն ոչ յետո կայ ՚ի գնալոյ վասն անձրեւոյ : || ՚ի նաշաննիք և դու . զօրացիք և քաջ լեր . պատերազմեա զբարւոք պատերազմ ըստ պօղոսի . որով և փառաւորես զօրագլուխտ զբա : Օ ինուորն յայնժամ պատուէ զզօրագլուխ իւր՝ յօրժամ քաջուք պատերազմի : Հայեաց ՚ի զօրագլուխ քո ըստ ասելոյ առաքելոյն . Հայեաց և ՚ի հեղումն արեան նորա . (երր . ժը . 2 :) Ոլիղն թէպէտ և ընուք անպատերազմանիք է , բայց արբեալ արեամբ խաղողոյ զօրանայ ՚ի մարտ . (դ . մակ . դ . 34 .) արբեսջիք և դու արեամբ խաղողոյն անմահութէ , որ ձիկեցաւ ՚ի վերայ խաչին ՚ի մեծի պատերազմին՝ զօր արար ընդդէմսաւանայի . և նովաւ զօրացիս և յաղթեսցես . և առ նուցուս վարձս յիւրում ժամանակի : | շթէ ՚ի միոջ ընկըկեսցիս՝ բռնազատիս ընդ այլում պատերազմիլ . զի * ոչ ասաքէն իբրև զփորձութիւն են վարք մարդոյ ՚ի վերայ երկրի , (ասաց յոթ դ . 1 .) և իբրև զառ . օրեայ վարձք վարձկանի կեանք նորա || . վարձկանն զօրն ողջոյն տառապի . և յետոյ առնու զվարձս : Շայց արդ քանզի առաւել ցանկալի է մարդկայինս

բնութեան՝ յորում զիհակի և իցէ վայելել՝ ի խաղաղական կեանս, մանաւանդ յետ յաղթութեան, քան ունել զապատերազմ, և կամ զշոգ պատերազմի, և կամ ևս զվիշտ հալածանաց և տարագրութեան. այսմ փափաքելով մարգարեին՝ խանգաղատի ՚ի օրտի. և որպէս թէ ձանձրացեալ՝ հոգոց պատերազմաց, և ՚ի նեղութէ հալածանաց, ցանկայ անդօրրանալ, և խճնդրէ խաղաղանալ՝ ՚ի ներկայութեն այ տան նորա՝ մանաւանդ թէ յարքայութեան նորին յերկինս. սմին իրի յարէ զինի, և ասէ :

Օ ՞ ինչը էցէ, և զոյն աշակէմ. բնակելինչ ՚ի առն պն զամ առարկ էնաց էմոց :

Ինախըթնաց սաղմնափ (՚ի համարն 6. 7. և 8.) ասաց մարգարէն. * տէր սիրեցի զվայելութիւն տան քոյ, և զտեղի յարկի փառաց քոց ||. և որով յայտ արար զփափաք իւր, զոր տնէր առ տեսութիւնն վայել չութեան տանն այ. աստ գարձեալ զայն զիւր փափաք այլով իմն օրինակաւ յայտ առնելով այնչափ մեծ ցուցանէ զնոյն, մինչև մի միայն բարի համարիլ զայն ինքեան. և զնոյն և թէ խնզրել՝ ՚ի տնէ. այսինքն է բընակիլ՝ ի տան տն, յասելն :

Օ ՞ ինչը էցէ ՚ի տն, և զոյն աշակէմ: Եւ բազում իրս տնէր զաւիթ կարօտութիւն՝ ՚ի տարաբնակուե իւրում. այսինքն է առ ազատութիւն՝ ՚ի հալածանացն տուուզայ, առ անդորր տէղի բնակութէ՝ ՚ի քաղաքի իւրում, առ քաղցր կենակցութիւն ընդ ազգայինս իւր, առ դպր ման կենաց ըստ կարեոր պիտոցից, ևս և առ ժառանգութիւն թագաւորութեն առ որ ստայեալէր իրաւունս. և առ այլ բազում ինչ : Օ այս ամ թօղեալ ոչ ինչ յայսցանէ, խնզրեցի ասէ. այլ զի դայն, (կամ բատնար . կ. 3. * զինք խնզրեցի ||.) և զոր խնզրեցի զեռես ոչ զաի. վասն սրոյ և այժմ պայն աշակէմ ինչ : այսինքն թախանձանօք պաղատելով կողկողիմ. և անդադար աղերսեմ և խնզրեմ: Եւ զինչ այն իցէ. պատասխանէ :

Ո ՞ առն պն զամ առարկ էնաց էմոց : Վէ խճնդրէ առ ժամանակ մի բնակել. զի այդ ոչ էր այն՝ զոր միայն խնզրեր. քանզի կարեր զայդ երբեմն զտանել

՚ի զիսպել առութին , այլ զոր իբրև զմի միայն իմնղրէ՝ է այն զի զամ աւուրս կենաց իւրոց բնակեսցի , անդ ։ Վայ իմնղիր մարգարէին նիւթապէս և ըստ բառիցն առեալ ոչ երեխ լինել մի միայն փափաքելի և իբրև մի միայն իմնղրէլի . զի սոսկ բնականալ ՚ի տան տեան զամ աւուրս՝ չէ ինչ այնպիսի : Իսկ տեսականապէս կամ ըստ ներքին մտացն առեալ մեծ ինչ ցուցանէ . զի որովհէտեւ մի միայն բարի մարդոյ է յարիլ ՚ի յած , և ժառանգել զներկայութիւն նորա , և ցնծալ առաջի մեծվայելութեան փառաց նորին . բնակութի տան նորա լինելով իբր միջնորդ առ այս , այն հանապազօրեայ բնակութիւն լինի մի միայն փափաքելի ոչ ըստ ինքեան , այլ ըստ միջնորդ լինելոյ առ այն : Հայս ահա ակնարկերով ասէ . զմի զայս իմնղրէցի ՚ի տնին , և զայն զայս հանապազ աղաշեմ՝ զի արասցէ ինձ զայս շնորհս , բնակելով ՚ի տան նորա ժառանգել զնա զամենայն

աւուրս կենաց իմոց :

Դարձեալ սովին բանիւ ոչ կամի ցուցանել թէ յամ ժամու անդ բնականալ փափաքի , անդ ուտել , անդ ննջել , ևն . այլ զայս միայն յայտ առնի , թէ ցանկայ զի ցողքան ինքն կենդանի է՝ ոչ անցցէ օր մի գատարկ՝ յորում ոչ ներկայացի ՚ի տան նորա : Իսկ բառն ասելով իմանայ զայն՝ յորում էր խորանն , և ՚ի նմա տապանակն տն :

Վայու տամք նկարագրի տունն այն երկնային յորում ոչ տապանակն տն՝ այլ ինքն ողը դէմ յանդիման տեսանի և վայելեալ լինի ՚ի սրբոց : Օսոյն զայս միայն ըստ տարփանաց սրտին ցանկայը մարգարէն ժառանգել : Այ թէրեւս վասն այսր պատճառի ոչ ասաց՝ աղաշեցի լինել ՚ի տան տն , այլ բնակութիւն . զի յերկրի աստ ՚ի պանդիստութեան գոլով ոչ լինի տիրապէս բնակել ընդ այ , այլ զրծիլ կամ կալ առաջի այ , և այն ոչ իբր ՚ի տան , այլ իբր ՚ի վրանս . իսկ տիրապէս բընակել ընդ անդ լինի օր է իբր յատուկ տուն ոց , այն է աղքայութին երկնից : Ուստի և այնու՝ զօր իմնղրեաց մարգարէն զի բնակեսցէ ՚ի տան տն , զայն իմնղրէ , ՚ի տայն հառաջէ , և զայն ժառանգել աղաշե . ից աղղեօք զի եկեսցէ ժամն այն , յորում տեսից զիս բնակեալ ՚ի տան տեան յերկինս . իցէ զի յայտնեսցի

օրն այն՝ որ իցէ սկիզբն աւուր յաւիտեանս յաւիտե-
նից ընակելոց՝ ՚ի ներկայութեանն այ լինիցի արդեօք
հասանել ինձ ՚ի պահն յայն, յորում ու ևս իցեմ
՚ի պահնդիմութեան, այլ՝ ՚ի ընակութե՝ այսինքն՝ ՚ի ժա-
ռանդութեան տն և ՚ի վայելութե՝ արքայութե՝ նորա:
Օ այս փափաք իւր առաւել ևս կամելով յայտ առնել
մարդարէին՝ յարէ զկնի, և ասէ :

Է. **Տ**եսանել ինչ վայելութե՝ տն և հրաման ուշ՝ ՚ի առ-
ճարի նորա :

Այս բան է իրը բացատրութիւն կամ մանաւանդ իրը
վախճան և եզր այնը զոր ասաց՝ բնակիլ ինչ ՚ի առ ՚ին.
զի եթէ հարցեալ լինէր, թէ ընդէր կամիս բնակել.
ոգատասխանէր սովորն բանիւ ասելով. տեսանել ինչ վայ-
ելութե՝ ՚ին: Ուստի զայտափկ ՚ի մի յօդէ նարեկացին
(՚ի բանն. ՚ի.) յասեն. * զմի իննդրեցի ՚ի տնէ ըզ-
ու տեսիլ վայելութեան նորա, և զհրամանատարութի
ու տաճարի նորա || :

Վրդ վայելութե՝ ըստ ինքեան առեալ՝ է կատարելու-
թիւն գեղեցկութե՝ կամ շքեղութեան՝ յարմար ենթա-
կային՝ յորումէ: Խոկ վերաբերաբար առեալ՝ է յայտ-
արարութի այնը վայելութե՝ կամ այն՝ որ յայտ առնե-
վնոյն զայն վայելութի. զորօրինակ կատարելութի շքե-
զութեան թագաւորի՝ ըստ որում յարմար է նմա՝ ասի
վայելութիւն անձին իրը ըստ ինքեան մտածեալ. զի է
թագաւորական իշխանութիւն նորա: Խոկ փառաւորու-
թիւն հանգերձից նորուն, զարդ տան նորա, կարդ ծա-
ռայից նորին. և այլ այսպիսի իրք՝ ասին վերաբերա-
բար վայելութիւն թագաւորի՝ ըստ որում յայտ առ-
նեն զվայելութիւն անձին նորա՝ զոր ունի յինքեան ըն-
թագաւորական իշխանութեն: Խու արդ քանզի տունն
այ և որ ինչ կայր ՚ի տան անդ, և որ միանգտում լինէր ՚ի
նմին՝ ամն յայտարարութիւն ինչ էր ածային մեծվայ-
ելութեան, վասն այնորիկ զայն ամ կոչէ մարզարէն
վայելութե՝ ՚ին: և ցանկալով տեսութե՝ նոցա, ասէ :

Տեսանել ինչ վայելութե՝ ՚ին: Որպէս թէ ասէր. ցան-
կացայ բնակել՝ ՚ի տան տեառն՝ առ. ՚ի տեսանել զվայել
ութիւն նորա, այսինքն զշքեղութի նորա և զպայծա-
ռութիւն, զգեղազարդութի նորա և զբարեկարգութի,

և զայն ամ՝ որք են, և որք լինին ՚ի տան անդ, ոչ ըստ որում երկեխն լինել ինչ, այլ ըստ որում յայտ առնեն զվայելչութիւն փառացն այ : Օ այսափիկ ցանկալով տեսանել մարգարեխն՝ փափաքեր յայն վայելչութիւնն յաւելու զայլ բազում ինչ, առ ՚ի առաւել պայծա սացուցանելոյ զվայելչութիւն փառացն այ : և առ այս

յարէ զինի :

Եւ հրաման բալ՝ ՚ի բահարի նորս : Հրաման տախն զաւթի ՚ի տաճարի տն ոչ այլազգ պատշաճեր նմա, բայց եթե կարել իրբեւ թագաւոր և իրբեւ մարգարե պատուի բել զի այսպիս և այնպիս լինիցի ՚ի տան անդ . երդիչք այսպիսի կարգաւ կացցեն, և այսպիսի աստիճանաւ զասաւորեսցին . զայս ինչ յայսմ նուազի երդեսցին, և զայն ինչ յայնմ ժամու . մի ինչ արասցեն անկարգ, և մի ինչ արտաքոյ ժամանակի, և այլն որ ՚ի կարգի : Եւ զի զայսոսիկ կարեր առնել (որպիս և յետոյ արար) ՚ի պայծառութիւն տան տն, վասն այսորիկ փա փաքեր այսմ հրամանատարութեան :

Օսյն յառաջ բերեալ մեծն խորսով (՚ի մեկն . ժա մազը . երես . 388 .) բացատրելով իմն զրէ այսպիս . * մի իրա միայն խնզրեմ, զի ՚ի տան տն բնակեցաց զամ աւուրս իմ, աստ յեկեղեցի, և ՚ի հանդեր ձեալսն ՚ի վերինն սիրն . զի տեսօղ եղեց վայելչութեան տան տան տն, և հրամանատու տաճարի նորա . և այժմ զայն ազաւեմ, զի լուիցես ձայնի խմում, և ոչ գարձուսցես զերեսս քո յինէն . այլ օգնութեամբ քով պահպանեսցես զիս // . զորոց խօսի ՚ի յաջորդ համարսդ :

(տես և ՚ի համարն . 9 :)

Եւ յս բանք մարգարեխն (զօրս զնէ յայս համար) տղ զակի իրբ ՚ի նպատակ բերին առ երանութիւն յաւիտե նական, որ ժառանգեալ լինի յանձեռագործ խորա նի յարքայութեանն երկնից : Եւ յայս միտս բառիւս Հայելլա-Բէ Պէ՝ իմացեալ լինի կատարելութիւն անային անսահման գեղեցկութեան . զոր իրբեւ մի միայն ծայրա զոյն բարի ամ տարիփանօք ցանկայր մարգարեն տեսանել, և այնու ևեթ լինել երանելի . քանզի այն տեսութիւն անձային գեղեցկութեն է, էութի յաւիտենա կան երանութեան . յորմէ և զեղու ՚ի հոգին լիութիւն կատարելութեան բանական նութեան, մինչեւ զրեթէ

ոծայնանալ . և որ ստեղծեան էր՝ 'ի պատկեր այց , 'ի նոյն կատարիլ ամենեան , և իբր կենդանի պատկեր ձևանալ , ոչ փոփոխութեաց գոյացութեան հոգւոյն (որ պէս և յայտ է ,) այլ կատարմամբ ընութեանն յամենայն յատկութիւնս և 'ի կարողութիւն իւր . յիմացողութե , 'ի կամեցողութե , և յեզր կատարելութե անձն իշխանութե հոգեղին էակի 'ի բոլորական գոյն :

Այսպէս և յամ գործողութիւն հոգւոյն՝ այսինքն յիմանան և 'ի կամին , յըմբռնեն և 'ի զմայլին , մինչև ամ գործողութեանց նորին լինել յիւրեանց աստիճանի ամենեան կատարեալ . և նմին իսկ հոգւոյն իմանապապէս փոխակերպիլ յած , և լինել իրրե նման այ . վասն զի յորժամնա լինքն առ դէմ յանդիման առարկի հոգւոյն՝ հոգին վերառեալ լուսով փառաց զնոյն իսկ զէութիւնն այ յինքն ընդունի . և նովին իսկ անձային էութե իբր իմանալի տեսակաւ տեսանելով զնոյն զայն անսպարազիլ էութիւն՝ դպէս է յինքեան՝ միանալ ընդ նմա իմանալի պայմանաւ . և լինի իմանապէս նման նմա . և այս է՝ զօր ասէ աւետարանին .

* Պ. յամ որդիք այ եմք , և չե ևս է յայտ՝ եթէ զինը լինելոց իցեմք . զիտեմք՝ զի յորժամնա յայտնես . զի նման նմա լինելոց եմք . զի տեսանելոց եմք զնա՝

„ որպէս և էն . (ա . յով . դ . 2 .)

Պ. յոտ նմանակցութե հոգին փառաւորեալ թագաւորէ ընդ այ յաւիտենական ժառանգութե , Այ զայս թագաւորելու , և կամ զայսպիսի վերանալս 'ի բարձրութիւն փառաց յարքայութեն այ բացատրէ մարդարէն բառիւքս հրաման ուալ՝ 'ի ուաճարի նորա . որովցուցանէ զիշխանութիւն և զտէրութիւն , զմեծութիւն և զազատութիւն կենաց՝ որ 'ի յերկինս . զի որովհետեւ հրաման տալն է գործ այնր՝ որ իշխան է և ազատ . կամելով զիշխանութիւնն և զազատութիւն բացատրել ըզներգործութիւն այնր իշխանութե և ազատուե առաջի գնէ ինելամտութե ձևով , որով անուն ներգործութիւն զնի փոխանակ անուան ներգործողին : Այ թէպէտ լամբ . փոխանակ հրաման տալոյ ընթեռնու հուլ , բայց զայդ զնէ վասն բացատրութեան :

Պ. յս բան հանգերձ նախընթաց համարով վերաբերի և առ քօն ըստ որումէ զլուխ եկեղեցւոյ . և ըստ այսմ

'ի բանադ յայդոսիկ՝ գտանի ինչ ինչ զոր ասէ քո՞ 'ի
դիմաց մարմնոյն իւրոյ՝ այսինքն՝ 'ի դիմաց եկեղեցւոյ .
գտանի և այլ ինչ՝ զոր ասէ . 'ի դիմաց իւրոց : | Դ դմաց
մարմնոյն իւրոց ինսդրէ քնակիլ յարքայութեան յաւի-
տենից . իսկ ուղղակի 'ի դիմաց իւրոց ինսդրէ զիառոս
արքայութեան և զիշխանութի՝ 'ի վերայ ամի իբրև զիւր
սեփական ժառանգելի . յոր միտս ասաց . * ոչ զնոյնո
. սպարտ էր չարչարիլ քնի և մտանել 'ի փառս իւր || .
(զուկ . ինկ . 26 .) ուր ասելովն էր . յայտ առնէ՝ թէ
արդէն իւր էին փառք իրաւամբք քնական որդիութեան
նաև ըստ որում մարդ . բայց կամեցաւ զնոյն զայն
նաև իբրև չարչարանօք ստանալ 'ի ժառանգել և 'ի ժա-
ռանցեցուցանել անդամոց իւրոց :

Ե յայտ արարեալ մարգարէին 'ի դիմաց իւրոց , և 'ի
դիմաց այլոց զայն մեծ փափաք , զոր ուներ առ տե-
սութիւն վայելչութեն այ , և առ քնակութի տաճարի
նորա , յայտ առնէ և զոր 'ի կողմանէ այ էր գտանէլի
յարժանացուցանել նորա զնա տեսութեն և բնութեան
տաճարի իւրոյ . վասն որոյ յարէ զինի , և ասէ :

Ղ. Ա սծէեաց շէս 'ի խորանի իւրում յաւուր շաբէ . ընդ
յարէսս արար շէս 'ի ծածէիոյն խորանի իւրում .
Խորան տն որպէս ասացաք ուրեք ուրեք՝ յերկուս էր
տրոհէալ անջրպետութեամբ վարագուրի . մին կոչիւր
սրբութիւն սրբոց , յորում էր տապանակն տն . և յայտ
տեղի միայն քահանայապետն մեծ մտանէր միանգամ
'ի տարւոց . | Խակ միւս մասն կոչիւր սրբութիւն . յո-
րում էր սեղան ինսկոց և առաջաւորութեան , և աշ-
տանակն ոսկի . և յայտ տեղի միայն քահանայից էր
մտանել : | Այս խորան բովանդակ ըստ երկուց մասանց
իւրոց ևս ծածկիւր քառեակ ծածկութիւ վրաննաձեւ .
Կայր և շուրջ զինորանաւն սրահ քառակուսի շուրջ
պատեալ առագաստիք , և անդ էր սեղան ողջակի-
զաց և աւազան առ 'ի տիւտս լուացման քահանայից :
| Այս շինուած կամ յօրինուած միանգանայն առեալ
կոչիւր տուն տն կամ տաճար տն : | Հւ որ մտանէր յայտ
տուն , համարիւր պատսպարիլ 'ի ծածկոյթ խորա-
նին այ : | Յայտ հայելով ասէ :

(Ասծէեաց շէս 'ի խորանի իւրում յաւուր շաբէ . ևն : Ըս-

բեքին մարթ է մեկնել զայս բնաբան . մի՛ հայելով
 'ի կատարումն փափաքանաց . որպէս թէ ասացեալ էր,
 'ի կատարիլ փափաքանաց իմոց , և յարժանանալու իմ
 մնանել 'ի տուն առն՝ ցնծալից երգեցից և ասացից :
 Դածէւաց զիս 'ի խորանէ իւրում յառաւը շըբէ : Վակալով՝
 ծածէւաց զիս , կամի ցուցանել զապահովանալ իւր 'ի
 խորանի տեառն , ոչ միայն ըստ տեղւոյն , իբր զի՞ այն
 տեղի էր ապահով , այլ և ըստ ազատ լինելոց յօրէ
 շարէ :

Օքն նեղութեան և փորձութե կուէ օր չար . զի որով
 չետև նեղութիւնը և փորձութիք՝ եթէ արտաքինք ի-
 ցեն , և եթէ ներքինք՝ 'ի կողմանէ իւրեանց ըստ ո-
 րում են այնպիսի՝ չարիս հասուցանեն , վասն այնորիկ
 և օրն՝ յորում այնպիսիք հասանեն 'ի վերայ մարդոյ՝
 'ի կողմանէ այնր չարեաց կոչի օր չար , կամ օր չա-
 րեաց . այսինքն այնպիսի օր յորում պատահին չարիք .
 Վայլ որ միանգամ յայսպիսի աւուրս առ անձ գիմէ
 մանաւանդ 'ի տաճարի նորա , անտարակոյս կարէ ապա-
 հովանալ . ոնդ յայտնի տեսանի այս 'ի նոյն իսկ 'ի գաւիթ .
 և յեղեկիա արքայ , և յայլ՝ որոց թէպէտե ՚ի վե-
 րայ ժամանեցին չարիք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ,
 բայց անձ պաշտպան եղեւ նոցա 'ի ծածկելն զնոսա 'ի
 խորանի իւրում :

Խակ զոր յաւելու ասել . ընդ յարէս արար զիս 'ի ծածէոյն
 խորանէ իւրում , այս բան կրկնումն է առաջնոյն , և
 իբր հաստատութիւն նորին . զի որովշետև ասաց՝ թէ
 ծածկեաց զիս անձ 'ի խորանի իւրում , այնու իսկ յայտ
 առնէր թէ ընդ յարէս առնէր զնա անձ . այսինքն ծած-
 կեր զնա 'ի ներքոյ ծածկութի տան իւրոյ : Ոմանց
 թուեցաւ ասել , թէ տունն այն ևս ծածկիւր վրանաձե
 խորանաւ . ուստի և ծածկին 'ի խորանի 'էր ընդ յար-
 կաւ լինել , այսինքն ծածկիլ 'ի ներքոյ ծածկութի
 այնր տան :

Երկրորդ՝ այս բան ուղղագոյն ևս մեկնի՝ յասբառնին
 խմանալով և յապառնին թարգմանելով ըստ եբբ' .
 այսպէս . ծածէսոյն զիս 'ի խորանէ իւրում յառաւը շըբէ , և
 հուշառութեաց զիս 'ի ծածէոյն խորանէ իւրոյ . և այս յայտ
 նի ևս տեսանի 'ի սաղ . (կ . 4.) ուր սոյն այս բան կրկ-
 նի այլով իմն շարադրութք այսպէս . * բնակեցայց 'ի

“ յարկս քո յաւիտեան . և ծածկեցայց ընդ հովանեաւ
 “ թեոց քոց : Իստ այսմ է իմանալի և իմաստ ա-
 ռաջիկայ բնաբանիդ : Իսկ պատճառ յանցեալն թարգ-
 մանելոյ է ցուցանել գնատատութիւն յուսոյ մարգա-
 րեին վասն ստուգութե կատարելի իրին . որպէս սովո-
 րութի է այլոց մարգարեից . ոնդ թէ եգեալ էր . անտա-
 րակոյս ած ծածկեց է զիս 'ի խորանի իւրում . և՛ն .
 Երրորդ կարէ մեկնիլ այս բան հայելով յօրն յայն
 յորում նա ինքն գաւիթ փախուցեալ 'ի սաւուղայ
 զնաց առ աքիմելէք քահանայ 'ի քաղաքն նոսմա . ուր
 էառ և եկեր զհայն առաջաւորութե , էառ և զտուերն
 գողիաթայ , որ կախեալ կայր յետոյ վակասին՝ նուի-
 րեալ տն , այսինքն 'ի հանդերձատան խորանին : Ուեր-
 ևս զայս տեղի կոչէ խորան տն . ուր իրըւ թէ ընդ
 յարկաւ արար զնա ած , այսինքն հովանի եղեւ , և
 պաշտպանեաց զնա յաւուր չարի իրըւ 'ի ծածկոյթ
 խորանի իւրոյ :

Չորրորդ՝ պատշաճագոյն ևս մեկնի այս բան 'ի փոխա-
 բերական միտս . զի զոր 'ի նախրնթաց երկուս հա-
 մարմն խօսեցաւ զիրական խորանէն և զտաճարէն , յո-
 րոց տարապըրեալն էր վասն հալածելոյ 'ի սաւուղայ ,
 աստ զնոյն բան 'ի փոխաբերական միտս դարձուցանէ ,
 որպէս թէ արդէն գտեալ իցէ յայ զայն՝ զոր իւլնդ-
 րէր , և որոյ վա աղաւէր : Եւ ըստ այսմ մնաց բառիս
 իւրան՝ իմանի մասնաւոր պաշտպանութիւն այ . և բա-
 ռիւս ծածիչն իւրան՝ իմանի հովանաւորութիւն աջ
 նորա . որպէս թէ ասացեալ էր . յաւուր չարի կամ
 յաւուր տառապանաց պահեաց զիս տէր պաշտպանութ-
 իւրով . որպէս թէ ծածկեալ էր 'ի խորանի իւրում .
 և չնդ յարէտ արար . այսինքն իննամարկեաց զիս հովա-
 նաւորութիւն աջոյ իւրայ . որպէս թէ սպահեալ էր 'ի
 ծածկոյթ խորանի իւրայ , կամ 'ի ներքին կողմն նոյն
 խորանին : Եւ կամ պաշտպանեաց զիս և իննամար-
 կեաց միսիթ արութիւն երկնային և իմանալի իւրայ խո-
 րանին . և քաջալերեաց յուսով երանացուցանելոյ զիս
 'ի ցուցանել ինձ ղծածկեալսն անդ :

Յարմարական մեկնութիւն սոյն այս համի և յայնպիսի
 պաշտպանութիւն այ , որով պատսպարէ ած զիւրօն յա-
 ւուր չարի : Ուերկացուցեալ եղեւ սուրբն փլաբիանոս .

նոյնպէս և սքն ագնէս և սքն վարվառէ . այլ առձ լու-
սով իւրով ծածկեաց զնոսա , և ընդ յարկաւ արար :
Այնպէս և զայլ երբեմն յայտնի հրաշիք և երբեմն
այլով իւրիք սրաշտպանեալ ասրեցցց : Օ այս սրաշտ-
պանութիւն կամ զայտպիաի ինտամարկութի՝ ոտն այլով
իմն բանիւ առաջի դնէ մարգարէն 'ի յաջորդ համարն ,
և ասէ :

Է . **Ա** վեհ բարձր արարեր զիս . և այժմ բարձր արա զվարե-
իմ 'ի վրայ նշանեաց իմոյ

Վրի յառաջին զիրս թագաւորաց . (զլ . իդ .) թէ
գաւիթ յետ փախչելց յերեսաց սաւուղայ՝ իբրև զը-
նաց 'ի կեիլա՝ լուեալ թէ սաւուղ գայ 'ի վերայ իւր՝
մեկնեցաւ անտի և զնաց 'ի լեան՝ որ եր յանապա-
տին զիփայ , և նստաւ 'ի մասերեթ՝ այսինքն յանձուկ
տեղւոջ . և անտի զնաց յանապատին մասնայ : Իբրև
ազդ եղեւ սաւուղայ՝ պիտեցաւ զհետ նորա : | Հւ դա-
ւիթ . * էջ 'ի վեմն որ յանապատին մասնայ || . այսինքն
էջ 'ի տեղին յայն՝ որ կոչիւր վիմ յանապատին մատ-
նայ : (ա . [թագ . իդ . 25 :)

Հասեալ անդր սաւուղայ սրաշարեաց զնա 'ի վիմի անդ ,
և կամէր ըմբռնել : | նմին ժամն գուժկան եհաս
առ սաւուղ . թէ * փութաւ եկ այսր , զի արշաւեցին
,, այլազգիք յերկիրս . և դարձաւ սաւուղ չպնդիւ
,, զհետ դաւթի . և չոքաւ ընդդէմ այլազգեայն || :

| Հւ տեղին այն՝ որ կոչիւր վէմ , յետ այնորիկ կոչեցաւ
* վիմ բաժանեալ . որպէս զնի 'ի նախայիշեալ զը-
լուին . (ա . [թագ . համար . 28 :) | Հւ գաւիթ զեր-
ծեալ 'ի վիմէ անտի նստաւ յանձուկս զադդայ իբր
յապահովի . և անդ ասաց զսպման ծդ . ապա յա-
ւել ասել և զորյն , ուր ըստ ձառին 'ի մէջ բերեալ
զայս ազստութի , ասէ :

Ա վեհ բարձր արարեր զիս . կամ ըստ տպազրեալ սաղ
մասաց ումանց որ է համաձայն երբ' . 'ի վեհ բարձր ար-
արեր զիս : | յամինքն է թէ յորժամ պաշարեալ էի ես
'ի վանին՝ այս է՝ 'ի տեղւոջն որ կոչիւր վէմ , և էի 'ի վը-
տանզի անկանելոյ 'ի ձեռս սաւուղայ , և մատնելոյ
'ի մահ՝ 'ի վեհ անտի բարձր արարեր զիս . իբր զի զթնա-
մին իմ յետս զարձուցանելով անփորձ և անվնաս հա-

ներ զիս անտի . կամ որ նոյն է՝ պաշտպան լեալ ինձ՝
ազատեցեր զիս անտի առանց վտանգի կենաց : Օ սոյն
զայս բացայայտազոյն ևս դնեւ . ('ի սաղ . կ . 3 .) յա-
նելն . * 'ի վիմեք բարձր արարեր զիս . առաջնորդեցեր
. ինձ . և իմ եղեր յոյս , աշտարակ հզօր յերեսաց թըշ-
նամեոյն || իմոյ :

Վ արդան վիմով իմանայ զքարելվէն տախտական , որք
էին 'ի տառապանակի . որոյ 'ի յանդիման կալն գաւթի
բարձր արարեալ իցեւ զնա առծ . այլ այս մեկնութիւն
արտաքոյ ելանեւ կարգի :

Վ յս բան մեկնի և 'ի փոխաբերական միաս . յսր միտ
առելն 'է Ադ բարձր արարեւ զիս հայի 'ի նմանաբանական
ոճ որով կամի ասել . ազատեցեր զիս այնպիսի օրինա-
կաւ . որպէս թէ 'ի վիմի կամ 'ի բերդի բարձրացո-
ցեալ և ամրացուցեալ էիր զիս . Եւ զիտումն բանին
յայս և եթ հայի . զի ցուցցէն թէ առծ պաշտպան եղեւ
նման 'ի պաշտրման նր և 'ի տառապանս նորին : Օ այս
եգեալ ինդրէ զի բարձեալ զնոյն պաշտպանութիւն

ցուցցէն նմա . սմին իրի յարեւ զինի , և ասէ :

Ե պարձր արա չփշաւի իմ 'է վրայ նշանեաց իմոյ :
Ուր շաղկասպդ և 'ի մէջ բերէ զնանակութիւն բառիս
նայնպէս որպէս թէ ասել . զօրօրինակ յայլումնուա-
զի ցուցեր առ իս զալաշտպանութիւն փրկութեան քոյ ,
սոյնովէս և այժմ ցոյց աղաշեմ , և այնու բարձր արա ըս-
դը-ի իմ 'է վրայ նշանեաց իմոյ :

Վ յս ոճ՝ այսինքն բարձր առանեւ չփշաւի՝ ակնարկէ 'ի
նոսա , որք 'ի տառապանս՝ կամ 'ի փորձութիւն զոյով ,
և կամ 'ի վարանդութեան՝ կամ 'ի զերութէ և կամ
'ի հալածանս տուայտելով՝ առաջի իւրեանց տեսա-
նեն զյոյս գտանելոյ զայցելութիւն ինչ , կամ զաւետիս
աղատութեան , կամ զառհաւատչեայ առաջիկայ փրկու-
թեան , կամ զապահովութի 'ի վտանգից , կամ զգարձ
կորուսեալ իշխանութեան , կամ զյայտնի նշան յաղ-
թութեան , կամ զայլ ինչ միսիթարութի 'ի վիշտս , զոր-
մէ ասացաք , (և 'ի սաղ . կ . 3 .) 'ի բանն բարձրացոյն
գլուխ իմոյ (տես ամսդ :

Վ ստ այսմ մտաց յասելն աստ , բարձր արա չփշաւի իմ 'է
վրայ նշանեաց իմոյ , ինսդրէ զալաշտութի 'ի թշնամեաց
և զբարձրանալն քան զնոսա , կամ 'ի վերայ նոցա .

որպէս թէ ասէք . ազատեամ զիս 'ի ձեռաց թշնամեաց իսկոց . և արա զի 'ի կամիլնոցա յաղթել ինձ , և նուաձել զիս և կորուսանել մի նուաձեցայց , և մի կոբեայց , այլ բարձրացայց 'ի վերոյ քան զնոսա , և ապահովացայց 'ի ձեռաց նոցա , որպէս և եղեն իսկ :

Եւ զորօքինակ պատահեցաւ դաւթի՝ բարձրանալ քան զթշնամիս իւր , նոյնպէս պատահեցաւ և այլոց բազմաց որք ապահնեցան յանձ , զի 'ի յառնել թշնամեաց 'ի վերայ նոցա առ 'ի իսպառ ընկձել զնոսա և կորուսանել , նոքա յուսացեալ յանձ փոխանակ նուաձեալ լինելոյ՝ զօրացան և բարձրացան , և թշնամիք նոցա նուաձեցան : Եւ արգարե նախախնամութիւնն այ բազում անզամ այնախափ օրինակաւ առնէ զայս մինչև զարմանալ մեզ թէ զիարդ այն հնարք թշնամեաց՝ որք կարգին առ 'ի նուաձումն ատելեաց իւրեանց՝ լինին պատճառ բարձրանալոյ նոցա :

Օ այս եցոյց զեղեցիկ օրինակաւ փիլխոսփայ ոմն յանձնն իւր . զի 'ի հալածել և 'ի բամբասել զնա թշնամեաց 'ի բրեւ զբուշացուցին զնա բարեկամիք իւր , և առնէ , թշնամիք քոյ կամին եղծանել զանուն քոյ , ևն . նա առեալ զջուր՝ էարկ 'ի կարաս ձիթոյ . առնէն յնա . զինչ առնէս զայդ . և նա ասէ . ծածկել կամիս ըզձէթն ընդ ջրով . և 'ի ծիծաղիլ նոցա՝ ասէ յնոսա . այսպէս առնէն ընդ իս թշնամիք իմ . զի այն հնարք նոցա , որով կամին ծածկել զանուն իմ՝ լինի ինձ իբրեւ ջուր և 'ի վեր բարձրացուցանէ զայն իբրեւ զիւլ : Եթէ կարաց փիլխոսփայդ զայս ասել՝ վստահացեալ 'ի փիլխոսփայդ թիւն իւր , քանի ևս այնոքիկ 'որք յուսացեալ իցեն 'ի տէք . և որ թշնամի կարէ կորուսանել զնոսա : * Վ իցէ՝ որ շարշարիցէ զձեզ (ասէ պետրոս) և եթէ դուք բարւոյն նախանձաւորք լինիցիք . այլ թէ և շարշարիցիք ևս յաղագս արդարութեան , երանելի և էք . բայց յերկիւզէ նոցա մի երկնչիջիք և մի խոռոշ վեսջիք || : (առ պետ . դ . 13 :)

Այս բան սաղմոսիս է յայտնի մարդարէութիւն յարութեանն քոյ 'ի դիմաց նորա ասացեալ առ հայր . որ բարձր արար զնա 'ի վիմէ՝ այսինքն 'ի գերեզմանէ , և հանսպազ և յամենայնի բարձր առնէ և բարձր արացէ զգլուխ նորա 'ի վերայ թշնամեաց նորին . այս-

ինքն թէ բարձրացուսցէ և փառաւորեսցէ զիշխանու թիւն նորա և զմեծութի զօրութէ նորա 'ի վերայ ամենայնի :

Ոյն այս բան ասի և 'ի դիմաց եկեղեցւոյ , և իւրաքանչիւր անգամոց նորա գուշելով առ հայրն յաւիտենական . * 'ի վիմէ բարձր արարեր զիս . և այժմ արարձը արա զգլուխ իմ՝ 'ի վերայ թշնամեաց իմոց || . ուր վիմով նշանակի քո ըստ առաքելոյն . Եւ ըստ այսմ բացառական հոլովդ 'ի վեդ , կամ ներգոյական հոլովդ 'ի վեդ՝ զնի փոխանակ զործիական հոլովդ վեճու . և կամ փոխանակ բառիս 'ի յէ-ան վեդ . այսինքն 'ի ձեռն քսի . որպէս թէ ասէր . բարձր արարեր և ազատեցէր զիս 'ի ձեռն քրիստոսի 'ի զրաց գժոխոց և յիշխանութենէ դիւաց . և այժմ աղաւեմ , բարձր արա զգլուխ իմ՝ 'ի վերայ նոցա : Վայ կարէ ասիլ դարձեալ և յիւրաքանչիւր քրիստոնէից ըստ այլ իմն բանի , այսինքն ըստ մնալց նոցա 'ի հաւատո՞ որ վէմ կոչի , ևս և ըստ լինելոյ նոցա յեկեղեցւով իրեւ 'ի վիմի . որովհետեւ եկեղեցին վիմի ևս նմանի :

Կարոյսապէս 'ի ձեռն վիմի կարէ իմացեալ լինել աստ կրօնն՝ այսինքն կրօնաւորական կեանքն և բնակարան . յոր միտս վստահանալի է իւրաքանչիւր կրօնաւորի ասել առ անծ . բարձր արարեր զիս և պաշտոպան եղեր ինձ 'ի վիմ՝ այսինքն 'ի կրօնի . և այժմ նուաձնելով զգլուխ թշնամեաց հոգւոյ՝ բարձր արա զգլուխ իմ այսինքն զմիտս իմ , կամ զհոգի իմ . զի քե զօրացեալ քե ազատեցայց , քե միմիթ արեցայց , և 'ի քեզ եեթ ուրախացայց : Օ այսպիսեաց արժանապէս ասի և ըանն եսայեայ . (իսք . 11 .) * ուրախ եղիցին բնակից վիմին || :

Վարդ մարգարէն զայսոսիկ ասելով՝ այսինքն է * 'ի վիմի բարձր արարեր զիս , ևն , միանգամայն կամի յայտ առնել և զիսափաք իւր՝ զօր ունէր առ տեսութիւնն այց , և որպէս ասացի 'ի նախընթաց համարն , առ այն հառաւելով զայսոսիկ խօսի . որպէս թէ ասացեալ էր . իցը թէ բարձր եղիցի զլուխ իմ , և եղեց ազատացեալ 'ի հարածմանէ թշնամեաց իմոց . որով և աներկիւղ և աներկեան մատեայց 'ի տուն տեառն , և յանդիման լեալ խորանի նորա , օրհնեցից

զնա անդ : Երւ զայս զիւր զիտումն պարզագոյն եռ
յայտ առնել : ՚ի յաջորդ համարն , առելով :

Ե . **Ը** ս-ը ն է լ է շ , և ն ս-ու-ս-ց ՚ի խորանի նորա դ-ս-ո-ր-ս-ք
օրհնութեն . օրհնելոյն , և ս-ղմու ա-ս-ո-յի ՚ո՞ն :
Ո ստանօր ասելն ը-ս-ը ն է լ է ՚ն շանակի կալ ՚ի տանն
այ առաջի խորանի նորա . ուր մատչելին պատարագք .
յորում և շուրջանակի կացեալ զետացւոցն սաղմո-
սէին առաջի տեառն , և շուրջ ևս զային զնովաւ . ընդ
սոսին ասէ կացից և ես առաջի աստուծոյ , և մատուցից
* պատարագ օրհնութեան :

Պ ատարագն է նուեր կամ ընծայ մատուցեալ առ
գերագոյն ոք անձն . իսկ օրհնութիւնն է բան կամ ա-
սացուած , յորում մեծացուցանի զօրութիւնն այ կամ
բարութիւն նորա , կամ այլ կատարելութիւն նորին . և
ըստ այս յասելն դ-ս-ո-ր-ս-ք օրհնութեան նշանակի բան
օրհնութեան նուիրեալ այ . որպիսի են սաղմուք և այլ
գովութիւնք համարիսականք կամ առանձնականք . զի
այսպիսի բանքս դ-ս-ո-ր-ս-ք օրհնութեն կոյին ՚ի նոր զիրս .
ըստ այնմ * պատարագ օրհնութեան փառաւոր ա-
. րացէ զիս . (սաղ . իսլ . 23 :) { Յօր միտ ասէ ա-
ռաքեալն . * մատուցուք պատարագ օրհնութեան
. յամենայն ժամ այ . (զօր և մեկնէ ասելով .) այս
. ինքն է զավուղ շրթանց խոստովանելոց յանուն
. նորա . (երր . ժկ . 15 :) Ու օր իբր յորդոր լինե-
լով ասէ սաղմուերգուն . * Ու ատոն պատարագ՝ զօրհ-
. նութիւն . (սաղ . իսլ . 14 :) Ոյնապէս է տեսանել
և յայլ տեղիս : Յօյս միտս առեալ իսօսի և աստ
մարգարէն յասելն :

Ը ս-ը ն է լ է շ , և ն ս-ու-ս-ց ՚ի խորանի նորա պարզագ օրհնու-
թեան : Ո յսինքն է մատեալ ՚ի տուն տեառն կացից առա-
ջի խորանի նորա , և մատուցից անդ տն զօրհնութիւնս
իբրև զարատարագ , այսինքն իբրև զնուեր հաճոյա-
կան :

Ումանց այսպէս թուեցաւ թէ բառիւմ դ-ս-ո-ր-ս-ք օրհ-
նութեան նշանակի այսպիսի զո՞ս որ նուիրի համարերձ
երգովլք և փողովլք յաւուրս համարիսից . որպիսի յիշա-
տակի ՚ի զիրս թուոց . (ժ . 10 .) յասելն տն ցմովսէս .
* յաւուրս ուրախութեան ձերց , և յամագլուխս ձեր

Հարկանիցից զփող և 'ի վերայ ողջակիզայն և 'ի վե-
րայ զո՞չիցն փրկութեանց ձերոց || բայց այս մեկնու-
թիւն երեխ արտաքսոյ զիտունն մարդարէին . զի ինքն
ուր և յիշատակէ զբառդ պատրութ օրդնութեան , այնու-
ինսնայ զբանս օրհնութեան և սաղմոսաց , և սատ իսկ
բացայայտակի մեկնէ զայն . ուստի յարէ զինի , և
ասէ :

(Եղանեցի և սաղմու սաղմու ՊՆ :) Եղանեցն բատ որում
զնի աստ (որպէս ասացաք այժմ զօրհնութենէն) նշա-
նակէ վերառաքել այ զայնպիսի բան՝ որ յայտ առնէ,
զգերազանցութիւն նորա կամ զզօրութիւն , կամ զբա-
րերարութիւն , և կամ զայլ կատարելութիւն նորին . և
այս կարէ լինէլ թէ ձայնիւ , և թէ առանց ձայնի :
Ոյնպէս և սաղմոս ասեն է պէտպէս բանս զովութեց
կամ մաղթանաց տարածել առաջի այ . և այս լինի
ձայնիւ : Վըդ զոր ասայն * մատուցից պատարագ
օրհնութեան || , զնոյն բացատրէ բառիւքս օրդնել և
սաղմոս ասել . որպէս թէ ասացեալ էր . 'ի բարձր առ-
նել ան զգըսւխ իմ՝ ցնծութեամբ մտեալ 'ի տուն նորա
եղանակէցից նման զբանս բարձրացուցիւ փառաց նո-
րա . և սաղմոս ասելով և նորանոր սաղմոսս ևս յօ-
րինելով հռչակեցից նոքօք զարանցելի մեծութիւն նո-
րա , և զանբաւ բարերարութիւն նորին : (Այսոսիկ
եղեալ մարդարէին՝ սկսանի աղայէլ զած , և իսան-
դաղատէլով պաղատիլ , զի կատարեացէ զինդրուածո
իւր . վասն որոյ ասէ :

Ե . Առ առ յայնի իմամ , զէ իսրբայէ ու ուշ . ողոքեա-
նին , և լուր ինչ , զէ ուշ սասց սիրու իմ . և իշնու-
բեցին երես իմ , պէտքառ այ առ ինդրեցին :
Որպէս բազում անգամ ասացեալ է մեր , լեշն նմա-
նութեա ասի առ անձ՝ փոխանակ համելոյ նորա և ընդու-
նելոյ զինդրուածո կամ զաղօթս . և զի առարկայ
լսելութէ է ձայնն , փոխանակ ասելոյ մարդարէին՝ լսեր
ինդրուածաց իմոց , (որպէս զնէ յայլ բազում սաղ-
մոս . կ . 1 . կդ . 1 . ևն) զձայնն ևեթ 'ի մէջ բերէ
սատ ասելով :

Առ առ յայնի իմամ : Վայսինքն համեաց տեր ընդ փա-
փակ պատի իմոյ՝ զոր նաև ձայնիւ իմով յայտ արարէ .

և 'ի ձայնն յայն՝ զայտ մի ինչ խնդրեցի 'ի քէն , զի ընակեցայց 'ի տան քում , և օրշնեցից զբեղ անդ :

Օպատհառ լսելոյ ևս առաջի դնե՛ առելով :

Օչ է առտաշի առ ժեզ : Արմի ասել , որովհետեւ բարձրա ձայն գուեցի առ քեղ յաղաշելս իմ , լուր ուրեմն ձայնի գումանն կամ կարգալցու : Այլ զորօրինակ բառս ըստ՝ այլաբանօրէն դնի աստ , նոյնպէս և բառս էստաշի . որով ցուցանի առաւելութիւն եռանդագին աղաշելոյ զած , որպէս թէ ասեր . յամ սրտ՝ աղաւեցի և խնդրեցի 'ի քէն , զի բնակեցայց 'ի տան քում . բնկալ ապա զաղաշանս իմ , և կատարեալ զինդրուածս իմ . իսկ եթէ ձայն աղաւանաց իմոց ըունի ընդունելութիւն առաջի քոյ , յողորմութիւն ապաւինիմ . և առ այս յարէ , և ասէ :

Այս էն , և չո՞ր ինչ : Արպէս թէ ասեր . նայեաց յամենազութ ողօրմանծութիւն քոյ . նայեաց և 'ի տառապանս իմ , որով վշտազնիմ վասն հեռի լինելոյ 'ի տանէ քումմէ . նայեաց և 'ի տրտութիւն սրտի իմոյ՝ որով տուայտիմ և մաշիմ վասն տարագիր մնալոյ իմ յերեսաց քոյ . յայտոսիկ նայեցեալ , ողորման ինչ և չո՞ր ինչ : Այր դառդ և՝ ունի զգօրութիւն մեկնողական շաղկապի . որպէս թէ եղեալ էր . յայսմ լիցի ողօրմիլդ յիս , զի լուիցես ինձ , այսինքն ընդունիցիս զաղաշանս իմ , և կատարեացես զինդրուածս իմ : Եւ յարէ զպատճառն՝ ասելով :

Օչ ժեզ առաջ սիրո իմ : Արտիւ իմացեալ լինի աստ պարունակեան 'ի սրտի . այսինքն է յօժարուի առ փափաքելին , կամ մանաւանդ պարունակողն սրտի , այսինքն նոյն ինքն հոգին՝ որ փափաքանօք իբր սրտիւ բերի առ այն՝ զոր ինդրէ : Այդ սիրտ մարդոյ յայնժամ առէ ինչ այ , կամ յայնժամ խօսի ընդ այ , յօժժամ ու սոսկ ձայնիւ , այլ և իմանալի բարբառով կամ բանաւորական տենչանօք 'ի ներքուստ աղաւեց զած , կամ յայտնէ նմա ինչ . ևն : Եւ զի մարգարէն զձայնն ևեթ յիշեաց 'ի վերոյ , որ է արտաքին , աստ յաւելու յայտնել և զներքինն զայն . որպէս զի այնու զտցէ յայ ողօրմութիւն , զոր ինդրեալն էր փափաքանմաք . յասելն . Օչ ժեզ առաջ սիրո իմ : որպէս թէ ասեր . արժան է քոյ զթուեղ և մարդասիրութեղ՝ զի ողօրմես .

յիս ինձ , և կատարեցես զինդրուածս իմ . զի ու
եթէ սոսկ ձայնիւ աղաւեցի քեզգ , այլ և 'ի ներ-
քուստ 'ի սրտէ իմմէ թափաննձելով պաղատեցա .
կամ որ նոյն է . ու միայն ձայնս իմ իմացոյ քեզ
զինդրուածս իմ , այլ և սիրտ իմ զնոյն ասաց քեզ .
այսինքն յայտնեաց քեզ : (Տես և 'ի համեմատութիս :)
ՄԵԾՆ խոսրով ('ի մեկն . ժամազր . երես . 56 .)
զայս բան միայնարելով ընդ չպրորդ համարց , զըլ
այսպէս . * | շ զինչ է՝ զոր կարդացերն (ով երա-
նելի) , կեանս յաւիտենից , կամ որ անդ բարին
ինդրեցեր . ոչ ասէ . այլ զինչ . զմի ասէ ինդրեցի
և զայն աղաւեմ . և որ է այն . բնակիլ 'ի տան տն ,
և շուրջ զսեզանով նորա զերգս օրշնութեն երգել .
| շ որպէս սովոր եմք զախորժակս մտացն յայտնել
այսպիսի բանիւք , եթէ չասէ ինչ ինձ մտացս բաց
յայտմ իրէ , սոյնպէս և մարգարես յամմէ հրաժա-
րեալ , զմինս զայս ինդրեր՝ զամ առուրս կենացն 'ի
տանն այ բնակել , և զնա տեսանել , և օրշնել
հանգոյն հրեշտակաց . վասն որոյ և զտենչանսն
յայտ բերէ 'թէ քեզ ասաց (կամ ըստ տոպազր .
քեզ անսաց) սիրտ իմ . և ինդրեցին երեսք իմ
զերեսս քո տէր ինդրեցին : | շ ու շատացաւ ասել
միանգամ (թէ ինդրեցին երեսք իմ զերեսս քո տէր ,
այլ կրկնէ 'ի վերջն 'թէ ինդրեցին . որպէս թէ ա-
սել . իմ մտացս դու ասիս միայն , և զքեզ ինդրեմ ,
և ոչ զադարիմ 'ի ինդրելոյ . վասնզի որպէս ասա-
ցաք ('ի համարն 4 .) նաբատակ ինդրելոյ նորա բնա-
կիլ 'ի տան տն ' էր ինդրել և վայելել զերեսս այ .

յոյր սակս ասէ :

| շ - ինդրեցին երեսք իմ . վերեսս ոչ ինդրեցին : | շ բեսքն
ըստ յատուկ նշանակութեան իւրում է դէմք կենդան-
ոյ կամ առաջին կողմն զլխոյ կենդանոյն ըստ ըո-
րբին . զի վերին մասն 'ի յօնից 'ի վեր մինչ 'ի հերս
ասի ձակատ . իսկ 'ի յօնից 'ի վայր մինչ 'ի ստորին
շուրթն ասի 'ի մասնաւորի դէմք կամ կերպարան . և
անտի 'ի վայր կզակ . և միանգամայն կոչի երեսք . և
է սա այն մասն , յորում զքեթէ բոլոր կենդանին
ներկայացեալ լինի 'մասնաւանդ 'ի մնորդն , և 'ի նմա-
կրեի գեղեցկութի կամ տգեղուի նորա . և ըստ այսմ

բազում անգամ ըստ Խարտասանից երեսքն դնի փոխանակ անձին մարդոյ ըստ ներկայացուցանելոյ զբոլը անձն . յոր միտս ասաց քուսի արաքայի առ արի սողում . * և քոյ երեսք երթիցեն՝ 'ի մէջ նոցա || . այս ինքն քոյ անձն կամ քոյ ներկայութիդ . որ է ասել զու .
(ը . [Ձ ա գ . Ժ է . 11 :)

Արդ նմանութիւ ասեալ՝ երեսն նշանակէ՛ 'ի մարդն զի մացականութիւն հոգւայն՝ կամ զվերին մասն բանական զոլոյ՝ որպէս ոսն զատորինն . (զորմէ տե՛ս 'ի սաղ . ին . վերջ .) և կամ զնոյն իսկ զհօգին՝ ոչ սոսկապէս ըստ որում հոգի , այլ ըստ որում երես իմն հայեցող յառարկայն՝ կամ ըստ որում տեսանող առարկային աշօք մոտաց :

Իսկ առ անձ երեսք ասել պէտքէս նշանակի . (զորմէ տե՛ս 'ի սաղ . կ . 6 .) այլ աստանօր դնի փոխանակ ներկայութեանն այ . կմ փոխանակ գեղեցկութե՛նոր ըստ ներկայ լինելոյ կամ ըստ առարկելոյ մեզ . և այս կամ նիւթապէս և կամ իմանալապէս , կիւթապէս՝ յորժամ առարկի զգայութեանց մերոց՝ ոչ եթէ ինքեամբ , այլ 'ի ձեռն նիւթական իրաց՝ զորօրինակ 'ի ձեռն երեմնց , 'ի ձեռն պատկերաց , 'ի ձեռն սրբազն իրաց , ևն : Խմանալապէս՝ յորժամ առարկի մոտաց պարզապէս , և այս ևս կամ իմանալի ելուզեալ տեսակաւ որով հանաչեմք զնա՝ թէ այսպիսի է . այս ինքն թէ ամենաբարի է , ամենակարօղ է , ամենատեր է . ևն : Խւ կամ գէմ յանդիման տեսութեամբ՝ որով ժառանգեմք զնա՝ 'ի հանդերձեալն յինքեան՝ որպէս և էն :

Հայս ամ հայի աստանօր այս ըան մարգարեին ըստ կրկին փափաքանաց նորա : Խախ ըստ այնմ փափաքանաց՝ որով փափաքեր մոտանել՝ 'ի տուն ոնն , և վայելել զներկայութիւն նր՝ առաջիկայ լինելով տարանակի նորուն : Խւ ըստ այսմ յասելն . ինդրեցն երեսս իմ . չըրեսս ոյց ուր ինդրեցն , կամի ասել , ինդրեցի և փափաքեցի ներկայ լինել առաջի քոյ 'ի սան քում . զի այսու երեսք իմ տեսցեն զերեսս քոյ , այսինքն զվայելութիւն տան քոյ , որ իբր երես նիւթապէս յանդիման առնել . ինձ զներկայութի քոյ :

Երկրորդ՝ ըստ այնմ փափաքանաց , որով փափաքեր

մասնել յերկնայինն խորան՝ առ ՚ի ժառանգելց ան-
դէն զերանաւետ տեսութիւնն այ, և ըս այսմ յասելն .
ինտբեշն երես էմ, չըրես ու ուշ ինտբեշն . կամի ասել .
ցանկացայ ներկայ լինել քեզ յերկնային քումիդ տա-
ճարի . զի այսու երեսք հոգւոյս տեսցեն դէմ յանդի-
ման զերես քոյ , այսինքն զիրական ներկայութիւն
էութեան քոյ . շատ է՝ զըր լուայ զքէն ականջովք .
ցանկամ երեսօք զերես քո տեսանել . որով դիտ .
ասել՝ տեսից զքեզ:

Վրդ բանք մարգարելին թէպէտ և յաս հային , բայց
այսու օրինակաւ ու գնեն , այլ երեքումբք պայմա-
նօք զերազանց . որով յայտնի երեփ թէ մեծ էր յոյժ
այս փափաք սրտի մարգարելին : Վրաջին պայմանն
է ոճն խելամութեն և եղանակն այլաբանական որով
փոխանակ զնելոյ զներկայանալ անձին իւրոյ առա-
ջի այ առ ՚ի ժառանգել զնա տեսութեամք էութեն նր՝
՚ի մէջ բերե զերեսաց ներկայութիւն . և պատճառ
այսպէս զնելոյ ու այլ ինչ է՝ բայց եթէ այս , զի այն-
չափ էր սաստկութի փափաքանաց սրտի նորա առ այն ,
մինչև չկարել այլովք բառիւք բացատրել . քանզի որ-
չափ ջանաց բացատրել՝ ՚ի վերոյ ասելով * զմի խնդրե-
ցի , և ն . բանք իւր նիւթական զորով ու ցուցանելին
զայն՝ զոր ուներ ՚ի սրտի . վասն որոյ և յոճ զերա-
զանց սկսաւ կարգել զբանն՝ առ ՚ի զերազանցութիւն
փափաքանաց սրտի իւրոյ ցուցանելոյ . և զի նմանութի
երեսաց նպաստէ ՚ի սոյն . ըստ որում է, զերազանց
մանն , և ՚ի նմա փայլի զերազանցութիւն մարդոյ՝ ՚ի
նոյն տպաւորեաց զբան իւր :

Երկրորդ պայմանն է ոճ լութեան յայտարար բառից .
զի լուեաց ՚ի մէջ բերել զբառուդ՝ տեսանել , ժառան-
գել . և ն . որպէս և պահանջնելը կարգ բանին ա-
սել . * իննդրեցին երեսք իմ տեսանել զերեսս քոյ ,
կամ ժառանգել զերես քոյ . բայց լուէ , և ու ՚ի
մէջ բերե զայդպիխեղ . զիննդրելն միայն յիշէ , առ ՚ի
ցուցանել թէ անհնարին մեծ է փափաք իւր առ ու և
իցէ ներկայութիւնն այ , մանաւանդ առ դէմ յանդի-
ման ներկայութիւն և տեսութի նորա . և այնչափ մեծ
մինչ չհամարձակիլ բառիւք բացատրել , կամ այնի
համեմատ բառ գտանել :

Խըրբորդ պայմանն է ոչ կրկնութեան նոյն բառից՝ զի նախ առանց 'ի մէջ բերելց զառարկայ խնդրուածոց խւրոց . այսինքն առանց 'ի մէջ բերելց զինդրելին՝ զինդրելն միայն զնէ անորոշակի . խնդրեցին առէ երեստ էմ : Աւ 'ի հարցանել ցնա տն . զինչ խնդրեցին երեստ այս պատասխաննէ . չէրեստ այս ենդրեցին : Խակ այս ոչ այնպէս եղանակաւորէ զբառգ խնդրել մինչև զամ ուժգնութիւն նշանակութէ խնդրել բային սաստկութը 'ի մէջ բերել . որպէս թէ եղեալ էր , ամիւ և ըստ ամի որչափ հնար է խնդրել խնդրեցին երեսք իմ զերեսս քոյ :

Վ. Այս եղանակ խօսից մարգարէին յայտնի նկարագրէ նաև զբերումն փափաքանաց , որով բերի բանականս բնութիւն համօրէն առ ժառանգութիւն այ իբր առ իւր ծայրագոյն երանութիւն . զի երեսք ամ բանականաց , այսինքն հոգիք նոցա՝ ըստ որում են հայեցօղք և փափաքօղք , որովշետե կարգեալ են առ ժառանգութիւն անհուն բարւոյ՝ իբրեւ առ իւրեանց ծայրագոյն երանութիւն , յամի առ այն բերին . բայց անորոշակի և անյայտակի , կամ ասացից՝ յանգետոս . ուստի և ոչ իմանան՝ թէ զինչ է այն՝ առ որ բերին . և վասն այսր պատճառի թէպէտե միշտ և յամի խնդրեն և խնդրեն , բայց ոչ զիտեն՝ զինչ խնդրեն : Աթէ հարցանես , պատասխանեն . խնդրեմք զայնպիսի ինչ որ իցէ լիացիւ ամենասարած բաղձանաց , կամ անլիանալի անսահման ձկտանաց հոգւոյ . և զի միայն ամ է այնպիսի , առանց իսկ տեսանելոյ զնա՝ զայն խնդրեն . ուստի առ նոսա ևս ձմարտի ասեն . * զերեսս քոտեր խնդրեցին :

Վ. Այլ եթէ ներկայացի հոգին առաջի նորա , ոչ ևս խնդրէ , այլ ժառանգէ . պարագրեալ յանբաւութենէ նորա . վասն զի նա միայն զոլով անսահման բարի՝ նա միայն բովանդակապէս լիացուցանէ և պարագրէ զանսահման բերումն բաղձանաց հոգւոյն . զի զորօրինակ անսահման զիծք ձգեալք 'ի կէտէ բոլորակին՝ ոչ իւիք պարագրին՝ բայց եթէ ըրջասիթւու բոլորաձե երեսօք կամ մակերևութիւ , զի նա գրաւէ զայն ամ զիծք սոյնպէս է և յանչափ բերմունս բաղձանաց հոգւոյն , զոր միայն անսահման բարին զրաւէ , և բովանդակա-

պէս պարագրեալ լիացուցանէ բոլորն ըստ մասին և
բոլորն ըստ բոլորին : Օ՞նա ուրեմն միայն ժառանշ
գել խնդրեն մարդիկ . բայց քանզի ոչ խմանան՝ թէ
այն է՝ զոր խնդրեն , վասն որոյ և տատանին 'ի փոփո-
խական և 'ի չափաւոր բարիս :

Ե. յոմ գեղեցիկ օրինակ է այն՝ զոր առաջի առնեն
խմանտունք . զոր և մեք յառաջ բերաք ('ի սաղ . ա .
Ա .) այն է՝ կողմացոյցն մագնիսեան , որոյ լեզուակն
օծեալ գոլով 'ի մագնիսէ , բերի յանշարժ բեկեռն երկ-
նից . Եթէ շարժեսցի՝ անգաղար տատանի՝ առ 'ի գր-
տանել զայն՝ զոր խնդրէ . և զինչ արդեօք այն է՝ զոր
խնդրէ . խնդրէ զերեսս անշարժ բեկեռին . յոր 'ի հայ-
ին և 'ի յարին հաստատագէս՝ մնայ հանգիստ և ան-
դրոր : Ի նաւի գոլով՝ յալէկոծիլ նաւուն՝ ինքն ան-
շարժ ունի զերեսս իւր առ այն . 'ի կառո գոլով՝ 'ի
շարժիլ կառաց՝ ինքն զերեսս իւր ու դարձուցանէ
անտի . 'ի ձեռին մարդոյ գոլով՝ յընթանալ մարդոյ
առտ և անտ՝ յոր կողմն և իցէ՝ նա յամի զերեսս իւր
ուղղեալ պահէ առ այն . այսինքն առ երեսս անշարժ
բեկեռին :

Ե. յո է պատկեր յօժարութեան բաղձանաց բանական
հոգւոյ՝ որ օծեալ գոլով՝ յանշային բարութենին անտի .
յամի բերի առ այն անշարժ բարին . յայն հառաչէ ,
և զայն միայն խնդրէ . բայց քանզի ու խնդրէ յայնմ՝
որ է , այլ յայնմ՝ որ ու է , վասն այնորիկ և արտաքոյ
նորա կալով մնայ երերեալ և տատանեալ : Եթէ
յայնմ խնդրէր՝ որ է՝ այսինքն 'ի յած , և 'ի նոյն յա-
րեր , 'ի նմա գտանիք , զոր խնդրէր . և 'ի նմին մնայր
անգորացեալ և բերկրեալ :

Խորհրդաբար՝ այս բան ասի 'ի բերանոյ մարդկային
բնութե առ բանն ան . ըլք ձայնի խմում . զի առ քեզ
աղաղակէ տառապեալ սիրտ իմ , և ընդ քեզ խօսի .
ևս և խնդրեն երեսք իմ , այսինքն նահապետք իմ և
մարդարէք իմ և ամ արդարք . խնդրեն և խնդրեն .
և զոր խնդրեն այս է՝ տեսանել զերեսս քոյ :

Եարցապէս՝ այս բան հայի 'ի բաղձանս այնոցիկ ոլք
խնդրեն տեսանել կամ վայելել զերեսս այ 'ի մու-
սորական աղօթս . զոր և 'ի ժտելն՝ արժանանան տե-
սանել երբեմն , զի 'ի ցանկալն տեսանել տեսանեն .

և 'ի տեսանելն տեսանեն . 'ի ցանկալ զարեի տեսա-
նել զյո՞ւ տեսառ . 'ի նմաննէ . * զիւրաւ երեւի սիրողաց
, իւրոց , և գտանի խնդրողաց իւրոց . հասաննէ առ
, ցանկացող իւր || . (իմաստ . կ . 13 :) Ո անտանդ
թէ երբեմն և բաղվնէ . * բաց ինձ քոյր իմ || . (երգ .
ե . 2 :) Խսկ որք ոչն ցանկան , և կամ սակաւ ցան-
կան՝ ոչ գտանեն , և կամ մեծ ինչ ոչ համարին՝ զոր
առնուլ ցանկան . զի ըստ առակին * որ սակաւ ցան-
կացեալ լինի՝ սակաւագին համարեալ լինի || . որպի-
սի և ցանկութիւն ծուլից . որք 'ի ցանկան ծուլանան ,
և անհոգանան , որով և ցանկութիւն նոցա ծանրա-
նայ 'ի վերայ նոցա . զի * ցանկութիւն սպանանի ըզ-
ծոյն || . (առակ . ժամ . 25 .) քանզի թէպէտ և կամի
ծոյն տեսանել և վայելել զերեսս այ , բայց ոչ աշ-
խասի . * կամի և ոչ կամի ծոյն || . (առակ . ժոկ . 4 :)
Խսկ որք աշխատին՝ հասանեն . և եթէ յետնին՝ պա-
զատին . որպէս և տեսանել յառաջիկայ բանդ . ուր
մաղթէ մարգարէն , և առէ :

Ճ . **Ո**ւ բ տարբառ-ցաներ զերեսս ոյ յինէն . և մի խորութէր
բարիանելիք 'ի ծառայէ քառմէ :

Այս նմանութիւն դարձուցանելոյ այ զերեսս , առա-
ջի զնի հայելով 'ի գործողութիւն մարդկան . զի մար-
դիկ յորժամ դժուարին 'ի վերայ ուրուք , այսինքն
յորժամ նեղանարտին կամ յորժամ տաղտիկան , և կամ
յորժամ ոչ կամին լսել խնդրուածոց ուրուք , դար-
ձուցանեն զերեսս 'ի նմանէ . որով ցուցանեն՝ թէ ոչ
համին ընդ բանս նորա , կամ ընդ անձն նորա , և կամ
ոչ կամին կատարել կամ տապ՝ զոր ինդրէ : Այսպէս
յորժամ անձ ամփոփէ զննորհս իւր 'ի մարդոյ , և կամ
մերժէ զնա , և կամ անտես առնէ զնա 'ի մասնաւոր
խնամոց իւրոց , ասի դարձուցանել զերեսս 'ի նմանէ :
Ամանապէս յորժամ ոչ կամի կատարել զինդրուածո
մարդոյ . և կամ ոչ տայ միսիթարութիւն ինչ ըստ
հոգւոյ , և կամ յաջողութիւն ըստ մարմնոյ , և ա . ասի
այլաբանութք , թէ դարձուցանէ զերեսս իւր 'ի նմա-
նէ . ըստ այսմ նմանութեան խօսելով աստ մարգա-
րէին աղաւէ զտէր , և առէ :

Ու բ տարբառ-ցաներ զերեսս ոյ յինէն : Այսինքն է՝ մի հեռի

առներ կամ մի անխայեր յինէն զտեսութիւն երեսաց քոյ . կամ մի թագուցաներ յինէն զերեսս քոյ զոր խնդրեցի . այլ՝ ցոյց աղաւեմ : Եւ կամ մի թողուր զիս , մի մերժեր զիս , մի անտես առներ զփափաք սըրտի իմայ , որով ցանկացայ ժառանգել զերեսս քոյ : Եւ կամ մի զրկեր զիս աղաւեմ՝ ներկայութենէ քում մէ , ի տեսութէ վայելչութէ քոյ , ի վայելմանէ գեղեցկութեան քոյ . ևն : Հայս անմարկէ ասելն * մի դարձուցաներ զերեսս քոյ յինէն || . յորում տայ իմանալ և զայս . մի զանարժանութիւնս իմ տեսանելով լքցես զիս՝ ի բաց , և կամ հեռացիս յինէն :

Հյարմարական մեկնութք այս բան պատշաճի այնոցիկ որոց յաղօթելն դարձուցանէ անձ զերեսս իւր 'ի նոցանէ . որպէս առնէ առ որս ամեարշտութք մատշն յաղօթս , կամ առանց պատկառանաց , կամ առանց պատրաստութեան , կամ առանց զգաստութեան , կամ առանց հոգւոյ : Եւս և առ այնոսիկ՝ որք թէպէտ և բարեապաշտք համարին՝ բայց յորժամ են արտաքոյ աղօթից՝ դործեն ընդդէմ աղօթից . և այս՝ կամ տարացնդելով , կամ 'ի հոգս զբազելով , կամ 'ի կիրս բարիութեան ըմբռնելով , ևն . սմին իրի և 'ի մատցիլ իւրեանց յաղօթս՝ տեսեալ ընսա այ յայսպիսի զգածմունս՝ զերեսս դարձուցանէ 'ի նոցանէ : Ոյնպէս և որք 'ի ցերեկի տմարդի վարին ընդ այ , անձ ևս ընդ երեկո գաներես ցուցանէ նոցա զինքն յաղօթս . և յայնժամ ըունին նոքա զիրաւունս տրանջելոյ . զի որպէս վարին նոքա առ անձ , անձ ևս այնպէս վարի առ նոտա . ըստ որում և գրեալէ , թէ * ընդ թիւրսն թիւրեսցիս || . (ք . թագ . իք . 27 : և սաղ . ժէ . 26 :) Վրդ մարզարէն աղաւէ զնծ՝ մի երթէք դարձուցանել զերեսս իւր , և մի ևս լքանել , կամ թողուլ 'ի բաց , և կամ մերժել . և առ այս յարէ և ասէ :

Շ- կ իւրաբէր բարաբէր՝ ծառայէ ունմէ : Աւաբէլն է 'ի գնայն 'ի ձանապարհ՝ միտել յայլ կողմն , կամ յայլ տեղի . արդ յորժամ առաջնորդէ անձ ծառայեց իւրոց 'ի ձանապարհ՝ ուղիղ՝ այսինքն 'ի հանոյս իւր , եթէ վասն անարժանութեան նոցա՝ կամ վասն ընդդէմ դառնալոյ նոցա , ոչ ևս առաջնորդեսցէ նոցա 'ի նոյն , և ոչ ածցէ զնսա յեզր ձանապարհին՝ այսինքն 'ի վախ-

Ճան բարի , այլ մանաւանդ բարկացեալ ընդ նոսա՝
արհամարհէսցէ , որով և թոյլ տացէ նոցա յուղիղ
գնացից անտի բերիլ յայնպիսի Ճանապարհ կամ
յայնպիսի գործ՝ որ իցէ ոչ բարի , այլաբանութեամբ
խօսելով՝ ասի խոտորիլ այ բարկութք՝ ի նոցանէ . որ
է ասել . ան արհամարհէ գնոսա , և հեռանայ ՚ի նո-
ցանէ՝ ոչ ըստ պահպանելոյ զնոսա ՚ի գողն , և ըստ
ինամելոյ ՚ի գործեն , ապա թէ ոչ՝ ՚ի չիք դառնային ,
այլ ըստ պահպանելոյ ՚ի բարւոք գողն . և ըստ ինա-
մելոյ զնոսա նորհօք :

Հայս հայեցեալ աղաւէ մի խորհրդ (ասէ) բարկութք՝ ՚ի
ծառացէ քառակ . այսինքն մի վասն անարժանութեանս
իմոյ բարկացեալ ՚ի վերայ իմ՝ արհամարհէսցես զիս .
և մի անտես առնելով հեռասցիս յինէն ըստ ինամելոյ
քոյ զիս նորհօք . կամ ՚ի պաղատիլ իմում առ քեզ՝
առ ՚ի ժամանել ՚ի տեսութիւն երեսաց քոյ ՚ի տեսա-
նելոյ յիս զանկարգ ինչ՝ մի բարկասցիս , և մի խոտո-
րեսցիս յինէն , ոչ կամելով հայիլ յիս , և լել ինձ .
Այս պաղատանք մարզարէին հիմն ունի յինքեան
զերկիւղն այ . զայն երկիւղ՝ որ ասի երկիւղ բարի ,
և ոչ զայն՝ որ ասի երկիւղ բռնադատական . զի այս
բռնադատական երկիւղ ստիպէ զծառայն կամիլ՝ զի
հեռասցի յիւրմէ տէր իւր . իսկ երկիւղ բարի ստիպէ
զնս կամիլ և փափաքիլ զի մերձեսցի առ ինքն տէր
իւր , և ոչ թէ հեռասցի : Ապա քանզի սյր արդար՝
որպիսի էր երանելիս դաւիթ՝ Ճանաւէ և խոստովանի
զինքն զոյ ծառայ այ բարձրելոյ՝ յերկիւղ բարի ըմ-
բռնեալ աղաւէ զնա՝ զի մի հեռասցի յիւրմէ . զուցէ
տկարացեալ անկցի ՚ի մեղս . որոյ վասն և ան բար-
կացի նմա , և լրցէ զնա , և կամ իսպառ թողցէ .
այլ ՚ի կարօտին օգնեսցէ . և ՚ի տկարանան զօրա-
ցուսցէ . և եթէ անարզանաց ևս իցէ արժանի , ողոր-
մեսցի նմա , և մի մերժեսցէ զնա :

Խորհրդաբար , պաղատէր մարդկայինն ընութիւն առ
ան . զի մի վասն անօրէնութեանն յաճախելոյ յաշխար-
հի զարձուսցէ զերեսս իւր , և բարկացեալ խոտորի-
ցի ՚ի լինելոյ որդի մարդոյ , և անարզեսցէ իսպառ .
այլ յօկնութիւն ժամանեալ լիցի նմա փրկիւ . որպէս
զնէ ՚ի յաջորդ համարն ասելով :

ժամ . () ինսիւն իմ լէր ուեր . և մի անարդեր զիս . և մի լու-
ղութ զիս ած իրին իմ :

() ինսիւն լինելն է պալ կամ մատուցանել ումեք բա-
ւականութիւն՝ ընորին կարողութե՛ առ այս ինչ կամ
առ այն . այսինքն առ ՚ի գործել զայս ինչ , և առ ՚ի
հասանել յայն ինչ , կամ առ ՚ի ստանալ զայս և առ
՚ի կատարել զայն . կամ առ ՚ի զերծուցանել զանձն
՚ի վտանգել , և առ ՚ի զգեմ ունել թշնամեաց , ևն .
առ որս թէպէտե նա՝ որ գտանել զայնսլիսի բաւակա-
նութիւն , ունի կարողութիւն , բայց ինքնին ոչ է բաւա-
կան ՚ի գործ դնելոյ զայն , այլ կարօտի և այլում առ
՚ի բաւական լինելոյ այնմ : Օ որ օրինակ՝ որ տկարա-
ցեան է յոտս , թէպէտ և ունի կարողութիւն գնալոյ ,
բայց ինքնին չէ բաւական այնմ՝ այլ կարօտի առնուլ
յայլմէ բաւականութիւն՝ առ ՚ի ներգործութե՛ ՚ի գործ
դնելոյ զայն կարողութիւն գնալոյ . սոյնպէս իման և
յայլ իրս , այսինքն ՚ի գործել , ՚ի յաղթել , յուսա-
նիլ ևն . յորս բաւականութիւն առնուն է օգնակա-
նութիւն գտանել . և որ տայ զայս բաւականութիւն , և
կամ որ լինի պատճառ այսր բաւականութե՛ ասի օգնա-
կան լինել կամ օգնել . և եթէ յաւելցէ ինչ ևս՝ ա-
սի նպաստել . Իսկ եթէ բնաւ չկայցէ կարողութիւն ՚ի
յընդունօղն՝ այն տուչութի , կամ այն պատճառելու թի
բաւականութեան ոչ է օգնել , այլ առնել . զօրօրինակ
եթէ որ չունիցի զոտս , յայտ է՝ թէ չունի և կարո-
ղութիւն գնալոյ ոտիւք . և որ տայ նման գնալ , ոչ եթէ
օգնական լինի նմա ՚ի գնալ , այլ առնել զգնալ նորա :
Արդ մարդո՞ որ արարաւ յայ առ ՚ի պաշտել զնա և
ժառանգել , թէպէտ և ունի յինքեան կարողութիւն
առ այն՝ պարգեեալ նմա յարարչն , բայց ինքնին չէ
բաւական՝ առ ՚ի զայն կարողութիւն ՚ի գործ դնել ըստ
պատշաճի . * Օ ի առանց իմ ոչինչ կարեք առնելլ .
ասաց տէրն . (յովչ . ժե . 5 :) | յւ այս վասն երկուց .
մի՝ վասն պայմանի ստեղծական ընութեան՝ որ յոշնչէ
զովով ընդ տկարութե՛ է . և մի ևս՝ վասն բազմազիմի
ընդդիմութեանց՝ որ ՚ի ներքոյ՝ և որ արտաքոյ . սմին իրի
կարօտի առնուլ յայ բաւականութիւն ՚ի գործ դնելոյ
զայն զիւր կարողութի : | յւ որոց միանգամայն տայ ած

զայս բաւականութիւն՝ ասի օգնական լինել նոցա : Եւ այս ևս կրկն օրինակաւ . մի՛ ՚ի հասարակի , և մի ևս՝ ՚ի մասնաւորի : Ի հասարակի՞ անցն է այս բաւականութիւն . զի ան ոչ ոչ յումքէ զանայ զայս , այլ ամենեցուն տայ ըստ իւրաքանչիւր կարի . և յայս միտու ան ամենեցուն օգնական լինի՞ ՚ի բարին ՚ի ձեռն ընդհանրական շարժութեան և նախախնամութե : Իսկ ՚ի մասնաւորի՞ ոչ ամենեցուն՝ այլ ումանց տայ զայսպիսի բաւականութիւն առ այս ինչ կամ առ այն . և յայն ժամ ասի մասնաւորապէս օգնական լինել նոցա : Այլ որք միանգամ ընդդէմ զառնան նմա , և կամ իւիք մերժող գտանին նմա , և կամ թիւրին յուղիղ շաւղէ նորա , փոխանակ օգնական լինելոյ նոցա՝ անարգէ զնոսա , և երեւմն թողու ՚ի բաց : Հայս ամ հայեցեալ մարգարէին աղաւէ զած՝ օգնական լինել ինքեան , և մի անարգէլ զինքն , ևն :

Ի վերոյ ՚ի սկզբան սաղմոսիս առաջի եղ մարգարէն զվստահութիւն իւր՝ զօր ուներ աստուծով . եցոյց ևս թէ զիարդ ազատեաց նա զինքն ՚ի թշնամեաց իւրոց . յայտ արար նաև զիափաք իւր՝ զօր ուներ առ բնակութիւն տամնն այ և առ տեսութիւն երեսաց նորա . և ինզրեաց ՚ի նմանէ , զի մի զարձուսցէ զերես իւր . և մի խոտորեսցի ՚ի նմաննէ բարկութք : Ծեսեալ ապա թէ առաջի կան պէսպէս արգելք վանագիք , երկնչի ըստ երից . մի՝ զի ինքնին ոչ կարէ լինել բաւական՝ առ ՚ի վանելոյ զարգելն , և առ ՚ի հապանելոյ ՚ի փափաքելին իւր : Երկրորդ՝ զի զուցէ փոխանակ այնք՝ այսինքն փոխանակ զարգելն անարգելոյ՝ ՚ի նոցունց անարգեսցի , այսինքն անարգ լիցի . և ՚ի նոցունց յաղթահարեալ գործեացէ ինչ ընդդէմ այ . որով և ՚ի նմաննէ ևս անարգեսցի : Եւ երրորդ՝ զի զուցէ ըստ ամի թողեալ լիցի յայ և կորիցէ : Ա ասն առաջնոյն ասէ :

() Քնահան իմ լու որ : Այսինքն նայեցեալ յիս և ՚ի փափաք սրտի իմոյ , և յառաջիկայ բազմապատիկ արգելս , և տեսեալ՝ թէ չեմ բաւական ինքնին վանելոյ զայնուիկ՝ և ժամանելոյ ՚ի փափաքելիդ իմ , օգնական իմ լեր , այս է՝ տուր ինձ բաւականութիւն առ այն . կամ արա՞ զի քե կարացից վանել զարգելն զայնու

սիկ՝ և քեւ մարթացայց ժամանել առ այն՝ որում փափաքիմ։

Չաւելու և զբառդ տէք . զի որովհետեւ՝ ի նախընթաց համարն ծառայ առաց զինքն , յաւելլով ապա զտերն՝ ոչ միայն հաստատէ զծառայ լինել իւր , այլ և կամի ՚ի գութ շարժել զայն՝ որոյ ծառայ խոստովանեցաւ զինքն՝ որպէս զի այսու լիցի նմա՝ ՚ի գործ ածել զտերութիւնն զայն՝ ՚ի վերայ իւր , և այսու օգնել . որպէս թէ ասացեալ էր . եթէ դու որ տէրդ ես՝ ոչ օգնեսցես ինձ քումդ ծառայի , ովլ ապա օգնեսցէ ինձ . թշնամիք իմ հալածեն զիս . բարեկամիք իմ հեռայան յինահն . հայր իմ և մայր իմ թողին զիս . եթէ ՚ի քէն ևս անայցելու մնացից շարեաց՝ ՚ի շարիս զլորեցայց . որոյ վասն գուցէ և անարգեցայց՝ ՚ի քէն . յաղագս այսորիկ յաւելու ևս աղաւել՝ զի մի յիրաւի անարգեսցի . որ էր երկրորդ առիթ երկնչելոյն իւրոյ . սմին իրի յարե զինի .

և ասէ :

Ե՞ս դի անորդէր զիս : Ի՞նարգեն է մերժել զոք իրու զանարգ կամ իրըն զանարժան . ըստ այնմ . (ա . թագ . ը . 7 .) * ոչ եթէ զբեզ անարգեցին , այլ զիս մերժեցին || : Ե՞սն է և արհամարհէն . բայց երեքումբք տարբերի . մի՝ ըստ սկզբան կամ ըստ հիման . զի անարգեն հիմնի յատելութեան (և երեմն ՚ի շարութեան՝ այսինքն՝ ՚ի կամաւոր թիւլութէ ,) իսկ արհամարհէն հիմնի ՚ի բարկութէ , (երբեմն և յամ բարտաւանութեան , կամ յիշխանութէ , և մերժ յանհոգութէ) : Երկրորդ՝ ըստ պարագայից . զի անարգեն յաւետ ըստ ներքնոյն մտածի քան ըստ արտաքնոյն . իսկ արհամարհէն յաւետ ըստ արտաքին նշանաց մտածի քան ըստ ներքնոյն . յոր միտս ասէ . ած . * որ արհամարհէն զիս՝ անարգեսցի || . (ա . թագ . ը . 30 :) Երրորդ՝ ըստ առարկային . զի անարգեն՝ յայնալիս առարկայ հայի՝ որ անհաճոյ է անարգողին կամ իրը ընդդէմ . իսկ արհամարհէն կարէ հայիլ և յայնալիս առարկայ՝ որ թէ և չիցէ անհաճոյ՝ բայց իրը անսկան մերժի :

Այս զի յամի այս հանդամանք խառնին ընդ միմեանս , խառնին և որոշմանք այսոցիկ բառից . ուստի և բազում անգամ՝ ՚ի տէզի միմեանց ՚ի գործ ածին . և եր-

բեմն փոխանակ այլոց ներգործութեանց իւրեանց .
այսինքն փոխանակ անգուսնելոյ , փոխանակ նախատե-
լոյ , փոխանակ սոսկ մերժելոյ . և ։ որպէս և սոքա
երբեմն փոխանակ անարդեկլոյ և արչամարչելոյ :

Օ այս զանազանութիւն եղեալ՝ արժան է զիտել .
զի անարգելն այ զոք՝ ըսրեքկին կարէ ասիլ . մի ըստ
այնմ զի վճռէ մերժել զոք՝ ի ժառանգութենէ իւրմէ
իրբե անարժան այնում, և դատապարտել զնա վասն մե-
ղաց իւրոց : Երկրորդ՝ ըստ այնմ զի մերժէ զոք առ-
ժամանակ մի՝ տեսեալ՝ ի նմա զանարգութիւն մեղաց,
մինչեւ դարձցի և ապաշխարեացի, և հաշտեացի ընդ
ինքեան : Եւ կամ դարձեալ՝ տեսեալ՝ մարդն զան-
արժանութիւն մեծ վասն լինելոյ նորա մարդին՝ ոչ ասյ
նմա զշողին, այսինքն զշորչս հոգւցն սիյ : Երրորդ՝
արժաքսապէս՝ իրը զի այնպէս վարի ընդ ու մեք՝ մինչեւ
երեկի՝ թէ անարգէ զնա, բայց իրօք ոչ է անարգեալ :
Չորրորդ՝ ըստ իմիք մասին . իրը զի ոչ կատարելով
զհայցուած նորա և կամ ոչ օգնելով նմա յայս ինչ կամ
յայն, այնպէս ցուցանէ՝ թէ յայնմ մասին անարգեալ
է զնա : Վրդ մարգարէն որպէս երեկի՝ ի կարգէ բանից
իւրոց ոչ ըստ առաջնոցն՝ այլ ըստ երից այլոց եղանակաց
ասէ՝ զայս բան, * մի անարգեր զիս || : Օ այս եղեալ
խնդրէ ևս ապահովանալ՝ ի թողեալ լինելոյ իսպառ
յայ, որ եր երրորդ և մեծ առիթն երկնչելոյ նորա .
սմին իրի յարէ դիմի, և ասէ :

ւոյ , կամ ըստ մարմնոյ . կամ յորժամ թոյլ տոյ գալ
՚ի վերայ ուրոք պէսպէս փորձութեանց և ձախորդու-
թեանց , ընդդիմութեց , և այլ նեղութեց :

Ծորդորդս այս՝ երբեմն է ՚ի սիրոյ , որպէս արար ած
բազում անգամ ընդ հաւատարիմ ծառայս իւր , զի
* զօր սիրէ տէր՝ խրատէ . . . (առակ . դ . 12 .) և այս՝
առ ՚ի փայլեցուցանել զնոսա իրքե զոսկի ՚ի բովս նե-
ղութեանց , և առ ՚ի կազմել զնոսա անօթու փառաւորս
յարքայութեան երկնից . կամ առ ՚ի զգաստացուցանել
զնոսա և պահէլ յարթնութեց , կամ առ ՚ի յետո քար-
շել զնա՛ ՚ի մեծագոյն չարէ՝ յոր անկանէին՝ եթէ ձեռն
տն ոչ խրատէր զնոսա . կամ առ ՚ի օրինակ համբերու-
թեան տալ այլոց . կամ զի տեսեալ զինքեանս իրը թո-
ղեալս յայ՝ մի թողուցուն զնա , այլ դիմեսցեն առ
նա և աղաւեսցեն զնա . որպէս եցոյց քո՞ս առ գնացօղն
յէմմաւուս . զի ՚ի կամիլ նորա թողուլ զնոսա՝ կամե-
ցաւ՝ զի մի թողուցուն նորա զնա , այլ աղաւեսցեն
զինքն և բռնադատեսցեն . որպէս և արարինն իսկ .

(զուկ . իդ . 29 .)

Երբեմն յարդարութենէ . և այս՝ կամ առ ՚ի պատիժ
թողեալ մեղաց , որպէս արար ընդ երանելիս դաւիթ
յետ թողութե մեղաց նորա (թ . թագ . ժթ . 10 . 11 .
հեն .) կամ առ ՚ի պատիժ ոչ թողեալ մեղաց . որպէս
զի դարձցի , որպէս արար ընդ մանասէ , (թ . մնաց . լդ .
12 .) կամ զի զայլս այնու խրատեսցէ , որպէս արար
ընդ անտիոքոս (առ . մակ . դ . 13 .) կամ առ ՚ի պա-
տիժ ներելի մեղաց , որպէս արար ընդ այլն այ՝ որ իրը
մարդարէ զնաց ՚ի բեթէլ . (դ . թագ . ժդ .) Երբեմն
յաննահանջելի բարկութենէ , որպէս արար ընդ դա-
թան , և ընդ աթիբոն . (թու . ժդ . 32 .) և ընդ այլս .
Վրդ բան մարդարէին թէպէտ և հայելով ՚ի հալա-
ծանս իւր կարէ իմացեալ լինել ըստ չորրորդին , բայց
հայելով ՚ի նախընթաց համարն , և ՚ի յետագայ 14
համարն , սկզբնաբար իմացեալ լինի ըստ առաջին ե-
ղանակին , և երկրորդաբար ըստ այլոց եղանակաց ըստ
կարգի . զի զբեթէ յամենեսին ՚ի սոսա միանգամայն
հայելով աղաւէ զտէր և ասէ . մի նորուր ուշ ոծ էրէնէ
էմ . որպէս թէ ասէր . որովհետեւ՝ զու ինքն արարից՝
փրկիչ իմ ես , մի լինիր լրիչ իմ , և մի դատապարտիչ

իմ. և կամ ըստ տառապանացն խօսելով՝ մի խափառ թողուր զիս հալածեալ մնալ, որով և լիցի ինձ զրկեալ կալ՝ ի տեսութենէ վայելութե տան քոյ, և տուշորիլ կարօտիւ ներկայութեան խորանի քում. և սպառիլ կենաց իմոց առ հանապազ յոգոց ելանելոյ : Օ այսոսիկ բանս մազթանաց առաջի եղեալ մարգարէին՝ ի մէջ բերէ ապա և զառիթ՝ ի դութ շարժելոյ զան, յաւելալ՝ ի նոյն և զվատահոթիւն լսելի լինելոյ բանից իւրոց, և ընկալեալ լինելոյ անձին իւրոյ . սմին իրի ասէ :

ԺՌ. ՝ այլ իմ և մայր իմ նուշին զիս . և ուեր չնիւալս- զիս :

Ուողեալ լինել՝ ի հօրէ և ՚ի մօրէ երրակի կարէ լինել. մի՞ որբ մնալով՝ ի նոցունց, երկրորդ՝ մերժելով՝ ի նոցանէ կամ անտես լինելով. երրորդ՝ բաժանելով. և զի այս վիճակ ըստ ինքեան մտածելով՝ ողբանելի իմն համարեալ լինի, զայն առաջի մատուցանէ մարգարէն, առ ՚ի գտանելոյ զողորմութիւն՝ ի տնեւ՝ ասելով :

Այլ իմ և մայր իմ նուշին զիս . և ուեր չնիւալս- զիս : Վայս եթէ ըստ բառիցն առեալ լիցի, երրակի կարէ մեկնիլ. մի՝ հայելով՝ վիճակ որբ մնալոյն զաւթի . յորում թողեալ լինէր՝ ՚ի հօրէ և ՚ի մօրէ իւրմէ . և թէպէտ յասել նորա զայս սազմոն, տակաւին չէին մեռեալ հայր և մայր նորա, բայց կարէր նա զայս ասել պայմանաւ իւիք, կամ ասացից թէութք, որպէս թէ եղեալ էր . թէ և ամիքին թողուցուն զիս, նաև հայր իմ և մայր իմ, ած ոչ թողու, այլ ցուցանէ առ իս զիննամն գթութեան իւրոյ :

Երկրորդ՝ այս բան կարէ մեկնիլ հայելով յայն՝ որ պատմի յառաջին զիրս թագ. ժղ. ուր ասի թէ յորժամ առաքեաց ած զսամուէլ մարգարէ առ յեսսէ՝ յօժանել զմի յորդւոց նորա թագաւոր իսրայէլի՝ ՚ի տեղի սաւուղայ, յեսսէ թողեալ զդաւիթ զկանէր որդի իւր՝ ՚ի բացի արածել զուխարս . մատոյց առաջի զայլ որդիս իւր՝ ընտրել զմի՝ ՚ի նոցանէ . բայց ած և ոչ ընդ մին յայնցանէ հաճեցաւ : Վաց յայնժամ սամուէլ ցյեսսէ . այզանի են մանկտիդ . և յեսսէ ասէ

* կայ միւս ևս փոքրիկ, (այն է դաւիթ) որ արածէ,
որ զիսաշն ։ և իբրև էած զնա անզը, ասէ տէր ցաւ-
մուէլ էօծ զնա, և խաղաց հոգի նոն ՚ի վերաց դաւիթի:
Հայս հայելով կամի ասել, Հայր իմ, ընդ նմին և
մայր իմ թողին զիս ՚ի բացի ՚ի դործ խանարածի՝
իբրև զանովտան, կամ իբրև զերտակը որդի անարդ, .
և մատուցին առաջի այ զեղբարս իմ յօծումն թագա-
ւորութեան, այլ տէր թողեալ զնոսա՝ զիս զթողեալս
՚ի ծնողաց իմոց ընկալաւ, այսինքն էառ և էօծ թա-
գաւոր ՚ի վերաց խորայէլի, Ուր զօրութէ ասյ իմանալ
և զայս, թէ որովհետև այսպէս արար ընդ իս տէր,
ակն ունիմ ժամանելոյ այնմ թագաւորութեան, և
այնու համարձակ և աներկիւղ մտանելոյ ՚ի տուն նոն,
և վայելելոյ յայնմ:

Խրորդ կարէ մեկնիլ հայելով յայն՝ որ պատմի (ա .
թագ . իր . 1 - 3 .) ուր գրի թէ ՚ի հալածիլ դաւիթի յե-
րեսաց սաւուղայ՝ իջին առ նա հայր և մայր նորա և եղ-
բարը նորին . և ինքն զնացեալ առ արբայն մոարայ,
յանձն արար նմա զհայր և զմայր իւր . * եղիցի (ասէ)
Հայր իմ և մայր իմ առ քեզ, մինչև զիտացից՝ թէ
զինչ արասցէ ինձ անձ . . . և բնակեցան առ նմա զամ
աւուրս մինչև էր դաւիթ յանձաւին || ոգոզոմայ, | Եւ
ապա յազգ առնել զարայ մարդարէին՝ ել և զնաց ան-
տի ՚ի սարիթ քաղաք, և ոչ ևս ետես զհայր և զմայր
իւր յաւուրս հալածանաց իւրոց . և նորա ևս ոչ կա-
րէին օգնութիւն ինչ առնել նմա՝ երկուցեալ յերեաց
սաւուղայ : Վուցէ յայս հայիցի ասելն ասու * հայր
իմ և մայր իմ թողին զիս ||, ևն . յոր միտս ՚ի յիշելն
զհայր և զմայր իւր՝ զայս ևս տայ իմանալ՝ որպէս թէ
ասացեալ էր . հեռի եղեն յինէն հայր իմ և մայր իմ
և այլք ընդ նոսա, և ոչ ինչ օգնեցին ինձ : | Եւ այսմ
ըւելեայն իմն հետեւցուցանելով զրեթէ ասէ, եթէ
սոքա այնպէս, քանի ևս այլք՝ որոց զութ ոչ հաւա-
սարի զթոյ ծնողաց . և սակայն ասէ ՚ի հեռի լինել
սոցա՝ անձ ոչ հեռացաւ յինէն, այլ ընկալաւ զիս .
այսինքն եցոյց առ իս զիննամն իւր, և իբրև հայր զը-
թացաւ յիս . և իբրև տէր պաշտպանեաց զիս :
Աւ, ինչ անդէպ վերածել զայս բան յայն իննամն այ,

որով կերպարանէ, յարգանդի մօր զզաւակն . յոր միտս
կամի ասել . հայր իմ և մայր իմ յետ սաղմնաւորելոց
իմ թողին զիս . զիւրեանցն հոգային , և զինէն ոչինչ
արշէստագործէին . բայց տէր ընկալաւ զիս , այս է
էտու 'ի ձեռս , և կերպարանեաց զիս յարգանդի անդ :
Ա' արթէ է յաւելուալ 'ի սոսա և զայն՝ որ հայր յարբունս
հասելոց . յոր միտս կամի ասել . 'ի հասանէլ իմում
յարբունս , հայր իմ և մայր իմ թողին զիս յիս , և
տէր ձեռնկալու լեալ անձին իմոյ յաջողեաց ինձ :

Ա' սացի 'ի վերոյ , եթէ ըստ բառիցն առեալ լիցի այս
բան . քանզի բառք այսր տան զայդպիսիս իմացուցա-
նեն . իսկ եթէ ըստ մոտացն կամիցիսք բացատրել՝ կա-
րէ մեկնիլ ըստ համարման՝ այսինքն համարելով զանձն
այնպիսի՝ որպիսի է նորածին տղայ 'ի բաց թողեալ 'ի
ծնողաց իւրոց , և ընկեցեալ յերկիր՝ անխնամ 'ի
մարդկանէ . յոր միտս կամի ասել . յայնպիսի վիճակ
հասեալ եմ , յորպիսի է տեսանել զնորածին տղայ
լքեալ 'ի հօրէ և 'ի մօրէ իւրմէ . վոյ և իբրև այնպիսի
կարեմ ասել , հայր իմ և մայր իմ՝ որք ծնանն զիս՝
թողին զիս . բայց ած ոչ եթող զիս . Այս եթէ յիրաւի
է տգիտութի ածայնոց ընդհանրապէս . կամ ոչ կա-
մին խմանալ զգործս այ , և կամ ոչ հայիլ թէ զինչ
արար և զինչ առնէ ած . և զինչ կամի . (խմատ .
ժղ . 1 .) Խակ եթէ դրականապէս մտածեսցի , սկիզբն
և ելուզիչ ամ չարեաց է, ապականեալ անձնիխա-
նութիւն ստեղծուածոյ . Վպա եթէ բարցապէս մտա-
ծեսցի սոյնապէս սկիզբն ամ չարեաց է հպարտութիւնն .
որպէս ագահութիւնն է արմատ և մտուցիչ ամենայնի
այսոցիկ :

Եքդ հայեցեալ յառաջինն՝ ողք միանգամ պակասին
՚ի զիտութեան ածայնոց կամ յիմանալոյ զգործս այ՝
այս պակասութիւն ձանաշման լինի նոցա իրբ պակասա-
կան սկիզբն այնր՝ որ ասի ՚ի նոսա չար . ոչ զի ոչ ձա-
նաշեն ըստ ինքեան պատճառ լինի չարի . ոյլ զի ոչ
լինելով այնոց խափան չարի և երեւեցուցիչ բարւոյ՝
մարդս զիւրաւ կործանի ՚ի չարն : Եւ եթէ ոչ ձա-
նաշեն իցէ կամաւոր , լինի ևս մասամբ ինն դրակա-
նապէս պատճառ չարի : Եւ որպէս թուի՝ մարդարէն
աստանօր ՚ի կամաւորն հայելով ասէ զայս բան :

|| Ե իմայտն նորս շդործս ո՞ն : Պործովք ո՞ն իմացեալ
լինի աստ այն ամ զոր արար և զոր առնէ ած՝ ոչ մի-
այն ՚ի բնական կարգի խրաքանչիւր էակաց , այսինքն
տարերաց , անկոց , կենդանեաց , ևն , այլէ ՚ի անտե-
սական և ՚ի բարցական կարգի՝ ՚ի իննամենն , և ՚ի
պատժեն : Օ այսպիսի գործս այ ոչ իմացան ասէ .
այսինքն թէ ոչ կամեցան ՚ի միտ առնուլ , թէ ած է՝
որ նախախնամէ զամ . նա է՝ որ հատուցանէ բարեաց
զբարիս , և չարաց զարիս . արդարոց վարձս , և ամ-
պարշտաց պատիժս : Եւ զմեծն ևս յառաջ բերէ և
ասէ :

Ե - աշ ՚ ի գործս յեռոց նոյս հայեցան : Ուր յաւելլովը
բառդ յեռոց՝ յայտ առնէ զայնպիսի գործս , զորս ած
ինքնին առնէ , և ոչ ՚ի ձեռն երկրորդ պատճառաց ,

որպիսի է արարշագործութիւն երկնի և երկրի . պահանջութիւն է իցու ամի՞ ՚ի զոլի բւրեանց . բովանդակ կազմութիւն տիեզերաց համօրէն , ընդհանրական ամենազօր տեսչութիւն ամի՞ . և քաղաքացարք ու գործութիւն ամի՞ ՚ի զայն պիսի գործու , զորս նու միայն կարէ ինքնին առնել , և ոչ այլ որ , վասն այնորիկ՝ այսինքն վասն ոչ ձանալւ լոց նոցա զայսափիկ՝ ձեռն արկին նենդութիւն ՚ի սատունայագիւտ շարիս . և սակայն չունին անսարդու վճարիլ , այլ հանգերձեալ են շարաշար պատուհանի . սին իրի հետեցուցանէ և առէ :

Արծանեացիւ զնոսա : Օքո՞ ՚ի վերոյ ՚ի հրամայական եղանակի եղ ՚ի ներկայն , աստ յազառնին գնէ , ու բով հաստատի ասացեալու մեր ՚ի վեր անզը , այն թէ այս բանք ոչ են մաղթողականք առ ՚ի խնդրել զվրէժ յամպարշտաց . այլ յայտարարականք կամ ծանուցանող զականք . օրով ցուցանէ մարդարէն՝ թէ այսպէս առնելոց է ած ընդ ամսարիշտս , այսինքն պատուհանե-

լոց է զնոսա այսպիսի կամ այնպիսի օրինակաւ :

Եւ զի եղ ՚ի վեր անզը՝ թէ ամսարիշտք շարութիւն բեանց որոզայթ լարելով ընկերաց իւրեանց ջանան կործանել զնոսա . և յաւել ևս ասել առ առծ , * զամբիս նոցա գարձն ՚ի զլուխս նոցա || յարմարապիւ զնէ . աստ զկործանումն նոցին . իրծանեացիւ զնոսա առէ . այսինքն թէ ՚ի կամիլ նոցա բարձրանալ ՚ի վերայ այ-

լոց . գու կործանեացես զնոսա :

Այս կործանումն ամսարշտաց պէտպէս օրինական կարէ լինել . այսինքն կարծելով ՚ի կենաց , կորուսմամբ ընչից , նուանութիւն անձանց , տուգանիօք զաւակաց , կրիւք թշուառութեանց , և այլ բազմադիմի փորձանօք : Վայլ զոր առէ աստ մարդարէն՝ է այնպիսի կործանումն որ ոչ ես է նորոգելի . սին իրի յարէ :

Եւ այլ Ք շնեացին : Այսինքն ՚ի կործանել քո զնոսա թողցես զնոսա կործանեալ , և ընդ կործանումն նոցա ոչ ստրանացիս . և զի բաց ՚ի քէն ոչ ոք կարէ կանգնել զնոսա կամ շինել , ընաւ մի կանգնեացին , և երբէք մի շինեացին : Վանութիւն խօսի՝ հայելով յայն բան զոր ասաց . * Վէ իմացան նոքա զգործու այ , և ոչ ՚ի գործու ձեռաց նորա հայեցան || . և զի որ զործ

ձեռաց կոչի՝ շինուած ասի՝ շինուածոյ նմանութեամբ խօսելով, լործաւեցիս (ասէ) և այլ ք շինեցին, որպէս թէ ասացեալ էր . որովհետեւ ոչ հայեցան նորա 'ի շինուածս այ , ան ևս այսպէս առնելոց է ընդ նոսա , զի մի ևս համարեցին նորա ընդ շինուածս այ , այլ կործաննեալ մնալով ընդ կործաննեալը գատեցին և 'ի մէջ կործաննելոց եղիցի վիճակ նոցա :

Առ խրայէլացիս ևս ակնարկէ այս բան . զի ոչ ծանեան և ոչ խմացան նորա զայն գործ մեծ՝ զօր արար անձ 'ի նոսա՝ յորժամ եկն առ նոսա , և շրջեցաւ ընդ նոսա . * եթէ զգործսն չէր գործեալ 'ի նոսա՝ (ասաց տէր) զօր ոչ այլ ոք գործեայ , մեղ ինչ ոչ զոյր նոցա . բայց արդ տեսին և ատեցին և զիս և զայր իմ . (յովհ . ԺԵ . 24 :) Աչ հայեցան յայնչափ մեծամեծ սքանչելիս , զօրս արար 'ի մէջ նոցա . աշօք հայեցան՝ սրտիւք հեռացան . խօսեցան ընդ նմա գաւաճանութեք , և * մահու խայտառակութեամբ գատեցին զնա . (խմատ . թ . 20 :) Վասն որոյ և ան կործաննեաց զնոսա կործանումն անկանգնելի :

Այս բան կարէ հայի և 'ի հերձուածօղս և 'ի հերետիկոս . ողբ ոչ կամին խմանալ զգործս այ զգերբնականս , զօրս ձեռամբ իւրով եցոյց սրյ եկեղեցւոյ . և ոչ կամելով հայիլ յայն՝ յենուն 'ի շինուածս կարծեաց իւրեանց . որով և կործանին 'ի հաւատոց , և ոչ ևս շինին . այսինքն թէ ոչ ուղղին , թէ և ծանիցեն՝ թէ թիւրեալ իցեն : Վսաբէն փարիսեցիք 'ի յանդիմանութենէ դաշեկանի կայսեր ծանեան զյիմարութիւն իւրեանց , և յամօթ եղեն . և սագուկեցիք իւմացան զմոլորիլ իւրեանց յասել տեառն՝ թէ ան է ան կենդաննեաց և ոչ մեռելոց . բայց ոչ սոքա ուղղեցան , և ոչ նորա զգաստացան . զի կործանումն այսպիսէաց է անկանգնելի և աննորոգելի . որպէս զրէ ծործորեցին . ('ի մեկն . մատ . զւ . իթ :)

Վրժան է աստանօր իւրաքանչիւր մնարդոյ 'ի միտ առնուլ՝ մի արգեօք և ինքեան պատահեսցի բարոյապէս այսպիսի կործանումն . քանդի արդարե որ ոչ խմանայ , թէ ինքն է գործ այ , կամ ոչ 'ի միտ առնու . թէ է արարեալ ձեռամբն այ 'ի պատկեր նորա և 'ի նմանութիւն նորին , և թէ է նորոգեալ , զնեալ և փրկեալ

արեամբ միաձնի որդւոյն այ . զարդարեալ արեամբ, ու ձրիւք՝ 'ի կարդի ընութեան , և 'ի կարդի նորհաց , և անփոյթ լինելով՝ 'ի մեզս գեղերիցի . կործանեսցէ զնա ած յաւուր միռմ կործանումն յաւիտենական . և այլ մի երթեր շինեսցի . Վրդ եղեալ մարդարեն զայս ամենայն՝ որք հային 'ի հասուցումն ամպարչտաց՝ դարձուցանէ զբան իւր յօրհնութիւն այ , և ասէ :

Ը . () բնեալ է ար՝ զի ըստ յայնի աղջեկ իմոց . ար օդ նախան իմ և պաշտպան իմ :

Կերպործութիւն մեծի նորհակալութեն է այս բան , որով զահանայ մարդարեն զայ վասն երից . նախ՝ վասն լեզր նորա զաղօթս իւր . զի զոր իննդրեաց 'ի վերոյ , և ասաց՝ մի լուեր յինէն , այլ՝ լուեր ձայնի իմում . տես մեալ զիատարումն իննդրուածաց իւրոց՝ փառաւորե զած՝ օրհնելով զնա : Երկրորդ՝ վասն ազատ կացուցանելոյ զնա 'ի վիճակէ ամպարշտաց . և երրորդ՝ վասն օգնելոյ նմա 'ի ներքուստ , և պաշտպանելոյ արտաքուստ . վասն որոյ ասէ :

() բնեալ է ար՝ զի ըստ յայնի աղջեկ իմոց . ար օդնախան իմ և պաշտպան իմ : Խամբ ասել . օրհնեալ է տեր ած իմ՝ զի 'ի կարդալ իմում առ նա . լուռտ ձայնի աղօթից իմոց . և զօր իննդրեցի 'ի նմանէ՝ կատարեաց յիս . օդ նախան ես եղեւ ինձ 'ի ներքուստ առ 'ի նախաւել ինձ զդործս ձեռաց իւրոց . և պաշտպան եղեւ ինձ արտաքուստ՝ ազատելով զիս 'ի դաւաճանութենէ անպարըշտաց , և յանց վտանգից :

Այս բանք ասին նաև 'ի զիմաց քսի վասն յարութեն՝ իբր նորհակալութիւն առ հայրն երկնաւոր . ևս և 'ի զիմաց մարդկայինս բնութեան վտան ազատութեն՝ 'ի ձեռաց սատանայի :

Վրդ մարդարեն առեալ յայ զիննդիր իւր . և գտեալ 'ի նմաննէ զօգնութիւն և զպաշտպանութիւն՝ յառելու առաջի առնել և զյոյս իբր պատճառ և իբր հետեւութիւն . իբր պատճառ՝ ըստ այնմ՝ զի յուսացաւ յած , և վասն այնորիկ՝ այսինքն վասն յուսացյն՝ օգնական եղեւ նմա ած . իբր հետեւութիւն՝ ըստ այնմ՝ զի պաշտպան եղեւ նմա ած . և վասն այնորիկ՝ այսինքն վասն պաշտպան

լինելոց նման այդ ինքն ևս յուսացաւ յանձ : Հայսոսիկ
հայելով առէ :

թ . **Ա** նա յուսոյ սէրբ իմ : օդակեցաւ և ըստամացաւ
մարդին իմ : և էս համօք իմ վշտուալն եղեցնմա :
Որտիւ երբեմն իմացեալ լինի միտք , երբեմն կամք ,
և երբեմն պարունակեալն 'ի սրտի , սրալիսի է յօժա-
րութիւն և բաղձանք առ այս և առ այն . և երբեմն հո-
գին ըստ բաղձողական մասին , յորում է ներգործու-
թի յուսոյ՝ ըստ բանական շարժութեան . զի որպէս 'ի
սրտի է զգայական յուսոյ շարժումն , այնպէս և 'ի
հոգին 'ի բաղձողական մասին է բանական յուսոյ ներ-
գործութիւն . և ինքն շուեմարան խորհրդոց բարեաց :
Ուստի սարգիս չնորհալի՝ մեկնելով զբան առաքելոյն .
(ա . պէտ . գ . 1 . ձառ . է .) առէ * սիրտ թուի ինձ
աստանօր յայսմ վայրի զհոգին ասել . ըստ որում
է առաջնորդական և կենդանական մարմնոյն , և
շուեմարան ամենայն բարուոք խորհրդոց , միանգա-
մայն և ներհակացն || : Հայս միտս առեալ զսիրտն՝
առէ :

Ա նա յուսոյ սէրբ իմ : Աարէր յառաջին դէմն խօսե-
լով ասել . 'ի նա յուսացայ , առանց յիշելոյ զսիրտն .
բայց առ 'ի ցուցանել նախ զհաստատութիւն յուսոյն՝
զպարունակօղն յուսոյ զսիրտն բերէ 'ի մէջ . և նոյն
էր թէ ասել . բոլորովին 'ի նա յուսացաւ հոգի իմ :
Ա ս 'ի ցուցանել երկրորդ՝ զկենդանութիւն յուսոյն .
զի օրպէս շարժումն սրտի է նշան կենդանութէ , սցն-
պէս և յուսացողութիւն հոգւոյն : Ա նուազիլ և յան-
չնշանալ ուրուք՝ եթէ շարժի սիրտն՝ կենդանի հա-
մարի , սցնպէս եթէ և հոգի մարդոց շարժի՝ այսինքն
կենդանի յուսով յուսայ 'ի տէր՝ կենդանի համարի :
Հայեաց և 'ի սիրտ քո , կայցէ արդեօք շարժումն կեն-
դանական . զննեալ զերակդ , (նավզը նայէ) այսինքն
կշռեալ զարդումն զործոց քոց , եթէ իցէ կենդանի՝
կայ ապա 'ի քեզ և յոյս կենդանի : Այս զի այսօք յու-
սոյ զհետ զայ և օգուտ մարմնոյ , սմին իրի յարէ ըզ-
կնի , և առէ :

() դրեշու և ըստամացաւ մարդին իմ : Այս այս օգուտ
մարմնոյ և զուարձուի՝ եթէ առեալ լիցի փոխաքերու-

թք՝ նշանակել զազատանախն՝ ՚ի վտանգել անտի՛ որով վտանգի մարմինն և վտանգել զհոգին . վտանգի յինքեան յայն աստիճան՝ մինչեւ զրկել՝ ՚ի հոգւոյն՝ և ոչ օգտիլ ինչ ՚ի նմանէ . || տանգաւորել զհոգին յայն աստիճան՝ մինչեւ զրկել զնա յանձային հոգւոյն :

|| առն առաջնոյն առէ՝ օդուշացաւ . իսկ վտան երկրորդին շաբաթացաւ . որպէս [թէ եղեալ էր . ՚ի վտանգիլ մարմնոյս ՚ի վտանգ մահու . և ՚ի վտանգել նորա զհոգիս ՚ի վտանգ մահացոցի մեզաց՝ յուսացայ յանձ . և զըտի ՚ի նմանէ զայնպիսի պաշտպանութիւն՝ որով օգտեցաւ մարմին . այսինքն այնչափ զօրացաւ՝ մինչեւ պահել յինգեան զհոգիս և զզօրութիւնս հոգւոյ . գտի և զայնպիսի օգնականութիւն՝ որով արիացաւ հոգի իմ , և ոչ վտանգեցաւ մեզօք . և ՚ի զուարձանալ նորա՝ զըտարձացաւ և մարմին իմ :

Եցացի՝ * եթէ առեալլիցի փոխարերու [թք] . զի եթէ առցի ըստ պարզ իմացուածոյ բառիցն՝ նշանակել ըզհասարակ օգուտ և զուարձութիւն մարմնոյ . քանզի այս ճշմարիտ է՝ զի որք ըստ տմի յուսան յանձ հոգւով գտանեն և զօգուտ մարմնոյ և զուարձութիւն՝ ՚ի մարմնի . վտան զի այնպիսի անհն խազազացեալ և անողորսացեալ գործով ՚ի հոգին՝ գտանէ խազազուի և ՚ի խառնուածս մարմնոյն , յորում սահմանի մարմնաւոր առողջութիւն կենդանոյ . զի յորժամ խազազութիւն է՝ ՚ի խառնուածս մարմնոյ , և հանգարտութիւն յորակութիւնս ցորից հիւթոյն՝ որ ՚ի նման , զօրանայ առողջութիւն ՚ի նմին :

Եւ յերկուց աստի այսինքն՝ ՚ի յանդորրութէ հոգւոյն և ՚ի հանգարտութէ խառնուածոյ մարմնոյ՝ զեզու զուարձութէ հոգւոյն նաև ՚ի նոյն իսկ ՚ի մարմինն . վտան զի մարմինն ըստ իմիք նմանութէ է իրը հայելի հոգւոյն . ուստի և ՚ի զուարձանալ հոգւոյն՝ այն զուարձութիւն տպաւորի և ՚ի մարմինն իրը ՚ի հայելով : |, և այս թէ պէտ յանմի այսպէս ոչ պատահի . բայց հասարակօրէն այսպէս դիսպի , որպէս և աչօք տեսանեմք յարս ողբակեաց , և ՚ի յուսացեալս ՚ի տեր . ընդ որս և ոսինքն մարգարէս խոստովան լինի՝ [թէ բոլորով որտիւ յանձ յուսազավ այսպէս պատահեցաւ ինքեան՝ * օգատեցաւ (ասէ) և զուարձուցաւ մարմին իմ] : Օ այս-

պիսի բարերարութիւն զտեալ յայ՝ գոհանայ զնմանէ,
և ասէ :

Ե - էս էսմօք էմազ խոստովան էղչ նմ : Խոստովան լի-
նել առ անծ ՚ի կրկին միտու ասի . մի՛ յորժամ ոք յայտ-
արարութք բարերարութեցն այ գոհանայ զնմանէ . և
մի ես՝ յորժամ ոք յայտարարութք յանցանայ իւրոյ
առաջի այ՝ թողութիւն ինզգրէ ՚ի նմանէ : Աճդ յայտ-
է թէ աստանօր ըստ առաջնոյն խօսի մարդարէն . և
զայս խոստովանութի ցուցանէ ամնել կամօք իւրովք ,
որ է ասել , յօժարութք հոգւոյ՝ կամ բոլորավ սրտիւ .
որպէս թէ ասացեալ էր . որովհետեւ լուար ինձ անծ ,
և օգնական եղեւ ինձ , և ՚ի յուսալ իմում առ նա օդ-
տեցաւ մարմին իմ , վասն այսորիկ և ես յօժարութք կա-
մաց իմոց , և պրտի մոտօք գոհացայ զնմանէ :

Այս բանք մարդարէական հոգւով ասին ՚ի բերանոյն
քնի . զի յաղօթել նր առ հայր՝ լսելի եղեւ . և մարմին
նորա ոչ միայն օգտեցաւ՝ յաննելով ՚ի գերեզմանէ ,
այլ և զուարձացաւ փառօք . և ինքն գոհանալով ըզ-
հօրէ՝ մեծացոյց զփառս նորա : ՚Իրինպէս զուարձացաւ
և խորհրդական մարմին նորա . արմինքն սուրբ եկեղեցի
՚ի ձեռն մեծի փրկութեան , և ՚ի ձեռն ոք խորհրդոց :
Օտարձացաւ և մարմին մարդկայինս բնութեն . զի ա-
ռեալ եղեւ ՚ի բանին , և վերացաւ յանպատում զբ-
ւարձութիւն փառաց : ՚Ա սոսին զուարձացեալ մար-
դարէին խոստանայ խոստովան լինել առ անծ : ՚Իսկ
թէ զինչ ուներ խօսիլ ՚ի խոստովանութեան անդ՝ յայտ
առնէ ՚ի յաջորդ համարն . ոչ զի զայն և թէ կամէր
ասել . այլ զի զայն ևս ցանկայր յայտնել . այսինքն է
զինեն այ զօրութիւն իւրոյ ժողովրդեան , և պաշտօպա-
նութիւն թագաւորի նորա : ՚Ա ասն որոյ ասէ :

Ճ. **Տ**եր շըրու ծաղկը է ան ի բոյ . ապա էն ի բի ճ ճ ճ . լու ի բոյ :

Այս բանք թէպէտ և առ խրայէլացիս հային , ըստ ո-
րում էին ժողովուրդ ան ըստ որոյ յերբ՝ . զնի . լու-
սոյս է նոյս , բայց ոչ ամենուին զզօրութիւնն այ ՚ի նո-
սին և թէ . զի անծ ոչ միայն խրայէլացոյ , այլ և այ-
լոց ազգաց բազմաց եղեւ զօրութիւն : ՚Այց քանզի
առաւելապէս յիսրայէլացիս երեւեր այն իրեւ ՚ի սե-

փական ժողովուրդ այ, նմին իրի առ նոսա վերածելով զբանն առէ:

Տէր զօրութի ժողովուրդեան իւրոյ: Ի սահանօր բառս զօրութի եթէ ՚ի վերացեախն առցի՝ փոխանակ մեծի կարտզութեան, միտ բանին լինի այս զօրութի ժողովրդեանն խրայէլի ոչ է առ ՚ի մարդկանէ, այլ ՚ի տնիէ: Խակ եթէ առցի ՚ի թաճճրացեալն փոխանակ բառիս զօրացուցին միտ բանին լինի այս, թէ նա՝ որ է տէր ամի՞ զօրացուցիչ է ժողովրդեանն խրայէլի: և այս՝ վասն այնուըիկ զի խրայէլ է ժողովուրդ նորա: Այս որպէս նա ինքն է զօրութիւն իւրոյ ժողովրդեան, նոյնպէս նա ինքն է ապաւէն թագաւորի այնը ժողովրդեան: և

առ այս յարէ:

Ըստութիւն կը իւթէ օծեց իւրոյ: Ի սաս օծեալ հասարակ է թագաւորի, քայշանայի և մարդարէի: զի ամերին սորա օծեալ էին: բայց հասարակօրէն այս բառ՝ թագաւորի ընծայի ՚ի նոր զիրս: և ասա ևս փոխանակ թագաւորի գնի: այսինքն փոխանակ դաւթի՞ որ խօսի զայս: Խակ յայսպիսի գէմա կարգել զբանն է ոչ ինն գերազանց առ ՚ի հաստատութիւն նշանակեցելոց իրին: և նոյն էր թէ ասէր: տէր է ապաւէն իմ: իմ ասեմ՝ որ եմ օծեալ նորա: Ո արթէ է ևս ասէլ թէ զայս ասէ վասն իւրաքանչիւր թագաւորի խրայէրացոց: որպէս թէ ասէր, տէր է զօրացուցիչ ժողովրդեան իւրոյ, և նա է ապաւէն փրկութեան թագաւորի այնը ժողովրդեան:

Վայլ թէ զիարդ ասի զտնի լինել զօրութիւն ժողովրդեան, անս (՚ի սաղ. իշ. 11.) յայն բան: * Օ օ ՞ րութիւն է արկիւզածաց իւրոյ: Այսպէս և վա ապաւէն լինելոց նորա: տէս (՚ի սաղ. իշ. 1.) յայն բան: * տէր ապաւէն կենաց իմոց:

Վայս բանք ուզզակի հային յեկեղեցի քնի: որոյ զօրութիւն եղեւ ած հայր, և ապաւէն փրկութէ օծելոյ իւրոյ քնի՝ յարուցեալ զնա ՚ի մեռելոց: Ի այց որպէս այլուր ասացաք, այսպիսի բանք յորժամ վերածին ՚ի գէմա քնի՝ ոչ ցուցանեն զանզօր լինել նորա: այլ միայն զայն նկարագրեն՝ որ հայի ՚ի նա ըստ մարդկային բնութեան կամ ըստ ծառայական կերպի: (Տես զայսմանէ ՚ի սաղ. ի. 1: և ՚ի ներածութեան: զլ. է:)

Օ այս ամ եղեալ մարզարէին՝ բովանդակէ զբան իւր և ասէ :

Ժամ . **Փ**ըհէւա շժողվշ-ըդ ույ : և օքնեա շժողվշ-ըդ իւր հակա- և բարձրաց զնուս միւլ յա- թիւնան :

Օ որ առայն 'ի վերոյ * տէր զօրութիւն ժողովրդեան իւրօյ || . զրեթէ զնոյն զայն կամի մեկնել այսո բանիւ . ուր որպէս առացաք 'ի վեր անզր՝ եթէ բառ չօրութիւն՝ առցի 'ի վերացեան փոխանակ կարողութեան, այս բան դնի իրը յայտնիւ ներգործուն կամ զործածութէն այնր զօրութէ . ըստ որում առ զործածութիւն այնր հայի փրկութի յայ, և օրհնուի նորա, և այն՝ որ 'ի կարգի, որպէս թէ եղեալ էր . որովհետեւ զու ևս զօրութիւն ժողովրդեան քոյ, քեզ անկանի առալ զզործազրութիւն այնր զօրութէ . այսինքն է փրկել զնոսա, օրհնել, հովուել, և բարձրացուցանել մինչև յաւիտեան :

Իսկ եթէ առցի 'ի թանձրացեան փոխանակ բառիս շրջադրութէ, այս բան լինի իրը բացատրութիւն կմ մեկնութիւն այնր՝ թէ զիարդ զօրացուցանելոց իցէ ոոր ըզ ժողովրդի իւր : Վար առ զօրացուցան ժողովրդեան, այսինքն առ 'ի զօրացեալ և հաստատեալ մնալ ժողովրդեան՝ ըստ որում է, ժողովրդի այ, պահանջի երեք ինչ, այսինքն փրկութիւն 'ի չարէ, լիուն բարոյ 'ի կարգի չնորհաց, և կառավարութիւն ուղիղ յարժանաւոր զործու . յորս իրը վախճան յաւելեալ լինի և չորրորդն՝ այն է բարձրանալ 'ի փառս : Վասն առաջնոյն ասէ :

Փըհէւա շժողվշ-ըդ ույ : Փրկելն է զերծ կացուցանել զք 'ի չարէ կամ 'ի վտանգէ չարի՝ յորում կարգի և մասածեսցի այն վտանգ՝ թէ մարմնաւոր իցէ և թէ հոգեոր : Եւ զի ոչ պակասին պէսպէս վտանգը 'ի մէջ ժողովրդեան, ինդրի, մարզարէն զերծ կացուցանել զնոսա : Իսկ ժողվշ-ըդ առելով իմանայ զեկեղեցի՝ ոք ընդհանրապէս՝ թէ 'ի չինն, և թէ 'ի նորն մը տածեալ . և առ այս յաւելու զբառդ ույ, Բայց քանի զի նը եկեղեցին 'ի չնումն անդ յանդիման լիներ յիս լայելացիս՝ թուի թէ ըստ նկարազրին անմիջապէս

գժողովուրդն իսրայելի խմանայ աստ . և յայն հայելով իննզրէ յայ , զի փրկեցի զնս . որպէս թէ եղեալ էր . որովհէտեւ քոյ ժաղովուրդ է , եկեղեցի սուրբ . փրբեկամ զնս յամբ չարէ : Եւ զի ասկ փրկին ՚ի չարէ՝ է , ըսկ պակասական ինչ՝ զգբականն ես , այսինքն զլիութիքարւոյն ևս իննզրէլով յաւելու ասել ըստ երկրորդին :

Եթ օրհնեած զժառանձութիւնն այ : (Օրհնեն այ յատկապես առեալ ՚ի կը կին միտս խմացեալ լինի . մի՝ փոխանակ հաղորդելոյ ումեք զիմութիւն բարւոյ մնացապէս , և այս՝ կամբ ըստ միոյ կարգի , և կամբ ըստ բազումի բաց . յոր միտս ասէ որ զիմն . * օրհնեաց առ զարեգ գար , և զամբ տուն նորա || (բ . թագ . կ . Ա 1 .) մին մե լիսնալ արեգգալոյայ յայն ինչ՝ յորում օրհնեցաւ . Եւ մի ևս՝ փոխանակ հաղորդելոյ զկարողութիւն առ ՚ի յատաջ ածելոյ կամբ առ ՚ի ստանալոյ զիմութիւն բարւոյ յիմիք սեռի . յոր միտս ասի զկենդանեաց և զմարգոյ թէ * օրհնեաց զնսաս անձ , և ասէ . ածեցէք , և բազմացարմէք || . ևն . (ծնն . ա . 22 . և 28 .) (այլ զայտնանէ տես ՚ի սազ . իդ . 5 .) Բայ այսոցիկ օրհնութեանց իննզրէ մարգարեն՝ զի օրհնեցէ ան զժողովուրդ իւր :

Խառանդութիւն ան կոչէ զիսրայէլ . վասն զի կտուկաւ սեփականեալ եղեւ այ իբրև ժառանգութիւն նորա . իբր զի անց յամբ ազգաց ընտրեաց միայն զիսրայէլ . և մարգիօրէն խօսելով զնս միայն արար ինքեան ժառանգ : Ուստի և իսրայէլ այսինքն եկեղեցի սուրբ՝ թէ՝ ՚ի հինն և թէ ՚ի նորս մատածեսցի՝ եղեւ ժառանգութիւն այ և ժառանգ նորա . այսինքն ժառանգէալ յայ , և ժառանգօղ այ : Արդ ասէ՝ որովհէտեւ քոյ ժառանգութիւն է եկեղեցի՝ օրհնեաց զնս՝ լիսրուցաննելով զնս բարեգ քովք , առատութիւն պարգեաց քոյ , զեղմանք նորհաց քոյ , ևն . Եւ քանզի լիսրութիւն բարեաց եթէ բարւոք կառավարութիւն ու պահէ ացի յաստիւ՝ եղծանի և բառնի , զայն կառավարութիւն ես խընդրէ , և ասէ ըստ երկրորդին :

Հաւանական շնորհ : Հովուեն է խնամով կառավարել և տածել զիսան . և այս խնամ հովուի ՚ի բազումի իրս պարտի լինել . նախ՝ զի ընդ ուղիղն առաջնորդ-

դեսցէ . որպէս զի մի ընդ մօլարն վարելով՝ պատճառ
լինիցի մօլորելոյ խաշին : Երրկորդ՝ զի յօդտակար
արօսա ածցէ , և յառողջարար ջուրս : Երրորդ՝ զի
(ընդ հակառակն) ի վնասակար արօտից և յանառողջ
ջուրց յետո նահանջեսցէ : Չորրորդ՝ զի զգասատ
թթ հսկեսցէ առ ՚ի պահելոյ ՚ի վտանգից՝ այսինքն՝ ՚ի
յափշտակութենէ զայլոց , ՚ի յարձակմանէ զողոց . ՚ի
յորդութենէ անձրեաց , ևն՝ Հինգերորդ՝ զի փոյթ
ունիցի ժամանակի ծննդեան խաշանց : Ու եցերորդ՝
զի հոգ տանիցի ՚ի վերայ ախտացելոյն՝ բարւոք դար-
մանելով զնա . ևն :

Վրդ նմանութթ խօսելով՝ զայս ամ առնէ ամ ՚ի ինա-
մելն զժողովուրդ իւր . իբր զի ընդ ուղիղն առաջնոր-
դէ , և յօդտակարն վերածէ , ՚ի վնասակարաց յետո
նահանջէ , և հոգեռորակն ծննդեամբ անեցուցանէ .
յախտանալն զարմանէ , և յամի զինքն տէր և պաշտ-
պան ցուցանէ : Լւ զայտոսիկ առնէ ամ պէսպէս օրի-
նակաւ , այսինքն ներքին օժանդակութթ , արտաքին
նպաստիք , ներգործական շարժութթ , բարցյական
յորդորմանք . յաջողութեամբ , ձախորդութթ , և այլ
բազմապատիկ եղանակօք . յորս ինչ ինչ յայտնի
ըմբռնի ՚ի մէնջ , և ինչ ինչ անըմբռնելի տեսանի :
Հայոսկեսիս հայելով մարզարէն՝ զինամելն այ հո-
վուելոյ նմանեցուցանէ . և փոխանակ ասելոյ՝ ինամ-
արկեա զժողովուրդ քոյ , առէ հովուեա : Վ. յլ
վասն հովուելոյն այ աես (և ՚ի սաղ . իթ . 4 .) յայն
բան . * ո՞ր հովուեսցէ զիս , և ինձ ինչ ոչ պահանեսցի :
Վ. յս ամենայն՝ զոր ասաց մարզարէն , ուզզակի հայի
՚ի ինամարկութիւն այ յատահ կեանս . առա և վասն
հանդերձելոյն կամելով խօսիլ՝ յարէ զինի , և առէ
ըստ չորրորդին :

Եթէ բարձրաց դնուս կնչել յատիտեան : Հայս բան բառդ
բարձրաց հայելով ՚ի վիճակ հանդերձեալ կենայ՝
նշանակէ փառաւոք առնել՝ կամ սքանչելի առնել
փառօք յերկինս . որպէս թէ ասէր . յետ ինամերոյ
զեկեղեցի քո՞ բարձրացն զայն յերկինս . և փառաւո-
քեա զնա յաւիտեանս յաւիտենից : Վ. յս բարձրա-
ցուցումն զօր ինդրէ մարզարէս՝ ոչ միայն հայի յե-
կեղեցին ընդհանրապէս , այլև յիւրաքանչիւր ան-


դամն նորա . զի 'ի բարձրանալ խրաքանչիւր 'ի նո-
ցանե , նովին իսկ բարձրանայ և նոյն եկեղեցի որ իրը
ամբողջ մարմին :

Այս բան կարէ վերածիլ ըստ նկարագրին և 'ի բարձ-
րութիւն եկեղեցւոյ յաստիս . յոր միտ բառս բացէ-շահ՝
կրկնակի կարէ իմացեալ լինել աստ , մի՛ փոխանակ
բարձրացուցման հայելով առ թշնամիս . որպէս թէ
ասէր . բարձրացն զժողովուրդ քոյ 'ի վերայ թշնա-
մեաց . այսինքն է , արա՞ զի մի յաղթեացեն թշնա-
միք ժողովրդեան քում , այլ ժողովուրդ քոյ յաղթեա-
ցէ նոցա : Խըկրութ՝ փոխանակ բարձրացուցման փա-
ռաւորութեան ըստ ազգի ազգի կատարելութեանց , և
այս՝ մինչև 'ի կատարած աշխարհի , և ըստ սյամ կա-
մի ասել . բարձրացն և պայծառացն զժողովուրդ քոյ
հոգեօրական պանծալի փառաւորութեամբ . ըստ նոր-
հաց , ըստ սրբութեան , ըստ իմաստութե , ըստ վար-
դապետութեան , ևս և ըստ խաղաղութե , ըստ միաբա-
նութեան , ըստ տարածութե , և ըստ ամբ բարեկարդ
վայելութեան մինչև 'ի կատարած աշխարհի :

Ոյն այս բանք նախագուշակութեամբ ևս ասին 'ի
մարդարէն առ քո՛ր իրը առ հովի բարի , և 'ի քնէ առ
հայրն երկնաւոր , որպէս թէ եղեալ էր . փրկեալ զազգ
մարդկան՝ զոր ստացար քեզ ժողովուրդ սեփական , և
օրհնեալ զնոսա՝ զոր կարգեցեր քեզ իրը զժառան-
զութիւն պատուական . հովուեալ զնոսա հոգեօրական
քո պարգևոք և սուրբ խորհրդովք . բարձրացն զնոսա 'ի
վերայ ամենայն թշնամեաց . և փառաւորեա զնոսա
յարքայութեան քում յաւիտեանս յաւիտենից :

(Յովհ . Ժէ . 11 . ևն .)

Այս վերջին տուն սաղմափս ուրեք ուրեք 'ի զերս
պաշտամանց մերոց զնի այսպէս : * Աեցն զժողովուրդ
քոյ . օրհնեալ զժառանգութիւն քոյ . հովուեալ , և
բարձրացն զնոսա յայսմհետէ մինչև յաւիտեան :
Այս այս տարբերութիւն ոչ ինչ այլայլութիւն տայ
մաց բանին : Իսկ հեշտ ասելով ինդըն զերծ լինել
'ի վտանգէ կենաց . և 'ի բարի կեանս անդորրանալ
և բերկրիլ , 'ի հաւասար հաստատիլ . 'ի յօյնս պատրա-
պարիլ , և 'ի սերն վառիլ և յորդօրիլ . և կատարե-
լութե կենաց հասանել 'ի կեանս յաւիտենից :



ОГЛАВЛЕНИЕ

Հյորդով փառաւորելց զնած ըստ բարձրագալատիկ զօրութեանց ձայնի նորա . ևս և խորհրդական բանք կազմ գեալք ՚ի մկրտութիւնն քսի և ՚ի քարոզութիւն աւետար բանին . և ՚ի խնամն որ ՚ի վերայ եկեղեցւոյ :

በመ-ገኘው ተመ-ተከለ . ይጠናና-በረታኑ ነመ-መኩለ-በግኝ ተመ-መሆኑ :

1 **U** առաջընկեց առ որդիւս այ . Տառապութիւն գոյն շրջիւն կայուց .
2 || առաջընկեց առ զիւտու և զպատիւ . Տառապութիւն առ
զիւտու առանձն նորս . և երիւք զագես թի է սրբած որբութե
նորս : 3 **Q**այն առ է վերա չորրու , և ած քառա որբատաց . և
ար ինքն է վերա չորրու բուշաց : 4 **Q**այն առ զըրամելեց . և
զայն առ է մեծացաւութեց : 5 **Q**այն առ է շրջ չայրու . և առա
ւ ար շայրացն լիբանանու : 6 || առերեսոց վնա որպէս վմարա
շայրանին լիբանանու որ սիրելին և որպէս շրջիւն մեշշերու :
7 **Q**այն առ հասանէ զբոց է հրօյ . զայն առ շարժէ շանապատի ,
և կուռավորութիւն առ շանապատին հարէն : 8 **Q**այն առ հասան
էն զբութերու . և յայտնի առնէ զանուարու : 9 || առամքի հո
րու մինչեւ առաստիւն զիւտու և նմ : 10 **S**եր վլրհեղու զանու
ասէն և շածառանէ . Առամքեսոց որ յարեւեան : 11 **S**եր
զըրամելէ ծալշաւրեան իրոյ առոյ . և օրհնեաց վաղութեր
իր է կայալութեն :

$\Psi_1 \vdash P \wedge Q \vdash P$

በመንግሥት ተመዝግበዋል . የሚከተሉት ንዑስ ነው፡፡



¶ **Բ** ԵՐԵԳԻՒԹՅՈՒՆ ԵՐԵՐԵՎԱՆԵՑՏԵԱՅՑ ԵՐԵ
յօրինակս ինչ եւ օթանասնից , 'ի վեցիցնեանն
որուզինեայ 'ի հինն ոչ գտանի 'ի վելնազրիդ
այս յաւելուած օբհուսնեանց նաև ամուսնու ամառն
Ու գտանի այս և 'ի տափազրեալ ամառնաւ և յայլ

քանի մի սպազրեալ սաղմոս մեր : | Խակ՝ ի ձեռագիրս
առ հասարակ այսովէս զնի . և՝ ի քանի մի ձեռագիրս
բառդ օրհնութեան՝ յուղական հողովն զնի , որ ՚ի նոյն
հայի : | Մարդ շարազրութեանն ըստ սեռականին եղեալ՝
դասաւորի այսպէս . * սաղմոս օրհնութեանց նաւակա-
,, տեաց տաճարին (ազգեալ) ՚ի դաւիթ : | Խակ ըստ
ուղղականին դասաւորի այսպէս . * սաղմոս ՚ի դա-
ւիթ , որ և է օրհնութին նաւակատեաց տաճարին : |
| Հասարակ յայժմու օրինակս եօթանսանից զնի
այսպէս . * սաղմոս ՚ի դաւիթ յելս խորանին : | Կամ
* սաղմոս ՚ի դաւիթ վասն ելից խորանին : | Ըստինն
զնի . * սաղմոս դաւթի ՚ի կատարման խորանին : | և

յայլս այլազգ՝ իւիք իւիք սոյին նման :

| Խակ (թէ զի՞նչ յայնիէ այս ըան , եթէ ըստ առթին
կամիցինք մեկնել իւրաքանչիւր բառք վերնագրիդ
ցուցանեն՝ թէ այս սաղմոս ասայէալ իցէ ՚ի դաւթայ
յելս անդ տաճարին , այս է յաւարտելնորա զշմուած
տաճարին , այսինքն խորանին տնն և օրաչի նորա ՚ի լե-
րինն սիմնի յօրժամ կատարեր զնաւակատիա նորին .
այսինքն զշանդէս ուրախութեան վո շիներոյ և յաւարտ
հասուցանելոյ զայն տաճար . ուր էած զսականամին
տնն ՚ի տանի արեգգարայ . (որպէս զրի ՚ի առ մնաց .
ժկ . 1 . և որ ՚ի կարգի :)

| Խակ եթէ ըստ վախճանին կամիցինք մեկնել , բառք
վերնազրիդ ցուցանեն՝ թէ այս սաղմոս իցէ անելի
յաւուրս նաւակատեաց տաճարին . այսինքն յաւուրս
տարեդարձի շինութեան տաճարին , կամ յաւուրս տօ-
նից (զորոց տես ՚ի զիրս զետացուոց . զլ . իկ .) | Վահա-
ւանդ յաւուր տօնի տաղաւարահարաց . զբամէ այսպէս
պատուիրեաց տօն առ պրիմն խորայէլի . * ՚ի հնգետա-
սաներորդ աւուր ամսեանն եօթներորդի տօն տա-
,, զաւարահարաց է զեօթն օր տն . . . զեօթն օր մա-
,, տուցանիջիք ողջակէզո տն . քանոզի ելք են (այսինքն
յիշատակ ելից , յեղիսատոսէ) . . . այս են տօնք տն
,, առ ՚ի մասուցանելոյ ընծայ տեառն : (զետ . իկ .

34 - 37 :)

| Վայլ (թէ յի՞նչ հայիցին բանք սաղմոսիա , կամ յի՞նչ
հայելով ասացեալ իցէ դաւիթ զայս , բաղումք բա-
զում բանս զրէն : | մանք ՚ի հին բարունեայն հրէից

զնեն՝ թէ զայս ասաց դատիթ՝ հայելով սոսկապէս՝ ի ժամանակն յայն, յորում ետ ած զօրէնս ՚ի լըրինն սինայ. և թէ ձայնք, որք յիշին ՚ի սաղմնափ աստ, հային յայն ձայնան՝ որք լսելի եղեն անդ: Ամանք՝ թէ, զայս ասացեալ իցէ՝ հայելով յայն հանգէս՝ յորում յառարտել մովսէսի զիսրանն և զամբ սպաս նորա, իշխանք իսրայէլի մատուցին ընծայս առաջի տն. զօրմէ երկար դրի ՚ի գիրս թռոց: (զԼ. ՚ Հ. յառաջնոյ համարոյն մինչև ՚ի վերջինն:) Աւ ասեն ևս թէ յայս մատուցմունս հային սկսուածք սաղմնափ: * մատուցեք առն զորդիս խոյոց ॥ և ն: Ամանք՝ թէ զայս ասացեալ իցէ, վասն զետացոց՝ մի զինի միոյ մոսանողաց ՚ի սպաս պաշտամնն տն. որպէս զի յելանել նոցա ՚ի պաշտամննց անսափի երգեցցեն զայս առ ՚ի յորդոր մոսանողաց: Այսմ կարծեաց մասամբ ինն նորաստէ վերնապիրն յունաց: Ամանք՝ թէ զայս ասացեալ իցէ դաւթի ՚ի նորհակալութիւն այ վասն մեծի յաղթութէ եղեւց ընդդիմ թհնամեաց իւրոց:

Ամանք՝ թէ զայս ասացեալ իցէ եղեկիայ արքայ, կամ ըստ վարդանայ ՚ի գէմս նորա՝ յետ հարկանելոյ հըեւտակի տն զզօրս սենեքերիմայ արքայի, կամ յետ զառողջութիւն գտանելոյ: Ամանք ևս՝ թէ զայս ասացեալ իցէ ուրումն մարգարէի յաւուրս եղիայի ՚ի տալ տն զանձրե յերկնից ՚ի ձայն որտոման: (ը. թագ. իա, 1-10:) Աւ թէ յայս միտո ասի ՚ի սաղմնափ աստ. * ձայն տն ՚ի վը ջուրց ॥ և ն: Կան ևս որք ասեն՝ թէ այս սաղմնոս ոչ այլ ինչ ցուցանե՛ բայց եթէ զնկարազրութիւն ժամանակի անձրեոյ և լրիկի. և թէ վասն յայնպիսի ժամանակս երգելոյ ասացեալ իցէ դաւթի զայս սաղմնոս:

Այս ամ՝ կարծեօք ասին. իսկ շշմարտութիւն բանից սաղմնափ յերկու ինչ հայի. մի՛ ըստ նկարազրին՝ առ ՚ի յայտաբարութիւն ամենակարուղութենն այ՝ որ ձայնիւ լոկով մեծամեծս գործէ ՚ի ջուր և ՚ի ջուր, ՚ի յօդ և ՚ի հող, ՚ի կենդանիս և ՚ի տունկս. և թէ զն այնորիկ արժան է մատուցանել նմա զփառս և զպատիւ և ն: Երկրորդ՝ ըստ հոգեորին՝ առ ՚ի յայտաբարութիւն ձայնի քարոզութեան աւետարանին սկսեալ ՚ի մլրտութէ տն. որպէս աեսցի յառաջիկայդ:

312

in. \bigcup *תְּבִיבָה תְּבִיבָה תְּבִיבָה תְּבִיבָה תְּבִיבָה תְּבִיבָה תְּבִיבָה תְּבִיבָה*

W.L.H.01801-15

Այս բանք՝ որը իբր յորդոր առաջի գնին, յայտ առնեն զմեծ փափաթութեա սրտի մարդարելին, որով յափը տակեալ հոգի նորա յօրհնութիւնն իւնանալին՝ ցանկայր փառաւորել զնծ. և նովին ցանկութեամբ բերել ցնծայր 'ի տեսանելն՝ թէ փառաւորի ած մասուցանմբ պատարազաց և օրհնութեց ձեռամբ այնոցիկ՝ որը Կոչելին որդիք ան:

Որդիս այ կոչէ զքահանայս և զգետացիս . զի սոքա ո-
րոշեալ էին յազգէ , խօսայէլի իբրև զորդիս այ՝ փոխա-
նակ անզբանկացն խօսայէլի . ըստ այնմ (թուոց դ .
42 .) * Եւ ես ահա առի զգետացիսն 'ի միջոց օրդեոցն
.. խօսայէլի՝ փոխանակ ամ անզբանկան , որ բանայ
.. զարգանդ 'ի միջոց օրդեոցն խօսայէլի . փրկանք նոցա
.. լիցին ինձ զետացիքն . զի իմ է ամ անզբանիկ ॥ ևն :
Եւ զի սոցա էր՝ պաշտօն մատուցանել ո՞ն զգո՞ն և
զպառարագ , օրդէս յայտ է 'ի զրոցն զետացոց ևս
և թուոց (դւ . բւ .) առ սոսա խօսելով՝ առէ :

|| Ա սատուցէս դն ռդրէս այ . Տապաւցէս դն ըսբրիս եւյաշ . Ո՞նկ
թէ ասելք . ո՞վ որդիք զեւեայ , որք ընտրեալ եք և ո-
բոշեալ յօրդիս այ առ ՚ի պաշտել զտեք պատարագօք .
մատուցէք նմա զօհս և ողջակել զս ընտիրս զորդիս
խոյաշ . Օ զառինս կոչւ որդիս եւյաշ . զի խոյք են արու-
ոյխարք , որոց որդիք զառինք ասին ՚ի մատաղութենէ .
Եւ թէ այէտ կարեք պարզագօնս ևս ասել . մատուցէք
նմա զգապինս , կամ զեթ զօրդիս մաքեաց՝ այսինքն
է.զ ոյխարաց , որպէս զնի այլուր , բայց կամելով ա-
ռաւել պատուական ցուցանել զմատուցանելինն՝ ըս-
տիս եւյաշ ասէ . զի անուն եւյաշ վասն զօրաւորն լինելոյ՝
պատուական երևելով քան զանուն մաքեաց , ՚ի պա-
տուականութէ անուան՝ զպատուականութի նշանակե-
ցելոյն կամի յայտնել :

Վ Ա յ ս բան ակնարկի , և առ որդին խրայելի առ հասարակ . զի և նորա է . ին 'ի հնումն որդիք այ . նոյնափառ և առ այնամիկ անմին՝ ողբ հանացելով զտեր՝ պաշտելին զնու . զի և նորա յորդիս այ համարեալ լինելին . որոց համեմատութք՝ անզբանիկ որդիք իրուլին խրայելացիք . բատ այնմ * որդի անզբանիկ իմ խրայելլ . (ելից . դ . 22 .) Ուստի և առ անմին հայելով այս բան ('ի սաղ . զէ . 7 .) զնի բառիւս ունեմա յասելն . * մատուցելք տնն . տոհմք ազանց || և ն : Որով ցուցանի թէ առ սոսա անմին ևս ակնարկի . այս բան 'ի մատուցանել տեառն ըզ պատարագս :

Վ Ա յ ս բանօրէն՝ առ քարոզիս աւետարանին հայի սոյն այս սասացուած . զի և նորա իրբե որդիք այ՝ իւրեանց քարոզութեամբ մատուցին այ զորդիս խոյոց , այսինքն զորդիս հեթանոսաց՝ իւեթկողաց հաւասաց , կամ զորդիս հակառակողաց հմապատասխանութէ :

Վ ա մ բ թէ է խմանալ որդւովք խոյոց նախ զամ հաւասաց յեալս . զի սորա ևս այրով իմն նմանութեամբ են որդիք եռաց , այսինքն որդիք առաքելոց . քանզի առաքեալքն քովի իրբե խոյք ծնան զհաւատացեալս իւեթկելով զջօրութի հեթանոսաց և զրոնութի զիւաց : Օ սոսա մատուցման անուն առաջնորդք եկեղեցւոց և քահանայք , քարոզութք . յորդորմամբ , և մատակարարութեամբ խորհրդոց :

Վ ա մ բ ՛ . քարոյապէս առեալ առէ , թէ յողջակիզիլ խոյոց * խոյն նշանակէր զմատուցովին հոգին նուրիբել այ և զենուն զնոյն՝ զմեռանին հոգւով՝ ցանկութեան աշխարհի . և ողջակիզելն՝ զմաքրելն զանձն հրով սիրոյն այ || . զրէ զարձեալ թէ որդւովք այ խմանին հրեշտակը . իսկ որդւովք խոյոց մատուցօրք աղօթից : Եւ քանզի մատուցմամբ ողջակիզաց և աղօթից մատուցանի այ փառք և պատիւ , յայն ակնարկելով մարգարէն՝ յարէ զինի , և առէ :

Վ ա մ բ ՛ . Ուստի առ զի առաջ և զորդիս . մատուցէս առ զորդիս . և էրիւրուգէս առ ի սրահ սրբանութեան նորա :

Գիտելի է՝ զի փառքն կրկնակի առեալ լինի . այսինքն ներքսապէս և արտաքսապէս . ներքսապէս՝ փոխանուկ

գերազանց վայելըութեան , կամ սրբածալի շքեղութե , կամ մեծի իշխանութե , և կամ այլ ու և իցէ կատարելութեան , ըստ այնմ բանի՝ որով լինի առարկայ փառաւորեալ լինելոյ յինքեան կամ փառաւորեալ երեւոյ առ այս : Արտաքսապէս՝ փոխանակ յայտադարձութե ներքին կատարելութեան՝ այսինքն փոխանակ այնք , որով յայտնի լինի ու և իցէ բանիւ գերազանցութի կատարելութեան ուրուք :

Այսպէս և պատիւն կրկնակի առեալ լինի , այսինքն ներքսապէս և արտաքսապէս . ներքսապէս՝ փոխանակ կատարելութեան՝ որով արժանի լինի ոք պատուելոյ : Արտաքսապէս՝ փոխանակ յայտարարութեան՝ որով ոք յայտ առնէ , 'ի ձեռն արարողութի իթք 'ի ձեռն նշանի զկատարելութիւն այլոյ ուրուք :

Եւ յայտ միտս երթեմն 'ի գործ ածի այս բառ փոխանակ մեծարանաց և յարգութե . այլ կայ 'ի միջի և երբեակ տարբերութի , մի՛ զի մեծարանիքն 'ի ներկայութե մեծարեցելոյն լինի . իսկ պատիւն ոչ միայն 'ի ներկայութեան պատուեցելոյն , այլ և 'ի հեռակայութեան նորա կարէ լինել . Երկրորդ՝ զի մեծարանիքն միշտ 'ի փոքուէ առ մեծն լինի . իսկ պատիւն ոչ միայն 'ի փոքուէ առ մեծն , այլ և 'ի հաւասարից կարէ լինել , ևս և 'ի մեծէ առ փոքրն : Երրորդ՝ զի մեծարանիքն զգալի արարողութեամբ լինի և առ այնոսիկ՝ ողք զգայութեամբ ընթանին . բայց պատիւն երկրորդութք ևս կարէ լինել : Իսկ յարգութին և լրութի կամ լիութի մեծարանաց , և տարբերի միայն յեղանակն :

Արդ 'ի յառաջի եղեալ բնարան մեր անուանիք Դաստիարակութե փառաց և պատուոյ գնին , այսինքն 'ի աեղի այնք՝ որով յայտնին փառքն այ և պատիւնորա՝ բանիւ և արարողութեամբ . ըստ այսոցիկ խօսելով մարդարէն՝ ասէ :

Ա սարբերի մարդարէն՝ ասէ . ովք որդիք այ , 'ի մասուցանել ձեր պատարագ ոնն՝ մասուցելը նմազիառ և զպատիւ . զի եթէ որդիք այ էք և ծառաց նմա ամենակայի պարա է . ձեզ փառս մասուցանել նմա և պատիւ ընծայել : Եւ զայտ նաև նոյն ինքն աւել ի բաւամբք պահանջնելով ասէր բերանով մաղաքեայ . * որդի փառաւորէ . զհայր , և ծառայ երկնչի 'ի նմա .

իւրմէ , (և պատռէ զնա) խակ արդէ եթէ հայր եմ ,
ուր են փառք իմ . և եթէ ողբ եմ , ուր է պատիւն իմ ,
ասէ տէր ամենալազ || . (մաղաք . ան . 6 :)

Վայս մատուցումն փառաց և պատույ կրկնակի լինի .
մի՝ ըստ իրին և ըստ բանին . և մի ևս՝ ըստ բառին և ըստ ձայնին . Բայց իրին և ըստ բանին յայնժամ լինի . յորժամ մատուցանին այ այնպիսի բանք և այնպիսի արարողութեալ , որը յայտ առնեն զփառս և զպատիւս զորս ունի ած յինքեան . Խոկ ըստ բառին և ըստ ձայնին յայնժամ լինի . յորժամ անուանքդ էաւ և պարկ-որոշակի մատուցանին այ . զզրպիսի մատուցին հրեշտակեք . յերգեին * փառք ՚ի բարձունս այ :

Յոր միտ և մեք լնծայեմք այ զայսպիսիս յամելն .
* փառք քեզ անձ՝ փառք քեզ, յաղազս ամի տը փառք
, քեզ . կամ թէ . * փառք, պատիւ, և երկրապագու-
թիւն 'ի բարձունս հօր և որդւոյ և հոգւոյն արյ . կի՞
թէ * փառք հօր և որդւոյ և հոգւոյն արյ . և այլ սո-
ցին նման ասացուածք . որովք կամիսք ցուցանել՝ թէ
փառաւորեալէ յինքեան անձ, և փառաւորելի է 'ի մէնջ
և յայլոց ամցնց . և ըստ նշանակութեան բառիցն՝ կա-
միմք յայտ առնել՝ թէ որ ինչ նշանակին բառիւս Քառ-
կամ բառիւս Պատիւ՝ զայն անմ փափիաբիսք մատուցա-
նել այ . Յայտսիկ երկոսին օրինակս ևս հայի այս
բան մարգարեին, ևս յերկոսին և դիտէ մարգարեն՝
զի փառաւորեսցի անձ բանիւ և զործով, ոչ միայն
յինքեան, այլ և յանուան իւրում . և առ այս յաւե-

լու , և ասէ : Աստանօր բառդ
անուն՝ կարէ առեալ լինել կամ՝ ի հողավն սեռական ,
որպէս զնի յերբայականն յասելն ալն , այս է անուն
նոր , և կամ՝ ի հողավն տրական , որպէս զնի յեօթա-
նասնիցն և ՚ի լատինն , եթէ առեալ լիցի սեռականնա-
պէս՝ լինի յատիցուցիչ փառաց . և կարդ շարադրու-
թեանն գասաւորի այսպէս . * զգիառ անուանն այ՝ մա-
,, տուցէք նմա || . և միտ բանին լինի այս . զայն փառա-
ւորութիւն՝ որով փառաւորեալ է անունն այ՝ մատու-
ցէք այ . զի որպէս փառաւորեալ է անուն նորա յամ
տեղիս , սոյնպէս և ինքն լինիցի փառաւորեալ : Յայս
հայի և այն՝ զար ասէ անձ բերանով մաղպեայ . * զի

.. յարեւելից մինչև՝ 'ի մոտա արեւու փառաւորեալ է,
անուն իմ . . . զի մեծ է անուն իմ 'ի հեթանոս ॥ .
(մաղաք . տ . 11 .) զի և հեթանոսը 'ի պաշտել ըզ-
կուռս խրեանց՝ զանունս ոծ գնելով 'ի վերայ նոցա
պաշտելին զնոսա :

Խոկ եթէ առցի տրականապէս՝ լինի խնդիր բնութեան
Տառաշնչէր բային , և կարգ շարազրութեանն դասաւորի
այսպէս . * մասուցէք զբառութն , ևս և անուան նո-
.. բա ॥ . որով և միտ բանին լինի այս . փառաւորեցէք
զանուն թն :

Դատ առաջնոյն՝ այսինքն սեռականապէս առեալ փա-
ռաւորութիւնն ոչ հայի յանունն , այլ 'ի տեր , և այն՝
փառօք անուան նորա . Խոկ ըստ երկրագիբն՝ այսինքն
տրականապէս առեալ՝ փառաւորութիւնն հայի ոչ 'ի որը
այլ յանուն թն , և այն՝ փառօք նորին խոկ թն : Դա-
քիկ հային 'ի բացատրութի բանին ըստ շարազրութն ,
խոկ ըստ բնքեան նկատեալ 'ի յոծ որովհետեւ անուան
թն նշանակե զտեր , նոյն լինի և սակէն փառաւորել
զանուն թն , և փառաւորել զտը փառօք անուան նը :
Հայսմ ամի՞ փափաք մարդարելին ոչ յայլ ինչ հայի ,
բայց միայն յայս՝ զի զոր ինքն ցանկայ փառաւորել
փափաքի՝ զի և յամցունց փառաւորեալ լիցի . և զի
այս փառաւորութի կատարելագոյն ևս լինի 'ի տաճա-

րի նորա . յայն սակի 'ի նոյն յորդորելով ասէ :
Եթի բողոքէն՝ 'ի սրահ սրբածնեն նորա : Երկիրպագանելին
ըստ ստուգաբանութեան խրում նշանակե , խօնարհե-
ցուցինամբ անձին պազանել զերկիր առաջի այլոց 'ի
ցոյց զերազանցութեան նորա : Դասցի * ըստ ստուգա-
.. բանութեան խրում ॥ . քանզի զայս ցուցանի բառդ
եթիրպագանել : Խոկ առանց հայելոց 'ի ստուգաբանու-
թինն՝ կարէ երկրագիբ ոք առանց այսպիսի արարո-
ղութեան , միայն խրի նշանակ՝ առ 'ի յայտարարութի
զերազանցութե այլոց և հպատակութե խրոյ առ նա .
կարէ լինել նաև սոսկ ներքին ներգործութի կամաց
առանց արտաքին նշանի , ողպէս երկիրպագանեն այ
հրեշտակք : Խոկ եթէ լիցի առանց ներքին ներգոր-
ծութեան կամաց՝ այն ոչ ասի երկրագութի , այլ կի՞
յարգութիւն ինչ , կամ արտաքին պատիւ . և կամ սուտ
երկրագութիւն :

Վրդ պրակէս երեկի 'ի նախընթաց բանից , մարդարէն աստանօր զլրացէալն խնզրէ՝ այսինքն զայնպիսի երկրպագութիւն , որ իցէ կատարեալ ներքին և արտաքին ներգործութք . զի նախընթաց բանիւն խնզրեաց մեծացուցանել զած փառաւորելով և պատուելով որ լինի բանիւ , ևս և արարողութք . իսկ երկրպագութքն զաւելի ինչ խնզրէ . այսինքն թէ նաև աշխատութք երկրպագութէ՝ մեծացուցանել զնա : | Հւ զայս խնզրէ մատուցանել այ 'է սրահ ու բառելեն նորս . այսինքն 'ի տաճարի նորս . կամ 'ի սրահի տաճարին 'որ էր շուրջ զսրբութէ ամելք՝ այսինքն շուրջ զիտորանաւ , յորում սրահի մատուցր պատարագ , և նուազիւր սազմոս և օրհնութիւն , և մատուցանիւր երկրպագութի :

Վ. յարանօրէն՝ այս սրահ սրբութեան օրինակ էր տաճարի նորոյս սիոնի՝ որ է իբր սրահ երկնային տաճարի : { յայս սրահ յորդորիմք յաճախել և 'ի սմա մատուցանել զերկրպագութիւն տոն . զի թէպէտ և յամ տեղիս մարդէ է և արժան իսկ է երկիրպագանել տոն , բայց 'ի մէջ տաճարի առաւել ևս արժանաւորագոյն .

(զօրմէ տե՛ս 'ի ստորև 'ի համարին 9 :)

Վարոյապէս , սրահիւ սրբութեան նշանակի զիտուուրութիւն տք . զի է սրահ մատանելոյ 'ի բարի գործս և 'ի հաճոյս այ . այլ ծանիք՝ զի զիտուուրութիւնն որ բերի 'ի բարի գործս միայն , է ստորին , և հայի 'ի պտուզն այսինքն յօգուտ մեր . իսկ զիտուուրութիւնն որ բերի 'ի հաճոյս այ , է զերագոյն , և հայի 'ի փառս այ . զորմէ խօսեցաւ 'ի նախընթաց հատուածն , յասելն . մատուցելք տոն զիտուու , ևն . առաջնն կարգի առ վախճանն զործոյն . իսկ երկրորդն առ վախճանն զործովին . զի խնզրէ՝ թէ զինչ կամի ած , և յայն հայելով զործէ : Վ. յո զիտուուրութիւն է՝ որ ուղղէ և մաքրէ և կատարելագործէ զամ զոր առնեմք . և է իբրեւ ալքիմեայ որ զալինձեղէն զործս մեր զարձուցանէ յոսկի : | Հւ է ևս իբր զեկ՝ որով ուղղին նաւարկութիւնք մեր այսինքն ընթացք կենաց մերոց . մինչեւ հասցուք 'ի նաւահանգիստ փրկութեան մերոց յերկինս , և ըստ առաջիկայ բնարանիս 'ի տաճար փառացն այ :

Վ. յլ առաջ զիտուելի է՝ զի այս երկու առունք սազմու-

սաց կրկնին և 'ի սաղ . (զԵ . 7 . և 8 .) այսպիսի իմն
բանիւք . * Ո ատուցէք տն տոհմք ազանց , մատու-
ցէք տն զփառս և զպատիւ . մատուցէք տն զփառս
, անուան նորա . առէք պատարագս , և մոտէք 'ի սրահս
նորա , երկիք պագէք տն 'ի զաւիթօս սրբութեան նո-
րա . Այս այն է՝ որ զրի և 'ի առաջաց . (ժՂ . 27 .)
փոքը մի փոփօխութք . զօրմէ ունիսք խօսիլ 'ի յիշա-
տակեալ սազմասդ :

Վ ա դ յ ե տ ցնծ ալից խրախուսելց մարգարեին զոր-
գիսն այց մատուցանել տն զփառս և զպատիւ և զեր-
կրպագութիւն , 'ի մէջ բերէ և զայնալիսիս , որովք
զրեթէ բանադատել կամի զնոսա՝ և զայլս առ հա-
սարակ ընդ նոսա 'ի մատուցանել այց զփառս և 'ի մե-
ծացուցանել զնա ինքն զած : Խակ թէ զինչ այն իցէ
ասէ :

Կ ա յ ն ա ս ե լ այց լ ա յ լ ա յ լ մ ի տ ս ի մ ա յ շ ե ա լ լ ի ն ի . մ ի
փոխանակ հրամանին այց , կամ փոխանակ բանին այց . և
այս առումն յաձախ է 'ի որ զիրս , մանաւանդ յեր-
կրորդումն օրինաց և 'ի մարգարես . Երկրորդ՝ փոխա-
նակ զգալի բարբառոյ՝ որ լսելի լինի 'ի զիմաց այց .
որպիսի էին այն ձայնք՝ զորոց զրի 'ի որ զիրս լեալ
առ մնավէս և առ այլս . որպիսի էր և ձայնն այն հօր
առ առ որդին միաձին 'ի յորդանան և 'ի լեառն Ըա-
փոր : Երրորդ վերաբերութք իմն փոխանակ ձայնի
հողմոյ և որումն և կայծական , որք զործին 'ի
ձեռն տարերաց . յոր միտս ասէ վանական վարդապէտ
('ի մեկն . յոթ . գլ . լն .) * զօր գործեն տարերքս ո-
րումնամք , ձայնք են այց :

Ո ստ այսոցիկ երից եղանակացս իմացեալ լինի ասէն
աստ ձայն տն . և առ 'ի յարգոյ և մեծ ցուցանելց
զզրութիւն այսր ձայնի տն՝ եօթնիցս կրկնէ մարգարեն
զնոյն յայտ սազմոսի . և յամի ցուցանէ զայն լինել
սրանցէլի 'ի ջուր , 'ի հուր , 'ի յօդ , և 'ի հող , որք են
գլխաւոր մասունք տիեզերիս , և յայն ամենայն որք
են 'ի տիեզերս : Այս սկիզբն արարեալ յասաջնոյ
անտի և 'ի զործոց որ 'ի ջուրս՝ յոճ զերազանց փոխա-

բերութեան կարգէ զբան իւր , և ասէ .
Չայն ո՞ւ է Ալբայ Հուրց : Առվին նկարազըի զօրութիւն
 ձայնին այ ՚ի ջուրս ՚ի ստեղծագործութեան աշխարհի .
 քանզի ասի ՚ի գիրս ծննդոց (ա . 2 .) * | Եւ երկիր էր ան-
 երեսյթ և անոպատրաստ (պատեալ ՚ի ջուրց) և
 խաւար ՚ի վերայ անդնդոց . և հոգի այ ջրջէր ՚ի վերայ
 ջուրց . . . և ասաց ած . եղիցի հաստատութի ՚ի մէջ
 ջրոցդ , և եղիցի մեկնիլ ՚ի մէջ ջուրցդ և ջուրց . . .
 և ասաց ած , ժողովեսցին ջուրքդ որ ՚ի ներքոյ երկ-
 նից ՚ի ժողով մի , և երեսցի ցամաքն , և եղե այն-
 պէս || : { Յայս և ՚ի սոյն ակնարկէ սկզբնաբար առա-
 ջի եղեալ բան սազմուիս . ըստ որում՝ ՚ի ստեղծա-
 գործութեան անդ եղե * ձայն տն ՚ի վերայ ջուրց || .
 այսինքն հրամանն այ ՚ի վերայ ջրոց , զի բաժանես-
 ցին և երեսցի ցամաքն . և այն բաժանեալ ջուրք
 ժողովեսցին յորոշ տեղի . և լինիցին ծով , գետ , ամպ ,
 և այլն : | Եւ որպէս զի ցուցյէ զզօրաւոր լինել այնը
 հրամանի՝ նմանեցուցանէ որոտալոյ՝ յասելն :

| Ե - ած քառաշ , | Ե յոտ նմանութեամբ զայս ևեթ
 կամի յայտնել , թէ զորօրինակ յորժամ որոտայ եր-
 կինք՝ սաստկապէս սարսին կենդանիք , ևս և մար-
 դիկ , և իբրև թէ պատրաստին ՚ի կատարումն հրա-
 մանի կամ ՚ի փախուստ . սոյնպէս և ՚ի հրամայել
 տն , ջուրք իբրև թէ սարսեալ հնազանդեցան նմա ,
 և որոշեցան առ ժամայն ՚ի տեղիս , յորս սահմանե-
 ցան ժողովիլ : | Եւ առ ՚ի յայտ առնել նաև ՚ի կող-
 մանէ առարկային՝ այսինքն ՚ի կողմանէ հնազանդե-
 ցելոյն զզօրաւորութիւն այսր հրամանի տն՝ յաւելու ա-
 սել թէ այս հրաման ոչ է ՚ի վերայ սակաւ ջուրց , այլ
 բազմաց . սմին իրի յարէ զինի :

| Ե - ու բնա ՚ի Ալբայ Հուրց բաշմա : | Եւ արդարե այն-
 չափ բազում էր այն ջուր , մինչև հողագնտոյս ող-
 ջոյն ծածկիլ ՚ի նմա բովանդակ , և ՚ի նմին ընկղմեալ
 կալ . և ջուրն այն զրեթէ իբրև զգեստ պատեալ և
 վերարկեալ էր զերկիր . յոր միտս զրէ սոյն այս սազ-
 մուերգուս (՚ի սաղ . Ճ՛գ . 6 .) թէ խորք ջուրց որպէս
 զգեստ վերարկու էր երկրի , և ծածկեալ էր զնա ,
 լքդ ՚ի վերայ այսոցիկ ջուրց հրամայեալ այ ՚ի բովլ
 սմենակալ զօրութեամբ այնպէս որոշեաց զնոսա լեռ-

նացուցմամբ երկրի և խորացուցմամբ նորին , և այն պիսի սահման եղ նոյս , մինչեւ ոչ ևս կարել նոյս անցանել զահմանաւ իւրեանց :

Ա. Ա. Քննելի է այն՝ զի նախ ասաց . * ձայն տն ՚ի վե ։ բայ ջուրց ։ խել ասա ոչ ասէ ձայն տն . այլ թէ * և ինքն ողը ՚ի վերայ ջուրց բազմաց . Եւ այս ոչ վասն այլ ինչ պատճառի , բայց եթէ վասն այսպիս պահան ջելոյ իրացն եղելոց . զի առ ՚ի լինել ձայնի տն ՚ի վերայ ջուրց՝ պահանջնի լինել և տն ՚ի վերայ նոյն ջուրց , բատ որոյ ասի . * և հոգի այ շրջել ՚ի վերայ ջուրց ։ այնպէս զի ձայնն այն , կամ հրամանն այն իցէ իրը գործիք , և ինքն հրամայօդն իրը պատճառ :

Ա. Ա. բան սաղմանիս հայի և յայն սքանչելիս , զոր արար ած ՚ի վերայ ջուրց կարմիք ծովուն . քանզի որ պէս զրի ՚ի զիրս ելից . (Ճկ . 21 .) դարձոյց ած չնչ մամբ բռնութեան հոգմոյ հարաւոյ զջուրս ծովուն . և որոտաց ՚ի վերայ եղիպտացոց թօթափելով զնոսա ՚ի ջուրս . և ինքնին կացեալ ՚ի վերայ ջուրց ծովուն ընկըլմեաց ՚ի նոսա զեգիպտացինս : Ու ատուցին յայն ժամ տն որդիք այ , այսինքն իսրայէլացիք զիտոս և զարատիւ , յերգել նոյս առ ած . * օրհնեսացնք զտէր՝ զի փառօք է փառաւորեալ . . . աջ քոյ տէր փառաւո . բեալ է զօրութէ . . . հոգմոյ սրտմառե քոյ բաժա . նեցան ջուրք . սրազեցան իրըն սրարիսաք ջուրք . . . առաքեցեր զհողմ քո , և ծածկեաց զնոսա ծոլ ։ (տես զայտմանէ ՚ի սաղ . Ճե . 8 = 12 :)

Ա. Ա. որպէս յայս հրաշալի անցս՝ սոյնպէս և յայլ բա քանչելազործութիւնն ջուրց , ևս յանցս ջրհեղեղին կարէ վերաբերիլ այս բան . զորոց մի մի զրել երկար լինի . յիմանալ ընթերցողին զվերսզգրեալսդ . նորիմբը կարէ ինքնին հասու լինել և այլոց :

Հայլ իմն նկարագրական մեկնութիւնն ևս վերածի այս բան . զորմէ պարտ է զիտել . զի որպէս ասացաք ՚ի վերոյ բատ երրորդ նշանակութեան ձայնի տն , ՚ի սուրբ զիրս ձայնն որոտման և կայծականց՝ կոչի ձայն տեառն կամ բարբառ այ . բատ այնմ . (ելից . թ . ուր ՚ի համարն 23 . ասի .) * Եւ ես տէր բարբառս և կարկուտ , (որոտմամբ և մըրկաս .) և ընթանայր հուր ընդ երկին . կիրն . Եւ այս բարբառ որոտման և կայծականց՝

կոչի անդ ('ի համարն 28 .) ձայն տեառն , յասելն . * դադարեսցին 'ի լինելոյ ձայնք տեառն || . Այսպէս և յայլ բազում տեղիս սուրբ զրոց՝ ձայն որոստման և ձայն կայծականց կոչի ձայն տես կամ բարբառ այց . և այս՝ վասն այնորիկ զի կամ 'ի զիմաց այց գայ , և կամ մանսւանդ զի յայտ առնէ զզօրութիւն իշխանութե արարչին , կամ զուժ գնութիւն հրատանի նորա :

Վ ըդ ըստ այսմ առեալ աստ զձայն տեառն՝ սովինն բանիւ նկարագրի որոտումն երկնից 'ի մքրկալից ամաս և յանձրես . զի այս Յայն Պռ , այսինքն է ձայն որոտման լսելի լինի 'ի վերայ ջուրց , այսինքն 'ի վերայ ջրալից ամեղոց . որք 'ի զիրս ծննդոց (ա . 7 .) կոչին ջուրք 'ի վերոյ հաստատութե : | յւ ած Ք առաջ առ 'ի փառաւոր և սքանչելի ցուցանել զզօրութիւն իւը՝ առնէ որոտու ամեղոց : | յւ Բնան Պռ տայ առատապէս զջուրս սննձեաց բազմաց յարբումն ծարաւոյ կենդանեաց և տնկոց :

Վ յս ըան է և իրը մարգարէ ական կանխասացութիւն այնր հանդիսի՝ որ կատարեցաւ 'ի մկրտութեան տն . յորում եղեւ ձայն տն 'ի վերայ ջուրցն յորդանանու առ որդին իւը միածին . և ձայնն էր այս . * դա է որդի 'իս սիրելի , ընդ որ հաճացայ || . (մատ . դ . 17 .) կամ թէ * զու ես որդի իմ սիրելի , ընդ քեզ հա . , ձեցայ || . (մար . ա . 11 .) | սկ որ յաւելեալ լինի . ած Ք առաջ որոտու , ցուցանի այնու մեծութիւն ձայնին և զզօրութիւն ձայնողին . որով բացան երկինք , և էջ հոգին սուրբ մարմնաւոր տեսալեամբ (զուկ . դ . 22 .) | սկ յաջորդ բանն՝ որ ասէ : | յւ Պէ՛ Բնան 'է Ալբայ Հուրց Էտալ Տայ , հայի յայն՝ թէ ինքն տէր անդանօր երաց զարդանդ ջուրց 'ի սահմանելն վիտորհուրդ մկրտութեան . և ետ՝ ոչ եթէ այնց ջուրց միայն , այլև ջուրց բազմաց . այսինքն ջուրց բովանդակ տիեզերիս , զզօրութիւն ծնանելոյ նովաւ յորդիս այց :

Հ այսմ հանդիսի մկրտութեան սկիզբն եղեւ բարողուե աւետարանին , որով աւետարանեցաւ ազգաց բազմաց՝ թէ քու է որդի այց : | յւ այսր աւետարանութեան առաջին հրատարակիւ եղեւ ձայնն հօր , և յետ այնորիկ ձայն նորին իսկ որդւոյ . և ապա ձայն հոգւոյն սէյ յաւուրն պէնտէկոստէի . զինի այնր՝ ձայնն առա-

քելոց, որպէս որոտացին ընդ ամեզերս զնոյն ձայն հօր զոր բարբառեցաւ: թէ * զա է որդի իւր սիրելի: կամ թէ նա ինքն հայր 'ի ձեռն առաքելոց որոտաց ընդ ամեզերս 'ի վերայ ջուրց այսինքն 'ի վերայ աղ-
գաց, որպէս օրինակին 'ի ջուրս:

Հարմարական մեկնութիւն, 'ի ձեռն ձայնի տն նշանաւ-
կի յովհաննես մկրտիչ, որ կոչեցաւ ձայն բարբառոց,
այսինքն ձայն քնի, ըստ մեկնելոց չնորհալոյն: ('ի
մատ . զլ. դ.) այս ձայն եղեւ 'ի վերայ ջուրցն յոր-
դանանու 'ի մկրտելնորա ամդ զբարբառ հօրն երկնա-
որի այսինքն զբո՞ . զի * ձայն է յովհաննես . և բար-
բառ քո՞ . ըստ այնամ: (մարկ . ան . 3 .) * ձայն բար-
բառոց յանապատի: այսինքն ձայն քնի 'ի յերկրի:
ըստ որում քրիստոս է բան հօր: Առ զի ձգմանը ձեռնին
մկրտեաց յովհաննես, եցցյ այնու թէ որ ձայն է
քնի՝ պարտի լինել և ձեռն: այսինքն թէ որ ձայնին
հաւատոյ 'ի քո՞ , պարտի ըստ ձայնին զործել 'ի փառո
քնի . և յայնժամ առծ փառաց որոտացէ չնորհօք 'ի
վերայ նորա, և տէր ինքն 'ի վերայ զործոց նորին, որպէս
նշանակին ջուրբք: Դարձեալ այլով իմն տարագու-
ձայն տն այսինքն ձայն որդւոյն այ եղեւ յովհաննես,
յառաջընթաց լինելով նմա իրը յատուկ մարգարէ:
նորա . որով և եցցյ զփառակցութիւն նորա ընդ հօր:
Դ սոյն ակնարկելով ներսէս չնորհալի զրէ: ('ի մեկն .
մատ . զլ. դ.) թէ յովհաննու երթան առաջի քո՞
այն է՝ զի * այսու զպատուակիցն լինել հօր ուսանի-
ցիս . զի զորօրինակ որպէս հայր, նոյնպէս և նա
առներ մարգարէս, թէ և հօրն նորա են . զորմէ և
հրեշտակն քարոզէր, թէ զնացէ առաջի նորա . և
զպարիս՝ թէ զու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն
կուեսջիր . զի երթիցես առաջի նորա . և այլազգ
ևս . օրէն էր այլում (այսինքն առաջին մարգա-
բէից) նախ ճառել զնանէ, և ապա իւր (մարգա-
բէին) վասն իւր:

Դ ամբ": բարբառապէս մեկնեալ 'ի ձեռն ջուրց իմանայ
աստ զիորհուրդս մտաց մարգկան . զի են իրը զջուր
զիւրահէղ և ծփական: Դ վերայ այսոցիկ ներբին
խորհօրդոց հնէ ձայն տն, այսինքն ազգեցութիւն անձ-
ային զիտութեան կամ զօրութիւն անձային չնորհաց, և

բարեկարգէ զամբ :

Վ. յլով իմն յարմարական մեկնութ ամբ՝ այս բան հայի յայն ձայն՝ որով որոտաց ած ՚ի վերայ հրեշտակաց ապրատամբելոց . քանզի ՚ի ստեղծանել անդ այ զայն չափ բազմուի նոցա , եղե * ձայն ՚ի վերայ ջուրց . այսինքն թէ հաճութի կամացն այ ցուցաւ ամեն նոցա . և յաստամբիլ երրորդ մասին . * ած փառաց որու տաց . այսինքն թէ սաստեաց նոցա . և ապա * տէր ինքն ՚ի վերայ ջուրց բազմաց . այսինքն թէ նա ինքն տէր՝ որ արաբն զնոսա , մերժեալ գատապարտեաց զնոսա , և իջոյց ՚ի սանդարամետս ամփեղոց . որով և զարհուրեցոյց այսինքն թէ հիացոյց զայլ . և ահ էարկ յօրդիս մարդկան :

Պետրոս թագաւոր արագ մնացւոց տեսեալ զարըստամբիլ բազմաց , կոչեաց առ ինքն զիշտանս իւր , մանաւանդ յաստամբացն . եհարց ցնոսա և ասէ . հնար իցէ արդեօք շնիլ այնպիսի զանդակի , որոյ ձայնն հնչեսցէ յաշխարհ ամբ . և ՚ի զարմանալն նոցա , ասէ , կարեմ ես գործել զայդ . և յետ աւորց ինչ եհատ զզլուխս ապրտամբացն , և ետ դիզել զանդակաձե . և եղե այն այնպիսի ինչ որոյ ձայնն հնչեաց ընդ ամ տէղիս : (Այսակէս արար և ած , զի շնչեաց զանդակ մեծ ՚ի դլուոց հրեշտակաց ապրտամբելոց , որով և որոտաց յերկնից . (սաղ . Ժէ . 44 :) որպէս զի * երկիցէ ՚ի տեառնէ ամ երկիր) . (սաղ . լը . 6 :) Վարդ խօսեցեալ մարդարէին զորոտալոց ձայնի տեառն՝ ՚ի մէջ բերէ և զշանդամնս ձայնի նորա , և ասէ :

Դ . **Զ**այն պն զըրութեց , և Յայն պն մէծ կայելլութեց :

Վ. յս ասացուածս է իբր առաւելութիւն հաստատութէ երից մեկնութեանց ևս զորս եղաք ՚ի նախընթաց համարդ . զի զօր անդ ասաց թէ ձայն տեառն այսպէս և այսպէս արար . աստ կամելով ցուցանել՝ թէ այն ամ եղե զօրաւորութեամբ և գերազանցութիք , ասէ նախ ըստ զօրաւորութեանն :

Զայն պն զըրութեանց : Վ. այսինքն է այն ձայն կամ այն բան՝ որով հրամայեաց ած ջուրց ՚ի սկզբան արար չութեան՝ բաժանիլ ՚ի ծով և ՚ի գետ , ՚ի յամկո և ՚ի

ցօղս , և սահման եղ՝ զի մի ծածկեցի՝ զերկիր՝
ոչ եղեւ լոկ ձայն , այսինքն ձայն ունայն , անզօր և
անգործ , որպիսի են հրամակ ձայնք որոտմանց , որք
՚ի հնչին անցանեն . այլ էր չայն պատճեն այսինքն
ձայն ամենազդու , այս է՝ հրաման ամենազօր . զի էր
ձայն այնպիսի արարողի՝ որ է տէր զօրութեց . վասն որց
և հրաման նորա այնչափ զօրաւոր եղեւ և այնչափ զօ-
րաւոր է , մինչ զի որպիս հնչեցաւ , այնպիս կատա-
րեցաւ ՚ի ստեղծագործութեն անդ և ՚ի սբանչելագոր-
ծութեան ջուրց : Այս ըստ այսօմ բառգ ունան՝ դնի իբր
յատկացուցիչ չայնէ , և բառդ չժբառթեն՝ իբր յատկա-
ցուցիչ պա . որպիս տեսանի ՚ի զրելոցդ . իբր թէ ա-
սէր . այն ձայն զօր ասացի՝ էր ձայն ոտն զօրութեանց :
Հայելով ապա մարդարէին և յառաւելութիւն դերա-
գանցութեն այնը հրամանի՝ յարէ և ասէ :

Եւ չայն պա մեծվայելութեն՝ Ուեծվայելութեն՝ իմա-
ցեալ լինի մեծութիւն գերագոյն փառաց , կամ որ
նոյն է՝ գերազանց փառաւորութիւն լիացեալ կատա-
րելութեն : Ուդ ձայն ոտն ՚ի ստեղծագործութեան անդ
և ՚ի սբանչելագործութեան ջուրց զայնպիսի ինչեցոյց ,
որով յայտնեցաւ թէ այն հրաման էր ձայն ոտն մեծ-
վայելութենց . այսինքն թէ էր ձայն այնպիսի արարո-
ղի՝ որ է տէր մեծվայելութենց . և նովին խել յայտնե-
ցաւ մեծվայելութիւն նորա . զի յառնելութենէ առ-
նօղն հանացի . իբր զի զօրութիւն գործողին ՚ի գործոց

նորա յայտնի տեսանի :

Իւս բան եթէ վերածիցի և ՚ի ձայն հնչման որոտ-
մանց և կայծականց դարձեալ զնոյն ցուցանէ . և միտ
բանին լինի այս , թէ այն ձայն յայտ առնէ զզօրութին
այ և զմեծվայելութիւն նորա . կամ թէ այն ձայն է
՚ի հրամանէ այնպիսի արարողի , որ է տէր զօրութենց ,
և տէր մեծվայելութենց : Ուրովք կամի յայտ առնել
մարդարէն՝ թէ ամենազօր տէր է ած . և ամի նա է
ինքնիշան հրամայօղ . և ՚ի հրամանէ նորա ջուրք
բաժանին , ամսպե անձրեւն , որոտմանք հնչեն , և

այն՝ որ ՚ի կարդի . և այս ամս սբանչելի զօրութեն :

Վայսամասօրէն՝ ձայն տեսան՝ այսինքն քարոզութի աւե-
տարանին , որ սկսաւ ՚ի նոյն ՚ի տեսանէ ՚ի վերայ ջուրցն
յորդամանանու , և հնչեցաւ յառաքելոց առ ջուրս բա-

զումն , այսինքն առ ժողովուրդս ազգաց , ոչ եղե
տկար և անարգ՝ իբրև զձայն որոտալոց քերթողաց և
փիլիտոփայից , այլ ձայն զօրաւոր և ազգու , վայելու^է
և փառաւոր . * զի աւետարանն մեր (ասէ առաքեալն)
ոչ եղե առ ձեզ՝ միայն բանիւ , այլ և զօրութեամբ և
Հոգւով սրվ , և լրութիւ բազմաւ . (ա . թես . ա . 5 .)
Ռստ վերածական մեկնութե՝ այս ձայն հայի 'ի բար-
բառն յայն՝ որ գոչելոց է յաւուրն յետնում 'ի յարու-
ցաննել զմեռեալս . յայս միտս տարածէ զիմաստ այսր
բանի յովշան ծործորեցի . ('ի մեկն . մատ . զլ . ին .)
ասելով . * 'ի մահահանգիստ քնոյն միահամուռ յառ-
նեն արդարք և մեղաւորք 'ի ձայնէ բարբառոյն զօ-
րացեալք . քանզի ձայն տն ձայն զօրութեանց է ըստ
մարգարէին || :

'Կարձեալ սոյն այս հայի 'ի յետին ձայն տն , առ ար-
դարս՝ ձայն մեծվայելութեանց , յասելն . * եկայք
որ հունեալք հօր իմոյ || . իսկ առ մեղաւորս ձայն սար-
սափելի զօրութեանց , յասելն . * երթայք յինէն անի-
ծեալք 'ի հուրն յաւիտենական || : Եւ զինչ քան
զայս սոսկալի ձայն զօրութեց . յորում հնչէ վճիռ յա-
ւիտենական դատապարտութե : Վրափիսի ահ պաշա-
րելոց է զսօղն . և որ ատգնապ ըմբռնելոց է զնոսա :
Եւ լսել ուրումն զվճիռ ժամանակաւոր մահու՝ իսե-
լսագարեցաւ . և այլոյ ուրումն սպիտակացան հերք . և
միւսում այլոյ մարմնն զարեան եհեղ քրտունս , որ-
պէս սպատմեն հաւաստարիմ հեղինակք . զինչ լինիցի
ապա դատապարտելոց 'ի լսելն անդ զվճիռ յաւիտե-
նական մահու . նոքին իսկ վկարեն յայնել , այլ
միայն կարեն կրել , և 'ի կրելն իմանալ՝ թէ քանի ա-
հեղիցէ ձայն տն զօրութեց :

Ռստ բարոյական մեկնութեան՝ մարթ է ասել՝ թէ
զոր ինչ գործեաց ընդ ամիեզերս ձայն քարոզութեան
աւետարանին , զնոյն գործէ և 'ի հոգիս իւրաքանչիւ-
րոց իմանալի ձայն տեառն . զոր թողում քննել ընթեր-
ցողին : Եմդ ցուցեալ մարգարէին զզօրութիւն ձայնի
տեառն 'ի գործոց եղելոց 'ի վերայ ջուրց կամ 'ի ջուրս
ցուցանէ ; զնոյն և 'ի գործոց եղելոց 'ի յօդս 'ի ձեռն
հողմաց , յասելն :

Է. **Զ**այն ուեսան էլլը շմայրն . և հանրէ ուեր շմայրն լիբանական :

Այս ձայն տն է նոյն հրաման տն՝ ու լինքեան , այլ ՚ի ձայն հողմոց և ՚ի ձայն մըրկաց պատճառելոց յօդս . ողք և լինին բանիւ տեառն . ըստ որում ասէ սոյն այս սազմոսերգու . * հողմ և մըրկիկ , ոյք առնեն զբան ։ նորա ։ (սաղ . Ձինը . 8 .) Եւ յայտ է թէ սոյն այս հողմոնք և մըրկիկ ՚ի չնչել իւրեանց ձայնիւ մեծառ ՚ի հրամանէ տն՝ բազում անգամ մեծամեծս գործեն և աշաւրս . զսունս կործանեն , զլինուածս փլուզանեն , զովիանոս տատանեն , զնաւս թռուցանեն , տապալեն զծառս , և փշրեն զանտառս , ևն . և զայս առնելով ցուցանեն թէ քանի մեծ է զօրութիւն հրամանի արարցին իւրեանց : Հայտովիկ հայելով մարգարէին՝ յայսմէ զնմէն ՚ի մէջ բերէ , և ասէ :

Զայն դն էլլէ շմայրն : Ո՞այլք կամ ըստ երբ . առշէ ասին այն ծառք ողք իրբ նոտի միտականաչ են . և զրեթէ քան զայլ տն ծառս հստատուն կան ՚ի վերայ արմատոց իւրեանց : Ի սոցանէ ունանիք մեծանան յոյժ , և սոտուարանան . և փայտ նոցա ամուր է և տեղական , և իրբե թէ անիրուտ . որոյ վասն ՚ի սոցանէ ՚ի զործ էած սողունն ՚ի շնուռածս տան տն և տան իւրց . (թ . մնաց . թ . 3 . և 4 . 5 . և դ . թագ . ե . 10 .)

Եւ զի այսպիսի են այսորիկ ծառք , վասն այսորիկ զառաս ՚ի մէջ բերէ աստ մարգարէն . զի եթէ զսոսա փշրէ հողմ , և մանրէ մըրկիկ , քանի ևս զայլ ծառս :

Եւ քանզի այս ծառք մայրից առաւել մեծ և առաւել զօրաւոր և տեսողական լինեն , ՚ի լիբանան , զնուսա ևս առաջի առնէ , առելով :

Եւ հանրէ ուեր շմայրն լիբանանու բազումք բազում ինչ ասեն . այլ որ հշմարիսն է այս է . զի յաձախ էին անդ ինքնաբոյս մայրք ՚ի սկզբանց անտի մեծայեալք յոյժ և բազմացեալք : Ո՞ողումնի ևս տեսեալ թէ անդ քաջ բուսանին , և բարւոք ամին մայրք , ինքն ևս անկեաց ՚ի նմա զբազում , գեղեցիկ կարգաւ : Եւ վասն այսպիսի լինելոյ այնց մայրից քան զայլոց տեղեաց՝ անուանի եղեն նոքին ընդ ամ տեղիս : Օսոսա ասէ մանրէ տէր հող-

մով և միրկաւ :

Իսկ բառքով հայել և գլուխ նովին նշանակութք զնին աստ , և ցուցանեն զաստիւթիւն զործոց ձայնին տն . այսինքն հողմոյ նշելոյ ընդ օդս . որ թէպէտ և մեղմաշշափ իմն է , և դիւրավանելի , բայց վկարծրանիւթ և զշաստապինդ մեծամեծ մայրս , զորս բազմութիւն մարդկան՝ բազում ժամա աշխատելով հազիւ կարեն խորտակել , նա ՚ի միում վայրկենի կործանի , փքէ և մանրէ : Եւ այսու յայտնի քարոզի սաստիւթիւն զօրութէ հրամանի տն՝ որ այնպիսի տկար էակի տայ զայսպիսի ուժգնութիւն :

Ողիսաբերաբար ՚ի ձեռն մայրից իմացեալ լինին աստանօր հպարտք , կամ իշխանք բռնաւորք , կամ իմաստունք ինքնահաւանք , կամ մեծատունք փառաւորեալք . ևն . զորոց առէ սոյն այս սաղմոներգու . * Տեսի զամնպարիշոն վերացեալ բարձրացեալ որպէս զմոցը || . (սաղ . լկ . 33:) Իմացեալ լինին և հերետիկութ հակառակօղք քարոզութեան սւետարանին՝ բարձրացեալք բանիւք իւրեանց : Իսկ մայրիւք լիբանանու իմացեալ լինին իմանալի ծառք . այսինքն դեք :

Օսոսա զնամնին խորտակէ ձայն տեառն , այսինքն բան տն՝ հողմուլ բարկութեան՝ կամ աստ , ըստ որում առէ մարդարէն՝ ՚ի նախակարգեալ բանադ . * Վնցի և առ , հա ոչ էը || . և կամ ՚ի հանդերձելումն . ըստ որում առէ եսայի . * օր տն զօրութեանց ՚ի վերայ ամ հպար , տից և ամբարտաւանից . և ՚ի վերայ ամ բարձրացե , ըստ և վերացելոց , և խճարհեսցին . և ՚ի վերայ ամ ամայրից լիբանանու || . (եսայ . թ . 12 - 17:) Բայց զի մի ոք կարծեսցէ թէ զժուարութիւն ինչ կըէ տէք ՚ի կործանել զայսպիսիս , այլով իմն բանիւ յայտ առնէ մարդարէն՝ թէ զիարդ զիւրաւ և հեշտեաւ զործէ զայս . սմին իրի առէ :

Ղ . $\int_{\text{անընդհանուր}}^{\text{անընդհանուր}} \text{անընդհանուր} = \text{անընդհանուր}$.

որ սիրելին է որպէս լուրջիս գեղջիւրուց :

Մատաղատունկ ասի այն տունկ կամ այն բայց՝ որ է զեռես մատաղ , կամ նորոգ տնկեալ և կամ նորոգ բուսեալ (Փիտան .) արդ յայտ է թէ առաւել զիւ-

րին է մանրել զայսալիսի մատաղ տունկա քան զհաստ-
արմատ մայրս , զորոց խօսեցաւ ՚ի նախընթաց հա-
մարն : Եւ սակայն առ ՚ի ցուցանել՝ թէ նոյն է առա-
ջի այ մանրել զայս և զայն՝ առէ :

Մանրեսց զնոսու՝ ըրդէս ընդուռաշուռանն վիճանանու : Ի յո-
նիքն , ձայն տեառն մանրեսցէ հոգմով զմայրսն լիբանա-
նու այնալիսի դիւրութք՝ որպէս թէ մանրելը զնորաբոյս
մայրս ընծիւղեալ անդ ՚ի լիբանան : Եւ աստանօր
բառդ հանրեսցէ՝ ինչ մի աւելի ցուցանէ , քան զոր նշա-
նակէ ՚ի նախընթաց համարն . զի անդ դնի փոխանակ
խորտակելոյ և փշելոյ . իսկ աստ հայելով՝ ՚ի բառդ
հանրեսցէ՝ նշանակէ յարմատոյ խլելով խորտակել
և ցրուել . Օ այս եգեալյարէ զինի , և առէ :

Ու սէրելին է որդէս ըսրդիս մէղվէրուաց : Տառդ սէրելը՝
կարէ աստ հայելյերիս , այսինքն ՚ի մանրովն , ՚ի մա-
տաղատունկն , և ՚ի միւեղծերուն :

Իստ առաջնոյն կամի ասել . որ սիրելին է՝ նա ման-
րեսցէ զնոսա . այսինքն թէ հրամանն այ՝ կամ նա ինքն
ած՝ որ սիրելին է՝ մանրեսցէ զմայրս որպէս զմատա-
ղատունկա լիբանանու , որք են իբր որդիք այնոցիկ
մայրից՝ որպէս որդիք միւեղծերուաց :

Իստ երկրորդին կամի ասել . այն մատաղատունկը
լիբանանու՝ զըրս յիշեցի՝ իւրեանց վայելադիր ձեռվք
և համապատշաճ բարձրութեամբ և դալարահասակ մա-
տաղութք առաւել վայելու և գեղեցիկ տեսանին քան
զնոսին իսկ զմայրսն . վասն որոյ և սիրելի են , որպէս
որդիք միւեղծերուաց սիրելի են ծնողաց իւրեանց և
տեսողաց . արդ որպէս դիւրին է առէ մանրել զայս-
սիսի սիրելի մատաղատունկս , սոյնալէս դիւրին է
ձայնի տեառն մանրել զնոյն իսկ զմայրսն լիբանանու :
Եթէ մատաղատունկ ասելով իմասցուք մատաղ
որթ , որպէս դնի յայլս , և բայիւս հանրեսցէ՝ իմաս-
ցուք ընդուռաշուցէ՝ որպէս զնի յերբ , կարի իմն յար-
մար ընծայի այս բացատրութիւն . որպէս թէ եղեալ
էր . ձայն ո՞ն դիւրաւ ընդուռաշուցէ զմայրսն լիբանա-
նու , որպէս դիւրին է ընդուռաշուցանել զորթ մա-
տաղ՝ որ սիրելի է՝ հանգոյն որթուց միւեղծերուաց :
Վստ երրորդին (հայելով յերբ) կամի ասել . որպէս
միւեղծերուն ընդուռաշուցանէ զորդիս իւր՝ զորս սիրէ ,

սոյնպէս ձայն տեառն զմայրսն լիբանանու : Կամ որպէս հեշտ իմն է սատուցանել զսիրելի որդիս միեղջերուաց , սոյնպէս հեշտ իմն է ձայնին այ սատուցանել և զըր- րուեալ զմայրսն լիբանանու և զնոյն ինքն զլիբանան : Կամ գարձեալ , որպէս սիրելի է , այսինքն որպէս զուարձալի է տեսանել զորդիս միեղջերուի յընթա- նալ և յոստուլ նոցա և իբր թեօք թռուցանել զին- քեանս , սոյնպէս զուարձալի է տեսանել՝ թէ զիարդ ձայն տն արագագոյն քան զնոսա խորտակէ և սատու- ցանէ , և իբր թէ թռուցանէ զմայրսն լիբանանու : Եւ կամ գարձեալ , որպէս որդիք միեղջերուի յըն- թանալ իւրեանց՝ թէ պատահեսցին այնմ՝ որ սիրե- լին է , այսինքն եթէ պատահեսցին որսոյ՝ որ ախոր- ժելին է նոցա՝ հարեալ եղջերաւ զընկենուն յօդս , սոյնպէս և ձայն տն յընթանալ իւրում հողմով՝ հար- կանէ զմայրս լիբանանու , և ընկենու ՚ի բաց : Կամ գարձեալ , որպէս այր հզօր զիւրաւ իոլէ զմատաղա- տունկս , և արագ յափշտակէ զսիրելի որդիս միեղ- ջերուի , սոյնպէս ձայն տեառն զիւրաւ և արագ մանրէ զմայրս : Եւ կամ այլազգ ևս . որպէս սիրելի և գե- ղեցիկ է եղջիւր որդւոց միեղջերուի , սոյնպէս և մա- տաղատունկն լիբանանու . և այսպիսի գոլով՝ մանրէ զայն հրաման տն :

Կախումն բանից մարգարելին ոչ այլ ինչ է՝ բայց ե- թէ ցուցանել զզօրութիւն ձայնի տեառն՝ կամ ասացից զզօրութիւն սաստկութեան հողմոյ ՚ի խլել նորա հէշ- տեաւ զմայրսն լիբանանու և ընկենուլ՝ ՚ի բաց , օրի- նակ բերեալ զգիւրաւ սատուցումն որդւոց միեղջե- րուի : Եւ զայս յայն սակս այնպիսի նմանութիւ առա- ջի առնէ մարգարէն , զի սովիմբ կամի յանդիման կա- ցուցանել զմեծութիւն ամենակարողութեն այ . որ այս- պիսի ընչին տարեր տայ զայնպիսի զօրութի , որովիրը կենդանական ուժգնութեամբ վանէ զայնպիսի մայրս բարձրացեալս և մեծացեալս . որում կամի հէտեւ- ցուցանել , թէ զինչ ապա ոչ կարասցէ առնել այն ամենակարողութիւն նորա : Օ այսմանէ ունիմը ինչ կրկնել և ՚ի համեմատութիւնն :

Ա յլարանօրէն՝ այս բան յայտ առնէ զգործ ձայնի քարոզութեան աւետարանին ՚ի խոնարհեցուցանելը-

մայրսն լիբանանու՝ զբարձրացեալսն արտաքին գետութքը, զատուարացեալսն լիալիր փարթանութքը, զպանացեալսն մարմնաւոր հեշտութքը, զմեծացեալսն երեւելի իշխանութեամբ, ևն . խլելով զնոսա ՚ի ճանապարհանց իւրեանց, և մանրելով զմատաղատունկ նոցա, այսինքն զկուապաշտութիւն նոցին՝ զնորամուտն յաշխարհ . միանդամայն և ժողովելով և տնկելով զնոսա ՚ի ճանապարհս առաքինութեանց . և որ մեծն է՝ հաստելով զնոսին որպէս զրբիւ գեղարկու այսինքն որպէս զօրդիս քնի, որ սիրելին է, այսինքն սիրելի որդի հօրն երկնաւորի, սիրելի փեսայ հարսին եկեղեցւոյ . սիրելի եղբայր իւրաքանչիւր հաւատացեալ

հոգւոյ :

Փոքր մի այլազգ ևս առաջի զնի խորհուրդ բնաբանիս . իրը զի ՚ի նուածելոն զմայրս լիբանանու, այսինքն զվայրենացեալ ազգս կամ զշեթանոսս՝ արար զնոսա իբրեւ զմատաղատունկս լիբանանու զիւրընկածելիս, այսինքն հեզս և խոնարհս և լիբանանացեալս, այսինքն լուսաւորեալս նորհօք . Աքար դարձեալ զնոսա իբրեւ զնորատունկ իմն՝ այսինքն է նոր եկեղեցի, որ սիրելի է . սիրելի իւրում ծնողի այսինքն հոգւոյն սրյ. սիրելի իւրում հատաշի հօրն երկնաւորի . սիրելի իւրում փեսայի բանին մարմնացելոյ . սիրելի որպէս զրբիւ գեղարկու սիրելի՝ որպէս սիրելի են միեղեցերուի որդիլի իւր :

Աքդ յայս բան՝ որպէս և տեսանի, քոնմանեցուցանի միեղեցերուի ըստ բազում զլիսոց . մանսաւանդ ըստ երից . մի՝ զի ասի թէ միեղեցերուն հալածէ, զօծս, և հարկանէ, զնոսա . սոյնպէս և քոն եհար եղեցերաւ զօրութեան իւրոյ զօծն առաջին : Աշկեղորդ՝ զի ասի թէ, եղջիւր միեղեցերուի հատանէ զզօրութիւն թիւնից . սոյնպէս և զօրութիւն քոնի եհատ և հատանէ զզօրուի մեղաց՝ եթէ սկզբնականաց և եթէ ներգործականաց : Աշրորդ՝ զի ասի թէ միեղեցերուն ՚ի յարձակին բարկութք՝ եթէ տեսցէ ՚ի հանդիպոյ կոյս աղջիկ՝ հանդարտի ՚ի բարկութենէ . սոյնպէս և որդին այ ըստ յարմարական մեկնութեան յորժամ բարկացեալն էր, և կամէր յարձակիլ ՚ի վերայ որդւոց մարդկան՝ և հարկանել զնոսա և կորուսանել . հայեցեալ յամե-

նասուրբ կոյսն մարիամ՝ հանդարտեցաւ . ըստ որոյ ասաց նա ինքն սբ կոյսն , [թէ] * հայեցաւ 'ի խոնարհութիւնախնոյ իւրոյ || . Համեցաւ նովաւ ընդ ազգ մարդկան . և ծնանելով 'ի նմանէ՝ փրկեաց զամենեսին . և այժմ իսկ յերկինս բազմեալ , 'ի զայրանալ իւր 'ի վերայ որդւոց մարդկան՝ հայեցեալ 'ի նոյն յամենանը կոյսն՝ ևս և յեկեղեցին՝ որ իւրեւ կոյս մի խօսեցեալ եղեւ նմա ըստ առաքելոյն , (ք . կոր . ժամ . 2 .) իւր ըս թէ հանդարտի 'ի բարկութենէ իւրմէ : Վսի գարձեալ թէ 'ի տեսանել միեղջերուի զկոյս վայելազարդ՝ ըմբռնի նովաւ . որպէս զրէ և վանական վարդապետ ('ի մեկն . յոր . գլ . լթ .) * որ կամին ասէ , որսալ (զմիեղջերուն ,) կացուցանեն յանցի նորա , կոյս զարդարեալ և անուշահոտացուցեալ . և այն , պէս ըմբռնեն || . ըստ սմին յափշտակեցին մարդիկ զամենագեղ միեղջերուն զքոյ . զի կացուցին յանցի նորա զկոյսն սուրբ զարդարեալ նորհօք և անուշահոտացուցեալ առաքինութեամբք՝ և նովաւ ձգեցին զնա առինքեանս :

|| Ի՞եղջերուն ունելով և զանողորմ բարս՝ բերի նաև 'ի նմանութիւն ժողովրդեանն հըեկից . և այս կարի իմն յարմարութք . զի ասի թէ միեղջերուն 'ի կատաղիլն ոչ ինսայէ և ոչ յորդի իւր սիրելի , և է ամենենին վայրենի , և անհնարին յընտելանալ , և դժուարին յորսալ : Բատ սմին և ժողովուրդք հըեկից ոչ ինսայեցին յորդիս իւրեանց՝ ոչ յանզրանիկն այսինքն 'ի քո որ սիրելին էր , և ոչ յայլս , այսինքն յառաքեալն և 'ի հետեւօղս նոցա . այլ հարին եղջերաւ կատաղութեն . և վայրենացան յաւետեացն այ . և չեղեւ նոցա յարդ հընար ընտելանալոյ , և կամ կենդանւոյն որսացեալ լինելոյ . (տես և 'ի համեմատութիւնն .) և մեք գարձցուք յառաջիկայ կարգ բանիս : Վրդ մարդարեն ցուցեալնախ զգօրութիւն ձայնի տն 'ի վերայ ծուրց , և ապա 'ի վերայ օգոց հողմով նըւելոց , այժմ կամելով ցուցանել զնոյն և 'ի վերայ հըոյ և հողոյ՝ ասէ :

Է . **Զ**այն ո՞ն հառանէ պոց 'ի հըոյ : Չայն ո՞ն շոշծէ պահապան , և խոռոչուցանէ պը շահագործն իսրէն : Բոյն է անօպր նիւթ վառեալ 'ի հըոյ : Խակ հատանել

զբոց՝ի հրոյ կամ՝ հատանել զբոց հրոյ, նշանակի, ցուցուցանել զբոց հրոյ, կամ զնիւթ վառելի փոխարկել՝ ի բոց. Վըդ երրակի լինին այսպիսի բոցք. մի յորժամ այն օդ՝ որ շուրջ է զհրով ունելով յինքեան գծամբային կամ զիւղային և կամ զայլ վառելի նիւթս ելեալս՝ի հրոյ անտի վառեցելոյ՝ կամ ասացից՝ի նիւթոյ անտի այրեցելոյ՝ բորբոքի՝ի հուր ցոլացեալ. որ պէս տեսանեմք՝ի բոց ձրագի,՝ի բոց խարուկի, և նու Երկրորդ՝ յորժամ մասն ինչ օդոյ՝ յորում են վառելի նիւթք տրամադրեալք՝ի վառիլ՝ի շարժմանէ ինչ բորբոքի՝ի բոց. որպիսի են թռուցեալ աստեղք, և այլ նոցին նման բոցք երևեալք յօդս: Երրորդ՝ յորժամ յասնս գոյաւորին, որպիսի է բոց փայլատականց և կայծականց. զի վառելի մասունք ընդ հողեղին և ընդ օդեղին մասունս խոտացեալք՝ի մէջ անպոց, և տրամադրեալք՝ի վառիլ՝ի շարժմանէ յանկարծակի բորբոքին իբրև զվառօդ:

Եթէ այն խոտութիւն իցէ թոյլ, առանց ճայթելոյ՝ի բոց փայլական միայն ցոլանան. խոկ եթէ իցէ սաստիկ, ճայթմանք մեծաւ՝ի բոց կայծականց փոխարկին. և յարձակին՝ յոր կողմն և վարեսցէ զնոսա շարժումն նոցին. և զի անհնարին արագութիւն մղման է՝ ի շարժման այսպիսի բոցոյ կայծականց՝ յափշտակեալ՝ ի թափոյ անտի որ մղէ յամ կողմն ոչ կարեն ուղղագիծ դիմել. այլ գելակի՝ բազմաբեկ բերմանք, կամ ասացից՝ բեկրեկմանք. որպէս և աչօք խոկ տեսանեմք: Խոկ թէ զինչ զործ զործէ այսպիսի բոց կայծականց. թէպէտ և յայտնի երեխ, բայց՝ի վեր քան զիար հատողութեան մերոյ զարմանալի տեսանի: Եւ յիրաւի խոկ հիանալի իմն է տեսանել, թէ զիարդ զբարձրաբերձ աշտարակս՝ զօր հազարաւոր մարդիկ հազիւ կարեն բազում աշխատանօք փլուզանել, նա՝ի միում վայրկենի ցիրեցան կացուցանէ: Օ հաստակառոց շնուռածս՝ զօր մարդիկ տկարանան քանդել, նա՝ի թարթել ական՝ի մնխիր գարձուցանէ: Օ հընացեալ բարձրացուցեալ և զայնացեալ ծառս՝ զօրս բազումք բազում աւուրբք դժուարաւ կարեն՝ի մասունս հատանել, նա՝ի մի հարուած մանք խորտակէ: Օ մեծազանգուած լիաձոյլ երկաթ, զօր սաստկութի

բորբոքեալ հրոյ հազիւ կարէ հալել յօգուտ ժամն ,
նա միով ևեթ հպմամբ իբրև զջուը յեղեղկէ . և
զայլ ևս բազմապատիկ գործս գործէ 'ի վայրիկեան
ժամանակի , որ անհաւասալի երևի՝ եթէ արդարեւ
ու երեխւր աչօք : Իսկ եղանակ գործելոյ այսպիսի
բոցյ կայծականց՝ անընթանելի տեսանի մոտաց : Հայս
ամ հանգամանս կայծականց հայեցեալ մարգարէին՝
ասէ :

Հայն թե հարանէ զբոյ 'ի հրոյ : Այսմի ասել . հրաման
տն , կամ զօրութիւն հրամանի նորա , որով կարգ եղ
յիւրաքանչիւր տարերս , բոց հրոյ գոյացուցանէ . իբր
զի 'ի մէջ ջրալից ամկոց հուը բորբոքեալ զբոց կայ-
ծականց ցոլացուցանէ , որով ահեղ իմն և զարմանա-
լի երևի ամենակարողութիւն արարչին . զի որպէս ըդ-
ջրոյ և զօդոյ ասացաք , եթէ այսպիսի շնչին էակի
այսպիսի տայ զօրութիւն , ապա քանի հզօր է նա և
սբանչելի , որ գործէ զայս :

Ո արթէ է ձայնիւ տն իմանալ աստ և զնոյն զայն ձայն
կայծականց . զի 'ի հնչել այնը ձայնի 'ի նմին իսկ 'ի
հնչման զոյգ ընդ ձայնին հատանի և բոց կայծականց
յամպ . և այս հնչումն կամ զոյումն ամկոց կոչի
ձայն տն , ըստ որում է 'ի հրամանէ տն , և գրեթէ
'ի դիմաց այ . (որպէս ասացաք 'ի համարն . 3 : տես
և 'ի սաղ . Ժ . 13 . 14 :)

Սորհբդաբար՝ ձայն աւետարանին գոյաւորէ զբոց
հրոյ սիրոյն այ 'ի սիրտ այնոցիկ՝ որք անսան աւետա-
րանին . և այն բոց սիրոյ զարմանալիս գործէ 'ի նոսա
իբրև զբոց կայծականց . զհոգին լուսաւորէ , զախտո
այրէ , զհպարտութիւն մոտացն կործանէ , զկարծրութի
կամաց խորտակէ , և զանգութիւն սրտի հալէ . այ-
լովքն հանդերձ :

Ա յս հայի և 'ի ձայնն յայն հոգւոյն սրյ , որ 'ի հրն-
շել անդ յաւուր պէնտէկոստէի երեւցոյց զբոց հրե-
ղէն լեզուաց . որով և հրացոյց հոգեպէս զառըրք առա-
քեալն . և նոքիմքք լուսաւորեաց զաշխարհ . և զհա-
կառակորդսն այրեաց :

Ա մբ՝ . յայլ իմն բարյական միտս տարածելով ըդ-
բանն զբէ այսպէս . * որպէս քար և երկաթ ընդ մի-
, մեանս բաղիսեալ բոց հատանէն , և կայծակունս

„արծարծեն, այսպէս և հոգի մարդոյ՝ այ հոգւոյն
„արժանի եղեալ՝ լինել ընդունող զբոց հրոյ ան-
„ձառն սիրոյ՝ սկսանի ՚ի նմանէ հատանիլ (այն բոց).
„որպէս և ասաց տէրն, հուր եկի արկանել յերկիր.
„և զինչ, կամիմ թէ արդէն իսկ բորբոքէր ||:

Յովշան ծործորեցի (՚ի մեկն . մատ . գլ. ե.) երեխ
թէ ընդհակառակն բացատրէ . զի զհատանեն փո-
խանակ բառնալոյ իմանայ . իբր թէ ձայն տն բառնայ
՚ի հրոյ զբոցն, և յայս միտ առեալ՝ ասէ թէ ՚ի կատա-
րածի աշխարհիս * ցրտութիւն ջրոյ և այրեցողութիւն
„հրոյ բառնին (և ժողովին) ՚ի տանջանս մեղաւո-
„րաց . և փայլաղութիւն ջրոյ և լոյս հրոյ կազմին
„պատկր արդարոց ըստ դաւթի . ձայն տն հատանի
„զբոց ՚ի հրոյ ||: | յւ ՚ի զլ. ը . ասէ, թէ ձայն տն
բաժանէ զերմութիւն հրոյ ՚ի լուսոյ նորա . զերմուին
առանց լուսոյ լինիցի ՚ի դժոխս . և լոյսն առանց զեր-
մութեան լինիցի յարքայութե . զի ՚ի բոց հրոյ տեսանի
այրեցողութիւն և լուսաւորութի . ՚ի դժոխս բոց հրոյն
այրեցէ առանց լուսաւորութեան . և յարքայութեան
փափկացուսցէ լուսաւորութիւն առանց այրեցողութե .
Արդյեւս խօսելոյ մարդարեն զջօրութենի ձայնի տն
՚ի վերայ հրոյ, գառնայ խօսիլ զջօրութենի նոյն ձայ-
նի տեսան ՚ի վերայ հողոյ կամ երկրի . սմին իրի յարե-
զինի և ասէ :

Չայն ո՞ւ շործէ շնապառն : | յս բան հայի ՚ի շար-
ժումն երկրի՝ այն է զետնաշարժութիւն, որ երրակի
կարէ պատճառիլ . մի՛ յորժամ օդն ՚ի ներքոյ հոգոյ
խտացեալ՝ ընդ անօրանալն՝ յուժգին ՚ի դուրս ելա-
նելով՝ պատճառէ, զջարժումն . և որշափ առաւել
ոսատիկ է այն ելք անօրացեալ օդոյ, այնչափ առա-
ւել սաստիկ լինի շարժումն : | յրկրորդ՝ յորժամ ստոր-
երկրեայ վառելի նիւթք յանկարծակի բորբոքեալք
յարձակին ՚ի վեր և ցոլանան արտաքս . և այնու շար-
ժեն զերկիր, սոյն այս ևս այնչափ սաստիկ լինի՝ որ-
շափ սաստիկ իցէ ելք բորբոքեալ նիւթոյն : | սոյն
առաւելութք իմն գործէ եթերական հուրն ՚ի ժողո-
վիլն ընդ հոգով և ՚ի ցնդիլն : | յըրըրդ՝ յարտաքին
պատճառաց . զջօրինակ ՚ի սաստիկ հնչմանի կայծա-
կանց, կամ ՚ի մեծէ թնդմանի, թնդանոթից, և յայլ

այսպիսի իրաց . այլ այս յետինս մանաւանդ թնդումն ասի քան գետնաշարժութիւն :

Ենի երբեմն և առանց այսպիսի իրաց միայն 'ի հրամանէն այ ձեռամբ հրեշտակի , կամ 'ի թոյլուութենէ նորա 'ի ձեռն այլոց արարածոց , երբեմն և 'ի ձեռն զիւաց : Այսպիսի գետնաշարժութիւնք երբեմն լինին պատառմամբ երկրի . յոր լինի սուզանիլ մօտակայից ևս և զիւղից և քաղաքաց . և երբեմն ներհակ այսմ բարձրացուցմամբ հողը՝ որով բլուրք գոյաւորին 'ի ցամաքի , և կղզիք 'ի ծովու . որպէս յայտ է 'ի բազում պատմութեանց և յականատես վկայից : Այս պիսի գործք գետնաշարժութեան երբեմն լինին առանց ձայնի , և երբեմն ձայնիւ . և մերթ աչեղագու զոռմամբ :

Հայս ամ հայելով ասէ մարգարեն . ձայն առ շործէ զանազան . այսինքն հրաման առն կամ զօրութիւն հրամանի նորա առնէ՝ զի շարժեսցի անսպասն : Խակ անապատն է երկիր տափարակ՝ անշէն և անզարդ , այնշափ ընդարձակ՝ մինչև ծայրի նորա չերեխլ աչօք . զի զայսպիսին հաստրակօրէն կոչեմք անսպատ : Այս քանզի առաւել դժուարին երեխ շարժումն ընդարձակ տափարակ երկրի , որպիսի է անսպատն՝ քան բարձրացեալ տեղոյ , որպիսի է լեառն , վասն այսորիկ զանապատն բերէ 'ի մէջ . զի եթէ զայնպիսի ընդարձակ տեղիս շարժէ ձայն առն , քանի ևս զիւրաւ շարժեսցի զի զերինս :

Ո'արթ է ասոտ ձայնիւ տեառն (որպէս ասացաք զձայնեկայծականց) իմանալ զնոյն զայն ձայն՝ որ հնչի երբեմն 'ի գետնաշարժութե . և ասի ձայն առն ըս որում է 'ի հրամանէ առն . զի թոյլուութք նորին հնչեալ 'ի հնչեն անդ շարժէ և զողացուցանէ զահագին անապատն : Այս քզի առաւել իմն մեծ է անսպատն՝ որ

'ի կաղէս՝ զզոյն զայն ևս յառաջ բերէ ասելով : Այս կաղէս առ միայն զն և իցէ անսպատ շարժէ տէր , այլ և զայն մեծ անսպատն՝ որ է յերկիրն կաղէս որ թարգմանի սուրբ , առ սահմանօք եղովմայ և փառանայ : Այս զայն ևս այնպէս շարժէ՝ մինչև խոռվեցուցանել , այսինքն է զզրդեցուցանել , և երբեմն վեր

՚ի վայր առնել։ Ոսքիմբք կամի յայտնել մարդարէն՝
թէ ամենակարողութիւն արարչին ահաւոր իմն է, և
հզօր յամի. և կարէ առնել զանց։

Վրդ յանապատ էր դարձեալ մարդկայինս բնութիւն։
անապատ անջրդի և անքեր. անապատ անպիտան և
անշէն. իսկ ձայն աւետարանի տն շարժեաց և դողա-
ցոյց, որով և մարդիկ զգաստացան և ուղղեցան. յորոց
ունանք այնչափ արիացան և զօրացան՝ մինչեւ տալ զան-
ձինս 'ի մահ մարտիրոսութիւն։ Իշխ կամ ձայն հօր, այս
ինքն բանն ած եկեալ շարժեաց զնոյն զայն անապատ
մարդկային բնութեան, և նորոգեաց ևս և ծաղկեցոյց
և գեղեցկացոյց։ Իսկ անապատն կաղես այսինքն ա-
նապատն սուրբ, որով նշանակի ազգն հրեից՝ փոխանակ
զգաստանալոյ և օգտելոյ՝ խոռովիցաւ և վայրենացաւ։
Վրդ յետ սքանչելի ցուցանելոյ մարդարէն զզօրութիւն
ձայնի տն 'ի վերայ չըրից տարերաց՝ ջրոյ, հրոյ, օղոյ
և հողոյ, սքանչելի ցուցանէ այժմ զնոյն և 'ի կեն-
զանիս և 'ի տունիս։ Իշխ զի զամ տեսակս կամ ըզ-
սեռ նոցա 'ի մէջ բերել անհնարին է, զմի և եթ-
տեսակ 'ի կենդանեացն բերէ. և 'ի տնիոց զանտառոս
ասելով։

Ե. **Զ**այն պի հաստատէ զեղջերուն. և յայտնի առնեն զան-
ցութեան ։
Խզջերուն է արազընթաց կենդանի միջահասակ՝ քան
զոխար մեծ, որոյ եղջիւրք են երկայն և բազմաս-
տեզն. յորմէ և ինքն կոչեցաւ եղջերու. իսկ էդ նո-
րա անեղջիւր է, և կոչի եզն. զորմէ բազում ինչ ա-
սի 'ի գիրս յորայ. (լթ. 1. 5.) * Օ գուշանայցենս
՝ երկանց եղանյ. թուիցեն լիով զամիս ծննդեան
նոցա. լուծանիցեն զերկունս նոցա. սնուցանիցեն ըզ-
մանկունս նոցա առանց երկիւղի. մերժեսցեն 'ի
նոցանէ զերկունս. փրծանիցին որդիք նոցա՝ բազ-
մասցին 'ի ծննդեան իւրեանց. ելսնիցեն և անդ-
՛, ըէն ոչ կրկնիցին ։

Վրդ երեք գլխաւոր յատկութիւնք են 'ի կենդանիս
յայս։ Վռաջինն է արագութիւն ընթացից ոտից մա-
նաւանդ յընթանալ նոցա 'ի բարձրաբերձ տեղիս,
մինչ զրեթէ ոտիւք իւրեանց իբր թեզ թռչիլ նոցա։

Դիպաւ ինձ տեսանել զլնթանալ վեցից սոցա 'ի միաւ սին 'ի լերինսն կոչեցեալ յայլազգեաց քարա տաղլար՝ մօտ 'ի տեղին՝ որ կոչի երկանաւոր, և յայլազգեաց տէլիրմէն պողազը ընդ մէջ տիգրանակերտի և սկերակի ։ այնչափ արագ եր վազ ընթացից սոցա 'ի լերինսն անդ՝ մինչ զրեթէ ու ընթանալ՝ այլ թռչիլ երևէր :

Արկարորդ յատկութիւն նոցա է այս, զի թէպէտ և երկշոտ են յոյժ, բայց բնաւին չերկնչին յօձից ։ մանաւանդ ախորժելի ևս է նոցա (որպէս և միեղջերուաց) սպանանել զնոսա և խաղաղ զնոքօք ։ որպէս կատուաց է խաղալ զմկամիք ։ և զայս առնեն առաւելապէս այն եղջերուք, որք երկակենցաղն են ։ և ընդ սպանանել զօծն՝ ծարաւին յոյժ, և դիմեն 'ի ջուրս : (զրոմէ ունիմք խոսիլ և 'ի սաղ. խնա . 1 :)

Արկարորդ յատկութիւն է եղանակ ծննդեան նոցա, զրոմէ ներհականս խօսին բազումք ։ ոմանք թէ դիւրածին են յոյժ ։ և ամիսք ծննդեան նոցա այլեայլ ։ և յայս միտս մեկնեն զնախայիշեալ բանն յորայ : Ոմանք թէ գժուարածին են յոյժ, և երկունք ցաւոց նոցա ծանր :

Աւ ամերին առ հասարակ հաստատեն՝ թէ յառաջ քան զծնանիլ իւրեանց ուտեն զխոտ մի կոչեցեալ տիգենն ։ որով դիւրանայ ծնունդ նոցա : Պիստեն ևս ոմանք՝ թէ յոյժ սարսին յորոտալո երկնից, և աշարեկ լեալ ամփոփին 'ի մայրիս, և յերկիւզէ անտի ծնանին ե թէ մօտ իցէ ժամանակ ծննդեան նոցա : Իսի և ևս թէ կատարեալ ծնանին սոքա զրդիս իւրեանց ։ մինչ զի ընդ ծնանիլ նոցա խիօյն արածիլ՝ անկարօտ ծնողի իւրեանց ։ և յայս միտս մեկնեն ոմանք զյետին հատուած նախակարգեալ բանից յորայ . * սնուցաւ, սիցես զմանկունս նոցա, փրծանիցին որդիք նոցա . և լանիցին, և անզրէն ու կրկնիցին || . Հայս ամ յատկութիւնս եղջերուաց հայեցեալ մարդարեին ասէ :

Չայն ո՞ն հաստատէ չէ լշէրուս : Բատ երից վերոյկարգեալ յատկութեանց եղջերուացն կարե մեկնիլ այս բան : Բատ առաջնոյն մեկնի այսպէս, ձայն տն կամ զօրութիւն հրամանի տն հաստատէ զեղջերուսն յոտս . կամ թէ հաստատուն առնե՛ այսինքն զօրաւոր առնե՛

զեղջերուս յոտան՝ յանչափս արագընթաց մինել՚ի
վազս իւրեանց՝ անսաշխատ և անվաստակ : Վ.յո հաս-
տատութիւն կամ զօրաւորութիւն ոտից եղջերուաց յա-
րագընթացութեն իւրեանց այնպիսի մեծ իմն է՝ մինչև
օրինակ բերել զայն մարգարեին հաստատութեան ան-
ձին իւրոյ՝ յասելն (՚ի սաղ. մէ . 34.) հաստատե-

.. ցեր զոտս իմ որպէս զեղջերուի :

Բատ երկրորդին մեկնի այսպէս . ձայն տն տայ զայն-
պիսի զօրութիւն երկնոտ եղջերուաց՝ մինչ զրեթէ քան
զնամ զօրաւոր կենդանիս հաստատութե որսի այսինքն
ամեննեին առանց երկիւզի զիմել՚ի վերայ օձից և
սպանանել զնոսա՝ որչափ և մեծ և կասաղի իցեն . և
այս այնպիսի իմն օրինակաւ՝ մինչև զարմացուցանել
զտեսօղն :

Բատ երրորդին մեկնի այսպէս . ձայն տն կամ ձայն
հնչման որոտալոյ երկնից հաստատէ զեղջերուս .
այսինքն պատրաստէ զնունդ եղջերուաց , կամ առ-
նէ՝ զի ծնցին էզ եղջերուք , կամ առնէ՝ զի էզ եղ-
ջերուք փախուցեալ ամրացին յանտառս իբր ՚ի հա-
տատուն տեղիս , և անդ ծնցին , եթէ զիւրաւ , և ե-
թէ գժուարաւ :

Դարձեալ՝ ընդհանրապէս խօսելով , ձայն տն՝ այսինքն
բան հրամանի նորա հաստատէ և զօրացուցանէ զեղ-
ջերուս ծնանիլ զօրդիս : Աւ այս թէպէտ նաև այլոց
կենդանեաց պատշաճի , զի ամեցն ծնունդ ևս է զար-
մանաղի , բայց քանզի օրինակ ծննդեան էզ եղջերուաց
ստաւել հետաքննին երեխ , վասն այնորիկ զայն ևեթէ
յիշելով զայլոցն ևս տայ իմանալ . որով և կամի
յայտնել թէ քանի զօրաւոր է ձայնն այն՝ որ յարար-
չութեն անդ կարգ եզ կենդանեաց ամել և բազմանալ
՚ի վերայ երկրի : Վ.յն հրաման կամ այն բան է ասէ ,
որ հաստատէ զեղջերուս , և զնամ չորբուտանիս , և
զնամ սողունս , և զնամ թռչունս , և զնամ ձկունս ծո-
վու՝ ծնանիլ զիւրեանց նմանս՝ այնպիսի հիանալի օ-
րինակաւ՝ որ անհաս է մարգկային մոտաց :

Ամանութեամբ իմն առ իսրայէլացիս կարէ հայիլ այս
բան . զի իբր զեղջերուս հաստատեաց զնոսա ուն
այսինքն պահեաց յանապատի՝ զի մի խսպառ կորիցեն
յաձից անտի : Ալարէ հայիլ և յայն ամ՝ զորս հաստա-

տէ տէրը յայնպիսի գործո՞ ողք յատկացեալ են եղ-
ջերուաց :

Հոգեւորապէս ձայն տն կամ բան տն՝ կամ ազդումն
հօգւոյն ոչը՝ հաստատեաց և զօրացոյց զեզջերուա-
սյօնինքն զառաքեալոն ընթանալ՝ ի քարոզութիւն աւե-
տարանին և լուսազգեաց առնել զանտառս , այսինքն
զանպտուղ հեթանոսս , և հատանել զեկամուտ չա-
րիս նոցա իրը զմայառս . զի մի ևս որջասացն ՚ի նոտա
դազանք անտառի . հերկեցին աւետարանաւ , և արա-
րին պարտէզ ՚ի տեղի իջման եղբօրորդւոյն , որպէս
զրէ վարդան :

Ի արոյապէս՝ բան տն հանապազ հաստատէ և զօրա-
ցուցանէ զտկարս՝ ընթանալ գիւրաւ զձանապարհն
առաքինութե՛ , վազս առնուել՝ ի լերինս մեծամեծ զոր-
ծոց , սպանանանել զօձս , այսինքն զիսայթիչ ախտս . և
՚ի յայտնի առնել տն՝ յայտնի տեսանել զանտառս
զիուովիչս խորհրդոց . և որ մեծն է՝ ծնանիլ երկիւ-
ղիւ տն զարարս բարեպաշտութեան :

Ե ձեռն եղջերուի կարէ նշանակիլ և մարդ զօրաւոր ,
որ կամի ընթանալ՝ ի ճանապարհս տն և ՚ի լերինս
առաջին խորհրդոց . և զայսպիսի հաստատէ ած՝ ՚ի
բարի կամն :

Եղջերուք չարի սպատահին վասն երկուց . մի՝ յորժամ
վտուանան , և մի ևս յորժամ զիրանան յոյժ . զի ՚ի
վտուանալն՝ տկարանան և թափին յուժոյ . և ՚ի զի-
րանալն յամրանան : Որովք ցուցանի՝ թէ որ կամի ը-
եղջերուի ընթանալ յառաքինութիւնս՝ պարտի զգու-
շանալ՝ ՚ի վտուանալոյ և ՚ի զիրանալոյ՝ եթէ ըստ հոգւոյ
և եթէ ըստ մարմնոյ : Ոստ հոգւոյ վտուանայ՝ ՚ի յետս
մնալն՝ ՚ի բարի առաջաղջութէ . և զիրանայ՝ ՚ի պարա-
րելոյ յախտս և ՚ի մոլութիւնս : Ոստ մարմնոյ վտուա-
նայ , յորժամ անխոչեմութբ չ'նչէ զնա յանչափա-
ւոր պահս և ճկնութիւնս . և զիրանայ՝ յորժամ փափէ-
կութբ մնուցանէ զնա : Երկոգին ևս վտանգաւոր են
մեզ . զի յորժամ վտուանայ և նիշարանայ մարմինն՝
ոչ կարէ տանիլ զմեզ . և յորժամ զիրանայ և պա-
րարտանայ՝ մեք ոչ կարեմք տանիլ զնա : Ոգա յանի
պարտ է՝ ՚ի չափու ունել ըստ կանոնի խոչեմութեան :
Եղջերուք ՚ի զիրանալն և ՚ի նիշարանալն՝ ամրանան

՚ի մէջ անտառաց . զի ՚ի յընդարձակի շղին եթէ
հալածեսցին՝ ոչ կարեն փախչիլ . Այսպէս ՚ի տեսա-
նել մարդոյ զինքն զիրացեալ կամ նիշարացեալ
պարտի տարանալ յանտառս բարի խորհրդոց , ա-
պահովանալ՝ ՚ի նոսին , և տէր հաստատեսցէ զնա , և
զօրացուցէ յընթանալ յառաքինութիւնս . և յայտնի
ցուցանէ նմա զիտրհուրդո բարիս ՚ի յարիլ . և ըզ-
շար խորհուրդո ՚ի խորչիլ . և զայտմանէ խօսի մար-
գարեն ընդ նմանութք իւիք , ՚ի յառաջ բերելն անդ
զանտառս , յասեն :

Եւ յայտնէ առնէ սանութառս : Վայ բան ՚ի փոխաքերա-
կան միտս առեալ ըստ պարզ խմացուածոյն մեկնի
այսպէս . ձայն տն կամ զօրութիւն հրամանի նր գոյա-
ցուցանէ զանտառս , կամ առնէ՝ զի իցէ անտառ . ևս
և նոյն ձայն տն Ծնծէ զանտառս , և առնէ զի ոչ ևս ի-
ցէ անտառ . որով ցուցանի՞ թէ ինքն է տէր անտառաց
՚ի գոյացուցանէլ և ՚ի Ծնծէլ ող և կամք իցեն նմա :

Վասցի * ՚ի փոխաքերական միտս || . զի ըստ բառիցն
առեալ կարէ այլազգ ևս մեկնիլ . առ որոյ բացատրու-
թիւն պարտ է գիտել . զի տիրապէս անտառ ասի այն՝
ուր է խիտ բազմութիւն մեծամեծ ծառոց , զորս մար-
զիկ չափազանցօրէն խօսելով անթռելի ասեն , և
աչեղ իմն ըմբռնեն , յորս և գաղին երբեմն գաղանք
ևս և մարդիկ : Վրդ որ մարդկան այսպէս երեկի և
յաշս նոցա մեծ իմն համարեալ լինի , ձայն տն յայտ-
նի առնէ . իբր զի Հնչումն ինչ հողմոյ կամ մըրիկ մի
վեր ՚ի վայր արարեալ զայն՝ յայտնի առնէ զամ որ ինչ
է ՚ի նմա . և որպէս նշանակեցաք՝ երբեմն ՚ի բոց վարա-
տեալ զայն ամենայն ծառ՝ իբր անսապատ կացուցանի .
և երբեմն նաև բոց կայծականց Հնչեալ ՚ի նոսա՝ այրէ
և վատնէ զնոսա , և սպառէ զամ . և տեղին այն՝ որ
ծածկեալ եր ծառովք՝ յայտնի լինի և իբր անսապատ
երեկի :

Եթէ զայս բան կամիցիմք մեկնել Հայելով ՚ի նախըն-
թաց հատուածդ , սովին ցուցանի , թէ ած յայտնի
առնէ կամ պատրաստ կացուցանէ եղջերուաց զան-
տառս՝ յամփոփիլ ՚ի նոսին , եթէ ՚ի ծնանիլ և եթէ
՚ի սնանիլ , եթէ յորսալ զօձս և եթէ յապահովանալ
՚ի հալածչաց :

Կարէ հայիլ այս բան և յայն անտառս՝ որոց պաշտօն
մասուցաննելին և մասուցաննեն իսկ չեթ անոսք մոլո-
րեալք : Իսկ ձայն տեառն փշրելով կամ շարժելով զն՝
յայտնի առնել զմնոտի լինել նոցա : Կարէ հայիլ այս
բան և յայն ամ դաղսնիո՞ որք օրինակին անտառաւ .
և ըստ այսմ այս ասացուած * ձայն տեառն յայտնի առ-
նել զանտառս || , նշանակի ասել յայտնի առնել ըզ-
գաղտնիս . ըստ որում բան ան յայտնէ զամ՝ որ ինչ
անյայտ կարծի : Իշտ զայս մանաւանդ ունի առնել
յաւուրն դատաստանի . յորժամ առաջի անհամար
բազմութեան * լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի ,
և յայտնիցէ զիսորհուրդս սրտից || . (ա . կոր . դ . օ .)
Կարծրագարար ևս և բարցապէս՝ բան ան յայտնէ ե-
կեղեցոյ իւրում և երկիւղածաց իւրոց զբազում
խորհուրդս անտառացեալս 'ի ոք գիրս , և 'ի բանս հա-
ւատոց , և 'ի վարդապէտութիւն վարուց : Կոյնակէս և
ընդ հակառակն յայտնէ զամ անտառս , այսինքն ըզ-
ծածկեալ մեքենայս չարին առ 'ի զգուշութիւն և առ
'ի անվթար պահպանութիւն ծառայից իւրոց :
Վ. ըդ որովհետեւ զայս ամ առնել ած երբեմն ինքնին ,
և երբեմն 'ի ձեռն այլոց՝ իրը 'ի ձեռն երկրորդ պատ-
ճառաց , եղեալ մարդարեին զայսոսիկ , աղաղակե-
լով զոցէ առ ամին , և զամոն իրախուսելով յորդո-
րէ՝ զի տեսեալ զայսպիսի դործս այ՝ առ հասարակ
փառս տացեն նմա , և փառաւորեսցեն զնա 'ի տաճա-
րի նորա : Ա ամս որոյ ասէ :

Ե. Դ ումարէ նորա ամենէն էան ասասցէն զբառս նմա :

Աստանօր տաճարաւ իմացեալ լինի նախ տեղին այն՝
ուր էր խորան տեառն . երկրորդ կարէ իմացեալ լինել
նմանութիւն և այլ ու իցէ տեղի , յորում յայտնի երեխ
զօրութիւն ձայնի ան իսկ պատճառ այսպէս իմանալոյ
է այն՝ զի զնի բառդ ամակ . որով ոչ նշանակին տակ
որդիք իսրայէլի՝ այլ ամ մարդ . մանաւանդ թէ ամ
արարածք : Վ. ըդ յայտ է թէ չեր հնար ամ մարդոյ
ժողովիլ յերուսաղէմ 'ի տաճարն , և անդ տալ փառս
այ՝ : Վ. պա տաճար ասելով աստ՝ իմացեալ լինի ոչ
միայն բուն տաճարն երուսաղէմի հայելով յիսրայէ-

լացիս՝ այլ և նմանութեամբ առեալ՝ և իցէ այլ տեղի
հայելով յամ մարդ . կամ թէ սկզբնաբար իմացեալ
լինի բուն տաճարն , և երկրորդաբար և իցէ տեղի :

Հայս միտու երեխ առել մարդարեին :

Ի բամարէ նը ամենէ և առասոցն զդապահ նմա : Այսինքն
ամ մարդ տեսեալ զզօրութիւն ձայնի տն , կամ զբան-
չելի գործս ամենակարողութեանն այ՝ փառս տացեն
նմա՝ յորում տեղոջ և իցեն՝ իբրև ՚ի տաճարի նորա :
Այսնպէս և խրայելացիք ժողովեսցին ՚ի սինն ՚ի տա-
ճար նորա՝ և անդ սաղմոսիւք և օրհնութիւ փառաւո-
րեսցեն զնա :

Դաւշակութիւնն ամսանօր բառդ բամարէ՝ ակնարել-
՚ի տաճարս նորոյ սիննի . զի եթէ ՚ի հնումն արժան եր
՚ի տաճարի անդ տալ զփառս այ կամ պատմել զփառս
նորա , քանի ևս ՚ի տաճարի աստ ՚ի նորումն , որ բազ-
մօք առաւելու քան զայն . նախ զի առաւել քան զնա
կարգեալ է լինել իբր սեփական բնակարան այ . երկ-
րորդ՝ զի փառաւորագոյնս կրէ յինքեան զանուն այ .
երրորդ՝ զի է իբր գործիքական պատճառ գործոց
հոգւոյն որյ առ ՚ի ծնանելց զմեզ յորդիս այ : Չոր-
րորդ՝ զի սրբեալ և նուիրեալ է առ ՚ի լինելց քա-
ւարան մարդկան . Հինգերրորդ՝ զի օրհնութիւ տն զե-
զանի անտի յամ մասուցեալս ՚ի նմա առ տն : Ու եց-
երրորդ՝ զի է առաջաստ և հարմնարան հարսնացին քո՞ի
այսինքն եկեղեցւոյ : Խօթներրորդ՝ որ մեծն է քան
զամ՝ զի անդ առաջիկայ է ինքն քո՞ն ևս և բատ մարմար
՚ի խորհուրդ հաղորդութեան : Հաղազս այսոցիկ և
յաղազս այլոց բազում պատճառաց պատկանաւոր
տեղի սահմանեցաւ , ՚ի նորումն տաճար որ ՚ի փառաւ-
որել զնա :

Այս բան սաղմոսիս առաջի զնի միանգամայն և իբր
յորդորանք ժողովրդեան տն . իբր զի ՚ի գործել այ
զնորօք զմեծամեծս , կամ ՚ի կատարել այ զինդրուածս
նոցա , կամ յազատել նորա զնոսա ՚ի չարէ իմերէ ևն ,
ժողովեսցին ՚ի տաճար սուրբ . և պատմելով զփառս նը՝
այսինքն զայն՝ զոր արար տէր՝ նովին փառաւորեսցեն
զնա . որպէս և առնեն իսկ այժմ հաւատացեալքն ՚ի
քո՞ . նաև անհաւատք իսկ յիւրեանց ժողովարանս .
Այլաբանօրէն՝ այս բան հայի յայնոսիկ՝ որք ժողովին

'ի նոր եկեղեցի , յոր միտու կամի առել . 'ի գործել ձայնի տն՝ այսինքն բանին այ մարդացելոյ զմեծամեծո յերկրորդ արարշութեան , ժողովեսցին որդիք մարդ կան 'ի որ եկեղեցի , և ամըն պատմեսցեն՝ զոր արար ած , և պատմելով զայն՝ փառս տացեն նմա կամ փառաւորեսցեն զնա :

Վըդ յայսոսիկ բանս 'ի յորդորել մարդարէին զմարդիկ փառաւորել զնծ վասն սքանչելի երևերց ամենակարօղ զօրութեան նր , 'ի մէջ երեր (որպէս և տեսէր) զմեծամեծ գործս նորին . և զի մեծ իմն ևս կայր արժանի յիշատակելոյ , զնոյն զայն ևս զկնի դնէ , և ասէ :

Ճ. **Տ**եր նշրհեցլով նստայանէ և յածուցանէ . նախարարէնց ու ու յատիւննէ :

'ի բառուցանել զջրհեղեղս , կամ որպէս զնի 'ի քանի մի ձեռագիրս՝ զնստուցանել զջրհեղեղս՝ նշանակէ աստ՝ առնել զջրհեղեղս , այսինքն առնել՝ զի յորդեալ հեղեղաց ջուրց՝ նստցին , այսինքն զետեղեսցին , և այսու լիցի հեղեղ ջուրց : Իշլ թէպէտ բառս նստայանէ կամ նշանակէ յայսպիսի շարադրութիւնս յաւէտ փոխանակ նուազեցուցանելոյ զնի , որպէս առնու և լամբ" , և վարդ" , բայց հայելով 'ի զօրութիւն առաջի եղեալ բանիդ և յերայական ընազիրն՝ ցուցանէ առնել զի զեղցի և նստցի ջուր , և ոչ թէ նուազեսցի : Իսկ ցածուցանել զջրհեղեղս է պակասեցուցանել զնստեալ հեղեղ ջուրցն , և առնել՝ զի նուազեսցի ջուրն . յայսոսիկ հայելով ասէ :

Տեր նշրհեցլով նստայանէ և յածուցանէ : Այսինքն է թէ միայն այ է առնել՝ զի լինիցի ջրհեղեղ , և միայն այ է առնել՝ զի ցամաքեսցի ջրհեղեղ , որպէս և արարն իսկ առ նոյիւ :

Վայլ ջրհեղեղ առելով ոչ իմանայ սոսկ զընդհանրական ջրհեղեղսն՝ այլ զի և իցէ հեղեղումն ջուրց , կամ զինչ և իցէ յօրդութիւն ջուրց՝ զորօրինակ անձրեաց , զետոց , ծովու , ևն : Իշլ դիտումն բանին այս է՝ թէ 'ի ձեռին տն է ամ , նա տայ անմցն ջուր 'ի զովացումն և 'ի մնունդ . և նա ինքն որպէս և կամի առնէ առատանալ և ցամաքիլ ջուրց : Իշլ այսու յայտնի լինի՝

թէ որպէս՝ ՚ի վերայ ջուրը՝ նոյնպէս և ՚ի վերայ ամի
ուսի ինքնիշխան տէրութիւն, և ամի ինչ՝ ՚ի ձեռին նորա
է. և ինքն որպէս և հաճի, երբ և հաճի, ողբան և
հաճի, առնէ, զամ, և փոփօնէ զամ. և ՚ի յառնելն
զայս ամ՝ ինքն կայ յամի անփոփօն. և իրը տէր գոր-
ծէ զամ. և իշխէ՝ ՚ի վերայ ամի յաւիտեան իրրե թա-
գաւոր. և առ այս յարէ զինի՝ և ասէ :

(Ը) աւդառընսցէ տէր յաւիտեան : Որպէս թէ ասէր, ամ՝
որ է տէր ամի, իշխան ամենակարօղ, և թագաւոր ա-
մենազօր, նոյն է և նոյն մնայ յաւիտեան յիւրում
թագաւորութեան . և ամքին՝ որք արտաքոյ նորա են՝
ընդ նորա իշխանութեն, և ըստ նորա ակնարկութեն
առնեն և առնին, իւրաքանչիւր յիւրում կարգի . և
ինքն տէր միայն ոչ իշխի յայլոց, այլ իշխէ՝ ՚ի վերայ
ամենեցոն, և թագաւորէ յաւիտեանս յաւիտենից :

(Օ այսանէ տէս և ՚ի սաղ. դք. 1 :)

Հոգեորապէս՝ տն է աալ կամ առաքել զչեղեղս բա-
րեաց կամ չարեաց . այսինքն զառատութիւն յաջողու-
թեանց և զյաճախութին ձախորդութեց՝ ոչ միայն այսմ
կամ այնմ, այլ և ամցն, Ոյնպէս տն է ցածուցանել
կամ նուազեցուցանել զչեղեղս բարեաց կամ չա-
րեաց, և ցուցանել ամցն՝ թէ ինքն է թագաւոր ամի,
Վայլ յաւուրն գատաստանի ՚ի յայսնի առնել ըզ-
գաղտնիս զամ՝ զեղցէ զչեղեղս վարձուց որոց բարիս
զործեալ իցէ, և զչեղեղս պատժոց որոց զչար արա-
բեալ իցէ . և ցածուայէ՝ այսինքն բարձցէ՝ ՚ի բարեաց
զամ տրումութիւն և զամ թշուառութիւն . բարձցէ և
՚ի չարաց զամ միմիթարութիւն հոգւոյ և մարմնոյ .
և թագաւորեսցէ ինքն յաւիտեան : Վայոքիւք ամե-
նեքումք՝ զօրս աաաց մարգարէն՝ սքանչելի և փառա-
ւոր եցոց զզօրութին ձայնի տն յանի՝ ՚ի ջուր և ՚ի հուր,
՚ի յօդ և ՚ի հող, ՚ի կենդանիս և ՚ի տունկս, և առա-
ւել ևս ՚ի մարզիկ . և զի պատուականազոյն են ՚ի
մէջ մարդկան ժողովուրդք տեառն, զնոյն զայն ժողո-
վուրդ ևս ՚ի մէջ բերէ իրը առաւել ընդունակ զօրու-
թեանն այ՝ և ասէ :

Ժամ. **S**էր շրբութի ժողովրդեան իւրոյ ռայէ . և օրհնեսցէ պարզութեր իւր ՚ ի խաղաղութի : Ամին նման խօսեցաւ մարդարէն և ՚ի վերջ նախըն թաց սաղմասին . (Համար . 40 . և 41 .) յասելն . * տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ . . . փրկեալ զժո զովուրդ քո , և օրհնեամ զժառանգութիւն քոյ || . Ես այն հայի մասամբ իմն և այն զօր եղ ՚ի վերջ իդ սաղմասին . (Համար . 48 .) Բատ սոցին խօսի և աստ աւելով :

Տը շրբութի ժողովրդեան իւրոյ ռայէ : Կամի ասել . ած օր արար և առնէ զայս ամ՝ զօրոց խօսեցայ՝ արասցէ ՚ի ժողովուրդ իւր և զայն՝ օր մեծն է . զի տացէ զզօրութիւն իւր՝ կամ զշնորհս իւր յայն ամ՝ յօրս պարա է . նոցա զօրանալ , առ ՚ի վանումն ցարի և առ ՚ի հետեւմն բարույ . ըստ այնմ՝ զօր ինքն կամի . զի եթէ այնչափ զօրութիւն տայ ջրոյ և հրոյ , օդոյ և հոգոյ , մի թէ ոչ տացէ և իւրոյ ժողովրդեան զօրութիւն գերա . զոյն՝ առ այն ամ՝ առ օրո ոչ կարեն նոքա ձեռնհաս լինել առանց այնր զօրութեան , որպէս ետ առաքելոց ՚ի ձեռն հոգւոյն սրբ յասելն . * նատարոնք ՚ի քաղաքիս յերուաղէմ մինչեւ զգենուցուք զօրութիւն ՚ի բար ձանց || . (Պուկ . իդ . 49 .) և թէ * առջիք զօրութիւն ՚ի հասանել հոգւոյն սրբ ՚ի վերայ ձեր || . (գործ . ա . 8 .)

Եւ դարձեալ եթէ հաստատէ տէր զեղջերուս և զանտառս . և յայտնի առնէ թէ ինքն է տէր ամի . միթէ ոչ հաստատեսցէ զժողովուրդ իւր , և ցուցցէ՝ թէ ինքն է տէր նոցա : Օ ի եթէ զայն ամ՝ վասն ժողովրդեան իւրոյ կամ վասն մարդկան ընտրելոց արար և առնէ , զինչ ոչ արասցէ այնմ ժողովրդեան . արասցէ այն զմեծամեծս . և օր առաւելն է՝ օրհնեսցէ զնոտա . և առ այս յարէ :

Եւ օրհնեսցէ շժողովրդ իւր ՚ ի խաղաղութի : Աստանօր շաղկապդ և օր գտանի միայն ՚ի ձեռագիրս մեր՝ զնի փոխանակ բառիս այլ . որպէս թէ ասել . ոչ միայն զօրացուսցէ տէր զժողովուրդ իւր , այլ օրհնեսցէ . ցա լիացուսցէ մշտնջենաւոր բարեօք : Եւ զի ՚ի մէջ բարեաց մեծագոյն բարի է խաղաղութիւնն , զայն զնէ

յօրհնութեանն . օրհնեսցի ասէ զժողովուրդ իւր 'է իսա-
շալութէ . սպիտին խաղաղութեամբ , կամ 'ի մէջ խոր
խաղաղութեան . զի այս հողով 'է խաղաղութէ , կամ ըստ
տպագրեալ սաղմնաց մերոց 'է խաղաղութէ , յայսպիսի
տեղիս փոխանակ դործիական հողովոց դնի , և երթեմն
'ի մէջ բերէ զօրութեամբ զնախգիրդ 'է դէ , որպէս և
եղաք . և այս մանաւանդ ըստ ո՞չոյ երբայցեցւոց .
որպէս և տեսանելյածանցի բազումուրեք :

Օ այս խաղաղութիւն գերազցն իմն օրինակաւ խոս-
ացաւ և ետ ո՞րն մեր նորումն եկեղեցւոյ՝ յասելն .
* խաղաղութիւն թողում ձեզ , զի խաղաղութիւն զիմ
տամ ձեզ . ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ .
(յովհ . ժդ . 27 :) յօրոց ապացոյց յերեխլ իւրում ա-
շակերտաց յետ յարութեանն ասաց . * խաղաղութիւն
ընդ ձեզ . (զուկ . իդ . 36 :)

Ա յս վերջին բան սաղմնախ այլով տրոհութք ևս կա-
րէ մեկնիլ . իբր զի մարթ և ասել , թէ առաջին հաս-
ուածն հայի յաստի կեանս . իսկ երկրորդն 'ի հան-
դերձեան . որպէս թէ եղեալ էր . տէր տացէ ժողո-
վրդեան իւրում յաստի կեանս զջօրութիւն առ 'ի պա-
տերազմիլ զհոգեոր պատերազմ ընդգեմ մոլորութեց
և ընդգեմ մեղայ . և առ 'ի զարդանալ 'ի դործս բա-
րիս . և ապա օրհնեսցի զնոսա 'ի հանդերձեալն 'ի
փառս արքայութեան ամեներջանիկ խաղաղութք յաւի-
տեանս յաւիտենից :

Ե պահման սաղմնախ արժան համարիմ ծանուցա-
նել և զայս . իբր զի յայս սաղմնս բառդ յայն՝ որ եօթ-
նից կրկնին կարէ պատշաճիլ այնմ սամի՝ յորս գերա-
զանց աեսանին թիւս է : Առ զրօրինակ եօթն պարզեաց
չողւոցն սրյ , եօթն առաքինութեց , և այլ ևս բազում
եօթանց . և պատշաճազոյն ես՝ եօթն խորհրդոց եկե-
ղեցւոյ՝ այսու կարգաւ . ա . չայն պէտան 'է վէրայ շնորհ 'ի
մկրտուեն : բ . չայն պէն զօրութեց 'ի զրոշմի : գ . չայն պէն մէծ
չոյելլութեց յանհասանելի խորհուրդ հաղորդութեան :
դ . չայն պէն մանրէ զմայր ևն . յապայխարութեան յօրում
չնորհք տն խորտակէ զզջմամբ զիրտս մեղաւորաց :
է . չայն պէն հարտանէ վէրայ հրց , որբելով զբոց ցանկութե-
'ի խորհուրդ պատկի : զ . չայն պէն շարժէ զանոպատն հարէ-
որ թարգմանի սրբեալ և նուիրեալ՝ որ հայի 'ի խոր-

Հուրդ կարգին : Է . Յայն պես հասուադքէ իբր զեղջերուս ըզմարդիկ 'ի հիւսնդանանան՝ 'ի ձեռն վերջին օժման : Վայսպիւք եօթն խորհրդովք զօրացուցանէ տէր յաստիս զեկեղեցի որք . և օրհնութք իւրով հասուցանէ , 'ի խաղաղութիւն յաւիտենական :



Ս Ե Վ Ա Մ Ո Ս Ւ Թ Յ Ա

Ի անդ չնորհակալութեան վասն ազատելոյ ի թշուառութենէ , և գտանելոյ զվիճակն կորուսեալ :

Սաշմոս օքհնութեց նուակառեայ ուսմարին . 'ի դասին :

1 **Բ**արձր առածմ զյեղ որք , զէ ընկալսր զիս . և աշ առածմ աբութեր զլցնամին իմ յիս : 2 **Տ**ը ած իմ հարդացի առածմ , և բժշնեցի զիս . որ հաներ ի բժշնոց զանին իմ . քիչեցի զիս յայնցանէ , որ իշանեն ի գուբ : 3 **Ո**ւաշմոս առայշի պես սբան - իւրաք . իւստուալսն եղբարտ յեշտանի սրբութենորս : 4 **Ա**ւշրմութին է 'ի բարձրանեան նորս . և իշանի լոն ի իւմայ նորս : 5 **Բ**նդ երեխոյ հանդիցեն լուլս . առաստար եղիցի սրբախութին : 6 **Լ**ու ասացի է բարեկինդանութեն իմում , թէ աչ սասանեցար յահիպատ : 7 **Տ**ը ի ամ ու եռուր գեղար իմ զօրութին , տրքնուցեր զերես ու յինէն , և սու եղի եռավուլս : 8 **Վ**եշի տէր հարդացի , և աս ածդ իմ աշշահինեցի . զինչ օդառա է տէշ յարենէ իմէ , թէ իշանմ էս յաղախանութին : 9 **Ո**ւենէ հող իւստուալսն առանցին առ տէշ . իմ պատմեսց զաշնորհութին այս : 10 **Լ**ուսու ինչ որք , և ուղբեցաս . և տէր եղլ ինչ օդնական : 11 **Դ**արձոյց զսուգ իմ յուրախութին , զէրծ յինէն զսուրչ . և ինչ զբերցոց զսուրիստին : 12 **Ո**րդես առայշի առայշին տէշ գուագ էմ . և այլ թէ ևս ուղղացար . որք ած իմ յահիպատ տէտի իւստուալսն եղից տէշ :

ԱՅԻ ՊԵՐԵՎԱՆԻ

በመጀመሪያው የዚሁ ተስፋይ ነው እና ጥሩ ተስፋይ ነው . ከ ተስፋይ ነው ስለሚሸጠው ይህንን የዚሁ ተስፋይ ነው እና ጥሩ ተስፋይ ነው .

ԵՐԵՎԱՆԻ ՇՅՈՒՐ ՄԵԴ ՄԹՈՒՄ
ըստ նշանակեցելոյն՝ յամենայնի միակերպ
դնի. իսկ ըստ բառիցն բազմօրինակ զրի՝
մանաւանդ՝ 'ի ձեռագիրս մեր. Յոմանս դնի * օրհ-
նութինաւակատեաց տաճարին՝ սաղմոս 'ի գաւիթ. Յոմանս
ըստ դնելոյ մեր. * Սաղմոս օրհնութեանց
նաւակատեաց տաճարին, 'ի գաւիթ. սոյնպէս դնի
և 'ի վարդանայն. Ի տպազրեալսն ևս փոքր մի սմին-
նման դնի. այսինքն է. * Սաղմոս օրհնութեան նաւա-
կատեաց տաճարին գաւիթ. կամ 'ի գաւիթ. Այն
պէս դնի և յերբ. յասելն դոցաւ շիւ խանութան ապ-
ուայիլ լէ բաւել. այս է. * սաղմոս. երգ նուիրման
տան 'ի գաւիթ. կամ * սաղմոս երգոց 'ի նաւա-
կատիս տանն գաւիթ. կատիս տանն գաւիթ. կատիս տանն գաւիթ.

¶ JL յամենայնի միտ բանին նոյն է . այսինքն եթէ
այս սաղմոս իցէ ազգեալ՚ի հոգւոյն սրբ ՚ի դասիթ ,
երգել զոյն իբրև օրհնութիւն ՚ի նաւակատիս տա-
Տարին :

Հայլ թարգմանութիւնս , նոյնպէս և յերբայականն՝
ըստ գրելոյդ՝ փոխանակ բառիս տաճաբ՝ զնի՝ բռն . և
սակայն բազում մեկնիչք՝ բառիւս բռն՝ տաճաբ իմա-
նան աստ . և ըստ այսմ սոցայս ևս նոյնանայ ընդ մե-
րումն :

Վ. յլ. թէ յորից տաճարի նաւակատիս հայիցի այս վերնագիրը, պէսպէս կարծիք են: Ոմանք ասեն՝ թէ այս հայի ՚ի նաւակատիս խորանին՝ զոր պատրաստեաց դաւիթթ վասն զետեղելոյ անդ զտապանակ տնի ՚ի լերինն սիօնի: (որպէս զրի ք. թագ. դ. 17: և ա. մնաց. դ. 1:) Ոմանք՝ թէ այս հայի ՚ի նաւակատիս սողումնեան տաճարին: որում երեսի նպաստել վերնագիրն քաղղէական: Ոմանք՝ թէ այս հայի

'ի նաւակատիս զօրաբաթելեան տաճարին , որում
նպաստէ (որպէս ասեն) , և ծիսարանն հըեից :

Ոմանք թէ հայի յապագայ նաւակատիս տաճարի նոր
եկեղեցւոյ : Ոմանք թէ 'ի նաւակատիս մարդեղութեան
բանին . զոր և արար սուրբ կոյսն 'ի տան զաքարեայ յա-
սելն . * մեծացուսցէ անձն իմ զտէր || : Ոմանք 'ի ըա-
բունեաց հըեից աւանդեն՝ թէ այս հայի 'ի ժամա-
նակ նուիրման երեխայրեաց 'ի տաճար նոն :

Խսկ որք ըստ եբրայական բնագրին փոխանակ տաճա-
րի պահն ընթեռնուն 'ի վերնագրիդ՝ ոմանք 'ի սոցանէ
պնդեն՝ թէ այս վերնագիր ակնարկէ 'ի նաւակա-
տիս տանն , զոր շինեաց դաւիթ 'ի սիոն վասն իւր ,
և որպէս ասէ ոք գիրն . (բ . թագ . ե . 12 .) 'ի կա-
տարիլ այսր՝ * գիտաց դաւիթ՝ եթէ հաստատեաց
,, զնա տէր թագաւոր 'ի վերայ իսրայէլի , և թէ բարձ
,, բացաւ թագաւորութիւն նորա վասն ժողովրդեան
,, նորա իսրայէլի || . տե՛ս զայսմանէ և 'ի առաջաց .
(ժկ . 43 .) ուր ասի թէ * դարձաւ դաւիթ օրհնել
,, զիւր տունն || . գուցէ նաւակատիս ևս կատարել՝
յօրհնելն զայն . որովհետեւ կայր սովորութիւն առ իս-
րայէլացիս՝ 'ի շինելն նորոգ զտուն՝ կատարել զնա-
ւակատիս նորա . այսինքն առնել իսրախութիւն ինչ
վասն աւարտելոյ զշինուած տանն , և օրհնութեամբ
իւիք նուիրել զայն նոն . որպէս յայտ է 'ի բանից ան-
տի՝ որ աւանդի 'ի գիրս երկրորդ օրինաց . (ի . 5 .)
* այր ոք որոյ շինեալ իցէ տուն նորաշէն . և ոչ իցէ
,, արարեալ նմա նաւակատիս , զնասցէ և դարձցի 'ի
,, տուն իւր . գուցէ մեռանիցի 'ի պատերազմի , և
,, այլ այր առնիցէ նմա նաւակատիս || :

Ի՞ն ևս ոմանք՝ որք ասեն , թէ այս վերնագիր հայի
յայն իսրախութիւն , զոր արար դաւիթ յորժամ դար-
ձաւ 'ի տուն իւր յետ հալածանացն աբեսազոմայ , և
դառնալով գրեթէ օրհնեաց զտունն զայն . և սըր-
բեաց 'ի պղծութենէ անտի զոր պղծեաց աբեսազոմ .
(ըստ որում զըի 'ի բ . թագ . ժկ . 21 : և ի . 3 :)

Այս բանք՝ զորս ցարդ եղաք , հային 'ի բացատրու-
թիւն վերնագրիդ . այլ ոչ ցուցանեն՝ թէ յինչ առթէ
իցէ ասացեալ այս սաղմոս , և թէ յինչ հայիցին
բանք սորա . քանզի որ ինչ զըին 'ի սաղմոսի աստ ,

Են շնորհակալութիւնք վասն ազատելոյ 'ի թշուառութենէ և վասն գտանելոյ զբժշկութիւն կամ զկենդանութիւն , և ոչ վասն շինելոյ գտաճար կամ զտուն : Ինդ այս տարակուսին մեկնիչք , և զայլ և այլ բանս 'ի մէջ բերեն : Ոմանք ասեն թէ բանք սաղմոսիս հային 'ի բժշկութիւն եզեկիայ : (զորմէ գրի . դ . թագ . ի . 6 . և . 7 : և եսայ . լը . 1 . և 2 :) Ի՞այց այս կարծիք բնաւին չունի տեղի . վասն զի այս սաղմոս ոչ է եզեկիայ արքայի , այլ դաւթի . և զի՞ կայր դաւթի մարգարեաբար սաղմոսել զբժշկութենէն եզեկիայ :

Ոմանք ասեն , թէ աստանօր մարգարէն զբժշկութին փոխաբերաբար առնու , փոխանակ ազատութեն որով զերծաւ 'ի վտանգէ հալածանաց աբեսաղոմայ : Ոմանք 'ի նորոց ասեն՝ թէ բժշկութիւնն որ յիշատակի աստ՝ հայի 'ի դադարումն այնր սոսկալի սատակման մահու՝ որ եղեւ 'ի մէջ իսրայէլի ըստ գուշակութեանն գաղայ մարգարէին . որպէս է տեսանել յերկրորդ գիրս թագաւորաց . (գլ . վերջին .) յորում ժամանակի շինեաց դաւիթ սեղան նոն 'ի կալն ոռնայ . * և լուաւ տէր երկրին . և արգելաւ սատակումն յիսրայէլէ || : (տես ք . թագ . իդ . 25 : և ա . մնաց . իա :) Եւ զայն տեղի ուր շինեաց դաւիթ զսեղան նոն սրբեաց և նուիրեաց լինել տեղի տաճարի նոն , ասելով . * Եւ (տեղի) է տուն նոն այ . և այս սեղան ողջակիզաց իսրայէլի || . (ա . մնաց . իք . 1 :) Եւ յետոյ անդ այսինքն 'ի կալն ոռնայ շինեաց սողոմոն գտաճար նոն :

Եթէ յայս վերածիցի մեկնութիւն սաղմոսիս , վերնագիր սորա ևս կարէ ըստ պատշաճի յարմարիլ 'ի նաւակատիս այնր սեղանոյ՝ ըստ այնմ՝ զի նուիրեցաւ լինել տեղի տաճարի նոն : Աւստի և բացատրութիւն այսր վերնագրի կարէ լինել այսպէս . սաղմոս ասացեալ 'ի դաւթայ իբրև օրհնութիւն շնորհակալուն նոն 'ի նաւակատիս սեղանոյն՝ զոր կանգնեաց 'ի կալն ոռնայ , 'ի նուիրել նորա զայն առ 'ի լինել տեղի տաճարի նոն :

Ոմանք թողեալ զայս ամենայն ասեն՝ թէ զայս սաղմոս ասացեալ իցէ դաւթի վասն առողջանալոյ 'ի

Հիւանդութենէ իմեքէ, զորմէ ոչ ինչ զրի 'ի ոք զիրս . և կամ 'ի հիւանդութենէ մեղաց . որով հիւանդացեալ կայր ըստ հոգւոյ 'ի մահիճս մեղաց՝ զոր մեղաւ յուրիա և 'ի բերսաբէ (բ . թագ . ժա . 27 : և ժբ . 13 :) որք զայս ասեն , համարին՝ թէ այս սաղմոս երգեալ լինէր սինու եղանակաւ կամ այնու նուազարանաւ , որով նուագեալ լինէին երգք կամ օրհնութիք նաւակատեաց տան կմտաձարի՝ այսինքն մեծի շինուածոյ . և վասն այնորիկ եղեալ է ասեն 'ի վերնագրիդ * օրհնութիւն նաւակատեաց տաձարի . այսինքն է սաղմոս՝ որ երգելին է հանգոյն օրհնուեց կամ երգոց՝ որք նուագին 'ի նաւակատիս տաձարի , կամ մեծի տան :

Հնար է ևս ասել՝ թէ այս սաղմոս պարագրէ յինքեան ոչ զայս միայն , այլև զայն ամենայն , զոր ասացաք ցարդ : Ո՞արթ է և զայլ բազում ինչ ասել . զի * ուր ոչ է յայտնի իրացն ստուգութիւն , հնար է 'ի մէջ բերել զամենայն բանից պատշաճողութիւն : Խսկ սուրբ հարք զայս սաղմոս վերածեն 'ի դէմս քնի . որոյ մարմինն օրինակեցաւ 'ի տաձարն . ըստ որում և ինքն ասաց . * քակեցէք զտաձարդ զայդ , և այլն բայց նա ասէր վասն տաձարի մարմնոյ իւրոյ : (յովէ . բ . 19 . 21 :) Ե կանգնիլ այսր տաձարի՝ այսինքն այսր մարմնոյ տն 'ի յարութեան՝ 'ի նաւակատիս նորին , այսինքն 'ի խրախութեան այնը յարութեանք այսր սաղմոսի կարէին 'ի դիմաց յարուցելոյն վերառաքիլ առ հայր :

Բազումք ևս ընդ որս և լամբ" . զայս սաղմոս վերածեն 'ի դէմս տաձարի մարդկայինս բնութեան . որ գրեթէ նորոգ շինեցաւ յերկրորդումն արարչութեան . յորոյ 'ի նաւակատիսն , այսինքն 'ի խրախութեան նորավասն նորոգութեն եղելոյ՝ արժանապէս ասացեալ լինին բանք սաղմոսիս 'ի բերանոյ մարդկութեանս . զորոյ զլրութիւնն հանդիսացուցանեմք յաւուր նոր կիւրակէի :

Խսկ մեք թողեալ զայլեայլութիւն կարծեացդ՝ 'ի հասարակի առաջի դնեմք զմեկնութիւն սաղմոսիս՝ այնպիսի իմն օրինակաւ՝ որ կարէ պատշաճիլ ամենայն կարծեաց . շարայարեալ 'ի մեկնութիւնսն զայն ամե-

նայն՝ զոր արժան է ըստ պատշաճի՝ ՚ի մէջ բերել յա-
ւելորդաց և եթ զգուշանալով։

Բ Ե Կ Ա Խ Թ Ի Ւ Ե

Թ. **Պ**արքը առնեմ զբեղ այ, զե ընէալը չես, և ոչ ուրախ
արարեց զբշնամիս էմ յես։

Ո Ե Կ Ա Խ Թ Ի Ւ Ե

Բարձր առնելն զած է բացայայտ բանիւք խոստովա-
նիւլ զբարձրութին այ, այսինքն զգերազանցութին նորա
յածային կատարելութիւնն, երբեմն՝ ՚ի հասարակի,
զորօրինակ յասելն * մեծ է տէր և օրհնեալ է յոյժ ։
և ն. երբեմն՝ ՚ի մասնաւորի, զորօրինակ՝ ՚ի մէջ բե-
րելով զարդարութիւն նորա կամ զողորմութի, կամ
զմարդասիրութիւն, և ն. : Եւ այս՝ երբեմն պարզապէս՝
առ՝ ՚ի փառաբանութիւն գերազանցութե փառացն այ,
և երբեմն առ՝ ՚ի չնորհակալութիւն՝ յաղագս ընկալեալ
բարերարութեանց. որպէս առնէ աստ մարդարէս. զի
գտեալ յայ բարերարութիւն մեծ՝ խոստովանելով ըզ-
նոյն զայն՝ չնորհակալ լինի զնմանէ՝ և ասէ :

Պարքը առնեմ զբեղ տէր : Լամի ասել. խոստովանիմ
զերախտիս բարերարութեան քո . և սովին խոստովա-
նութե բարձր առնեմ զքեզ . այսինքն օրհնեմ ըզ-
բարձրութիւն գթութե և մարդասիրութե քոյ, որով
հաճեցար ցուցանել առ իս զքո զայդ բարերարութի :
Եւ ոչ այսչափ միայն, այլ և որոց ոչ ճանաչեն զբարձ-
րութիւն քոյ, առ նոսա ևս քարոզելով ցուցից՝ թէ
բարձր ես դու տէր : Ուր զօրութե տայ իմանալ ըստ
լամբ . թէ փափաքի ոչ այսչափ կամ այնչափ բարձրա-
ցուցանել, այլ՝ ՚ի վեր քան զամենայն : Լսկ թէ զի՞նչ
էր այն բարերարութիւն՝ զոր արար նմա ած՝ յայտ առ-
նէ յաջորդ բանիւն ասելով :

Օչ ընէալը չես : Որպէս թէ ասէր . ՚ի խոնարհիւլ
իմում պէսպէս նեղութեամբք և ազգի ազգի փորձու-
թեք, կամ՝ ՚ի տարագրիլ իմում առ՝ ՚ի քէն մեղօք, կմ
՝ ՚ի տառապիլ իմում՝ ՚ի թշնամեաց և՝ ՚ի հալածչաց ի-
մոց, կամ՝ ՚ի վտանգիլ իմում՝ ՚ի պէսպէս ձախորդու-

թեանց՝ յորոց նուածեալ՝ իջի՝ ի վայր՝ ի նուաստութի, ՚ի վեր առեր զիս, և բարձրացուցեր զիս. և այնու ընկալար զիս՝ ի բարձրութիւն. և զի այսպիսի օրինակաւ բարձր արարեր զիս, վասն այսորիկ և ես՝ ի վեր քան զօրինակ բարձր առնեմ զքեզ. դու այս բարձրացուցեր զիս՝ ի նուաստութեան իմում, և ես բարձրացուցից զքեզ՝ ի գերազանցութեան քում։ Այս բարձրացութիւն նու որչափ մեծ էր առ մարդարէն և ուրախացուցիչ, այնչափ ծանր էր առ թշնամիս նորա և արգելուրախութեան նոցին. սմին իրի յարէ զկնի, և ասէ։

Եթ- ոչ ուրախ արարեր զլշնամիս իմ յէս, (կամ ըստ այլ ձեռագրաց և ըստ վարդանայ՝ զլշնամիս իմ յէս։) Ուրախութիւն թշնամւոյ է տեսանել զատելին իւր՝ ոչ՝ ի բարձրութե այլ՝ ի նուաստութե. ուստի եթէ ոք զատելի ուրուք թշնամւոյ ոչ թողցէ՝ ի նուաստութեան, այլ բարձրացուսցէ, ոչ թողու զնա մնալ յուրախութեան, այլ մանաւանդ տայ նմա տիրիլ և մաշիլ։ Այս պէս արար տէր ընդ թշնամիսն դաւթի՝ զրեթէ յամենայնի. զի նոքա ոչ այնչափ ընդ կորուստ նորա խնդային՝ որչափ ընդ մնալ նորա՝ ի նուաստութեան. ապա յընդունիլ զնա այ՝ ի մեծութեան, և յոչ թողուն զնա՝ ի նուաստութեան՝ այնու իսկ զթշնամիս նորա ոչ արար ուրախս՝ ի նա. այլ տրտում յոյժ։ Այս բան ասի և ՚ի դիմաց քնի յարուցելոյ՝ ի մեռելոց. ասի և ՚ի բերանոյ ամենայն փրկելոց և ընտրելոց և ապաշխարելոց, և առ հասարակ՝ ի բերանոյ մարդկայինս բնութեան՝ որ կորուսեալ էր մեղօքն աղամայ, ընդ որ ուրախանայր թշնամին աղգի մարդկան. այլ տէր խնայեալ՝ ի նա՝ ընկալաւ զնա՝ ի կորստենէ անտի՝ ի փրկութի, և ՚ի մահուանէ՝ ի կեանս, ևս և յերկրէ յերկինս, և ոչ եթող թշնամւոյ նորա մնալ յուրախութեան։

Ուաւել պատշաճագոյնս ասի այս բան՝ ի բերանոյ իւրաքանչիւր հաւատացեալ ննջեցելոց՝ ի քո յընդունիլ այ զհոգիս նոցա յանմահական՝ ի հանգիստ, կամ՝ ի հասանել նոցա՝ ի հանգիստն յաւիտենից, կամ՝ ի հանգչիլ նոցա յարքայութեան. զի ունին ասել ուրախութե առ ած. բարձր առնեմ զքեզ տէր, զի՝ ի

խորոց անդնդոց բարձրացուցեր զիս , և ոչ ետուր ուրախանալ թշնամկոյս իմոյ սատանայի 'ի վերայ իմ : Յայս միտ զայս սաղմոս երգեմք 'ի պաշտաման ննջեցելոց 'ի դիպիլ ձայնին յառաջին կողմն : Արդ եղեալ մարգարեին զայսոսիկ՝ բացատրէ այժմ , թէ զիարդ ընկալաւ զնա տէր , և զինչ էր այն ընդունելութիւն , և թէ զիարդ վասն այնր ինքն յառաջագոյն խնդրեալ էր յայ . և յաղագս այսորիկ յարէ զկնի , և ասէ :

Է . **S**էր ած իմ հարդացի առ տէղ , և բժշկեր զէն . աէր հաներ 'է դժոխոց զանչն իմ : Փրկեցեր զէն յայնցանէ , որ էջանեն 'ի գուբ :

Այս յայտնէ՝ թէ երբ լեալ իցէ այս կարդալ . կարէ հայիլ յայն՝ զոր ասաց 'ի հարկանել հրեշտակին ըզժողովութիւն . * Ես մեղայ , ես հովիւս յանցեայ . և „ դոքա ոչխարքդ զի արարին || . (բ . թագ . իդ . 17 :) և անդ ('ի համարն . 25 .) դրի՝ թէ լուաւ տէր : Կարէ հայիլ և յայն՝ զոր ասաց յետ մեղանչելոյն՝ առաջի նաթանայ . * մեղայ տեառն || . և զաւուրս եօթն ևս ինդրէր յայ զթողութիւն . և որպէս գրի (բ . թագ . ժը . 13 .) յասելն դաւթի * մեղայ տն || . ասաց ցնանաթան մարգարէ . * Եւ տէր անցոյց զքեւ զմեղս քոյ , և մի մեռցիս || : Կարէ հայիլ և յայն՝ զոր ասաց 'ի հալածիլ իւրում յաբեսաղոմայ՝ իբրև լուաւ թէ աքիտոփիկլընդ նմա է . * ցրեա (ասէ) զխորհուրդն աքիտոփիկլայ տէր ած իմ || . (բ . թագ . ժէ . 31 :) կամ յայն՝ զոր 'ի նմին աւուր ասաց վա անիծիցն սեմայ * թերես տեսցէ տէր զտառապանս իմ , և հատուցէ ինձ բարիս փոխանակ անիծից նորա || . (բ . թագ . ժէ . 12 :) Կարէ հայիլ և յայլ ու իցէ նուագս , յորս 'ի վտանգիլ իւրում 'ի փորձութեանց հոգւոյ կամ մարմնոյ՝ կարդաց առ տէր . և ողը ողորմեցաւ նմա : Իսոսին հայելով ասէ :

Sէր ած իմ հարդացի առ տէղ , և բժշկեր զէն : Որպէս թէ ասէր . յանկանիլ իմում 'ի վտանգ մեծ և անզերծանելի , և 'ի նուագիլ իմում 'ի զօրութենէ , որով գրեթէ նմանեցայ հիւանդաց 'ի վտանգ մահու եղելոց , աղաղակեցի առ քեզ՝ առ ածդդ իմ և տէր . և դու ոչ

անտես արարեր զձայն աղաղակի իմոյ . այլ լուար ինձ . և լսելովդ բժշկեց զիս . այսինքն ազատեցեր զիս 'ի վտանգէ անտի մահու :

Փոխանակ ասելոյ կեցուցեր , կամ ապրեցուցեր , և կամ ազատեցեր՝ դնէ բժշկել . իսկ բժշկեն յայտ է՝ թէ առ հիւանդս լինի . բայց քանզի հիւանդութիւնն է տրամադրութիւն 'ի մահ , կամ վտանգ և առիթ մահու , այլաբանութեք կամելով խօսիլ մարգարէին՝ հիւանդութիւն համարի զու և իցէ վտանգ մահու՝ թէ ըստ հոգւոյ իցէ , և թէ ըստ մարմնոյ , կամ զու և իցէ ծանր վիշտ ճախորդութեց . վասն որոյ և զազատիլն յայնուանէ՝ բժշկելոյ նմանեցուցանէ ասելով , բժշկեց զիս :

Եւ կամ թերես ըստ նկարագրին այս բժշկութիւն հայի յայն՝ որով եղեւ դադարումն սատակման տիրելոյ յիսրայէլ ըստ ազդելոյ գաղայ մարգարէին :

Եւ կամ ըստ ոմանց՝ 'ի մարմնաւոր հիւանդութենէ :

Եւ յոր միտս և առցի բանն , հայի յազատութիւն 'ի վտանգէ մահու . և զայս ազատութիւն կամելով առաւելես մեծ ցուցանել , յարէ զկնի և ասէ :

Տեր հանեց 'ի բժոխոյ զանձն իմ : Եւ յսու բանիւ ոչ ցուցանէ ըստ Ճառին , թէ ինքն իրապէս իջեալ էր 'ի դժոխս , և անտի եհան զնա տէր . այլ է ոճ Ճարտասանական . որով մեծութիւն առյապայ լինելոյն իբր եղեալ առաջի զնի՝ առ 'ի ցուցանել զմեծութիւն առաջիկայ իրացն . որպէս թէ եղեալ էր , 'ի բժշկելդ զիս կամ յազատելդ զիս 'ի վտանգէ մահու , կամ 'ի մեծէ նեղութենէ իմմէ կամ 'ի մեղաց իմոց , իբրեթէ 'ի դժոխոց հաներ զիս . և արդարես եթէ ոչ ազատէիր զիս , անտարակոյս լինէր ինձ գնալ 'ի նոյն 'ի դժոխս , իսկ ազատելովդ ոչ թողեր զիս գնալ անդ :

Եւ աստ դժոխք ասելով կամ ըստ եբր" . ու օն իմացեալ լինի եթէ գերեզմանն և եթէ խորխորատ սանդարամետին , այսինքն գեհեանն : Եթէ վտանգն ըստ մարմնոյ առցի՝ դժոխօք իմացեալ լինի գերեզմանն , և բառիւս անձն իմացեալ լինի այն՝ որ նշանակի բառիւս ինքն : Իսկ եթէ վտանգն առեալ լիցի ըստ հոգւոյ՝ դժոխօք իմացեալ լինի գեհեանն . և բառիւս անձն իմացեալ լինի հոգին . ըստ որում ասացեալ է մեր այլուր ('ի սաղ . ժե . 40 :) Օսոյն զայս և այլովք

բառիւք ևս յայտ առնէ մարգարեն ասելով :

Փրկեցեր շիս յայնցանէ որ իջանէն 'ի գուբ : Ի՞առիւս գուբ կամ ըստ եթը" . պօս , իմացեալ լինի այն՝ զոր կոչեաց դժոխք . ըստ որոյ այս բան զնի իթը բացա- տրութիւն նախընթացին . որպէս թէ ասէր . ոչ թողեր զիս իջանել 'ի գուբ , այսինքն 'ի գերեզման կամ 'ի գեհեան , որպէս թողեր զբազումս՝ 'ի վտանգիլ իւ- րեանց . այլ արարեր՝ զիս ոչ եղեց յայնցանէ որք եջա- նեն 'ի գուբ . կամ ոչ թողեր զիս լինել իթըն զմի յիջանողաց 'ի գուբ , այլ իթըն զմին յելանողաց 'ի գրոյ . որ է ասել . փրկեցեր զիս 'ի մահուանէ , կամ ազատեցեր զիս 'ի վտանգէ իջանելոյ 'ի գերեզման կամ 'ի գեհեան : (Օ այսմանէ տես և 'ի սաղ . իէ .)

Օսոյն զայս մեզ վայել է բազմապատիկ գոհութեամբ մատուցանել առ որդին այ , որ բժշկեաց զմեզ 'ի մահաբեր հիւանդութենէ մերմէ . եհան զմեզ 'ի դժո- խոց , և փրկեաց 'ի դատապարտութէ . քանզի առեալ յինքն զպարտաւորութի դատապարտութե մերոյ՝ կե- ցոյց զմեզ 'ի մահուանէ , եղեալ զանձն իւր 'ի վերայ մեր . ոչ ոք համարձակեցաւ յազատութիւնս յայս , և ոչ գտաւ ոք որ հեղոյր գէթ կաթիլ մի արեան վասն բժշկութե մերոյ . ոչ քահանայք օրինաց , և ոչ ղետա- ցիք , ոչ մովսէս և ոչ այլ ոք 'ի մարգարեից . միայն երկրպագելի սամարացիս այս դարման տարաւ , և ապաքինեաց զմեզ . (զուկ . Շ . 33 .) և մատնելով զինքն 'ի մահ՝ զերծոյց զմեզ : Ա իրաւորեցաւ ստե- փաննոս թագաւոր անգղիոյ թիւնաւոր նետիւ ան- բժշկելի : Յորդորեցին բժիշկք՝ զի տացէ ծծել զվերսն . բայց նա ոչ էառ յանձն . նա զի և ոչ իսկ գտաւ ոք ծծող : Յայնժամ արբոյց նմա թագուհին գեղ թմրեցուցիչ . և ինքն ծծելով զվերսն մեռաւ , և կենօք իւրովք կեցոյց զթագաւորն : Ի՞ռաւել քան զսոյն եցոյց մեզ որդին միածին . վասն որոյ և մեզ առաւել քան զամ արժան է գոհանալ զնմանէ , և փոխարինել նմա գոնէ զսէր փոխանակ կենաց նորա : Այս բան նախագուշակ իմն մարգարեութեամբ ասի և 'ի բերանոյ որդւոյն այ . որ կարդաց առ հայր 'ի խաչին . և հայրն երկնաւոր բժշկեաց զնա 'ի հարուա-

ծոց նորա , և եհան ՚ի գժոխոց զանձն նորա՝ յարուցանելով ՚ի մեռելոց . զօրմէ տես ՚ի գործու առաքելոց . (զԼ . թ . 31 :) Այս զայսպիսի բանս զգուշութքը պարտ է առնուլ ՚ի վերայ քնի՝ ըստ այնմ՝ զի էր մարդ , բայց նաև ըստ լինելոյն մարդ՝ զգուշանալի է յայսպիսի ասացուածս , զի մի մողրական ինչ իմացուած ՚ի մէջ բերցի . զի թէպէտ և ձշմարտապէս մարդ էր , բայց և ինքնիշխան տէր կենաց և մահու . նաև ՚ի վը իւր իսկ ունէր իշխանութիւն մատնելոյ զինքն ՚ի մահ , և յարուցանելոյ ՚ի մահուանէ . ըստ որում և ասաց * իշխանութիւն ունիմ զնել զնա (այսինքն զանձն իմ) և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա . (յու . թ . 18 :)

Այս բան ասի և ՚ի գիմաց աղամայ . տէր ած իմ յան կանիլ իմում կարդացի առ քեզ . և գու եկիր և բժշկեցեր զիս . հաներ և ՚ի գժոխոց զանձն իմ և ապրեցուցեր ՚ի միջոյ նոցա , որք մնալոց են ՚ի գուքն յայն յաւիտեան : Այսն այս ասի և ՚ի բերանոյ իւրաքանչիւր ննջեցելոց ուղիղ հաւատով ՚ի քն , ՚ի հանգ թիւ նոցա յարկայութեան :

Ամբ . բարոյապէս մեկնեալ զիսդիւ մեղանչեն զնէ լինել հիւանդութիւն , իսկ զանինիզ մեղանչեն համարի գժոխս . ՚ի միոյն բժշկեցեր զիս ասէ , և ՚ի միւսոյն հաներ զանձն իմ : Այս արդ զայսպափ և զայսպիսի բարերարութիւն և մարդասիրութիւնն տէ մեալ մարդարեին յանձն իւր և յանձինս այլոց՝ ու բաւական համարի ինքնին միայնակ գոհանալ զնմանէ . այլ նաև զնբա այ յորդորէ ՚ի նոյն գոհութիւն ասելով :

Դ . Աղմաս ասեն ասացէս առ զիս նորա . իսոսպավան եղերուս յիշարանի սրբանեան նորա :

Այսպիս ասեն ըստ որում աստ զնի՝ է երգել առ ած զայնպիսի բանս , որք յայտ առնեն զնորա մեծութիւնն յինքեան , կամ առ արտաքս . յինքեան՝ ըստ գերազանցութեան պէսպէս կատարելութեց նորա . առ արտաքս՝ ըստ բարերարութեան՝ զոր ազգի ազգի օրինակաւ ցուցանէ յարաբածս՝ մանաւանդ ՚ի մարդիկ . որով և քարոզի՝ թէ ինքն է տէր և իշխան ամի . յոր միա

ասեմք՝ ի պաշտամունու ժամերգութեանց՝ թէ * ի վը
ու ամենայնի բարերարութեր իւրով իշխանութիւնի ունի ։
զորմէ և այլուր ունիմք խօսիլ. լրդ ու իցէ բանք
սաղմոսաց եթէ իցեն շուրջ զգերազանցութեն այ .
սաղմոս օքնութեան ասին . իսկ եթէ իցեն շուրջ զբա-
րերարութեք, սաղմոս գործութեան . և քանզի աստ բանք
մարգարէին հային՝ ի բարերարութիւն այ՝ զատշառ աւելն
առնու ՚ի սմին տեղուջ փոխանակ գոհացողական
սաղմափ յասելն :

Աշման ասոցէն պն թէն նորա : Ուր թէս ասելով իմանայ
զայնոսիկ՝ ողբ համցացեալ են առաջի այ . վասն որոյ
ոչ ասէ լոկ թէն, այլ թէս նորա, այսինքն այ , իւր յայն
սակա առ սոսա խօսի, զի սորա ևս գտեալ էին և
գտեալ են յայ զբժշկութիւն ըստ հոգւոյ և զիրկութի
մեծ : Կա և զի սոցա վայելէ արժանապէս սաղման
ասելով գոհանալ զայ : Ուրթ է նրվք իմանալ աստ
և զհրեշտակս ըստ լամբ” . նա և զբահանայս տեառն,
ևս և զժողովուրդս այ, ոչ զի սուրբք են, այլ զի այ են,
որով և նր ասին . զօրս առ առաւելն ևս յորդորել կա-
մելով մարգարէին ասէ :

Անսուրացն եղբառա յշառակի ոքնութե նորա : Վստանօր
բառս յիշառակ՝ կարէ հայիլ յերկուս, այսինքն՝ կամ
առ նրա ողբ խոստովան լինին, և կամ առ անձ՝ առ որ
խոստովան լինին . կամ պարզագոյնս ասացից . այս
բառ կամ հայի ՚ի յիշել նրց զանձ, և կամ հայի ՚ի
յիշել այ զնորս : Եթէ առ նրս հայեցի, շաբազբութի
բանին պարզի այսպէս . ով սուրբք այ, խոստովան եղե-
րուք նմա՝ յիշելով զրբութիւն նորա . և այսմնապաստէ
թարգմանութիւնն քաղցէական, ուր գնի այսպէս .
* խոստովան եղերուք ան, և յիշեցէք զրբութիւն
նորա ։ որպիսի է և թարգմանութիւն սիւմաքոսին : Եւ
ըստ այսմ բառիւս ոքնութենի իմանի մեծվայել չութիւնն
այ, կամ ամենակալ զօրութիւն նորա որբարար և ազատ-
արար ըստ այնց բանից՝ զրոս խօսեցաւ ՚ի նախըն-
թաց երկոսին համարսդ : Եւ միտ բանին լինի այս .
՚ի սաղմոսելն ձեր առ անձ՝ քարոզեսջիք և յիշատա-
կեսջիք ՚ի սաղմոսս ձեր զմեծ վայելութիւնն այ, կամ
զգործս ամենակալ և ազատարար զօրութիւն նորա, այն
է՝ բարերարութիւն նորին :

Խակ եթէ բառս յիշտուն՝ հայիցի առ ած, շարադրութիւն բանին պարզի այսպիս . խոստովան եղերուք այ վասն ունելոյ նորա զյիշտատակ մեր, այսինքն վասն յիշելոյ նորա զմեզ : Եւ ըստ այսմ բառու որբենուն՝ որ լեալ է իբր յատկացուցիչ յիշտուն՝ բառիդ՝ զնի իբր ածական՝ փոխանակ բառիս սուրբ : Եւ միտ բանին լինի այս . ՚ի սաղմառեն ձեր առ ած՝ գոհասաջիք զարբութենէ նորա վասն յիշելոյ նորա զմեզ . կամ՝ ՚ի խոստովանին ձեր՝ յայտնիք քարոզեսջիք՝ թէ յիշտատակ նորա՝ որով յիշէ զմեզ՝ է յիշտատակ սուրբ և բարի, կամ յայտնես ջիք՝ թէ նա յիշէ զմեզ յամի իւրով ամենասթ յիշտակութը :

Ուր արժան է մեզ ՚ի միտ առնուուլ, միանգաւմայն և զարմանաւլ ընդ յիշտատակութի մեր և ընդ յիշտատակութ այ . մեք՝ որ միշտ և յամի կարօտ եմք օգնականուեն այ և բարերարութեն նր՝ բազում անգամ մոռանամք զնա, և երբեմն բնաւ չյիշեմք . խակ ած՝ որ ոչ երբեք և ոչ յիմիք կարօտի մերումն բարւոյ, միշտ յիշէ զմեզ : Եւ զայս յիշելս ոչ է պարտ իմաննալ ըստ ձանաշելոյ այ և ըստ տեսանելոյ նր զմեզ . զի զայտմանէ չիք տարակոյս . որովշետև ձանաշելով նորա եմք՝ որ ինչ եմք յեռթեան, և տեսանելով նորա եմք՝ զիարդ և իցեմք՝ ի գոյութեան . այլ պարտ է իմաննալ ըստ ինուամելոյ նորա զմեզ . իբր զի յամի և յամ ժամ զբարին մեր կամելով և առ բարին մեզ առաջնորդելով ասի յամի

յիշել զմեզ :

Վ.յս յիշելս այ մեծ ևս եղել յայնժամ, յորժամ արժանի էաք խօսառ մոռացեալ լինելոյ . և նա փոխանակ մոռանալոյ՝ առաւել ևս ՚ի միտ եթեր զմեզ և յիշեաց զմեզ, առաքելով առ մեզ զմիածին որդին իւր . որով և յայտնի եցոյց մեզ, թէ ոչ է մոռացեալ զմեզ զարժանիս մոռանալոյ . այլ յիշելով յիշէ զմեզ, և կամի զմեզ : Վ.յլ արդ եթէ յայնպիսի վիճակի ոչ մոռացաւ զմեզ, այլ այսպիսի օրինակաւ յիշեաց . քանի ևս յետ այնորիկ :

Վ.յս բան այլազգ ևս կարէ մեկնիլ, առեալ զբառդ յիշտուն՝ երկրորդահայեցաբար՝ այսինքն փոխանակ անուան որ նշանակի յիշտատակաւ . քանզի ՚ի հասարակի խօսելով յորժամ ասեմք . թէ յիշտատակի այս ոք .

կամ յիշեցաք զնա , կամ յիշատակ նորա կայ 'ի քաղաքի , և ն . այս բանք ցուցանեն 'ի մէջ բերել զանունն . որպէս թէ ասէաք , 'ի մէջ բերի անուն այսր ուրուք , կամ 'ի մէջ բերաք զանուն նորա , կամ անուն նորա կայ 'ի քաղաքի : Եւ այս վասն այսորիկ՝ զի 'ի տալ զանուն ուրուք՝ այնու յիշատակի և անձն . նա և զի յիշատակեն զոք՝ է 'ի մէջ բերել զանուն նորա : Ոմնն իրի յորժամ առաքեաց ած զմնվսէս առ որդիսն իսրայէլի , ասէ ցնա . * այսպէս ասասցես ցորդիսն իսրայէլի . որ էն առաքեաց զիս առ ձեզ . . . այս է անուն իմ յաւիտենական , և յիշատակ յազգաց յազգս || . (ելից . դ . 15 .) որպէս թէ ասէր , յիշատակել ձեր զիս լինիցի 'ի մէջ բերելով զանունս իմ : Եւ ըստ այսմ յասեն խոսութեան եղբարակ յէշտահի սրբանէն նորա , միտ բանին լինի այս . խոստովան եղերուք անուան նորա սից՝ որ է ասել . գոհութք սաղմոսես ջիք առ ած , 'ի բերան առնլով զանուն նորա . և ցուցանելով զնոյն զայն անուն նորա լինել մեծ և սքանչելի . պատմելով միանգամայն թէ զինչ արար և զինչ առնէ նա , որոյ անունն է եւհօգահ . այսինքն որ էն : Օ այսոփիկ եղեալ մարգարէին 'ի մէջ բերէ այժմ զերկեակ գործս այ՝ հայելով առ հակակայս , այսինքն առ մոռացօղս այ և առ յիշօղս նորա , առ մինչըրտմութիւն նորա ցուցանելով կամ զմա՞ , և առ միւսն զբաղցրութի կամ զկեանս . ուստի ասէ :

Դ . Ա բ ո մ ո ւ թ ի է 'ի բ ա ր ի ո ւ թ ի ն ո ր ա . և ի ւ ա ն չ է ն 'ի հ ա ց ն ո ր ա

Ա բ ո մ ո ւ թ ի է զեզումն բարկութեան , կամ սաստկացեալ բարկութիւն . իսկ բարկութին է կիրք վրէժինդրութեան : Ա յ լ 'ի գիրս երբեմն բառդ սրբանութի զնի փոխանակ գործոց բարկութեան . յոր միտս զնի և աստյալն :

Ա բ ո մ ո ւ թ ի է 'ի բ ա ր ի ո ւ թ ի ն ո ր ա : Ա յ ս ի ն ք ն 'ի բ ա ր կ ա ն ա լ այ 'ի վերայ ուրուք կամ 'ի վերայ ազգի վասն մոռանալոյ նորա զած կամ վասն հեռանալոյ 'ի նմանէ 'հասանէ առ նա սրտմութիւն 'այսինքն գործ բարկութեան , որ է պատիժ պատուհասի , առ 'ի խնդրելոյ ըզվրէժ շարեացն , որոյ վասն արժանի գտանի նա այնմ

պատժոյ . զոր օրինակ՝ 'ի բարկանալ այ՝ 'ի վերայ այնք գործոյ՝ զոր արար դաւիթ՝ 'ի թռւել զժողովուրզն՝ Եհաս առ նա սրտմտութիւն բարկուե , ցործ գործ բարկուե՝ այն է սատակումն ժողովրեանն : Խւ որ մեծն է՝ 'ի բարկանալ այ՝ 'ի վերայ աղամայ , սրտմտութիւն նորա Եհաս յաղամ և յորդիս նորա առ հասարակ՝ յասելն . * փոխանակ զի լուար ձայնի կնոջ քո . . . անիծեալ . . լիցի երկիր՝ 'ի գործոյ քոյ . սրտմտութիւն կերիցես զնա . . զնոց աւուրս կենաց քոյ . փուշ և տատասկ բու . . սուսցէ քեզ , և կերիցես զբանջար վայրի . քրտամբք երեսաց քոյ կերիցես զհաց քոյ , մինչեւ դարձցիս . . յերկիր , ուստի առար . զի հող էիր , և 'ի հող . . դարձցիս . . (ծնն . դ . 17 :) աւասիկ սրտմտութիւն՝ 'ի բարկութեանն այ :

Խւ թէպէտ յած չեթ բարկութիւն , բայց յորժամառ նէ զայնպիսի ինչ զորպիսի առնեն բարկացողք՝ յայն գործ հայելով բարկութիւն դնեմք՝ 'ի նմա , և ասեմք բարկանալ . Խսկ այս բարկութիւն է նոյն խսկ վրեժ ինդիր արդարութիւնն այ , որ իրօք զոյ 'ի նմա . Ո՞մըթ է զայս բան սազմոսիս դերանուամբ՝ 'ի մէջ բերելըստ առաջին զիմաց՝ 'ի մեզ վերածելով այսպէս . 'ի բարկանալ այ՝ 'ի վերայ մեր՝ հասանէ մեզ զպատճեմ՝ 'ի մեզ զգործոյ սրտմը տութեանն այ՝ այսինքն զպատիժ պատուհասի , յիշեմք այնու և իմանամք թէ ած բարկացեալէ՝ 'ի վերայ մեր , թէ և վսկ առաքէ մեզ զպատիժու ոչ առ 'ի զատապարտել զմեզ , այլ առ 'ի կեցուցանել , զի պատժէ՝ զմեզ յաշնարհի աստ ոչ առ 'ի պատժեալ մնալ , այլ առ 'ի զգաստանալ , և առ 'ի կարդալ առ նա , և զըտանել զայցելութիւն և զօնակութիւն նորա , մանաւանդ թէ ընդունիլ և ունիլ զկեանս , զի այս է կամք նորա . ըստ որում կամի զի կեցցուք և մի կորի-

ցուք : { Յայն ակնարկելով յարէ զինի և ասէ :

Խւ հէտեւ էն 'ի կամաց նորա : Խամի ասել . որպէս՝ 'ի բարկանալ այ՝ հասանեն գործք սրտմտութեան , պատիժք մեծամեծք , ևս և մահ խսկ զլիսովին , սոյնպէս և 'ի կամիլ նորա , այսինքն 'ի համիլ կանաց նորա , ժամանեն առ մեզ բարիք , ևս և կեամք ըստ հոգեորին և ըստ մարմնաւորին . * քանզի կենաց և մահու զու ու .

Նիս իշխանութիւն, ասաց իմաստունն . իմաստ . ժկ .
13 :) զի յիշխանութեն նորա է, մահ՝ ըստ բարիութեն,
և կեանք՝ ըստ բարեհաճուեն . վասն զի որպէս 'ի բար-
կանալ նորա պատիժ մահու տուաւ մարդոյ, սոյնպէս
և 'ի հաճիլ նորա 'ի փրկել կեանք յաւիտենական,
ոչ միայն ըստ հոգւոյ այլ և ըստ մարմնոյ 'ի ձեռն
յարութեան :

Վ. Աստ զիտել արժան է, իբր զի յասելն՝ 'ի կո-
մաց նորա են կեանք, այսու ցուցանի և այն՝ թէ յուշ
կամաց նորա է, մահ՝ և այլ մեծամեծ պատիժք . զի
ած զրեթէ ոչ կամելով կամ այսպէս ասացից՝ ակամայ
ետ զմահ . և ակամայ թոյլ տայ դալ պատժոց 'ի վր
մեր . իսկ զվարձս և զայլ բարիս՝ մանաւանդ զբարծ-
քութիւն կենաց յօժար կամօք տայ մեղ . միայն թէ մեք
մի ընդզէմ զարձուք նմա : | նիքն առնէ՝ որ բարին է,
'ի ձեռն այլոց առնէ՝ որ պատիժն է . զի միշտ զբարին
կամի, իսկ չար առնել (այսինքն պատժել) ոչ տանի
սիրտ իւր :

Հայս միտու առեալ զսոյն և ծործորեցւոյն ('ի մեկն .
մատ . գլ . իբ .) 'ի վերայ բանին՝ զզր ասաց ք'ս, կապե-
ցէք զզրու ձեռս, զրէ այսպէս . * զբարիսն չնորհէր
.. ինքնին առանց միջնորդի . որպէս և զիրախութիւն
.. հարսանեացն ինքնին կազմեաց, և այժմ 'ի տան-
.. ջանս՝ սպասաւորօք վարի հրեշտակօք . որպէս զի ի-
.. մասցուք, թէ 'ի կամացն կեանք են ըստ մարդա-
.. րէին . իսկ 'ի տանջելն՝ 'ի մէնջ բռնադատի || :

Վ. Ալաբանորին, բարիութիւնն այ՝ որ հեղանելոց էր 'ի
վերայ մեր վասն մեղաց մերոց՝ դարձաւ 'ի վերայ որդ-
ւոյն այ . զի տեսեալ հօրն երկնաւորի՝ թէ նա յանձն
առեալ է զերաշխաւորութիւն մեր, և բարձեալ է 'ի վր
իւր զմեղս մեր՝ դարձոյց զբարկուի իւր 'ի վերայ նորա,
և 'ի բարկութէ անտի՝ որ էր վ'ս մեղաց մերոց՝ էհեղ 'ի
վերայ նորա զարտմատութիւն՝ այսինքն զպատիժն զայն
մեծ . ըստ որում և եսայի ասէ . * խրատ խաղաղութեն
.. մերոց 'ի նմա || . (եսայ . ծգ . 5 .) որպէս թէ ասեր,
զայն խրատ՝ այսինքն զայն պատիժ, զզր տալոց էր մեղ՝
նմա ետ ած . * յիւր որդին ոչ ինայեաց այլ վասն
.. մեր ամեցուն մատնեաց զնա || . (հռովմ. ը . 32 .) և
այսու այն պատիժ՝ որ լինելոց էր պատճառ խաղաղա-

նախոյ մեր ընդ այ՝ 'ի նմա եղեւ . և այս վասն բարկութիւն զոր ունէր ած 'ի վերայ մեղաց մերոց : | յւ որպէս 'ի բարկութենէ նորա եղեւ սրտմտութիւն նորա 'ի վերայ որդւոյն , սոյնպէս և 'ի կամաց բարեհաճութեան նորա եղեւ կեանք այսինքն յարութիւն նորա փառօք :

Այս այս բան ասի և 'ի բերանոյ ննջեցելոց . որք գեռես չեն ընկալեալք 'ի հանգիստն յաւիտենից . քան զի դեռ սրտմտութիւն է 'ի նոսա 'ի բարկութիւն այ . զի թէպէտ և թողան մաշուշափ մեղք նոցա , բայց տակաւին 'ի նեղութեան են առ 'ի պատիժ այնց թողեալ մեղաց , որոց վասն աղաշեմք զանձ ասելով * թող ամեղա մեր ննջեցելոց || . այսինքն այնպէս թող՝ զի մի ևս կրեսցեն ինչ նեղութիւն վասն նոցա . յոյր սակս և ինզրեմք հանգուցանել զնոսա յանմահական և յանտրտում 'ի կեանս : | յւ 'ի կամիլն այ , այսինքն 'ի համիլնորա 'ի մոտանել նոցա յայն կեանս , ունին ասել սրտմտութիւնք էր 'ի մեղ 'ի բարկութէ քում մէ , և այժմ կեանք անմահական 'ի կամաց քոց :

Յայլիմն միտս տանի վարդան զառաջիկայ բանդ . և զըէ այսպէս . * մեր բարկութիւնն 'ի սրտմտութէ է ' որ գործովէ . այն 'ի բարկութէ սրտմտութիւն , որ է ' բանիւ սպառնալն . զի այնու կեցուցանել կամի . նոյնպէս և աստեն նեղութիւնք 'ի կեցուցիչ կամաց նորա է || : Օ այսոսիկ եղեալ մարգարէին՝ հետևեցուցանէ և ասէ :

Ե.  Երեխոյ հանդիշեն լալիւ . առաւասուս եղիշի առ բախութ :

Ի առդ լալիւ կրկնակի առեալ լինի աստ . զյականաբար և ածականապէս : Դայականաբար փոխանակ բառիս լալիւն , կամ լայ : | Ծականապէս՝ փոխանակ բառիս լայոց , որ է ընդունելութիւն լամ բային . քան զի ըստ ոճոյ լեզուիս մերոյ ընդունելութիւնք աւարտեալք 'ի լամ ունին զզօրութիւն ընդունելութեց աւարտելոց 'ի օշ . որպէս ընդունելութիւնքս՝ բառնալիք , առնելիք , կրելիք , խօսելիք , ևն , դնին փոխանակ ընդունելութեց՝ բարձօղք , առնօղք , կրօղք , խօսօղք , ևն . ըստ այսմ և աստ բառդ լալիւ ըստ որում է ընդունելութիւն լամ բային՝ ըստ մերումն ոճոյ դնի փոխա-

նակ ընդունելութես լայօդ : Վասի * ըստ մերումն ու
ոյ այլ յայլ թարգմանութիւնս այս բառ ոչ դնի
իրը ընդունելութիւն , այլ իրը գցական անուն՝ որ է
լաղին կամ լայք . և սակայն այն ևս կարէ առեալ
լինել փոխանակ անուանս լայօդ . վասն զի լալինքն
են գործք լացողաց . և զի ըստ ձարտասանից անուն
գործոյն դնի փոխանակ անուան գործողին , աստ ևս
անունս լալեանէ՝ ըստ այսմ առման դնի փոխանակ ա-
նուանս լայօդ :

Խակ բառս հանգէլ՝ ըրեքինս ունի յարաբերութիւն .
մի՝ յոք : Եկողորդ՝ յոք : Երրորդ՝ յոք : Չորրորդ՝
յոք և յոք : ըստ առաջնոյն նշանակէ սոսկապէս կալ
ուրեք , կամ լինել յիմիք , կամ յարիլ յինչ , և տեսել
ի նմա , կամ նստիլ . յոր միտս ասի զքարէ հանգչիլ
յերկրի : Բոտ երկորորդին նշանակէ գաղարիլ՚ի գոր-
ծոյ իմեքէ . յոր միտս ասի զայ հանգչիլ՚ի գործոց
իւրոց :

Բոտ երրորդին նշանակէ կալ անդորրութիւն և վայել
մամբ խաղաղուն . յոր միտս ասի զայ հանգչիլ յաթոռ
փառաց , և զայց հանգչիլ՚ի փառս : Բոտ չորրորդին
նշանակէ ազատանալով՚ի նեղութէ իմեքէ վայելել՚ի
խաղաղութեան . և այս նշանակուի յաճախ է ՚ի գործ-
ածութեան : Օյյոտափկ եղեալ՝ մատիցուք ՚ի մեկնու-
թիւն առաջիկայ բառիդ , յորում կայ մըութի ինչ՝
հայելով՚ի բառդ հանգէլը յասելն :

Բնդէ երեկոյ հանգիցն լալիւ . առաջուստ եղիցի ուրախութիւն :
Եյս բան չորեքինս կարէ մեկնիլ : Բոտ առաջին մեկ-
նութեան՝ բառս երեկոյ կամ ընդ երեկոյ՝ նմանութիւն .
ուեալ լինի աստ , փոխանակ տրտմազին ժամանակի ,
կամ փոխանակ անյաջողութեան կամ ձախորդութեան ,
կամ փոխանակ այնպիսի իրի և ժամանակի , յորում
ոչ լինի ուրեք հանգչին , այլ լալ : Եւ ըստ այսմ նաև
բայդ հանգէլ առեալ լինի ըստ առաջին յարաբերու-
թեան . որով և միտ բանին լինի այս . այսինքն թէ լա-
լիւնք ոչ ուրեք հանգչին , այսինքն ոչ յիմիք լինին՝
եթէ ոչ ՚ի տրտմազին իրս . կամ թէ ոչ երեկը լինի
լալ՝ եթէ ոչ ընդ երեկոյս , այսինքն ՚ի ժամանակի
տրտմութեանց կամ յառիթս ձախորդութեց . վասն զի
ոչ ոք լայ՝ բայց եթէ ՚ի տրտմութեան ժամանակի , կամ

՚ի ձախորդութեան առիթս , որք վասն մթացուցանելոյ զմիտո կամ զզգայութիս՝ օրինակին երեկոյիւ : Իսկ որոց դիալաւ երբեմն և յուրախութեան լալ՝ նոքա առարկայ լալոյ ունեին՝ ոչ զայն՝ որ էր ուրախութեան իր , այլ զայն՝ որ է լեալ տրտմութեան առիթ . և լալ նոցա եզերի յայն առիթ ևեթ : Օ որօրինակ կորու սեալ ուրուք զիր ինչ եթէ ՚ի դասնելն ուրախացեալ լացցէ , այն լալ եզերի ՚ի գտեալն՝ ոչ ըստ որում ուրախացուցիչ՝ այլ ըստ որում արտմեցուցիչ . այսինքն ըստ որում յառաջն էր կորուսեալ և լեալ պատճառ տրտմութեան : Այսպէս և որք ՚ի ինզրելն ինչ յայ կամ յայլոց՝ լան , առարկայ լալոյ նոցա ոչ է այն որ ինզրի՝ զի այն է ուրախացուցիչ , այլ այն՝ որ փաղանշանեալ մինի ՚ի ինզրելն . այսինքն այն՝ որ ոչ է տրւեալ՝ կամ զի զուրկ է անտի . վասն որոյ և լալ նորա եզերի ՚ի զուրկ զոյն : Վասնապէս եթէ ոք յօրհ նաբանելն զած ուրախութեամբ , կամ ՚ի ցնծայն առաջի այց՝ սկսանիցի լալ և յարտասուս ցնդիլ , այն լալ նորա հայի յայս՝ զի չե ևս ժառանգէ զնա որոյ առաջի ցի ցնծայ :

Այս ամենայնի զշետ դայ՝ թէ լալն լինի միայն առթիւ տրտմութեան . կամ անյաջողութեան և ձախորդութեան , և այն միայն է իբր տեղի և ժամանակ , այսինքն առիթ և միջոց լալոյ . և զի որպէս ասայաք , այսպիսի առիթք՝ երեկոյի նմանին , վասն այսորիկ նմանութեք իսօսելով մարգարէին ասէ՝ Շնդ երեկոյ հանդէն լալք : Այսմ մեկնութեան նպաստեն և թարգմանութիւնք այլոց ազգաց , յորս փոխանակ հանդէն բային այնպիսի բառ դնի՝ որ նշանակէ յամել կամ մանաւանդ օթեանիլ . որպէս դնի յեբր՝ . որով ցուցանի թէ ՚ի տրտմական և ՚ի տիտուր ժամանակս օթեանը առնեն լալիւնք . որ է ասել . միայն յառիթս տրտմութեան տեղի ունին լալիւնք :

Այդ որպէս զերեկցէ ասացաք , նոյնպէս և զառաւոտէ պակրտ է իմանալ , նմանութեամբ առեալ զառաւոտն փոխանակ այնք՝ որ է առիթք բարւոյ կամ միջոց յաջողութեն . զի ուրախութիւնն միայն ՚ի վերայ բարւոյ և յառիթս բարւոյ լինի , և ոչ երբեք ՚ի վերայ չարիք՝ ըստ որում չար , և ոչ բնաւ յառիթս ձախորդ :

դութեան կամ նեղութե՝ ըստ որում ձախորդութիւն կամ նեղութի, իսկ թէ ոմանք 'ի կրելն զար, այսինքն զպատիժ, կամ յանկանին 'ի ձախորդութի, և կամ 'ի տանջիլն՝ ուրախ լինելին, այն ուրախանալ նոցա ոչ եղերէր 'ի չարն կամ 'ի տանջանս՝ ըստ որում տանջանք, այլ եղերէր յայն՝ որ էր առարկայ ուրախութեն, կամ որ գչետ գայր չարի, կամ որ հետեւէր տանջանաց, որպէս լիներ ուրախանալ մարտիրոսաց, և այլց ոմանց. և այն որ առարկեալ լիներ կամ որ հետեւէր՝ էր իբր առաւօտ յաջորդեալ երեկոյի, ուստի և 'ի նմա էր ուրախութիւն նոցա. և յայս միտ չշմարտի ասել, թէ առաջարկութելից ուրախութեան. այսինքն թէ 'ի ժառանգութեան բարւոյ կամ 'ի բան բարւոյ՝ որ օրինակի յառաւօտ, եղիցի ուրախութիւն:

Ոստ երկրորդ մեկնութեան՝ այս բան ցուցանէ՝ թէ ած ոչ երկար առնէ զնեղութիւնն 'ի վերայ ծառայից իւրոց կամ 'ի վերայ ժողովրդեան իւրոյ, այլ կարճ ժամանակաւ, մինչեւ առժամանյն հասուցանել առ նոսա և զուրախութիւն. իբր զի յետ փոքր մի նեղութեն սփոփե զնոսա: Ուսոյլ տայ արգարե գալ նեղութեց և լալեաց. բայց գալուստ այնր լալեաց ոչ է վասն երկար տեւելոյ կամ երկար ժամանակաւ բնակելոյ, այլ վասն առ ժամանակ մի օթեանելոյ, հանգոյն անցաւոր սպանդխատի՝ որ գիշեր մի հանգիցի և ընդ լուսանալ առաւօտու մեկնեսցի: Եւ յայս միտս կամի ասել. լալիւնք ոչ յամեսցեն երկար, այլ փութով վերջասցին. զի յերեկոյի օթեանեսցին, և 'ի լուսանալ առաւօտու, այսինքն թէ յետ սակաւու եղիցի ուրախութիւն:

Ոստ երրորդ մեկնութեան՝ (որ համարի ընտել,) այս ասացուած հայի 'ի հասարակական լինթացս կենաց մարդկան, յորում զինի արտօմութեան յաջորդէ ուրախութիւն. և զի այս առաւելապէս սպատաշի յերեկոյի և յառաւօտու, վասն այսորիկ զայն բերէ 'ի մէջ. իբր զի յորժամ մարդիկ 'ի լացս են և 'ի զառն ինչ տրամութեան տուայտին, 'ի հասանել երեկոյի 'ի քուն ըմբռնեալ ոչ ես լան, և յորժամ առաւօտ լինի՝ փոքր մի մոռացեալ զայն զիւրեանց տրտմութիւն, և 'ի միտ բերեալ զբերկրալիս՝ սկսանին ուրախանալ: Երբեմն

ևս պատահի՝ զի խսպառ մոռանան , և միսիթարեալ մնան , ուստի և լցեալ լինի առ նոսա այս բան . այս ինքն թէ ընդ երեկոյս հանգիցեն լացով և լացը նց , և ընդ առաւօտու եղիցի նց ուրախութիւն : Խակ երեւն առ սակաւ սակաւ լինի այս մոռացութիւն և ուրախութիւն յա ջորդութիւն . բայց այսու ամիւն՝ լցեալ լինի և առ այն պիսիս այս բան . ընդ երեկոյս փոքր մի հանգիցեն լացողք , և առաւօտու լինիցի նոցա փոքր մի ուրախութիւն՝ մինչեւ խսպառ բարձրի՝ ի նոցանէ լայն և տըրտ մութիւնն :

Դայս անիւր հողովի հասարակօրէն կեանք մարդկան , և սովին խսկ կարեն մնալ՝ ի կեանս . իբր զի յու և իցէ տրտմութիւնս տևեալ կամ յամեալ հետզէտէ մոռանալով զայն , և յուրախութիւն անցանելով անցուցանեն զկեանս . ըստ որոյ ասի աշխարհօրէն . * անցուկը մոռցուկ կըլլայ || : Խակ եթէ չեր այսպէս , այսինքն եթէ լինէր մոռացութիւն կամ բարձումն տրտմութեց կամ տրտմական իրաց , և չյաջորդէր ուրախութիւն ինչ , կամ այսպէս ասացից՝ եթէ չյաջորդէր երեկոյի առաւօտ՝ ո կարէր ապրիլ : Խակ յաջորդելով՝ այնու խակ՝ ոյք հաւատարիս ծառայքն են այ՝ յառաջանան ՚ի բարին . իբր զի օր ըստ օրէ զարդանան ՚ի գիտութիւնովերական կենաց , և լիանան յառաքինութեան գործու . և իւրաքանչիւր օր կենաց նոցա ըստ զարդանալոյ նոցին թուեալ լինի առաջի այ՝ յառաւօտէ յերեկոյ , և յերեկոյէ յառաւօտ . որով և կատարի ՚ի նոսա այն՝ որ ասի : * Եւ եղեւ երեկոյ և եղեւ վաղոր ՚ գեայն օր մի || . և ապա օր երկրորդ , մինչեւ ցեօթներորդ . յորում ասի՝ և ետես ած զամ զոր արար ՚ի նոսա , զի բարի է : Հայնժամ հասցէ նոցա յեօթներորդումն անդ աւռուր՝ այսինքն յաւուրն յաւիտենականութիւն առաւօտ անանց և անպատում ուրախուեւ : Ի յսոքիկ երկու մեկնութիւնք՝ այսինքն երկրորդն և երրորդն զնին իբր հետեւութիւնք նախընթաց համարոյն . զի եցոյց անդ մարդարէն թէ ած ՚ի բարկանան պատժէ՝ առաքելով զնեզութիւն ինչ կամ զտրտմութիւն , խսկ ՚ի կամին և ՚ի համիլն տայ զիկեանս կամ զնորդութիւն կենաց , կամ զբերկրութիւն ինչ՝ որ իցէ կենաց ախորժական : Ի յսոցիկ կամելով հետեւցուցա-

նել , կամ մանաւանդ զսոյն կամելով բացատրել՝
ասէ աստ , թէ ած այնպիսի ձանապարհաւ առնէ զայս
յաշխարհի աստ՝ մինչեւ ընդ պատժելն՝ և միիթարէ :
Ի յսր ամի՞ զոր ասացաք՝ բազում օրինակ գտանին 'ի
ար գիրս . զմին տեսյերեմիա . (զլ . շ . ծայրէ 'ի ծայր .)
թէ զիարդ վարեցաւ ած ընդ իսրայէլացիս 'ի ժամա-
նակս երեմիսյ : Ծես և 'ի գիրս իմաստութեան (զլ .
ժք . 1 . մինչ 'ի վերջին համարն :)

Պատ չորրորդ մեկնութեան՝ այս բան կարէ ուղղակի ըս-
տառին հայիլյայն հարուած մահուն , զոր էած տեր
'ի վերայ իսրայէլի . քանզի որպէս զրի . (թ . ժադ .
ինք . 15 .) * ետ ար մահ յիսրայէլ յառաւօտէ մինչեւ
յշաշաժամ , և սկսու սատակումն 'ի ժողովրդեան || ,
և մնացորդ այնր սատակմանն տեեաց մօտ յերեկոյ .
և * մեռաւ 'ի ժողովրդենէ անսի 'ի զանայ մինչեւ
յըերսաբէլ եօթանասուն հազար արանց || : Եւ ա-
պա * ձգեաց հրեշտակ ան զձեռն իւր յերուսաղէմ
ապականել զնա : Եւ յաղաշել գաւթի զտէր՝ ա-
ռաքեցաւ առ նա զադ , որ և ասաց ցղաւիթ կանդ-
նել զսեղան 'ի կալն ունայ . և 'ի կատարել նորա ըզ-
հրահաննն , * լուաւ տեր երկրին , և արգելաւ սատա-
կումն յիսրայէլէ || : Եւ այս աղետալի անցք որպէս
յայտնի տեսանի յընթացից պատմութեն ածաշնչին ,
մօտ ընդ երեկոս դադարեցաւ իսպառ , որով և ընդ ե-
րեկոս հանգեան և դադարեցան լալինք . և յաջորդեաց
առաւօտու ուրախութիւն և միիթարութի :

Հարմարական մեկնութք բազմաց պատկանի այս բան .
զորոց զոմանս թուէ վարդան . աւասիկ երուսաղէմ
լուեալ զսպանայիսն սափսակայ 'ելաց , և ննջեաց .
և առաւօտուն եղեւ ուրախութիւն 'ի տեսանել նորա
զասորիսն սատակեալ : { } երեկոյն լուաւ եղեկիա ըզ-
բօթ մահուն իւրոյ . ելաց և հանգեաւ , այսինքն նըն-
ջեաց . յառաւօտուն լուաւ 'ի բերանոյ եսայեայ զա-
ւետիս կենաց , և ուրախի եղեւ :

Ի յլաբանօրէն , յերեկոյի խաչելութեան հանգեան լա-
լիք , այսինքն աղետալի և ցաւալի չարչարանք տեառն
մերոյ . և յառաւօտու միաշաբաթին եղեւ ուրախութի
յարութեան նորա . ըստ որոյ ասէ բարսեղ վարդապետ
('ի մեկն . մարկ . զլ . ժք .) * յերեկոյի թաղեցաւ

, քո , և յառաւօտուն յարեաւ . զի լցցի մարգարէու
թիւնն , որ ասէ . յերեկոյի հանգիցեն լալիք . առա-
,, լոտուց եղիցի ուրախութիւն :

Այնպէս ըստ առաջին նշանակութեան՝ զոր եդաք 'ի
վերոյ , յերեկոյի խաչելութեանն քոփ եղեն լալիք . զի
արարածք ամ * 'ի վերոյ նորա կոծ (առին) իբրև 'ի
,, վերայ սիրելոյ . . . և աշխար իբրև 'ի վր անդրան-
,, կան . . և յառաւօտու յարութեան եղեւ նոցա ուրա-
խութիւն : Դարձեալ յերեկոյի անդ կային կանայք և
առաքեալք և այլք բազումք 'ի լալիքն . և յառաւօ-
տու կիւրակէին աւետարաննեցաւ նոցա ուրախութիւն .
և լցաւ 'ի նոսա բանն այն . * տրտմութիւն ձեր յուրա-
,, խութիւն եղիցի || . (յովէ . ժդ . 20 :) Դարձեալ յուրա-
որում զրէ բարսեղ վարդապետ . ('ի մեկն . մարկ .
դլ . ժդ .) * որչափ գիշերն էր՝ ընդ զայթակղութք-
,, անկեալ կային (առաքեալքն .) իսկ յառաւօտուն
,, տիրեաց զղջունն և ապաշաւ || :

Դարձեալ , ընդ երեկոյս հին օրինաց՝ առանց քոփ
մտածեալ , էին լալիք գուշակիչք յաւիտենական լա-
լւաց . իսկ յառաւօտու նոր օրինաց՝ քոփիւ մտածեալ
ուրախութիւն առ յաւիտենական երանութիւն :

Երածաբար , (ըստ երրորդ նշանակութեան) յերե-
կոյի աստի կենաց , այսինքն 'ի ժամ մահու իւրա-
քանչիւր ընտրելոց՝ հանգիցեն նոքա իբրև լացօղք
նոյնպէս հանգիցեն և լալիւնք նոցա և ձկնութիւնք .
իսկ յառաւօտու հանդերձեալ կենաց ժառանգու-
թիւն անեղծ և անթառամ ուրախուն . * զի առ ժա-
,, մայն յաձախութիւն թեթև նեղութես մերոյ 'ի յա-
,, ւիտենականն առաւելուն՝ զմեծութիւն փառացն գոր-
,, ծէ 'ի մեզ || . (բ . կոր . դ . 17 :) Օ որ իբր մատամք
ցուցանելով երանելոյն պետրոսի աւետարանէ հա-
ւատացելոց ունել կենդանի յօյս * (յայն) յանեղծ
,, և յանարատ և յանթառամժառանգութիւն . որ պա-
,, հեալէ (ասէ) յերկինս 'ի ձեզ . որ զօրուքն այ պա-
,, հեալ էլք հաւատովք 'ի պատրաստեալ փրկութիւնն
,, յայտնեալ 'ի յետին (յայս) ժամանակս . որով ու-
,, րախ լինիջիք , որ այժմ սակաւիկ ինչ ըստ պատշա-
,, չի իրացդ արամեալ էք 'ի պէսպէս փորձութիւնս .
(առ . պէտ . առ . 4 :)

Ղարձեալ լալիւնք ննջեցելոցն ընդ երեկս , այսինքն ընդ մեռանիլ նոյն ըստ աստի կենաց հանգիցեն . և ինչ քեանք մինչև իցեն հասեալ յարբայութիւն՝ լալիւնս կրեսցեն . այլ ՚ի հանգուցանել զնոցա տն յերկնից բարութիւնս , եղիցի նոցա ուրախութիւն անպատճում . նոցն առաւել ևս եղիցի նոցա յառաւօտու յարուե՛ : Ղարձեալ ըստ առաջնութեաննակութե՛ , ՚ի մաշու ննջեցելոց եղիցնի լալիւնք յազգականս նոցա . և ապա միփթարութիւն :

Ղարոյապէս , որք միանգամ լացօղքն են ՚ի վերայ մեղաց , յերեկոյի անդ ապաշխարութեան հանգիցեն ՚ի չար խղչէ , և յառաւօտու ողորմութեն ոյց եղիցի նոցա ուրախութիւն : Աւ ըստ որում ասէ սարգիս չնորհալի (՚ի մեկն . յակ . դկ . 10 . Ճառ . թ .) այսպիսիս համարձակի ասել . * յերեկոյս մեղաց եկին ինձ լալիք . ։ իսկ յառաւօտու գթութեանն ոյց եղեւ ինձ ուրախութիւն . գի եհատ ած յաչաց իմոց զանց արտօսր որ ՚ի մեղաց ։ :

Ղարձեալ հսկմոնք և լալիւնք հոդեորականք՝ որք մինին յերեկոյի , ՚ի մտանեն ՚ի քուն հանգիցեն , և պատճառեսցեն յառաւօտու զուրախութիւն . առ որ համեմատութիւն իմն հայի այն՝ զոր ասէ սաղմոսերգուն այլուր . * զի թէ յիշէի զքեզ յանկողնի իմաւմ , ընդ առաւօտու կանխեալ իսուէի ընդ քեզ ։ (սաղ . կք . 7 .)

Ղարձեալ ըստ այնմ առաջին նշանակութե՛ յերեկոյի մեղաց լինին լալիւնք այսինքն ողբալի վիճակը . իսկ եթէ զարձցի մեղաւորն՝ եղիցի ՚ի հոգին ուրախութիւն ՚ի չնորհաց տն , որ իբր առաւօտ ծագեսցէ ՚ի նա : Ղարձեալ յերեկոյի մթագնութեան մտաց և ցրտուէ կամաց եղիցին լալիւնք տրտութեան ՚ի հոգին . իսկ յառաւօտու երկնային միսիթարութե՛ զոր հեղու ած ՚ի հոգին՝ եղիցի ուրախութիւն : Այդ զոր ասաց մարգարէն ընդհանրապէս զյաջորդութենէ կամ զիտիտիսուէ չարի և բարւոց , ձախորդութե՛ և յաջողութե՛ , տրտութե՛ և ուրախութե՛ , հանգոյն յաջորդուէ երեկոյի և առաւօտու , զնոցն զայն մասնաւորէ այժմ և յանձն իւր ըստ երկրոց . նախ՝ ըստ այնմ թէ զիտրդ իւրոյ ուրախութե՛ յաջորդեաց տրտութիւն , կամ յաջողութե՛

ձախորդութիւն . և ապա ըստ այնմ թէ զիարդ տրտմնել
յաջորդեաց ուրախութիւն , կամ ձախորդութիւն յաջողու-
թիւն : Օ առաջնոյն խօսի 'ի յետագայ երկուս հա-
մարս , (այսինքն 'ի համարն . 6 և 7 :) և ապա ե-
ղեալ զբանս մաղթանաց յերկուս յայլ համարս ,
(այսինքն 'ի համարն . 8 և 9 :) 'ի հետեւալ յայլ եր-
կուս համարս , (այսինքն 'ի համարն . 10 և 11 :) խօ-
սի զերկրորդեն . և 'ի վերջն համարն փառս տաղով
վերջացուցանէ զբան իւր : Վքդ նախ վասն առաջնոյն
խօսելով կարգէ զբան իւր այսպէս :

Ղ. Ասսացի 'ի բարեկենդանութիւն ինում , թէ ոչ սասա-
նելուց յա-ի ու ան :

Շարեկենդանութիւն ասի այն վիճակ կենաց՝ որ լիա-
ցեալ է բարօրութիւն կամ ըստ հոգեսորին և կամ ըստ
մարդուսաւորին . և կամ ևս այնպիսի կեանք՝ որ իցէ 'ի
խաղաղութեն . ըստ որոյ յերբ՝ գնի ուշացնէ . այս է 'ի
խաղաղութեն կամ 'ի յաջողութեն : Եւ զի այսպիսի վիճակ
կենաց վստահացուցանէ զմարդ՝ մնալ անկասկած ,
յայս վստահութիւնը ըմբռնեալ և դաւթի ասէ :

Ղ. Ասսացի 'ի բարեկենդանութիւն ինում , թէ ոչ սասանելուց
յա-ի ու ան : Որպէս յայտնի տեսանի յածաշունչ գիրս՝
գաւիթ մարգարէ երիցս վիճակեցաւ մեծի բարեկեն-
դանութեն . մի՛ յետ յաղթելոյն գողիաթայ . զի մեծա-
ցաւ առաջի ժողովրդեան , սիրելի եղեւ արքայի , և
որդւոյ արքայի՝ մինչև լինել և փեսայ արքայի . փա-
ռաւորեցաւ ևս անուն նորա ընդ ամ սահմանս երկրին .
(որպէս է տեսանել 'ի ամ . թագ . գլ . ժէ . և ժը :)

Յայսպիսի բարեկենդանութեն գոլովլ ըունէր կարծիս
թէ կորուսցէ՝ զոր ունի , այլ մանաւանդ մեծասցի և
բարձրասցի . նա զի և գիտէր յօծութենէ անտի իւրմէ՝
թէ թագաւորելոց ևս իցէ . վասն որոյ և համարձա-
կէր ասել , թէ մնացեց յիմումը բարեկենդանութեան
անսասան : Շայց ոչ եղեւ այնպէս . այլ հալածեցաւ
յարքայի անտի՝ որում փեսայացաւ , հալածեցաւ և
յայլոց բազմաց յորս ապաւինեցաւ , և զամս բազում
տառապանօք և տուայտանօք աստանդական շրջեցաւ
վստահանդի 'ի լերինս և յանասպատս , յանձուկս և 'ի
ձորս :

Երկրորդ բարեկենդանութիւն դաւթի եղեւ յետ թա-
զաւորելոյ նորա 'ի վերայ խարայէլի , յորում մեծա-
ցաւ յոյժ . և ամ ինչ յաջողէին նմա . (որպէս է տե-
սանել 'ի ը . թագ . զլ . ե . մինչեւ 'ի ժա :) Հայսալիսի
բարեկենդանութեան գոլով ոչ կասկածէր ինչ թէ սա-
սանեցի անտի . սմին իրի առէ . * ես ասայի 'ի բարե-
կենդանութեան իմում , թէ ոչ սասանեցայց յաւի-
տեան . որպէս թէ առէր , այնպէս հաստատուն կայ
երջանկութիւն իմ՝ մինչեւ տեւել այնմ միշտ ցորչափ
տեւէ կեանք իմ : Այլ 'ի թողուլ 'ի ձեռանէ ո՞ն՝ սա-
սանեցաւ մեծապէս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ . ըստ
հոգւոյ՝ մեղօք , որով մեղաւ յուրիա և 'ի բերսաբէ .
ըստ մարմնոյ՝ հալածանօք , որով հալածեցաւ յերե-
սաց աբեսաղոմայ : Այլ որ 'ի մանկութեն այնչափ զօրա-
ւոր գտաւ և անսասանելի երեւցաւ առէ մեկնիչն , 'ի
մերձենալ ծերութեն չարաշար սասանեցաւ : Ուստի զրէ
սարգիս շնորհալի . ('ի մեկն . ը . պէտ . ը . 1 . Տառ . դ .)
* մինչ մանուկն էր դաւիթմ' առիւծք և արջք 'ի ձե-
ռաց նորա մեռանէին . . . իսկ յորժամ ծերացաւ
ծուլացաւ , և զայնպիսի երկուս յանդգնութիւն մե-
ծամեծս հակառակ օրինացն այ յանդգնեցաւ գոր-
ծել , չնութիւն և սպանութիւն :

Երրորդ բարեկենդանութիւն դաւթի եղեւ 'ի վերջոյ
յետ ամ հալածանաց , և այն գերազոյն . յորում
յաջողութիւն գործոց , յաճախութիւն փարթանուեց , իսա-
զաղութիւն թագաւորութեն , անդորրութիւն ժողովրդեան ,
նուաճութիւն թշնամեաց , բարձրութիւն փառաց , և այլ
բազմազիմի բարեմասնութիւն 'ի գերազանց իմն բարե-
կենդանութեն բերկրեցուցանեին զնա : Այլ որ մեծն է ,
ըստ ածային երկնառաք պարզեաց հոգւոյն սրբ՝ այն-
չափ գերազանց գտաւ , մինչ զրէթէ բոլորովին փո-
խարկիլ 'ի հօգի , և ոչ ևս ժուժել 'ի մարմնի , այլ
յաւէտ ցանկալ վերանալ առ այն , որոյ տարփաննօք
զմայլեալ էր 'ի սրտի . և համարէր ոչ ևս սասանիլ :
Այս սակայն յափշտակեալ 'ի սնոտի հետաքննութենէ ,
ևս և 'ի ներելի մեծամութիւն ետ թուել զժողովուր-
դին՝ առանց բանաւոր պատճառի . զի չունել ինչ ա-
ռաիթ . վազ զի չունել ինչ յայնժամ պէտո զօրաց , չու-
նել պէտո զրախոց , չունել պէտո և ոչ այլոյ իրել :

զի անձ յամ կողմանէ պաշտպանեալ էր զիեանս նորա 'ի խաղաղութեան . վասն որոյ և 'ի թռւել զժողովուրդն իբր ինքնիշխան տէր նոցա՝ զրգուեաց զրարկութիւնն այ 'ի վը իւր . սմին իրի առաքեաց առ նա անձ զգադ մարդարէ , և ասէ . * երիս ինչս ասեմ 'ի վերայ քոյ , և ընտրեսցես քեզ զմի 'ի նոցանէ . և արարից քեզ զայն . . . (կամ) եկեսցէ սով զերիս ամս յերկիր քոյ , կամ զերիս ամիսս փախցիլ յերեւաց մաց յերացին հալածել զքեզ . կամ լինել զերիս աւուրս մահ յերկրի քում . . . և ասէ դաւիթ զգադ . վտանգ է ինձ յամ կողմանց յոյժ . բայց արդ անկեաց 'ի ձեռս տն . . . և ետ տէր մահ յիարայէլ . (բ . թագ . իդ . 12 - 15 :)

Ա. ՅԼ արդ աստանօր արժան է մեզ 'ի միտ առնուլ , և զգաստութե պտուղ քաղել . իբր զի եթէ դաւիթ յայնպիսի բարեկենդանութիւն վերառեալ սասանեցաւ , ու կարիցէ պարծիլ թէ չունիցի ինքն երեւք սասանիլ ; Աւ սակայն քանիք կան , որք այնպէս վարին , որպէս թէ ոչ միայն 'ի բարեկենդանութենէ իւրեանց չիցեն սասանելոց , այլ և ոչ 'ի կենաց աստիհաքարելոց , իբրև թէ անմահք իցեն : Համարձակիմ ևս ասել . թէ առ հասարակ յայսպիսի իմն յօժարութիւն բերին որդիք մարդկան համօրէն զրեթէ բնապէս , ևս և որք բարեպաշտքն են և սրբակեացք . սմին իրի և 'ի սասանիլ սոցա 'ի կենաց աստիմահուամբ 'ի բերանց սոցա արժանապէս երզի սոյն այս սաղմն . ըստ որում տեսանի և 'ի ժամագիրս մեր : Խակ թէ զինչ այն էր 'որ համարձակեցուցանէր ըզմարգարէն ասել 'ի բարեկենդանութեան իւրում , թէ ոչ սասանեցայց յաւիտեան , յայտ առնէ նա ինքն 'ի յաջորդ համարն , 'ի մէջ բերելով միանգամայն և զպատճառ սասանմանն , և ասէ :

Է. Տ էր 'ի կամ այ եպուր գեղս էմոյ սօրութէ . դարձուց շեր դէրեսս այ յինքն , և էս եղէ իւռավալ :

Ա. ստանօր յասելն 'ի կամ այ , կամքն դնի փոխանակ այնը ներգործութե կամաց , որ ասի հաճութիւն կամ բարեհաճութիւն . որոյ ելուզի սկիզբն է նա ինքն կամքն . և զի ըստ հարտասանից անուն սկզբանն դնի

փոխանակ անուան ներգործութեան այնը սկզբան , այսու ձեռվ վարելով փոխանակ դնելոց հաճութիւն կամ բարեհաճութիւն՝ գնէ կամք . և փոխանակ առելոյ՝ ըստ հաճութեան քոյ՝ ասէ ՚ի համար ու ետուր գեղոյ իմոյ զօրութիւն :

Վայ վասն բառիդ գեղ՝ գիտելի է . զի գեղն նշանակէ զայժմառութիւն գեղեցկութեան կամ զնոյն ինքն զգեղեցկութիւնն : Խոկ գեղեցկութիւնն է համեմատող մասանց հանդերձ վայելութե գունոյն : Խու քանզի բարեկենդանութիւն կամ երջանկութիւն մարդարեին ամ մասամբք կարգաւորեալ էր , և բարեբազզութե իբր վայելութե գունոյ պայժառայեալ յաջ անցուն , վասն այնորիկ զայն զիւր բարեկենդանութիւն նմանեցուցանէ զեղոյ . և խոստովան լինելով թէ յայ ունի զայնը բարեկենդանութեան հաստատութիւն , ասէ :

Նէր ՚ի համար ու երառ գեղոյ էմայ զօրութիւն : Որովհետեւ ասաց ՚ի վերոյ . * ես ասացի ՚ի բարեկենդանութեան իմում՝ թէ ոչ սասանեցայց յաւիտեանն : ՚ի յարելն ապա զայս բան զինի՞ տովին զիւր զիրաւունս տարածէ առաջի այց վասն ասելոյն զայն , թէ ոչ սասանեցայց . որպէս թէ ասէր : Վասցի՞ ոչ սասանեցայց՝ զի զուտէր ըստ հաճութե կամաց քոյ ետուր իմումն զեղոյ՝ այսինքն իմումն բարեկենդանութե զզօրութիւն . իբր զի զու ինքն քոյով զօրութե ամրացուցեր զբարեկենդանութիւնիմ . և ես յայդ ՚ի քոյ ամրացուցումն զօրութե ապաւինեալ՝ ասացի , թէ ոչ սասանեցայց . կարծելով թէ միշտ այնպէս ամրացեալ մնալոց իցեմ . որպէս թէ այն հաստատութիւն իցէ իմ , և ինձ սեփականէւալ . քանզի տակաւին չէի առեալ ՚ի միտ՝ թէ ոչ մի այն զօրութիւն այն ՚ի քէն է , այլ և հաստատուն մնալն այնու զօրութե և ոչ սասանին անտի . բայց նաներացաւ իմ կարծիք , և իմ այն ասացուած :

Կարեկացին (՚ի բանն հիշ) . զբառդ զօրութ՝ առնու փոխանակ զօրացուցիք . և խօսելով առ քա՞ ասէ . * հազ զի երեսաց , և զօրութ (յու զօրացուցիք) գեղոյ մերոյ ասէր քս օրհնեալ ՚ի բարձունս : Վազարե զօրացուցիք . և սակայն յապաւինիլ մարդոյ յանձն՝ իւր , թողեալ յայ տկարանայ և անկանի , խոսվի և շփութիւն . և զայս յայտ առնէ մարդարեն ՚ի հատուածդ՝

որ զկնի , ասելով :

Դարձուցեմ զերեսս ոյ յինէն , և էս եղէ խռովէտալ : Դարձուցանել այ զերեսս իւր յումբէք՝ է ոչ ես խնամելն զնա այնու օրինակաւ՝ որով խնամելը յառաջն , այլ թողուլ զնա առանց այնր մասնաւոր խնամոց : Իսկ դարձուցանելն զերեսս խսպառ՝ է խսպառ անխնամ թողուլ , բաց ՚ի պահպանութենէ գործ . զոր ոչ ումեք զամնայ ած , զի նաև զգես , և զդատապարտեալս պատշէ ՚ի գոլ իւրեանց :

Վարդ ասէ մարգարէս մինչ կարծէի ես՝ թէ չունիցիմ երբէք սասանիլ , և համարէի՝ թէ զայն բարեկենդանութիւն զոր առ ՚ի քէն ունէի , ես ինքն պահելոց իցէմ անայլայլի , իբրև դարձուցեր զերեսս քոյ յինէն , և նահանջեցեր զմանաւոր խնամն քոյ , խռովեալ եղէ , այսինքն այլափոխեալ եղէ , և շփոթեցայ . և այն իմ բարեկենդանութիւն վեր ՚ի վայր ըրջեցաւ : Իսկ թէ զիարդ և երբ , տես ՚ի նախընթաց համարն :

Օայսոսիկ ամին է ասել , մանաւանդ իւրաքանչիւր ընտրելոց այ , օրոց զմին կարեւիք բերել տարացոյց առաջի՝ որ նախապատիւ գտաւ . և վէմ կարգեցաւ անվանելի ՚ի զրանց գժոխոց , այն ինքն է երանելին պետրոս . զի վայելեալ նորա ՚ի սեր իւրոյ վարդապետին և արարյն , վերառեալ յայնափափ պատիւ հոգեորական , և ընկալեալ զզօրութի գեղոյ , այսինքն զօրութիւն վէմ ինելոյ եկեղեցւոյ՝ կարծէր ոչ սասանիւ յաւիտեան՝ ՚ի սիրոյ անտի՛ զոր ունէր առ քո՞ , մինչեւ ասել իսկ ՚ի բարեկենդանութեան անդ իւրում . * թէ ՚ի պէտ և անիքն գայթակղեսցին ՚ի քէն , սակայն ես ՚ի ոչ գայթակղեցայց || . իբր թէ ոչ սասանեցայց . և յաւել ևս ասել , * թէ և մեռանիլ հասանիցէ ընդ ՚ի քեզ , զքեզ ոչ ուրացայց || . (մատ . իշ . 33 . և 35 :)

Այսպէս իմա և զայլոց առաքելոց . զի զնոցանէ ևս զըրեալ է , թէ * նոյնպէս և ամ աշակերտքն ասէին || : **Ա**յլ իբրև դարձոյց տէր զերեսս իւր ՚ի նոցանէ , պետրոս խռովեցաւ և ուրացաւ , և այլք խռովեցան և փախեան , որով և ծանեան թէ հաստատութի զեզ՝ այսինքն կատարելութեան իւրեանց՝ ոչ է յինքեանց , այլ ՚ի զօրութենէ անտի , զոր ած ըստ հաճու-

Թեան իւրում տուեալ էր նոցա :

Վասիկ քեզ օրինակ այնպիսի, յոր արժան է իւրաքանչիւր քըրիստութի զգաստութք հայելով զգուշանալ անձին . զի եթէ վլմն սասանեցաւ, և հիմնակն շարժեցան, և եթէ այն ըստ սրտին այ, զչեղինակ սալմախա ասեմ զգաւիթ՝ խռովեցաւ, զինչ պարտ իցէ մեզ առնել առ ՚ի ոչ սասանիլ . զինչ ասացից զադանայ և զսողուննեւ . մին լրումն մարդկութեանս, և միւսն զրեթէ աւարտումն : | սոսին հայիլ յորդորեն զմեզ ոք հարք, և յօրինակէ սոցա զգաստանալ և խոնարհիլ խրատեն . որպէս առնէ և սարդիս մորհալի (՚ի մեկն . ք . պետ . ք . 6 . 7 . հառ դ .) ասելով .

* եթէ իցես արզար՝ մի վատահասացիս յարդարութիւն քո, և յանհոգս կայցես . զի մի գերի զնասցես ախտից . . . | աւաւիթ՝ մարդարէ էր, և պետրոս՝ առաքեալ, . . . երկոքեան սոքա մերձաւորք այ և անհամեմատ բարձրութեամբ պատուեալք ՚ի նմանէ . . . յանձնապատճան եղեալ անկանեին . վասն զի մինն ասէր՝ ես սասացի ՚ի բարեկենդանութեան իմում՝ թէ ոչ սասանեցայց յաւխտեան . և միւսն ասէր, թէպէտ և տնիքն գայթակղին, սակայն ես ոչ գայթակղեցայց . և երկոքեանն անկան ՚ի սասատիկ և ՚ի մեծազոյն խորխորատ . . . | և արդ նայեաց դու ՚ի պատճառն՝ որով գլորեցան արդարքն, և զգուշացիր : Օ ի եթէ մերձաւորքն այ սրբութք յայնմ պատճառէ անկան, մեք զինչ դործեսցուք հեղբս և թշուառականքս || :

Վանիք կան՝ որք յորժամ ՚ի ջերմեռանդութեան բորբոքեալ լինին՝ կարծեն այնպէս մնալ, և ոչ սասանիլ յաւխտեան . երբեմն մոռանան և զոկարութիւն բնութեան իւրեանց, և ոչ իսկ ձանացէն զինքեանս՝ թէ որպէսի իցեն . այլ յորժամ բառնի եռանդն այն՝ և տիրէ ցրութիւն, ՚ի միտ առնուն թէ անսարդ իմն են : Օ անգուած հրահալելեաց յորժամ ՚ի բովս հրոյ է՝ ոչ ձանացի ոսկի իցէ թէ արծաթ, պղինձ իցէ թէ երկաթ . զի միազդն է, և թուի հուը լինել եթէ այս և եթէ այն : Իսկ ՚ի գաղարիլ հրոյ, և ՚ի գալ ցրութեան յայտնի տեսանիթ թէ զինչ իցէ : Ոյնպէս ՚ի վասիկ և ՚ի փայլիլ մարդոց ՚ի հուը ջերմեռանդու-

թեան՝ ևս և ու և իցէ, յաջողութիւն ոչ ձանացի, արծաթը իցէ, թէ, անագ. 'ի հասանել ցրտութեան և ձախորդութեան 'ի յայտ զայ. և որ գեղով զօրուառը երեւեր՝ խոռվեալ տեսանի :

Վարոյապէս՝ խոռվութիւն զոր գնէ մարդարէն՝ հայելով՝ 'ի բառդ գէշ՝ զոր եղ՝ 'ի մէջ բերէ զովեղութիւն. յոր միտս կամի ասել. 'ի դարձուցանել ոյց զերեսս իւր յինէն՝ գեղեցկութիւն իմբարձաւ. և ես տգեղացայ. (եթէ կամի՝ տես զայտմանէ զպատմութիւն ինչ 'ի զիրս յաւիտենական ձշմարտութեան. երես. 267. որ աւանդի, թէ մըշտի տգեղացայ մարդս մեղօք :)

Վայս խոռվութիւն յայտ առնէ և զթնամութիւնն՝ որ յետ մեղացն անկանի 'ի մէջ ոյց և մարդոյ. և այս է խոռվութիւն տուկալի. զի թէ թնամութիւն՝ որ ծագի 'ի մէջ մարդկան՝ դառնապին խոռվութիւն է, քանի ևս թնամութիւն 'ի մէջ ստեղծողին և ստեղծուածոյն :

Ոյն այս խոռվութիւն տիրապէս առաջի առնէ և ըզտաննօղութիւն խղճի մտաց՝ որ ծագի 'ի մեղաց. յօրինակ այսր զրի. (ծնն. դ. 16.) թէ կայէն յետ մեղանցելոց, զնաց և բնակեցաւ յերկրին նայիդ, որ թարգմանի ալէկոծութիւն. որով նշանակի խոռվութիւն խղճի մտաց. յօրմէ այնչափ տանջիւր նա, մինչեւ յանկալ մահու. նա զի՞նոյն խել խիղճ մտաց նորա հանապազ սպանանէր զնա. վասն որոյ և ասէր. (ծնն. դ. 14.) * ամ որ գտանէ զիս՝ սպանցէ զիս ։ ով սպանանէլոց էր զնա. միթէ աղամ կամեւայ, զի այլ ոք ու գոյր առ նովաւ. ապա ընդէր ասէ անքին սպանցէն զիս. խիղճ մտացն էր, որ յամ կողմանէ և յամ ժամ սպանանէր զնա, և յուսահատեցուցանէր :

Օ այսր խոռվութեան զփորձ էառ մասամբ իմն և զավիթ. բայց ոչ տիկարացաւ 'ի յուսոյ. այլ յուսով մեծաւ զիմեաց յայն՝ յօրմէ ընկալեալ էր զզօրութիւն բարեկենդանութե իւրոյ. զի զիտէր՝ թէ որ ետն, առաւել ևս կարօղ է տալ. և որ թոյլ ետ անկանիլ՝ կարէ և կամի վերստին ընդունիլ. սմին իրի առաջի առնէ աստանօր զպաղատանս իւր, զոր վասն այսր մատուցեալն էր, և ասէ :

Է. Պ ~ տէլ ուր հարդարացի , և ~ ածդ իմ աղաղակեցի .
Հ շնչն օգոստ է տէլ յարենէ իմէ , ուն էջանէմ ես յա-
ռականաւութիւն :

Կարդալ և աղաղակել 'ի նոյն միտո գնին աստ + այլ
աղաղակելն ցուցանէ և զաշխատութիւն ձայնի . այսինքն
բուռն առնելով ինքեան բարձրացուցանել զձայնն , ե-
թէ ներքին իցէ և եթէ արտաքին . իսկ կարդալն լի-
նի և առանց բուռն առնելը : Վար քանզի մարդարէն
'ի խռովին անդ և 'ի տագնապիլ սկսաւ կարդալ առ-
տէր . և առ լսելի լինելոյ ձայնին՝ բուռն արար ինքեան ,
և առաւել ևս բարձրացոց զնոյն աղաղակաւ , զայն
կամելով յայտ առնել ասէ :

Վ ~ տէլ ուր հարդարացի , և ~ ածդ իմ աղաղակեցի : Վ յս
բան կրկնակի յարի 'ի նախընթաց համարն . մի՛ ըստ
առաջին հատուածոյն , ուր ասաց * տէր 'ի կամս քոյ
,, ետուր գեղոյ իմոյ զօրութիւն || : Վ ըստ այսմ կամի
ասել . ճանաչելով թէ զու ես տէր գեղոյ իմոյ , յամ-
բոխիլ գեղոյս՝ առ քեզ առ տէրդ գեղոյ իմոյ կար-
դացի . և փորձիւ իսկ գիտացեալ՝ թէ զու ետուր զգո-
րութիւն գեղոյս , 'ի պակասիլ այնոր զօրութեան , և 'ի
խախտիլ իմոյս հաստատութեան՝ առ քեզ առ ածդ իմ
աղաղակեցի :

Երկրորդ յարի 'ի նոյն ըստ միւս հատուածոյն , ուր
ասաց . * դարձուցեր զերեսս քոյ յինէն , և ես եղէ
,, խռովեալ || : Եր ըստ այսմ վայելլապէս յարէ զինի
զերդալն և զաղաղակելն . զի 'ի դարձուցանել ուրուք
զերեսս իւր 'ի մէնջ , և 'ի զնալն 'ի ըաց , եթէ ունի-
ցիմք համարձակութիւն առ նա (ըստ հասարակ սովո-
րութեան խօսելով) կարդամք առ նա , և 'ի հեռանալն
սկսանիմք աղաղակել զինի նորա : Ոսկին նմանութիւն
ձեացուցանէ աստ մարդարէն զրան իւր . որպէս թէ
ասէր : Վ պաքէն դու ես տէր իմ , զու ես ած իմ , դու
զօրութիւն գեղոյ իմոյ , ընդէր աստ դարձուցանես զե-
րեսս քոյ յինէն :

Վստ այսմ երկրորդ շարայարութեան՝ զայս իմաստ 'ի
մէջ բերէ նշանակութիւն կարդալոյն և աղաղակելոյն .
այլ ըստ առաջնոյն՝ միայն զձայն կարդալոյն և աղա-
ղակելոյն յայտնէ : Իսկ թէ զինէ էր այն՝ զոր 'ի կար-

զալն և յաղաղակելն ասեր . յայտ առնե՛ յաջորդ բանիւն՝ ասելով :

Օչնչ օգուտ է ուշ յարենէ էմէ , ու էջանեմ էս յապահանութեան : Հայս բան յաղաղակել մարդարեին ոչ ինսդրէ՝ զի առցէ , այլ ազաւէ՝ զի առցի . այսինքն ընկալեալ լիցի , և մի իսպառ անտես լեալ կորիցէ : Ո՞ւ ՚ի մշջ բերէ զայն՝ որ օգուտ է ինքեան , զի ոչ ևս արժանի համարի զանձն առ այն , այլ առաջի առնե՛ զայն՝ որ ոչ լիցէ օգուտ այ . տէր ած իմ ասէ , զինչ օգուտ լինիցի քեզ աստի , եթէ ևս կորեայց . զինչ փառք , կամ որ գովութիւն յարենէ էմէ , ու էջանեմ էս յապահանութեան :

Փոխանունութեան ձեռվ խօսի . իբր զի փոխանակ մահ ասելոյ՝ արիւն զնէ . և փոխանակ հող ասելոյ՝ զնէ ապականութիւն . զի որովհետեւ ՚ի հեղանիլ արեան՝ զշետ զայ մահ , և յապականիլ մարմնոյն յետ մահու՝ կամ յիթանելն ՚ի գերեզման՝ զշետ զայ դառնալ՝ ՚ի հող , զնախրնթացսն զնէ փոխանակ զշետ եկելոցն . իսկ շաղկապս նէ՝ զնի իբր բացատրիչ՝ փոխանակ բառիս յորժաճ , կամ փոխանակ բառիս իամ , ունի և զզօրութիւն նախզրիս ՚ . որպէս թէ եգեալ էր . ՚ի մեռանիլ իմում յորժամ իջանիցեմ յապականութիւն , կամ ՚ի զնալ իմում յապականութիւն , այսինքն յորժամ ՚ի հող դառնայցեմ զինչ շահ լինիցի քեզ անտի : Ո՞իթէ կարիցէ այն բաւական լինել բարկութեք քում : Ո՞իթէ արիտուրս ինչ համարիցիս զերոնիին իմ , կամ իբր զոհ հաշուեցուցիչ զշեզումն արեան իմոյ , այսինքն զմահ իմ : Ո՞իթէ ՚ի կորուսանելց զիս , այնու փառաւորեացիս . իսկ արդ ո՞ի կորուսելոց կարիցէ փառաւորել զբեզ և կամ հռասկել զբործս ողորմութեան քո . (զօրմէ խօսի ՚ի յաջորդ համարն) Հարմարական մեկնութեամբ մարթ է յառաջին զէմս ընթեռնուլ զայս բան ասելով . զինչ օգուտ է ինձ ՚ի նկնութեանց և յաշխատութեց իմոյ՝ եթէ իջանեմ յապականութիւն : Ուր արժան է զիտել , զի ՚ի մեռանիլ մարդոյ , և յիջանելն ՚ի դժոխս՝ որպէս մեղք նորա ընդ նմա զնան , ոյնավէս և բարի գործք նորա , զօրս արարեալ իցէ՝ ՚ի կեանս իւր . բայց ոչ ինչ օգտեն նմա անդ այն բարեգործութիւնք նորա , այլ

մանաւանդ թէ տանջեն զնա . այրեն և այրին ընդ
նորա . և այն գործք նորա որբ ընդունելոց էին զվարձս
յարքայութե՛ պատժին ՚ի գժոխս : Համբերութիւն
նորա , որոյ փոխան առնլոց էր զարակն կենաց՝ ոչ
միայն ոչ օգտեսցէ , այլ և կրել տացէ . սոյնպէս և
այլ առաքինութիւնք նորին : Հայեաց ՚ի գժոխս , և
տես , զի այրին այն վերք՝ զորս վասն քնի ընկալա-
մին ՚ի քառանից . և ինքն որ նախ խոստովան եղեւ
զհաւատս , յիթանելն ՚ի գժոխս՝ ոչ կարաց խոստո-
վանիլ զնոյն , և կամ պատմել զշմարտութիւնս հա-
ւատոյ : Եւ զայսմանել ՚ի հասարակի խոսելով մար-
գարեին՝ ասէ :

թ . **Ա** նու հող խոստովան առնիշը առ քեզ , իամ պար-
հայշ զշմարտութիւն չոյ :

Հող ասելով իմանայ զմարդ մեռեալ՝ և ըստ մարմնոյն
՚ի հող դարձեալ , և զայս դնէ ըստ այնոց ձևոյ ձնար-
տասանից՝ որ կոչի խելամութի . որով հողն՝ յոր դառ-
նայ մարդ , առեալ լինի փոխանակ նոյն մարդոյ :
Վրդ այսպիսի մարդ եթէ ՚ի վիճակի փրկելոցն իցէ ,
թէպէտ և ըստ հոգւոյ կարէ խոստովան լինել առ
ած , բայց ոչ այնպիսի խոստովանութե՛ որպիսի իմա-
նայ աստ մարդարեն . մի՝ զի ոչ լինի ՚ի բոլոր մարդոյ ,
այլ ՚ի հոգւոյ նորա ևեթ . և մի ևս՝ զի այն չէ արդիւ-
նական . իսկ մարդարեին բանք չային ՚ի խոստովա-
նութիւն մարդոյ ըստ բոլոր գոլոյ իւրոյ և ըստ արդիւ-
նակորեցյ : Վայ եթէ այնպիսի մարդ մեռեալ՝ իցէ
՚ի վիճակի դատապարտելոց ոչ կարէ խոստովան լի-
նել առ ած տիրապէս , և պատմել զշմարտութիւնս
այ արժանապէս . զի այն խոստովանութիւն նորա ոչ
միայն ոչ է պիտանի , այլ և ոչ իսկ բարի : Վրդ որ-
պէս երեխ , առաւելապէս ՚ի վիճակ այսպիսեաց հայե-
լով խօսի մարդարեն զայս բան յասելն :

Ա նու հող խոստովան առնիշը առ քեզ , իամ պարհեցէ
զշմարտութիւնն չոյ : Որպէս թէ ասեր , մեռեալ մարդ՝
որ թաղեալ իցէ ՚ի գերեզմանի , և ՚ի հող դարձեալ
թէ և արդար իցէ չկարէ արդիւնառապէս խոստո-
վան լինել առ քեզ ըստ բոլորական իւրոյ գոլոյն :
Իսկ եթէ իցէ անարդեալ , ոչ կարէ ոչ ըստ հոգւոյն

և ոչ ըստ մարմնոյն խոստովան լինել առ քեզ . այսինքն է՝ ոչ կարէ յայտ առնելով զբարեբարութիւն քոյ և զողորմութիւն քոյ՝ գոհանալ զքէն . և կամ դարձել շահարժան ու այսինքն յայտնել և հուշակել ըդգործս ճշմարտութեան քո . ուր բառս ճշմարժանի զնի փոխանակ գործոց ճշմարտութեան , և ցուցանէ զայն ամ , զորս առնէ ան ըստ իւրում ուղիղ հանացման , մանաւանդ զորս յողորմութեան մասին իցեն . և կամ զնի փոխանակ խոստմանցն այ , որք առանդին 'ի գիրս օրինաց : | Խակ պատճառ հարցականապէս զնելոյն է սաստկացուցանել զնշանակութիւն ասացելոյն : (Օ այս մանէ տես և 'ի սաղ . Ճէ . 12 = 14 : զորոյ զնմանն ունիս գտանել և 'ի սաղ . ՃՇկ . 25 :)

Այս տուն սաղմոսիս , նոյնապէս և նախընթաց սորա՝ ըստ առանդելոյ ոք հարց ասի և 'ի բերանոյն քնի . որ ըստ ասելոյ առաքելոյն , յաւուրս մարմնոյ իւրոյ՝ ազաւեր զհայր , յարուցանել զինքն ՚ի մահուանէ . (Երբ . Ե . 7 : զորմէ տես և 'ի սաղ . իսա . 2 :) ըստ օրոյ և աստ ասէ : | Առ քեզ առ անդդ իմ աղաղակեցի յաւուրս չարցարանաց իմոց . զինչ օգուտ լինիցի քեզ , և զինչ շահ ազգի մարդկան յարէնէ իմէ հեղոյ 'ի վերայ խաչին , եթէ ոչ յարեայց 'ի մեռելոց . միթէ 'ի զառնաւլ իմում 'ի հող՝ լինիցի ումեք պատմել զհըշմարտութիւնս քոյ . ով խոստովան լինիցի քեզ՝ թէ դու կամեցար փրկել ինսե զազգ մարդկան . և կամ ո գտցի՞ որ հաւատացէ յիս , և ինսե 'ի քեզ :

| Եւ արդարեւ եթէ ոչ յաներ տէրն մեր , ամենայն ինչ մեր՝ որ ըստ հաւատոյ՝ վեր 'ի վայր տապալէր , նաև հաւատք մեր ընդունայն լիներ . որպէս զրէ առաքեալն (ա . կոր . ԺԵ . 14 = 18 = 23 :) Այսպէս և ննջեցելոց ոչ մնայր յօյս յառնելոյ , և գոհանալոյ զայ և փառաւորելոյ զնա :

Ի արոյապէս՝ որք 'ի հող դառնան , այսինքն որք անկանին 'ի մեզս , որ եղեւ պատճառ 'ի հող դառնալոյ մարդոյն , գորչափ 'ի մեզս իցեն , ոչ կարեն արժանապէս խոստովան առնիլ առ անձ , և պատմել ու բապէս զճշմարտութիւնս նորա . զի զրեթէ իրբեւ զհող կամ իրբեւ զզի անշարժ կան . իսկ յապաշխարել նոցա՝ այն ապաշխարումն նոցին լինի զրեթէ աղաղակումն առ

առ առ յարուցանելոյ զինքեանս 'ի մեղաց . որսիս
զի արդարացեալք 'ի չնորհաց նորա՝ պատմեսցեն
զշմարտութիւն և զողովութիւն նորին : Վարդ յայտ ա-
րարեալ մարդարէին զաղաղակել իւր առ տեր , և
զայն ինչ զոր յաղաղակելն իցէ ասացեալ յայտ առ-
նէ այժմ և զլսելն այ , և առէ :

Դ. 一一 ինչ ուեր , և ողբեցաւ , և ուեր եղել ինչ օդ-
հանիւն :

Օ այս ասէ մարդարէն հայելով յառիթան յայնոսիկ ,
յորս կարգաց նա առ առ . իսկ թէ զիք եին այն ա-
ռիթք , տես 'ի համարն . 6 : Այս զայտ առաջի գնես մար-
դարէն ոչ միայն 'ի բերանոյ իւրմէ , այլ և որսիս 'ի
վերոյ ասացաք , 'ի բերանոյ իւրաքանչիւր հաւատա-
ցելց , յասելն :

一一 ինչ ուեր , և ողբեցաւ : Վայինքն թէ յաղաղա-
կելիմում առ տեր ոչ անտես արար զաղաղակս իմ ,
այլ լուաւ , և անսաց . և այս ոչ զի ձայն իմ ուներ
ինչ յարդ յինքեան , այլ զի նա ինքն ողորմած եր , և
առթի սպասեր ողորմելոյ . վասն այսորիկ լուաւ ինձ .
և առ այս յաւելու ասել՝ ողբեցաւ ինչ : Կամ թէ
տեսեալ այ 'թէ յանհնարին ողորմելիութեան էի , և
յայնպիսի վիճակի զորով ոչ առ այլ ոք , այլ առ նա
միայն աղաղակեցի , վասն այսորիկ 'ի զութ շարժե-
ցաւ և եցոյց առ իս զողորմանթիւն իւր : Իսկ թէ յո-
րմում եղն այս ողորմիլ 'յայտ առներ յետին բանիւ՝
յասելն :

Ե- ուեր եղել ինչ օդինիւն : Վայինքն թէ նա որ ոորն է՝
ձեռն կարկառեալ առ իս 'եհան զիս յողորմելի վիճա-
կէ անտի , և զօրացոյց ևս զիս առ 'ի վանելոյ զաղա-
ւաղիչս բարեկենզանութեն իմոյ , և առ 'ի վերատին 'ի
ձեռս բերելոյ զայն . որպէս և երերն իսկ 'ի դարձու-
ցանել ոտն զուգ նորա յուրախութիւն . սմին իրի յա-
ւելու ասել :

Ժ ասբիոյ ըստու էմ յարակեալունիւն . չերծ յիշեն
պատոյ . և ինչ ուեցոյ ըստունութիւն :

Ի սասանիկ զաւթի 'ի բարեկենզանութեն իւրմէ , և 'ի
խոռվիլ նորա 'ի սասանին անդ՝ սուզ զգեցաւ յանձն

իւր . ծանեաւ . ևս՝ թէ չէ օրէն կարծել զինքն անառան յաւիտեան . վասն որոյ և խոստովան եղեւ տն՝ թէ , 'ի նմանէ , և անասանն մնալ իւր . կարդաց առ նա , և խնդրեաց 'ի նմանէ զերծուցանել զինքն 'ի սասան մնանէ անտի՝ զոր սասանեցաւ . լուաւ նմա ած , և եղեւ ձեռնտու . և զայս առնելով ոչ միայն զտրտման թիւն նորա փարատեցց , այլ և ուրախ արար զնա : Ուր զիտել արժան է , զի որովհետեւ ուրախութիւնն միշտ առ բարին հայի , ըստ երկուց կարէ պատճառիլ . մի՛ ըստ զերծանելոյ 'ի թշուառութէ , որ է բարի ինչ . և մի ևս՝ պարզապես ըստ ժառանգելոյ զբարին . յայ-

սոսիկ հայելով առէ :

Դարձոյց շառէ իմ յարականնէ : Առւզն է տրտմութիւն դառն 'ի վերայ այնակիսի իրի՝ որ ոչ ևս է . և այս տրտմութիւն տայ մարդոյ ոչ միայն լալ և հասլ , այլև զգենուլ զբուրձ , և հող՝ 'ի զլուխ լինել . յոյր սակս 'ի կորուսանել մարդոյ զիհճակն անմեղութեան՝ զգեցց նմա տէր քուրձ մաշկեայ , և ետ նմա վձիռ 'ի հող դառնալոյ . յորոյ վերայ առէ վանական վարդապէտ ('ի մեկն . յոր . զլ . ն .) * միտք՝ որ 'ի զլուխ առակեալ է և ինքնիշխան յարարչէն սահմանեալ , հնազանգ եղեւ խրատու օձաճաշակ սողնակին . ու ըսլ զմահ ընկալաւ սգալի . յիրաւի հող՝ 'ի զլուխ լինի մարդ 'ի ժամ սգոյ || :

Վարդ սուզն 'ի վերայ ըրից լինի . մի՛ տիրապէս 'ի վր մեռելոց , և այն՝ ըստ կարգի , և ոչ անկարգութեամք . որպէս առնեն ունանք ըստ հէթանոսաց . զոր արգելու առաքեան . (ան . թէսաղ . դ . 12 .) զորմէ խօսի և լուսաւորին մեր 'ի յաճախապատումն իւր . (հառ . մք . երես . 154 .) **Երկրորդ՝** 'ի վերայ կորուսեալ իրաց : **Երրորդ՝** 'ի վերայ պակասութեան ախորժելեաց . ըստ օրոյ առէ նորհային ('ի մեկն . մատ . զլ . ն .) * սուզն է փոփոխումն հոգւց 'ի տրտմութիւն վասն ախորժելեացն պակասութեան || : **Չորրորդ՝** անյատ կապէս 'ի վերայ գաճնութեան վշտաց . և թէրեւսյայ հայելով յաւելու նորհային 'ի նմին տեղւոջ , թէ *

* սուզ առի վասն զցալոյ զիրս , զօր երբեմն յանրզ . զայս թեան գողով ոչ զգայր || : **Առ զի մարգարէն 'ի սասանիլ իւր 'ի վիճակի . բարեկենդանութեան՝ տեսա-**

ներ և զգայր յինքեան զայսամիկ , վասն որոյ և 'ի սուդ լինելը : Այս արար ած՝ զի գարձցի 'ի նա այն պիհակ բարեկենզանութեան . որով և զսուդ նորա գարձոյց յուրախութիւն : Եւ կամ գարձեալ 'ի գաղարեցուցանել այ զհարուած մահուն՝ զոր ետ յիսրայէլ գարձոյց զսուդ մարզարէին 'ի միսիթարութիւն , որ և առել . ուրախ արար զնա , և միսիթարեաց : Հաւելու

ասաւ ասել որ առաւելն է :

Օչիծ յինէն (այսինքն եզերծ յինէն , կամ ըստ լամբ' . չերձ յինէն) զուորչ . Ե ինչ պէեշայ ըստ ըստեռնէ : Ծանիր , զի որովհէտեւ ըստ ոճոյ նարտասանից երբեմն նշանն փոխանակ նշանակեցելոյն զնի , ժուշն զորով նշան սգոյ՝ փոխանակ սգոյ զնի ասաւ . ուասի նոյն էր թէ ասեր եզերծ յինէն զսուդ : Եւ այսու կամի յայտ առնել զառաւելութիւն սաստկութէ սգոյն՝ զոր ուներ . և զառաւելութիւն զթոյ մարդասիրութեն այ . իբր զի ած ոչ միայն զսուդն երարձ , այլ և զնշան սգոյն , կամ նաև զառիթ սգալոյն՝ թէ հալածանք իցէ՝ այն՝ թէ մահ , և թէ մեղք : Եւ 'ի բառնալն զայն սուդ՝ ոչ եթող զնա զատարկ կամ մերկ . այլ փոխանակ այնը պէեշայ նմա ըստ ըստեռնէն :

Ոչ ասէ էու . այլ պէեշայ . զի որովհէտեւ ասաց նուրծ կամ մերկեաց յինէն զգուրձ , այսինքն զզեստ սգոյ , այսու սասցուածոյ համեմատիւր զնել պէեշայ . բայց 'ի միտս բանին հայելով կամի այսու զառաւել ինչ ցուցանել , և վասն այսորիկ զնել զզեցուցանել : Վանդի զզեցուցանելն երկու ինչ ունի . մի՝ սրամել զմարմինն ողջոյն , և մի ևս՝ ցուցանել զարտաքին երեսիթ զզեստաւորեալ գոլոյ . ըստ սրում որ ինչ զզեցեալ լինի՝ արտաքուստ ևս երեւեալ տեսանի : Աքդ ած 'ի փարատեն զսուդ զաւթի՝ զայնպիսի ասիթ ուրախութեան ևս չնորհեաց նմա , մինչեւ ըստ ամենայնի ուրախ առնել զնա , և զայն ուրախութիւն արտաքուստ ևս երեւեցուցանել :

Ոյսուկս դիսի և իւրաքանչիւր հաւասացելոց 'ի գառնալնոցա առ ած և 'ի սգալնոցա 'ի վերայ մեղաց իւրեանց . զի ոչ միայն բառնայ ած զառիթ սգոյ նոցա զւարն մեղաց , այլ և զզեցուցանել , նոցա զուրախութիւն չնորհաց իւրոց : Ուստի ասէ սարզիս չնորհաց . ('ի

մեկն . յակ . է . 10 . ձառ . [թ .] որ ՚ի սուդ կայ վասն
տն՝ բազում միխթարութեան բանս առնու , որով և ՚ի
սգոյ թօթափի * մինչև յայսպիսի բանից համարձա-
ւ . կութիւն առեալ ասիցէ ընդ մարգարելին . գարձոց
.. զսուդ իմ յուրախութիւն , եզերծ յինէն զքուրծ իմ,
.. և զգեցոյց նոճ ուրախութիւն || :

Խորհրդաբար առեալ՝ զսոյն զայս առաւելապէս եցոց
քն առ աղամ և առ եւայ , ՚ի զերծուցանել ՚ի նոցանէ
զմանկեայ քուրձնն մեզաց . և ՚ի զգեցուցանել նոցա
զզեստ յաւիտենական ուրախութեան , | սուդ եր ա-
դամ , ՚ի սուդ եին և նախահարք ՚ի սոտորին կողմն եր-
կրի . և գուշին , միթէ հող խոստովան առնիցի առ
քեզ . էջ առ նոսա որդի նոցա բանն ած , և փարա-
տեցուցեալ զսուդ նոցա՝ ուրախ արար զնոսա յուրա-
խութիւն երեսայ իւրոյ : | սուդ եր եւա , ՚ի սուդ եին
և նախահարք . էջ որդին միածին ՚ի զուստը նոցա ՚ի
կոյսն մարիամ առետեօք հրեշտակի , յասելն . ուրախ
էր բերկրեալ տեր ընդ քեզ . որով պատառեցաւ սուդ
նոցա , և լցաւ ուրախութիւն սիրտ նոցին :

Ոյն այս կատարի և ՚ի ննջեցեալնն մեր ՚ի քո . զի ՚ի
գթալ այ ՚ի նոտա պազատանօք կենդանեացն՝ ոչ միայն
բանայ զցաւս անձանց նոցա , այլ և հանդուցանե-
լով զնոսա ընդ սուրբս իւր՝ յեօթնաստեղեան լուսեղին
խորանս յիւր սքանչելի օթեանս , ընու զնոսա ուրա-
խութիւն կամաց և պայծառութամբ մտաց : Հայնժամ
ընդարձակեսցի բերան նոցա ցնծալից երգել և ասել .
պատառեաց ած զբութեալ սգոյ և տրտմութեան մերոյ . և
զգեցոյց մեզ պատմուհան անփոփիս ուրախութեան :
| յնուհետե ոչ ևս յիշատակութիւն սգոյ , այլ աննիազ
ուրախութիւն հոգւայ . ոչ ևս կասկած չարեաց , այլ
հատտատուն ժառանգութիւն բարեկենդանութէ ,
այլ երջանկանալ յանվրդով կեանս աներկեանութեան .
ոչ ևս կարգալ առ տեր վ՛ս զերծանելոյ ՚ի վտանգաց ,
այլ տալ օրհնութիւն զովութե վասն վայելելոյ յերա-
նութեան յաւիտենական փառաց : | յւ զայսոսիկ իերե
անտարակուսելի ժառանգութիւն առաջի դնէ մարգա-
րէն ՚ի յաջորդ համարն :

| յու բանք կարեն պատշաճիլ և ՚ի գլմու քնի , հայե-

լով յարտարին սուզն՝ որ եղել՝ 'ի մահու նորա . ըստ
որում՝ 'ի յարութեան նորա այն սուզ գարձաւ յուրա-
խութիւն . և քուրքն չարչարելիութե մերկեալ եղել՝ 'ի
նմաննէ . և մարմին նորա զգեցաւ զուրախութիւն ան-
չարչարելի գոլոյ : Օ այսոսիկ եղեալ մարդարեին ,
յօրհնութիւն փառաց աւարտէ զբան իւր , և ասէ :

Ժը . **Ո**րդէս սաշմս ասասցեն տէղ ժառաւ էմ . և այլ մի եւ-
ուղարկաց . այլ ած ի մ յա-ի ու ու ն ի ս ո ւ ո ւ լ ո ւ ն ե ս լ ո ւ ն ի տ է լ .
Վնունդ ժառաւ բազում օրինակաւ առեալ լինի . (զը-
մէ տէս 'ի սաղ . ժը . 2 .) Իսկ աստ զնի փոխանակ
այնպիսոյ բարւոյ , որով որ լիացեալ շատանայ և
զուարձանայ յինքեան . և զսոյն զայս կոչեաց 'ի վե-
րոյ բարեկենդանութիւն , և զեզ . Վայց քանոզի այն
պիսի բարւոյ լիութի կացուցաննէ զմարդն նաև ենթա-
կայ արտարին փառաց , և պատուոյ . այսինքն թէ ար-
ժանի առնէ զմարդն փառաւորեալ և պատուեալ լի-
նելոյ , վասն այսօրիկ նոյն բարութիւնն կոչի և ժառաւ :
Վրդ մարդարեն ցուցեալ զինքն նախ վրիսպեալ յայս-
պիսի լիութենէ , և 'ի վրիսպին անդ իւսովեալ , 'ի գուա-
նելն ասաւ զայն յայ վերստին՝ իբր զառհաւատչեայ
ինչ ամենազեղ լիութեան անանցանելի փառաց , զուար-
ձանայ 'ի հոգի իւր , և ցնծալից բերկրանոր ազաղակէ
առելով :

Որդէս սաշմս ասասցեն տէղ ժառաւ էմ : Այս բառդ որդէս՝
ոչ զնի իբր հարցական , ոյլ իբր հետեական . և երեք-
կինն կարէ առեալ լինել . մի 'ի իբր զարմացական փոխա-
նակ բառիս ոչ եւ չվարտ : Եշրկորդ իբր հաստատա-
կան՝ փոխանակ բառիս այսուհետեւ . կամ փոխանակ բա-
ռիս չառ այսորիկ : Եշրջորդ իբր պատճառական փոխա-
նակ բառիս որդէս չէ :

Եշրթէ առցի իբր զարմացական՝ կամի առել . ով թէ
զիսպրդ սաղմոս ասասցեն քեզ փառք իմ , կամ բարե-
կենդանութիւն իմ , որովհետեւ ետուր ինձ կրկին ժա-
ռանդել զայն :

Եշրթէ առցի իբր հաստատական՝ փոխանակ բառիս այ-
սուհետեւ . կամի առել , 'ի սասանիլ և 'ի խռովիլ զե-
զոյ և բարեկենդանութեան իմոյ՝ որով փառաւորեալն
էի , 'ի սուզ ըմբռնեցայ , և առ քեզ ասբարինեցայ .

և զի գուռ տեղ բարձեր յինէն զսուդ իմ՝ և զարձուցեր առ իս զփառս իմ զոր կորուսի, այսուհետեւ սազմոս ասացէն քեզ իմ այն փառք։ Կամ թէ օրովհետեւ դու զարձուցեր առ իս զփառսն իմ զկորուսէալ, այսուհետեւ նոյն փառք իմ օրհնեսցէն զքեզ։ որ է ասէլ, օրովհետեւ դու փառաւորեցեր զիս բարեկենդանութեամբ կամ բարի բազզիւք, ես ևս փառաւորեցից զքեզ իննդալից սազմոսիւք։

Եթէ առցի իբր պատճնական՝ փոխանակ բառիս ու ուստի շէ, ըստ օրում դնի յայլ թարգ՝ ևս և յեթքը՝ յասելն լվածան չի է ևս այսորէի շէ, կի՞մ որդիս չի, միտ բանին զարձեալ՝ ի նոյն վերածի ։ և կամի ասել, զայս ամ արարեր ընդ իս՝ որպէս զի սազմոս ասացէն քեզ փառք իմ։ Եւ այսմ ասացուածոյ զօրութք իմն հետեւցուցանէ՝ ասել. այս, այսպէս եղիցի ։ այսինքն է, սազմոս ասացէն քեզ փառք իմ։

Այս ասացուած՝ զերազանց իմն ոճ՝ է ձարսասանական, օրով փոխանակ՝ ի մէջ բերելոյ անձին՝ ի մէջ բերի այն՝ որ է անձին. կամ փոխանակ՝ ի մէջ բերելոյ այնը՝ որ առնէ, ՚ի մէջ բերի այն՝ օրով առնէ. և այս ոճ՝ յաճախ է՝ ՚ի սուրբ զիրս. որպէս այն զոր ասաց եղիուս առ յովիք. * մի ահ իմ զարհուրեցուցից ըզքեզ։ (յոր. լ՛. 7. .) փոխանակ ասելոյ՝ մի զարհուրեցուցից զքեզ աշիւս։ Որպէս և այն զոր առն սազմոն։ * Փառք թագաւորի պատուեն զհրահանն։ (առակ. ին. 2. .) փոխանակ ասելոյ թագաւորն իւրով թագաւորական փառօք պատուելի առնէ զհրամանն՝ զորս պատուիրէ։ Իստ այսմ ոճոյ իոսի և աստ մարգարէն։ զի փոխանակ ասելոյ՝ սազմոս ասացից քեզ փառօքս, կամ վասն ժառանգելոյ զփառս առ՝ ՚ի քէն, ասէ. սազմոս ասացէն քեզ փառք իմ։ Եւ առ՝ ՚ի ցուցանել թէ այս սազմոսասացութիւն զոր զնէ՝ իցէ անտրտում և անգագար՝ յարէ զկնի, և ասէ։

Եւ այլ թէ ևս շշաշաց։ Այս բան կարէ նախ յարիլ յայն՝ զոր ասաց՝ ՚ի նախընթաց համարն * զարձոյց զսուդ իմ յուրափառութիւն։ Եւ ըստ այսմ առեալ կամի ասել. այսուհետեւ փառաւորեցից զքեզ ցնծութք և որբախութք. և ոչ ևս բնաւ զղջացաց. այսինքն ոչ ևս տիրեցայց կամ սգայայց անյուսութք ընդ թը-

ուառութիւն մեղաց , կամ ընդ կործանումն փառաց :
որովհետեւ զմեզս իմ զնմ թողեր , և 'ի թշուառութէ
զիս ազատեցեր , և ուրախութեամբ մեծաւ զանձն իմ
լցուցեր :

Կարէ յարիւ երկրորդ՝ յառաջին հատուած այսր հա-
մարոյ , յայն՝ զօր ասաց . * Ասղմնոս ասացեն քեզ
փառք իմ : Եւ ըստ այսմ առեալ բառդ և զանցաց
զնի փոխարերութէ . որով և միտ բանին լինի այս . 'ի
սաղմնուել իմում առ քեզ ոչ յետս կացից , և ոչ նա-
հանթեցայց 'ի սաղմնուելոյ , և ոչ ընաւ կասկածեցաց
'ի յօրհնելն զքեզ . որ է առել . անդուելի սաղմնուիք
և անհասանելի օրհնութէ օրհնեցից զքեզ : Հայու-
հայելով յարէ զինի և առել :

Տէր ած էմ , յառետեան իսուսուլուն եղէց ուն : Հայու բան
բառդ յառետեան՝ երբակի կարէ առեալ լինել . մի՞ իրը
թեապէս կամ ընդ թելութէ . յոր միտս կամի ասել .
ցորչափ կեամ 'ի մարմնին թէլ և յաւիտեան տեւեսցէ:
կեանք իմ , միշտ խոստովան եղէց քեզ . այսինքն յայտ-
նեցից զբանուելիս քո , փառաւորեցից զմնարգասաիրու-
թիւն քո . օրհնեցից զաննիմազ ողբարմութիւն քո . եւն :
Երկրորդ՝ արձակապէս ըստ յատուկ նշանակութեան .
յոր միտս կամի ասել . խոստովան եղէց քեզ 'ի յաւի-
տենիս յայսմիկ , և 'ի հանգերձեալ յաւիտենին՝ յա-
փետեանս յաւիտենից :

Երրորդ՝ ըստ շարունակելոյ կամ ըստ հանապազր-
դելոյ . յոր միտս կամի ասել . հանապազ օրհնեցից
զքեզ , և զոհացայց զքեն , և շարունակեցից 'ի նոյն .
և եթէ պակասեցայց ևս երբեմն ջանացայց ընու-
զնոյն : Ի յա երրորդ եղանակ յատուկ է սրբոց և ամ-
բարեպաշտից . իրը զի եթէ զիսպի նոցա պակասիլ 'ի
պաշտամանց , կամ կասիլ 'ի հոգեոր օրհնութեանց
փութան ընուլ : Եթէ և քեզ պատահիցի այս , իրը զի
եթէ կարեոր ինչ զործք կամ զբաղմունչ ոչ թողու-
ցուն զքեզ հանապազրդել 'ի պաշտաման տն , ջա-
նամ և զու ընուլ զբակասիլլ : Հյորժամ պակասի մեղ
մարմնաւոր կերակուր կամ քուն վասն զբաղէլոյ յիմիք ,
փութամբ ընուլ զբակասութիւնն զայն՝ ուտելով և
ննջելով , ապա ևս առաւել 'ի պակասին 'ի հոգեոր
կերակոյ և հանգստենէ , այսինքն յօրհնութեանցն

այ և 'ի պաշտամանց նորին :

Խսկ վասն բառիցդ դր ած էմ , զիտելի է , զի այս բառք
թէպէտե կարեն յարիլ 'ի նախընթաց հասուածն
այսպէս . * և մի ևս զղջացայց տէր ած իմ , բայց հայ-
ելով յայլ թարգմանութիւնս , ևս և 'ի կարգ բանին
յարին 'ի սկզբն այս հասուծոյ , որպէս և եղաք .
այսինքն է . * տէր ած իմ՝ յաւիտեան խոստովան եղեց
քեզ : Եւ զայս զնէ մարգարէն յառաւելութէ բեր-
կրութեան սրտի խւրոյ , և 'ի փափաքանաց ժառանգելոյ
զնա՝ առ որ սաղմանէ . որպէս թէ ասէր . խոստովան
եղեց քեզ յաւիտեան՝ 'ի ժառանգել իմում զտէրդ և
զածդդ իմ յաւիտեան : Կամ թէ զու՝ որ տէրդ ես և
ած՝ իմ ես յաւիտեան . վասն որոյ և ես յաւիտեան
օրհնեցից զքեզ : Ուարթ է ևս ասել , թէ այսոքիկ
բառքս դր ած էմ՝ իցեն ինդիր . խոստովան լինելոյն .
որպէս թէ ասէր , յաւիտեան խոստովան եղեց՝ թէ
զու ես տէր աստուած իմ :

Վ. յլ արդ այս բանք՝ որք ասին 'ի գաւթայ՝ հայելով
յայն ամմ՝ զորս բացարեցաք 'ի վերոյ , ըստ ինքեան
և տիրապէս ասացեալ լինին 'ի բերանոյ երանելեաց
բնակելոց 'ի տան նոն յերկինս . զօրոց ասէ այլուր սոյն
այս երանելիս . * Կրանի ամենեցուն՝ որ բնակեալ
են 'ի տան տեառն՝ յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն
զքեզ : (սաղ . ձգ . 5 :) Վանզի այսպիսումն վայել
է երգել յարգայութեան անդ և ասել առ ած . սաղմա-
ասացեն քեզ աննիազելի և անկորնչելի փառք իմ .
և ես առանց զղջանալոյ օրհնեցից զքեզ յաւիտեան :
Կարէ այս բան և 'ի բերանոյն քնի ասիլ վերաբերութ
իմն՝ հայելով յօր յարութէն նր , այլ սակայն բարձրա-
դոյն օրինակաւ . իբրև թէ ասել . փառքն իմ զօր ե-
տուր ինձ ըստ մարդկայինս բնութեան իբրև զիմսեփա-
կան ժառանգութիւն , օրհնեսցեն զքեզ յաւիտեան :

00000000

Պաղատանք արգարոյ յուսացելոյ 'ի մը . և ինդըր-
ուածք ազատելոյ 'ի նեղութենէ , և զերծանելոյ 'ի հա-
լածմանէ թշնամեց . ևս և յայտաբարութիւն ինամոց
մը 'ի վերայ երկիւզածաց իւրոց :

1. Հայութած սաղմոս է դաստիարակութեան գույնու վահաբան :

թելուր . և իշխան է դժոխք . համբ է զիցին շընթառ և նէնդառք ,
ոյս կառավարի պարտարար զանիբար միան , յամբարար անուննեան .
և յանդառանեն է բրենդ : 20 (լորեն չ բաղան է ողբան թիւն
պաշտուեն ու այ պէ , զոր պահեցեր երիտածաց ուց : 21 Վը-
բեր դու այնցիք , ոյս յառաջեւալ էն է տեղ . առաջի ուրտոց
մարտին : 22 Վը բարացեր զնոս է ծածկոյն երեսոց ուց : է
իւնալուն մարտին : 23 (օսմանից զնոս է խորանի տամ ,
է համարական մէկ լուսաց : 24 (օրդուեւալ պէ , զ է առանց լուս-
արք , զըրբան միան է բր է առաջ անուր : 25 կը առաջի է
պարմանաւ է մամայ , մէ չնիւցայ ուրեմն յերեսոց ալսց ուց :
26 Վը այսորիք լուսոր չայնի աղօնից ինց . յաշալան է մամա-
յան տեղ : 27 Վիրեցէն զոր ամ սբու նորս . զ է առաջաւեւան
իւնալուն պէ . և հարացանէ այնցիք , որ առաջեւանն զամ-
բարացան մէկ : 28 Վը զալաւեցարան և զըրացին սիրա-
յէր , ամենեւան՝ ոյս յառաջեւալ էն է պէ :

Ա Յ Բ Շ Ա Գ Ի Պ

Ի հասարած , սաղմոս է դաստիլ . նահաւասիստիւն գո-
վանելուն :



F ՏՊՐՎՐԱՇՎԼ ՍՄԳ ՄՈՍՍ ԻՆ.Օ
մեր այս վերնագիր զնի այսպէս . * 'ի
կատարած , սաղմոս զաւիթի (կամ 'ի զա-
ւիթ) օքնութիւննահատակութեան : | Ճեռագիրս
ինչ զնի առանց բառիս է իւրաբած . այսպէս . * սաղ-
մոս 'ի զաւիթ , նահատակութիւն զովութեն : | Ըսմանն
զնի . * | կատարած , նահատակութիւն զովութեան ,
սաղմոս 'ի զաւիթ : | սոյնպէս զնի և 'ի վարդանայն :
| սկ յընտիր ճեռագիրս մեր զնի ըստ վերոյ եգելոյդ .
* 'ի կատարած սաղմոս 'ի զաւիթ , նահատակութի զո-
վութեան : |

Ըերբայականն , նոյնպէս և 'ի քաղղէականն ոչ զնի
նահատակութիւն զովութեն . այլ միայն , * 'ի կատա-
րած , սաղմոս 'ի զաւիթ : | Ըստորւոցն զնի * Պա-
հուի 'ի զաւիթ , և մաղթանք մշտնթէնաւոր առ առ :
Ըսրաբացւոյն զնի . * | Կնձկութեն փափաք , աղօթք

և գոհութիւն || : | լստինն և յեթէովացոցն զնի . * սաղմա գաւթի վասն յափշտակութեան (մօաց , այս ինքն վասն վերացման կամ ասղութեան մօաց) || : | թարգմանութեան եօթանամնից զնի . * 'ի կատարած , սաղմա զարմացման 'ի գաւիթ || : { Յորմէ առեալ ոմանց եղեալ են ուրեք և 'ի մերս , որպէս տեսանի 'ի ձեռազրի միում . * սաղմա 'ի գաւիթ վասն զարմացման || :

Դայց զիտելի է՝ զի ոչ յամ օրինակս եօթանամնից զնի այդ . քանզի կան և այժմ ձեռազիք օրինակք ինչ եօթանամնից , յորս ոչ զնի այդ բառ . այսինքն զարմացումն , կամ սաղութիւն : | ախս 'ի հին օրինակս ինչ զորս յիշեն նախնի թարգմանիցք 'ոչ գտանիւր այդ բառ : | և հաւանական թուի ասել 'թէ կոյին և այլ օրինակք , յորս փոխանակ յունարէն բառիդ է+սրտահէ եղեալ էր է+սրտէ-սրտէ-սրտ , որ նշանակէ նահատակութի կամ ելումն 'ի ճակատ , կամ մղումն 'ի մարտ , և ն . զի թէ ոչ էր եղեալ այսպէս 'թարգմանիցք մեր զիարդ զնէին նահատակութիւն . որովհետեւ բառդ է+սրտահէ 'ոչ նշանակէ նահատակութիւն , այլ ասղութի մօաց , կամ հիացումն , կամ զարհուրանք , և ն . որպէս զնեն յայլ տեղիս . զի ուր ուրեք 'ի սուրբ զիրս առ յօյնս է+սրտահէ զնի , թարգմանիցք մեր եղեալ են զայդոսիկ բառսդ , այսինքն է ասղութիւն , զարհուրանք , հիացումն , և ն . և ոչ երբէք նահատակութիւն : | լրեմն և յօրինակն յայն յօրմէ թարգմանեցաւ մերս , ոչ էր եղեալ է+սրտահէ . այլ է+սրտէ-սրտէ-սրտ , այսինքն նահատակութիւն . կամ շահատակութի 'ի մարտ :

| ասկ թէ առ ինչ զնի աստ 'ի մեզ բառդ նահատահէ-սրտէ , զիտելի է , զի նահատակութիւնն ըստ յատուկ առմանն իւրում նշանակէ անվեհէ էր յարձակմամբ զիմումն 'ի դժուարին ինչ , կամ 'ի վտանգ մահու , մանաւանդ 'ի պատերազմի . յոր միտս և զմարտիրուութին կոչւմք նահատակութիւն : | աստ որում մարտիրուք անվեհէ էր զիմեցին 'ի մահ վասն քսի : { Կայսովիաի զիմոզուն էր կու ինչ տեսանի . մի՝ վտանգ ծանր 'ի կողմանէ այնր 'յոր լինի զիմել . և մի ևս՝ անվեհէ էր յարձակումն 'ի կողմանէ նորա՝ որ զիմէ :

Վրդ յայտ է թէ գաւիթ պաշարեալ 'ի ծանր վտանգս ,

և 'ի վիշտա տրորիւս կենաց՝ անվեհեր գտաւ , և ու
լքաւ 'ի սիրտ իւր . եկաց վատահ' և աներկիւղ՝ եզեալ
զյոյս իւր յանդ :

Եւ զի բանիք սաղմնախ յայտ առնեն զայտոտիկ հան-
գերձ գովութք՝ վասն այսորիկ և 'ի վերնազրի սօրա
եգաւ * նահատակութիւն գովութենք . կամ * օրշնութիւն
նահատակութենք . ուր եթէ բառս գովութիւն հայիցի
առ անձ՝ ար վերնազրի յայտ առնեն զնահատակութիւն
դաւթի՞ 'ի գովութիւն այց : Խակ եթէ հայիցի յանձն
դաւթի, ցուցանե՞ թէ այս սաղմնա է այնպիսի օրշ-
նութիւն՝ յորում յայտնի լինի գովելի նահատակութիւն
դաւթի :

Ուրթ է ևս ասել, թէ նաև բարդ առշաբանի հասաց,
կամ շարժայածն՝ որ դնի յայլ թարգմանութիւնն , 'ի
սոյն հայի . զի որովհետեւ ի ծանր վիշտա՝ պատահի
երբեմն ապավութիւնն մատաց , կամ հիացումն , կամ զար-
հուրանիք , որպէս և դիմաւ դաւթի . ըստ որում առէ
'ի համարն . 25 . * | յա ասացի 'ի վարժանաւ իմում , թէ
ընկեցայ ուրեմն յերեսաց աշաց քոյ || . գուցէ յայտ
սակա եգեալ է առ նոսա զարմացումն , կամ ապավութիւն .
Եւ կամ զի թէ երեսա այսու նշանակի յափշտակութիւն
մտացն դաւթի առ անձ՝ ի յուսալ նորա 'ի նա 'ի վիշտա
իւր :

Ե. Ա. թէ զինչ իցէ լեալ մասնաւոր սորիթն յօրինե-
լոյ դաւթի զայտ սաղմնա , պէսպէս բանք են : Ոմանիք
ասեն՝ թէ զայտ յօրինեալ իցէ նորա հայելով 'ի ժամա-
նակն յայն՝ յորում յետ հարածելոյ 'ի սաւուզայ՝ փա-
խեաւ և զնաց 'ի գէթ առ անքուս որդի մովաքայ (ա .
թագ . իէ . 2 :) Ոմանիք թէ զայտ ասացեալ իցէ վասն
ժամանակին , յորում պաշարեցաւ 'ի սաւուզայ յա-
նապատճն մասնայ 'ի տեղին կոչեցեալ վէմ . (զայտ-
մանէ լիադոյնս զրեցաք 'ի սաղ . իդ . 7 . տեսս անդ :)
Ոմանիք թէ զայտ ասացեալ իցէ հայելով 'ի ժամա-
նակն 'յայն՝ յորում նախ առաջին սկսաւ նախանձիլ
ընդ նա սաւուզ , և խորհեցաւ սպանանել զնա (ա .
թագ . ժթ . 1 :) | յա թէ պէտ յովնաթան որդի սա-
ւուզայ ընդ մէջ մուեալ խափանեաց զիորհորդ հօր
իւրոյ սաւուզայ . բայց յետ քանի մի աւուրց նա ինքն
սաւուզ լկեալ յայտն չարէ՝ յերգելն դաւթի առա-

ջի նորա՝ կամեցաւ * հարկանել զգեղարդն ընդ նա և
ընդ որմն ։ (ա . թագ . ժ Ճ . 10 .) և զաւիթ երկու-
յեւալ փախեաւ ՚ի տան իւր : Վագեաց սաւուղ զինի
նորա արս՝ սպանանել զնա ՚ի տան իւրում : Խոկ մեղ-
քող կին զաւթի , որ էր զուսոր սաւուղայ , փախոյց
զնա , և զերծոյց՝ իջուցեալ ընդ սպատուհանն . և զա-
ւիթ զնաց , և բնակեցաւ առ ժամանակ մի ՚ի նաւաթ
հնասիայ . և այնուհետեւ սկսաւ շրջիլ թափառական ,
երերեալ և տաստանեալ աստ և անդ . կրելով բազում
տաստապանս ՚ի բազում վտանգս . մինչեւ հուսկ յետոյ
զնաց առ անքուս ՚ի գէթ , և բնակեցաւ ՚ի սիկելակ՝
և յետ ժամանակաց ՚ի զունել սպարասոր երգեաց
զաս : Վ. յս կարծիք քան զայս երեխ հաւանական , և
հշմարիս :

Իւազումք ևս կան՝ որք ասեն ընդ որս և վարդան , թէ
զայս սաղմոս սասցեալ իցէ զաւթի հայելով ՚ի ժա-
մանակս հալածանաց արեսաղումայ . և թէ վասն ասկ
շելոյ նորա յայնժամ ընդ եղեալն , և վասն զարհո-
րելոյ յերեսաց արեսաղումայ՝ եղեալ իցէ ՚ի վերնա-
զրի եօթ” . բառդ ապշտեն :

Վ. յս ամ կարծիք կարեն իւիք հշմարտիլ . զի զօր հա-
լածումն և զիցես , և զօր վիշտ և ասիցես՝ թէ՛ ըստ
հոգեորին , և թէ ըստ մարմնաւորին , բանք սաղմո-
սիս կարեն հայիլ ՚ի նոյն . բայց առաւելապէս յայն
վիշտ և յայն վտանգ՝ զորս կրեաց զաւիթ զամն իրը
եօթն սպատճառաւ հալածանացն սաւուղայ . որպէս
տեսցի յառաջիկայդ :

Բ Ա Պ.

iii. Ա ժէշ առ յառաջացայ , մի ամացեցից յա-իտեան . յարդա-
րանեան առ ի իւն իւն և աղբեցաւ դիւն :

Ա Ե Կ Ե Ո Ւ Թ Ծ Ւ Ե

Յուսալն ՚ի կրկին միտս առեալ լինի . մի՝ փոխանակ
այնք ներդործութեան բաղձանաց՝ զորով մարդն յօժա-
րի հասանել իւիք բարւոյ ըստ օրում բարի . և սա
չիմն ունի զաւըն առ յուսալի բարին . և մի ևս՝ փոխա-

նակ այնր ներգործութեան բաղձանաց՝ որով մարդն յօ-
ժարի գտանել ազատութիւն՝ ի շարէ . և սա կըկին ու-
նի հիմն , հեռաւոր և մերձաւոր . հեռաւոր հիմն է սէրն՝
ոչ առ յուսափի բարին , այլ առ անձն , և առ ազա-
տութիւն՝ որ է բարի ինչ . իսկ մերձաւոր հիմն կամա-
սիթն ոչ է սէրն , այլ երկիւզն խորշելի շարին կամ
վնասուն : Խըկոցունց առարկայ ևս է բարին , բայց
առիթ միոյն է բան բարւոյ . և միւսոյն՝ բան շարի կամ
վնասուն : Վըդ որպէս յայտնի երեկ յընթացից սաղ-
մոխիա՝ ըստ սյում երկրորդ առանն ՚ի մէջ բէրի աստ
բառդ յառաջ : Եթզ զի պաշարեալ գաւիթ ՚ի վտան-
գաց , և թողեալ յօգնականութենէ մարդկան , ազա-
տութիւն կամելով գտանել յած զնէ զյոյս իւր . և

յայտ յոյս հաստատեալ ասէ :

Ի ուշ ուէր յառաջայ , Ք՝ ամաչեց յառիւրեան : Ուրք միան-
գամ յուսացանն ՚ի մարդիկ , բազում անգամ վրիսկե-
ցանն ՚ի յուսայ իւրեանց , որով և ամաչեցին . զի որով
հետեւ մարդիկ ոչ են ամենազետ և ամենակարօղ ,
թէ և օգնեացեն յուսացելոց իւրեանց , սակայն ինչ
ինչ ոչ զիտելով , և ինչ ինչ ոչ կարելով՝ պատահի
բազում անգամ , զի օգնութիւն իւրեանց ՚ի գերե ե-
լանէ , և երբեմն ՚ի վնաս դառնայ : Իսկ որք յուսան
յած ոչ ամաչեսցեն : Ուստի և գաւիթ յայտ վտա-
հացեալ ասէ՝ ՚ի վտանգիլ իմում ոչ յուսացայ ՚ի
մարդ , այլ ՚ի քեզ , որ տէրդ ես ամի , և իշխես ՚ի վր
ամենեցուն . վասն որոյ և ոչ ամաչեցից , որպէս ամա-
չեն յուսացեալքն ՚ի զօրութիւն մարդկան :

Եւ թէպէտ նաև որք յուսանն ՚ի մարդիկ՝ ոչ միշտ ա-
մաչեն . զի երբեմն ըստ յուսալոյ իւրեանց հասա-
նեն այնմ՝ որոյ վասն յուսան , բայց բազում ան-
գամ ևս պատահի նոյցա ամաչել . իսկ որք ճշմարտա-
պէս և աներկուանալի մոտք յուսան յած , ոչ երբէք
ամաչեն . և առ այս յաւելու զբառդ յառիւրեան : Եւ
սորա պատճառն է , զի որովէն արդար է տէր , և
զարդարութիւն սիրէ , յորժամ տեսանէ՝ զի մարդ ՚ի
վտանգիլ իւրում յայլոց անիրաւութէ , ոչ ՚ի մարդ՝
այլ յինքն յուսայ , ըստ իւրում արդարութեան պաշտ-
սանէ զնա , և փրկէ . սմին իրի յարէ մարդարէն
զինի , և ասէ :

Ուրբարութե ուսմ իրէն՝ : Կամի ասել, որովհետեւ արդար ես գու տէր, և ըստ արդարութեան քում սովոր ես պատուհասել զանգարիշտոս, և փրկել զվանն զեալմն, և զզրկեալմն՝ որը յուսան ՚ի քեզ, այդու արդարութեամբ փրկեա և զիս զվաննզեալս, որովհեա ՚ի քեզ յուսացայ : Եւ առ ապահովութիւն փրկութեան այսինքն առ ՚ի տիրապէս փրկեալ լինել՝ յաւելու ասել :

Եւ ապրեց՝ չես : Վարեցուցանել և փրկել թեպէտ և զնոյն ցուցանեն, և բազում անզամ ՚ի տեղի մեմնաց ՚ի գործ ածին, բայց ըստ նիշգ նշանակութեի խրեանց երկորումբը տարբերին : Ո՞ւ զի փրկելն է, զերծուցանել ՚ի չարէ . իսկ ապրեցուցանելն է, զերծուցանել ՚ի վտանգէ չարի : Եւ մի ես՝ զի փրկելն փաղանշանէ սոսկ զերծ կացուցանել ՚ի չարէ . իսկ ասկը ցուցանելն փաղանշանէ ոչ միայն զերծ կացուցանել ՚ի չարէ, այլև ժամանեցուցանել ՚ի բարին : Եւ թերես յայս միտս զնի աստ այս յաւելուած :

Վ. յս բան կարէ վերածիլ և ՚ի յոյս թողութե մեղաց . ըստ որոյ կամի ասել . ՚ի մեղանչել իմում ամօթ անշնարին պաշարեաց զիս, բայց ՚ի յուսալ իմում առքեզ՝ փարատեսցի իմ այս ամօթ, և մի ամսչեցից յաւետեան . և դու՝ որ սովոր ես զթալ յուսացելոց ՚ի քեզ, այդու սովորութե փրկեա զիս ՚ի չարէ մեղաց, և ապրեցն ՚ի զատապարտութէ : Վ. յլ այս մեկնութիւնի երկրորդաբար զնի . իսկ մկղբնական դիտումն բանիս հայի ՚ի յոյս աղաստութեան ՚ի վտանգէ :

Եւ քանզի այն վտանգ, յորմէ ուներ ապրիլ դաւիթ՝ հասեալ եր ՚ի վերաց, և մերձ եր կորուսանել զնա՝ յայն հայելով փութացուցանէ զած՝ վաղվաղակի լսել և օգնել ինքեան և փրկել . վասն որոյ յարէ զինի և ասէ :

Ա . **Ա** հարհեց՝ ու իս զնունին ոյ . Հաղաքամ հեղացանել չի :

Օ ունին ասել յած՝ փոխարերական նմանութիւն է, և զնի փոխանակ հաճութեան նորա՝ առ ՚ի օգնել և առ ՚ի փրկել ըստ արդարութեան և ըստ ողորմութե . զի որպէս ունին է, այն ինչ՝ որով լսէ, մարդ, սոյնպէս և

Համութիւնն այ ըստ արգարութե և ըստ ողորմութե
է այն բնու . որով իրը և թէ լսէ մեզ ած , այսինքն
համի օգնել մեզ և փրկել զմեզ , և ժամանեցուցա-
նել՚ի բարին՝ ըստ ապահնելոյ մեր առ նա , և ըստ
աղաւելոյ մեր զնա : { } այս միտս ասէ :

Առաջընեց՝ առ իս զնուին առյ : Կարեր առել : Լ առը .
որպէս զնէ այլուր . բայց ոչ զնէ այդպէս . այլ եռ-
արհեց՝ առ իս զնուին առյ : Եւ այս ըստ չորից . Կախ
առ ՚ի ցուցանել զբարձրութիւնն այ . զի խոնարհին
բարձրացելոյն լինի . ուստի և յասելն առ ած խռար-
հեց՝ զնուին առ . այս բան յայտ առնէ զնորա բարձրու-
թիւնն : Երկրորդ՝ առ ՚ի ցուցանել զխոնարհիլ անձին
իւրոյ առաջի այ , կամ զզիջանիլ իւր ՚ի խորս խոնար-
հութե , առ որ պիտոյ էր և լսողին խոնարհեցուցանել
զունին՝ զի մարթացի ըմբռնել զասացեալն . Եր-
րորդ՝ առ ՚ի ցուցանել զպատրաստ լինելն այ կամ
զյօժար լինել նորա ՚ի լսել և յօգնել մեզ . զի զոր օ-
րինակ որ ունին խոնարհեցուցանէ կամ ունին մա-
տուցանէ ու մեք , այնու իսկ ցուցանէ զյօժարութի լսե-
լոյն . այդպէս ևս յորժամ ասի զայ խոնարհեցուցա-
նել զունին՝ ՚ի մէջ բերի այնու յօժարութի նորա ՚ի
լսել և յօգնել . և զայս ինողբեմք յայ ասէ լսմք .
՚ի հաւանութի մտաց մերոց . զի որպէս ձանիւ խօսիմք
առ ած՝ որ անկարօտ է ձայնի , և հաւանիմք թէ լսէ ,
սոյնպէս զխոնարհիլ ունկանն պաշանթեմք , զի հա-
ւանեցուցուք զմեզ թէ յօժարի լսել : Ըսրբորդ առ
՚ի ցուցանել զմեծ կարօտութիւնն , յորում էր , և կա-
մեր փութով լսելի լինել . զի մօտ տեսանէր զվր-
տանզն՝ որ ՚ի վերաց կայր . վասն որոյ և փափաքէր , զի
մօտ առ ինքն լինիցի որ ՚ի բարձունա է բնակեալ , այս-
ինքն է խոնարհեացի կամ զիջցի առ ինքն , և փո-

թասցի փրկել . վասն որոյ յարէ զինի , և ասէ :

Առաջընեց՝ էնցանել զն : Որպէս թէ ասէր . և թէ
յամեցես փրկել զիս , կորնչիմ ՚ի կենաց . զի առ
դուրս հասեալ կան կօրուսիմք կենացս . փութա ու-
րեմն , և պաշտպանեալ զիս . որպէս զի փոխանակ կո-
րուսանելոյ զկեանս իմ՝ քե գտից զնոյն , և էնցի .
Երջ թէ զինչ առ այս պարտ էր առնել այ՝ առաջի
զնէ , սանելով :

Եր իմ ած պաշտպան , և ոռուն աղաւենի , աղբեցու-
յանելով : Ան հրօւնէն և աղաւենի իմ դու է :

Պաշտպան լինելն է մասնաւոր ինն խնամով պահել
զոք անվնաս ՚ի վտանգաց , կամ ՚ի վնասիք իրաց մօտ
եղելոց , կամ պաշարողաց . զոք օրինակ ՚ի լինել ու-
մեք ՚ի մէջ նեղացաց եթէ ոք խնամ ինչ ցուցանելով
նմա՝ անվնաս պահեցաց զնա ՚ի նեղութենէ անտի՝ ասի
պաշտպան լինել նմա կամ պաշտպանել . որպէս ա-
ըար ած յակոբայ ՚ի պաշտպանելն զնա՝ ՚ի նեղի նո-
րա ՚ի լաբանոյ (խմասո . Ժ . 11 :) Ոյնպէս և ՚ի գտա-
նիլ ումեք ՚ի վտանգի անկանելոյ ՚ի ձեռս թշնամեաց՝
եթէ ոք անվնաս պահեցաց զնա , ասի պաշտպան լի-
նելնմա . Վրդ զաւիթ պաշարեալ ՚ի թշնամեաց իւ-
րոց , և անկեալ ՚ի վտանգ , չոնելով զոք իւր պաշտ-
պան և տեղի ապաւինելոյ , առ ած դիմէ , աղաւ-
և ասէ :

Եր իմ ած պաշտպան , և ոռուն աղաւենի , աղբեցույանել
չէ : Կամի ասել , զու միայն ած իմ՝ լեր ինձ պաշտ-
պան՝ պահելով զիս անվնաս ՚ի վտանգաց հասելոց ՚ի
վր իմ . զի չունիմ զայլ ոք՝ որ պաշտպանեցէ ինձ :

Եւ եթէ փախչիցիմ՝ չգտանեմ առ ժամայն տեղի
ապաւինելոյ . զի մինչեւ գտեալ իցէ իմ զայն , վտան-
գիմ . վասն որոյ զու ինքն լեր ինձ նաև իրբեւ տուն
ապաւինի , այսինքն լեր ինձ այնպիսի ինչ , որով ապ-
րեցայց : Եւ առ ՚ի ցուցանել թէ կարօղ է ած , և
կամեցող ապրեցուցանելոյ յարէ զինի , և ասէ :

Օ չ հզօւնէն իմ և աղաւենի իմ դու է : Վ յսինքն է . զու
միայն ես՝ որ ՚ի տկարանայս իմ զօրացուցանես զիս ,
քանզի կարօղ ես . և ՚ի պաշարիս իմ ՚ի վտանգից՝
լինիս ապաւէն , զի կամիս և հաճիս օզնել և պաշտ-

պանել :

**Վ յս բան այլով իւիք զանազնութեք ևս կարէ մեկ-
նիլ՝ (զորմէ տես ՚ի սաղ . Հ . 3 :) Վ յլ զի ցուցցէ մար-
զարէն՝ թէ յիրաւի հաճի ած ընդ այն՝ զոք մաղթէ ,
առաջի առնէն և զայն՝ զոք արարեալ էր նմա ած .
խնդրելով միանգամայն և զիրկութիւն նորա , վասն
որոյ ասէ :**

Ղ. Առ անուան ոյ առաջնորդեցեր ինչ, և անուցեր չին. և հանցես զիս յըրսդայթէ յայսմանէ, որ նա ուղարկած ինչ :

Ի բազում իրս ետես և եղիտ գաւիթ զառաջնորդութիւնն այ, մանաւանդ՝ ՚ի հանդիսի անդ, յորում յանուն տն եհար զգողիաթ (ա. թագ. ժէ. 45-51.) սոյնպէս և յայլ բազում նուազս : Խակ ՚ի փախցիլ իւրում յերեսաց սաւուզայ և արեսազումայ՝ ետես զինամն նորա ՚ի սնուցանել նորա զինքն զի իւրե պակասեաց կերակուր նորա և որոց ընդ նմա՝ կերակրեաց զնա անձ երկիցս . միանգամ հացիւ առաջաւորութեան (ա. թագ. ինա. 3-6.) և միանգամ ևս այլովք կերակրովք՝ զորս բերին նմա սիբա, և վեսրի, և մաքիր, և բերզելի . (ը. թագ. ժէ. 1 : և ժէ. 27-29.) Օ այսոսիկ բարերարութիւն՝ զորս եղիտ գաւիթ ՚ի ինամոցն այ, տարածանէ առաջի նորա, և ասէ :

Ա. առ անուան ոյ առաջնորդեցեր ինչ, և անուցեր չին : Ա անս անուան քոյ ասելով տայ իմանալ զիփառս անուանն այ, որպէս թէ ասէր, վասն փառաց անուան քոյ, կամ առ ՚ի փառաւորութիւն անուան քոյ . (զորմէ տես ՚ի սաղ. ինշ. 9.) Խւ միտ բանին է . թէ որպէս վասն փառաց անուան քոյ առաջնորդեցեր ինձ ՚ի բազում իրս մինչեւ ցայժմ, և ՚ի վտանգիս իմ ՚ի սովէ՝ կերակրեցեր զիս, և այնու սնուցեր զիս, որով և ցուցեր ինձ զօգնութիւ և զպաշտպանութիւ քոյ, սոյնպէս և այժմ ցոյց զնոյն օգնութիւ և զպաշտպանութիւ : Խակ թէ յորս ցուցանելոց էր զայն՝ յայտ առնէ ասելով :

Հ. հանցես զիս յըրսդայթէ յայսմանէ, որ նաքայաւ ինչ : Ուր շաղկապդ և ունի զզօրութիւն բառիս նոյնուն . որպէս թէ ասէր, նոյնպէս և այժմ հանցես զիս յորս գայթէ յայսմանէ : Ա. յառ որոպայթիւ զոր յիշէ, իմացեալ լինի այն վտանդ, յոր պաշարեալ էր գաւիթ և մերձ էր կորնցիլ կամ ըմբռնիլ . և զի յայն վտանդ անկաւ ՚ի նենգութէ թշնամեաց իւրօց, վասն այնորիկ ասէ՝ որ նաքայաւ ինչ : Խակ թէ ՚ի մասնաւորի որ էր այն վտանդ, չունիմք որոշել . կարէ լինել

մին յայնց, զօրս նշանակեցաք 'ի վերնապրի' : Կարէ
իմասցեալ լինել և վտանգն հոգեւորական . զրմէ տես
'ի լամք' . որն և դիցի՝ յարմար է : Կառելով առա
մարդարէին ցուցանել, թէ արժան է այ ազատել
զինքն յարսպիսի վտանգէ, յայլմէ զիսոյ ևս թախան-
ձե զնա . և բոլորովին 'ի նոս ապաստանէալ' յաւելու
և առէ :

Է. **Պ**ատ էս պաշտպան իմ ունչ . և 'ի ջեռու ույ յանցն առ-
նեմ պառագի իմ :

Խ վերոյ ('ի համարն 3) ասաց * լիր իմ պաշտպան || .
իսկ աստ ոչ առէ լիր . այլ թէ էս պաշտպան իմ : Վոդ-
եղ զբառդ ած, իսկ աստ զբառդ թէ . զի անդ ինպրէր
իբր յայ . իսկ աստ իբր 'ի տնել . իբր զի զած ինպեան
տէր հանաւելով, և զինքն ծառայ նորա խոստովանեւ-
լով զիրաւունս տրուե նորա և զիւրոյ ծառայուե առա-
ջի զնէ . որով զօրաւոր կոմի առնել զբան իւր
յասելն :

Պատ էս պաշտպան իմ թէ : Որպէս թէ եղեալ էր, ասա-
ցի պաշտպան լինել ինձ, և զայս առելով անսպատեհ
ինչ ոչ խօսեցայ, այլ պատեհաւոր յոյժ . զի որով-
հետեւ դու ետ տէր իմ, որ լինելովդ՝ դովին իսկ պաշտ-
պան իմ ես . զայս եղեալ հետեւ ցուցանել . ցոյց ա-
պա առէ ազամէմ զպաշտպանութիւն առ իս :

Վ այս բան կարէ զնիլ և իբր պատճառ նախանթաց
համարոյն . որպէս զնի յայլ թարդմանութիւն՝ հան-
գերձ պատճառական շաղկապիւս համա զէ . որպէս թէ
առէր . համացես զիս յօրոգայթէ յայսմանէ . զի դու
ես պաշտպան իմ : Խը ըստ այսմ 'ի վերջոյ եղեալ
բառդ թէ ոչ իբր 'ի հարկէ զնի, այլ իբր 'ի զեղմանէ
սրտի : Վորդ որովհետեւ խոստովան եղեւ զամիթ, թէ
ած է իբր պաշտպան . և հայեցեալ 'ի վտանգն՝ յոր
կայր՝ անհնարին տեսանէր զամանել այլուստ պաշտ-
պանութիւն ազատութե, 'ի վերջին միզն բանից ապա-
տան լինի, և առէ :

Վ այ 'ի ջեռու ույ յանցն առնեմ պառագի իմ : Ուր բառդ և
լուելեայն 'ի մէջ բերէ զայն ամ՝ զոր ասաց 'ի վերոյ .
որով և յամէ ինպրէ ազատանալ . որպէս թէ առէր .
պաշտպան գոլով 'ի վտանգ անզերձանէլի՝ 'ի քեզ

յուսացայ և առ պաշտպանդ իմ ասրաւինեցայ . և տա-
կաբն 'ի նոյն ըմբռնեալ զորպ և հասեալ 'ի շանչ
յետին , շունիմ ինձ զոր ձեռնտու , շունիմ զոր ա-
պաւէն , շունիմ զոր պաշտպան . վասն որոյ միայն
'ի ձեռս քոյ յանձն առնեմ զհոգի իմ . զի ոչ ևս կա-
րեմ պահել զայն յիս . քանզի 'ի վերջին վտանգի եմ .
քեզ միայն մնայ ունել զայն 'ի ձեռին , և պահել զիս
'ի կեանս . որ է ասել . քոյ իննամոցդ յանձն առնեմ
զկեանս իմ , կամ զպահանութիւն կենաց իմոց . իսկ
եթէ կամիցիս՝ զի բաժանեսցի յինէն հողիս , տամ
'ի ձեռս քոյ . զոր դու ետուր՝ տամ զբոյդ քեզ իբրև
զիմ , օրպէս զաւանդ . զու առ , դու պահեա , և դու
ինքն հասոն ինձ զայն վերստին :

Օ այս բան՝ զոր ազդեց բանն ած 'ի գաւիթ , ինքն
'ի բերան առեալ ասաց առ հայր 'ի վերայ խաչին 'ի
լրանալ ամի՞ զօր կրեաց . * Հայր 'ի ձեռս քո աւան-
ց գեմ զհողի իմ . (զուկ . իդ . 46 .) որով և զգոցիս
մեր նմա յանձն առներ . որպէս դնի 'ի շարականի .
* զհողին կամաւ հօր աւանդեր , զհողիս մարդկան
նոյն (այսինքն նոյնաբէս հօր) ընծայեր . Ուր ար-
ժան է 'ի միտ առնուլ , զի տէրն մեր 'ի ժամ խաչելուն
'ի սկսանին խօսիկ 'առ հայր բարբառեցաւ ասելով .
* հայր թող սոցա . (զուկ . իդ . 34 .) Եւ յաւար-
տել զիսօսն նոյնաբէս առ հայր ասաց . * հայր 'ի ձեռս
քո աւանդեմ զհողի իմ . զի յայտ արասցէ թէ,
հաճութքէ հօրն առներ զամ . Ա յսմ առաջին հետեօղ
լեալ սկյն ստեփաննոսի՛ ասաց առ նա ինքն բանն ած
'ի քարկոծին իւր . * տէր յա ընկալ զոդի իմ . (գործ .
է . 58 .) Օ սոյն ասացին բազումք 'ի սեց 'ի մեռանիլ
իւրեանց , և բազումք ես 'ի կենդանութէ :

Տարբերութին յայսմէ . զի քս սոսկ իբրև զաւանդ ետ
հօր զհոգին . ուստի ոչ ասաց՝ յանձն առնեմ , այլ ա-
ւանդեմ . իսկ մեք իբրև զպաշեսա յանձն առնեմք .
և թէպէտ աւանդել ևս ասեմք , բայց ըստ նշանա-
կութեան յանձնելոյ : Մրդ յանձն արարեալ մարդա-
րէին զհոգի իւր ՚ի ձեռո այ , առաջի առնէ . և զիրիկո-
թիւն իւր , և ասէ :

շ. **Փ**ըհեցեր զիս պը ած՝ ճշմարտութէ տու. առեցեր դայնու սիէ, ոյս պահեն զերէիտու ՚ի առարիս :

Խնդրեաց ՚ի վերոյ, և ասաց . * փրկեռն զիս և ապրե-
ա, ցոն զիս || : Վասա 'ի յարելն և զայս զինսի՝ կամի սովու-
ստիաբել և թափանձել զած առ ՚ի կատարել զայն
ինդիք իւր, և զայս կատարումն խնդրոյ իւրոյ հաս-
տատէ ՚ի ձեռն երկուց. մի՛ ՚ի ձեռն փրկութե՛, զօր յա-
ռաջն ցուցեալ էր նոր ած վասն յուսալոյ նորա ՚ի
նոր . և մի ևս ընդ հակառակն՝ յոչ փրկել նորա զայ-
նոսիկ՝ որք ոչ յուսօնն ՚ի նոր, այլ ՚ի սնոտիս . յատա-
ջնն հայելով առէ :

Փըհեցեր զիս պը ած՝ ճշմարտութէ տու. Վայս փրկութե՛,
զօր զինէ աստ մարդարես՝ կարէ հայել ՚ի բաղում
գիտուածու, յորս պահեաց զնա ած, որպէս յայտ է
յառաջին և յերկրորդ զրոյն թագաւորաց . Խոկ յա-
սելն ճշմարտութէ տու այս հայել յայն՝ զօր ՚ի վերոյ ա-
սաց, (՚ի համարն 1.) յարդարութէ տում : Վրդ թէալի, տ
ե նոյն է յած՝ փրկել իւրով արդարութե՛, և փրկել
իւրով ճշմարտութե՛, բայց հայելով ՚ի փրկութիւն մեր՝
յայնժամ ասի փրկել զմեզ իւրով արդարութե՛, յոր-
ժամ մեք շնորհօք նորա կանխեմիք առ նոր, և աղա-
ցեմք, զի փրկեսցէ զմեզ . քանզի այս առ արդարութ
նորա վերածի . և թէակտ ողորմութի է և այս փրկու-
թիւն, բայց յեղանակն հայելով ՚ի փրկութիւն մեր՝
առնէ ած զայս ողորմութիւն ՚ի փրկելն :

Խոկ յայնժամ ասի փրկել զմեզ ՚ի իւրով ճշմարտութե՛
(այսինքն իւրով ու զիող և անսխաղ ճանաշմամբ), յոր-
ժամ ինքն կանխե փրկել զմեզ . և այս կանխումն
նորա կրկնակի հասանէ, առ մեզ . մի՛ ընդհանրապէս՝
ըստ որում ած կամի զփրկութի ամենեցուն առ հասա-
րակ յառաջ քան զկամիլ նոյսա . երկրորդ՝ մասնաւո-
րապէս՝ յորժամ նախ քան զգիմել մեր առ նա՝ նա
ինքն ըստ իւրում ճշմարտութի ՚ի մասնաւորի փրկել ;
Եւ այսու ոչ ցուցանին թէ ոչ է մեզ պարտ զիմել
առ նա կամ շինդրել ՚ի նախնէ զփրկութիւն, զի յայն-
ժամ ոչ ևս մնայ ճշմարտութիւն ՚ի մեք կողմանէ . այլ
թէ ած երբեմն կանխե քան զինդրել մեր երբեմն
Վրդ եթէ ած յառաջ քան զինդրել մեր երբեմն

փրկէ զմեզ իւրով ճշմարտութք , քանի ևս 'ի խընդ-
րել մեր փրկեցի զմեզ իւրով արդարութք . և ահա
զրեթէ յայս հայելով ասէ մարգարէն . արժան է
քեզ տէր ած իմ փրկել զիս արդարութք քով , որով
հետեւ արժան համարեցար փրկել զիս նաև ճշմար-
տութեամբ քով :

Խորհրդարար՝ ճշմարտութք իմացեալ լինի աստ որդին
այ . որ վիայեաց զանձնէ ասէլով . * ես եմ Ճանա-
,, պարհ և ճշմարտութիւն . (յովէ . ժդ . 6 .) և զի
նովաւ փրկեաց զմեզ հայրն երկնաւոր . յայն հայե-
լով ասէ . * փրկեցեր զիս տէր ած ճշմարտութք քով .
վասն օրոյ և ես 'ի քեզ միայն եղից զյոյս փրկութէ
իմայ , և ու 'ի մնութիւ որպէս առնեն բաղումք . օրոյ
վասն փոխանակ փրկեալ լինելոյ՝ թողեալ լինին , և
անարդին , ըստ այնմ զոր եղաք 'ի վերոյ ըստ երկ-
րորդ տեսութէ , և զայս յայտ առնէ յաջորդ բանիւն ա-
սելով :

Առեւեր շայնոսի՝ որ պահեն չէրիւղ՝ ի սնութիւ : Այսի ա-
սել . ատես զայնոսիկ՝ որք թողեալ զերկիւղ քո սուրբ
'ի մնութիւ գնեն զյոյս իւրեանց , կամ թէ սնութիւնա-
ռէ պահեն զերկիւղ , կամ որ նոյն է՝ 'ի մնութիւ յա-
րելով և 'ի մնութիւ յուսալով երկնչին :

Եւ այսպիսիքս ՚ի չորս գասս վերածին . առաջինս
են կռապարիշտք , զորոց ասէ ած * գնացին զհետ
,, մնութեաց (այսինքն կոոց ,) և մնութիք եղեն .
(երեւմ . թ . 5 .) տքա 'ի մնութի կռոռս պահեն և ու-
նին զերկիւղ իւրեանց , զի երկնչելով 'ի նոցանէ՝ 'ի
նոսա յուսան , թողեալ զՃշմարիսն ած : **Ա**յսմնապաս-
տէ թարգմանութին ասորուց յորում զնի . * ատեցեր
,, զայնոսիկ որք պահեն (կամ ունին) զպաշտամունա
,, մնութիւ || :

Երկրորդ դասքն են նոքա , որք ունին երկիւղ 'ի
գուշակութիւնս մարդկայինս , 'ի հմայութիւնս , 'ի կա-
խարգական արարս , 'ի զօրութիս յուռթից , 'ի խսրու-
թիս աւորց , 'ի շափմունս թուոց , 'ի թարթափունս
արտեանաց , 'ի շարժունն աչաց , յերերունն յօնից , 'ի
շունն ականջաց , 'ի տեսութիւն կենդանեաց , 'ի ուս-
տահունն այս ոք մարգայ , 'ի հանդիսավունն այնպիսի զը-
նողի , և յայլ ես ու իցէ աւելսրգապաշտութիւ , զօրս

կասկածելով երկնին . և փոխանակ յաճ յուսակոյ՝
յոցավիսի ինչըսպարական իրս սպառինին :

Օ այսպիսի ՚ի մեջ բերե և գեօրգ վարդապետ (՚ի
մեկն . եսայ . զլ . դ .) և պահապակելով իմն առե .
* զի և այժմ բազումք . . . ապահանեն զվարս իւր
,, եանց , և զայ բարկութին գանձեն անձանց , հմայե
,, լով զթափս և զկափս հառուց , կամ զիսազացուն
,, մարմնոյ , և թէ այս ինչ զիսպեսցի ՚ի հանապարհի
,, զայս ինչ նշանակէ , բախտ կամ հակասագիր կար
,, ծելով , խորելով զառուրս , հատո և ուլունս ըն
,, կենթով . և այլ բազում այսպիսի չարեօք գանձինս
,, յայ որոշելով || : Վասմ մեկնութէ կարե նպաստել և
թարգմանութին քաղցէական . յորում դնի . * ատե
,, ցեր զայնոսիկ՝ որք պահէն զգործս նմանս ունայ
,, նութէ և խաբեթայութէ || . որպիսի են մնոտիապաշ
առութիւնք :

Դռաւել քան զոտաս ատին յայ այնոքիկ , որք երկիւղ
ինչ ունելով դիմեն ՚ի վճռեկս և ՚ի գուշակս ,
ևս և յերազահանս , և հաւատան նց , և զարմանան ևս
ընդ բանս նց . յորոց զգուշացուցանէ որ զիրն ասելով .
* եթէ յառնիցէ ՚ի միջի քում մարգարէ կամ երա
,, զահան երազոց , և տացէ քեզ նշան կամ արուեստ ,
,, և լինիցի նշանն կամ արուեստն զօրս խօսեցաւ առ
,, քեզ . և ամիցէ , երթիցուք պաշտեսցուք զաճս օտարս ,
,, (կամ զգործս չարս) զօրս ոչ ձանացիցէք , մի լսիցէք
,, բանից մարգարէին այնորիկ կամ երազահանին երա
,, զոց , զի փորձէ զձեզ տեր ած ձանացել եթէ սիրի
,, ցէք զմբր ած մեր յամ սրտէ ձերմէ , և յամ անձնէ
,, ձերմէ || . (բ . օրին . ժկ . 1 - 4 :) Ոսկին լուծանին
այն զարմանք և բանք հարցանողայն՝ թէ զիարդ կա
տարին զօրս ասեն . զի կամ ոչ կատարին , և կամ
գեն ազգէ . զի նրահայեաց գոլով բազումս տեսա
նէ քան զմարդ . և ած առ ՚ի փորձելց , կամ առ ՚ի
պատիժ հարցանողին թցլ տայ յայտնիլ կամ կա
տարիլ : Օ այսպիսիս , և որք այսպիսեօք վարին՝ օտա
րատեսուա համարի սարգիս նորհալի . (՚ի մեկն . ա .
պէտ . է . 15 . ձառ . ժ .) զի օտար իրաց տեսանօղ մի
նել ցանկան :

Երրորդ դասքն են այնոքիկ՝ որք անտես արարեալ

զանձային նախախնամութեք , և զատեհնահայեաց նորա
տեսութեք , և զանստելի նորուն վիայութեք , իբր թէ չի-
ցէ նա բաւական փրկել զինքեանս՝ կամ օգնել ինք-
եանց՝ յուսան միայն՝ ի սնոտի պատճառաբանութիւնս ,
՚ի բազմնախաք մարդկային հնարս , ՚ի գիւրակրոծան
իշխանութիւն , ՚ի յանցաւոր մեծութիւն , ՚ի նարտարա-
զիւտ արշեստոս , ՚ի խախտելի զօրութիւնս , և յայլ
այսպիսի անհաստատ իրս . և երկնչին այլազգ առնել ,
զի մի չար ինչ հասցէ ինքեանց . Վայսմ նպաստէ
թարդմանութիւն այլոց աղղաց . յորս դնի * տուշցեր
։ զայնոսիկ՝ ոյք պահեն զունայնութիւնս՝ ի նանիր .
Չար քան զամենեսեան զսոս են այնոքիկ՝ ոյք տուտ
պատճառաւ և մնոտի երկիւղիւ մերձենան ՚ի մեզու ,
որպիսի են նորա որք առեն , եթէ ոչ յափշտակեցից
զայլոցն ոչ կարեմ ապրիլ , և կամ եթէ ոչ իննորե-
ցից զլրէժ ՚ի թշնամոյ իմմէ՝ յամօթ լինիմ . և կամ
ես՝ եթէ ոչ անիծեցից՝ խեղղիմ , և այն . որպիսի
են և նորա որք սովորեալ գորով՝ ՚ի մարմնական մեզու
առեն , եթէ ոչ գործեցից՝ հիւնդութիւն զայ ՚ի վե-
րաց իմ՝ են :

Դորրորդ դասքն են նորա , որք երկնչին յանձն առ-
նել զինքեանս՝ ՚ի ձեռս այ . զի մի պարտաւորեսցին ըստ
հաճոյն նորա վարիլ , և այնու զրիլ՝ ՚ի ժառայութենէ
մնոտեաց , այսինքն թիւր հաճոյից և ախտից իւրեանց ,
յորս փափկացեալ կան :

Վրդ որովհետեւ ամենեքին սորա տեսանին յարեալ
՚ի մնոտիս , և ՚ի մնոտիս յախոսիկ ունին զյոյս և զեր-
կիւղ իւրեանց , և ոչ յանձն . վասն այնորիկ և անձ
առէ ասէ զայսպիսիտ :

Վնոտեօք մարթ է իմանալ և զայնս՝ որք ոչ կարդին
յօդուտ ինչ . կամ օրակը զրէ բարսեղ վարդապետ .
(՚ի մեկն . մարկ . զլ . թ .) * ըռնին վախճան ինչ պի-
տանի . և յայսպիսիս պահել զերկիւղ թէպէտ ոչ
առնէ զմարդն ատելի այ . բայց և ոչ հաճոյ :

Վայս երկիւղ կարէ հայիլ և ՚ի փանդ մահու կամ
՚ի մահ . կա սակայն եթէ ոք յանձն իցէ եղեալ զյոյս
իւր՝ արհամարհէ զայսպիսի երկիւղ մահու . որում
ետ օրինակ տէրն մեր՝ ՚ի ժամ մահու , աւանդելով
զհողի իւր՝ ՚ի ձեռս հօր , և կոչելով առ ինքն զմահ՝ ՚ի

խոնարհեցուցանելն անդ զգլուխ իւր . մասհն երկիրն-
ցը 'ի նմանէ , և նա աներկիւղ առ ինքն կոչեր զնա
'ի քաջալերութիւն մեր . ուստի ասի թէ * քո ուսոյց
ու կեալ , ուսոյց և մերանիլ . ըստ որում ուսոյց մեզ
աներկիւղ խոնարհեցուցանել զգլուխ մեր՝ այսինքն
զանձնիշխանութիւն մեր կունանն այ , և 'ի ձեռնորա
ուանդել զհողիս մեր : Արդ մերժեալ մարդարենն
զերկիւղ մատեայ՝ առաջի առնել զյուսալ իւր առ
ած և զյնծալ հողւոյն , և առեւ :

Է . **Ճ** է ուեր յառացայ . ցնծացայց և ուրախ եղեց 'է իւր
իւրան քամ :

Օ որ ասաց 'ի նախիրնմաց համարն , * փրկեցեր զիս ,
իւնոյն փրկութիւն հայելով վասահացուցանէ զանձն
'ի յոյս և 'ի նորոգ փրկութիւն . յասեն :

Ճ է ուեր յառացայ . ցնծացայց և ուրախ եղեց 'է իւրան
ուամ : Այսինքն է . որովհետեւ եռ 'ի տեր յուսացայ՝
որպէս զի փրկեցէ զիս . 'ի փրկել նորա՝ ցնծացայց
և ուրախ եղեց այսու փրկութը :

Հնծալ և ուրախանալ թէպէտ և 'ի նոյն միտու վեց-
ածին , և փոխանակ միմեանց զնին , բայց իւիք և օ-
տարբերին , զի ցնծալն պարզապէս 'ի հողի մարդոյ
վերաբերի , իսկ ուրախանան՝ 'ի մարդն բոլոր ըստ
որում մարդ . որպէս բերկինն՝ 'ի կենդանին բոլոր
ըստ որում կենդանի . (զայտանէ տե՛ս 'ի սաղ . թ . 2 :)

Արդ աստանոր եթէ ըստ նոյն նշանակութեան առցին
այս բառք , կրկնումն ոոցա ցուցանէ զառաւելութիւն
բերկութեն վասն փրկուն . Խոկ եթէ ըստ որոշ նշանա-
կութեն առցին , ցնծալն հայի 'ի բերկուն հոգւոյ մար-
դարէին վասն ազատելոյ 'ի հարողական հոգոց . և ու-
րախ լինելն հայի 'ի բոլոր անձն նորա վասն փրկեալ
լինելոյ 'ի վտանգից և 'ի վշտաց :

Առել արժան է ասա և զայս , զի թէպէտ ըստ կար-
դի շարադրութե , յնը դէմ եղեալ եր բանն յառաջ-
նում հատուածի , պարտ եր և յերկրորդումն 'ի նոյն
դէմ զնիլ այսինքն է . * ուրախ եղեց 'ի փրկութեան
և նորա || , և ոչ թէ * 'ի փրկութե քում || . բայց ըստ
կարգի բանին վայելու ևս ուեսանի զնիլ յերկրորդ
դէմ : || ասն զի առաջին հատուածն ուր ասէ * ես 'ի

ատեր յուսացայ || . ոչ է իբր բան սազմոսէլոյ , այլ
իբր առանձին բան խորհեալ՝ ի միտս . զոր իբր պատ-
մաբար առաջի զնէ . իսկ երկրօրդ հատուածն է բան
սազմոսէլոյ առ անք : Բատ պատմելոյն ասէ . ես՝ ի
տեսանել իմում թէ ատէ տեր զայնոսիկ՝ որք յուսան
՚ի մնութիս , և թէ փրկէ տեր զայնոսիկ՝ որք յուսան ՚ի
նա , բատ որում և ես ասէ յայլում նուտգի փորձեցի
յանձն իմ , այսուիկ յօրդորեալ՝ յուսացայ ՚ի տեր :

Եւ ապա ըստ սազմանելոյն զնէ . եթէ ասէ ըստ յու-
սալոյ իմոյ ՚ի քեզ՝ փրկեցես զիս , ցնծացայց , և ու-
րախ եղէց : Այլ թէ յառաջնումն անդ զիարդ փըր-
կեաց զնա անձ՝ յայտ առնէ ՚ի յաջորդ համարն ասելով :

Ե. **Օ** է հայեցար ՚ի խռնարհութի իմ . և իրենցէր ՚ի վը-
սաց շնորհ իմ . և ոչ մատնեցէր զիս ՚ի յեռա նեւ-
ըոց ինց . և էցարցէր յանդրբառ զոս իմ :

Խոնարհութին ոչ զնի աստ փոխանակ առաքմանութէ
խոնարհութէ , այլ փոխանակ ընկնման և նուաճութէն
անձին . կամ փոխանակ պատճառի խոնարհութեան ,
այսինքն փոխանակ այնպիսի տառապանաց կամ վրշ-
տի , որ խոնարհեցուցանէ զմարդ . յօր միտս յերբ .
զրի օնէտ այսինքն պլշտուանին իմ . (զորմէտ տես ՚ի
սալ . իդ . 15 .) Իսկ հային այ՝ է գթալ կամ համիլ
առ ՚ի գթալ : Գրդ որովհետև յանկանիլ գաւթի ՚ի
վիշտու մեծամեծս , և յառաւեխնիլ նորա առ անձ՝ ան-
գթացէալ ՚ի նա փրկեաց զնա , յայս ակնարկելով
ասէ :

Օ է հայեցար ՚ի խռնարհութի իմ . և իրենցէր ՚ի վը-
սաց շնորհ իմ . և մատնեցէր զիս ՚ի յեռա նեւըոց ինց : Աստանօր
շաղկապդ ՚ի յարէ զայս բան ընդ այնմ , զոր ասաց
(՚ի համարն . 6 .) Ո՞պ թէ ասէր . ՚ի խոնարհիլ իմում
վշտօք՝ հայեցար յիս , և համելով ցուցանել առ իս
զորդմութիւն քոյ՝ փրկեցեր զանձն իմ , այսինքն զհոգի
իմ ՚ի տառապէցուցիչ վարանմանց . և յանկանիլ
իմ ՚ի վասնպ մասնեալ լինելոյ ՚ի ձեռա նեղաց ի-
մոց՝ ոչ մատնեցէր զիս . այսինքն է , արարեր՝ զի ես հւ
մատնեցայ ՚ի ձեռա նոցս , այլ զերծայց : Եւ զի ե-
ղիտ յայնմ անձկութէ և զբնդարձակութի՝ վասն որոց
յարէ զինի :

Եւ հայոց յանդրբառ շնոր էմ, իսպագ անդրբ ածականարար առեալ նշանակէ զայն՝ որ է ընդարձակ ամ մասամբ, որպէս զծովի ասի. * մեծ և անդողը ॥ նշանակէ և զայն որ համդերձ ապահովութք է ընդարձակ. և փոխաբերութք գնի փոխանակ բառիս խաղաղ ըստ ապահովութեն, իսկ գոյականարար առեալ նշանակէ տեղի ընդարձակ խաղաղ և ապահով. Արդ գաւիթ պաշարեալ յանձուկ վայր, ուր կայր՝ ի վտանգի մեծի անկանելց ՚ի ձեռս նեղաց իւրոց, ՚ի փրկելն զնա այ (որպէս յորժամ իջուցաւ ընդ պատուհանն . առ թագ. ժթ. 12-14 : կամ յորժամ հեռացաւ ՚ի նըմանէ սաւուղ . առ թագ. իդ. 25-28 :) եւ յայնժամ՝ ի տեղի ընդարձակ և ապահով. և սկսաւ զթիւ համարձակ : Հայս հայելով ասէ * կացուցեր յանդորրու զոտա իմ . այսինքն է արարեր՝ զի ազատացեալ յանձկութենէ տեղոյ՝ յորում պաշարեալ էի, եւ լից յընդարձակ և յապահով տեղի, և կարացից շրջիւ ուր և հաճոյ իցէ ինձ . և հուսկ յետոյ հասից ՚ի ժառանգութիւնի թագաւորութեն իմայ :

Սոյնու պատուհեցաւ նմա և ըստ հոգւոյ, զի յանձկութիւն անհնարին պաշարեալ, իթրեւ եղիտ յոյ զայցելութիւնի միսիթարուեն, անդորրացաւ, այսինքն ընդարձակեցաւ և խաղաղացաւ, և հոգի նը լցաւ ուրախութք, ոչ միայն ըստ վերին մասին, այլ և ըստ ստորնոյն, և ըստ զգայական կարողութենց, որք նմանութք իմն են իրը ոտք հոգւոյ . (զորմէ տես ՚ի սաղ. Ճժ. 101 . և 105 : տես և ՚ի սաղ. իւ . 12 :) Արդ զայսպիսի բարերարութիւնի փրկուեն գտեալ զաւթիւ տարածանէ զոյն առաջի այ . և իրը թէ յուշ առնելով սկսանի աղացէլ, զի և այժմ ցուցցէ զնոյն բարերարութիւն, և փրկեցէ զինքն յանհնարին նեղութէ, յոր պաշարեալ կայր. վասն որոյ ասէ :

Ճ. Առքիւն ինչ ոք, ու նեղութէ մեն, իսունցաւ ՚է ուշունքն անչ անչ էմ, անչն էմ, և քոյ էմ :

Այլուր յաղաւել մարգարեին զած և յասել . ուշիւնչ էնչ, ՚ի մէջ բերէ զմանաւոր ինչ իրը առիթ . զորօրինակ յասելն (՚ի սաղ. Ճ.) * ողողմեաւ ինձ առ առաջի առնէ զողորմութիւն նորա, և յասելն (՚ի սաղ.

ձեւ .) * ողօրմեամ ինձ || , առաջի դնել զյուսալ իւր առ
նա . և յասելն ('ի սազ . ծղ . 1 .) * ողօրմեամ ինձ || .
առաջի մատուցանէ զկոխան լինել իւր 'ի մարգկանէ
կամ զշիւանիցն զոլ . Իսկ աստ 'ի մէջ բերե 'ի հասա-
րակի դնելութե իւր . զի որովհետեւ յանհնարինս նե-
զեալ եր , մասնաւորօք ոչ կարացեալ 'ի յայտ բերել
զըր կրեր , արձակ բանիւ առաջի եղեալ զնցին ողօր-
մեամ զոլէ , և զաղօրմութի ինպրէ , ասելով :

Աշրմեամ ինչ աէր , չէ նէշաւլէմ էս : Որպէս թէ ասեր .
այնափի է նեղութիւն իմ , մինչ զըրեթէ անհնարին է
ինձ յայտնել զայն . վասն որոյ ոչ ևս մնայ ինձ առ-
նել ինչ այլ բայց եթէ կողկողելով 'ի դրունս ողօր-
մութէ քոյ , ողօրմագին ձայնիւ զուել . ողօրմեամ ինչ աէր ,
չէ նէշաւլ էմ էս . եթէ ասէ առ նեղեալս օրէն է ողօր-
մութի ցուցանել ցոյց ապա և ինձ զողօրմութի քոյ որ .
չէ նէշաւլ էմ էս . ոչ այրափի ինչ , և ոչ այնափի . այլ
յանհափի :

Եւ առ 'ի զայտ ցուցանել ոչ յաւելու բառ ինչ սասա-
կացուցիւ նեղութեն իւրոյ . ասելով , նեղեալ եմ յոյժ ,
կամ նեղեալ եմ մեծապէս ևն . այլ արձակապէս ա-
սէ նէշաւլ էմ էս . որով յայտ առնէ 'թէ առաւել քան
զափի նեղեալ եր , և չէր նմա այլ ուստեք փարատումն
գտանել 'ի նեղութենէ անտի , բայց միայն յողօրմութն
այ : Եւ առ 'ի ցուցանել թէ յորբանս տարածեալ եր
զեղումն այնր իւրոյ նեղութեան , յարէ զինի , և
ասէ :

Խառնչեցա - 'է ուրտմութէ սին իմ . անին իմ , և իոր իմ . Ե-
թէ սրտմութէ իսնացեալ լիցի աստ նոյն իսկ սրտմո-
տութիւնն այ , որպէս ընթեանու լամբ " . միտ բանին լի-
նի այս . 'ի սրտմութէ քումիշ , որով վրէժինպիր լի-
նիս ինձ խռովեցաւ անձն իմ : Իսկ եթէ իսնացեալ լի-
ցի իւրն , միտ բանին լինի այս . 'ի սրտմութէ իմիշ ,
յորում լուռ կալով մաշիմ ' խռովեցաւ փոր իմ , կամ
թէ 'ի նեղարտութենէ խղչի մասց խռովեցան կեանք
իմ : Վայ եթէ իսնացեալ լիցի սրտմութի թշնամեայն
միտ բանին լինի այս . 'ի սրտմութէ թշնամեաց ինոց
որք հալածեն զիս , խռովեցաւ անձն իմ :

Որն և իսնացի , միտ բանին 'ի նոյն հայի . զի 'ի սրտ-
մութէ անտի նեղութի անհնարին եհաս 'ի դաւիթ :

մինչեւ խռովիլ նմա ըստ անմի , ըստ աշաց , ըստ անձին
և ըստ փորդյն . Խռովիլ ասէ , ան ի՞մ . այսինքն թէ մը-
թագնեցաւ աչք հոգւոյ՝ այս է միտք իմ . խռովիցաւ
ասէ . և անց ի՞մ , այսինքն հոգի իմ ըստ վերին մասին ,
որ կայարան է մոտաց . խռովիցաւ ասէ . և գոր ի՞մ . այս-
ինքն մարմին իմ . որ կայարան է հոգւոյ , կամ թէ,
խռովիցաւ հոգի իմ և ըստ ստորին մասին :

Վարթ է ևս ասել , թէ սպիտեք ցուցանէ մարդարեն
զիսովիլ երից կարողութեանց հոգւոյն , որք են միտք ,
կամք և յիշողութիւն . իբր զի ակամք՝ որպէս ասացաք ,
իմանայ զմիտու . անձամք՝ զանձնիխան կամն , և փո-
րիւ զյիշողութիւն , որ իբր փոք ընդանարան է խոր-

Հըրդոց :

Իսկ եթէ ակամք իմացեալ լիցի աչք մարմնոյ , և փո-
րիւ որովայնն բոլոր , միտք բանին լինի , թէ աչք գաւ-
թի խռովիցաւ ահաբեկիմամք , և արաւառոք , և տրք-
նութիւն : Այսնպէս և որովայն նորա խռովիցաւ արօր-
մամք . և նուաղութիւն՝ ի սաստկութիւն նեղուէ հասելոյ՝ ի
սրտմտութիւն : Այցին նմանն խռովիցաւ և կեանք նորա
համայն պէսարէս վարանմամք , և տագնապաւ , տը-
ւայտանօք և տիսրութիւն . որով զրեթէ ՚ի ցեցոյ հա-
րեալ մաշխար , յորժամ՝ ի խղձէ ձենձներիւր . և զայս
այլով իմն բանիւ յայտ առնէ մարդարեն՝ ի յաջորդ
համարն՝ ասելով :

Ֆ. ♪ սիսէցան՝ ՚ի շուռոց իւստուն ի՞մ . և ան ի՞մ յոդոց ելու-
նելոյ :

Դասիթ յետ յաղթելոյ գողիաթայ՝ չեւ անցեալ ամ-
մի հալածեցաւ ՚ի սաւուզայ , և զամն իբր եօթն թա-
փառական տառապէր և ՚ի բազմազիմի վիշտ տուայ-
աեալ մաշէր : Եւ զլիստոր վիշտք նորա եին հնգա-
պատիկ . առաջինն էր վտանգն անկաննելոյ՝ ի ձեռա-
սաւուզայ , որոյ վտան հանապազ՝ ՚ի հոգու եր , և առ-
տանգական շրջէր՝ տառանեալ՝ ՚ի լերինս և յանա-
պատու՝ մինչեւ ցօք ընակելոյ նարա ՚ի սիկելակ : Երկ-
րորդն էր նախատինքն և բամբասանքն , զի բազումք
եին որք նախատակոծ առնելին զնա . և բազումք
ևս այնք եին , որք չարախսուէին զնմանէ առ արքայ և
առ այլս : Երբորդն էր նախատանալ նորա յայնավիսի

անարդ առաջինն , մինչև զարմանալ բազմաց և սոսկալ իսկ : Չօրրորդն էր տարագրին նորա ՚ի տանելիւրմէ և ՚ի քաղաքէ , և մերժիլ՚ի ծանօթից և յաղգականաց . և զրկիլ՚ի կնոջը իւրմէ ՚ի մեղքողայ՝ որ էր դուսար սաւուղայ . զի սաւուղ՝ ՚ի հարածեն զգաւիթ ետ զնա այլում , այսինքն փաղտիելի սրգեց ունելայ : Հինգերրորդն՝ որ մեծ էր քան զնամ , և մաշեր զհոգին դաւթի՝ էր հեսի մնալ նորա ՚ի խորանէն այ , և ՚ի ներկայութենէ տապանակին . (զօրմէ անես ՚ի սաղինք , 6 - 8 : և իդ . 4 - 8 :)

Մքդ այս ամ , և այլ ևս բազմադիմի առիթք վշտաց և հոգոց պաշարեալ զդաւիթ՝ պատճառեին ՚ի նմացաւ մեծ , և ՚ի ցաւոց անտի յոգւոց ելանել , այսինքն հառաջել : Խակ ցաւօք իմացեալ լինի աստ ոչ եթէ տառապամփն զոր կրել , այլ տրորիչ զդայումն ՚ի ներըս ՚ի սրտի պատճառեալ՝ ՚ի տառապանաց անտի , կամ թաղձագին տազնապ սրտի՝ ՚ի վերայ տառապանաց կրելոց . յորմէ պատճառիւր և հառաջանք . և ահա այն ցաւք և այն հառաջանք էին՝ որը զեղեալք զմիմեամիք ՚ի դաւիթ՝ մաշէին զկեանս նոր . վ՛ա որոյ ասէ ,

Պահառեցան ՚ի շատոց հետեւ իմ . և անք իմ յագուոց ելանելոց : Որպէս թէ ասելը . յայսզով վշտագին տառապանս ըմբռնեալ ոչ գտի ինձ թեթևութիւն . զի օր քան զօր և ամիս յամոց առաւելան նեղութիւնք իմ . որոյ վասն առաւելան և յիս ցաւք և հոգք , և ՚ի ցաւոց անտի յոգւոց ելանել , (որ է ցաւած սրտիւ ոչ ասել , կամ ծփ և ախ գոյել) Որոշաբար զնին . յառաւելու ասէ ցաւոցս՝ պակասեցան ՚ի նոտին կեանք իմ : և ՚ի տառականալ հառաջանաց՝ ՚ի հառաջանս անցին ամք կենաց իմոց :

Վայլ զիտելի է , զի բարդ պահանջան ՚ի կրկին միտսկարէ առեալ լինել աստ . մի՝ փոխանակ նուազելոց , կամ սակաւանալոյ . յոր միտս կամի ասել . վ՛ա բազում ցաւոցս և հառաջանացս սակաւացան ամք կենաց իմոց . իբր զի եթէ այսափ ոչ ցաւելի և ոչ հառաջելի , առաւել լինելը կեանք իմ : Երկրպարդ փոխանակ սանցանելոց . յոր միտս կամի ասել . առուրք կենաց իմոց ոչ հանգստեամբ և ուրախութեամբ , այլ ցաւօք և հառաջանօք անցին :

Օ այսպիսիս կարեն ասել և անձինք տառապելոց, և
առաւել ևս նորա՝ որք մաշին՝ 'ի յորովութենէ, յարձակ
ման ներքին կրից, և 'ի յաճախութենէ, խղբումնն ախ-
տից, զորս նշմարեն յապակամեալ բնութեանս . մինչեւ
տալտկովով իմն ողբալ, և ասել ընդ սրդափ . * այս
,, մի տառապեալ եմ ես . ով ապրեցուսցէ զիս 'ի մարմ
,, նոյ աստի մահու || . (Հառլ. Է . 24 .) որպէս գո-
չեր յաւագնեալ ոգւով և երջանիկն յաղօթօղն՝ զրի-
գոր նարեկացի . ('ի բանն . իտ .) յաւաղեն անդ
զանձն և յասել . * արհաւրօք մահու պակուցեալս
,, անխրախուսելի 'ի բոլորեցոնց . յաւօք և տանջաւ
,, նօքն երուսաղէ, մի ըստ երեմիսյի բանին խղատեալս,
,, Պակասեալ աւուրցու 'ի հեծութենէ, և ընթացք աւ
,, մացս 'ի հառաջմանէ ըստ նուազարանաց երգողին || .
Վրդ զոր ասաց մարդարեն զանհնարին նեղութենէ,
իւրմէ, զնոյն զայն այլով իմն բանիւ ևս կամելով բա-
ցատրել յարէ զիսի և ասէ :

Ժամ . **Ը** շաբաթական՝ 'ի ոհարանէն զօրութինէ, և սահերս իմ
բառակլցան :

Ի առս աղքատայա՞՝ դնի աստ փոխանակ պակասելոյ .
զի աղքատանախն է պակասիլ 'ի կարեռորաց և անկաշ-
նիլ 'ի կարօտութիւն . ուստի և փոխաբերութե՛ կարէ
դնիլ փոխանակ պակասելոյ յայնանէ, որ կարեռն
է . և զի զօրութին դաւթի 'ի նեղութին իւր պակասե-
ցաւ յայնպիսեաց անտի՝ որ կարեռն էր նմին, և կայր.
'ի կարօտութեան, վ՛որոյ փոխանակ ասելոյ՝ պակասե-
ցաւ զօրութիւն իմ, ասէ՝ աղքատայսաւ :

Խակ բառդ՝ 'ի ոհարանէն կարէ առեալ լինել աստ ըստ
կրկին մտաց . մի՝ փոխանակ պատճառի տկարութեան,
այսինքն փոխանակ նեղութեց և տառապանաց, ցաւոց
և հառաջմանաց, որք պատճառեն զուկարութիւն : | Հրի-
բորդ ընդ հակառակն՝ փոխանակ դործոյ տառապա-
նաց և ցաւոց, այսինքն փոխանակ նուազեալ լինելոյ

զօրութեան : | Ստամն ակնարկելով ասէ :

Ս շաբաթական՝ 'ի ոհարանէն զօրութինէ . յսինքն է . բնա-
կան զօրութիւն իմ կամ ուժեղութի իմ, նաև վատա-
հութիւն անձինս՝ աղքատացաւ և պակասեցաւ . և այս
'ի ոհարանէ . այսինքն վասն զոլոց տկար, կամ վասն

ակարութեան եկեղյ ՚ի զի իմ, կամ վասն տկարացուցանելոյ զիս նեղութեանց և ցաւոց, կամ վասն բազում տառապանաց և կամ վասն կրելոյ զվիշտոս ՚ի խղձէ մոտաց, որովք սկաց տկարանալ, որովհետեւ պակասեցաւ գօրաւթիւն իմ յիւրմէ կատարելուէ և ոչ մնաց այնպէս՝ որպէս եր յառաջն . մինչեւ ուկերաց իմոց ևս խռովիլ . որոյ վասն յարէ զինի, և ասէ :

Եւ ռուինք էմ խռովիլ . Ասկերօք իմացեալ լինին աստ ըստ լսմբ . Երբեակ կարողութիւր հոգւոյն . այս ինքն բանականն , ցատմականն՝ և ցանկականն . բայց տիրապէս իմանին ուժգնութիւր իւրաքանչիւր կարողութեց հոգւոյն . զի որպէս զօրաւորութիւնք սսկերաց հաստատութիւն են զրծողութեց մարմնոյն , այսպէս և զօրաւորութիւնք կարողութեց հաստատութիւն են զործողութեց և կառավարութեց հոգւոյն : Իսկ յորժամ պաշարի մարդ ՚ի վիշտ , և վարանեալ տաղնապի ՚ի հոգս , այն ուժգնութիւնք խռովին , այսինքն ոչ ևս մնան ՚ի նոյն վիճակի կամ ՚ի նոյն հանգամանս , այլ սկսանին այլապէս առնել , կամ այլ ընդ այլոյ գործել . իբր զի փոխանակ զայս ինչ առնելոյ զայլ ինչ առնեն . և կամ փոխանակ այսպէս գործելոյ , այլապէս գործեն . զորօրինակ յանկանիլ ումեք ՚ի մեծ նեղութիւն մանաւանդ ՚ի նեղութիւն շտապիչ , փոխանակ զայս ինչ և զայն ինչ խորհելոյ և կամելոյ . շփոթեալ ՚ի պաշարամանէ նեղութեանն զայլ ինչ խորհել , և զայլ ինչ կամի և գործէ . որպէս յայտ է փորձ եղելոց :

Այսպէս պատահեցաւ և ինձ ասէ մարդարէն ՚ի հաւածիլ իմաւմ , և ՚ի կալ իմ ՚ի նեղութիւն հալածանաց զամն բազում անդամ անկառ մարդարէն յայսպիսի կիրս . վասն որոյ կարէր ասել . խռովիլ յան կամ դողացան ուկերք իմ . որ է ասել . երկեայ յոյժ և զարհութեցայ յերեսաց մեծամեծ վտանգաց : Դուռ բանի զործն զնի փոխանակ պատճառի . (զորմէ անէս ՚ի ասղ . ին . Յ : և ՚ի սաղ . ին . Յ : և յայլ :

Օ այսոսիկ յայտ արարեալ մարգարեին իրը զգործն
կամ իբրև զշետևանս նեղութեց՝ զրա կրեր ՚ի նեղքս,
սկսանի յառաջ բերել և զտեսակս այլոց նեղութեց,
զրս կրեր առ արտաքս ՚ի հալածիլ անդ իւրում.
և նախ զայն, որով երեւեցաւ առ այս արհամարչեալ
և անարգեալ քան զամենայն. վասն որոց ասէ:

ԺՇ. **Պ**ահ զամ նշանիս իմ եղեւ ես նախառ դրայեաց իմոց
յոյժ. ահ և երիւ-ղ ծանօթից իմոց:

Կախատ լինել առաջի բազմաց ծանր է ու իցե մար-
դոյ. իսկ եթէ իցէ ոք այր փառաւոր, և անկանիցի ՚ի
նախատինս, առաւել ևս ծանրանայ այն: Ծանրուի
նախատանաց այսովիսի մարդոց կարի ևս մեծանայ, ե-
թէ առաւել քան զհասարակ մարդ նախատ լիցի. և
ևս առաւել եթէ ոչ միայն քան զհասարակ մարդ,
այլ և քան զթնամիս իւր, զրա նա անարդ համարի
քան զայլս: Այս նախատ լինելս եթէ զիպեսցի ՚ի
մէջ անձանօթ մարդկան՝ կարէ յայլմէ զլիսյ թե-
թեանալ. իսկ եթէ զիպեսցի ՚ի մէջ ծանօթից, և
մանաւանդ ՚ի մէջ զբացեաց, առաւելու յոյժ յոյժ:
Այսովիսի օրինակաւ նախատ լեալ ցուցանել զինքն
դաւիթ, յասելն:

Պահ զամ նշանիս իմ եղեւ ես նախառ դրայեաց իմոց յոյժ:
Կամի ասել. ամօթ անշնարին սպաշարեաց զիս. զի նա-
խատեալ և նախատելի եղէ ևս յոյժ առաւել քան
զթնամիս իմ. ոչ եթէ քան զտմանս՝ այլ քան զամ, ոչ
միայն առաջի օտարաց, այլև առաջի զբացեաց իմոց,
այսինքն կից եղելոց իմում տան, ևս և մօտակայ ազ-
դաց. և այս՝ առաւել քան զոր նախատելի կարեմ հա-
մարիլ զնոսին իսկ զթնամիս իմ: Աւ առ ցուցանելոց
զառաւելութի այսր՝ յաւելու զբառդ յոյժ: Ու արթ է
ևս բարիւդ տան՝ իմանալ աստ հանդոյն. քանզի բա-
զում ուրեք յայս միտս ՚ի զործ ածի բառդ տան: Աւ
ըստ այսմ առեալ կամի ասել. որպէս թնամիք իմ,
ոյք և իցեն՝ նախատելի եղեն զբացեաց իմոց, հան-
դոյն նոցին և ես նախատ եղէ նոցա յոյժ: Որով և
կասկածելի և երկնչելի երեւեցայ ծանօթից իմոց:

Դարձեալ մարթ է բառիւս տան՝ իմանալ առ յոր
միտ՝ կամի ասել. նախատ եղէ ես առ ամ թնամիս իմ

ի զրացեաց խմօց . կամ որ նոյն է , զրացեթ իմ՞սախատելի ցուցին զիս առ առ թշնամիս իմ , չարախօսելով զմնեն կամ բամբասելով : Իսյց առաջին մեկնութին է ուղիղ . ըստ որց յարէ զինի , և ասէ :

Ահ և էքիւն ծանօթից էմոց : Իսպում էին ծանօթք դաւթի՞ ոչ միայն 'ի քաղաքի իւրում , այլև արտաքոյ . զի 'ի քաղում տեղիս հաշիկեալ էր անոն նորա : Իսյց իւրեւ տեսին նորա զկատաղութիւն սաւուզայ , որ յանհնարինս հալածէր գդաւիթ , երկնչին՝ ծանօթ ցուցանել նմա զինքեանս , և ոչ իսկ համարձակէին տալ զանուն նորա իրը զանուն այնպիսւոյ ուրումն : Ուստի և ըստ այսմ լեալ էր նոցա զաւիթ ահ և էքիւն , այսնքն առարկայ և առիթ կրելոց նոցա զահ և զերկիւդ : Ու արթ է և յայլիմն միտս առնուլ զայս . իրը զի ծանօթք դաւթի տեսեալ զնա յայնպիսի փառաց յայսպիսի անարգութի՞ խոնարհեալ , յահ և յերկիւդ պաշարեալ լինէին , թէ զիարդ այլ այնպիսի՞ յայսպիսի եհաս թշուառութիւն : Եւ ըստ այսմ մտաց ահն և երկնչին գնինս աստ իրը գործ զարմացման նոցա . որպես թէ ասացեալ էր . իմ այս վիճակ այնչափ զարմացցց զժանօթս իմ , մինչև էարկ 'ի նոսա ահ և երկիւդ , ցաւ և զեղջ :

Իսրայապէս , տեսեալ բազմաց զոմանս նախատեալս և անարգեալս , հարուածեալս յայ և տանջեալս , յահ և յերկիւդ պաշարին . և համարին ևս թէ 'ի մտոյ չարաչար խորտակելոց իցեն : Եւ սակայն անդ 'ի հարուածելն՝ այնպէս պահէ՛ զնոսա և պաշտպանէ , մինչև զարմանալ տեսողացն : Իսպակէիսադղք 'ի վեր և 'ի վայր ձգձգեն զնրբանիթ ապակէայ անօթ , և երբեմն զգեսնի ևս հարկանեն . տեսողք կարծեն՝ թէ ահա խորտակի անօթն . սակայն տեսանեմք՝ զի ամբողջ պահէ՛ , և ոչնչ իւկը վիսասի : Եւ թէպէտ զիւրաբեկ է ապակի անօթն , մանաւանդ եթէ իցէ նուրբ (որպիսի է փուլլուխ շիշէն) , սակայն ապակեիսակն 'ի ձեռն արհեստի իւրոց պահէ անվնաս յայնքան վտանգսն : Իսպէս առնէ և անդ բազում անզամ ընդ անօթս ընտրութեան . խոշտանգէ , տանջէ և խորատէ , մինչև յետս կալ 'ի նմանէ բազմաց , կասկածելով ընդ կորուստ նոցա . բայց արհեստ արարչն

անսարատ պահէ զնոսա . եթէ ըլ վայր հարկաներ՝ խոր-
տակէին . զի ինքն է տէր կեցուցանելոյ և կորուսանէ-
լոյ . * տէր մեռուցանէ և կեցուցանէ . (առ թագ .
թ . 6 .) իշուցանէ զյովնան ՚ի գժոխս , այսինքն ՚ի խորս
ծովու . և հրամայէ կիտին ձգէլ զնա արտաքս , որով
և հանէ զնա անտի . զայս խորտակէ և զայն նորոգէ ,
որպէս և կամի : Եթէ դռ ՚ի ձգձգիլդ ոչ բեկանիս ,
այն ոչ է ՚ի հաստատութենէ քռմմէ , այլ յարուեստէ
այնք , որ որ է ամի՞ . (տես և եսայ . խոկ . 1 :)

Ե ամի՞ . զբացեօք խմանայ աստ զար գեւսն . իսկ ծա-
նօթիւք և ընտանէօք զըք հրեշտակն . առ նոսա նա-
խատ եղէ ատէ , և առ առա քստմնելի և տաղտկալի .
և ամենեցուն իսկ ատելի և խորշելի . զոր առաւել
և կամելով յայտնի ցուցանել , յարէ զինի , և ատէ :

Ճ՛կ . **Ա** մինեւեան՝ ոյս ուեւանէին զիս արդառա քանչէին յի-
նէն :

Ե մինեւեան ասելով իմանայ առաւելապէս զզրացիս և
զջանօթս իւր առհասարակ : Եթէ սակաւք ամանը
էին՝ որք փախչէին ՚ի նմանէ՝ այսինքն ՚ի բաց չեւա-
նային , չէր ինչ . բայց ոչ սակաւք , այլ ամենելքէսն :
Եւ թէպէտ յերբայականն և յայլ թարգմանութիւնս
ոչ զնի բառդ ամենեւեան՝ բայց քանզի կարգ բանին պա-
հանջէ զօրութեամբ իմանալ զայն ՚ի մերս եգեալ է
ներգործութեամբ , յասելն :

Ե մինեւեան՝ ոյս ուեւանէին զիս արդառա քանչէին յինէն : Ի
սին բանի բառդ արդառա՝ կարէ յարիլ կամ՝ ՚ի բայդ
ուեւանէին՝ ՚ի վերջոյ զնելով զիլ . տն այսպէս . * որք տե-
սանէին զիս արտաքս , փախչէին յինէն || . և կամ՝ ՚ի
՚ի բայդ քանչէին՝ յառաջոյ զնելով զիլ . տն այսպէս

* որք տեսանէին զիս , արտաքս փախչէին յինէն || :

Եթէ ըստ առաջնոյն զիցի՝ միտ բանին լինի այս . ա-
մենելքին՝ որք տեսանէին զիս շրջիլ արտաքոյ՝ ՚ի հրա-
պարակս և ՚ի գաշտս , ՚ի լըրինս և յանապատս , ՚ի
բաց չեւանային յինէն իբր յայնպիսւոյ , որ անսար-
գեալ իցէ և խորշելի . և ոչ համարձակէին մերձենալ
առ իս , և ծանօթ ցուցանել զինքեանս ինձ :

Ե ակ եթէ զիցի ըլ երկրորդին , որպէս զնի յայլ թարգ-
մանութիւնս , միտ բանին լինի այս . ամենելքէան՝ որք

տեսանելին զիս յայնպիսի հալածանու և 'ի նախատինս ,
արտաքս փախուէլին , այսինքն բայց 'ի բաց հեռանային
յինէն , ոմանք վասն երկիւղի , որպիսի էին ծանօթք
իմ և զրացիք . և ոմանք վասն ատելութեան , որպիսի
էին նոքա՝ որը թշնամութե՛ էին ընդ իս . և բազումք
վասն ոյինչ համարելոյ զիս , որպէս թէ և ոչ արժանի
իցեմ տեսեալ լինելոյ . ոմանք ևս վասն ոչ հանաշելոյ
զիս , թէ ես իցեմ այն՝ որ երբեմն փառաւորեան էի .
զի զրեթէ մոռացեալ էին զիս իսպառ , իբր թէ մե-
ռեալ իցեմ և կամ կորուսեալ . | Հւ զայս բացայայտ
ևս ցուցանե՝ 'ի յաջորդ համարն ատելով :

ԺՂ. **Ա** նորացեալ եղէ ես՝ որպէս հեռեալ 'ի որպէ . և եղէ
ես որպէս զանօթ կորուսեալ :

Վոռացեալ ասի ոք 'ի կըկին միտս , այսինքն 'ի ներ-
քուստ և արտաքուստ . 'ի ներքուստ , յորժամ յիշա-
տակ նորա բարձեալ լինի 'ի մոտաց , կամ ոչ բերի 'ի
ներգործութիւն յիշողութե՛ : **Ա** րտաքուստ , յորժամ
անուն նորա , կամ զործ նորին ոչ լինի յիշատակեալ :
Վրդ որպէս երեկի 'ի բանից մարգարելին , յամենե-
ցունց 'ի նոցանե՝ զոր յիշատակեաց 'ի վերոյ , ոմանք
միայն արտաքուստ մոռացեալ էին զնա , և ոմանք ար-
տաքուստ և 'ի ներքուստ . ապա յերկաքանչիւր կարդ
սոցա հայելով , ասէ :

Վ նորացեալ եղէ ես՝ որպէս հեռեալ 'ի որպէ : **Ա** յը բառդ 'ի
որպէ՝ ոչ է ինողիր բայիս հեռեալ այլ բայիս հառացեալ .
որպէս թէ ասէր . մոռացեալ եղէ ես 'ի սրտէ , որպէս
մոռացեալ լինի մեռեան : **Ա** յէ ասէ , մոռացեալ եղէ
'ի մոտաց , այլ 'ի սրտէ . առ 'ի ցուցանել՝ թէ այն մո-
ռացութիւն էր վասն սպակասութեան սիրոյ՝ որ 'ի սիրան
է : **Ա** յը միտ բանին է այս . թէ թէպէտ և բազումք
էին յառաջն՝ որք յիշէին զանուն իմ և գովէին զիս ,
բայց յորժամ հալածեալ եղէ 'ի սաւուղայ , բազումք
'ի նոցանե՝ պակասեալ 'ի սիրոյ՝ մոռացան զիս , որպէս
թէ մեռեալ իցեմ . և բազումք ևս ոչ յիշէին զա-
նուն իմ :

Ա րպէս մեռեալ ասելով կամի յայտ առնել և զայս ,
թէ 'ի մոռացեալ լինել իւրում , թէպէտ և կարօղ
էր զործել զայնպիսիս , որովք ստիպէին մոռացողքն

կամաց և ակամայ յիշել զնա , բայց առաքինութիւն նորա զուսպ ունեթ զնա , մինչև հանգոյն մեռելոյ ու ինչ ներգործել , այլ մանաւանդ փոխանակ ներգործելոյ ցուցանել զնաքն իրեւ զմեռեալ . վասն զի * որ մեռեալն է՝ ոչ ներգործէ , և որ ներգործէ՝ ոչ է մեռեալ . ասէ սարգիս չնորհալի ('ի մեկն . յուդայի . համար . 6 . ձառ . ա .) կային ևս բազումք , որք յիշեին զնա իրեւ զիենզանի . բայց համարէին զնա իրեւ այնպիսի ինչ՝ որ բարձեալ և կորուսեալ իցէ . և առ այս յարէ , և ասէ :

▶ - Էդէ ևս որպէս զնաօթ իրաւունեալ : { Յորժամ կորուսանէ ոք զանօթ , կամ զայնալիսի ինչ՝ որ պիտանացու է ; ինքեան , և կամ յորժամ խորտակի անօթն , տէր անօթն 'ի սկզբան անդ տրտմեալ՝ 'ի տրտմութենէ և 'ի ցաւոց անտի բազում անգամ յիշէ զայն . բայց առ սակաւ տոկաւ 'ի մեզմանալ ցաւոց , և 'ի փարատիլ տրտմութեանն մոռանայ : **▶** յապէս պատահեցաւ և ինձ ասէ դաւիթ . զի յորժամ սկսաւ հալածել զիս սաւուղ , բարեկամք իմ և ծանօթք իմ և զրացիք 'ի սկզբան անդ փաքք մի ցաւեին 'ի վերաց իմ . բայց յերկարիլ հալածանաց մոռացան զիս և յուսահատ եղեն , որպէս սովորութիւն է մարդկան մոռանալ զանօթ կորուսեալ կամ խորտակեալ և անպիտանացեալ : Ոյնպէս առնեն ասէ լամբ' . և հրեշտակք ընդ այնուիկ՝ որք համարին մեռեալ՝ 'ի մեղս :

▶ յորպէս բազումք էին՝ որք մոռացան զդաւիթ , սոյնպէս և բազումք էին՝ որք թէպէտ ոչ մոռացան զնա , այլ յիշեին զնա , բայց ոչ եթէ վասն սիրոյ , կը վասն բարի ինչ կամելոյ նմա , այլ վասն ատելութէ . որով բորբոքեալ ընդգեմ նորա 'ի մէջ բերէին զանուն նորին՝ շարախոսելով զնմանէ և բամբասելով զնա . և զայս յայտ առնէ 'ի յաջորդ համարն ասելով :

◀ . **(** Ի լուսոյ ևս շբամբաման բաշմայ՝ որ շուշը էին զնա . ի ժողովը նոյս 'ի մուտքանին , առնեւշանին իմ իսրաւեյան . այլ ևս 'ի ժեղ ոք յայտացայ :

Բամբասանքն է խօսք եղծիս անուան յայտարարութիք զազտնի պակասութեան մարդոյ , թէ համարիս իցէ , և թէ սուտ : **▶** և սա մեղք մահուչոտի , և համարի

իբր մարդասապանութիւն։ Ավանք մարդոյ երբեակ է . այսինքն՝ կեանք գերբնական՝ ի չնորհս . կեանք բը-նական՝ ի հոգին . և կեանք բաղաբական կամ բարօյական՝ ի բարի անուան . զքնն և բարձցես , սպանող համարիս . զառաջինն բառնայ մեղքն . զերկրորդն բառ-նայ մահն . զերբորդն բառնայ բամբասանին :

Ասացի , * զաղանի պակասութեան . զի եթէ յայսնի իցէ , ոչ ասի տիրապես բամբասանք , այլ պարսաւանք ևս և մեղաղբանք , ևն . Աւ սակայն եթէ նիւթն իցէ ծանր , ընդ բամբասանո դասի . զի ծանրութի նիւթոյն տայ զեղծումն անուան : Արդ թուի թէ մարդարէն բամբասանք ասելով զերկրուին ևս իմանայ . իբր զի ինքն յո և իցէ հալածանս խր՝ ի ըրջին՝ ի հրեաստա-նի՝ ուր և զնայր՝ փոխանակ զովութիւն լսելոյ՝ բամ-բասանս և պարսաւանս լսելո զիւրմէ , և զայս նաև . ի բերանս նոցա՝ որք մօտաւորքն էին նմա . վասն որոյ մաս-նաւորապէս զնոսա՝ ի մէջ բերէ՝ ասելով :

Օ չ շուայ ես պամբասան բաշմա , ու շուջն են շինել . կամի ասել՝ ի տառապիլս իմ և՝ ի տուայտիլս հալա-ծանօք՝ չքտի ինչ սփոխանս յայնցանէ , որք շուրջ եին զինեւ , այսինքն՝ ի ըրջակայից , այլ՝ զբամբասանս . և զայն ոչ եթէ՝ ի սակաւուց , այլ՝ ի բազմաց , որք նը-տեալ՝ ի միասին՝ չարիս խօսեին զինէն , և բանս ա-նարդանաց բարդէին՝ ի վր իմ . և չարաբանութիւ-րեանց՝ զրգուեին զմիմեանս և զայլս առ՝ ի վնաս ան-ձին իմոյ . և առ այս յարէ զինի , և ասէ :

Ի ժողովէ նորա՝ ի դասէն՝ ունուշ շնչն իմ իսրհեցան : Բազում ուրեք՝ ի սուրբ գիրս պատմի այսպիսի ժողո-վումն ընդդէմ դաւթի՝ արարեալ՝ ի սաւուզայ , և յարանց նորա (ա . թագ . ժթ . 1 . ի . 31 . իթ . 7 . իդ , 21 :) և յարեսաղոմայ և՝ ի գործակցաց նորա , և յայլս . (թ . թագ . ժթ . 20 . ժէ . 5 . եւ :) Յորս խորհուրդ արարեալ հաստատեցին առնուլ զանձն . դաւթի , կամ առնուլ զհոգի նորա այսինքն է սպա-նանել : Օ այնպիսի ինչ արարին և նոքին իսկ արք դաւթի՝ ի զերիլ կանանց և որդւոց իւրեանց՝ ի պա-ճառու նորա . (ա . թագ . շ . 6 :) Բայց յայսմ ամի-ու լքաւ դաւիթ , այլ եղ զյոյս իւր յած , և՝ ի նա սպաւինեցաւ . սմին իրի ասէ :

Այս էս՝ ի տեղ ունք յառաջաց՝ Որպիս թէ ասեր. թէպիտ
և թշնամիք իմ և ծանօթք իմ խօսեին զինէն շարիս,
և խորհեին սպանանել զիս, այլ ես յիշելով զինան
մարդասիրութեան քո, և զամենակալ զօրութի քոյ՝ ի
քեզ եղի զյօյս իմ. Խակ թէ զինչ խորհեր, և զինչ
ասեր՝ ի յուսան յած, յայտ առնե՛ ասելով:

Ճկ. Ասոյի, դու էս ած իմ. Ե՛ ի յեռա ոյ և ժառան-
գութի իմ:

Խառս ասուած ըստ նշանակութեն իւրումառեալ ցու-
ցանե ասուզ, այսինքն է հաստող և արարօղ. յօրմէ
և հաստին և արարին ամիեղերաց ասուած կոչի: Խակ
ըստ ստուգաբանութեն առեալ՝ լի ՚ի մեղ ասու ած. և
այս՝ ըստ երից. մի զի ՚ի չգոյէ ասու էած, այսինքն
յայս լինելութիւն էած զամ: Երկրորդ՝ զի զոր միան-
գամ էած ՚ի լինելութի, ՚ի կառավարել զնոսա և ՚ի
ինամել ասու ածէ, այսինքն ՚ի վախճան իւրեանց ածէ:
քանզի վախճան իւրաքանչիւրոց է ասու վասն իւր:
Երկրորդ՝ զի զընտրեալս իւր ածէ ասու, այսինքն յեր-
կինս ՚ի ժառանգութիւն իւր. և յայնժամ տիրապես
ստուգի նշանակութի բառիս ասուած: (տես և ՚ի ասդ.
ինթ. 1. և ձա՛. 1.) Վարդ ծանուցեալ մարդարին
զմեծութի և զզօրութի հմարտին այ, ՚ի նա բոլոր ապա-
ւինի և ասե:

Ասոյի, դու էս ած իմ. Խամի ասել. ՚ի խորհիլ խմում
թէ որոյ եմ ես, և ով է ածն իմ՝ զբեղ միայն ծա-
նեայ և ասացի. զու ես ած իմ, այսինքն հաստիչ
իմ, տեսուչ իմ, և ծայրացոյն բարին իմ, կամ վեր-
ջին վախճանն իմ. և զու ինքն որ հաստեցեր զիս,
քաղցրութի խնամես զիս, և յամի առաջնորդես ինձ.
ուրեմն և ՚ի յուսալ իմում առ քեզ՝ ոչ մերժես զիս,
այլ նոյնակէս խնամես ՚ի բարին, և սպահես ՚ի չարէ՝ և
լինիս սպաշտան իմ. և ո կարիցի այնուհետեւ վնա-
սել ինձ, կամ առնուլ զանձն իմ: Հայս միտս ասեր
և պօղոս. * եթէ ած ՚ի մեր կոյս է՝ ով իցէ մեր հա-
կառակ! (հռովմ. ը. 31.)

Վայր պաշտպանութեն այ սբանչելի փորձ՝ յայտնի առ-
սանի յերիս մանկումսն, ՚ի սեղբար, ՚ի միաար, և
յաբեղնագով. զի ՚ի սպանալ ընդդիմ նոցա մեծի

այնմիկ արքային նաբռուգողոնտորաց և յասել . * ու
է ած՝ որ փրկեցի զքեզ . նորա զանձ ունելով իւ-
րեանց ապաւէն՝ անխռովլ մնացին՝ ի սիրաս իւրեանց .
և ոչինչ համարելով զրան նորա՝ ասացին ցնա . * ու-
նչ ինչ է պիտոյ վասն բանիդ այդորիկ տալ քեզ պատառ
իսանի . զի է մեր ած յերկինս՝ զոր մեքն պաշտեմք ,
կարօղ է փրկել զմեզ . (դան . դ . 14 - 17 :) Եւ
ի զայրանապ սրտմառութե արքայի իբրև արկան՝ ի հնոց
հրոյ , այնպիսի օրինակաւ պաշտպանեալ եղեն յայ ,
մինչեւ նա ինքն նաբռուգողոնտոր ևս և իշխանք նորա
օրհնեցին զանձ , և խոստովան եղեն , թէ * ու զոյ
այլ ած՝ որ կարօղ իցէ այնպես փրկել լ զյուսա-
ցեալս իւր :

Վայս յայտնի տեսաւ և յայլ բազում անձինս , 'ի շու-
շան , յեսթեր , են . որք զանձ ունելով յինքեանս՝
յած եղին զյոյս իւրեանց , և պաշտպանեալ եղեն՝ ի
նմանէ : Վատ այսմ ևս մարդարեն գաւիթը զանձ միայն
իւր հանաւելով ու յայլոց պաշտպանութիւն պաւանի ,
այլ 'ի նորայն միայն . և որովհետեւ զնա ևեթ հանա-
ցէ իւր ած , իւր հաստին , իւր իննամօզ , և իւր սրաշ-
պան հզօր , այսու իսկ հանաւէ և խոստովանի՝ թէ
զամ զոր ունի յինքեան՝ է յայ , և ընդ պահպանու-
թեն այ , և 'ի ձեռս այ . և վասն այսորիկ յաւելու
ասել :

Լու՝ է չեռա այ և ժառանգութիւն իմ : Վառս ժառանգու-
թիւն կրկնակի առեւալ լինի . մի՝ փոխանակ ժառանգման ,
կամ փոխանակ ժառանգելոյ զիմն . և մի ևս՝ փոխա-
նակ իրին ժառանգեցելոյ . և ըստ այսմ երկրորդ առ-
ման՝ ժառանգութիւն է այն ինչ՝ որ իրաւամբք լինի ու-
մեք՝ կամ տուեալ լինի ումեք 'ի վայելել զայն իբր
զիւր սեփական իր :

Վրդ մարդս յայլեայլ կարգի մոտածեալ ունի զայլ-
եայլ ինչ այսպիսի՝ 'ի վայելել . Հերանական կարգի
մոտածեալ , եթէ հասցէ յարքայութին՝ երանութին յաւի-
տենական լինի նորա ժառանգութիւն , զի իրաւամբք զա-
շնն այ տուեալ լինի նմա առ 'ի վայելել իբրև զիւր
սեփական բարի : Եւ գերբնական կարգի , կամ ասա-
ցից 'ի չնորհաց կարգի մոտածեալ , եթէ իցէ 'ի չնորհս
(որ է ամենեին ձրի) , գերբնական բարիք՝ որք զհետ

զան չնորհաց՝ լինին նորա ժառանգութիւն ըստ նախակարգեալ պայմանի . Կարե, և նոյն ինքն չնորհըն ասիլ ժառանգութիւն, ոչ զի սեփական ինչ է առողին, այլ զի տուեալ լինի չնորհօք դիմոյն մերոյ՝ այսինքն քափ . և ՚ի տուեալ լինելն, իրը թէ սեփականեալ լինի իրաւամբը չնորհաց դիմոյն . Ի բնական կարգի մտածեալ՝ կեանք մարդոյ, և որ ինչ է կենաց՝ է ժառանգութիւն մարդոյ, զի իրաւամբը գոլոյ իւրոյ մարդ՝ վայելել զկեանս իւր, և որ ինչ է կենաց՝ իրը զիւր սեփական բարի . Կարեն ընդ հակառակն և կիրք և փոփոխմունք և վարատմունք բնութեանս՝ կոչիլ ժառանգութիւն . ըստ որում ժառանգեցաք զսոսին մեղօքն աղամայ : Ի բարոյական կարգի մտածեալ, բարոյական առարքինութիւնը ընդ որս և խմասութիւն և հանձար, ևն, են ժառանգութիւն մարդոյ, ըստ որում իրաւամբը ջանից լեալ են նորա ՚ի վայելել զնոսին իրը զիւր բարի . Ի բաղաքական կարգի մտածեալ՝ իշխանութիւն, տերութիւն, ստացուած, և այլ զինչ և իցե՝ որ լինի ումեք իրը սեփական ինչ վայելելի, ասի ժառանգութիւն նորա :

Վարդ որպէս երեի յընթացից սազմոսիս, ստանօր բառդ ծառանդութեալ՝ ըստ ամ նշանակութեան կարե, առեալ լինել . բայց ոկզբնաբար և ուղղակի զնի ըստ սյնմ նշանակութեան որ մտածի ՚ի բնական կարգի, ուստի և զնի փոխանակ կենաց : Օ ՚ի վերոյ եցցց մարգարեն՝ թէ թշնամիք խորհին կորուսանել ըզկեանս իւր, և ՚ի յաջորդ համարն աղաւէ զած՝ փրկել զինքն ՚ի ձեռաց նոցա, որովք երեի թէ ՚ի պահպանութիւն կենաց իւրոց հայելով զնէ զբառդ ծառանդութեալ՝ յասելն . ՚ի յեւ ոչ է ծառանդութիւն . որպէս թէ առելը, կեանքը իմ զօր ժառանգեամ, նոյնպէս և պահպանութիւն կենաց իմոց՝ ՚ի ձեռս քոյ է :

Չեռօք՝ իմացեալ լինի աստ ամենակարողութիւնն այ . զի որովհետեւ ձեռքն է զործիք առնելոյ և պահելոյ, ամենակարողութիւնն այ լինելով իրը գործիք՝ որով առնէ ած զամբ և պահէ՝ ասի ձեռք այ . Իսկ յոզնակի զնելն ակնարկէ յայն՝ զի ամենակարողութիւնն այ է սկիզբն զործելոյ առ արտաքս ըստ նամաչելոյ և ըստ կամելոյ միանգամայն . ուստի և ըստ եղանակի մե-

բռւմ խօսելով՝ հիմնի յերկուս , այսինքն՝ ի հանաւումն եւ՝ ի կամեցումն այ՝ : Հայս հայելով՝ յսպնակի դնէ՝ այսինքն է՝ ի յեւա այ . իսկ եթէ ամենակարաղութիւնն այ մտածեսցի՝ ի վերայեալն , եզակի դնի յեւա . որպէս այն՝ զօր ասէ ամ . * զայս ամ ձեռն իմ արար . և իմէ ամ . (եսայ . կղ . 2 :)

Ո արթ է ևս ասել . թէ ձեռօք իմացեալ լինի ասս կամք և իշխանութիւն այ . որպէս թէ ասէր . որովհետեւ յիշխանութէ քոյ է , և՝ ի կամք քոյ է կեանք իմ , ըստ նիմ ուստեք երկնչիլ . և եթէ գու ոչ կամրցին տալ զիս՝ ի ձեռս թշնամեաց իւրոյ , զինչ կարիցեն նորա առնել ինձ . և ոչ իսկ կարեն մերձենալ յիս՝ թռող թէ չար ինչ հասուցանել : Օ այսոփիկ ասէր դաւիթ՝ ի վստահութէ անսի սրտի իւրոյ՝ զօր ուներ յած . բայց քանզի տեսանէր ևս , զի մերձ էին թշնամիք իւր կորուսնել զնա , աղաւէ զած ըստ վստահութէ իւրոյ՝ ցուցանել զպաշտպանութիւն իւր և փրկել զինքն . սմին իրի ասէ :

Ժ . **Պ**րիեա շիւ՝ ի յեւաց թշնամեաց ինց , և՝ ի հաւծն լոյ ինց :

Ո ասունգութիւն մարդոյ կամ կեանք մարդոյ ըստ ինք եան առեալ՝ որովհետեւ որպէս ասացաք այժմ՝ ի ձեռս այ է , ոչ ևս համարի լինել՝ ի ձեռս այլոյ՝ մանաւանդ՝ ի ձեռս թշնամեոյ . և սակայն եթէ թոյլ տացէ ած ըմբռնիլ մարդոյ՝ ի ձեռս թշնամեաց իւրոց , կեանք նորա ասի լինել և՝ ի ձեռս նոցա : Հայս հայելով մարդարէին պաշատի առ ամ , զի մի թողացուոցէ մասանիլ՝ ի ձեռս թշնամեաց իւրոց , այլ մանաւանդ փութացի ազատել . վասն որոյ ասէ :

Փրիեա շիւ՝ ի յեւաց թշնամեաց ինց , և՝ ի հաւծն լոյ ինց : Ո թշնամեուը իմանայ զայնոսիկ՝ որք ատէին զնա , և մատնիւ լինեին նմա , և չարիս հասուցանել կամէին անձին նորա . իսկ հալածօք իմանայ տիրապէս զաւող և զարս նորա : Ինդրեմ ասէ՝ փրկեալ զիս՝ ի սոցանէ . զի մի կեանք իմ՝ որ՝ ի ձեռս քոյ է յապահովի , լիցի և՝ ի ձեռս սոցա՝ ի վստահու :

Այսափ աղաւանք և պաշատանք , որովհեք ինդրէ մարդարէն՝ աղաւատ մնալ՝ ի նեղաց և՝ ի նեղութեանց փու-

թով, երեի հակառակիլ այնմ, զրբ այլուր առաջի
առնե, ՚ի ցուցանել անդ զինքն պատրաստ համբերե-
րց և և իցէ նեղութեց . թաղ զվատահութի սրտի նորա
առ թշնամին իւր :

Ա յ լ չիք ինչ յայսմ հակառակութի . և այս՝ յաւետ
ըստ երից . մի՝ զի թէպէտե հրամայիմք համբերել
նեղութեանց, բայց ոչ հրամայիմք սիրել զնեղութին .
վասն զի ոչ ոք զօր կրէ՝ սիրէ . թէւ սիրիցէ կրել .
զի թէպէտե ուրախանայ ընդ այն՝ զի կրէ . բայց ոչ
ուրախանայ ընդ այն՝ զօր կրէ . քանզի ուրախութիւնն
այն է ընդ կրելն՝ և ոչ ընդ կրելին : Երկրորդ՝ զի
որովհետեւ նեղութիք տուեալ լինին երբեմն իբրև
սրտիժք, ցուցանեն թէ բարկացեալ է ած , կամ
տակաւին չէ հաշտեալ . ապա խնդրելն ուրուք ազա-
տիլ անտի, ոչ հայի յայն՝ զի մի կրեսցէ ինչ, այլ
յայն զի հաշտեցուացէ զած : Երբորդ՝ զի նեղութիւնք
երբեմն լինին վասնդ կործաննան . ապա խնդրելն
յաց փրկել զինքն յայնցանէ՝ ուղղակի ոչ է կամիլ
փրկիլ՚ի նեղութենէ, այլ է կամիլ փրկիլ՚ի կործան-
մանէ : Հայս իսկ կրկին և կրկին ազաւէ մարդարեն
զած՝ ապրեցուցանել զինքն՝ ՚ի վասնդաւորին նեղու-
թեանց և ՚ի վատախորհուրդ նեղաց . ըստ որոյ և ասու
ոչ դադարի յաղացելց , այլ վերստին՝ ՚ի նոյն մատչի .
և գարձեալ թախանձելով պաղատի և ասէ :

Ժ Ե . **Ա** յ ե լ ե ց՝ զ է բ ե ս տ ո յ ՝ ՚ ի ծ ա ռ ա յ ո յ ։ ա պ բ ե ց՝ զ է ս տ
ը ս տ ո յ ը մ ո ւ ն է տ ո ւ մ . ա ր մ ի յ ա մ օ լ ե ն է դ է լ յ ։ զ է ի ա ր-
դ ա յ ։ ա ս ս է ս է լ ։

Երեսօքն այ բազում ինչ իմացեալ լինի . (զրմէ
տես՝ ՚ի սաղ . դ . 6 : տես և ՚ի սաղ . կդ . 1 :) Իսկ աստ
դնի փոխանակ հայեցուածոյ երեսացն այ , որով նշա-
նակի այցելութիւնն այ , և կամ պաշտպանութիւնն
նորա ՚ի ձեռն այցելութեան , կամ հայեցողութի նորա
՚ի տառապանս , և կամ ցուցումն օգնականութե իւրոյ :
Ուստի և երեւցուցանել նորա զերեսս իւր ումեք
տիրապէս առեալ՝ նշանակէ նայիլ նորա առ նա , և
ցուցանել զպաշտպանութի իւր կամ զօգնականութիւն
իւր առ նա . ըստ այսմ նշանակութե առեալ ասէ :
Ե յ ե լ ե ց՝ զ է բ ե ս տ ո յ ՝ ՚ ի ծ ա ռ ա յ ո յ ։ Վ ա յ ի ն ք ն է ն ա յ ե ա մ

յիս՝ի ծառայ քոյ աշօք գթութե՛ քու այց արա առ իս ,
և տե՛ս թէ զինչ և զմալիխիս կրեմ՝ի թշնամեաց ի-
մոց . և տեսեալ զիլիսո իմ պաշտամնեա զիս : Վա-
առ՝ի զըրաւոր առնել զրան իւր՝ ոչ առէ յիս , այլ՝ 'ի ծո-
ռայս ոչ . որպէս թէ ասէր . 'ի հայիլդ առ իս՝ ոչ իրը¹
յօտար որ ունիս նայիլ՝ այլ իրը՝ի ծառայ քոյ . իսկ
եթէ տեսոցես յիս զայնալիսի ինչ՝ որ իցէ ընդդէմ
ծառայ լինելոյս , որով անարժան գտանիցիմ պաշտ-
պանութեան քում , ապաւինիմ յողորմութի՞ քո :

Վարթէ և աստ երեւցուցմանք երեսաց իմանալ և
զբոսաւորելն ոյց զմիսո մեր , որով հնար լինի մեզ
տեսանել զարն և խարջիլ , ապա թէ ոչ մնամք՝ 'ի
խաւարի և խարիմք , և փոխանակեմք զբարին ընդ
շարի . և յայնժամ՝ պատճառ խարելոյն մերոյ ոչ լինի
այն՝ զի ան ոչ լուսաւորէ զմեզ , այլ զի մեք եմք՝ 'ի
խաւարի . վասն զի որպէս (ըստ լամբ² .) որ 'ի գիշերի
պղինձ գահէկան ընդ ոսկւոյ տայ՝ գիշերն է պատճառ
պատրելոյն , այսպէս և մեր խարելոյն պատճառ՝ խա-
ւար մեր է . իսկ յորժամ երեւցուցմանէ մեզ ան զե-
րեսս իւր՝ լուսաւորեալ՝ի նմանէ խորշիմք՝ի շարէ և
փրկիմք , և ոչ մնամք ամսաւցեալ : Օսոյն զայս ևս
ցանկալով մարդարէին գտանել , աղայէ և ասէ :

Վորէշ՝ շի որ ըստ ողորմութի՞ քում : Կամի ասել . զօր
իննդրեմն՝ի քէն՝ ոչ ըստ արժանաւորութէս պահանձեմ ,
այլ ըստ ողորմութեղ թափանձեմ . և իրըև ծառայ
առ տէրդ դիմեմ . դիտեմ զի ողորմիս ծառայից
քոյ , ողորմեալ և ինձ , և ասլրեցն զիս , որ ապաւի-
նեալս եմ՝ի քեզ , և կարդամ առ քեզ : Կամելով ապա

սաստկացուցանել զթախանձանս իւր՝ յարէ զինի :
Տը Ք յամէն եղէց , զի էաբացէ ու էն : Տը ասելով յայս
բան՝ զրեթէ բանազատել կամի զան . որպէս թէ ե-
ղեալ եր . արժան է հաւատարիմ և բարի ոնց ցուցա-
նել զօլութիւն առ այնոսիկ ծառայս , որը ապաւինին
'ի պաշտպանութիւն ողորմութեան նորա , և ոչ թէ
կոր՝ի զլուխ դարձուցանել զնոսա յետս . և արդ որով
հետեւ զու ևս ամենահաւատարիմ և ամենաբարի ոնք ,
և ես իրըև ծառայ քոյ կարդացի առ քեզ՝ եղեալ ըզ-
յոյս իմ յողորմութիւն քոյ , ցոյց ինձ ուրեմն զքոյ օգ-
նութիւնդ . իսկ եթէ ոչ օգնեսցես ինձ , կրեցից զա-

մօթ մեծ առաջի քոյ , և առաջի թշնամեաց խնոց . զի այնուհետեւ ամենէքին ծաղը արասայեն զիս և ասիւցեն . ուրեմն անօրէն ոնն է դա և անարժան՝ զի կարդաց առ տէր , և տէր ոչ լոււաւ գմա : Վաև ևս ինքն գտայց յանձն իմ ամօթապարտեալ իբր մերժեալ ոք . մի տէր , մի լիցի ինձ աղաւէմ զայսպիսի կրել ամօթ . զի թէ և ես արժանի իցէմ կրելոյ , այլ չէ արժան ողորմութեան քում զիս այսպիս ամաւէցուցանեց : Խակ թէ որոց արժան իցէ կրել զամօթ կամ ամաւէլ , յայտ առնե՛ ՚ի յաջորդ համարն , ասելով :

ԺԷՋ. Ա յաշուցեն ամդաբէլոց , և էջեն ՚ի դժուս : Համբ
Յ էջուն շրեւուն նենդաւուրք . ոյս եւսին պարտարոյ պահիրաւունէ , յամբարտաւունէ և յանդասնենը իւրեանց : Ա յափիսի բանք՝ որք ասին զամբարշտաց՝ ոչ են վրեժ . իննդրականք , զի այս անվայել է . այլ են իբր գուշակական յայտարարութք , թէ զինչ հանդերձեալ է պատահիլ նոցա . որպիս ասացեալ է մեր այլուր . (տես ՚ի տաղ . իէ . օ . և ՚ի ներածուն . գլ . ք .) Խակ ամսպարը տօք իմացեալ լինին այնոքիկ , որք հեռացեալ ՚ի բարի պաշտամանց՝ զշետ են անբարի գործոց : Աղքա ու բովշետեւ յուսացեալ են յինքեանս և ոչ յած , կամ թէ զյօյս իւրեանց եղեալ են ՚ի մարդկային հնարա , և ոչ յածային ինասին , կամ թէ յեցեալ են յանցաւորս և ՚ի հաճոյս իւրեանց . և ոչ յանսանցն և ՚ի հաճոյս այ , վասն այսորիկ ՚ի կատարիլ աւուրց իւրեանց կամ ՚ի լրանալ ժամանսակի , յայտնի տեսանելոց են , թէ խարեւալ են . և այնու ամաւէլոց են յոյժ . այս է զոր ասէ :

Ա յաշուցեն ամդաբէլոց , և էջեն ՚ի դժուս : Ա յախնքն թէ ամսպարիշոք , որք կարծէին ունել ինչ ՚ի մնութեաց , յորս յուսացան , և նոյս զշետ եղեն՝ խարեւոցին , և ՚ի խարիին ամաւէսցեն . և որք յուսովլյարեալ էին ՚ի մնութիս , անյօյս մեռանիցին , և իջցեն ՚ի դժոխս . ուր յերբ . զրի սէօլ , որ զնոյն նշանսակի՝ այսինքն դժոխս . թէ ըստ նշանսակութեան գեհեղմանի . և ըստ այսմ յասելն իջցեն ՚ի դժոխս , միտ բանին լինի այս . իջցեն աստ մարմնով ՚ի գերեզման , և ՚ի հանդերձեան՝ հոգւով

՚ի գեհեան . որպէս եղեւ խորտկահաշ մեծատանն ,
որ զէտ լեալ անցաւորաց՝ ՚ի մեռանիին թաղեցաւ
մարմնով ՚ի գերեզման , և էջ հոգւովն ՚ի գեհեան .
(ղուկ . ժշ. 22 .)

Ոյնս պատահեցաւ և թշնամեցն դաւթի , սաւու
զայ ասեմ , և զովեկայ , աբեսազամայ և աբժատովե-
լայ , և այլոց բազմաց : | յսայիսեաց ամօթթ թէ աստ
և թէ ՚ի հանդերձեան՝ եղիցի մեծ յոյժ : | Քանի
բարի լիներ ամսարշտաց , եթէ ՚ի միտ առնուին զայս .
և յառաջ քան զգնալ անդր ՚ի դժոխս իրօք , խորհին
զայնմանէ մոօք , թերեւս դառնային ՚ի շարեաց , և ոչ
իթանեին ՚ի նոյն :

Պատմի թէ կոմն սուլմնն քաղաքի շարարեր զհպա-
տակն և սիրեր զշուն իւր : | Յաւուր միում մին ՚ի ծա-
ռայից նորա եհար զշունն , և կոմն զարացեալ յոյժ
եդ զնա ՚ի բանտ խաւարային : | կալ նորա անդ զա-
ւուրս բազումն յուսահատեցաւ , և մատնեաց զինքն
սատանայի , և յափշտակեցաւ ՚ի դժոխս . և աստ կո-
շեալ զբանտապէտն՝ ասաց նմա ազդ առնել կոմնին ,
զի եկեսցէ առ ինքն և | գալ կոմնին՝ ասաց յնա ծա-
ռայն . պատգամաւոր առաքեցայ առ քեզ ՚ի դժոխոց ,
զի ածայ անդր : | յւ սկսաւ պատմել զտանջանս դժո-
խոց . անդ էր ասէ և այս որ իշխան , զօր դու բարւոր
հնանալէս . նա եցոյց ինձ զտեղի մի սարսափելի՞ և
ասաց , այս տեղի պատրաստեալ է վասն կոմնին սուլ-
մնայ . և պատուիրեաց ինձ ասել քեզ զայս : | յւ
զի զիտէմ թէ նա ոչ հաւատայ , ասա նմա , թէ ես
՚ի ծածուկ զայս ինչ և զայս ինչ խորհուրդ խորհե-
ցայ ընդ նմա յայն ինչ աւուր , յայս ինչ տեղովդ-
են : | Օ այս իրրե լրւաւ կոմն՝ զահի զամօթի հա-
րաւ . ետես և զծառայն խահըեալ . և սոսկացեալ
զարձաւ ՚ի մեզաց . իսկ ծառայն եկաց միշտ ՚ի սուզ ,
և ՚ի սուզ եմոյծ զբազումն . նոյնպէս և կոմն միշտ ՚ի
մտի ունելով զլուեալսն՝ բարի վարուք զարգանայր ,
և մեռաւ բարի մահուամբ և եհաս փրկութեան . զի
խոկումն դժոխոց զերծոյց զնա ՚ի դժոխոց . ուստի ա-
սի՞ թէ * որ մոօք իթանէ ՚ի դժոխս , իրօք ոչ իթանէ
անդ || : | Օ այս եղեալ հայեսցուք ՚ի յաջորդդ՝ զօր
ասէ :

Համբ էղին շրեռանք նենդուրք : Օ որ յառաջնումն
հաստածի առաց ամազուցն , աստ ասէ համբ էղին ,
առ ՚ի ցուցանել զաստիկով մեծի ամօթոյ նոցա . զի
որովհետև բազում անգամ պատահի ՚ի սաստիկ ա-
մաշելոյ պատահնձիլ կամ համբանալ զհամբանալն դնէ
փոխանակ սաստիկ ամաշելոյ . որպէս թէ ասէր ,
այնպէս ամաշեսցեն ցըթունք նենդաւորք՝ մինչեւ
համբանալնոց :

Իսէ շրեռանք նենդուրք առելով իմանայ զնոյն իսկ
զամարդիշտու , որք նենդաւոր ցըթամբք վարելով ամ-
պարշտին . զի որպէս այլուր ասացաք (՚ի սաղ . իէ .
42. և ն .) այս է ձեւ հարտասանական , որով մասն
դնի փոխանակ բողոքին , այսինքն ցըթունքն փոխա-
նակ մարդոյ , որպէս ոտքն փոխանակ ամնձնն : Եւ
պատճառ այսպէս դնելոյ աստ է ցուցանել՝ թէ այն-
պիսի ամարդիշտք ոչ յայլ ինչ ՚ի կիր առնուն զշրը-
թունս իւրեանց , եթէ ոչ ՚ի նենդել այլոց , այսինքն
խարելով արկանել ՚ի վտանգ չարի , որպէս կամէին
առնել դաւթի թշնամիք նորա . այլ եկեսցէ ասէ ժա-
մանակ՝ զի խայտառակեսցին , որով և յամօթ լիցին ,
և յառաւելութեան ամօթոյ իւրեանց ափ ՚ի բերան լի-
ցին և պապանձեսցին և չկարիցեն իւրիք արդարացու-
ցանել զանձնա : Եւ այս կարի իրաւամբք . իբր զի
որպէս բաց էին ցըթունք նոցա խօսիլ նենդութեամք
առ ՚ի կրուսանել զայլս , այսպէս ևս փակեսցին ցըթ-
ունքն նոցա չխօսիլ ինչ առ ՚ի կեցւցանել զննքեանս :
Շանք այսպիսի ամբարշտաց երբեմն են գաղտնա-
ծածուկ , իբր զի այսպիսի ամարդիշտք ՚ի խօսին չե-
րեկցուցանեն երբեմն առ արտաքս զարութիւն ՚ի շրը-
թունս իւրեանց . ուստի և ասին լինել նենդաւորք :
Իսէ երբեմն յայսնի . իբր զի առ արտաքս ևս երբե-
ցուցանեն զարութիւն իւրեանց , և յայսնապէս խօ-
սին զայլոց զբանս անիրաւս . զորոց ասէ :

Ոյս խօսին շաբաթոյ շանիբառաննէ , յանիրառաննէ և
յանդառաննէ իւրեանց : Ոյս բան եթէ առեալ լիցի իբր
առանձինն , բառս ոյն ոչ յարաբերէ զնենդաւորս .
զօրս յիշեաց , այլ զայլս . որպէս թէ եղեալ եր :
Համբ լիցին և նորա՝ որք խօսին զարդարոյ զանիրա-

ւութիւն ևն : Խակ եթէ առեալ լիցի իրը մասն նախընթաց բանին , որպէս է 'ի բնագիրս երրայեցոց և յայլքաղում թարգմանութիւնս , յայնժամ բառս ոչ՝ յարաբերէ զնենգաւորս . որպէս թէ եգեալ էր . զայնսփիկ նենգաւորսն ասէմ , որբ խօսին զանիրաւութիւնս այսինքն զանիրաւ բանս և զուտ զբարտութիւնս վասիլս , կամ զդրոցս լիս նենգութք և կամ զայնպիխորբ արատուորեն զանուն մարդոյ :

Այս զայնպիխ բանս ոչ եթէ զիւրեանց նմանն ամբարշտաց խօսին , այլ զարդարոյ . ոչ զի չար ինչ կը րեալ են 'ի նմանէ , և կամ ունին իւիք զիրաւունս խօսելոյ զայնպիխիս ընդդէմ նորա , այլ զի ամբարտաւան են և ինքնահաւան , և վասն այսորիկ սիրեն զայլս անգունել այսինքն նոււաստ և անարդ ցուցանել հանդերձ յոխորտանօք՝ որպէս զի ինքեանք մեծ երեւեցին : Ուստի յորժամ զրգուն յամբարտաւանութենէ և յանգունիչ բարուց՝ սկսանին ամբարտաւանելով և անգունելով՝ զանիրաւս խօսիլ զարդարոյ , կամ ընդդէմ արդարոյ :

Աստանօր բառս որդու՝ կարէ հայիլ և 'ի դաւիթ . որպէս թէ ասացեալ էր . խօսէին զանիրաւութիւն ընդդէմ իմ , որ չէի անիրաւեալ առ նոսա , այլ արդարութք և միամնութք զնայեալ էի ընդ նոսա :

Ասրցապէս այս բան պատկանի այնոյիկ նենգաւորաց և ամնաբարշտաց , որբ տեսեալ զբարեսպաշտութիւնս այլոց և զբարեկրօն կեանս նոցա , զարին և տագնապին 'ի խայթելոյ խղձի մոտաց իւրեանց , և զիարացեալ ժուժել չարիս խօսին զնոյանէ , և ոմանք չարձանապարհ ևս ցուցանեն նոցա բանիւք կամ զրուածովք , զի խափանեցեն զնոսա 'ի բարի գործոց անտի նոցա , նման սաստանայի տաեցողք մարդկութեան և ասպականիչք բարելաւութեան . քանզի որպէս զրէ սարդիս շնորհալի ('ի մեկն . գ . յովհ . համար 11 .) * մարդատեցութիւնն դործ սաստանայի է . . . և որ , զայլոց բարեգործութիւնս արդելու , 'ի նոյն նմանութիւն սաստանայի զառածեալ է :

Ոինչե ցաստ խօսեցաւ մարդարէն զտառապանաց իւրոց և զլտանգիցն , և թէ զիարդ յայնպիխ տառապանս և 'ի վտանգս զոլով յուսացաւ յած . և թէ

նորիւս յայլումնուազի ՚ի յուսալ իւրաւմ ՚ի նա՛ ե-
զիս զողովանութիւն , և փրկեցաւ ՚ի ձեռաց նեղաց իւ-
րոց , զօրոց և զարատիւմն սակաւուք նկարագրեաց
յայս համար : Օ այսոփիկ եղեալ սկիզբն առնել ցու-
ցանել թէ ըւաւ նմա ած և յայս նուազ ես . վասն
որոց զրեթէ յառաջաբանելով իմն ուզգէ զմառ իւր
՚ի դովասանութիւն քաղցրութեն այ , և ասէ :

Ի . **Ը** ըրէն շէ բաշում է ողբեմունէ առշըրունէ ու պը . պը
պահեցէր երիւղածաց ուզ :

Իս . **Ը** ըրէն դու այնոցի ՚ոյս յառաջեալ են ՚ի ժեղ . ա-
ռաջ ուրտաց հարդիւն :

Վաղցրութիւն այ հայելով ՚ի մեզ՝ զեզումն բարուեն
այ առ արտաքս ՚ի ձեռն միմիթարութեան իրիք . (զորմէ
տես և ՚ի սազ . ինք . 7 : և ՃԾ . 65 : են :) Հօր միտս
այսր քաղցրութեն ներգործութիւ յաստի կեանս և ցոյց
հայրազութ ողբրմութեն , և կամ ողբրմութի զթալից
սիրով . իսկ ՚ի հանդերձեան ոչ միայն և ողբրմու-
թիւն , այլ և վարձք արգարութեան , զոր ած ըստ խոսա-
ման իւրում գանձեալ պահէ՝ տալ երկիւղածաց իւ-
րոց : Հայսոփիկ հայի առաջի եղեալ բնաբանդ , յա-
սեն :

Ը ըրէն շէ բաշում է ողբեմունէ առշըրունէ ու պը . Ուր
բառդ որդէն չէ՝ զնի իրը զարմացական , զորմինակ է
և բառդ իբրև չէ (սազ . հը . 1 :) Որոյ փոխան ՚ի
բնագիրս երբայեցոց և յայլ թարգմանութիւնս զնի
բառդ ունէ . և յեօթանասնիցն չիտր : Խակ պատճառ
զարմացմամբ խօսելոյ աստ մարգարեին , և տեսանել
նորա զբաղմապատկութիւն ողբրմուեն այ : Վայս բազ-
մապատկութիւն ողբրմուեն լու կրկնն բանի տեսանի . մի
ըստ զանազանութեան զործոց ողբրմուեն այ . և մի ևս՝
ըստ առաւելութեանն :

Վատ առաջնոյն յայտ և թէ ած անհամար օրինակա-
ցուցանէ զողովանութիւն իւր ամեննեցուն , իւրաքանչիւր
ըստ իւրում կարօտութեն . օրպէս հոգի մարդոյ այլ և
այլ օրինակաւ ազգէ յայլ և այլ մասունս մարմնոյ .
և զի անհաս և ՚ի մէնջ այսչափ եղանակ ողորմելոյն
այ , վասն որոյ զարմացմամբ խօսի մարգարեն . որ-

պէս զի ասէ, անթիւ են ողօրմութիւքո, զոր քաղցրութիւն մատակարարես ամենեցուն :

Աստ երկրորդին յայտ է թէ յորժամ մարդիկ 'ի տառապիլ իւրեանց ասկաւինին յանձ' թէ արէտ և զմի տեսակ ողօրմութիւն ինդրեն, բայց քաղցրութիւն ոյ ոչ զմի, այլ բաղում ցուցանէ, մինչեւ զարմացուցանել զմեզ. վասն որոյ և մարգարէն զարմանալով ասէ, ով թէ զիարդ մեծ է քաղցրութիւն քոյ . և զիարդ առատ, զի 'ի ինդրել մեր զսակաւ ողօրմութիւն դու զառաւելն ցուցանես՝ մանաւանդ երկիւղածաց քոց . և ունիս զառաւելագոյնն ևս ցուցանելնոցա . և առ այս յարէ : Օչ պահեցէր էրիւղածաց բոց : Ուր բառդ զնը՝ թէ պէտ և յարաբերէ զքաղցրութիւն, բայց դնի փոխանակ գործոց այնոր քաղցրութեան, այսինքն փոխանակ բարեացն զօրս գանձեալ պահէ ած երկիւղածաց իւրոց, առ ՚ի տալ նոցա առատապէս ինչ ինչ յաստիա՝ որպէս ասացաւ . և ինչ ինչ 'ի հանդերձեալն՝ յորում է երանութիւն յաւիտենական :

Աստ տալովն ցուցանէ զինամի իւր առ նոսա կրկին օրինակաւ . մի՝ ազատելով 'ի վտանգաց և 'ի վշտաց . և մի ևս՝ միիթարելով զնոսա 'ի նեղութիւն անդ, և քաղցրացուցանելով զդառնութիւն վշտացն . մինչեւ ասել վշտացելոյն . * ըստ բաղում ցաւոց սրտի իմոյ միիթարութիւն քոյ ուրախ առներ զանձն իմ || . (սաղ. զէ. 19 :)

Իսկ 'ի հանդերձեալն տալով ցուցանէ զիհանալի զայն զիւր սէր՝ որ 'ի վեր է քան զմիտս, և այս կրկին օրինակաւ . մի՝ հատանելով զնում արտօսր յաշաց նոցա, և ազատ կացուցանելով յամ վշտալից և տրտմալից կրից բողորովին . և մի ևս՝ լիացուցանելով զնոսա ամ միիթարութիւն յաւիտենական երանութեան : Այլ թէ առտ ևս ձշմարտիւ ցուցանիցէ ած զողորմութիւն քաղցրուե իւրոց, հաստատութիւն յայտ առնէ մարգարէն յեղելոց անտի, և ասէ :

Աստ է ու ու այնուցէ՝ ոյս յաստաշեալ էն 'ի առջև՝ առ աջ մարտէան : Որպէս թէ ասեր . այս ձշմարտիւ արտօսր զողորմութիւն քաղցրութիւն քոյ, ոչ այնոցիկ՝ որք հեռի արարին զանձինս իւրեանց 'ի քէն, այլ այնոցիկ՝ որք յուսացան 'ի քեզ . և զայս ոչ միայն ծածկապէս ա-

բարեր, այլ և յայսնապիս առաջի մարդկան, մինչեւ վկայել նոցա, թէ դու ես՝ որ առնես առ նոսա զողորմութիւն քոյ. որպիս յայտ է յարըահամ. յիսահակ, ՚ի յակոր, ՚ի մովսես, ՚ի ասմուել. են:

Եշ որ զարմանալին է՝ նաև ՚ի հասարակ իրս ցուցանէ նոցա ած զմանաւոր ինսամն իւր. և ՚ի խնդրել զսակաւն՝ տայ զառաւելն. և ՚ի պարապիլ փոքուն՝ չնորշէ զմեծն. և ՚ի զշետ լինել խոնարհ գործոց՝ հանէ ՚ի բարձրութիւն: Հոռովհ հասկաքաղ առնելով եղեւ հարսն բոյսոփի. (հոռովհ. ք. 3. դ. 13.) ոերեկա ըլտուց ջուր արբուցանելով կարգեցաւ կին խահակայ. (ծնն. իդ. 20. 67.) սաւուզ ՚ի բարելաւութէ իւրում որոնելը զեշս կիսեայ, և եզիս զմագաւորութի. (ա. թագ. թ. 3. ժ. 1.) որովք երեկի թէ որք յուսացեալ են յաճ՝ ՚ի փոքունս գտանեն յայ զմեծամեծս՝ ևս և առաջի որդւոց մարդկան:

Այս բանք՝ որք պարունակին յայսափկ երկուս համարս, փոքը մի այլազգ ևս կարեն մեկնիլ, եթէ ըզբաւոդ ուսնեցէ՝ առցուք ըստ երկրորդական նշանակութեան, փոխանակ բառիս ծածիւշէր, կամ նատաշէր. որով և միտ բանին լինի այս. մեծ է քաղցրութիւն քոյ, զոր թագուցանես յերկիւզածաց քոյ ՚ի սասապիլ նոցա նեղութքը. և ոչ ցուցանես նոցա զայն առ ժամայն, որպէս զի մարզկեսցին ՚ի նեղութիս, և ստասցին զհամբերութի, և շահեսցին վարձս. բայց յետ սակաւոց անտարակոյս ցուցես նոցա զայն առաջի որդւոց մարդկան:

Օ այս յանձն իւր ևս փորձեաց դաւիթ. զի ՚ի նեղիլ և ՚ի սասապիլ իւր ՚ի ժամանակս հալածանայ՝ թաքուցեալ ետես յիւրմէ զքաղցրութիւնն այ. այլ յետոյ եզիս զայն վաղվաղակի առաջի որդւոց մարդկան, այսինքն առաջի ժողովրդեանն իսպայելի և այլոց. յազափի իւրում, և ՚ի բարձրանալն ՚ի փառս: Այն այս սպատահի և ամենեցուն նոցա՝ որք երկնչին ՚ի նոնէ, և յուսան ՚ի նա: Այս մեկնութիւն (յոր միտս երեկի լինել և վարդանայ,) սպատահական թուի և վայելու. բայց առաջինն երեկի հաստատագոյն և կարգի բանին համաձայն: Աքդ զայսոսիկ եղեալ մարդարենն զայլ ևս զործս ածային քաղցրութէ առնէ ՚ի յաջորդ

ի՞ր . **Ը** Տը յաշացեր զնոսա 'ի ծածիցն Երեսաց առ ՚ի խոս-
վութիւն մարտիւն :

ի՞ր . **(Օ)** Եծիցեր զնոսա 'ի խորանի քամ' ՚ի համապատասխան
լինել չըստաց :

Ի Այս բանք փոխարերութիւնին . ըստ որոց տիրապէս առեւալ բառքդ ծածիցն Երեսաց և խորանի ու խմացեալ լինին աստ նիւթական ծածկոյթ խորանի , և նոյն բնիքն խորանն ան ' (զորմէ խօսեցաւ 'ի սաղ . ի՞ր . 6 . և 8 . տես անող .) այլ խմանալին և հօգեորականն : Այս ըստ այսմ 'ի կողմանէ մերմէ մոտածեալ ' ծածկութիւն երեսացն այ նշանակի սպաշտանութիւն նորա որով զրե-
թէ ծածկէ զմեզ և պահէ 'ի չարէ . և խորանաւ խմա-
ցեալ լինի ներկայութիւնն այ , յորում իբր 'ի խորանի մնամք յապահովի : Խակ 'ի կողմանէ այ մոտածեալ , ծածկութիւն երեսաց նորա խմացեալ լինի անմատչե-
լիութիւն նորա , կամ անտեսանելիութիւնն նորին , և խո-
րանաւն խմացեալ լինի ժառանգելիութիւնն նորին , կամ
այն ինչ , յորում տեսանի և ժառանգեալ լինի : Իստ
այսոցիկ փոխարերութեցաւ խօսելով առեւ :

Ը Տը յաշացեր զնոսա 'ի ծածիցն Երեսաց առ ՚ի խոսվութիւն
մարտիւն : (Օ) Եծիցեր զնոսա 'ի խորանի քամ' ՚ի համապա-
տասխան լինել չըստաց : Այթէ փոխարերութիւն այսոցիկ բանից
մոտածեայի 'ի կողմանէ արդարոց , առաջի զնի սց-
ալէս . 'ի վտանգիլ արդարոց՝ ամրացուցեր զնոսա 'ի
սպաշտանութե քում իբրև 'ի ծածկոյթ երեսաց քոց ,
և 'ի վտանգնիլ նոցա ծածկեցեր 'ի ներկայութե քում
իբրև 'ի խորանի . որով կամի ցուցանել , թէ ան և
սպաշտան և միսիթարութիւն արդարոց , ևս և հաստա-
տութիւն և ապահովութիւն նոցա 'ի խռովուէ մարդկան
և 'ի հակառակութենէ լեզուաց . զորոց սասացուք 'ի
ստորեւ :

Խակ եթէ այս փոխարերութիւն մոտածեայի 'ի կողմանէ
այ , հայի յարարս առաջնոց թագաւորաց . որոց սովո-
րութիւն էր որպէս և այժմ յարեւելս՝ վանդակ ունել
երբեմն կամ վարագոյր առաջի երեսաց , և այնպէս
խօսիլ ընդ այլս , մանաւանող ընդ օտարականս . և

այն տեղի ուր այսպէս խօսէր թագաւորն, Եր իբր խորան թագաւորի, և վարագոյնն իբր ծածկոյթ երեսաց նորա: Իւ եթէ ումեք յօտարականաց թոյլ տուեալ լինէր՝ 'ի ներքս անդ մտանելով ընդ ծածկոյթ խորանին՝ խօսիլ ընդ թագաւորի՛ մեծ իմն Եր այն: Վրդ յորչափ կեամբ 'ի մարմինի աստ՝ զերկուս արգելս ունիմք, որովք ծածկեալ կայ 'ի մէնջ երեսն այ, և խորան նորա: Վռածին և բնական արգելն է ապակա նացու մարմին մեր, որ խափան լինի մտանել ընդ ծածկոյթիւ դէմ յանդիման տեսութեն այ և ժառանգուե նորա: Կամ որ նոյն է, խափան լինի մտայիլ յանմատ շելի տեսութին այ և ժառանգել զնա: յոր միտս աստ, առափեալն. (ը. կոր. է. 6.) * որչափ յամեմք 'ի մարմինի աստ, օտարանամք 'ի անել. || . յը մնալով մեր 'ի մարմինի աստ իբր օտար գտանիմք և հեռի յայ. զի ու տեսանեմք զերեսս այ դէմ յանդիման և ոչ ժառան գեմք զնա, որովէետե անմատուշիլիութիւ խրով ծածկեալ կայ 'ի մէնջ: Վ.յս արգել բանի մահուամբ. յորում եթէ զայի հոգին արժանի, մոցէ ընդ ծածկոյթ երեսաց երկնառոր թագաւորի 'ի խորան նորա, այսինքն է մատիցէ յանմատուշին, և տեսցէ դէմ յանդիման զերեսս նորա. ըստ այնմ. * զթագաւորն ա, փառաց տեսցէն աչք նորա || . (եսայ. լի. 17: տես 'ի սարգիս նորհալի. երես 682 · 2. - 683 · 2.) Իսկ եթէ զայի թշնամի, վարեսցի 'ի խոռարն արտաքին և

* մի տեսցէ զիտառն անն || . եսայ. իլ. 10.)

Երկրորդ արգել է մթութիւն մտաց պատճառեալ 'ի փորձութեանց, և 'ի վարանմանց, 'ի ձանձրութեանց, և 'ի բրմանց, 'ի խոռութեանց, և 'ի հակառակութեանց, և այն: Վ.յս արգել խափան լինի հոգեռորական տեսութեանն այ խմանալապէս յաստի կեանս: Վ.յլ եթէ մարդ յած եղեալ զյօյս իւր՝ 'ի նա ապաւմնեսցի, և 'ի կողմաննէ իւրմէ մտաւորական ազօթից պարապիցի, կամ հոգեռորական խոկմանց ըդհետ լիցի՛ բանի և սոյն այս արգել յայնմ ժամու. իբր զի յայնժամ մարդու խմանալապէս մատի հոգւով 'ի ծածկոյթ երեսացն այ. այսինքն թէ մատի խմանալապէս յանմատուշին ած. և մտանէ 'ի խորան նորա. այսինքն թէ տեսանէ զնա հոգեռորապէս, 'ի հա-

նաշեն՝ թէ զիսկը քաղցր է նա, քանի գեղեցիկ, մըբան մեծ, և ուստի և ամրանայ՝ ի խոռվութենէ մարդկան և ծածկի ՚ի հակառակութէ լը զօւաց : Հայելով՝ ՚ի ծածկոյթ երեսացն զնէ մարդարեն՝ աճ բաշտացն ՚ի խակ հայելով՝ ՚ի մուտ խորանին՝ զնէ ծածկեցն : Օ ՚ի ամրացուցանեն՝ տիրապես առեալ՝ նշանակէ հաստատուն կացուցանել զիսախառեան կամ զորկարացեան . նշանակէ ևս յամուր տեղի ուրեք զետեղել զոր : Իսկ ծածկեն՝ նշանակէ զաղել ընդ իւիք և անցատ առնել . և զի այսու յասպահովի մնայ զաղեան, ըստ այսմ մոտաց զնէ աստ զծածկեն : Իւ ըստ այսոցիկ նշանակութէց կամի առել . հաստատուն կացուցանես զերկիւղածս քո տեսութէ երեսաց քոց, և յասպահովի պահես զնոսա ժառանգութէ քոլ :

Իսկ բառքդ կուսական մարդկան և համապատասխան կրկնակի կարեն առեալ լինել աստ, ներգործաբար և կրաւորաբար . եթէ առցին ներգործաբար, այս բանը ցուցանեն, թէ ՚ի խոռվեցուցանել մարդկան զործովք իւրեանց զերկիւղածս տն, և ՚ի հակառակի ընզգեմ նոցա լեզուօք իւրեանց՝ պահէ զնոսա տն ամրացուցանելով զնոսա ՚ի ծածկոյթ երեսաց իւրոց, և ծածկելով զնոսա ՚ի խորանի իւրում : Իսկ եթէ առցին կրաւորաբար, այս բանը ցուցանեն՝ թէ երկիւղածք տն ոչ կրեն յինքեանս զայն խոռվութիւն սրտի և զայն հակառակութի լեզուի՝ զոր կրեն ամրա-

րիւսք, այլ ազատ են յայսպիսեաց :

Վարդապէս, այսու ծածկութիւ նշանակի կրօնաւորութէ վիճակ և կանոն . իսկ խորանաւ՝ նոյն իսկ կրօնաւորական կեանք, յորում բարի կրօնաւորք որք յնամ սրտէ հեռացեալ են յաշնարհէ, իբր ՚ի ծածկոյթ ներկայութէն այ ամրացեալ մնան, և իբր ՚ի խորանի նորա անդորրացեալ ասպահովանան :

Վ յլաբանօրէն՝ հնար է ՚ի ձեռն ծածկութի իմանալ զմարմինն, զոր էառ բանն ած, և ծածկեաց նովաւ զնոծութի իւր . ըստ այնմ. (շար . ձք .) * որ զբնութի ածային՝ կերպիւ ծածկեաց ծառայական ||, այսինքն ծառայական կերպին ծածկեաց զածային բնութիւն . զոր պօջս նաև վարագուրի նմանեցուցանէ . (երբ . ժ . 20 .) Իսկ խորանաւ մարթ է, իմանալ զեկուղեցի

որ . ըստ այնմ . (շար . ձեզ .) * խորան օրբութեանդ .
,, նեցաւ սուրբ եկեղեցի : Վարդ օրդին այ մարգանա-
լովն ամբացոյց զազց մարգկան 'ի խռովութե 'ի ծած-
կոյթ երեսաց իւրոց , այսինքն 'ի մարմին , որ է ա-
սէլ ամբացոյց 'ի ձեռն մարմնոյց իւրոյ , և ծածկեաց
'ի խորանի իւրում , այսինքն յեկեղեցւոջ 'ի հակա-
ռակութե պէսպէս մոլորուեց . զօրս խռուցան և խռուն
լէզուք չերեւտիկոսաց : Օ այսամիկ եղեալ մարգա-
րեին՝ մատչի յօրհնութեն , և ասէ :

ի՞նք . () բնակութ է առ . զի առանձիւն արար զուգը մասնակիւն
ի՞ր է առաջաւ ամուսը :

Վայս ոչ օրհնելոյ զանձ և ասելոյ . օրհնեալ առ . կամ
օրհնեալ է առ , յաձախ է 'ի ոք զիբս . և է հասարակ
բան գոհանալոյ զայ՝ հանդերձ զովութեք՝ իւր զի ոչ է
ասակ գոհանալ , այլ և զովել , և զովելով գոհանալ :
Վառվելն հայի յայն՝ զի բարի է անձ . իսկ գոհանալն
հայի յայն՝ զի բարի առնէ անձ . և երկոքին այսոքիկ
բովանդակին յայս բան՝ յասելն :

() բնակութ է առ : Ոչ ասէ . օրհնեալ եղիցի տեր .
այլ պարզապէս . օրհնեալ է առ . կամ ըստ երբայակու-
նին և ըստ այլոց բազում թարգմանութեց . օրհնեալ առ .
առ . 'ի ցուցանել թէ յամ յաւիտենից օրհնեալ է
յինքեան անձ , և 'ի յաւիտեանս օրհնեալ յարապածս
իւր՝ (զայսմանէ տես և 'ի սազ . ԱԺԸ . 12 .) Օ արտ ե-
ղեալ մարգարեին մատչի 'ի խռառավանութիւնն մն ծի ո-
ղովունթեց զօր եցոյց նմա անձ . սմին իրի ասէ :

Օ չ առանձիւն առար զուգը մասնակիւն ի՞ր է առաջաւ ամուս-
նին բանի բառդ զուգը մասնակիւն է յատուկ իննդիր սեռի
արար բային . իսկ բառդ առանձիւն՝ է իննդիր բնութեան
նոյն արար բային , օրպէս թէ եղեալ եր , արար զո-
ղովունթիւնն իւր սքանչելի : Ու արթ է ևս ասել , թէ
յայս բան զօրութեք կրկնի բայդ արար , և յարի մեկո-
ղական շաղկապիւ այսպէս . զաքանչելիս արար տեր .
այսինքն թէ զողովութիւն արար . կամ թէ զաքանչելիս
արար ինձ տեր այսու , զի եցոյց զողովութիւն իւր 'ի քա-
զար ամուր : Ի այց առաջինն է հաւանական և ու-
ղիղ , և համաձայն բնազրին երբայեցոց և այլոց
բազում թարգմանութեանց , յորս դնի * սքանչ-

ցոյց զաղըրմութիւն իւր || , կամ * սքանչելի ա-
յ, բար զողըրմութիւն իւր || : Այժմովէս դնի և 'ի քանի մի
ձեռագիր սաղմաս մեր, թէ ովկտ և 'ի սակաւս . 'ի
տաղ . լամբ" . ևս թէ ովկտ սքանչելիս դնի, բայց 'ի
մեկնութեն զրի * սքանչելի արար զաղըրմութիւն իւր || .
Եւ 'ի մեկնութեն վարդանայ դնի * սքանչելեօք պա-
հին օրինական եցոյց մարդարեին զաղըրմութիւն իւր :
Եւ զայս ողըրմութիւն առէ արար տէր 'ի տաղադ անոր :
Օսոյն զայս ոմանք խմանան 'ի վերայ երուսաղեմի .
ըստ որում սքանչելի երեւեցոյց անգ անձ զբազմազի-
մի զթութիւն իւր, Խակ այլը խմանան 'ի վերայ այնր քա-
զաքի, յոր ասպեցաւ դաւիթ յերեսաց սաւուղայ,
մանաւանդ 'ի վերայ քաղաքին՝ որ կոչիւր սիկելակ .
զորմէ զիտելի է, զի զրի թէ դաւիթ յետ բազումն
տառապելոյ 'ի հարածանացն սաւուղայ, հուսկ յետոյ
խորհեալ 'ի սրտի իւրում՝ թէ զուցէ անկանիցի յա-
ւոր միում 'ի ձեռս սաւուղայ՝ դնաց 'ի զէթ առ ան-
քուս արքայ . և * ետ նմա անքուս զսիկելակ . վասն
այնորիկ եղեւ սիկելակ (սեփականեալ) արքայի հրէ
աստամի || . (ա . թագ . իջ . 4 - 6 :) 'ի զնալ յետոյ
անքուսայ 'ի պատերազմ՝ ևառ ընդ իւր և զդաւիթ և
զարս նորա . Եւ 'ի մեկնիլ դաւութի 'ի սիկելակ քաղա-
քէ՝ համբն անդր ամաղեկացիք, և սապատակեցին .
գերեցին զիանայս և զնամ ինչ որ 'ի նմա, և այրեալ
քաղաքն մեկնեցան անտի : Եւ եղեւ 'ի խնամոցն այ-
զի նախարարք անքուսայ արքայի ոչ համեալ ընդ զալ
զաւթի ընդ իւրեանս 'ի պատերազմ՝ դարձոցին զնա
յետոս . (ա . թագ . իջ . 4 - 11 :) Եկեալ դաւութի և
արանց նորա 'ի քաղաքն սիկելակ, և տեսեալ զնա
այնպէս այրեալ և ապականեալ՝ ամբարձին զձայնա
իւրեանց, և լացին յոյժ, մինչեւ ոչ ևս մնաց 'ի նոսա
զօրութիւն ըսրոյ :

Եշարց դաւիթ ցտէր, և հրաման առեալ 'ի նմանէ
բանիւ արիաթարայ քահանայի, պնդեցաւ զշետ ա-
մաղեկացւոց, և եշար զնասա, և ազատեաց զնամ զե-
րիս, և էառ զնամ առարն . և դարձաւ խաղաղութիւն 'ի
քաղաք անդր, և ընակեցաւ 'ի նմա զամն իրը չորս .
(ա . թագ . շ . 4 - 31 :) Քայս թերես հայի ասելն .

արար ինձ տեղ զողովան թի իւր 'ի քաղաք ամուր . այս-
ինքն է ապրեցոյց զիս 'ի քաղաքն սիկելակ . և 'ի քա-
ղաքի անդ սրանց ելիս երեւցոյց ընդ իս 'ի վանել ի-
մում զամաղեկացիս : Եւ թէպէտ 'ի թարգ" . մերսմ
անորոշ դնի առանց զբելոյ ինձ կամ առ իս , բայց
լայս դնի բառիւս բնչ , կամ տառիւս" :

Հաւանական ևս թուի առել, թէ զարիթ նմանաքանութիւն իրափ խօսի աստ . որպէս թէ եղեալ էր . արար առ իս տէր զողորսն թի 'ի նեղուե իմում, պահելով զիս և պաշտպանելով 'ի հովանառութեն իրում իրեն յամուր քաղաքի : Այսպէս գնի և 'ի թարգմանուե սիւմագոսի, և 'ի մեկնութիւն նախնեաց ոմանց, որոց կարէ նախատել և թարգմանութիւն եթէ ովախցեց . զի գնի առ նոսա այսպէս . * օրհնեալ տէր, որ եցոյց ինձ զորումն թի իր 'ի բազմութեն նեղուե թէս իմոյ :

Եւ ըստ այսի բառդ ժաղաց՝ փոխարեցութիւն զնի աստ ,
և նմանութիւն . և զօր ՚ի համարն Յ . առն ասաց կամ
տուն ապահնի , զնոյն քաղաք ամուր կոչէ աստ ,
որով իմացեալ լինի պաշտպանութիւն ոց ՚ի ներկայութէ
իւրում , յոր իբր ՚ի քաղաք ամուր պատսպարեաց առ
դրանիթ :

Վարանօքեն՝ այսու քաղաքաւ նշանակի եկեղեցի
սուրբ . և վերածարար՝ արքայութե երկնից . յորս պահ-
ելի ցուցանէ ած զողորմութիւն խը ըստ Խրաքանձիւր
վիճակի , 'ի պատուարել նորա զիւրան , և 'ի յայտ
առնել թէ չէ թողեալ զնոսա , որով ուրախ եւս առ-
նէ զնոսա : Օ այսուիկ այլով իմն բանիւ և այլով իմն
կարգաւ առաջի զնէ մարգարեն՝ 'ի յաջորդ երկուս
համարս , ասելով :

۱۰۷- مکالمه هایی که در آنها از این دو کلمه استفاده شده است، ممکن است از این دو کلمه باشند.

ମେ. ୧୧ ପରିବାରକୁ ଜୀବନକୁ ପରିବାରକୁ ଜୀବନକୁ

¶ ማጠቃዬቻ ተመርሱ የሚመለከት በዚህ ነው፡፡ ይመለስ አንቀጽ
ማጠቃዬቻው እና የሚቀርቡት በዚህ ነው፡፡ ይመለስ አንቀጽ
የሚመለከት ተመርሱ የሚመለከት በዚህ ነው፡፡ ይመለስ አንቀጽ
የሚመለከት ተመርሱ የሚመለከት በዚህ ነው፡፡ ይመለስ አንቀጽ

յոր և օծեալ էր՝ ի մասնաւոր հարմաննեն այլ , տեսանելը՝ զի փոխանակ թագաւորելոյ կայ ՚ի վասնդի ըդ-կեանս իւր կորուսաննելոյ : Արկղորդ՝ զի գրեթե ըդ-կայր նմա այլ ևս յոյս հանգիստ գտանելոյ . մայր և յոյս ՚ի քաղաք իւր գտանալոյ . ևս և մայր յոյս ՚ի տաճար տն մասնելոյ , որոյ անձկանօքն մաշեր . և չեր մնացեալ նմա մասն ինչ միբիթ արութեան : Արրորդ՝ որ մեծն է՝ զի ոչ տեսանելը ՚ի վերայ իւր զայն յատուկ իւր նամա այլ , և զայցելութիւն նորա , զոր տեսեալ էր յառաջն . զի փորձ իրայն այլապէս երեւեցուցանելը նմա : Չորրորդ՝ որ առաւել ևս մեծ էր , զի ՚ի կարգալ իւրում առ տէր ազատել զինքն յայնպիսի տառապանաց իւրոց , առ ժամանյն ոչ լուաւ նմա տէր , այլ յապաղ-մամբ :

Հյայսմ ամէ պաշարեալ ՚ի միտս իւր՝ զարմանայր , զինչ արդեօք իցէ այս , և զինչ լինիցի . և տարակուսեալ տագնապէր , մի արդեօք հասցէ և ինքեան վիճակն սաւուղայ . իբր թէ որպէս նա յառաջագոյն ընտրեցաւ յայլ և զովեցի ցուցաւ , և յետոյ մերժեցաւ ՚ի նմանէ և խոտան գտաւ , այսպէս և ինքեան պատահեցի : Հյայսպիսի վարանս ըմբռնեալ ասէ :

Արագոյն ՚ի ըստ մասնաւոր թէ ըստ յարեն յերեսոց ալոց որ : Մատանօր զարմանայն զնի փոխանակ ասպ շելոյ և մոօք տագնապէլոյ . որպէս թէ ասէր . ՚ի պաշարիլ իմում ՚ի վտանգ անզերծանելի , ուր ոչ զտի զայցելութիւն տն՝ զարմացայ , ապշեցայ և տագնապէցայ . և սկսայ հարցանել ընդ միտս իմ , զինչ արդեօք իցէ զիսուածս . ոչ աւատիկ առաջի կայ ինձ կորուստ անդառնայի . և ՚ի խորհիլն իմ զայս՝ իբրեւ թէ պատահաննելով ՚ի միտս իմ , ասացի առ անձ , որովհետեւ յայսպիսի վիճակ հասի ես * ուրեմն ընկեցայ յերեսաց ասց ասաց քոյ :

Ուր բառդ երես՝ զնի փոխանակ հայրագութ պաշտպանուեն այլ , և բառդ ոչ՝ փոխանակ տեսուուն նորա . որպէս թէ ասէր , ուրեմն ընկեցայ և մերժեցայ ՚ի գորովազութ պաշտպանութէ տեսուութէ քոյ . և ոչ ես ունիմ հասանել յիմ յայն խոստացեալ թագաւորութիւն , և այլ չմնայ ինձ յոյս մասնելոյ ՚ի տաճար տուրք քոյ , և տեսանելոյ զվայցելութիւն խորանի քոյ : Իսյոյ

այսու ամիր քաջալերս տայ անձին . զիտէլով թէ
ոչ է խսպառ ընկեցեալ զնա ած յերեսաց իւրոց . զի
թէ արէտ և առ ժամանակ մի եթող զնա այնպէս , և
անագանեցոյց զլուել իւր , և յամեաց ցուցանել նմա
զայցելութիւն իւր , բայց 'ի վերջոյ լուաւ նմա , և եցոյց
նմա զինամ իւր : Եւ զայս յարտ առնե , յաջորդ բա-
նիւն առելով :

Ա սա այսրի լուսը յայնի աշոնդից հնաց՝ յաղանիւն հնաց
առ նեղ : Վատանօր բառդ կամ այսրի ցուցանե զշէ-
տեռթի յետապայ բանին՝ զօր առե . յաղանիւն հնաց .
որպէս թէ եղեալ էր . վասն այսորիկ լուար աղօթից
իմոց , վասն զի աղաղակեցի առ քեզ :

Վարե ցուցանել և զշէտեռթիւն այնըր , զօր եղ 'ի վե-
րոց . այն է . * ևս ասացի 'ի զարմանալ իմում , թէ ըն-
կեցայ ուրեմն յերեսաց աչաց բոց || . որպէս թէ ե-
ղեալ էր . 'ի խորհիւլ իմում զայսպիսիս , տառապէր
սիրտ իմ , և աղաղակել ը առ քեզ . և դու վասն այնորիկ՝
այսինքն վասն տեսանելց զիս յայսպիսի տառապանս , և
վո՞հաճէլց ընդ դիմելս իմ առ քեզ՝ լուար ձայնի աղօ-
թից իմոց : Վարթ է ևս ասել . թէ բառդ կամ այս-
րի՝ ցուցանե զշէտեռթի բովանդակ ասացելոց իւրոց
'ի սազմափ աստ . որպէս թէ եղեալ էր . վասն այսօր
ամիր զօր ասացի յաղաղակելս իմ առ քեզ աղօթիւք ,
լուար ձայնի իմում :

Վայս բանը ասին և 'ի զիմաց ապամայ և 'ի զիմաց բո-
լոր մարդկայինս ընութէ , որ անկառ յերեսայն այ , և
յաղաղակել առ ած եղիս զալզլմութի : Ոյն այս ասի
և 'ի բերանոց իւրաքանչիւր արդարոց . ըստ որոյ զըէ
լամբ' . այսպէս . * հոգի որ վայելէ 'ի հայրական իր-
նամնն այ , և յետ այնըր իւրի զթէ , յամօթցն մա-
սանայ զբաղցրութին , և խոռվեալ երկիւղիւն տագ-
նապի . . . ուստի սկսանի զայս սսել . ևս կարծեցի
'ի զարմանան ընդ իմ մեզանչեն՝ թէ արտաքոյ ան-
կայ քո աշացդ . իսկ այժմ ապա թողեալ զմեզն
դարձեալ զտի զքեզ նովին քաղցրութեամբ սուստա-
ցեալ || . Օ այս ամ եղեալ մարդարէին՝ 'ի յորդոր
մատչի առ արդարան . և առե :

իէ . **Ա** իրեշէս շըր ամ ոք նորս . զի շաբաթութեան ինդրէ ուէր . և հապաւուցնէ այնոցի , որ սահել սահեն շամբարտառանուի :

Ո իրել զտել կրկին օրինակաւ լինի . մի՛ ըստ ախորժակի , և մի ևս ըստ յարգի . կամ որպէս ասեն , ըստ սաստ կութեան և ըստ աւրածուէ : **Ո** իրել ըստ ախորժակին է՝ հանաչելով [թէ քանի բարի է անձ համիլ ընդ նա , և կամիլ միանալ ընդ նմա :] ակ ըստ յարգի սիրելն է՝ հանաչելով [թէ անձ միայն է սիրելի՝ համիլ ընդ նա ի վեր քան զամ , և ոչինչ զործել ընդդէմ նորա , [թէ և մեռանիլ հասանից , :] բամինն հայի յախորժակի հոգւոյն . իսկ երկրորդն հայի 'ի գործն :] թէ ոք սիրեսցի ըստ առաջնոյն , և յետնեալ զտանիցի յերկրորդէն , սիրել նորա [թէ և ըստ սաստկութեան մեծ ից , բայց ոչ տարածելով 'ի գործն , այլ մանաւանդ զեղծանելով 'ի նմին ոչ է հմարիտ , և որ այսպէս միայն սիրել զամ , իսպիրի և ոչ ընու զօրէնս սիրոյ . զօրօրինակ որ համեալ իցէ ընդ բարութին այ և ընդ զեղկութին նորա , և կամիցի յարիլ 'ի նա , բայց 'ի կողմանէ իւրմէ յայնպիսի տրամադրութիւն իցէ , զի եթէ պատահեսցի առիթ ինչ , յորում կամ պարտ իցէ մեռանիլ , և կամ անցանել զպատուիրանաւն աստուծոց , նա առաւել յօժարեալ իցէ անցանել զպատուիրանաւն աստուծոց , քան մեռանիլ , այնպիսին հմարտապէս և տիրա պէս ոչ սիրէ զամ , այլ առ երևոյթս :

Ի սկ եթէ ոք չմնիցի զայնպիսի ախորժ մեծ ընդ բարութիւնն այ , բայց յայնպիսի տրամադրութիւն իցէ , զի 'ի զիպիլ իրիք առ [թի՝ յորում կամ հարկ իցէ նմա մեռանիլ , և կամ զօրէնս այ արհամարհէլ , նա առաւել սրատրաստ իցէ մեռանիլ՝ քան արհամարհէլ , այնպիսին հմարտապէս և տիրապէս սիրել զամ և ընու զօրէնս սիրոյ :] յայնպիսի եթէ ունիցի և զբորբոր յախորժակն , այն բորբոր ոչ առնէ զուրին , այլ կատարելագործէ զնոյն : Յայնպիսի սէր յորդորէ մարդարէն զնոյն զնոյն այ յասելն :

Ա իրեշէս շըր ամ ոք նորս : **Ա** ասելով իմանայ զայնպիսի , որք ոչ [թէ առաջի մարդկան որք երկին , և արտաքուստ որք ասին , այլ որք են այնպիսի , այսինքն

թե, են որք առաջի այ : Ուստի ոչ առէ սոսկապէս աճ
ոք + . այլ աճ ոք + նորա, այսինքն ոք + այ : Դառք առէ,
որք որք այ : սիրեցիք զնա : | և թէպէտ որ որքն է,
սիրէ զած առանց ուրուք յորդորելոյ , բայց քանզի
բազմապատիկ վասնգը կան , որք կարեն տկարացու-
ցանել զնոսա 'ի սիրոյ անտի , յայնոսիկ վասնգս հայե-
լով յորդորէ զնոսա՝ շիարիկ 'ի նոցունց , և այնու-
անկանիլ 'ի սիրոյն այ . այլ հաւատարիմ մնալ 'ի նը-
մին , և այնպէս պաշտել զած , որպէս նա կամի պաշ-
տիլ . և այսպիսիքս տիրապէս կոչին ածապաշտք + ուս-
տի առէ վանական վարդսպետ ('ի մեկն . յոր . գլ . ամ .)
* որ պաշտէն՝ որպէս ինքն կամի պաշտիլ ած , նա է,
ածապաշտ , զի արդար է առ և զարդարութիւն սիրէ || .
(այսինքն զարդար պաշտօն և զարդ սէր :)

Վ.յս յորդոր սիրելոյ զած՝ հայի նախ յանրաւութիւն
արժանաւորութեանն այ . իբր զի պարտաւորիմք սի-
րել զած՝ ոչ զի բարերար է առ մեզ , այլ զի բատ ին-
քեան արժանաւոր է սիրելոյ , զի է յանաահմանս բա-
րի . և թէպէտ նաև վասն բարերարութեց նորա պար-
տաւորիմք սիրել զնա , բայց թէկ և չէր մեզ ցուցեալ
զբարերարութիւնս ինչ՝ պարտաւոր գտանէաք սիրել
զնա . ըստ որոյ և պատուիրանն սիրոյ ոչ է ըստ ինրեան
պարտաւորիչ 'ի սիրել , այլ յայնիւ պարտաւորութե-
սիրելոյ . զի թէ և չէր եղեալ ինչ՝ պատուիրան 'ի սի-
րել զած , կայը և կայ միշտ պարտաւորութիւն սիրելոյ
զնա 'ի վեր քան զամ :

Հայի երկրորդ 'ի բարերարութիւն այ և յօգուտ մեր .
յոր միտս առէ սարդիս չնորհալի ('ի մեկն . դ . յովշ .
համար 8 .) * ոչ որ սիրեն զած՝ չնորհս ինչ առնիցեն
,, նմա կամ յաւելուած փառաց , այլ զի ինքեանը ըր-
,, նորհս առնուցուն 'ի նմանէ , և փառաւորեսցին || :

Վ.յս յորդո՞ կարգի և 'ի պարտաւորութիւն սիրոյ ըն-
կերին . զի օրէնքն սիրելոյ զած՝ սիրէ և զընկեր իւր .
զօրմէ երկար զըրէ յովշաննէս աւետարանիչ 'ի թուզի-
սըն իւր . թաղ զայլս . Վ.յսմ գեղեցիկ իմն օրինակ
տայ սարդիս չնորհալի ('ի մեկն . ամ . յովշ . դ . 20 .
հառ . է .) ասելով . * զօրօրինակ մի կենդանի մարդ
։ յերեւլոյն և յիմանալոյն երեխ գոլ մարդ . . . նմա-

նապէս և սերն այ՝ որ տիրականն է և խմանալի , 'ի
զգալի սիրոց ընկերն ձանաչի կենդանի . և եթէ
բաժանի 'ի սիրոց եղբօրն . . . կորոյս զիւը ներդոր-
ջ, ծութիւնն , և խոսան գտաւ . . . և որ այսպէս սիրէ
զած , ոչ սիրէ զնա ած , զի այս է սեր տուտ . իսկ ած
ատէ զստութիւն , և սիրէ զստուգութիւն . բատ որում և
զրէ մարգարէն 'ի յաջորդ հատուածդ ՚ի ցոյց ստու-
գութեան սիրոյն այ , յասելն :

Օ վ զստուգութիւնն է ունեցե ուեւ : Վ ստունօր բառու ստուգու-
թիւն , ուղղակի հայի 'ի ստոյդ սեր սրցն այ , որով ցու-
ցանի , թէ ած ոչ խնդրէ զկեղծուաստիր սեր , կամ
սոսկ բառ ախորդակի սեր , կամ զայնպիսի սեր որ ոչ
բերի և յընկերն . այլ խնդրէ զստոյդ սեր , կամ զհա-
ւատարիմ սեր : Ուրեմն ասէ ովլ սրբ այ , զորս յոր-
դորեցի սիրել զած , ստուգութեամբ և հաւատարմու-
թիւ սիրեցէք զնա . վասն զի ած ընդ այնոսիկ միայն
համ' որը հաւատարիմ են 'ի սեր իւր , զի զայնպիսի
սեր խնդրէ ած : Վ յամ մեկնութիւն համաձայնի թարգ-
մանութիւնն քաղդէացւոց և ասորւոց :

Կարէ վերաբերիլ այս ստուգութիւն և 'ի խոստումն
այ , յոր միտս կամի ասել , որովհետեւ ած սիրէ և
խնդրէ զստուգութիւն , ոչ կարէ ստել խոստման իւ-
րում . որ է ասել . զոր ինչ խոստանայ սիրողաց իւ-
րոց , ստուգիւ հատուցանելոց է նոցա . որպէս և ընդ
հակառակն՝ աներկրայ հատուցանելոց է զպատիժու ,
զոր սպառնացեալէ տալ ամնգարշտաց՝ մանաւանդ ամ-
բարտաւանից . զորոց խօսի 'ի հետեւալ հատուածն
ասելով :

Ղ ա հաստացանէ այնոցէ , որ սաւակ սանէն զամբը ըրտու-
անելին : Վ մբարտաւանութիւնն է պատիր հպարտու-
թիւն . այսինքն այնպիսի մոլութիւն , որով ոք առաւել
հաւատարով վկայութեան այլոց՝ այսինքն զովութեան
զոր տան այլք՝ քան վկայութեան ներքին իւրօց ձանաւ-
ման՝ գերազանց կարծէ զինքն քան զայլ . և կամի զի
և այլք գերազանց ծանիցեն , և գերազանց լինել
հռակեսցեն , թէ և զիտիցէ՝ թէ ոչ է այնպիսի :

Վ սացի * պատիր հպարտութիւն . զի յատուկ հպար-
տութիւնն տայ մարգոյ առաւել հաւատալ վկայութե-
իւրօց խանգարեալ ձանաւման՝ որով գերազանց հա-

մարի զինքն , քան վկայութեան այլոց . ուստի թէ, և
այլք ոչ վկայեսցեն զգերազանցութէ նորա՝ նա գերա-
զանց համարելով զինքն քան զնոսա՝ արհամարհէ զին-
ոնն . իսկ ամբարտաւանութին եղեալ ունի զինքն առա-
ւել՚ի վկայութիւն ասողին քան՝ ի վկայութի ունողին :

Վայ մոլութիւն ըստ ներգործութե մտաց կոչի յատ-
կապէս ամբարտաւանութիւն . իսկ ըստ ներգործութէ
կամաց կոչի ամբարհաւանութի . մինչև կամիլ երբեմն
այնպիսումն զի նաև ան գերազանց ցուցցէ զինքն առ
այլը և իբրև թէ անցացեալ ուն երեւացի , որոյ վասն
երբեմն զշէտ լինի գուշակութեանց և դիւթուեց են .
գիտելով ևս թէ այս է ընդգէմ այ . որով և լինի նմա-
ատելի քան զամ . զի եթէ մարդիկ իսկ՝ հանաչելն
թէ այս ոք կամի գերազանց կարծիլ՝ ատեն զնա , քա-
նի ևս ան , որ հանաչէ զամ . վայ որոյ և նա ինքն ան-
հանդերձեալ է արդարութի հատուցանել նոցա հա-

տուցումն ըստ ամբարտաւանութեան նոցին :

Իւ թէպէտ ան ամբարտաց հատուցանէ ըստ գոր-
ծոց նոցին , բայց առաւել ևս ամբարտաւանից և հպար-
տից . առ որս ունի թափել զամ բարկութիւն իւր . և
դատաստան նորա առաւելապէս ընդգէմ նոցա է լի-
նելոց . որպէս յայտնի ասի՝ ի մարդարէս . * օր ան գո-
յա ըստեց՝ ի վերայ ամբարտից և ամբարտաւանից ,
,, և ՚ի վերայ ամբարտացելոց և վերացելոց || . (տէս
՚ի զիրա եսայեայ . ք . 11 - 17 :) ՚ յաեւ աստստին իսկ
Հանդուրժեալ այ ՚ի վերայ զործոց նոցա՝ բազում
անզամ յեղծումն ապականութեան մատնէ զնոսա . ըստ
որում ասի . * զրուեաց զամբարտաւանս || . (դուկ .
թ . 51 :)

Երդ եթէ այսպէս առնէ տէր ամբարտաւանից , քանի
ևս այնոցիկ՝ որք առաւելուն յամբարտաւանութեան ,
վասն որոյ և իրաւամբք ասէ . * հատուցանէ այնոցիկ՝
որ առաւել առնեն զամբարտաւանութիւն || . այսինքն
այնոցիկ՝ որք մեծապէս ամբարտաւանին , կամ զայն-
պիսի զործ ամբարտաւանութեան զործեն , որ առաւել
է քան զզօրութիւն իւրեանց :

Մարթ է ևս ասել , թէ աստանօր բառդ առաւել՝ զնի
բազդատաթար ըստ երից , յորս կամին առաւելու այս-
պիսիքս . նախ ըստ այնմ՝ զի քան զայլ առ մեզս զորս

զործեն՝ առաւելապէս յամբարտաւանութիւն բերին : Երկրորդ՝ ըստ այնմ՝ զի յամբարտաւանութեան մասին առաւելուն քան զայլ մարդիկ : Երրորդ՝ ըստ այնմ զի 'ի վերայ ամ չարեաց առաւելուն այսու՝ զի ամբարտաւանին ես և 'ի չարիս . և ոչ խոնարհին յասդաշխարութիւն :

Օ այս բան յայն սակս գնեւ ասա մարդարեն՝ զի սովին յորդորեացէ վերկիւղածս այ , և զկաւշացուացէ զնոսա ըստ այլեայլ զվաոց . մի՝ զի տեսանելով նոցա՝ թէ որք ամբարտաւանինն պատուհանին յայ մեծապէս , զզոց լիցին յամբարտաւանութենէ : Երկրորդ՝ զի տեսանելով նոցա՝ թէ վրեժինդիր է ած ամբարտաւանից՝ մի մեծ ինչ համարելով զբարձրանալ նոցա՝ երկիցեն 'ի նոցանէ մնոտի երկիւղեւ : Երրորդ՝ զի տեսանելով նոցա , թէ ամբարտաւանք չունին մնալ 'ի փառու՝ յօրում կարծին լինել՝ մի պատրեալ 'ի մնոտի փառաց նոցա՝ յետո կոյցեն 'ի յարելոյ յած և 'ի սիրելոյ զնա : Չորրորդ՝ զի յանկանիլ նոցա 'ի վիշտս և յաղբատութիւն , 'ի հապածանս և յանարդանս , մի լքցին՝ տեսանելով թէ ինքեանք այսպէս նոււաստանան , իսկ ամբարտաւանք մեծանան . զի ընկճելոյ են նորա յամբարտաւանութեան իւրեանց , և ինքեանք հանդերձեալ են բարձրանալ . վասն որոյ յաւետ պարտէ նոցա քաջալերիլ քան լքանիլ . զորմէ խօսի մարդարեն՝ 'ի յաջորդ համարն :

Ի սարցապէս , աստանոր բառդ առաւել յայտ առնէ զյիմարութիւն ամբարտաւանութե մերոյ , որք փոխանակ առաւել խոնարհելոյ առաւելումք յամբարտաւանութեան : Եթէ բարւոք իսօրհեաք՝ բազում ինչ զըտանէաք 'ի մեզ զիջանելոյ 'ի խորա խոնարհութե քան ելանելոյ յառաւելութիւն ամբարտաւանութեան , Եթէ 'ի զոլ մեր հայեսցոք՝ ամեննեին շունիմք տեղի ամբարտաւաննելոյ . զի յաւետ տեսանեմք զմեզ ոչ զոլ քան թէ ինչ զոլ . զի յայտ է թէ յառաջազոյն ոչ ինչ էաք . իսկ այժմ զի եմք՝ յոնչի զոմք . եթէ արարին ոչ կալցի զմեզ զառնամք յառաջին ոչնչութիւն մեր : Հյայսպիսի ոնչութեան կախեալ զորով ծանրացեալ ես եմք ապականութե և աղտեղութեամբ , ին զարշութեամբ և խառնութե . ես և զգուանս թու

ըեւիք ընդ բերանս և ընդ երանս , մինչեւ ամաշել մեզ .
և եմք իբրև դառնահոտ նաւայատակ (այսինքն սին-
դինա) : Եւ 'ի մեռանին զինչ . հոտիմք և նեխիմք ,
փոփոք և որդնահայր սպառիմք :

Եթէ հայեսցուք 'ի կեալ մեր՝ պատկառիմ ասել [թէ
որովք կեամք , անարդօք քան զմեզ , եթէ 'ի կերա-
կրին և եթէ 'ի զգենուն , կարոտ անբանից և ան-
զգայից . մով և ձարպով անասնոց մնանիմք , ևս և
ժժմամբք և ձկամբք ջուրց , բանջարով խոտոց և բե-
րիք հողոյ : Օ յաւելուածս բուսոց առնումք 'ի ըզ-
գեստ , զբանիակ և զբժան . ընդ որս և զաղիս որ-
դանց (այն է իսիէկ) : ևս և զրուրդոց չորբուռանեաց և
զմորթս վայրենեաց :

Եթէ սոսկ 'ի մարմինս մեր հայեսցուք՝ որբան տկա-
րութեան ներքոյ հեծեմք , և որքան անկատպութիւնս
հերկեմք . որովք անարդ գտանիմք քան զայլ արա-
րածս : Ի՞նի ինչ կան՝ զորոց չունիմք 'ի մարմինի զկա-
տարելութիւնն , ոչ զբայլողութիւն աստեղաց , ոչ զա-
նապականութիւն ուկոյ , ոչ զգեղեցկութիւն ծաղկանց ,
ոչ զարագութիւն թռչնոց , ոչ զվայելութիւն երեց : և
որ 'ի կարգի :

Եթէ 'ի հոգիս մեր հայեսցուք 'ի բաց [թողեալ զան-
մահութիւն նորին՝ գտանեմք զնոյն շաղախեալ յաղու-
զութիւնս մեզաց և 'ի տրումունս ախտից . ևս և 'ի
խոռվայոյզ ցնդմունս զանազան կրից՝ եթէ՝ տրումութէ
և եթէ բարկութե , ևն :

Եթէ բաղդատեսցուք զմեզ գերազունից , քանիք
կան՝ որոց առաջի նուաստ երեխմք՝ մանաւանդ [թէ
իբր անաստն , որպիսի ինչ իցեմք առաջի ինքնակալ
թագաւորաց և վեւմախորհուրդ իմաստնոց , ևն . քա-
նի ևս առաջի հըեշտակաց :

Եթէ հայեսցուք 'ի թշնամիս , քանիք են՝ յորոց նուա-
միմք , 'ի զիւաց և յանօրինաց , 'ի գազանաց և 'ի չըն-
չին ձձեաց , 'ի լուոյ , 'ի ձանձնէ , ևն : Տես արդ թէ
քանի յիսնարութիւն է՝ յայս ամշնշմարելով ոչ միայն
ամբարտաւանիլ , այլ և առաւել առնել զամբարտա-
ւանութիւն :

Եթէ քննեսցուք զգործս մեր՝ խաւարային իմն առ-
սանեմք . յորս եթէ գտանի բարի ինչ այն չէ 'ի մէնջ .

այլ՝ յոց . քանզի գործք մեր նման են ստուերի , որ
խառն է ՚ի լուսոյ և ՚ի խաւարէ . լոյսն է յառաջին
լուսոյ . խկ խաւարն ՚ի մէնջ : Հայս խկ՝ ոչ տեսա-
նելով զպակասութիւնս մեր . որպէս աղտեղի զգեստ ՚ի
մթան ոչ երեխ արատաւոր : Օ ինչ ապա եթէ համե-
մատեսցուք ընդ այնմ առաջին լուսոյ . * աստեղք ոչ
ու են սուրբ առաջի նորա՝ թող թէ մարդ երբ || . (յոր .
ին . 5 :) | մէնջ ոչ կարեմք լինել բարի . ապա թէ
ոչ լինեաք . վասն զի ամ էակ ՚ի բնութենէ բերի լի-
նել բարի . եթէ ՚ի մէնջ չեմք բարի՝ լիցուք ՚ի մէնջ
խոնարհ . որշափ գժուարին է մեզ բարձրանալ՝ ՚ի բա-
րին , այնչափ գիւրին է բերիլ՝ ՚ի խոնարհութիւն . սա-
կայն առանց համարելոյ զմեզ այնպիսի . ապա թէ ոչ
մատչիմք յամբարտաւանութիւն և այնու ՚ի մահ հոգ-
ւոյ : Վսի թէ վեսիտ կենդանին խայտարդետ՝ որ լի-
նի յափրիկէ , յըմօկելն զօւը՝ ոչ հայի ՚ի ջուը՝ զի մի
տեսցէ զինքն , ապա թէ ոչ անդէն նուազի . սոյնպէս
և որ խոնարհն է պարտի զգուշանալ՝ զի մի տեսցէ
զինքն խայտարդետ : Վսիք աշաց եթէ սեաւ իցէ՝ տե-
սանէ . եթէ սպիտակասցի՝ կուրանայ . խոնարհ ձա-
նացումն մարդոյ տայ նմա տեսանել զանարդութիւն ան-
ձին և զկատարելութիւն այլոց , եթէ ամբարտաւանուք
սպիտակասցի՝ կուրանայ : | վերայ այսպիսի աշաց
պարտ է կաւ դնել (յովէ . թ . 6 .) իրբ թէ խորհիլ
զկատն զոլ՝ և զդառնալն ՚ի հող . և այսու փոխանակ
առաւելոյ յամբարտաւանութեան՝ առաւելուլ՝ ՚ի խո-
նարհութեան . և նոովին խոնարհութիւնը առաւելուլ յա-
րիութեան հոգւոյ և քաջալերիլ՝ ՚ի վիշտու . ՚ի սոյն աշա-
խրախուսելով և մարդարէին՝ ասէ :

ԵՌ . ♫ **Պ**ա-ջուրեցարմատ , և զօրասցին սիրու յեր . անե-
տեան , ոյտ յուսուցեալ էտ ՚ի ար :

Քաջալերիլն է արիանալ՝ ՚ի հոգին ակնկալութեամբ
ստանալոյ զբարի ինչ , կամ վանելոյ զվտանգ մեծ ,
կամ զերծանելոյ ՚ի չարէ իմեքէ : Վակ զօրանախն է
ստանալ զզօրութիւն , կամ զնորոզութիւն զօրութեան
կամ յաւետ սրել զզօրութիւնն . (զօրմէ տես ՚ի սաղ .
իդ . 12 :) | սոսին յորդորէ մարդարէն զյուսա-
ցեալսն ՚ի տէր ասելով :

Քաղաքացին է այսպիս չեր , ամենեւնո՞ւ , ոյտ
յառաջաւ էս ՚ի ուեր : Կամի ասել . ամենեւքեան՝ որք միան
գամ զյոյս ձեր եղեալ էք յանձ՝ քաջայերեցարուք և
արխացարուք ՚ի հոգիս ձեր մի ամբարտաւանութեամբ ,
այլ խոնարհութեր առ ՚ի ծառայել այս և սիրել զնա .
Եւ յանկանիլ ձեր ՚ի փորձութիւնս և ՚ի վտանգս , մի
լըցին սիրոք ձեր , այլ զօրասցին առ ՚ի վանել զնու-
սա , և դիմել այնու յառաքինութիւն , և ՚ի կատարումն
օրինաց սիրոյ . վասն զի փոխանակ այնր ամի ընդունե-
լց էք յայ հատուցումն մերձ՝ որ մնաացէ յաւիտեան :



ՍՈՒՐԱՅԻՆ · Լ. Ա.

Յուսաղիր բանք երանութեան զջացեալ մեղաւորի ,
որ խոսավան լինելով զմեզս իւր՝ գտեալ իցէ զթո-
զութիւն : Ոիհանգամայն և յայտարարութիւն խնա-
մոցն , զօրս ցուցանէ անձ առ ապաշխարօզս , պաշտպան
լինելով նոցա , և ուսուցանելով զնոսա . ընդ նմին և
նկարագրութիւն որպիսութեն մեղաւորաց , ևս և ցցցը
նուաճութեան նոցա :

| ՀԱՅՈՒԹԻՒՆ ՚ի ԴԱՎԻԴ :

1 Եւանի , ամ նոզութիւն եղել մշշաց . և ծածիեցան ամե-
նայի յանցանի նորս : 2 Այսուհի առամ որում մը հա-
մարէց ար զնեցն նորս . և մը գոյ նենկութիւնն ՚ի բերան նորս :
3 Աշեցի եւ՝ և մաշշան ամ սինեցն իմ , առ աշաւիւն ինչ ա-
պր զըրհանապաշն ՚ի ուսու և ՚ի գուցրէ : 4 Օանրացոյ յեւն ա-
պր զըրոյ իմ . տարձոյ ՚ի մշշաւութիւն , զի հարոն յի գուցրէ :
5 Օ կը իմ շացոց անը , և շանօքենութիւն իմ մը ծածիեցէ ՚ի
զնն , 6 Պայտի նև պատմեցէ ինչին զնեցն իմ . և դու նորցե-
առամ միբարըսութիւն մշշաց ինց : 7 Ա առ այսորին յոշոն հաց-
ցէն առ անը ամ սիս , ՚ի ծամ շնորհանելու : 8 Ըայց կոյն ՚ի
զնորցն հեղեղաց բաշմաց , ոք առ նու ինչը և մերժեցէ : 9 ՚ի-
նս ապաւն իմ ՚ի նեղութիւն յայսմանէ , ոք շարջ եցին զնին :
10 Ծննդութիւն իմ , քիչեալ զիս յայնանէ՝ ոյս դաշտեցին շիւ :
11 Ամսաբան պարէց շեն՝ և իւլուստր ՚ի մանագործ , յոք

Q, b P' b P, q + p

አዲስ አበባ - ቤት የጊዜ ተ-ተክለ

Ա. ՅԱ Ա. Ե Բ Ն Ե Գ Ի Բ Ի 8 Պ Ե
զրեալ սաղմոսս ինչ մեր դնի յաւելուա-
ծով իմն պատկէս . * Խմաստութեան սաղ-
մոս դաւթի : || Սյնպէս և ՚ի սակաւ ձեռագիրս դնի ,
* Խաղմոս խմաստութեան ՚ի դաւթիթ : | Խակ յայլ ձե-
ռագիրս առ հասարակ դնի ըստ վէրտգրելոյդ . Հաս-
ուունի՞ է բառի՞ . որ առաւել համաձայն երեւի երրայշ
կանին , ուր զրի քառ-է-ի-ուշչիւլ (զորմէ տես ՚ի ներած .
զլ. Շ :) | Ծարգմանութեան եօթ անասնից և լատի-
նացւոց յաւելեալ լինի և բարդ բառ . և զրի * խմա-
ստութիւն յինքն ՚ի դաւթիթ : | կամ ըստ լատինականին .
* խմաստութիւն ինքեան դաւթի : . ոյլ այս ցուցանի .
միայն զշէ զինակութիւն սաղմոսիս . և զանձն յոր ակնար-
կէ այս սաղմոս . իբր թէ դաւթի իցէ ասացեալ զայս .
և բանք սորտա առ դաւթիթ հայիցին :
Մքդ կոչի սա խմաստութիւն . զի բարցյապէս առեսոլ
նախ ուսուցանէ մարդոյ , թէ քանի բարի է գտանել
զթողութիւն , մինչև երանելի ևս լինել . | Քրկորդ
ուսուցանէ՝ թէ զիարդ պարտ է դառնալ ՚ի մեղաց . և
զինչ պարտ է առնել՝ առ ՚ի թողութիւն գտանել . | Քր-
րորդ ուսուցանէ՝ թէ զիարդ վարի ած ընդ այնպիսիս ,
և զիարդ խմաստնացւցանէ զնոտա . | Չորրորդ ուսու-
ցանէ՝ թէ զիարդ ընդհակառակն վարի ընդ այնոսիկ՝
որք ուն կամին դառնալ ՚ի մեղաց . և զինչ առնէ ընդ
նոտա . | Կարճէ ալ խմաստութիւն կոչի այս սաղմոս վո-

կրկին ներհաւական պատճառաց . մի վասն խորութեն ի մասափյն , և մի ևս վասն յայտնի երևելոյ նոյն իմաստից , բայց այս առ այնափիկ՝ որք դարձեալ են սրտիւր առ տեր :

Կան և այլ երկոտասամն սաղմոնք ընդ ամբ երեքտասամն , որոց 'ի վերնագիրս գնի բառդ է մասսանեւն՝ այլ և այլ օրինակաւ . (և են սոքին . խոն . խոկ . ծառ . ծըր . ծդ . և ծդ .) զգոց ունիմք խօսիլ յիւրեանց տեղին : Ոմանք 'ի բարունեացն հրեից ասեն , թէ այսպիսի սաղմոնք , որոց 'ի վերնագիրս գնի բառդ է մասսանեւն՝ 'ի յերգին մեկնեալ լինեն առ ժազովուրդն , և իմաստք սրբունակեալք 'ի նոսա՝ ցուցեալ լինեն . և վասն այսորիկ խմաստութիւն կոչին . այլ զջիարդն այսր՝ ոչ զիստեմք :

Օ այս սաղմոս ոմանք 'ի նոյն բարունեաց կոչեն սիրո զաւթի . ըստ որում այս սաղմոս յայտ առնէ զցաւ սրտի նորա 'ի վերայ մեղաց . յորմէ յայտնի տեսանի՝ թէ զայս սաղմոս սասացեալ իցե դաւթի յետ մեղացն զոր գործեաց , և յետ ազգ առնելոյ նման նաթանայ .

որպէս և զատղման ծ , և զայլ քանի մի ևս :

Դասիթ անյաղթ 'ի յառաջաբանութեան սաղմոսաց , զնէ թէ զայս սաղմոս արար դաւիթ 'ի հիւանդութեան իւրում , կամ զինի . և ըստք անյաղթին են այս . * դա . . . իթ 'ի հիւանդանան սասաց զերեւնեմիւրորդ սաղ . . . ման , թէ հնացան ուկերք իմ 'ի տունթեան և 'ի զիւերի . ծանրացաւ ձեռն քո 'ի վերայ իմ . և դար . . . ձայ 'ի թշուառութիւն 'ի հարկանելոյս 'ի փշոց . և . . . զարձեալ՝ եթէ սուրբք՝ որք առ քեզ միշտ աղօթեն՝ . . . ուխթ փորձութեան առ նոսա մի մերձեսցին . իսկ որք . . . զջիախրոխա բարս պաճարօրէն անմուցան՝ սանձօք . . . հողեսցես զիզակս նոցա . որպէս և 'ի միւսումն ա . . . սէր . եկի ես 'ի խորս , և մըրիկ ընկղմեաց զիս . և . . . թէ՝ պատեցան զինե որպէս ջուր || :

Վ Ա լ առաջին կարծիքն է հաւանականագոյն . ըստ որում բանք սաղմոսիս առաջի առնեն զդժումն մեծի ապաշխարութեան , և զյոյս թողութեն , ևն : Վ Ա վայրիկ ըստ ասելոյ սոմանց սովորութիւն էր հրեից երգել զայս սաղմոս 'ի մեծի տօնի քաւութեն յամեան եօթներորդի 'ի տասն ամսոյն . զի յայնմ առուր ընդհան-

բական թողութիւն էր հրեից . ըստ որում ասի 'ի գիրս զեւս' . (ԺՂ. 29 - 31 .) * յաւուր յայնմիկ լիմսիցի քաւութիւն վասն ձեր առ 'ի սրբելոյ զձեղ յամ մեղաց ձերոց առաջի տեառն , և սրբիջիք || , ևն : Ծատ նմին և այժմ իսկ իրը գործի մաղթանաց ընծայի մեղ այս սաղմոս , մատցիլ 'ի ձեռն սորա առ ան բանիւք ապաշ խարութեան :

Բ. Ա. Ն.

առ . **Ճ** բանի առաջ լուսանի եղել մեղաց , և ծածիւյան ան նայն յանցանի նորա :

թ . **Ճ** բանի առաջ աչ համարդից ար շնչելու նորա . և աչ գոյ նենդունիւն 'ի բերան նորա :

ՄԵԿՆԱՌԻ ԹՏՒԵՆ

Ճ բանութիւնն է ժառանգութիւն բարուց անոնան 'ի չարէ , մանաւանդ 'ի չարէ մեղաց . (զայսմանէ տես 'ի սաղ . առ . 1 . և 2 : և 'ի սաղ ՀժԸ . 1 . և 2 :) Իսկ մեղքն է այնպիսի ծայրագոյն չար , քան զօր չէ հնար լինել կամ ըմբռնիլ . զի է արհամարհութիւն այ կամ անարգանք առ ան . որով այնչափ մեծանայ չարութիւն նորա , մինչև փակել յինքեան բարոյապէս զանհնութի ինչ : Իւ պատճառն է՝ զի անարգանքն մեծանայ կամ ծանրանայ 'ի մեծութէ անարգեցելոյն և 'ի նուաս տութենէ անարգողին . և զի ան . է յանբաւս մեծ . և մարդս յետին իմն անարգ ստեղծուած , անարգանքն որ լինի 'ի մարդոյ առ ան 'ի ձեռն մեղաց , մեծանայ յանչափս , և արութիւն նորա պարագրէ յինքեան զանսահմանութի ինչ բարոյական . որոյ վասն և արժանի գտանի անսահման պատժոյ . և զի մարդս ոչ է բաւական անսահման պատժոյ ըստ իրազութեան՝ տուեալ լինի նմա անսահման պատիժ ըստ տեսղութեան , որ է պատիժն յաւիտենական :

Վ յսպիսի զարհութելի չար ներգոյացեալ 'ի հոգին՝ առնէ զմարդն զիխովին ատելի այ , նողկալի արց , գերի և ստրուկ սատանայի , և ծառայ արբանեկաց նորա .

առնել և զհոգին մեռեալ առ գերբնական կեանս , և հիւանդ՝ ի բարցական կարգի : Եւ քանզի այսպիսի չար է այս հրեշ , մեծ իմն լինի ազատութիւն գտանել ի սմանել , մանաւանդ թէ և երանութիւն . վասն որց և մարգարէն երանի տալով առէ :

Երանէ ամ նողանէն եղեւ եղաց : Վայ եղանակ խօսից է մակագանցութիւնը ըստ ոճոյ ձարտասանից . որ յայտ առնէ նախ զիփձուկ սրտի , միանգամայն և զտենչ հոգւոյ . և ըստ այսմ տակաւին՝ ի վիճակի մեղաց համարելով մարգարէն զանձն իւր , վայ ինձ առէ , զի ևս այսամի աշխատ եղէ՝ ի խորդ և 'ի մախիր . և 'ի ծանրութենէ մեղաց ինոց ոչ թէ թէ աշաց խոպան՝ և 'ի գարցութենէ նոցին գեռ ոչ սրբեցաց՝ յամի մեղք իմ բարձրացան , և յանցանք իմ առաջի առենեցուն հրատակեցան . 'ի զուր ուրեմն վաստակեցայ , ուստի և ունայն գտայ . ապա երանի տամ այնմ , որում ոչ այսպէս զիպան իրբ , այլ չնորհօք քո ձրի թողան մեղք նորա , և ողորմութեամբ քով ծածկեցան յանցանք նորուն :

Հայտ առնէ երկրորդ զմեծութիւն իրին , յորոյ վերայ ասացեալ լինի , այսինքն՝ ի վերայ մեծի բարութեանն 'ի թողութիւն գտանելոյ մեղաց . որպէս թէ ասացեալ էր . ովլ թէ զիարդ երանելի է 'նա' որում թողութիւն մեղաց լինի . կմ թէ քանի մեծ է երանութիւն այնորիկ որ յետ մեղանելոյ՝ ոչ մերժի յայ , այլ 'ի ձեռն չնորհաց նորա յապաշխարութիւն եկեալ գտանել զթողութիւն մեղաց իւրոց :

Օ այս երանութիւն տայ մարգարէն՝ ի սկզբան սաղմոսիս ու ըստ եղերն առ ոք , այլ ըստ եղերն յորէ . այսինքն թէ ոչ խօսի ըստ մեծի այնմ բարւոյ՝ որ լինի ապաշ խարողին ընդունելութեամբ սրբարար չնորհաց , որով լինի մարդն որդեզիր այ , արժանաւոր ժառանգ յաւտենական կենաց , բարեկամ հրեշտակաց և ամենայն սրբ , են . զի յայտ իսկ է՝ թէ երանելի է այս պիսիս : Վայ խօսի ըստ եղերն յորէ , այսինքն ըստ զերծ լինելոյ՝ ի մեծ չարէ անտի , այսինքն՝ ի մեղաց ասեմ . որովհետեւ մեղքն է այնպիսի իմն չար որ ամենատանտ զարցահոտութիւն իւրով զզուելի առնէ զհորին առաջի այ , և առենակեզտ տգեղութեամբ իւրով

այնշափ տաղտկալի երեւցուցանէ զնա , մինչեւ դարձուցանէ այ զերես իւր 'ի նմաննէ : | Հ ոչ ոչ այսպահ միայն , այլև անկշռելի չարութքը իւրով գրգռէ զբարկութիւնն այ ՚ի վերայ մարդոյ , և իւրով ամենազաժան այլանդակութեամբ լլիէ և տագնապէ զհողին առաւելք քան զայն չար : | Ծագա երանելի համարի մարդոն այն յորմէ այսպիսի այլանդակութիւն բառնի , և անյայտ լինի ՚ի հոգւոյ նորա . և զայս կամելով մարդարեին այլով իւրիք բացատրելարէ զինի և ասէ :

| Հ ո ծ ա ծ հ ի շ ա ն ա մ ե ն ա յ ն յ ա ն ա յ ն ն ո ր ա : | Հ յ ս բ ա ն է ի բ ր ի լ ի ն ո ւ մ ն և ո ր պ է ս ա ս ա յ ա բ ՝ ի բ ր բ ա ց ա տ ր ու թ ի ւ ն ն ա խ ւ լ ն թ ա ց բ ա ն ի ն . զ ի ծ ա ծ կ ի լ ն յ ա ն ց ա ն ա ց է թ ո ղ ե ա լ լ ի ն ե լ ն ո ց ա . և ա ն դ ր ա գ ա ր ձ ե ա լ , թ ո ղ ե ա լ լ ի ն ե ն յ ա ն ց ա ն ա ց ՝ է ծ ա ծ կ ի լ ն ո ց ի ն : | Հ ո ւ ս ա կ ա ն ծ ա ծ կ ի լ դ ն ե լ ով կ ա մ ի ց ու ց ա ն ե լ զ շ ն մ ա ր տ ի ւ և զ ա ռ ա ւ ե լ ա պ է ս թ ո ղ ա ն ի լ ն մ ե ղ ա ց , մ ի ն չ ե ռ ո չ ո չ ո ւ ե ր ե ի լ ա յ ն մ ՚ի հ ո գ ւ ո ջ :

| Ա ա ն զ ի զ ա յ ս ծ ա ծ կ ի լ ս ո չ է պ ա ր տ ի մ ա ն ա լ ը ս տ մ ա ր մ ի ն ա կ ա ն ա ց ա . զ ի ՚ի մ ա ր մ ի ն ա կ ա ն ս հ ա յ լ ո վ յ յ ա յ ն ս լ ի ն ի ծ ա ծ կ ի լ ո ղ ք կ ա ն , և կ ա լ ո վ ծ ա ծ կ ի ն , և ՚ի ծ ա ծ կ ի լ ն ՝ ը ն դ ծ ա ծ կ ու թ ի ւ մ ա ն . ա յ լ պ ա ր տ է ի մ ա ն ա լ ն մ ա ն ո ւ թ ք ն ե ր գ ո ր ծ ո ւ թ ե ա ն ն ծ ա ծ կ ե լ ո յ . ի բ ր զ ի ո ր պ է ս ո ր ծ ա ծ կ ի , ո չ և ս ե ր ե ի , ս ո յ ն պ է ս և մ ե ղ ք ն յ ո ր ժ ա մ թ ո ղ ե ա լ լ ի ն ի , ո չ և ս ե ր ե ի . և ո չ թ է մ ն ա յ և ծ ա ծ կ ի . զ ի ա յ ն ո չ է թ ո ղ ա ն ի լ , ա յ լ ՚ի մ ե ղ ս զ գ ա ծ ե ա լ մ ն ա լ :

| Հ ո ւ թ է յ ի բ ա ւ ի ՚ի թ ո ղ ա ն ի լ մ ե ղ ա ց ն ո չ և ս մ ն ա յ թ ա գ ու ց ե ա լ ա յ լ բ ա ռ ն ի , յ ա յ ս է յ ե ր ի ց . մ ի ՚ի կ ո ղ մ ա ն է ա յ . ք ա ն զ ի ա ն հ ա ր ի ն է թ ա բ չ ի լ մ ե ղ ա ց ա ռ ա ջ ի ն ո ր . զ ի ա մ ի ն չ յ ա յ ս ն ի է ն մ ա . ի ս կ ե թ է մ ն ա յ ր ՚ո չ լ ի ն է ր ծ ա ծ կ ե ա լ կ ա մ ի թ ա ք ու ց ե ա լ ՚ի ն մ ա ն է , ա յ լ յ ա յ տ ն ե ա լ ա ռ ա ջ ի ն ո ր ա . և ս ո ւ տ լ ի ն ե ր ա ս ե լ ն ծ ա ծ հ ի շ ա ն : | Հ ր կ ր ո ր դ ՚ի կ ո ղ մ ա ն է մ ի շ ն ո ր դ ի ն ա յ ս ի ն ք ն ՚ի կ ո ղ մ ա ն է չ ն ո ր հ ա ց , ո ր ծ ա ծ կ է զ յ ա ն ց ա ն ս . զ ի ո չ է հ ն ա ր չ ն ո ր հ ա ց գ ա լ ՚ի հ ո գ ի ն , և մ ե ղ ա ց մ ն ա լ ՚ի ն մ ի ն . զ ի վ ա ն ի չ ե ն մ ի մ ե ա ն ց . զ ո ր օ ր ի ն ա կ ա ն հ ա ր է լ ո ւ ս ո յ ծ ա գ ի լ ՚ի մ է ջ ս ե ն ե կ ի , և ի ս ա ւ ա ր ի մ ն ա լ ա ն դ և ծ ա ծ կ ի լ : | Հ ր ո ր դ ՚ի կ ո ղ մ ա ն է ե ն թ ա կ ա յ ի ն ա յ ս ի ն ք ն ՚ի կ ո ղ մ ա ն է հ ո գ ւ ո յ ն . զ ի ե թ է մ ն ա յ ր ՚ի ն մ ա մ ե ղ ք ն , և մ ի ա յ ն

ծածկեալ լինէր, հոգին մնայր մեղաւոր, և ոչ արդարանայր . որով և ոչ լինէր երանութեան արժանի, այլ անիծից և վայից . զիարդ ապա մարզարէն երանի տայր վասն ծածկելոյ մեղայն . ուրեմն համարի՝ թէ այնու ծածկմամբ հոգին ազատացեալ՝ ի մեղաց՝ արդարանայ :

Հայս միտս իմանայ և պօջա առաքեալ զայս բան . զի զայն զայս ՚ի վիայութիւն բերեալ ասէ . * (Որպէս և զաւիթ ասէ բերանութիւն մարդոյ՝ որում ան համարի արդարութիւն առանց գործոց . (այսինքն առանց գործոց հին օրինաց և առանց կանխելոյ բնական գործոց ծովութեանց .) երանի որոց թողան անօրէնութիւն , և որոց ծածկեցան մեղք իւրեանց || . (հռովմ . դ . 6 :)

Վայս նմանութիւն ծածկելոյ մեղաց՝ կարէ երկրորդաբար վերածիլ՚ի գործ զթասիրութեանն այ՝ որ ՚ի թողուն զմեղս զնէ և զսպեղանիս ՚ի վերայ վիրայն . վասն զի յետ թողութեան մեղաց կարէ մնալ ՚ի հոգին երկուինչ . մի՝ պարտաւորութիւն ժամանակաւոր պատժոց , որպէս եղել ՚ի նոյն իսկ ՚ի գաւիթ . և ան յայնժամ ծածկէ զայս , յորժամ զնոյն ևս թողու . Երկրորդ՝ տրամադրութիւն ինչ տկարութեն ՚ի կարողութիւն հոգւոյն . վասն զի ՚ի մեղանչէլ մարդոյ՝ ՚ի գործողութենչ անտի մեղաց մնայ ՚ի նմա տպաւորութիւն ինչ սովորելոյ ՚ի նոյն . մնայ և ՚ի զգայութիւնն բերումն ինչ ՚ի ներգործութիւն այնը մեղաց . և յորժամ թողեալ լինի մեղքն՝ ընդ նմին ոչ բառնի այս տպաւորութիւն և այս բերումն . իսկ եթէ ան սպեղանիս մատուցէ և այսմ հանգոյն ամենաճարտար բժշկի , ասի ծածկել , մինչեւ այնց ևս բառնիլ , և ոչ երեկիլ :

Վարթէ է գարձեալ ասել , թէ այս ծածկիլս երբորդաբար յայտ առնէ; զանտես լինել փոքունց ինչ մեղաց . որպէս թէ ասացեալ էր . երանի մարդոյ , որում թողութիւն լինի ոչ միայն մահացու մեղաց , այլ և ու իցէ ներելի յանցանաց ՚ի ձեռն առաւելութեան զեղման անծանաց :

Պատճառ ասացելոցս է , զի թէպէտ ՚ի գալ չնորհաց թողեալ լինին ու և իցէ մեղք մահացուք . զի անհնարին է չնորհաց և մահացու մեղաց ՚ի միասին կալ ,

որովհետեւ մինն է բան բարեկամութե՛ն , և միւսն բան ծայրազօյն թշնամութեան , բայց կարեն մնալ ներելի մեղք , այսինքն այնպիսի մեղք , որք ուղղակի ոչ ընդդիմանան չնորհացն այ , զի ոչ են ընդդէմ ած-ային և բնական օրինաց , այլ արտաքոյ . մինչեւ կարել կալ չնորհաց ընդ նման 'ի նմին ենթակայի :

Առ որոյ բացայայտութիւն ծանիթ , զի այս ինչ է ընդ մեջ մահացու և ներելի մեղաց . քանզի մահացու մեղքն է յետո կալ յայ իբր ՚ի վերջին վախճանէ , և յարիլ 'ի ստեղծուածս իբր յայն ինչ՝ որ իցէ վերջին վախճան : Խակ ներելի մեղքն է առանց յետո կալոյ ՚ի բարեկամութենէն այ , յարիլ յինչ՝ որ է արտաքոյ այ , ոչ իբր ՚ի վերջին վախճան , այլ իբր յայնպիսի բարի՝ որ ոչ կարգի առ ած իբր առ վերջին վախճան : Ուստի մահացու մեղք ընդդիմանալով բարեկամութեն այ , որ լինի միայն 'ի ձեռն չնորհաց՝ ոչ կարէ կալ ընդ չնորհաց : Խակ ներելին ոչ ներհակելով բարեկամութեանն այ , կարէ կալ ընդ չնորհաց :

Այլ եթէ փոյթ ունիցի մարդ դիմել առ ած առ 'ի ցնջումն և այնպիսեաց , ծածկին և նորին , որպէս լինի 'ի ծառայս այ . որք վրիպեալ բազում անգամ յաւուրն 'ի ներելիս 'փոյթով գտանեն զներումն , զի թէպէտ և բազում են այսպիսիք և բազմութեամբ յառաջ գան յերկրէ աստի անիծելոյ , 'ի բնութենէս ասեմ . բայց զիւրաւ ևս ծածկին և բառնին . զի որչափ հեշտածինք են , այնչափ ևս զիւրամեռք . բայտ ասից ածակիր ոգւոյն , ('ի բանն . է . 1 : տես և 'ի բանն .

Պ. 4 :

Արդ որպէս երեխ 'ի նախազրելոցդ՝ նախ և ըստ ինքեան ծածկին մեղք սրբարար չնորհօք . զի առանց այնր ոչ կարէ լինել թողութիւն մեղաց , որպէս առանց հոգւոյ ոչ կարէ լինել կեանք . և զայսմանէ չիք տարակցու : Երկրորդ ծածկին մեղք ածային սիրով . յորոյ վերայ ասէ սարգիս չնորհալի ('ի մեկն . առ պէտ . դ . 8 . ձառ թ .) * սէր ծածկէ զբազմութի մեղաց . առ (վասն զի) որ զմեղսն գործեն՝ անհնազանդ եղեալ պատուիրանացն , զնախնւոյն աղամայ զկերպարանս զգենուն , մերկ խայտառակ լինել յառաջին լուսատեսակ սբատուիրանէն , այսն կատականաց մեր-

„ ձաւորացն և ծանականս տեսողացն . . . զայնալիսի
 „ ծանակեալն մեղօք սէրն փոխանակ առաջին պատ-
 „ մուշանին եղեալ ծածկէ և զարդարէ , և փառա-
 „ ւոր առաջի ոյ կացուցանէ . . . իսկ զբազմուի (մե-
 „ զաց) ասելով՝ զազգի ազգի և զպէսպէս մեղմն
 „ նշանակէ . իբրու ոչ եթէ զոմանց մեղաց ծածկէ
 „ (սէրն) զմերկութիւն , և զոմանց ոչ , այլ զամցնցն
 „ ծածկէ . զնաննութիւնն ոյ յինքն բերելով որ արար
 „ ազամայ և կնոջ նորա հանդերձս մաշկեղէնս , և
 „ զգեցոց զնոսա , և ծածկեաց զամօթալի մերկու-
 „ թիւն նոցա || . Օ այս եգեալ յարէ անմիջապէս .
 * թուի ինձ ասէ եթէ մեծն 'ի մարդարէս դաւիթ 'ի
 „ սոյն յայս միտս երգեաց զերեսներորդ առաջնե-
 „ րորդ սաղմոն . երանի ասէ՝ որոց թողան մեղք
 „ նոցա , և որոց ծածկեցան անօրէնութիւնք իւր-
 „ եանց || :

Վ. Ա. Ծանիթ՝ զի որովհետև սրբարար չնորհք և սէրն
 ածային ոչ բաժանին 'ի միմեանց , նոյն լինի ծածկել
 նոցա զմեղս եթէ միոյն և եթէ միւսոյն . յայսմ և եթ-
 է զանազանութիւն , զի չնորհքն մտածի 'ի կողմանէ հե-
 ղինակին , և սէրն 'ի կողմանէ ենթակային . մին 'ի
 կողմանէ տուողին , և միւսն 'ի կողմանէ առողին . և
 երկորին ևս 'ի միասին ծածկեն զմեղս իբրև մի . || .
 զորմութիւնն ևս ծածկէ զմեղս . ըստ այսմ . (գան .
 դ . 24 .) * զմեղս քո ողորմութիւն քաւեսջիլ || . ըստ
 որոց ասէ սարդիս չնորհալի ('ի մեկն + ա + պետ + ա .
 24 . ձառ . դ . յորդ .) * լուծանին մեղք մեր (ողոր-
 „ մութիւն) և ծածկին անօրէնութիւնն || . բայց յայտ
 է թէ այս ևս , և այլ բարեգործութիւնք և առաքինա-
 կան ներգործութիւնք յայսժամ ծածկեն զմեղս հոգ-
 ոյն՝ յորժամ ունին ընդ ինքեանս զբրարար չնորհս
 և զշեղական սէրն :

Հասացելոց 'ի վերոյ հնար է տեսանել՝ թէ յայտ-
 սիկ բանս առաջին հատուածն վերածի պարզապէս
 'ի թողութիւն մեղաց . և երկրորդն յառաւելուի թողու-
 թեանն՝ մինչև ծածկիլ իսպառ : | ակ երբորդն՝ զոր
 զնէ 'ի յաջորդ համարն , վերաբերի 'ի յոյժ առա-
 ւելն , այսինքն յայն աստիճան՝ մինչև շհամարիլ ան-
 գամ թէ գործեալ իցէ մեղս ինչ . || մին իրի ասէ :

Արտաք սահման ու համարեցի աւել դժբան նորա : Արկին
օրինակաւ հնար է ոչ համարիլ ումեքը զմեղա . մի
եթէ չիցէ երբէք մեղուցեալ . զի յայտ է՝ թէ որ չէ
երբէք մեղուցեալ ոչ համարի նմա մեղք ինչ . և մի
ևս՝ թէպէտև մեղուցեալ իցէ , բայց թողեալ է
նմա ած ամենելին , մինչեւ չյիշէլ բնաւ զայն . բատ
այնմ * ամենայն մեղք իւր զօր մեղաւ , մի յիշես
ու ցին || . (Եղեկ . լդ . 16 .) Ծադյայտ է թէ՝ ըստ այսմ
երկրորդ օրինակի դնէ աստ մարդարէն զայս բան .
զի յայս տայ հայիլ և գերանունդ նորա . որպէս թէ
ասացեալ էր : Ով թէ որչափ երանելի է այրն այն ,
որ թէպէտ և գործեալ իցէ մեղս . բայց այնպէս թու
ղեալ է նմա ած , մինչեւ ոչ ևս համարիլ թէ արա-
րեալ իցէ նորա զայնսպիսի ինչ :

Խոկ եթէ ըստ առաջնոյն կամիցիմք մեկնել , միտ բա-
նին լինի այս , ովլ թէ քանի առաւել ևս երանութեան
արժանի է նա , որ չէ գործեալ զայնսպիսի ինչ , որ
համարեալ լիցի նմա 'ի մեղս , և ած՝ որ գատաւորն է
արդարութեան՝ ոչ գտանիցէ 'ի նմա զմեղս առ 'ի դա-
տել :

Օայս ոչ է մարթ ասել զներելի մեղաց . զի ովլ
գտաւ (բաց 'ի մօրէն այ) առանց այսպիսի մեղաց .
խոկ եթէ զմահացու մեղաց ասիցեմք , կարէ շշմար-
տիլ 'ի վերայ մեծամեծ ծառայից այ . որպիսի էին
յոր , աբրահամ , խահակ , ևն . զորոց մեղք ինչ բնաւ
չյիշատակին 'ի սուրբ զիրս :

Բարսեղ վարդապետ ('ի մեկն . մարկ . գլ . ժկ .) ըզ-
բայդ համարէլ առնու . 'ի տեղի թուելոյ . յոր միտս կա-
մի ասել . երանի առն , որում այնպէս թողու ած ,
մինչ ոչ ևս 'ի թիւ արկանել զմեղս նորա 'թէ այս-
քան իցէ և այնքան . այլ այս ևս 'ի վերոյգրեալսդ
չայի :

Այսոքիկ երեքին հատուածք բանից , որք բովանդա-
կին յերկուս համարադ յայդոսիկ , յարմարութք իմն
այլազգ ևս կարեն դասաւորիլ քան զոր եղաք այժմ
հայելով 'ի բան թողութեան մեղաց : Առաջինն 'ի թու-
զութիւն սկզբնական մեղաց , որպէս թէ ասէր՝ երանի
որոց սկզբնական մեղաց թողութիւն եղեւ : Երկրորդն
'ի թողութիւն ներգործական մեղաց . որպէս թէ ա-

սեր . Երանի որոյ գործեալ մեղքն 'ի ձեռն թողութեած ծածկին : | Հըրորդն 'ի թողութիւն պատժոց մեղաց . որպէս թէ ասեր . Երանի որոյ այնպէս թողեալ լինին մեղք , մինչև ոչ ևս համարիլ պատժոց արժանի : | Խոկ բարսել վարդապետ 'ի վերոցիշեալ տեղիդ ('ի մեկն . մարկ . գլ . ժղ .) զառաջնն վերածէ 'ի թողութեած մեղաց 'ի ձեռն հաւասոր և սիրոյ . զերկորորդն 'ի թողութիւն մեղաց 'ի ձեռն մկրտութեած . զերրորդն 'ի թողութիւն մեղաց 'ի ձեռն խոստովանութեած . * զոյն դաւիթ . " յառաջազոյն Երանեաց (ասէ) ասելով , Երանի ու բում թողութիւն եզեւ մեղաց համարիտ հաւատովն ' որ 'ի քն . ծածկեցան յանցանք նորա ' մկրտութեամբ ոք աւազանին . Երանի այնմ որում ոչ համարի տէր զմեղս նորա . և հանապաղորդ խոստովանութեած ոչ 'ի թիւ և 'ի համար արկցէ զայլ ևս գործեցեալ մեղսն 'ի նմանէ : | Խւ զոյն իբր բացատրել կամելով յաւելու առել անդ . * որ կամի մկրտիլ ոչ եթէ հարկ ինչ զոյ նմա պատմել զյանցանս իւր 'ի լոր ամենեցուն . (զի ոչ պարտաւորի նախ խոստովանիլ և ապա մկրտիլ . զի խոստովանութիւնն մկրտեցելոց է ,) այլ միայն հաւատալ , և մկրտութեան սրբել . առ որ հայի ասելն . Երանի ում թողութիւն եզեւ մեղաց . նաև յետ մկրտութեանն թէպէտ և լիցի մեղանչել , գարձեալ ծածկէ խոստովանութեան և ոչ համարի տէր զմեղս նորա : |

Դարձեալ , առաջին հատուած այսր բանի կարէ հայիլ 'ի ծրի թողութիւն մեղաց , որպէս լինի 'ի մկրտութեած . Երկորորդն կարէ հայիլ յախատալի թողութիւն մեղաց , որպէս լինի յապաշխարութեան , յորում իբրեթէ ծածկին յանցանք . Երրորդն կարէ հայիլ յազատականն թողութիւն մեղաց , որպէս լինի 'ի մարտիրոսութեած . յորում ոչ ևս համարէալ լինին և իցէ մեղք , և ոչ իսկ պատիժք մեղաց . այլ բառնին առենայն : | Դարձեալ առաջինն կարէ հայիլ 'ի թողութիւն մեղաց 'որք կատարին զործով (կամ ըստ եբր ' . կամակար յանցանօք ,) Երկորորդն 'ի թողութիւն մեղաց 'որք կատարին բանիւ , և թողութիւն ծածկին . Երրորդն 'ի թողութիւն մեղաց 'որք կատարին խորհրդով ' և 'ի ձեռն ապաշխարութեանն ոչ համարեալ լինին 'ի մեղս :

Դարձեալ առաջինն կարէ հայիլ՚ի թողութիւն մեղաց պանվ օրինակաւ և թողիք . երկրորդն կարէ հայիլ՚ի ծածկութիւն արատոյ մեղաց՚ի ձեռն բարի գործոց . (իբր զի եթէ ապաշխարողն յետ թողութիւն գտանելոյ սկսանիցի ձեռն արկանել յայնպիսի բարի գործ՝ որ են ընդգէմ այնց գործոց՝ յորս յառաջն յանցեաւ , այնորիւք բարի գործովք իբրև թէ ծածկին յանցանք նորա) : Երբորդն կարէ հայիլ՚ի կատարելութիւն կենաց , յորում ոչ ևս գործէ մարդ զայնպիսի ինչ՝ որ

համարեալ լիցի նման ՚ի մեղս մահացուս :

Այսպիսիքս ձնմարտապէս և տիրապէս երանութեան են արժանի : Խակ որք յետ թողութիւն գտանելոյ՝ անփոյթ կան , և ոչ զգուշանան յառաջից գլորման , չեռափ գտանին նորա յերանութիւն , և կասկածաւոր է թողութիւնոյա , և են ՚ի վտանգի կործանելոյ : Ո՞արթէ ևս ասել , թէ ապաշխարութիւն այսպիսեաց և խոստովանութիւն զոր արարին՝ չէր ուղիղ և ձնմարթիտ , այլ զուցէ թիւը և անարժան , բերանով միայն և ոչ սըրտիւ : Ո՞չ երանէ մարդարէն զայսպիսիս , այլ յորս ոչ գտանի այսպիսի նենգութիւն . սմին իրի յարէ զինի և ասէ :

Եթէ ոչ նենդութիւն ՚ի բերան նորա : Այսինքն է . երանի այնմ՝ որ յապաշխարեն և ՚ի խոստովանին և յասելն առ ած մշաց . ոչ ունի նենգութիւն ՚ի բերան իւր . այլ որպէս բերանով խոստովանի զինքն մեղաւոր գոյլ , և խոստանայ ոչ ևս մեղանչել , զնոյն և ՚ի սրտի ունի : Խամ թէ երանի այնմ՝ որ ձնմարտապէս խնդրէ զթողութիւն մեղաց , և ոչ գոյ ՚ի բերան նորա այնպիսի զղջումն և առաջազրութիւն , որում ոչ համաձայնիցի զղջումն սրտին և առաջազրութիւն կամացն . այլ որպէս բերան նորա խօսի , նոյնպէս և սիրտ նորա գոյլ . որպիսի եր բան այնը զղջման՝ որ ել ՚ի բերանոյ դաւթի . զի յասել նորա * մեղայ տն ॥ . համաձայն այսմբանի կայր և ՚ի սիրտ նորա ներգործութիւն մեղայ ասելոյ :

Ոմանք զայս բան այլազգ մեկնեն . իբր թէ սովորն երանի տայ մարդարէն այնմ , որ չիցէ և բերանով մեղուցեալ : Ոմանք ևս թէ այսու բանիւ երանի տայ այնմ՝ որոյ թողեալ լինին մեղք՝ ոչ այնք միայն որք

կատարին գործով , այլ և ողք կատարին բերանով : Ումանք ևս թէ երանի տայ այնմ , որ ոչ միայն առաջի նայ գտեալ է զթողութիւն , այլ և ունի առաջի մարդկան զանխարդախութիւն՝ 'ի բերանի , կամ որ գտանի արդար առ նոծ և առ ընկերն , | ամբ" • բերանով իմանայ աստ զսիրսն . * զի այն (սրտի) բերան է ասէ՝ որ զայս „ բերան մարմնոց շարժէ || . և զայս եղեալ հետեւ ցուցանէ . * զմոտացդ բերան 'ի նենգութէնէ մաքրեալ . „ և սիրոց տն քում բնակութիւն սրտառաստեա : | Այս մեկնութիւնք ևս յարգոյ են . այլ առաջինն երեխ յար մար կարգի բանին :

Եստանօր կայ և այլ ինչ քննելի . իբր զի յառաջին համարն ոչ որոշեաց մարդարէն՝ թէ ում տայ զերանութիւն թողութեանն . զի ոչ ասէ . * երանի մարդոյ , „ որում թողութիւն եղեւ մեղաց || . այլ * երանի որում „ թողութիւն եղեւ մեղաց || : | ակ յերկրորդումն յորոշ շնչ անդ՝ ոչ դնէ մարդ՝ որ է հասարակ անուն առն և կնոջ . այլ դնէ առն :

| Ա ասն առաջնոյն ասելի է՝ թէ որովհետեւ երանութին մեծ է թողութիւն գտանել մեղաց , որոյ և լինիցի այս՝ թէ մարդ իցէ , և թէ այլ իմացական էակ , արժանի է երանութեան . որոյ վասն և անորոշ ասէ . * երանի „ ում թողութիւն եղեւ մեղաց || : | այց հաւանականագոյն ևս է ասել , թէ յայդ բան զօրութք կրկնի այն բառ՝ որ ներգործութք դնի 'ի յաջորդ համարն , այն և կնոջ . այլ դնէ առն :

| ակ վասն երկրորդին ասելի է՝ թէ երանի տալով առն , այնու իսկ երանի տուեալ լինի և կնոջ . և այս ըստ հասարակ ոճոյ սուրբ զրոց՝ որ բազում ուրեք 'ի մէջ բերելով միայն զբարդ այր , տայ իմացուցանել և զկինն : | Օ ի որովհետեւ այր է զըւիս կնոջ 'ի յիշիլ առն յիշս հասարակ՝ նովին յիշի և կինն : | կամ զի որովհետեւ 'ի տեսակի մարդկան պատուական համարեալ լինի այլն , 'ի յիշիլ պատուականին՝ յիշի ընդ նմին և ընկեր նորին որ ընդ նմա : | Որպէս յորժամ յիշի իշխանն՝ այսինքն յորժամ ասացեալ լինի՝ թէ եկն իշխանն՝ այսու իմացեալ լինին նաև նորին որք են ընդ իշխանին : | կամ յորժամ ասացեալ լինի , թէ * չուեաց աբրահամ յերկիրն հարաւոյ , և բնակե-

ու ցաւ ընդ կագես և ընդ սուբ || . իմացեալլինի ընդ
նմա և կին նորա սարբա (ծնն . ի . 1 :) Պատ այսմես
աստ 'ի յիշիլ առն երանութք՝ յիշի և կինն, որպէս
զրէ և սարգիս չնորհալի . (յակ . առ . 8 . երես . 30 :
տես և 'ի սաղ . առ . 1 :)

Վրդ երանի տուեալ մարգարէին այնոցիկ' որոց լինի
թողութի մեղաց , և ծածկին յանցանք , ևն , դառնայ
առ ինքն , և բաղդատելով զանձն իւր ընդ այնովիսիս
սկսանի այլով իմն օրինակաւ խօսիլ զիւրմէ , մանա-
ւանդ թէ և աւազել զինքն . որպէս թէ ասացեալ
եր , երանի տամ այն այնպիսումն , այլ աւաղ կար-
գամ անձին խուռմ . զի անագան ուրեմն գտայ յան-
պիսեաց վիճակի : Օ այսպիսի ինչ ունելով 'ի սրտի
խրում պատմէ և Ծանդգամանո դարձի իւրոյ , և
ասէ :

Դ . աւշի ես , և հայեցան ամսութերու իմ առ ողաշին ինչ
ու ուշը զօրհանողաւ 'ի ուստե և 'ի գիշերի :
Լուել միանդամայն և աղաղակել երեի ներհական .
զինք ասպա ասէ մարգարէս զանձնէ իւրմէ լուել , և
զօրհանապազ աղաղակել 'ի տուէ և 'ի զիշերի . եթէ
ասէր . լուէի և երբեմն աղաղակեի , չեր ինչ , այլ ա-
սէ . յաղաղակելս իմ 'ի տուէ և 'ի զիշերի լուեցի :
Իսայց չիր ինչ աստ ներհակութի . զի այս բանք հային
յայն միջոց ժամանակի 'յորում սկիզբն արար ձանա-
չելոյ զմեղս իւր , և գառնալոյ առ առ քանզի կա-
ցեալ նորա զամօրեւայ ժամանակ 'ի մեղս՝ թմրեալ
մնաց 'ի նմին : Ի բաքեցաւ առ նա յայ նաթան մար-
գարէ . խօսեցաւ առաջի նորա առակօք բաղում ինչ .
և յայտ արար նմա զարն՝ զոր գործեաց . և յանզի-
ման եղ նմա , թէ զովքան բարիս արար ընդ նա տէր ,
և նա զինք չար հատոյց նմա . եցոյց ասպա և զկամն
այ , և 'ի մէջ երեր զսպանալիս նորա . | լսել դաւ-
թի զայսափիկ' լուռ և եթ կայր , և յանբերելի ցաւս
տրորէր 'ի սրտի , և իբր թէ 'ի կաթսայս ձենձերէր
ողի նորա :

Հաւարտել ասպա նաթանայ զբան իւր՝ զեղաւ ողի
դաւթի , զովքաց իբր 'ի ձիմեալ սրտէ . կըս թն . (ը .
թագ . ժք . 1 - 17 :) | լսել կարէր այնուշետե . լուե-

յուցանել զաղաղակ սրտի նորա , որով աղաղակեր առ տէր զօրհանապազ՝ մի յիշել զարն զրդ գործեաց : Եւ արդարեւ այնափ սաստիկ էր տուորումն սրտի նորա , և յաճախ դուռմն ներքին բերանոյն՝ այսինքն ոգւոյն , մինչև մաշիլ ոսկերաց նորին : Եւ ահա յայս հայի առաջիկայ բանդ յասելն :

Ի նեցի ես , և մաշյան ամ ոսկերս իմ առ աշաղահել ինչ առ բեր զօրհանապազ՝ ի ոռու և ՚ ի գիշեր : Որպէս թէ առեր . յազդ առնել ինձ այ բերանով նաթանայ զարն՝ զոր գործեցի , ափ ՚ի բերան լւալ լուեցի . և սիրտ իմ տուորեցաւ յանհնարինս ամաշելոյ , և ՚ի սաստիկս ցուելոյ . բայց քանզի գիտացի թէ հաճի տէր ընդունիլ զզարձ իմ ՚ի նա եղի զյոյս իմ : և մեղայ գուելով անկայ յոզորմանը իւն նորա . և սկսայ այնուհետեւ հանապազ աղաղակել առ նա ՚ի տուէ և ՚ի գիշերի . և առ աշաղահել ինչ . այսինքն վասն այսպէս աղաղակելոյս կամ աղաղակելովս , կամ մինչելովս ՚ի սրտի՝ մաշյան ամ ոսկերս իմ : այսինքն թուալացան և նուազեցան ներքին զորութիւնք հոգւոյս :

Օ զօրութիւնս հոգւոյն ոսկերաց նմանեցուցանէ ըստ երկուց . մի զի որպէս ոսկերօք հաստատուն մնայ մարմինն , այնպէս և հոգին ներքին զօրութիւք : Երկրորդ՝ զի որպէս ՚ի ձեռն ոսկերաց ժրութիւք գործէ մարմինն , այսպէս և հոգին ՚ի ձեռն ներքին զօրութեանց : Որքա ասէ մաշեցան . ուր բառդ մաշյան՝ զնի խելամսութէ ձեռվ փոխանակ տկարանալոյ , զարատշառն փոխանակ գործոյն ՚ի կիր առնլով . ըստ որում մաշին պատճառի լինի տկարանալոյ :

Ա յազդ ևս մարթէ մեկնել զայս բան՝ զբառդ շեշտ՝ յայլմիսս տարածելով . իբր զի դաւիթ որպէս ասացաք՝ իբր զամիսս ինն ՚ի մեղս մնալով , որպէս թէ լուռ կայր ՚ի նմին , և բազմօք ջանայր ծածկել զայն , և հեռի առնել ՚ի բամբասանաց , (որպէս յայտ է . ը . թագ . ժամ . 5 - 27 :) Խոկ ՚ի ձանաշելն զմեղս իւր՝ այնպէս սկսաւ աղաղակել , և կոծել վասն այնչափ ժամանակ լուռ մնալոյ ՚ի մեղս , մինչ զրեթէ հալիլ և մաշիլ ոսկերաց նորա , այսինքն է տկարանալ խսպա : Եւ կամ այլազդ ևս . իբր զի յետ դառնալոյ դաւթի առ առք՝ յորժամ յիշեր զմեղս իւր , ՚ի տիսրութէ սրտին

և 'ի պատկառանացն՝ լրեալ մնայր և իրրեւ թէ համը բանայր . և յառաւելն տիրիլ՝ յոգւոց ելաներ . և աս ստիպեալ 'ի ցաւոց սրտի և 'ի զջջութենէ իրը 'ի խթանէ՝ աղաղակեր առ առ առ զօրչանապազ՝ եթէ 'ի տունջեան և եթէ 'ի գիշերի . որով և մաշէր յոսկերս իւր : Եւ զի յաւելաւ 'ի ցաւս նորա և ծանրութի ձեռին այ , սաստկացուցաներ և նաև զաղաղակ իւր իրը 'ի փամանէ , և գուելով 'ի խորոց սրտի ասէր :

Դ . () անդայաց յեւա ոյ 'ի վերայ իմ . դարձայ 'ի նշան առանք . զի հարու յիս գուշ :

(Օանրանալ ձեռին այ 'ի վերայ մարդոյ՝ փոխաբերութ առեալ՝ նշանակէ նուանել անընդհատ զմարդն , և ազգի ազգի տառապանօք խոնարհեցուցանել զնա . որպէս արար և ընդ գաւիթ . զորմէ զիտելիի է . զի սա նախ քան զմեղանչել իւր կամ նախ քան զթագաւորելն՝ յորժամ 'ի հալածանս սաւուզայ էր , հնգեւ քումբը տառապանցաւ . (որպէս սաացաք 'ի սաղ . շ . 10 :) Այնպէս և յետ մեղանչելոյն՝ իրրեւ դարձաւ յինքն՝ հնգապատիկ օրինակօք նուանեցաւ յայ . նախ նովին խակ յանդիմաննութիւն՝ որով յանդիմաննեցաւ բերանով նախանայ , յասել նորա առ նա . * Եւ արդ՝ մի Հեռացի սուր 'ի տանէ քումմէ մինչև ցյաւիտեան , փոխանակ զի անարդեցեր զիս , և առեր զկինն ու . ըիայ քետացւոյ լինել քեզ կնութեան : Վ . յսպէս ասէ տէր . ահա ես յարուցից 'ի վերայ քո շարիս 'ի տա . նէ քումմէ , և առից զկանայս քո առաջի աշաց քոց , և տաց ընկերի քում , և ննջեսցէ ընդ կանայս քո . յանդիման արեգականս այսորիկ . զի քու արարեր . զայդ 'ի ծածուկ , և ես արարից զբանդ զայդ յան . զիման ամ խորացէլի , և առաջի արեգականս այսու . ըիկ Արդին քո զոր ծնանելոց է քեզ՝ մահու . մեռցի || . (ք . թագ . ժը . 10 - 15 :)

Երկրորդ՝ բազմապատիկ նախատանօք , զոր նախատեցաւ 'ի բազմաց 'ի դառն և յանձուկ ժամանակի , նաև 'ի սեմեայ խակ . զորմէ զրէ անձունն , թէ յելանել դաւթի լալով ելանէր և * սեմէի որդի զերեայ , ե . լանելով ելանէր և անիմանէր (զգաւիթ) և ձգէր . քարինս դաւթի . . . և այսպէս ասէր սեմէի յանի .

,, ծանելն զնա . ել ել այր արեանց , այր անօրեն .
 ,, դարձոյց 'ի քեզ տէր զամ արիւնս տանն սառողայ ...
 ,, զի այր արեանց ես դռ . (թ . թագ . ժկ . 5 - 8 .)
 | շրջորդ՝ աննահանջելի ապստամբութեամբ արեսաղո-
 մայ . յորում յայնպիսի նուանուի էջ դաւիթ , մինչեւ
 հետիւտա մեկնիլ յաթոռոյ իւրմէ և բոկոտն երթալ
 և դառնազինս լալ . ոնց գրեւ ածաշունըն (թ . թագ .
 ժե . 17 - 30 .) * ել (ասէ) արքայ և ամծառայք նորա
 ,, հետեակ . և ամ երկիրն լայր , և զգլխով իւր ծած-
 ,, կեալ . և ինքն երթայր բոկ , և ամ ժողովուրդն
 ,, ընդ նմա ձորձ զգլխով : (տես և թ . թագ . ժկ . 26 .
 և ժե . 26 .) ուր զրի , թէ զիարդ դառն եղեւ դաւթի
 զրկիլն և 'ի ներկայութենէ տան տն . ընդ սմին դասի
 և ապստամբութիւնն սաբեայ . (թ . թագ . ժժ . 40 .
 ի . 1 .)

Ըորրորդ՝ քստմնելի իսայտառակութք կանանց իւրոց
 յաբեսազոմայ ակն յանդիման ժողովրդեանն իսրայ-
 էլի (թ . թագ . ժկ . 22 .) 'ի սոյն կարգի և խայտա-
 ռակութիւն դատեր իւրոյ թամարայ (թ . թագ . ժկ .
 19 .) Հնգերորդ՝ կրոստեամբ որդւոց , առաջնոյն՝
 մահուամբ մանկանն ծնելոց 'ի բերաբեայ (թ . թագ .
 ժք . 19 .) երկրորդին՝ սպանութք ամսնայ անդրան-
 կան իւրոյ . (թ . թագ . ժկ . 29 .) և երրորդին՝ սա-
 տակմանմբ աբեսաղոմայ (թ . թագ . ժկ . 15 .) **Ի սայ-**
քիւք հնգապատիկ պատուհանիւք իրը հնգեքումբք
մատամբք որպէս և հնգեքումբք առաջնովք տառա-
պանօք , ընդ տն իմր տան մատամբք նուանեցոց
ձեռն տն զգաւիթ . վամն որոյ ասէ :

() Հանդաշաւ յեւն ու 'ի վերայ իմ : ' յմանութք ձեռնին իսո-
 մի՝ առ 'ի ցուցանել զառաւելութիւն ազդուութե այնը
 ամի՞ որք եկին 'ի վերայ նորա . քանզի յայտ է՝ թէ որ-
 շափ զօրաւոր է ձեռն , այնչափ ձնշէ և ձմիլ յորոյ վե-
 րայ յենլով ծանրանայ . և զի ամենազօր է ձեռն այ ,
 այսինքն կարողութիւն կամ զօրութինորա , որով կա-
 ռավարէ զտիեզերա՝ 'ի ծանրանալ այնը 'ի վերայ ու-
 րուք՝ յանհնարինս ձնշէ զնա . որպէս արար ընդ դա-
 փիթ . վասն որոյ ոչ ասէ պատուհանաց զիս ձեռն
 քոյ , այլ ծանրացաւ , որպէս թէ ասէր . կարի յոյժ
 ձնշեաց և ձմիլեաց զիս ձեռն քո :

Եւ դարձեալ ոչ ասէ՝ կոխեաց , զի թէ կոխեալ էր ,
այն ոչ լինէր պատմել , այլ կորուսանել . ապա ծան-
քացաւ ասէ . առ ՚ի ցուցանել նախ՝ թէ վախճան այնը
ամի զորս կրեաց՝ էր այս՝ զի խրատեսցի : Վռ ՚ի ցու-
ցանել երկրորդ՝ զօդուտն , իբր զի այնու ծանրութեամբ
ձեռին ուղղեսցի ՚ի մնացեալ թիւրութենէ . * ուն
ու (այսինքն չեքիձն) ծանր է . և վասն այնորիկ զթիւրն
ուղղէ , ասէ բարսեղ վարդապետ (՚ի մեկն . մարկ .
զլ . ժ .) առ ՚ի ցուցանել երրորդ՝ նաև զբարեինամ
լինել ձեռին , մանաւանդ թէ զթեթեն լինել . ո՞պ
թէ ասէր . արգարե թեթե է , և քաղցը բարերար
ինամբ ձեռին քոյ . բայց ես ծանրացուցի զնս ՚ի վր
իմ . այլ քաջալերիմ ևս , զի ձեռն քո է , և ոչ ձեռն
օտարի . և ոչ ձեռն անողորմ տն :

Դարոյապէս , ձեռամբն այ նշանակի աստ ազգարա-
րութիւնը կամ իբր ձեռամբացի զգուշացուցանելն նորա
զմարդ ՚ի չարէ . ապա թէ անփոյթ լիցի մարդն , ծան-
րանայ ՚ի վր նր , և տագնապէ , և տանջէ : Հորժամ
յընթրիս խրախանայր բաղտասար թագաւոր , չարա-
չար ՚ի կիը առնով անդ զկահս բերեալս ՚ի տանէ տն
երեւցաւ նմա ձեռն կամ թաթ առն , որ զրէր ՚ի վր որ
մայ . և ո՞պ ասէ զիլին . * յայնժամ հասան գոյնը թա-
զա գաւորին և խորհուրդը նր խռովէին զնա . (գան .
է . 6 .) զի ծանրացաւ ձեռն տն ՚ի վր նր : Հորժամ և
գու ՚ի մեղս փափկանաս , և ՚ի համել զկամ քո խրա-
խանաս , չարաչար վարելով զմեծութիւնդ կամ զիշխա-
նութիգ , կամ զգիսութիգ , և զայլ բարիս՝ զորս ա-
ռեալ ես յայ , թաթ ձեռին այ զրէ ՚ի վերայ որմայ
հոգւոյդ . * մանէ , թէկէղ , փարէս || : Եթէ զու ոչ
կամբցիս իմանալ , յայտնէ քեզ զանիէլ , այսինքն խորդ
մտաց քոյ յանդիմանելով զբեզ յասելն . * մանէ ,
չափեաց ան զթագաւորութիւն (հոգւոյ) քո , և վախ-
ճանեաց զնա . թէկէղ , կըռեցաւ ՚ի կշիռս և գտաւ
պակասեալ . փարէս , բաժանեցաւ թագաւորութիւ-
ն , քո , և տուաւ մարաց և պարսից , (այսինքն ախտից
և զիւաց) . (գան . է . 25 :) Ելաել քո զայտսովիկ ՚ի
ներքս՝ հատանին գոյնք խաղաղութեգ . և խորհուրդը
քո խռովէն զբեզ . և տանջանք սրտիդ պաշարէ զբե .
Որչափ ինչ խրախալի կայցէ առաջի քո , որպիսի էր

յինթրիսն բազմասարայ, ոչ ուրախացուցանէ զքեղ.
առաւել է տագնապ հոգւոյդ՝ զօր կրես, բան զբերե-
րութիսն՝ զորս վայելես, և կաս՝ ի վիճակի թշուառու-
թե՛. և՝ ի կարծելց ազատանալ՝ ի նոյն դառնաս. ըստ
որում ազդ առնէ մարդարէն այլով իմն օրինակաւ, ՚ի
մէջ բերեալ զթշուառութիւն իւր, յասելն:

Պարչայ՝ ՚ի նշառառառի: Ձխուառութիւն լրապէս ա-
ռեալ, և այնպիսի վիճակ կենաց՝ որ անսեասն է յուրա-
խութէ և՝ ի խաղաղութէ, և՝ ի կարեռը բարւայ, և է
իբր յատակ կենաց. և զի՝ ի յաճախել՝ ի վերայ դառ-
թի անսակնունելի նեղութեանց՝ բարձին՝ ի նմանէ զու-
րախութիւն և զիսաղաղութիւն և զայլ ննչ բազում, ևս և
իջուցին և դարձուցին զնա յայսպիսի յատակ՝ այսինքն
՚ի թշուառուի, վասն որոյ ասէ ։ Պարչայ՝ ՚ի նշառառի: ։
իբր թէ ասել. թշուառացայ՝ ի պէտպէս տառապա-
նաց և՝ ի նեղութեանց, զորս փշոյ նմանեցուցանէ՝ ա-
ռելով:

Օչ հարան յիս քառչ: Ոկլիպնական պատիժ մեղացն է
մա՞ս ըստ հոգւոյ և ըստ մարդինոյ. իսկ երկրորդական
պատիժքն են պէտպէս տառապանք, զորս նա ինքն ա-
րարին կողեաց փուշո յանիծանել անդ զմեղս ադա-
մայ. * փուշ և տառատակ բռուսուացէ քեղ || . (ծնն.
գ. 48:) ։ Այսպիսի փուչք, այսինքն տառապանք՝ որք
հանգոյն փշոց խայթեն զմարդ, ՚ի յաճախելն դար-
ձուցանեն զնա՝ ի թշուառութիւն. և հասարակօրէն
թոյլ տուեալ լինին յոց գալ՝ ի վերայ մարդոյ առ՝ ի
զգաստացուցանել զնա յուղղութիւն վարուց: ։ Հայս
միտոս յաւելու զարտճառական շաղկապդ չէ՝ յասելն:
Պարչայ՝ ՚ի նշառառի, և այնու ՚ի զգաստութիւն և
յուղղութիւն, չի հարան յիս քառչ:

Այլազգ ևս մեկնիլ կարեն բանք այսօր համարոյ բո-
լոր՝ այլով փոխարերութք. ըստ որոյ ծանրանու ձեռինն
ոյ նշանակէ նուաձել նորա զսիրտ մարդոյ, և շար-
ժել յապաշխարութիւն: ։ Եղնապէս և հարկանել փշոցն
նշանակէ խայթել խղչի մոտաց, որպէս թէ եզեալ
էր. յանկանիլս իմ՝ ի մեղք՝ հայրախնամ ձեռն քոյ ոչ
դադարէր՝ ի շարժելց զսիրտ իմ. նոյնապէս և խայթ-
մունք խղչի մոտաց յաճախելին յիս հանդերձ հարու-
ծովք զիւաց ըստ լամբ: և այն՝ ՚ի տուշ և՝ ՚ի զիշերի

ըստ թարգմանութեան այլոց . և ոչ զոյր հանգիստ հոգւոյ իմոյ . որով և դարձայ 'ի թշուառութիւն , այսինքն դարձայ ձանացել թէ յորում թշուառութէ իցեմ , մանաւանդ յաղդ առնել քոյ ինձ 'ի ձեռն նա թանայ . և այնու 'ի զղջումն եկեալ՝ սկսայ աղաղա կել առ քեզ և ապաւինիլ 'ի քեզ :

Ի արոյապէս ուսանիմք այսու՝ թէ 'ի հարկանել խղջի մտաց՝ պարտիմք դառնալ 'ի բառնալ զթշուառութիւն մեղաց և ախտից . ապա թէ ոչ իսկական թշուառութիւն հասանէ և տագնապէ զմեզ . զի ոչ դադարի այս փուշ 'ի հարկանելոյ զսիրտ մեր , և յամ հարուածս արեամք զանգէ , և զսպիս հարուածոցն թողու . և յանփոյթ լինել մեր աճէ և պատէ բոլոր զհոգին , և յամ կողմանց խայթէ : Ոլոնի փշալից են ախտք և մեղք . և փուշք նոցա են խայթմունք խղջի մտաց . որք հանապազ խայթեն զհոգին : Ա այ է մարդոյ՝ եթէ յապաղեսցէ վանել 'ի բաց . զի այնուհետեւ ոչ ևս ազդէ 'ի նա քարոզութիւն և ոչ խրատ ինչ . քանզի որչափ և զօրաւոր իցէ այն քարոզութիւն կամ խրատ՝ անկանի 'ի մէջ փշոց . փուշքն հեղձուցանեն զնա , և անպտուղ լինի (մատ . ժկ . 7 :)

Ա արգիս շնորհալի ('ի մեկն . յակ . առ . 27 . Ճառ . Ե .) փշովք իմանայ զազգի ազգի փորձութիւնս՝ որք զան 'ի սատանայէ և յաշխարհէ , և 'ի մարմնոյ մերմէ . իսկ թշուառութք իմանայ զտառապանս և զաղէտս՝ զորս կրեմք 'ի փշոց անտի . * որ զերկիր փշաբեր կոխեն , բոկ ոտամք (ասէ) անմարթ է անխոցոտելի մնալ , գարշապարացն . սոյնպէս և մեք , ոյք զՃանապարհս , աշխարհիս գնամք՝ որ լի է սատանայական տատաս , կօք և փշօք . եթէ զգարշապարս մտաց 'ի սմա , հաստատեմք , անհնար է մեզ անխոցոտելի կալ , մնալ , կամ առանց արատոյ : Յայսոսիկ հայեցեալ , մարգարէն , և դառնացեալ 'ի սաստիկ փշոցն հար . ուածոց՝ ասաց ողբալով , դարձայ 'ի թշուառութի , զի հարան յիս փուշք : Օ սոյն զայս և մեք ասասցուք , և արտասուելով ողբասցուք զի փշօք կեանս , մեր . զի թէ նա յօրինակին և 'ի ստուերին և այր . թագաւոր , և 'ի միում նուագին եղե փշաբեր . և այլովն ամիւ կատարեալ էր , և հոգւոյն շնորհաց

՚, արժանացեալ, վկայութիւնս յայ յինքն ձգեալ, և
 ՚, այնպէս դառնութք նոյր, հեծէր արտասուելով,
 ՚, և յոգւոց հանէր, և թշուառուի զիրսն անուանէր,
 ՚, մեք զինչ արացուք եղբարք, որ յայսմ ամէ թա-
 ՚, փուր և ունայն եմք . . . և այսպիսի և այսքան փշովք
 ՚, լցեալ ոչ զգամք և ոչ արտասուեմք, և ոչ թշուա-
 ՚, ուութի զիրսն վարկանիմք || : | յւ ('ի մեկն. ա. պետ.
 ա. 24. Ճառ. դ. 'ի յորդ.) զրէ . * հոգիք մեր (ասէ)
 ՚, անտառախիտ եղեալ փշօք մոլախոտին, և զանա-
 ՚, զան ազգս փշոց բուսուցանեն. և մեք ոչ զգամք,
 ՚, և միտ ոչ դնեմք, և ոչ հառաչելով ասեմք . դար-
 ՚, ձայ 'ի թշուառութի՝ զի հարան յիս փուշք . զի ար-
 ՚, դարեւ փուշք են հոգւոյն ամ մեղք՝ որ խոցոտեն և
 ՚, վիրաւորեն զնա անհնարին խոցուածովք . և դառ-
 ՚, նագոյն իմն ցաւեցուցանեն քան զմարմնոյն խոց-
 ՚, ուածսն || :

Կատանօր 'ի ձեռագիր սաղմնոսս մեր դնի բառդ հան-
 գիստ . և յերայականն ուլու . (զորմէ տես 'ի ներա-
 ծութեան . գլ. թ :) Խոկ աստ խորհրդաբար առեալ
 ցուցանէ՝ հանգստեամք յառել զմիտս 'ի ծածկեալ
 խորհուրդ բանիցն ասացելոց . ըստ որում բանք չորից
 այսոցիկ տանց սաղմնոսից այլաբանօրէն ասին 'ի դի-
 մաց որդւոյն այ , որ կամեցաւ զգենուլ մարմին , առ
 'ի գտանել զթողութի մեղաց վասն առաջին մարդոյն
 այսինքն վասն աղամայ և վասն որդւոց նորա . և այնու
 հասուցանել զնոսա յերանութի , յորմէ զրկեալ էին .
 որպէս թէ ասէր . երանի աղամայ և որդւոց նորա , զի
 իմովս մարդեղութք լիցի նոցա թողութի մեղաց , և
 ծածկեսցին յանցանք նոցա , և ոչ ևս համարեսցին
 մեղք նոցուն . միայն թէ 'ի խոստովանիլ նոցա զիս՝ մի
 գտցի նենգութիւն 'ի բերան նոցա :

Եւ զի նա ինքն որդին այ եղեւ մեր երաշխաւոր , 'ի
 տուէ և 'ի զիշերի լրութք իւրով աղաղակէր , այսինքն
 աղօթէր հոգւովառ հայր , կամ ըստ ասելոյ առաքե-
 լոյն՝ ուժգին գոյմամք ինդրէր 'ի հօրէ վասն մեր , ո-
 րով և մաշեցան ոսկերք նորա , իբր զի ամք կենաց նո-
 րա կամ կեանք նորա 'ի ծննդենէ մինչև 'ի մահ խա-
 չին՝ ցաւօք անցին . և 'ի խաչիլս անդ՝ բնական ոսկերք
 որ ա ևս խախտեցան և տառապեցան : Վանզի ծան-

բացաւ՝ի վերայ նորա ձեռն հօր վասն մեղաց մերոց ,
և մատնեաց զնա յայն շարչարանս , և յայնպիսի ա-
նարդ մահ . (տես ՚ի սաղ . իսա . 14 :)

Ա Յ Լ եթէ ՚ի կարդ տանց սալմոսիս հայեսցուք , աս-
տանօր բառդ հանգիստ՝ ցուցանէ զիրոփիսութիւն կարգի
բանին . իբր զի դաւիթ եղեալ՚ի վերոյ զերանութիւն
թողութե մեղաց , և զթշուառութի նեղութեն զոր
կրեաց , դարձուցանէ աստ զբան իւր ՚ի խոստովանու-
թիւն մեղաց իւրոց . ուստի զբեթէ հանգիստ տուեալ
առաջնոյն՝ յերկրորդն մատչի , և ասէ :

Ե . (Օ մէլս իմ յուցից ուն . և ըանօրէնութիւն իմ ու ծած-
իւցից ՚ի ուն :

Ա ն հ ն ա ր ի ն վիշտ է մարդոյ՝ ունել առաջի աշաց զայն
ինչ որ ՚ի վեր քան զամ ատելի է նմա , և ըստ ամի
դարշ և այլանդակ . արդ քանզի յանչափս այլանդակ
է դարշութիւն մեղաց , ըստ որում է ընդդէմ անչափ
սրբութեան և անսահման ուղղութե , դաւիթ ՚ի զգաս
տանալն անդ իրեւ ետես զայնպիսի այլանդակ լինեն
մեղաց , այնչափ յատելուի շարժեցաւ ընդդէմ նոցա ,
մինչև ՚ի տագնապ անկանիլ և տուայտիլ : Եւ թէ-
պէտ զիտայ՝ թէ եթող նմա տէր , ընդ որ և ուրախ
էր , բայց տեսութիւն այն , որով ըմբռնէր զգարշութիւն
մեղացն յիւրմէ գործեցելոց , հալէր և մաշէր զոգի
նորա :

Խ ո ր հ է ր և ՚ի մտի՝ թէ զիտայ ապա դարշ երեխցի
այն յաշ անսահման սրբութեան . զի եթէ ինքն անբա-
ւական գոլով ըմբռնել զամ զարշութիւնս մեղաց՝
այսչափ զգուեր , քանի ևս նա , ընդդէմ որոյ մեղաւ .
սմին իրի փափաքէր և կամէր իսպառ Ծննդեալ տեսա-
նել զայն ՚ի միջոյ . և յայս իսկ ցանկայը տարածել
զնոյն առաջի այ , ոչ զի տեսցէ , որովհէտեւ զայսմանէ
ինչ ոչ տարակուաեր , այլ զի բարձցէ և Ծննդեսցէ զնո-
սին . և զայս դիտելով ասէ :

(Օ մէլս իմ յուցից ուն . և ըանօրէնութիւն իմ ու ծածիւցից ՚ի
ուն : ՚Ի եղ ասէ ցուցից զմեղս իմ . զի մի զու ինձ ցուց-
ցես զնոսին . ոչ ծածկեցից և զանօրէնութիւնս իմ . զի
զու ծածկեցից զնոսա : ՚Վիտէր դաւիթ՝ թէ ան
տեսանէր զամ զմեղս իւր , բայց զիտէր և զայս՝ թէ

կամի ած՝ զի նաև ինքն յայտնեցէ նմա, որպէս զի
թողուցու, ոչ ըստ վրէժինդիր արդարութե՛ դատե-
լով, այլ ըստ անոխակալ ողօրմութե՛ քաւելով:

Եւ գարձեալ, ած՝ ի թողուն զմեղս՝ իբր դատաւոր
վարի. արդ օրէն է դատաւորի, զի թէ և գիտացէ
զյանցանս ուրուք, սոսկ իւրով գիտութք ոչ վարեսցի
՚ի թողուլ կամ՝ ի պատժել, այլ հարկ է զի ցուցցին
յանցանքն՝ կամ վկայութք այլոց, և կամ խոստովա-
նութք յանցաւորին. ըստ այսմ և ած որ գիտէ զամ,
թէ և ողօրմութք թողու, բայց քանզի և իբր դատա-
ւոր վարի՝ ի թողուն, կամ՝ զի ցուցցին առաջի իւր
մեղք յանցաւորին. եթէ վկայութք այլոց ցուցցին՝
դատէ միայն արդարութք առանց ողօրմութե՛. իսկ
եթէ խոստովանութք յանցաւորին ցուցցին, դատէ
ողօրմութք և քաւելով: || ասն օրոյ յորդորէ ած, մա-
նաւանդ թէ պահանջէ բերանով եսայեայ (խղ. 26).

* ասած դու նախ՝ զանօրէնուիս քո, զի արդարացիս || :

Օսոյն ահա փութայր դատիթ կատարել. մի այլք
ասէ վկայեսցեն զանօրէնութեց իմոց, այլ ես ինձէն
խոստովան եղէց. ես ինձէն ցուցից զնոսին, և յայտ-
նի կացուցից, ոչ այնմ՝ որ ոչ կարէ թողուլ, այլ քեզ
նոր, ընդդէմ օրոյ յանդգնեցայ մեղանչել: | Եւ ՚ի
ցուցանելս իմ՝ ոչ ինչ թաքուցից յանօրէնութեց ի-
մոց, և կամ թէ զին թաքուցից և զին յայտնեցից,
այլ զամն ցուցից. ոչ բերից առաջի պատճառանս
ինչ առ.՝ ի անմեղաղիր ցուցանելոց զիս: || Հ բերից ՚ի
մէջ զոկարութի ընութենս՝ առ.՝ ի թէթևացուցանելոց
զյանցանս իմ: || Հ յիշեցից և ոչ մի ինչ յառաջին
արդարութեց իմոց, առ.՝ ի գութ շարժել զմարդասի-
բուիդ, զի մի և նոքին յանօրէնուի համարեսցին ինձ,
և կամ ՚ի կորուստ. այլ միայն զմեղս իմ ցուցից քեզ՝
և զնոսին խոստովանեցայց. զի զոր ինչ խոստովանի
ոք առաջի քոյ՝ կորուսանէ, եթէ մեղք են՝ շնջին. և
եթէ արդարութի՝ արհամարհին:

| Օսոյն բերեալ և նարեկացւոյն՝ աղաւէ զամ ասելով
(՚ի բանն զա.) * ընդ սաստիկ ծանրութե՛ ցաւոցս և
զբեռն պարտեացս թէթևացն. զոր ՚ի ըւարանի
մտացս ամիտովման մահացացս անկողնի ուշաբե-
րեալ զյուսահատութե՛ դառն պտղաց՝ խոստովանիմ

ամենազիտիդ զամնչամար մասունս գործոց շարա-
շար անօրէնութէցս || : Հաւելեալ ապա մարգարէին
'ի խոստովանութի մեղաց իւրոց՝ ասէ :

Դ. Ասցի նէ Պատեցէց ինչին չելչուիմ . և դու նույն
շահ ամբարշունիւ եւշոյ էմոյ : * մեղայ տն || .
Վճ միով բանիւ 'ի միում վայրկենի եթող զմեղս
դաւթի , յասել նորա առ նաթան . * մեղայ տն || .
որպէս յայտ է յերկրորդ զրոցն թագաւորաց . (ժք .
13 .) Եւ այս գործ ողորմութէն այ 'ի թողուն այսպէս
դիւրաւ և հեշտեաւ , թեթե ինչ ոչ երևեցաւ դաւ-
թի , որպէս երեխ ծանծաղամուաց , այլ մեծ յոյժ ,
մինչև յանչնարինս ձմեցուցանել զսիրտ նորա , 'ի
խորհիլ 'ի միոս իւր և յասել . զի է զի ես իւր զամ
մի 'ի մեղս զառածանելով անսարգեցի զիմ միայն բա-
րերարն իմ , և նա միով բանիւ անցոյց զինև զայնչափ
ժամանակաց զծանրացեալ մեղս իմ : Օ ինչ ապա .
զոր նա միով բանիւ 'ի միում վայրկենի անցոյց , ես
բազում բանիւ ցուցից զնոյն . և զայնպիսիս զրեցից
զինէն , որ ոչ ընդ մի վայրկեան կամ ընդ մի օր , այլ
ընդ ամ ժամանակս հրատարակեսցի . ոչ 'ի մէջ
միոյ ազգի , այլ 'ի մէջ ամ ազգաց . ոչ զի զորինակ
թողան մեղք իմ , սոյնպէս և թողցին մնացուածք
մեղաց իմոց , եթէ գայթակղութի իցէ , և եթէ պա-
տիժ . յայսոսիկ հայելով ասէ :

Ե. Ասցի , Պատեցէց ինչին չելչուիմ : Պատմեցից ասելով ի-
մանայ ոչ միայն խոստովան լինել զմեղս իւր առաջի
այ , այլ և զրով յայտնել զայն՝ ամենեցուն . որպէս
և արարն իսկ 'ի բազում սաղմոս իւր . և այս ոչ եթէ
բռնազատեալ յայլոց , կամ 'ի խղչէ մոտաց . այլ
ինչին ասէ . այսինքն է իմով հաճութս , և ինքնայօժար
սիրով . ոչ սակ ասելով , այլ պատմելով . այսինքն
իւր պատմաբար որոշակի ցուցանելով : Հայտ առնէ
ապա և զվախնձանն պատմելոյ իւրոյ , և ասէ :

Դ. Դու նույն շահ ամբարշունիւ եւշոյ էմոյ : Կրկին և
կրկին մաղթել դաւթի՝ զտանել զթողութի ոչ ցու-
ցանէ թէ չէին թողեալ մեղք իւր . այլ յայտ առնէ
զառաւելութի թողուե մեղացն ըստ չորից . նախ՝ ըստ
գայթակղութէն . զի տուեալ էր բազմաց գայթակղու-

թիւն մեծ , և ցանկայր բառնալ զայն : Եղիկորդ՝ ըստ
արհամարհութե սիրոյն՝ որ առ առ զի ցօրշափ յիշել՝
թէ ինքն արհամարհօղ գտաւ սիրոյ ծայրագոյն իւ-
րում սիրելոյ՝ 'ի ցաւոց սրտի գրեթէ նուաղէր . վասն
որոյ և աճապարէր թողութի խնդրել , Երրորդ՝ ըստ
այլանդակութե մեղայն . զի յիշատակուի գարշուե նո-
ցա յոյժ տագնապէր զնա . վասն որոյ և իրը ոչ ջնջեալ
տեսանելով , աղաւէր զած ջնջել զայն : Չորրորդ՝ ըստ
պատժոցն՝ զորս կրել վասն մեղաց իւրոց , որը և մեծա-
պէս նուաձէին զնա , յորոց և ստիպիւր պաղատիւ առ
տէր , այնպէս թողուլ զմեղսն զայնոսիկ՝ մինչեւ պատ-
ժոցն անգամ բառնիլ . ոչ զի ինքն ոչ կամէր կրել
զպատիժմն , այլ զի այն պատիժք յանդիմանութի էին
մեղաց նորա , յորմէ զամօթ մեծ կրեր , և ինքնին
բռնազատեալ լինէր պատմել զմեղս իւր , զի և 'ի
յանդիմանութէ անտի զերծ լիցի : Հայոսիկ հայելով
ասէ . և դու նոյն զնամ ամբողջութիւն մելայ ինո՞ :

Վ մբարշտութիւն ասելով աստ իմանայ զըորեսին զան-
բարի ներգործութիւն մեղաց իւրոց՝ զորս յիշեցաք . այս-
ինքն զգայթակրեցուցիւ գոյն , զընդդէմ լինէլն
այ , զգարշելի գոյն յինքեան , և զարժանի լինէլն
պատժոյ : Օ այսոսիկ խոստովանելով ասէ՝ ցանկամ
ջնջեալ տեսանել զսոսա իսպառ :

Վ սոյն խոստովանութիւնն ապաստանեալ և նարեկաց-
ւոյն՝ ասէ ('ի բանն խթ . *) Եւ 'ի պատմելս իմ ին-
ձէն զանձին իմց բիծ , և դու թողցես զամկարըշ-
տութիւնս բազում մեղանաց խոստովանելոյս , հզօր
ծածկատես ամենափրկիչ . զի մի ծայրագոյն լրութիւն
աւետեացս դարձեալ նախնումն կարօտացայց երա-
նելով սաղմոսիւն , զնորհօք փրկեալն մկրտութն :

Վ յսոքիւք երկոքումք բնաբանիւքս յորդորիմք քրիս-
տոնեայքս 'ի խորհրդաւոր խոստովանութիւն առաջի քա-
հանայի , առ ՚ի թեթեացուցանել և ջնջել զմեղս
մեր . վասն զի խոստովանութ քաւիսք , և առանց խոս-
դովանուե պարտաւորիմք . * որ ասաց զմեղս իւր քա-
հանացաւ , և որ ոչ ասաց պարտաւորեցաւ : ասէ սար-
տիս չնորհալի ('ի մեկն . ա . յովլ . ա . 8 . ձառ . բ :)
Եւ ('ի մեկն . յակ . ե . 16 . ձառ . ժամ) ասէ . * մեղք
որ խոստովանի՝ թեթեանայ , և որ ոչն խոստովանի՝

շ, ևս քան զես ծանրամնայ, զայտոսիկ և դաւիթ՝ 'ի
 տաղմոսարանի անդ առէ. ես պատմեցից զմեղս իմ,
 և դու թողցես զամկարշտութիս մեղաց խոց. (ա-
 սա դու նախ զանօրէնուիս քո՛ զի արդարասցիս . ե-
 սայ . խո՛ . 26 || .) | յւ այսո՞ հետևեցուցանէ ասե-
 լով. * այսու զանեզրական այ մարդասիրութին ցուցա-
 նէ . որ առ ծանրուի մեղաց մերոց՝ որ իբրև զկիռու
 լերանց են՝ զթեթեւն ինզըրէ 'ի մէնջ զբանիցն խոս-
 տովանութի . վասն զի զինչ թեթեւ 'ի բնուիս քան
 զբան || : (տես և 'ի սաղ . լէ . 18 :) | խկ որ 'ի մեղս
 գորով անփոյթ է խոստովանիկ՝ պարսաւելի է յոյժ-
 յոյժ . զօրմէ երկար զրէ բարսեղ վարդապէտ . ('ի
 մեկն . մարկ . զլ . ժո՛ .) * միթէ (ասէ) որ անկանին
 ոչ յառնիցէ ասէ մարդարէն , կամ որ գլորին ոչ
 կանգնիցի . համարեաւ թէ ընդ ձանապարհ ընթա-
 նայիր , և զբարի ոտնդ հարկանէիր , և կամ թէ ի-
 ցես այսահարեալ՝ և անկանէիր 'ի ցեխ . միթէ 'ի
 նոյն 'ի մէջ ցեխոյն կայիր և մնայիր , քաւ լիցի . ա-
 պա թէ զայդ ոչ առնուս յանձն , զիարդ յանկա-
 նին և 'ի զայթակղին 'ի մեղս՝ որ քան զցեխ և
 քան զաղը յոյժ գարշելի է՝ ոչ յառնես և ոչ կանգ-
 նիս . այլ 'ի նոյն հեղգանաս ննջելով || : | յւ առ յոր-
 գորամիտս առնելոյ 'ի սոյն ('ի զլ . թ . 15 .) կուէ
 զխոստովանութին ծնող փրկութե . * խորհուրդ սրտի
 մերոյ (ասէ) յայսնի բանիւ՝ և խոստովանութին ծնա-
 նի զփրկութիւն և ածէ 'ի կեանս || : | յւ օրինակ բե-
 րեալ առ այս . ('ի զլ . ժո՛ .) զխոստովանուի աւազակին
 ասէ . * կարճ խոստովանութեամբ շահեցաւ զերկայն
 կեանսն || : | բրդարև կարճ առէ ժամ խոստովանու-
 թե . բայց զբազմօրեայ մեղս չնջէ , և յաւիտենական
 կենաց արժանի առնէ զխոստովանողն , ևս և զտազնաս
 սրտի զիւրէ : | խայթումն թունաւոր կարճի է հա-
 րուած մեղաց , և յանհնարինս տառապէցուցանէ . այլ
 իւղով կարճի դիւրի . իբր զի որպէս իւզն՝ յոր ար-
 կանի կարիքն՝ զհարուած կարճին մեղմէ , ևս և ա-
 պաքինէ , սոյնպէս և մեղք արկեալ յիւղ խոստովա-
 նութեան , եթէ խայթուած նորա օծցի նովաւ , լինի
 բժշկութի խայթուածոյն , և հոգին անդորրամնայ , և
 զմնայլի ևս 'ի բժշկիլ խոցուածոյն և 'ի գալ չորհաց .

որպէս 'ի բժշկել մեղաց մագդաղենացը յն՝ * տունն
,, լի եղե 'ի հոսոյ իւղոյն ։, որ օրինակէր զիւղն խոս-
տովանութե . (զուկ . Է . 37 : յովլչ . ժք . 3 :)

Վ. յս խոստովանութե մեղաց որչափ կարեռ է մեղաց-
ցելոյն և օգտակար , այնպափ դժուարին թուի խոս-
տովանողին , որովհետեւ բնութի մարդոյ ջանայ ծած-
կել զլարն՝ զոր արար՝ կամ զոր ունի . որպէս գողն
զգողունին : Ուստի ասէ նյոյն բարսեղ վարդապետ .
('ի մեկն . մարկ . գլ . ժդ .) [թէ * որպէս նա՝ որ զայ-
,, լոյ է գողացեալ միշտ թագուն և ծածուկ ունի
,, (զոր գողացեալն է .) այսպէս և զործող մեղացն
,, հանապազ ծածկէ և թաքուցանէ զմեղքն՝ զի մի 'ի
,, յայտ գայցէ . որով ցուցանեմք թէ օտար են չարիբն
,, 'ի մէնջ . և մեք զօտարն ջանամք յափշտակել անցա
,, գաբարլ ։ :

Հայց յումանս այնչափ տիրէ ամծիթ յայտնելոյ զմեղս
'ի խոստովանութեան , մինչեւ լոել զայն և ոչ ասել . իսկ
այս է անօրէնութե և յիմարութի , անօրէնութի զի է
ստել այ , և զիսորհուրդն ապաշխարութե եղծանել . է
և յիմարութի , զի յիմար է յանցաւորն այն՝ որ ոչ կա-
մի յայտնել զյանցանս իւր յատենի ողորմութե , այլ
յատենի արդարութե : Ունղ զգառնուի խղչի մտացն
որ հանապազ իրբե զորդն կրծէ , և իրբե զիարիչ
խայթէ , և իրբե զսկունդ կաղկանձէ . և հուսկ յե-
տոյ գատապարտէ . որպէս դիսպաւ ու մեմն պեղագիռա
կոչեցելոյ , որ թողեալ զաշխարհ կրօնաւորեցաւ . և
յետոյ 'ի հաւանիլ միոյ մեղաց ոչ կամեցաւ խոստո-
վանիլ 'ի սաստիկ ամօթոյն , մեռաւ առանց խոստո-
վանութե , և դատապարտեցաւ : | մեղանչել մարդոյ
սատանայ բառնայ զամօթն և առ ինքն պահէ իրբե
զաւանդ . և 'ի խոստովանին դարձուցանէ 'ի նա . առ-
նու զամօթն և տայ զամօթն . 'ի կամիլն գործել զլար՝
առնու . 'ի կամիլն յայտնել զայն խոստովանահօր՝
տայ : | ս տայ արդարե . դու ընդէլը առնուս . հար
յերեսս նորա , և զերեսս քո պնդացն , և եթէ կարի
ինն նեղէ զքեզ ամօթ , ապաշխարանք համարեա
զայն . * տեսցէ տէր զտառապանս իմ և հատուցէ ինձ
,, բարիս . (ը . թագ . ժդ . 42 :) Հայց արդ ընդէլը
այդչափ ամացես . չամացես 'ի քնէ 'ի գործելց , և 'ի

փոխանորդէ նորա առաջես . և որ յայտնի է առաջի քնի՝ ծածկես առաջի միոյ մարդոյ . * որ յայտնի է „, մեծին , չիք երկիւղ յայտնութե փոքուն : Դաւ ՚ի միոյ մարդոյ կամիս ծածկել , ած ամցուն ունի յայտնել և հրապարակել յաւուրն յետնում . յորժամ * լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի , և յայտնեացէ վխորհուրդս սրտից : (ա . կոր . դ . 5 :)

Անձնասիրութիւնն է որ կուրացուցանէ զմարդն ամօթով , և տանջէ զնա խոռովայսոյզ խորհրդով . զի առաւելտանջի մարդ ՚ի ծածկելն զմեզս քան ՚ի բանալն . բայց արդ այս ոչ է անձնասիրութիւն , այլ անձնատեցութիւն :

Կան ևս բազումք՝ որք թէպէտ և ասեն զմեղան ՚ի խոստովանութե , բայց փոքրկացուցանելով . որով կամին փոքրկացուցանել զողորմութիւն այ . որպէս թէ նա զփոքրն կարէ թողուլ և ոչ զմեծն . և այսու յիրաւի փոքրկանսոյ առ այսպիսիս ողորմութիւն այ : Անդ սոսա զասին և նոքա՝ որք պատատեն զմեզս ՚ի թէթես , և ՚ի ծրարս բառից . և զայն զնեն առաջի քահանային . * ծրար անիրաւուե է եփրեմ , և ծածկեալ կան մեղք „, նորա : (ովս . ժկ . 12 .) եթէ կամիցիս քակել , զբազումն և զմեծամեծս գտանես ՚ի միջի : Ամանք ևս այնպէս խոստովանին , որով առաւել կամին անմեղ երեխիլ քան մեղաւոր , ուստի և ոչ գտանեն ըզթողութիւն , թէ և համարեսցին՝ թէ գտեալ իցեն : Հակոբ նահապէտ ոչ եթէ զլերկութիւն ցուցանելով էառ զօրհնութի , այլ զթաւութի . խոստովանօդն ևս ոչ եթէ զանմեղութիւնն ցուցանելով , այլ զյանցանս և զծանրութի նոյց յայտնելով գտանէ զթողութի : Ամանք վեր ՚ի վերոյ քննութեր մատշին ՚ի խոստովանութի , ապաստան եղեալ ՚ի հարցումն խոստովանահօրն . ինքեանք են՝ որք մեղան , և կամին զի քահանայն աշխատեսցի . ինքեանք մատամք միով ոչ մերձենան , և կամին՝ զի քահանայն բազկաւ մերձեսցի . ինքեանք երազեցին , և կամին՝ զի քահանայն ասացէ զլերազն և զմեկնութի երազոյն . (զան . բ . 6 :)

Ամանք լոին խոստովանին . մինչև ոչ լսել խոստովանահօրն . և յոչ լսել նոքա՝ ած զիարդ լուիցէ . սոքա մանչելով մեղանչեն , և մնչելով պատմեն : Եթէ ունի-

յին ինչ գովութե արժանի , զայն յատակ ասեն . որով
ոչ միայն ոչ գտանեն զոր իննդրեն , այսինքն է թու-
ղութիւն մեղաց , այլ և կորուսանեն զօր ունել կար-
ծեն . որպէս եղեւ փարիսեցոցն , առ որ հայելով ա-
սէ իդնատիոս վարդապետ . ('ի մեկն . զուկ . Ժը . 14 .)
* զոր խոստովանի ոք առաջի այ՝ կորուսանէ . արդ
,, սա (այսինքն մաքսաւորն) զմեզս խոստովան եղեւ և
,, կորոյս . և նա (այսինքն փարիսեցին) զարդարու-
,, թիւնն , և թափուր գտաւ || :

Ոմանք 'ի խոստովանին ջատագովիշն զմեզսն , որ ոչ
այլ ինչ է՝ բայց եթէ պաշտպանել զայն՝ որ է թշնա-
մի մեծ քան զամ թշնամիս : Խնդէր ջատագովիս զայն՝
զոր անձ մինչեւ 'ի մահ իւր հալածեաց : Խորա չունին
ատելութիւն մեղաց 'ի խոստովանութե . վասն որոյ և ոչ
գտանեն զթողութիւն . զի ոչ խոստովանին յաննենգ
մտաց . իսկ խոստովանութիւնն էապէս սրահանջէ զան-
նենգութիւն . ըստ որում գրէ և սարգիս չնորհայի . ('ի
մեկն . ան . յովհ . ան . 8 . ձառ . թ .) * խոստովանութիւն
,, զայն ասէ (առաքեալն) որ յաննենգ մտաց է և
,, յերկիւղէն այ . որ նախ զմեզս ատէ և անազգէ . և
,, զերեմն իբրև յիմէ և 'ի պատառօղ զազանէ 'ի
,, բաց դարձուցանէ և այնպէս փութայ 'ի խոստովա-
նութիւն || :

Կան այս բազումք՝ որք բացայայտ խոստովանին զմեզս ,
բայց յապաղեն յոյժ՝ ոմանք մինչեւ ցտարի մի . որով
յաճախին մեղք նոցա . և 'ի խոստովանութե անդ յոր-
վակի մոռացեալ լինին : Խըրկիր թողեալ՝ մնախոտի ,
զանպիտանս ևս և զինասակարս բուսուցանէ , սոյն-
պէս և մարդ թողեալ երկար առանց խոստովանութե :
Հերկարաձգիլ աւուրց հերք զլիսոյ քո երկայնին , և
փութաս առ սափրիչս՝ գերծուլ . զինչ կարծես ասրա
զհոգւցդ . ընդէր ոչ փութաս զնալ առ խոստովա-
նահայրդ , զի սրբեսցիս :

Ի խոստովանիլդ անդորրանաս և հանդիս , և հոգի
քոյ ջերմանայ անծային չնորհօք . եթէ երկար 'ի բաց
կաս 'ի խոստովանութենէ՝ սառիս , և տագնապիս . մի
սպասեր սառելոցդ , այլ մինչեւ ևս ցրտացեալ՝ մուտ
վերստին 'ի խոստովանութիւն : Տես զինչ առնէ դար-
բինն . արկանէ զերկաթն 'ի հուր՝ զի կակղասցի , և

հանէ 'ի հրցյ իբր հրացեալ՝ զործել ինչ զնովաւ .
բայց մինչը է սառուցեալ վերատին դնէ 'ի հուր , զի
փութով և գիւրաւ ընկալցի զնախկին ջերմութիւնն .
սոյնպէս պարտ է առնել և մեզ . յետ խոստովանուե
մինչը եմք ցրտացեալ և խոստացեալ՝ զիցուք զմեզ
վերատին 'ի հուր խոստովանութէ :

Ի յապաղիլ խոստովանութէան շիֆանի հոգեօրական
կրթութիւն , և տիրէ անհոգութի . և մնայ մարդ իբր
անզուսպ անսառւն : 'Զի' որ երկար մնայ առանց սան-
ձի , անհեծանելի լինի . սանձ է խոստովանութիւնն ,
զսպեան զբեզ նովաւ : || լրշափ և ազնիւ իցէ ձի , սան-
ձի կարօտի . դու ևս որշափ ոռ իցես՝ կարօտիս սանձի
խոստովանութէան . ապա թէ ոչ՝ համարիս իբր զբեռ-
նաբարձ ձի՝ որ առանց սանձի վարի (համալպէկիրի :)
|| լրա ուրեմն զոր տեսանես յանձննս ածապաշտից ,
խոստովանեան բարւոք . խոստովանեան յաճախի . խոս-
տովանեան հաստատուք , 'ի մտի եղեալ ոչ ևս մեզան-
չել : || յւ յետ խոստովանուե 'ի զալ առթի մեզաց ,
ասաւ . * մերկացայ զպատմուժանն իմ , զիամրդ զգե-
ռ ցայց զնա . լրւացի զոտս իմ , զիամրդ ազտեզեցից
,, զնոտա ॥ . (երգ . Է . 3 :)

Վ ստանօր միւսանգամ զնի բառդ հանդիսա 'ի ձեռա-
գիրս մեր . և յերբայականն բառդ սէլս : || յւ որպէս
ասացաք ('ի համարն 4 .) այլաբանական իմաստ բա-
ռիդ ցուցանէ յառիլ 'ի խորհուրդ նշանակութէ բանից
երկուց տանցդ . ըստ որում ասացեալ լինին 'ի բե-
րանոյն քնի . որ զյանցանս մեր բարձեալ 'ի վերայ իւր՝
եցոյց հօրն երկնաւորի՝ իբրև զիւր մեզս , և պատմեաց
նմա զանօրէնութիս մեր , որպէս զի թողցէ հայր զամ
ամբարշտութիւնս մեզաց մերոց , և արդարացուցէ
զմեզ . յոր միտ ասաց առաքեան , թէ վասն մեր մեղք
եղեւ որդին այ . այսինքն թէ վասն մեր յանձն էառ
զմեզս մեր * զի մեք եղիցուք նովաւ արդարուի այ .
(ը . կոր . Է . 21 :)

Վ ոյլ հայելով 'ի կարդ տանց սաղմոսիս՝ աստանօր
բառդ հանդիս՝ ցուցանէ զընդհատուի կամ զաւարտ
բանիցն . իբր զի աստ աւարտեալ դաւթի զձառ պատ-
մելց զմեզս իւր , զորոց զբեաց յերկուս համարս՝
յայլ իմն օրինակ բանից ձեռն արկանէ , և իբր թէ

զորս ասացն՝ այնը ամենայնի հետեւ եցուցանել, և ասէ :

Է. Ա. Ասն այսորէի յաշօնս իւսցեն առ ժեղ ամ սբէ ՚ի ժամ
ընդունելի :

Եթք ասելով իմանայ նախ զայնոսիկ, որք հաստա-
տեալ են ՚ի չնորհս ՚ի կեանս յայս . երկրորդ՝ զայնո-
սիկ՝ որք թէ և ցիցեն հաստատեալ ՚ի չնորհս, բայց
բարեպաշտութք կեան, և յամի ջանան առնել զկան
այ, որք և ասին երկիւղածք տն . երրորդ՝ զայնոսիկ
որք ՚ի ձեռն ասպաշխարութե որբին ՚ի մեղաց, և ոկսա-
նին վարել զողիղ կեանս . Խամ այլով ինն կարգաւ-
խոսելով սովին այսու իմանայ զայնոսիկ՝ որք են ազատ
՚ի մեղաց, յորս են երբեակ դասք . նախ սկսանողք որք
ասպաշխարութք սրբեալ ՚ի մեղաց՝ զհետ են զախտա-
մեռուցանելոյ, երկդ յառաջացեալք, որոց միտք լու-
սաւորեալ յաճախին չնորհաց՝ զհետ լինին կաստարե-
լութէ վարուց . երրդ կատարեալք՝ որք գերազանցեալ
յառաքինութիւնս միաւորեալ են հոգւով ընդ այ :
Խեանք առաջնոցն կոչի Ճանապարհ մաքրողական .
յերկրորդ գասուն եղելոց՝ լուսաւորչական . իսկ յեր-
րորդինն միաւորչական : Վ. սոսա ամենեսին հայե-
լով ասէ :

Ա. Ասն այսորէի յաշօնս իւսցեն առ ժեղ ամենայն սբէ : Իսառդ
կան այսորէի ՚ի մէջ բերէ աստ վնախազրեալդդ . որ-
պէս թէ եղեալ եր . վասն այսր ամի՞ զոր ասացի, յա-
շօնս իւսցեն առ ժեղ ամենայն սբէ . այսինքն թէ տեսեալ
սբց քոց և երկիւղածաց, և ասպաշխարողաց զայսափիսի
անձառելի գթութեան գործս, որով թողուս ամի՞ որ
խոստովան լինի առ քեզ զմեղս իւր, ևն . յաղօթս
կացցենս առ քեզ գոհութք, ինսդրուածովք և վստա-
հութք . նքան որք սուրբքն են՝ տեսանելով զայսափիսի
գործս ողորմութեան քոյ՝ գոհասացին զքէն յաղօթս :
Խոքա որք երկիւղածքն են՝ մի գագարեսցին ՚ի ինդ-
րելոյ ՚ի քէն աղօթիք զներումն թողեալ մեղաց՝ ըստ
իմաւմս օրինակի, նաև զպահանութիւն շանկանելոյ
՚ի նասին . Խոքա որք ասպաշխարողքն են՝ յիս հայե-
ցեալ՝ վստահութիւն առցեն դիմել աղօթիւք առ քեզ :
Խթէ աստանօր բառդ համ այսորէի դիցի իբր թարմա-
տար, այսու բանիւ ցուցանի գերազանցութիւն և օգտա-

կարութիւն աղօթից . զորմէ բազում ինչ խօսին վարդապետք . ընդ որս և սարգիս շնորհալի ('ի մեկն . յակ . ե . 16 : և 'ի մեկն . առ . պէտ . դ . 7 . ձառ . է .) ասէ . * աղօթքն խօսք է ընդ այ , և յամենայն իրապիտանացու և օգտակար || . և յաւելու զրել . * պիլ ամենայն բարեգործութիւնը (ասէ) նախընծայք են այ . իսկ աղօթքն՝ առաջի նորա կալով ինդրուածք բարեաց են 'ի նմանէ , և թողութեան սարգեք , և ողջութեան մայր , և փորձութեց գագարեցուցիչ , և երկնից մահցն բացող , և զանձ ընդ մարդկան հաշտեցուցիչ || : Եւ զինի յարէ ասելով . * աղօթքն զմարդն հրեշտակ 'ի մարդկանէ յարդարէ , և որա թռիչ առնէ , և յերկինս առաջի այ կացուցանէ || : Որոշէ մարդարէն և զժամանակ աղօթիցն ասելով :

Պամ ընդունելի : Իբր թէ ասէք . աղօթք մատուցանելի են այ , յայնպիսի ժամու՞ որ իցէ ժամանակ ընդունելի . և թէպէտ յամ ժամ արժան է աղօթել և ոչ ձանճրանալ բատ տն բանի (զուկ . ժը . 1 .) սակայն 'ի պատշաճաւորութիւն և յընդունելուն աղօթից հայելով բարեոք ևս է 'ի կարևոր ժամու կալ յաղօթս . Այս ընդունելութիւն ժամու կարէ հայիլ և 'ի հանգամանս չերմ սիրով աղօթելոյ , կամ ասացից՝ չերմուանդութեամք , մանաւանդ յորժամ ազգէ 'ի հոգին շնորհքն այ գիմել աղօթիք առ ինքն : Դանիթը ևս զի այս ընդունելի ժամ կարէ ակնարկել և յայնպիսի միջոց ժամանակի՞ կամ յայնպիսի առիթ ժամու , զորելու կորուսցէ մարդ՝ դժուարաւ գտանէ , կամ դոցէ ոչ ևս գտցէ . որպիսի էր պահն այն կամ առիթն՝ յորում իրօսեցաւ նախան ընդ գաւթայ . զորմէ եթէ անփոյթ չեալ էր գաւիթ՝ և ըսդոթէր՝ այսինքն թէ շասէր՝ մեղայ տն , դժուարաւ գտանէր , կամ թէրեւս ոչ երբէք . զի այն էր վասն նորա ժամանակ ընդունելի . որպիս և եղեն իսկ :

Բառ այսմ ժամ ընդունելի էր և առաքելոց միջոցն կամ առիթն այն կալոյ յաղօթս 'ի պարտիզի անդ՝ զի մտանիցէն 'ի փորձութիւն . բայց քանզի յայնմ ընդունելի ժամու ոչ կացին յաղօթս , զայթակդեցան . և թէպէտ յարեան՝ բայց վասն կորուսանելոյ զժամն

ընդունելի՝ յառաջնումն անդ տկարացան և անկան : Ասամ ընդունելի էր և սաւուզայ միջոցն այն , յորում յանդիմաննեաց վնա սամուել . բայց քանդի նա զանց արար զայնու՝ դիմել աղօթիք առ ած , ոչ ևս եղիս զայլ միջոց , այլ անկեալ յերեսայն այ մասնեցաւ 'ի ձեռս սատանայի , և կորեաւ :

Պատ այսոցիկ ասացելոցս եթէ ումեք 'ի ծառայից այ դիպեսցի վտանգ անկանելոյ , յազդ առնել 'ի նա այ լուսաւորութե մտաց , կամ շարժութե սրտի , կամ յօրդորմամբ քարոզութե , կամ ընթերցմամբ զրոց , (լսու վերոյգրելոցդ) է ժամ ընդունելի կալ յաղօթս , և յետս դառնալ 'ի սիսալանաց , և գտանել զնորոգութե կենաց . ո գիտէ գուցէ թէ և գտցէ զայլ ժամ , բայց չիցէ նմա այն ժամ ընդունելի , և ժամ 'ի գեպ հաշոյ այ :

Եւ թէպէտ ած ոչ կարօտի ժամանակի , բայց քան զի լսու օրինի և լսու կարգի զործէ զամենայն , հայի և 'ի պատշաճաւորութի ժամու . * բժիշկ կարօտ է ժամ մանակի (ասէ գեորգ վարդապետ 'ի մեկն . եսայ .) բայց ած ոչ է կարօտ , զի կարօղ է միշտ . այլ սա կայն 'ի գեպ ժամանակի օգնէ . զի կրկին լիցի ուղ զութին : Կախ զի օգնէ . և երկրորդ՝ զի 'ի գեպ ժամ մանակի օգնէ . այսինքն յայնպիսի ժամանակի ընդոր ինքն համի . ուստի և նոյն լինի ասել . ժամ ընդունելի և ժամ համելի . յայս սակս ըստ որում զըէ սա ինքն գեորգ վարդապետ , զբանն եսայեայ՝ զոր ասէ . (խթ . 8 .) * 'ի ժամանակի ընդունելութե լուսոյ քեզ || . ակիւզաս և սիւմաքոս թարգմանեն * 'ի ժամ , մանակի համուել լուսոյ քեզ || :

Այլ ախրապէս առեալ՝ այս ժամ և ժամանակ ընդունելի հայի յայն վիճակ կենաց՝ յորում չե է անցեալ ժամանակ ողղումութե , կամ յայն ժամանակ՝ յորում մարթ է ժամրդոյ առնուլ ինչ յայ աղօթիք վասն փրկութե հոգւոյ իւրոյ . և այսու նշանակի ժամանակն աստի կենաց . զի այս միայն է ժամ ընդունելի . ուստի ասէ նա ինքն գեորգ վարդապետ . * ժամ , մանակ ընդունելի ցայնքան է՝ մինչ յայխարհի եմք || . զոր և կնքէ առաքեալն ասելով . * ահաւասիկ ժամանակ ընդունելի . ահա օր փրկութե . (ը .

կոր. դ. 2 : տես և 'ի սաղ. կը . 14 .)

Օյայսպիսի ժամանակ ընդունելի կորոյս խորտկա-
ձաշ մեծատունն . կորոյս և յուդայ . կորուսին և յի-
մար կուսանքն . և չարազար ևս կորոյս ձախակողմեան
աւաղակն . ուր աջակողմեանն յափշտակեաց զայն և
նովաւ եզիտ զզրախան . և որշափի ինչ ընդդիմութիւնք
դիաբան նոմա 'ի կարճ ժամանակի անդ , ոչինչ կարա-
ցին ըստնանել նմա : Ոյնպէս պատահի և առենե-
ցուն՝ որք գիմեն առ ած 'ի գէպ ժամանակի . որով
ոչ միայն գտանեն զՃանապարհն փրկուե , այլ և զերծ
գտանին յու և իցէ վտանգից . զոր և յայտ առնե մար-
դարէն 'ի յաջորդ համարն՝ ասելով :

Ը . **Բ**այց դայն 'ի ջուրցն հեղեղաց բաղմաց , որ առ նոսա ինչ
ոչ մերժեցի :

Հեղեղաւ ջուրց փոխաբերաբար իմացեալ լինին ազ-
գի ազգի արկածք փորձանաց , կամ պատուհանք բար-
կութեն այ , որք զան 'ի վերայ հասարակուե , այսինքն
'ի վերայ ազգի , կամ քաղաքի , կամ գաւառի , կամ
թագաւորուե և այն , յոր միտս զրի 'ի մարգարէութե
երեմիայ . (իէ . 2 .) * **Վ**. յայսպէս ասէ տէր , ահաւադիկ
,, ջուրք երմտեն 'ի հիւսիսոյ , և եղիցին հեղեղասք
,, ('ի ջուրց անտի) յողօղանել . և ողօղեսցեն զեր-
,, կիրն լրիւ իւրով || : { Յայսպիսի հեղեղս ջուրց պաշտ-
պանին արզարք 'ի տնէ երբեմն ըստ հոգւոյ միայն , և
երբեմն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ . զոր և յայտ
առնե ած բերանով եսայեայ յասելն . * **Ո**'ի երկնչիր
,, (իսրայէլ) . . եթէ անցանիցես ընդ ջուրս՝ ընդ
,, քեզ եմ , և զետք զքեզ մի ողօղեսցեն || . (եսայ .
իոդ . 2 .) { Յայսպիսի պաշտպանութի այ ակնարկելով
դաւթի՝ ասէ :

Բայց դայն 'ի ջուրցն հեղեղաց բաղմաց , որ առ նոսա ինչ ոչ
մերժեցի : Կամի ասել . որք՝ կան յաղօթս առ ած
'ի ժամ ընդունելի՝ պաշտպանին յայ 'ի գալ ջուրց
հեղեղաց բազմաց , այսինքն փորձանաց . և վնաս ինչ
ոչ մերձեսցի առ նոսա 'ի փորձանաց անտի : Ոյնպէս
և որք յաստի կեանս իբր 'ի ժամանակ ընդունելի ա-
զօթիւք առ ած ապաւինին՝ գտանեն զողորմութիւն 'ի
նմանե յաւուրն դատաստանի . և յորժամ հեղեղ

բարկութեն այ յորդեալ ելանիցէ ըստ գանիլի . (է . 10 .) զերծ գտանին . և ոչ հասցէ նոցա վտանգ 'ի բարկութենէ անտի :

Հարազատ միտք բանի այսր համարոյ այս է . սակայն կայ մնայ մթութիւն շարազրուե յերկուս . մի 'ի բառդ բայց դայն , զրոմէ գիտելի է . զի ընդ այսու բարիւ ի մայցեալ լինի զօրութք և այլ բառ , այսինքն է՝ ոչ երկիցեն , կամ ոչ կասկածեսցին . որով և միտ բանին բացատրի այսպէս . որք 'ի ժամ ընդունելի յաջօթս կան , ոչ երկիցեն յու և իցէ փորձանաց , բայց միայն 'ի ջուրց հեղեղաց . զի այս է երկնուելի . և սակայն անտի ևս վնաս ինչ ոչ մերձեսցի առ նոսա :

Ուարթ է ևս ասել , [թէ բառդ բայց դայն գնի փոխանակ բառիս և . որպէս [թէ եգեալ էր . յաջօթս կացցեն առ քեզ ամենայն նըք 'ի ժամ ընդունելի . և առ նոսա ոչինչ մերձեսցի 'ի ջուրց բազմաց :

Երկրորդ մթութին է 'ի բառդ ո՞ . զի այս բառ կամ յաւելորդս գնի , և կամ զօրութք ունի ընդ իւր զբայդ է . և զայս կարեմք կշռել 'ի բայդ , որ մերձենալ , որ 'ի բազում ձեռագիրս գնի եղակի . [թէ պէտ 'ի կանխառ բանուե դաւթի անյաղթի և 'ի բազումն ևս յոգնակի 'որպէս և յերբ ' . նաև 'ի լամք . և եթէ եղակի դիցի բայդ երբէնալ , ըստ որում և եղաք իսկ . զօրութք գնի և բայդ է , և բացատրի այսպէս . ոչինչ որ է 'ի ջուրց հեղեղաց բազմաց մերձեսցի առ նոսա : Խակ եթէ յօգնակի դիցի , յայնժամ բառդ ո՞՝ գնի յաւելորդս իրը զարդ . մանաւանդ զի այդ բառ ոչ գոյ ոչ յերբայականն , և ոչ յայլ [թարգմանուիս . որպէս [թէ եգեալ էր . ոչինչ 'ի ջուրց հեղեղաց բազմաց մերձեսցին առ նոսա . և կմ ըստ զբելց դաւթի անյաղթի 'ի կանի՞ . սաղմօսաց . * ունիք փորձուե առ նոսա մի մերձեսցին . և եթէ մերձեսցին ևս , ոչ վտանգեսցեն . միայն [թէ կայցէ հաստատութի կամաց , և չշմարիտ ապաւինութի առ ած : Եթէ կամուրջք քաղաքին հաստատուն իցեն շինեալ 'ի սնդակազմ աղիւսոց , [թէ հասցեն հեղեղք ջուրց , ոչ կարեն կործանել . ապա եթէ շինեալ իցեն 'ի [թեթևանիւթ փայտից՝ կասկածելի են , Այնպէս իման և յառաջիկայդ . զի որք հաստատեալ են առաքինութ , անկործան մնան 'ի վշտաց և 'ի փոր-

ձութեց . իսկ որը թայքն են և ծովք , զիւրաւ կոր ծանին : Օ առաջինսն նմանեցուցանէ քո այնպիսի առն , * որ շինեաց զտուն իւր 'ի վերայ վիսմի . իսկ զերկորդո՞ն նմանեցուցանէ այնպիսի առն յիմարի , * որ շինեաց զտուն իւր 'ի վերայ աւագոյ || . (մատ . է . 24 = 27 :) { Յայսպիսիս ակնարկելով մարդարելին դառնայ հայել և 'ի հեղեղ այնց նեղութեց յորս ինքն ըմբռնեցաւ . և կամերալ ըստ օրինակի արդարոց զերծ մնալ 'ի վտանգէ նոցին , աղաղակէ առ ած , և ասէ :

թ . Պառ էս աղաւէն իմ 'ի նեղութեց յայսմանէ , որ շորջ եղն զննեւ :

Որպէս յայտ է 'ի նախազըրելոցդ ('ի համարն 4 .) դաւիթի յետ թողութի գտանելոյ մեղաց իւրոց կրեաց մեծամեծ նեղութիս 'ի սպասիժ այնոցիկ թողեալ մեղաց . ըստ որում և գուշակեաց նմա նաթան յասելն 'ի զիմաց այ . * աչա ես յարուցից 'ի վերայ քո , չարիս || . ևն (թ . թագ . 10 = 15 :)

{ Ետինն այտոցիկ նեղութեց եղեւ հալածումն այն , զոր յարոյց որդի նորա արեւապոմ . մինչեւ ստիպիլ նմա փախչիլ և ապաւինիլ 'ի լեան ձիթենեաց (է . թագ . ժէ . 17 = 30 :) | Եւ յելանելն անդ ել և սէմէի , և դառնազին բանիւք նախատեաց զնա (թ . թագ . ժէ . 5 = 8 :) | Այս նեղութի դաւթի մեծ եղեւ յոյժ . և առաւելաւ ևս յորդամ 'ի նեղութեան անդ լուաւ զմեծ զայն խայտառակութի՝ զոր գործեաց արեւապոմ ընդ կանայս իւր . | Եւ յայս վիշտ վտանգիլ նորա եթէ չեր ցրուեալ այ զիսորհուրդ աքիտոֆիլայ բանիւ քուսեայ արաքացւոյ , 'ի նմին իսկ աւուր կորնչեր դաւթիթ . (թ . թագ . ժէ . 2 :) { Յայս վտանգ նեղութե իւրոց հայե-

լով ասէ :

Պառ էս աղաւէն իմ 'ի նեղութեց յայսմանէ , որ շորջ եղն զննեւ : Պառաւէնն է այն ինչ յոր լինի զերծանկէ 'ի վրտանգէ և մնալ նույստ աներկեան . ուստի և անձն այն՝ յոր զիմելով ոք զերծանի 'ի վտանգէ կամ 'ի նեղութենէ՝ փոխարեւութի ապաւէն կոչի : Պատ այսմ մնաց և գաւիթ ապաւէն իւր կոչէ զած : | Եւ թէպէտ որպէս զրեցաք այժմ՝ ել զաւիթ 'ի լեան ձիթե-

նեաց իբր ՚ի տեղի ապաւինի , բայց առաւել ևս վը-
տանգ էք նմա այն , և ոչ էք հնար անգ մնալով ապա-
տիլ ՚ի ձեռաց արեսազդաց . վասն որոյ ոչ ՚ի լեան
յայն և ոչ յօյլ ինչ այլ յանձ ապաւինի , և զնա մի-
այն ձանալը իւր ապաւէն . զու ես ասէ ապաւէն իմ
և աղատէցուցիչ ՚ի նեղութէ յայսմանէ՝ որ շօւրջ պա-
տէալ պաշարեալ է զանձն իմ :

Խորհրդաբար որովհէտեւ ՚ի լերինն անդ ձիթենեաց
սկիզբն արար տէք փրկէլ զազգ մարդկան (մարկ . ժկ .
26 .) ՚ի լերինն անդ յառաջադոյն ապաւէն եղե զա-
թի , և փրկեաց զնա՝ յօրինակ հանրական փրկութէ
ազգի մարդկան :

• Օ այս փրկութէ իբր փոք և իբր հետեւո՞ի առաջի զնէ
զաւիթ , հայելով յայն , զոր ասաց ՚ի նախընթայ հա-
մարն . այն թէ ոչ ինչ վնաս հաւանէ ՚ի մեծամեծ փոր-
ձանաց առ այնոսիկ՝ որք կարդան առ ան ՚ի ժամ ընդ-
ունելի . զի աշա և նիզն զնոյն ետես . քանզի կարդաց
առ ան ՚ի ժամ ընդունելի , մանաւանդ ՚ի ժամուն
յայնմիկ՝ յօրում անիծէք զնա սեմի և կսկծեցուցա-
նէք զսիրու նորա . * տեսցէ ասէք տէք զտառապանս
իմ և հասուսցէ ինձ բարիս փոխանակ անիծից նորա || .
վասն որոյ * թոյլ տուք նմա (ասէ) զի անիծցէ . զի տէք
ասաց նմա || . (թ . թագ . ժկ . 11 . 12 .) | Եւ զոր ա-
սէք ըերանով վնոյն առ անձ մատուցանէք սրտիւ . և ՚ի
լինել լինել աղաւանաց նորա՝ ոչ եհաս առ նա հեղեղ
վնասու :

Gamma բանք են յօրդոլվ ամ նեղելոց՝ ապաւինիլ աղօ-
թիւք առ ան ՚ի վտանդին անդ յազգի ազցի վշտաց և
փորձութէց . որով ոչ միայն զերծանին անվնաս , այլե-
շահին զառաքինութիս : Ու գուք զգացեալ թէ յառ-
նէ մըրթիկ հողմոյ՝ ժողովին ՚ի փեթակս , և մեզը կաղ-
մէն . և եթէ ըմբռնեսցին ՚ի հողմոյ , առնուն քար ՚ի
ձեռս , և ծանկութք նորա վարին . այսպէս պարտ է
առնել և մեզ՝ ՚ի յառնել նեղութէց և փորձութէանց
ապաւինելով առ անձ : | Եւ եթէ ըմբռնիցինք ՚ի հող-
մոյ՝ առցուք ՚ի ձեռս զշամբերութիւն , ևս և զմոա-
ծութիւն վիմին քսի . և զաւեսցուք առ նա ընդ մարդա-
րին , ասէլով :

Հ. Յնծութիւն . քրիւա զիս յայնշանէ՝ ոյս պաշտօնեցին զիս :

Օք ՚ի վերոյ սպառէն կուեաց , աստ յնծութիւն ասէ : Իսկ յնծութիւն է ներգործութիւն բաղձանաց հոգւոյն ՚ի յարին ՚ի ժառանգեալ բարին : Խւ սա այնու զանազանի ՚ի խնդութէ , յուրախութէ , և ՚ի բերկրութէ , զի է ՚ի ժառանգեալ բարին . իսկ խնդութիւնն , ուրախութիւնն և բերկրութիւնն կարեն լինել ոչ միայն ՚ի ժառանգեալ բարին , այլ և ՚ի ժառանգելին՝ որ յուսով ներկայ իցէ :

Խւ թէպէտ պղսպէս կարիշ զանազանիլ յնծութիւնն ՚ի խնդութէ , ևն . բայց ՚ի գործածութեն բազում անգամ ՚ի տեղի միմեանց դնին . (զայսմանէ տես ՚ի սաղ . թ . 2 .) Իսկ աստ երեխ թէ յնծութիւնն ըստ յատուկ նշանակութեն դնի . վայ զի դաւիթ զրկեալ յանմ ուրախութէ , և ընկճեալ ՚ի հոգի եւր ՚ի վշտաց՝ զիմէ յանձ երը յայն որ ՚ի ժառանգին լինելը նմա յնծութիւն . այսինքն առարկայ յնծութեան . յորմէ զրկեալ տեսաներ զանձն . վասն որոյ ասէ :

Յնծութիւն . քրիւա զիս յայնշանէ՝ ոյս պաշտօնեցին զիս : Յայս բան՝ այս ասացուած յնծութիւն իմ . ոչ է կոչական . այս է՝ ով յնծութիւն իմ . այլ է զրական և ուղղական . որպէս թէ եղեալ էր . դու ես յնծութիւն իմ . որով կամ մի ասել . որովչետև դու միայն ես նշանարիտ յնծութիւն . այսինքն յնծացուցիս իմ . արա զի յնծացայց ՚ի քեզ . և այն՝ ՚ի փրկելդ զիս ՚ի ձեռաց նոցա՝ որ պաշարեցին զիս , և կամին կորուսանել զանձն իմ . և կամ յազատելդ զիս ՚ի վշտաց իմոց , որը յանշնարինս վրտանգեն զիս : Ուր գրէ լամբ . Խւ մեք իսկ ասէ * վաղ ՚ վաղակի փրկիմք ՚ի պաշարողացն (և բերկրիմք) յորժամ յնծութք և սիրով զպարանոցաւ նորին (քսի) անկեալ զայս բարբառիմք . մանաւանդ թէ զգեցեալ զնա ինքն , յնծութիւն մեր կոչեմք ըստ վարդանայ : Վայլ թէ եգիտ արդեօք դաւիթ զայս փրկութիւն , և զիանդ եգիտ . և զինչ ևս ակնունելի էր նմա գտանել զնանէ ՚ի յաջորդ համարն ասելով . ՚ի մէջ մատուցանէ ՚ի յաջորդ համարն ասելով .

ԺԱՅ. **Ա**մասունք արտիշ զբել, և խելամուռ՝ ի ճանապարհ, յոր և գնացես. և հասուստեցէ ի վեր ուղ զաջն է:

Վայս բան է իբր պատախանի ՚ի զիմաց ոյ առ այն ամ, զոր ասաց դաւիթ յայսմ սաղմնոփ. յորում և նկարագրեաց զինքն մեղուցեալ դոր, և անկեալ ՚ի վիշտ. և խոստովան ևս եղեւ զմեղս իւր, և հաստատութե խոստացաւ պատմել զայն և ոյինչ թագոցանել. **Ո**չ ամբաստան եղեւ զումեքէ վասն անկանելոյ իւրոց ՚ի վիշտ. այլ զանձն իւր եցոյց պարտաւոր:

Ոչ յուսացաւ յայլ ոք առ ՚ի ազատութի դտանել ՚ի վշտաց, այլ զամ յցա իւր եղ յած. ՚ի նա ապաւինեցաւ, զնա խնդրեաց, և ՚ի նա միայն հաստատեաց զելս հնարից փրկութե իւրոց: **Ո** ան այսր ամի և ած իբր պատախանելով առէ ցնա. որովհետեւ այդպիսի խոնարհութ զիմեցեր առ իս, և միայն յիս յուսացար, ցուցից և ես քեզ, զոր արժան է առնել: **Ո**մին իբր առէ:

Ամասունք արտիշ զբել, և խելամուռ՝ ի ճանապարհ, յոր և գնացես: Ամաստան առնէ ած զմարդ՝ յորժամ ուսուցանեն նմա ՚ի ներքուստ զայն ամ որ պատշաճի յաւետ տեսական կենաց ըստ վիճակի և ըստ որպիսութե նորուն, կամ յորժամ հաղորդէ մարդոց զիւրոց իմաստութե զյոյ՝ առ ՚ի ճանաւել զկամն նորա, և զպարտաւորուի անձնն իւրոց. և ես առ ՚ի հասու լինել թէ քանի բարի է ած, և թէ քանի բարի առնէ ծառայից իւրոց. քանի չար է մեղքն և հեռանալն յայ. և որ պիսի յիմարութի է անհամբեր գտանիլ ՚ի վիշտ, ևն: **Ո**յնպէս խելամուտ առնէ ած զմարդ՝ ՚ի ճանապարհ բարւոք գնալոց, յորժամ ուսուցանէ նմա զայն ամ որ պատշաճի յաւետ գործնական կենաց ըստ վիճակի և ըստ որպիսութե նորին. կամ որ նոյն է, յորժամ ուսուցանէ մարդոց, թէ ՚ի զործեն զինչ պարտ է առնել՝ զի գործ իւր իցէ հաջոյ այ. և ՚ի զիսպիլատթի մեղաց՝ զիտասայէ խոտորիլ անտի:

Վայս է՝ զոր առէ. և խելամուռ արարից զքեզ՝ ՚ի ճանապարհ, յոր և գնացես, այսինքն է՝ յոր ճանապարհ և գնասցես կամ որ նոյն է՝ զինչ և զործեսցես՝ ցուցից քեզ՝ թէ զիսպիլ պարտիս զնալ և զործել, և ՚ի զը-

նալդ ու խոնջիլ :

Վասամբ իմ յայս հայի և այն զոր ասէ խմաստունն .
* զՃանապարհս խմաստութե ուսուցանեմ քեղ , խե-
ռ բաժուտ առնել զբեղ ուղիղ շաւզաց . զի եթե զը-
ս , նասցես , ոչ խափանեսցին գնացք քո . և եթե ըն-
թանայցես , ոչ վաստակեսցիս || . (առակ . դ . Ա .
երբ . Ժ . Ա .) Բայց քանի պահանջի ի այն և
յատուկ տեսութիւն այ առ ի մավանդ գնալ , յա-
ւելու , և առէ :

ԼԵ հաստատեցի ՚ վերայ ու պաշտի : Առք ասի յած
այլեայլ մոտօք , երբեմն փոխանակ գիտութե նորա՝ մա-
նաւանդ այնը գիտութե , որ յածարանից կոչի գիտուի
տեսութե : Երբեմն փոխանակ բարուե նորին կամ զը-
թուե . և երբեմն փոխանակ բարկուե : Կակ աստ զնի
փոխանակ տեսութե կամ հայրական նախախնամուե ,
զոր ունի ած 'ի վերայ այնոցիկ՝ որք բարդովին յօւսան
'ի նա : Օ այս հայրական ինտոն իմ ասէ հաստատե-
ցից 'ի վերայ քո : Վէ ասէ զարձուցից առ քեզ զառ
խմ , կամ ցուցից քեզ զինամն իմ . այլ հաստատեցի ,
որով նշանակի անշարժ ինսամ ունին այ 'ի վր նորա :
Եւ այսու կարէ նշանակիլ նաև բարերարութիւնն յա-
րատեռութե չնորհաց , որ է պարզե գերագոյն , զոր
առնէ և տայ ած ընտրելոց իւրաց ձրի :

Բարոյապէս , իմաստուն առնէ ած զմարդ և խելա-
մուտ 'ի մտածական աղօթս յառանձնութե իրը յանա-
պատի . ըստ այնմ . * Խարգեցից զնա իրբե զանա-
պատի . և խօսեցաց 'ի սրտի նորա . (ոլս . դ . Ա .)
Եթէ ելանեմք յանապատ , այսինքն յառանձնութիւնն
հոգւոյ՝ ելանեմք և յիմաստութիւնն այ . և խելա-
մուտ լինիմք խորհրդոց նորա , և փափաք մեր գիմէ 'ի
վեր . * ով է առ որ ելանէ յանապատէ իրբե զստեզն
ծխոյ ինկեալ . (երգ . դ . 6) զի յառանձնուե հոգ-
ոյ՝ յօրժամ կայ մարդ 'ի մոռառական աղօթս՝ ջեր-
մանայ և սիրան իրը յանապատի , ըստ որում ջերմ
է անապատն . և յայնժամ ելանէն 'ի սրտէ անտի բոր-
բոքմանք և տենամոնք իրբե զստեզն ծխոյ ինկեալ :
Ես զի իմաստութիւնն այ ջերմից յայնէ զմնքն . յորօ
օրինակ ած յայնեաց զմնքն աթրահամու 'ի տօնեա-
ժամու (ծնն . Ժ . 1 .) յանապատ տեղով : Ի հա-

բաւային ջերմ անսպատէ եկն դշոյն սարայ առ ՚ի
մատչիլ՝ ի լուր խմատութեան . (դ . թագ . ժ . 1 .) ՚ի
կամիլ այ վերացուցանել զեղիս՝ հաճեցաւ զի առանձ
նասցի (դ . թագ . ժ . 9 .) և հըեզէն կառօք վերաս
ցի (դ . թագ . թ . 11 .) յշէ ոչ կարես վերանալ
հըեզէն կառօք , թառեա խոնարհութե թեօք . որով
ոչ միայն շահիս , այլ և ՚ի նետից բանսարկուին զեր-
ծանիս . զի որ բարձր թռչի , ՚ի նետից ասլի . որոց
վասն յորդորինք հայիլ՝ ի թռչօղս յերկինս . (մատ .
դ . 26 .) Խակ որք անփոյթքն են թռչելոյ , այսինքն
խոկալոյ և մտաւորական աղօթից պարապելոյ , մնան
անխմատք , և գասին յանասնոց համարի . առ որս
գարձուցանէ մարդարէն զրան իւր , և ասէ :

ԺԵ . **Ո**վ լինիւ որպէս պիս և զջուն . զի ոչ ոչ ՚ի նոսա
լի մատութե ՚ի սանիս և ՚ի դուրսանաւոնդս ճշմ-
լուցէս պիշտա նոյս :

Վ նասունք կամ չորթսանիք յայտ է թէ ոչ վարին
բանիւ , այսինքն խորհրդով մտաց , այլ զգայութքը
միայն . իբր զի որ ինչ առարկի զգայութե նոցա՝ ըստ
այնմ զգածին . եթէ իցէ ախորժական՝ մանաւանդ
հեշտալի , ՚ի նոյն ձկտին՝ ոչ հայելով ՚ի չարն , որ հե-
տեի այնր , զի ոչ զիտեն . Խակ եթէ իցէ անախորժ ըզ-
գայութեան՝ յետս կան անտի , ոչ հայելով ՚ի բարին ,
որ այնը զհետ զայ , զի ոչ իմանան . և պատճառ այս
պէս վարելոյ նոցա այս է զի ոչ գոյ խմատութիւն ՚ի
նոսա , այսինքն բանսական ձանացումն , այլ զգայական
միայն՝ որ զգգալէ օքս յածի : Վ յափիսեաց նմանեցու-
ցանէ մարդարէն զայնսախիկ՝ որք ոչ պարապին երկ-
նային խոկմանց . և ոչ վարին ըստ խմատութեն այ ,
կամ ըստ ուղղութեան օրինաց նորա , ոչ ՚ի յաջողուիս ,
և ոչ ՚ի ձախորդութիւն , ոչ ՚ի յանդորրութեան և ոչ ՚ի
նեղութե . այլ կամին ըստ իւրեանց հաճոյս վարիլ .
ումանք ըստ ձիոց և ումանք ըստ ջորեաց . ըստ որոյ և
մարդարէն ձիոց համեմատէ զայնոսիկ՝ որք խրոխան
են և ամբարտաւանք , և առ չարիս խինջան . խկ ջո-
րեաց համեմատէ զայնոսիկ՝ որք ապերախան են , և
անձնունդ ՚ի բարիս . զորս կամելով յետս ընկրկէլ
ասէ :

Ո՞ք լինի որպես զիս և զջորիս . զի ոչ գոյ ՚ի նուա է հասպա-
նիւն : Որպէս թէ ասեր . զուք որք բանականքդ էք ,
մի վարիք սոսկ զգայութքը , որպէս վարին ձիք և ջո-
րիք : Եղա այնպէս վարելով անմեղաղբելի դատին ,
զի ոչ ունին զիմաստութիւն . խոկ զուք ոչ այնպէս . վո-
զի ունիք միտու , ունիք բանականութիւն , ունիք և լոյս
բանի , և զանձնիշխանական զօրութիւն . վասն որս ոչ
միայն յանցանք են ձեզ , այլև ամօթ մեծ՝ զգայութք՝
վարելով նմանիլ ձիոյ և ջորւոյ :

Բատցի * ամօթ մեծ || . զի ամօթ է պատուականա-
գունին՝ նմանիլ յոռեգունին քան զինքն . (զորմէ տես
և ՚ի սաղ . լլ . 7 .) Եւ առաւել ևս մեծ ամօթ է ,
եթէ ոք կարգեալ զորվ առ գերազյն վախճան՝ յա-
րեսցի ՚ի վախճան սսորագունից . արդ մարդն կար-
գեալ է առ յաւիտենական կեանս . խոկ ձիք և ջորիք
առ ժամանակաւորս՝ առ որս հայելով բարսեղ վար-
դապէտ ասէ . (՚ի մեկն . մարկ . գլ . թ .) * ձիոց , և
.. իշուց , և եզանց միայն է պիտոյ կեանքս այս . զի
.. աստ միայն է պիտանացու սպասաւորութիւն նոցա || .
Վաս անշնարին ամօթ է մարդոյ ըստ սոցա կեալ և
ըստ սոցին վարիլ :

Վարգարէն զձիս և զջորիս միայն յիշելով սոքօք
զնիմ անրան կենդանիս կամի յիշեցուցանել , այսինքն՝
թէ զայնոսիկ , որք կատարեալ են ՚ի տեսակի իւ-
րեանց , որպիսի են ձիք , եղջերուք են , և ունին ծը-
նունդ . և թէ զայնոսիկ , որք արտաքոյ են տեսակի ,
և են խառն ինչ , որոց ՚ի բազումն պակասի և ցան-
կութիւն և ծնունդ , որպէս ՚ի ջորիս :

Դիմանմէ թերեւս զնէ զայնոսիկ կենդանիս միայն՝
յօրինակ անձին իւրոյ . քանզի և ինքն եղև երեմն
իրըն զձի . զի ՚ի տեսանեն զբերսաբէէ՝ զգայութք
միայն վարելով շարժեցաւ ՚ի նա , և որպէս զձի խիլն-
ջաց առ նա , եղև և իրըն զջորի՝ զի ոչ գտաւ երախ-
տագէտ առ ուրիսա . այլ կիցս ընկեց ՚ի նա , և սպան
զնա , Վրդ ասէ մի ըստ խմում օրինակի լինիցիք իր-
ըն զձիս և զջորիս : Եւ եթէ բերեալ ևս իցէ ձեր
զնմանութիւն նոցա , մի մնայք ՚ի նոմին . այլ օրինակաւս
խմով զգաստացարուք . ապա թէ ոչ՝ պատուհասիք

յայ . մանաւանդ եթէ փոխանակ զգաստանալոյ՝ առաւել ևս խստասջիք 'ի չարիս . Իշ զայս յայտ առ նէ յաջորդ բանիւն . բայց ոչ խօսի 'ի դէմա նոցա . զի մի երեւեցի մեծաբանել առ նոսա . այլ առ ած խօսի յասելն , թէ նուաձելոց ես զնոսա սանձիւք և դան դանաւանդիւք :

Ռարոյապէս՝ զգրաստոս միայն 'ի մէջ բերելով մարդարէին , տայ խմանալ զանարգութիւն մարմասրաշտից և աշխարհասիրաց . ողբ իրը զրասա վարին յիշպանէ այսինքն 'ի սատանայէ 'ի հաճոյս նորին . որ և իրը զիւրս ծառայեցուցանէ զնոսա 'ի բեռնակրութիւնս ազգի ազգի մեղաց և ախտից . Ի՞սբ կենդանէաց խորշի , զի են 'ի ձեռս հովուաց . կրծտէ այն զատամունս իւր 'ի վրա նոցա , այլ ոչ համարձակի յարձակիլ 'ի նոսա . իսկ ողբ հանգոյն երէոց փախչին յաշխարհէ և իրը թէ վայրենանան 'ի մնոտեաց , և ելանեն 'ի բարձունս , պնդի զշետ նոցա , որսալ զնոսա . քանովի յայտ է , թէ որ սորդք զայապիսիս որոնեն , և ոչ զգրաստոս . կամ զօրս ընտանացեալ են աշխարհի . Վ. Ա. Մէկը պահէ զնոսա 'ի ձեռաց որսորդաց նոցին , զի յուսան 'ի նա . զգրաստորն ևս ոչ թողու ած , այլ յորդորէ և խրատէ . և եթէ ոչ ողբեցին , պատուհասիւք նուաձէ . և զայս կամելով ցռւցանել մարդարէին յարէ զինի և ատէ :

Բ առիյա և է դանդաստանարա ձմէսցէս պէտիս նոյս , որ առ ժեղ ինչ ոչ մերժեսցին : Վ. յս բան եթէ անմիջապէս առ անսասունս հայիցի , մեկնի այսպէս . անսասունք չունելով զրանականութիւն՝ խրատիւք ոչ ողղին , և բանիւք ոչ զնան ըստ հաճոյս մարդկան , այլ ձիկելով զկզակս նոցա 'ի ձեռն սանձից և դանդանաւանդից , ապա թէ ոչ՝ հեռացեալ մեկնին և փախչին ևս , և ոչ մերձեսցին , այսինքն ոչ մնասցէն առ որում են , և ոչ ծառայեսցեն նմա : Իսկ մարդոս ունելով զրանականութիւն՝ խրատիւք ուղղի . ապա թէ ոչ՝ 'ի կարգս անսանոց համարի , և առ քեզ ոչ մերձենայ՝ վասն որց հարկ լինի ըստ անամոց կառավարէլ զնոսա սանձիւք :

Խակ եթէ այս բան անմիջապէս հայիցի առ մարդիկ , մեկնի այսպէս . ողպէս մարդիկ նուաձեն զձիս և զթո-

ըիս՝ գնելով ասնձս և դանդանաւանդս 'ի կզակս նոցա ,
զի մի ըստ իւրեանց համցից , այլ ըստ կամ մարդ -
կան գնացեն , սոյնպէս առնես առէ և դու ընդ այ -
նոտիկ՝ որ առ քեզ ինչ ոչ մերձեսցին :

Չայս բան բառով ո՞՝ կրկնակի կարէ առեալ լինել .
մի՝ փօխանակ պատճառական շաղկապիս չէ . յոր միտս
կամի ասել . ձմիւցես զկզակս չարաց , զի ոչ ևս մեր -
ձեւցին առ քեզ , այսինքն մի ևս յանդկնեսցին մեր -
ձենալ առ քեզ . այսինքն հակառակ կալ կամ կիցս
արձակել , այլ նուածեսցին և հնազանդեսցին քեզ :
Այսմ մեկնութեն նպաստէ երբ . որպէս տեսցի 'ի հա -
մեմ" , Երկրորդ առեալ լինի փօխանակ յարարերա -
կանի . յոր միտս ընդ հակառակն մեկնի այս բան . որ
պէս թէ ասէր . ձմիւցես զկզակս նորա՝ որք ըստ հա -
մցից կամաց իւրեանց գնալով ոչ կամին մերձենալ
առ քեզ , այսինքն զառնալ առ քեզ և ըստ կամաց քոց
վարիլ :

Կզակ ասելով՝ իմանայ կամ զանձնիշխան կամ այս -
պիտեաց , կամ զամբարտաւանութիւն նոցա , և կամ
զանտանաբարդութիւն նոցին : Խակ ասնձիւք (զոր այ -
լազգիք էն կուեն) մարթէ է իմանալ զներբինս պա -
տիժս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ , որպիսի է տազ -
նապ 'ի կամ , խաւար 'ի միտս , և այն . ևս և՝ տըրտ -
մութիք , հիւանդութիք , ևն . Ոյնպէս և դանդանա -
ւանդիւք , (զոր այլազգիք կուեն զանդըն) մարթէ
է իմանալ զարտաքին պատիժս , որպիսի են աղքա -
տութիւն , հրկիզութի , յափշտակութի , զերութիւն ,
հալածանք , աքսորանք են :

Որինք ձմիւ , այսինքն նուածէ և զապէ ած զայ -
նոտիկ՝ որք ոչ կամին մերձենալ առ նա . բայց ոչ
միօրինակ , այլ պէսպէս օրինակաւ կամ ըստ այլեւ -
այլ վախճանի . Օ ոմանս նուածէ՝ առ 'ի զջաստա -
ցուցանել . որպէս եղեւ տրդատաց . որում նախառէս
եղեւ մեծն 'ի խոստովանուզ . (յագաթ . յերես 24 .)
Եւ զայս օրինակ նուածեց յաձախ 'ի զործ ածէ
ած՝ առ 'ի ձգել զմարդիկ առ ինքն , զի կամի զա -
մենեցուն փրկութիւն : Օ ոմանս առ 'ի խրատել .
որպէս եղեւ նաբռուգողնոտորայ . որում ետ վկայու -
թիւն զանիէլ ասելով . * ընդ զալանս անսալատի եղիւ

ցի բնակութիւն քոյ . և խոտ իրբեւ արջառոյ ջամփեսա-
ցին քեզ . . . մինչև ծանիցես թէ , տիրեւ բարձրեալն || :
(գան . դ . 22 :) Օ ամանս առ ՚ի մերժել . որպէս ե-
ղեւ ամստիրոսի . զորմէ վկայէ . երկրորդ զիրն մակա-
բայեցոց (թէ . 5 :) Օ ամանս առ ՚ի խառիսնել ՚ի չա-
րէ՝ որ պատահելց էր այլոց ձեռամբ նոցա . որպէս
եղեւ սեներերիմայ . առ որ և ասաց ամձ . * արկից վա-
րապանակ ՚ի ցառեկա քոյ , և դանդանաւանդ ՚ի կզակո
քոյ || . (եսայ . լէ . 29 :) Օ ամանս առ ՚ի բռնադա-
տէլ , զի ծանիցեն զանձ , և մի զինքեանս անձացուա-
ցին . որպէս եղեւ փարաւոնի (ելից . դ . 3 :) Խակ
զոմանս ոչ աստ , այլ թողու ՚ի հանդերձեալն նուա-
ճել ՚ի հուրն յաւիտենական :

Խարոյապէս , սովին խրատիմիք նուաճել զմարմինս
մեր , որ իրբեւ զկատաղի ձի ըստ հանցյա իւր կամի գր-
նալ , և ըսկենուու ևս զմեզ ՚ի գետին . և իրբեւ ջո-
րի խիստ խոտորնակ ընթանայ , և խոտորեցուցանե-
զմեզ : Իրբեւ ձի վրնջայ ՚ի գարշելիս , և իրբեւ ջորի
անձնուու կայ ՚ի զործո բարիս : Վայսկիսի գորով
ոչ հաճի , և ոչ խեկ թողու զմեզ մերձենալ առ փրկիչ
մեր . վասն որոյ հարկ է ձմկել զբանութիւն նորա սան-
ձիւք նուաճութեան , և զխստութիւն նորա դանդանա-
ւանդիւք հօգեւոր կրթութեան , ապա թէ ոչ կորնչի և
կորուսանէ , և ՚ի բազմնաբաստիկ տանջանս որորէ ըլ-
մեզ . որպէս է տեսանսել ՚ի մոլի մարմնաբաշտո , զո-
րոց խօսի մարդարէն ՚ի յաջորդ համարն յիշատակու-
թեամբ տանջանաց նոցա , ՚ի մէջ բերելով միանգամայն
և զերջանիկ վիճակ արդարոց , յասէլն :

ԺԿ. **Բ**ազմամասն էն մշուսորաց . բայց ոյս յասան-
՚ի ուշը , ուշը մասնէն ուն շուշը եղեցի զնուօս :

Տանջանք մեղաւորաց շրեքին են . մի ՚ի մեզանչեն
անդ ՚ի զործողութենսէ անտի մեղաց , զի թէպէս և
խաւարեալ գորով ՚ի միտոս ուշ ոչ զնեն , և զրեթէ
ոչ զգան , բայց սարաշար կրեն զոր զգալ ոչ ախոր-
ժեն : Երկրորդ՝ յետ մեզանչելոյն ՚ի խողնէ մտաց .
իր ՚ի ներքին զահճէ . որպէս և յայտ է : Երրորդ՝ ՚ի
ժամանակաւոր սրատեց , զոր կրեն երրեմն վասն մե-
ղաց : Առջրորդ՝ ՚ի յաւիտենական դատապարտութենէ :

Եթէ չիցեն ապաշխարութեր արդարացեալ : Հայտափկ
հայելով ասէ :

Ի մասնաւ բանջանեն են հըղուորաց : Որպէս թէ ասէր . մի կարծեսցեն մարդիկ՝ թէ 'ի հանգստեան են մեղա-
ւորք , ու այդպէս է , այլ բազում տանջանք են նոցա ,
զի թէ ասու , և թէ 'ի հանդերձեալն կրեսցեն պա-
տիժս : Ես աւ նոյն իսկ մեղքն , որ կայ 'ի նոսա , և պա-
տիժ մեծ , որ ծնանի և զայլ անհամար պատիժս 'ի
հոգիս նոցա և 'ի մարմինս , և յարտաքին իրս : Ե հոգիս՝
պատիժ տրտութեան , պատիժ երկիւզի , պատիժ
անմիմիթարութե , ևն . և մանաւանդ պատիժն խղձի
մտաց , որով զըեթէ իսկզի կեանք նոցա . * Խանա-
,, պարհ վատաց լցեալ փշով (խղձի մտաց) || . (առակ .
ժե . 19 :) Երջնակս և 'ի մարմինս բազում անգամ՝
պատիժ հիւանդութեան , պատիժ ցաւոց , պատիժ սո-
վու , ևն : Եւ առ արտաքս՝ պատիժ աղքատութե , պա-
տիժ բանտարկութե , պատիժ հըօյ , ևն : Եւ յետ ամի
պատիժ յաւիտենական դատապարտութե :

Եսայի , * մանաւանդ պատիժն խղձի մտաց || . զի աս
է որդն այն՝ որ յաւիտեան ոչ մեռանի . և զորս կեն-
դանի պահէ յաշխարհի ասու՝ հանապազ մեռուցանէ
ազգի ազգի վշտօք և հոգով , ահիս և խաւարաւ , ևն :
Ե տեսանել քոյ զմեղաւորն՝ հայեաց 'ի սիրտ նորս և
'ի խորհուրդս . յորս տագնապի յամ 'ի կեանս իւր 'ի
կան 'ի մեղս : Բատ որում ասաց եղիփազ թէ մնացի .
* ամ կեանք ամպարշտի հոգովք . և ահ (խղձի մտաց)
նորա յականջս նորա , յորժամ (ստութեր) համա-
,, րիցի թէ 'ի խաղաղութե իցէ՝ եկեսցէ կործանումն
,, (խաղաղութե) նորա . . . մի համարիցի գառնալ 'ի
,, խաւարէ . զի հրամայեալ է արգէն 'ի ձեռս երկա-
.. թոյ (չար խղձի) || . (յոր . ժե . 20 = 22 :) Որպէս
պատահեցաւ եփիպատացոց . զօրոց գեղեցիկ իմն խօ-
սի իմաստունն ասելով . * զի զօրեալ համարէին ընդ
,, զաղտնեօք մեղաց , ընդ անձանձանը յիմարութե ա-
,, ռազաստիւ ցրուեցան . անհնարին յիմարեալք և
,, խուճապիւք խոռովեալք . քանզի և ոչ որ ունէր
,, զնոսա մթութի աներկիւզա պահէաց . զի բամբիւնք
,, զիշերականք շուրջ զնոքօք պատեալս արքեցուցա-
,, նէին . և ցնորք ժպիրհք խոժոռադիմացն երևէին || .

(իմաստ . Ժէ . 3 :) «Քանզի որպէս զրէ բանագիր ոմն
 (աւրեռու) . որք ըմբռնին՝ ՚ի չար խիղջ մտաց . * ՚ի
 ստուերէ զարհութին , և ՚ի բոմբիւն ձայնի երկնչին || .
 ըստ սմին զրէ , և այլ ոմն բանաստեղծ յոտանա-
 ւորն իւր զայսպիտակաց յասելն , * այտոքիկ են՝ որք
 զարհութին , ՚ի կայծականց այլագունին . ՚ի հնչել
 ձայնի պակչին մնան , և յորոսալ երկնից դողան || .
 Տունն շարժեցաւ , մեղաւորն սստանեցաւ . եհաս զի-
 շեր , եհաս և խաւար խղճի . եկն հիւանդութի , եկն
 և նուազումն պրտի : «Քանզի զիտէ՝ որ ՚ի մեղս է՝ թէ
 զնած ունի իւր վրէժիննդիլ , թշնամի զհըեշտակս , և
 ոսխ զսատանայ : Եշ եթէ ինքն ոչ կամիցի զիտէ՝
 աղաղակէ խիղճն մտաց , և տայ նմա զիտէ՝ զօր ոչն
 կամի նանաչել . և զի միշտ ընդ նմա է՝ միշտ ահարե-
 կէ զնա , որպէս առնէր ընդ կայէն : Եշ եթէ կալեալի-
 ցէ զքեզ այս գահիճ . ՚ի թողուլգ զնա՝ առաւել կաշ-
 կանդէ . ՚ի մեկնիլդ . ՚ի նմանէ՝ զգեսնի հարկանէ . ՚ի
 զուշլգ առ նա՝ սարսափեցուցանէ : Եշ եթէ մեղար , ՚ի
 ձեռս նորա մտանեցար և ՚ի տանջանո ըմբռնեցար .
 ՚ի զուր ելանես ՚ի զրօսանս . ՚ի զուր չըջիս ՚ի պար-
 տէզս . ՚ի զուր խօսակցիս ընդ ընկերս . ՚ի զուր բազ-
 միս ՚ի խրախճանս . զի ոչ թողու զքեզ . նաև զնամն
 յարուցանէ ընդդէմ քո , իբր զի զնամն տայ քեզ հա-
 մարիլ ոսխո չարեաց քոց :

Պատմի (առ պլուտարքոսի) թէ բեսսիոս յետ սպա-
 նանելոյ զհայր իւր , (զօր տակաւին չէր ոք իմացեալ՝)
 իբրեւ հրաւիրեցաւ ՚ի կոչունս , նիզակաւ իւրով ընկեց
 զրոյնս ծիծուանց՝ որք կային անդ . և ՚ի հարցանել
 կոչնականայ : թէ ընդդէր արարեր , ետ պատասխանի
 * ոչ լակէ զի ծիծուունքդ ընդդէմ իմ խօսին և վկայեն
 լինել ինձ հայրասպան || . խարեցաւ սա , զի ոչ ե-
 թէ ծիծուունքն , այլ խիղճ մտայն էր՝ որ գուշէր յա-
 կանջս հոգւոյ նորա՝ թէ գու սպաներ զհայր քո . * և

, ահ նորա յականջս նորա || :

Ուր և զնայր կայէն՝ համարէր թէ լերինք և անտառք
 յայսնեին զինել նորա եղբայրասպան . և կարծէր
 թէ վասն այնորիկ անեքին յարձակեալ էին ՚ի վերայ
 նորա ՚ի սպանանել զնա . սմին իրի ասէր . * անց որ
 գտանմէ զիս՝ սպանցէ զիս || . (ծնն . դ . 14 .) Օայս

և այլք ասացին . և ոմանք կարծելով թէ հասեալ իցեն սպանօղք՝ անձաւիք անձին սպանին զինքեանս . որպիսի և սաւուղ եղեւ , որ ասէր ցկապարձակիր իւր . * սպան զիս . զի կալաւ զիս մութն անհնարին || . (բ . թագ . առ . 9 .) մութն խղջի մտաց էր , և ոչ երկիւղի թշնամեաց . որում ոչ կարաց տանիլ . անկաւ 'ի վերայ սրոյ իւրոյ , և մեռաւ (առ . թագ . լդ . 5 :) Քանզի այս նեղութի խղջի 'ի սաստկանալն կապէ զմարդն 'ի յուսահատութի չար , և յուսահատուին ածէ 'ի մահ : Խակ որ 'ի հարկանել խղջի մտաց զգաստացեալ՝ զղջայ 'ի վերայ մեղաց , և դիմէ յողորմութիւնն այ՝ ոչ միայն ազատի 'ի նեղութենէ անտի , այլև նա ինքն ած նովին նեղութք խղջի մտաց փակէ ընդդէմ նորա զՃանապարհս մեղաց . ըստ այնմ (ովսեայ . բ . 6 .) * վասն „ այնորիկ ես փակեցի զՃանապարհս (չար գործոց) „ նորա փշովք (խղջի մտաց) || : Եւ ողորմութիւն նորա պահէ զնա յամ կողմանց . սմին իրի յարէ զինի , և ասէ :

Պայշ ոյտ յուսան 'ի ուր , ուշը մութի քն շուրջ եղեցի զնոտօք : Եսինքն նոքա որք դառնան առ ած , և 'ի նա միայն դնեն զյոյս իւրեանց , և կամ նոքա որք երկիւղածքն են յայ , և զնա միայն ունին իւրեանց յոյս և ապաւէն , յամի թէ և 'ի մարմնի գոլով կրեն բազում նեղութիս , բայց յամի կան անդորր . և պատճառն է , զի ուշը մութի քն շուրջ եղեցի զնոտօք :

Ողորմութին այ է իբր գետ բարերարութե , որ պատէ զքաղաք հոգւոյն շուրջանակի , կամ մանաւանդ թէ իբրև ովկիանսոս ամ բարութե . որ 'ի հեղանին 'ի վերայ ապաշխարողաց կամ արդարոց , լիազուցանէ զնոսա ամ բարեօք . ապա եթէ շուրջ պատեսցէ զնոքօք , երկոքումը երանելի առնէ զնոսա , այսինքն պաշտպանելով 'ի չարեաց , և ուրախ առնելով 'ի բարիս , որով և լինին նոքա իբրև պարտէզ ոռոգեալ , և երկնային ուրախութք բարգաւաճեալ : Քայսպիսի վիճակ տեսեալ դաւթի զարդարսն գոչէ առ նոսա , և ասէ :

ԺԴ . 1-րան եղեւու և շնծայէտ արտարտ 'ի ուր . պարծեցարտ ամենեւեան , ոյտ ուշեւ էտ սըտիւտ :

Վարդարէն 'ի սկզբան սաղմոսիս երանի ետ այնոցիկ՝

որք գտեալ զթողութիւն մեղաց արդարանան . իսկ 'ի
վախճան սաղմոսիս ուրախակից լեալ ընդ նոսա խրա-
խուսէ զնոսա խնդալ և ցնծալ 'ի տէր : Բայց քանզի
տեսանէ ևս թէ ոչ պակասին փորձութիւնք , և յամ
կողմանց յաճախեն նեղութիւնք , սովին բանիւ յորդո-
րէ զնոսա ոչ միայն ուրախանալ , այլև հաստատուն
մնալ յարդարութեան , և մի դրդուիլ փորձութք իւիք ,
որպէս զի կարասցեն մնալ նաև յուրախութեան , և 'ի
նոյն ցնծալ . սմին իրի ասէ :

Ա-բան եղերուս և շնծայէտ արդարէ 'ի դր : Այս կրկնումն
բառի , այսինքն ուրախ լինել և ցնծալ ցուցանէ զառա-
ւելութի բերկրութեան . ող թէ ասացեալ էր , արժան
է ձեզ ուրախանալ և ցնծալ յոյժ ով արդարք . զի
ունիք պատճառ ուրախանալոյ . քանզի հաճոյացեալ
էք այ , և ած հաճոյացեալ է ձեզ , փարեալ էք զողոր-
մութք նորա , և ողորմութիւն նորա շուրջ պատեալ է
զձեօք . նա և զի առանց թոյլ տալոյ նորա ոչինչ պա-
տահեսցի ձեզ , և եթէ նեղութիք հասցեն 'ի վը ձեր ,
դուք նոքիմքք զհաճոյս այ կատարելով գանձէք ձեզ
վարձս մեծամեծս յարքայութե : Եւ եթէ յանհնա-
րին վիշտս ևս մատնեսջիք , թէ ըստ հոգւոյ և թէ ը-
մարմնոյ , բերկրեսջիք 'ի տէր ասելով , վասն քոյ մե-
ռանիմք զօրհանապազ , և թէ ոչ են արժանի չարչա-
րանք ժամանակիս հանդերձելոցն փառաց , որ յայտ-
նելոց են մեզ : Եսոյն յայս ակնարկելով յարէ զկնի
և ասէ :

Պարծեցարուս ամին ոյտ ուշել էտ սրտիւս : Պարծին ըստ
ինքեան առեալ ոչ է բարի , որպէս և յայտ է . և սա-
կայն պարծին 'ի տէր ուղիղ մոտք ոչ միայն է բարի ,
այլև գերազանց գործ առաքինութեան : Եւ այս լինի
երրակի . մի՝ տիրապէս 'ի փառս այ . որպէս եթէ ոք
բերկրեալ յած՝ ասացէ 'ի միտս , զիարդ սքանչելի է
մեծ վայելչութիւնն այ , զոր եսս պաշտեմ . քանի հզօր
է կարողութի հաստին իմոյ ևն . և զայսպիսիս ասե-
լով ցնծասցէ 'ի հոգի իւր վասն ունելոյ զայնպիսի տէր ,
և ոչ վասն ունելոյ զմեծութիւն , կամ զզօրութի կամ
զիմաստութի ևն . մի՝ պարծեսցի իմաստունն յիմաս-
տութի իւր , և մի՝ պարծեսցի հզօրն 'ի զօրութի իւր .
և մի՝ պարծեսցի մեծատունն 'ի մեծութի իւր . այլ

„ այնու պարծեսցի՞ որ պարծիցին՝ իմանալ և ձանա-
շել զտէր , և առնել զիրաւունս և զարդարութի՞ ՚ի
„ մէջ երկրի ॥ . (առ . թագ . ը . 9 :)

ԵՐԿՐՈՐԴ լինի՞ ՚ի բարին՝ զոր ընկալեալ է ոք յայ , և
կամ զոր ընդունելոց է . և այս լինի՞ յորժամ մարդ
իբր զոհանալով զայ ասէ ՚ի միտս իւր . այ եմ ես , յայ
ունիմ զոր ունիմ , նորա է ամ . նովաւ կեամ , և նո-
վաւ ցնծամ , նովաւ կարեմ առնել զայս ինչ և զայն .
՚ի նմա է յոյս իմ , և նա հանդերձեալ է ժառանգե-
ցուցանել ինձ զփառս արբայութե . յայս միտս և վորց
ասի . * պարծեսցին ՚որքն փառօք . || (սաղ . ձխթ . 5 :)
ԵՐՐՈՐԴ՝ լինի՞ ՚ի նեղութեան , յորժամ ոք վասն սիրոյն
այ կրելով զայն՝ ՚ի տէր յուսայ և ասէ ՚ի հոգի իւր .
քեզ համբերեմ և վասն քո համբերեմ տր , պատրաստ
է սիրտ իմ կրել զամ և մեռանիլ ևս վասն քո , զի այն
է իմ ուրախութի և փառք , ևն :

Օ այսոսիկ երիս տեսակս պարծանաց առաջի դնէ
պօղոս առաքեալ յասելն . * **Պ**արծիմք յուսով փա-
ռացն այ (այս հայի յերկրորդն) . . . այլեւ պարծիմք
՚ի նեղուիս մեր (այս հայի յերրորդն) . . . պարծիմք
ևս յած ՚ի ձեռն տն մերոյ յոհի քուի . (այս հայի յա-
ռաջինն) || . (հռովմ . ե . 2 :) **Ի**ստ այսց երից մտաց
դնի և աստ բառս պարծել հայելով առաքարան . որ
պէս թէ ասացեալ էր , ոչ միայն արժան է ձեզ ուրա-
խանալ , այլ և պարծիլ , և իբրև թէ զեղուլ յուրա-
խութեան :

Օ այսպիսիս կոչէ մարգարէն ուղղասիրտս՝ յասելն .
ոյտ ուշիւ է սրտիւտ . որով նշանակին արդարքն , այսինքն
նոքա որոց միտք և կամք համաձայն են ուղիղ կանո-
նաց , այսինքն ածային և բնական օրինաց . նոյնպէս
և ՚ի ձեռն շնորհաց և առաքինութեց ուղղեալ են ՚ի
թիւրութէ մեղաց և ՚ի խոտորնակութէ անկարդ կրից :
Այցա ասէ վայելէ պարծիլ ՚ի տր բանիւք և գործովք .
վասն զի յուղղութենէ սրտի յառաջ զայ ուղղուի բա-
նից և կատարելութիւն զործոց ՚ի հաճոյս այ իբր զե-
ղումն ինչ ածային ուղղութե . զորոյ զիսութին ունին
աննիազ ժառանգել ՚ի կեանսն յաւիտենականս :



ՍԵՎՈՒԱԼԻ

Յորդորումն խրախուսանաց առ արդարս՝ օրհնել զած
վասն ամենառատ ողորմութեն նորա, և ամենակարօղ
զօրութեն. և վասն անբաւ իմաստութեն նորա, ևս և
վասն ինսամոցն, զորս ցուցանէ յարարածս իւր՝ ստեղ-
ծագործութք և նախախնամութք իւրով:

Խաղմու ՚ի դա-ին:

Յնծայէտ արդարս ՚ի աէր՝ ուշաց վայելէ օրհնութիւն.
խոստովան եղերու պան օրհնութք. առանազէա-սառ
մոսարանա-սաղմու ասայէտ նմա: 2 (Օրհնեցէտ վայեր յօրհնու-
թինոր՝ զէ բարի է. սաղմու ասայէտ նմա օրհնութք: 3 Ուշա-
ցն պատրամտ պան. և ամ գործս նորա հաւաքավչ էն. և սիրէ
վաղութա-թի և վերասունս աէր: 4 Ուշութք պան լու եղեւ եր-
իւր, և բանի-պան երիշնէ հաստատեցան. և հոգու բերանոց
նորա ամ զօրութիւն նոյա: 5 Խաղովէաց որպէս ՚ի աէիս վար-
ծովու. և տնէ ՚ի խորս վայնչս եւր: 6 Երիշնէ ՚ի պան ամ
երիւր. և ՚ի նմանէ դողասցն ամ բնահիւս աշխարհի: 7 Օ է
նա ասայ և եղեն. ինչն հրամայեաց և հաստատեցան: 8 Տէր
սրու-է վերաբնութու հեթանոսաց. անարգէ աէր վերաբնութու ժո-
շվարտոց. և արհամարհէ աէր վերաբնութու եւեանաց: 9 Խոր-
հութ պան յաւիտաւան մաս, խորհութ որոի նորա աշխէ մինչեւ
յաղդ: 10 Երանի աշխէ՝ որոյ աէր ամ օգնական է նմա. ժողո-
վարտ վաս ընտրեաց ՚ի ժաւանգութիւն եւր: 11 Յերինիւ նայե-
ցա-աէր յամ որդիւ մարդիկան. ՚ի պատրաստ բնահութենէ եւրնէ
հայեցա-յամ բնահիւս աշխարհի: 12 Ուտեղծ առանչին վայրու-
նոյա: ՚ի միա առնու զամ գործս նոյա: 13 Ուշ մէ ՚ի բաղու-
զօրս եւր ապրեսցի թագաւոր, և աչ սիայ ՚ի բաղու-մ զօրութեան
իւրում: 14 Ու-ու է յի ՚ի գունութեան իւրում. ՚ի բաղու-մ զօ-
րութեն ու ապրեցութանէ զհեծեան: 15 Ուշ պան ՚ի վե-
րայ երիւ-շածաց եւրոյ. և ոյտ յաւսան յուշութիւն նորա:
16 Փրիւլ ՚ի մահուանէ զանչինս նոյա. իւրահիւլ վնս ՚ի սովու:
17 Ունչինս մէր համբերեւոցն պան. զէ օգնական և պաշտպան
մէր է: 18 Ունա սրախ եւեցին սիրուտ մէր, և յանուն սբ նորա

19 Եղացէ սղբմանէ ու ուեր՝ ի վերայ մէր . ու
ուեր յառաջառ ՚ի ուել :

ՊԵՐԵԳԻՎԻ ՎԻՐ

Աղման ՚ի դատին :



ԵՐԵՎԱԳԻՎԻ ՎԻՐԵՅՅԵՑԻԱՅ
բնաւ ինչ վերնագիր ու զնի յայս սաղմուս
մաս . յոյր սակս ՚ի տպագրեալ սաղմուս
մեր , նոյնակս և ՚ի լամբ” . գնի . * Վնվերնագիր ՚ի
Հեքրայեցւոց || . | ձեռագիրս մեր առ հասարակ՝
նոյնակս և ՚ի թարգմանութեան եօթանասնից և լատի-
նացւոց ևն , զնի ըստ զնելոյ մեր սողմուս ՚ի դատին :
Կան և ձեռագիրք , յորս յաւելեալ լինի և բառդ՝ ՚ի
հապարած . այսպէս ՚ի հապարած սողմուս ՚ի դատին : Ոմն
նման զնի և առ ումանս ՚ի նախնեաց : | սկ թէ ով եղ
զայս վերնագիր՝ ու է յայտ . հասարակաց կարծիք է .
թէ եօթանասունք եղին :

ՎԱՅԼ թէ յինչ առթէ իցէ ասացեալ դաւիթ զայս
սաղմուս , ու ուստեք ցուցանի : Ոմանք ասեն , թէ
զայս ասաց յետ զերծանելոյ ՚ի վտանգէ անտի , յոր-
ժամ հարկանելոց էր զնա յեսրէ հսկայ . և ապրեցոյց
զնա արեսսա որդի շարու չեայ . (ք . թագ . իս . 46 :)
Ոմանք , թէ զայս ասացեալ իցէ այնու առթիւ որով
ասաց զնախընթաց սորա . և թէ այս սաղմուս է իրը
շարունակութիւն նախընթաց սաղմուսի . զի վերջին հա-
մար նր , և առաջին համար սորա ՚ի նոյն բան շարայա-
րին . զի անդ ասի . * Ուրախ լերուք և ցնծացէք ար-
շարք ՚ի տէր || , իսկ աստ ասի . * Հնծացէք արդարք
՚ի տէր || , ևն :

Կան ևս ու սակաւք ՚ի նախնի մեկնաց՝ որք պնդեն ,
թէ զայս ասացեալ իցէ եզեկիայ արքայի յետ գտա-
նելոյ զբժշկութի՞ ՚ի հիւանդուէ իւրմէ . յայս հայի և
կարծիք զարդանայ . այլ այս շունի զտեղի : | չթէ
այսպէս և եթէ այնակս բանք սաղմուսիս ՚ի չորս ինչ
հային . մի՞ ՚ի յորդորանս արդարոց առ ՚ի օրհնել զած

ցնծութիւն : Աշրկրորդ՝ 'ի յայտարարութիւն ուղղուե և
արդուրութեան օրինաց և գործոցն այ : Աշրբորդ՝ 'ի ցոյց
ողջումութե և կարողութե և խնասութեան այ և տես-
չութե նորա : Ըստրորդ՝ 'ի յանդիման կայուցանել,
թէ առանց օգնութեան այ ոչինչ յաջողի, վասն որոյ
արժան է համբերել նմա և օգնական ունել զնա, և
այնու գտանել զողորմութիւն նորա :

Բ Ա Դ

iii. ♫ Նծայէս արդարէ 'ի ուր ։ Հաղոց վշյելք օրհնութիւն .
ինսուսական եղբայրութիւն օրհնութիւն այլութիւն . ապահովացած
աշխատաբանութիւն սաշման առաջընկած :

ՄԵԿԵՐԵՒԹՅՈՒՆ

Ուրդարէն բոլորովին յափշտակեալ 'ի սկը այ և 'ի
գովութիւն նորա, և առեալ զքաղցր ձաշակ օրհնութե
նորին՝ ոչ շատանայ ինքնին միայնակ ցնծալ առ ամծ
օրհնութիւն . ուստի և զարդարմն 'ի նոյն հրաւիրէ : Իսկ
արդարք ասելով ոչ իմանայ սոսկ զայնոսիկ՝ որք առաւ-
քինութիւն արդարութե իցեն զարդարեալ, այլ յաւետ
զայնոսիկ, որք ըստ երբեակ կարգի արդարք իցեն .
այսինքն արդար առ ամծ, արդար առ ընկերն, արդար
և առ անձն : Վրդար ասի մարդ առ ամծ, յորժամ ձա-
նաշէ զնա՝ իւր արարիւ . իւր տեր, իւր վախճան, և իւր
մի միայն բարի . և ըստ ձանաշէլոյն սիրէ զնա 'ի վեր
քան զամ : և հաւատարմութիւն պահէ զամ պատուի-
րանս նորա : Վրդար ասի մարդ առ ընկերն, յորժամ
բարի խորհի զնմանէ, բարի խօսի, և բարի առնէ . և
ոչ երբէք չար՝ ոչ խորհրդով, ոչ բանիւ և ոչ գործով :
Վրդար ասի մարդ առ ինքն . յորժամ ըստ ուղիղ բա-
նի կառավարէ զամ գործողութիւն իւր զնելըն և զար-
տաքին . ոչ զմարմին իւր աղտեղէ վավաշուտութիւն
որկրամոլութիւն, և կամ անխոհեմ սոււաղութ և տքնու-
թիւն . և ոչ զհողին զքաղեցուցանէ 'ի մնութի իրա, և
յանսկիտան հոգս և 'ի հալիչ տրտմութիւնս, և յաւե-
լըրդ ուրախութիւն . ևն : Վայսիսիրս տիրապէս կո-
չին արդարք 'ի սուրբ գիրս . առ սոսա ահա խօսի աստ

մարգարեն ասելով :

Յնծայէ՞ որդոր՞ 'ի ուէք : Ծառդ յնծալ ոչ նշանակեաստ սոսկ ուրախանալ 'ի հոգին , այլ ուրախանալով օրշնել զած և գովել . զի յայս բերի դիտումն սաղմուիս . մանաւանդ զի և յերայականն այնպիսի բառ դնի , որ նշանակեաստ ուրախանալով երգել և գովել . յոր միտս ակիւղաս օրհնեցէ՞ թարգմանէ , և սիւմաքոս երդեցէ՞ ուստի և յասելն ցնծայէ՞ արգարք 'ի մըր , սովին յորդորէ օրշնել զած ցնծալով , և ցնծալ յած օրշնելով . որպէս թէ եղեալ էր . օրշնեցէ՞ և գովեցէք զած ոչ բռնադատութեամբ սրտի , ոչ արտմութը հոգւոյ , ոչ տարակուսանօք մաաց և ոչ թուլութեամբ մարմնոյ , այլ ցնծալով և ախորժանօք ներընովք , յուրախանալն անդ ընդ փառս նորա . և ևս՝ ոչ ձայնիւ միայն , այլ և սրտիւ . և ընդ հակառակն՝ ոչ սրտիւ միայն , այլ ձայնիւ : Իսկ թէ ընդէ՞ր առ արգարք յորդոր լինի այսպիսի ցնծութը ցնծալ յօրշնութէն այ՝ տայ զպատճառն ասելով :

Ա-լլա՛ Հայել օրհնութէ : Ուզգօք իմանայ զնոսին իսկ զարդարն . և կոշէ զնոսա ուղիղա՞ ըստ երկուց . մի զի ուղիղն ըստ ֆիզիգական և ըստ մաթեմաթիզական նշանակութէն ցուցանէ զայն՝ որ անստերիւր տարածի , և ունի զմէջն հաւասար ծայրից . արդ՝ որք տիրապէս արդարքն են՝ անստերիւր ընթանան 'ի գործու իւրեանց . և նոյն իսկ գործողութիւն իւրեանց իրբ մէջ՝ հաւասարի ծայրից , այսինքն դիտաւորութէն նոցա և վախճանի գործոյն . դիտաւորութեանն՝ իրբ առաջին ծայրի , և վախճանի՝ իրբ վերջին ծայրի :

Լյրկրորդ՝ զի ուղիղն ըստ հասարակ նշանակութէն ցուցանէ զայն՝ որ է համաձայն կանոնի . և յայս միտս յաձախ 'ի գործ ածի այս բառ 'ի ոք զիրս . և ըստ բարոյական առմանն նշանակէ զայն , որոյ կեանքն համաձայն է բարոյական կանոնաց . այսինքն ածային օրինաց , և բնական լուսոյ , կամ անմոլար խղճի մտաց . ևս և որ ըունի զթիւրութիւն :

Այսպիսեաց ասէ վայել օրշնութիւն , այսինքն սոցամիայն արժան է օրշնել զած : Լու պատճառն է , զի այնոցիկ միայն արժան է օրշնել զած , որոց համոյանայ ած , որ է անչափ ուղղութիւն . և զի ուղղոց համոյա-

նայ անըստի ուղղութին այն՝ ուղղոց լինի արժան օրհնել զած : Եւ եթէ ուղղոց՝ ապա ոչ ևս մեղաւորաց կամ ամբարշտաց որպէս առէ սիրաք . (ժե . 9 .) * Ու է վայելու գովութիւն՝ ի բերան մեղաւորի . մանաւանդ թէ ըստ ասելոյ սաղմոսերգոյն՝ առէ ան այն պիսին . * իսկ դու ընդէլը բնաւ պատմես զարդարութիւն՝ իմ՝ ի բերան քո : Օ ի դու ատեցեր զիրաս իմ . մերժեցեր և յետս ընկեր, ցեր զամ բանս բերանոյ իմոյ . (սաղ. խթ . 16 .) ուր ոչ միայն ցուցանի անվայելու լինել մեղաւորաց գովութիւնն այ, այլև առաջի զնի պատճառն անվայելու լինելոյ . իբր զի նոքա որովհետեւ մերժեալ են զուղղութիւն օրինայն այ, ոչ ևս կարելի է նոց ցնծալ առ ան ան գովութիւն . ապա միայն՝ ի բերանս արդարոց կարէ փայլիլ գեղեցկութիւն այնր գովութեւ : Իսկ թէ զի՞նչ պարտ էր առնել արդարոց՝ ի գովել զած՝ յայտ առնել ասելով :

Խաստական է վշտու քն օրհնութէ : Խաստովան լինելն առ ան օրհնութիւն՝ ըստ ձայնին առեալ՝ նշանակէ տարածել առաջի նորա զբանս յայտնիս մեծվայելութեան նորա, և կամնելի զօրութեւ և բարերարութեն նորին, են . որպէս առնեմք յաղօթս յասելն՝ քոյ է մեծութի . քոյ է կարողութիւն, դու արարեր զամ : և այն որ՝ կարզի : Օ սոյնպիսի բանս յորդորէ մարդարեն ասել արդարոց առ ան յօրհնելն զնա : Ի սայի՛ * ըստ ձայնին առեալ , զի ըստ փոխակերպութեան առեալ՝ նշանակէ գովել զած գործարանաւ ցնծութեան . յոր միտս բառս օրհնութէ՝ ըստ ոճոյ ձարտասանից զնի աստ ՚ի մերս փոխանակ այնք՝ որով օրհնութի մասուցանի առ ան, այսինքն փոխանակ նուազարանի օրհնուեւ . ուստի և յերբ՝ . զնի պէտինուս, այս է ժամբէ . սոյնպէս զնի և յայլս . ուր լամբ՝ . զնէ ազաղակաւ՝ ՚ի տեղի օրհնուեւ (զորմէ տես՝ ՚ի ներած . զլ . ժ .) Ա Յ Լ առ ցուցանելոյ մարդարեն զառաւելութիւն պատուականութեւ երգարանին և երգոյն, յասելու և առէ :

Տառաջն սաղմուրանու սաղմուրանու առաջէ ՚իմ : Սաղմուրանն է նուազարան սաղմոսելոյ . մանաւանդ այն որ բազմազի է կամ բազմաթել . է՝ որ տասնազի, և է՝ որ երեքտասանազի , այլ զի հայելով յառաջիկայ

բնաբանդ յարմարագոյն էր տասնաղեայն առ սազմուանուագութիս , նմին իրի 'ի նոյն յօժարամտէցուցանել կամելով՝ ասէ * տասնաղեաւ սազմոսարանաւ ։ սազմոս ասաց!ք նմա ։ . որպէս թէ եղեալ էր . սազմոս ասացէք նմա մի սոսկ երգելով , այլ և ըստ եղանակի երգելոյն՝ սազմոսարան տասնաղեայ հարկանելով :

Հարոյագէս՝ տասնաղեաւ սազմոսարանաւ սազմոս ասէ մարդ առ ան՝ յորժամ ոչ միայն ձայնիւ , այլև տասն մատամբէք ձեռաց , այսինքն գործովք ձեռաց սազմոսէ առ տէր , մանաւանդ կատարելով զտասնաւրանեայ պատուիրանս այս , և այս առաւել ըստ պատշաճի հայելով՝ի մերա . զի բառդ պատուիրանք՝ տասն գրով բաղնիւսի , որպէս և բառդ առողջութագ . ուստի և սազմոսասայն տասնաղեայ սազմոսարանաւ օրչնէ զան ՚ի գործո՞ յորժամ կատարէ զտասնաբանեայ պատուիրանս այս , զամենայն ուղիղ սրտիւ . վասն զի որպէս՝ի տասնաղեայ նուազարանի՝ եթէ մին 'ի թելից չիցէ յարմարեալ և ուղղեալ բառնի ներդանակութի , տոյնպէս եթէ մին 'ի տասնաբանեայ պատուիրանաց ոչ լիցի յարմարեալ բառնի բարեկարգութիւնն , և խանգարի տասնաղեայ սազմոսասացութիւնն :

Վ ուաւել ևս պատշաճագոյն յարմարի այսպէս սաղմոսել հաւատացեալ քրիստոնէի . վասն զի և անունութիւննեայ տասն գրով բաղկանայ , որպէս և անունութիւննեալ . վասն որոյ եթէ քրիստոնեայ ոք կամ հաւատացեալ ոք կատարեսցէ զտասնաբանեայ պատուիրանս այս , իբր տասնաղեայ սազմոսարանաւ լինի սազմոսասաց առ անձ :

Վ յսպիսիս 'ի հարկանել զբնարս սազմոսաց , այսինքն 'ի սազմոսէն և յաղօթելն՝ զարհուրեցուցանէ զեւս և փախուցանէ զնոսա . որպէս առնէր դաւիթ . զի 'ի հարկանել նորա զսազմոսարան իւր . հալածէր զեն 'ի սառուղայ . (ա . [թագ . մը . 10 .]) Վ յսպիսիս հանդարտեցուցանէ նաև զանկարգութիւն շարժման սրաի իւրոյ , մանաւանդ՝ թէ ինքն լինի այնպիսի իմն նուազարան , յորում շարք լարիցն համաձայն հնչեն . միտքն , կամքն , սիրտն , զգայութիքն , և գործք համե-

մատ և համաշափ անծային օրինաց . և ինքն հոգիաշեալ և քրիստոնէական առաքինութեալ զարդարեալ 'ի ներքոյ և արտաքոյ՝ ցնծայ ընդ քրիստոնէայ լինել իւր , և առաւել մեծ համարի զայն քան զն և իցէ մեծութիւն և զփառս աշխարհի . Արպիսի էր լուտովիկոս թագաւոր զաղղիոյ . որ 'ի չնորհաւորին վասն թագաւորելոյն՝ ասաց . * ցնծամ , զի ծնեալ եմ քրիստոնէայ . Իսկ վաս քրիստոնէայն զանուն քրիստոնէի միայն կրելով , արձան իմն է զգեստաւորեալ քրիստոնէութեալ . արձան անձայն . արձան անգործ . արձան անձայն . արձան անգործ . արձան անկերպարան . Դրդ որովհետեւ դնէ աստ մարգարէն սաղմոսել բերանով և նուագարանաւ , այս կարէ ակնարկել և յերկու ինչ 'ի մարդն . այսինքն է սաղմոսել բերանով ըստ ստորին մասին . Խւ ևս սաղմոսել նուագարանաւ ըստ ստորին մասին . Խւ ևս սաղմոսել ըստ այնմ Ճանաշման՝ որ լինի 'ի յայտնութէն այ , այսինքն 'ի բանից 'ոք զբոց . և սաղմոսել ըստ այնմ Ճանաշման՝ որ առեալ լինի յերեելեացն . մինն հայի 'ի գերբնական կարգ , իսկ միւսն 'ի բնական . զի մարթէ է ըստ այսց երկուց Ճանաշմանց ևս սաղմոսել առած , և սաղմոսելով օրհնել զնա . քանզի և նոյն իսկ սաղմոսելն է օրհնել զած . իսկ թէ զոք հանգամանապարտի ունիլ օրհնութիւն սաղմոսացն՝ յայտ առնէ մարգարէն կրկնելով զբան իւր յասելն :

բ . () բնաւշէն զնը յօրհնութէն նոր՝ զն բարի է . սաղմոս ա . սաղմունութէ :

Դ յս բան է իբր բացատրութիւնախընթաց համարոյն , և 'ի նոյն կարդի . զի ասելն՝ * օրհնեցէք զոք յօրհնութիւնոր , հայի յայն՝ զոր ասաց . * խոստովան եզ զերուք տն օրհնութեալ . և թէ * ցնծացէք արդարք 'ի տէր . իսկ ասելն * զի բարի է . սաղմոս ասել , հայի յայն՝ զոր ասաց . * Աւզոց վայելէ օրհնութիւն . Այսպէս և ասելն * սաղմոս ասացէք նմա օրհնութեալ . հայի յայն՝ զոր ասաց . * Տասնաղեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացէք նմա . Ի վերոյ եգ զօրհնութիւն . իսկ աստ յաւելու և զնորութիւն այնը ասելով :

() բնաւշէն զնը յօրհնութէն նոր : Իառադ նոր՝ յերիս հայի աստ , մի 'ի նորութիւն զգածմանց հոգւոյ բանիւք օրհ-

նութե՞ն , իբր թէ նոր օրհնութիւն բղխելով 'ի հոգւց
մերմէ՝ նոսինն նոր օրհնութք օրհնեսցաւք զնոր , ու եթէ
նորոց յօրինելով , ապա թէ ոչ պարտ էր հանապազ
փոփոխութիւն առնել 'ի ժամերգութիւն , այլ թէ յասելն
զազմոսս կամ յերգելն զերգս օրհնութեց՝ սիրտ մեր
ևս զեղուցու նոր զգածմանս իբրև զցոլմանս սազմո-
սաց և օրհնութեց . զի թէ այսպէս ուլինիցին նիւթա-
պէս լինի սազմոսել և օրհնել . իսկ այս ըստ ուշադիր
լինելոյ ներգոյանայ . զոր օրինակ եթէ որ յերգելն
զօրհնութիւնս այ՝ ուշ զիցէ բանին խորին խոնարհու-
թք , և կացեալ առաջի այ՝ լնդարձակութք ոգւց
'ի նա զսիրտ իւր ուղղիցէ , սովին այսուիկ յայն արտա-
քին օրհնութիւն նորա խառնի ներքին իմն նոր օրհնու-
թիւն . որով և լինի այն՝ օրհնութիւնոր մարդոյ . և այս
յաւետ պատկանի 'ի նորս եկեղեցի . իսկ եթէ ուշ ոչ
զիցէ՝ ոչ այնմ , զոր ասէ՝ և ոչ այնմ , զոր յասելն
պարտ էր իմանալ , այն օրհնութիւն նորա է իբր հին ,
արտաքին և նիւթական , և է օրհնութիւն մարդոյ .

զուցէ և չնչաւոր ոգւց :

ԵՐԿՐՈՐԴ՝ հայի 'ի տարազ օրհնելոյն . իբր զի մի իբր
սովորական ինչ երգեսցի օրհնութիւն . այլ իբր նոր ,
որպէս թէ օրհներգօղն ինքնին նորոց շարադրելով
ասէր զայն ըստ զրելց զրեկորի արշարունաց ('ի նե-
րած" . կու . ընծայ .) առ որ յորդորէ և չնորհալին զբա-
հանայս յընդհանրականի իւրում (երես 47 .) * եթէ
" սազմոսերգութիք են (ասէ) և եթէ ընթերցումն որ
" զրոց , եթէ պաշտօներգութիւն և եթէ քահանայա-
" կան աղօթք որյ պատարագին և այլոց կարգադրեալ
" կանոնացն , (մի անցջիք անհոգ ,) այլ յոյժ մտաւորա
" բար . և թէ գոյ հնար . արտասուօք և մեծաւ եր-
" կիւ . որպէս թէ զուք նորոգապէս բղիսէիք զնո-
" սա 'ի սրտէ և 'ի մտաց ձերոց || : Վագա թէ ոչ ոչ մի-
" այն ոչ լինի այն նոր օրհնութիւն , այլ և ոչ հին , և կամ
թէ իբր զմեռեալ ինչ . որպէս պատահի նոցա , որ
յաճախ ասելով զբանս օրհնութե , և 'ի նոյն սովորե-
լով փոխանակ 'ի նոսին բերկրելոյ՝ վեր 'ի վերոյ ան-
ցանեն :

ԵՐՐՈՐԴ՝ հայի յեղանակն նուագելոյ . իբր զի շար-
ժիչ և ազգու եղանակու , և իբր հոգիաշունչ ձայնիւ

երգեսցի օրհնութիւն այ . և իցէ այնքան համեղ և զուարձալի , մինչև նոր թուիլ . ապա թէ ոչ ոչ միայն լսողին այլև նմին իսկ երգեցողին լինի տաղտկալի . Արդ՝ ինդրէ մարգարեն ոչ այսպիսի անհոգի օրհնութք , այլ նոր օրհնութք օրհնել զտը . և նովին նոր օրհնութք սաղմոս ասել նմա , զի այս միայն է լնդունելի այ , և առ այս յարէ :

Օ է բարէ է . սաղմոս սասացէք նմա օրհնութք : Մարգարեն ուրեք ուրեք դնէ՝ օրհնեցէք զտը սաղմոսիւք , և ուրեք ուրեք որպէս և աստ , սաղմոս ասացէք նմա օրհնութք , երկորին ևս 'ի նոյն հային . (զորոց տես 'ի ներածութէ , գլ . դ . ևս և 'ի սաղ . ձխթ . 1 . և 3 . և 'ի սաղ . ՃՃ . 3 .)

Արդ՝ զոր ասաց 'ի վերոյ , օրհնեցէք զտը յօրհնութիւնոր , նոյն է՝ զոր աստ առաջի դնէ հանդերձ յաւելուածով իմն . որպէս թէ ասէր . յօրհնելն ձեր զտն նոր օրհնութք , նովին օրհնութք սաղմոս ասացէք նմա , կամ որ նոյն է , սաղմոսւթք ձեր լիցի նոր օրհնութիւն , և նոր օրհնութք , և տայ զարատնառն ասելով . * զի բարի է . որպէս թէ ասէր . նոր օրհնութիւն ասացի , զի նոր օրհնութիւն է բարի , այսինքն կատարեալ օրհնութիւնի համոյ այ :

Օ այս եղեալ 'ի մէջ բերէ ապա և զիրաւունս այս պիսի օրհնութք օրհնելոյ զնծ՝ վասն պէսպէս պատճառաց , այսինքն վասն ուղղութեան պատգամաց նորա , վասն հաստատութէ գործոց նորա , վասն առատութէ ողորմութէ նորա , ևն : { յայսոսիկ ակնարկելով ասէ :

Պ . **Ա** ղիշ էն պատգամէ պն . և ամ գործէն նորս հասաւունք էն . և սիրէ զողորմութ և շնչառունք պք :

Պատգամն է բան 'ի մեծէ առ փոքրն ասացեալ , կամ բան զօրաւոր և ընտիր . այսպիսի բան եթէ իցէ համաձայն ուղիղ ձանալման ասողին , և համեմատ ընդունակութէ լսողին . ևս և յարմար աննենդ դատողութեան այլոց . ասի ամ մասամբ ուղիղ . և զի այսպիսի են բանքն այ . վասն այսորիկ ասէ :

Ո ղիշ էն պատգամէ պն : Այսինքն ու և իցէ բանք՝ որք միանգամ ասացեալ են յայ բերանով մարգարեից , թէ պատուիրանք իցեն և թէ իրաւունք , ամենեին

ուղիղ են , զի են համաձայն արդարակշիռ անսահման իմաստութենորա , և համեմատ մերումն ընդունակութեան , և ու իւիք ընդգէմ աննենդ դատողութեն ու ե իցէ մարդոյ . զի ոչինչ հրամայեն՝ բայց եթէ զայն՝ որ է բարի . և ոչինչ արդելուն՝ բայց եթէ զայն՝ որ է չար . և զօր ինչ խոստանան կամ սպանան , անվիրեպ կատարին :

Եւ եթէ իցեն ինչ ինչ՝ ի բանս անդ՝ որք անհամաձայն երևիցին մերումն ձանաշման , ոչ ներհակին ընդունակութեն մերում , այլ միայն գերազանցութք իւրեանց՝ ի վեր երևին : Վայդ՝ որպէս զօր միանգամ խօսեցաւ ած՝ ամեն ուղիղ են , սոյնպէս և զօր միանգամ արար , նորին ևս ուղիղ են և բարի . սմին իրեյարէ զինի և ասէ :

Եւ ամ գործք նորա հաստատէն : Ի առա հաստատէ՝ զնի աստ փոխանակ բառիս հաստատէն թէ , որպէս յայտ է յերբայականէն . արդ՝ գործք այ ասին լինել հաւատովք , կամ հաւատարիմութք ըստ բազում զիլոց , մի զի հետի են՝ ի նենգութէ , յանիբառութէ , յանհաստատութենէ , 'ի մոլորեցուցանելոյ , 'ի խռովեցուցանելոյ են : Երկրորդ՝ զի անսահման իմաստութք նորա կատարին . և անմոլար ձանաշմամբ նորա տնօրինին : Երրորդ՝ զի առ որ սահմանեալ են՝ 'ի նոյն առաջնորդին անվիրեպ , և 'ի նոյն վերածին ամենակարօղ զօրութք նորա : Երրորդ՝ զի ամեն կարգեալ են առ բարի վախճան և առ բարին մեր , թէպէտ և մեք յիրս ինչ անհաս գոլով ոչ ըմբռնիցեմք , թէ զիարդ այս այսպէս իցէ , և այն այնպէս : Հինգերորդ՝ զի անխարդախտան մեզ ձանաշել հաւատով զաներեւոյթն այ , ըստ որում ասի՝ թէ երևելեօքս աներեւոյթն այ իմացեալ տեսանին : Ետքերորդ՝ ըստ յարմարական մեկնութէ , զարդիւնս կամ զերախտիս մեր տան գործելը ըստ հաւատոց մերոց :

Ա ասն այսր ամի ամ գործք այ , այսինքն այն ամ , զօր գործեալ է ած և զօր գործէ . հաւատարիմութք են . և ինքն ած յամի՝ 'ի նոսա հաւատարիմ տեսանի : (Տես զայսմանէ և 'ի սաղմ . Ճխնդ . 14 . և 18 .) յորս փոփոխութք զնի այս բան , յասելն . * Հաւատարիմ է տէր , յամ՝ 'ի բանս իւր , և արդար է յամ՝ 'ի գործս իւր ...

„արդար է տէր յան ձանապարհս իւր . և ոք է յամ
„գործս իւր ։ Ի բդ քանզի հաւատորիմն լինել գոր-
ծոցն այ հաստատեալ է յողորմութե և յարդարութե
նորա , վասն որոյ յարէ զինի և ասէ :

Եւ սէք զշորմութե և զէրունակ պը . Ի յս սէր այ , ո-
րով հաճի առնել զողորմութիւն և զիրաւունս , ըստ
երից կըսի . մի՝ զի հաճոյ է նմա ցուցանել ամենեցուն
զողորմութիւն և զիրաւունս , զողորմութի ցուցանելով՝
բառնայ զողորմելի լինել մեր . և զիրաւունս ցուցա-
նելով պաշտպանէ 'ի բազմապատիկ զրպարտութեանց և
վնասուց , մանաւանդ 'ի հակառակութէ դիւաց : Արկ-
բորդ՝ զի հաճի ողորմութե իւրով տալ մեզ ձրի զպար-
զես չնորհաց իւրոց , և ապա իրաւամք հատուցանել
հատուցումն բարի՝ ըստ գործոց մերոյ . իրը զի եթէ
բարւոք 'ի գործ արկաք զնորհսն՝ տայ վարձս . իսկ ե-
թէ չարաշար վարեցաք նովաւ , տայ պատիմս . զի վ՛ս
այսորիկ իսկ ետ մեզ զուղիղ պատզամս , և յայս իսկ
արար զան : Արբորդ՝ զի հաճի յաստի կեանս առնել
մեզ զողորմութիւն քան զարդարութի . իսկ 'ի հանդեր-
ձեան հաճի առնել զարդարութի քան զողորմութիւն :
Փոխազարձ մեկնութե յայլ միտս վէրածի այս բան ,
այսինքն յողորմութիւն և յիրաւունս մարդկան . որ-
պէս թէ ասէր , հաճի տէր զի մարդիկ արասցեն մի-
մեանց զողորմութի 'ի կարօտուեն և զիրաւունս 'ի դա-
տաստանի . այլ թէ քանի մեծ իցէ ողորմութն այ յա-
րարածս իւր , ընդ նմին զիարդ հզօր իցէ կարողութիւն
նորա , յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով :

Դ . **Ե**ւ մա-թէ պն լի եղեւ երիբ , Ե բանի- պն երինս հա-
րաւեցան . Ե հոդ-ու բերանոյ նորա այ զըրս-թէս
նորա :

Ի առա ռշորմութէ երբակի առեալ լինի , մի՝ փոխանակ
այնը՝ որ է սկիզբն ողորմելոյ , այսինքն փոխանակ ա-
ռաքինութե ողորմութէ , որով ոք կամի ողորմիլ ալոց
և բառնալ զողորմելի լինել նորա , և արս կոչի նաև
ողորմածութի : Արկբորդ՝ փոխանակ ներգործութեան
այնը առաքինութեան , այսինքն փոխանակ գործողութ-
ողորմութե կամ փոխանակ ողորմելոյ : Արբորդ՝ փոխա-
նակ եղեր կամ գործոց ողորմութէ , այսինքն փոխանակ

այնք՝ որ վասն ողորմութելոյ արարեալլինի՝ ի կարօտեալու :
Վ ք դ՝ որպէս երեկ՝ աստմնօր ըստ երրորդին առեալ
լինի ողորմութին, և ըստ այսմ ասէ,

Ո շ բ մ ա լ լ ք ա լ լ է ե ր է ր : Ա մ բ արարածք յերկինս և
յերկրի կարօտին ողորմութին այ . զի ունին կարօտու-
թիւն գնոնէ ՚ի գոլեւ ՚ի գործել . բայց քանզի որք յեր-
կինս են՝ երեխն մեզ իբր անկարօտ , զի ոչ են ընդ ա-
պականութիւն անկեալ , այլ յանսապականութիւն հաստա-
տեալ . վասն այնորիկ ոչ յիշէ մարդարեն զերկինս ,
այլ զերկիթ միայն . մանաւանդ զի ոչ ցուցաւ յերկինս
ողորմութիւն տեան՝ առ հրեշտակս յանցուցեալս , այլ
յերկրի միայն առ մեղուցեալս :

Իսկ զերկիթ ասելով իմանայ զհողագունոս զայս ,
յորում է ծով և ցամաք , և օդն ևս որ ՚ի վերոյ . և
որ ՚ի նոսա կենդանիք և անկենդան արարածք , ողքա
ամենեքին յայտ է թէ գտեալ են և գտանեն զողոր-
մութիւն այ յարտագրին , ՚ի պահպանին , ՚ի խնամիլն ,
՚ի սնանին , ՚ի ծնանին , ՚ի շարժին , ՚ի գործեն , ՚ի
յաջորդեն , ևն . զի յամի ՚ի սոսա յայտնի տեսանի
ողորմութիւնն այ , մանաւանդ թէ այս ամ ողորմութիւն
այ յաջողի . և ըստ զբելց կիրակոս վարդապետի .
(՚ի մեկն . հարիւր ” . եւազրի . ա . 73 .) զոյանալ ամի
սոցա՝ ողորմութիւն այ է :

Վ ա լ ք ա ն զ ի մ ա ր դ ք՝ որոյ վասն լեալ է այս ամ . կարօ-
տի առաւելագոյն ողորմութեան , նա միայն առաւելա-
պէս յամի գտանէ զնոյն յայ , նախ՝ ըստ բնական կար-
դի , որպէս և այլ էակք . երկրորդ՝ ըստ բանական
կարգի՝ ՚ի սնօրինել զկեանս իբր զմարդ . երրորդ՝ ըստ
քաղաքական կարգի՝ ՚ի վարիլ . ՚ի շինել , ՚ի շահիլ . ՚ի
գտտել . ՚ի վանել , ՚ի կառավարել և ՚ի կառավարիլ ևն .
չորրորդ՝ ըստ բարոյական կարգի՝ ՚ի գործել զգործս
առաքինութիւն , յուղել զվարս . ՚ի յետս կալ ՚ի մա-
լի գործոց , ՚ի համբերել վշտաց , ևն . հինգերորդ՝ ըստ
զերբնական կարգի՝ ՚ի բերիլ առ գերբնական բարին ,
յընդունիլ զնորհս , ՚ի ծառայել այ , ՚ի պաշտել
զնա իբր իւր պարզեատու և փրկիչ , ևն :

Հայս ամ հայելով (մանաւանդ ՚ի վիճակ մարդոյ ;)
տեսանեմք յամի զնախախնամութիւնն այ և զողորմու-
թիւնն նորա . զնախախնամուի , ՚ի խնամել , խակ զողոր-

մաւթիւնն 'ի ըսուլ զկարօտուի ամի . և զի որպէս ասացաք՝ այն այս առաւել երեխ մեզ 'ի վերայ երկրի քան յերկինս , վասն այսորիկ ասէ . * ողորմութե՛ տն լի եղե երկիր . ու ասէ . * ողորմութե՛ տն ունի երկիր զիւր բարութի կամ զիւր պիտոյս ևն , այլ թէ լի եղե . որով ցուցանէ՝ թէ ած ու եթէ կաթիլ և կաթիլ շնորհէ զողորմութիւն իւր . այլ իւրեւ զհոսանս անձրեւց լիութե՛ զեղեալ է զայն 'ի վերայ երկրի , և միշտ զեղու զնոյն՝ ոչ միայն 'ի վերայ բարեաց , այլև 'ի վերայ չարաց , ըստ այնմ . (մատ . ե . 45 .) * | Ճէ սմնձրե 'ի վերայ արդ գարոց և մեղաւորաց : | Ճ . յոր ողորմութե՛ ծայրաց զոյն լիութիւն եղեւ , յորժամ եցոյց տէր զանչափ զայն ողորմութիւն յառաքելն առ մեզ զորդին իւր միածին առ ՚ի փրկել զմեզ , և ըսուլ շնորհօք միջնորդութեամբ պէսպէս իսորհրդոց , և առաջնորդել յերանութի յափտենական , յոր միտս առաւել ևս ձնմարտութե՛ ասի * ողորմութե՛ տն լի եղե երկիր : | ի եղե գարձեալ երկիր քարոզութե՛ աւետարանին . յորում հռչակի ողորմութիւնն այ :

| Ճէ ասէ մարգարէն 'ողորմութե՛ տն լի եղե այս երկիր կամ այն երկիր , կամ հրէաստան՝ որպէս վարկանէին հրէայք , այլ երկիր համօրէն . ըստ որում և սերովթէքն յօրհնելն զած լի ասէին զամ երկիր . (եսայ . կ . 3 .) Ուր ասէ գէօրդ վարդապէտ . * | Կարծէն հրէայք՝ թէ յայնմ տան (յերուսաղէմ) մի , այն փառաւորինա , վասն այսորիկ լի ասացին (մարդ գարէքն) զամ երկիր : |

| Հարմարական մեկնութե՛ 'ի հայաստան վերածէ շնորհալին զբառդ երէեր յասելն 'ի հանրականի իւրում (երէս 49 .) * ողորմութե՛ տն լի էր երկիր (յօրժամ լի էր աշխարհ մեր բարեօք :) | Ճ . ողորմութե՛ տն , նոյնպէս սքանչելի ցուցան երկինք 'ի հաստիլ անդ բանիւ նորա , զոր և յայտ առնէ զինի ասէլով :

| Ես բանէս առ երէեր հաստատեցան : Ի առդ բազում օրինակաւ առեալ լինի , բայց ըստ սեփական նշանակութե՛ չորեքին վարի . մի՝ փոխանակ ասացուածոյ՝ եթէ ձայնիւ և եթէ զրով . երկրորդ՝ փոխանակ հրա-

մանի՝ որ կարդի 'ի կատարումն իրիք . երբորդ՝ փոխանակ հանաւաշման մտաց՝ ոչ ըստ որում է սոսկ իմացումն , այլ՝ ըստ որում է ասութիւն՝ որով միտքն ասէ ինչ՝ 'ի ներքս . չորրորդ՝ փոխանակ եղեր այսր ներքին ասութեան մտաց . ըստ որում յասել մտաց ինչ՝ 'ի ներքս՝ այնու ասութիւն կերպարանի այն ինչ՝ որ ասի ծնունդ մըտաց , այսինքն ծնեալ՝ 'ի մտաց , կամ մանաւանդ ծնեալ յիմացողին նման նմին . զի որպէս ծնեալն է նըման ծնողին , սոյնպէս և այն բան յիմանալի գոյն նման իմացողին ըստ որում իմացօղ , որոյ վն և ասի ծնունդ :

Վ. բ. դ. աստանօր ըստ հարազատ իմացուածոյ բնաբանի՝ բառս բառ՝ ոչ դնի ըստ առաջնոյն և ըստ յետնոյն , այլ ըստ երկրորդին և ըստ երրորդին , ըստ որում 'ի հրամայել այ ըստ իւրումն ներքին ձանաշման՝ երկնք գոյացան . և յայս միտ ասէ . * բանիւ տն (այսինքն Հրամանաւ տն) երկինք հաստատեցան :

Վ. յ. ս. բան այ է՝ առանց որոյ ոչինչ եղեւ , և ոչինչ լինի . և որ ինչ լինի նովաւ լինի : Ուստի ասէ սարգիս շնորհալի ('ի մեկն . յակ . առ . 25 . ձառ է .) * ցիք ինչ գործ առանց բանի , և ոչ սոսկ բան առանց գործոյ . զի երկոքեան սոքա զմիմեանց ունին և 'ի միմեանց ոչ որոշին . բանն կամարածե էած զերկինս կարգաւորաբար հանդերձ զարդուն իւրով . բանն գոյացոյց զերկիր , և որքան ինչ միանգամ'ի ծոց երկրի . բանն արար զծով , և որ ինչ միանգամ'ի ծովու . բանն ստեղծ զմարդն պատկեր արարչական և իշխան արարածոց . բանիւ տուան օրէնք և մարդարկ և աւետարանք , բանիւ ետ զպատուիրանս կեցուցիս : Տեսէ՛ զիարդ եթէ ամ ինչ բանիւ եղեւ և հաստատեցաւ ըստ դաւթայ , թէ ասաց և եղեն . պատուիրեաց և հաստատեցան , որ է բանիւ : Եւ 'ի ձառ դժ . յառաջ բերեալ զբան առաքելոյն զրէ այսպէս . * կամեցեալ ծնաւ զմեզ բանին ձմարտուն . . . որով բանիւ . որով զաշխարհս ամարար . որով զմեծս զայս մարմին գոյացոյց . վոզ զի նովին բանիւ ասաց , և եղեն . պատուիրեաց , և

հաստատեցան :

Հայսմ ամի թէալէտ և բան տեառն է՝ որ ներգործէ , բայց մարգարէն զերկինս և եթ 'ի մէջ բերէ յասելն .

բանիւ ո՞ն երկինք հաստատեցան . 'ի ցուցանել միանցամայն և զամենակարօղ զօրութիւ բանին այ . իբր զի 'ի հրամայելն անդ 'ի նմին վայրկենի յուշ գոյից 'ի գոյ ածան այն մարմինք , որը կոչին երկինք . որոյ լայնատարածութե և բարձրութեան ոչ հասանեն մարդկային չափմունք : | յւ հիանալին այն է , զի այն ահեղազանցուած մարմինք որպէս ածան յոնցէ 'ի գոյութիւ , սոյնպէս կան և կացցեն յաւիտեան հաստատուն 'ի նմին գոյութե , իբր 'ի մէջ ոնցի կախեալ : Հայս իսկ մարդարկէն ոչ ասէ սուկապէս՝ թէ երկինք արարեալ եղեն , այլ թէ հաստատեցան : | յւ առաւել ևս զարմանալին է այս , զի ոչ իբրև միաստարագ ինչ հաստատեցան , այլ սքսմաւելի զարդուք , զրդ և յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով :

| յւ հոգուն բերանոյ նորա թմ զօրութիւնոյ : Վստանօր բառդ հոգի՝ ըստ ճառին նշանակէն նախ զայն , զոր այժմ կոչեաց բան կամ հրաման . նշանակէ երկրորդ զազդուութիւ կամ զուժգնութիւ և կամ զզօրութիւ բերանոյն այ . յոր միտ ասի ('ի զիրս ծնն . ա . 2 .) * և „ հոգի այ շրջէր 'ի վերայ ջրոց || . ուր հոգւով նշանակի օդ շարժուն , և փոխաբերաբար ուժգնութիւն կամ ազդուութիւն արարչական զօրութե , որ կալեալ ուներ զերկիր հանդերձ ջրով :

Իսկ բերանով նշանակի աստ ըստ ճառին նոյն իսկ միտքն ածային կամ ներքին բանն այ , զորմէ խօսեցաք 'ի վերոյ , և կամ արարչական զօրութիւն նորա , յորմէ իբր 'ի բերանոյ ել հրամանն արարչութե . կամ ըստ նորհալոյն՝ անհասական իմաստութիւն նորա 'ի գոյացուցանել զարարածս . սուրբ գիրք ասէ * բերան „ ասեն նման և բան . զի յայտնի արասցեն մեզ զան „ հասական իմաստութիւն նորա . որով գոյացան արա „ բածք ամ ըստ իմաստոյն՝ թէ ած իմաստութիւն հի „ մունս էարկ երկրի . պատրաստեաց զերկինս հան „ ճարով , և զանդունդս խորհրդով || . զայս զրէ չնորհալին 'ի թուղթն առ միջագետս (երես 274 :) | յւ ը այսմ յասելն աստ * և հոգւով բերանոյ նորա ամ „ զօրութիւն նոցա || , միտ բանին լինի այս . հրամանաւ ամենահաստի ածային մտաց , կամ ազդուութ արարչական կարողութե հաստեցան ամ զօրութիւն երկինից :

Խսկ զօրութիք երկնից խմացեալ լինին այն ամ որք են յերկինս . (Ղ . Թագ . Ժէ . 16 .) յորս երևելիքն են աստեղք , որոց բազմութիք և մեծութիք , լուսաւորութիք և ազգուութիւնք , զիրք և տեսիլք անհաս են 'ի մէնջ : Եւ այս ամ հրամանաւն այ գոյացեալք՝ հաստատուն կան և մնան մինչև ցյաւիտեան :

Ո՞րպէ է ևս զօրութիք երկնից խմանալ զօրս երկնից ըստ դասուց իւրեանց : Քայս միտ թերեւս ասէ լուսաւորիչն մեր . (յաճ . առ . երես 4 .) * երկնաք և ամենայն զարդք նոցա հաստատեալ կան բանիւն այ . և հոգւովն ամ զօրութիք ! . այսինքն ամ զօրք երկնից , կամ ու և իցէ զօրութիւնք : Դարձեալ մարթ է զօրութիք իմանալ աստ զայն ամ զօրութիք , որով աշխարհս կայ 'ի կայի իւրում : Աւատի ասէ գարձեալ լուսաւորիչն մեր (յաճ . իջ . երես . 242 .) * բանիւ ոն երկինք , և երկիր հաստատեցան . և հոգւով թերանոյ նորա ամ զօրութիք նորա ! . այսինքն համօրէն աշխարհի : Հնոր է զօրութիք երկնից խմանալ և զիարդս մետէության զայից , որք երկնին յօդս իւր յերկինս :

Խորհրդաբար՝ 'ի ձեռն երկնից խմացեալ լինին հրետակք , և 'ի ձեռն երկրի մարդս . որպէս զրէ լուսաւորիչն մեր 'ի յաճախտապատում զիրս իւր (գլ . ե . երես 41 .)

Այլաբանօրէն բանք այսր համարոյ հային յեկեղեցի քնի , որ իբր երկիր որ լի եղեւ ողորմութիք ոն : և բանիւ նորա հաստատեցան երկինք , այսինքն տաճաղք՝ յօրս բնակի ան , և պաշտի 'ի հաւատացելոց , և հոգւով թերանոյ նորա հաստատեալ եղեն ամ զօրութիք խորհրդութիւն եղեն իւրաքանչիւր հրետոց եկեղեցւոյ :

Ծարոյապէս՝ ողորմութիք ոն լի եղեն իւրաքանչիւր հաւատացելոց անձինք , և բանիւ ոն հոգիք նշ հաստատեցան 'ի հաւատ , 'ի յօրս և 'ի սէր . և հոգւով թերանոյ նորա նորոգեցան ամ զօրութիք նոցա , այսինքն են միտք , և կամք և այլ կարողութիք նոցին :

Ծանք այսր համարոյ յայտ առնեն և զիսորհուրդ ամենամը երրորդութիք որպէս զրեն որ հարք . ընդ որս և սարգիս նորհալի , և լամբրոն . և այլք : Օ 'ի առաջին հաստուածն այսինքն է . * Ողորմութիք ոն լի եղեն երկիր ! , վերածի առ հայր , ըստ որում հայրն ան

եցոյց զողըրման թիւն իւր՝ ի ստեղծագործելն , և 'ի կամ մին փրկել . Երկրորդ հասուածն այն է * բանիւ ոնն „ երկնք հաստատեցան ‖ . վերածի առ որդի , որ է բան այ . (յայտ . ժմ . 43 :) որով ամ ինչ եղեւ , որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի . որոյ և մարդեղութք հաստատեցաւ եկեղեցի սուրբ իբր երկնք նոր՝ ի վերայ երկրի : Խակ երրորդ հասուածն այն է * և հոգւով ՝ բերանոյ նորա ամենայն զօրութիք նոցա ‖ , վերածի առ հոգին ոք , որով կան հաստատուն զօրութիք երկնից , և յեկեղեցւոջ զօրութիւնք խորհրդոյ՝ ոքք կատարին հոգւով սրբով :

Յայտոսիկ հայելով սարգիս չնորհալի զրէ ('ի մեկն . ամ . պետ . ամ . 18 . ձառ . դ .) թէ * մարդարեց յայտ . նէին և թագուցանեին (զխորհուրդ երրորդութեն .) յայտնէին բանիւք , և թագուցանեին արդեամբք զոր և մեծն գաւիթ ծանուցեալ՝ ի հոգւոյն , յայտ . նութք խոստովանութիւն առաջի զնէ զերից ան . ձանցն և զմիոյ տէրութեն և զիշտանուեն . այսպէս ու . նէլով բանին՝ ողօրմութք ոն լի եղեւ երկիր . զայս . հօր զնեմք , և բանիւ տեսառն երկնք հաստատեցան , զայս անյերկուանալի որդոյ զնեմք . և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիք նոցա ‖ . և զայս հոգւոյն տամք :

Եւ յլ բառդ բերան՝ յայտ է թէ հայի 'ի բանն աճ՝ որ ասի բերան հօր . և զի սուրբ հոգին է շունչ անեղական , վասն այսորիկ ասի լինել հոգի բերանոյ հօր այ , այսինքն հոգի բանին այ . յորոյ առաջոց նա ինքն բերանն հօր . այսինքն բանն աճ փշեաց զնոյն հոգի յառաքեալն իրբւ զիւր . ուստի ասէ չնորհալին . ('ի մեկն . մատ . դ .) * նմին իսկ (որդուց) էր հոգին որ . պէս և հօր ‖ . ըստ որոյ ասի լինել առումն և ելումն յորդուց . որպէս վտակ 'ի հայրաշարժ աղբերէ . կամ որպէս մատն 'ի ձեռանէ . յոր միտս՝ զոր մատթէոս հոգի այ զնէ , յասելն * հոգւովն այ հանեմ զդես . (մատ . ժք . 28 .) զուկաս զնէ * մատամբն այ . (զուկ . ժա . 20 .) * յայտ արարեալ նախ թէ 'ի նոյն էութէ է . հոգին (որպէս մատն 'ի ձեռանէ և յանձնէ .) ըստ որում ասէ ծործորեցին ('ի մեկն . մատ . զլ . ժք . 28 . և 'ի գլ . ժդ .) զրէ այսպէս * հոգին որպէս 'ի հօրէ ,

„այսպէս և յորդւոյ առումն . վասն այսորիկ և առա-
„քումն հաւասար ասի՞ ի հօրէ և յորդւոյ || . Եւ սո-
վին այսու որդին ասի հաւասար հոգւոյն , և հոգին
հաւասար որդւոյն . սմին իրի ասէ կիրակոս վարդա-
պէտ ('ի մեկն . հարիւր . եւազը . 'ի մաց 27 .) * քո
„ և թագաւոր և միածին . ծննդեամբ հաւասար է
„ բղիսեցելոյն 'ի հօրէ և յորդւոյ հոգւոյն սրբոյ , որ
„ էջ 'ի վերայ նորա 'ի յորդանան || :

Այլ աստ գիտելի է , զի յասել մարգարեին , բանիւ
տն եղեն երկինք , և հոգւով բերանոյ նորա գոյացան
զօրութիւնք երկնից 'ոչ տայ խմանալ , թէ առանց հոգ-
ւոյ նորա եղեն երկինք , և կամ թէ առանց բանի նո-
րա եղեն զօրութիւնք երկնից , այլ թէ նովիմբք եղեն
ամ . և թէպէտ 'ի շարազրութեն որոշաբար դնի , բայց
այն է ըստ առանձնաւորութեան ևեթ . իսկ յիրում՝
որովհետեւ մի է էութիւն 'ի հայր և յորդի և 'ի ոք հո-
գի , և մի կարողութի՝ 'ի մին յայն վերածի ամենայն .
ուստի և յասելն՝ բանիւ տն՝ խմացեալ լինի և հոգ-
ւով , և յասելն հոգւով նորա՝ խմացեալ լինի և բա-
նիւ . զի անբաժանելի է գործ հօր և որդւոյ և հոգ-
ւոյն սրբոյ առ արտաքս :

Ուստի և յարաշագործութեն անդ տեսանեմք՝ զի երե-
քին իբրև մի խօսին ըստ ածութեան , և իբրև երրեակ
ըստ անձնաւորութեն . որպէս յայտնի երևի 'ի բանն
յայն՝ զոր ասէ անծաշունն . * և ետես անծ՝ զի բարի
„ են . և ասաց անծ . արասցուք մարդ ըստ պատկերի
„ մերում || . (ծնն . ա . 26 .) ուր ահա ըստ միութեան
ածութեան դնէ . և ասաց անծ . . իսկ ըստ երրեակ
անձնաւորութեն դնէ . * արասցուք մարդ ըստ պատ-
„ կերի մերում || . ուր բառդ արասցուք , և մանաւանդ
գերանունդ Աբում ցուցանէ զայլ և այլ անձինս . այս-
ինքն զերիս դէմն 'ի միութեն :

Հըրէայք պատասխանեն , թէ այդ դնի 'ի ցոյց իշխա-
նութեան և մեծութեան . որպէս առնեն թագաւորք 'ի
խօսիլ կամ 'ի զրել իւրեանց : Բայց այդ պատասխա-
նի վայրապար կեղծիք է , և անել փախուստ . և օրի-
նակն՝ զոր առաջի առնեն՝ չզօրէ ինչ . զի թագաւորք
'ի խօսիլն և 'ի զրելն կամ ձանաշեն՝ թէ գտանին
ներգործութք բազում անձինք՝ որովհ խօսին և զրեն .

և կամ ոչ . Եթէ բնաւ ոչ այդ ոչ լինի իշխանութեան ցոյց , այլ յիմարութեան նշան . իսկ եթէ ձանաշեն և զայլ անձինս , ուրեմն ըստ ձանաշեալ գոլոյ բազում անձանց խօսին . թէ համակամ իւր իցեն նորին և թէ ոչ . Իսկ արդ ՚ի խօսին այլ յասել արասցոք մարդ ըստ պատկերի մերում՝ ոչ գոյր արտաքոյ իւր բազմութիւն անձանց և ոչ իրական ինչ զանազանութիւն մասց և կամաց , և կամ հոգւոյ և մարմնոյ , ասքա սրբութիւն խոստովանիլ թէ էին այլ և այլ անձինք ՚ի նոյն ինքն ՚ի յած , հայր և որդի և հոգի սուրբ :

Օստուեր ասացելոց տեսին և ոմանք ՚ի փիլիսոփայից որպիս է տեսանել և ՚ի զիրս սենեքայ . (՚ի բանն առ հեղվիտիոս , յաղագս միմիթարութե . գլ . Շ . հատոր առ . երես 138 . տպ . վենետ . յամի տարբեր 1658 .) ուր զգիարուածոյ իմեքէ խօսելով , ասէ * այդ ՚ո եղել յայնմանէ , որ հաստիչ եղել յաւիտենիս , կամ ՚ո է նա ինքն ած ամենակարօղ . (այս հայի ՚ի հայր) ՚ո կամ անմարմին բանն՝ մեծամեծ զործոց ձարտարապետ (այս հայի յորդի .) կամ հոգի ածեղէն յամի ամենազեղ . (և այս հայի ՚ի հոգին արք .) Լքուցեալ մարդարեին զամենակարողութիւնն այ հաստութեր երկնից , ցուցանէ զնոյն և հաստատութեր ջուրց՝ և ասէ :

Ե. Հառնկաց որպէս ՚ի ուիս զշուրս ծովը . և դուք ՚ի խորս զգանիչն էք :

Հայտնի տեսանի ՚ի զիրս ծննդոց . (առ . 9 .) զի ՚ի ստեղծանելն այ զաշխարհ՝ ջուրք պատեալ էին զերես երկրի . * և ասաց ած , ժողովեսցին ջուրքդ ՚ի ժողով մի , և երեւեսցի ցամաքն և ժողովեցան ջուրքն ՚ի ժողովս իւրեանց , և երեւեցաւ ցամաքն , և կոչեաց ած զցամաքն երկիր , և զժողովս ջուրքն ՚ի կոչեաց ծովս || . այլ թէ զիարդ զիւրին եղել այ զայս առնել օրինակաւ իւրիք ցուցանէ մարդարեն և ասէ :

Ջառնկաց որպէս ՚ի ուիս զշուրս ծովը : Կամի ասել որ պիս մարդ զիւրաւ ընու զջուր կամ զայլ հեղանիւթիրս ՚ի տիկ , այսպիս և ած զիւրաւ ժողովեաց և զետեղեցոյց զջուրս ծովու ՚ի խորս , զի ընդ հրամայեն :

թէ * ժողովեսցին ջուրբդ լ , և էն . 'ի նմին վայրկենի խոռոշացաւ երկիր 'ի խոռոշ խորս և անդնդպայինս , և ջուրբ 'որք պատեալ էին զերեսս երկրի՝ ամիտիեցան 'ի խորին խոռոշն յայնոտիկ , և եղեն ծով . Վայի * խոռոշացաւ երկիր լ , զի թէ ոչ խոռոշանայր և ոչ անդնդանայր , զիարդ և ուր լիներ ջուրց ժողովիլ : Խակ 'ի խոռոյին՝ զիւրաւ և կարգաւ ժողովեցան իրբ 'ի տիկ , և մնացին փակեալք , մինչեւ ոչ ևս կարել զեղուլ արտաքս , առ որ հայի և բանն այն զոր առէ ած 'ի գիրս յոբայ . (լը . 8 .) * Փակեցի զծով զը . ոյ ըամբք . . . եղի նմաս սահմանս՝ եղեալ փականս և զրունս . սաացի՝ ցայդ վայր եկեսցես՝ և այլ մի անցանիցես , այլ այզրէն 'ի քեզ խորտակեսցին ա .

“ Արքունակութիւն ”

Պարթէ է աստ տկովք իմանալ և զօդս . յորս ժողովէ ած զջուրս ծովու ամսովք , և հեղու յերկիր անձրեւ օք : Առ քամնզի այն գումարութիւք ամբաւ ջուրց՝ են իբրեւ գանձք կամ ամբարք ջուրց , (այսինքն խազնայ ջրոց ,) վասն այնորիկ յաւելու ասել :

Եթէ ունէ 'ի խորս ցանայն իւր : Վայինքն թէ զետեղէ 'ի խոռոշ երկրի զամբաւութիւն ջուրց իբրեւ զգանձս ջրոց : Հաւելեալ լինի և բառդ իւր , առ 'ի նշանակել նախ՝ թէ այն ջուրք լինն ինքնին լեալ յառաջն , այլ արարեալ , և թէ ած է տէր ջուրց ծովու : Եղրկրորդ՝ առ 'ի նշանակել , թէ ած յայն սակա ժողովեցաց զջուրս 'ի խորս , և փակեաց զայն , զի 'ի ջուրց անտի իբրեւ 'ի գանձէ իւրմէ առցէ և սփռեսցէ , առ այս իսկ աղիւ որակաւորեաց զնոյն , որպէս զի անտապական մնացէ . և ըստ ժամանակին և ըստ պիտելոյն յաղիութիւն անտի զտեացի և բաշխեսցի յերկիր , յոր միտ ասէ ամիսվ . (Ե . 8 .) * որ կոչէ զջուրս ծովու , և հեղու 'ի վերայ երկրի :

Վստանօր գանձիւք կարէ իմացեալ լինել և այն ամենայն որք կան 'ի խորս երկրի , որպիսի են ուկի , արծաթ , և այլ հանք , և ակունք , ևս և այլ զարմանալի իրք . զորս եղեալ է ած 'ի խորս անդ : Վարթէ է և խորօք իմանալ աստ նաև զիսորութիւն ամսոց , յորս գանձեաց և գանձէ ած զջուրս անձրեւաց . (որպէս յայտ է ծնն . ա . 9 :)

Այլաբանօրէն՝ տկոլ օրինակի ասաւ սուրբ եկեղեցի ,
յոր ժողովեաց ած զջուրս ծովու , այսինքն զժողովուրդս ազգաց համօրէն տիեզերիս , որք օրինակին 'ի ջուրս , որպէս և յայտ է , իշտ և զգանձս իւր , այսինքն զիտրհուրդս եկեղեցւոյ և զակասպէս պարզես չնորհաց , և զայլ սըբարար իրա 'ի խորս , այսինքն 'ի հաստատութե եկեղեցւոյ ։ Խակ թէ վիճակ սուրբ եկեղեցւոյ օրինակի 'ի տիել , յայտ է 'ի բանից անտի զըր ասաց քն * գինի նոր 'ի տիեկ նորս արկանելի է ։ իբր թէ ասէր , զնոր օրէնս 'ի նորս եկեղեցի հաստատել արժան է :

Դարձեալ , ժողովեաց ած զամենայն խմաստութիւն և զգիտութիւն և զհանձնար իբրև զջուրս ծովու 'ի տիեկ նը զրոց , և ևս զետեղեաց 'ի խորս , այսինքն 'ի խորին խմացուածս և 'ի խորին ուսմունս զգանձս զալունի խորհրդոց՝ որք պարունակին 'ի բանս սուրբ զրոց . յոր միտս առեալ ծործորեցւոյն ('ի մեկն . մատ . զլ . ժկ .) առէ * ամենայն գանձք խմաստութե և զիտութե ծածկեալ կամ ('ի նը զիրս .) զզօրութիւն մատացն 'ի ծածուկ ունելով . ըստ այնու , զնէ 'ի խորս զգանձս իւր . զօր գտեալ մարդոյ թագոյց , և խնդացաւ . (ըստ այնու , յնձացայ ես 'ի բան ' քո որպէս այն որ զտանէ աւար բազում !)

Դարձեալ նորս եկեղեցի որ իբրև գանձ ծածկեալ կայր 'ի խորս հին եկեղեցւոյ , 'ի գալ փրկչին՝ արտափայլեցաւ . յոր միտս ասէ նոյն ծործորեցին 'ի վերոյ գրեալ տեղւոջ . * նորս ծածկեալ կայր 'ի հինն իբր զգանձ յագարակի ! :

Դարոյապէս , տկովք նշանակին նորքս , որք դատարկացեալ են 'ի նամիի խորհրդոց , և խորօք նշանակին խոնարհք . 'ի տիեկան անդ ժողովէ ած զբազում ծանօթութիւնս և տեղեկութիւն գաղտնի և մեծառեծ խորհրդոց , որք նշանակին ջուրքք ծովու . նոյնապէս զնէ և 'ի խորս , այսինքն 'ի խոնարհս զշնորհս իբրև զգանձս . զոր և յայտնէ նց , ոնկ և կամի . (յովք . լէ .) Խակ եթէ 'ի ձեռն ջուրց նշանակեցացին նեղութիւք , և 'ի ձեռն գանձուց մեծառեծ վարձք , միտ բանին լինի այս . ած յառաքեն 'ի վերայ ուրուք զնեղութիւնս ըսփաւորէ , և որպէս թէ 'ի տիեկ ամիտովէ , իբր զի

այսափ իցէ , և ոչ աւելի , և որք ընդունին զայնս հպատակութեք և սիրով իբրև 'ի խորս , աստատին խսկ տայ նոցա զվարձս այսինքն զմիսիթարութեի , և 'ի հանգերձեալն զնոյն խսկ զգանձս միսիթարութե և ան անց ուրախութեան : Արդ՝ ցուցեալ մարգարէին՝ թէ քանի հզօր է կարողութին այ , և զիարդ զօրաւոր է հրաման նորա՝ աստի յայսմանէ իբրև թէ առիթ աւեալ 'ի յորդոր մասցի մարդկան , զի երկիցեն 'ի նմանէ . վասն որոյ ասէ :

Դ. **Երիշէ** 'ի Պահ ամ երիշը . և 'ի նմանէ բողասցեն ամ բնակելու ուներնէ :

Երկնչին տիրապէս յերկուց լինի . մի 'ի վտանգէ շարի , որ մօտ 'ի վերայ կայ . որպիսի եղեւ 'ի պետրոս . զի տեսեալ զշողմն սաստիկ՝ երկեաւ 'ի վտանգէ ընկըման , որ առաջի կայը նմա (մատ . ժկ . 30 .) Երկրոդ լինի յայնմանէ , որ կարէ հասուցանել զար կամ զվեաս և իցէ օրինակաւ , այսինքն չարչարելով , պատուհանելով , կորուսանելով ևն . յոր միտս ասէ տէրն մեր . * երկերուք դուք առաւել յայնմանէ որ ,, կարօղ է զոգի և զմնրմին կորուսանել 'ի գեհենի || . (մատ . ժ . 28 : և զուկ . ժք . 5 .) Եւ յայտ է թէ յայս միտս դնէ աստ մարգարէն զերկնչին , ասելով :

Երիշէ 'ի Պահ ամ երիշը : Ուր երիշը ասելով ոչ խմանայ զզանգուած երկրիս , այլ զբնակիս երկրի . և այս ըստ ոձոյ հարտասանից , որով բազում անգամ անուն տեղոյն՝ փոխանակ բնակչաց դնի . որպէս յասելն վասն երուսաղէմի . * և դղրդեցաւ քաղաքն ամ և ա . , սէ . ով իցէ սապ || . (մատ . իա . 10 .) քաղաքաւ իմացեալ լինին քաղաքացիքն : Երիշէ և այն որ ասի * իուովեցաւ (հերովդէս) և ամ երուսաղէմընդ նմ || . (մատ . ը . 3 . երուսաղէմաւ իմացեալ լինին երուսաղէմացիք :

Բատ այսմ և աստ բառդ երիշը դնի փոխանակ նոցա , որք բնակին յերկրի , որպէս թէ ասէր . ամենէքեան որք միանգամ յերկրի են , 'ի միտ առեալ թէ ամենահարօղ է տէր , և ունի իշխանութիւն 'ի վերայ ամի , 'ի հաստել և 'ի շնջել , 'ի կեցուցանել և 'ի կորուսանել , երկիցեն 'ի նմանէ , այսինքն է երկիւղ ունելով առ

նա . մի իւկը յանդգնեսցին գործել ինչ ընդդէմնուրա , կամ ըդէմ օրինացն զոր նա ինքն տպաւորեալէ , 'ի միտս ամենեցուն : իւր կշռել արժան է , զի մարդարէն առանց իրկը պայմանի՝ արձակապէս ասելով . * երկիցէ 'ի տնէ ամենայն երկիր || , դիտէ յայտ առնել և զմեծութիւն երկիւղին . իբր թէ պահրտ իցէ մեծապէս երկնչիլ : իշտ առ բացատրելոյ զգիտումն իւր զնոյն՝ զայն այլով իմն օրինակառ ևս առաջի դնէ՝

և ասէ :

Ե- 'ի նմանէ դողասցին ամ բնահելով աշխարհի : 'Կտղանէ գործ սաստիկ երկիւղի . ուստի և փոխանակ ասելոյ սաստկապէս երկիցեն , ասէ դողասցեն , և զայս ոչ ասէ սոսկ զմեղաւորաց , այլ և զարդարոց , և զանցունց՝ որք միանգամ բնակին յաշխարհի . զի ասէ՝ ամենայն բնակիչը աշխարհի : թէ յայն սակս այնպէս սաստկացուցանելով և կրկնելով խօսի , զի մի 'ի լըսել բնակչաց երկրի զայն , զոր ասաց 'ի վերոյ . * Աղողմութք տն լի եղեւ երկիր || , յայսմանէ վստահութիւն առեւալ՝ աներկիւղ մնացցեն , և 'ի չարն մտարերիցին , այլ երկիցեն և առաւել ևս երկիցեն . զի մի զողորմութիւնն այ 'ի վրէժինդրութիւն շարժեսցեն : Օ ցողան ակիւղաս թարգմանէ հնազանդիլ . իսկ սիւմաքս բարեսպաշտել . որք են գործք և հետևանք երկիւղի : Վրդ՝ զայս բան իբր միջանկեալ ինչ յորդորանք եղեալ մարգարէին՝ դառնայ յառաջին ձառիւր , 'ի պատմել զգօրութիւն ամենակարողութենն այ . սմին իրի յարէ զինի , և ասէ :

Է. **Օ** է նո ասաց՝ և եղին . ինքն հրամայեաց և հաստատեցան :

Վայս բան է իբր բացատրութիւն կամ իբր կրկնումն ինչ այնր՝ զոր եղ 'ի վերոյ ('ի համարն 4 . և 5 .) յասելն . * բանիւ տն երկինք հաստատեցան , և հոգելով , բերանոյ նորա ամենայն զօրութիւն նոցա . ժողովեաց , որպէս 'ի տիկ զնուրս ծովու , և զնէ 'ի խորս զգանձա , 'իւր || . Ի կամին ապա բացատրել , թէ զիանդ արար զայս , կամ թէ զինչ է այն՝ զի բանիւ հաստատեաց զերկինս ևն , յաւելու և ասէ :

Ո է նո ասաց՝ և եղին , ինքն հրամայեաց և հաստատեցան :

Ուր բառդ ասաց՝ հայի յախ՝ որ զրի՝ ի զիրս ծննդոց . (զԼ. ամ.) և ասաց ամ եղիցի, և եղեն, ուստի և յասելն աստ՝ ասաց և եղեն, միտ քանին լինի այս . ընդ ասելն այդ եղիցի երկինք և երկիր, զոյդ ընդ քանին եղեն և կացին յեղանութե՛ իւրեամց . քանզի ինքն՝ որ ասաց եղիցի, հրամայեաց ևս զի հաստատեսցին, և նոքա նովին հրամանաւ հաստատեցան և կացին :

Օսոյն խմա և վասն ամենայնի՝ զոր առնէ, ամ . իբր զի ասէ և լինին . հրամայէ և հաստատին : Եւ ահա սովու ակն յայտնի ցուցանի, թէ քանի պանչելի է ամենակարողութին այ : (Օ այսաննէ, տես և ՚ի վերոյ ՚ի համարն 4 : ևս և ՚ի սաղ . ձնշ . 5 .) ուր կրկնի այս ասացուած սովին շարադրութ, այսինքն է . * Օ ի նա , ասաց և եղեն . հրամայեաց և հաստատեցան || :

Ոովիմբ կամի ևս ցուցանել մարգարէն, թէ այնչափ զիւրին է այդ գցացուցանել զամ, որչափ զիւրին է ասելն, առանց վշտաց և առանց աշխատանաց : Ուստի խօսելով ՚ի վերայ այսր սրբոյն յակորայ մծբնայ հայրապետի . (՚ի ձառն . ժը .) ասէ . * ամ ոչ վաստակի և ոչ աշխատի . և հաստատեաց զամ գործս իւր . քան . զի ասաց . քանիւ նոն երկինք հաստատեցան, և հոգ . ւով բերանոյ նորա ամ զօրութիւնք նոցա : Իսյց . զաղամ արար ձեռոք իւրովք . և ոչ զրեալ է թէ . վաստակեցաւ յառնելն նորա, և զամ արարածո . իբրեւ արար բանիւ բերանոյ իւրոյ, ասաց և եղեն . ասաց (ասէ) և աշխատուե և վաստակելոյ զիշումն ոչ արար || :

Այս բան կարէ գնիլ և իբր պատճառ այնը՝ զոր ասաց . * երկիցէ ՚ի նմնէ ամ երկիր ||, ևն . որոյ ՚ի յարելն զինի՝ զի նա ասաց՝ և եղեն ևն, պատճառական շաղկապդ չէ՝ զբառդ՝ երինչէլ ամփոփէ յամ միայն . որպէս թէ եղեալ եր . միայն յայ պարտ է երկնչիլ, զի նա միայն է տէր ամի, և որ ինչ կան արտաքոյ նորա, բանիւ նորա կան և լունին աանել ինչ ընդ մեզ . զի եթէ նա ոչ թոյլ տացէ՝ ոչ կարեն վնասել մեզ, և ընդ հակառակն՝ եթէ նա կամիցի պատուհասել, ոչ կարեն նոքա պաշտպանել զմեզ՝ ՚ի բարկութենէ նորա . զի ամ՝ որ ինչ է, կախեալ կոյ վնասնէ և զհրամանէ նորա :

Վորիմբք ցուցեալ մարգարէին զամենակարտղութիւնն
այ ՚ի զօրութենէ հրամանի նորա , ձեռնարկէ ցուցանել
և զիմաստութիւն նորին . և սկզբան անդ ՚ի մէջ բե-
րելով զիմաստութիւն և զիսրհուրդս մարդկան , յո-
նարդ և յարհամարհէլի լինելոյ նոցա զիտէ առաջի
առնել զգերազանցութիւն իմաստութեն այ , սմին ի-
րի ասէ :

Ը. **S**էր շըռու զիսրհուրդս հեթանուաց . անարդէ ար զիսր-
հուրդս ժողովրդաց . և արհամարհէ ար զիսրհուրդս
էշնանաց :

Դասս իորհուրդ՝ պէսպէս առեալ լինի , մի՛ փոխա-
նակ գործնական ձանաշման կամ մոտածութեան , որ
լինի զառնելեօք կամ զմիջնորդօք առ վախճանն . զոր
օրինակ յորժամ որ առ ՚ի հասանել յինն օրոնէ մոտօք
զմիջնորդս և կշռէ զորպիսութի միջնորդաց , և զյար-
մարտութի նայ առ այն վախճան . և թէ զիտրդ սպառ
է ՚ի գործ գնել զայնոսիկ , որպէս զի կարասցէ նորօք
ժամաննել յայն՝ զոր զիտէ , կամ ստանալ զայն՝ զոր
կամի : Այսպիսի մոտածութիւն յորժամ ՚ի միտս լինի՝
ասի պարզ խորհուրդ և երբեմն խորհրդածութի , իսկ
յորժամ առ արտաքս լինի ընդ սցում , ասի խորհր-
դակցութիւն , երբեմն ևս հասարակ անուամբ խոր-
հուրդ , յոր միտս առեմք . խորհուրդ առնուլ ընդ
այլս , և եթէ սոյն այս ընծայեալ լիցի ՚ի մեծէ առ
փոքրն՝ ասի և իրատ . եթէ ՚ի փոքրուէ առ մեծն՝ դար-
ձեալ ասի խորհուրդ :

Երկրորդ՝ առեալ լինի փոխանակ ու և իցէ ներգոր-
ծութեան մտաց , կամ փոխանակ ու և իցէ ձանաշման ,
որով ձանաչեմք զինն , կամ խոկամք զիմեքէ : Եր-
րորդ՝ փոխանակ այնպիսի բանի կամ այնպիսի մաս-
ծութեան՝ և կամ այնպիսի գործոյ յորում են զաղսնի
իրք . որք առարկին ձանաշման . և զի ՚ի խորհուրդս
եկեղեցւոյ կան զաղսնի իրք , վասն այնորիկ նոքա ևս
խորհուրդ կոչին : Չորրորդ՝ փոխանակ բարձրագոյն
իմաստուն կամ գերազոյն իմաստութե , Վարդ մարդա-
րէն աստանոր առնու զիտրհուրդն ըստ առաջնոյն և
ըստ երկրորդին :

Իսկ խորհուրդ մարդոյ կամ առանձինն կերպաւորի՝

յու և իցէ մարդ՝, կամ հաւաքապէս՝ յու և իցէ բազմութեն. և կամ տիրողապէս՝ յայս և յայն իշխան կամ յայս և յայն թագաւոր են: Իստ առաջնոյն դնէ: * տէր ցըռուէ զխորհուրդս հեթանոսաց || • ուր հեթանոս ասելով իմանայ զայնոսիկ՝ որք առանց այ կամ արտաքոյ օրինաց այ խորհելով կամին գործել ինչ: Իստ երկրորդին դնէ: * անարդէ տէր զխորհուրդս ու ժողովրդոց || • ուր ծողվարդ ասելով իմանայ զայնոսիկ՝ որք բազմութեամբ՝ ի մի ժողովեալ խորհեն զայս ինչ կամ զայն՝ արտաքոյ իրաւանցն այ: Իստ երրորդին դնէ: * արհամարհէ տէր զխորհուրդս իշխանաց || • ուր իշխանօք իմանայ զայնոսիկ՝ որք իշխեն այլոց: Օ այս եղաք վասն որոշումն ինչ տալոց երից հատուածոց առաջիկայ բանիդ: բայց յին հայեցեալ իւրաքանչիւր հատուածք սորա ՚ի նոյն ակնարկեն: Իրդ նախ ասէ:

Տէր որո՞ւէ վարդարդ: հեթանոսաց: Այսինքն է զօր ինչ և խորհեցին հեթանոսք, և կամ այլ ու և իցէ մարդիկ՝ ի միտս իւրեանց՝ թէ: և իմաստութիւն խորհեսցին, եթէ չիցէ հաճոյ այ խորհուրդ նոցա, ցըռուէ ած զայն բազում օրինակաւ. մի՝ փոխելով զՃանաշմունս նոցա, զի զոր յառաջն այսպէսն լինել պատշաճ տեսանէին, ոչ ևս տեսցեն պատշաճ. այլ անպատշաճ և անտեղի: Երկրորդ՝ զայլ ինն խորհուրդ արկանելով՝ ի միտս նոցա, մինւել ժողուլ նոցա զառաջինն, և ՚ի նորն յայն յարիլ: Երրորդ՝ առաջի առնելով զայնպիսի ինչ, որով անկարանայ գործադրութիւն խորհրդոց նոցա, Սորրորդ՝ խափանելով զխորհեալսն՝ ՚ի գործադրութեան անդ, և կամ ընդ հակառակն շրջելով զայն, և կամ՝ ի վնաս գարձուցանելով: Հինգերորդ՝ իսպառ Ծնծելով՝ ի մոտաց նոցա զխորհուրդն զայնոսիկ՝ ուղ թէ ընաւ երթէք չիցեն խորհեալ զայնպիսի ինչ: Եւ այլ ևս բազմապատիկ օրինակաւ կարէ ցըռուէլ ած զխորհուրդս մարդկան: զի խորհուրդք նոցա որով հետեւ՝ ՚ի չափաւոր մոտաց յառաջ գան, ՚ի բազում իրս կարեն պակասաւոր գտանիլ և առաջի իմաստութեան այ անհաճոյ կամ անպիտան և կամ վնասակար համարիլ, վասն որոց և ՚ի հրամաննէ նորա ցըռուիլ: Եւ թէպէտ ու իցէ մարդկան խորհուրդք առաջի այ այս-

պիսի են , բայց մանաւանդ նոցա՝ որք չունին զլոյս
յայտնութեն այ , որպիսի են հեթանոսք և հեթանո-
սահանգէտ մարդիկ , որք միայն լուսով բանի և վկայ-
ութք մարդկան վարին , և ոչ յայտնութք այ , և ոչ
ներքին լուսաւորութք մտաց . վասն որոյ և 'ի բազումն
կարեն սիսալիլ , և սիսալին իսկ : Հայս հայի և յաջորդ
բանն՝ զոր ասէ :

Այտքէ որ պարհութք ծողովորոց , և արհամարհէ որ ըշ-
խորհուրդն իշխանաց : **Ա**յսինքն՝ զինչ խորհուրդ և խոր-
հեցին իւրաքանչիւր ազգք և ժողովք նոցա , եթէ
այն խորհուրդք չիցեն համաձայն ձանաշմանն այ , կամ
ըստ համցից նորա , անարդէ ան զայնո , և իբր խո-
տան ինչ ՚ի բաց մերժէ . և ոչ ժողու՝ զի կատարեւ-
ցին խորհուրդք նոցա : **Ա**յս ոչ միայն զխորհուրդս այ-
նոցիկ ազգաց և ժողովրդոց ցրուէ ՚ի բաց , այլև ըզ-
խորհուրդս իշխանաց նոցին . զօրօրինակ յորժամ իշ-
խանք ժողովրդոց , կամ թագաւորք նոցա խորհին
առնել զայս ինչ կամ զայն , շինել զայս ինչ քաղաք ,
դնել զայսպիսի ինչ օրէնս , պատերազմիլ ընդ այս
ինչ տէրութեան , առնուլ զայս ինչ տեղի են , եթէ
այս խորհուրդք նոցա ոչ գտցին համց յաջս այ , ար-
համարհէ զայնա , և ոչ ժողու կատարիլ . և երբեմն
ընդ հակառակն ըրջէ . (յոր . ժք . 24 :)

Եթէ բազում խորագիտութք ևս կամիցին յառաջ
տանիլ զխորհուրդս իւրեանց՝ յորժամ ան հակառակ
տեսանէ զայս իւրոց խորհրդոց , առնէ՝ զի խորհուրդք
նոցա դարձին ՚ի զըսւխ նոցին , յոր միտս ասէ առա-
քեալն . * **Ա**յս ըմբռնէ զիմաստունս ՚ի խորագիտութէ
՝ իւրեանց || . (առ . կոր . դէ . 19 .) իբր զի յանդիման ցու-
ցանէ նոցա , թէ զոր խորհեցայք ձերով խորագիտու-
թք առնել զայս ինչ զոր կամէիք , արարից՝ զի այնու-
խորհրդով առնիցէք զայն ինչ զոր ոչ կամէիք : **Ա**յս
թէ այն խորհուրդ ձեր , որով խորհեիք այսպէս առ-
նել կամ այսպէս , զայս ինչ խափանել և զայն ինչ
յառաջ տանիլ , ընդդէմ ձեր դարձին , որպէս եղեւ
խորհուրդ իշխանացն հրէից ՚ի վերայ ոտն մերոյ . զի
զոր ինչ խորհեցան ՚ի խափանել զհրատարակումն
յարութեան նորա , այնոքիք ամենէքումք առաւել
ևս հրատարակեցին զայն . որով և խորհուրդք նոցա

Խայտառակեալ առակ նշաւակի եղեն , և արհամար-
հեցան :

Այսպիսի են և խորհուրդք այնոցիկ ամցուն՝ որք ըստ
մարդկային դիւրեղծանելի մտաց կշռեն և չափեն .
իսկ խորհուրդ տն մնայ անեղծ յաւիտեանս . սմին իրի
յարէ զկնի , և ասէ :

Թ. **Ա** Սորհուրդ առ յաւիտեան մնայ . խորհուրդ սրբի նորա
աղքէ մինչև յաղք :

Խորհրդով տն իմացեալ լինի աստ այն անփոփոխ
ձանացումն այ՝ որով ՚ի յաւիտենից սահմանեալ է
առնել զայս ինչ և զայն . այսինքն ստեղծեալ զաշ-
խարհս , կառավարել և ածել զամենայն ինչ առ այն՝
յոր խորհեալ է հասուցանել : Օսոյն ցուցանէ և ա-
սելն * խորհուրդ սրտի նորա || . ուր սիրտն դնի փո-
խանակ կամացն այ . ուստի և խորհրդով սրտի՝ ի-
մացեալ լինի հաճութիւնն այն՝ որով կամեցեալ է ած
առնել զայս ինչ և զայն : Յայսոսիկ ակնարկելով
մարգարեին՝ ասէ :

Սորհուրդ առ յաւիտեան մնայ , խորհուրդ սրբի նորա աղքէ
մինչև յաղք : Արպէս թէ ասէր . խորհուրդ տեառն ոչ է
իբրև զխորհուրդս մարդկան փոփոխական , այլ է
անփոփոխ յաւիտեանս յաւիտենից . և ոչ ևս է ընդ
իշխանութեալ այլոյ , այլ է ՚ի ձեռին իւրում (եսայ . ին .
13 .) վասն որոյ և զոր ինչ միանգամ խորհեալ է
առնել , անհնարին է՝ թէ ոչ լինիցի , և կամ իւիք
խափանեսցի . և կամ ընդ հակառակն դարձցի : Ուստի
և ՚ի փոփոխիլ ամենայն էից , և ՚ի հոլովիլ ամենայն
ժամանակաց և ՚ի յաջորդել ազգաց զհետ ազգի ,
յամենայնի և յամենայն յաւիտեանս անայլայլելի
մնացէ խորհուրդ սրտի նորա , և հաստատեսցի . յոր
միտս ասէ նա ինքն ած բերանով եսայեայ . (խղ . 10 .)
* ամենայն խորհուրդք իմ հաստատեսցին , և ամե-
նայն զոր կամիմ արարից || :

Խորհրդով տեառն առանձինն առեալ՝ նշանակի խոր-
հուրդն մարդեղութե . որ մնայ յաւիտեան : Այսպէս
և խորհրդով սրտի նորա ՚ի մասնաւորի նշանակի օ-
րէնք , զորս տուեալ է մեզ ՚ի ձեռն մարգարեից և
առաքելոց . որ մնայ ազգէ մինչև յազգ յեկեղեցի ոք .

Արդ՝ որովհետեւ այսպիսի է խորհօւրդ նոն, քանի բարի լինիցի մարդոյ, և քանի երանութեա արժանի, եթե ունիցի զնա իւր խորհրդատու, իւր պաշտպան և իւր օգնական. վասն որոյ և մարգարէն երանի տալով այնպիսումն ասէ :

Ճ. **Ա**րանի աղջե՛ որոյ որ ած օգնական է նմա. Ժողովերտ շր ընտրեաց՝ ի ժառանգութեան իւր : Հեթանոսք պարծէին յածս իւրեանց, և զյոյս անձանց ՚ի նոսա դնելով կարծէին թէ պաշտպանեալ լինին ՚ի նոցանէ յամենայնի . այլ պարծանք նոցա և յոյս՝ կամ նանրանային, և կամ ընդ հակառակն շըշէին . զի յորս ապաւինեալն էին՝ չին ած ճշմարիտ, այլ ածք սուտք, ոլք և ոչ անձանց իւրեանց կարողանային բաւականութիւն տալ, թող թէ այլոց օգնական լինել. (իմաստ . ժկ . 16 .) վասն որոյ որք միանգամ զայնպիսի կուռս ունէին իւրեանց ածս, ոչ թէ երանութեան, այլ վայից էին արժանի . իսկ որոց օգնական է ճշմարիտն ած, երանութե են արժանի .

վասն որոյ ասէ :

Արանի աղջե՛ որոյ որ ած օգնական է նմա : **Ա**յսինքն . երանելի է աղջն այն, որոյ օգնականն ոչ է սուտ ած կամ մարդ տկար, այլ ած կենդանի և ամենակալ . ած ամենիմաստ և ամենառատ, որոյ ողորմութելի է երկիր . որոյ կարողութել կայ ամենայն ինչ . և որոյ իմաստութել կառավարի ամենայն, և զի այսպիսիս համարի ընտրեալ յայ ՚ի ժառանգութիւն, վասն որոյ յարէ զկնի և ասէ :

Ժարեւերտ շր ընտրեաց՝ ի ժառանգութեան իւր : **Ա**ստանօր բառդ ժողովերտ դնի փոխանակ այնը՝ զոր կոչեաց աղդ : **Ա**ւ զոր եդ անդ ՚ի հոլովն տրական, աստ դնէ ՚ի հոլովն ուղղական, առ ՚ի առաւելուլ զնշանակութիւն երանութեն . որպէս թէ ասացեալ էր . արդարև երանելի է աղջն կամ ժողովուրդն այն՝ զոր ընտրեաց տէր, և արար զնա իւր ժառանգութիւն . այսինքն ընտրեաց զնա լինել իւր սեփական ժողովուրդ իւրեւ ժառանգելի յիւրմէ :

Ուստի և յերկուց կողմանց երանելի լինի ժողովուրդ այնպիսի . նախ զի ունի իւր ժառանգութիւն զած . և

Երկրորդ՝ զի ած ունի զնա իւր ժառանգութիւն . որով և
բանք այսր բնաբանի բովանդակի ՚ի սոյն . այսինքն է
թէ երանի ժողովրդեան՝ որ ժառանգէ զած , և ժա-
ռանգի յայ . կամ երանի՝ որ ժառանգէ զած , և ե-
րանի՝ զոր ժառանգէ ած : Եւ զի միայն ժառանգութիւն
այ է երանութիւն մարդոյ , յիրաւի երանելի է մարդն
այն , որոյ ած է ժառանգութիւն , և ինքն է այ ժառան-
գութիւն : Այս ժառանգութիւն այ երրակի մտածի . մի՛ ըստ
շնորհաց , որով հաղորդ լինի մարդ ածային բնութե-
բարոյապէս , և նովին լինի ժառանգ այ , և ած ժա-
ռանգ մարդոյ : Երկրորդ՝ ըստ փառաց , որով հաղորդ
լինի մարդ ածային բնութե իմանալապէս ՚ի ձեռն դէմ
յանդիման տեսութե , որով և ներգործութե ժառան-
գէ զած լիապէս : Երրորդ՝ ըստ անձնաւորական միա-
ւորութեան , որ եղել միայն ՚ի քո , յորում մարդկայինս
բնութիւն միաւորեցաւ ընդ ածային բնութե ՚ի մի անձն
բանին : Որով և ազգ մարդկան միջնորդութե այսր
միաւորութե ընտրեցաւ ՚ի ժառանգութիւն այ կամ յե-
կեղեցի այ , և ած եղել նմա ՚ի ժառանգութիւն : Օ այ-
սոսիկ եղեալ մարդարէին՝ յայտ առնէ այժմ և ըզ-
խնամն՝ զոր ունի ած ՚ի վերայ ժառանգութե իւրոյ .
այսինքն ՚ի վերայ ժողովրդեան իւրոյ . ևս և ՚ի վերայ
ամենայն որդւոց մարդկան՝ որք կան ՚ի վերայ երկրի .
վասն որոյ ասէ :

Ճ Երկինք նայեցաւ առ յամենայն որդիս մարդկան . ՚ի
պատրաստ բնակութենէ ի-ընէ նայեցաւ յամենայն
բնակելս աշխարհէ :

Երկինք ասի լինել աթոռ այ և երկիրս իբր պա-
տուանդան . ըստ այնմ եսայ . (կղ . 1 .) * Երկինք ա-
թոռ իմ են , և երկիր պատուանդան ոտից իմոց || :
Եւ զայս ոչ է պարտ իմանալ ըստ նիւթական կազ-
մութեան , այլ ըստ սեփականութե , ըստ այնմ զոր ասէ
սաղմոսերգուն . * Երկինք երկնից ոռն են , և զերկիր
ետ որդւոց մարդկան || . (ՃՃ . 16 :) Երբ զի որով
հետեւ բարձր են երկինք և անապական , ՚ի բարձրութե
և յանապականութե ըմբռնելով մեր զբնակութիւն այ ,
նմա սեփականեմք զերկինս , և յայս միտս ասեմք
թէ յերկինս է ած , ևն . և այսու օրինակաւ ըմբռնե-

լով մեր զբնակութիւնն այ, զինամելնորին ևս նայեցուածոյ նմանեցուցանեմք, և նովին յայտ առնեմք զայն ասելն՝ թէ նայի յերկնից . ըստ այսմ մտաց իօսի և աստ մարգարէն ասելով :

Յերինեց նայեցաւ պը յամենայն որդիս հարդիան, ևն : Այս նայիլս ոչ զուցանէ, թէ նայի առ ՚ի տեսանել և զիտել, այլ թէ արդէն տեսանէ զամենայն և զիտէ, և նայի առ ՚ի խնամել, որով և միտ բանին լինի այս . ած թէպէտ և ՚ի բարձրութե երկնից է, բայց տեսանէ զամենայն որդիս մարդկան, և ոչ անտես առնէ զորս ստեղծ ՚ի պատկեր իւր . նայի հայրական գթով, և խնամէ արարչական սիրով . և որպէս զի իմացուց ցէ մարգարէն՝ թէ ոչ միայն յորդիս մարդկան նայի ած, այլև յամենայն որք յաշխարհի են, յարէ զկնի, և ասէ :

Իպատրաստ բնակութէ իւր ՚ նայեցաւ յամենայն բնակիչս աշխարհէ : Այսինքն յերկնից անտի զոր պատրաստեալ է ՚ի բնակութիւն իւր իբր յաթոռ նայեցաւ և եցոյց զինամն իւր յամենեսին ՚ի նոսա՝ որք բնակին յաշխարհի, այս է՝ որք ենն յաշխարհի՝ իբր ՚ի բնակութե իւրեանց : Առվաւ կամի ևս ցուցանել մարգարէն, թէ բնակութիւնն այ, կամ աթոռն՝ յորում բնակի ած՝ անբաւ բարձրութե հեռի լինելով՝ ՚ի բնակութէ արարածոց, ոչ լինի արդել տեսանելոյ նմա զարարածո իւր . զի թէպէտ և յանչափ բարձրութեան է, բայց յամենայնի ներկայ ևս է ամենայն ուրեք . և ուր միանգամ հայի՝ անդ է :

Այս նայիլս այ վերածի և յայն՝ զոր ասաց այլուր մարգարէն, * աէր յերկնից նայեցաւ յամենայն որ զիս մարդկան՝ տեսանել, թէ իցէ ոք իմաստուն, որ խնդրիցէ զած || . (զորմէ տես ՚ի սաղմ. ժկ. 3 .) Եւ զի պատճառ նայելոյն այ ՚ի բնակիչս աշխարհի այն է՝ զի ինքն է արարիչ նոցա և տեսուչ, սմին իրի յաւելու ասել :

Ժը . **||** սրեշծ առանձին շսիբաս նոցա . ՚ի միտ առնու զամենայն գործս նոցա :

Այս բան յայտ է՝ թէ ոչ հայի ՚ի ստեղծումն սրտի ու և իցէ կենդանւոյ, այլ մարդկան միայն : Եւ ըստ

այսմ սրտիւք իմացեալ լինի այն՝ որ է սկիզբն գործելոյ մարդկային օրինակաւ . և զի սկիզբն այսպիսի օրինակաւ գործելոյ է կրկին , արմատական՝ այսինքն է հոգին , և մերձաւոր՝ այսինքն է կարողութիւնորա , որ է միտք և կամք , սրտիւք իմացեալ լինի աստ արմատաբար հոգին , և մերձաւորապէս միտքն և կամքն :

Առքա ասին սիրտ ըստ երկուց . մի՝ զի որպէս սիրտն է սկիզբն կենսական շարժման , սոյնպէս և սոքա կենդանական և հոգեսորական շարժման : Եւ մի ևս՝ զի ցորչափ կենդանի է մարդն՝ հոգի նորա և միտք և կամք՝ ի գործել իւրեանց ունին կապակցութիւն ընդորտի իւր ընդ կենսական սկզբան , վասն որոյ և՝ ի կապակցութ անտի ինքեանք ևս յարանուանին սիրտք :

Վարթ է ասել՝ թէ աստ սրտիւք նշանակի . և նոյն իսկ մարմնեղէն սիրտն , ըստ որում է աղբիւր շարժութեան՝ ի մարդն , ՚ի սոսին ակնարկելով ասէ :

Ոստեղծ առանձին զարդար նոյնա . Արպէս թէ ասէր . նայեցաւ ած յերկնից յամենայն որդիս մարդկան՝ ոչ իւր յօտարս կամ իւր յայնս՝ որք ստեղծեալ իցեն յայլմէ , այլ իւր յիւրս կամ իւր յայնս՝ որք ստեղծեալ են յիւրմէ . զի ինքն ստեղծ առանձինն զհսպիս նոցա , զմիտու և զկամն՝ ևս և զսիրտու նոցին ,

Եսկ յասելն առանձին՝ նշանակէ յատուկ յատուկ իւրաքանչիւր մարդոյ . նշանակէ ևս թէ զայնչափ բազմութիւն սրտից , որք ըստ այլևայլութե դիմաց՝ ամենեին յայլ և այլ բերին՝ իւրեւ զմի սիրտ ստեղծեալ է ած ոչ՝ ի միասին , այլ առանձին առանձին , և իւրեւ զմի քննէ զամենայն , և՝ ի միտ առնու զամենայն շարժուածս նոցա . և առ այս յարէ և ասէ :

Ոդա առանձ զամենայն գործս նոյնա : Եւ յսինքն տեսանէ և ձանաչէ զամենայն շարժմունս սրտից մարդկան , զամենայն ձանաչմունս նոցա և զամենայն կամեցմունս նոցին , զի որ կարաց ստեղծել զսիրտու նոցա , զմիտու և զկամն . ապա անտարակոյս կարաց և կարէ քննէլ զայնս , և իմանալ զորս են՝ ի նոսա . այսինքն զգործս նոցա :

Եւ յւ այս իմանալս կամ ձանաչելս , որով ած՝ ՚ի միտ

առնու զամենայն գործս և զգաղանի շարժմունս
սրտից մարդկան, ոչ է սոսկ հայեցողական, իբր թէ
սոսկ ձանաչէ զայն, այլ արարչական. իբր զի՞ զորս
միանգամ ձանաչէ 'ի գոյութեն, ձանաչելովս առնէ՝ զի
լինիցին և իցեն. իսկ եթէ ինքն ոչ ձանաչիցէ, դա-
դարի ամենայն, և ոչինչ զործի յերկրի. և եթէ
կայցէ ևս զօրութիւն ինչ՝ քանի և մեծ իցէ, առանց
նորա ոչ ներգործէ ինչ. Եւ զայս ցուցանի մարգարէն
երրեակ օրինակօք, որք թուին յաչս մարդկան՝ թէ
կարիցեն առնել ինչ. զորս և յերկուս համարս ըո-
վանդակէ ասելով:

ՃՂ. **||**'ՀԱՅ ՚Ի Բաղրամ զօրս եւր ապրեսի Առաքառար. և
ոչ սիայ ՚Ի Բաղրամ զօրութեն Երում:

ՃՂ. **||** Առաք է Յէ ՚Ի Քրիստեն իւրամ. ՚Ի Բաղրամ զօրութեն
իւրամ աչ ապրեցաւյանէ շնչեծեալն:

Եյս բանք դիտեն ցուցանել թէ առանց նածային
տեսչութեան կամ առանց այ ոչինչ լինի, և ոչինչ յա-
ջողի յարարածս. իսկ որք միանգամ յաջողին՝ օգնա-
կանութեն այ յաջողին. Եւ ասն որոյ եթէ 'ի վերոյ
երանի ետ այնոցիկ՝ որոց օգնական է ած, ապա վայ
տալի է այնոցիկ՝ որոց ած ոչ է օգնական. զի թէև տր
իցեն բազմութեն զօրաց՝ որպիսի են թագաւորք, եթէ
ած ոչ իցէ նոցա օգնական, ոչինչ կարասցեն առ-
նել, և ոչ իսկ զանձինս ապրեցուցանել. վասն այնո-
րիկ ասէ:

||'Հ ԱՅ ՚Ի Բաղրամ զօրս եւր ապրեսի Առաքառար. Եյսինքն
թէ, ու և իցէ թագաւոր որչափ և բազում զօրս ու-
նիցի և զկահս պատերազմի, 'ի մարտնչիլ անդ ընդ
թշնամիս իւր՝ եթէ ած ոչ յաջողեսցէ, ոչ կարէ առ-
վարդի ընդ նման . հանապազ խօսակից լինել ընդ նա .
ակն ունի տեսանել և ժառանգել զնա . զգուշանալ
յամենայնէ՝ որ ինչ ատելի է առաջի նորա . զհետ
լինել այնիր ամենայնի՝ որ ինչ հանց է յաշ նորա .
և այլ ևս այսպիսի հոգեւորական բերմունք առ ան-
են այնպիսի բարի գործողութիւնք , զրու եթէ որ
մոտագիւր խորհեսցի , և սրտի մոտօք կամեսցի և արաւ-
ցէ , հոգեւորապիս ճաշակէ . և ճաշակելով տեսանէ՝
թէ քանի քաղցր է այսուիս վարիլ , և այսու իմմայ
թէ ապա քանի քաղցր է նա , որոյ վասն արարեալ
լինի այս ամենայն . որով և յափշտակեալ ՚ի քաղցրուի
զթութեան նորա գուշոցի , առ նա ընդ նարեկացոյն
(՚ի բանն , հէ .) * ուշ քաղցրութիւնք և երկայնամիտ
, բարերարութիւն ողորմածիդ գթութեն : Հայսուիկ
հայի առաջիւ եղեալ բանդ յասեն :

Դուշիւշէ և ուշուշէ , զի առշը և որ : Դուշիւշէ առե-
լալ յօրդորէ մասցիլ առ տեր ըստ նախակարգելոցդ ,
և փորձիւ ՚ի միտ առնուել , որովիս թէ առեր . ՚ի վկայել
իմում՝ թէ քաղցր է ծառայել այց , եթէ բանից իմոց
ոչ հաւատայց՝ զուք ինքնին մատիր , և առէք զնա-
շակ կամ զփորձ առայելոցս . եթէ այսմ պարապես

ջիք , առեօջիք՝ զի քաղցր է տէր . ըստ որոյ սարդիս
հնորհալի (՚ի մեկն . յակ . առ . ՚ի հանխարանութեն) ըն-
թեանու . * պարագեցիլք և տերեք և ևն . Օ այս
մասշիթ և զայտ փորձ առնուլս քաղցրութեանն այ , և ս
և զայտ պարագիս՝ քայցատրէ բառիւս ճաշիեցէն , առ
՚ի ցուցանել , [թէ մասակելով լինի ճաշակել և առնուլ
դշամ . և այնու հասու լինել թէ նա ինքն է ինքնա-
բուն քաղցրութիւն , և ինքնարաւ երանութիւն . որ յե-
րանացացիք քաղցրութենէ անտի՝ զօր ունի յինքեան՝
վեզու ՚ի հոգիս նոցա պրը պաշտեն զնա : Կարձեալ
ճաշիեցէն դնելով կամի յայտ առնել զջչմարտութիւն
քաղցրութենն այ , Բաղցրութիւն և բարութիւն արարա-
ծոց նկար իմն են . իսկ ածայինն ճշմարտութիւն , մինչեւ
ոչ միայն տէսանիլ , այլ և ճաշակիլ , մանուսանդ թէ
նախ ճաշակիլ և աստա ՚ի ճաշակիլս տէսանիլ : Յայս
միտ առեալ և տարգիտ հնորհալի (՚ի մեկն . առ . պէտ ,
թ . Յ . ճառ . դ .) առէ , թէ մարգարէն * զամենեսեան
Հրանիքելով ՚ի մեզանն ածայինն հարսանեացն յոր
զորէ վայելով յառաջի եղեալ կերպելոցն , և ՚ի
նմանու ճաշակիլ զանբաւ քաղցրութեանն այ զառա-
և ւելութիւն , այսպէս ունելով բանին . ճաշակեցիլք և
տիւալք , զի քաղցր է տէր . վասն զի ամենայն կերա-
կուր ՚ի ճաշակիլն ունի տալ զզգայութիւն որակուեն ,
ու եթէ ախորդէելի արդեօք իցէ , կամ ներհակ , և
այ ՚ի տէսանիլն . վասն զի տէսօնի բազմախարէ , ՚ի
վերին երեսն հայելով զգունաւորութիւնն տէսանէ
առեալ արգեօք իցէ , կամ սպիտակ կամ կարմրագոյն
կամ դեղին . ապա նմանագոյն իմն նախ զճաշա-
կելն ասաց , և ապա զուտաննելն : Բայսիսիս մա-
տահր իմն հաղորդ զտանի ածայինն երանութեան , յու-
սացեալ ՚ի նա ինքն յանձ , և առ այս յարէ զինի մար-

գարէն , և առէ :

Ճաշանաւուն այր , որ յառաջ ՚ի նա : Բառով յառաջն ոչ զնի
առտ տօնկ փոխանակ ներգործութեան յառաջոյ , այլեւ
փոխանակ յարելոյ յանձ ՚ի ձեռն յուսոյ և սիրոյ , ևս
և ՚ի ձեռն խնարհութեն և համբերութեն , ևն : Ելու-
սիսիս թէտէալ մարմնով յինքեան կեայ , բայց հոգ-
ւով ընդ այ միացեալ զօրանայ , և ածայինն բարեօք
լիսցեալ բերկրամիտ մնայ , և յամենայն վտանզից

հոգւոց ազատանայց : || ամս օրոյ և իրաւամբք երս նեալ ասի . (զորմէ տէս 'ի սաղ , առ և 'ի սաղ , ձմբ .) || Սոյնպէս տէս ևս անդ . (թէ ընդէլ ու ասի ասու մարդ , այլ այլ երանեալ :)

Այս բան ծէ միայն հայի առ արդարս , այլև առ մեզաւորս , որը 'ի զզջումն եկեալ գառնան բոլորով որաիւ առ ոոծ . և զյոյս իւրեանց 'ի նա միայն եզգեալ ջանան նմա միայն ծառայել , և զհաճօս նորս և եթ առնել , Այսպիսիքս հաշակեալ միանդամ դրաց բռութի ծառայութեն այ և ըստ բամբէ . զգիառեն չոր հայն քաի , բարուք ևս հանաւեն , թէ քանի բարի է ոոծ : Իր հայելով յանցեալ կեանս իւրեանց յիւնեն , թէ քանի բառն եզեւ նացա հեաանալ յոց , և ծառայել մեղաց , որով և ամաչեն ընդ այն յանձինս իւրեանց . * իսկ արդ (ասէ առաքեալն) զի՞նչ պատօղ ունեիք յայնժամ՝ որով այժմկ դամօթի հարեալ էք . զի վախճան նոցա մահ է . բայց արդ ազառանց ցեալք 'ի մեզայն , և ծառայեալք այ մասիք զոյլ տուղ ձեր 'ի սրբութիւն . և վախճան նորս կեանք յաւիտենից . (Հառլմ . դ . 21 .) Այսպիսեաց է բերկրիիլ , և ասել ընդ երանելոյն ընդ այնմիկ . աւանդ՝ զի անագան ծանեայ զբեզպ տելու : Կարհ հրդաբար այս բանք ասին 'ի զիմաց եկեղեցւոյ առ իւրաքանչիւր հաւատացեալը մասութիւ առ ակր 'ի խորհուրդ հազորգութեան , և իրավեն հաւակել զնայն բնիքն զաերն փառաց բերանով , և ընդունիլ զնա յօթեան սրբից իւրեանց : Իր զի 'ի ցող ևս օրինակի այս խորհուրդ իջեալ յերկնից 'ի սուրբ սեղաննեւ յորդորէ զմեզ եկեղեցի սուրբ 'ի ներ իրբե մեղու և յաւ նուն զայն՝ ասմանի 'ի փեթակ սրբից մերօց . և զյոյս մեր բոլորովին 'ի նա հաւատատելով սփոփիլ 'ի հոգիս . և իբր առ հաւատէիւ յաւիտենատկան երաննութեան երանանուլ յաշխարհի աստ , և ածազգեաց իմն լինել : Տա սոյն խորհուրդ ևս տարանձէ աարդիս չոր հայի զայս բան 'ի վերացիչեալ տեղիդ ասելով . * և եթէ ումեք սիրելի իցէ ասկս խորհրդական աւզանց այս մարմայ և արեանն քաի ինհանալ զբան մօրդ զարէին՝ (զոր ասէ հաշակեցէլք և տէսէք) ծէ ինչ կարի օտաքացուցանէ յիւնասարիյն . եթէ որ արդա-

,, նապէս ճաշակեն զհայն յերկնից իջեալ զտուօղն
,, կենաց աշխարհի , և ընկեն զարիւնն անմահացու
,, ցիւ կենդանոյն այ , փոխանակ կաթին քաղցրութիւ
,, նուն . և ածատեսակ եղեալ և յանձ միացեալ ճա-
,, չսկեն՝ զի քաղցր է տէր || :

Վ. Ա. քանզի ասպականեալ բնութիւն մեր ՚ի ճաշակեն զքաղցրութիւն այ , և ՚ի գտանել հանգիստ յածայինս , վստահութիւն ինչ ևս առնու , յորում եթէ յամեացի , անկանի յանհոգութիւն , և յայնմանէ յանզգուշուի , որպէս սրատահեցաւ բաղմաց , ևս և նմին իսկ զառ թի , հարկ է ունիլ և զերկիւղ ՚ի սրտի . վսոն որոյ յետ առաջի դնելոյ մարգարեին զհաշակ քաղցրութեն այ , յերկիւղ յորգորէ զհաշակօղն , և ասէ :

Ձ. **Ճ.** Ճիշերուտ ՚ի ունչ ամենայն պէս նորա ոչ ունինչ է որու հասունի է ըստուծաց նորա :

Օ այս երկիւղ առաջի դնէ մարգարեն իբրեւ կնիք երից աստիճանաց կատարելութէ . զի նախ եղ (՚ի համարն օ .) մատիք առ տէր և յետոյ թէ առէք զըսա . և առա յաւել զինի ՚ի նախոնթաց համարն թէ ճաշակեցիք , ևն . իսկ աստ թէ երկերուք : Վ. ու ածինն հայի առ այնոսիկ , որք դառնան առ ած մատցելով ՚ի նա . երկրորդն հայի առ այնոսիկ որք յարելով յած լուսաւորին ՚ի նմանէ . երրորդն հայի առ այնոսիկ որք միանան ընդ այ հոգեափեն՝ ճաշակելով զքաղցրութիւն նորա : Խակ այս զոր ասէ * երկերաք ՚ի տնէ ,, ամենայն որք նորա || . առանձինն հայի առ այնոսիկ որք մնան հաստատուն յայնու միաւորութէ ածայինում . զի երկիւղն այ է պահանիս միաւորութեան հոգւոյն ընդ այ մանաւանդ երկիւղն որդիական , որ է ՚ի սուրբս այ :

Վ. յո երկիւղ է ծայրագոյն պատկառունք հոգւոյ առաջի մեծվացելութեն այ . յորմէ հաստափնդինախ ծայրագոյն խոնարհութիւնի ՚ի հոգին . և երկրորդ ծայրագոյն զգաստութիւնի ՚ի կարողութիս հոգւոյն շառնելոյ ինչ ընդդէմ այնպիսի մեծվացելութեն : Վ. յասիսի որդիական երկիւղ ծնանի ՚ի ծայրագոյն սիրոյ . զի որ մեծապէս սիրէ զօք , մեծապէս երկնի զզոցրացուցանել զնա . և ջանայ ըստ համոյս նորա վարիլ :

Ծայս երկիխող ակնարկէ առա բան մարդարէին յա-
սեն :

Եթէրտ ՚ի ունե ամենայն քըս նորա : Որպէս թէ առեր-
որք միանգամ մէրձենալով առ անց սրբեցայք և լու-
սաւորեցայք, և հաշակելով զբաղցրութիւն նորա : յա-
րեցայք ՚ի նա , ունիջիք զերկիւդ սուրբ առ նա , և իբրե-
սրբի զգուշածիք յամենայնէ՝ որ բնդգեմ ից ! որը
բութեան նորա : Եւ եթէ ասիցէք , ՚ի կեալ մեր այս
պէս՝ բազում ինչ պակասի մեզ , մի ինչ հոգայք . զի

Օ չ ոչ ինչ է պահառակն եքիւշածաց նորա : Եթէ ոչ անծ
առելով ոչ իմանայ զայն՝ որ ունի միայն զերկիւդ ,
այլ զայն որ ընդ երկիխզին ունի զաւըն ոյ , և զարբութի
սրտի , զի զայտափիսի կուն զիրք երկիխզածս : յոյր
սակէս խակ ոչ զնէ մարդարէն սոսկ՝ երկիխզածաց : այլ
յառելուածով յասելու , երկիխզածաց նորա , այս ովք
ու առ առէ ոչինչ պակասութիւն իրաց կարէ լինել կամ սակ
ըստ մարմնոյ , կամ սոսկ ըստ հոգւոյ , և կամ միան
զամայն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ : Պակասութիւն
իրաց ըստ մարմնոյ կուտէ լինել երբամիք : մի այնովք
ոի իրաց , առանց որոյ ոչ կարէ կեալ մարդ . ըստ
այսու ոչ ինչ պակասութիւն է երկիխզածաց ոնք . զի
ոչ երբէք եթօղ անց զոք յայտիսի սակասութիւնն ,
զի եթէ զժուշունա՞ որք ծը սերմաննէն և հէ հնձեն
ոչ թողու պակասիլ յայտիսեաց . այլ կերակրէ և
սահմէ զնուա , քանի ևս զայնապիք՝ որք երկիխզիւ
սրաչուեն զնու . յայս հայի և բանն քնիք . զոք առէ (՚ի
մասու . դ . 26 = 34 :) Երկլորդ՝ այնպիսի իրաց , ա-
ռանց որոց թէպէտե մարմէ է կեալ , ըայց առաւազա-
նոր . ըստ այսօւ ոչինչ պակասութիւն է երկիխզա-
ծաց ոնք . զի թէպէտե . ՚ի կոսմանէ իրայն ունիցին
զպակասութիւն , սակայն ՚ի կոսմանէ իբրեանց ունին
զիտութիւն նոյցին . ըստ այնու զի ունելով զառանեն
՚ի յած՝ ոյնու համարին զայնս . և եթէ առաւազիցին
ևս ՚ի նոսմն , ՚ի վերաց այսոր ամենայնի՝ սրտաստ գո-
լով կրել վաճն ոնք , և համբերել ՚ի վաճն նորա , այնու
չափ ուրախութեամբ սրտի առնին այնպիսի պակասու-
թեանց , մինչև առաւել միսիթարիէ ՚ի նմին ըստ հոգւոյ

քան վշտանայլ ըստ մարմնոյ , զրոյ զփորձն բաղրամք
առին 'ի որց . Այժէ զյոր ևս 'ի մէջ բերցես , ըստ
այսօմ մասին և ոչ նմա եղեւ ինչ պակասութիւն . քանզի
զօրութիւնն այ՝ որ ընակեալ էր 'ի նմա , առնէր զնա
իրբեւ զլէմ անվանելի , որպէս թէ լի էր բարեօք .
Այլորդ՝ այնպիսի իրաց՝ որ աւելորդ է . այլ գայսմա-
նէ ոչ է բան մարգարեին . զի չունին զայսպիսին
ոչ է պակասութիւն կրել , այլ թեթևութիւն ,
Պակասութիւն իրաց ըստ հոգւոյ ևս երրեակ է . նախ
պակասութիւն չնորհաց , և ըստ այսմ յայտ է՝ թէ
ոչնչ պակասութիւն է երկիւղածոց տեառն . առա թէ
ոչ և ոչ իսկ երկիւղածք տն առնին . զի առ 'ի լինել
երկիւղած տն՝ յառաջադրոյն պարս է լինել 'ի չնորհս
այ . Այրկրորդ պակասութիւնն է առաքինութեց . և ը-
այսմ ոչ ինչ պակասութի է երկիւղածոց տեառն . իրը
զի՝ ոչնչ առաքինութիւն պակասի նոցա . զի կամ ներ-
գործութիւն ունին զայնս՝ որպէս է 'ի կատարեալս , և
կամ զօրութեամբ , որպէս է 'ի սկանօղս և 'ի յառաջա-
դիմն որոց ոչ պակասուցուցանի տէր զօգնուի իւր՝ զոր-
ծել զզործս բարիս յառիթ ս առաքինութեանց . զօրորի-
նակ յառիթ ս խռնարհութեան , հեղութեց , համբերու-
թե , արդարութե , ողջախուցութե , ևն . Այլորդ պա-
կասութիւնն է հոգեորական միխթարուն . ըստ այսմ
թէպէտ և ըստ զգայութեց և ըստ ստորին մասին բա-
նականութեան բազում անդամ լինի յերկիւղածս այ
պակասութի , որպէս պատահի 'ի ցամաքութե հոգւոյ .
բայց ըստ վերին մասին ոչնչ պակասութիւն միխթա-
րութեան է 'ի նոսա . զի առաջնորդ ունելով զլոյս կեն-
գանի հաւատոյ , և զներգործութիւն յուսոյ և սիրոյ ,
նովին սփոփին հոգիք նոցա , թէև իցեն 'ի վերջին
շփոթութեան փորձութեանց զգայութեան :

Վքդ այսպիսի պակասութիք , որ ըստ հոգւոյ . և որ ըստ
մարմնոյ երբեմն 'ի միասին են , և երբեմն որոշ . բայց
որպէս և իցեն , հայրական ինսամբն այ ոյնպէս վարի ,
և այնպիսի ինչ առնէ , զի երկիւղածք իւր մի ունիցին
պակասութիւն ինչ ըստ վերցյզրելոցդ . Օ ի որովհեան
նորա ոչ զննքեանս և ոչ զհաճնցս իւրեանց ինզգին ,
այլ զնն և զհաճնցս նորա , և զարբայութիւն նորին ,
նա ինքն ևս պռնէ զնոսա համեալ , և ըստ պիտոյից

մարմնոյ անչողութեալ տալով նոցա ըստ բաւականին որ
պիտոյն է . մանաւանդ թէ զաւելին ևս . քանզի ինքն
իսկ առաց * խնդրեցեք նախ զարբայութիւնն այ, և այդ
անմ (պիտոյք ոչ միայն տացին, այլ և) յաւելցին .
(մատ . կ. 33 :)

Եւ եթէ պակասեսցին յայսպիսեաց ևս՝ սրպէս առա-
ցաք, որչափ պակասին՝ այնշափ թէ թևանան՝ ի ծան-
րաբեռնութեց, և լիանան ածային բարեօք, և ուրա-
խանան իսկ ընդ այն, զի՞ ի մարմնաւորացն պակասե-
լով հոգևորացն հաղորդ գտանին . **Ուր** թողցուք
զայն, զի այսպիսիքս կենաց հաղորդ գոլալ երկնաւոր
թագաւորի և բարեկամնորա՝ վայելեն՝ ի բարութեան
նորուն . ևս և գոլով որդիք նորա՝ ունին ժառանգել
զանսպառելի և զանբաւ լիութիւն գանձուց նորին .
Իսկ որք պակասեալք իցեն՝ ի սիրոց և յերկիւզէ նո-
րա, թէ և ըստ աշխարհի մեծ երևեսցին և փարթամ,
մեծութիւն և փարթամութի նոցա յիրում ընդունայ-
նութի է և աղքատութի . և ինքեանք իսկ հանսպազ
'ի վտանգի են պակասերոյ և աղքատանալոյ, և ան-
կանելոյ ի թշուառութիւն կենաց . զոր և յայտ առնե
մարգարէն յաջորդ բանիւն ասելով :

Ճ. **Ո**ւծամշծա աղքատացան և գոլութեան, բայց ոչ եւընդ-
քեն պար՝ մի պահատեսցէ ՚ի նոցանէ ամ բարութիւն :
Վեծամեծք ասեն աղքատանալ ըստ երից . մի՝ ըստ
հոգևորին . զի որչափ յարեւալ են սիրաք նոցա՝ ի մե-
ծութիւնս; այնշափ աղքատացեալ են՝ ի հոգեոր բա-
րեաց, և մեկնեալ յայ . որպէս ասի զանօթոյ թէ
* որչափ լցեալ է՝ ի նաւեթից, այնշափ պակաս է յայլ
Հիւթից . թնդ զայն, զի մեծութիւն նոցա գոլով
արմատ ամ շարեաց իբրև փոց՝ փալից առնէ զհոգիս
նոցա, յորո եթէ անկցի բան ինչ ածային, կամ տրն-
կեսցի ազգեցութիւն ինչ երկնային՝ հեղձնու, և ըս-
րանայ, որով և իսպառ աղքատանան .

Երկրորդ՝ ըստ կարօտութեան մարմնաւորաց, զի մեծա-
մեծք որչափ ինչ մարմնաւոր ունիցին, ՚ի նույն իսկ
աղքատ են և կարօտ . և պատճառն է, զի կամ շա-
տանան նոքօք, և կամ ոչ . եթէ շատանան, շատա-
նան այն ոչ է նոցա, այլ փարթամութեանն, զի փար-

թամութիւնն, ոչ գորով՝ ի հներքս՝ ի փարթամն, այլ արտաքայ նորա, ոչ ինչ ազդէ. ՚ի փարթամն. ուստի և ոչ թողու զնա շատացեալ. և գարձեալ ոչ տայ նմակալ յինքեան, ապա թէ ոչ յայլայլկ փարթամնութեն՝ ոչ այլայլը սիրտ նորա, և ոչ կորնչը խաղաղութիւն նորին. բայց քանզի այլայլի սիրտ նորա յայլայլութենէ փարթամութեն, նշան է՝ թէ սիրտ նորա մէր յինքեան, այլ եղեալ եր՝ ՚ի վերայ փարթամութեան, խակ եթէ փարթամն ու շատանայ իւրով փարթամութք, այլ յառաւելն բերի, այնպէս է՝ որպէս թէ ոչինչ ու նէր, և է ծննդրտասպէս աղքատ. զի աղքատ ասի նա, որ չունի զկարեւոր պէտս, և է ՚ի կարօտութեան. և զի փարթամն որ ոչ շատանայ այնու զոր ունի է ՚ի կարօտութեան, և չունի զկարեւոր պէտս, զի թէ անէր՝ ոչ կարօտէր, ուրեմն աղքատ է, և թշուառադոյն քան զաղքատս. զի հանապազ քաղցեալ է առ առաւելսի փարթամուե. և որչափ առաւելու ՚ի փարթամութեն այնցափ առաւելու և քաղց նոր առ այն. օրպիսի նէն նկերը և ջրգողը: Ոչ խօսիմ աստ զառառապանաց, զորս կրեն մեծամեծք՝ ՚ի շահիլն զփարթամուի և յաւետ ևս ՚ի պահելն:

Երրորդ՝ ըստ զրկելոյ ՚ի փարթամութէ որով մնանկանան, և առաւել քան զամ աղքատս թշուառանան վանս երից. մի՛ վանս ցաւոցն զոր կրեն ՚ի կորուսանելն զայն՝ զոր ՚ի վեր քան զամ սիրեին: Երրորդ՝ վանն նորոգ յաւելեալ նեղութեանն՝ որ անտանելի է նի նոյս. քանզի սովորեալ գորով նոցա առաջապէս ուժել և զգենուը, յաղքատանայն ոչ կարելով ու տել և զգենու՝ այնպէս նեղին յոյժ, և զրեթէ միշտ քաղցեալ մնան, զի այնուհետեւ ոչ լինան առ նոցա: Երրորդ՝ որ մեծն է, վասն անմիտար տրտմութեան, զի ՚ի կորուսանելն զարտաքին փարթամութիս, և ՚ի կրելն զնեղութիւնոտ, չունին ՚ի ներքս ՚ի հոգիս իւրեանց բարի ինչ որով փարիցեն միխթարել յինքեանս. և այսպէս մնան յանհուարին առաւապանս, և ՚ի քաղց հոգւց և մարմնոց: Հայսսիկ հայելով

Ա էծամեծք աղքատացն և ուղիւն: Ա էծամեծք օրպէտս յայտ է՝ ՚ի վերսորելոց իմացեալ լինին աստ մե-

ծատունք և փարթամք . ևս և որբ իրեւ դազան յա-
փըստակեն զինս այլոց . այսպիսիքն ասէ՝ որբ կարծին
՚ի մեծութեն լինել , ՚ի մեծութեն անդ տղքատ են , և ՚ի
թոյլ տալոյն այ երբեմ աղքատանան ևս իրօք , և
առաւապին ՚ի քաղցու .

Ու ասէ՝ աղքատանան , այլ աղքատանան , առ ՚ի
ցուցանել նախ՝ թէ ձևարտիւ աղքատանան կամ
աստ և կամ ՚ի հանդերձեալն , որպէս եղեւ խորտկա-
ճաշ մեծատան , որ կարօտացաւ կաթիլ մի ջրոյ , և
ոչ եղիս . երկրորդ առ ՚ի ցուցանել , թէ նորա մե-
ծութք իւրեանց ոչ են մեծ , այլ փարսնք , և աղ-
քամք , կարօտք և քաղցեալք ըստ նախազքելոյդ :

Եթէ մեծամեծօք իմացեալ լիցին աստ իշխանք կամ
թագառորք , և կամ զիմուռորք ժողովրդեան , այս
քան յեղեալն հայի , այսինքն յայնոսիկ՝ որբ ՚ի մե-
ծութեան իւրեանց թշուառացան . մեծ էր սատանայ
անկաւ , աղքատացաւ և թշուառացաւ , մեծ էր ա-
զամ , անկաւ և աղքատացաւ . մեծ էր յուդայ , կոր-
ծանեցաւ , և կորեաւ . մեծ էր փարաւան , խատացաւ
և ընկղմեցաւ . մեծ էր հողեփեռնէս , պատրեցաւ , և
նշառակեցաւ . բազում և այլք կային , որբ մեծ ե-
րևէին , աղքատացան , և թշուառացան . իսկ որբ աղ-
քատ երևէին մեծացան , որպէս տեսանի ՚ի բազում
զորօրինակ յառաքեալս , և ՚ի մարդարէս , ՚ի նահա-
պեսո , և յայլ . ըստ որում աւանդի ՚ի գանազան
պատմութիւնս . մինչեւ լինաւոլ նոցա յամի և ոչինչ
իւրի պակասիլ . ուստի յարէ զինի , և ասէ .

Ի այս ոյս ինդրէն զորք , Ք ոտիասեւցէ ՚ի նոյանէ թմ բարո-
ւէ . Ի յս այն է զոր ՚ի վերայ եղ . մանաւանդ թէ է
իրը բացատրութիւն այնք . զի անոր ասաց . * ոչինչ է
ու պակասութիւն երկիւղածաց նորա . իսկ աստ թէ
մի պակասեաց . լինոցանեւ նմը բարութի : Ի այս քան
կրկնակի իմացեալ լինի . մի զբականապէս , իբր թէ
ու և իցէ բարութիւն , կամ զինչ բարութի և կայցէ . է
այնոցիկ , որբ երկնչին յայ , և զան խմբեն , քանզի
ամ արարածք , եթէ երկինք և եթէ երկիր , և
ին են . ՚ի նոր , և նոյն ինքն արարին ամի է նոցա՝ գերա-
զոյն իմն օրինակաւ և առաւել ևս քան թէ մեծուերն
իցեն մեծատանց . քանզի երկիւղածք տէառն հայելով

յարագածս ո՞յց զամ տեսանեն լինել հօր իւրեանց
երկնաւորի , և ինքեանը դոլով որդիք նղոս՝ և ժա-
ռանդ նորուն , զամն համարին իւրեանց ժառանդու-
թիւն , որով և ցնծան 'ի նոսա , և անդորրանան 'ի հո-
գիս իւրեանց . և զնոյն ինքն զանսահման բարին՝ զա-
րարին տամբ՝ ունելով յինքեանս՝ նովաւ ունին զամ ,
և կան զայլեալ 'ի նմա ,
Երկրորդ իմացեալ լինի պակասաբար ըստ բանի նա-
խնթաց համարոյն . որպէս թէ եղեալ էր . ոյնու
բարութիւն պակասեցէ 'ի նոցանէ . քանզի այս ասա-
ցուած * ոչ պակասեցէ 'ի նոցանէ ողմ բարութիւն ,
և ոչ երայական , որ 'ի մերս տիրապէս թարգմա-
նեալ լինի * ոցնչը բարութիւն պակասեացի 'ի նոցանէ :
Խոկ թէ զիարդ իմացեալ լինի ոյս պակասութիւն տես
'ի վերց 'ի նախնթաց համարն . (տես և 'ի աազ .
իթ . 2 :)

Երգ յայտոփիկ բանս դիսումն մարգարէին է ցուցա-
նիլ , թէ որք ոչ երկնչին յայց՝ թէև փարթամ իցեն՝
փարթամութիւն նոցա ունայն է . զի 'ի նմին խոկ փար-
թամութիւն պակասեալ գտանին ըստ բազում իրաց ,
և պակասին խոկ աղքատանալովն . խոկ որք ոնին զեր-
կիւղն այց , թէև աղքատ իցեն՝ ած ինսամէ զնուամ , և
ոչ կրեն պակասութիւն ինչ . և թէև կրեսցեն լը մարմ-
նոյց զի են փարթամութեամբ 'ի հօգիս իւրեանց , և կան
ուրախ : Այլ թէ զիարդ լինիցի . ստանալ զերկիւղն
այց , զայն ևս խոստանայ մարգարէին ու սույանել , սմին
կրի յարէ զինի , և աաէ :

Մամ . **Կ**ամ որդեսէ իմ (կամ որդիք իմ .) Ա լու-
ստ ինչ , և ուշիւղն ուսուցիչ թէլ
Որդիս կոչէ զայնոսիկ՝ որք կամին զիտել զօգուտ եր-
կիւղին այց , և ուսանիլ թէ զինչ իցէ երկիւղն այն ,
կամ յորսում գտանիցի . իոչէ և իւր , զի իբրեւ հայր
կամի ու տոցանել նոցա , և ցանկայ զի իբրեւ որդիք
ուսոցին 'ի նմանէ զայն երկիւղ սուբր : Այլ քանզի որ
կամի ուսանիլ ինչ պարտ է յուսանին անդ հրաժա-
րիւլ յոչ կարեւորաց , և մեկնիլ յարգելաց . սմին իրի և
որք կամին ուսանիլ զերկիւղն այց՝ պարտին հեռանալ
յայնպիսէաց՝ որք խափան լինին ուսանելոյ զայն .

սմին իրի և մարգարէն առ ինքն կոչելով զնոսա՝
ասէ :

Ե հայ որդեստի իմ, և լուսաբար ինչ, և շերինող որն ուսանուցից մեղ : Որպէս թէ ասէր . գուք՝ որը կամիք ուսանիլ զերկիւղ տն, և լինել երկիւղածք տն՝ հրաժարես ջիք՝ ի անոտի երկիւղէ, և հեռացարուք՝ ի մոլի զործոց, և ՚ի յանդուզն խորհրդոց . և այնպէս մատերնք առ իս առ ուսուցիչ երկիւղի տն, մանաւանդ թէ առ հոգին նըք՝ որ բերանալ խոնլ ուսուցանէ ձեզ զերկիւղ տն . զի * հոգի տն խօսեցաւ յիս, և բան նորա՝ ի լեզուի խում : (թ . թագ . իդ . 2 .)

Լ ուսաւորին մեր՝ ՚ի յաճախապատռմն իւր . (Ճառ . ի .) զայս բան առաջի առնէ ՚ի դիմաց հօրն երկնաւորի, ՚ի հրաւիրել նորա զմեզ և յասել . * եկայք որ, զեակք իմ . լուարուք ինձ : Վոլին ասէ համարեցաւ զմեզ եղբարս քնի . ըստ որոյ և քու համարեցաւ զմեզ լինել որդիս հօր իւրոյ, որպէս առանի (՚ի մատ . դ . 9 .) ուր ասէ . * հայր մեր որ յերկինս՝ ոք եղիցի անուն քո :

Մ արգարէն ՚ի խօսին ասա զերկիւղէ՝ յաւելու և ըգրաւդ ու առն . առ ՚ի ցուցանել թէ յայսմ հրաւիրմանն ոչ ուսուցանէ զի և իցէ երկիւղ, այլ որ տն է : Այս այն երկիւղ է՝ զոր երանելին յոք կոչէ անձագալտութիւ . զոր և կոչէ իմաստութիւն յասելն . * ահա անձագալտութիւն է իմաստութիւն : (յօք . իլ . 28 .) մանաւանդ թէ պատճառ . ըստ այսու . * սկիզբն զգ օնութեան երկիւղ տն : (սաղ . Ճժ . 9 . ևս և առակ . առ . 7 .)

* աղրիւր կենաց : .) առակ . Ժդ . 27 .) Վ րմատ ըզգաստութեան և պահապան բարելաւուե . Վանձ անկարզ յօժարութե , և վանիչ ախտից բռնութեան . զի * երկիւղ տն ատեայ զչար : . (առակ . ը . 13 .) խթան զարգանալոյ ՚ի բարեպաշտութեան, և դաստիարակ հոգեսոր կրթուե, խարիսխ առաքինուե, և զեկ ուղղութեան . գրաւ փրկուե և նշան յափառնական երանուե . * երանեալ է այր որ երկնչի ՚ի տնէ : . (սաղ . Ճժան . 1 .) Հ ամ վիշաս ափոփիչ է հոգւոյ . զի է իրբև ըզգ հողին ցօղակին՝ որ զովացուցանէ զկեանս ՚ի հողի փորձութեց . (դան . դ . 5 .) և իրբև զմուր որ շիֆուց յանտ, զյանկութի մարմնոյ : Վոցեղէն սուր է՝ և սբահ :

պանել զՀողին (ծնն), կ (24.) Ազեղն է այ եղեալ
՚ի խորհուրդս սրտից . ցործափ տևել այս աղեղն , խայն
շափառահովի մնայ մարդ ՚ի ջրհեղեղէ անային վրեւ
խնդրութեան . (ծնն, ը, 16.) Այս երկիւղ է ահա ,
զոր խոստանայ մարդարեն ուսուցանել . և կամերով ՚ի
նոյն պատրաստել զլատով՝ հարցմանք իմն ասե :

Ժ բ . **Ո վ է Տ ա ր դ՝ ո ր կ ա մ դ պ է ա ն ա ս ս , և ս է ր է զ ա ս տ ա ր ս ի ա ր**

Ա յ ն պ է ս ձ ե ա ց ու ց ա ն է մ ա ր դ ա ր է ն զ բ ա ն ի ւ ր , ո ր պ է ս
թ է կ ա ց ե ա լ ՚ի հ ր ա ս պ ա ր ա կ ի , և ժ ո ղ ո վ ե ա լ զ ո ր դ ի ս
մ ա ր դ կ ա ն ՚ զ ո ր ս ա ռ ի ն ք ն կ ո չ ե ա ց ՚ի վ ե ր ո յ , խ օ ս ի ը ն դ
ն ո ս ա հ ա ր ց ա ն ե լ ո վ , թ է ո վ է ՚ի ձ է ն ջ ա յ ն մ ա ր դ ՚ ո ր
կ ա մ ի ո ւ ս ա ն ի ւ զ ե ր կ ի ւ ղ տ ո ն : Ի ա յ ց բ ա ց ա յ ա յ տ ո չ զ ն է
զ բ ա ն ե ր կ ի ւ ղ ի ն , զ ի մ ի ծ ա ն ր ի ն ո չ կ ա մ դ ժ ո ւ ա ր ի ն
ց ո ւ ց է ն ա յ ա զ ա ս ա ց ե ա լ ն , ա յ լ զ գ ո ր ծ ե ր կ ի ւ ղ ի տ ո ն
ա յ ս ի ն ք ն զ բ ա ր ու թ ի ւ ա ւ ու ր ո յ և ե թ է ա ռ ա ջ ի ա ռ ն է ա ս ե

Լ ո վ :

Ո վ է Տ ա ր դ՝ ո ր կ ա մ դ պ է ա ն ա ս ս . (և ս է ր է զ ա ս տ ա ր ս ի ա ր ո ւ ս ա
ն է լ ՚ի բ ա ր ու թ ի ն :) Ը ն ո ւ ն դ է ե ր կ ի ւ ղ ի ն ա յ ո ւ ն ի լ զ ե ր
ջ ա ն ի կ ի ւ ն ս , և զ ա ւ ու ր ո յ բ ա ր ի ս , ա յ ս ի ն ք ն զ ա ւ ու ր ո
խ ա զ ա ղ ո ւ թ ի ն : և ո ւ ր ա խ ու թ ի ն , յ ո ր ու մ է ե ր ա ն ու թ ի ն
մ ա ր դ ո յ , զ ի ը ս տ ա ս ե լ ո յ ա ռ ա ք ե լ ո յ ն (հ ո ո լ մ . ժ դ . 17 .)
* ա ր բ ա յ ո ւ թ ի ն ն ա յ ո ւ թ է կ ե ր ա կ ո ւ ր և ը մ ե լ ի ի , ա յ լ ա ր
ո յ դ ա ր ու թ ի ն , և ի ն ն դ ո ւ ի , և խ ա զ ա ղ ո ւ ի : ո լ դ և յ ա
ռ ա ջ գ ա ն յ ե ր կ ի ւ ղ ի ն ա յ ի բ ր ե ս զ ո ր ծ ք ն ո ր ա :

Ա ւ ն ե ր հ ա կ ա յ ս մ ՝ զ ո ր ծ ե ր կ ի ւ ղ ի մ ա ր դ կ ա յ ն ո յ է ո ւ
ն ի լ զ մ շ ո ւ ա ռ կ ե ա ն ս , և զ ո ւ ու ր ո յ ա ն բ ա ր ի ս , զ ի ն ո յ ն
ի ս կ ե ր կ ի ւ ղ մ ա ր դ կ ա ն է ի բ ր ե դ ա շ ի մ , կ ա մ շ ղ թ ա յ
կ ա շ կ ա ն ո դ ի չ կ ե ն ա ց , և ս և ն ո ւ ա զ ե ց ո ւ ց ի ս ա ւ ու ր ց :

Վ ա ր դ ա ս է ո վ է մ ա ր դ ն ա յ ն , կ ա մ ո վ է ա ր դ ե զ ք ի ց է ՚ի
մ ա ր դ կ ա ն ն է , ո ր կ ա մ ի ց ի ո ւ ն ի լ զ կ ե ա ն ս ա յ ն պ ի ս ի ն ՝ ո ր պ լ
լ ի ց ի ե ր ջ ա ն կ ա ց ե ա լ ՚ի խ ա զ ա ղ ո ւ թ ի և յ ո ւ ր ա խ ո ւ թ ե ա ն :

Ո յ ս հ ա ր ց ո ւ մ ն կ ա մ ե լ ո վ ա ռ ա ւ ե լ և ս բ ա ց ա յ ա յ տ ա

ռ ա ջ ի դ ն է լ յ ա ւ ե լ ո ւ և ա ս է :

Ա ւ ս է զ ա ս տ ա ր ս ի ա ր ո ւ ս ա ն ն է լ ՚ի բ ա ր ո ւ թ ի ն : Վ ա յ ն ի ք ն
ո վ է ո ր ց ա ն կ ա յ և փ ա ն փ ա ք ի զ ի ա ւ ո ւ ր ք կ ե ն ա յ ի բ ր ո ց
ի ց ե ն ՚ի բ ա ր ո ւ թ ե ա ն , լ ի ա յ ե ա լ ա ն դ ո ր լ ո ւ ք և խ ա զ ա ղ ո
թ ի ք , ո ւ ր ա խ ո ւ թ ի ք և ա ն դ ր ա ղ ո ւ ք . կ ա մ ո ր ՚ի ն ո յ ն հ ա յ ի

լոտ երբայսականին , ով է որ սէրե (ունիթ) վայելու ու
ի պէսանել զբարելուին . այսինքն առ ՚ի վայելու յեր-
ջանիկ կեանս ,

Վարդիս չնորհալի (՚ի մեկն . ա . պէտ . ՛կ . 10 . ձառ .
է .) ՚ի մէջ բերեալ զառաջիկայ բնաբանդ ՚ի վերայ
հանգերձելոյն մեկնէ . յասել ասէ մարդարէին՝ որ
կամի կեանս սիրել պարտ է իմանսալ * սակա ճշմարիտ
կենացն , այնմ կենաց՝ որ ոչ արեգականա բերմանը
շափի , և ոչ աւուրբք տահմանի , այլ մշնջենաւոր
, կայ մնայ յերկարածեալ ընդ այ || :

Օսոյն զրէ անդ և վասն աւուրց յասեն . * աւուրց
բարութեան ոչ եթէ զառախ կենացս ասէ , որ զիշե-
րաւ սահմանի , այլ զհանդերձեալ յաւիտեանն նշաւ-
նակէ . ուր արդարեւ մշտնջենաւոր բարիքն են , և
ընդ քսի թագաւորութին , և ը հրեշտակաց պարսկ
ցութիւնն || : Խակ թէ յոգնակի ասէ զառաւրս՝ այն է
վասն պարաւութէն տմբ բարեաց , կամ որպէս զրէ սա-
խիքն ՚ի նմին տեղով . * բազմաւորական ասել զայն
նշանակէ սակա անպատումն գոլոյ պարզեացն այ և
անձառելիք , այն որ խոստացեալն է , և ամբաւ
, բեալ պահի որցն || :

Հաւելեալ ասկա անդ և զայլ իմն մեկնութի՝ զրէ այս
պէս . * որ ոք կամի զաշմարիտ կեանս սիրել զյու , և
տեսանել զառաւրս իւր ՚ի բարութեան՝ անխառն յամ
ներհակաց || . ևն . Եւ այս առաւել հայի յաստի
կեանս քան ՚ի հանդերձեան . և դիտումն իսկ մար-
գարեիս յայս ակնարկէ , և զայսմանէ է բան իօր :

Իրդ այսմ հարցման մարդարէին միաբերան պատաս-
խանեն անստարակցոյ համօրէն որդիք մարդկան , թէ
ես եմ՝ որ կամիմ . զի ամենելքին այսմ ցանկան . և
վասն դտանելոյ զայս ձեռանարկիւն յայն ամենայն՝ յօրս
յուսան զայն դտանել . ումանք՝ ՚ի փառս և ՚ի պատիւս ,
ումանք յիշխանութիւնս . ումանք՝ ՚ի մեծութիս . ումանք
՚ի հեշտութիւնս . ումանք յայս , և ումանք յայն . որոց
էթէ հարցանիցես , զինչ կամիք . զայս ևեթ լուի-
ցես ՚ի բերանոյ նոյս մանաւանդ թէ ՚ի պատից նոյնին .
կամիմք զերջանիկ կեանս , կամիմք և փափաքիմք տե-
սանել զառաւրս մեր ՚ի բարութէ . ՚որ որս պատասխա-
նի այս մարդարէն , և ագէ . ևթէ զայդ կամիք , առ

՚ի ժամանել յայդ՝ զայլ ճանապարհ պարտ է ձեզ զը-
նալ, և զայլ միջնորդս ունիլ. խակ թէ ոյք են այն ճա-
նապարհք, և ոյք այն միջնորդք, այն կարգաւ առաջի
դնէ, և նախ առէ,

Ժ այդ զլեզո՞ւ ՚է շարութէ. և շրնուռն ՚է մի եռ-
ժողովի ունենութենի.

Ակիզբն առնէ աստ մարգարէն ցուցանել զՃանապարհ
երջանկութեան, և նախ սկսանի ՚ի զգուշուէ շարութէ
լեզուի. զի գիւրաւ լինի սայթաքի ՚ի սիս. և սակա-
ւոց է անվլթար ընթանաւ յայս ճանապարհ, զի * ե-
շ թէ որ բանիւ ոչ յանցանիցէ նա է մարդ կատա-
րեալ. ասէ առաքեան, (յակ. դ. 2.) տես և զօրս
խօսի զինի. (տես և ՚ի առաջ առաջ առնէն նոյն-
պէս և յաջորդք սորա առաջի առնէն զայնպիսի բա-
րիս՝ որք հիմն ունին զերկիւղն այ, միանգամայն և
պահէն զայն ըստ բանից և ըստ գործոց, որոց զհետ
գայ իբրև զպտուղ բարի՝ խաղաղութի հոգւոյն, զօր

և յայտ առնէ ՚ի վերջ յաջորդ համարոյն.
Վարդ լուցուցանել զլեզու ՚ի չարութէ, է չխօսիլ զայն-
պիսիս, որ իցէ ընդդէմ այ, ընդդէմ ընկերին, և
ընդդէմ անձին, ինդդէմ այ, չհայշոյել և չարութն-
ջել, չխօսիլ զմիւրս զնուանէ և չծերել զբան նորան,
ինդդէմ ընկերին՝ չքամբասէլ, չնախատել, չզրպար-
տել, չքարախօսել, սուտ չվիպայել, յիշոցնատու չի-
նել, և ն. ինդդէմ անձին՝ չտաել հակառակ ճանաւ-
ման իւրօյ, չնզովել զինքն չարամազթութէ, և խօսիլ
ինչ այնպիսի՝ որ իցէ անհամաձայն ուղիղ կանոնի:
Օ ի այս ամենայն է չարութի բանից, այսինքն այնպի-
սի բան՝ որ ոչ է բարի, այլ խոտորեալ ՚ի բարութէ, և
ընդդէմ օրինաց սիրոյ կամ արդարութեան: Յայտ-
պիսի բանից նահանջել կամերս զմեզ մարգարէին
առէ:

Ժ այդ զլեզո՞ւ ՚է շարութէ. լիրուս թէ ասէր. եթէ
կամիս խաղաղ կեանս ունիլ, մի խօսիր լեզուադ
զայնպիսի ինչ՝ որ ոչ է բարի. ապա թէ ոչ խօսվութը
լցեալ լինին աւուրք կենաց քոց: Օ այն զայս՝ զօր
ասէ մարգարէն՝ փորձն հաստատէ. վասն զի բանք
ոչ բարիք, նաև բանք դատարկէք բառնան զներբին

խաղաղութիւն հոգոյ . զի զորօրինակ չնշիւն հողմոյ
պատճառէ զխոսովութի՝ յերեսս ջրոյ , տոյնակէս և բանք
չարք , ևս և խօսակցութիւնք դատարկք և անօգուտք
պատճառէն 'ի հանդարտութե սրտի երկիւղածաց տն
ալեկոծութի ինչ , ևս և զնեղութիւն . իսկ * որ սահէ
,, զբերան իւր և զլեզու՝ պահէ 'ի նեղութենէ զանձն
,, իւր . (առակ . իսա . 23 :) յւ քանզի չարութի բա-
նից կամ անկարգութի խօսից՝ մանաւանդ յասիլն նեն-
դութք՝ արկանէ նաև 'ի սիրտ ընկերին զիսովովութիւն
կամ զնեղութի , յայնմանէ ևս զգուշացուցանէ մար-
գարէն աաելով :

Եթ շրեառն ու մի խօսեսցի զնենդութի : ' նենդութի ըստ
որում աստ դնի է բան խաբողական կարեալ 'ի վր-
նաս ընկերին , կամ ներհակ սիրոյ ընկերին : յւ է
այնպիսի չարք՝ որ կարօղ է զբաղմամեայ բարեկամու-
թիւն 'ի միում վայրկենի խզել . վշյ պատուիրէ մարզա-
րէն՝ ոչ միայն գործով չառնել զայն , այլև ոչ շրթ ամրք .
վասն զի ոչ միայն խօսողին է վնաս , այլ և այլում .
որպէս ընդ հակառակն՝ բան բարի օգուտ ընծայէ .
* մահ և կեանիք 'ի ձեռս լեզուի . և որ յաղթէ նմա՝
,, կերիցէ զպտուղ նորա . (առակ . ժը . 21 :)

Օսոյն զայս բան սաղմափ յառաջ բերէ և պետքոս
առաքեալ ('ի առ թուղթն իւր . դ . 10 .) յերրորդ
դէմն , առ 'ի խրատել զնորհաղարձ հաւատացեալս . * իլը
,, կամիցի (ասէ) զկեանս սիրել , և տեսանել զաւուրս
,, բարութե , լրեցուսցի զեցու իւր 'ի չարուէ , և զըր-
,, թունս իւր 'ի չխօսելոյ զնենդութի : զորյ վերաց
ասէ սարգիս չնորհալի 'ի մեկնութե անդ . (ձառ . է .)
* ոչ հրամայէ մեղ անիւ յանմ բանէ լւել և 'ի գոր-
,, ծոյ , այլ 'ի չարութէ . զի 'ի բարի բանան և 'ի սիր-
,, տանիան՝ որ 'ի խրատ լսողացն է և 'ի շինութիւն ող-
,, ւոյն , ոչ միայն ոչ պարտիսմբ լուել , այլ և քաջա-
,, խօս լինել , և իմաստութք բարբառել :

Վայսոքիկ բանք որպէս յայտ է 'ի զրելոցդ հային յայն
որով լինի մարդոյ ունիւ խաղաղութիւն 'ի կեանս 'ի
ձեռն բանի , կամ լեզուի . և զայս եղեալ մարդարէին
յորդորէ այժմ և յայն՝ որ լինի 'ի ձեռն զործոյ . վասն
որոյ ասէ :

¶ Ա յ ա ր ե մ ՝ է շ ա ր է , և ա ը մ ՝ դ ժ ա ր է . ի ն ո ր ե մ ՝ դ ի ս տ ո ւ ս
դ ա ր է , և է ր լ ՝ դ հ ե պ ն ո ր ո :

Վանդը ոչ են մեկնելի , այլ առնելի . ևս և ոչ
են բացատրելի , այլ կատարելի , զի են առաջին սկզբ
բունք բարոյական կենաց , զոր և փոքրիկ տղայք իմա-
նան . Ի դրէ ՚ի բարոյական կարգի չոր ասի այն՝ որ է
ընդդէմ ու կ իցէ օրինաց . այսինքն կամ ածային պա-
տուիրանաց , և կամ բնական լուսոյ՝ որ տպաւորեալ
է ՚ի միտո իւրաքանչիւր մարդոյ : Այսագէս ՚ի նմին բա-
րոյական կարգի բարի ասի այն՝ որ է համաձայն ու և
իցէ օրինաց և ուղիղ թելադրութե՛ բնական լուսոյ :
Եւ քանզի առ ՚ի լինել մարդոյ բարի և ոչ չոր , և տե-
սանել զաւուրս կենաց իւրոց ՚ի բարութե՛ ոչ է բաւա-
կան ոչ զործել զար , այլ և գործել զբարին , ոմին
իրի զերկոսին ՚ի մի յարելով ասէ :

¶ Ապորեա է շաբէ, և արք զբարէ : Ոչ ասէ, մի առնելը
զար, այլ խոտորեա . որով ցուցանէ, թէ ընդ զգալ
մարդոց, եթէ յայս ինչ ձանապարհ, այսինքն յայս ինչ
գործ կայ չար, կամ թէ այս ինչ իցէ չար, պարտի առ-
ժաման խոյս տալ անտի և ոչ բնաւ մերձենալ . զի
գուցէ թէ և չգործիցէ զարն՝ անկյի յառիթն, կամ
ի վտանգ գործերի զնոյն :

Եւ դարձեալ տոսկ չառնեն զշար ոչ ցուցանէ զիաք
տարելութիւն ինչ, զի այս անզգայից ևս պատշաճի .
իսկ խոստորին ՚ի չարէ յայտ առնէ զիամառակիան
հրաժարումն ՚ի չար գործոյ . զի այս է յատուկ անհնա-
խան եղելոյ . որ և արժանի առնէ վարձուց . և ըստ
վճռոյ վարդապետաց համարի գործ անձպատութեան .
յոր միտ ասէ վանական վարդապետ . (՚ի մեկն . յոր-
դա . իւլ.) * պաշտօն այ ՚ի չարէ հեռանան երեւի . և
,, նա է սկիզբն բարի գործոց . որպէս ասէ . խոսորեա
,, ՚ի չարէ և արա զբարի || : (տես ՚ի աալ, լդ. 25 : Ե-
տայ . ամ . 16 : սալ, ծդ. 23 :) Այս ասէ բարսեղ վար-
դապետ . (՚ի մեկն . մարդկ . զլ. ծդ.) * որպէս խափան
,, կալ ՚ի գործոց չար է , նոյնակէս և գործեն յու պատ-
,, շաճիցն . զի որպէս եթէ ոչ կերիցէ ոք վնասին ա-
,, տամնալըն , նոյնակէս և թէ յանապատշաճիցն ոք կե-
,, րիցէ խիճն կամ փայտս , այսպէս և աստ հոգի և

, մարմին թէ ոչ գործիցեն , կամ թէ գործիցեն զան .
, պատշաճն՝ վասուալ լինին . արդ յերկաքանչիւ .
, ըոյն փախիցուք՝ 'ի չար խափանմանէ և 'ի չար գոր .
,, ծոյլ :

Վ. Ճանիր զի այս բան մարգարէին ոչ ցուցանէ , թէ
կայցէ 'ի բնութե իրաց բարոյական ինչ չար՝ յորմէ պարտ
իցէ խոտորիլ , և բարի՝ յոր արժան իցէ յարիլ . այլ
'ի կամաց զգենու գործն զշարութիւն կամ զբարութի .
զորօրինակ 'ի կամիլ քո առնել զայս ինչ զոր ոչ կամի
ած՝ 'ի կամելոյդ լինի չար . և յոչ կամիլդ առնել զայս
ինչ զոր հրամայէ ած՝ այն ևս լինի չար 'ի չկամելոյդ .
և ընդ հակառակն , 'ի կամիլդ առնել զայս ինչ զոր
կամի ած՝ այն լինի բարի , և յոչ կամիլդ առնել զայս
ինչ զոր ոչ կամի ած՝ այն ևս լինի բարի . Ուստի եղանակ
կողբացի խոսելով՝ 'ի վերայ այսր ('ի գլ . ժկ .)
ասէ . * անձնիշխան եղեւ մարդն առնել զբարի և հա-
, կել 'ի չար . ոչ եթէ չար ինչ առաջի կայր՝ յոր հա-
, կիցի . այլ այն ևել առաջի կայր՝ կամ անսալ այ ,
, կամ շանսալ . և զնոյն շանսան ևել պատճառ չա-
, ըին է իմանալ .) Եւ ('ի գլ . ժկ .) ասէ . * չմարթի
, բնութեան իմիք առանց կամաց մերթ բարի լինել և
, մերթ չար .) այլ 'ի կամաց մարդոյ . * քանզի (ասէ
, 'ի գլ . ժկ .) կամելոյն և չկամելոյն ունի իշխանութի .
, զրոյ զհետ երթայ .) Պստ որում ասէ և լուսաւո-
րին մեր 'ի յաճախապատռմ զիրսն . (Ճառ . եւ .) * զի
, ամենասն բարերարի զբարին է սերմաննեալ 'ի մար-
, զիկ , և յիշխանական կամն թողեալ , որք կամիցին
, վարիլ 'ի բարի , կամ 'ի չար :) Եթէ մարդս ընդգէմ
կամացն այ ասէ կամիցի կամ չկամիցի ինչ՝ այն է չար :
Ուստի ասէ նոյն եղնակ կողբացի ('ի նախայիշեալ զլ .
ժկ .) թէ * զամ ինչ՝ որ լինի չար՝ ոչ բնութեր չար զի .
, տելիք . այլ զի առանց կամացն այ գործին իզք ինչ ,
, (վասն սյասորիկ) լինին չար .)

Հասել աստ մարգարէին՝ խոտորեա 'ի չարէ՝ ոչ դնէ
վասն բարւոյն , դիմեա կամ շանկա . այլ արա . զի բա-
րին առնելի է , և ոչ թէ սոսկ զիմելի կամ շանկալի .
վասն զի յորժամ առաջի կայ առնելն՝ 'ի գործ զնելի
է . գուցէ յապարշմամք խափանեսցի :

Վճնել արժան է և զայն , զի մարգարէն՝ 'ի յորդո-

ըելն առնել զբարին՝ ոչ որոշէ թէ զոր բարի պարտ
իցէ առնել, այլ անորոշակի առէ * արա՛ զբարի +, ու
բավ յայտ առնէ նախ՝ թէ պարտ է առնել ըստ ժա-
մանակին զամբ բարի, և ըստ պիտոյից՝ եթէ յաղօթս
և եթէ ՚ի պահս, եթէ ՚ի բանս և եթէ ՚ի խորհուրդս,
եթէ յարտաքին իրս և եթէ ՚ի ներքինս, եթէ ՚ի
բարձրագոյն պաշտօնս և եթէ ՚ի սառինս, եթէ ՚ի
բարօգութիւնս և եթէ յառետուրս . եթէ ՚ի մեծա-
գործութեն և եթէ յաւելածուեն, եթէ ՚ի զահօյս և ե-
թէ ՚ի խնձօյս, եթէ ՚ի պարտիզի և եթէ ՚ի բանտի,
եթէ ՚ի յաջազութեն և եթէ ՚ի ձախորդութեն . յայսմ
ամի եթէ զիտումն քո իցէ ուղիղ՝ և հայիցի ոչ՝ ՚ի
նիւթն, այլ ՚ի հաճութի կամացն այ, զոր ինչ և առ-
նես՝ բարի առնես : || աթէմաթիգոսք ՚ի քննել զայլ
և այլ ձևս եթէ բոլորակ իցէ և եթէ քառանկինսի
ոչ հային ՚ի նիւթն արծաթ իցէ արդեօք թէ փայտ .
այլ միայն զձեսն զիտեն . սոյնակես արա և դու . իբր
զի ՚ի գործելք զբարին՝ զիտեա զհաճօյս տն, և ոչ
զայն թէ այս գործ անարդ իցէ, և այն բարձր, այս
գործս այսպիսի, և այն այնպիսի . զի յա և իցէ գործս՝
այն միայն է բարի, որ ըստ հաճօյս ոյ կատարի :
|| այտ առնէ երկրորդ՝ թէ բարւոք պարտ է առնել
զբարին . զորմէ ծանիր զի գործոգութիւնք որք յա-
ռաջ գան ՚ի կամաց մարդոյ, յերիս տրոհին . այս-
ինքն կամ յայնս՝ որք են ըստ ինքեան չար, կամ
յայնս՝ որք են ըստ ինքեան բարի, և կամ յայնս՝ որք
անսարքեր են :

|| բը ըստ ինքեան չար են, միշտ են խորշելի, որպիսի
են նախանձ, ատելութի, հայհոյութի, ևն . և ոչ եր-
բէք են առնելի, և ոչ իսկ բարի զիտաւորութք՝ առէ
լով * արասցուք զըարն՝ զի եկեսցէ բարի || . (հառլիմ .
դ. 8.) զզրօրինակ երգուիցուք սուտ, զի շահեսցուք
զողի նորա. մատիցնեք ՚ի կախարդս՝ զի գտցուք զոր
կորուսաք . ևն : | յւ զայսպիսեաց ասաց մարգարէն,
* խոտորեա ՚ի չարէ || :

| սկ որք ըստ ինքեան բարի են . թէպէտ և չեն միշտ
առնելի, բայց միշտ են բարւոք առնելի . որպիսի են
աղօթք, պահք, ողօրմուի, քարոզուի, համբերուի,
խոստովանութի, ևն . զի թէպէտ խոստովանութին ոչ

յամ ժամ առնելի , բայց յառնելն պարտ է բարւոք առնել . սոյնպէս և յայլ բարի գործս իման . ապա թէ ոչ ունայն է , և երեւմն չար : Վասպէն խնձորն է պը տուղ բարի . սակայն եթէ ոչ բուսցի բարւոք , ոյլ կամ խակ , կամ որդնահաջար՝ անարդ է , և երեւմն ՚ի բաց թողի : Իստ այսմ կըսեա և զամ զգործս քո . պատարադ տեսանես , տաս զաղօրմութիւն , քարողէս , ևն . բարւոք արա : Եթրնանես զցորեան բարի , բարւոք սերմանեան , ՚ի բարի տեղւոջ և ՚ի բարի ժամանակի , ևս և փորելով զերկիր որտիդ : Պատուիրեալ է քեզ յայ՝ բարւոք սնուցանել զորդիսդ , բարւոք պահէլ զծնօղագ , բարւոք առնել զայս և զայն . արա և զու այնպէս . այսինքն է բարւոք , և երանելի մինիցիս , ըստ այնմ . (մատ . իդ . 46 .) * երանի է ծառ , ու ային այնմիկ , զօր եկեալ տերն գտանիցէ արարեալ այնպէս || . այսինքն բարւոքապէս , և ոչ այլազդ . (յոր . ժդ . 14 .) Եթէ զգործս այլոց ջանաս բարւոք առնել , քանի ևս արժան է քեզ զքոյդ բարին բարւոք

կատարել :

Ոյնպէս պարտ է առնել և յանտարբեր գործս , որք ըստ ինքեան ոչ բարի են և ոչ չար . որպիսի են ուտել , ննջել , խօսիլ , կամ զնել զտուն , յօրինել լուժամացոյց , զբունուլ , խաղալ , ևն : Օ այսոսիկ բարւոք առնես , եթէ արասցես նախ առանց պահասառորութէ , կամ այնպէս՝ որպիսի պահանջլէ իրողութին , և այս մտածի նիւթապէս և ՚ի կողմանէ գործոյն . երկրորդ՝ աղիզ զիտաւորութք կամ ՚ի փառս այ , և այս մտածի տեսականապէս , և ՚ի կողմանէ գործողին : Ե զործելդ այսովիսի օրինակաւ՝ ճշմարտապէս առնես զբարին յամի . առ որ իբր նախագիծ օրինակ առաջի առնէ աւետարանին զգործս ոնն մերց ասելով .

* զամ ինչ բարւոք գործեաց սա || . (մարկ . է . 37 .) Եւ արդ քանզի այսր նոմի ինքնին զչետ գայ խաղաղութի մեծ՝ զնոյն ևս առաջի առնէ մարգարէն յաջորդ բանիւն . բայց ոչ դնէ զայն իբրեւ զչետ եկեալ ինչ , այլ իբրեւ ստանալի , վասն որոյ յորդորական բանիւն խօսի և ասէ :

Եթու ու այսով առաջանալու մեջ կամ այսով առաջանալու մեջ է այնպիսի բարի՝ առ որ բնասպէս բերի ամենայն

որ ինչ է 'ի տիեզերս . նաև տարեքը իսկ հակառակք միմեանց 'ի խաղաղութիւն բերին 'ի մի խառնուած . ու ըսոյ 'ի բառնին հետեւ ապականութիւն :

Վազ խաղաղութիւնն ընդհանրապէս առեւլ և 'ի ըստեղծուածն նկատեալ է կարգաւորեալ հանդարտութիւն մասանց ընդ միմեանս և ընդ բոլորին . զորօրինակ խաղաղութիւն ծովու է՝ յորժամ մասունք ջուրց ծովու կան հանդարտ ընդ միմեանս և ընդ նոյն իսկ ընդ ծովու : Այս ըստ այսմ երբեակ է խաղաղութիւն մարդոյ . նախ ընդ ինքեան . երկրորդ ընդ ընկերին . և երրորդ ընդ այս :

Խաղաղութիւն մարդոյ ընդ ինքեան է կամ ըստ մարմնոյ , կամ ըստ հոգւոյ , և կամ ըստ բոլորին , այսինքն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ միանդամայն : Բատ մարմնոյ՝ յորժամ անդամք մարմնոյն և հիւթք նորին կան հանդարտ ընդ միմեանս և ընդ բոլոր մարմնոյն . զորմէ ոչ են աստ բանք մեր : Բատ հոգւոյ՝ յորժամ կարտութիւնք նորա՝ միտք և կամք կան հանդարտ ընդ միմեանս և ընդ հոգւոյն : Բատ բոլորին՝ յորժամ այսոքիկ մասունք և կարտութիք մարդոյ կան հանդարտ ոչ միայն ընդ ինքեանս և ընդ հոգւոյն , այլև ընդ բոլոր մարդոյ՝ հապատակութեամբ ստորևոյն ընդ վերնագունիւ :

Խաղաղութիւն մարդոյ ընդ ընկերս է յորժամ մարդս խաղաղութք կայ ընդ մարդոյ . և այս կամ 'ի հասարակ կենցաղավարութեան . որպէս յորժամ ընկեր ընդ ընկերի առանց հակառակելոյ հանդարտ կայ : Կամ 'ի քաղաքական կարգի . որպէս յորժամ ժողովուրդք կան հանդարտ ընդ միմեանս և ընդ իշխանին : Կամ 'ի ոնտեսական կարգի . որպէս յորժամ ընտանիք տանն կան հանդարտ ընդ միմեանս և ընդ տանունն : Խաղաղութիւն մարդոյ առ անձ է՝ յորժամ հիգի և մարմին մարդոյ , և անմ կարողութիւնք նորա կան հանդարտ ընդ հպատակութք օրինացն այս . կամ այսպէս ասացից . յորժամ մարդս կայ հանդարտ ընդ այս պահանութեամբ պատուիրանաց նորա , որով և հաղորդ գտանի ածային խաղաղութեան :

Հայսալիսի խաղաղութիւն ահա յորդորէ մարդարեն . ինդը ու ընաղաղութիւն . որպէս թէ ասէր : Ոճաղ 'ի

բաց զն և իցէ խոռվութիւն , և զառիթս խռովութե ,
թէ ՚ի բանս իցէ և թէ ՚ի գործս . թէ ՚ի միտս իցէ և
թէ ՚ի կամն . և ցանկան խաղաղութե , և որոնեաւ զը-
տանել և ունել զայն ընդ անձին քում , ընդ ընկերին
քում , և ընդ այ . ևս և ցանկան զի ոչ միայն ՚ի քեզլի-
ցի խաղաղութիւն , այլւ յայլս :

Եւ յորժամ նշմարես զայն , որով ճանապարհաւ և
նշմարեսցես՝ վէ՛ զհետ նորա , իբր զի՞ եթէ ճանապար-
հաւ հեզութե կարես գտանել զիտաղաղութիւն , զայն
ճանապարհ կալ , և այնու գնաւ զհետ խաղաղութեան .
եթէ ճանապարհաւ խռնարհութե , գնաւ զհետ . սոյն

պիտ և յայլս :

Վ. յլ քննելի է աստ և այն զի ոչ ասէ՝ կալ զիտաղա-
ղութիւն , այլ խնդրեաւ , և երթ զհետ նորա : Եթէ ըս-
ներբին խաղաղութեան քննեսցուք , որով զհետեւ կեանք
մեր հանտարազ յալէ կոծութե է՝ անհնարին է մեզ ու-
նիլ ՚ի մեզ հաստատութե զանցարժ խաղաղութիւն .
վասն որոյ պիտոյ է միշտ իննդրել զնոյն , և միշտ զհետ
լինել այնու . նա զի և այս խնդրելս իսկ եթէ իցէ
կարդաւորեալ՝ ինքնին ինի պատճառ խաղաղութեան :
Իսկ եթէ ըստ արտաքին խաղաղութե քննեսցուք՝ որ
լինի ընդ ընկերին , [թէսկետե կարեմք ունիլ . բայց չէ
հնար ընդ ամենեսին պահել . զի կան ունանք՝ ընդ որս
ոչ է հնար խաղաղութե կեալ՝ այլ միայն զհետ զնար .
այսինքն այնպէս վարի՝ զի համաձայն ցուցցուք զմեշ՝
հաճոյից նոցա ՚ի բարիս . յոր միտս ասէ առաքեալն
* եթէ հնար ինչ իցէ ձեզ , ընդ ամենայն մարդկան
վիտաղաղութիւն ունիցիք . (Հոռմլմ . Ժք . 18 .) ընդ
այսպիսեաց եթէ շիցէ հնար խաղաղութե վարի՝ պար-
տական եմք գննէ առանց խռովութե կեալ :

Վ. յս եղանակ խօսից ցուցանէ ևս , թէ հեռացեալ է
յաշխարհէ խաղաղութիւն , և չէ մարթ գտանել , բայց
եթէ իննդրելով և զհետ պնդելով . որով և կարօղ
եմք ձգել՝ ի մեզ զայն . եթէ սոսկ իննդրեսցես՝ տե-
սանես , այլ ոչ գտանես . տարա եթէ զհետ ևս լիցիս ,
գտանես . վասն որոյ յաւելու ՚ի վերայ իննդրելոյն և
զհետ երթալն . ուստի ասէ բարսեղ վարդապէտ .
(՚ի մեկն . մարկ . զլ . ժղ .) * բարւոք առէ (մարդա-
րէն) թէ խնդրեաւ և զհետ գնաւ . զի հալածեալ և

„ մերժեալէ յաշխարջէն . խաղաղութիւն . զերկիր թռ
„ ղեալ և յերկինս գնացեալ . այլ կարօղ եմք գնա 'ի
„ մեզ ձգել հեշտեսւ՝ եթէ կամիցիսք :

Աարդիս չնորհայի ('ի մեկն . առ . պետ դ : 11 . ձառ .
է .) խաղաղութք խմանայ յայս բան զբա , և զխաղա-
ղութիւնն քսի . ուստի յերրորդ դէմս յառաջ բերեալ
զայս ընդ առաքելոյն՝ զրէ այսպէս . * խնդրեսցէ ըզ-
„ խաղաղութիւն , և երթիցէ զհետ նր . խաղաղութի
„ թուի թէ զքն նշանակէ բանիւս՝ զշմարիս խաղա-
„ դութիւնն որ ասաց . զխաղաղութիւն զիմ տամ ձեզ .
„ զոր պօղոս տիրապէս խաղաղութիւն անուանէ . . .
„ արդ եթէ աշակերտ ես ասէ ճշմարտութէ , պար-
„ տիս նմանել հեզութեան նորա , և երթալ զհետ հե-
„ տոց նորա . վասն զի նա ՚ի գատաստան ածեալ և
„ ապտակեալ՝ ոչ աղաղակեր և ոչ վիճէր . . . զայնպի-
„ սի խաղաղութիւն ինդրեալ և դու 'ի չարախօսին
„ քում , և 'ի տանջին :

Եւ արդ քանզի բազում են արգելք խաղաղութեան
մարդոյ , նաև զի նոյն ինքն սատանայ որ սկիզբն է խռո-
վութեան , ոչ սիրելավ զխաղաղութի՝ հանապաղ ջանայ
պղտորել զնոյն 'ի ներքոյ և արտաքոյ , ան՝ որ սիրողն
է խաղաղութի՝ յատուկ տեսչութք զդուշանայ զեր-
կիւղածովք իւրովք . որպէս զի ըստ տանելոյ տկա-
րութեան բնութէ իւրեանց՝ մնացեն 'ի խաղաղութէ ,
և կացցեն աներկւան . և զայս այլով իմն բանիւ յայտ
առնէ մարգարէն 'ի յաջորդ համարն՝ ասելով :

ՃԷ. **Ա** չ ուստան 'ի վերայ արդարոց . և ականջն նորա 'ի
վերայ աղօնէից նոյն :

Որովհետեւ աչք արդարոց առ անձ են , և ականջք նո-
յա 'ի պատուիրանս նորա , աչք ո՞ն ևս առ նոսա է ,
և ականջք նորա յաղօթս նոցա . Երդ մարգարէն ար-
դարս կոչէ զայնոսիկ՝ որդ ունին զերկիւղն այ , և նո-
վին երկիւղիւ որպէս եդ 'ի վերոյ՝ լուեցուցանեն զլե-
զուս իւրեանց 'ի չարութենէ . խոտորին 'ի չարէ , և
առնեն զբարին , ինդրեն զխաղաղութիւն , և երթան
զհետ նորա , զի որք միանգամ զայսպիսի կեանս վա-
րեն՝ արդարք են նոքա , և արդարք ասին . զորս և եր-
կիւղածս կոչեաց մարգարէն 'ի նախընթաց սաղմանի

('ի համար 45 .) յասելն . * աչք տն 'ի վերայ երկիւ զածաց իւրոց և են ,

Վ յսոքիկ երկիւ զածք կամ արդարք ՚ի բազմադիմի վասանգս փորձութեանց շրջելով՝ է զի տեսանեն զարն , և է զի ոչ տեսանեն . ՚ի տեսանելն՝ առ անձ աղաղակեն . և անձ իրը ականջօք լսելով աղօթից նոցա՝ փրկէ վասա . իսկ յոչ տեսանելն , անձ որ թոյլ տայ դաւ այնպիսի փորձանաց ՚ի վերայ նոցա , իրը աչքը իւրովք տեսանելով՝ վանէ զայնո : Օ այսոքիկ կամելով յայտնել ասէ :

Վ այս դն 'ի վերաբոց . և ականջնորա 'ի վերաբնից նոցա : Օ այս բան յառաջ բերեալ չնորհալոյն ՚ի թուղթն առ ուրուկն ընդդէմ այնոցիկ՝ որք զնեին յանձ աչք և ականջօք զրէ այսպէս . աչք ասել տն՝ վասն տեսանելոյ է զամ : * իսկ ականջս անյ ասացեալ է յաղակս և լսելոյ զաղօթս սրբ . որպէս գաւիթ ասէ . աչք տն ՚ի վերայ արդարոց , և ականջը նորա յաղօթս նոցա . և ես , միթէ որ մնկեաց զունին՝ ինքն ոչ լիցէ . կի՞ որ ստեղծ զակին՝ ինքն ոչ տեսանիցէ . յայտ առնելով թէ այլով կերպարանաւ է նորայն տեսութիւն և լսողութիւն , և այլով մերս . քանզի մեք իրը և ըստ հանս տեսանեմք և լսեմք ընդ զգայարանո : և յորժամ սոքա փակին՝ անտես մնամք և անլուր . իսկ նա միշտ տեսանէ և լսէ . և ամենայնիւ զամենայն և յամենայն ժամ զիտէ . որպէս և մերն լւսաւութիւն ասէ՝ թէ անմիւ լուր է . անմիւ տես է : Իսկ բարսեղ վարդապէտ ('ի մեկն . մարկ . գլ . ժկ .) ասէ , թէ աչքը տն իմացեալ լինի քաղցրութեր նայիւ նորա առ արդարս . որպէս երեսօք տն իմացեալ լինի բարկութեր հայիւնորա 'ի մեղաւորս . ըստ այնմ թէ * աչք տն 'ի վերայ արդարոց՝ որ է քաղցրութեամբ նայիւն առ նոսա . և թէ երեսօք տն 'ի վերայ մեղաւորաց՝ որ է բարկութեր հայիւն 'ի նոսա || :

Վ սարդիս չնորհալի ('ի մեկն . առ պէտ . դկ . 12 . ձառ . է .) աչքը տն իմանայ զուեսութիւնն այ՝ ՚ի մեկ նեն զայս բան . ասելով . * աչք տն 'ի վերայ արդարոց , այսինքն տեսողական զօրութիւնն , որով յաւէտ պահպանէ զնոսա և զօրացուցանէ՝ անվթար զարդար զախտ արդարութեանն ունել . և ոչ երբէք անիրա-

“ ւութիւն ինչ՝ ի նմա խռոնելլ ։ Խւ խօսելով անդ՝ ՚ի վերայ արդարութեան առաջիկայ ընաբանիդ , ասէ . * արդարութիւն զբնու առաքինութիւնն ասէ . որպէս . “ զյովքայ վկայէր ո՞յ , այր արդար անարատ շնչաւ . “ ըիտ ածագաշտ . . . նմանապէս և աստ արդար՝ որ ա . “ չաց տն արժանաւոր է՝ զբնու առաքինին ասէ . . . որ . “ պէս՝ ՚ի մէտն կշռոցն է տեսանել . զի միշտ յուղղու . “ թիւն կայ մնայ , և ՚ի թիւրութիւնա երբէք ոչ անկա . “ նի , և ակն մարդոյ նա ոչ առնու . այլ զամենայն ե . “ գեալսն ՚ի նմա ուղղութք վճարէ . ՚ի վերայ այսափ . “ սի արդարոյ են ացք ո՞յ ։ Խյօսելով և ՚ի վերայ ա . կանջաց տն՝ ասէ , * ած պատրաստական կայ ինդլու . “ զաց իւրոց . մինչեւ ձեր ասէ կարդացեալ իցէ առ . “ իւ լուայց ձեզ . և մինչեւ իննզրեալ ինչ իցէ՝ առա . “ ցից՝ բա զինչ իննզրեք . այս է ասելն . ականջք նու .

“ բա յաղօթս նոցա ։

Այլ արդ որպէս ասացաք (՚ի սաղ . լը . 15 .) ըս նա . խակարգեալ բանից սարգսի չնորհալոյ , աչօք տն՝ ՚ի մասնաւորի նշանակինն միաք և տեսչութիւն կամ նախա . իննամութիւնն ո՞յ . սոյնպէս և ականջք ինացեալ լինի . կաք և համութիւն նորա յընդունելն անդ զաղաւանս . մարդկան . Խւ քանզի արդարք յած միայն են ասա . վինեալ՝ տեսչութիւնն ո՞յ ևս հանապազ ՚ի վերայ նոցա . է ՚ի խնամել զնոսա առ ՚ի բարին , և ՚ի պահել զնո . սա ՚ի չարէ , ևս և ՚ի հաստատել զկեանս նոցա ՚ի խա .

Պատրաստ ևս է լսել աղօթից նոցա . և կատարել զոր .

խնզրեն . թէ առ ՚ի փրկել ՚ի չարէ , և թէ առ ՚ի զի . մել ՚ի բարին . Խակ եթէ երեւացի երբեմն ոչ լսել . այն իսկ է լսել . քանզի որոյ վասն աղօթեն արդարք առ . ած , աւեւեալ ո՞յ թէ ոչ պատշաճի նոցա այն՝ յոյլ . ինչ բարէ գոյն վերածէ զնոցն , և այս՝ կամ խափան . մամք մեծագոյն չարք , և կամ առաջնորդելով առ մե .

ծագոյն բարին .

Քանզի խնամքն ո՞յ է իբր հոգածութի ճարտար բժշկի . ՚ի վերայ հիւանդացելոց . ՚ի խնզրել մեր զմնասա . կարս՝ մատուցանե զօդտակարսն , և յաղացել մեր . զնա՝ հեռացուցանել զգաննութիւն գեղոյն . եթէ ոչ . համեսցի՝ զի արբցուք զայն , հաճի՝ զի նոսին լի-

ցուք բժշկեալ : | Եպազատիլ մեր առ նա բառնալ զցաւս վիրաց մերոց՝ երբեմն միսիթ արութ հոգւոյ դիւ բացուցանէ , և երբեմն աղիւ կոկծեցուցեալ՝ նովին բժշկէ : || Եք տկարամիտ գողով զկակիծն միայն ըզ գամք , և յօգուտն ոչ հայելով՝ բաշում անզամ՝ ի չարն զգածիմք և տրանջամք : || Ալ ած ոչ հայի յայն՝ յոր զգածիմք , այլ յայն՝ յոր օգտիմք . որպես մաշը՝ ի խնամելն զօրդի իւր՝ ոչ հայի ի լալ նորին , այլ՝ ի դարմանիլ նորա և ՚ի սրբիլ յաղտօյ :

Պատահի երբեմն՝ զի անկանելով՝ ի վտանգ մեծի փորձութե աղաչեմք զած աղատել զմեզ . և ած իւրով ամենաքաղցր նախախնամութք՝ է զի փրկէ առանց նեզութեան , և է՝ զի փրկէ նեղութք . որով իրը երկաթի ժանեօք հանէ զմեզ անտի վասն մեծագոյն բարւոյն մերոյ . մեք ՚ի ցաւ ժանեացն ուշ գնելով ոչ մատզրեմք մեծագոյն բարւոյն , և այնու կասկածիմք՝ թէ զուցէ ոչ կամի լաել մեզ : Յայսմ ամի յօգուտն մեք հայի ած , և ոչ ՚ի թիւր և ՚ի տկար համարումն ապահովականեալ թնութեանս :

Եսկ որք ապերախան գտանին առ նա , և զսիրս իւրեանց դարձուցեալ՝ ՚ի նմանէ՝ ՚ի չարիս մասքերեն , և ՚ի նոսին խնդրեն՝ զօր կամին , մանաւանդ նորա որք զիտելով առնեն զարին , ընդ այսպիսիս խատութք վարի իրը ընդ թշնամիս իւր : || Ամին իրի յարէ մարգարէն զինի և ասէ :

ԺՂ. **Ա**բեստ դն՝ ՚ի վերայ չարագործաց . սպասէլ յերիշե շնչարակն նոյս :

|| Վարդկօրէն ձեւացուցանէ զբանն . զի փոխանակ ասելոյ՝ բարկութիւն ած՝ ՚ի վերայ չարագործաց . կամ փոխանակ ասելոյ՝ բարկանայ տէր՝ ՚ի վերայ չարագործաց՝ ասէ երեստ դն՝ ՚ի վերայ չարագործաց : || Եւ պատճառ այսպէս խօսելոյն է ցուցանել զառաւելութիւն բարկութէն ոյ՝ ՚ի վերայ չարագործաց . քանզի բարկութիւն մարգոյ թէպէտ և ՚ի սրտի ունի զարմանն , զի է կիրք եռացմամբ արեան զսրտիւ ընդդէմ վնասաղին , սակայն յորժամ առաւելու , երեխ յերեսս՝ իրեւ յիւրում թէատրոնի . ուր և երեւեցուցանէ առնուլ զվրէժ՝ ՚ի վնասողէն , և զի այսպիսի օրինակաւ յերեսս մարդոյ

երեխ բարկութիւն , աստանօր բառով էրեւ փոխարերութք և նմանութք ՚ի մէջ բերեւ զնանակութիւն բարկութեան այ , և յայս միտու ասէ :

Երես ան ՚ի վերայ լարագործութաց : Արտես թէ ասէր . զորօրինակ աչք առն այսինքն հայրական ինաւոք այ է ՚ի վերայ այնոցիկ՝ որք երկնցին ՚ի նմանէ , և անեն զարդարութիւն , սոյնպէս և երեսք նորա , այսինքն բարկութիւն նորա կամ վրեժինողը թիւնորդութիւնորին է ՚ի վերայ այնոցիկ՝ որք ոչ երկնցելով յայ՝ աներկիւղ գործեն զար . իսկ թէ առ ինչ իցէ այս բարկութիւն ՚ի վերայ այսպիսեաց , ասէ :

Սատակէւ երկէ զիշտակս նոցա : Ոչ ասէ բառնալ կամ սատակէւ զնոսա յերկրէ , այլ զիշտատակս նց . առ ՚ի ցուցանել , թէ բարկութիւնն այ այնըստ սաստիկ է ՚ի վերայ չարագործաց , մինչեւ ոչ միայն զնոսին իսկ չարագործան կորուսանել յերկրէ , այլև զիշտատակ նոցա , որպէս արար ընդ աքաար , ընդ գագան , և ընդ այլ բազում :

Խակ յիշտակաւ իմացեալ լինի նախ անուն կամ համը բառ . յոր միտօս կամի ասել . այնպէս կորուսցէ անձ ըզնոսա , զի մի և անուն նոցա գովութք յիշեսցի ՚ի մարդկանէ . այլ կամ ջնջեսցի , և կամ պարսաւանօք յիշեսցի . իսկ եթէ գովութք յիշեսցի , այն գարձցի յառաւելութիւն պատժոյ նոցա : Ոյնպէս իման և զապարանից և զշիրմաց նոցա , և զգբուածոց նոցին , որք կամ ջնջին , և կամ պարսաւին , և կամ ևս դառնան ՚ի պատիժ պատուհանի նոցին :

Երկրորդ իմացեալ լինի ծնունդ նոցա . և այս երեխ հուանական , յոր միտ կամի ասել . նաև որդիք նոցա , և թռուունք նոցին՝ որք են յիշտակ նոցան , եթէ ըստ ձանապարհաց նոցա գնացեն՝ ըստ նոցին սատակէսցին :

Ես յս հայի յայն՝ զոր ասաց անձ առ որդիս խարայէլի . * ես եմ ակը անձ քո՝ անձ նախանձու , որ հասուցաւ . նեմ զմեղս հարանց՝ որդւոց , յերից և ՚ի չորս ազգու . ատելեաց իմաց (ելից . ե . օ .) Եւ զայս պարտ է իմանալ կամ ըստ հետեւելոյ նոցա գործոց նոցին , և կամ ըստ կարգաւորելոյ տեսութեանն այ : Եսացի նախ՝ * ըստեւելոյ . , իբր զի եթէ որդիք նոցա ևս ը

շարիս հարց իւրեանց գնացեն , ըստ նոցին պատռու հասեցին . և այս՝ յերիս և՝ ի ըրա ազգս . զի սրբա մի քան զմի մերձ գոլով նախնեաց իւրեանց՝ կարեին ճա նաշել , թէ չար էր գործք նոցա . վասն որոյ և ոչ էր արժան ինքեանց հետևիլ նոցին . զի մի և ինքեանք ըստ նոցին կրեցեն զարտիւ . ուստի և՝ ի կրելն՝ ոչ կարեն անմեղադիր առնել զանձին՝ թէ մեք այսպէս տեսաք , վասն որոյ և այսպէս գնացաք . որովհետե կարօղ էին քննել և իմանալ . | յւ թէպէտ այլք ևս այսինքն հինգերորդ և վեցերորդ ազգք որբ զինի զան՝ կարեին իմանալ , բայց ոչ որպէս առաջինքն . ամին իրի զնառա միայն յիշէ :

Ասացի երկրորդ * ըստ կարգաւորելոյ տեսութեանն այ յաստի կեանս + իրք զի ամ թէպէտե այսպէս սպառ նայ , բայց բազում անգամ ըստ աստի կենաց այլազգ կարգաւորէ զսպառնալիս իւր , կամ վասն բարի ինչ գործոց նոցին՝ որբ արժանի են ժամանակաւոր վար ձուց , և կամ վասն այլ ինչ գաղանի սպառնառի՝ որ անհաս է՝ ի մէնջ . Բայտ աստի կենաց՝ ասացի , զի սպառ նալիքն այ որբ հային՝ ի հանգերձեան կեանս , անայ լայլէլի են . որովհետե հանգերձեան կեանք ոչ է հանգոյն աստի կենաց փոփոխական :

Դրդ մարգարէն հայելով նախ յարդարսն՝ ասաց * աչք տն՝ ի վերայ արդարոց || են . հայելով և յամգարիշտու՝ եդ * երեսք տն՝ ի վերայ չարտագործաց || են . զայս սիկ եղեալ դառնայ հաստատել իրը փորձիւ կամ իրը յարացուցիւ զայն՝ զոր խօսեցաւ զարդարոց . վասն ո րոյ ասէ :

Ճէ . **Ա**պրդացին արդարոցն առ պըր , և պըր ըստան նոցա . յամ նէլլ-նէ նոցա իրէնոց զնուսա :

Մարդարս կոչէ աստ զնախնի հարս , որպիսի էին արրա համ , իսահակ , յակոք , յովսէփ , մովսէս , յեսու , գեթէմն , սամիքսն , և այլ ևս բազումք , որբ ի նե զութեան իւրեանց ապաւինեցան առ ամ , և փրկեցան . որպէս յայտ է՝ ի զիրս ծննդոց և ելից , ի զիրս յես ուայ և դատաւորաց . զորս մի ըստ միօջէ յառաջ բերել երկար լինի : | Ասսա և՝ ի նմանիս սոցա ակնար կելով մարդարէին՝ ասէ :

Վարդաղին արդարչն առ թը , և թը լուսա-նոցա . յամենայն նե-
շունենէ նոցա ժըհեաց զնուա : **Ո**րպէս թէ ասէր . հարք
մեր աբրահամ , իսահակ , ևն , յորժամ անկան 'ի նե-
ղութիւնս' ոչ լքան , և ոչ տառապեցան 'ի նոսին . այլ
աղաղակեցին առ տէր՝ զոր յամ սրտէ պաշտէին . և
տէր ոչ գարձոյց 'ի նոցանէ զերեսս իւր . և ոչ երբէք
անտես արար զաղացանս նոցա , այլ լուաւ նոցա , և
փրկեաց զնոսա՝ ոչ միայն յայսմ կամ յայնմ նեղու-
թենէ , այլ յամէ :

Օայս ասելով , և սովին զնախասացեալսն հաստա-
տելով զօրութք իմն յորդոր լինի առ ամենեսին՝ հե-
տեիլ շաւղաց հարցն այնոցիկ արդարոց . զի թէ որ-
դիք եմք ասէ նոցա , և կամիմք՝ զի լսելի լիցին և մերս
աղացանք , ապա և մեք հետեւեսցուք նոցա , և ըստ
նոցին կացցուք յարդարութէ :

Վեդ՝ զոր դաւիթ ասաց զնախնեաց իւրոց , մեք ևս
զնոյն ասեմք զնախնեաց մերոց . այսինքն զառաքե-
լոց , զհայրապետաց , զմարտիրոսաց , ևն : **Օ**ի սոքա
ամենեքեան 'ի նեղութիւնս և 'ի տանջանս մատնեալք
'ի կարդալիւրեանց առ տէր՝ զօրացան . և 'ի տանջանս
անդ փառաւորեցան , և փրկեցան՝ ոչ թէ 'ի միոյ և
եթ նեղութենէ , այլւ յամէ . և ժամանեցին 'ի հան-
գիստն յաւիտենից : **Ո**ւստի և ճշմարտութք ասի՝ թէ
ած լուաւ նոցա . մանաւանդ զի ետ նոցա և զառաւելն .
քանզի նախ ետ նոցա զհիանալի համբերութիւն 'ի
տանջանսն . և ասլա վ՛տ այնր համբերութէ ետ զյաղ-
թանակն փառաց յարքայութեան :

Վյլթէ զիածրդ յաջողէ զայս ած յարդարս իւր . կամ
թէ զիածրդ խնամ ունի 'ի վերայ նոցա առ 'ի փրկել
զնոսա . և զինչ հանգամանք պահանջիցին 'ի նոսա
առ 'ի փրկեալ լինել , յայտ առնէ մարդարէն յաջորդ
բանիւն ասելով :

Ժը . **Ա**յլէն է թը առ այնոսիկ՝ որ հաշեալ են սրտիւք . և
շնորհարհս հոգւուկ իւշուցանէ :

Վճ թէպէտե յամի մերձ է էութք , իշխանութք , և
տէսութք . բայց 'ի վերայ այսր ամի այլով ևս բազ-
մապատիկ օրինակաւ մերձ է առ արդարս . նախ՝ սըը-

բարար շնորհօք , որով բնակի 'ի նոսա բարեկամաբար
իբրև 'ի տաճարի իւրում : Երկրորդ՝ 'ի ձեռն այլոց
նպաստից . զորօրինակ 'ի ձեռն իմաստութեան և զիւ-
տութեան՝ 'ի լուսաւորել զմիտս . 'ի ձեռն զօրութե՝ 'ի
զօրացուցանել զկամն . 'ի ձեռն խաղաղութեան՝ 'ի միսի-
թարել զսիրտս . 'ի ձեռն համբերութեան՝ առ 'ի ամրա-
ցուցանել զհոգիս , ևն : Ի ձեան այսպիսեաց ահա
զմերձ լինելն այ նկարագրէ մարգարէն այսու բանիւ .
|| մանաւանդ զմերձ լինելն առ վշտացեալս՝ յասելն :
|| Եւ Է առ այնոսիկ՝ որ մաշւալն սրտիւ : Այսինքն
թէ ած մերձ է առ այնոսիկ՝ որք վասն իւր 'ի նեղութե-
են . մերձ է՝ զօրացուցանելով զնոսա զի համբերես-
ցեն . մերձ է՝ միսիթարելով զնոսա՝ զի մի լքցին . մերձ
է՝ փրկելով զնոսա 'ի տառապանաց՝ զի առ գերագոյն
ինչ դիմեսցեն . մերձ է՝ ընդունելով զնոսա առ ինքն՝
զի փառաւորեսցին :

Օ այսպիսի վշտացեալս՝ առ որո ած ասի մերձ լինել
կոչէ մարգարէն մաշւալ սրտիւ . առ 'ի ցուցանելնախ
զառաւելութիւն վշտացն . Երկրորդ՝ զմեծութի յօժա-
րութեան նոցա 'ի կրել զայնս . և Երրորդ՝ զմաքրիլ նո-
ցին այնպիսեօք : **Օ** ի զորօրինակ 'ի լուանիլ դիւրընկ-
ճելի իրի՝ 'ի Ճմլիլ ձեռօք մաշի և մաքրի . որպէս յայտ
և 'ի զգեստս , այսպէս և արդարք՝ որք դիւրընկճելի
են , այսինքն պատրաստ և յօժար 'ի կրել զնեղութիս ,
նովին նեղութեք Ճմլին և մաշին 'ի սիրտս , բայց միան
գամայն և մաքրին 'ի հպարտութենէ , և 'ի չարութէ :
Վարթ է ևս այսու բառիւ իմանալ զայնոսիկ՝ որք
թախծութե սրտի , և ցաւագին զղջմամբ դիմեն առ
ած , և կամ տոչորմամբ սիրոյ կան առաջի այ իբր մամ-
առաջի հրոյ . զոր այլուր սիրտ բեկեալ կոչէ մար-
գարէն , և այլուր սիրտ սուրբ . (զօրմէ տես 'ի սաղ-
ծ . 49 :) **Օ** այսպիսիս կոչէ մարգարէն և խոնարհս
'ի յաջորդ հատուածն . և վկայէ , թէ ած մերձ զո-
լով առ նո՝ փրկէ և կեցուցանէ զնո՝ յասելն :

Այս շնորհարկս հրգուշացնէ : Խոնարհք հոգւովնո-
քա ասին , որք Ճանաչելով զինքեանս իբր ոչինչ և
տկար , անպիտան և անարդ , ոչ 'ի զօրութիւն իւ-
րեանց , այլ միայն յած ապաւինին , և 'ի նեղութեան
առ նա միայն դիմեն . նոյնպէս և 'ի յաջողութե նմա-

միայն տաճ զժառաւ . և զի սոքա ոչ զինքեանո , այլ
զայն խնդրեն՝ որպէ են և կեան . վասն այնորիկ և նա
այսինքն ան միայն զնոսա խնդրէ , և զնոսա կեցուցանէ :
Վայցի * միայն զնոսա || . զի ով որ և իցէ , [թէ] երկիւ
զած այ ասիցի և [թէ] արդար , ե[թէ] չիցէ խոնարհ
հոգւով զայնպիսին ոչ խնդրէ ան , և ոչ կեցուցանէ
հոգւով : | և ընդհակառակին [թէ] ոք մեզաւոր իցէ
և անօրէն , շարագործ և լի ամ զարցութեամբ , ե[թէ]
խոնարհեացի հոգւով առաջի այ , կեցուցանէ զնա ան
հոգւով , և արդարացուցանէ . որպէս յայտ է ՚ի մանա-
սէ , ՚ի մաքսաւորն , և յայլ :

Արովլք յայտնի ցուցանի՝ [թէ] որ ոչ է խոնարհ , խո-
տան իմն է առաջի այ . և որ բարի ասի և չիցէ խո-
նարհ , ստուեր է բարւոյ . նա զի որ ինչ գործի առանց
խոնարհութեան հոգւոյ՝ է ունայն . և ե[թէ] առաքինու-
թիւն կարծեացի՝ է մոլորութի . նաև նոյն իսկ առա-
քինութիւնն ե[թէ] չիցէ հաստատեալ՝ ի խոնարհութէ
զառնայ ՚ի մոլութի : | Առանց խոնարհութէ գործել
զառաքինութիւնն՝ է տանիլ զալիւր բայ ընդգեկմ հող-
մոյ : Հաստատութիւնն առաքինութեց է խոնարհութի .
և է առաջին աստիճան սանդիսոյ քրիստոնէ ական կե-
նաց : Հիմն առաքինութեանց է խոնարհութի . իսկ ա-
ռաքինութիւնն առանց խոնարհութէ՝ շնուած է առանց
հիմնան : | Ճիմատ առաքինութեանց է խոնարհութի . ա-
ռանց արմատոյ ծառ ոչ բարձրանայ . և առանց խո-
նարհութէ առաքինութիւնն ոչ զօրանայ : | Ասկի ազնիւ
և ակռնը պատուականք՝ ՚ի խորս զոյանան . սոյնպէս
և սէրն այ և այլ ո և իցէ առաքինութիք՝ ՚ի խորս խո-
նարհութէ ազնուանան : | Առաքինութիւնք ե[թէ] իցէն
Ճշմարիտ՝ որշափ յաճախինն՝ ՚ի մարդն , այնչափ խոնար-
հեցուցանեն . որպէս պտուղը յառաւելուն խոնար-
հեցուցանեն զասու : | Ճ[թէ] պակաս գտանիմք յառա-
քինութեանց՝ պակաս ճանաւելով խոնարհիմք , և խո-
նարհէլով ընումք զպակասութիւնն նոցին . և բարգա-
ւաճիմք և պտղաբերիմք յառաքինութիւնն . | Ճ[թէ] առէ
պտուղ [թէ զենուայն՝ ասաց պարտիզպանն , * շուրջ ըզ-
գովաւ ըրեցից , և արկից զազր . [թէ բեկւա արասցէ զզը-
տուղ || . (զուկ . ժող . 8 .) այս ազբեարկութի է խո-
նարհ ճանաւումն [թէ շուռառութեան մերոյ . որով յորդո-

ըիմք պատզաբերել յառաքինութիւնս : Առափ խոնարհիմք, այնչափ հեռանամք՝ ՚ի վասնգէ կործանման ։ Որ երկնչի յանկմաննէ հեռանայ ՚ի բարձրագոյն տեղածնի, սոյնալիս և խոնարհն ՚ի բարձրամտութէն, իշմէ կամիմք՝ զի խոնարհեցի առ մեզ անծ, խոնարհեցոյք ՚ի մեզ : ՎՃ է յանհաս բարձրութեան՝ ոչ կարեմք հասանել առ նա, եթէ խոնարհեցոյք, նա խոնարհի և հասանէ առ մեզ, կեցուցանի և բարձրացուցանի . ըստ օրում և առ : * զիսնարհս հոգւով կեցուցանի : և * որ խոնարհեցուցանէ զանձն բարձրասցի : (զուկ .
ԺՀ. 14.)

Վրդ՝ աստանօր բան մարզարէին թէպէտ ընդհանրապէս կարէ առեալ լինել ՚ի վերայ ու և իցէ մարդոյ՝ որ իցէ խոնարհ հոգւով, բայց կարդ բանին երկրորդաբար ասյ իմանալ զայնսոիկ արդարու, որք ՚ի բազում նեղութեանց խոնարհին ՚ի հոգիս իւրեանց, որով և փրկին ՚ի նեղութեանց անտի, ոչ զի են արդարք, այլ զի են խոնարհք . և փրկութիւն արսպիսեաց ոչ է սոսկ ՚ի միոյ նեղութենիւ, այլ ՚ի բազմաց . մանաւանդ թէ յամի . որպէս ասաց մարզարէն ՚ի նախընթաց համարն . զօր և այլով իմն բանիս յայտ առնէ ՚ի յաջորդ համարն ասելով :

ԺՀ. **Բ**ազմամ նեղութիւն են արդարոց, յայէ իրին զնուածք . և զանէ զամ սոսկ նոյն, և դ հայանէ մէ իշտեացի :

Կեզութիւնք բազմատեսակը են, ՚ի սին՝ նեղութիւնք ՚ի մարմնոյ . որպիսի են՝ հիւանդութիւնք, ցաւք, վլրք . են : Երկրորդ՝ նեղութիւնք ՚ի հոգւոյ . որպիսի են մը թութիւնք մոսաց, խատութիւնք կամաց, և պատորութիւն յիշողութեն : Երրորդ՝ նեղութիւնք ՚ի բոլոր մարդոյ ըստ որում մարդ . որպիսի են շարժումնք կրից ըստ ազգն իւրեանց . շարժումն անկարդ սիրոյ, կամ շարժումն տանշողական ատելութեան . շարժումն դառն տրտուն . թեան, և խեղիչ տքախութէ . շարժումն երկիւնիք և ըարդութեան, են : Կ սոսին ակնարկելով իմաստնոյն ՚ի մարմնն, ՚ի հոգի և ՚ի բոլոր մարդն՝ առ : * մարմնն եղջանելի ծանրացուցանէ զոգի . և հակէ հողեղին յարկս զմիսու բազմահօգս : (իմաստ . թ . 15.) Ըստ

րորդ՝ նեղութիւնք յընկերաց, որպիսի են շարախօսութիւնք, ընդդիմաբանութիւնք, քսութիւնք, նախատինք, յոխորտանք, բամբասանք, մատնութիւնք, խարեւութիւնք, գողութիւնք, աւազակութիւնք, գերութիւնք, հալածանք, կապանք, հարուածք, տանջանք, և մաշիսկ: Հինգերորդ՝ նեղութիւնք յընտանեաց. որպիսի են անչամանայնութիւն բարուց կնոջ ընդ ընդ առն. անառակութիւն որդւոց. անզգամութիւնք ծառայից. տաժանմունք խնամելոյ, կերակրելոյ, և զգեցուցանելոյ զնոսին, ևն. Ա եցերորդ՝ նեղութիւնք՝ ի տարեցաց. որպիսի են երկրաշարժութիւնք. հըկիզութիւնք. մըրիկը կողծանիչք. կայծակունք վնասիչք. կարկտահարութիւնք սաստիկը. հեղեղք աւերիչք. տապազին ջերմութիւնք. սարսուլի ցրտուկը, ևն. Ի օթներորդ՝ նեղութիւնք՝ ի յապրելեաց, և ի վաճառաց. որպիսի են աղքատութիւնք, տնամնիկութիւնք, կորուստ ստացուածոց, անյաջողութիւնք շահու, ևն. ևս և սովոր և երաշտութիւնք, ևն. Ա թերորդ՝ նեղութիւնք՝ ի կենդանեաց. որպիսի են խայթմունք մէեղաց, լուոց, կարձաց, օձից, ևն. Երկիւդ գազանաց, և պատառօղկենդանեաց. Աններորդ՝ նեղութիւնք՝ ի դիւաց. որպիսի են պէսպէս փորձութիւնք նոյա նեղբինք և արտաքինք:

Ե յս նամ նեղութիւնք, և այլ ևս բազումք՝ հասարակաց են, և տագնապեն զմարդիկ, զոմանս առ ի ըզգաստութիւն, և զոմանս առ ի պատիմ. ոմանց ծանր, և ոմանց թեթև. յոմանս այսպէս, և յոմանս այնպէս: Եւ զայս նամ թոյլ տայ արարին գալ ի վերայ մարդկան վասն գերազոյն բարւոյ, զոր նա ինքնիւրով անսահման խմասութիւն զիսէ, և սնորինէ: Եւ զի հանդէս յաճախութեն նեղութեանց պանծալի երեխ յարդարսն՝ մանաւանդ ի փրկեն այ զնոսա, յայն հայելով առէ:

Ի ապում նեղութիւնք են արդարոյ (յահ իրէ զնոսա պ), Պատշառ բազում լինելոյ նեղութեան արդարոց բազումէ: Առաջինն հայր ի սէրն այ. * զի զոր սիրէ տէր՝ խրատէ. տանջն զամ որդիկ՝ զոր ընդունի ։ (առակ. դ. 12.) իբր զի զորս սիրէ ան՝ իբրեւ հայր ընդունի զնոսա նեղութեամբ զննէ և զրկէ. որպէս առնէ հայր ի

գդուելն զրդի իւր , ամին իրի ասաց հրեշտակն ցտոքիթ . * և զի ընդունելի էիր այց՝ հարկ եղեւ փորձութեանել զքեզ || . (տոք . ժը . 43 : հռոմ . ը . 47 :)

Խըկրորդն հայի 'ի ժառանգութիւն արքայութեան և յաւտուենական հանգստեան . որոյ վասն յորդորեն առաքեալքն և ատեին (գործ . ժդ . 21 :) [թէ * բան, զումնեզութեք պարտ է մեզ մտանել յարքայութիւն, այց || . քանզի որք հասինն յայն՝ ընդ մեծամեծ վիշտս անցին աստ : Ուստի ցուցեալ հրեշտակի զորսն՝ որք կային յարքայութեան ասաց ցաւետարանին յովհաննես .

* սրբա են՝ որք գան 'ի վշտաց մեծաց || . (յայտ . է . 14 :) Որքա են արդարնեւ , որք աստ 'ի վիշտս կոփեցան . և սրբեցան , և հրեշտակայցեալք վերացան լրացուցանել զիրամնատութիւն երկնային տաճարին , զոր իրամատեաց սատանաց և զօրք նորա : Ինդ ոչ լին ձայնք կրանաց . որպէս եղեւ 'ի շնութեան սողոմոնեան տաճարին . զի քարինքն արտաքոյ կոփեալ կոփեցան , և անձայն զետեղեցան . (ը . թագ . դ . 7 :) Եթէ ոք ոչ կամիցի կոփիլ աստ , ոչ կարէ զետեղիլ անդ , այլ 'ի դժոխս . քանզի անկոփ քարինք ոչ գնին յերեելի տեղիս հոյակաս շնութածոյ՝ այլ 'ի խորս 'ի ներքոյ հեմանց . սոյնակես և անվիշտ անձինք 'ի խորս երկրի : Իստ առաւելութիւն նեղուեց հայի և յառաւելագոյն վարձս արդարոց . իբրզի համբերութեան այսպիսի նեղութեանց արժանի լիցին բազում և մեծադցոյն վարձուց . ըստ որոյ առէր առաքեալն * յաճախութիւն թեթե նեղութեօս մերոյ . . . զմեծուի փառացն զործէ 'ի մեզ || . (ը . կոր . դ . 17 :) Իսյոյ որշափ և առաւել իցեն՝ փոքր և նուազ համարին համեմատութեան առաւելութեան երկնային վարձուց . զի * ոչ են արժանի չարշարանք ժամանակիս հանդերձելոցն փառաց՝ որք յայտնելոց լոց են 'ի մեզ || . (հռովմ . ը . 18 :)

Խըկրորդն հայի 'ի կերպարանակցութիւն քոփի . վասն զի կամի հայրն երկնաւոր տեսանել 'ի մեզ զնմանուի անդրանկան իւրոյ 'ի ձեռն վշտաց . ապա [թէ ոչ] ոչ ես օրհնէ զմեզ , և ոչ ընդունի : Աահակ օրհնեաց զյակոր՝ զի զնմանութիւն անդրանկան իւրոյ զնմեաց 'ի նմա . և էառ զհոտ նորին . * ահա հոս որդւոյ իմայ իբրև զհոտ անդոյ լիոյ զօր օրհնեաց տէր || . (ծնն . իէ . 27 :) Ոյն-

պէս առնէ և հայրն երկնաւոր : Կամի և որդին միածին աեսանել զմեղ իւր խաչակիցս , զի արացէ և փառակիցս . ապա պարտ է մեզ խաչիլ ընդ նմա , և այնու հաղորդ լինել արեան նորա , և հասանել 'ի փառս նորին : Հրեշտակն որ եցոյց յովհաննու զնքս արբայութեան , յետ ասելոյ նմա * սոքա են՝ որք զան 'ի վշտաց մեծաց || . (յայտ . Է . 14 .) յաւելու ասել * և լուացին զարկանելիս իւրեանց և սպիտակացուցին արեամբ գառինն : Օ արմանք է՝ զի արեամբ ու լինի սպիտականալ , այլ կարսկանալ . և սակայն արգարքն վշտօք իբր արեամբ հաղորդակից լինելով արեանն քսի հեղոյց վասն իւրեանց՝ կարմրացան աստ . և ժառանգութեանց փառաց նաև յուսով իսկ նորին իբր կաթամբ . սպիտակացան . * եղբօրորդին իմ սպիտակ է և կարմիր || . (երգ . Է . 10 .) ընդ այս հաճելով քո՞ հաճեցաւ ևս՝ զի 'ի խացի անդ ելցէ 'ի կողէ իւրմէ արիւն և ջուր (յովհ . Ժ Ժ . 34 .)

Սորբարդն հայի 'ի զգաստութիւն արդարոց . զի որպէս * հիւանդութի ծանր զգաստացուցանէ զհոգի || . (սիրաք . ըմ . 2 .) սոյնպէս և այլ նեղութիւնք զգաստացանեն , և 'ի թմրութենէ զարթուցանեն զհոգիս , և տան զիմելառ առ անձ . * աղաղակեցին առ տէր 'ի նեղութե իւրեանց || . (սաղ . Տը . 17 . ՀԷ . 34 . ՃՂ . 13 .)

Դաւիթ մորդարե 'ի տառապիլն և 'ի հալածիլն սազման յօրինէր և նոքիմբք դոչէր առ անձ իբրեւ առ դատաւոր , իբրեւ առ տէր , և իբրեւ առ հայր . և անձկանզք սրտի ասէր . * ինձ մերձենսալ առ անձ բարի է || . (սաղ . Տը . 2 .) և ևս թէ * եկն զինի քո անձն իմ , և զիս ընկալաւ աջ քո || . (սաղ . կթ . 9 .) ըստ որում աջ անձ զործէ 'ի մեզ զայս : | տեսանել այ զհեռանալ մէր յիւրմէ՝ առնու զառաջն մէր նեղութիւք , զի գարձցուք առ նա . որպէս առնէ մայր ընդ որդի իւր . զի 'ի կամիլ որդւոյն հեռանալ 'ի նմանէ՝ նա ինքն մայրն տայ այլոց երկեցուցանել զնա՝ զի դիմեսցէ առ ինքն : Հինգերօրդն հայի 'ի զգուշութիւն , 'ի խրատ և յուսումն արդարոց : | զգուշութիւն , զի 'ի ձեռն ժամանակաւոր նեղութեց 'ի միտ առեալ նոցա զյաւիտենական՝ զգուշացին , որպէս զի մի անկանիցին 'ի նոյն : | խրատ , զի տեսեալ նոցա թէ չկը հանգիստ 'ի

կեանս յայս՝ մի յօժարեսցին կասպիլ 'ի ոսյն · այլ
տաղտկացեալ 'ի սմանէ՛ ցանկասցին ժամանել յար-
քայութիւն . * այր մի տառապեալ եմես · և ապրեցուս
ցէ զիս 'ի մարմնոյ աստի մաշու || . (հռովմ . Ե 24 :)
Ա եղութիւնքն են իբր սապո դառն , որով օծանէ ած
զրերկրութիւն աշխարհի , որպէս ասացաք այլուր : Օ ի
'ի կամիլ մեր յարիլ յայնս 'ի դառնութենէ նեղուեց՝
նահանջիցինք յայնցանէ . որպէս սպատաշէ մանկան ,
զըր կամի մայրն հատանել 'ի ստենէ : Ա յուսումն ,
զի զրեալ է թէ * գանք և կշտամբանք տան զիմաս-
տութիւն մարդոյ || . (առակ . ի թ . 15 .) որպէս տեսաւ
'ի բազում :

Ա եցերորդն հայի 'ի կրթութիւնի արդարոց · իբրզի վշտօք
մարդին նորա յառաքինութիւնս և 'ի զանազան ոգե-
նաբաստ 'իրս . որով և փորձ գտանին 'ի բացումս՝ առ 'ի
օգնական լինել փորձանաւորաց : Խակ եթէ անիլիչոտ
լինէին՝ իբր զյաւանակ անկիրթ մնային . յայս նմա-
նութիւն հայելով երեմիայ մարդարէի ասէ առ ած .
* իրատեցեր զիս տէր և խրատեցայ , և ոչ ուսայ իբրե-
զբնջուղ տրմուղ || . (երեմ . լս . 18 .) որպէս թէ ա-
սէր . ես իբրեւ յաւանակ մի եմ անկիրթ և ոչ կամիր
ուսանիլ զօրէնս քո . իսկ դու որպէս լուծ դնելով 'ի
վր իմ զնեղութիւնս՝ կրթեցեր զիս 'ի տանիլ զօրէնս
քո , և ժամանել յարբայութիւն :

Ա օթներորդն հայի 'ի փորձել զարդարս . և այս՝
կամ առ 'ի զտել . ըստ այնմ (առակ . ժէ . 3 .) * որ-
պէս փորձի 'ի բովս արծաթ և ոսկի . նոյնպէս ընտրէ
զսիրտս ած || : Հայս վերածի և այն զոր յաւելու ա-
սել այլուր . * բարձ զժանին յերկաթոյ . և ելցէ ա-
նօթ || . (առակ . ի է . 4 .) և յայտ է թէ այս լինի 'ի
ձեռն կոանահարութէ : Խամ առ 'ի սրբել իբրեւ զիւր
արժանաւորս . ըստ այնմ իմաստ . (դ . 4 .) * զի ած
փորձեաց զնոսա , և եզիտ իւր արժանիս || : Խամ առ
'ի հաստապնդել իբրեւ զպողովատիկ միսեալ 'ի ջուր .
առ որ հայի և բանն սիրաքայ՝ զոր ասէ . * զանօթ
բրտիթթէ հնոց , և զայր արդար փորձութիւն տառա-
պանաց || . (սիրաք . ի է . 6 .) Խամ առ 'ի բժշկել
զհիւանդութիւնս նոցա իբր դառն զեղով , և երեմն
առ 'ի բանալ և լուսաւորել զմիտս նոցա . որոյ յօրի-

նակ լեղեաւ բժշկեցաւ աչք տորիթայ (տոր. ժմ. 14.) և աչք կուրին ևս բացաւ թքով, (յովէ. թ. 6.) որ է օրինակ նեղութեց պատահէլոց բանիւ բերանոյ : Այս առ ՚ի ցոյց հաւատազմութեան . յոր միտս ասի՝ * փորձեաց անձ զարբահամ ॥ . և ՚ի փորձութե հաւատարիմ գտաւ . (ծնն. իթ. 1.) որպէս քաջութի զի նուորին ՚ի մարտի ցուցանի , և արհեստ նաւալարին յալէկոնութե , և հաստատութի ծառոյն ՚ի սաստկութեան հօղմոյ և մըրկի :

Ութերորդն հայի յաճումն առաքինութեց մանաւանդ սիրոյն այ և ընկերին . զի որպէս զինի և օշարակ հարեալ փրփրելով աճէ , և փրփուրն հարեալ առաւել ևս բարձրանայ , սոյնափէս և սէրն այ և այլ առաքինութիւնք նեղութք հարեալ աճեն , և առաւել ևս զօրանան :

• Խններորդն հայի ՚ի խոնարհութի արդարոց . վասն զի նեղութիւնք և վիշտք յայտնեն մեզ զսկարութիս և զթշուառութիւնս մեր և խոնարհեցուցանեն զմեզ , որոյ վասն տուաւ ՚որյն պօղոսի խայթ մարմնոյ կափիչ . ըստ որում ինըն ասէ . * և զի մի առաւելութք յայտ , նութեցն հպարտացայց տուաւ ինձ խայթ մարմնոյ , ՚ի ըրեշտակ սատան կափել զիս || . (թ. կոր. ժթ. 7.) Դարձեալ ՚ի տեսանել արդարոց պաշարեալ զինքեանս ՚ի պէսապէս նեղութիւնս խոնարհին առաջի այ . և զայն համարին ինքեանց բարի ասելով : * բարի է ինձ զի խոնարհ արարեր զիս || . (սաղ. Ճթ. 11.) Տասներորդն հայի ՚ի յօժարութիւն արդարոց , զի ինքեանք փափաքելով կրել զնեղութիս վասն այ , և վո՞ի խոնարհութե մնալոյ , անձ ևս վո՞ հաճելոյ ընդ նոսա :

Թոյլ տայ գալ բազում նեղութեց ՚ի վը նոցա :

Վետասաներորդն հայի ՚ի վճարումն պատժոյ արդարոց . իբր զի ՚ի ձեռն նեղութեց ներելի յանցանք նոցա , կամ մնացեալ պատիժք թողեալ մեղաց նոցա վճարին յաստի կեանս , և կամ թեթևանս :

Դրկոտասաներորդն հայի ՚ի շահ այլոց . իբր զի տեսալ այլոց , թէ անձ ոչ ինայէ ՚ի ծառայս իւր , այլ թոյլ տայ տառապիլ նոցա , դարձցին յինքեանս և զգաստասցին , ասելով . ապա և ոչ մեզ իննայեսցէ : Եւ դարձեալ * զի մի կարծեսցեն՝ թէ ամենեին ոչ գոյ

Հաստուցումն ըարեաց ։ որպէս ասէ ծործորեցին ('ի մեկն . մատ . դլ . եւ) իշւ և տեսեալ զհամբերութիւն ծառայիցն այ 'ի նեղութիւն՝ օրինակ համբերութիւն առ նուցուն , ըստ յորդորելոյ նը զբոց :

Հաղագս այսր ամենայնի ասէ , [թէ նեղութիւն արդարոց բազմասպատիկ են . քանզի արդարքն են անօթք ընտրեալը ըստ նախագրելոցդ . և զի անօթքն որչափ առաւել ընդունակ գտանի իմիք՝ այնչափ առաւելութք ընդունի զայն յինքն , այնպէս և արդարք ընդունակ գոյով բազում նեղութեանց , ըստ որումնա ինքն ած ընդարձակէ զբնդունակութիւն նոցա , ընդունին զբազում նեղութիւն : Այլոր թոյլ տայ գալ 'ի վերայ նոցա բազում նեղութեաց , նա ինքն պաշտպան լինի նոցա , և փրկէ զնոսա յամէ : Իշւ առ այս յարէ :

Յամ նեղութիւն նոցա իրէն զնոսա : Այսինքն 'ի վշտանալ արդարոց ու և իցէ նեղութքք , յամի ցուցանէ առ նոսա ած զբաշտպանութիւն իւր . և այնու իւրով պաշտպանութք փրկէ զնոսա բազմասպատիկ օրինակաւ . երբեմն բառնալով զնեղութիւնն . երբեմն յօգնութիւ հասանելով նոցա 'ի հանդարժեցուցանել իսպառ զալէկոծութիւն տառապանայն . որպէս արար առաքելոց 'ի տիբերական ծովուն . զի 'ի վտանգիլ նոցա 'ի խուռութենէ ծովու ցըրդրորդ ժամ զիշերոյ՝ (որ ցուցանէ զտառապիլ նոցա իսպառ) , եհաս առ նոսա և դադարեցոյ զալէկոծութիւնն . (մատ . ժկ . 32 : մարկ . շկ . 50 :) Այսինպէս առնէ և տառապելոց . միայն թէ որք տառապին՝ աղացեսցեն զնա . որպէս արարին նորին իսկ առաքեալքն . (մատ . շ . 25 :)

Երբեմն թէ թեացուցանելով զնոցն նեղութիւնն . և այս յայնժամ լինի 'յորժամ' առնէ , զի մնասցեն նեղութիւք յարդարս . բայց մի վշտացուսցեն զնոսա . ոչ եղե 'ի բազում մարտիրոս , և յերիս մանկունն . Երբեմն՝ մանաւանդ թէ բազում անդամ՝ զօրացուցանելով զկարողութիւն նոցա , զի 'համբերութք տանելով՝ ոչ այնչափ վշտացին , որչափ վշտանալ կարէին . զի զրորինակ որ ուժեղն է՝ դիւրաւ տանի զբեռն և ոչ այնչափ վշտանայ ընդ ծանրութք նորին , սոյնպէս և որ զօրանայ յայ՝ գիւրաւ տանի ու իցէ նեղութեան :

Երբեմն նելքին մանաւոր միմիթ աղութք՝ մինչև ուրա-

իսանալ նոցա՝ ի կրելն զնեղութիւնս , նաև թոյիլ ևս թէ
յաւէտ նեղութիւք զնոսա կրեն , քան թէ , նոքա զնե-
ղութիւն : Հուսկ յետոյ երջանիկ մահուամբ . որով ոչ
միայն փրկէ զնոսա ած յամ նեղութեց , այլև լիացո-
ցանէ զնոսա յաւիտենական խնդութեց ըստ հոգւոյ
(յայտ . իտ . 4 .) | Խակ թէ զի՞նչ ունիցի առնել և մար-
մաց նոցա՝ յայտ առնէ յաջօրդ բանիւն ասելով :

| Ճ- պահէ շամ ունէրս նոցա , և դ 'ի նոցանէ կ' ժշտեցի : Խա-
մի ասել . ի փրկելայ զարդարս ի ձեռն մահուան յամ
վշտաց , և 'ի հանգուցանել , և 'ի փառաւորել զհոդիս
նոցա , ոչ անխնամ թողու և զմարմինս նոցին՝ որբ եղեն
բնակարան այնպիսի հոգւոց և չարչարակից , այլ խնամ
ունի 'ի վերայ նոցա , և պահէ զնոսա , զի մի կորիցեն .
այլ մնացեն և պատուեսցին , յարգեսցին և փառա-
ւորեսցին : | Ճ- յետ ժամանակայ՝ ի լրանալ թուոյ
արդարոց , և 'ի հասանել աւուրն յետնում՝ ժողո-
վեսցէ զնոսա . և միացուցեալ ընդ հոգւոց նոցին՝ կեն-
գանացուացէ զնոսա , և փառօք լիացուսցէ . և յայն-
ժամ լրումն լիցի ամ ուրախութեան նոցա և փառաց
նոցին :

| Ա- լ քննելի է այն՝ զի ոչ ասէ , մի կորիցէ , կամ մի
ունայնացի , այլ թէ կ' ժշտեցի . զորմէ զիտելի է .
զի փշրին կարէ լինել պատճառ դիւրաւ ցրուելոյ և
կորնչելոյ . և զի սովորութիւն է սազմաներգուին փոխա-
նակ դնելոյ զանուն եղելոյն՝ զնել զանուն պատճառի
նորին , ըստ այսմ ոճոց վարելով փոխանակ ասելոյ մի
կորիցէ և կամ մի ունայնացի , ասէ , մի փշրեսցի . որ
է ասել . մի լիցի՝ զի կորիցէ : Հայս հայեցեալ ունանց՝
կամելով պարզել զմիսս բանին՝ եղին , մի կորիցէ .
որպէս զնի 'ի ժամագիրս մեր :

| Խակ թէ արգեօք իրօք լիցի փշրեալ ուկերք արդա-
րոց կամ թէ չփշրիցեն մինչեւ յօր յարութե , այս սա-
կաւուց պատահի . և այն՝ ըստ մեզ խօսելով դիպուած
ինն է . ապա թէ ոչ՝ զբարդ փշրեցան ուկերք առաքե-
լոց , և մարդարեից , հայրապետաց և մարտիրոսաց ,
ձկնաւորաց և կուսանաց ևն . զորոց զնշնարս պատուէ
ընդ հանուր եկեղեցի ընդ ամենայն տեղիս :

| Պատանին և մասունք ինչ սրբոց՝ որբ մնացին անսապա-
կան 'ի ցոյց մասնաւոր գործոց նոցա : | Վասիկ ձեռք

որյն ստեփաննոսի թագաւորին մանառաց կայ անաւսկան վասն բասն բաշխելոյ նովաւ զողոքմութիւն : | Եղու որյն անտանի պատուացոյ անապական տեսանի վասն քարոզութեց նորա : | Ճաք որյն լուսովիկոսի եպիսկոպո սին թողվայ մնացին անապական վասն ոչ հայելոյ նորա 'ի կին մարդ : | Կալուխ կատարինեայ սենացոյ վայլեցաւ զինի մահուան , և կայ անապական վասն փշով ստակեալ լինելոյ , սոյնարէս և այլոց բազմաց զանազան մասունք . զի ած վաստորի ՚ի ծառայս իւր , ոչ միայն ՚ի խորհուրդս նոցա . (որպէս դնի ՚ի սաղ . ձը . 8 .) այլէ յուկերս և յայլ նշխարս նոցին : | Աստանօր մարթ է զրադ գլուխ առնութ նաև ըստ յատուկ նշանակութեան , և մեկնել փոխաթերութիւն . յոր միտ ոսկերօր խմացեալ լինին ներքին զօրութիւք արդարոց . կամ անաստան խորհուրդը նոցա , որպէս ցուցեալ է մեր այլուր : | Եւ ըստ այսամ ՚ի դնելն * ու հետապնդութերս նոցա . և դի ՚ի նոշանէ դի գլուխութիւն և զառաքինութիւն արդարոց առ ՚ի համբերել նեղութեց . և ոչ մի յայնց զօրութեց նոցա փշրեսցի ՚ի նեղութեց անտի . որ է ասել , զօրացուցանէ զնոսս ած , զի մի տիարացին ՚ի նեղութեանց , այլ բաջացեալք և արիացեալք համբերեսցեն սակաւ մի ժամանակ . եկեսցէ ապաօր , զի ած նեղութիւն նոցա դարձցին յուրախութիւն անպառում : Հայնժամ տեսցեն և զարմացին , իրն դասցեն և ծանիցեն թէ քանի բարի եղև ինքեանց կալն ՚ի նեղութիւն բազում :

Կերհակն այսր պատահէսցի այնոցիկ՝ որք ոչ ակնունելով վարձուցն համբերութեան , կամ ոչ յուսապով թէ կայցէ հատուցումն բարի մոլորեցան և զեղիսեցան զիշետ չարեաց . և կամեցան անցուցանել զկեանս իւրեանց ՚ի փափկութս և ՚ի հեշտութս . զի վախճան այսպիսեաց եղիցի դառն և չար , առ որս ակնարկելով մարդարէին յարէ զինի , և ասէ :

Ե . Ո՞ւ հեղա-որին չար է . բայց որ սուե շարդարն՝ պաշտոց :

Վահն ըստ ինքեան առեալ կարէ ասիլ չար , կամ բնականապէս , և կամ բարոյապէս . բնականապէս

ասի չար ըստ երկուց . մի՝ զի եղծումն է բնութեն և կենաց : Երկրորդ՝ զի զրկումն է 'ի վայելմանէ ու և իցէ մարմնաւոր բարեաց : Բարցապէս ասի չար ևս ըստ երկուց . մի՝ իբր պատճառաբար ըստ շիմանալց մեր թէ մեզ ևս կայ մեռանիլ . իսկ այս շիմացումնս մահու լինի պատճառ չարի՝ կամ թէ ածէ զմեզ 'ի չարիս . յայս միտս 'ի մէջ բերեալ նարեկայուցն զբան կիւրինի , ասէ ('ի բանն . ծէ .) * իմաստակի ու մերմն արտաքնոյ (որ է կիւրին) բարւոք թուեցաւ չար ասել զիահ առ շիմանալցն պատճառի , և ես վը . կայեմ իմովս բանիւ || . զի մեռանիմք և ոչ իմանամք : Երկրորդ ըստ մատնելոյ յամենամեծ չարիս , և այս յատուկ է մեղաւորաց . և ահա յայս հայելով ասէ :

Ո՞ւ՞ եղաւորին չար է : Ո՞եղաւորաւ իմացեալ լինի աստ նախ ու և իցէ մարդ՝ որ 'ի մեզս գոյով առանց թողութիւն գտանելոյ մեռանի ոչ հասանելով յարաշ խարութիւն թէ կամէր զայն : Երկրորդ՝ իմացեալ լինի այնպիսի մարդ որ զիեանս իւր մեզօք անցուցեալ ոչ կամի զգաստանալ ոչ խրատովք և ոչ պատժովք : Երրորդ՝ իմացեալ լինի այնպիսի մարդ՝ որ սուտ համարելով թէ կայցէ ինչ վարձք համբերութեան 'ի հանդերձեան , կամ պատիժ վասն մեղաց՝ զշետ լինի հաճոյից իւրոց . եղեալ 'ի մտի՝ թէ 'ի մեռանին վերջացի ամ , եթէ հանդիստ իցէ , և եթէ նեղութիւն . (զորմէ տես 'ի զիրս իմաստութեան . թ . 4 - 10 :) Վըդ եթէ մեղաւորաւ իմացեալ լիցի նա՛ որ 'ի մեզս մեռանի , սովին ցուցանի , թէ որպէս մահ արդարոց բարի է , զի նմա լինի վերջ ամ բերկրութեանց , և սկիզբն ամ թշուառութեանց . որպէս տեսանի այս 'ի մահուան խորտկաձաշ մեծատան , և տառապելոյն զազարու , Ուստի ասէ վանական վարդապէտ ('ի մեկն . յոթ . գլ . թ .) * մահ՝ որ մարդոց հանդիստ է՝ յոյժ չար է ամ բարշտաց . զի սկիզբն է անտի տանջանաց : Իսկ եթէ մեղաւորաւ իմացեալ լիցի յամառեալն 'ի մեզս , սովին ցուցանի՝ թէ յոյժ գառն լինելոց է նմա ժամ մահուան , մի՝ զի 'ի հապանել այնր ժամու՝ մինչեւ

բաժանեալ իցէ հովին՝ ի մարմնոյ՝ տիրէ նմա զառ-
նութիւն սրտի վ՛ու մեղօք անցուցանելոց զկեանս իւր :
Երկրորդ՝ զի ասգնապի յառաջիկայ չարէ , և խեղդի
ևս՝ ի տատամսութենէ՝ թէ զինչ պատահելոց իցէ
ինքեան : Երրորդ՝ զի ցաւագին լինի նմա մեկնիլ՝ ի
կենաց . որովհէտեւ՝ ի նոյն եղեալ ուներ զբերկրո-
թիւն իւր , և միացեալ էր ընդ անցաւորացս , անհնա-
րին ցաւօք ունի մեկնիլ անտի : Չորրորդ՝ զի շունի
իւրի միսիթարիլ գոնէ սուտ միսիթարութք՝ ի ժամուն
յայնմիկ , որ է նմա վերջին . քանզի տեսանէ թէ ոչ
ևս ունի ժամանակ՝ ոչ՝ ի յանցաւոր բարիս վայելելոց ,
և ոչ՝ ի վերայ չարեաց իւրոց զղանալոյ : Հինգերորդ՝
զի գիտէ՝ թէ ընդ մեռանիլն՝ ունի յափշտակիլ՝ ի գի-
ւաց , և զրկեալ մնալ յարարչէ իւրմէ , և յընկերուէ
հրեշտակաց և որք : Ու եցերորդ՝ զի առաջի կայ նմա
յայնպիսի վիճակ մնանիլ , ուր ոչ ևս է նմա հնար
առնել ինչ առ՝ ի ազատիլ , կամ առ՝ ի հաշտիլ ընդ
ոյ , այլ կալ և մնալ թշուառացեալ յաւիտեանս
յաւիտենից :

Վայսկիսի մեղաւորի կեան ևս է չար , բայց քանզի
ցողչափ կենդանի է՝ գոյ յոյս դարձի , արձակապէս
ոչ ասի չար . իսկ՝ ի մեռանիլն որովհէտեւ հատանի
յոյս նորա , մեռանիլնորա և մահ նորին արձակապէս
ասի չար : Եւ թէպէտ մաղթի վասն նորա բարի , և
հանգիստ և խաղաղութի յաւիտենական , սակայն պա-
տասխանեալ ևս լինի թէ * եթէ եկաց՝ ի բարի կեանս
և՝ ի խաղաղուէ խղճի մտաց . ապա թէ ոչ՝ ոչ տեսցէ՝
զօր կարէր . զի * ոչ գոյ խաղաղութիւն ամպարշտաց :
Օ այսցանէ գեղեցիկ խօսի լուսաւորին մեր՝ ի յաճա-
խապատօւմ գիրս . (Ճառ . ժք . տես անդ . երես .

159 . և 160 :)

Վայլ եթէ մեղաւորաւ իմացեալ լիցի նա՝ որ շունի
յոյս հանգերձեալ կենաց , այս բան ցուցանէ զմե-
ծութիւն յետին ցաւոց այնպիսւոյն . զի՝ ի մեռանիլնո-
րա՝ տեսուալ՝ թէ խարեցաւ , և զկեանս արդարոց
խոտան համարելու զշեա եղեւ ամբարշտութէ , պա-
շարեսցի՝ ի զղումն անհնարին և՝ ի յուսահատութիւն
յետին . և զայս ևս կամելով յայտ առնել մարգա-
րէին՝ յարէ զինի և ասէ :

Բայց որ առէ զարդարն զշշացի : Այս ատելութիւնը որով
առէ ոք զարդարն պէսպէս օրինակաւ լինի . մի՛ ար-
համարչէլուլ , կամ գժաղչի համարելով զբարեկեցու-
թիւն նոցին , և ոչ կամ լով զնալ ըստ գնացից նոցա :
Երկրորդ՝ բանիւք , այսինքն պախարակելով զգործո-
նոցա , և ծաղը առնելով զնոսա : Երրորդ՝ չերկնե-
լով չարիս հասուցաննել նոցա՝ զրկութեամբ կամ յա-
փըստակութիւն , ևս և տառապեցուցաննելով կամ չար-
չարելով զնորա : Վրդ որք միով իւիք յասացելոցա ա-
տելութիւն ցուցանեն ասէ առ արդարս , ունին յետոյ
զղջանալ յոյժ :

Եւ զայրմանէ երկար խօսի իմաստունն 'ի զիրս իմաս-
տութեան . զի նախ ('ի գլ. բ . 12 .) խօսելով 'ի բերա-
նոց ամբարշտաց՝ ասէ * զարմանակալ լիցուք արդարոյն
,, զի գժաղչի եղե մեզ , և հակառակ կայ գործոց մե-
րոց , և նախստինո դնէ մեզ զյանցանա օրինացն , և
,, բամբասէ զմեզ մեզօք մանկութեն մերոյ , խոստանայ
,, ունիլ զի խոռութիւնը , և որդի ոյց զանձն իւր անուա-
նէ , և եղե յանդիմանութիւն մասաց մերոց . ծանր է
,, մեզ և առաննել զնա . զի աննմանն են այլոց կեամկը
նորա , և այլազգի շաւիթք . 'ի զարշութիւն համարե-
ցաք նման , և խորշի 'ի ճանապարհաց մերոց՝ որպէս
,, 'ի պղծութեց . երանէ զվախճան արդարոց , և հապա-
տացեալ կոչէ հայր զանծ : Տեսցնեք եթէ ճշմարիտ
իցեն բանք նորա , և փորձեսցուք զվախճան նորա || :

Եւ ասա ('ի գլ. Ե . 1 .) յառաջ բերեալ զհանդեր-
ձեալ փառաւորութիւն արդարոց՝ սկսանի նկարագրել
զարարապարտ զղջումն ամբարշտաց ասելով . * Հայն-
ժամ՝ արդարն կացցէ բազում համարձակութիւն հան-
գէպ նեղաց իւրոց , և որոց անդունէն զվաստակու-
նորա . տեսեալ զնա՝ խռովեսցին անհնարին երկիւ-
գիւ , և զարհութեսցին 'ի վերայ պանչելի փրկութե-
նորա : Եւ զղջացին 'ի միտս իւրեանց . և առ նե-
զութեն անձանց յոդոց հանիցեն , և ասացեն . այս
այն այր է՝ զոր երբեմն մեք ծաղը առնէաք , և յա-
ռակս նախստանաց , մեք անմիտք զվարս դորս մոլո-
րութիւն համարեաք , և զվախճան դորս անարգուի ,
զեարդ համարեցաւ լնդ որդիս այց , և լնդ որս վի-
ճակ զորա || :

Վարաւարիք ասէ մարդարէն՝ թէ որ առ՝ զարդարսն՝ զղջացի, մանաւանդ՝ ի տեսանելն անդ ըզփրկութի նոցա : Եշ զի այս փրկութի նոցին մեծ իմն է՝ կամելով հաստատել զայն՝ սովորն կնքէ զբան իւր ՚ի վերջ սաղմոսիս, և առէ :

Ի՞ն . **Պ**րէէ որ շանչին ծառայիշ էւրոյ . մէ ոչ շանցին սէն նէտէտն՝ ոչ յուսացելեն ՚ի նու :

Կառայք այ կողին նոքա, որք ակնունելով առնուլ յայ զվարձմ՝ զնա միայն պաշտեն, զպատուիրանո նորա սրահէն, զճանցս նորա կատարեն, և յամի զգուշանան՝ զի մի ինչ զսրծեսցեն ընդգեմ նր . ոչ խընդրէն զինքեանս և ոչ զիւրեանցն այլ զած, և զայն :

Վացի * ակնունելով վարձուց . զի թէպէտ նոքա սկզբնաբար վամն վարձուց ոչ սրաշտեն զած, բայց քանզի ծառայութիւնն հայի ՚ի վարձ, այնոմ ևս ակնունելով կատարեն զիւրեանց ծառայութի . և զի զրւխաւոր վարձք ծառայութեն նոցա է փրկութի անձանց նոցին, վամն որոյ առէ :

Փրէէ որ շանչին ծառայիշ էւրոյ : Այս փրկութի երեխ թէ ոչ հայի ՚ի ժամանակաւորս, այլ ՚ի յաւիտենականն . յոր միտ բառդ անչ՝ զնի աստ փոխանակ հնգւոյ, որպէս զնի յերբայականն, և յայլ թարգմանութիւնս . որով և միտ բանին լինի այս, որք միանդ ամ հաւատարմութք ծառայեն այ՝ անձ ժամանեցուցանէ զնուաս ՚ի փրկութին յաւիտենական, և հասուցանէ նոցա փոխանակ ծառայութեն նոցին զիւրաս արբայութե :

Օ այս ասէ մարդարէն ընդգեմ այնը՝ զոր եղ ՚ի նախընթաց համարն, թէ մահ մեղաւորին չար է . որով չետեւ կողնելոց են յաւիտեան . որում չետեւեցուցանէ զներհականն ասելով, մահ արդարաց ոչ է այս պէս, այլ բարի . զի փրկեսցին զիրկութիւն յաւիտենական, և երանասցին յաւիտեան . որով և մահ նոցա լիցի կեանք վամն նոցա : Ուստի և իրաւամբք ասաց՝ որ ասացն . * մեռցի անձն իմ բնդ անձինս ար զ գարոցն . (թուոց . իգ . 10 .) Վանցի ՚ի մեռանիւնոցա՝ յաջորդէ կեանք, և ժառանգութի այնը՝ որում ծառայեցին, և ուրախութիւն անձառ՝ յոր յուսացան :

Օսցն զայս այլով իմն բանիւ ևս յայտ առնէ մար-

Պարեն առելով :
Այս պատճենին ամենեւէ առ ոյս յուսացեալ էն՝ ի նա : Այս
բան հայի ՚ի նախայիշատակեալ ծառայս այ , և առ
հասարակ յայնոտիկ յամենեսեան՝ որք կենդանի յու-
սով յած ապաւինսով՝ համբերութեա տանին ամենե-
զութեց , և զգուշանան ՚ի պահպանութի պատուիրա-
նացն այ , և կեսն արդարութե : Այսպիսիքս ասե՛ մի
զղջացին . մի յաստի կեսնս՝ զի գտցեն զօդնութիւն
յայ , և մի յետ աստի կենաց , զի գտցեն զյաւիտե-
նական փրկութիւն , եթէ հոգւով ՚ի մեռանին , և
եթէ միանդամայն հոգւով և մարմնով ՚ի յառնելն ,
՚ի լսել նոցա զձայնն զայն , եկայը օրհնեալք հօր
ինոյ են :

Այսացի՝ * կենդանի յուսով . զի որպես հաւատք մե-
ռեալ ոյինչ օգտէ առ փրկութի , սոյնպէս և յոյս մե-
ռեալ ոյինչ նպաստէ , այլ պահանջի յոյս կենդանի՝
բատ ասելոյ առաքելոյն . (ա . պէտ . ամ . 3 .) թէ յոյսն
կենդանի՝ լինի առաջնորդ * յանեղծ , յանարատ , և
յանթառամ ժառանգութին , որ պահեալ է յերկինս :
Այսպիսի յոյս ՚ի մնան կենդանի՝ յերից մնանի . մի
՚ի մաքրութէ խղձի մտաց , և տայ համարձակութի առ
ած . ըստ այնմ . (ա . յովլ . դկ . 21 .) * եթէ սիրտք
,, մեր զմեզ ոչ ստգտանիցեն՝ համարձակութիւն ունիմք
առ ած : Աշրկըորդ՝ ՚ի կատարմանէ պատուիրանաց ,
կամ յուղըութենէ գործոց բարեաց կամ յաշխատելոյ
և ՚ի ձկնելոյ ՚ի փառս տոն . որ և տայ համարձակութի
՚ի հաւատս . ըստ այնմ . (ա . տիմ . դկ . 13 .) * զի որք բար-
,, ւոր պաշտիցեն՝ զաստիճան բարի անձանց իւրեանց
,, շահին , և զբաղում համարձակութին՝ ՚ի հաւատսն՝ որ
,, ՚ի քո յն : Աշրկըորդ՝ ՚ի համբերութենէ . ըստ այնմ .
(հռովմ . ե . 3 .) * Վանզի զիտեմք՝ եթէ նեղութիք
,, զհամբերութի գործեն , համբերուի զհանդէս . հան-
,, գէս զյոյս . յոյս ոչ երբէք ամաւեցուցանէ :
Այսպիսի յուսով յուսացելոց ընծայի տիրապէս այս
բան . * մի զղջացին ամենեքեան՝ ոյք յուսացեալ էն
,, ՚ի նա : զի այսպիսիքս ըստ յուսոյ իւրեանց ժամա-
ռեալ՝ ՚ի յուսացեան բերկեսցին՝ ՚ի նա , և ցնծառ-
ցեն նովաւ յաւիտէանս յաւիտէնից :

26 26 26 26 26 26 26 26 26 26

ՍԱԳԱՄԱՍ. ԵՒ.

Պաղատանք առ ած 'ի բերանոյ առն արդարոյ, ևս և
'ի բերանոյ քնի վասն հալածցաց, 'ի խնդրել այ ըզ-
վրէժ 'ի նոցանեւ :

1 Հարաբած . ապշման է դաւիլ :

1 **Ա**ստիւմ ապշ հայութանին ոյց դարին զնու . մարդու ըշնու
սին, որ մարդուն չեն չեն : 2 **Ա**ս զնեն և զաւապար
քո, և արէ քաջնել ինչ . հան շատոր ու շնորհէ հալսծ լաց ինչ,
արգիւլ պատու . և ասա դու շատուն իմ, և է գրիւն ին աս էմ :
3 **Ա**մակարդակն և ամօն լուցն 'ոյց խնդրէն զանցն էմ . դարձուն
ցեսս և ամակարդակն, որ խորհեն ինչ չար : 4 **Ա**շեցն նորս դր-
պէս քոշի առաջի համար . և հրեշտակ ուն նեշնաց զնու : 5 **Ա**
շեցն ճամանակարհ նոցս 'է խաւար և 'է գայթագուռնեւն, և
հրեշտակ ոյ հալսծեցէ զնուս : 6 **Ա**նանիր թափուցին ինչ ա-
րուժայն շաղականուն է բրէտու, և 'է նանիր նախատեցին զանցն
իմ : 7 **Ա**սացէ 'է վերայ նոցս որուժայն, զոր և գերացին . և
զոր, զոր նախացին, առցէ զոր նոցս . և յորդուր 'է նոյն ան-
ցին : 8 **Ա**լանցն էմ շնծացէ 'է քո . առասկ ելցին 'է քրիւնեւն
նորս, և ամ սոհերս էմ ասացին . զոր անման է քեզ : 9 **Օ** է
քրիւն շաղական 'է քեւաց հրաք, շաղական և զանանին այն-
շանէ 'որ յարդշատին զնու : 10 **Ա**յարետն 'է վերայ էմ վերայ չո-
քեաց . զոր ինչ աշ գիրէն 'է հարցանէն զիս : 11 **Ա**սարացին ինչ
շոր գունունուն չնդ բարու . անգամանգուն լանցն էմ խորհեցան
յորդուց 'է մարդի անէ : 12 **Ա**յս 'է նեշնաց ժարու զգենունէ .
խաւարհ անէն զանցն իմ . և աղօնէ էմ 'է ծոց էմ դարչ-
ցին : 13 **Ա**րուն շնչղբայր և շնչնիր 'այսպէս համար լինէն . զ-
պէս սուսոր և արդում, այնդեմ խաւարհ անէն : 14 **Ա** վ-
րու էմ սուսուն եղն 'և ժաղանչան . ժաղանչան յիս տանշան,
և էս աշ ծանեայ, ցըս-եցան, և մէ զնացան : 15 **Փ**արյէցին
զիս 'և արհամարհէն արհամարհէնուս . իրմարդն 'է վերայ էմ
զանանուն էրեւանց . զոր էրբ տեսցէն : 16 **Ա**բաց արս զանցն
իմ 'է խորամանէն անընդունաց . և յահիւ-ծառց զիտամօրունիւն իմ :
17 **Ա**սարաման եղեց սէշ պէր 'եթէն շնչին մէծ . և 'է ժաղանչ բար-

Տաց օր հնեցիւ շաբախ : 18 [Ա] սորտիս եղեցին յիւ թշնամիս իմ ,
ոյս սորտին շնո՞ւ ի սորտապարունակ . ո՞նաւորին սո՞ւնէին յիւ աջտ
իւրեանց : 19 Բնդ էս զլեշշաղուն կառուէին . և ինքնանիք բար-
իւրենիք զլենուունէ կառուէին . 20 Խացին ի վլըսոյ ի շաբախնա-
իւրեանց , և սուսցին՝ այս այս ուեսին աչ մէր : 21 Տեսեր պէր
և կ շեր . պի՞ բացեայ սո՞ւնէր յինեն : 22 Օ արթիւ և
նայեաց պէր շիբառուննու իմ . ած իմ և պոր իմ ի գուստավան իմ .
և իբաւ արտ ինչ ըստ արդարութեամ ածմ պոր ած իմ : 23 [Ա]
սորտիս եղեցին յիւ թշնամիս իմ . և կ սոսոցին ի սիրու իւր-
եանց , թէ վաշ վաշ անձանց մէրոյ . զի ընկաշան շնա : 24 Բ
մալուցին և յամօն լուցին՝ ոյս ևնդային ընդ լոր իմ . զգեցին
շնամօն և զանաբիանս՝ ոյս մէծաբանէին ի վլըսոյ իմ : 25 Հըն
ծառոցին և սորտիս լուցին՝ ի պէս ամենուքան , ոյս իսպին ընդ ար-
դարութիւն : 26 Ա սոսցին յամ գամ , մէծ և ած . և ոյս իսպին
զլեշշաղուննէ ծառայի այս : 27 Ի էլլու իմ կառուէտ շաբախու-
թիս տու - զօրհանապաշու զլուշութիս տու :

Ա Ե Բ Գ Ե Վ Տ Բ

Ի սորտարած . սաղմունի դասին :

ՍՊԱԳԻՐԵԱԼ ՍԵՎ ՄՈՍՍ ԷՒԶ

մեր այս վերնագիր դնի առանց կառութեած
բասի այսպէս * սաղմու դասին || . կամ * սաղ-
մու 'ի դասին || . իսկ 'ի ձեռապիրս առ հասա-
րակ զրի ըստ եղելոյդ * 'ի սորտարած , սաղմու 'ի դասին || :
Յերբայականն դնի միայն բառդ 'ի դասին . սոյնպէս
և 'ի քաղզէականն սոսկ դասին : Հերօթանասնիցն դնի
* յինդն 'ի դասին || . նոյնպէս և 'ի լատինացւոցն * ին-
եան դասին || : Իսկ յարաբացւոցն և յասորւոցն աղլե-
այլ բանք դնին . որպէս և յայլ վերնագիրս նոցա՝ յա-
ւելեալ յայլոց : Հայսմ ամի մկայ ինչ քննելի . իսկ
վասն բասիդ 'ի սորտարած . (տես 'ի ներած . զլ . թ :)
Այլթէ երբ յօրինեալ իցէ զաւթի զայս սաղմոս ,
պէսպէս կարծիք են . ոմանք ասեն , թէ զայս իցէ ա-
սացեալ հայելով 'ի հալածանս սաւուզայ . ոմանք
թէ հայելով 'ի հալածանս արեսաղոմայ . ոմանք թէ

Հայելով՝ ի գործո և և իցէ թշնամեւաց և հայածչաց իւրօց, ընդ որս իմացեալ լինին և սաւուղ և արեւ սաղոմ, և միաբանեալքն ընդ նտաս : Վ.յա յետին կարծիք երեւի հաւանական, և բանից սաղմնսիս համաձայն :

Կան ևս որք ասեն, թէ այս սաղմնս իցէ եզէկեայ արքայի, հայելով՝ ի սպառնալիս ասորեստանեայց, (դ. թագ. ժը. 17 - 37, և ժԾ. 1 - 37.) Ոմանք՝ թէ իցէ երեւմիսայ ընդդէմ խնդրողաց անձին իւրոյ . (երեմ. ին. 3 - 11, և լդ. 17 - 21.) Ոմանք՝ թէ իցէ հոգեկիր առն ուրումն երայեցոյ գերելոյ ՚ի բարելմն ընդդէմ գերշայն . ըստ ՖԾ. սաղմնսի : Վ.յլ այսոքիկ յետին երեքին կարծիք չունին ինչ տեղի :

Հյայս սաղմնս խատագոյնս խօսի մարգարէն ընդդէմ թշնամեւաց իւրօց . և խնդրէ յայ չարաչար պատուհաւ կողուսանել ընոսա : Վ.յլ գիտելի է՝ զի որպէս ասացաք ՚ի ներածութէ . (գլ. ը.) խստութիք այնոցիկ վրէժինդրական բանից հային յայն՝ զորմէ է բանն . և ոչ յայն՝ յորմէ է բանն . այսինքն թէ հային յիրն՝ որ լինելոց է . և ոչ յանձն դաւթի, որ խօսի . զի այս ոչ վայելը դաւթի . մանաւանդ թէ յանցանք եր նմա : (Ընդ զայն, զի եթէ դաւիթ յիրաւի կամէր վրէժինդիք լինել թշնամեւաց իւրօց, մանաւանդ արեւաղոմայ և սաւուղայ, զիարդ պատուիրեաց զօրաց իւրօց * ինայեւաջիք ՚ի պատանեակն իմ արեւսաղոմ :) . (ը. թագ. ժը. 5.) և զիարդ ՚ի լեւզմահ նորա ելաց դաւնապէս . (ը. թագ. ժը. 33.) Օ իարդ և ՚ի լսել զմահ սաւուղայ՝ ցաւագին բանիւ ողբաց ՚ի վերայ նորա . (ը. թագ. ան. 11 - 24.) Եւ ոչ այսւափ միայն, այլև բարիս արար յարս արիսայ գալատղացոյ վասն թաղելոյ նոցա զմարմինն սաւուղայ . (ը. թագ. ը. 5, և իդ. 7 - 13.) Եւ զի երկիցս կարէր առնուլ դաւիթ զվրէժ ՚ի սաւուղայ, և ոչինչ արար նմա, և զայլս ևս արգել չառնել ինչ չար . որպէս յայտ է . (ան. թագ. իդ. 5. և իդ. 7 - 13.) Օ ի ինքն գոլով կամեցող բարուց ոչ կամէր չարի չար հատուցանել . յոր և վստահացեալ ասէր * թէ հատուցի այնոցիկ, ոյք ՚ի հատուցին ինձ չար, անկայց և ես ՚ի թշնամեւաց իմոց ընդունայն : Հալածեսցէ ապա թշնամին զանձն

„իմ, հասցե և կոխեսյէ յերկիք զկեանս իմ || (սաղ .
է . 4 և 5 :) Ա քդ որովհետեւ այսպիսի էր այրն ըստ սրբ-
տին այ դաւիթ , չէ մարթ ասել , թէ ատելութիւն բե-
րիցի բնագիւմ թշնամեաց իւրոց . և ըստ այնմ ատե-
լութէ յօժարիցի խնդրել զի * հասցէ ՚ի վերայ հոգա որ-
ուալու || , ևն :

Ուրեմն զոր միանգամ խօսի ապա զաւեհթ ընդդեմ
թշնամեաց խրոց ո ոչ յատելութէ, և ոչ ՚ի վրեժինդ
ըռութէ հօգույո, այլ՝ ի բարութէ սրտի խօսի. վասն զի
այն բանք կրկնակի կարեն առեւալ լինել այսինքն
իբր պատմականք և իբր աղաքականք, եթէ առցին
իբր պատմականք, յայտարարութիւնք են լինելի ի-
րաց. իբր թէ այսպէս և այնպէս լինելոց է այնոցիկ՝
որք դրծեն զարիս. և որք տարապարտուց հալածեն
զարդարն, և այս յայտարարութիւն է իբր խրատ առ նոն.
Խակ եթէ առցին իբր աղաքանք կամ իբր խնդրուածք,
հային ՚ի բազմապատիկ օգուտս : Կախ յայն՝ զի ըզ-
գաստացին, և կասեսցին ՚ի չարեաց : Երկրորդ յայն՝
զի մի ՚ի հանդերձեան պատժեսցին, կամ մի այն
չափ պատժեսցին, որչափ պատժելոց էին՝ եթէ աստ
անպատիք մնային : Երրորդ յայն՝ զի այլք զգուշա-
ցին ՚ի գործելոց զար : Նոյնպէս և արդարք զերծ
մնացեն ՚ի գայթակղեցուցիչ զործոց նոցա : Ըօր-
բորդ յայն՝ զի արդարութինն այ փառաւորեսցի : և ու :
Վյոթիկ ասացան հայելով յանձն դաւթի, ըստ ո-
րում այս բանք ասին ՚ի բերանոյ նորա, կամ ՚ի բե-
րանոյ ու և իցէ արդարոյ : Խակ ըստ որում ասին ՚ի բե-
րանոյն քնի՝ պարտ է ասել, թէ այս բանք են տիրա-
անկք, և են իբր գաստակնիք, որք յայտ առնեն զար-
տիք չարեայն՝ զօրս զործեցին ընդդեմ նորա թըլը-
նամիք նորին, մանաւանդ տիրասպան հրեայք և հե-
թանոսք : Օ այսուիկ ծանուցեալ մատիցուք ՚ի մեկ-
նութիւն բանիցն :

Ա բանական պրոց մասին . առաջ քայլ յի մասին վեց
միջադիմության մէջ , անընդհանուր քայլ մասին
ստուգային հայտնաբերություններ չ են պահանջվում . 0000 առ մասս մէջ

9. **Ա**նառեւ ո՞ր զայնուի՞ ո՞յս դառին չիս . Տարբեր ընդունուի , ո՞ր Տարբեր ընդունուի :

W E B S I T E S

Պատել և զատ առնել թէպէտե զնյն նշանակեն,
բայց ունին և զառանձին առումն . (զօրմէ տես 'ի
սաղ . ին . 1 :) Ի՞րդ զաւիթ տառապէալ 'ի ձեռաց
հալածաց իւրոց , ապաւինի յարդարուին այ , և ինդ
րէ 'ի նմանե՛ զի պաշտպանեսցէ զինքն 'ի ձեռաց նո-
ցա . և լիցի վրէ ժիմնդիր գործոց նոյնին , ոչ այնափ
դատ առնելով ինքեան՝ որչափ գատելով զնոսա . վասն

Պատեման պը կայնեսէի ոչ ու արդին զիս : Այսինքն է՝ դու
որ սելք ես ամի և դատաւոր արդար , արա դատաստան
ընդ իս և ընդ թշնամիս իմ : և արդարութե՛ք քով նուա-
ծեա զնոսա , որք առանց արդարուե՛ք դատաստան անի-
րաւ առնելով ի վերայ իմ՝ նուաձել կամին զիս . և
կամ ժեկ ասէք . խնդիրս իմ ու է այս , զի առանց ի-
րաւանց դատելով զնոսա՝ պատժեսցես զնոսին , այլ
զի նախ դատեսցես զնոսա արդարութե՛ք , և յայտնի տե-
սեալ զանիրաւութին նոցա՝ ըստ անիրաւուե՛ք նոցին պա-
տուհասեացես և նուաձեսցես զնոսա : Իւ զի թշնա-
միք իւր ոչ բանիւ ևեժ դատէին զնա , այլ և գործով
կորւէին ընդ նմա , վասն որոյ արդաշէ զած , զի ոչ մի-
այն դատեսցէ , այն վանեսցէ զնոսա . Ամին երի յա-

Արքունիք ըստ այսուհի , ո՞ր ճարդուչին ըստ էս : Ես մարտնչ ցիլ այս է պաշտպանութեան նորա 'ի հալածնան 'ի վա նելն զթշնամիս . վասն զոյ և 'ի գնելն ճարդի կամի ասել . պաշտպանեա զիս 'ի ձեռաց թշնամեաց իմոյ որբ յարուցեալ են 'ի վերայ իմ , և 'ի բաց վասնեա ըզ նոսա ինեն :

የጊዜ ደንብና እኔ የሚያደርግበትና ስልጣን በመረጃው እና የሚያስፈልግ ይችላል፡፡

րեմբ մարտնչիլ ընդ նոսա . իշխան նոցա ուստանայ և նորին իսկ յորմէ հետեւ եղեալ են , 'ի պատերազմի են զամ իբր 6000 . արդ որ 'ի բազում ժամանակս պատերազմի վարժ լինի և հնարագէտ 'ի մարտնչիլ . մանաւանդ եթէ ուժեղ ևս իցէ . և զիարդ կարից մեք ինքնազբաւ մարտ դնել ընդ նոսա , որք եմբ անվարժք և տկարդ . ապա պարտիմք խոնարհութք դիմել առ առծ , զի նա մարտիցէ փոխանակ մեր , և պաշտպանեսցէ զմեզ . իսկ թէ որով յայտ առնել մարդարեն ասելով :

Է. **Ա**'ո զնէն և զասպար ու . և որէ յօդնելինչ . հանունուոր ու ընտէմ հալածաց էնց , որ գէլ զնուու . և առ ուս շառ շանչն իմ , իւ քրիստին ու են էմ :

Ա պատերազմի ընդդէմ թշնամոյ՝ կրկին զէն պահանջի . մի՛ որով պաշտպանեալ լինի անձն . և մի ևս որով վանի թշնամին . Օ էնն որով պաշտպանի անձնէ բազմապատիկ . որպէս վերտ , զրահ , սոնապան , սաղաւարտ , վահան , ևն . Ոյնպէս և զէնն՝ որով վանի թշնամին՝ բազմապատիկ , որպէս սուր , նիզակ , նետ , ևն , իւ զի ամենեքին սոքա հասարակ անուանի զէն կոչին , վասն որոյ և մարդարէն նախ ընդհանրապէս դնէ զզէնն՝ ասելով , առ զնքն . և ապա բաժանաբար մասնաւորէ , և զրեթէ բացատրէ զզէնն որ պաշտպանիչ է անձին , և զզէնն՝ որ վանիչ է թշնամոյն . և քանզի 'ի պաշտպանիչ զէնս հասարակ գործածականն է վահանն , և 'ի վանիչ զէնն՝ սուրն . 'ի մասնաւորէ մարդարէին՝ միայն զսուրն և զվահանն 'ի մէջ բերէ անուամբ ասպարի՛ որ է մեծ վահան . իւ յայս միտ բառդ և , որ դնի զինի բառիդ չէն՝ է իբր յայտնիչ . որպէս թէ եղեալ էր , առ զզէնս քո , այսինքն զասպար քո և զսուր քո : Բատ այսմ կարգի զինուց գեղեցիկ այլաբանել կամելով մարդարէին զպաշտպանութիւնն առյալ :

Ա'ո զնէն և զասպար ու . և որէ յօդնելինչ : Յայս փոխարեւական բան՝ ասպարաւ իմացեալ լինի նախ կամք այ կամ հաճութիւն նորա . յոր միտ ասէ մարդարէն այլուր , ('ի սաղ . Ե . 12 .) * Տէր որպէս զինուց հաճութիւն քով պատկեցեր զմեզ . այսինքն թէ պատկե-

յեր զմեղ հաճուք քով , որ է իր ասպար մեր + Իմա-
ցեալ լինի երկրորդ և արդարութին այ և սրբութիւն
նորա . ըստ այնմ . (իմաստ . Ե . 48 .) * Առցէ զսպա-
,, ռազինութի զնախանձ իւր . և վառեսցէ զարարածս
,, իւր առ 'ի ինզիրելոյ զվրէժս 'ի թշնամեաց : Օ գեց-
,, ցի զրահս՝ զարդարութիւն , և զիցէ սաղաւարտ՝ ըզ-
,, գապտաստանն անացառ : Առցէ վահան զարբութիւնն
,, անսիկանոց || :

Վրդ առ ասէ՝ 'ի ձեռին քում զհաճութի՞ քոյ, և զարդարութիւն և զըրբութի, և նովին վանեալ զթշնամիսիմ օգնեա ինձ, որ է ասել. հածեակ պաշտպանել և օգնել ինձ: Ի՞այց զայս օգնելս ոչ դնէ, միով բառիւ, այլ յաւելուածով, այսինքն է արէ յօգնել ինձ: որով կամի առաւել զօրաւոր առնել զբանն իւր, և այսու փութ ացուցանել զանձ յօգնութիւն: Վայս օգնութիւն հայի միայն յանձն պաշարեցելոյն 'ի վտանգ. իսկ հայելով 'ի վանումն պաշարօղ անձին պահանջի և այլ ինչ. զօր և յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով: Առաջ զսուր ու ընդունէմ հալածւաց իմոց, արգելվուսա: Արով խմացեալ լինի աստ բարկութին այ. յօր միտ ասի 'ի զիրս խմագութե: (Ե. 21.) * Եւ սրեսցէ զհաժու բարկութին 'ի սուսեր: զի սրով կետեալ բարկութին է վանից թշնամեոյ, սովին իսկ սրոյ նմանի: Վրդ ասէ համ զայս սուր քոյ, այսինքն ցոյց զզօրուի բարկութե քոյ ընդդեմ այսոցիկ՝ որք պնդեալ են զհետիմառ 'ի կորուսանել զիս: որ է ասել, բարկութեամբ քով զարհուրեցն զհալածիչս իմ, և արգելվուսա, և վանեամ, և արա զի մի կարասցեն հասանել զկնիի իմ:

Ա. Արդ՝ եթէ մեծ է ունել զայնպիսի ոք պաշտ-
պան, որ իցէ զօրաւոր պատերազմօղ և վանիչ թշնա-
մեաց, քանի ևս մեծ իցէ ունել զած պաշտպանիչ և
պատերազմօղ ընդդէմ և իցէ թշնամեաց: Իւ ոչ
միսյն ունիլ այլ և վկայութք խոջի մտաց լսել 'ի նը-
մանէ 'ի ներքս 'ի հոգի իւր, թէ ես եմ պաշտպան
քոյ: Քայս ակնարկելով մարդարէին յարէ զինի, և
ասել:

Եթե առաջ դաստիարակությունը կամ պահանջական է առաջ դաստիարակությունը, ապա առաջ դաստիարակությունը կամ պահանջական է առաջ դաստիարակությունը:

այ՝ սրով փրկէ, զմեզ՝ ի պէսպէս փորձանաց . և 'ի մեռաց թշնամեաց , թէպէտ մեծ իմն է , բայց մեծ ես է , եթէ ած ասացէ զմեզ , թէ ես եմ պաշտպանիչ և փրկիչ քոյ . և տացէ զիտել թէ այնպէս է . Ա ասն զի եթէ մեք ոչ զիտացուք՝ թէ ած յատուկ պաշտպանութք պահէ զմեզ , յանզգայս մնալով ըզաշակ այնը պաշտպանութեն զոր զտանեմք , ոչ վայելմք . Իսկ եթէ 'ի շնչմանէն այ զդասցուք 'ի մեզ՝ թէ ած է պաշտպան մեր և փրկիչ . և զիտացուք հաւաստեաւ , թէ նա անտարակոյս 'ի մեր կողմն է , այս զգացումն կամ այս զիտութիւն տայ մեզ վայելվէլ ըզքաւզյրութի պաշտպանութեն այ , և զբերլուսի աներ կեանութեան անձանց մերոց :

Ամբին իրի իմզրէ մարդարէն՝ զի նա ինքն ած ազգեսցէ կամ հնչեսցէ իմանալապէս 'ի ներքս 'ի հոգի իւր , թէ ինքն է փրկիչ նորա . և այս է՝ զոր ասէ . Վառ շանչն է , այսինքն ցհողի իմ . Այս դրէսեն ու ես էմ . Ուր բառդ դրէսեն՝ զնի ըստ կրկնի մոտաց . մի՝ փոխանակ փրկիչ . որպէս թէ ած ինքնին ասէր . յանմի ես եմ փրկիչ քոյ , կամ թէ ես եմ՝ որ փրկեմ զբեզ , Երկրորդ փոխանակ այնը որով լինի փրկութիւն , որպէս թէ խօսելով այ 'ի հոգին՝ ասէր . յանմ փորձութիւնս և 'ի նեղութիւն քոյ այնալիսի ինչ եմ 'ի քեզ , որով փրկ կիս 'ի փորձութեցդ և 'ի նեղութեցդ :

Խորհրդաբար՝ զմնու նշանակի խորհուրդն մարդեղութեան . ասպարաւ նշանակի մարմինն քնի՝ որ հարաւ և տարաւ տանջանաց , իսկ որով հոգի նորա բանական՝ յորմէ հարաւ սատոնայ : Դարձեալ՝ զմնու նշանակի խամն քնի , ասպարաւ խոնարհութիւն և համբերութիւն նորա . իսկ որով անվանելի զօրութիւն նորմին 'ի նուածել խօսառ զատանայ և զջօրս նորա՝ որք ինզրէին զանձն նորա : Վ. Ա. աստ զիտելի է , զի այս բան զնի հայելով յայն , զոր ասաց մարդարէն այլուր . * Հազումք ասէին զանձնէ իմմէ , թէ չիք փրկութիւն , սորա առ ած իւր || . (սաղ . դ . 2 .) Անդէմ որոց կամելով զօրանալ ասէ առ ած . ասաւ դռ շանչն էմ , Աէ դրէսեն ոյ ես էմ . որպէս թէ ասէր . հալածիչք իմ կարծելով թէ ոչ կամիս դու փրկել զիս 'ի ձեւաց նոցա , և ոչ համիս պաշտպանել զիս , զհետ իմ պըն-

գեալ են . այլ դու բնդ հակառակն , ասա՞ ցիս , [թէ
մի երկնչիթ 'ի նոցանէ . զի ես փրկեմ զքեզ . որով և
յամօթ լիցին նոքա 'ի պարծանս իւրեանց :] յւ զայս
յայտ առնէ յաջորդ բանին՝ ասելով :

Պ . **Ա** նաշնչեն և յամօթ լուցին՝ ոյտ խնդրեն շանչն իմ .
Դարձին յետո և ամաչնչեն , որ խորհեն ինչ չար :
Իմասեն է տրտմախառն կրիւք զգածիլ վ՛ո 'ի յալտ
գալոյ այնպիսի իրի կամ գործոյ , որ յաղագս պակա-
սաւորութեն ծածկելի էր : Այնպէս է և յամօթ լի-
նելն . բայց առարկայ ամօթոյն է զաղիր և յոյժ ա-
նարդ . իսկ առարկայ ամաչելոյն երեեմն կարէ լինել
այնպիսի ինչ՝ որ ցիցէ այնշափ անարդ :] յւ քանզի որք
հալածենն զգք , կամ սպառնան ընդդեմ ուրուք , յու
կարեն հասանել պակառութիւն կարողութեն նոցա և
անարդութիւն գործոց նոցին գայ 'ի յայտ , վասն այսորիկ
ամասեն , և յամօթ լինին :] յւ զի այսպիսի ամաչումնո
է իբր գործ անկարանալոյ և տկարանալոյ , զանուն
գործոյն դնէ մորդարէն փոխանակ անուան պատճա-
ռին , այսինքն փոխանակ անկարանալոյ և տկարանա-
լոյ թշնամեաց իւրոց . և յայտ միտ ասէ :

Ա . նաշնչեն և յամօթ լուցին՝ ոյտ խնդրեն շանչն իմ : Այս ոճ
բանի , այսինքն իննդրել զանձն , յամ աեղիս ոք կրոց
առեալ լինի փոխանակ վնասելոյ անձին . ըստ այնմ .
(ա . [թագ . ի . 1 .) * զինչ մեղայ առաջի հօր քո՞ զի
իննդրել զանձն իմ ! , այսինքն թէ կամի կորուսանել
զիս . (տես և 'ի սազ . ձիսա . 4 .) Իստ այսմ առման
խօսի աստ մորդարէն և ասէ . հալածիչք իմ որք
իննդրեն կորուսանել զիս , եթէ տեսցեն՝ [թէ դու
ինքն պաշտպան լեալ փրկես՝ ոչ համարձակեսցին և
ոչ կարացեն առնել զոր կամին . և զի այնու յայտ-
նի երեխ տկարութիւն նոցա , վասն այնորիկ և ամաչես-
ցեն :] յւ առ 'ի ցուցանել [թէ մեծապէս ունին ամա-
չել , յաւելու ասել . և յամօթ լիցին , որ է ասել
յոյժ ամաչեսցեն , որով և ամօթահար մեկնեսցին
լինէն :] յւ առ այս յաւելու և ասէ :

Ա . արձին յետո և ամաչնչեն , որ խորհեն ինչ չար : Այս
յետո դառնալո կրկնակի իմացեալ լինի աստ . մի փո-
խանակ գաղարելոյ 'ի հալածել . և մի ես՝ փոխանակ

յաղթեալ լինելոյ և գլխակոր մնալոյ . որպէս թէ
տաէր . հալածիչք իմ որ խորհէին խորհուրդ չար ընդ-
դէմ իմ , տեսեալ զգաշապանութիւն քոյ 'ի վերայ իմ
ամացեսցեն , և ամացելով դադարեսցին 'ի խորհորդոց
իւրեանց . ևս և յաղթեալ և 'ի պարտութիւն մատնեալ
'ի զօրութէ քումմէ , կոր 'ի զգախ մեկնեացին յինէն ,
և ամօթալից գնասցեն 'ի բաց : Եւ ոչ այսափ միայն ,
այլև զոր ընդդէմ իմ խորհէին , ինքեանք կրեսցեն
զնոյն . իսկ թէ զիարդ՝ յայտ առնէ ասելով :

Դ շիշին նոտա որպէս իռլի առաջի հողմոյ . և հրեշտակ
ոն նեղեցէ զնոյն :

Արափ է զօրութիւն 'ի հողմն , այնչափ տկարուի տե-
սանի 'ի փոշին . վասն օրոյ և 'ի նմանեցուցանել մար-
գարէին զհալածիք իւր փոշոյ , սովին յայտ առնէ
զյետին տկարութիւն հալածաց իւրոց և զանվանելի
զօրութիւն հրամանին այ և բարկութեան նորա , յա-
սելն :

Ե շիշին նոտա որպէս իռլի առաջի հողմոյ : Կամի ասել . որ
պէս փոշին վասն տկարութեան ոչ կարելով ընդդէմ
կալ զօրութեան հողմոյ՝ յափշտակի ի նմանէ , վասնի
սաստիկ և ցրուի արագ . այսպէս եղիցին ասէ և հա-
լածիք իմ , թէ գեք իցեն , և թէ մարդիկ վանեալք
ոչ 'ի զգալի հողմոյ , այլ յիմանապւոյ . այսինքն 'ի
հրամանին այ ձեռամք հրեշտակի , սմին իրի յարէ :

Դ հրեշտակ ասելով իմա-
նայ կամ զյատուկ պահապան հրեշտակն , և կամ
զայլ մանաւոր հրեշտակ առաքեալ յայ . մարթէ
իմանալ և զշար հրեշտակն , որպիսի է գեն թշնամի
մարդոյ , և կամ զայնպիսի ինչ՝ որ իւր կարապետ բար-
կութեանն այ հասանէ : Օ իարդ և առցի , միտ բանին
է այս , թէ որպէս հողմն վանէ զփոշին , սոյնպէս և
հրամանն այ կամ բարկութիւն նորա վանեացէ զհալա-
ծիք իմ 'ի ձեռն հրեշտակի , որ է հողմն իմանալի և
հոգի կենդանի՝ հզօր և ազդու քան զնամ հողմն ընդ-
դէմ չարաց :

Վ յլ թէ ընդէր փոխանակ ասելոյ վանեացէ , կամ որ-
պէս զնէ 'ի յաջորդ համարն՝ հալածեսցէ , ասէ նե-
ղեսցէ , ոչ այլ ինչ է պատճառն՝ բայց եթէ զի վա-

նել հրեշտակին է միանգամն և նեղել . և այս կամ զարհութեցուցանելով , կամ հարուածելով , կամ կուրացուցանելով , կամ սպանանելով ևն . որպէս յայտ է՝ ի բարօւմ գործոց , որ սպատմին յածաշունչ զիրս : Վ. թէ զինչ ունիցի պատահել պարտելոցն այնոցիկ ՚ի վանիլ իւրեանց , յայտ առնէ ՚ի յաջորդ համարն ասելով :

Ե. **Պ**աշիցին ձանապարհ նոցա ՚ի խաւար և ՚ի գայթակուն թէ . և հրեշտակ այ հալսծեայէ ընուս : Ու ամօթ մեծ է հալսծաց ՚ի պարտուի մատնիլ և փախչիլ . բայց այս ամօթ նոցա գառնայ և յանհանրին աղէտո , եթէ ձանապարհն ընդ որ փախչին նոքա՝ իցէ խաւարին և խորտաբորտ , մանաւանդ եթէ իցէ և անծանօթ նոցա . զի յայնժամ աչք նոցա ոչ կարելով ՚ի խաւարի տեսանել , և ուրք նոցա ոչ կարելով ՚ի խորտաբորտն ուղիղ ընթանալ , և ինքեանք թակ մը անծանօթուե ձանապարհին ոչ որոշելով զուզին , հարկաւորապէս վանագին և կործանին , տագնապին և գահավիժին : Հայսպիսի անցա հայելով մարգարեին ասէ :

Պաշիցին ձանապարհ նոցա ՚ի խաւար և ՚ի գայթակուն թէ . և հրեշտակ այ հալսծեայէ ընուս : Վ. յանիքն ՚ի վանիլ հրեշտակի ոտն զշալածիչ իմ՝ մի կարասցեն նոքա անվանգ փախչել . զի ձանապարհ նոցա խաւարեսցի . և ընդ որ գնանն՝ խորտաբորտ գործվ լիցի նոցա ՚ի գայթակութէ . այսինքն լիցի նոցա այնպիսի՝ զի սահեսցին ՚ի նմին և կործանեսցին . և ոչ եւս կարասցեն հանգել փոքր մի . քանզի և հրեշտակ այ որ վարէ զնոսա , ոչ գագարեսցի ՚ի հալսծելոյ զնոսա , և կամ հրեշտակ չար՝ թոյլ տալրին այ ոչ կասեսցի ՚ի վարելց զնոսա ՚ի չարն :

Վ. յսու նմանաբանութեամբ նկարագրի նաև մերժումն ամբարշտուց առ հասարակ , մանաւանդ տիրասպան հրեից , ևս և հալսծաց սրեկեղեցւոյ , որք մերժեալ յայ , և վանիւալ ՚ի հրամանէ նորին՝ գնան ընդ խաւար տգիտութէ ՚ի մոլորութիս իւրեանց , և կործանին ընդ առապարս ախտից հանապարզօր . և փութան ոչ ՚ի փրկութէ , այլ ՚ի գատապարտութիւն :

Վակն տատ ումնաք , [թէ սովիմք աղաւէ մարգարէն ՚ի զիմաց արդարոյ , զի ՚ի մեկնիլ հոգւոյն ՚ի մարմնոյ եթէ յաղձակեսցին գեք ՚ի վերայ . հրեշտակ տեսան նեղեսցէ , և հալածեսցէ զնոսա , և զերծուսցէ զհօ զին ՚ի ձեռաց նոցա . ուր յաւելու վարդան , [թէ վասն այսր զայս սաղմնա ասեն ՚ի վերայ մեռելոյ :

Վ յարփիկ բանք սկսեալ յառաջնոյ համարոյն մինչե ցաստ կարեն հայիլ և յօր վերջնն զատաստանի . զի յայնժամ ՚ի դատել այց զամբարիշտու՝ յամօթը լիցին . և իբրեւ զիտոփ ՚ի բարկութենեն այց վարեսցին . և ձեռամք հրեշտակաց անկցին ՚ի վիշ խաւարին . և ոչ լիցինոցա այցելութիւն ողորմութեան : Եւ կարի յիրաւունս . զի որովհետեւ ինքեանք անողորմութը վարեցան ընդ այլ և ընդ ինքեանս , այլք ևս՝ այսինքն նա ինքն ած և հրեշտակը նորա ոչ ցուցցեն զողորմութիւն առ նոսա : Վ. յլ [թէ զիարդ անողորմութը վարեցան , զայնմանէ խօսի ՚ի 9 համարոյ մինչեւ ՚ի 20 , իսկ ՚ի յաջորդ համարն ՚ի մէջ բերեւ միայն զընդունայն ջանքան նոցա ՚ի կարուսանելու ուստի ասէ :

Հ. Ա նանիր նագուացին ինչ որովայլ ապահանութեն է-ը նաև . և ՚ի նանիր նախատեցին զանին ին :

Որոգայթն է գործի [թաքուն՝ վասն ըմբռնելոյ . և այս՝ կամ առ ՚ի որսալ , կամ առ ՚ի վեասել , և կամ առ ՚ի կորուսանել , սրոյ վասն դնէ որոգայթ ապակա նութեան . այսինքն որոգայթ ապականիչ կամ կորուսիչ , և կամ մահացուցիչ .] սոյն նշանակութիւն հայելով ասէ :

Հ. Ա նանիր նագուացին ինչ որովայլ ապահանութեն է-ը նաև . ի նանիր ասելով ցուցանէ նախ՝ [թէ ջանք նոցա ՚ի զուրէ , զի ըսւնի յաջողիլ . ցուցանէ երկրորդ՝ [թէ ըսւնին պատմառ որոգայթ լսրելոյ . որպէս [թէ ասեր . հաւածից ՚ի զուր տարապարտոց առանց կրելոյ ինչ յինէն՝ [թագուցին ինձ զորոգայթ իւրեանց որ էր որոգայթ ապականութեան , իբր զի խօսիչուրդ առ ՚ի միասին , զի հնարիւք մատնեսցեն զիս ապականութեան մահաւ . որ է ասել առանց իրիք պատասի խորհեցան սպանանել զիս . (տես և ՚ի համեմ մատութիւնան :

Արոգայթ լարեն և մեզ դեք՝ խայծ 'ի միջի գնելով .
 'ի մերձել մեր յայն՝ ըմբռնեն և ապականեն . և ոչ
 խել թողուն գոնէ զիսայծն լի ուտել . Արսորդք որո-
 գայթ լարեն արջուց , մեզր գնելով 'ի նմա . և առ-
 նմին թակ , այսինքն փայտ մեծ՝ երկաթի ճանկով . 'ի
 զիմել արջու յորոպայթն՝ անկանի փայտն 'ի վերայ
 նորա . և երկաթեայ ճանկն զիսպեալ 'ի գլուխ նորին
 ըմբռնել և երթեմն սպանանէ . Այեզր հեշտութե գնէ
 և սատանայ առաջի , 'ի դիմել յայն հեշտասիրաց ,
 փայտ չար կամաց նորա անկանի 'ի վերայ նոցա , և
 ճանկն մեղաց սալանանէ զհոդիս նոցա : Եւ թէպէտ
 երթեմն ոչ զգան նոքա , բայց 'ի կամին զգալ , և ա-
 զատիկ՝ չարացար իմանան . և 'ի յօւսահատութիւն և ս
 ըմբռնին : Երբե զոստղ գնէ սատանայ զմեղս առա-
 ջի երկրասիրաց . և ցանէ զնոքօք զսերմանս չար խոր-
 հըրդայ՝ մինչեւ 'ի նստիլ նոցա յոստղ մեղաց : Վայլ
 շրողինակ թռչուն ըմբռնեալ յօստղ՝ ոչ իմանայ
 զըմբռնիլ իւր . և 'ի կամին թռչիլ՝ գտանէ զինքն
 կապեալ ընդ ոտող . և որչափ բաղիսէ զթեւս իւր այն
 չափ կասիփ . ոսյնակէս և մարդ 'ի հպիին 'ի մեզս : Այն
 մերձենար , ապա թէ ոչ ըմբռնիս և վտանգիս . և
 յըմբռնիլդ հանանէ սատանայ , և ըմբռնէ զքեզ ան-
 գերծանելի : Վայիսի իմն հնարիւք կամէին ըմբռո-
 նել զդափիթ և թընամիլք նորա . և զի զդոյշ կայը
 նա՝ խորհուրդ խորհէին՝ թէ զիսպրդ կարասցեն կա-
 տարել զոր կամէին . այլ ոչ կարելով կատարել չա-
 րախօսութեր կամեցան 'ի գլուխ տանել զիսրհուրդա
 իւրեանց . վասն որոյ միսեցան 'ի բանս ամբաստանուե
 և նախատանայ . սմին իրի՝ յաւելու ասել :

Եց՝ 'ի նանիր նախատեցին զանցն իմ . Վայինքն ընդունայն
 և սուտ բանիւք եղին յանցանս 'ի վերայ իմ . և զայն՝
 ոչ միայն 'ի ծածուկ խօսելով զինէն , այլ և յայնա-
 պէս նախատելով . որպէս զի ցուցեն զիս արժանի
 կորստեան : Վայ բան յարմարական մեկնութեր հայի
 և առ այնոսիկ՝ ողք 'ի կրելն ինչ յումեքէ անհամեկը
 լեալ յանդզնին նախատել և թընամանել , երթեմն
 և 'ի նանիր . Վայիսի մարդ թընամանելով ցուցա-
 նէ զտկարութիւն իւր , զի չփարէ զօրել տանել , այլ
 պարտի յախտից իւրոց և յաղթի . իսկ եթէ համեե-

րեսցէ՝ զօրաւոր ցուցանի քան զթ ընամանողն , և յաղ
թօգ . ուստի ասէ բարսէղ վարդապէտ . ('ի մեկն .
մարկ , զլ . ժղ . 'ի յորդ .) * որ շատն թշնամանէ՝
, յաղթեցաւ , և որ համբերեացն՝ նա է որ յաղթեաց .
, զի մին և յիւր ախտէն պարտեցաւ . իսկ միւսն և այ
,, լոց ախտից յաղթեաց || : Վրդ 'ի մէջ բերեալ մար
դարեին զ'ի նանիր օրոգայթազրութի թշնամեացն , և
զ'ի նանիր թշնամանս նոցա , առաջի առնէ այժմ ըզ-
չարիսն որբ հասանէն և հասին 'ի նոսին , վասն սրոյ
ասէ :

Է.  ասցէ 'ի վէրայ նոցա որոգայթ , զըր ու գիտացին . և
որ զըր նահառացին՝ ասցէ զըրա նոցա . և յորոգայթ՝
նոյն անհցին :

|| Ըստել ամբարշտաց զօրոգայթ այլոց առ 'ի վասսել
նոցա , անշնարին է թէ ոչ վասաեսցէն ինքեանց . զի
որպէս ծրար հրոյ (որ տաճկերէն գունստագ կոյի)
ոչ կարէ այրել զտունն առանց այրեալ լինելոյ , այս
պէս և որք լարեն զօրոգայթ այլոց , ու կարեն վաս-
սել նոցա առանց վասսեալ լինելոյ յինքեանս . մմնա-
ւանդ թէ բազում անզամ պատահի՝ զի առանց կա-
րելոյ վասսել այլոց՝ ինքեանց վասսեն , գոնէ այսու-
զի անիրաւին յընկերն , և գործեն ընդդէմ արձա-
րութե և սիրոյ . իսկ եթէ դիմեսցի զի յորոգայթից
անսրի՝ զոր այլոց լարեն՝ ինքեանք ոչ վասսեսցին ,
յայդ ոչ է ապաւինելի , այլ պարտ է հայիլ յայն՝ յո-
րում դիմի նոցա ըմբռնիլ այսինքն 'ի վասանդն և 'ի
վասան . որպէս որ կամիցի ըստ այժմու ասացեալ տա-
րացուցիդ՝ ծրար հրոյ արկանէլ 'ի տուն այլոց առ 'ի
այրել զտունն , և կորուսանէլ զբնակիւս նորա , եր-
բեմն պատահի՝ զի ինքն այրի ոչ կարելով փախչիլ .
կամ եթէ ոք պատրաստեսցէ այլում զթոյն մահա-
ցու , և սիսալելով արբցէ զայն . մեռանի . որպէս
պատահեցաւ բազմաց : կամ եթէ որ լարեսցէ ումեք
որոգայթ 'ի ճանապարհի և ինքն յետ աւուրց ինչ
ոչ ուշ դնելով կոխեսցէ 'ի նոյն , ինքն ըմբռնի 'ի
նմին : Օ այսպիսի իմն դիմուածս գուշակէ մարդա-
րէն զհալածչաց իւրոց՝ յասելն .

Դ. ասցէ 'ի վէրայ նոյն որոգայթ՝ զըր ու գիտացին . Վայս ու

ըրոգայթ է այն՝ զօր յիշեաց՝ 'ի վերոյ՝ յասելն . 'ի նաւ նկր թաքուցին ինձ որոգայթ պատկանութեան : Իսկ թէ ընդէր 'ի նանիր եղեւ այն , այս է ասէ պատճառն . զի այն որոգայթ չարար ինչ ինձ վասա , այլ ինքեանց ունի վասաւել . զի ինքեանք անկանելոց են յայն , և այս պատահելոց է նոցա ասէ վասն ոչ գիտելոյ՝ թէ այն որոգայթ՝ զօր ինձ թաքուցին կարէ և ինքեանց վասաւել : Ոսկին կամի յայտ առնել , թէ հաղածիչք իւր՝ որով կամեցան կօրուսանել վինքն , հանգեր ձեալ են նովին կորնչիլ :

Մարթ է աստանօր՝ զու գիտելն փոխանակ ոչ կամել լոյ՝ իմանալ . որպէս թէ եղեալ էր , հասցէ 'ի վերաց նոցա որոգայթ այնպիսի՝ զօր ոչ կամեցան , յոր միտ առնու և վանական վարդապէտ ('ի մեկն . յոր . դւ . իդ .) զբանն յորայ յասելն . * զհանսապարհս արդա ցութեան ոչ գիտացին . զու կամին (ասէ) իմաս .

,, ցուք . //

Վ. Ալ քննելի է այն՝ զի ոչ ասէ մարդարէն , անկցին յօրոգայթ՝ զօր ոչ գիտացին , այլ թէ * հառշէ 'ի վերաց բայ նոցա որոգայթ // են . առ 'ի ցուցանել զստու գութիւն կորատեան նոցին . զի թէպէտ և ինքեանք 'ի լորել զօրոգայթ այլոց՝ մեկնին յօրոգայթէ անտի և զգուշանան , բայց ոչ կարասցեն գերծանիլ . զի նոյն որոգայթ նախախնամութեամբն այ պնտեսցի ըզ չետ նոցա . այսինքն պատահեսցի նոցա , և գոցէ զնոտա :

Վ. յսու որոգայթիւ կարեւիք ևս իմանալ ոչ զայն՝ զոր ինքեանք թաքուցին այլոց , այլ զայլ . որով և միտ բանին լինի այս , 'ի թաքուցանել նոցա վասն այլոց զրոգայթ զօր գիտեն , անկցին յայնպիսի որոգայթ զօր ոչ գիտեն :

Վարդյապէս , մարթ է այսու որոգայթիւ իմանալ զառիթս մեզաց և կամ զվասանգն անկանելոյ 'ի մեղս , զօրս առաջի առնեն մեզ գեք . յօրոց եթէ զգուշանամք , ազատանամք . ապա թէ ոչ անկանիմք . զի որպէս ասէ սիրաք . (դ . 27 .) * որ սիրէ զվասանգ 'ի նմին կորիցէ : Օսոյն 'ի յօրսս ևս առափելով մարդ զարելին՝ ասէ :

Ե՞ս ո՞ւ՝ լու իտուցին՝ ո՞ւ զէ զորս նոյն : Վառս ո՞ւ զնի

աստ փոխանակ որոգայթի կամ թակարթի . զի որսն կամ որսան է գործ որոգայթի . և զի բազում անգամ գործն դնի փոխանակ պատճառին , ըստ այսի և աստ որսն՝ որ է գործ որոգայթի , դնի փոխանակ նոյն իսկ որոգայթի . և յայս միտու կամի ասել . այն որոգայթ զոր թաքուցին ինձ առ ՚ի սրսալ զիս , որսացէ վնոսա . և քանզի հաստարակօրէն որոգայթն այնպիսի իմն օրինակաւ լարի , որպէս զի մարդ կոխելով զայն ոտիւք՝ անկանիցի ՚ի նոյն , սմին իրի ոչ ասէ որասցէ վնոսա , այլ առցէ զոտս նոցա , որպէս եղեւ յովհաննու հայոց արքայի յանկանել նորա յորգայթ՝ զոր լարեաց նմա եղբայր իւր աշոտ . (պատմ . Դ . 35 .) Ի յլ կամելով մարդարէին առաւել ևս հաստատէլ զայն՝ զոր եդ , յաւելու և ասէ :

Ի յուրաժայն՝ ՚ի նոյն անհին : Այսինքն՝ ՚ի նոյն որոգայթ անկցին , յոր զիս արկանել կամէին . որ է ասել՝ խորհուրդ նոցա ոչ ինձ , այլ ինքեանց վնասեսցէ : Այս ամենայն յայտնի կատարեցաւ ՚ի տիրասպան հրէայս , զի զոր ինչ խորհեցան ընդդէմ տն մերոյ , այն ամենայն դարձաւ ՚ի վնաս իւրեանց , յամօթե և ՚ի խարտառակութիւն անձանց նոցին : Ոյնպէս և հալածիք եկեղեցւոյ , որով կամեցան բառնալ զհաւատոս քափի , նովին յայտնեցին զսուռթի կրօնից իւրեանց , և հաստատեցին զշմարտութիւն քրիստոնէական հաւատոյս մերոյ : Եւ այս ամենայն լինի ՚ի մասնաւոր իննամոցն ոչ , որ թոյլ տարով ամբարշտաց հալածել զարդարմն նովին իսկ նուռամէ զամբարիշտան , և զգործա նոցա դարձուցամէ ՚ի բարին , և կարգէ զնոյն յօգուտ այլոց : Օ այսպիսի իննամն դտէալ և մարդարէին առջայ , և զնուռամութիւն հալած ըացն յայտնի տեսեալ , յնձայ յանոձն իւր , և ասէ :

Է . Ա յս անյն իմ շնծառացէ ՚ի պը . ուռախ եղեց ՚ի գրիսութենորա . և ամենայն սոհերու իմ առասցին , պը և նման է քեզ : Կրկին ուրախութիւն է մարդոյ՝ յորժամ ՚ի հալածանոց դոլով տեսանէ զի երեւելի և հզօր ոք պաշտպան լինի նմա , և ազատէ վնա ՚ի հալած ըաց իւրոց , առաջին ուրախութիւնն հայի յարժանաւորուի անձին՝ որ պաշտ

պան լինի . իբր զի տեսեալ պաշտպանելոյն թէ այս
սփսի անձն ոք հաճեալ է պաշտպանել զինքն , ուրա-
խանայ ընդ այն : Խրկորդ ուրախութին հայի յազա-
տութիւնն , որով փրկի պաշտպանեալն 'ի ձեռաց հա-
լածաց , մանաւանդ եթէ հալածիչքն փօխանակ
վնասելոյ վնասեալ լինիցին , Խը զի ըստ նախա-
զբելոցդ այսպէս պատահեցաւ և դաւթի , սմին իրի
ասէ :

Պայլ անձն էմ շնծասացէ 'ի իբր . ուրախ եղեցի 'ի գրէունէ նորա :
Ուր քառդ այլ սրբազրէ յինքեան զայն ամենայն՝
զոր ասաց 'ի վերոյ զհալածաց իւրոյ . որպէս թէ, ե-
գեալ էր . յիրափի այսպէս պատահելոյ է թշնամեաց
իմաց . իսկ ինձ մնայ ցնծալ և ուրախ լինել . վասն որոյ
ցնծասացէ հոգի իմ 'ի տէր օրէնելով զնա և զոհանա-
լով զնմանէ . և ուրախասցի 'ի փրկութէն նորա . այս-
նիքն ուրախասցի վասն գամանելոյ նովաւ զիբկութիւն .
կամ ուրախասցի վասն փրկեալ լինելոյ փրկութէն .
կամ ուրախասցի 'ի փրկիչ իւր : Խը զի ուրախութիւն
հոգւոյն յորժամ առաւելու , զեղու և 'ի մարմինն և
'ի զօրութիւնս մարմնոյն , զայոր առաւելութէ զջնաշի
առեալ մարդարեին՝ ասէ :

Վամենայն ոսկէրք իմ ասաւշն , պը ո՞նման է ո՞ւշ : Վա-
փօխաքերական թանք հային յայն ուրախութիւն՝ ոք
լրացեալն է ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ միան
գամայն . զի պատահի երբեմն ուրախանալ միայն
ըստ հոգւոյ , և տրտմիլ կամ ցաւիլ ըստ մարմնոյ , և
երբեմն ուրախանալ միայն ըստ մարմնոյն , և տրտմիլ
ըստ հոգւոյ . իսկ երբեմն միանգամայն ուրախանալ
ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ . որպէս յորժամ փոր-
ձութիւնք և նեղութիւն նուազին , և բերմնուք սրտի
'ի բարիս յաջողին : Վամ պատահեալ և դաւթի
վաստահի ասել , թէ նաև մարմինա իմ , ևս և անզպայ
մասունք մարմնոյս , այսինքն ոսկելքս իմ առ հասա-
րակ յուրախութէ հոգւոյս փափկացեալք՝ ուրախ լի-
ցին 'ի քեզ տէր . որպէս թէ ասէր , եթէ էր ոսկերաց
իմաց զբայութիւն և ձայն , ոչ ևս էր նոցա հանդար-
տել , այլ աղաղակել և ասել . պը ո՞նման է ո՞ւշ . այս-
ինքն թէ ո կայ իբրև զքեզ յերկինս և յերկրի հզօր
և կարող , բարի և բարերար . ևն :

Այս բան ասի և 'ի բերամոցն աղասիայ յաղատիլ նորա
'ի դժոխոց . յոր միտս ոսկերօք խմացեալ լինին որդիք
նորա , որք ընդ նմա աղատեցան . ընդ որ ուրախ լեալ
առեր . ցնծասցէ հոգի իմ 'ի փրկութեան քում՝ որով
համեր զիս 'ի դժոխոց և յապականութէ , և ամենայն
որդիք իմ , որք են ոսկը յոսկերաց իմոց՝ աղասցեն ,
առեր և նման է քեզ , զի ոչ գտաւ ոք՝ որ աղատեր
զմեզ , որպէս դուդ աղատեցեր : || Վարթ է աստ ոս-
կերօք խմանալ և զջօրութիւնս հոգւոյն , որք ցնծան 'ի
փրկութեան տն , մինչև աղաղակել և ասել առ յո . որ
ո՞նման է քեզ , զի դու ած գողով մարդ եղեր վան
մեր , և սքանչելի հնարիւք զմեզ 'ի քեզ ձգեցեր ,
փրկելով զտառապեալքս . և զայսմանէ զրէ 'ի յա-
ջորդ համարն . ասելով :

Ե. **Օ** է ՔՐԻԵԿ ՀԱՊՀԱՊԻՆ 'ի ՅԵ-Ա-Չ ՀՂՋՔԷ . ՀԱՊՀԱՊԻՆ և
■ պահանձն յայնշառնէ՝ որ յափշտակէն պահանձն և
ՎՀ երեի այնչափ ինչ դժուարին փրկել զհզօրն 'ի ձե-
ռաց հզօրի , և զիշխաննն 'ի ձեռաց իշխանի . զի ունե-
լով նոցա զհաւասար զօրութիւն՝ առանց կարօտելոյ
օգնութեան այլոց կարեն փրկել զինքեանս : | Ասկ փր-
կել զտկարն և զաղքատն 'ի հզօրէ և 'ի բռնաւորէ՝ է
դժուարին . զի յայնժամ փրկուն ըննի ինչ օգնութի
'ի փրկեցելոյն . ապա եթէ զայս փրկութիւն արացէ,
այնպիսի օրինակաւ , մինչև հզօրն այն փոխանակ
յաղթելոյ ինքնին տկարացեալ յաղթեսցի , և զոր
ինչ կամէր առնել այլում . 'ի զըսկս իւր դարձի ,
այս մեծ իմն է : | Աւ զի այսպիսի օրինակաւ փրկեաց

Օ է ՔՐԻԵԿ ՀԱՊՀԱՊԻՆ 'ի ՅԵ-Ա-Չ ՀՂՋՔԷ , և ն ։ | Դքաստ ասի
նա՝ որում պակասին կարեւոր պիտոյք . իսկ մնանկ
ասի նա՝ որ 'ի մեծութենէ անկեալ յաղքատութի .
արդ յայտ է թէ զաւիթ 'ի հալածիլ իւրում անկառ
'ի մեծութէ և աղքատացաւ յերկուց . մի՝ 'ի մարմնա-
ւոր պիտոյից . և մի եռ՝ յօգնականութէ այլոց . որով
և զիւրին լինէր նման մասնիլ 'ի ձեռս հալածաց իւ-
րոց . այլ որչափ դիւրին եր նմա մասնիլ , այնափ
զիւրաւ փրկեր զնա տէր . վասն որոյ և գոհանալով
զնմանէ ասէ . զիս որ աղքատս եմ և մնանկ , փրկեաց

տէր՝ ոչ՝ ի ձեռաց տկարի , այլ՝ ի ձեռաց հզօրի , այսինքն
սաւուղայ , և յայնցանէ որ միաբանեալ էին ը նմա ,
առ ՚ի յափշտակելց և կորուսանելց զիս :

Այս բան զօր դաւիթ զմնձնէ իւրմէ ասէ , հայի առ
տնանկացեալ և աղքատացեալ մարդկայինս բնութի .
զօր փրկեաց տէր՝ ի ձեռաց սաստանայի և հրեշտակաց
նորա . որք յափշտակել կամէին զնա ՚ի մահն յաւի-
տենական : Ուր արժան է կըուել . զի եթէ զմեծա-
տուն ոք կամէր փրկել և զշզօր ոմն , մարդ էր կար-
ծել թէ ՚ի շահ իւր ևս հայեցաւ ՚ի փրկեն . այլ զինչ ,
զաղքատն ասէ և զտնանկն . իսկ այս ոչ հայի ՚ի շահ
ինչ փրկողին , այլ յօգուտ փրկեցելցն . որով բանա-
գատիմք խոստովանիլ թէ ոչ վասն իւր ինչ , այլ վասն
մեր արար զփրկութիւն մեր , յօրժամ յարուցեալ էին
թշնամիք ՚ի վր մեր առ ՚ի կորուսանել զմեզ : Վայ-
թէ որպիտաի ոմանոք էին այն թշնամիք , և զինչ խոր-
հուրդ էր նոցա , յայտ առնէ մարդարէն՝ ՚ի մէջ բե-
րելով զթշնամիս իւր և ասէ :

Հ . **Յ**արեան ՚ի վէրայ իմ վէայս շարեաց . զր ինչ ոչ գե-
տէի , հարցանենին ցիս :

Այս բանք ոչ ցուցանեն թէ դաւիթ ածեալ յա-
տեան , սուտ վկայեցաւ անդէն , և հարցաքննեցաւ .
այլ թէ թշնամիք իւր զբանս սուտս վկայէին զնմանէ
առաջի այլոց , մանաւանդ առաջի սաւուղայ . որպիսի
եղեն զիփացիք և դավեկ . և դարձեալ շարապար դա-
տելով որոգայթ լարէին նմա առ ՚ի յափշտակել զնա .
և դարձեալ յերեսս նորա հարկանելով ասէին . ոչ
դու այն ես , որ արարեր զայս ինչ և զայն . որպիս
յայտնի տեսանի այս ՚ի դրծան , զօր արար սեմէի
՚ի հալածիլ նորին : Յայտպիսի բանս սոցա հայելով
ասէ :

Յարեան ՚ի վէրայ իմ վէայս շարեաց , զր ինչ ոչ գետէի հա-
տանէին ցիս : Օ սուտ վկայմն զայնոսիկ կուէ վկայք
ապրեաց . այսինքն շարութիք վկայողք . և զւարութի
նոցա յերիս երևեցուցանէ . մի՛ զի ոչ ՚ի դրդութենէ
այլոց , կամ ՚ի յորդորելոյ արդարութիք , այլ յանզգա-
մութենէ իւրեանց վկայէին զշարիս . վասն այնորիկ ոչ
ասէ վկայեցին զինէն զշարիս , կամ խօսեցան զինէն

շար . այլ յարեան՝ ՚ի վէրա , իմ . իբր թէ ասել . յինքեանց
և ինքեամբք վկայեցին զինէն շար վասն չարութեան
իւրեանց . որպիսի եղեն և այն վկայք , որք յարեան ՚ի
վերայ տն մերոյ : Երկրորդ՝ զի ընդդէմ կարգի վը-
կայից գործէին . վասն զի վկայք զոր տեսեան են , և
կամ զոր լուեալ ըստ տեսանելց և ըստ լելց իւ-
րեանց պարտին ասել , թէ սա զայս ինչ արար , կամ
զայն ինչ խօսեցաւ են . և ոչ թէ հարցանել ցնա ,
զորմէ տալոց են վկայութի . իսկ սոքա հարցանէին ա-
սէ ցիս . որպիսի եղե և կայիտափա , և կատակիցք նո-
րա : Երրորդ՝ զի զայնպիսեաց էր վկայութի նոցա և
հարցումն նոցին , զորս ոչ էր գործեալ . ուստի յարէ
ասելով :

Օչ ինչ ոչ գիտէի հարցանէին ցիս : Ուր ոչ գիտէի ասելով ,
ցուցանել զու գործեն . որպէս թէ ասելո . զոր ինչ
չէի գործեալ զայն հարցանէին ցիս . քանզի այս ոճ
յայսպիսի ասացուածս առաւել զու գործեն ցուցա-
նէ , քան սոսկ զու գիտեն : Որպէս ՚ի հարցանել
ուրուք ցմեզ . թէ զայս ինչ գործեալ իցէ քոյ , պա-
տասխանեմք երբեմն . զայդպիսի ինչ ոչ գիտեմ .
որպէս թէ ասեաբ , ոչ եմ գործեալ . ըստ այսմ մոտաց
ասէ և պօզոս . ոչ զիտել որդւոյն այ զմեզս . * զայն
,, ասէ որ ոն զիտէր մեզս . (այսինքն որ ոչ էր գոր-
,, ծեալ մեզս) վասն մեր մեզս արար || . (ը . կոր .
Ե . 21 .)

Վայլ եթէ այս բան իմացեալ իցի լոկ զու զիտելոյն ,
միտ բանին լինի այս . հարցանէին ցիս զայնպիսի ի-
րաց , զորոց չունէի զտեղէկութի . և վախճան հարցա-
նելց նոցա զայսպիսիս՝ ոչ այլ ինչ էր , բայց եթէ
այս . զի կորզեսցեն ինչ ՚ի բերանոյ իմմէ . և այնու
պարտաւոր ցուցցէն զիս՝ առ ՚ի լրումն չարութեան
իւրեանց :

Լամք . հոգեորապէս առեալ յայլ իմն միտս տարա-
ծէ զայս բան ասելով . * մեզացն առիթ ինքեանք
,, (զեք) լինէին . և զցանկութի մեզացն ինքեանք ՚ի
,, սիրտ իմ սերմաննէին , և իբր ՚ի բարի զործ զիս ՚ի
,, նոյնն յորդորէին , և իմ հաւանեալ կամաց նոցա
,, և կատարեալ , այնուհետեւ զոր ես ոչ զիտէի չար
,, զիս հարցանէին որպէս զւարի կատարող , և երկե-

ցուցանելին զանձն իմ. սակա այնորիկ տանջանաց
ակնկալութեամբ՝ որպէս թէ ոք զմանուկ պէսպէս
պատրողական բանիք՝ հօրն յանցաւոր խրատէ առ-
նել, և յորժամնա պարզմուութեամբն հաւանի առ-
նել՝ աղաղակի՛ ՚ի վերայ թէ զայդալիսի անպատշագդ
արարեր : Ում մեղաղըէ հայրն . նորա՞ որ առիթն
եղեւ և խրատեաց , թէ տհաս մանկանն . այսակէս և
սատանայ զիւը գործն ՚ի վերայ իմ աղաղակի՛ը , և
զիս նովաւ երկեցուցանէր , զոր ոչ գիտէի չար ,
այլ իրը բարւոյ հաւանեցայ || : Պռաջի առնէ այժմ
մարգարէն և զապիրատութիւն հալածչաց իւրոց , և
ասէ :

ԺԱՅ. առողջին ինչ չար ժոխանակ ընդ բարւոյ , անծա-
ռանդէլ զանին իմ խորհեցան յորդոց ՚ի ճարդ-
կանէ :

շանար է ապերախտութիւն , և ծանրագոյն ևս եթէ
յաւելցի հատուցումն չարի ընդդէմ երախտեաց . և
կարծեւմ թէ ոչ գտանի ոք՝ որ ոչ գժղմնեսցի ընդ
այս . զի է ընդդէմ բնութեան . արդ յայտ է թէ բա-
զում երախտիս , կամ բազում բարիս եցոց դաւիթ
առ սաւող և առ զօրս նորա , և առ համօրէն խրահէլ.
իսկ նոքա փոխանակ երախտեաց նորա հալածեցին
զնա , և չարիս ևս խորհեցան զնմանէ . վասն այսորիկ
իսկ ասէ :

առողջին ինչ չար ժոխանակ ընդ բարւոյ : Խամի ասել .
զայնչափ բարիս ցուցի առ հալածիս իմ . և նոքա
այժմ չարիս ցուցին ինձ . յորժամ պաշարեալ էին ՚ի
փղտացւոց և ընկճեալ կային ՚ի նոցանել սպառնա-
լեօք գողիաթու , և չէր ոք որ ապրեցուցանէր , ես
ելի ընդ առաջ . հարի զգողիաթ , և փրկեցի զիարայէլ
հանդերձ թագաւորաւն . մելեցի և բազում մարտո
վասն նոցա ընդդէմ թշնամեաց նոցին . ցուցի և ըզ-
ուեր սասատիկ առ նոսա յամենայնի . և ոչ յիմիք եր-
բէք պակասեցայ յօգնութիւն հասանելոյ նոցա . իսկ
նոքա փոխանակ այսը ամենայնի հատուցին ինձ չար .
բազմապատիկ օրինակաւ նախատեցին զիս . սուտ
վկայեցին զինէն . հալածեցին զիս . և վտարանդի ա-
րարին զանձն իմ . զրկեցին զիս յազգականաց և ՚ի

ծանօթից խոյ . հեռացուցին զիս 'ի տանէ և յերկրէ իմմէ . և աշա սոքիմբք ըստ ամենայնի ապերախտ գտան , և զշափ ապերախտութեան չարաջար լցին :

Այլ զիտելի է , զի ըստ են տեսակք ապերախտութեան , առաջինն է մոռանալ զերախտին կամ ոչ յիշել զբարերարութին . երկրորդն է ոչ հատուցանել երախտիս երախտաւորին . երրորդն է չարիս հատուցանել փոխանակ բարւոյ . զոր ցուցանի առաջիկայ բանդ չորրորդն է՝ յոթամ ոք ընկալեալ բարերարութին վարի՝ չարիս հատուցանել բարերարովին . որպիսի եղեն սաւուզեանք , որք նորա բարերարութին կամին սպանանել զնա և անժառանգ կացուցանել .

և առ այս յարէ զինի և ասէ :

Անժառանգէլ շահնի իմ խորհեցան յորդուոյ 'ի նաբդիանէ : Անժառանգէլն՝ է անժառանգ կացուցանել , իսկ բառդ անժառանգ առեալ լինի երակի . մի՛ փոխանակ այնք՝ որ ոչ ժառանգէալ լինի . երկրորդ՝ փոխանակ այնպ որ ոչ ունի զժառանգէ . Երրորդ՝ փոխանակ այնը որ ոչ ունի զժառանգէ . Բայտ առաջնոյն կամի ասել . թշնամիք իմ խորհուրդ արարին կացուցանել զիս անժառանգէլի 'ի մարդկանէ . այսինքն այնպէս առնել ընդ իս , զի ոչ ևս եղէց ժառանգէալ 'ի մարդկանէ . կամ թէ մի ևս ժառանգէացեն զիս մարդիկ . որ է ասել կամեցան բառնալ զիս 'ի միջյ մարդկան . և այս կամ աքսորանաօք , զի մի ևս վարեւսցին ընդ իս որդիք մարդկան 'ի քաղաքի , այլ որդիք գաղանաց 'ի գաշտի . և կամ մահուամբ . զի մի ընաւ ոք այսուհետեւ տես տեսցէ զիս և վարեսցի ընդ իս .

Բայտ երկրորդին կամի ասել . խորհեցան առնել զիս 'ի մէջ մարդկան ոչ ժառանգօղ իրի իմիք , ոչ թագաւորութեանս , ոչ հայրենեացս , ոչ ազգականացս , ոչ հանգատեան , և ոչ իսկ կենաց . կամ որ նոյն է՝ կամեցան կորուսանել զամենայն ինչս իմ . ևս և ըզկեանս իմ :

Բայտ երրորդին կամի ասել , խորհեցան ցուցանել զիս այնպիսի , որ ոչ ունի զօք յորդւոյ մարդկան ժառանգ . և այսու իմացեալ լինի կամ ըսնել զորդի , որ ժառանգիցէ լտեղի հօր , և կամ ըսնել զոք մերձաւոր՝ որ ժառանգօղ գտյի ստացուածոց նորա , և

ըստ այսմ միտ բանին վերածի յայս , թէ կամեցան
փութով կորուսանել զիս , զի մի ունիցիմ ժառանգ ,
Վայ բանք յայտ է թէ տան և ՚ի բերանոյն քոի . ըստ
որում յետ այնչափ բարեաց՝ զորս եցոյց և ցուցանել
կամեցաւ առ հրեայս ևս և առ այլս , փոխանակ այնք
ամենայնի հատուցին նմա չար . և խորհեցան անժառ
անդ կացուցանել զնա յամենայնի . և մասնաւորա-
պէս ՚ի կամիլ նոցա սպանանել զնա ասելով . * սա է
,, ժառանգն , եկացք սպանցուք զոս || . (մարկ . ժը . 7 .)
Օսոյն գործեն և այլ ու և իցէ մեղաւորք . որք բա-
զում բարիս տեսեալ ՚ի քոն՝ փոխանակ այնր չար հա-
տուցանեն նմա . Ը ամիրամ թագուհի բազում բա-
րիս ընկալաւ ՚ի նինսուէ , ևս և զառօրեայ թագաւո-
րութիւն , և նովին բարեաւ սպան զնա . ուստի ա-
սի . * շամիրամ սիրով նինսոի սպան զնինոս || . սոյն-
պէս առնեն և չար քրիստոնեայք . այլ արարք սոցա
ծանր են քան զնորա և քան զիազահանուաց , ըստ
Երկուց . մի զի նոքա յանգէտո գործէին . ըստ որում
վկայեաց քոն՝ թէ ոչ զիտեն զինչ գործեն . իսկ սո-
քա զիտեն զոր գործեն . որոյ աղագու նոքա արժա-
նացան մաղթանաց թողութեան . իսկ սոքա կասկա-
ծելի են . Եթէ վասն նոցա աղաչեաց քո ասելով .
* հայր թողա՝ զի ոչ զիտեն զինչ գործեն || .
(զուկ . իգ . 34 .) զինչ ունի ասել վու սոցա . հայր մի
թողուր սոցա , զի զիտեն զինչ գործեն . Երկրորդ՝ զի
քու կամօք մատնեաց զինքն ՚ի ձեռս խացահանուաց
և կամելով մեռաւ . իսկ ՚ի ձեռս սոցա մատնի ակա-
մայ , և մեռանի ընդդէմ կամաց իւրոց . ուստի ա-
սի . * քու խացեցաւ կամաւ . այժմ խաչի ակամայ || .
և յայտ է թէ դառն է այս քան զայն , Կամբ . Հո-
գեորապէս առեալ չար հատուցանողօք իմանոյ ըդ-
առափանայ և զդեւս նորա , մեք ասէ ոչ զրկեցաք զնոսա .
բարի էաք . այլ նոքա վասն բարի լինելոյ մեք հատուցին
մեղ չարիս : ՚Կամձեալ լամբ . զբառդ անձաւանդէլ
զբականապէս ընթեանու այսինքն է ժառանգել . և
ասէ . դեք հաւանեցուցին զմեղ ժառանգել զյաւիտե-
նական տանջանա . և ինքեանք ևս իրբեւ զիւրեանցին
կամին ժառանգել զմեղ ՚ի գժոխս . Վայ այս վեր-
ծանութիւն ոչ համաձայնի իմիք թարգմանութեան ,

տե՛ս՝ 'ի համեմատութիւնսն :

Աստանօր բառս ընդ՝ որ յարի՝ 'ի բառդ դժոխակ, իբր մի նախագրութիւն վարի . և նոյն էր թէ ասեր, փոխանակ սիրոյ կամ՝ 'ի տեղի սիրոյ իմաց հասուցին չար . որ պէս տեսանի յայլ թարգմանութիւն : Իսկ բառդ զանցն դնի աստ փոխանակ բառիդ չէս . որպէս թէ ասեր . խորհեցան անժառանգել զիս : Այլ բառս ՚ի յարդիանէ՝ դնի փոխանակ յատկացուցի . որպէս թէ ասեր . թշնամիք իմ կամեցան բառնալ զիս ՚ի միջյ որդւոց մարդկան : Այլ թէ ՚ի հասուցանսել նոցա զայսպիսի չար՝ ինքն դաւիթ զինչ զործէր, յայտ առնէ ՚ի յաջորդ համարն ասելով :

Ժը . **Դ**ս ՚ի նեղել նոցա ժուրչ զգենուակ . խռնարհ առնելի պահօք զանցն էմ . և աղօթս էմ՝ ծոց էմ դարձին : Այս է իբրև կնիք բարեպաշտ անձին, ՚ի հալածին՝ յաղօթս ապաստանիլ . զի այս ոչ միայն գեղ է նեղելոյն, և միջնորդ ազատելոյ, այլև զործ մեծի կատարելութեան՝ փոխանակ չարիս հասուցանսելոյ՝ աղօթել և բարիս մազթել վասն հալածացն . բատ որում յորդորէ և տրն մեր, յասելն . * աղօթս արարելք ՚ի վերայ այնոցիկ՝ որ Ակենն զձեղ և հալածեն : (մատ . ե . 44 .) կամթէ * յարի արարելք ատելեաց ձերոց . օրչնեցէք զանիծիս ձեր . աղօթս արարելք ՚ի վերայ նեղաց ձերոց : (զուկ . դ . 27 .) Օ սոյն զայս և մարգարեն վկայէ արարեալ յիւրմէ, վասն որց ասէ :

Ես ՚ի նեղել նոցա ժուրչ զգենուակ . խռնարհ առնելի պահօք զանցն էմ : Աչ ՚ի զէնս ապաւինի դաւիթ ընդդէմ թշնամեաց իւրոց, այլ յաղօթս ՚ի ձեան քրձազգեցութեան և պահոց, յորմէ ուսաւ և եղեկիա ազբայ . զի ՚ի յոխորտալ արքային բարելացոց ՚ի վերայ նորաքուրձ զգեցեալ ել՝ ՚ի տաճարն աղօթել . ուր ասէ գէորդ վարդապետ (՚ի մեկն . եայ .) * տե՛ս զպատես, բազմ . ոչ զէնս կազմէ, ոչ մեքենայս զպարսպօքն, ոչ հըեշտակս առ ազգս ուրեք առաքէ . այլ յերկինս արձակեր զաղօթսն (քրձազգեցաց լինելով) : զուցէ և ՚ի պահս խոնարհէլով . զի երկոքին սորա՝ այս ինքն քուրձ զգենուլ և պահս պահսէլ ընդունելի առ

նեն զաղօթս առաջի այ . որպէս յայտ է՝ 'ի նինուեացիս . որք * քարոզեցին պահս , և քուրձ զգեցան . . . , և ասեն՝ ո զիտէ ապաշաւեսցէ ած , և դարձի ՚ի բարկութենէ սրտմառութե իւրոյ . և մի կորիցուք . . . (յովն . դ . 5 .) որպէս թէ , ասէին . յաղաչելմեր քրձովք և պահօք , թերեւս լուիցէ ած աղօթից մերոց , և ողորմեսցի ՚ի վերայ մեր : Վանզի քրձազգեցութիւն և պահէեցողութիւն իւրեւ երկու թերք , որք վերացուցանեն զաղօթս մեր առ ած . որպիսի են և յատուկ ձնչումն մարմնոյ և մեռուցումն ախտից . որովք վայելանան աղօթք : Կկանք և գոհարք պատուական են , բայց յեռեալք ընդ ոսկի՝ վայելու ևս երեխն . սոյնպէս և աղօթք և խոկմունք մեծ իմն են , բայց յեռեալ ընդ պահս՝ չքեղանան : Կեղեցիկ է լոյս , բայց խառնեալ ընդ ստուերի՝ որպէս ՚ի ծիածանն , գեղեցկագոյն երեխ . սոյնպէս և աղօթք խառնեալ ընդ պահս : Վքանչելի է փառք ածութեանն . բայց միաւորեալ ընդ մարդկութե՛ զարմացոյց զամնն . սոյնպէս և աղօթք միաւորեալ ընդ պահոց զարմացուցանէ զհրեշտակս . և բարձրանայ առ նոսս ՚ի վեր յերկինս . քանզի ՚ի նուաճիլ թանձրութեան մարմնոյ թեթեանայ հոգին , և զօրանայ ՚ի թռչիլ . իսկ եթէ զիրասցի մարմինն , հոգին ոչ զօրէ վերանալ . որպէս և տեսանեմք՝ զի յորժամ զիրանան թռչունք , ոչ թռչին ՚ի բարձունս . իսկ որք առատ ըմպէն զջուր՝ անհամ պտուղս տան . իսկ որք պահէն՝ այսինքն սակաւ ըմպէն՝ համեղապտուղ են : Եւ զի կամէր մարդարէն պատուական ընծայել այ զաղօթս իւր և հաճոյ նմա , վասն իւր և վասն թշնամաց իւրոց , նորին վասն խառներ զայն ընդ պահս , սմին իրի ասէ . թէ յօրժամ թշնամիք իմ հալածէին զիս , և նեղէին , և խորհեին կորուսանել զիս՝ ես ոչ խորհեի չար զնոցանէ , այլ խոնարհէի և առ ած զիմէի աղօթիւք . և առ ընդունելի առնելց զաղօթս իմ՝ արտաքոյ և ՚ի ներքոյ ձնչէի զմարմինս իմ . զի արտաքուստ ՚ի վերայ մարմնոյ քուրձ զգենսուի , այսինքն խարազն գործեալ ՚ի մազէ այծից . և ՚ի ներքուստ ՚ի մարմնի պահս պահէի որով և նուազի ՚ի

յուժոյ . յոր միտս յաւելու ասել : ԽԵՆԱՐԴ առնելի : Խակ բառդ խոնարհ առնել՝ երրակի կարէ նշանակել ասա . նախ փոխանակ նուածելոց զանձն . և երեխ այս համաձայն բանին , և բնազրի երբ" . որպէս թէ եղեալ էր . քրծազգեցութք և պահեցողութք ձնչէի և նուածեխ զիս : Խըրկորդ փոխանակ խոնարհելոց հոգւով . վասն զի 'ի խոնարհի մարմնոյն քրծազգեցութք և պահօք՝ լինի խոնարհի և հոգւոյն . զի մարմինն է իրբեւ ստուեր հոգւոյն . ապա որպէս 'ի խոնարհի մարդոյ արտաքուստ՝ խոնարհի և ստուեր նորա , և որպէս 'ի խոնարհի ստուերի մարդոյ տեսանի խոնարհի և մարդոյ , սոյնապէս իման և զիսնարհելոց հոգւոյն և մարմնոյն՝ 'ի պարկեշտանալ միոյն պարկեշտանայ և միւսն : Խըրկորդ՝ փոխանակ խոնարհութք ընդունելի առնելոց զաղօթման . վասն զի * առջաջք խոնարհին ելանէ 'ի բարձունա . . . և ոչ ոչ դարձցի ունայն , մինչև բարձրեալն հաճեսցի . (սիրաք . Ե . 21 :) ՚ Բաննզի աղօթքն խոնարհութք արարեալ ոչ երբեք անտես լինի առաջի այ . այլ միշտ լուելի . որով և տուեալ լինի այն ինչ որ իննզրի . և կամ 'ի տեղի այնը՝ այլ ինչ բարի :

Վստանօր եթէ զերբայդ 'ի նեղէլ առցի կրաւորաբար , փոխանակ բառիս 'ի նեղիլ կամ 'ի վշտանալ , միտբանին լինի այս , 'ի տառապիլ նոցա՝ ցաւակից լինէի նոցա և սգակից . և աղօթէի ևս վասն նոցա : Կամ թէ յորժամ տառապէին նոքա 'ի հալածել զիս՝ ես աղօթէի վասն նոցա . և ակն ունիմ՝ թէ աղօթք իմ օգտեսցեն նոցա , կամ գոնէ ինձ . և առ այս յարէ և ասէ :

Եւ աղօթէ իմ 'ի ծոյ իմ դաշտուն : Վարզարէն 'ի հալածին՝ որպէս յայտ է 'ի նախազրելոցդ վասն երկուց աղօթէր առ ած . մի՝ վասն իւր . որպէս զի պաշտպան ունիցի ինքեան զած . և այնու ազատեսցի 'ի ձեռաց հալածչաց իւրոց : Խըրկորդ՝ վասն նոցին իսկ հալածչացն . զի զգաստացուսցէ զնոսա տէր , և ցուցցէ նոցա զողովնութիւն իւր : Վքդ ըստ երկուցն ըստ այսոցիկ ևս ոչ եղեն 'ի զուր աղօթք նորա . ըստ առաջնոյն անտարակոյս յուսացր զտանել զպաշտպանութիւն այ . որով և աղօթք նորա դառնային 'ի ծոյ նորա , այս .

ինքն կատարելին ՚ի նա» :

Իստ երկրպարդին ևս անտարակոյս յուսացը՝ թէ ազօթք իւր մի ելցեն գատարկ ։ զի թէ և այն ազօթք ոչ օգտէին հալածաց իւրոց ։ սակայն ած ոչ թողոյր զայն յինքեան անօգուտ ։ իբր զի որինչ օգուտ լինելոց էր անտի առ հալածիչն ։ յանընդունակ գտանիլ նոցա՝ զայն օգուտ գարձուցանէր ած առ ազօթողն ։ յոր միտս ասաց նորն մեր ցառաքեալն ։ (դկ ։ ժ ։ 6 .)

* Հօր տուն մատանիցէք ։ նախ ասասջիթ ։ թէ ողջոյն առանս այսմիկ ։ և եթէ իցէ անդ որդի ողջունի ։ հան զիցէ ՚ի վերայ նորա ողջոյնն ձեր ։ ապա թէ ոչ ՚ի ձեզ զարձցի ։ Հայս միտ զնի և ասու այս բան ։ և աղջետ էմ ՚ի ծոց էմ դաշն ։ որպէս թէ ասէր ։ եթէ թէ աղջետ իմ ոչ ժողովեսցեն զարգասիս ազօթից իմոց ։ այն արդասիք ժողովեսցին ՚ի ծոց իմ և ես վայելեցից զայնս ։ Խակ պատճառ ոչ ժողովելոյ նոցա և ոչ շահեց այն էր զի ոչ կամմէին ։ վասն զի որպէս ասէ բարսեղ վարդապէտ ։ (մարկ ։ ժ ։ 6 .) ազօթք այլոց օգնեն մեզ ։ եթէ մեք ևս կամեսցուք ։ ապա թէ ոչ ՚ի ծոց ազօթողին դառնան :

Ոչ ասէ առ իս զարձցին ։ կամ յիս կատարեսցին ։ այլ թէ ՚ի ծոց էմ դաշն ։ և այս ըստ ձւոյ խելամութեան ։ ըստ որոյ անուն մասին զնի փոխանակ անուան բոլորին ։ և զի ծոցն է մասն ։ զնի փոխանակ բոլոր անձին ։ յոր միտս ասի ։ (եսայ ։ կէ ։ 6 .) * և հասուցից ՚ի ծոցս նոցա ։ այսինքն ՚ի նոսա ։ Խակ պատճառ այսպէս զնելոյն է ։ զի ցուցցէ թէ որպէս պատուղքն ՚ի ժողովին ՚ի զոդս քաղին կամ ՚ի ծոցս ։ և կալեալ լինին ձեռամբք առ ծոցով ։ սոյնպէս և ՚ի կատարիլ ազօթից ։ այն իրք՝ որ իննդրին ազօթիւք իբրև պատուղք ժողովին առ ազօթողն ։ և իբրև թէ ձեռամբք նորա կալեալ լինին ՚ի նմա :

Կ յս ոչ բանի կարէ յայլ միտս ևս վերածիլ ։ ՚ի ցուցանել զկրկնութիւն և զհանապաղորդութի ազօթից ։ որպէս թէ ասէր ։ ոչ միանդամ ևեթ լիցին յինէն ազօթք առ ած վասն թէ նաև ապա իմոց ։ այլ կըկնեսցին բազում անդամ ՚ի ծոցի իմում ։ այսինքն ՚ի հոգւոջս ։ Խակ լամբ ։ զնէ ։ թէ յորժամ անտես արարեալ ազօթքն կատարին ։ անդրէն դառնան այն ա-

զօթք՝ ի կատարողն» :

Վարթէ և այլազգ ևս մեկնել զայս բան՝ ի ցուցանել
թէ ըստ հանդամանաց աղօթիցն լինի ընդունել
մարդց զհատուցումն , այսինքն եթէ չար մաղթեալ
իցէ վասն թշնամեաց , ունի ընդունել զար . և եթէ
զբարի՝ բարի . որպէս թէ եղեալ էր . որովհ հոգւով ,
կամ որով յօժարութք աղօթեցի վասն թշնամեաց
իմոց՝ նովին հատուցմամբ հատուցի ՚ի ծոց իմ . և զի
ևս վասն բարւոյ նոցա աղօթէի , ապա բարի հատու-
ցի և ինձ :

Դարոյապէս և ըստ յարմարական մեկնութէն երբակի
մարթէ և աղօթից դառնալ՝ ի ծոց աղօթովին . նախ՝
ըստ ժողովելոյ ՚ի ծոց մոտաց զցրուամն խորհրդոց յա-
ղօթեն . որպէս թէ եղեալ էր . յաղօթել իմում
եթէ լինէր խորհրդոց ցրուիլ , կամ որ նոյն է՝ ՚ի տա-
տանիլ աղօթիցս աստ և անդ , ջանայի ժողովել
զնոյն ՚ի ծոց իմ , այսինքն յիս : Դրա և գու այս-
պէս . ցնդեցար յաղօթսդ , ժողովեալ զցնդումնդ ՚ի
ծոց քո . ՚ի ձեռս քո է ժողովեն . զի ցրուեան ոչ է
նիւթական , առ որոյ ժողովումն պիտոյ իցէ աշխա-
տիլ . իմացական իմն է , միով ձեռամբ ժողովի : ԴԺ
ծանիր ևս՝ զի եթէ յետ բարւոք աղօթելոյդ պա-
հէիր զզգաստութիւն մոտացդ . ՚ի յաղօթելոյ զկնի .
՚ի ծոց քո դառնայր զզաստութիւն աղօթիցդ : Դիւ-
րաւ գտանի՝ որ ոչ թողանի : Խակ գու յելանելդ յա-
ղօթից ցնդիս լեզուազարութք , բամբասանօք , կը-
ռուալք , կամակորութք , և ընդունայն հոգովք . ապա՝ ի
մատչիդ յաղօթս եթէ տեսանես զբեզ ցնդեալ՝ մի
զանդատիր՝ թէ ոչ կարեմ բարւոք աղօթել , կամ
զզաստութք . այլ զանդատեամ՝ թէ ընդէր լեզուազա-
րիմ , ցնդէր՝ ՚ի բամբասանս բերիմ . ընդէր կամակո-
րութք մաշիմ . և ՚ի խորհիլդ այսպէս , և ՚ի խոնարհիլդ՝
՚ի ծոց քո դարձի աղօթք քո : Դթէ յաղօթելոյ տե-
սանես զբեզ ցնդմամբ յետս մնացեալ . արիացիր ,
ընթա , և հասանես ՚ի նպատակ աղօթիցդ . և յայն-
ժամ զառնան աղօթք քո ՚ի քեզ :

Երկրորդ՝ ըստ քաղելոյ զպտուղ աղօթից . և մանա-
ւանդ խոկմանց և մոտածուեց . որպէս թէ եղեալ էր .
՚ի կալս իմ . ՚ի մոտաւորական աղօթս՝ խոկայի զորս

արժան էր խոկալ . և այնու զգաստացեալ ուղղեի
զիս . որով և ժողովէի իս զօգուտ աղօթից . և այ-
սու աղօթք իմ գառնայր ՚ի ծոց հոգւոյ ինոյ : Ի մատ-
չիլդ ՚ի մոտաւորական աղօթմ քննեալ զբեզ . և ինդ-
րեա ՚ի քէն , զինչ առնեմ , յինչ զբաղիմ , զինչ խօ-
սիմ , որպէս վարիմ , զիարդ կառավարեմ զտուն իմ :
Եւ ՚ի գտանելդ ՚ի սոսա զպակասութիւն՝ զդջա և ա-
ռաջազրեա և ՚ի ծոց քո ժողովեամ զարդասիս . այս-
ինքն թէ զործով ուղղեամ : Հարց գարձեալ ցանձն
քո . յայտչափ ամս զինչ շահեցայ յընկերութէ քրիս-
տոնի ից (այսինքն յօրթախութէ նոցա) . զինչ արդեօք
ուսայ ՚ի գպրաստան սուրբ եկեղեցւոյ : Վա այս քննու-
թին սուրբ արհեստ ոչ պահանջի . այլ զգաստութիւն :
Եւ ՚ի տեսանելդ զբեզ պակասեալ ՚ի սոսին , ստրջա-
ցիր ՚ի քեզ . և ամաշէլով ասա , զինչ արդեօք լինիցի
ինձ , երբ ուղղեցից զիւնան իմ , և հաճոյ գտայց ա-
ռաջի քո տէր ած իմ : Յանոնել քո այսպէս յաղօթսդ ,
գարձցին աղօթք քո ՚ի ծոց քո . և զօգուտ իւրեանց
ցուցցեն քեզ :

Արբորդ՝ ըստ իմաստանանալց յաղօթս , կամ ըստ ուստա-
նելց և վարժելց ՚ի նոյն . որպէս թէ եղեալ էր , յա-
ղօթել իմում զառաջինն առանց դիտելց աղօթէի .
և ՚ի ջանալ իմում գիտութք աղօթէլ , և ուսանիլ
զնոյն զոր աղօթէի՝ առ իս գարձան աղօթք իմ . որ
է ասել , աղօթելով ուսայ աղօթել . զի որպէս եր-
գելով ուսանիմք երգել , սոյնպէս աղօթելով ուսա-
նիմք աղօթել . սոսկ լսելով կամ ընթեռնով թէ
այսպէս պարտ է աղօթէլ՝ ոչ ուսանիմք աղօթել .
այլ աղօթելով . ասկա թէ ոչ ոչ հասկանամք ինչ
յաղօթել մեր , որպէս թէ արաբացւոց լեզու լինէր :
Ուրեւս դու ուսեալ իցես զաղօթս , այլ ոչինչ ըզ-
գաս յաղօթսդ , մինչ թուիլ քեզ այնմ գիտութիւն
մաթէմաթիգական , վասն զի դու կամ լսելով ես
ուսեալ և ընթերցմանք , և կամ չես զբեզ կրթեալ
յաղօթս՝ որպէս արժանն է . այլ միայն մարմնով
կալ յաղօթս . այդ ոչ է աղօթել , այլ կամ զու-
սումն աղօթից լսել , և կամ զբանս աղօթից ա-
սել : Վա բարւոք աղօթել պիտոյ է բռնադատել
զանձն , ժողովելով զիսորհուրդս մտաց , և խոնարհէ-

լով, ևս և ըստ մարմնոյ բարեպէս կալով, զի զգաստացի հոգի. արքայութիւն աղօթից բանադատի, և բռունք յափշտակեն զնո. (մատ . ժամ . 12.) մանաւանդ ՚ի ժամանել չնորհաց . ըստ որում ասի թէ յաւուրց յովհաննու բանադատի, այսինքն ՚ի նապատելոյ չնորհաց, զի յովհաննես չնորհք լի : Այս բռնադատութիւն առաւել ընդունելի է այ, քան զբունադատութիւն մարմնոյ . որով աղօթք մեր ՚ի մեզ դառնան, և զօգուտ իւրեանց մեզ հաղորդեն . Եւ ըստ այսմ քրձազգեցութիւն և պահէցողութիւն լիսին իրը նիւթական պատճառ հոգեւոր կենաց, իսկ ազօթք ՚ի կողմաննե մերմէ իրը տեսական պատճառ . մին իրը նիւթ կապարեայ ընդ հայելեաւ, և միւսն իրը ապակի : Եւ զորօրինակ առանց կապարեայ նիւթոյ ոչ յօրինի հայելի, սոյնպէս և առանց պահէցողութեն կեանք հոգեւոր, և աղօթք ընդունելի . վասն որոյ առէ, քուրձ զգենլով և ՚ի պահօ խոնարհելով աղօթք իմ ՚ի ծոց իմ գարձան :

Խորհրդաբար այս բանք ասին և ՚ի դիմաց որդւոյն այ . զի ՚ի նեղել կամ ՚ի վշտացուցանել զնա մարդկան՝ իսո նարհեցաւ վասն նոցաւ, և մարմին զգեցեալ իրը և ըզքուրձ այծեայ, ըստ որում յայծիս էին գարձեալ մարդիկ, միջնորդ եղել փրկութեան նոցաւ, և միջնորդութիւն իւր գարձաւ ՚ի ծոց իւր . զի նովաւ ընկալաւ զազգ մարդկան յինքն և յեկեղեցի սուրբ : Եւ ևս յորժամ ետես՝ թէ մարդիկ նեղեալ էին՝ սգակից եղել նոյա պահօք և ախտատանօք . և ապրեցոյց զնու, և արար զնոտա իւր : Եւ զայտաննե խօսի մարդարեն հայելով ՚ի թշնամիս՝ յասելն :

ԺԴ. Յուես զէշբայր և զընէէր՝ այսպէս համոյ լինէէ . ու ուլս սժառար և ուրառոմ, այսպէս խռարհ առնելի : Առ ՚ի զիջուցանել զիսուվութիւն մասց թշնամոյն, և զատելութիւն կամացն, ևս և զկասալութի սրտի, և զիօրոխոտումն բանի, ուղիղ ձանապարհ երեխ քաղցրութեն վարիլ ընդ նմա : Եւ նախ՝ առ ՚ի զիջուցանել զիսուվութիւն մտացն՝ պատշաճ թուի իրը հարազատ եղայր՝ խօսել ընդ նմա : Երկրորդ առ ՚ի զիջուցանել զատելութիւն կամացն՝ իրը սիրելի բարեկամ

հաճոյ ընծայել զինքն նմա : Երբորդ՝ առ ՚ի զիջուցանել զկատագութիւն սրտի իրբեւ սգաղցեաց ։ և իրբեւ տխուր կալ առաջի նորա : Չորրորդ՝ առ ՚ի զիջուցանել զիրոխտումն բանից նորա , ՚ի խոնարհ կերպար բանս ցուցանել զինքն նմա : Եւ զի զայս ամ արարդաւիթ , վասն այնորիկ առէ :

Ուսուես չեղբայր և պահէն Շահում համար լինէն . ուսուես սփառը և արդում , այսուես խռնարհ առնէն : Կամի առել . ՚ի նեղել զիս թշնամեաց իմոց՝ ոչ միայն աղօթէի վասն նոյա առ ած , այլ և իրբեւ եղբայր ընդ եղբօր ընտանեկան սիրով վարեի ընդ նոսա . և իրբեւ ընկեր , այսինքն սիրելի բարեկամ ընդ բարեկամի սիրալիր բանիւք իրաւի ընդ նոսա , զի հաճեցուցից զնոսա . բայց այսուցինչ շահեցայ , վասն որոյ և զայլ ձանապարհ կաւայ . իրը զի որպէս լայ սգաւորն ՚ի վերայ մեռելոյ , այսպէս առնէի և ես ՚ի վերայ նոյա և ՚ի վերայ գործոց նոցին . և ՚ի տրտմիլ նոյա տրտմէի և ես . և ՚ի խօսիլ նոյա զբանս դաժանս՝ խոնարհեցուցանէի զիս և զգործս իմ առաջի նոյա . և սակայն նաև այսուոչին հաճել զմիտս նոյա :

Հազումք զհակառակն այսր գործեն . փոխանակ շահելոյ զսիրտ եղբօրն՝ բեկանէն և հատանեն . ՚ի վիրաւորել պատրաստ են , ՚ի բժշկել հեղդ և խիստ . * որուի պէս թէ ոք հատանել զիւր անդամն ոչ հեղգայ . ՚ի խակ ՚ի միասին կցիլ հեղգայ || . առեւ բարսեղ վարդապետ . (՚ի մարկ . ժող .) այսպիսի է՝ որ ոչ հեղգայ քակտիլ յեղբօրէ , և պժգայ հաշտիլ ընդ նմա : Ուրա առաւել պարտ էր փութալ ՚ի նորոգումն քան յեղծումն . և այս վասն երկուց . մի՛ զի այս է պայման հաշտելոյ ընդ այ . և առանց այսր ոչ է հնար գտանել զթողութիւն , ոչ սղորմնութք , և ոչ պատարագօք . * եթէ մաստուցանիցես զպատարագ քո ՚ի վերայ սեւ , զանոյ . և անդ յիշեսցես եթէ եղբայր քո ունի ինչ ՚ի խէթ զբէն , թող զպատարագն քո առաջի սեղանյն . և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում . և առաջ պատեկալ մաստուցիր զպատարագն քո . (մատ . է . 23 . 24 .) Եթէ սասկ վասն խէթ ունելոյ եղբօրն ուարտ է թողուլ զպատարագն առ ՚ի հաշտիլ ընդ այ , քանի ևս եթէ գու իցես արկեալ խէթ ՚ի սիրտ նորա , և

եղծեալ զսէր նորուն . զայտանիշ բազում ինչ խօսի տրն մեր յաւետարանի . (մատ . դ . 14 . 13 , և ժը . 35 , և մարկ . ժա . 25 . 26 , և է .)

Երկրորդ՝ զի այս է պայման սիրելոյ զած . զի որ առելութք կայ ընդ ընկերին՝ ոչ կարէ կալ սիրով ընդ այ . իսկ որ սիրով վարի ընդ ընկերին՝ ի նման է սէրն այ . զի որպէս ասէ սարգիս չնորհալի * սիրելն զըն . և կերն սիրել զած է . (ի մեկն . առ . պետ . դ . 8 . ձառ . ը .) Ուստի ասէ յովշաննեւ . * զայս պատուէր ու ունիմք առ ՚ի նմանէ՝ զի որ սիրէ զած՝ սիրէ նաև զեղբայր իւր . (առ . յովշ . դ . 21 , և ՚ի համարն 41 .) ասէ . * սիրելիք , եթէ ած այնպէս սիրեաց զմեզ , առ պա և մեք պարտիմք զմիմեանս սիրել . զի սէրն այ է ընդ սիրոյ ընկերին . օղ ընդ օղ միացեալ ոչ բաժանին ՚ի միմեանց առանց խորտակելոյ միոյն . Ովին իրի յորժամհարցաւ տրն վասն միոյ պատուիրանի , նա միացցց ընմ և զսէր եղբօրն . (մատ . իթ . 39 .) Այս շափ մեծ համարի տր զընկերդ , մինչև իւր համարի զինսա նորին . և գիմազրել զանձն վասն նորա , և ասէլ իսկ՝ ոչ կարէ վիրաւորել զնա՝ եթէ ոչ նախ զիս վիրաւորեսցէ . զի յայս հայի այն զոր ասէ բէրանով զաքարեայ . (դ . 8 .) * որ մերձենայ ՚ի ձեզ՝ որպէս որ ընդհարկանիցի ընդ բիր ական իմոյ . Ոյնապէս և զօգուտ ընկերին՝ իւր համարի . ուստի զօր ինչ և առնեմք ընկերին , և զիարդ վարիմք ընդ նմա , ինքն առնու , և ինքեան տայ . որպէս և ինքն վկայեաց ասելով . * որովշետև արարիք միում յեղբարցս յայսա , ցիկ փաքրկանց ինձ արարիք . (մատ . իե . 40 . և 45 .) և թէ * օրովշետև ոչ արարիք միում ՚ի փաքր . կանցս յայսցանի , և ոչ ինձ արարիք .

Եթէ կամիս՝ թէ ած իւր համարեսցի զբարին զոր առնես ընկերին , քոյդ համարեա զնորան . զի որպէս ասէ սարգիս չնորհալի (՚ի մեկն . առ . պետ . առ . 22 . ձառ . դ .) օրէնք սիրոյ է * իւր վարկանիլ զընկերին զաւ . ըիսն և զբարին .

Ուերես ատելի երեխ քեզ ընկերդ՝ ևս և անարդ և անպիտան . զու մի հայիր յանարդութիւն նորա , այլ ՚ի փոխանակութիւն այ և իբր ՚ի պատկեր նորին , զի ըստ նախազըելցոյ զոր ընկերիդ առնես՝ այ առնես ,

և զոր ընկերիդ տաս , այ տաս : | թէ փոխառու ոք զբեսցէ առ պարտապանն՝ թէ զոր տալոց ես ինձ տուք այնամումեք . 'ի տան տուեալ լինի փոխառուին . սոյնպէս և ած զրէ առ մեզ տալ սէր ընկերին ասելով . զոր տաս նմա՝ ինձ տուեալ համարիմ : | Վ կարեմք մեք վճարելայ , ած լրմայագրութք (այսինքն փօւժմացիւ կամ գամպիալիւ) հրամայեաց տալ ընկերին . և 'ի տան՝ այ վճարեմք : | սկ եթէ զոր ոչ կամբցիս վճարել համարեալ լինիս մնանկ , (այսինքն միւհլիւզ , կամ Փալիս .) աստ եթէ հատուցես , պատուիս առաջի հրեշտակաց : | Այս ամ բովանդակի յառաջիկայ բանդ , զոր ասէ . * որպէս զեղբայր և ողնկեր այնպէս հաճոյ լինէի || և ն .

| Այ զիսելի է , զի յայս բան երեխ մթութիւն ինչ շարադրութեան , մանաւանդ 'ի բառսդ՝ յորս ասի . * այնպէս հաճոյ լինէի || . զի յայս շարադրութիւն ըստ այսմ կարդի առեալ ոչ երեխ յարմար բանին . քանզի մարգարէն ոչ կամի ցուցանել թէ հաճոյ լեալ է կամ հաճոյ լինէր , այլ թէ հաճոյ լինէլ կամէր . և կամ թէ հաճոյ էր ինքեան այնպէս վարիլ . վասն որոյ և այս շարադրութիւն պարզի այնպէս , իբրեւ եղբայր և ընկեր փափաքէի հաճոյ լինէլ նոցա . հաճոյ էր ինձ լինէլ ընդ նոսա իբրեւ եղբայր և ընկեր , և իբր այնպիսի վարելով ընդ նոսա հաճէլի լինէլ նոցա , թէպէտ և նոքա ոչ հաճէին : | Ոյնպէս և յասելն . այնպէս իսաբէդ , բառդ առնէի՝ գնի կրաւորաբառ՝ փոխանակ բառիս լինէի . որպէս թէ ասէր . իբրեւ սզաւոր և տրտում խոնարհ լինէի . այսինքն խոնարհէի առաջի նոցա . իսկ եթէ զիցի ներգործաբար , պարտ է իմանալ այսպէս . խոնարհէցուցանէի զանձն իմ : | սկ թէ զինչ տեսանէր աստի 'ի թշնամիան՝ յայտ առնէ ասէլով :

Ճ ի՞ւ ո՞ւրակն ե՞ղն և ժողովոյան . ժողովոյան յիս
պանջանակ . և ո՞չ ծանեայ . ցրուեցան . և ո՞չ
պահացան :

Ճ. Պարզեցն ով և արհամարդուն արհամարդանօք . իշխանութեան է կը իմ զարդարութ իշխանութ . առ է լուսաւութ :

Աւախութե՞ն մարդոյ թէպէտե 'ի բարին բերի , բայց
ուրախութե՞ն չարաց ընդ չարն ևս խոնարհէն մանաւանդ
ընդ չարն ատելեաց իւրեանց . զի այնու կատարի չար
կամք նոցա , որով ցանկան տեսանել զատելիս իւ-
րեանց 'ի թշուառութե և յանարդուե : Այս զի այսպի-
սի գտան թշնամիքն զաւթի , ամբաստան իմն լինե-
լով վնոցանէ ասէ :

Կամդարձեալ՝ի քալ և ՚ի ժողովիլ՝ի վերայ իմ այլեւ-
այլ փորձանաց՝ ՚ի սկզբան անդ ոչ ծանեայ թէ ունիմ
տանջիլ՝ի փորձանաց անտի, բայց ՚ի փորձ մտեալ՝ի
միտ առի և տեսիլ՝ թէ յիրաւի տանջիսմ. Եշ կամ
դարձեալ, ժողովեցան յիս այնչափ և այնպիսի տան-
ջանք, մինչև շուարիլ ինձ, և նուաղիլ և ոչ իմանալ
թէ դրավիսի տանջնաբ իցեն. և այս կարէ լինել կամ
վասն սաստկութէ և առաւելուն ցաւոց, և կամ վասն
ներքին տագնապի, կամ վասն անհնարին ամօթոց,
որ յառաւելուն զրեթէ ոչինչ տայ համարիլ զար-
տաքինն :

Խակ եթէ տանջանքն առցի ՚ի թանձրացեալն փոխա-
նակ բառիս բռնջոց, միտ բանին լինի այս. հալածիքը
իմ ժողովեցան ՚ի վր իմ. ժողովեցան իրրեւ տանջողք
առ. ՚ի կորուսանել զիս, և ես ոչ ծանեայ. այսինքն
ոչ զիտացի թէ վասն ինչ պատճառի զրդուեցան նոքա
՚ի վր իմ. զի ես ոչինչ արարեալ էի ընդդէմ նոցա.
այլ մանաւանդ թէ բարիս ցուցեալ էի առ նոսա. զի
թէպէտ և զիտէի, թէ ատեն նորա զիս, բայց ոչ զի-
տացի, թէ այնչափ լեալ իցէ ատելութի նոցա. և սա
կայն ոչ կարասցեն առնել ինչ ընդ իս, զի պաշտպան
իմատէր է, և նա փրկեսցէ զիս. և որպէ յարուցեալ էին
՚ի վր իմ՝ զարձցին յետո. և առ այս յարէ :

Յըրաւեցո՞ն և ոչ զայցան : Այսինքն թէ ՚ի պաշտպա-
նել զիս այ, թշնամիք իմ որ ժողովեալ էին ՚ի վր իմ,
՚ի բաց կացին լինէն . որպէս եղեւ սաւուզայ և արանց
նորա (առ . թագ . իդ . 27 . 28 .) և սակայն նոքա զայս
պաշտպանութիւնն տն յայտնի տեսեալ ոչ զզջացան ՚ի
շարեաց իւրեանց . այլ առաւել ևս դառնացան և կա-
տաղեցան : Խսկ թէ զինչ արարին ՚ի կատաղութե՛ իւ-
րեանց, յայտ առնէ ասելով .

Փոքէցին զիս և առհամարհէցին արհամարհանօք : Կամի ասել.
թէպէտև փորձեցին՝ այսինքն յայտնապէտ տեսին և
զիտացին, զի պաշտպան եղեւ ինձ տէր, սակայն ՚ի
կամն չարութիւնն հաստատեալ գորով ոչ ՚ի միտ առին՝
զոր փորձիւ տեսին . զինչ առա . արհամարհանօք արհամար-
հէցին զիս . այսինքն թէ ՚ի մէջ իւրեանց սկսան զարհա-
մարհական բանս խօսել զինչն, և արհամարհ ցուցա-
նել զիս . ովլ է նա սակին, զի ոչ կարասցուք նուա-

ԱԵԼ. ոչ ապաքին անարդ ոմն է , իհովլուսուէ առեալ ,
և յաղբատութէ ՚ի վեր երևեալ են :

Վարթ է ևս ասել , թէ այս հարամարհէլ նոցա իցէ
նոյն խոկ փորձել նոցին . որպիս թէ եղեալ էր .
տեսեալ նոցա զպաշտպանութին այ ՚ի վը իմ փորձեցին
թշուառացուցանել զիս սյլով ձանապարհաւ , այս
նաքն ձանապարհաւ արհամարհանաց . այլ չկարծա-
ցեալ առնել ինչ սկսան կրծտել զատամունս . վասն

որոյ ասէ :

Արմատէցին զատամունս իւրէ անց ՚ի չէրայ էմ : Այս
կրծտումն ատամանց , հայի յարտաքին սպառնալիս
թշնամեացն . յոր միտս կամի ասել . ՚ի սաստկութէնէ
կատաղութէ իւրեանց կրծտէին և զատամանս ՚ի վերայ
իմ և սոդանային ասելուլ . երբ իցէ՝ զի գտցուք
զթշուառականն զայն , և չարաշար մահուամբ կորուս-
ցոք զնա , և տացուք գազանաց զմարմին նորա : Այս
կարէ հայիլ և ՚ի գաղտնի չարուի կամաց թշնամեացն .
յոր միտս կամի ասել . թշնամիք իմ՝ որք արտաքուստ
շղործութելով վարեին ընդ իս , ՚ի ներքուստ կրծտէին
և սրեին զատամունս իւրեանց յուտել զիս : Հայսպիսի
միտս տեսուալ դաւեթի զթշնամիս իւր՝ ինզդրէ զտա-
նել զայցելութի առ յայ վազվազսկի . վասն որոյ պա-
զտատելուլ խօսի առ նա , և ասէ :

Տէք երբ ուեցես : Հայտ է թէ ան տեսանէ զամ զոր
կրելք . տեսանէ և զոր առնեն թշնամիք մեր . տեսա-
նէ և զյօժարուի մեր՝ ՚ի փրկիլ ՚ի ձեռաց թշնամեաց :
Օ այս տեսութի ու ինդրէ . մարգարէն , այլ զայցելու-
թի տեսուեն որ է պաշտպանել ՚ի ձեռաց թշնամեաց :
Եւ յայտ միտս՝ յորժամ ոչ սրաշտպանէ զմեզ ան ,
երեի մեզ , թէ ոչ տեսանէ զոր առնեն թշնամիք մեր
ընդ մեզ . ըստ սմին ձեւացուցանելով մարգարէին ըզ-
բան իւր ասէ . որ երբ ուեցես :

Տէք առելով կամի ՚ի գութ շարժել զանք . դու՝ որ
ասէ ամի առրդ ես , և զամ տեսանես , երբ արդեօք
յուցյես առ իս զպաշտպանուի քո , երբ արդեօք ունայ-
նացուցես զջանս թշնամեաց իմաց . երբ իցէ՝ զի ա-
րասայես իրաւունս ընդ իս և ընդ թշնամիս իմ :
Այս բանք վերածին և ՚ի գեմա քոթի . զի թշնամիք
նորա յորժամ մատնութին յուդայի հասատեցին

զմիտու իւրեանց՝ ըսքունել զնա, ուրախ եղեն. ժողովեցան աստա 'ի վլր նորա, և 'ի կամիլն ձեռն արկանել 'ի նա՝ ցրուեցան իրը զանօթ խորտակեալ. ըստում ընկրկեալ 'ի զօրութենէ նորա զարկան զգետնի. և սահայն ոչ զդացան. և 'ի թոյլ տալ նորա և յասել. եթէ զիս ինսդրէք, թողէք զաշակերտոն իմ, և կալարուք զիս. կապան և կապեցին զնա, փորձեցին բանիւք, և արշամարշէցին արշամարշանօք. և 'ի կատաղուէ իւրեանց կրծտեցին զատամունս իւրեանց. այսինքն յարուցին զամբոխն իրը զատամունս 'ի վլր նորա, և յանհնարին տանջանս և 'ի մահ խաչի մասնեցին զնա: Այսափ տանջանք և տանջօղք ժողովեցան յիս ասէ, և ես ոչ ծանեայ, այսինքն թէ ոյինչ համարեցայ. զի զամն սիրով ընկալու տէրն մեր: 'Կարձեալ այն ամմ տանջանք՝ զորս մեք պարտ էաք կրել վասն մեղաց մերոց՝ ժողովեցան 'ի նա, և նա արդարե զտանջանս զգաց և կրեայ, այլ զմեղն ոչ ծանեաւ և ոչ զիտաց. այսինքն թէ ոչ զորձեաց: Եւ 'ի բովանդակիլ ամ տանջանայ աղաղակեաց առ հայր. էլի էլի լամա սարգդանի. որոյ փոխան աստ զինի. տէր երբ տեսցես. և որ զինի:

Կարոյապէս, 'ի մերանչել մարդոց և յանփոյթ լինել նորա և յու կամիլն ճանաչել ուրախ լինին դեք, և յարձակին 'ի վերայ նորա. և յորժամ ժողովինս տանջանք խղճի մտացն, և դառնայ մարդ յինքն և ապաշտէ. թէպէտե ցրուին դեք, բայց ոչ զդանան 'ի չարեաց իւրեանց. այլ զարձեալ յարձակին 'ի վլր նորա, փորձեն և կրծտեն զատումունս. այսինքն երկնեն զհնարս ընդդէմ նորա: Եւ յայնժամ ոչ մնայ նմայ ինչ ապաստան լինել, բայց միայն 'ի տէր ածիւր, և ասել, որ երբ տեսցես. տէս և ապրեցն զիս. և զայս առաջի առնէ մարդարէն 'ի յաջորդ համարն ասելով:

Ժշ. **Ա**բայ աբա զանին իմ 'ի խորամանէութենոցա. և յանձնաց զինուածութենի իմ:

Ունամիր դաւթի յետ բաղում ինչ առնելոյ ընդդէմ նորա, տէսեալ թէ ոչ կարեն ունել զնա և կորուսնել, 'ի խորամանկութիւն մնաքերէին. իրը զի ոչ կա-

ըելով յայտնի 'ի կրուստ մատնել, հնարիւք իմն որսացեն զնա . և զի ազատին յայտին հնարից յաւետ 'ի բաց հեռանալով իմի քան վանելով, վասն որոյ ազալէ զնած, և ասէ :

Ի բաց արո՞ զանձն իմ 'ի խորամանկութե նոցա : Այսինքն է, հեռացն զիս 'ի վասնգէ անկանելոյ յորոգայթ, զօր թշնամիք իմ խորամանկութե, այսինքն չարարուեստ հնարիւք թաքուցն ինձ . ես ոչ կարեմ տեսանել զհնարս նոցա . զու՝ որ զնմ տեսանես, 'ի բաց տար զիս յայնմանէ, և ազատեցն զիս 'ի վասնգէ, յօր պաշարել կամն զիս . կամ ապահովացն զանձն իմ 'ի չարահնար դարանակալութէ նոցա . քանզի իբրև զգազանս չարս դարանին յափշտակել զանձն իմ . և առ այս յարէ :

Ա յառիւծուց զիտամօրութի իմ : Առիւծս կուէ զթշնամիս իւր, ոչ ըստ քաջութեն կամ ըստ վեհանձնութեն, այլ ըստ կատաղութեան, և ըստ դարանակալ լինելոյ . զերծն զիս ասէ 'ի ձեռաց նոցա իբրև 'ի ձեռաց առիւծուց : Ուր փոխանակ ասելոյ զիս՝ զնէ զիտամօրութի իմ . որպէս թէ ասէր . փրկեան զիս որ միամօր եմ, այսինքն միայնակ եմ և անիննամ եմ . (զորմէ տես 'ի սաղ .

իդ . 15 : և ինա . 22 :

Այս բանք ուղղակի հային 'ի քո, և ասին 'ի բերանոյ նորա . յաղաւել նորին զհայր՝ ազատել զինքն 'ի խորամանկութենէ հերովզի և հրեից, և մասնաւորապէս յափիւծուց, այսինքն 'ի քահանայտպետից և 'ի պիղատոսէ 'իբրև զմիածին իւր, Այս ասի և 'ի բերանոյ նը եկեղեցոյ, որ միամայն է, այսինքն ծնեալ 'ի միոյ աւազանէ իբրև 'ի միոյ մօրէ : Ասի և 'ի բերանոյ իւրաքանչիւր արդարոց, որոց ոսդին սատանայ իբրև զառիւծ գուէ, և թշնամիք նոցա դեք զհետ են որսալ զնոսա : Օ այսովիկ եղեալ մարգարեին խռատանայ այ՝ յաղատիլ իւրում 'ի ձեռաց թշնամեաց խոստովան լինել նմա, և օրհնել զնա . վասն որոյ ասէ :

Ժէ . **Ա** զ բ ուրուշն եղէց անդ դը՝ յեկեղեին մէծս . և 'ի ժողովն բաշմաց օրհնեցի սկեդ :

Եցէցէցի մէծ կուէ զբաղմութի ազգաց . նախ զբաղմութիւն հրեից՝ որ էին ողաշեալ եկեղեցի այ, երկրորդ՝

զբազմութիւն խրաքանչիւր ժողովրդեան, որ էին եկեղեցիք, այսինքն ժողովը՝ ի մի միաբանեալ. զորս և կոչել ժողովս բազմաց, 'ի մէջ սոցա կամելով պատմել զոր արար ընդ նա տեր, ասէ:

Վազման էղեց եւլ թը՝ յէն էղեց մէծ: Վայսինքն 'ի փըրկել քոյ զիս 'ի խորահանկութէ թշնամեաց խոնց՝ ոչ եւ զէց ապերախտ, և ոչ թագուցից զայսպիտի բարերարութիս քո. այլ խոստովան եղեց քեզ տեր. այսինքն յայտնի քարոզեցից ժողովրդեան քոյ և առաջի այլոց ազգաց, զոր միանգամ արարեր ինձ. և այնու օրչնեցից զից զքեզ 'ի մէջ նոցա, և առ այս յարէ:

Եթ է ծոված բաղմաց օրհնեց զէն: Վայսինքն 'ի մէջ բազմութեան մարդկան ոչ դադարեցից յօրչնելոյ ըզքեզ. կամ ըստ երայականին՝ ի ժողովս հզօրացեալս հանապալ օրչնեցից զքեզ: Վայս բան ակնարկէ մանաւանդ 'ի նորս եկեղեցի. որ արդարեւ մեծ է և տարածեալ ընդ ծով և ընդ ցամաք, և 'ի ժողովս ազգաց բազմաց հզօրացեալ. յորս և օրչնի ած համապալ սաղմոսիւք դաւթի: (Տես զայտմանէ և 'ի սաղթէ. 12.) Վկնարկէ այս բան ըստ լամբ¹¹. և 'ի ժողովս երկնից. * ո այլ մեծ եկեղեցի (ասէ) եթէ ոչ անդ ու բանկացն զքեցը յերկինս . . . և ո այլ ժողով բազմաց բիւրաւոր բանակը հրեշտակաց: Օ այս եղեալ մարդարեին, դառնայ վերստին յայն զոր խօսեցաւ զթշնամեաց խրոց խնդրելով յայ գրտանել զազատութիւն 'ի շարութենէ նոցա. սմին իրի ասէ:

Ճը. **Յ**արաւուն եղեցին յիս թշնամիս իմ, ոյս առէն զիս 'ի բարտպարուսուց. անապէի առանէն յիս աչք իւրեանց:

Վկին օրինակաւ հնար է ուրախանալ թշնամոյ՝ ըստ որում թշնամի. մի՝ յաղթելով ատելոյն. և մի ևս՝ առանց յաղթելոյ՝ միայն տեսանելով զնա մատնեալ 'ի նեղութիս, կամ անարդեալ, և կամ բարձեալ 'ի միջոյ, ևն. Վքդ քանզի որն և պատահէր դաւթի, այն լինէր առիթ ուրախանալոյ թշնամեաց նորս, վասն որոյ խնդրէ զի այնպէս պաշտպանեալ լիցի յայ, որպէս զի տացի թշնամեաց խրոց առիթ ուրախանա-

ւոյ . ոչ զի նոքա մի ուրախսացին , այլ զի ինքն ազատէւոցի , և նոքա յուրախութէ այնը յազթութէ անմասն գտցին . վոյ որոյ և ասէ :

Ոչ ռուակն էշեցին յիս թշնամիւ էմ , ոյս արեւին զիս ՚ի պարագարդուց : Այսինքն է՝ թշնամիւ իմ՝ որք ՚ի զուր տարապարտուց , այսինքն առանց պատճառի առելին զիս , և խորախանկութեամբ կամէին որսալ զիս և կորուսանել , մի հասցեն այնմ չար յօժարութեան կամաց իւրեանց , այլ տկարացին զօրութք քոյլ . որոյլ մի ևս ուրախսացին ՚ի վերայ իմ . այլ փոխանսակ ուրախսանալոյ ամացեսցեն և յամօթ լիցին . և որոյլ զիս ծաղր առնէին , նովաւ ինքեանք լիցին ծաղր նախստանաց : Այլ թէ ո՞ր էր այն որոյլ ծաղր առնէին զնա , յայտ առնէ ասելով :

Ոչ հարդի առնէին յիս աչք էտքեանց : Ակնարկի առնէլն է զաս շարժելով ցուցանել վիմն այլոց , կամ նոյն անձին՝ որոյ վասն լինի . և է իրը աչօք խօսել . և այս կարի իմն ծանր լինի յօժամ՝ ՚ի նախստական իրս ծաղր առնէլով՝ ՚ի զործ ածի : Այսպէս առնէին ասէ թշնամիւ իմ՝ թէ՝ ՚ի տեսանելն՝ և թէ՝ յոչ տեսանելն զիս , և դիտումն նոցա էր նախ՝ անարդ ցուցանել զիս . և երկրորդ՝ վնասել և կորուսանել զիս :

Ոմանք զայս բան յայլ միտս տարածեն . իրը թէ այսու ցուցանիցի կեզծաւորութեամք կամ շողոքորթէ լով վարին թշնամեաց ընդ դաւթի . բայց ՚ի ո՞ր զիրս այս ո՞չ , այսինքն ակնարկի առնէլ՝ ՚ի վատ կողմն առեալ լինի այսինքն փոխանսակ ծաղր առնելոյ կամ անարդ ցուցանելոյ՝ ևն . յայս ո՞չ հայի և այն՝ զոր ասէ սողմանն * այր անօրէն և անզգամ . . . ակնարկէ ա ակամիք լ . (առակ . իշ . 25 :) իսկ զիկեզծաւորութք վարիլ նոցա որոշակի գնէ մարգարէն՝ ՚ի յաջորդ համբն և ասէ :

Ժթ . **Ո**նդ իս զինաշաղանէն էսօնէին . և ինչեւանք բարին ալք զնէն դութելի էսօնէին :

Խօսիլ զիսաղաղութիւն երակի լինի . մի՝ յօժամ՝ ՚ի մէջ խօսվելոց կամ թշնամացելոց լինին բանք հաշտեցուցիչը և բարձիչք խօսվութէ : Երկրորդ՝ յօժամ՝ մէջ խօսողաց լինին այնպիսի բանք , որք հաստա-

տեն զիսաղաղութիւն՝ որ արդէն կոյր ՚ի մէջ նոցա : Երբորդ՝ յորժամ ՚ի մէջ խօսողաց լինին բարեկամսկան զրոյցք, և վճարին խաղաղութը, որ է, վարիւ բարեկամաբար : Վրաշինն է մուծիչ խաղաղութեան՝ որ չկայր : Երկրորդն է հաստատիչ և պահպանիչ խաղաղութե՝ որ կայր : Երրորդն է միայն նշանակիչ խաղաղութե՝ : Վրդ որպէս երեխ՝ բանք մարգարելին ակնարկեն յերկրորդ և յերրորդ օրինակ՝ յասելն : Բայտ էս պիտաղը լին խօսեին . և բնուանս, և ն : Կամի առել . թշնամիք իմ՝ որ չարիս կամեին ինձ, յորժամտեսանէին զիս, խաղաղութեան բանս խօսեին ընդ իս . որպէս զի մի ցուցցեն, թէ ունին ինչ թշնամութիւն ընդ իս, այլ մանաւանդ զիսաղաղութիւն : Վայց յորժամ հեռանային յինէն, * բարկութը զնենդութիւն . խորհեին : իբր զի ատելութիւն նոցա՝ որ զրգուեր զնոսա ընդգէմ իմ՝ ի բարկութիւն բողբոքեր զնոսա խորհել զինէն զնենդութիւն . այսինքն զայնալիսի ինչ որով կարիցեն նենդել զիս : Ուր յաւելունը զբարդ բնուանս՝ երկու ինչ յայտ առնէ . մի՛ թէ յորժամ ինքեանք՝ ի մէջ իւրեանց լինէին յայնժամառնէին վայս, և ոչ թէ յորժամ առ իս մօտ լինէին : Երկրորդ՝ թէ ինքեանք յինքեանց զրգուեին ՚ի բարկութիւն . և ՚ի բարկութէ՝ ՚ի նենդութի, և ոչ թէ յայլոց : Որով և առաւելոյր չարութիւն նոցին . մինչև հեղձնուլ նոյանովաւ, և զեղուլ ևս առ արտաքս բերանով . բայց յայնալիսի ժամու, յորում չունէին կամկած երկիւղի . և զոյն կամելով մարգարելին առաջի առնել՝ յարէ զինի, և ասէ :

Է.  Եղին ՚է Քէրայ ՚է յ զբէրանս էտրեանց . և առաջին, այս այս ուստին այս մէր :
Ի վերոյ (՚ի համարն 6.) եղ թէ թշնամիք իւր լարեցին նմա որոգայթ . և յետ բաղում ինչ խօսելոյ ասաց (՚ի համարն 19.) թէ խորամանկութը վարեցան ընդ նմու . և խաղաղութե բանիւք մերձեցան առնա, և ՚ի ծածուկ նենդութիւնս հնարելին : Տեսեալ առ նոյան թէ անկաւ նա, ՚ի նեղութիս, և փախուցեալ զնաց ուր և զնաց, սկսան ձնիսանալ բանիւք՝ ՚ի վերայ նորա . յայս հայելով ասէ :

Պատրին 'է վերայ իմ ղբերանո խորեւանց : Ոչ ասէ՝ խօսեցան զինէն , այլ բացին զբերանո ևն . առ ՚ի ցուցանել նախ՝ թէ ախորժանօք և հեշտանալով խօսէին վասն վնասու նորա . որպէս որ քաղցեալն իցէ՝ ախորժանօք բանայցէ զբերան իւր յուտել : Առ ՚ի ցուցանել երկը ըորդ՝ թէ անգաղար խօսէին . որպէս թէ եղեալ էր . ոչ երբէք փակեցին զբերանս , այլ միշտ բաց թողին ՚ի խօսիլ զինէն . իսկ թէ զինչ խօսէին , ասէ :

Եւ ասացին՝ այս այս տեսէն աչ եւ : Որպէս թէ ասէր . ՚ի տեսանել թշնամեաց իմոց զազգի ազգի ձախորդութիւնս իմ , և զայլեալլ փորձանս՝ որ ՚ի նենգութէ նոցա հասին . ՚ի վերայ իմ , ուրախ եղեն ՚ի մէջ իւրեանց . և ուրախակից լինելով առ միմեանս՝ ասացին . ահա աչօք ևս տեսաք՝ զի բարձաւ ՚ի միջոյ ատելին մեր . տեսաք այս . և ուրախ եւք : Իսկ կըկնումն բառիդ այս , ցուցանէ զատուգութիւն տեսութէ . որպէս թէ եղեալ էր . իրաւի տեսաք զինշուառութիւն նորա :

Այլ այս բառ կարէ առեալ լինել և ՚ի խնդական միտս . որպէս թէ եղեալ էր , վաշ վաշ զի տեսին աչք մեր զկորուստ նորա . որպէս դնի (՚ի համարն , 23 .) և ՚ի մեկն . վարդանայ . կամ թէ վահ՝ զի բարձաւ ատելին մեր ՚ի միջոյ : Ուրիշ է զայս բան փոքր մի այլ ազգ ևս մեկնել . այսինքն ՚ի վերայ սսւտ վկայութեան թշնամեացն զաւթի , որով և միտ բանին լինի այս . թշնամիթ իմ սուտ վկայեցին զինէն , ասելով . այս տեսին աչք մեր՝ զի նա զայս ինչ և զայն ինչ արար . վասն որոյ պարտաւոր գտանի յայս և յայն , և արժանի է կորստեան , ևն :

Այս ամ կատարեցաւ ՚ի տէր մեր . որում նախ որոզայթ լարեցին հրէայք , և որչափ ինչ արար նա նոցա՝ նոքա շարիս խորամանկէին նմա . սկսան ապա ջանալ ըմբռնել զնա բանիւք . եկին առ նա , և զիտաղ զութի խօսելով ընդ նմա ասէին . * զիտեմք զի ճշմարիտ էս . և զՃանասպարհն այ Ճշմարտութէք ուստու ցանես . . . ասա մեզ , զիարդ թուի քեզ , պարտ է Հարկս տալ կայսեր՝ թէ ոչ . (մտ . իթ . 16 .) Երապա դառնացեալ յանձինս իւրեանց նենգութիւն խորհեցան զնմանէ . և կալեալ զնա՝ ածին յատեան , և

սուտ վիրայութեք բացին զբերանս իւրեանց՝ ի վերայ
նորա , և ասեն , այն այն տեսին աչք մեր , զի արգե-
լյար՝ ի տալոյ հարկս կայսեր . և ապա՝ ի խաչին տեսա-
նելով զնա բեռնուալ՝ վերստին բացին զբերանս իւր-
եանց՝ ի վերայ նորա՝ ի մէջ իւրեանց՝ ասելով . ահա
տեսաք զնա մասնեալ՝ ի մահ , տեսաք այն և ուրախ
եմք . և առ նա ինքն խօսելով ասեին . վահ որ քակեիր

զտաձարն այ , և զերիս առուրս շինեիր զնա , և ն .
Եսապէս վարին ընդ մեզ և գեք . որոգայթ լարեն ,
և հնարս հնարին՝ ի խորամանկել . յերեակայութեան
մերում այլ ընդ այլոյ զիրսն ձեւցուցանեն , զարն
բարի կերպարանեն և զբարին չար . զպատկեր մահուն
քերեն , և զերկարութիւն կենաց նկարեն . մինչեւ արկ-
ցեն զմեզ՝ ի մեղս և տեսցեն հետիւսս . և յայնժամ
բանան զբերանս իւրեանց՝ ի վերայ մեր , ասելով ,
այն այն տեսին աչք մեր . Խոստանան՝ ի խորհուրդ
զմեծ ինչ , և ՚ի հաւատալ մեր՝ փոխթացանեն կա-
տարել զի կորուսցեն . Ոյագաւոր ոմն այլազգի կա-
մէր առնուլ զբաղաք մի , և ոչ կարեր . իշխանք նորա
խօստացան քրիստոնէի միում զոր ատեին տալ նմա
՚ի կոտթիւն զդուսար թագաւորին՝ եթէ մասնեցի
զբաղաքն : Եշ՝ ՚ի կատարիլ գործոյն՝ թագաւորն կո-
շեաց զնա առաջի իւր և ասէ ցնա , որովհետեւ խօստա-
ցայ՝ տամ քեզ զդուսար իմ . բայց հարկ է քեզ թո-
ղուլ զբրիստոնէութիւն . և նա եթող . յայնժամ ասե-
ցնա թագաւորն . գու միրտեալ ես , մինչեւ ոչ քերթե-
ցից զմօրթ քո ոչ կարեմ տալ զդուսար իմ . և հրա-
մայեաց քերթել , և ՚ի քերթին մեռաւ այն . և իշ-
խանքն սկսան այսն առնել զնովաւ , և զբեթէ ասել .
ահա տեսին աչք մեր , զի մեռաւ զա՝ ՚ի յիմնրու-
թեան իւրում : Բատ սմին հնարի սատանայ գերել
զհոգի մեր , և հուսկ յետոյ քերթէ զմեզ՝ ի շնորհաց .
և գեք որք խօստանան բարեց հասուցանել , ծաղր
առնեն զմեզ , վաշ վաշ կարգարալ : Եթէ յայսմ
անկարասցին՝ մտանեն՝ ի բերանս սուտ մարդ արեից ,
այսինքն սուտ բարեկամաց , և թիւր խորհրդովք նո-
ցա կորուսանեն . որպէս պատահեցաւ աքաարու . (գ .
թագ . ժը .) և ՚ի տեսանեն զմեզ պատրեալս և պար-
տեալս ծիծաղին զմեօք : Եշ՝ ՚ի ակարանալ իւրեանց

յայսմ ևս՝ տեսեալ զմեղ նեղեալու և տառապեալս
՚ի հնարից իւրեանց՝ շատ համարելով և զայն՝ վահ
կարգան ընդդեմ մեր : Հայրաց ամի ըունիմք ինչ առ
նել բայց եթէ խոնարհիլ՚ի մեղ, և խոնարհութեղ դի
մել առ ած . և պազատիլ առ նա , օրպէս առնէ և
մարգարէս ասելով :

Ի՞ն . **S**եսէր պէ , և մ լուսէր . պէ՝ մ ՚ի բայց այս առնիւր յի-
նէն :

Ի՞ն . **O**ւրիշէր , և նայեաց պէ յիւրառանս իմ . ած իմ և
ապէ իմ ՚ի բառաստեանս իմ , և իրաւ արա ինչ ըստ
արդարութեան պամ պէ ած իմ :

Չարութիւն թշնամեայն դաւթի , նոյնապէս և տիրաս-
պան հրէից՝ ՚ի բազումն երեւցաւ . մի՝ ՚ի ներքս ՚ի
դատելն զնա չարաչար . (օրպէս զնի ՚ի համարն 1 :)
Երկրորդ՝ ՚ի կամին մարտնչել ընդ նմա . (օրպէս զնի
՚ի համարի անդ :) Երրորդ՝ ՚ի թագուցանեն նմա զո-
րոգայթ . (՚ի համարն 6 :) **Չ**որրորդ՝ ՚ի նախատելն զնա
՚ի նանիր . (՚ի նոյն համարն 6 :) **Հ**ինգերորդ՝ յարհա-
մարհեն զնա , և ՚ի կրծտել զատամունս իւրեանց
՚ի վերայ նորա . (՚ի համարն 15 :) **Ո**ւցերորդ՝ ՚ի վր-
կայեն զնմանէ անիրաւութեղ . (՚ի համարն 10 :)
Երթներորդ՝ ՚ի ժողովին ՚ի վերայ առ ՚ի կրուսա-
նել զնա . (՚ի համարն 14 :) **Ո**ւթերորդ՝ ՚ի ծաղր առ-
նեն զնա . (՚ի համարն 18 :) **Ի**ններորդ՝ ՚ի վարին խո-
րաննկութեամբ ընդ նմա . (՚ի համարն 19 :) **Տ**ամն-
երորդ՝ ՚ի յարձակիլ նոցա բանիւք ՚ի վերայ նորա .
(զրմէ զրեաց ՚ի նախընթաց համարն) . **Օ**սցս ամ-
մանաւանդ զյետին անզզամութիւն նոցա տարածէ ա-
ռաջի այ , և ասէ :

Տեսէր պէ՝ և մ լուսէր . կամի ասել . զոր ինչ միան-
զամ խորհեցան և խօսեցան զինէն թշնամիք իսմ , և
զոր միանզամ արարին ընդ իս , զտմն տեսէր . և չը-
մնաց զայլ ինչ ևս տեսանել . և արդ շատ լիցի տէր . մի
լուսէր տէր . մի անտես առներ տէր . և մի ևս այնապէս
ցուցաներ զբեզ , օրպէս թէ ոչ տեսանիցես , կամ
թէ չիցես կարող , կամ թէ ոչ կամիցիս զաղարեցու-
ցանել զնասա ՚ի չարեաց նոցին՝ զորս նիւթենն ինձ .

այլ ցոյց աղաւեմ՝ և յայտ արա թէ տէսանես զամ,
և կարես ցրուել զխորհուրդս և զգործս նոցա . իսկ
եթէ ընդ այս ոչ հաճեսցիս , գմնէ մի թռողուցուս զիս .

և առ այս յարէ :

Տէր՝ Ք' է բացեայ առանքի յինէն : Վայս ոչ ոչ ցուցանե
թէ անձ հեռի լինի յումերէ իրօք . զի այսմ չէ հնար
լինել . ապա թէ ոչ յուշնաւոթիւն դառնայր մարդս . զի
ներկայութք նորա կայ իւրաքանչիւր էակ . և առանց
այնը ոչ կարէ կալ ինչ . Ուրեմն այսու բանիւ ոչ այլ
ինչ ցուցանի բայց եթէ անտես շառնելն այ , կամ ոչ
թռողուլն այ , որպէս թէ ասեր . մի թռցես զիս միայ-
նակ 'ի ձեռս թշնամեաց իմոց , կամ 'ի վիշտս նեղու-
թեան իմոց . որպէս առնեն նոքա ողբ հեռանան 'ի բաց՝
յըմբոնիլ ուրուք 'ի ձեռա այլոց կամ յանկանիլ նո-
ցա 'ի վտանգս :

Կամելով ապա այլով իմն բանիւ ստիպէլ և թախան-
ձել , յարէ զինի . և ասէ :

Օպրենէր և հայեաց պէ՝ յիշառան իմ . ած իմ և պէ իմ 'է
դաստիառն իմ : Բայտ մարդկային գործոց ձևացուցանե
զպաշտապանութիւնն այ . իբր զի յորժամ մարդս 'ի
քուն է , ոչ տէսանես ինչ և ոչ առնէ , ոչ հայի , և ոչ
ունին մատուցանէ , այլոց . բայտ այտմ հանգիտութեան
յորժամ ած ոչ ցուցանէ զպաշտապանութիւն իւր յայն-
պիսի առիթս՝ յորս ակնունելի էր թէ ցուցցէ , մարդ-
կօրէն խօսելով համարեալ լինի իբր 'ի քուն մտեալ .
իսկ յորժամ առնէ զգործն . այսինքն յորժամ յետ
երկար ակնկալս թեան ցուցանէ զպաշտապանութիւն իւր ,
ասի զարթնուլ :

Հայս միտ ասէ . զարթիր և հայեաց տէր . որպէս թէ
տաէր . մի ցուցանել զքէզ իբրեւ 'ի քուն մտեալ , այլ
իբր զարթուցեալ . և հայեաց աչօք արդարուն յիրա-
ւունս իմ . այսինքն թէ իբրեւ արդար դատաւոր ուշ
զիր իրաւանց իմոց . որով ցուցանեմ՝ թէ չեմ զոր-
ծեալ ինչ ընդդէմ թշնամեաց իմոց : Հայեաց և 'ի
դատասատանս իմ . այսինքն ուշ զիր՝ թէ զինչ դա-
տաստան է ընդ իս և ընդ թշնամիս իմ . զինչ է զոր
ես իննզրեմ . և զինչ զոր նոքա իննզրեն : Եւ առ զօ-
բաւորագոյն առնելոյ զբան իւր՝ յաւելու ասել :

Եւ իբաւ արտ ինչ ըստ արդարութե ուամ , պէ ած իմ : Կա-

մի ասել. 'ի հալածիս իմ այսպէս 'ի թշնամեաց խմոց , 'ի քեզ միտյն ապաւինեցայ . զի դու ես ած իմ և տէր իմ , և զքեզ միայն կացուցի ինձ գատառոր . և զքեզ միայն ընտրեցի ինձ պաշտպան . և արդ դու ինքն ի ըստ արա ինձ ըստ արդարութեն քում . այսինքն դու ինքն դաստ արա . և եթէ արդարութիւն քոյ՝ որ ամեն նեին ուղիղ է , գատեսցէ՝ թէ անիրաւութեն հալածեն և նեղեն զիս թշնամիք իմ , ազատեա զիս 'ի ձեռաց նոցա :

Օ այս բան մեկնաբար իմն յառաջ բերեալ բարսեղ վարդապէտ . ('ի մեկն . մարկ . գլ . ժ . 'ի յորդ .) խօսի այսպէս . * զարթիր տէր ած իմ . որ երկայնմտութեն Հննջես՝ մարդասիրութենդ զարթիր յօգնել ինձ , և

„ յիշել զիս ողղոմնւթենդ !!

Հյայսոսիկ երկոսնն համարսդ որպէս և տեսանես՝ եօթնից յիշել մարդարէն զանունն այ , երկիցս՝ բառիդ՝ ած , և հնդիցս՝ բառիւս պէ . և զայս առնէ վասն չորից . մի՝ զի նոտ միայն էր 'ի սրտի նորա . վասն որոյ և բազում անզամ յիշել , զոր ցուցանէ թիւս եօթն . երկրորդ՝ զի քաղցր էր նմա յաճախ յիշել զանուննորա . երրորդ՝ զի խորհէր սովաւ 'ի գութ շարժել զնա . չորրորդ՝ զի կամէր փութացուցանել զնա 'ի փրկութիւ : Եւ ևս որպէս տեսանես՝ յառաջնումն անդ ոչ յարէ զբառդ էմ , այլ զնէ միայն զբառդ պէ . զի ոչ համարձակեցուցանէր զնա խոնարհութիւն իւր՝ ասել էմ . այլ պատկառեալ զիմօք ասել միայն պէսէր պէ . մի 'ի բացեայ առնիր ած . զարթիր նոր . նայեաց նոր . իսկ յերկը ըրրզումն երից կրկնէ զբառդ էմ , վասն համարձակութիւն գտանելոյ առ նա . վասն որոյ ասէ ած իմ . նոր իմ . նոր ած իմ . որպէս թէ ասէր . դու որ նորդ ես և ած , դու ինքն ես նոր իմ . դու ինքն և ած իմ , վասն որոյ զոր ինքն պաշտպանեա և ազատեա զիս 'ի ձեռաց թշնամեաց խմոց . զի մի մեծարանեսցեն 'ի վերայ իմ , և ուրախասցին ընդ թշուառութիւն իմ : **Օ** սոյն զայս մեծարանութիւն նոցա ևս կամելու 'ի մէջ մատուցանել յարէ զինի և ասէ :

իդ. • **Ո**ւ ուրախ եղիցին յէս թշնամիք իմ. և մի սսասցէն՝ ի սիրոս եւրեանց. և է վաշ գայլ անհանց թերեց. ու ընկը-ընկած զնոս:

իդ. • **Ո**ւ մաշնացէն և յամօթ լեցին՝ ոյտ խնդապահին ընդ ըսր իմ. զգեցին զամօթ և զանարդան՝ ոյտ մեծաբնեն՝ ի վերայ իմ:

Օայսոսիկ ՚ի վերոյ ևս եղ այլով բանիւ. զի (՚ի համարն ժը.) ասաց. * մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. և ՚ի նոյն յաւել զայն ինչ զոր առնելին. այսինքն է թէ * ատելին տարապարտուց. և ակնարկի առնելին աչօք. || Եւ աստ դնէ. * մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. և ՚ի նոյն յաւելու և զայն զոր հանգերձեալ էին աճնել. այսինքն է. * ատել ՚ի սիրոս իւրեանց վաշ վաշ. || ևն. || Պյոնակէս և ՚ի համարն 2. ասաց. * ամաշեսցէն. || ևն. յաւել ՚ի նոյն զայլ ինչ. Իսկ աստ յետ ասելոյ ամաշեսցէն ևն, յաւելու նման ինչ նմին նախ, և ատէ:

Ու ուրախ եղիցին յէս թշնամիք իմ: Կամի ասել. ազաւեցի զբեզ տէր լինել ինձ սրաշտուպան. և ակն ունիմ թէ ոչ անտես արասցես զազաւանս իմ, այլ ընկալցիս և սրաշտուպան լիցիս անձին իմոյ. և արդ՝ փութա աղաւեմ. զի մի ՚ի յամելր՝ թշնամիք իմ հասցեն ՚ի կատարումն կամաց իւրեանց. և այսու ուրախ լիցին ՚ի վերայ իմ. և կամ մեծաբանելով ՚ի միսս իւրեանց ծանակեսցէն զիս. և առ այս յարէ:

Ու մի սսասցէն ՚ի սիրոս եւրեանց. և է վաշ գայլ անհանց թերեց. զէ ընկը-ընկած զնոս: Ծ, յախնքն՝ մի լիցի վասն կորուսանելոյ և անհետ առնելոյ զիս խնդապալ ՚ի սիրոս իւրեանց՝ սրարձիլ և ասել. վաշ վաշ անձանց մերոց՝ զի ընկլուզուզու զնա. այսինքն երանի է մեզ և հազարիցս երանի. կամ թէ քանիք բարի եղեւ մեզ՝ զի ընկլուզուզու զնա. այսինքն անհետ արաբար զնա ՚ի մէնջ, որպէս թէ ընկլուզուզու էսք զնա ՚ի խօրս երկրի:

Օայս եղեալ լուելեայն իմն սրազատի մարգարէն առած. և զբեթէ ատէ. մի թողուր տէր սրարձիլ նշյ արպէս, այլ խափանեալ զաբարձանս նոցա՝ սրաշտուպանելովդ զիս. որով և լիցի նոցա ամաշել ՚ի սրարձանս

իւրեանց . և առ այս յարէ :

Ա մաշտաշն և յամօթ լիշին ոյժ խնդային ընդ լար իմ : Այս
ինքն , թշնամիք իմ , որ կամէին իննդալ , և որք ըս-
կըսեալ էին ուրախանալ ընդ չար իմ , այսինքն ընդ նը-
ւաձիլ իմ . և ասէին . այն այն տեսնին աչք մեր . այժմ
՚ի տեսանեն զիս պաշտպանեալ ՚ի քէն՝ ազատեալ ՚ի
ձեռաց իւրեանց , ամաչեսցին և յամօթ լիցին . և այս
կրկնումն ցուցանէ զստաւելութիւն ամաչելոյ նոցա ՚ի
վերայ իննդութեան սրտից իւրեանց . կամելով ազա
ցուցանել և զամայել նոցա ՚ի վերայ սնոտի բանից
իւրեանց՝ ասէ :

Օ գեղջին զամօթ և զանարդանս՝ ոյժ թշնաբանէին ՚ի վերայ իմ :
Այս բանքը յայտ առնեն զստատկութի առաւելութե
ամօթոյ և աննարդանաց ըստ պաշարելոյ ՚ի նոցունց և
ըստ խայտառակելոյ . զի յորժամ զգենու ոք զիր ինչ
պաշարի ՚ի նմաննէ . և հանդերձն այն՝ որ զգեցիւալ լիւ
նի արտաքրոյ՝ յայտնի երեկի ըստ այսմնաննութե իրու-
սելով մարդարէին . զգեցին ասէ թշնամիք իմ զա-
մօթ և զանարդանս . որպէս թէ ասէր , պատեալ պա-
շարեսցին ամօթով . և յայտնի ցուցցին գոլ աննար-
դեալ և արհամարհեալ ՚ի պարծանան՝ որով մեծարա-
նէին ՚ի վերայ իմ , յասել իւրեանց . այսպէս և այն
պէս արասցուք նմա . և թէ ո է նա՞ որ կարասցէ ընդ-
դէմ զառնալ ձեռին մերում , ևն : Յետ զայսոսիկ իրու-
սելոյ մարդարէին առ ան վասն չարաց՝ այսինքն վասն
թշնամեաց իւրօց , որ կամէին նմա զչար , դառնայ
իսուել և զգանծալիս վասն բարեաց , այսինքն վասն
նոցա՝ որք կամէին նմա զբարի . ուստի ասէ :

Ի ն . **Յ** ածասցին և ուրախ լիշին ՚ի գեղ ամէնեգին . ոյժ իւ-
մին ընդ արդարութի իմ :

Ի ւ . **Ա** սասցին յամ քամ , թշ է ան . և ոյժ իւմին պատշա-
ռութի ծառայի ույ :

Յ որս միանդամ տիրէ ատելութիւն կամ նախանձ ,
թշուառայուցանէ զնոսա , ոչ միայն չարեօքն զրս
ինքեանք ունին , այլ և այնոքիք բարեօք զորս այլք
վայելեն , որով և ձևարտի առ նոսա բանն , թէ եր-
ջանկութիւն երջանկացելոց թշուառութի է թշուա-

ուացելոց . քանզի յորս այլք ուրախտանան , սոքա ընդ
այնս արտօմին , և ընդ ուրախութիւն նոցա տիրին . և
յորս այլք անդորրահանան , սոքա ընդ այնս խռովին , և
ընդ անդորրութիւնց վրդովին : Ո՞ի միայն ուրախութիւն
այսպիսեացս է՝ տեսանել զատելիս իւրեանց 'ի թը-
շուառութեն , և ասել՝ վաշ . և զի այս վաշ՝ որ երեփ լի-
նել ներդործութիւն ուրախութեն և անդորրութիւն է ծուխ
նախանձու , սովին իսկ մւացեալ լինի ուրախութիւն
նոցա , և տողորի անդորրութիւն սրտից նոցին . և ինք-
եանք մնան իբր կոչդ այրեալ , որպէս էր տեսանել
'ի թըշնամիսն դաւթի :

Այսոցիկ տամի ներհակն տեսանի 'ի բարեսէր անձինս՝
յորս աիրեւ սէր ընկերին . զի երջանիկ կացուցանեւ
զնոսա ոչ միայն 'ի բարեացն զորս այլք վայելեն . որով և
բարութիւն այլոց լինի երջանկութիւն այսպիսեաց . զի
զբարիս նոցա և զառաքբնութիւնս նոցին ևս և զուրա-
խութիւն և զանդորրութիւն նոցա իբր իւրեանց համա-
րելով ցնծան և ուրախանան ընդ այնս : Եւ պատճառ՝
իւրեանց համարելոյ այս է , զի գիտեն թէ տամ բա-
րիք յայ են . և զի ած է նոցա , և այ են նոքա . վասն
այսորիկ և զամոր է այս , և երանի է սմա՝ զի զած ու
նի իւր պաշտպան են , ցնծացեն և ուրախ լիցին այն-
պիսի ցնծութե՛ և ուրախութե՛ որ կարգի առ քեզ որ ,
և է վասն քո . և առ այս դնէ զբառդ 'ի տէն . իբր զի
այն բարի կամեցոյութիւն և համութիւն նոցա ծնանի զո-
րախութիւն ոչ 'ի վերայ մնուույ , այլ 'ի վերայ ոճայ-
ին բարուեւ և 'ի վերայ պաշտպանութեն նորա . և ստի-

պէ զնոսա օրհնել զնա հանապազ :

Այս ցնծութիւն արդորոց որշափ երջանկացուցանեւ ըզ-
նոսու , այնչափ թշուառայուցանեւ զթշնամիս նոցա .
մանկաւանդ եթէ սյս ցնծութիւն նոցա իցէ 'ի վշտանալ

նոցին՝ ի թշնամեաց անստի . յոյր սակա իբր առանկ ասի . * ուրախանապ ՚ի վիշտ է տրամեցուցանել զթըշնամիս || . որպէս տեսաւ այս ՚ի մարտիրոս , որք ուրախութեք իւրեանց դառնացուցանելին զգատաւորն և զգահիճնն : Ուստի և այն զոր ասաց մարդարէն ըգթշնամեաց իւրոց ՚թէ ամաչեսցէն ևն , կարէ համարիւ ևս իբր զործ այնր ուրախութեան՝ զօր տայ անձ արդարոց : Վրդ քանզի յառաւելուլ այսպիսի ուրախութե՛ բերի մարդս ՚ի մեծացուցանել զաղբիւրն ուրախութե զած , զայս յայտ առնել կամելով մարդարէն՝ յարէ զկնի , և ասէ :

Պասացէն յամ ժամ մէծ է ած . և ոյս կամին պլոտակութիւնն ծառայի ոյ : Ուր բառդ և՝ զայս յետին բան ոյս կամին պլոտակութիւն ծառայի ոյ , միայարէ ընդ այնմ՝ որ գնի ՚ի վերջ նախրնթաց համարոյն . որպէս ՚թէ ասացեալ էր : Վմենեքեան ոյք կամին ընդ արդարութիւն , և ոյք կամին զիսազազութիւն ծառայի քոյ , ցնծասցեն և ուրախ լիցին ՚ի քեզ . և զի այս ուրախութիւն և ցընծութիւննոցա առ քեզ է յամ ժամ , վասն այսորիկ և յամ ժամ մեծացուցէն զքեզ , և ասասցեն՝ մեծ է անձ :

Ունծ ասելով ցուցանել զամենամեծն լինել և յամի մեծ լինել . վասն զի մեծ է տէր ՚ի կարողութիւն . մեծ է և ՚ի բարութիւն . մեծ է ՚ի սրբութիւն . մեծ է և յիմաստութ , ևն : Վրդ ՚ի մեջ բերեալ մարդարէին՝ զօրհնել և զմեծացուցանել բարեսիրաց զած՝ լինքն ես ՚ի նոյն յօժարելով , ՚ի նոյն վերջացուցանէ զբան իւր և ասէ :

Եւ . **Ե**ղը է միտուեայի պարդարանթիւնն ու զօրհանապաշ չփոխանթիւնն ու :

Վրդարաւթեք իմացեալ լինին աստ այն զործք՝ զօրս առնել անձ իւրով արդարութեամբ . նոյնպէս և զուվութք իմացեալ լինին աստ այն զործք ոյ՝ որք են զովվի . կամ ՚թէ արդարութեք իմացեալ լինին այն բանք՝ որք յայտ առնեն զարդար զործս ոյ , նոյնպէս և գովութեք իմացեալ լինին այն բանք՝ որք յայտ առնեն զգութելի զործս ոյ կամ զկատարելութիւնն նորա : Օ առաջինն գնէ , հայելով ՚ի գատաստանն այ , որով նուաձեաց ան զթշնամիս նորա . իսկ զերկրորդն գնէ :

հայելով՝ի պաշտպանութիւնն ոյ՝ որով զերծաւ նա
ինքն դաւիթ՝ի ձեռաց նոցա . որոյ վասն և խօստանայ
հանապազ յիշել և խօսել զայսոսիկ . ուստի ասէ :
[Էղու է մասսայի շարդ արդեն ին ո՞ւ . զօրհանապահ զդուշ-թէ
ո՞ւ : Այս խօսիլ լեզուաւ՝ է չնորհակալ լինել զայ ,
'ի մէջ բերելով զբարերարութիւնս ոյ՝ զօրս եցոյ նմա
ած ըստ արդարութէն իւրում . ևս և զմեծամեծ երախ-
տիս նորա գովութեան արժանիս , որով պաշտպան
եղեւ նմա :

Իւ զայս չնորհակալութիւն խօստանայ առնել զօրհա-
նապազ . որով իմացեալ լինի շարունակութիւն չնորհա-
կալութէն ըստ երկուց . մի՝ ըստ պատշաճողութէն ժա-
մանակի . իբրզի յայն ամ ժամանակս՝ յորս կարէ
առնել , արասցէ , Երկրորդ՝ ըստ հաստատութէն յօժա-
րութեան . իբրզի՝ի կողմանէ իւրմէ պատրաստ իցէ
յամ ժամու . չնորհակալ լինել զբարերարութէն այ ,
և ոչ երբէք մոռանալ զայնա : Այսպիսի անընդհա-
տութիւն չնորհակալութեան ընդունակ առնէ զմարդն
առաւել ևս մեծի բարերարութէն . մինչև միայարել լը
այնմ՝ որ մնացց է յաւիտեան :

Իւրոյապէս սովորն յորդոր մատուցանի ամենեցուն՝
մանաւանդ քրիստոնէից՝ խօսիլ զօրհանապազ զբանս
արդարս , և լեզուաւ իւրեանց բարբառիլ զգովելիս .
և ոչ թէ զբանս անիրաւս և զատելիս , որպիսի են
հայհոյանք , անէծք , յիշոցք , բամբասանք , ևն . Ա-
սացի * մանաւանդ քրիստոնէից . մի՝ զի գրեթէ սո-
վոն որոշին նոքա յանհաւատից , ուստի ասէ բարսեղ
վարդապետ . ('ի մեկն . մարկ . զլ . ժղ .) որպէս
ազգ առանձին իւր լեզուաւն ձանացի՝ եթէ
յոյն և եթէ լատինացի , այսպէս և ազգ քրիստո-
նէից քրիստոնէականն լեզուաւն ձանացին եթէ քրիս-
տոնեայք են (զբարին և զբոխին խօսելովլ :) Երկ-
րորդ՝ զի անօթ են այ և տաճար հոգեցն սրբոյ , օ-
ծեալք 'ի չնորհաց . արդ անօթ լցեալ անուշահոս ի-
րօք անոյշ բուրե . նա և զի 'ի տաճարի խունկ ծխին ,
և ածային բանք քարոզին : Երկրորդ՝ զի ձաշակեն ըզ-
սրբութի՞ոք . ապա պարտին սըս և արդարս արտասա-
նել . որ ուտէ զհամեմն (այսինքն զպահարս , զտար-
չին , զխարամֆիլ , ևն .) բերան նորա անոյշ բուրե .

քանի ևս բերանն այն՝ որ ուտէ զմարմին ոն . որով և
հանց գտանի ոտն՝ ի խօսիլ զգովութիւնս նորա , և լինի
յանկալի ընկալեալ լինելոյ ՚ի կեանս յաւիտենա-
կանս :



ԱՐԴՐՈՒՈՒՅԻՆ :

Յանդիմնութիւն ամսպարշտութեանց առն անօրինի և
նենգաւորի , և ցոյցը մեծութեան ողորմութե և ձմար-
սութեն ոյ , և ևս արդարութե և բարերարութե նո-
րա . և զեղման երկնային ուրախութեան և փափկու-
թեան , զորս ունի տալ ընմել ծառայից իւրոց : ՚ Կար-
ձեալ՝ և աղօթք առ ած առ՝ ի գտանելոյ զողորմութիւն
նորա և զպաշտպանութիւն ազատութե ՚ի ձեռաց առ
բարտաւանից :

՚ Հարաբած , ծառայի ո՞ն . սաղմոն ՚ի դատիլ :

1 ՚ Անօրէնն մշշանչը ըստ դրս իւր , չէս բրիւաշ այ
Շ առաջի աւացնորա : 2 ՚ Ճնիւեաց առաջի նորա , գուա-
նչ շանօրէնութիւն , և առել զն : 3 ՚ Բանաբ բերանու նորա՝ ան-
օրէնութիւն և նենգաւորի էն : 4 ՚ Ան համեցու նա ի մասաւ զբա-
րի . շանօրէնութիւն խորհնի էրառամ : 5 ՚ Հաց նա
յամ ճանապարհ , որ աչ է բարի . և ՚ Հարք նա աչ չահերացաւ :
6 ՚ Տէր յէրինն է ողորմութիւն ոյ . ճշմարդութ ու մինչ յամա :
7 ՚ Վարդարանի ու որունս լորինս ած . իրաւունք ու որդիս չո-
խուր բազւմա . զարդի և շանասանն էցցացանես դաս ակը :
8 ՚ Իրուն չի բազում արարեր լուղբանութիւնն ու ած . այլ որդիս
մարդին ՚ հոգանի ընեց ոոց յաւասացին : 9 ՚ Ծբբեսցին նորա է
պարարտութիւն առն ու . և շանցիս դադիւթիւնն ու առցաւ ընդէլ
նոցա : 10 ՚ Ճին չ ոք աշբիւր իւնայ , և լուսավերեաց ոոց
աւասենէն զլոյս : 11 ՚ Օատէս զողորմութիւն ոոց ոյս ճանապար-
հութեւ . զարդարութիւն ոոց որ ուղիշ էն արտիւք : 12 ՚ Ան էիւ-
շէ ՚ի զնոյս մէր սոն ամբարդուանից . և յէւս մեղարաց դի-
րականուցին զլոյս : 13 ՚ Անդ անիցն ամենչքան ոոց գործէն
շանօրէնութիւն . մէքծային և այլ մի ի արտացեն հասպատէլ :

U. B. R. T. E. F. T. P.

1. Հարաբեկ, Տառայիշ պն. ասդուն 'ի դաւիլ:

ՅԵՐԵՅԱՆԱԿԱՆ ԵՒԴՅՈՒԳ-
ՄԱՆՈՒԹԵԱՆ ԵՎԾԱԽԱՆԻՑ և լատինացւոց
ու գնի բառդ սաշմու . այլ միայն 'է հար-
բած 'է դասին ծառայ ու առն , կամ ըստ եր-
է պէտ այս է սորուն . բայց քանզի զօրութք խմացեալ
լինի աստ բառդ սաշմու , վասն այնորին թարգմանիչք
և կամ այլք ոմանք եղեալ են զայն ներգործութք .
որպէս գնի և 'ի քանի մի սաշմոսս որ հարցն լատինաց-

Իսկ թէ յինչ առթէ ասացեալ իցէ դաւթի զայս սալբոս , և առ ինչ հայիցի զիտումն սաղմոսիս , զա- նազան են կարծիք : Ոմանք գնեն՝ թէ զայս ասաց հայելով՝ի ժամանակն յայն՝ յորում եմուտ նա զի- շերի՝ի մէջ զօրացն սաւուզայ . և էաո զգեղարդն՝ի մարդից նորա , և զիուժ ջրոյն , և մեկնեցաւ . (ա . թագ . իդ . 7 - 13 :) և ՚ի ձայնել նորա առ աբեններ զօրավար , լուեալ զձայն նը սաւուզայ՝ ասաց . * այդ ձայն քոյ է որդեակ իմ դաւթիթ . . և խոստացաւ նմա ոչ ևս հալածել զնոս . (ա . թագ . իդ . 7 - 25 :) Այս կարծիք թէպէտե ունի՝ի կողմն իւր զերեելի մեկ- նիւս ընդ որս և զվարդան . բայց բանք սաղմոսիս ուղ- ղակի յայդ ոչ հային , այլ մասամբ ինն ևեթ . որ- պէս և յայտնի տեսանի քննողաց :

Ոմանք ևս պնդեն՝ թէ զայս ասացեալ իցէ, հայելով
ի ժամանակ գերութէ բարելացւոց : Այս կարծիք
ևս զոր սակաւք ի նորոց ջատագովեն՝ երևի ինքնա-
ստեղծ . և թէպէտ բանք սաղմոսիս յայս միտու կարեն
տարածիլ, բայց յարսնը ական մեկնութք միայն, և
ու բատ նկարագրին :

Հաւանականսպոյն է ասել՝ թէ զայս աստացեալ իցէ
դաւթի կամելով յայտնել՝ թէ յինչ յօժարի ամբա-
րը տութիւն անօրինին , և յինչ բերի ողորմութիւնն

այ և արդարութիւն նորա . կամ որ նոյն է , դիտելով
ցուցանել զարութիւն անօրէնութե , և մեծացուցա-
նել զբարութիւն ողջմութեն այ և արդարութե նորա .
այլ թէ օրոշակի յինչ առթէ իցէ ասացեալ , ոչ է
յայտ : Յայս կարծիս հաստատեալ և մեր՝ ըստ այսմ
կարծեաց ունիմք մեկնել զառաջիկայդ սաղմոս : (Ա . ՅԼ
վասն բառիգ՝ ի հարաբե՞տեսն ի ներածուե զլ . թ :)

P. B. T.

ՈՎԵԿՈՒԹՅՈՒՆ

Ակզենտութիւն ու և իցէ մեղաց յերկուց յառաջ դայ . այսինքն՝ ՚ի կուրութէ մտաց , և ՚ի չարութէ կամաց . կուրութիւն մտաց հայելով՝ ՚ի մեղս՝ երբեմն է անմտադրութիւն , որ է իրը և տղիսութիւնը որով ուշ զնէ մարդ յայն՝ յոր բերի կամքն . երբեմն է պըդտորումն ինչ որով շփոթի միտքն՝ ՚ի կրից և մը ազնի , և երբեմն է մերժումն ուղիղ ձանալման , որով պարտ էր մտաց ազդ առնել կամաց մի գործել զայս ինչ կամ զայն , և երբեմն է կամաւորական արտաքսումն կամ արհամարհութիւն այնը ձանալմանն , կամ կամաւորական դիմաղրութիւն նորին : Իսկ չարութիւն կամացն է յանորութեր բերումն՝ ՚ի մեղս :

Ա. Աղետակի է՝ զի այս ըարութիւն կամաց ընդ նմին և
կուրութի մտաց թէպէտե յայլեայլ ենթակայս են,
մին ՚ի կամս և միւնս ՚ի միւս, ուակայն ՚ի զուգընթա-
նալ նոցա ընդ միւնքանս ՚ի գործել զմեղս միւնքամբ
նոպաստին այնալիսի կապակցութք՝ մինչև գրեթէ հա-
մարեայ իմնել իբրև մի ներգործութի,

Առ որ միանգամ ունի 'ի հողի խըր ունակապէս զեր-
կոսին զառա՞ այսինքն զկուրութի մտաց և զւարութիւն
կամաց , այնպիսին տիրապէս ասի անօրէն . զի զթե-
լադրութիւն ձանազման օրինացն 'ի բայ վարելով 'ի
մտաց , և զհաճութի պահպանութե օրինացն 'ի բայ
մերժելով 'ի կամաց մնայ բայ երկուց անօրէն . մի՛ ո՞-

մերժելոյ զՃանացումն օրինաց . և մի ևս ըստ ընարելոյ զբնդղէմն օրինաց . և այսու լինի անարդօղ օրինաց և արհամարհօղ օրինացըրին , յերկոսին ևս լիրք . զոր առաւել ատէ ած քան զմեզաւորս . զի որպէս ամէ սարգիս շնորհալի . ('ի մեկն . թ . պէտ . դ . 17 . Ճառ . դ .) * ած ամ ուրեք առաւել ատեաց զիրբն քան զյանցաւորն || : Առդ կամելով մարդարէին նկարէլ առաջի զկուրութիւն մտաց այսպիսի մարդոց , և զարութիւն կամաց նորա՝ ասէ :

Պատ անօրէնն եղանէլ ընդ դրս իւր : Վայ բանք թէ պէտ ըստ գործողութէ մտաց առաջի գնին , բայց յայտ առնեն միանգամայն և զներգործութիւն կամաց . այս ինքն զդիտումն կամ զվճիւ կամայն և զբնտրութին , որում զշէտ զայ ասելն մտաց՝ այսինքն Տրամայելն , Աւստի և 'ի զնելն աստ առէ անօրէնն նշանէլ ընդ դրս իւր : Հայո քան իմացեալ լիցի միանգամայն թէ գործողութի մտաց , և թէ գործողութի կամաց , որպէս թէ եղեալ եր՝ անօրէնն վճնէ և ընտրէ 'ի կամս , և ասէ 'ի միտս իւր՝ մեղանչել . որ նոյն եր՝ թէ ասեր . անօրէնն կամի և հապտատէ զմիտո իւր՝ մեղանչել . զի կուրութի մտաց նորա և չարութի կամաց նորին տայ նման այսպէս առնել : Վայի զնէ ապա և զգատառաւ այսը կուրութէ մտաց և չարութէ կամաց ասելով :

Ըէ * երիւղ այ առաջ աւաց նոր : Խըկիւղիւ ոչ իմացեալ լինի աստ երկնչիլն՝ այլ այն ինչ՝ որ ծնանի զերկիւղ 'ի մարդն , կամ որ պատճառ լինի երկնչելոյ յայ . որսիսի և Ճանացումն ածային օրինաց , ևս և Ճանացումն ներկայութէն այ և արդար վրէժինդութիւն նորա ևն . զի որ Ճանաց՝ թէ ած՝ որ է ամենազօր տոր , ներկայ է , և լինի վրէժինդիր օրինաց իւրոց . և թէ ողք միանգամ անցանեն զօրինօք նորա՝ ոչ խրնայէ 'ի նոսա , այլ մերժէ և դատապարտէ , այսպիսին երկնչի 'ի նմանէ , և համարձակի մեղանչել . իսկ որ ոչ Ճանաց զնա այսպիսի , և կամ թէ պէտ և Ճանացէ , բայց զայն Ճանացումն արտաքսէ 'ի մտաց , և կամ ոքողէ զնոյն , այնպիսին կուրանայով 'ի միտս և չարանալով 'ի կամս ոչ ևս երկնչի . ուստի և համարձակի մեղանչել :

Եւ ահայայս միտս ատէ : Ըէ * երիւղ այ առաջ աւաց նոր :

|| լրտէս թէ ասէր՝ վասն այնորիկ կամի մեղանչել անծ
թէնն՝ զի շիք առաջի աշաց նորա այնպիսի ձանալումն,
որ շարժեսցէ զնայերկիւզն այ կամդէլ 'ի մարդկային
պատկառանս . որում զհեւտ գայ մտարերել 'ի բազում
չարիս , և մերժել զնորհն այ , նաև հակառակիլ
կամաց նորա : Օ այսպիսիս նմանեցուցանէ մեկնիչն
այնոցիկ՝ որք թքանեխն յերեսս քոյ : Աստ սոցին ասէ
բարսել վարդապետ . ('ի մեկն . մարկ . զլ . թ . 10 .)
* որք ոչ հային 'ի ձառապայթս անձային զրոց՝ հանա
,, պաշ մեղանչեն . և յազգի ազգի չարիս յածին .
զրոս և կարգաւ առաջի դնէ մարդարեն 'ի չորս յետա
գայ համարսն :

Ղ. լ. քննել արժան է , զի ոչ ասէ աստ մարդարէն՝
թէ շիք երկիւղ 'ի միտս նորա , որտէս եդ յառաջնուունն
հատուածի , կամ թէ 'ի կամս նորա , այլ թէ առաջն
աշաց նորա . զի թէ ուներ զերկիւզն այ առաջի իւր ,
կամ զնա ինքն զանձ , յետս կայր 'ի չարէ . քանզի 'ի
տեսանելն ամացէ . և թէպէտ ան տեսանէլով զնա , համարձակի գոր
ծել զարն . ուստի 'ի վերայ այսր բանի խօսելով ծոր
ծորեցոյն , ('ի մեկն . մատ . զլ . ժը .) ասէ , թէ ոչ
բովչետե անօրէնն * 'ի սիրտն զոք 'ի մարդկանէ ոչ
,, ունի վկայ գմնգակացն , որչափ կամի ձնանի զա
,, ըիս . և թէպէտ ան տեսանէ , սակայն ոչ երկնչի .
,, ըստ այնմ . ասաց անօրէնն , ևն . իսկ առ արտաք
,, ունելով վկայ՝ պատկառի զարիս ձնանիլ : Աայց
քսնզի ոչ ևս կարէ ցղիտել կամ չհաւատալ . թէ ան
հայի 'ի նա , սկսանի նենգութը վարիլ . սմբն իրի յա
րէ զինի , և ասէ :

« Ենգեւայ առաջէ նորա , գործանել դանօրընութէ և աւ
ունելով :

Դապում օրինակաւ լինի նենդէլ մարդոյ առաջի այ .
մի՝ յորժամ չարաշար մեկնէ զօրէնս նորա՝ առ 'ի ան
խիղչ գործել զայնպիսի ինչ՝ որ է ընդդէմ օրինաց
նորին : Այրկորդ՝ յորժամ անփոյթ լինի մտաղրել՝
թէ զինչ կամի ան , որտէս զի մի առխապեսցի զգոց
կալ . Այրորդ՝ յորժամ 'ի սնդիլն զհեւտ անօրէնու
թէ , յազգ առնել խղչի մոտաց և 'ի հարկանէլ այ

զաիրտ նորա՝ զայն խայթուած խղչի՝ ի բաց ձգէ իս-
րամանկութը, և զուշ իւր զնէ միայն յանօրենութին՝
զորոյ վկասարումն իմնզրէ: Չորրորդ յորժամ զայն
պիտի կեղծուպատիր պատճառանո գտանէ՛ ի զործել
զանօրէնութին, մինչև զօրաւորապոյն համարիլ զայն
քան զհրամանն այ: և ըստ այնմ զործէ, զորօրինակ
թէ, ած առաւել կամի զի կեցից, քան թէ, վասն փո-
քու իրիք վտանգեցաց ՚ի մահ: իսկ արդ՝ եթէ ոչ
զործեցից զայս ինչ՝ զոր արդելու հրամանն այ՝ վտանգ
է, ինձ: ասպա լսու ևս է զործել քան վտանգիլ ՚ի կեանս,
ևն: իսկ այս բան յառաջ գոյ յայնպիսի սրտէ՝ յոր-
մէ հեռացեալ է նորհք հոգւոյն որյ, և շիք ՚ի նմա-
երկիւզ այ: Նենգերորդ յորժամ պատճռակաւ բա-
րեպաշտութէ զհեւալ լինի զործել զանօրէնութի: որ-
պիսի են կամաւոր կեղծաւորք՝ և նմանիք նոյա, որք
զործիք շարեաց առնեն զանգաշտութիւն: Ա եցերորդ
յորժամ յետ անմիտղջ զործելոյ զարդն յաւելու զոր-
ծել և զայնպիսի ինչ՝ որ երևի նմքեան բարի, զի հա-
մարի նորիմիք արդարանալ: Եօթներորդ՝ յորժամ
այնպէս ջանայ պահէլ զօրէնս այ, զի մի արհամար-
հեսցի և թելքորութիւն մարիմոյ: կամ կամի այնպէս
ծառայել այ, զի մի տրտմեսցի սատանայ: Օ այսպի-
սիս և զայլ սոցին նման զործս անօրինաց կուշ մար-
դարէն նենգել առաջի այ յաւելն: Ա
Ենգետաց առաջի նորա, գորանէ լ զանօրէնութի: և առել զիս:
Ե յսինքն, այր անօրէն՝ որոյ ոչ զոյ երկիւզ ՚ի սիրու
նորա՝ նենգութիւն վարեցաւ առաջի այ՝ եթէ ՚ի գտաւ
նել զանօրէնութիւն, և եթէ յատել: իրը զի զհեւա-
լոյն՝ նենգութիւն զամանէլ զանօրէնութի, և նենգութիւն
ինն ցուցանել՝ թէ առէ զայն: կամ թէ նենգութիւն
նորա յայսմէ: զի ՚ի գտանմէլ իւր զանօրէնութիւն՝
ձեացաւ յանէ, զինքն առեցող այնու: կամ որ նայնէ,
նենգութիւն պաէ ատել զանօրէնութիւնն զայն զոր հնա-
րա նույն արաւ: թի գտանմէլ: որոյ յարաւ նաևնա
Կ առանօր բայդ սուէ կարէ ևս հայիլ յօրէնա այ ըստ
վարդանոյ, և կամ առ ած ըստ լսեր: օրպէս թէ ե-
գեալ էր: ամսարիշտն անօրէնութիւն իւրով յօժարի ա-
տել զայն զոր հրամայէ ած, կամ զործով իւրով յու-
ցանէ ատել զնափ՝ որ հրամայէ, այսինքն զամ:

Ուարթէ է զայս բան բացասութերի իւկը ևս մեկնել այս պէս . անօրէնն նենգութեր առաջ՝ թէ ոչ ինսդրէ զան օրէնութի , այլ թէ ատէ զայն : Կամ ընդ հակառակն . անօրէնն՝ որ նենգեաց առաջի այ և եղիտ զանօրէնութիւն , 'ի հարկանելխղձի մտացն ոչ կամեցաւ առել զայն :

Դարձեալ՝ այս բան կարէ մեկնիլ յերկուս դէմս . ըմիոյ մասին 'ի դէմս մեղաւորին , և ըստ միւսոյ մասին 'ի դէմս այ . որպէս թէ եղեալէր . նենգեաց անօրէնն առաջի այ , որոյ վասն շարժեցաւ ած գտանել զան օրէնութիւն նորա , և ատել և մերժել զնա , այսինքն զանօրէնն . ուր գտանելն նշանակէ յանդիմանել , յոր միտս ասացին եղբարքն յովսեփայ . (ծնն . խղ . 16 .)

* Էֆէպ ած զյանցան ծառայիշ չոց . այսինքն յանդիմանեաց և պատժեաց զյանցանս մեր . (տե՛ս և 'ի համեմատութիւնսն :) Վապատկի բանին է ցուցանել թէ անօրէնն նենգութեր վարի առաջի այ յանօրէնութեան իւրում . և եթէ բանք բերանոյ նորա ցուցցեն թէ ատէ՝ այն ևս նենգութեր է . սմին իրի յարէ զինի և ատէ :

Դ .  անք բերանոյ նորա՝ անօրէնութիւն և նենգութեան չն .

Հայտ է թէ այլ է բան մտաց . և այլ բան բերանոյ նան մտաց՝ է ասացուած 'ի խորհրդեան մտաց՝ իբր ցոյց կամ պատկեր իրին՝ զորմէ է , իսկ բան բերանոյն՝ է ասացուած ձայնիւ արտասանեալ և է իբր պատկեր ներքին ասացուածոյն զրչաւ լեզուի ձևացեալ . և կողի խօսք :

Վակ պատկեր երբեմն ըստ ամի համաձայնի , և ասի տուտ :

Կակ երբեմն ըստ իմիք համաձայնի , և ըստ իմիք տարաձայնի , և ասի նենգութի , խարեբայութի ևն . զորօրինակ եթէ ոք ասիցէ 'ի միտս իւր , ոչ է պարտ փոխանակ բարւոյ չար հատուցանել . և ապա շարժեալ 'ի կրից՝ ասիցէ զարձեալ 'ի միտս՝ թէ կամիմ փոխանակ բարւոյ չար հատուցանել արսմ ումեք , և 'ի հաստատին յայս՝ խօսիցի բերանով իւրով ըստ առաջնումն՝ թէ ոչ է ինձ օրէն փոխանակ բարւոյ չար հատուցանել , այս խօսք նորա յայտ է՝ թէ համաձայնի առաջ-

նում ասութեան մտաց , բայց ներհակի երկրորդում .
որով և լինի նենգութիւն և անօրէնուի : | ինի նենգութիւն՝ ոչ յայն որ թագուցեալ կայ . զի այն է յայնին գործ անօրէնութե , այլ յինքեան՝ ըստ որում այլաղդէ է քան զայն՝ որ է ՚ի միտս : | ինի և անօրէնութիւն՝ ոչ յինքեան , զի յինքեան ցուցանի՝ ոչ հատուցանել չար փոխանակ բարւոյ , այլ յայն՝ որ թագուցեալ կայ ընդ նովաւ , որ է հատուցանել չար փոխանակ բարւոյ : Հայսպիսի գործս անօրինին հայելով առեւ մարդարէն :

Բանս բերանոյ նորա անօրէնութիւն և նենգութիւն : | նորէնութիւն ասէլով ոչ ցուցանել թէ նոյն բանկն են անօրէնութիւք . այլ թէ են պարունակօղք անօրէնութեց՝ զրս խորհի անօրէնն . բայց քանզի ոչ երեւցուցանել արտաքուստ ՚ի բանս անդ զանօրէնութիւն՝ զրս պարունակէ , վասն որոյ և այն բանք նորա յինքեանս են նենգութիւք , այսինքն բանք նենգիչք՝ կարգեալք ՚ի խարել . կամ են այսպիսի բանք՝ որովլք կամի անօրէնն պատրուակէլ զանօրէնութիւննան զոր խորհի գործէլ . կամ զորս գործեալէ ,

Փոքր մի այլաղդ ևս կարէ մեկնիլ այս . իբր թէ ասէլ . այն բանք զորս խօսի անօրէնն բերանով իւրով , կամ են յայտնի չարք . որպիսի են անօրէն խօսք . այսինքն բամբասմանք , թշնամանք , հայհոյանք են . և կամ գաղտնի չարք , որպիսի են նենգաւոր խօսք՝ որք արտաքուստ երեխն բարի և անվասաս , և ՚ի նելքոյ թագուցեալ ունին զարիս և զմեծամեծ վնաս . կամ համառօտիւ ևս , զորս խօսի անօրէնն՝ դիտէ նորօք՝ կամ յայտնի վնասէլ , և կամ գաղտնի վտանգել : | Խեկ պատճառ այսր ամի , այսինքն պատճառ նենգութիւնը վարելց անօրինին , կամ նենգութիւնը և անօրէնութիւնը խօսելց է այս՝ զի կամովին կուրացուցանէ զաշ մտաց իւրոց , զոր և յայտ առնէ մարգարէն ասելով :

Դ . **Է** ի ամեցաս նա իմանալ զբարի , զանօրէնութիւնը հարհեցաւ յանդունի իւրում :

Հայտ է թէ տղիտութիւն բարւոյ՝ առաջնորդէ ՚ի չարն կամ ՚ի նիւթականն և կամ ՚ի տեսականն . և թէ տղիտութիւն իցէ ակամայ՝ առաջնորդէ ՚ի նիւթական չարն .

այսինքն յայնապիսի գործո՞ որ թէպէտեւ ասի մեղք ,
բայց ոչ համարի գործողին 'ի մեղս + զի՞ ոչ զիտէր . զոր
օրինակ եթէ որ յաւուրս պահոց կերիցէ միս , ամե-
նեին ոչ զիտէլով թէ իցէ օր պահոց , այն գործ նո-
րս ասի նիւթական չար , կամ նիւթական մեղք , զի
թէպէտեւ համարիցի մեղք , բայց ոչ համարի ուստողին
'ի մեղս :

Իսկ եթէ տղիտութին իցէ կամաւոր , իբր զի չարութմու-
խին ոչ կալիցի մարդն զիտէլ թէ այս ինչ արգելեալ
է և այս ինչ հրամայեալ , այս տղիտութի նորա ա-
ռաջնորդէ 'ի աեամկան չարն . այսինքն յայնալիսի
գործո՞ որ համարեալ լինի 'ի մեղս զործողին . ոչ վա-
սինորիկ՝ զի ոչ զիտէ գործօգն . այլ վասն այսորիկ՝ զի
ոչ կամեցաւ զիտէլ զոր պարտական եր առնել կամ
չառնել . զի որովհետեւ այս ոչ զիտէլ է պատճառ
գործելոյ զարն կամ չգործելոյ զբարին՝ նա օր կամի
ոչ զիտէլ այնու կամի և զարն գործել և զբարին
չգործել :

Եթէ այս հաստատեալ է յայն բան՝ որ ասի . * որ կամի
զպատճառն՝ կամի և զպատճառելին . զորօրինակ նա
որ կամի ոչ զիտէլ զըր պահոց՝ զի մի պարտաւորեսցի
պահէլ , այս ոչ զիտէլ նորա լինի նմա պատճառ լու-
ծանելոյ զպահու . համարի նմա 'ի մեղս . ոչ զի՝ ոչ
զիտէլով ելոյց զպահու . այլ զի կամեցաւ ոչ զիտէլ
զոր պարտ եր պահէլ :

Այս որպէս կամովին տղիտանալն պահոց լինի պատ-
ճառ լուծանելոյ զպահու , սոյնափէս և կամովին տղի-
տանալն աե իցէ բարույց լինի պատճառ ոչ գործելոյ
զբարին , և դիմելոյ առ չարն . Եւ ոչ կարէ մարդ ան-
մեղադիր առնել զանձն ասելով ոչ զիտէի . կամ ոչ
խնացայ թէ իցէ այսպէս . զի կամօք մշ զիտաց . իբր զի
ոչ կամեցաւ զիտէլ կամ թէ կամեցաւ ոչ զիտէլ . այս

Ոչ կամեցաւ է զարաւու . Վայնիքն , անօրէնն վա-
սինը ոչ գործէ զբարիս , և ու խօսի զուզիղս , այլ զա-
րիս և զթիւրս , վասն զի ոչ զիտէ՝ թէ այն ինչ իցէ
բարի . և այս ինչ չար . բայց ոչ զիտէլով ոչ զերծանի
'ի մեղաց , և ոչ մնայ անպատճիթ . զի ոչ կամեցաւ խնա-
չալ . թէ որ իցէ բարի , և որ չար . կամ թէ ոչ կամէ .

յաւ իմանալ թէ այս ինչ զոր գործէ և ասէ , իցէ արդեօք բարի . և այն ինչ զոր գործէ և ասէ՝ իցէ չար . վասն զի որովհետև եղեալ է՝ ի մաի անխիղջ վարիլ ըստ հաճոյից մարմնոյ իւրոյ , և ըստ բերման ախալից իւրոյ , վասն այնորիկ և մերժեալ է յիւրմէ զգիտութիւն բարւոք տնօրինելոյ զկեանս իւր .

Այս ըստ այսմ բառութիւն որ դնի ՚ի վը հանեցաւ բայի ըստ պակասութեան բարւոյ տրամակացէ զկամին . իսկ զի մանալն տրամակացէ ըստ բացասութե բարւոյ . որպէս թէ եղեալ էր . անօրէնն կամելով զարն՝ կամեցաւ ոչ իմանալ զբարին : Բայտ այսմ տեսութիւն երկու ինչ է նշմարելի յանօրէնն . մի՛ մերժումն զիտուե՛ , և մի ևս մերժումն բարեգործուե՛ . կուրօր նոյն է՝ հրաժարումն ՚ի զիտելոյ , և հրաժարումն ՚ի բարին գործելոյ , որ

է իրը հետեւումն այնը :

Վասպիսի կամաւոր տղիտութիւն է սարսափելի ինն զի ձակ բանական ստեղծուածոյ . զի ծնանի ՚ի չարութիւն , և գնայ ՚ի չարութիւն . իրը զի՝ վո՞հակեալ լինելոյ մարդոյ ՚ի չարն՝ ախորժելի լինի նմա տղիտանալ բարւոյ . և զի այս տղիտանալ է իրը կարիլ կամ համանիլ ՚ի բարւոյ , մարդն որ հակեալ է ՚ի չարն՝ ՚ի հատանին ՚ի բարւոյն՝ կործանի ՚ի չար անդր . և որչափ կայ մնայ այն կամաւոր տղիտանալի նորա , մնայ և ինքն կործանեալ ՚ի չարն , կամ ՚ի վտանգ կործանանաւ :

Ասմբ . զկամին տարածէ ՚ի վը իմացեալ իրին . * զի այլ է ասէ սոսկ իմանալն , և այլ է հաւանին իմանալոյն . յար միտս այս բան առաջի դնի այսպէս . անօրէնն ոչ կամեցաւ առնել զբարին զոր իմացաւ . կամ ոչ կամեցաւ ՚ի գործ զնել զիմացեալ բարին . որում զի՞ւտ զայ յարիլ ՚ի չարն , և ՚ի նոյն ընկողմանիլ . զայն խորհիլ և ՚ի նոյն զնալ . յոր հայելով մար-

գարեին յարէ զկնի , և ասէ :

Օ ասորէնութիւն երբէցաւ յանկողնի իւղուում . յառու անկողնի երբակի կարէ առեալ լինել աստ : Ո՞ի փոխարեւութիւն փոխանակ չար յօժարութեան իւրում . կամ փոխանակ հակելոյ կամաց ՚ի չարն . և ըստ այսմ կամի սսել , անօրէնն ՚ի չար յօժարութեան իւրում . իրը յանկողնի հանգելով ըստ չար յօժարութիւն իւրոյ խորհեցաւ զանորէնութիւն . այսինքն խորհեցաւ գործել զգործու անու-

ըենութե իբրև զիւր հաճոյս . զի որպէս հիւանդն զիաւ գուկ տեղի անկողնոյն խնզրէ , սոյնափէս անօրէնն յամ գործս զշար հաճոյս իւր :

Եցրկրորդ՝ նմաննութե , փոխանակ այնպիսի միջոցի՝ յորում մարդ կարէ հանդիսատ խորհիլ և դործել . և ըստ այսմ կամի ասել . անօրէնն 'ի գործելն զշար և 'ի խօսին զնենգութի ոչ եթէ ըստ զիալուածոյ արար զայն , կամ թէ առանց մատծելոյ , այլ յառաջադոյն իսկ խորհեցաւ 'ի միջոցի հանգստեան՝ յանզրազ առանձնութե , որպէս թէ յանկողնի գոլով խորհէր :

Երրորդ՝ ըստ յատուկ նշանակութե փօխանակ իրական անկողնոյ՝ (այսինքն փոխանակ եաթախի) . և ըստ այսմ կամի ասել . անօրէնն նաև յանկողնի իսկ խորհի զանօրէնութի 'ի միտո իւր . և զոր չարացար խորհի յանկողնի , չարացար զնոյն կատարի , և 'ի նմին կալ ախորժի , կամ թէ զտիւ և զգիշեր զանօրէնութի խորհի և 'ի նոյն պնդի : **Եւ** առ այս յարէ մարդարէն ասելով :

Ե. **Ճ**ակաց նա յան ճանապարհ՝ որ ոչ է բարի . և 'ի լարէ նա մշ չանցրացաւ :

Ճանապարհաւ իմացեալ լինի աստ առնելութի մարդոյ՝ թէ ներքին իցէ , և թէ արտաքին . ըստ ներքնոյն իմացեալ լինի գործնական խորհրդածութի մտաց , ընդ որ իբր ընդ ճանապարհ զնոյ մարդ 'ի գործ . ըստ արտաքնոյն իմացեալ լինի նոյն իսկ գործն՝ զոր գործէ մարդ , որպէս ասացեալ եմք այլուր . և յայտ է թէ այս ճանապարհ՝ թէ ներքին իցէ , և թէ արտաքին՝ կարէ լինել բարի և չար :

Իսկ կամ 'ի ճանապարհ կը կնակի իմացեալ լինի . մի՛ ըստ զնուղոյ 'ի ճանապարհ , ըստ որում ճանապարհն է՝ յոր զնան մարդիկ . երկրորդ՝ ըստ միալոյ 'ի ճանապարհի . և այս լինի կամ վասն ոչ կարելոյ զնալ յառաջ , կամ վասն առնելոյ ինչ գործ , և կամ վասն հանգչեց . իստ այսոցիկ հայեցեալ մարդարէին 'ի ճանապարհ ապահ անօրինին առեւ :

Ճակաց նա յան ճանապարհ՝ որ ոչ է բարի : **Ե**սկինքն . այլ անօրէն զնոյ յայնալիսի ճանապարհ , այսինքն յայնպիսի խորհուրդ և յայնպիսի գործ՝ որ ոչ է բարի . որ

է ասել . խորհեցաւ զայն որ ոչ է բարի , որով և գործեաց զշարիս . և զի հանապազ ՚ի նոյն գնալով , այս ինքն զշարն խորհելով , և զշարն գործելով ՚ի նոյն սովորեցաւ , վասն որոյ և ՚ի նմին մնալ ախորժեցաւ , և զայն ինքեան հանգիստ համարեցաւ . ոչ զի բարի էր այն ձանապարհ , այլ զի ինքեան հաճոյ էր . զի զոր շար տեսանէր . հաճոյից իւրոց լիացուցիչ համարէր .

վասն որոյ և յաւելու ասել :

Լյո՞ւ է լորէ նա ու հանջրացո՞ւ : **Վ**. յոինքն , ՚ի չար խորհը զոց և ՚ի չար գործոց ոչ տաղտկացաւ , և ոչ յագեցաւ , և ոչ յետս կալ յօժարեցաւ : **Օ** ի թէպէտե խիղչ մոտաց նորա , նաև վրդովլումն սրտի նորին ցուցանէին նմա թէ չար է զոր խորհի , և զոր գործէ . և թէ ոչ գտանէ ՚ի նմա հանգիստ . բայց ՚ի միոյ կողմաննէ շարութիւննորա , և ՚ի միւս կողմաննէ շար ունակութիւնն որ յորդորէ զնա՝ զայնպիսիս խորհել և գործել , հանապազ ՚ի նոյն շարն յօժարեցուցանեն զնա , և ոչ տան թոյլյետս կալ ՚ի չարէ :

Վ. յս է ահա վիճակ առն այնպիսւոյ՝ յորում շիք երկիւղ այ . այլ նենգութիւն և կամաւորական տղիւտութիւն . խորհուրդ անօրէնութէ և յարումն ՚ի չարն . յորոց յառաջ գան և այլ չարիք . այսինքն անտղումութիւ առ կարօսեալս , անիրաւուի առ տկարացեալս , ստուի առ ամենեսին , և սյն . **Վ** քդ յառաջ բերեալ մարդարեին զառաւելուի կամ զմեծուի շարուէ մարդկան , յանգիսման կայուցանէ այժմ և զմեծութիւն կամ զբարձրութիւ բարութեն այ ասելով :

Հ. **Տ**էր յերէնս է ողբընութիւն . ճշմարդութիւն մնչեամբ :

Է. **Լ**ը բարութիւն որ որդէս լորինք ած . իրաւունք որ որդէս ծ զերս բարութիւն . զմարդիէ և զանառուն իւշույսնեն դու :

Ողորմութիւն այ է նոյն իսկ բարեհաճուի կամաց նորա՝ ՚ի հաճին տալ ամի զամ՝ որոց միանգամ կարծոին . մանաւանդ ՚ի տալ զնորհու և զմոլութիւ մեզաց . և ՚ի ցուցանեն զօդնութիւ առ ՚ի բարին , և զարաշտպանութիւ ՚ի չարէ . (զայսմանէ տես ՚ի սաղ . լը . 4 :) **Խ**ակ չը:

մարտութիւն այ է նոյն իսկ ճանապղողութիւն այ որով ճանաւը զինքն և զամ. և զի ած ըստ այսմ իւրց ճանապղ ման եղեալ է զօրէնս, և խոստացեալ է առաջ վարձս որոց պահեն զայն, և պատիմս՝ որոց ոչ պահեն . հաւատարմութիւն այսր խոստման ևս առի ճշմարտութիւն, և յայս միտո գնի աստ բառդ ճշմարտութիւն, այսինքն փոխանակ հաւատարմութիւն խոստման նորա : Իսկ արդարութիւնն այ է նոյն իսկ կամքն այ որով համի առնել զայն՝ զօր արդար տեսանէ, և տալ իւրաքանչիւրց ըստ գործոց իւրեանց : Ամանապէս իրաւոնքն այ են դատաստանք նորա, որով դատէ դատաստան արդար . կամ են վշիոք, որով սահմանեալ է զայն ոք առ այս, և զայն ինչ առ այն :

Այս ամ, այսինքն ողորմութիւն, ճշմարտութիւն, արդարութիւն և իրաւոնք այ կրկնակի մտածին . մի՛ յինքեանս 'ի յած, և մի ևս՝ 'ի ներդործութիւն իւրեանց, որք եղերին յարարածս : Իստ որում մտածին 'ի յած ոչ զանազանին իրը այլեայլ իրք, այլ են նոյն՝ որինչ է ած, Իսկ ըստ որում մտածին 'ի գործողութիւնն իւրեանց, որք կատարին 'ի սաեղջուածս՝ զանազանին իրը այլեայլ գործք, այսինքն իրք գործ ըստ ողորմութեան, իրը գործ ըստ արդարութեն, և իրը գործ ըստ իրաւանց . և վասն այս ըիկ այն ամ զօր առնէ ած ըստ ողորմութեն՝ կոչի ողօր մութիւն . և այն ամ զօր առնէ ած ըստ ճշմարտութեն՝ կոչի ճշմարտութիւն . նոյնապէս և այն ամ զօր առնէ ած ըստ արդարութեն՝ կոչի արդարութիւն . և այն ամ զօր առնէ ած ըստ իրաւանց՝ կոչի իրաւոնք :

Ո այսոցիկ զամենայնի զկատարելութիւն կամելով մարզարէին ցուցանել նմանութիւն խօսի, և 'ի մէջ բերէ զայնապիսիս՝ որք զգայութեն մերում երեսին մեծ, անշափ և անհաս . որպիսի են երկինք, ամսկը, լերինք, և խորք . զի յայտ է թէ երկինք ոչ միայն մեծ են, այլև անշափ երեսին մեզ . և որ ինչ կայ 'ի վեր քան զնա՝ զգայութիւն մեր ոչ հապանեն յայնս . զաստեղս և եթ նշմարեն . և այն ոչ որչափ են, այլ որչափ ոչ են : Այսապէս և ամսկը մեծ երեսին . և որ ինչ կայ 'ի վերց քան զամո՞ իրք անշափի իմն համարեալ լինի մեզ և յաջաց ծածկեալ . Ամանապէս և որ ինչ կայ 'ի զա-

գաթս բարձրաբերձ լեռանց՝ որը զանցանեն զամ
պովք՝ ոչ հասանէ տեսութիւնը : Այնպահակ՝ որ ինչ
կայ՝ ի խորս երկրի կամ յանդունում՝ ոչ կարեմք տե-
սանել : Ըստիսեօք ջանայ մարդարէն ահեղ ինն
նկարել զմեծութիւնորութեն այ , և ճշմարտուե նորա
և որ՝ ի կարգի ըստ անշափութեն , ըստ անհասութեն և
ըստ անտեսութեն : Խա նախ զողորմութէն այ խօսելով
ասէ :

Տէր յերկին և առընտելի այ : Այսին թէպէտե կարէ
ինացեալ լինել . թէ ողորմութիւնն այ առաւել փայլէ
յերկինս՝ ի փառաւորել նորա զսուրբս իւր , բայց միտ
քանին է ցուցանել զբարձրութիւն և զմեծութիւնոր
մութէն այ . և այս բարւոք կարէ բացատրիլ՝ եթէ յա-
ւելցի նախաղբութիւն դնչւ . որպէս թէ ասեր . ողոր-
մութիւն քո տէր մեծ է յոյժ , և հասանէ յերկրէ մինչեւ
յերկինս , և ՚ի վեր . յոր միտ ասի՞ ի սաղ . (ծղ . 44 :
և ՃՀ . 5 .) * Ո՞եծ եղեւ մինչեւ յերկինս ողորմութիւն
,, քոյ ॥ . որպէս թէ ասել . այնշափ մեծ է ողորմութիւն
քո . մինչեւ նուու զերկինս և զերկիր . և վասն այս
շափ մեծ լինելց անշափ է և անհաս : Այսինպէս խօսի
և զշշմարտութէն այ ասելով :

Դշմարտութիւն այ դնչւ յա նոս : Ի յախնքն՝ ճշմարտութիւ-
քանից և գործոց քոյ , կամ հաւատարմութիւն խոստ-
ման քոյ , զոր արարեր՝ ՚ի ձեռն անշափ ողորմութեան
քոյ . կամ այս ամենայն զոր ցուցանէ ճշմարտութիւն
քո . մեծ է յոյժ , մինչեւ անցանել քան զամաս , կամ
ձղիլ յերկինս՝ յորս են ամսթք . կամ որ նոյն է՝ ճըշ-
մարտութիւն քոյ այնշափ մեծ է՝ մինչդի նմանի այն-
պիսի իրի՝ որ ձղիցի յերկրէ մինչեւ յամաս , որոյ և
ծայրն ոչ երեխիցի աշաց մերոց՝ իրդեւ անեզր և անշափ :

Օսպն ասէ և ՚ի սաղ . ծղ . 44 : և ՃՀ . 5 : Այսինպէս և
զարդարութէն այ խօսելով ասէ :

Կարտրութիւն այ որպէս լիբին թծ : Ի յախնքն՝ արդա-
րութիւն քոյ այնշափ մեծ է՝ մինչեւ նմանիլ բարձր լե-
րանց՝ որոց զադաթթն ոչ նշմարի : Խխօսելով ասաւ և
զիրաւանցն այ՝ ասէ :

Իրասունն ոռ որպէս լիառն բազան : Առմ ըս տագագրեալ
սաղմասաց որպէս խօրք բազան : Ի յախնքն՝ իրաւունք
քոյ որով կարգես զայս ոք առ այտ , և զայն ինչ առ

այն, կամ որով դատես զամենայն՝ խորին են և անհետազօտելի . և նմանին այնպիսի խորոց բազմաց, որոց յատակն ոչ տեսանի :

Այլ քննել արժան է՝ թէ ընդէր՝ ի խօսիլ մարգարէին զողովրմութէ՝ ի մէջ բերէ զերինս . և ՚ի խօսին զշմարտութէ՝ զամս . ՚ի խօսին զարդարութէ՝ զերինս . և ՚ի խօսին զիրաւանց՝ զխորս բազում : Յիրն հայեցեալ այս ամենայն առ մի ինչ կարգին . այսինքն առ ՚ի ցուցանել զմեծութիւն և զանհասութի իրացն . (որպէս ասացաք .) զի յայտ է՝ թէ ըրեթին այդպիսկ յանդիման առնեն զայսպիսի ինչ :

Խսկ յորոշումն նշանակութէ հայելով մարթ է ասել թէ որովհետեւ մեծ է երկինք քան զամենայն, բերի ՚ի ցոյց առաւել մեծ երևելոյ մեզ ողորմութիւնն այ . զի թէպէտ ողորմութիւնն այ և արդարութիւն նորա, նոյնպէս և ձշմարտութիւն և իրաւանք նորա ՚ի կողմանէ իրին են հաւասար, բայց ՚ի կողմանէ մերմէ կըռեալ՝ կարեմք ասել՝ թէ ողորմութիւնն այ առաւել մեծ է առ մեզ : Առաջի խօսելով լամբրոնացւոյն առ ած՝ ասէ . * ողորմութիւգ է մեծ և զօրաւոր, որ մինչ չերկինս հասանէ՝ քան զարգար իրաւունագ՝ որ մինչև յաման : Այս յայս միտս պօղոս առաքեալ ՚ի մեծացուցանելն զած՝ զողորմութիւնէ նորա բուռն հարկանէ ասելով . * ած՝ որ մեծն է ողորմութեամբ : մէասէ որ մեծն է իմաստութք, կամ արդարութեամբ, այլ ողորմութք . (Եփես . թ . 4 .) ՚ի ցուցանել զմեծութիւն ողորմութիւննորա, և զլինել նորա անշափ և անհաս . յոր միտս ասաց մանասէ արքայ . * անշափ և անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց : Այս գարձեալ՝ որպէս երկինք պատեալ է զերկիր և զամենայն ինչ յամենայն կողմանց, և պահէ զայն յինքեան, սոյնպէս և ողորմութիւնն այ պատեալ է զմեօք և պահէ զմեզ . միայն յամբարտաւանից հեռի կայ, ըստ զրոց : Այսնգունակ և առ ցոյց մեծութեան ձշմարտութեամն այ յառաջբերէ զամս . զի որպէս ամսիք անձը են ՚ի մեզ, սոյնպէս և ձշմարտութիւն խոստմանն այ անձրեէ՝ այսինքն տայ, զօր խոստանայ . բայց զի ստորին են ամսիք և փոքր յոյժ քան զերկինս, այսուցուցանի թէ ձշմարտութիւն խոստմանցն այ, թէպէտեւ

յամենայնի կատարի , բայց ոչ յամենեսին . զի ոչ ամենեքին պահէն զպայմանն խռատմանն նորա . և ոչ ամենեքեան ընդունին զանձրեւ շնորհաց նորին , այլ բազումք հեստեն . որպէս և յայտ է : Խակ ողղովնունին այ յամենայնի և յամենեսին կատարի :

Կմանապէս և առ ցոյց մեծութեան արդարութեանն այ ՚ի մէջքերէ զլերինս . զի լերինք իւրեանց մեծութեամբ ցուցանեն զահէղութիւն և զհատատութիւն իրաց՝ որոց բերին յօրինակ . մանաւանդ ՚ի նիւթ արդարութեն և ՚ի նիւթ գատատատանի . ըստ որոյ յաւուրն յետնում գործք արդարութեն այ և գործք մարդկան երեւսցին իրեւ երկու լերինք . յորոց վերայ կացցէ ած և զատեսցէ . (զաքար . դ. 1 . և ժդ . 4 .)

Բատ այսմ և առ ցոյց մեծութեան իրաւանցն այ քերէ զնորա բազում . զի խորք կամ անդունդք՝ են միջոց խոր՝ որոյ յատակն ոչ նշմարի . և որ մերձենայ ՚ի նա առ ՚ի հայիլ ՚ի վայր՝ ՚ի սոսկումն զայ : Վայսպիսի ինչ է և իրաւունքն այ զդրմէ են բանք մարդարէին . զի է խոր անյատակ ամենեսին անհաս ՚ի մտաց մերոց . քանզի ՚ի քննելն՝ թէ ընդէր ած զայս ոք յայս ինչ ՚ի վեր էառ , և զայն ոք եթող . ընդէր զայս ոք կոչեաց ՚ի հաւատո , և զմիւմն զայն ոչ . ընդէր այսմ ետ զմեծութիւն , և այնմ զաղքատութիւն . ընդէր զայս ոք պահէաց ՚ի կեանս և յառողջութեն , և զայն ոք եբարձ ՚ի կենաց , և կամ մատնեաց ՚ի հիւանդութիւն , կամ ՚ի կուրութիւն , կամ ՚ի յիմարութիւն , և ընդէր յայս ոք այսպէս արար , և յայն ոք զներհակն . և այլ սմին նման տնտեսութիւնք նորա անքննելի են և անհաս ՚ի մէնջ . և եթէ կամիցինք մերձենալ ՚ի քննութիւն , սոսկումն պատէ զմեզ . և տկարութիւն մտաց մերոց շուարեալ արկանէ զմեզ՝ ՚ի յիմարութիւն յուսահատուե : Օ ՚ի բազումինչ կան ՚ի նմա , յորս ամենեսին տկարանամք քննութիւն առնել : Խւ թերես յայս միտ յաւելու մարդարէն զբառութեալում . ասելով * Խրա . „ առանք ոռպէս զիսորս բաղաւն . որով ցուցանէ՝ թէ բազմապատիկ են խորք իրաւանցն այ . և միտք մեր թէկ ՚ի մին կարիցէ մերձենալ՝ ՚ի միւսն ոչ կարէ : Կայ և այլ ինչ քննելի աստանօր ՚ի բանդդ . զի մար-

գարեն կարգաւ իջուցանէ զնմանութիւնն , յերկնից՝
որ 'ի վեր և քան զամենայն . և յանալոց՝ որ 'ի խնարհ
են քան զերկինս . 'ի լերանց՝ որք 'ի վայր են քան
զամարտ . և 'ի խորոյ՝ որք 'ի ստոր են քան զերինս . և
ըստ սոյցին դնէ նախ զողովանութիւն , ապա զշմար-
տութիւն . յետոյ զարդարութիւն , և զինի զիրաւունս :
Վանդի նախ առաջին ողորմութիւնն այ՝ որ քան զամ
առաւել եղեւ առ մեղ շարժեաց զնա առնել զմեղ
ժառանգս իւր յերկինս 'ի ձեռն յաւխտենական փրր-
կութեան : Վայր եկն զչետ զի խոստացաւ ձշմարտութ-
իւրով տաւ յամկոց իւրոց այսինքն 'ի գանձօւց իւրոց՝
զվարձս այնոցիկ՝ որք միանգամ կամիցին պահել ըզ-
բան նորա : Եւ այսմ հետեւի հատուցանել արդա-
րութ 'ի յաւխտենական լերանց իւրաքանչիւր ըս գործս
իւր : Խսկ թէ զինչ իրաւունք իցեն՝ զի այս ոք ա-
ռեալ լիցի 'ի վեր , և այն ոք թողցի , ծածկեալ է 'ի
խորս զիտութեանն այ . (զորմէ տես հռովմ . թ .
14 = 33 :)

Վարձեալ մարդարեն աստմոր զողորմութիւնն այ յեր-
կինս վերածելով , խսկ զշմարտութիւն և զարդարութիւ-
ն զիրաւունու նորա յայլ իրս տպաւորելով ցուցանէ
և զայս թէ առ մեղ հայելով ձշմարտութիւն և ար-
դարութիւն և իրաւունք այ պարագրին յողորմութիւն ,
որպէս պարագրին 'ի յերկինց ամպք , լերինք , և
խորք , և այլ իրք . զոր և յայտնի առաջի դնէ մար-
դարեն 'ի յաջորդ համարն : Վայց նախ քան զառաջի
դնել զայս զլրումն զործոց ողորմութիւն նորա որ յերկ-
րի 'ի մէջ բերէ 'ի վերջ այսր եօթներորդ համարոյ՝
ասելով :

Օ հարդէի և զանառան իշշուշանէս քու ուէ : Հայտնի ե-
րեխ ողորման թիւնն այ 'ի մարդիկ՝ 'ի խնամելն զնոսա ,
և զորս արար վասն նոցա . մանաւանդ յորս են կեանք .
որպիսի են անասունք , և այլ կենդանիք . և առա-
ւել փայլէ նոյն ողորմութիւն այ 'ի կեցուցանեն զնոսա .
վասն զի կեանքն է մեծազոյն բարի յարարածս . և զի
որշափ մեծ է բարին՝ որ տուեալ լինի կարօտելոյն ,
այնչափ մեծ ցուցանի և ողորմութիւնն , այսու խսկ մեծ
երեխ և ողորմութիւնն այ , 'ի տալ նորա զկեանս մարդոց

և այլոց շնչառորաց վասն մարդոյ , և 'ի կեցուցանել զնոսա :

Վարդ կեցուցանելն այ զմարդիկ և զանասուն առ հասարակ՝ յայնս լինի՝ յորս սպահի կեանք նոցա . և զի կեանք անսասնոց պահի 'ի զգայական գոյութեան , և կեանք մարդկան 'ի զգայական և 'ի բանական գոյութեան , 'ի սոսին պահելով զնոսա՝ ասի կեցուցանել զնոսա : Առ քանզի բանական կեանք մարդոյ գերագոյն է քան զզգայականս , վասն որոյ զկեանս ըզգայնոց կարգեալ է անձ 'ի ծառայութի այսր բանական կենաց . և յայս իսկ կեցուցանել զանասունս :

Դայց որովհետու անձ կարգեալ է զմարդիկ 'ի ժառանգութիւն՝ ըստ որում է յինքեան 'ի զերբնական վիճակի , ըստ այսմբ բանի ևս կեցուցանել զնոսա նաև ըստ զերբնական կենաց , աստ 'ի ձեռն չնորհաց , և 'ի հանդերձեալն 'ի ձեռն փառաց . յոր միտս կարէ ի մասցեալ լինել այն՝ զոր ստաց տղին մեր . * Ես եկի՛ զի ու զկեանս ունիցին (այսինքն զջշմարիտ կեանս 'ի ձեռն չնորհաց) , և առաւել ևս ունիցին ('ի հանգ դերձեալն 'ի ձեռն փառաց) || . (յովհ . ք . 10 :) Քայսմ ամենայնի տեսանի՝ թէ անձ կեցուցանել ըզգմարդիկ բազմապատիկ կենօք . իսկ զանասունս միայն զգայական կենօք . վասն որոյ նախ զմարդիկ յիշել մարդարէն և ապա զանասունս :

Ուարթ է աստանօր բառիւդ ճարդէ՛ իմաննալ միայն զայնասիկ՝ որդ ըստ ուղիղ բանի և ըստ օրինաց վարին իբրև մարդ . իսկ բառիւդ անառանդ՝ իմաննալ զայնոսիկ՝ որդ ոչ ըստ ուղիղ բանի և ըստ օրինաց , այլ ըստ թեշաղրութիւն զգայունց վարին իբրև զանասունս . զորոց և խօսեցաւ 'ի նախակարգեալ հինգ համարն : Քայս միտս առեւալ կամի ասել . անձ 'ի ձեռն ամենացութ ողրութիւն իւրոյ սնուցանել և գարմաննել զամբարդիկ , ոչ միայն զբարիս , այլև զշարս և զանասնացեալ . և ամենեցուն տայ զնորհս իւր . բարեաց՝ առ 'ի հաստատուն կալ 'ի բարի կեանս , և յառաջանալ 'ի նոյն , և չարաց՝ առ 'ի դառնալ , և կեալ չնորհօք . քանզի ոչ կամի՛ թէ մնասցեն նոքա 'ի մահու , այլ զի գարձցին և կեցցեն (եզեկ . ժը . 23 . և 32 :)

Եւ մեկնութեն կարէ տաղածիլ և 'ի վերայ համօրէն մարդկային բնութեան . որ 'ի պատուի գործը ոչ խմացաւ , այլ զգայութեան զշետ գնալով հաւասարեցաւ անանոց անբանից , յորոց ընտրեաց ած իւր ժողովուրդ զիարայէլացիս . և 'ի լրման ժամանակաց՝ եկն և կեցոյց՝ ոչ միայն զիարայէլացիս՝ իրքե զմարդիկո , այլև զամենայն հեթանոս իրքե զմաստունս . և յաղթեալ թշնամեոյ նոցա սատանայի՝ ազատեցոյց և արդարացոյց զնոսա՝ ոչ եթէ բռնութեք , այլ իրաւամիք : Ուստի 'ի մեկնել մեծին խոսրովու զայս բան ('ի մեկն . ժամագր . երես 203 .) ասէ . * արդարութիք ոյ որպէս լերինք աւր ած մեր , և իրաւունք քո որ , արէս խորք բազում . քանզի ոչ բռնութեք , այլ արդարութեք յաղթեաց թշնամեոյն մերոյ և արդարացոյց զմեզ || . և իւրով խոնարհութեք բարձրացոյց զապականեալ բնութիւնս մեր 'ի գերազոյն փառս :

* | և արդ ժամ է մեզ . . . (ասէ սարգիս շնորհաւ լի 'ի մեկն . առ . պետ . ք . 24 . Ճառ . դ .) զմարգարէ ընկանան երգել զերգս . արդարութիք քո անկշռեալ միք ոնկ լերինք ած , և իրաւունք քո խոր անզունդք . արդարե խոր անդունդք են դատաստանկն այ . եւ թէ յինչ պատճառս զվայրանկեալ և զաղտեղեալ բնութիս և զդիւաց նմանեալ՝ յայնպիսի գերակայ և անձառ բարձրութի վերացոյց , յայսպիսի նուաստութիւն զինքն զինքն զիջուցանելով գերակայ բնութին || ; | և քանզի սպիտմիք բազմապատիկ եցոյց զիննամն ոյ զորմութեան իւրոյ , և ետ ամեննեցուն յոյս երանական կենաց , զայն ևս 'ի մէջ մատուցանէ մարգարէն , և 'ի հասարակի կարգելով զբանն՝ ասէ :

Հ . **Ո**լորէս զի բազում արարեր զողորմութիւն ոյ ած , այլ որդէս մարդկան 'ի հովանի ներոյ ոոց յաւասացին . Օ ինամն այ կոչէ աստ ողորմութիւն . զի յամենայնի յորս ցուցանէ ած զիննամն իւր՝ յայտնապէս տեսանի և բազում ողորմութիւն նորա : | Ստեղծադործեն զմարդ՝ քանի քանի իննամն սղորմութեան եցոյց նմա . (զորմէ աեւ 'ի սաղ . ը . 6 :) և 'ի մեղանցել նորա զնրապիսի խնամս ողորմութեան էած զնովաւ . կոչեաց

քաղցր ձայնիւ՝ ուր ես . ծածկեաց զմերկութի նորա . և որ մեծն է՝ խոստացաւ նմա զբրկութի իւր՝ զր առ նելոց էր մարդանալով : Յետ այնորիկ ՚ի բազմանալ մարդկան և յանանանանալ նոյց , քարոզութեամբ նոյի զամն հարիւր և քսան յորդորեաց զնոսա դառնալ ՚ի չարեաց . քանի ապա յետ ջրհեղեղին . քանի ևս ՚ի զալ և ՚ի զենուլ զմարդկայինս կերպարան , և տալ զանձն փրկանս վասն փրկութեան մարդկան : Յայսոսիկ և յայլքազմապատիկ գործս ողորմութեանն այ հայելով ասէ :

Ուրիշ չէ բարձր արարեր զնութեանի ուր ած : Ուր բառդ՝ որուի զի՝ զնի իրը զարմացական՝ ըստ որում է և յեր բայտականն և յայլս . իրը թէ ասացեալ էր , ով թէ զիարդ բազմապատիկ օրինակաւ ցուցեր զողորմութիւն քոյ յարարածս ամենայն . և առաւել ևս ՚ի մարդիկ՝ յայլեայլ իրս : Հայելով ապա սոսկ ՚ի մարդիկ՝ ասէ :

Վայլ որդէս մարդկան ՚ի հոգանի նետոց ուր յուստուցին : Վստա նոր բառդ այլ կը կնասիի յարէ զայս բան ընդ նախրն թացին . մի իրը բացառոյական շաղկապ՝ առեալ փո խանակ բառիս բայց . և մի ևս իրը բաղմիւսական շաղկապ՝ առեալ փոխանակ բառիս և :

Եթէ բառդ այլ յարեսցէ զայս բան իրը բացառոյա կան , յայտ առնէ թէ ՚ի ցուցանել այ զբազում ո զորմութիւն իւր առ ամենայն արարածս , ևս և առ ամենայն մարդիկ , թէպէտ և ամենեքին առնուն զայն և վայելեն , սակայն ոչ ամենեքին միասկէս . զի անզգայ արարածք՝ նոյնպէտ և անսասունքն՝ ոչ ձանա չելով թէ յողորմութենէն այ վայելեն՝ զոր ունին , ոչ բերկրին վասն ունելոյ զնոսին . իսկ ամբարիչտ մար դիկ թէպէտև ձանաչեն՝ թէ յողորմութէն այ ունին՝ զորս վայելեն , սակայն իրըև անսասունք շատացեալ նոքօք՝ զորս յաստի կեանս վայելեն՝ զնոսին միայն կամին ունել . և ՚ի նոսին ևեթե գեալ զերանութիւն իւրեանց չունին յօյս հանդերձելոյն . և ոչ իսկ կամին յուսալ յած իրըև ՚ի պարզեատու իւրեանց , որով և զրեթէ հաւասարին անամնոց :

Բայց ասէ որդէս մարդիս . այսինքն այնորիկ՝ որը ոչ

իբրև զանասունս , այլ իբրև զմարդիկ ըստ կանոնի բանականութեւ և ըստ օրինացն այ վարին՝ կամ վարիլ կամին՝ նույն ՚ի հոգածի լեռոց այ յուսասցին : Որով կամի ասել՝ թէ զորօրինակ ձազք հաւոց ՚ի հովանի թեոց մօր իւրեանց ապաւինին և սպահպանին , խնամին և հանգչին , սոյնափէս և բարի մարդիկ ՚ի հովանի թեոցն այ ապաւինին . ընդ նովաւ սպահպանին , և ընդ նովաւ հանգչին . ընդ նովաւ դտանեն զոր խնդրեն , և ընդ նովաւ խնդրան և բերկրին :

Իսկ հովանեաւ թեոցն այ խմացեալ լինի նախախնամութիւնն այ , զոր ցուցանէ երկրպումք , այսինքն օգնականութեք և պաշտպանութեամք իբր երկրպումք թեօք . օգնականութեք առ ՚ի բարին . և պաշտպանութեք առ ՚ի չարին :

Օ այսպիսի նմանութիւն բազում ուրեք ՚ի կիր առնու մարդարին ըստ այլեայլ կարդի բանից . յասել նորա (՚ի սաղ . կը . 4 .) * | թիկնամիջու իւր ընկալցի զքեզ . ՚ի հովանի թեոց նորա յուսասցիս || . և (՚ի սաղ . ժկ . 10 .) * | նդ հովանեաւ թեոց քոց ծածկեսցես , զիս յերեսաց ամբարշաց || . որպիսի է և այն՝ զոր ասէ (՚ի սաղ . կը . 8 .) * | չղեր իմ օգնական . ՚ի հռ . վանի թեոց քոց ցնծացոյց || : Ոյնափէս և այլ մարդարեք բազում ուրեք վարեն զայս նմանութի , որպէս և այն՝ զոր ասաց մովսէս , թէ ած * իբրև զարդուի (ինամ կալաւ ՚ի վերայ իսրայէլի) ՚ի ծածկել զբոյն իւր , և ՚ի ձագս իւր գթացաւ . տարածեաց զթես . իւր , և ընկալաւ զնա || . (օրին . լք . 11 .)

Եթէ բառդ այլ յարեսցէ զայս բան իբր բաղչիւան կան շաղկապ , զօրութեք ՚ի մէջ բերէ և զբառդ կամ այսրիէ . որպէս թէ ասէր : Քազում արարեր զողորմութիւն քոյ . վամն այսորիկ և որդիք մարդկան ընդ հովանեաւ թեոց քոց յուսասցին : Եւ ըստ այսմ այս բան մարդարէին հայի ՚ի բովանդակ ազգ մարդկան ՚ի յանցուցեալ և յանկեալ բնութեան . յորում չկայր այլ յոյս փրկութեան բայց եթէ ՚ի ձեռն այնք սրանցելի ողորմութեան՝ որով գթացաւ արարին , եկն և մարդացաւ և եղեւ որդիք մարդոյ . և տարածեալ զթես իւր ՚ի վերայ խայչին՝ ժողովեաց առ ինքն զոր

զիս մարդկան :

Ի՞նգ այս ողօրմութիւն զարմացեալ մարդարէին՝ ասէ . զիարդ բազմացուցեր և սքամնչելի ցուցեր առ մարդիկ զօղօրմութիւն քոյ , 'ի զալ քո առ նոսա առ 'ի փրկել զնոսա . վասն այսորիկ և նոքա յուսասցին 'ի հովաննի թեոց քոյ՝ այսինքն 'ի տարածումն բազկացդ 'ի վերայ խացին . զի 'ի նմին կատարեսցես զիրկութիւն նոցա , 'ի նմա ջնջելով զմելոս նոցա . 'ի նմա աղբերացուցա նելով զնորհս քո առ նոսա , և 'ի նմա հորդելով ճանապարհ կենաց և երանութեն նոցա , մինչեւ ժամանեցուցես զնոսա 'ի տուն քո . այսինքն յարքայութիւն երկնից . Խակ թէ զինչ լինիցի նոցա անդ՝ յայտ առ նէ յաջորդ բանիւն ասելով .

Եթ . **Ա** բբեացին նորա 'ի պարարտութենէ ոտես ու . և զուղին իաբիութեն ու ուշես ընդէլնոցա :

Խոր զիրս որչափ բանք լինին զերանութենէ երկնից՝ զորս ժառանգեն սուրբք , փոխարերութեք և սիւսպէտ նմանութք առաջի դնին . վասն զի անձառելի են . և թէպէտ կարէր ած բերանով մարդարէից Ճառել բայց մեզ լինէր անխմանալի , և նոցին խակ մարդարէից անհասանելի . վասնզի չէ անցեալ 'ի սիրտ մարդոյ այնպիսի երանութեան նշմարանք , որպէս ասէ առաքեան . (ա . կոր . թ . 9 :) վասն այնորիկ յամենայնի նմանաբանութեք աւանդի՝ որ ինչ միանգամ պատմի զայնմ երանութէ . որպէս առնէ և աստ մարդ գարէն 'ի մէջ բերելով զարբումն և զրմալումն :

Վոր բացատրութիւն այսօր զիտելի է . զի երանութին յաւիտենական լինի ժառանգելով զամն՝ որպէս և լինչ քեան . իսկ այս ժառանգութիւն այ լինի գէմ յանդի ման տեսաւթիւն է, ութեն նորա 'ի ձեռն մասց . յորմէ ծագի զի 'ի կամս վայելումն . և 'ի վայելման անդ ուրախութիւն և զիայլումն . Խը որպէս զի բարւոք ծանիցի այս ամենայն , արժան է մեզ յարմատոյ յառաջ բերել զբանն . և սկսանէլ 'ի տեսութենէն այ . զի և յայլ բազում տեղիս կարևոր է տեղեկութիւն այսօր :

Վրդ զրօրինակ յիշեցաք ('ի սաղ . ին . 16 .) տեսութին այ չորեքին կարէ ասիլ . մի՛ բովանդակելով . երկի

բորդ՝ մարմնաւոր աշօք . երրորդ՝ բնական զօրութիւն , և չորրորդ գերբնական օժանդակութեամբ . Դռաջնն է բացարձակապէս անկարելի և իցէ ստեղծուածոյ . զի առ այն պահանջի անսահման ներգործութիւն մտաց . իսկ այս աստուծոյ միայն է սեփական ըստ որում ինքն միայն բռվանդակէ զինքն . և ըստ այսմ ասի աստուած անբովանդակելի 'ի մէնջ , անհասանելի , անպարազրելի , անըմբռնելի , ևն :

Երրորդն՝ այսինքն մարմնաւոր տեսութիւնն է արտաքոյ ամենայն կարելութեան . և պատճառն է զի ոչինչ կարողութիւն կարէ բերիլ արտաքոյ իւրոյ առարկայի . որպէս ականջն ոչ կարէ առնուլ զհոտ . և աչքն ոչ կարէ լսել . իսկ արդ մարմնաւոր տեսութիւնն ունի իւր առարկայ միայն զմարմնաւորս . իսկ անձ է պարզ հոգի իմանալի . ասքա ոչ կարէ մարդ մարմնաւոր տեսութիւն բերիլ յանձ , յւ ըստ այսմ աստուած ասի աներեցոյթ , անտես , ևն :

Երրորդն՝ այսինքն բնական զօրութեամբ տեսանելն ևս է անկարելի . քանզի՝ առ 'ի տեսանել կամ ձանաւել զիմն բնական զօրութեամբ մտաց՝ հարկ է զի տեսեալն կամ իմացեալն իմանալապէս , լինիցի՝ 'ի տեսօղն կամ 'ի ձանաւզղն . և այս ըստ եղանակի գոլոյ նորա , վասն զի որ լինի յայլում՝ ըստ եղանակի գոլոյ նորա լինի՝ 'ի նմա . ուստի յորս է բնական գոլ անկատար որպէս 'ի բանական հոգին՝ և 'ի հրեշտակն , յայնպիսիս ծանուցեալն կամ տեսեալն ըստ նոցին անկատար գոլոյն լնակալեալ լինի՝ 'ի միտս : Դպա եթէ անձ բնական զօրութեամբ լինէր տեսեալ՝ 'ի մտաց մարդոյ կամ հրեշտակի՝ ըստ եղանակի գոլոյ նոցա լինէր՝ 'ի միտս նոցա այսինքն ըստ անկատար գոլոյ , ապա թէ ոչ ոչ լինէր՝ 'ի նոսա ըստ բնական զօրութե նոցա . Իսկ արդ այսպիսաբար լինեն այ 'ի միտս ոչ է դէմ յանդիման տեսանիլ՝ որպէս է յինքեան . այլ այլով իւիք՝ իբր օրինակաւ :

Ե գնիլ այսր հետեի՝ թէ անհնար է ու և իցէ էակի բնական զօրութիւն տեսանել զանձ դէմ յանդիման . և յայս միտս անձ ասի անիմանալի , անմերձենալի , ևն :

Եր որ ինչ միանգամ ասի 'ի սուրբ զիրս վասն ոչ կարե-

Եյ ումեք տեսանել զանձ՝ ըստ միոյ այսոցիկ երից եւ զանակաց իմացեալ լինի :

Իսկ չորրորդ եղանակն ոչ միայն է կարելի, այլ և հաւատալի, և ամբ հաւատացելոց ակնկալելի : զի այն միայն է առարկայ յուսոյ մերոյ՝ ըստ որում խոստացեալ է ամ, յասեն թերանով իւրով . * Խըանի որք որք են սրտիւք, զի նոքա զանձ տեսցեն . (մատ. է. 8.) և ինքն վկայեաց թէ հրեշտակը հանապազ տեսանեն զերեսս հօր, այսինքն զեռութիւն այ . (մատ. ժը. 10.) Օսոյն կնքեցին և առաքեալք իւրեանց բանիւ . զի մին ասաց . * Վայեմ տեսանեմք իբրև ընդ Հայելի օրինակաւ . այլ յայնժամ դէմ յանդիման . այժմ խելամուտ եմ փոքր 'ի շատէ . այլ յայնժամ դիմացից, որպէս և նայն ծանեաւ զիս . (ա. կոր. ժդ. 12.) եթէ դէմ յանդիման, ապա որպէս և յինքեան . և այնպէս որպէս նա ծանեաւ, ապա որպէս և էն . զի նա ծանեաւ որպէս և եմք . ապա և մեք ճանաչելոց եմք զնա՝ որպէս և էն, Այնպէս և միւսն ասաց, այն է՝ յոլիշաննէս . * Աիրելիք՝ այժմ որդիկը այ եմք, և չե ևս է յայո՞ եթէ զինը լինելոց իցեմք զիտեմք զի յորժամ նա յայտնեցի՝ նաև նմա լինելոց եմք . զի տեսանելոց եմք զնա՝ ոչ և էն . (ա. յոհ. դ. 2.) Օսոյն հաստատեցին և ժողովք և ոք հարք յունաց, լատինացոց և հայոց . մանաւանդ լուսաւորիչն մեր ('ի յաձախ . Ճառ. ը.) Իսկ թէ զիարդ լինիցի այս տեսութիւն այ 'ի ձեռն գերբնական օժանդակութեան, զիտելի է՝ զի ածագանկը առ հասարակ աւանդեն՝ թէ առ այս տեսութիւն՝ յոր անկարանայ բնական զօրութիւն կամ պայծառութիւն՝ որով միտքն օժանդակեալ, կամ վերատեալ 'ի գերագոյն եղանակ գործելոյ բերի 'ի տեսութիւն անսահման էին :

Խւ այս յայն սակս կոչի լոյս . զի համեմատի զգալի լուսոյ . զի որպէս զգալի լոյս լինի միջնորդ տեսանելոյ զգգալիս, այսպէս և լոյսն փառաց լինի իբրև միջնորդ տեսանելոյ զանձ :

Վայ զօրորինակ լոյսն ոչ է

այն ինչ՝ որ յինքեան երևեցուցէ, այլ այն ինչ՝ որով
՚ի գնիլն աշքն կարողանաց տեսանել զառարկայն,
այսպէս և լոյսն փառաց ոչ է այն ինչ՝ որ յինքեան ե-
րևեցուցանէ, այլ այն ինչ՝ որոյ ՚ի գնիլն միտքն կար-
ղանաց տեսանել զած :

Եւ զորօրինակ աշքն առ ՚ի տեսանել կարօտի դիտո-
ղական պատկերի տապաւորելոյ ՚ի տեսողական զօրո-
թե, և միտքն առ ՚ի ձանալցել զիմն որպէս է յինքեան՝
կարօտի իմանալի պատկերի տապաւորելոյ յիմացողա-
կան կարողութեան, այսպէս և առ ՚ի տեսանել զած
կամ ձանալցել զնա ոչ է յինքեան՝ կարօտի ունել յին-
քան զբատկերնը իբրև զուպաւորեալ տեսակ : Եւ քան
զի ոչ կարէ լինել պատկեր այ այնպիսի՝ որ երևեցու-
ցէ զած՝ որպէս է յինքեան գէմ յանդիմն, նոյն ինքն
էութին այ լինի իմանալապէս ՚ի միտս երանելեաց ՚ի
տեղի պատկերի իբրև տապաւորեալ տեսակ . և առ այս
խոկ տուեալ լինի լոյն փառաց, իբր զի տրամադրեա-
ցի նովաւ միտքն առ ՚ի ընդունիլ յինքեան զէութիւնն
այ իբրև զիմանալի պատկեր . և առ ՚ի ելուզանել ըզ-
գէրազանց ներգործութիւն տեսութեն այ :

Երդ յորժամ միտքն զօրանաց լուսով փառաց, և ընդ-
ունի յինքն զէութիւնն այ իբրև զիմանալի պատկեր,
յայսժամ նոսին էութիւն իբրև իմանալի պատկերաւ
տեսանէ զնոյն էութիւն այ, ըստ որում ինքնին յան-
դիմն լինի որպէս և էն : Եւ զի բոլվանդակ էութիւն
անծութեն լինի յանդիմն որպէս է յինքեան, միտքն ևս
տեսանէ բոլվանդակ զնոյն զայն՝ որպէս է յինքեան .
բայց ոչ բոլվանդակելով : Ուստի թէպէտ և բոլոր տե-
սանէ միաբն զանսահման էութիւնն այ, բայց ոչ ան-
սահմանաբար, զի տեղական էակն որչափ և զօրա-
ցի գերբնաբար՝ ոչ կարէ զործել անսահմանաբար :
Այլ արդ ՚ի տեսանել մոտաց զած բոլվանդակ՝ որպէս
է յինքեան, տեսանէ ՚ի նմա իբր յովկիմանուի էութե
զանսահման գեղեցկութիւն, զանսահման երանութիւն,
զանսահման բերկութիւն, զանսահման խաղաղութիւն,
զանսահման ձևաբառութիւն, զանսահման արգարարիւն,
զանսահման ողջոմութիւն, և զայլ անսահման կատա-

բելութիւնս , և զիլութի անտահման բարուե՛ , այնպէս որպէս է յինքեան . ևս և զանցափութիւն նորա , զանց փոփոխութիւն նորա , զյաւիտենականութիւն նորա , և զայլ զանահման իսկութիւն :

Վ. յս տեսութիւն երբեակ կատարելութք բերի . մի՝ անփոփոխապէս . զի նոյն աեսուի մնայ միշտ , և ոչ երբ իւլիք փոփոխի . երկրորդ՝ անանջատաբար . զի բռլորվին միանայ ընդ առարկային . երրորդ՝ փոխակերպաբար , այսինքն իմանապի իմն փոխարկմամբ . և այս գերագոյն եղանակաւ . վասն զի յոր ինչ բերի տեսութիւն մտաց՝ ՚ի նոյն փոխի իմանապապէս ՚ի ձեռն տպաւորեալ պատկերի . և զի ՚ի տեսութեն ոյ տպաւորեալ պատկերն է նոյն իսկ էռութիւնն ոյ ՚ի միտս իմանալապէս , միտքն ևս նովին պատկերաւ փոխի իմանալապէս ՚ի յած :

Խակ լրումն այսը տեսութեան է ժառանգուի էռութեն ոյ բոլոր . զի բռվանդակ ածութիւն ժառանգեալ վնի ՚ի ձեռն մտաց ՚ի տեսութեան անդ , ոչ որպէս աշքն ՚ի տեսանել զգեղեցիկ ինչ . զի զօրութիւն աշաց փոփոխականապէս հայելով , և մասնական կարողութիւն գոլով տիրապէս ոչ ժառանգէ յինքեան՝ զոր իմասնէ : Խակ միտքն լուսով փառաց վերառեալ անփոխականապէս յարի յանհուն էն . և բոլորական կարողութիւն զղով ժառանգէ յինքեան՝ զոր իմանին տեսանէ : Խակ զի ժառանգեան այն է անսահման և անգամանելի , և իրը այնպիսի ժառանգի հետևեի թէ բոլորն միանգամայն ժառանգի ՚ի մտաց :

Վ. յսը ժառանգութեն զշետ զայ ժառանգել հոգւոյն յայն ծով ածութեան զայն ամ՝ որում հնար է փափաքիլ . այսինքն զայն ամ՝ որում փափաքին տեսանելիք . զայն ամ՝ որում փափաքին հոտոտելիք . զայն ամ՝ որում փափաքին հաշտկելիք . զայն ամ՝ որում փափաքին շօշափելիք . և զայն ամ՝ որում փափաքիլ կարէ ու և իցէ էակ , ևս և հրեշտակք . և նա ինքն ած :

Վ. ժառանգութէ աստի՝ որ լինի տեսութք մտաց՝ վասի ՚ի կամ ուր ամենահարկիչ և անփոփոխելի : Հասափի կեանս ՚ի տեսանել մեր զբարի ինչ կամքն բերի

՚ի սէր նորին ոչ ՚ի հարկե՛ այլ աղաստօրէն . և յետ սակաւու դադարի ՚ի սիրել . և պատճառն է՝ զի կտոք մեր գողով բոլորական բազմանք , բերի առ բոլորական բարին , այսինքն առ անշափ բարին : Իշ զի յաստի կեանս զոր ինչ ըմբռնեմք մոօք , է շափաւոր բարի և պակասաւոր . և կամ իբրև զշափաւոր և իբրև զպակասաւոր ըմբռնի , վասն այսորիկ և կամք մեր թէե բերիցի ՚ի նա , բայց տեսեալ զշափաւորութիւն և ըշպակասաւորութիւն նորա՝ ոչ յարի ՚ի նոյն հարկաւ , այլ մնայ յիւրում փափաքման առ անհուն բարին . վասն որոյ և բազում անգամ լքանէ զպակասաւորն զայն , և յայլս բերի :

Խոկ եթէ դէմ յանդիման տեսանիցէ միտքն վնոյն ինքն զանահման բարին և զանսահմանութիւն նորա որպէս է յինքեան , պմ փափաքումն կամաց , կամ այսպէս ասացից՝ ամ ցոլմունք սիրոյ նորա ըստ առի բերի և յարի ՚ի նա . զի զնամիսկուի բարուն գտանէ ՚ի նմա յանասահման կատարելութէ : Իշ զի ՚ի գտանելն իմանայ թէ ժառանգէ զնա , յայսմանէ ծնանի ՚ի կամն անդ վայելումն , որ է խաղաղական հանգիստ փափաքմանց նորա յանհուն բարին յայն անփոփոխապէս . որով և վայելեալ լինի այն ամ՝ որ տեսեալ լինի յանձ և նա ինքն անձութիւնն բոլոր , և նոյն խոկ ժառանգութիւն անձուեն : Հայսմ վայելման ցոլմեայ երկու ինչ . այսինքն ուրախութիւն այնպիսի՝ որ անձառ է ՚ի հողեղինաց . և զմայլումն այնպիսի՝ որ անհաս է ՚ի մտաց մերոց . և սոքա համարեալ լինին իբր ծաղիկք վայելմանն :

Այս ուրախութիւն այնշափ մեծ լինիցի յերանեալս՝ մինչեւ ընկղղմիլ ՚ի նմա բովանդակ ընդարձակութեան հողւոյն և բովանդակ փափաքմանաց նորա . յոր միտս առաց առն մեր * մուտ յուրախութիւն քոյ լ . (մատ . ին . 21 .) որով ցուցանի նախ թէ մեծ է լինելոց յոյժ այն ուրախութիւն . զի ոչ առէ ուրախ լեր , կամ ընկած , ևն . այլ մուտ . արդ փոքուն է մտանել ՚ի մեծն , և ոչ թէ մեծին ՚ի փոքրն . այլ թէ զիաղդ լինիցի մուտս այս՝ յայտնի լինի յայն՝ զոր ասացաք ՚ի վերոյ . իբր զի՝ բերմունք կամ յօժարմունք կամաց անհուն զոլով ՚ի

կարողութե՛ բերին մտանել և ժառանգել զանհունն :
 և 'ի ժառանգելն՝ պարագրին յուրախութեան վայել
 ման այնր անհնոյ : Հուցանի երկրորդ՝ թէ այն ուրա-
 խութիւն է ածանցեալ կամ հաղորդեալ յսծային ան-
 սահման ուրախութենէ . զի ոչ առէ սոսկապէս մնւա-
 յուրախութի՝ , կամ յուրախութի քո . այլ մնւա յու-
 րախութի ո՞ն քո . որով ցուցանի՝ թէ այն ուրախութի՝
 յոր ընկղղելոց է հոգին՝ է ածանցումն կամ հաղորդու-
 թիւն այնր ուրախուե՛ , որ է ուրախուի այ :
 Խակ զմայլումն այն երանական այնպիսի է լինելոց՝ որ-
 պէս ոչ կարէ ըմբռնիլ՝ թէ որպիսի է երանութիւն ժա-
 ռանգութենն այ : այլ կամելով ըստ եղանակի մերում
 խօսել զայս մի ինչ կարեմք հաստատել . այսինքն թէ,
 որչափ գերագոյն է կատարելու թիւն առարկային՝ այն-
 չափ առաւել լինի զմայլումն կարօղութե՛՝ յորժամ ըստ
 ամ կատարելու թե միանայ ընդ նմա . զորօրինակ որ-
 չափ քաղցր իցէ եղանակ նուագարանին՝ այնչափ ա-
 ռաւել զմայլին ըսկիք յորժամ ըստ ամի կատարելա-
 պէս՝ և ըստ ամ հանգամանաց հպին յայն լսելով :
 Եւ արդ՝ քանզի 'ի տեսանել հոգւոյն զած՝ որ է յան-
 սահմանա կատարեալ հոգին ըստ ամի հպի կամ յարի
 յայն , յայսմանէ ծագի 'ի նմա այնպիսի զմայլումն
 որ է ամեննեին անձնու 'ի մշնջ . և է հաղորդութիւն
 ինչ նոյն իսկ զմայլմանն այ : Եւ զայս կամելով յայտ-
 նել ո՞ն մերոյ՝ ասաց , * զի ուտիցէք և ըմպիցէք 'ի
 „սեղանն իմ յարքայութե իմում || . (զուկ . ի՞ք . 30 :)
 արդ՝ որ նստի 'ի սեղան արքայի՝ և ուտէ ընդ նմա ,
 ուտէ զայն կերակուր և ըմպէ զայն ըմպելի՝ զոր ու-
 տէ և ըմպէ արքայ . ուրեմն և երանեաբք վնայն զմայ-
 լումն են ուտելոց և ըմպելոց՝ զօր ուտէ և ըմպէ ած :
 Հայսոսիկ յամենեախն՝ զորս ասացաք՝ պահի այս կարգ
 իբր զի՝ նախ առաջին առ 'ի արժանաւոր գտանիլ մար-
 դոյ այնմ ածային տեսութե՛ , կանխի յաստի կեանս
 սրբարար չնորհքն՝ հանդերձ ածային առաքինութի՞ք
 այսինքն հաւատով , յուսով և սիրով , և այլովք պար-
 զեօք : Երկրորդ՝ առ 'ի տրամադրիլ առ տեսութիւնն
 այ՝ հասանէ օժանդակութիւն լուսոց փառաց : Երրորդ՝
 զհետ զայ նոյն ինքն տեսութիւն այ :

ըռումն կամ յափշտակութիւն կամաց 'ի յած 'ի ձեռն ծայրագոյն սիրոյ : Հինգերորդ՝ վայելումն նոյն իսկ տեսութեան և սիրոյն , կամ ասացից՝ ընկղմաւմն հոգւոյն 'ի սիրեցեալն , որում զհետ գայ ուրախութիւնն իբր վեցերորդ . և զմայլումն իբր եօթներորդ :

Վ. յլ գիտելի է՝ զի այս ուրախութիւն և զմայլումն էակապէս ոչ զանազանին 'ի վայելմանէ . վասն զի են նոյն էակութիւն , կամ մի և նոյն ներգործութիւն վայելման կամաց , որ ըստ այլեայլ բանի ասի ուրախութիւն և զմայլումն : Իւ հաւանականագոյն ևս թուի ասել՝ թէ նաև նոյն վայելումն ոչ զանազանի 'ի սիրոյ երանելեաց . զի թէպէտ յաստի կեանս այլ էակութիւն ներգործութիւն վայելման , բայց յերանեալս երեխ լինելնոյն , իբր զի մի և նոյն ներգործուի կամաց տրամակայեալ հեղական սիրով , ըստ որումքերի յառարկայն առաջի եղեալ ասի սէր . իսկ ըստ որում յարի յայն իբր 'ի ասացեալ՝ ասի վայելումն եղերեալ յուրախութիւն և 'ի զմայլումն :

Վ. յս ամ հայի յէական երանութիւն հոգւոյն յերանեալսն . իսկ պատահական երանութիւն նոյան է այլեայլ ուրախութիւն ծագեալ յայլեայլ վայելմանց . այս ինքն 'ի տեղեկութէ այլոց գիտելեաց . 'ի տեսութենէ ազգի ազգի իբրաց , և յընկերակցութենէ իբրերաց : Իսկ փառաւորութիւն մարմնոյ որցն է այլինն երանութիւն՝ զեղեալ յերանութենէ և 'ի փառաւորուի հոգւոյն . զի որպէս լոյն անցանէ ընդ ավակի , այսպէս և երանութիւն հոգւոյն զեղանի 'ի մարմինն , յորմէ և լիանայ բոլոր մարմինն ամ փափկութք ըստ ամ զգայութեանց և կատարի չորեքին կատարելութք ըւսոյ . այսինքն պայծառութք , անսապականութք , (այսինքն անսապաւը լինիութք .) արագութք , և ժամփանցկութք . զորոց չէ տեղւոյս մի ըստ միո՞նչ զրել . զի և բանք մարգարեին ուղղակի ոչ հային յայսոսիկ , այլ յէական երանութիւնն . Իւ զի եօթն ինչ առաջի եղաք 'ի վերոյ առայն երանութիւն՝ զերից առաջնոցն խօսի մարգարեն 'ի յաջորդ համարն , յորս իմացեալ լինին և բանք չորրողին և հինգերորդին . այսինքն բան երանական սիրոյն , և բան երանական վայելմանն : Իսկ յայս

Համար խօսի միայն զերկուց վերջնոյն . այսինքն զուշախութէն և զգմայլմանէն . և նախ զուրախութէ խօսելով ասէ :

Աբբէսցին նոքա 'ի պարաբռութէ տան ոչ : Արբենան կրկնակի կարէ լինել . մի՝ յորժամ ոք այնձափ ըմսէ ըզդինի , կամ զօղի , և կամ զայլ ինչ այնպիսի , մինչեւ կորուսմնել զգատումն բանին : Եշիրորդ՝ յորժամ ոք այնձափ ըմսէ մինչեւ ուրախանալ առանց կորուսանելոյ բնաւ զգատումն մտաց . յոր միտս ասի * զինի ուրախ առնէ : (սաղ. Ճկ. 15:) Եւ յայս միտս ասի զեղբարցն յուլսեփայ՝ թէ * արբին , և արբեցան ընդնմա : (Ճնն. խկ. 34:) Եւ ըստ այսմ առանց ուրեք ուրեք 'ի ոք զիրս արբենան բերի 'ի նմանութիւն ուրախութե , ըստ այնմ յերգս երգոց . (ե. 1:) * Արբեք , և արբեցարուք եղբօրորդեակք իմ : որպէս թէ ասէր՝ ըմսէցէք 'ի զինւոյն՝ զոր մատուցանեմ ձեզ . և ըմսիւլով լցարնւք ուրախութե : Հայս միտս դնի և ասու բառդ՝ աբբէսցին . որպէս թէ ասէր՝ ուրախասցին նոքա 'ի պարաբռութէ արքայութէ :

Այլ զարմանալ արժան է , զի 'ի պարաբռութէ ոչ լինի արբենալ , այլ յագենալ . և սակայն մարգարէն ոչ առէ՝ յագեսցին , այլ արբեսցին 'ի պարաբռութենէ : Օսյս դնէ վշտ երկուց . մի՝ վասն ցուցանելոյ զառաւելութիւն ուրախուեն . վշտ զի առաւել է ուրախուին յարբիմանէ քան 'ի յագմանէ : Եշիրորդ՝ վասն ցուցանելոյ զառաւելութիւն պատուականութե այնոր՝ որ ուրախացուցանէ . և զայս ոչ կարելով մարգարէին յայտնել իւկք բառիւ՝ կոչէ պարաբռ , այսինքն լի ամենայնիւ . և փոխանակ ասէլոյ 'ի լիութենէ անտի արբետցին , ասէ 'ի պարաբռութէ անտի :

Խակ պարաբռութը կամ ասացից լիութ իմացեալ լինի աստ այն ուրախութիւն երանական վայելմանն՝ որ լինի 'ի ժառանգութեանն այ՝ զորմէ խօսեցաք 'ի վերոյ : Ուստի և յօսելն * աբբէսցին նոքա 'ի պարաբռութէ տան ոչ : միտ բանին լինի այս . որք միանդամ արժանի լինին զնալ 'ի տուն այ , այսինքն յարքայութիւնն երկնից , անձնառելի ուրախութը ուրախասցին 'ի լիապատար վայելմանէ տեսութե և ժառանգուեն այ : Ինդ

այսմ ուրախութե՞ն՝ որպէս ասացաք՝ ըծորդի և անսպատմելի զմայլումն, կամ փափկութիւն զոր հազորդէ ածերանելոց . և զայս յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով:

Ե՞ւ շառշկու ժամանե՞ն ու բայց ընդէլուցա: || Աղիսք ասին այն ջուրք՝ որք սաստկութե՞ր և յորդութե՞ր գնան . ուստի և յօրինակ բերին սաստկութե՞ն և յօրդութե՞ն պէսպէս իրաց՝ մանաւանդ նեղութե՞ն և ուրախութե՞ն . որպէս յասելն սաղմնաերգուին . (Ճիկ . 5 .) * ընդ ուղիսա անցին անձինք մեր || . յայս բան՝ ուղին գնի փոխանակ սաստկութե՞ն և յօրդութե՞ն նեղուց: || Եյնպէս և յասելն . * զուղիս 'ի ճանապարհի արքցէ || . (սազ . Ճթ . 6 .) յայս բան ուղին գնի փոխանով առաւելութե՞ն և յօրդութե՞ն նեղութե՞ց, կամ ուրախութե՞ց: Հյայս միտս գնէ և աստ մարդարէն զբառդ ուշին . որպէս թէ ասէր . տայես ըմնկել նոցա զսաստկութիւն կամ զյօրդութիւն փափկութեան քոյ . որ է ասել լցուցեօ զնոսա փափկութե՞ր:

Եւ զի ուղիսք հասարակօրէն 'ի բարձրութէ լերանց իշանեն, և յափշտակէն զորս գտանենն . այսպէս և յօրդութիւն փափկութե՞ն երանելեացն զեղեալ 'ի նասա 'ի բարձրութէ ածային լերանց, այսինքն յածային կատարելութեց՝ յափշտակէ զամբ բերմունս յօժարութեց նոցա, մինչեւ ոչ կարել նոցա ոչ յափշտակիլ յայն անձառելի փափկութի:

Իսկ փափկութե՞ր իմացեալ լինի աստ զմայլումն հոգւցն . վո զի որ ինչ է փափկանալն 'ի մարմնի նոյն է և զմայլին 'ի հոգի: Այդ փափկութիւն մարմնոյն կըրկնակի լինի . մի՝ բատ այնմ՝ որ է պատճառ հեշտութե՞ն, և մի ևս՝ բատ այնմ՝ որ է ծազիկ հեշտութիւն, այսինքն է զմայլումն մարմնոյ 'ի հեշտութիս: Բատ այսմ յետին առանն ընծայի հոգւոյ փափկութին . որով որպէս ասացաք՝ նշանակի զմայլումն հոգւոյն: || Աստի և յասելն * շառշկու ժամանե՞ն ու բայց ընդէլուցա: || միտս բանին լինի այս . տայես նոցա զիփութիւն զմայլմանն հոգւոյ, և զայս յայտնէ նմանութե՞ր արբանան, կամ ըմնկելոյ, զի առաւել է զմայլումն ծարաւեցելոյ յըմնկէն, քան քաղցելոյն յուտելն :

Վ. յլ քննելի է այն, զի ու ասէ տոսկ * զուղիս փափ-
կութեան տացես ըմպելնոցա || . այլյաւելու և զբառդ
+ + . յաօելն * էտիու- + + || . վասն զի որպէս ասացաք
'ի վերոյ՝ այն փափկութիւն, կամ այն զմայլումն՝ է հա-
զորդութիւն ինչ անաւհման զմայլման՝ որով զմայլի
նոյն ինքն ածութիւնն . վասն որոյ և է զմայլումն այ ը-
հաղորդութեան :

Վ. յլաբանօրէն՝ որք միանգամ 'ի տանն այ են այսինքն
յեկեղեցւո՞ւ, արբեսցին 'ի պարարտութենէ տանն այ ,
այսինքն 'ի խորհրդոց եկեղեցւոյ, մանաւանդ 'ի մարմ-
նոյ և յարենէն քսի . և տացէ նոցա ած ըմպել զուղիս
երկնային պարզեաց, հոգեօր իմաստութե , և զուղիս
այլոց բարեաց :

Վ անական վարդապետ՝ ('ի մեկն . յոր . գլ . ը .) 'ի
ձեռն այսը պարարտութեան, իմանայ զամ զանցային
բարիս . յորոց արբցեն ասէ, արդարը իբր 'ի պարար-
տութեանց տան տն, այսինքն եկեղեցւոյ, Խակ բարսեղ
վարդապետ՝ ('ի մեկն . մարկ . գլ . ժամ .) պարարտութ-
իմանայ զնորհս հոգւոյն որյ, յասելն . * արբեսցին
նոքա 'ի պարարտութէ տան քո, այսինքն զազդի ազ
զ զի շնորհս հոգւոյն որյ, որ յեկեղեցւո՞ւ պարզեալ
,, լինի հաւատացելոց || .

Վարդապետ՝ որք են 'ի կրօնաւորական վիճակի, և
կամ 'ի հոգեղբական կեանս՝ արբեսցին 'ի հոգեօր
բերկրութեանց . և տացէ նոցա ած ըմպել և լիանալ
հոգեղբական զմայլմամբ : Վ. յս ամ՝ որք վերածին 'ի
գերազոյն իմն կենդանութիւն հոգւոյն՝ սկիզբն ունին
և իբր աղբեւը՝ զարբարար շնորհան այ , զորմէ խօսի
մարգարէն 'ի յաջորդ համարն . յոր յաւելու և զբան
լուսոյ փառաց . և զբան երանական տեսութեան երե-
սայն այ , յասելն :

Դ. Ա ն է քը աղբեւը ինուոյ . և լուսութեցնոյ ոյ ուսու-
նեմն ըլոյ :

Վ զրիւր ասի այն՝ յորմէ հոսի ջուր, թէ իցէ առաջին
ակն, որ կոչի աղբերակն, և թէ իցէ յառաջին ակա-
նէ անտի սկսեալ . Վ. թէ առցի իբր առաջին ակն, բե-
րի աստ 'ի նմանութի առաջին սկզբան կենաց՝ որ այն-

ինքն է առծ յերիս անձինս . յոր միտս հայրն երկնաւոր ասի աղբիւր կենաց . այսինքն աղբիւր որդւոյ և հոգւոյն որյ , զի որդի և հոգի կեսնք են և կենդանարար (ըստ որում զրի յոհ . ժիշ . 6 : և կ. կ. 64 .) Եթէ առցի իբր յառաջին ականնել ելեալ բերի նախ ՚ի նմանութիւն որդւոյ . զի որդի է հայրաշարժ աղբիւր . այսինքն ՚ի հօրէ ելեալ աղբիւր կենաց . այսինքն աղբիւր հոգւոյն որյ . զի հոգին սուրբ է ելումն յորդւոյ իբրև կենդանի վասկ . բերի երկրորդ և ՚ի նմանութիւն նոյն խէլ հոգւոյն որյ՝ որ է աղբիւր կենաց . այսինքն ըսկիզբն առմ կենդանութեան յերկինս և յերկրի :

Ծատ այսոցիկ առմանց թէկպէտ սուսւել պատշաճ էր ասել . դու ես աղբիւր կենաց , քան ստել * ՚ի քէն է տեր աղբիւր կենաց || , բայց պատշաճագոյն ևս էր այսպէս գնել . զի այս ոճ՝ հայելով յաճ ըստ որում է յինքեան՝ գերազոյն իմն օրինակաւ ցուցանէլ զայն՝ զոր ցուցանէ ասեն՝ զու ես աղբիւր կենաց :

Դարձեալ աղբիւր յօր միտս և առցի , կարէ բերիլ ՚ի նմանութիւն այնր ամի՞ օր է սկիզբն կենաց յու և իցէ կարգի , այսինքն թէ ՚ի բնական և թէ ՚ի բարոյական կարգի , ևս և ՚ի գերբնականն ։ Ծատ բնական կարգի՝ հոգի մարդոց գոլով սկիզբն կենաց՝ ասի աղբիւր կենաց . Եւս և սիրտ մարդոց գոլով սկիզբն կենական շարժմանց՝ ասի և նա աղբիւր կենաց . նոյնպէս և այլ առմ բնական իրք . իբր զի որք կարեն լինել ըսկիզբն կենաց՝ կարեն ևս ասիլ աղբիւր կենաց :

Ծատ բարոյական կարգի՝ առաքինութիւնը և զիտութիւնը կարեն ասիլ աղբիւր բարոյական կենաց , ըստ որում լինին սկիզբն բարւոք անօրինելոյ զիեանս . Եւ գերբնական կարգի սրբարար չնորհքն յամկապէս ասի աղբիւր կենաց , մանաւանդ թէ առաջին աղբիւր , զի է սկիզբն հոգեոր կենդանութեան , կամ կենդանացուցիչ հոգւոյն . և գարձեալ է սկիզբն երանական կենաց . զի կեանքն երանական տուեալ լինի նոյամբայն՝ յորս է չնորհքն սրբարար . Ոյնպէս և հեղեալ առաքինութիւնը , այսինքն հաւատ , յոյս և ուր ևս և պարզեք հոգւոյն որյ կարեն ասիլ աղբիւր կենաց . զի իւրաքանչիւրն ՚ի սոցանէ ըստ իւրաւմ բանի

սկիզբն լինի կենդանական գործողութեանց հոգւոյն՝ ի
գերբնական կարգի :

Երդ՝ թէպէտ և բան մարգարելին կարե ակնարկել
յայտ ոմք, սակայն եթէ հայեսուք՝ ի կարգ նախըն-
թաց և հետեւեալ բանիցն տիրապէս հայի ՚ի սկիզբն
գերբնական կենաց, մանաւանդ՝ ի սրբարար չորշն,

յայս միտս առեւալ աս' :

Ի ՞ է ո՞ր ողբերութէնաց : Ի յախնըն թէ ՚ի քէն զեղու-
նի առ մեզ չնորհքն սրբարար, որ ՚ աղբիւր և ըս-
կիզբն հոգեառ կենդանութեան մերում. և սկիզբն ժա-
մանելոյ ՚ի կեանոն յաւիտենից . յոր միտս ասաց տէր
մեր . * ջուրն (այսինքն չնորհքն) զօր ես տաց նմա-
,, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղիսելոյ ՚ի կեանոն յաւի-
աենականս || . (յովՀ . դ . 14 .)

Եւ ըստ այսմ յատեն աստ, ՚ի քէն է տէր են, բառդ
՚ է ՞ ո՞ւ ցուցանէ սոսկ զարարական սրատձնառելու-
թիւնն, որով ՚ ացուցանէ ած զարարար չնորհն, այլէ
զհաղորդական պատճառելութիւնն . ըստ որում ՚ի
ձեռն չնորհաց հաղորդակից լինի հոգին ածութեն,
և արամակացի իրը ածանանան ինչ ՚ի գերբնական կար-
գի. վասն զի է հաղորդութիւն ածեղէն բնութե . ըստ
այնմ. (ը . պէտ . առ . 3 .) * մեծամեծ և սրատձնական
,, առետիք (այսինքն չնորհքն) պարզեւալ են մեզ, զի
,, նորիմբք ածեղէն բնութեանն լինիցիմք հաղորդա-
,, կիցը || :

Ի ՞ ետիք կոչի չնորհքն, զի նորիմբք առետեալ լինի
մեզ կեանքն յաւիտենական . և վասն նոյն չնորհաց
տուեալ լինի մեզ նոյն յաւիտենական կեանքն . Առա-
տի զօր մարգարեն աղբիւր կենաց կոչէ, զնոյն պէտ-
քա ՚ի վերոյգրեալ բանսդ՝ առետիք յաւի-
տենական կենաց : Խակ առելով՝ հաղորդակից լինիմք
նովաւ ածեղէն բնութեանն, յայտնի ցուցանէ զայն թէ
չնորհքն է հաղորդութիւն նոյն ածային բնութե . իրը
զի է իրական նմանութիւն ինչ այնը . և ուր հեղանի՝
առնէ զնա նմանն այ . յոյր սակա որը ընդունին զարբա-
րար չնորհն՝ ասին ծնանիլ յայ . և լինել որդիս այ .
Խակ առ ՚ի ծնանիլ և լինել որդի որըուք՝ հարկ է ու-
նել յինքեան զնանութիւնութեան նորա :

Դա որպէս սրբարար չնորհքն է հաղորդութիւն ածային ընութեան , սյնապէս և ածային ուարդեք՝ ողք հեղանին ընդ չնորհաց . այսինքն հաւատ , յօյս , սէր նմանապէս և այլ սրբարդեք հոգւոյն որբոյ ասին լինել հաղորդութիւն ածային կատարելութեանց . զի որպէս կատարելութիւնք 'ի յած են յածային ընութեան , սոյնապէս և սրբարդեք ողք զեղանին ընդ չնորհաց իբր հաղորդութիւն ածային կատարելութեց՝ են 'ի չնորհաց որպէս յատկութիւնք բղխեալք անտի , այսու զանազանութիւն , զի յած նոյն է ածային ընութեան և ածային կատարելութիւնք . իսկ 'ի մեզ չնորհքն և սրբարդեք գողով պատահական էակք , ոչ են նոյն , այլ իրաք զանազանին . յորս չնորհքն է իրբե աղբիւր բղխիւ ամի այնոցիկ , և կենդանացուցիչ հոգւոյն . իսկ սրբարդեք են աղբիւրք բղխեալք 'ի նմանէ , և կենդանացուցիչք ոչ անմիջապէս հոգւոյն , այլ գործողութեանց հոգւոյ :

Դարձեալ յասելն աստ 'ի Տէն է , ոչ ցուցանէ՝ թէ չնորհքն հատեալ յայ՝ հաղորդի մեզ . կամ թէ որնոս անգետք ասեն՝ իրբե հոգւորական ցող յերկնից իջանէ 'ի վայր 'ի հոգի մեր . այլ ցուցանէ՝ թէ ինքն ածատձառէ 'ի մեզ զշնորհսն՝ ելուզանելով զայն 'ի հնապանդական կարողութենէ հոգւոյն . Տաց առ այս զգալի օրինակ ինչ . յորժամ գործէ հիւսն զփայտիւ և զնոյն մարդ կերպարանէ , ասեմք՝ թէ կայ 'ի փայտն հնազանդական կարողութիւն , յորմէ 'ի փորել և 'ի տաշել հիւսանն՝ ելանէ ձեւ մարդոյ . և նոյն ձեւ որ ելանէ 'ի փայտէ 'ի հիւսանէ անտի տպաւորի 'ի փայտն . այսպէս ևս յորժամ ած ըստ որում գերբնական արարող և իրբե պատձառ չնորհաց գործէ 'ի հոգիս մեր՝ արտազրէ 'ի նման զպատահական նմանութիւն ընութեան իրոց , և զնմանութիւն կատարելութեց իւրոց . և այն նմանութիւն ասի լինել յայ , կամ ասի զեղանիլ 'ի նրմանէ 'ի հոգիս մեր . և զի չնորհքն , և այլ սրբարդեք ոչ են անդործ , որպէս անդործ մնայ ձեն 'ի փայտի , այլ տան կեանս հոգւոյն , և զգործս գերբնական կենդանութեան , և առնեն զմնորդն արժանաւոր յաւի տենական կենաց , վասն այսորիկ ասին բղխող կենաց ,

կամ որ նոյն է՝ աղքիւր կենդանութեան . որպէս դնի 'ի փառք 'ի բարձունան :

Ի սաղ . իբ . 2 . մարդարէն նմանեցոյց զնորհսն՝ ջրոյ . խակ աստ աղքեր . վասն զի անդ կամէը յայտնել ըշ-պէսպէս գործո չնորհաց , որ բարւոք ևս յայտնի նմա-նութե՛ ջրոյ . (զօրմէտ տես անդ :) Խակ աստ կամի յայտ-նել զայս և եթ՝ թէ նոյն չնորհք է սկիզբն կենդա-նութեան հոգւոյն 'ի գերբնական կարգի . և թէ միայն չնորհքն առնէ զմեղ արժանի երանական կենաց . և տրամադրէ զհոգին ընդունիլ յաց զոյս փառաց , և նովաւ տեսանել զանստեղծ լոյսն . և այնու լինել ե-րանելի : Վագա յետ խօսելոյ զնորհաց՝ խօսի և զլո-սոյ փառաց , և զտեսութենէ անստեղծ լուսոյն . և ասէ :

Ե-լուսուն երեսաց ճոյ ուստանէմ զլոյ : Ե ջսն 'ի փելի-սոփայից սահմանի * ներգործութիւն թափանցիկ՝ ըստ որում թափանցիկ : Խակ թափանցիկն է այնպիսի մարմին ընդ որ անցանէ լոյս . որպիսի է օդ , ջուր , ա-պակի ևն . Վագա իսպիսի թափանցիկ մարմինք ունին կըր-կին զոլ . մի զի են մարմին . և մի ես՝ զի են թափան-ցիկ . և ըստ այսմ թափանցկութեան գոլոյ լոյսն ասի՝ ներգործութիւն թափանցիկի ըստ որում թափանցիկ . այսինքն թէ լոյսն է էական կատարելութիւն թա-փանցիկ մարմինյ , ոչ ըստ որում է մարմին , այլ ըստ որում է թափանցիկ :

Վայ թափանցիկ գոլս ոչ այլ ինչ է՝ բաց եթէ դրա-կան ընդունակութիւն մարմինյ առ լոյս , որոյ ընդու-նելութե՛ և թափանցիկ մարմինն երեխ լոյս : Ուստի եթէ անձ եղծանէր զամբ լոյս , և պահէր անեղծ մի-այն զօդ սենեկին՝ որ ընկալեալ էր զլոյս , նոյն օդն երեկո գոլ լոյս : Վագ որպէս 'ի մարմինականս օդ , ջուր , ապակի , ևն . նոյնպէս և յիմացականս հոգին իմանալապէս է և ասի թափանցիկ . այսինքն ընդու-նակ առ անձային լոյսն , որոյ և ընդունելութե՛ զրեթէ ինքն ևս լինի լոյս ինչ :

Խակ այս լոյս անձային կրկին է՝ անստեղծ և ստեղծա-կան . անստեղծն է նոյն ինքն անձութիւն 'ի ծայրագոյն ներգործականութեաւ . իմացման . զի ըստ այնմ ասի ան-

լոյս՝ ըստ որում է գերամաքուր ներդործականութիւն
՚ի գոլն ինքնազոյ խմացական . կամ որ նոյն է՝ ըստ
որում է ինքնազոյ էռթիւն կատարեալ յանսահման
իսկութեան խմացականութեան :

Խակ ստեղծականն է հաղորդութիւն ինչ այսր ինքնա-
զոյ լուսոյ : Եւ այս հաղորդութիւն լինի յայլեայլ
կարգի չորեքին . մի՛ ՚ի բնական կարգի՞ որով հոգին
գոյաւորի ՚ի գոլ խմացական՝ թէ՛ ՚ի կարողութեան և
թէ՛ ՚ի ներգործութե՛ . ՚ի կարողութե՛ է խմացականու-
թիւն նորա առ ՚ի գործել խմանալով . խակ ՚ի ներգոր-
ծութե՛ է ներգործութիւն խմանալապէս գործելոյն .
կամ ներգործութի խմանալոյ նր իբրև էակ խմացական ,
Երկրորդ՝ ՚ի բարժական կարգի . և այս ևս՝ թէ՛ ՚ի
կարողութեան և թէ՛ ՚ի ներգործութե՛ . ՚ի կարողութե՛
է զօրութիւն գործնական մտաց՝ յորում տարաւորեալ
են բնական օրէնք համաձայն գործնական ձանացմանն
այ . ՚ի ներգործութեան է ներգործական դատումն և
տրամախուհութիւն մտաց ըստ այնմ բնական օրինաց .
և է մերձեցուցումն այնր ՚ի մասնաւոր ներգործու-
թիւն՝ զոր առնէ գիտակցութիւնն , այսինքն խիղճն
մտաց :

Երրորդ՝ ՚ի գերբնական կարգի . և այս ևս՝ թէ՛ ՚ի կա-
րողութե՛ և թէ՛ ՚ի ներգործութե՛ . ՚ի կարողութե՛ է
անակութիւնն հաւատոյ՝ ՚ի միտա և այլ գերբնական ու-
նակութիւնք հեղեալք յայ . ևս և ունակական շնորհք .
՚ի ներգործութե՛ է ելուզանեն մտաց զգերբնական
ձանացմանն զգերբնականօք ՚ի ձեռն հաւատոյ . յոր
վերածին և վերայմունք մտաց յանձայինս :

Չորրորդ՝ յերանական կարգի . և այս ևս՝ թէ՛ ՚ի կա-
րողութեան և թէ՛ ՚ի ներգործութե՛ . ՚ի կարողութե՛ է
լոյսն փառաց՝ որ է հաղորդութիւն խմացական գոլոյն
որպէս է ինքեան , որով և տրամադրի և վերանայ
միտքն ՚ի դէմ յանդիման ձանացման այ . այսինքն ՚ի
տեսութիւն նորա : Են ներգործութեան՝ է ներգործութե
ձանացման կամ տեսանեն մտաց լած՝ ՚ի ձեռն այնր
լուսոյ որպէս է յինքեան դէմ յանդիման : Այս ամ
լոյս ըստ չորեց կարգաց ևս կողի լոյս երեսացն այ՝ ըստ
որում ՚ի նմանէ է :

Իսկ Երեսօք այ թէսկէտ և բազում ինչ կարէ խմացեալ լինել, բայց յայսպիսի զրոյց՝ այսինքն յորժամ ասի լոյս Երեսաց նորա, Երեսօք յատկապէտ իմացեալ լինի միտքն այ ըստ այնմ որ հայի առ մեղ. կամ նոյն ինքն ածութիւն ըստ որում է, որ էն իմացական գոյն՝ ՚ի հային առ մեղ ՚ի ձեռն տեսութեան. զի Երեսացն է տեսութիւնը աջաց հայիլ առ որ հայի: Առ զի յայսմ Երեսաց հազրողի ՚ի մեղ ու իցել լոյս իմանալի, յայտմանէ ասի լոյս Երեսացն այ. և այն լոյս է՝ որով տեսանեմք զի և իցել լոյս իմանալի, և մասնաւորապէտ ըւսով փառաց զանստեղծ լոյն, այսինքն զետթիւնն այ կամ զած:

Ուարթ է աստ զբառդ ըստով՝ ընթեանուլ ՚ի բացառական հոլովն փոխանակ բառիս ՚ի ըստոյ. զի որպէս առէ բարօնեղ վորդապէտ. * սովորութիւն է գրոց ՚զուրացն փոխանակ յօրմէն առել. ըստ այնմ. թէ ստացայ մարդ առլ, այսինքն յայ . . . և թէ հաւատաց ՚ըիմ է առծ, որով կուշցայք այսինքն ՚ի նմաննէ: Շայց այս ես ՚ի նոյն վերածի. և նովին մեկնութիւն մեկնի:

Հյուշան իմաստամիք ՚ի կարգս պաշտամանց եկեղեցւոյ. (Երես 208.) Երեսօք իմանայ ՚ի սմին բամի զըստ մարմնոյ զերեսն քոնի զոր ունիմք մարմնառոր աչօք ևս տեսանել ՚ի դաշտեան նորա, և առել* լուսով Երեսաց՝ քո դաշտեանդ տեսանեմք զլոյս:

Ումանքը այլեւայլ եղին զլոյսն ՚ի յած, և ասացին, թէ այլ է առծ, և այլ է անստեղծ լոյսն այ, բայց տղիտութիւն առացին, զի ամենենին ընդդէմ է լինել այնպիսի էակ՝ որ իցել անստեղծ, և չիցէ առծ. զի անստեղծ գոյն է անեղական գոյ. իսկ զոյն անեղական է գոյ ածութեան:

Այլ ողք զայս առացին՝ թերեւս պատրեցան անտի՝ զի առեմք. արժանի լիցուք տեսպանել զլոյս ածութեանն այ, և բայց այս բանք ու ցուցանեն զզանաղամնութիւն լուսոյ և ածութեան, այլ մանտւանդ գնոյնութիւն. զի որպէս յասկն՝ արժանի լիցուք առանել զզեղեցիւթիւն ածութեանն, իսկ զփառս ածութեանն այնու ու ցուցանի զանաղամնութիւն:

գեղեցկութեն այ և ածութե , այլ նոյնութիւն . սոյն պէս և յասելն զածային լուսոյն :

Եւ արդարեւ եթէ այլ էր լոյսն այ , և այլ՝ ած , այն լոյս զինչ էր . եժէ գոյացութե , լինէր և այն այլ ոմն ած . իսկ եթէ պատահումն՝ ած լինէր ենթակայ պատահման , ուստի և էակ փոփոխական՝ որ հակառակի ածութե և եղծանէ զածութն : Օ այս եղաք առ՚ի ցուցանել թէ լոյսն ՚ի յած՝ ոչ է այլ յայ , այլ նոյն ինքն ած , կամ էռութիւն ածութեանն :

Իւնք այսր համարոյ ուղղին և ՚ի դէմն որդւոյ ըստ այլ և այլ տեսութե . մի՛ ըստ այնմ զի որդին է աղբիւր հոգւոյն՝ որպէս ասացաք ՚ի վերոյ . և ինքն զոլով երես հօր՝ ըստ որում ասեն ածաբանք , ընդ որս և ծործորեցին . (՚ի մեկն . մատ . գլ . ժը . 10 .) յայսմանէ և հոգին որ ասի լոյս երեսաց՝ այսինքն լոյս ծագեալ յորդւոյ : (՞յայս միտս մեկնեալ և մովսէս վարդապէտ . (՚ի մեկն . փառք ՚ի բարձունսին . երես 207 .) ասէ թէ սովին բանիւ . * զանձառ ծնունդն որդւոյ և յանհաս բղխումն ամենասք . հոգւոյն յայտ արար :) Երկրորդ՝ զի յորդւոյ իբր յաղբերէ բղխեցին , այսինքն հաստատեցան խորհուրդն եկեղեցւոյ . և մեք լուսով վարդապէտութեան նորա տեսաք զլոյս ճշմարտութե հաւատոյ մերոյ : Երկրորդ՝ զի ՚ի նմանէ բըղխեցին այլ աղբիւրք կենաց , աղբիւրք արեան և ջրոյ . և մաքրեցին զմեզ մկրտութք որը աւազանին , և լցին զոգիս մեր ածային լուսով և չնորհօք : (՞որ միտ խօսելով ՚ի վերայ այսր նախայիշեալ մովսէս վարդապէտ ՚ի մեկնութեան անդ ասէ . սորիմք և մեք * հաւատացեալքս ՚ի քն ընդունիմք զլոյս զիտութեան ածային չնորհացն , և պայծառանամք ՚ի չնորհացն մկրտութք աւազանին . երեսք մոտացս պայծառանան ՚ի չնորհաց երեսացն այ . ըստ որում ասէ երեմիաս . հոգի երեսաց մերոց տէրք քն : (՞որրորդ՝ զի չնորհք և ճշմարտութիւն ՚ի ձեռն նորա եղեն . և լուսաւոր կեանք նորա ետ հետևողաց իւրոց լիանալ լուսով : Ուստի ասէ բարսեղ վարդապէտ . (՚ի մեկն . մարկ . ժ .) * որպէս որ զհետ երթայ լուսոյ և անուշահոտ ինչ իրաց՝ լցեալ լինի լուսով և անուշահոտութեն , այս-

,, պէս և որ զշետ երթայ քնի՝ լցեալ լինի ածային
,, լուսով և անուշահոսութեր առ ՚ի նմանէ ։ Հինգ-
երրորդ՝ զի ՚ի մեռանիլ նորա ընդ նմա էր աղբիւրն
կենդանութեան, այսինքն է թէ անբաժան էր ՚ի հօգ-
ւոյ և ՚ի մարմնոյ նորա ածութին. և յիջանէլ հօգւոյ
նորա ՚ի գժոխս՝ լուսով երեսաց նորա տեսին զնա
անդ արդարքն : Իւ զի այս ամ զօր ասացաք ցարդ՝
ակնարկեն յօդորմութիւն այ և յարդարութիւն նորա,
յայն գարձուցանէ մարդարէն զբան իւր . և խանդա-
դատելով առ ած՝ ասէ :

Ճամանակը բառիւդ ուղղութեան այն՝ ոյտ ճանաչելն ուշեղ զարդ
ու արագութեան առ ուղղել էն սրտիւտ։
Վ աստանօր բառիւդ ուղղութեան նշանակի այն՝ որ է գործ
ողջորմութեան, կամ այն՝ որ տուեալ լինի ողջորմութեր,
նոյնպէս և բառիւդ արդարութեան նշանակի աստ այն՝ որ
է գործ արդարութեան, կամ որ տուեալ լինի ըստ ար-
դարութե։ Վ ադ՝ քանզի լոյսն այն՝ զոր տայ ած մարդ-
կան ըստ նախագրելոցդ՝ է գործ ողջորմութեան այ ։ և
տուեալ լինի ըստ տրամաբաշխական արդարութեան,
վասն այսորիկ կոչէ զայն մարդարեն՝ ողջորմութիւն և
արդարութիւն։

Աղբամութիւն՝ զի ած ձրի տայ զայն . և տալով ըստ ըզ-
պակասութիւն և զկարօտութիւն բանական բնութեան
ըստ իւրաքանչյուր կարգի . մանաւանդ ըստ գերբնա-
կան կենաց :

Արդարութիւն՝ ոչ բացարձակ, այլ ենթազրական, կամ ոչ տիրապես՝ այլ ըստ պայմանի . զի բացարձակ արդարութիւնն պահանջէ տալ իւրաքանչիւր զիւրն . իսկ ենթազրականն պահանջէ տալ զայն՝ զոր տուօղն պատշաճ տեսանէ, կամ այնպէս հաճի, և վասն այն ըստ հաճելոյն խոստանայ . և խոստանալով ըստ իմիք պարտաւորէ զինաքն :

Γρηγορίου οὐκέτι μάθει ταῦτα πειθαρχεῖς δρῆς φέρειν τοιούτην
τοιούτην αὐτοῦ συμβολὴν οὐκέτι μάθει ταῦτα πειθαρχεῖς δρῆς φέρειν τοιούτην
τοιούτην αὐτοῦ συμβολὴν οὐκέτι μάθει ταῦτα πειθαρχεῖς δρῆς φέρειν τοιούτην

մնեթք զշնորհս՝ զի արժանանացի, այսինքն զարժանաւոր գործո գործիցէ, ասաւ տայ և զերսնութին արդարութ. յոր միտս ասին թէ, տայ անձ զշնորհս փոխանակ չնորհաց. իբր զի՝ փոխանակ պարզեացն՝ զրս տայ ողորմութք, պատրաստէ և պարզես՝ զորս տայ արդարութք ենակը:

Եւ ըստ այսմ այն պարզե՝ որ տուեալ լինի ողորմութք լինելով գործ ողորմութեան կոչի ողորմութիւն. նոյնպէս և միւս այն պարզե՝ որ տուեալ լինի արդարութք, լինելով գործ արդարութեան կոչի արդարութիւն: Եւ զի լոյսն ածային՝ զոր եդ մարզարէն՝ ի վերոյ և գործ ողորմութեան և արդարուեն այ ողորմուի և արդարութիւն կոչ, զնոսա աստ, որպէս ասացաք այժմ, և որովհետեւ լոյսն ծագմանը տուեալ լինի:

զծագել այսր ինսդրէ ասելով:

(Հ) Խագեա զողորմանն այ ոյ ճանազէն ոչեղ. շաբարութիս առ ուղղի էն սրտիս: Ի մէջ բերէ միայն զծանաց շողն ոյ և զուղիզս սրտիք, և վասն ճանազողաց զնէ զողորմութիւն, իսկ վասն ուղղոց զարդարութի. վասն զի որք ճանաչեն զոնծ կարտին ողորմութեն նորա առ ի կեալ ըստ համոյս նորին: իսկ որք ուղղեն զին:

քեանս՝ արժանի լինին վարձուց արդարութեան:

Յառաջինն հայելով ասէ ծագեա զողորմանն այ ճանազէն ոչեղ. այսինքն ծագեան կամ տուր զլոյս քոյ այ նոցիկ՝ որք ճանաչեն զքեզ և զհամոյս քո. որպէս զի՝ զոր ճանաչենն տեսականապէս՝ կատարեսցեն գործնականապէս: Օ այս մաղթէ և եկեղեցի նը՝ ի փառք ի բարձունոն: զօր և մեկնաբար առաջի գնէ մովսէս վարդապէտ, (յերես 207. .) ասելով. * ընդ լուսոյ առ ուտօտուս և զկութ ողորմութեան քո, և զլոյս իմանալի կամաց քոյ՝ ի հաւատացեալքս ծագեա: (և յերես 208. ասէ . .) * զորօրինակ՝ ի ժամ առաւօսուն շառագայթից արեգականն ծագեալ զնսեն, մութիւն իսաւարին հալածական առնէ, այսպէս ո զրմութեան քո լոյս ճառագայթեալ ի բնութեան մերում՝ ի բաց մերժէ զիսաւար մեղաց, և զանգի առութեան:

իսկ յերկրորդն հայելով ասէ, * ծագեա, . . զար-

դարութիս քո՛ ոյք ուղիղ են սրտիւք ։ այսինքն տուըր
և զվարձս նոցա որք ըստ լուսոյ քո ուղղեցին կամ-
վին զիրաս և զգործս իւրեանց ։ Ուր յովհան իմաս-
տասէր՝ ի կարգս եկեղեցական պաշտամանց ։ զայս
բան վերածէ առ պաշտօնեայս ոն յասէլն ։ * ծագեաւ
աւէր զողոմութիս քո և զնրդարութիս քո՝ ի պաշտօ-
նեայս և յերկրագուս ամենանը երրորդութեգ ։

Ե յսու ողորմութեր և արդարութեր իմացեալ լինի և
անձառութին այն ողորմութի և արդարութի՝ զոր ա-
րար ած մարդամաղով ։ որով եցոյց զողոմութիւն իւր
այնոցիկ՝ որք ակն ունէին զալստեան նորա ։ և ըստ
արդարութեան հասուցանելով արդարացոյց զնոսա տա-
լով նոցա զնորհս իւր առ ՚ի ուղղել զիրաս իւրեանց ։
Եւ ըս այսմ բառդ՝ ծագեա հայի ՚ի յորդօրումն վաղվա-
ղակի յայնելոյ զողորմութիւն և զարդարութիւն ։ զի
ծագելն է զործողութիւն արագ ։ ուստի և յասելն
ծագեա ։ այդու ցուցանի վաղվաղակի տալն ։ կամ
փութով առնելն ։

Ե յս վաղվաղումն ՚ի հասարակի խօսելով է վասն եր-
կուց ։ մի՛ վասն առաւել վամփաքելի լինելոյ ծագեալ
իրին ։ և մի ևս վասն վտանգաւոր լինելոյ յամեցմանն,
իրը զի ՚ի յամել ողորմութեանն ոյ և արդարութենո-
րա վտանգի մարդս ՚ի բազում իրաց ։ զորօրինակ ե-
թե ոք ՚ի զիշերի ՚ի վտանգաւոր վայրս զուալ խճնդ-
րիցէ զտանել վաղվաղակի զլոյս ։ այս վաղվաղումնս
նորա հայի նախ ՚ի ցանկալի լինել լուսոյն ։ և երկ-
ըորդ՝ յապահովն լինել ՚ի վտանգից զավանաց ։ զո-
զոց ։ ևն ։ զի ՚ի ծագել լուսոյ ոչ ևս համարձակին
գաղանք և զողք յարձակիլ ՚ի վերայ ։ և գործել ըզ-
չար ։

Բ ոտ այսմ նմանութե աշա գրեթէ առաջի զնէ մար-
դարէն զբան իւր ։ որով և յայտ արարեալ նախ զվալ-
վակել ածային լուսոյն ։ ըստ ցանկալի լինելոյ յին-
քեան ։ յայտ առնէ զինի և զվալվաղել այնք ըստ ապա-
հովս լինելոյ ՚ի վտանգէ անտի իմանալի գողոց և զա-
զանաց ։ որք սան առ սան գան ՚ի վերայ ։ և ձեռօք իւր-
եանց վտանգեն զայնոտիկ՝ ոյք ուղիղ են սրտիւք ։
յայս հայելով յարել զինի ։ և ասէ ։

ԺՐ. Ա է է ն ս ց է ՚ է վ ե ր ա յ ն ե ր ո ր ն ա մ բ ո ր դ ո ւ ա ն ի շ և շ ա յ ն կ ը լ ա ւ ո ր դ պ ի դ է ն ս ր ո տ ի ւ ք * ՚ ի հ ո վ ա ն ի թ ե ս ց ն ա յ յ յ ա ս ա ց ի ն ։ ո ր ո վ և ե ց ո յ յ գ թ է հ ո վ ա ն ի թ ե ս ց ն ա յ յ է ՚ ի վ ե ր ա յ ն ո ց ա ։ ա պ ա ե լ մ է ա յ ն վ ե ր ա ս ց ի ՚ ի ն ո ց ա ն է ։ հ ա ս ա ն է ՚ ի վ ե ր ա յ ն ո ց ա հ ո վ ա ն ի ս ա տ ա ն ա յ ի և գ ի ւ ա ց ն ո ր ա ։ և ՚ ի տ ե ղ ի ո ղ օ ւ մ ո ւ թ է և ա ր դ ա ր ո ւ թ է ա յ ։ հ ն ա ր ք ն ո ց ա մ ե ր ձ ե ա լ ՚ ի ն ո ս ա խ ա խ ա տ է ն զ ն ո ս ա ։ Ա պ ա խ ն դ ր է մ ա ր դ ա ր է ն ՝ զ ի մ ի ե կ ե ս ց է ա յ ն ՚ ի վ ե ր ա յ բ ա ր ե պ ա շ տ ի ց ՝ յ ո ր ո ց մ ի ե ր և ի ն ս ք ն ։ վ ա ս ն ո ր ո յ ա ս է ։

Ա է է ն ս ց է ՚ է վ ե ր ա յ ն ե ր ո ր ն ա մ բ ո ր դ ո ւ ա ն ի շ և շ ա յ ն կ ը լ ա ւ ո ր դ պ ի դ է ն ս ր ո տ ի ւ ք * ՚ ի հ ո վ ա ն ի թ ե ս ց ն ա յ յ յ ա ս ա ց ի ն ։ ո ր ո վ և ե ց ո յ յ գ թ է հ ո վ ա ն ի թ ե ս ց ն ա յ յ է ՚ ի վ ե ր ա յ ն ո ց ա ։ ա պ ա ե լ մ է ա յ ն ՝ ո ր ա ս ի ՚ ի գ ո ր ծ ս ա ւ ա ր ե լ ո ց ։ (Է . 9 .) * ա չ ա ս ո ւ ք ն ՝ ո ր թ ա ղ ե ց ի ն զ ա յ ր ն ք ո ՚ ի զ ր ա ն ՚ հ ա ն ց ե ն և զ ք ե զ ։ փ ո խ ա ն ա կ ա ս ե լ ո յ ՝ ա հ ա ա ն ձ ի ն ք ն ՝ ո ր ք թ ա ղ ե ց ի ն և ն ։ և յ ա յ ս մ ի տ ս ա ռ ե ա լ կ ա մ ի ա ս ե լ ։ մ ի ե կ ե ս ց ե ն ՚ ի վ ր մ ե ր ա մ բ ա ր տ ա ւ ա ն ք ։ ո ր ք ե ն ս ո ր ք ս ա տ ա ն ա յ ի ։ և ս ո վ ի ն կ ա մ ի խ ն դ ր է լ զ ա զ ա տ ո ւ թ ի ն յ ա մ բ ա ր տ ա ւ ա ն ի ց ։ Խ ա կ պ ա տ ձ ա ռ զ ո տ ն յ ի շ ե լ ո յ է ա յ ս ՝ զ ի ա մ բ ա ր տ ա ւ ա ն ք կ ա մ ի ն ը ն դ ս տ ի ւ ք ո ւ ն ե լ զ ա յ լ ս ։ ո ր պ է ս զ ի ի ն ս ք ե ա ն ք ե ր ե ս ց ի ն ։ խ ա կ ա յ լ ք ի բ ը ր ո ս տ ա կ ո ւ թ հ ա մ ա ր ե ա լ լ ի ց ի ն ։

Ե ր կ ր ո ր դ ՝ ո տ ա մ բ ի մ ա յ ց ե ա լ լ ի ն ի ի շ խ ա ն ո ւ թ ի ւ ն ն կ ա մ յ ա մ բ ա ր տ ա ւ ա ն ի ց ։ մ ա ն ա ւ ա ն դ ս ա տ ա ն ա յ ի և գ ի ւ ա ց ։ զ ի յ ա յ տ է թ է ՝ ո ր ս ո տ ա մ բ կ ո խ է ՚ ի վ ր ո ւ ր ո ք ։ յ ո ր չ ա փ կ ո խ է ՝ յ ա լ թ օ զ ե ր ե ի ։ և ի բ ը ր է թ է ի շ ի ն է ն մ ա ։ ա ր դ ա մ բ ա ր տ ա ւ ա ն ք ։ և ա ռ ա ւ ե լ և ս ս ա տ ա ն ա յ և գ ե ք ն ո ր ա ։ ո ր ք գ լ ի ս ո վ ի ն յ ա մ բ ա ր տ ա ւ ա ն ո ւ թ ե ա ն ե ն յ ա ր ժ ա մ յ ա լ թ ե ն ։ և կ ո ր ծ ա ն ե ն զ ո ք ՚ ի մ ե ղ զ ՝ զ ր ե թ է կ ո խ է ն զ ա ։ ո ր ո վ և ի շ խ է ն ՚ ի վ ե ր ա յ ն ո ր ա ։ Խ ւ ը ս տ ա յ ո ւ մ կ ա մ ի ա ս ե լ ։ մ ի յ ա լ թ ե ս ց է ։ և մ ի տ ի ր ե ս ց է մ ե զ ի շ խ ա ն ո ւ թ ի ւ ն ն ս ա տ ա ն ա յ ի և գ ի ւ ա ց ։ և ա յ լ ո ց ա մ բ ա ր տ ա ւ ա ն ի ց ։ Խ ւ յ ա յ ս մ ի տ ս ո ւ զ ն է յ ո գ ն ա կ ի ։ ա յ լ ե զ ա կ ի ։ զ ի ի շ խ ա ն ո ւ թ ի ւ ն ն ս ա տ ա ն ա յ ի և գ ի ւ ա ց ն ո ր ա է ի բ ը ր մ ի ս տ ն ։ ո ր ո վ ո ւ զ կ ա ր ե ն ը ն թ ա ն ա լ և հ ա ս ա ն ի լ

առ մեզ . իսկ եթէ տացուք նոցա հաւանութիւն՝ երկու լինին ոտք նոցա . և յայնժամ իբր երկու ոտիւք գան առ մեզ . որոց մին է իշխանութիւնն իւրեանց , և միւսն յաջողութիւնոցա վասն հաւանութիւն մերոց :

Երբորդ՝ ոտամբ իմացեալ լինի նոյն իսկ հպարտութիւնն , որով իբր ոտամբ ցանկան մարդիկ ելանել՝ ի վեր : Եւ ըստ այսմ կամի ասել . մի եկեսցէ ՚ի վերայ մեր ամբարտաւանութիւն . որ է ասել , պահեամ զմեզ տր , զի մի ամբարտաւանեսցուք . և կամ մի մեծամբաւեսցուք ընդ չնորհս քոյ՝ որով ձանալեմք զբեզ , և ուղղեմք զմեզ : Հայս միտս ևս եզակի զնի ոտն , զի հպարտութիւն կամ ամբարտաւանութիւն դոլով առաջինն ամեղաց կամ առաջին ոտն մեղաց՝ է եզական ՚ի չարիս : Ծառի թէ ըստ սմին իմանայ և փանական վարդապետ . (՚ի մեկն . յոթ . զլ . է .) յասելն . * մի ՚ , եկեսցէ ՚ի վերայ մեր ոտն ամբարտաւանուեն . նաև բարսեղ վարդապետ . (՚ի մեկն . մարկ . զլ . թ .) բայց յօդնակի առեալ , յասելն . * ոտքն՝ հպարտուեն (ցցցք ՚ , են) և զշարիս գործելոյ . ըստ այնմ . թէ մի եկես . ՚ , յէ յիս ոտն ամբարտաւանութէ , և թէ ոտք նոցա ՚ի չարիս ընթանան :

Ըստարդ . ոտամբ իմացեալ լինի աստ անարդութիւնն ամբարտաւանից . զի ամբարտաւանք կամելով երևիլ գերագյն քան զայլ , անարդեալ լինին յանցունց , մանաւանդ յայ . և այս անարդութիւն յայն սակա կոչի ոտն ամբարտաւանից . զի ոտնն գոլով քան զամ ստորին մասն մարմնոյ՝ բերի ՚ի նմանութիւն անարդուեն , և ըստ այսմ կամի ասել . մի հասցէ ՚ի վերայ մեր անարդութիւն . որպէս հասանէ ամբարտաւանից : Օ այս եզ գեալ մարդարեին՝ աղացէ զած զերծուցանել զինքն և ՚ի ձեռաց նոցա , այսինքն ՚ի ձեռաց ամբարտաւանից :

Ե- յէ- Ա-լ-ա-ր-ա-ց ՚ի Շ-ա-շ-շ-շ-շ-ն շ-է-լ : Օ օրս նախ ամբարտաւանս կոչեաց՝ աստ մեղաւորս անուանէ զնտ . զի զայս ցուցանէ կարդ բանին . ըստ որում յամբարտաւանս է աղբիւրն մեղաց , այսինքն ամբարտաւանութիւն նոցա կամ հպարտութիւն նոցին : Ի այց քանզի կամէր մարդարէն տալ իմանալ և զայլ մեղաւորս ,

փոխանակ ամբարտաւան դնելոյ՝ դնէ մեղաւոր, 'ի
մէջ թերելով զձեսս նոցա ,
Խակ ձեռօք մեղաւորաց իմացեալ լինին նախ նոյն խակ
մեղաւորք՝ որք և են ձեռօք սատանայի . որպէս ասացար
զոտանէ ամբարտաւանից . յոր միտս խնդրե զազատու-
թիւն 'ի չարտութենէ մեղաւորաց :

Եցրկրորդ՝ իմացեալ լինի իշխանութիւն նոցա , զի որ
պէս մարդն ձեռօք առնէ՝ զոր առնէ , սոյնպէս և որք
ունին իշխանութիւն նովաւ առնեն զոր կամին առնել .
և զի այսպիսի իշխանութիւր մարդկան բազմօրինակ 'ի
գործ դնին , վ՞ո այսորիկ յօգնակի դնէ՝ չեռտ . և կա-
մի ասել . խնդրեմ 'ի քէն տէր , զի իշխանութիւնք մե-
ղաւոր մարդկան մի գողացուցեն , այսինքն մի եր-
կեցուցեն զմեզ , կամ մի խախտեացեն զմեզ 'ի խա-
զաղութէ :

Եշրորդ՝ ձեռօք իմացեալ լինի գործակցութիւն կամ
ձեռնատուութիւնն . յոր միտս ասի . (երեմ , իշ . 24 .)
* ձեռն աքիկանայ . . . եր լնդ երեմիայ || . այսինքն
ձեռնատուութիւնն . և ըստ այսմ կամի ասել . մի լիցին
մեզ գործակից կամ ձեռնատու մեղաւոր մարդիկ . զի
մի իւրեանց չարութե գողացուցեն զմեզ , այսինքն
թէ երկիւղիւ պաշարեացեն զմեզ , և կամ պատճե-

ցուցեն զմեզ 'ի բարի զնացից :

Չորրորդ՝ 'ի հասարակի առեալ՝ ձեռօք իմացեալ լի-
նին գործք , որպէս այլուր ասացեալ է մեր . և ըստ
այսմ կամի ասել . գործք մեղաւորաց մի խռովեացեն
զմեզ , և կամ գարձեալ գործք մեղաւորաց մի լիցին
մեզ օրինակը սասանեցուցանելոյ զմեզ յուղաւութենէ
վարուց կամ խռովորելոյ յօրինացն այ . զի մի և մեզ
ցիցի ըստ նոցին անկանիլ և ըստ նոցին անարդիլ և
մերժիլ . այլ թէ զիարդ անկանելոց իցեն նոքա և
զիարդ մերժելոց իցեն խապառ՝ յայտ առնէ ասելով :

Անձ մաս այսուհետ ու առաջ անձ առաջ առաջ առաջ
զայնաւ և առաջ ու այսուհետ առաջ ու առաջ այս
առաջ այսուհետ մասնաւ , ըստ մասնայի և առաջ
ձբառ ըստ մասնայի : ովհան ովհանայան նաև ըստ մասնայի առ
այսուհետ ըստ մասնայի ըստ մասնայի ըստ մասնայի

ԺԴ. ԱՇ անիցին ամենէտեսն՝ ոյս գործեն զանօբէնառլէ . Աբը ժետեսցին, և այլ մի հարացէն հասուտուիլ:

Անկանին լինի այնմ՝ որ կայ ՚ի բարձրութե կամ իբր ՚ի բարձրութե . ուստի և անկանիլ առի, կամ այնմ՝ որ է ՚ի բարձր տեղւոջ, և կամ այնու որ կանգնեալ է յոտին : Աւ այս յայտ է թէ յայնժամ լինի՝ յորժամ կանգնեալն կամ կացեալն ըսնի պատապարան անձին, կամ յենարան ոտին . և եթէ ունիցի ևս՝ շիցէ հաստատեալ ՚ի նմին, որոյ զհետ դայ անկանիլ: Աբդ հպարտութի է այնպիսի ինն բարձրութի՝ յորտում չիք յենարան, ոչ ՚ի կողմանէ այնո՞ որ հպարտանայ, և ոչ ՚ի կողմանէ այնո՞ յորոյ վը հպարտանայ . և ոչ ևս ՚ի կողմանէ այնո՞ առաջի որոյ, և ընդդեմ որոյ հպարտանայ . զի որ հպարտանայ՝ յայտ է թէ այնու կամի բարձրացուցանել զինքն քայլս . իսկ այլք ոչ են նմա յենարան, բայց եթէ զուցէ արտաքսապէս . որպէս ծառայք, ինչք, զովիչք, ևն : Վրյովէս և այն՝ յորոյ վը հպարտանայ . որպիսի է իշխանութի, մեծութիւն, իմաստութի, գեղեցկութի ևն՝ ոչ է նմա յենարան . զի այս ամ ոչ է իւթ, այլ այ:

Վամանապէս և ստաջի որոյ հպարտանայ ոչ կարէ լինել նմա յենարան, զի ուլ ոք և իցէ այն՝ ոչ տանի հպարտութէ . զի թէ և արտաքուստ երեւցուսցէ տանի՝ ՚ի ներքուստ ոչ տանի : Վակ ած՝ ընդդեմ որոյ հպարտանայ, ոչ միայն ոչ տանի այնմ, ազև հակառակ կայ նմա . զի ըստ վկայելոյ ո՞ր զրոյ * ած ամքարտաւնից հակառակ կայ || (ամ, պետ, եւ օ : յակ, դկ . ևն :) Աւ ոչ միայն հակառակ կայ, այլև զրեթէ ձեռամբ բարկութե մղէ զնա անկանիլ՝ վայը . Հայուսիկ հայեցեալ պատէ :

ԱՇ անիցին ամենէտեսն՝ ոյս գործեն զանօբէնառլէ . Աբը ժետեսցին, և այլ մի հարացէն հասուտուիլ: Բառա՛ անդ կամ ըստ երբ՛ . շամ որ զնոյն նշանակէ՝ չօրեքկին կարէ առեալ լինել աստ . մի՝ ըստ ինքեան կամ յինքեան . երկրորդ ըստ տեղւոյ, կամ իբր տեղական մակբայ . երրորդ ըստ ժամանակի, կամ իբր ժամանակական մակբայ . չորրորդ՝ թարմատարաբար իւթ զարդ՝ ըստ չորից:

ըստ այսոցիկ չորեքին մեկնի այս բան :

Բայտ ինքեան , կամ յինքեան առեալ զբառդ անդ . դնի փոխանակ ներգոյականի , այսինքն փոխանակ բառիս : 'ի նմա : Եւ ըստ այսմ յարաբէրէ զՏպարտութ ամբարտաւանին՝ զոր եղ 'ի վերոյ , այսպէս համարի և վանական վարդապետ ('ի մեկն . յոք . գլ . է :) Որով և միտ բանին լինի այս : Ի՞նդ այսինքն 'ի հպարտութեան կործանին նոքա ամենեքին՝ որք գործեն զանօրէնութի . որ է ասել . ամենեքին որք գործեն զանօրէնութի վասն այսորիկ գործեն՝ զի հպարտութի կամ ամբարտաւանութի անկանին 'ի կորուստ . այսինքն 'ի մեզս * վասն զի յարեարտաւանութէ է կորուստ և խռովութի յոյժ || ասաց տորիթ . (դ . 14 .) քանզի նախ քան զանկանիլ մարդոյ 'ի մեզս , և նախ քան զբեկանիլ նորա հոգեպէս՝ յառաջէ հպարտութիւն կամ բարձրանալ սրտի . ըստ այնմ (առակ . ժը . 12 .) * յառաջ քան զբեկումն իւր բարձրանայ սիրտ առն || . և բարձրանալով հեռանայ 'ի յենարանէ , այսինքն 'ի շնորհաց . վասն որոյ և անյենարան մնացեալ՝ անկանի 'ի գործս անօրէնութեան :

Յայսմ չիք երկբայութի . զի ամ անկմունք՝ որք լեալ են 'ի սկզբանէ և այսը՝ 'ի հպարտութէ անդ կալեալ են զսկիզբն : Ի՞նդ անկաւ արուսեակն իւրովքն հանդերձ , անկաւ զանկումն անկանգնելի . և գործէ հանապազ զանօրէնութի ինչն և իւրքն . զորոց ուղղակի ասի * եւծեցին և այլ մի հարացին հասպառիլ || այսինքն որպէս մերժեցան , նոյնպէս մերժեսցին յաւիտեան . և ոչ ևս կարասցեն հաստատիլ 'ի վիճակ բարի : Ի՞նդ անկան , և նախահարթ մեր աղամ և եւա . անկան անկումն ցաւագին . որ և եղե սպատնառ այշափ չարեաց և անօրէնութէց զորս գործեն մարդիկ : Եւ ժէ յիրաւի անդ՝ այսինքն 'ի հպարտութէ անկան , յայտ անտի է , զի ոք գիրն ոչ տայ ինչ նշան զխննարհութէ կամ զհպատակութէ նոցա , որով երեւի թէ 'ի կարգիլ իւրեանց իշխող 'ի վր ամի՝ բարձրացան իւրիք սիրտք նոցա , որով տեղի ետուն սատանայի . և 'ի կամիլս առաւել ևս բարձրանալ և անծանալ՝ կործանեցան . և կործանելով մերժեցան ինքեանք և որդիք իւրեանց

՚ի դրախտէ և յանմեղութեան վիճակէ . և չեղեւնոցա
հնար հաստատիլ միւսանգամ յայն վիճակ անմեղու-
թէ : ՚նդ ՚ի հպարտութե անկան և անկցին ամենեքին
որք միանգամ անկանին ՚ի մեղս , և յանօրէնութիւնս .
և եթէ ոչ խոնարհեսցին՝ մերժեսցին իսպառ :

Պստ առեղոյ առեալ զբառդ անդ , նշանակութիւն բանին
նոյնանայ ընդ վերնոյն . զի յարաբերէ զտեղին ուր
կոփէ ստն ամբարտաւանից . այսինքն զտեղին ուր
իշխէ ամբարտաւանութիւն . յոր միտս կամի ասել . յն և
իցէ տեղւոջ կամ յն և իցէ գործ ուր մտանէ ամբար-
տաւանութիւն , լինին անկմունք յանօրէնութիւն . որպէս
թէ ասէր . ամենեքին՝ որք գործեն զանօրէնութիւն անդ
գործեն՝ ուր մտանէ ամբարտաւանութիւն , զի նա լինի
պատճառ գործելոյ զայնս որպէս յայտ է ՚ի նախա-
գրելոցդ : Ո՞ի անգամ եմուտ ամբարտաւանութիւն յեր-
կինս , և ընկէց զմանն ինչ ՚ի հրեշտակաց : Խմուտ
և ՚ի զբախտն , և ընկէց արտաքս զնախահարս մեր :
Խմուտ և ՚ի քաղաքս և ՚ի թագաւորութիւն , և ընկէց
անտի զմեծամեծս : Խմուտ և ՚ի տունս , և ՚ի վանս ,
և խոռվեցոյ զբազումն , և ընկէց զնոսա : Խմուտ և
՚ի սիրտ բազմաց , և կրոյս զնոսա : Ո՞ր և եմուտ՝
զորս միանգամ եղիտ անդ՝ ընկէց յանօրէնութիւն : Խ-
որք միանգամ ընկեցան՝ եթէ կայցեն ՚ի հպարտութե
անդ՝ մերժեսցին , և այլ մի կարասցեն հաստատիլ ՚ի
բարիս :

Ո՞արձեալ՝ ըստ տեղոյ առեալ զբառդ անդ , կարէ
զնիլ և փոխանակ դժոխոց . յոր միտս կամի ասել .
անդ ՚ի դժոխս անկցին ամենեքին՝ որք գործեն զանօ-
րէնութիւն . և անդ մերժեալ մնացեն , և այլ մի կարաս-
ցեն հաստատիլ ՚ի կեանս :

Պստ ժամանակին առեալ զբառդ անդ՝ այս բան զնի
համեմատութե իններորդ համարոյն . և որոց զնի . և
ըստ այսմ յարաբերէ զժամանակն զայն՝ յորում ժա-
ռանգեն արդարք զարբայութիւն երկնից . որով և միտ
բանին լինի այս . յորժամ մատցեն արդարք յարբայու-
թիւն , և արբցեն անդ զուղիսս փափկուե ևն , անդ՝ այս-
ինքն յայնժամ ամենեքին՝ որք գործեն զանօրէնութիւն ,
անկցին ՚ի ժառանգութէ այնպիսի երանուե . մերժես-

ցին անտի . և այլ ոչ կարասցեն հաստատիլ 'ի նոյն .
այսինքն ոչ ևս գտցեն միջոց հասանելոյ 'ի բարութիւն
երկնից . որ է ասել 'ի հանդերձեալն ողբ միանգամ
անօրէնք իցեն՝ կորիգեն :

Խաղողական լրացն կորիցեն :
Խակ եթէ բառդ անդ՝ առցի իբր թարմատար . այսինքն
իբր զարդ՝ միտ բանին լինի այս՝ թէ ողը միանգամ
գործեն զանօրէնութիւնի անկցին և կորիցեն յանօրէնու-
թէ իւրեանց . խակ արդարը կեցցեն յաւիտեան :



շըսի , ուստի քառորդ կ լուրջաւա առջ յանձնաբար
• մաս մասի սահմա գու . ըստին մասնավախ և յանձն
օնաց մանեցաց զար մայութեան մայութեան սպառու և քան
սադաբ ին յա և , մայութեան յանձնեցն քառ և . Անամենի
: անամենի և յանձնասահմա մար



